



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:


**Share** — copy and redistribute the material in any medium or format


**Adapt** — remix, transform, and build upon the material



149

175  
C-36







2010

---

СРРР-Р

СРРР-Р СРРР-Р СРРР-Р СРРР-Р СРРР-Р

---

23

---

STAIRS

PLANTING OF THE STAIRS

---



1  
E-96  
47

# ՏԱՐԵՐՔ

## ԻՄԱՅԱԿԱՆ ՓԻԼՒՍՈՓԵՅՈՒԹԵԱՆ ՀԱՄԱԹՕՏ

ՎԵՐՔԵՐԵՆՆԵՐՈՒ ԵՒ ԲԵՐՉՐԵՔՈՅՆ  
ԳՊՐՈՅՆՆԵՐՈՒ ՀԱՄԵՐ



ՅՕՐԻՆԵԱՑ

ԹՈՎԱԾԱՅ Ք • ԸՓՀԱՄ ՎԵՐՔԱՊԵՏ ԻՄԱՅԱԿԱՆ  
ԵՒ ԲԱՐՈՑԱԿԱՆ ՓԻԼՒՍՈՓԵՅՈՒԹԵԱՆ  
Ի ՎԵՐՔԱՐԵՆԻՆ ՈՐ Ի ՊՐՈՒՆԱՎԻՔ

ՅԱՄԵՐԻԿԱ



ԹԱՐԳՄԱՆԵԱՑ ՅԱՆԳՂԻԱԿԱՆԻՆ  
Ա • ՂԱԶԱՐՈՍ Պ

Հ. Կ. Կ. Ե.

2001

### Ի ԶՄԻՒՌՆԻԱ

Ի ՏՊԱՐԱՆԻ ԿՈՒԼԵԿԼՄԱՍ ԿՐԻՑՖԻԹԻ

1851



3185  
1807  
30505

9318

991122

1878 FEBRUARY 10

204702

*Supra* *Wigmore*  
*W. A. W.*

1878

RECEIVED

OF THE

LIBRARY

OF THE

UNIVERSITY OF CHICAGO


CHICAGO

10883

1878

LIBRARY

1878



## ՅԵՌԵՂԵՐԵՆ ԹԵՐԳՄԵՆՁԻՆ

---

Բերկրութեամբ սրտի կը հրատարակեմք այս յառաջիկայ բազմարժէք թարգմանութիւնը յօգուտ և 'ի սատարութիւն հայազգեաց դաստիարակութեանը . ուրախանալով այս աներկեան ակնկալութեամբը թէ աս միջոցով մասամբ իւրիք ձեռնտու կրնանք ըլլալ բարեջան և դաստիարակութեան հետաքննին ազգի մը իր ձեռնամուխ եղած ամէնօգտակար և գովելի գործին՝ այն է կրթութեան մէջ յառաջագէտ հանդիսանալուն : Երաւամբ կը թուի մեզի այս մեր զգացած ուրախութիւնը . վասն զի մարդոց գործած գործերուն և վաստակներուն մէջ ի՞նչ կայ այնքան գովելի և բանար մտաց հետաքննութեանը արժանի՝ որչափ դաստիարակութիւնը , Լսարիչ Լստուծոյ մեր՝ մարդ արարածոցս էութեանը մէջ տնկած բոլոր կարողութեանց՝ իրենց սահմանեալ առարկաներուն նայելով՝ պէտք եղածին չափ և կատարելագէտ բացուելուն համար եղած աշխատութիւնը : Եւ թէ որ մէկ գործի մը օգնականութեանը արժէքը նոյն իսկ գործին արժէքէն կախեալ է նէ , աս տիրագէտ մարդոց վիճակը ըլլալու սահմանուած և մարդկային ազնուութեան երևան ելլելուն մի միայն միջոցն եղող գործին ձեռնտուութիւն ընելն ալ արդարև սրտի բերկրութիւն տուող օգնականութիւն մըն է : — Բայց արդեօք ԻՄԵՅՏԵԿԵՆ ՓԻՂԻՍՈՓԵՑՈՒԹԻՒՆԸ դաստիարակութեան մէկ մասն է՞ , և ի՞նչ աստիճան ունի ատ բանին մէջ : — Լս խնդրոյն Ճշմարիտ պատասխանին ամենէն կարճ ճամբովը հասնելու համար՝ պէտք է դաստիարակութեան վերջին նպատակը աչքերնուս առջին բերել , և անոր հետ բազդատել աս հարցումը : Դաստիարակութեան վախճանը , ինչպէս որ հիմայ ակնարկեցինք , Լստուծոյ մարդուս վրայ բովանդակած կարողութիւնները՝ իրենց առարկաներուն նկատմամբ՝ լիովին բանալն է . կամ՝ ուրիշ խօսքով՝ մարդս մարդկութեան գերազանց վի-

ամէն ուսումնական կարգաւորութեանց մէջ ալ անհրաժեշտ գրտնուելու գիտութիւն մըն է : Ասկէ կրնանք հասկընալ թէ որպիսի հանգամանաց տէր դպրատանց տնօրէններ կրնան ըլլալ անոնք որ աս մեծարժէք և խիստ հարկաւոր գիտութիւնը իրենց կարգադրած ուսման ընթացքէն դուրս կը թողուն , և բազմաթիւ պատուական տաղանդի տէր մտքերու չեն տար ան լոյսը , որուն առաջնորդութիւնովը կրնային անոնք իրենց ունեցած բնական ձիրքերը երկպատիկ՝ եռապատիկ և տասնապատիկ առաւել շքեղութիւնով յայտնել :

Կարձեալ , բնականապէս բաղձալի է աս թարգմանութեան օգնութիւնովը իմացականին իմաստասիրութեանը հետեւելու փափաքող ընթերցասիրին գիտնալ , թէ Արդեօք աս թարգմանեալ հատորը վստահանալի հեղինակութիւնն է , եւ կրնա՞յ ապահով առաջնորդ ըլլալ աս ուսմանը մէջ : Աստի մեզի ալ պարտք է հանգչեցընել բանասէր ընթերցողին կամ գասատուն միտքը , ծանուցանելով՝ որ աս թարգմանութեան բնագիր Անգլիերէնը Ամերիկա Պատիւնի վարժարանին մէջ իմացական և բարոյական փիլիսոփայութեանց վարժապետ Մեծանուն Բիհամ հեղինակին գործն է , որ երեսուն տարուան չափ ժամանակ է որ աս փիլիսոփայութեանց մէջ քաջ հեղինակ ճանչցուած՝ և յիշեալ մեծ վարժարանին մէջ վարժապետ ընդունուած է , իր ընդարձակագոյն իմացական փիլիսոփայութենէն համառօտեալ , որ ասոնց երկուքն ալ շատ երևելի վարժարաններու և բարձրագոյն դպրոցներու մէջ դաս կը տրուի , թէ Անգլիա և թէ Ամերիկա , և աս համառօտութիւնը արժանաւորապէս մեծ գովութիւններ ընդունած է երևելի գրիչներէ , և շատ տեղ ընդունուած է իբրև ընտիր դասագիրք : Աս ծանօթութիւններս՝ որ և իցէ գիտնականի մը՝ որ հեղինակներու վրայ հմտութիւն ունի՝ դիւրին է ստուգել : Եւ ի հարկէ մէկ գիտութեան մը վրայ թարգմանեալ մատենագրութիւն մը յօգուտ հասարակաց ՚ի լոյս ընծայելու փափաքողը՝ ան գիտութեան վրայ ճառող ամենէն ընտիր և յարմար հեղինակութիւնը որն է նէ ան ընտրելու կ'աշխատի : Սակայն աս գործը , որ թարգմանեցինք , իր գտած ընդարձակ ընդունելութեանը և յարգութեանը ունակ մեր ալ տուած վկայութիւններէն ի զատ ուրիշ աներկբայելի վկայութիւն մ'ալ ունի , որ անիկայ ամէն հասկըցող անձն գիրքը կարգալով կրնայ իմանալ : Հեղինակը աս փիլիսոփայութեան դժուարամատչելի ճշմարտութիւններուն կամ տարերքներուն վրայ փոխանակ խրթին ու մուծ և վերացեալ հայեցողութիւններ ընելու , ինչպէս որ շատերը ըրած են , զանոնք այնպիսի աներկեւան և հաւաստի ապացոյցներով յառաջ կը բերէ , որ հետքներն բանասիրին միտքը բոլորովն կը հանգ-

չեցրնէ իր վարդապետած քննութիւններուն վրայ : Այլ ոչ միայն այսչափ , այլ իր ընդհանրապէս իրական ճշմարտութեանց կամ իրողութեանց վրայ հաստատած գիտերը և ճշմարտութիւնները անանկ գեղեցիկ և բնական ոճով կարգադրած է , որ՝ մտքին սրբան մասին վրայ որ կը խօսի նէ՝ անիկայ ոտն առ ոտն գրեթէ բոլոր իր դիտողութեան արժան մասնաւոր կտորներովը դիւրմբունելի կերպով ուսանողին աչքին առջևը ներկայացընելով , վերջապէս մտադիր ընթերցողին մտացը մէջ իր իմաստասիրած գիտութիւնը ամբողջ և մասերը իրարու հետ սերտ կապուած դրութիւնով մը կը տպաւորէ . անանկ որ վերձանողին միտքը փոխանակ մարդկային մտաց վրայ կտոր փրթուծ հմտութիւններով լեցընելու , մտքին մէկ մասը մէկալին հետ ինչ վերաբերութիւններ ունի նէ անոնք աղէկ մը հասկըցընելով , վարդապետած բանին վրայ յստակ՝ որոշ՝ անբեկբեկ և բերկրալիբ հմտութիւն մը կ'ընծայէ :

Այլ ըսածնեմնէս կը հասկըցուի որ իմացական փիլիսոփայութիւնը շատ կատարելութեան հասած է աս դարուս մէջ : Ինչուան հիմայ որչափ հազարաւոր բիւրաւոր հայեցողական խընդիրներ եղած են մտաւոր նիւթերու վրայ , քանի որ աս գիտութիւնը սկսեր է ծաղկիլ և օր աւուր վրայ յառաջ երթալ . որչափ կարծիքներ , և ան ալ անուանի մարդոց , հերքուեր են . որչափ կարծիքներու վրայ երկար երկար վիճմունքներ եղեր է . սրբան զանազան դրութիւններ , մեկնութիւններ , ապացուցութիւններ ՚ի լոյս ընծայուեր են . և հիմայ խոհական և իմաստուն գիտնականներ ինչուան այսօրս եղած անհամար ծանօթութիւններէն սուտն ու սխալները դուրս ձգելով , և թէ իրենց ու թէ այլոց ընտիր ընտիր գիտերը ու վարդապետութիւնները յարմար և գեղեցիկ ոճով իրարու հետ հիւսելով , իննևտասներորդ դարու բարեկարգեալ և յառաջացեալ իմացական փիլիսոփայութիւնները դուրս կը հանեն , որոց մէկ ընտրելագոյնն ալ աս թարգմանութիւնն է :

Արեմն սրբան շնորհապարտ պէտք են ըլլալ աս ուսման փափաքողները ասանկ կանոնաւոր դրութիւնով եղած փիլիսոփայութեան մը : Ասանկի առանց ասանկ առաջնորդի մը ինչ պիտի ընէին . բազմաթիւ անդին ասդին ցանցնուած կարծիքներու ուսման պիտի պարսպէին , սո՛ւտ են թէ իրաւ՝ վստահանալի վրձնող մը չունենալով քովերին . իրարու հակառակ հայեցողութիւններով մէկ մէկու դէմ գրողներուն հետազօտութիւններէն մտքերնին պիտի շփոթէր . խել մը որոշ գողափարներ ստանալու համար՝ չափազանց աւելորդ ժամափաճառութիւններ պիտի ընէին . և թէ որ հիմակուան ձեռք ձգել կարելի եղածին չափ

գիտութիւն ստանալ ուզէին նէ , պիտի պարտաւորէին շատ տարիներ փձացնել՝ մեկ մատենագիրէն մէկալը լոյս փնտռելու թափառելով . վերջապէս շատ ժամանակ ու վաստակ կորսնցնելէն ետեւ , շատ քիչ պիտի գտնուէր մէջերնին այնքան համբերողներ և նրբութեամբ իրերը քննողներ , որ դրութիւնով մը հըմտութիւն ունենային իմացական փիլիսոփայութեան վրայ :

Վասն որոյ խնդամիտ ուրախութեամբ՝ փափագողաց կ'ընծայենք յառաջիկայ թարգմանութիւնը , որ այսպիսի անկատարութիւններէ ազատ է , և դիւրամատչելի կերպով մը ուսումնասէրը իր բաղձանքին կը հասցընէ : Այս աս գրքիս հանգամանքները ինչուան հիմայ խօսուած ընտիր յատկութիւններն ըլլալով , իրաւամբ կը յորդորենք բոլոր Հայազգի ուսումնասէրները և մանաւանդ վարժարաններու և բարձրագոյն դպրոցներու տնօրէնները , որ աս Իմացական Փիլիսոփայութիւնը , որ դեռ նոր կերեւնայ Հայազգեաց մէջ , դուրս չ'ձգեն իրենց հոգողութեանը յանձնեալ պատանիներուն դաստիարակութեանը միջոց եղող գրոց կարգէն , և ամենայն ջանիւք փութան աս բարձր ուսմունքը ազգին մէջ տարածելու , որուն դաստիարակութեան մէջ ինչ տեղ ու աստիճան ունենալը աներկբայելի դիտողութեամբ տեսնիք յառաջաբանի սկիզբը :

Սակայն , հարկաւոր կը սեպենք սա ծանօթութիւնն ալ տալ , որ այսպիսի հմտութեան մը՝ շահ ընդունելու կեպով հետեւելու համար , պէտք է յարատեւ և անբեկբեկ մտադրութիւն : Ըռանց քաջ մտադրութիւն ընելու բան մը լաւ չ'սորվուիր , այլ միայն հարեանցի հմտութիւն մը կրնայ ունենալ մարդ՝ որ աս գիտութիւնը ամենեկին չ'գիտնալէն քիչ տարբերութիւն ունի : Գիտութիւն մը լաւ ուսանելու համար՝ անոր վրայ սէր ունենալու է . ատ սէրն ալ առանց անոր անուշութիւնը զգալու չ'շարժիր . իսկ անուշութիւնը զգալու համար ալ անհրաժեշտ հարկ է սաստիկ մտադրութիւնով ձեռք զարնել սորվուելու բանին : Աերակուր մը առանց ծամելու ու լեզուին քիմքին մօտեցնելու կուլ տրուի նէ , անոր համը կ'առնուի՞ , անիկայ մարմինին լաւ սնունդ կու տայ . ասանկ ալ գիտութիւն մը , մանաւանդ այսպիսի փիլիսոփայութիւն մը առանց խոկալով ու ծանր և յարատեւ ուշադրութեամբ վերծանելու՝ սորվողին չոր ու ցամաք անհամ բան մը կու գայ . և ատիկայ իրեն ձանձրութիւն ու զգուանք բերելով , ալ այն ուսմունքը բոլորովին անօգուտ կ'ըլլայ իրեն՝ թէ որ կիսկատար գաղափարներով միտքը լեցնելով վնաս ալ չ'տայ նէ : Գիտութեան մը ազնուութիւնը ու գեղեցկութիւնը և անոր վրայ խօսող գրքին ընտրութիւնը խեր չեն ըներ անմտադիր ուսանողին . մտադիր ուսանողն է որ առջին առած ուսմունքին ծուծը քաղե-

լով կը սորվի , և անանկով ճշմարտութեան ու հմտութեան սիրով կը վառուի , և ատ տենչովը արագ արագ յառաջադիմութիւն կ'ընէ գիտութեան մէջ :

Վարձեալ ասանկ փիլիսոփայութիւն մը լաւ սորվելու համար . պէտք է անիկայ ամբողջ գրութիւնով սորվիլ և սորվեցընել : Աշակերտին և մանաւանդ դասատուին մէկ մեծ դիտելու բանն ըլլալու է աս . մէկ գիտութեան մը վրայ աղէկ ծանօթութիւն ունենալու համար , պէտք է որ անիկայ մէկ մասը մէկալին հետ բնական կապով կապուած ամբողջ գրութիւնով մը ուսանողին մտքին մէջ տպաւորուի : Պէտք է դասատուին քաջ դիտել որ աշակերտը նախ և առաջ բոլոր մտքին ընդհանուր բաժանումներուն վրայ գաղափար մը ունենայ . յետոյ ամէն մէկ բաժանման երկրորդական բաժանմունքներուն վրայ և անոնց ալ երկրորդական բաժանմունքներուն վրայ , ինչ : Անանկ որ ամէն մէկ մասնաւոր մասին վրայ հմտութիւն ունենայ նէ , անոնք կտոր կտոր մէկմէկէ անջատ ծանօթութիւններ չըլլան մտքին մէջը , այլ իրարու հետ հիւսուած և իրարու վրայ լոյս ձգող տեղեկութիւններ : (Թէ որ աս զգուշութիւնը չըլլայ , ուսանողը սորվածներուն մտադրութիւն ընէ ալ նէ , վերջապէս մէկ բան մը չ'հասկընար ըրած աշխատութիւններէն : Վիտութիւն սորվելու աս երկու կերպին բաղդատութիւնը շատ ճիշտ կը տեսնուի մասերը իրարու եկած շէնքի մը ու մասերը մեկտեղ չ'բերուած անկազմ շինուածքի մը վրայ : Ասոնց առջինը՝ երկրորդին նայելով քնչպէս է նէ , գիտութիւն սորվելու համար առաջարկած առաջին կերպերնիս ալ երկրորդին հետ նոյնպէս է : Աս երկու գլխաւոր զգուշութիւնները ըլլուելով՝ յուսանք թէ մեր աշխատութիւնն ալ շատ օգտակար և բազմարդին կ'ըլլայ . որով մեր ակնունեցած նպատակին հասնելով՝ մեծ առիթ մը ունեցած կ'ըլլանք ամենից իշխան և տեսուչ Ամենակալ Աստուծոյ գոհանալու , որ ժամանակներնուս մէկ մասը այս շահաւոր գործին պատրաստութեանը զբաղելով անցընելու արժանացուց զմեզ :

գիտութիւն ստանալ ուզէին նէ , պիտի պարտաւորէին շատ տարիներ փճացընել՝ մեկ մատենագիրէն մէկալը լոյս փնտռելու թափառելով . վերջապէս շատ ժամանակ ու վաստակ կորսնցընելէն ետեւ , շատ քիչ պիտի գտնուէր մէջերնին այնքան համբերողներ և նրբութեամբ իրերը քննողներ , որ դրութիւնով մը հրմտութիւն ունենային իմացական փիլիսոփայութեան վրայ :

Ասան որոյ խնդամիտ ուրախութեամբ՝ փափագողաց կ'ընծայենք յառաջիկայ թարգմանութիւնը , որ այսպիսի անկատարութիւններէ ազատ է , և դիւրամտօջելի կերպով մը ուսումնասէրը իր բաղձանքին կը հասցընէ : Եւ աս գրքիս հանգամանքները ինչուան հիմայ խօսուած ընտիր յատկութիւններն ըլլալով , իրաւամբ կը յորդորենք բոլոր Հայազգի ուսումնասէրները և մանաւանդ վարժարաններու և բարձրագոյն դպրոցներու տնօրէնները , որ աս Իմացական Փիլիսոփայութիւնը , որ դեռ նոր կերէնայ Հայազգեաց մէջ , դուրս չ'ձգեն իրենց հոգողութեանը յանձնեալ պատանիներուն դաստիարակութեանը միջոց եղող գրոց կարգէն , և ամենայն ջանիւք փութան աս բարձր ուսմունքը ազգին մէջ տարածելու , որուն դաստիարակութեան մէջ ինչ տեղ ու աստիճան ունենալը աներկբայելի դիտողութեամբ տեսանք յառաջաբանիս սկիզբը :

Սակայն , հարկաւոր կը սեպենք սա ծանօթութիւնն ալ տալ , որ այսպիսի հմտութեան մը շահ ընդունելու կեպով հետեւելու համար , պէտք է յարատեւ և անբեկբեկ մտադրութիւն : Ըռանց քաջ մտադրութիւն ընելու բան մը լաւ չ'սորվուիր , այլ միայն հարեանցի հմտութիւն մը կրնայ ունենալ մարդ՝ որ աս գիտութիւնը ամենեւին չ'գիտնալէն քիչ տարբերութիւն ունի : Գիտութիւն մը լաւ ուսանելու համար՝ անոր վրայ սէր ունենալու է . ատ սէրն ալ առանց անոր անուշութիւնը զգալու չ'շարժիր . իսկ անուշութիւնը զգալու համար ալ անհրաժեշտ հարկ է սաստիկ մտադրութիւնով ձեռք զարնել սորվուելու բանին : Կերակուր մը առանց ծամելու ու լեզուին քիմքին մօտեցընելու կուլ սորուի նէ , անոր համը կ'առնուի , անիկայ մարմինին լաւ սնունդ կու տայ . ասանկ ալ գիտութիւն մը , մանաւանդ այսպիսի փիլիսոփայութիւն մը առանց խոկալով ու ծանր և յարատեւ ուշադրութեամբ վերծանելու՝ սորվողին չոր ու ցամաք անհամ բան մը կու գայ . և ասիկայ իրեն ձանձրութիւն ու զզուանք բերելով , ալ այն ուսմունքը բորբոսփն անօգուտ կ'ըլլայ իրեն՝ թէ որ կիսկատար գաղափարներով միտքը լեցընելով վնաս ալ չ'տայ նէ : Գիտութեան մը ազնուութիւնը ու գեղեցկութիւնը և անոր վրայ խօսող գրքին ընարութիւնը խեր չեն ըներ անմտադիր ուսանողին . մտադիր ուսանողն է որ առջին առած ուսմունքին ծուծը քաղե-



ըով կը սորվի , և անանկով ճշմարտութեան ու հմտութեան սիրով կը վառուի , և աս տենչովը արագ արագ յառաջագիմութիւն կ'ընէ գիտութեան մէջ :

Վարձեալ ասանկ փիլիսոփայութիւն մը լաւ սորվելու համար . պէտք է անիկայ ամբողջ գրութիւնով սորվիլ և սորվեցընել : Աշակերտին և մանաւանդ դասատուին մէկ մեծ դիտելու բանն ըլլալու է աս . մէկ գիտութեան մը վրայ աղէկ ծանօթութիւն ունենալու համար , պէտք է որ անիկայ մէկ մասը մէկպիսին հետ բնական կապով կապուած ամբողջ գրութիւնով մը ուսանողին մտքին մէջ տպաւորուի : Պէտք է դասատուին քաջ դիտել որ աշակերտը նախ և առաջ բոլոր մտքին ընդհանուր բաժանումներուն վրայ գազաւիար մը ունենայ . յետոյ ամէն մէկ բաժանման երկրորդական բաժանմունքներուն վրայ և անոնց ալ երկրորդական բաժանմունքներուն վրայ , և : Անանկ որ ամէն մէկ մասնաւոր մասին վրայ հմտութիւն ունենայ նէ , անոնք կտոր կտոր մէկմէկէ անջատ ծանօթութիւններ չըլլան մտքին մէջը , այլ իրարու հետ հիւսուած և իրարու վրայ լոյս ձգող տեղեկութիւններ : Ինչ որ աս զգուշութիւնը չըլլայ , ուսանողը սորվածներուն մտադրութիւն ընէ ալ նէ , վերջապէս մէկ բան մը չ'հասկընար ըրած աշխատութիւններէն : Վիտութիւն սորվելու աս երկու կերպին բաղդատութիւնը շատ ճիշտ կը տեսնուի մասերը իրարու եկած շէնքի մը ու մասերը մեկտեղ չ'բերուած անկազմ շինուածքի մը վրայ : Ասոնց առջինը՝ երկրորդին նայելով ինչպէս է նէ , գիտութիւն սորվելու համար առաջարկած առաջին կերպերնիս ալ երկրորդին հետ նոյնպէս է : Աս երկու գլխաւոր զգուշութիւնները ըլլուելով՝ յուսանք թէ մեր աշխատութիւնն ալ շատ օգտակար և բազմարդին կ'ըլլայ . որով մեր ակնունեցած նպատակին հասնելով՝ մեծ առիթ մը ունեցած կ'ըլլանք ամենից իշխան և տեսուչ Ամենակալ Աստուծմէ գոհանալու , որ ժամանակներնուս մէկ մասը այս շահաւոր գործին պատրաստութեանը զբաղելով անցընելու արժանացուց զմեզ :



# ԲՈՎԱՆԻԿՈՒԹԻՒՆ

## ԲԵՃԱՆՄՈՒՆԻԿ ԱՌԱՋԻՆ

### ԻՄԵՅԵԿՆՈՒԹԻՒՆ ԿԵՄ ՀԱՍՈԳՈՒԹԻՒՆ

ՄՏՔԻՆ ԻՄԵՅԵԿԵՆ ՀԵՆԳԵՓԵՆՔՆԵՐԸ

## ՍԵՍՆ ԱՌԱՋԻՆ

### ԻՄԵՅԵԿՆՈՒԹԵԼԵՆ ԵՐՏԵՔՈՒՍՏ ԾԱԳԵՕ՝

ՀԵՆԳԱՄԵՆՔՆԵՐԸ

## ԳԼՈՒԽ Ե

ՍԻՂԵՆ ՀԻՊՈՏԵԼԻՍ ԸՆԴՀԱՆՐԱՊԷՆ

Հարցաթիվ	Երկ
1 • Երբեակ բաժանմունք մտայ . . . . .	1
2 • Արկին բաժանմունք իմացականութեան . . . . .	11
3 • Մարին ունեցած կապակցութիւնը աշխարհիս նիւթական բաներուն հետ . . . . .	2
4 • Մեր առաջին հմտութեան սկիզբը ընդհանրապէս արտաքուստ է . . . . .	3
5 • Երբն աս ճշմարտութիւնը մանկանց և տղայոց մտաւորական յառաջադիմութեան եղանակէն ապացուցեալ . . . . .	4
6 • Գիտութեան սկզբնաւորութիւնը արտաքուստ ըլլալուն ուրիշ վկայութիւն մը . . . . .	5
7 • Ուրիշ վկայութիւն մըն ալ ՚ի հաստատութիւն աս նիւթիս . . . . .	6
8 • Բացատրութիւն Հակորոս Սիլէնիս պատմութեանէն . . . . .	8

ԲՈՎՆԵԳԵԿՈՒԹԻՒՆ

ԳԼՈՒԽ • Բ

Օգայտութեան և խոյան

9 .	Օգայտութիւնը զգայարանքներէն սկիզբն առած պարզ մտաւոր հանդամանք մըն է . . . . .	9
10 .	Ըմէն զգայութիւն , տիրապէս և ուղիւ խօսելով , մնաց մէջ կ'ըլլայ . . . . .	10
11 .	Օգայտութիւնը ըսելով զգալէաց պատկերք կամ նմանութիւնք իմանալու չենք . . . . .	11
12 .	Ֆիզիզական եւ մտաւորական փոփոխութեանց մէջտեղը եղած կապակցութիւնը անմեկնելի է . . . . .	12
13 .	Իմացումն ի՞նչ ըսել է և ի՞նչ բան է . . . . .	13
14 .	Իմացմամբ նիւթական աշխարհքս կը ճանչնանք . . . . .	14
15 .	Նիւթերու նախնական երկրորդական յատկութեանցը վրայ . . . . .	15
16 .	Լքիւրըդական յատկութիւնք նիւթոց . . . . .	15

ԳԼՈՒԽ • Գ

Օգայտութեան հոստատութեան և ճաշկան

17 .	Սարդուս զգայարանքները իբրև աղբիւր հմտութեան ի՞նչ են եւ որքան կարեւոր . . . . .	16
18 .	Ըղեղին զգայութեան եւ իմացման հետ ունեցած կապակցութիւնը . . . . .	17
19 .	Օգայտարանաց վրայ ըլլալու բնութեան կարգը . . . . .	18
20 .	Օգայտարան և զգայութիւն հոտառութեան . . . . .	19
21 .	Իմացումն հոտառութեան նորին զգայութեանէն որոշելով . . . . .	20
22 .	Օգայտարան եւ զգայութիւնք ճաշկան . . . . .	22

ԳԼՈՒԽ • Գ

Օգայտութեան և ստորութեան

23 .	Լսողական զգայութեան գործարանը . . . . .	22
24 .	Չայնի զգայութեանց զանազանութեանը վրայ . . . . .	23
25 .	Չայնին ուսկից զալը որոշելն ինտոք կը սորվինք . . . . .	24

ԳԼՈՒԽ • Ե

Օգայտութեան և լուսնի

26 .	Շօշափելեաց զգայարանքին վրայ ընդհանրապէս եւ անոր զգայութեանցը վրայ . . . . .	25
27 .	Պուրսի կամ արտաքինութեան ծանօթութեանը թեւադրութիւնը շօշափման զգայութիւնով կ'ըլլայ . . . . .	26
28 .	Տարածութեան եւ ձեւոյ ծանօթութեանց սկիզբը . . . . .	28
29 .	Տարածութեան եւ պաղութեան զգայութիւններուն վրայ . . . . .	29
30 .	Վարձրութեան եւ կակղութեան զգայութեանց վրայ . . . . .	30
31 .	Լքրեմն շօշափման զգայութեանց կարգը դրուած մէկ քանի անորոշ զգացումներ . . . . .	31
32 .	Օգայտութեան եւ անով նշանակելալ արտաքին իրին մէջ եղած վերաբերութիւնը . . . . .	32

# ԲՈՎՆԵՆԵ ԿՈՒԹԻՒՆ

## ԳՆՈՒԽ • Զ

Չգայտրան րէտ-իւտ

33 • Գործարան տեսութեան եւ տեսութեան զգայարանքին օգտակարութիւնը	35
34 • Տեսութեան իմացումն ըլլալուն եղանակը կամ գործողութիւնը	36
35 • Բնիկ եւ ստացական իմացմունք տեսութեան	37
36 • Տարածութեան գաղափարը 'ի բնէ տեսութենէ չէ	38
37 • Չեւոյ վրայ տեսութեամբ ունեցած գիտութիւննիս	39
38 • Վոյրերէն բացատրութիւնն սս նիւթիս վրայ	40
39 • Ընթով մեծութիւնն չափել	41
40 • Վառակուղի մէջ տեսնուած առարկաներ	42
41 • Ըրեւին ու լուսնին հորիզոնին վրայ ցուցուցած երեւոյթքը	43
42 • Տեսութեամբ հեռաւորութիւնն չափել	43
43 • Տեսութեամբ հեռաւորութիւնն չափելու նշանները	44
44 • Ըսանց միջանկիալ առարկաներու օբնութեան հեռաւորութիւնն չափել	45
45 • Ովկիանոսին վրայ տեսութեան առարկաներուն ինչպէս երեւնալը եւ	46

## ԳՆՈՒԽ • Է

Ունախութեան չգայտրան իւ իմացան

46 • Ընչհանուր գիտողութիւնն ունակութեան օրէնքին եւ անոր վերաբերու- թիւններուն վրայ	46
47 • Ունակութեան օրէնքը ինչպէս որ մարդուս մտքին նոյնպէս եւ մարմի- նին ալ կը վերաբերի	48
48 • Ունակութիւնն հոտաւորութեան	49
49 • Ունակութիւնն ճաշակման	50
50 • Ունակութիւնն լսողութեան	52
51 • Ունակութիւնն շօշափման	53
52 • Ուրիշ զարմանալի օրինակներ շօշափման ունակութեան	55
53 • Ունակութիւնն տեսութեան	56
54 • Զգայութիւնք ոչ միայն բացարձակ, այլ վերաբերական աճումն ալ կրնան ունենալ զօրութիւնով	58
55 • Վասնաւոր դորձքերու եւ արհեստներու մէջ ձեւացած ունակութիւններ	59
56 • Ունակութիւնն տեսութեան առարկաներու շրջագծին եւ ձեւոյն իմաց- մանը վրայ	60
57 • Վերի վարդապետութեանը հաստատութիւնն սուղ մէկ քանի եղելու- թիւններ	61
58 • Սրիւարգին վարդապետութեանը վրայ մէկ երկու ուրիշ բացատրու- թիւններ	62

## ԳՆՈՒԽ • Բ

Վերլուծումն

59 • Վերլուծման նշանակութիւնն ու հանգամանքները	64
60 • Տեսութեան առարկաներու վերլուծմունք	65
61 • Վերլուծման վրայ ունակութեան ունեցած ներգործութիւնը	67
62 • Տեսողական վերլուծմանց վրայ ունակութեան ունեցած ներգործութիւնը	68
63 • Վերլուծմանց հարկաւորութիւնը նկարագրութեան մէջ	70
64 • Վայրկենական հաւատքով վերլուծմանց գոյաւորիք	70

65 • Իմացմանց հետ միացած վերըմխոնմունք . . . . .	72
66 • Վերըմխոնմունք կեղծ թատրոնական խաղերու վրայ . . . . .	74

ԳՆՈՒԽ • Թ

Պարզ է— յոթսուցուհայ հրատար հանգստանք

67 • Պարզն եւ յօղուածոյն որոշելը նւակէց կը ծագի . . . . .	75
68 • Պարզ մտաւոր հանգամանաց բնութիւնն ու յատկութիւնները . . . . .	77
69 • Պարզ մտաւոր հանգամանքները սահմանի չլին գար . . . . .	76
70 • Պարզ մտաւոր հանգամանաց իրական բաներ ցուցնելը . . . . .	77
71 • Յօղուածոյ գաղափարաց սկիզբը , եւ պարզ գաղափարաց հետ ունեցած վերաբերութիւննին . . . . .	78
72 • Ըրանց նախնութեաց պարզ դաստիարակութեամբ յօղուածոյ գաղափար կրնայ կազմուիլ կարծելուն պատրանք ըլլալը . . . . .	79
73 • Յօղուածոյ ըսելով ձիւղ ի՞նչ պիտի հասկնանք . . . . .	80
74 • Ստաւոր վերլուծութեան վրայ բացատրութիւն . . . . .	81
75 • Ըրտաբուստ ծագած յօղուածոյ գաղափարք . . . . .	83
76 • Սեր իբրեւ ամբողջ նկատած առարկաներուն վրայ . . . . .	11

ԳՆՈՒԽ • Ժ

Վերացուցումն

77 • Յօղուածոյ գաղափարաց վերլուծութեանը մէջ վերացուցումն ըլլալը . . . . .	84
78 • Սանստաւոր վերացեալ գաղափարներու օրինակներ . . . . .	85
79 • Սանստաւոր վերացեալ գաղափարաց վերացուցման գործողութիւնը . . . . .	87
80 • Ընդհանուր վերացեալ ծանօթութիւնք ըսելով սեռ եւ տեսակ կը հասկըցուի . . . . .	88
81 • Սարգաւորութեան գործողութեանը կամ սեռ եւ տեսակ յօրինելուն վրայ . . . . .	89
82 • Ի սկզբան ըրած կարգաւորութիւններնիս երբեմն սխալ կ'ըլլան . . . . .	90
83 • Վկիզբները ըրած կարգաւորութիւններնուս վրայ բացատրութիւն . . . . .	91
84 • Թէ ի՞նչ են ընհանուր վերացեալ գաղափարք . . . . .	92
85 • Ընդհանուր վերացուցման օգտակարութիւնը թուելու կողմանէ , եւ . . . . .	93
86 • Ընդհանուր վերացեալ սկզբանց կամ ձմարութեանց վրայ . . . . .	11
87 • Փիլիսոփայից եւ ուրիշներուն հայեցողութեանցը վրայ . . . . .	95

ԳՆՈՒԽ • ԺԵ

Ստաւորութիւն

88 • Ստաւորութեան ընդհանուր բնութեանը վրայ . . . . .	96
89 • Ե՛լ եւ այլ աստիճան մտադրութեանց վրայ . . . . .	11
90 • Յիշողութեան մտադրութեանէ կախեալ ըլլալը . . . . .	97
91 • Ստաւորութեան ատեն մտադրութիւն ընել . . . . .	99
92 • Ստաւորութեանս վրայ չեմ կրնար իշխել . . . . .	100

ԳԼՈՒԽ • ԺԲ

Երազարտութիւն

93 .	Երազի սահմանն ու ընդհանրութիւնը . . . . .	102
94 .	Երթնութեան խորհուրդներնուս հետ երազներուն ունեցած կապակցութիւնը . . . . .	103
95 .	Շատ անգամ զբայութիւնէ կը պատճառի երազը . . . . .	104
96 .	Երազներու անպատշաճութեանը վրայ բացատրութիւն : (տ՝ Պատճառ :)	105
97 .	Երազներու անպատշաճութեան Երկրորդ պատճառը . . . . .	106
98 .	Երազներու երեւութեան իրականութեանը վրայ : (տ՝ Պատճառ :)	107
99 .	Երազներու երեւութեան իրականութեանը վրայ : (ք՝ Պատճառ :)	108
100 .	Երազն մէջ ժամանակը ի՞նչպէս կը չափուի . . . . .	109
101 .	Կարծիքաց հատուածին մէջ խօսուածներուն վրայ բացատրութիւն . . . . .	111

ՄԸՍՆ ԵՐԿՐՈՐԿ

ԻՄԸՅԵԿԵՆՈՒԹԻՒՆ ԴՆԵՐԲՈՒՍՏ ԾԵԳԵԾ  
ՀԵՆԳԵԹԵՆԲՆԵՐԸ

ԳԼՈՒԽ • Ը

Կերբէն սկիզբն գիտութեան

102 .	Հողին զիտութեան ազբիւրներ ունի իր ներսիզին . . . . .	115
103 .	Երբին հաստատութիւնը թէ հողին ինք իր մէջը զիտութեան ազբիւրներ ունի . . . . .	116
104 .	Հմտութեան սկզբնաւորութիւնը զգայարանքներէն է . . . . .	117
105 .	Կերբին ստացուին ալ կ'ըլլայ հմտութեան . . . . .	118
106 .	Կերբին սկիզբն ունեցող ծանօթութեանց օրինակներ . . . . .	118
107 .	Կերբին սկիզբն ունեցող գաղափարներու ուրիշ օրինակներ . . . . .	119

ԳԼՈՒԽ • Բ

Սկիզբնալից իւրաքրուութիւն

108 .	Իմեղազրութեան նշանակութիւնը ու գործողութիւնը . . . . .	120
109 .	Կոյութեան , մորի , անձնական գոյութեան եւ անձնական նոյնութեան ծանօթութիւնները . . . . .	121
110 .	Միութեան ինչ ըլլալը եւ ատ ծանօթութեան սկիզբը . . . . .	123
111 .	Յաջորդութեան ինչ ըլլալը եւ յաջորդութեան ծանօթութեան սկիզբը . . . . .	124
112 .	Տեւողութեան ծանօթութեան սկիզբը . . . . .	125
113 .	Բացատրութիւն տեւողութեան ինչ ըլլալուն վրայ . . . . .	126

114	• Եւսեբիոսի եւ Ժամանակի չափերուն ու յաւիտենականութեան վրայ	127
115	• Միջոցի գաղափարին ծագումը արտաբնական չէ . . . . .	11
116	• Միջոցի գաղափարին սկիզբը թեւադրութեանն է . . . . .	129
117	• Օգորութեան ծանօթութեանը սկիզբը . . . . .	130
118	• Օգորութեան գաղափարին ծագմանը առիթները . . . . .	11
119	• Բարւոյ եւ չարի գաղափարներուն վրայ . . . . .	131
120	• Բարոյական արժանաւորութեան եւ անարժանաւորութեան գաղափարներուն սկիզբը . . . . .	132
121	• Ուրիշ հմտութեան տարրեր թեւադրութեանն ծագած . . . . .	133
122	• Թեւադրութիւնը ոչ միայն գաղափարներու , այլ եւ սկզբունքներու ալ աղբիւր մըն է . . . . .	134

ԳՂՈՒԽՍ • Գ

Գիտակցութիւն

123	• Գիտակցութիւն երկրորդ աղբիւր ներքին գիտութեան . անոր բնութիւնը . . . . .	135
124	• Ուրիշ ծանօթութիւններ բուն գիտակցութեան առարկաներուն վրայ	136
125	• Գիտակցութիւնը հասարակ չիմն կամ օրէնք է . . . . .	137
126	• Գիտակցութիւնով ունեցած հմտութիւններնու մէկ քանի օրինակները	138

ԳՂՈՒԽՍ • Գ

Սկզբունքներու թեւադրութիւնն իմ Գաղափարներէն

127	• Ընդունութիւն իմանալուն կամ զգալուն կարողութիւնը . . . . .	140
128	• Սերաբերութեան զգացմանց ծագելուն առիթները . . . . .	141
129	• Ընդունակ անուններու օգտակարութեանը վրայ . . . . .	142
130	• Ի . Երկրորդութեան եւ զանազանութեան վերաբերութիւններուն վրայ . . . . .	11
131	• Է . Ըստիճանի առնչութիւններն ու անոնց անունները . . . . .	143
132	• Ը . Համեմատութեան առնչութիւններու վրայ . . . . .	144
133	• Թ . Տեղի կամ դիրքի վերաբերութեանց վրայ . . . . .	145
134	• Ե . Եւսեբիոսի առնչութեան վրայ . . . . .	146
135	• Ստացման ծանօթութիւններու վրայ . . . . .	147
136	• Պատճառի եւ գործի վերաբերութեանց վրայ . . . . .	148
137	• Պատճառի եւ գործի առնչութիւն պարունակող յօդուածոյ բառերու վրայ . . . . .	150
138	• Սերաբերական թեւադրութեան տրամաբանութեան հետ ունեցած կապակցութիւնը . . . . .	11

ԳՂՈՒԽՍ • Ե

Օրոգորութիւնն : (ա) Գիտակցութեան օրէնքները

139	• Ըստ նիւթը հոս բնականուս պատճառները . . . . .	151
140	• Օրոգորութեան նշանակութիւնը ու բացատրութիւնները . . . . .	152
141	• Օրոգորութեան ընդհանուր օրէնքներուն վրայ . . . . .	153
142	• Գիտակցութիւն՝ զուգորութեան առաջին ընդհանուր օրէնքը . . . . .	154
143	• Գիտակցութեանց նմանութեանը վրայ . . . . .	155
144	• Գիտակցութիւն՝ երկրորդ ընդհանրական կամ նախնական օրէնք . . . . .	11
145	• Սերաբերութիւն՝ երրորդ ընդհանրական կամ նախնական օրէնք . . . . .	157
146	• Պատճառ եւ գործք՝ չորրորդ նախնական օրէնք . . . . .	158



ԳՂՈՒԽՈՒՆ . Օ

Օգտագործումն է (Է) Երբորդուտն օրհեհերը

147 . Երկրորդական օրհներ , եւ նահանականներուն հետ ունեցած կապակցութիւննին	159
148 . Ժամանակի անցման ազդեցութեանը վրայ	160
149 . Կրկնութեան կամ ունակութեան երկրորդական օրհները	161
150 . Կցորդեալ զգացմանց երկրորդական օրհները	162
151 . Բնագրայտ տարբերութիւնք մտաւոր կազմութեան	163
152 . Դասերնծաց օրհներն վրայ՝ զգացողութեանց վերաբերելով	165

ԳՂՈՒԽՈՒՆ . Լ


Յիշողութիւն

153 . Ըրանօթութիւնք յիշողութեան ընդհանուր բնութեանը վրայ	167
154 . Յիշողութեան հաւատքի հիմ մը կամ օրհներ մը բլլալը	168
155 . Ելեւ այլ աստիճան յիշողութեանց վրայ	169
156 . Սասնաւորաց յիշողութիւն , կամ յիշողութեան այն տեսակը , որ տեղոյ եւ ժամանակի վերաբերութիւններուն վրայ հիմնեալ է	170
157 . Սասնաւորաց յիշողութեան վրայ բացատրութիւններ	171
158 . Փիլիսոփայական յիշողութեան վրայ , կամ այն տեսակ յիշողութեան վրայ , որ չէ թէ մերձաւորութեան՝ այլ ուրիշ վերաբերութեանց վրայ հիմնեալ է	172
159 . Փիլիսոփայական յիշողութեան վրայ բացատրութիւնք	173
160 . Բաղձողական յիշողութեան վրայ	174
161 . Բաղձողական յիշողութեան ինչ բլլալը	175
162 . Դասերնծաց ծանօթութեանց վրայ բացատրութիւն	"
163 . Լաւ յիշողութեան նշանները	177
164 . Յիշողութիւնք կրթելու կերպեր կամ կանոններ	178
165 . Յիշողութիւնք կրթելու ուրիշ կանոններ	180
166 . Յիշողութեան հետ միացած նկատողութիւն ճշմարտութեան	182

ԳՂՈՒԽՈՒՆ . Բ

Տեղագործումն է Յիշողութեան

167 . Մտացած կարծուած խորհրդոց եւ զգացմանց նորէն միտք գալը	183
168 . Ֆիզիզական կազմուածքնուս վրայ եղած ազդեցութիւններէ մտաւոր ներգործութիւններնուս կենդանանալը	184
169 . Մտաւոր ներգործութեանց կենդանանալուն եւ անցեալ խորհրդոց կենդանանալուն վրայ ուրիշ օրինակներ	186
170 . Սասնիկ ճերմին յիշողութեան վրայ ունեցած ներգործութիւնք	187
171 . Բուլերիճէն հաստատութիւն եւ բացատրութիւն աս դիտողութիւններուս	"
172 . Ես գլխուն սկզբունքներուն վերաբերութիւնք դաստիարակութեան հետ	190
173 . Ես վարդապետութեան վերին դաստաստանին եւ գալու կեանքին հետ ունեցած կապակցութիւնք	191



3185  
2252  
1005  
5050

ԻՌՈՎՆԵՆԳԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

ԳԼՈՒԽ Ժ

Տրամաբանութիւն

174	• Տրամաբանութիւնը դադարիարներու եւ հմտութեան աղբիւր է	193
175	• Տրամաբանութեան եւ առաջարկութեան սահմանը	194
176	• Լձն տրամաբանութեան մէջ մտքին կատարած գործողութիւնը	195
177	• Կախընթաց հատուածին վրայ բացատրութիւն	196
178	• Բազարկութեանց վրայ եղած ընտրութեան հիմնական պատճառները	197
179	• Տրամաբանութիւն ըսելով կ'իմացուի թէ հարկաւ նախընթաց կամ ենթադրեալ առաջարկութիւններ կան	199
180	• Կոյն նիւթին վրայ ուրիշ դիտողութիւններ	199
181	• Տրամաբանութեան կարողութեանը կողմանէ զանազանութիւններ	200
182	• Տրամաբանութեան ունակութեանը վրայ	202
183	• Խօսելով կամ արտայայտելով եղած տրամաբանութեան վրայ	203
184	• Կախընթաց հատուածին վրայ բացատրութիւն	204

ԳԼՈՒԽ Ժ

Վարդապետի տրամաբանութիւն

185	• Վարդապետի տրամաբանութեան ենթակաները	205
186	• Վարդապետի տրամաբանութեան մէջ գործածուած սահմաններուն եւ առածներուն օգուտը	206
187	• Վարդապետի տրամաբանութեանց հակառակը անտեղի կ'ըլլայ	208
188	• Վարդապետութիւնը այլ եւ այլ աստիճան հաւատքի ընդունակ չեն	209
189	• Վարդապետութեանց մէջ գործածուած երկրաչափական ձեւերու օգուտը	210

ԳԼՈՒԽ ԺԸ

Նարոյտի տրամաբանութիւն

190	• Նարոյտի տրամաբանութեան ենթականերուն եւ կարեւորութեանը վրայ	211
191	• Լձն բան է բարոյական ստուգութիւնը	212
192	• Սերարանական տրամաբանութիւն	213
193	• Սակարկութեան տրամաբանութիւն	214
194	• Սիւաւորեալ կամ հաւաքեալ ձեւնարկութիւնը	215

ԳԼՈՒԽ ԺԹ

Վարձեական խոնի տրամաբանութիւն

195	• Տրամաբանութեան վերաբերեալ գործնական կանոններու վրայ	217
196	• Վէտք է ճշմարտութեան սիրով շարժուիլ տրամաբանութեան մէջ	218
197	• Հետազոտութեան նիւթը շտապ նշանակելու համար տարուելու հոգը	218
198	• Ինտէլեկտի ինչ տեսակ ապացոյց տալ պէտք է խնդրոյն	219
199	• Սոստ ձեռնարկութիւններու կամ իմաստակութիւններու օգնութեան մէ' դիմելը	220
200	• Երկդիմի կամ հոմանուն բառեր գործածելուն իմաստակութիւնը	222
201	• Լիզ յաջողութեան պարադայէն գործքերու եւ անձանց վրայ դատաստան	

	ընկերւն իմաստակութիւնը	223
202	Սէր կարծիքներուն վրայ հաստատուն մնալուն վրայով	224
203	Վերսասակ ճշմարտութեան լոկ յաղթութեան համար վիճաբանութիւն ընկեր ինչ ներդրութիւն ունի մարդու մտքին	225

ԳՂՈՒԽՈՒՆ ԺԳ

Լըրեակայութեան

204	Լըրեակայութիւնը իմացական գործողութիւն մին է յաւէտ քան թէ զգայական	226
205	Լըրեակայութիւնը շատ մերձաւորութիւն ունի տրամաբանութեան կա- րողութեանը	227
206	Լըրեակայութեան կարողութեան սահմանը	228
207	Լըրեակայութեան ծնունդներն ասղծած ատենը մտքին կատարած գործողութիւնը	229
208	*Նոյն նիւթին վրայ ուրիշ ծանօթութիւններ	230
209	Իտոն դրութիւններէն բացատրութիւն	231
210	Սէկ վերըմբռնումը միւսէն աւելի բնորոշուն հիմնական պատճառները	»
211	*Նոյն նիւթին վրայ բացատրութիւն Սիլլոմբէն	232
212	Լըրեակայութեան ծնունդները բոլորովին կամաւոր չեն	233
213	*Եստիմիաց հատուածին վրայ բացատրութիւն	234
214	Լըրեակայութեան կարողութեանը օդտակարութեանը վրայ	235
215	Լըրեակայութեան օդտակարութիւնը տրամաբանութեան մէջ	237

ԳՂՈՒԽՈՒՆ ԺԳ

Ընկերութեան ներդրութեան իմաստակարարութեան

(Ա) Գրգռեալ վերըմբռնումն է՝ կամ Ա՝ Աջ՝ Տե՛նէլ

216	Ընկերութեան իմացական ներդրութեանց մարմինն հետ կապակցութիւն ունենալուն վրայ	239
217	Գրգռեալ վերըմբռնմանց կամ առ աջօք տեսիլքներու վրայ ընդհանրապէս	240
218	Տեսութեան քիչ տեսողութիւն ունեցող գրգռեալ վերըմբռնմանցը վրայ	241
219	Չայնի քիչ յարատեւութիւն ունեցող գրգռեալ վերըմբռնմանցը վրայ	242
220	Ասպին պատճառ տեսողական վերըմբռնմանց կամ առ աջօք երեւոյթ- ներու . Աջքին ցանցակերպին անտաւոր զգայութիւնը	243
221	Տեսողական գրգռեալ վերըմբռնումներու կամ առ աջօք երեւոյթներու երկրորդ պատճառ . Մտն ատեն արիւն աննշուն զանցառութիւնը	246
222	Վերոյիշեալ դիպուածին մէջ գործածուած դարմանը	248
223	Երրորդ պատճառ գրգռեալ վերըմբռնմանց . Տե՛նդ	249
224	Չորրորդ պատճառ առ աջօք երեւոյթներու եւ ուրիշ գրգռեալ վեր- ըմբռնումներու . Ուղղի բորբոքումն	250
225	Գրգռեալ վերըմբռնմանց չորրորդ պատճառին վերաբերեալ դիպուածներ	251
226	Անգերրորդ պատճառ առ աջօք տեսիլքներու . Մրգանդի անտեր	252

# ԲՈՎՆԵԳԵ ԿՈՒԹԻՒՆ

## Գ ԼՈՒԽՍ ԺԵ

Անկարգ ներգործություններ հասցուցանողներ

(Է) Խելագործություններ

227	• Խելագարութիւն բառին նշանակութիւնը . . . . .	253
228	• Անկարգ կամ խանգարեալ զգայութեանց վրայ . . . . .	254
229	• Անկարգ կամ խանգարած արտաքին խմացումն . . . . .	255
230	• Խանգարումն կամ խելագարութիւն սկզբնական թելադրութեան . . . . .	257
231	• Խանգարումն կամ խելագարութիւն գիտակցութեան . . . . .	258
232	• Խելագարութիւն գատողութեան կամ վերաբերական թելադրութեան . . . . .	259
233	• Անկարգ կամ խանգարած զուգորդութիւն : (Վեթեամտութիւն . . . . .	260
234	• Վերդիշեալ մտաւոր անկարգութեան վրայ բացատրութիւն . . . . .	”
235	• Մասնական խելագարութիւն կամ խանգարումն յիշողութեան . . . . .	261
236	• Մասնական խելագարութիւն տրամաբանութեան . . . . .	263
237	• Վերդիշեալ ծանօթութեան համեմատ խանգարած տրամաբանութեան օրինակ . . . . .	264
238	• Երեւակայութիւնով եղած մասնական մտաւոր խանգարումն . . . . .	265
239	• Խելագարութիւն կամ խանգարումն հաւատքի զօրութեան . . . . .	267

# Բ Ա Յ Ա Ն Մ ՈՒ Ն Ի Ե Ր Կ Ր ՈՐ Գ

## ՉԳԵՅՈՂ ՈՒԹԻՒՆ

ՄՏԻՒՆ ՉԳԵՅԵԿԵՆ ԿԵՄ ՉԳԵՅՈՂԱԿԵՆ

ՀԵՆԳԵՄԵՆՔՆԵՐԸ

## ՆԵՐՇՆՕՒԹԻՒՆ

Վարչատնտեսական օգնություններ

240	• Մկնարկութիւն ամբողջ մտքին ընդհանուր բաժանմունքին . . . . .	271
241	• Չգացողութեանց ներգործութիւնը խմացականութեան ներգործութեանէն կախեալ է . . . . .	272
242	• Չգացողութեանց բնականի եւ բարոյականի բաժանումը . . . . .	”
243	• Բնական եւ բարոյական զգացողութիւնք մէկմէկէ տարբեր առարկաներ ունին . . . . .	273
244	• Բարոյական զգացողութիւնք բնական զգացողութիւններէն բաբձր են աստիճանաւ . . . . .	274
245	• Բնատունները բարոյական զգացողութիւն չունին . . . . .	275
246	• Վարդաւորութիւն բնական զգացողութեանց . . . . .	”
247	• Վարդաւորութիւն բարոյական զգացողութեանց . . . . .	276

Ս Ը Ս Ն Ը Ռ Ը Ջ, Ի Ն

Ի Ն Ե Կ Ը Ն Զ Գ Ը Յ Ո Ղ ՈՒ Թ Ի Ւ Ն Ի Ն Ի

Կ Ը Ր Գ Ը Ռ Ը Ջ, Ի Ն

Հ Ը Ր Թ ՈՒ Թ Ի Ւ Ն Ի Ն Ի

Գ Լ ՈՒ Խ Ը

Հարժուութեանց Բնութիւնք

248 .	Հարժութեանց վրայ հմտութիւն կ'ունենանք գիտակցութեամբ . . . . .	281
249 .	Հարժութեանց տեղւոյն վրայ , ուրիշ մտաւոր ներգործութեանց վերաբերելով . . . . .	282
250 .	Հարժութեանց որպիսութիւնը իմացմանց որպիսութեանը հետ մէկտեղ կը փոփոխի . . . . .	283
251 .	Հարժութեանց արագութեան եւ զանազանութեան յատկութիւններուն վրայ . . . . .	285

Գ Լ ՈՒ Խ Ի

Հարժութեան Գեղեցիութեանք

252 .	Գեղեցիութեան շարժութիւններուն հանդամանքները . . . . .	286
253 .	Գեղեցիկ բան ըսելով ինչ բնէ կ'ուզենք . . . . .	287
254 .	Գեղեցիկ առարկաները ուրիշ առարկաներէ ինչով կ'որոշուին . . . . .	288
255 .	Գեղեցիութեան շարժութեանց պատճառներուն կամ առիթներուն զանազանութիւնը . . . . .	289
256 .	Մենք բան հարկաւորապէս յարմարութիւն չունի գեղեցիութեան շարժութիւն պատճառելու . . . . .	291
257 .	Գեղեցիութեան շարժութեանց ընդունակութիւնը մեր մտաւոր կազմութեան մէկ վերջին սղջումնքն է . . . . .	292
258 .	Նշանօթութիւնք ձեւերու գեղեցիութեան վրայ : — Ֆորթրակ . . . . .	293
259 .	Բնածին կամ ներքին գեղեցիութեան վրայ : — Ֆորթրակ . . . . .	294
260 .	Ուղիղ եւ անկիւնաւոր ձեւերու գեղեցիութեան վրայ . . . . .	295
261 .	Բառակուտի , բրգածեւ եւ եռանկիւն ձեւերու վրայ . . . . .	296
262 .	Վոյնի բնածին կամ ներքին գեղեցիութեան վրայ . . . . .	297
263 .	Վոյներու ընդարդս գեղեցիութեանը վրայ ուրիշ բացատրութիւններ . . . . .	299
264 .	Չայներու գեղեցիութեան աղբիւր ըլլալուն վրայ . . . . .	300
265 .	Բացատրութիւնք ձայներու բնածին գեղեցիութեանը վրայ . . . . .	302
266 .	Չայներու բնածին գեղեցիութեան ուրիշ օրինակներ . . . . .	304
267 .	Լքրաժշտութեան ազդեցութեան յարատեւութիւնը անոր բնածին բան մը ըլլալէն կախեալ է . . . . .	305
268 .	Հարժման գեղեցիութեան մէկ տարրը ըլլալուն վրայ . . . . .	306
269 .	Հարժման գեղեցիութեան վրայ բացատրութիւն Քէմսէն . . . . .	307

ԳԼՈՒԽ • Գ

Օրագրութեան Վեղեցիութեան

270 • Օրագրութեան վեղեցիութեան ըսելն կը հասկըցուի թէ նախընթաց կամ ներքին վեղեցիութեան ալ կայ . . . . .	309
271 • Լոկ զուգորդութիւնով մեկ բան մը վեղեցիկ կրնայ ըլլալ . . . . .	310
272 • Օրագրութեան զգացմանց վրայ ուրիշ բացատրութիւններ . . . . .	311
273 • Եզգային զուգորդութեանց օրինակներ . . . . .	313
274 • Օրագրութեան վեղեցիութեան աղբիւրները մարդու երջանկութեան աղբիւրներուն համեմատ են . . . . .	314
275 • Վեղեցիութեան վրայ բրած դիտողութիւններնուս բովանդակութիւնը	315

ԳԼՈՒԽ • Գ

Շարժութեան և Որոշման

276 • Վեղեցիութեան եւ վստմութեան մէջ եղած կապակցութիւնը . . . . .	317
277 • Վստմական շարժութեանց առիթները կերպ կերպ են . . . . .	318
278 • Սեծ տարածութիւն կամ ընդարձակութիւն՝ առիթ վստմութեան . . . . .	319
279 • Սեծ բարձրութիւն՝ տարր կամ առիթ վստմութեան . . . . .	320
280 • Խորութեան վրայ իրերու առիթ վստմութեան . . . . .	321
281 • Գոյներու վստմութեան առիթ ըլլալուն վրայ . . . . .	322
282 • Չայներու վստմական շարժութեանց առիթ ըլլալուն վրայ . . . . .	323
283 • Շարժումն՝ առիթ վստմութեան . . . . .	323
284 • Օրութեան ցուցմունքներէ պատճառեալ վստմական զգացմունք . . . . .	324
285 • Իրերու սկզբնական կամ բնածին վստմութեանը վրայ . . . . .	325
286 • Ի հաստատութիւն իրերու բնածին վստմութեանը դիտողութիւնը . . . . .	325
287 • Վստմական շարժութեանց վրայ զուգորդութեան ունեցած ազդեցութիւնը	326

ԳԼՈՒԽ • Ե

Շարժութեան և Կազմի

288 • Կազմական շարժութեանց ընդհանուր բնութեանը վրայ . . . . .	327
289 • Կազմական շարժութեանց առիթներուն վրայ . . . . .	328
290 • Ինչ ըսել է հանձարաբանութիւն . . . . .	329
291 • Կատակարանութիւնով եղած հանձարաբանութիւն . . . . .	330
292 • Կազմաբանութիւնով եղած հանձարաբանութիւն . . . . .	331
293 • Կազմական նկարագիրք եւ անոնց առիթները . . . . .	331
294 • Կազմու զգացմանց գործնական օդակարգութեանը վրայ . . . . .	332

ԳԼՈՒԽ • Զ

Ուրիշ պարզ Շարժութեան և Օրոշման

295 • Շարժութիւնը զուարթութեան , ուրախութեան եւ բերկրութեան	333
296 • Շարժութիւնը տխրութեան , տրամութեան եւ վշտի . . . . .	333
297 • Շարժութիւնը զարմացման , հիացման եւ սքանչացման . . . . .	334
298 • Շարժութիւնը դժկամակութեան , տհաճութեան եւ զղումնաց . . . . .	335
299 • Շարժութիւնը պատկառանաց , համեստութեան եւ ամօթոյ . . . . .	336
300 • Շարժութիւնը պատուի , մեծարանաց եւ պաշտման . . . . .	336

ԲՈՎՆԵՆԳԵ ԿՈՒԹԻՒՆ

իէ

Կ Ե Ր Գ Ե Ր Կ Ր Ո Ր Գ

ԲԵՂՉԵՆՔ

Գ Լ Ո Ւ Խ Ե Ը

Բաղ յանոց բնութիւնը

- 301 . Բաղձանքին՝ մօքին աս բաժանման երեւելի եւ ընդհանուր մէկ մասը 341
- Ըււալը . . . . .
- 302 . Բաղձանոց ինչ բան ըլլալուն կամ բնութեանը վրայ դիտակցութիւնով հմտութիւն կ'ունենանք . . . . . " 342
- 303 . Բաղձանոց տեղւոյն վրայ՝ ուրիշ մտաւոր հանդամանքներու վերաբերելով 342
- 304 . Բաղձանք եւելօք հաստատութեան եւ մնայունութեան հանգամանք մը ունին . . . . . 343
- 305 . Բաղձանք միշտ բաղձայեալ աւարկայ մը կ'ունենան . . . . . 344
- 306 . Բաղձանոց կատարումն վայելման հաճութիւնը յառաջ կու գայ . 345
- 307 . Բաղձանոց դրութեան կամ սաստկութեան զանազանութիւնները կամ ստիճանները . . . . . " 345
- 308 . Շարժումն գրեւորու ձգումը բաղձանոց մէկ հանդամանքն է . . . . . 346
- 309 . Օգացողութեանց աս մասին կարգաւորութիւնը . . . . . 347
- 310 . Բաղձանոց վրայ հիմնեալ սկզբունքները երկու կերպ ներգործութեան ընդունակ են . . . . . 348

Գ Լ Ո Ւ Խ Ե Բ

Բնական Եզրխանք

- 311 . Սարգուս ունեցած ազդումներուն վրայ՝ ստորին կարգի կենդանեաց ունեցածներուն հետ բաղդատելով . . . . . 349
- 312 . Ընթան կենդանեաց բնական ազդումներուն վրայ բացատրութիւնք 350
- 313 . Սարգկային մտաց մէջ եղած բնական աղմանց օրինակներ . . . . . 351
- 314 . Սարգուս բնական ազդումներուն վրայ ուրիշ օրինակներ . . . . . 353
- 315 . Բնական աղմանց վերջին նպատակին կամ օգտակարութեանը վրայ " 353

Գ Լ Ո Ւ Խ Ե Գ

Ենթաբնութիւն

- 316 . Ենթաբնութեան բնութեանը եւ հանդամանացը վրայ . . . . . 355
- 317 . Ենթաբնութեան կենսական պահանջներու համար հարկաւոր են , եւ 'ի սկզբանէ հետապնդութեան համար եղած չին . . . . . 356
- 318 . Ենթաբնութեանը գերզրէից ակտիւններուն ճարակելուն ու ծագմանը վրայ 357
- 319 . Ենթաբնութեանը երկակի գործողութեանը եւ բարոյականին վրայ . 358

ԳՒՂՈՒՍ • Գ

Հասկանալիութեան

320	• Ընդհանուր ծանօթութիւնը հակամիտութեանց բնութեանը վրայ	• 360
321	• Սկզբունք անձնապահտութեան կամ ապրելու բաղձանք	• 360
322	• Ենձնապահտութեան սկզբունքին երկակի ներդրութեանը վրայ	• "
323	• Հետաքրքրութեան սկզբունքին վրայ, կամ բաղձանք դիտութեան	• 361
324	• Հետաքրքրութեան սկզբունքին վրայ ուրիշ բացատրութիւններ	• 362
325	• Հետաքրքրութեան սկզբունքին երկակի դրժողութեանը եւ բարոյականին վրայ	• 363
326	• *Կմանողութիւն կամ հակամիտութիւն նմանելոյ	• 364
327	• *Կմանողութեան սկզբունքին դործնական արդիւնքները	• 365
228	• Պատուոյ բնական բաղձանքին վրայ	• 267
329	• Պատուոյ բաղձանքին վարուց կանոն ըլլալուն վրայ	• 369
330	• Ստացման բաղձանքին վրայ	• 370
331	• Ստացման բաղձանքին բարոյական բնութեանը վրայ	• 371
332	• Ստացման բաղձանքին դիւրութիւնները	• 372
333	• Օգրութեան բաղձանքին վրայ	• 373
334	• Օգրութեան բաղձանքին բարոյական բնութեանը վրայ	• 374
335	• Հակամիտութիւն ինքնասիրութեան, կամ բաղձանք երջանկութեան	• 375
336	• Ենձնասիրութիւն որոշեալ ինքնասիրութեանէ	• 376
337	• Փիլիսոփայական մատենագրայ կարծիքներէն օրինակներ	• 377
338	• Ընկերականութեան սկզբունքը մարդու մտքին մէկ սկզբնական ստորագրութեան է	• 378
339	• Եւպոյսոյքը բնկերականութեան սկզբունքին գոյութեանը	• 379
340	• Ես սկզբունքին գոյութեանը վրայ ուրիշ բացատրութիւններ	• 380
341	• Ընկերականութեան սկզբունքին քաղաքական բնկերական հետ ունեցած վերաբերութիւնը	• 382

ԳՒՂՈՒՍ • Ե

Բարեխօսեաց Աւեր

342	• Արից բաղդատօրէն ունեցած աստիճանին վրայ	• 383
343	• Արից յօդուածոյ բնութեանը վրայ	• 384
344	• Յասման կամ բարկութեան վրայ	• 385
345	• Բացատրութիւնը ազգական ցասման վրայ	• 386
346	• Եղական ցասման օգուտներուն եւ բարոյական որակութեանը վրայ	• "
347	• Կամաւորական ցասման վրայ, ազգականէն որոշելով	• 387
348	• Բարկութեան շարժանքները ձգուով եւ անոր բնական սանձադարութիւնները	• 388
349	• Բարկութեան կիրքը սանձադարելու եւ նուաճելու ուրիշ պատճառներ	• 390
350	• Եղանակաւորութիւնը ցասման : Բարկացողութիւն	• 392
351	• Եղանակաւորութիւնը ցասման : *Եսկանստ	• 393
352	• Եղանակաւորութիւնը ցասման : Խիթումն	• "
353	• Եղանակաւորութիւնը ցասման : Վրէժխնդրութիւն	• 395
354	• Երկուղն կիրքին բնութիւնը	• "



ԳԼՈՒԽ . Զ

Բարեւելք Արք

355	• Սիրոյ կամ բարեօրուիթեան վրայ ընդհանրապէս . . . . .	397
356	• Սէրը եւ իր այլ եւ այլ ձեւերը երկակի ներգործութիւն ունին . . . . .	398
357	• Շնորհական սիրոյ կամ որդեկիրութեան վրայ . . . . .	399
358	• Որդեկիրութեան կիրքին զօրութեանը վրայ բացատրութիւնք . . . . .	400
359	• Որդեկական սիրոյ կամ ծնողսիրութեան վրայ . . . . .	402
360	• Որդեկական սիրոյն բնածին եւ ընդարդոյ ըլլալուն վրայ . . . . .	403
361	• Որդեկական սիրոյ վրայ բացատրութիւնք . . . . .	404
362	• Խղբայրական սիրոյ բնութեանը վրայ . . . . .	406
363	• Ընտանեկան կրից օգտակարութեանը վրայ . . . . .	407
364	• Ընկերական կրից՝ եւ ընդհանրապէս՝ բարեսէր կրից բարոյական որպիսութեանը վրայ . . . . .	408
365	• Բարեսէր կրից կամաւորական կիրառութեանը բարոյական որպիսութեանը վրայ . . . . .	409
366	• Բարեկիրութեան արդարութեան հետ ունեցած կապակցութիւնը . . . . .	410
367	• Սարգասիրութեան վրայ . . . . .	412
368	• Ուրիշ ապացոյցներ ՚ի հաստատութիւն մարդասիրութեան բնածին ըլլալուն վարդապետութեանը . . . . .	413
369	• Սարգասիրական սկզբունքին գոյութեանը ապացոյցք բարեսիրական սահմանադրութիւններէ . . . . .	415
370	• Ի հաստատութիւն նոյն վարդապետութեանը ուրիշ ծանօթութիւններ . . . . .	416
371	• Հայրենասիրութեան կամ աղջասիրութեան վրայ . . . . .	417
372	• Բարեկամութեան սիրոյն վրայ . . . . .	418
373	• Գիթութեան կամ հարեկցութեան կիրքին վրայ . . . . .	419
374	• Գիթութեան բարոյական որպիսութեանը վրայ . . . . .	420
375	• Երաստազխուրութեան կիրքին վրայ . . . . .	422

ԳԼՈՒԽ . Է

Բարեւելք Արք

Աստուածաբանական

376	• Սարգս ՚ի սկզբան աստուածսիրութեան սկզբունքով ստեղծուած է . . . . .	422
377	• Սարգուս ՚ի սկզբան աստուածսիրութեան սկզբունքով ստեղծուած ըլլալը ցուցուած Սուրբ Գրքէն . . . . .	425
378	• Սարգուս ասանկ ստեղծուած ըլլալուն ուրիշ ապացոյց . . . . .	426
379	• Աստուածսիրութեան գերագոյն սկզբունքին բնական զգացողութեան միւս սկզբունքներուն հետ ունեցած վերաբերութիւնը . . . . .	427
380	• Աս սկզբան բացակայութենէն ուրիշ սկզբանց չափազանց եւ մեղանշական ներգործութիւնները կը ծագին . . . . .	428
381	• Աս սկզբունքին չզոյութենէն յառաջ եկած հետեւութիւններուն վրայ ուրիշ բացատրութիւններ . . . . .	430
382	• Ունակութիւն բառին նշանակութիւնը . . . . .	432
383	• Ունակութիւնք ախորժակաց . . . . .	433
384	• Ունակութիւնք հակամիտութեանց . . . . .	434
385	• Ունակութիւնք կրից . . . . .	435
386	• Խրկրորդական ներգործական սկզբանց ծագմանը վրայ . . . . .	436

ՄԵՍՆ ԵՐԿՐՈՐԴ

ԲԵՐՈՅԵԿԸՆ ԶԳԵՅՈՂՈՒԹԻՒՄԻՆԻՒՄ ԿԵՄ

ԽՂՆՄՏԸՆԻՒՄ

ՄՏԻՒՆ ԲԵՐՈՅԵԿԸՆ ՀԵՆԳԵՄԸՆԻՆԻՐԸ

ԳԼՈՒԽ Ե

Շարժումներն Վարդապետն Հասանութեան և Ենճապետներն

- 387 • Բնիարկութիւն ամբողջ մտքին ընդհանուր բաժանումներուն . . . 441
- 388 • Վարդապետութիւն բարոյական զգացողութեանց . . . 442
- 389 • Հաւանութեան եւ անհաւանութեան բարոյական զգացումներուն ընդ-  
թեանը վրայ . . . 443
- 390 • Հաւանութեան եւ անհաւանութեան շարժութիւններուն տեղւոյն կամ  
զիրքին վրայ , մտաւոր նկատմամբ . . . 444
- 391 • Բարոյական շարժութեանց մէջ փոփոխութիւններ կ'ըլլան՝ իրենց նա-  
խորդ իմացումներուն մէջ եղած փոփոխութեանց համեմատ . . . 445
- 392 • Բարոյական հաւանութեան եւ անհաւանութեան առարկաներու վրայ 446

ԳԼՈՒԽ Բ

Տրամաբանութեան որակաց Վերաբերութեանը Տարբարութեան Բարդապետն

- 393 • Են վարդապետութեանը վրայ , որ տրամաբանութիւնն ու խղճմտանքը  
իրարու հետ կը շփոթէ . . . 448
- 394 • Խղճմտանքին ու տրամաբանութեան մէջ եղած սերտ կապակցութեանը  
վրայ . . . 449
- 395 • Կախիւնից հատուածին վրայ բացատրութիւն . . . 450
- 396 • Խղճմտանքին կրթութեանը կամ դաստիարակութեանը վրայ . . . 452
- 397 • Խղճմտանքով զործուած յանցանաց վրայ . . . "

ԳԼՈՒԽ Գ

Չհասցիումն Բարդապետն պարզութեանը

- 398 • Բարոյական պարտականութեան զգացումները որոշ են բարոյական  
հաւանութեան եւ անհաւանութեան զգացումներէն . . . 454
- 399 • Պարտաւորիչ զգացմանց գոյութեանը ապացոյց գիտակցութեանէն . . . "
- 400 • Կոյն նիւթին վրայ ուրիշ ապացոյց մ'ալ մարդոց վարմունքէն . . . 455
- 401 • Ուրիշ ապացոյց մ'ըն ալ լեզուէ եւ գրականութեանէ . . . 456
- 402 • Ուրիշ ապացոյց մ'ըն ալ աս զգացմանց հարկաւորութեանէն . . . 457
- 403 • Պարտականութեան զգացմունք պարզ են եւ սահմանի ընդունակու-  
թիւն չունին . . . 458

- 404 . Պարտականութեան զգացմունք այլ եւ այլ աստիճաններ ունին . 459
- 405 . Պարտաւորիչ զգացմանց իշխանական եւ ստիպողական բնութիւնը . . . . . 460
- 406 . Պարտականութեան զգացումները լոկ հաւանութեան եւ անհաւանութեան զգացումներէն կը տարբերին . . . . . 460
- 407 . Պարտականութեան զգացումները մասնաւոր վերաբերուի ունին ապստեիին 461
- 408 . Պարտականութեան զգացումները ժամանակով ետք են հաւանութեան եւ անհաւանութեան բարոյական շարժութիւններէն . . . . . 462
- 409 . Պարտականութեան զգացմունք տարբեր են բազմաբններէն . . . . . 463
- 410 . Կոյն նիւթին վրայ ուրիշ դիտողութիւններ . . . . . 464

ԳԼՈՒԽ • Գ

Բարոյական զգացում-լիւանց ներգործութեան ֆորմալութեանը

- 411 . Մարդու բարոյական բնութեանը որոշումներուն միօրինակութեանը եւ անոր ինչ սկզբունքով կանոնաւորուելուն վրայ . . . . . 465
- 412 . Խղճմանքին բնութիւնը՝ իր բնութեամբ սկզբունք ներգործութեան , կը պահանջէ որ իր որոշումները պարագաներու հետ մէկտեղ փոփոխին 467
- 413 . Բարոյական որոշմանց զանազանութիւնները հմտութեան չափու տարբերութիւններէն կախում ունին . . . . . 468
- 414 . Բարոյական դատողութեան զանազանութիւններու վրայ՝ քաղաքական սահմանադրութիւններէ պատճառեալ . . . . . 469
- 415 . Բարոյական դատողութեան զանազանութիւններու եւ զարտուղութիւններու վրայ՝ հայեցողական կարծիքներէ պատճառեալ . . . . . 471
- 416 . Օրու հայեցողական կարծեաց ազդեցութիւնը այլ եւս բացատրութիւնը 473
- 417 . Բարոյական դատողութեան վրայ նախնի զուգորդութեանց ունեցած ազդեցութիւնը . . . . . 474
- 418 . Օգնազանութիւնը բարոյական դատողութեան կրից յուղմունքներէ պատճառեալ 474

ԳԼՈՒԽ • Ե

Բարոյական դատարարութեան

- 419 . Դատարարական կարեւորութեանը վրայ թելադրութիւնք . 475
- 420 . Մարդու միտքը կանոն կը սկսի լեցուիլ կամ բարի կամ չար սկզբունքներով . . . . . 477
- 421 . Թե՛ երբ սկսելու է բարոյական դատարարականութիւն . . . . . 477
- 422 . Բարոյական կրթութեան դործադրութեանը մէջ եղող վճատեցուցիչ պարագաներու վրայ . . . . . 478
- 423 . Բեղիչ հայեցողական կարծիքներու կարեւորութեանը վրայ . . . . . 480
- 424 . Եստուծոյ դիտութեանը եւ կրօնական ճշմարտութեանց ուսմանը վրայ 481

ՄԸՍՆ ԵՐՐՈՐԳ

ԸՆԿԵՏԵՐ ԿԸՄ ԽԵՆԳԵՐՆԵԼ

ՆԵՐՊՈՐՇՈՒԹԻՒՆՆԵՐ ԶԳԵՑՈՂ ՈՒԹԵՆՆԵՐ

ԳԼՈՒԽ • Ը

Մեկտար իմ խոնգարեալ ներգործութեան՝ Լեւոնտայ եւ Վախագործութեանց

- 425 . Կերածական ծանօթութիւնք անկարգ զգայական ճերգործութեանց վրայ 485

ԲՈՎՆԵՐԱԿՈՒԹԻՒՆ

426	• Խճ ընկ է անկարգ կամ խանդարեալ զգացողութիւնք . . . . .	486
427	• Ելտրժակաց անկարգ եւ խանդարեալ ներդործութիւններուն վրայ . . . . .	487
428	• Ենձնապահութեան սկզբունքին խանդարեալ ներդործութիւնք . . . . .	488
429	• Ստացման սկզբունքին անկարգ եւ խանդարեալ ներդործութիւնք . . . . .	489
430	• Ստացման սկզբունքին անկարգ ներդործութեանը երկրորդ տեսակին օրինակներ . . . . .	490
431	• Կմանողութեան սկզբունքին անկարգ ներդործութիւնք . . . . .	491
432	• Բնկերականութեան սկզբունքին անկարգ ներդործութիւնք . . . . .	492
433	• Բնկերականութեան սկզբունքին անկարգ ներդործութեանը վրայ ուրիշ ծանօթութիւններ . . . . .	492
434	• Պատուոյ բարձանքին անկարգ ներդործութեանը վրայ . . . . .	494
435	• Իշխանասիրութեան անկարգ ներդործութիւնք . . . . .	496

ԳԼՈՒԽ • Բ

Համայնական նմանողութեան

436	• Համակրական նմանողութեան վրայ . . . . .	496
437	• Համակրական նմանողութեան ընտանի օրինակներ . . . . .	497
438	• Հակըլէմի որդանոցին մէջ պատահած համակրական նմանողութեան օրինակ մը . . . . .	498
439	• Նոյն տեսակ նմանողութեան վրայ ուրիշ օրինակներ . . . . .	500

ԳԼՈՒԽ • Գ

Ենթարդ ներդործութեան կրիչ

440	• Կախազգացողութիւնք ըսուած մտաւոր հանդամանաց վրայ . . . . .	501
441	• Յանկարծական եւ ուժգին մտաւոր գրգռմունքներու վրայ . . . . .	502
442	• Իսանդարմունք կրիչ . . . . .	504
443	• Սեւամարտութիւն ըսուած մտաւոր ակտին վրայ . . . . .	505
444	• Սեւամարտութեան ընդհատութիւններուն եւ դարմաններուն վրայ . . . . .	507
445	• Երկիրը կիրքին անկարգ ներդործութիւնք . . . . .	509
446	• Իարեանք կրիչ թիւրութիւնները . . . . .	510

ԳԼՈՒԽ • Գ

Ենթարդ ներդործութեան բարոյական գոյացողութեանց

447	• Սամաւոր բարոյական խանդարման վրայ . . . . .	512
448	• Ես կերպ խանդարեալ խղճի մտաց տէր եղողին պատասխանատուութեանը վրայ . . . . .	513
449	• Ինական կամ համարուն բարոյական խանդարման վրայ . . . . .	514
450	• Ինական կամ համարուն բարոյական խանդարման տէր եղողները բարոյական պատասխանատուութիւն ունին թէ չէ . . . . .	516

ՀԵՐՅՄՈՒՆՐ . . . . . 519

ՅԵՒԵԼՈՒԵՐ . . . . . 521

Բ Լ Ժ Ը Ն Մ Ո Ի Ն Ք Ը Ռ Ը Զ, Ի Ն

Ի Մ Ը Յ Ե Կ Ը Ն Ո Ւ Թ Ի Կ Ն Կ Ը Մ Հ Ը Ս Ո Գ Ո Ւ Թ Ի Ի Ն

Մ Տ Ի Կ Ն Ի Մ Ը Յ Ե Կ Ը Ն Հ Ը Ն Գ Ը Մ Ը Ն Ի Կ Ն Ե Բ Ը

---

Մ Ը Ս Ն Ը Ռ Ը Զ, Ի Ն

Ի Մ Ը Յ Ե Կ Ը Ն Ո Ւ Թ Ե Ը Ն Ը Բ Տ Ը Ի Ռ Ի Մ Տ

Ն Ը Գ Ը Ն Ի Հ Ը Ն Գ Ը Մ Ը Ն Ի Կ Ն Ե Բ Ը

---

THE UNIVERSITY OF CHICAGO

LIBRARY OF THE UNIVERSITY OF CHICAGO

PHYSICS DEPARTMENT

PHYSICS DEPARTMENT

PHYSICS DEPARTMENT

PHYSICS DEPARTMENT

# Ի Մ Ե Ց Ե Կ Ե Ն

## Փ Ի Լ Ի Ս Ո Փ Ե Յ Ո Թ Ի Ի Ն

### Գ Լ Ո Ւ Խ Ե Ը

#### ՍԿԻՋԸՆ ԳԻՏՈՒԹԵԱՆ ԸՆԴՀԱՆՐԱՊԷՍ

##### § 1. Երբեակ բաժանմանը մտայ :

Մ Ե Ը Ղ Ո Ւ Ս միտքը, ամբողջութեամբը առնելով, անշուշտ իրօք եւ ճիշդ մտքով մի եւ անբաժանելի բնութիւն կամ էութիւն մը պիտի սեպենք : Եւ սակայն սա էութեան վրայ ուղիղ եւ կատարեալ հմտութիւն ունենալու համար՝ հարկ է իրեք որոշ մասանց բաժնելով քննութեան մտնել, որոնց կ'ըսենք Երբեակ բաժանմանը մտաց, եւ ասոնք են . Հասողութիւն կամ Իմացականութիւն, Օգացողութիւնք, եւ Կամք : Եւ սա գլխաւոր մասանց ներգործութիւններէն հետեւած մշտքի այլ եւ այլ հանգամանքները կամ վիճակներն ալ նոյն պէս՝ սա բաժանման համեմատ՝ իրեքի կը բաժնուին եւ իրարմէ կ'որոշուին սա անուններով . ԻՄԵՑԵԿԵՆ, ՔՂԵՑԵԿԵՆ, եւ ԿԸՄԵԿԵՆ հանգամանք մտաց : Ըրդ՝ առաջիկայ Համառօտութեանս վախճանը՝ սա իրեք բաժանմանց ըստ բնական կարգի առաջին երկուքին, այսինքն Իմացականութեան եւ Օգացողութեանց վրայ՝ որչափ որ հնար է նէ կարճ խօսքով՝ ճառել է, ձգելով երրորդ բաժանմանը, որ է կամք :

##### § 2. Կրկն բաժանմանը Իմացականութեան :

Իմացականութիւն կամ Հասողութիւն ըսածնիս մտքին ան մասն է, որով կ'իմանանք, կը բաղդատենք, եւ կը տրամաբանենք . եւ որ՝ իր կերպ կերպ ներգործութիւններովը՝ բոլոր

Սկիզբն գիտութեան ընդհանրապէս :

մեր հմտութեանը աղբիւրն է : Ստրերնուս սա առաջին մասը կրքիկն երկուքի կը բաժնուի . Երտաքին Իմացականութիւն, եւ Վերքին Իմացականութիւն . ուրիշ խօսքով՝ Երտաքուսա ծագած հանգամանք իմացականութեան, եւ ի ներքուսա ծագած հանգամանք իմացականութեան : Երտաքուսա ծագած Իմացական հանգամանքները արտաքին առարկաներու գոյութենէն եւ ներկայութենէն կախեալ են : Եթէ միտքը հնար ըլլար կերպով մը բաժնել զատել աշխարհիս զգալի առարկաներէն, կամ եթէ աշխարհք չ'ըլլար նէ, շօշափել՝ տեսնել՝ լսել ալ չէր ըլլար : Ուրեմն շօշափելեաց, հոտոտելեաց, ճաշակելեաց, լսելեաց, տեսանելեաց զգացմամբ մտքերնուս մէջ գոյացած հանգամանաց բոլորն ալ Իմացականէն դուրս գոյ եւ ներկայ եղող բաներէ կախեալ են անմիջապէս :

Իպց սա արտաքուստ ծագած հանգամանքներէն կամ վիճակներէն ի զատ, ուրիշ հանգամանքներ ալ ունի իմացականութիւնը . ինչպէս են սա բառերով ցուցուցածներնիս, Ճշմարտութիւն՝ Սրտութիւն՝ Օգրութիւն՝ Հանճար՝ Երժանստութիւն՝ Ինտրօպանտորութիւն՝ Պարզանք՝ Երգիւնք՝ Պարտականութիւն՝ եւ այլն, որ ասոնք այնչափ սերտ կապակցութիւն չունին արտաքին առարկաներու հետ . ուստի սա ներսէն նոյն իսկ իմացականութենէն ծնած հանգամանքներուն ալ կ'ըսենք ի Վերքուսա ծագած հանգամանք իմացականութեան :

§ 3 . Մտքին ունեցած կապակցութիւնը աշխարհիս նութական բաներուն հետ :

Ինդհանրապէս խօսելով՝ մտքերնուս Երտաքուստ ընդունած գիտութիւնը ի Վերքուստ ընդունածէն առաջ է : Սիտքը, իր իմացական զօրութիւնը թէ եւ շատ ընդարձակ ըլլայ, առջի բանը բոլորովին դատարկ է եւ չունի բնաւ իրական հմտութիւն մը իր մէջը . եւ նախ եւ առաջ զործել եւ հմտութիւն ընդունել որ կը սկսի նէ, իմացականութեան ինք իրմէ դուրս եղած բաներուն կամ աշխարհիս հետ ունեցած կապակցութիւնովն է :

Ես բաժնէս կը հետեւի որ ծանուցանենք, թէ մտքին ու զբոյն նիւթեղինաց մէջ մէկ անանկ իրար քաշել մը, իրարու յարմարութիւն մը կայ որ կարծես թէ աշխարհք մտքին, միտքին ալ աշխարհիս համար է ստեղծուեր : Հայտնի կ'երեւնայ որ Երարիւն ամենիմաստ սերտ վերաբերութիւն մը հաստատած է ասոնց մէջ . եւ ասիկայ կարեւոր իրական ճշմարտութիւն մըն է, որ մտքին զործելու եւ հմտութիւն ստանալու ըրած սկիզբնաւորութիւնը՝ ինտոր որ ակնարկեցինք՝ հաւանականաբար



Սկիզբն գիտութեան ընդհանրապէս :

իր եւ աշխարհիս նիւթականաց մէջ եղած կապակցութեանը մէջ միայն պիտի կարողանանք գտնելու :

Հոգին՝ իր ստարտաքին նիւթեղինաց հետ ունեցած կապակցութեանը նայելով, կը նմանի աղէյարմար նուագարանի մը : Օրինքը իրմով նկատենք նէ, ներդաշնակութեան պէտք եղած տարերք եւ ընդունակութիւն ունեցող աներեւոյթ էութիւն մը կը նշմարենք : Իսկ ջիղերը, աչուրները եւ միւս զգայարանքներն ալ՝ ամէնը մէկտեղ առնելով՝ ստատեսանելի էութիւնը իր մէջը պարփակող արուեստական գեղեցիկ շինուած մը, Մեշակարողին ձեռքը յորինեալ : Աստուծոյն կենդանի նուագարանը, որ երկու մասէ կազմեալ է, մէկը հոգին եւ միւսը հոգւոյն տունը, ի սկզբան ձայնձուն չունի : Այս ան վիճակին մէջ վրան նայիս նէ, երբէք ձայն հանելիք ալ չունի կուգայ մարդուս : Իսկ ահա աշխարհիս՝ գրտի նիւթեղէնները իրենց կերպ կերպ ազդմունքներովը կու գան կը զարնեն Մեշակարողին անոր վրայ շարած լարերուն, եւ կը տեսնես որ ան լռիկ էակը ալ կը սկսի նշեղաշնակուոր ձայներ հանել :

§ 4 : Մեր առաջին հմտութեան սկիզբն ընդհանրապէս արտաբուս է :

Մինչեւ հիմայ ըսածներուս համեմատ՝ երկու ընդհանուր սկզբունք ունինք ստատեսիս վրայ : Եւ այս ստատեսութեան ժամանակ մտքին ու աշխարհիս նիւթեղէն իրերուն մէջ շատ մտ կապակցութիւն մը կայ, եւ Երկրորդ՝ թէ ան տարիքները եղած առանձին մտքերնուս գործողութիւններուն մեծ մասը նիւթուոր բաներէ կը ծագին : Ի հաստատութիւն ստատեսութեանցս, մանաւանդ երկրորդին, պատշաճ կու գան ստատեսի քանի խորհրդածութիւնները :

Եւ այս ըսածնուս ճշմարտութեանը ամէն մարդու փորձառութիւնը վկայ է : Դասանք անգամ մը տղայութեան տարիքներնուս վրայ նայինք նէ, յայտնի կը տեսնենք որ մարդուս ան տեսնուան ունեցած գաղափարները թուով շատ քիչ ըլլալէն զատ, մեծ մասը արտաքին առարկաներէ թելագրեալ են : Կը զգանք որ անփիջական կարօտութիւններէ մտքերնուս մէջ մտած են, տեսած, լսած, շոչափած բաներնուս մտ վերարբբութիւն մը ունին . եւ կ'որոշենք որ մէկ փոքր մասը միայն ներքին եւ վերացեալ է : Բանի կը մեծնանք, հետզհետէ կը սկսին մտքին ան կարողութիւնները ի գործ դրուիլ, որոնք արտաքին բաներու հետ այնչափ կապակցութիւն չունին . եւ ներսէն բղիւսած խորհուրդներնուս վրայ՝ դրսէն յառաջ եկած .

Սկիզբն գիտութեան ընդհանրապէս :

Ներէն աւելի արագ շատնալ մը կը տեսնենք : Արտաքինները ըստ մասին հատուցած կ'ըլլանք . եւ վերջապէս երբոր մշտքերնիս ի մանկութենէ հետէ զբայարանաց գործողութեամբը ընդունած ներգործութիւններուն ձեռքը կատարելութեան հասած՝ իր ամէն ընդունակութիւնները ի գործ դնելով բանիլ կը սկսի , հմտութիւն ձեռք ձգելու սիրով վառուած եւ ինք իր զօրութիւններուն վրայ քիչ շատ գիտակցութիւն ունենալով , ահա անատեն մէկ նոր աշխարհք մը (ո՛չ թէ ըստ ամենայնի , այլ ըստ մասին անձանօթ երկիր մը) կ'ելլէ դիմացը , որ հոն մանելով ու հետազոտութեան ետեւէ իյնալով՝ կը գտնէ իր փափաքած հմտութիւնը ստանալու ահագին դանձ մը անսպառ , եւ անկէ ետեւ ան կ'ըլլայ ալ իր հետաքրքրութիւնը լեցունելու գրելխաւոր աղբիւր : Աս է ահա ընդհանուրին փորձառութիւնը , եւ աս վկայութիւնը ամէն մարդ իրեն համար կրնայ տալ :

§ 3 . Նոյն աս ճշմարտութիւնը մանկանց եւ տղայոց մտաւորական յառաջադիմութեան եղանակէն սպացուցեալ :

Արկրորդ՝ աս ըսածնուս ճշմարտութիւնը յայտնի է ընդհանրապէս մանկանց եւ տղայոց ըրած մտաւորական յառաջադիմութեան եղանակէն : Բնոնց ինչ ընթացքով գիտութեան մէջ յառաջ երթալը քննենք նէ , մեր մանկութեանը մէջ մեզի եղածին ճիշտ համեմատ կը դառնենք՝ ինչուան ան կէտը , ուր մեր գիտութեան եւ յիշողութեան կարողութիւնները կը հասնին՝ տղայութեան տարիքներնուս աշուրնիս դարձուցած ատեննիս : Մանկանց եւ տղայոց մտաց գործողութիւնները անգամ մը դիտողը ալ չ'հաւատարկք չ'կրնար ընել Ստեղծողին մտաց եւ արտաքին նիւթականաց մէջ մէկ կապակցութիւն մը հաստատած ըլլալուն , եւ մեր սկզբնական հմտութեանց ըստ մեծի մասին արտաքին աղբիւրէ բղխելուն :

Մանկան աշխարհքը իր բնական սենեակն է : Մարդկային աղբին վրայ ձեւացուցած առաջին գաղափարները իր գայեակին ու մօրը գաղափարները կ'ըլլան . եւ աս միջոցիս ունեցած ծանօթութիւններուն ամենուն հետքը բունենք երթանք նէ , իր բնական պիտոյքներէն՝ գլխուն երկրիեղիեան լուսամուտքէն ներս մտած լոյսէն եւ պառկած օրոցքին ու նստած գրկին մօտը գըտնուած մէկ քանի բաներէն ծագած կը տեսնենք : Ամաց կամաց քանի որ կը մեծնայ , նոր նոր ծանօթութիւններ տուող աղբիւրներ կը գտնէ , բայց անոնք ալ արտաքին եւ նիւթական : Արեւսի տղան իր բնակած գիւղին տեղագրութիւնը սորվել , կ'երթայ

Միտքը գիտութեան ընդհանրացէս :

անոր գետին եզերքները կը դիտէ կը քննէ, ծաղկաւէտ բլուրներէն վեր կ'ելէ կ'իջնայ, ձորերը կը մտնէ եւ անոր պտտառուածքներուն մէջը դուրսը կը գննէ : Միտքը բազմաթիւ ներգործութիւններով կը լեցուի, եւ այնքան նոր ու բարձր առարկաներ կը գտնէ իմացման, որ գործելէն չ'կրնար դադրիլ : Գիմացը երաժ թանր կը դիտէ, եկած ձայնին ականջ կը դնէ, գտած բանը ձեռքովը կը զննէ, կը զարմանայ ու կը բերկրի : Այնչափան որ ժամանակ մը ասանկ զրսէն ժողվելով հմտութեան տարրները մտքին մէջը չ'գանձէ նէ, չ'կրնար ինքն իրեն քաշուիլ ու սկսիլ բաղդատել՝ տրամաբանել ու պատճաններու եւ գործերու քննութեան ելել :

Տղայոց գիտութեան մէջ յառաջանալու աս եղանակէն է որ զգալի բաներով եւ կամ ան բաներուն պատկերներովը բան մ'որ սորվեցունելու ըլլանք նէ, աղէկ մտքերուն մէջ կը տըպաւորուի : Արբոր անցքի մը՝ գործողութեան մը եւ կամ ուրիշ բանի մը վրայ վերացեալ կերպով խօսիս, չեն հասկընար, եւ չ'հասկընալուն շփոթութիւն մը կը ցուցընեն մտիկ ըրած ատենին, ինչու, վասն զի աս բռնած ոճի բնութեան ընթացքին դէմ է : Մայց ան ըսած բաներդ կամ անոնց մէկ ճիշտ պատկերը բեր առջեւին դիր, ու ան վերացեալ խօսքերուդ միտքը անոնցմով մեկնէ, կը նայիս որ շուտով միտք կ'առնեն ու արտօժանօք կը սորվին :

§ 6 . Գիտութեան սկզբնաւորութիւնը արտաբուստ ըլլալուն ուրիշ վկայութիւն մը :

Արբոր՝ լեզուաց հարստանալու եղանակը յայտնի ապացոյց է մտքին նախ եւ առաջ զգայարանաց ձեռօքը գործել եւ գիտութիւն ստանալ սկսելուն : Անկ ազգի մը կամ ժողովուրդի մը մըտաւոր գաղափարները որքան որ սահմանաւոր ըլլան նէ, անոր լեզուին բառերն ալ այնքան քիչ կ'ըլլան : Ինչպէս վայրենի ազգաց գործածած բառերը համրենք նէ շատ քիչ կը գտնենք : Սարգուս միտքը գիտութեամբ որքան որ աճի նէ, լեզուն ալ անոր հետ մեկտեղ նոյն համեմատութիւնով կը հարստանայ : Անկ ազգի մը միտքը որքան որ բացուի ու անսահման գաղափարներու տէր որ ըլլայ նէ, սեպէ թէ ճիշտ նոյն չափով իր լեզուին բառերն ալ կը բազմանան եւ ուժ ու կենդանութիւն կ'առնեն : Արդ մասնաւորաբար դիտելու բան մըն է աս որ՝ որ լեզուն որ քննենք նէ, մէկ դիթող ան լեզուին բառերուն բազմանալը աս ըսած եղանակովս ըլլալը, քանզի ան հարկաւ անանկ պիտի ըլլայ, կը տեսնենք որ ան մտքերնուն անվարժ ատենները գործածած

Սկիզբն գրուած է ան ընդհանրապէս :

բառերնին արտաքին բաներու համար գործածած են, ու ետքն որ մտքերնին մշակուեր է նէ՛ սկսեր են ան բառերը ի ներքուստ ծնած խորհուրդներնին յայտնելու գործածել :

Ա՛յն լեզուի մտաւորական ընդունակութիւններ եւ գործողութիւններ ցուցնող բառերուն գրեթէ բոլորին ալ սկզբնաւորութիւնը եւ նախնական գործածութիւնը արտաքին բաներու վրայ ըլլալը որոշ ու յայտնի ցուցնել հնար է : Ինչպէս մեր լեզուին սա բառերը, Վաղափար՝ Վաղափարել, որ նկարագրական նշանակութեամբ կը նշանակեն օրինակ՝ օրինակել . Տպաւորութիւն՝ Տպաւորել, որ նկարագրական մտքը բնել է տիպ՝ տպել . Արամիտ, Վթամիտ, որ ելած է սուր՝ բուժ նիւթական բառերէն . Հասողութիւն, որուն նախնական գործածութիւնը նիւթական հասողութիւն է . եւ այլն : Աս բառերը նկարագրական նշանակութեամբ մտաւոր հանգամանքներ՝ ներգործութիւններ կամ օրպիսութիւններ չեն կրնար ցուցնել . մարդուս միտքը անանկ բաներու չ'գար . ուրեմն ասկէ աս կը հետեւի որ ասոնք նախ եւ առաջ արտաքին բաներու գործածուած բառեր ըլլալու են : Արդ՝ լեզուաց հարստանալու եղանակէն երեւցածին նայելով՝ աս բանը հաստատեալ ճշմարտութիւն մը ըլլալէն ետեւ, թէ ամէն լեզուն նախնական վերաբերութիւն մը ունի արտաքին բաներու, եւ թէ ո՛ր եւ իցէ լեզուի մէջ չ'կայ բառ մտաւորական գործողութիւն ցուցնող՝ որ առաջուց նիւթական բանի մը վրայ գործածուած չ'ըլլայ, յայտնի հետեւութիւն աս կ'երէ, թէ ունեցած հմտութիւններնուս ան մասն որ զգայարանաց միջոցաւ արտաբուստ գտեր ենք նէ, ուրիշ աղբիւրէ ծագեալներէն առաջ ըլլալու է : Այս անցեալ տպացոյցներն ալ աս երրորդին հետ մէկտեղ առննքնէ, առաւել եւս կը հաստատուի ասոր անսխալ հետեւութիւն ըլլալը :

§ 7 . Ուրիշ վկայութիւն մըն ալ ի հաստատութիւն աս նիւթիս :

Այս չորրորդ՝ առանց չափազանցութեան բանը եղածին պէս խօսելով՝ կը ծանուցանեմ թէ աս խնդրոյս վերաբերութիւն ունեցող ինչ դիտողութիւն որ եղած է նէ՛ ի ծնէ կամ յետ ծննդէն ո՛ր եւ իցէ տարիքի մէջ այս կամ այն զգայարանքէն զըրկեալներու վրայ, եւ այն դիտողութեանց մէջ ինչ տարօրինակ բաներ որ գտնուծ է նէ, անոնց ամէնն ալ նախնիքաց հաստածներուն մէջ ըսածներնուս հաստատութիւն կու տան : ( ) օրինակի աղագաւ՝ ժամանակ մը խուլ եւ յետոյ լսողութեան զօրութիւննին տեղն եկող մարդոց վրայ եղած դիտողութիւններէն հաս-

Սկիզբն գիտութեան ընդհանրապէս :

տատուած է, որ անանկներուն մտացը մէջ՝ ականջնին բացուելէն առաջ՝ ան զգայարանքով բնականապէս ձեւացող ծանօթութիւն գտնուած չէ բնաւ : Ամանապէս ի ծնէ կոյր եղողը տեսութեան զգայարանքով ձեւացող գաղափար չունենար . եթէ տեսութեան զգայարանքը ունեցած ըլլայ, եւ անանկ պատահի որ այսինչ այնինչ գոյները տեսած չըլլայ նէ, աս նոյն սկզբունքով ան գոյներուն վրայ ալ գաղափար չունենար : Ի ծնէ կոյր ըսածնիս ամենեւին տեսութեան գաղափար չունեցող է . իսկ միւս յիշածնիս մինակ չ'տեսած գոյներուն վրայ գաղափար չունենար : Ասոր դէմ կարելի է ըսուի, թէ աս հարկաւ ստանկ կ'ըլլայ . առկէց աս միայն կը հաստատուի թէ զգայարանքնիս գիտութեան աղբիւր են, ոչ թէ զգայարանք ունեցած հմտութիւննիս իներքուտ ըլեաձէն առաջ է : Բայց թէ որ քիչ մըն ալ քննելու ըլլաս նէ բանը, կը տեսնես որ ըսած մարդուս ան պակաս զգայարանաց ձեռքը ի դորձ դրուելու ներքին մասերը զօրութիւնները անգործ կը մնան ինչուան ան զգայարանաց բացուիլ . ան զգայարանքներով ունենալու գիտութեանց մէջ գրեթէ բոլորովին անգէտ, սկզբնական միճակնուն մէջ ինչ աստիճան խաւարով պատուէին նէ՝ սեպէ թէ նոյն աստիճան մթութեան մէջ թաղուած կը գտնես . ի սկզբն արտաքուտ ի ներքս մտնելու հրմտութեան տեղը լեցընող լոյս մը անհնար է որ ծագի ի ներքուտ : Աւրեմն աս յայտնի փորձերն ու գիտողութիւնները բացայայտ ապացոյց են բացատրած սկզբունքներուս :

Բնիք որ աս խնդրոյս վերաբերութիւն ունեցող գիտողութեանց մէջ երբեմն երբեմն պատահած տարօրինակ բաներն ալ կը հաստատեն ըրած խորհրդածութիւններնուս ճշմարտութիւնը : Ասոր պատշաճ օրինակ մը Վաղղիոյ Վիտութեանց Արժարանին 1703ին Յիշատակարանին մէջ կայ, Շարդր գիւղաքաղաքը ծնած մեծցած խուլ եւ համր երիտասարդի մը վրայ : Աս երիտասարդը, կ'ըսէ պատմութիւնը, քսանուիրեք տարեկան էր, երբոր օր մը յանկարձ ի զարմացումն բոլոր իւր քաղաքակցացը՝ ականջը բացուեցաւ, եւ յետոյ քիչ ատենի մէջ խօսիլ ալ սորվեցաւ : Այնչափ ժամանակ անանկ զգայարանքէ մը զօրկ մնալով, որ տեսութեան եւ շօշափման զգայարանքէն վար չ'մնար, եւ բերնով կամ գրով մարդոց հետ խօսակցութիւն ընելու բոլորովին անկարող ըլլալով, եւ առկէց զատ բարեկամներն ու ազգականները իրենք պէտք եղած հոգն ու խնամքը տանելնուն համար՝ ունեցած կարողութիւնները բանեցընելու ճիգ մըն ալ չունենալով, մտքին զօրութիւնները երեւան չին կրցեր ելլել : Անտրութիւննիս տեղն եղող մէկ քանի անձինք ասոր վրայ խել մը քննութիւններ ըրին, նայեցան որ ոչ Աս-

Սկիզբն գիտութեան ընդհանրապէս :

տուծոյ ու Հողիի եւ ոչ մարդուս գործքերուն բարոյական արժանաւորութեանը կամ անարժանաւորութեանը վրայ ծանօթութիւն ունի . եւ ամենէն զարմանալին՝ մեռնիլն ինչ բան ըլլալն ալ չէր գիտեր . հողելարութեան ցաւերը, բարեկամաց ցուցուցած տրամութիւնն ու սուգը, եւ թաղման հանգէսները անմեկնելի գաղտնիքներ էին իրեն :

Եւհա աս օրինակովս կը տեսնենք թէ մարդս մէկ լսողութեան զգայարանքը չունենալովը որչափ գիտութենէ զուրկ կը մնայ եղեր . որ ասիկայ յայտնի տպացոյց է թէ մեր Երարիչը աս բզգայարանքները գիտութեան առաջին աղբիւր ըլլալու համար մարդուս տուեր է, եւ թէ առանց անոնց՝ հոգւոյն կարողութիւնները անգործ կը մնան :

§ 8. Բացատրութիւն Յակորոս Միւլէլին պատմութենէն :

Երգարեւ հանձարեղ մարդոց բարակ քննութիւններովը ըստուգուած ասանկ օրինակներ շատ ունինք, բայց մենք հոս մէկ հատ մըն ալ դնենք նէ՛ հերիք կ'ըլլայ : « Երարք Եւքունի (Կնկերութեան օր յ) աիմպուրկ » անուն գրքին մէջ (Հոգ. 1, Ստան 1.) հուկալտ Սգիւարդին մէկ պատմութիւնը կայ, Յակորոս Սիչէլ անուն ի ծնէ խուլ եւ կոյր տղու մը վրայ : Ես տղուն պատմութիւնը, որ աս երկու անտփոր պակսութիւններուն պատճառաւ՝ բան մը ընելու ըլլար նէ՛ խիստ մեծ նեղութիւն կը քաշէր, աղէկ կը բացատրէ եւ կը հաստատէ բոլոր վերը ըսածներնիս : Եսիկայ՝ ինչ զգայարանք որ ունէր նէ անոնցմով, այսինքն շօշափելեաց՝ ճաշակելեաց եւ հոտոտելեաց զգայարանքներովը ձեռքէն եկածը ընելով, խել մը գաղափարներ կը ցուհաւաքել մտքին մէջ : Եսնչափ ժրութեամբ կ'աշխատէր ան մէկ քանի զգայարանքներովը, որ եղած տանը շրջակայ երկիրը՝ հարիւրաւոր կանգուն տեղ շօշափմամբ որոնէր էր կատարելագէս : Բայց տեսնել՝ լսել եւ խօսիլ չ'կրնալուն, զինքը գիտողները յայտնի կը տեսնէին, ինտոր որ հարկաւ անանկ պիտի ըլլար, որ շատ քիչ բան գիտէ : Զուրկ էր ան իր վրայ չ'գտնուած զգայարանքներովը ունենալու իմացումներէն, եւ անկէց ի զատ՝ բոլոր ան ի ներքուստ սկիզբն ունեցող ծանօթութիւններէն, որ ան զգայարանքներուն օգնականութեամբը մտքին զօրութիւնները առաջուց կատարելագէս ի գործ դրուելովը միայն կրնային ծնանիլ ի ներքուստ : Եսանկ օրինակներ, առջի բերանը ինտոր որ երեւնան նէ՛ երեւնան, շատ հարկաւոր են մեզի . քանզի ասանկով սորվածնիս ոչ թէ լոկ տեսական եղած կ'ըլլայ, այլ

իրողութեանց վրայ հաստատեալ : Այլ մինակ աս ճամբան բռնելով , այսինքն անպէտ տեղը երկարաբանութեամբ անսակաւնը իմաստասիրելէն զգուշանալով , եւ բրած գիտողութիւններնիս իրողութեանց վրայ հաստատելով , կրնանք յոյս ունենալ աս գիտութեան մէջ զուարճալի եղանակաւ մը արագ արագ յառաջագիմութիւն ընելու :

ԳԼՈՒԽ • Ի

ՉԳԱՅՈՒԹԻՒՆ ԵՒ ԻՄԱՑՈՒՄՆ

§ 9 . Չգայութիւնը զգայարաններէն սկիզբն առած պարզ մտաւոր հանգամանք մըն է :

ՍԻՆՏԵՐ, արտաբուստ եղող մարդկային խորհրդոց պատմութիւնը բրած ատեննիս շատ անգամ Չգայութիւն եւ Իմացումն բառերը գործածենք պիտի : Օգայութիւնն բառը այնքան ընդհանուր նշանակութիւն մը չունի , որ ամէն կերպ մտաւոր հանգամանք բովանդակէ , հապա միայն մասնաւոր տեսակ մը հանգամանաց համար կ'ըսուի : Օգացումն բառը սիրոյ՝ բարեսիրութեան՝ բարկութեան համար ինտոր որ կը գործածենք նէ , անանկ ալ տաքութեան՝ պաղութեան՝ կարծրութեան համար կրնանք գործածել , առանց լիզուի դէմ ապօրինաւոր խօսք մը բրած ըլլալու : Բայց զգայութիւնը ստանկ ընդաձակ նշանակութիւն չունի . պաղութեան՝ տաքութեան՝ եւայլն՝ ըզգայութիւն կ'ըլլայ , բայց սիրոյ՝ բարեսիրութեան զգայութիւն չըսուիր : Աշանակութիւնը սահմանի տակ է , եւ ան ալ շատ ճիշդ սահմանի տակ :

Չգայութիւնը պարզ մտաւորական ներգործութիւն մը կամ հանգամանք մըն է . ուստի եւ անընդունակ է իր անունէն եւել որոշ սահմանի . եւ ասիկայ իր յատկութիւններէն մէկն է : Բայց որովհետեւ այսչափով ուրիշ մտաւոր հանգամանքներէ չորոշուիր , վասն որոյ պէտք է սա յատկութիւնն ալ յիշել՝ թէ որ է ինչէ պատշաճութեանց վրայ իրաւ ժողովութեան , կամ լէ՛ որ է ինչէ մարմնաւոր ժողովութեան եւրէ մարդուս մարդն մէջ ծնու-

Զգայութիւն եւ Իմացումն :

նոյլ անմիջական յաջորդ փոփոխութիւնս Օգոստոս-լիւնն է : Հայտնի է թէ ուրիշ անհամար զգացումներ կան, որոնց ամենեւին չը-  
յարմարիր աս յատկութիւնը . քանզի անոնք ոչ թէ մարմնա-  
ւոր ազդմունքէ անմիջական հետեւութիւն են, այլ նոյն իսկ հո-  
գւոյն ուրիշ հանգամանքներէն ծագեալ : Ետը համար է որ  
տաքութեան՝ պաղութեան՝ կարծրութեան՝ հարթութեան՝ ան-  
հարթութեան՝ եւայլն՝ զգայութիւնք կրնանք ըսել, իսկ ուրա-  
խութեան՝ տրտմութեան՝ սիրոյ եւ ուրիշ շարժութեանց եւ կը-  
րից զգայութիւնք ըսենք նէ, անպատշաճ խօսք մը կըլլայ :

§ 10 . Ամեն զգայութիւն, տիրապէս եւ ուղիղ խօսելով, մտաց մէջ կըլլայ :

Սա սխալ գաղափարը հաստատուած է մտքերնուս մէջ, թէ  
զգայութիւնք յատուկ տեղեր ունին մարմինին վրայ, ու մաս-  
նաւորաբար զգայարանքներու վրայ կ'ըլլան : Շօշափման զգա-  
յութիւնը մեզի անանկ կու գայ թէ ձեռքին մէջ կ'ըլլայ, քան-  
զի ան է շօշափելիք, ու ներքին փոփոխութիւն մը չենք սե-  
պեր զանիկայ . նոյնպէս եւ կը խորհիրք թէ լսողութիւնը ու  
տեսութիւնը ոչ թէ հոգւոյն, այլ ականջին ու աչքին մէջ կ'ըլ-  
լան : Իայց ճշմարտապէս՝ բանը եղածին պէս խօսելով՝ շիտա-  
կը աս է . զգայարանքները զգայութեանց ճամբաներն են, եւ  
անշուշտ պէտք են . սակայն անոնց միջոցովը ինչ զգայութիւն  
կամ զգացում որ ըլլայ նէ, մտքին մէջ կ'ըլլայ, եւ ոչ ուրիշ  
տեղ : Սովորութիւն է եղեր, աչքը կը տեսնէ կ'ըսենք, բայց  
փիլիսոփայական դիտողութեամբ շիտակը խօսելու ըլլանք նէ,  
հոգին կը տեսնէ պիտի ըսենք, աչքով . քանզի աչքը հոգւոյն  
լոկ մէկ գործարանը կամ գործին է, որով տեսութեան իմա-  
ցումն կ'ունենայ :

Եւանց դիտակի մէկը չ'կրնար լուսնթաղին արբանեակները  
տեսնել . բայց միթէ ասկէ աս կը հետեւեցընենք, թէ դիտակն  
է զանոնք տեսնողը : Ամենեւին . ասանկ բանէ մը ասանկ հե-  
տեւութիւն հանելը խելքի դէմ կ'ըլլայ : Եհա ասկէ վար չ'մնար  
տեսնողը աչքն է, լսողը ականջն է, շօշափողը ձեռքն է ըսելն  
ալ : Դիտակը արհեստական գործի մըն է տեսութեան, բայց  
ինքը չէ տեսնողը . նմանապէս աչքն ալ բնական գործարան մըն  
է տեսութեան, որ անով կը տեսնենք երեւցածները : Եւքը  
բնական, դիտակը արհեստական գործիք ըլլալով՝ իրարմէ չեն  
տարբերիր աս մասին . երկուքն ալ նոյնօրինակ գործիք են, ոչ  
թէ գործողք :

Ղ . ս . 2 .



Չգայուժիւն եւ իմացունս :

§ 11 . Չգայուժիւնք բսելով զգայեաց պատկերք կամ նմանութիւնք իմա-  
նալու չենք :

Վանի որ զգուշութեամբ քննելով կ'որոշենք որ զգայու-  
թեանց յատուկ տեղը միայն է, եւ մարմիննուս վրայ եղած  
ան արտաքին փոփոխութիւնները ուրիշ բան չեն, բայց եթէ  
պատճառք կամ նախընթաց փոփոխութիւնք ներքինին . ասոր  
հակադարձ մէկ ուրիշ սխալմունք մըն պլ կայ, որ անոր դէմ  
ալ զգուշութիւն ընել պէտք է : Եւ այն է մտքերնուս մէջ  
ձեւացած զգայութեանց անանկ յատկութիւններ տալ, որոնք  
ան զգայութիւնները պատճառող իրերուն միայն կը պատշաճին,  
որ ասիկայ շատ ծուռ կարծիք մըն է : Վանզի ճշմարիտը աս  
է, որ ինչ եւ իցէ զգայութիւն զնքը ծնանող իրին ոչ նմա-  
նութիւնք, ոչ պատկերք, ոչ նկարն է . եւ ոչ անոր օրինակն  
է կրնանք բսել, նիւթական մտքով մը . զգայութեանց վրայ  
նիւթական յատկութիւն անհնար է որ գտնուի : Բայց մենք՝  
բնական հակամիտութեամբ մը՝ ասոր հակառակը կը մտածենք .  
շարունակ արտաքին նիւթեղինաց հետ զբազած ըլլալնուս, եր-  
բոր մտքերնիս ինքնիրեն քաշուած կը սկսի խորհրդածութեան,  
ան բաներուն ձեւերն ու յատկութիւնները՝ անխորհրդարար՝  
հետերնիս կու գան . մեզի ալ որպէս թէ ան նիւթերուն նմա-  
նութիւնք խորհուրդներնուս վրայ տպեալ կը թուի : Բայց ա-  
նանկ չէ . խորհուրդներնիս, մեր բնութեան կազմութեամբը ինչ  
բանի նշան որ են նէ, ձեւ չեն կրնար ունենալ, եւ շոշափե-  
լեաց ու տեսութեան առարկաներու նման պատկեր անհնար է  
որ ձեւացնեն . չենք կրնար խորհուրդներնուս վրայ ինչ եւ ի-  
ցէ մտքը ձեւ մը կամ կերպարանք մը ըմբռնել : Ուստի երբոր  
բանի մը վրայ բողբոսկութեան գաղափար կը ձեւացնենք նէ,  
անկէց աս հետեւցնելու չենք թէ ան մտաւոր հանքամանքնիս  
ալ նոյն ձեւը կըր է . կամ թէ որ տարածութեան վրայ է  
մտածմունքնիս նէ, խորհուրդնիս ալ տարածութիւն ունի չենք  
կրնար բսել : Պէս պէս դեղեցիկ գոյներու վրայ նայած ըզմայ-  
լած առնենիս, ներքին զգացումներնիս ալ նոյն գոյներով նը-  
կարեալ կը փայլին ըսենք նէ, քիչ անխելքութիւն չօլլար :  
Սարդուս մտքին մէջ անանկ բաներ չ'կան . եւ ասանկ ծուռ  
սկզբունք մը բռնենք երթանք նէ, բազմաթիւ սխալանաց մէջ  
իշնանիս անտարակոյս է :

§ 12 . Ֆիզիզական եւ մտաւորական փոփոխութեանց մէջտեղը եղած կապակցութիւնը անմեկնելի է :

ա . Դրսէն մտաւոր հանգամանք մը որ կը ծագի նէ մըտքերնուս մէջ , անիկայ արտաքին մարմնոյ մը զգայարանաց ներգործելովը կ'ըլլայ . բայց աս ներգործութեան ճիշդ ինչ ըլլալը եւ ինչուան ուր հասնիլը ցուցընելը դժուար բան է : Այսչափ գիտնեք որ զգայարանքնիս իրենց ներգործելու բաւականութիւն ունեցող բանէ մը թէ ուղղակի եւ թէ անուղղակի ազեցութիւն մը ընդունելու են : Աս ալ յայտնի է որ աս ազեցութեանը եղած ատենը զգայարանաց վրայ փոփոխութիւն մը կ'ըլլայ անշուշտ . բայց ասկէ անդին անստուգութեան սահմանները կը հասնինք : Կարողութիւննիս ինչուան այսչափին կը հասնի առ այժմ՝ որ միայն իրողութեանց վրայ խօսինք , եւ զգայութիւն ըլլալէն առաջ՝ արտաքին մարմնոյ մը ներգործութիւն եւ ան ներգործութենէն ալ զգայարանաց վրայ փոփոխութիւն մը կ'ըլլան գիտնալով բաւականանալք :

բ . Աս փոփոխութիւնը զգայարանաց վրայ ըլլալէն ետեւ , որուն մասնաւոր տեղը կամ զգայարանաց դրսի ծայրն է , կամ ուղեղն է՝ որուն հետ որ զգայարանքը կապուած ըլլալով՝ անոր կտորը կը սեպուի , մտքերնուս մէջ մէկ փոփոխութիւն մը կամ նոր հանգամանք մը անմիջապէս կը ծագի : Աս փոփոխութիւնն ալ ինտոր ըլլալուն խելք չ'հասնիր , եւ ուստի ասոր վրայ ալ միայն ասանկ փոփոխութիւն մը կ'ըլլան ցուցընելէս ի զատ ուրիշ բան չունինք ընելու : Աս տեղը իմացական գիտութեան սնանկ մէկ սահմանը կը հասնինք , որ անկէց անդին անցնիլը՝ կ'երեւնայ որ տրուած պիտի չըլլայ մարդոց՝ աս ներկայ կեանքիս մէջ : Ս'ենք զմեզ անկարող կը գտնենք աս մասին մտքին ու նիւթոց մէջ եղած կապակցութիւնը վերլուծելու բացատրելու , ինտոր որ մտքին նիւթոց հետ ունեցած ամէն ուրիշ կապակցութիւններն ալ չենք կրնար հասկնալ : Ուստի աս բանիս վրայ ունեցած գիտութիւննիս այսչափ է եւ միայն այսչափը կրնանք վստահութեամբ հաստատել , թէ բնական փոփոխութիւն մը կամ ներգործութիւն մը ըլլալէն անմիջապէս ետքը մտաւոր ներգործութիւն մը կամ փոփոխութիւն մը կ'ըլլայ հարկաւ : Այսպէս է մարդուս ընթացիւնը եւ զանիկայ Ատեղծողին իմաստուն սահմանադրութիւնը :

Չգայութիւն եւ Իմացումն :

§ 13 . Իմացումն ի՞նչ ըսել է եւ ի՞նչ բան է :

Օգայութենէն ետեւ կու գայ Իմացումն ըսուած մտաւոր հանգամանքը , որ շատ կից կապակցութիւն ունի առ ջինին հետ : Ըստ բանն ալ՝ շատ ուրիշ բառերու նման՝ ընդարձակ նշանակութիւն մը ունի : Սենք չէ թէ միայն արտաքին առարկաներու համար մտքով կ'իմանանք կ'ըսենք , հապա նոյն իսկ մշտքերնուս ներգործութեանցը համաձայնութիւններուն կամ անհամաձայնութիւններուն համար ալ կ'իմանանք կ'ըսուի հասարակօրէն . ինչպէս որ սա ծառը , առ նաւը կ'իմանամ կ'ըսուի , նոյնպէս եւ ամբողջը մասէն մեծ կամ եռանկեան երեք անկիւնը երկու ուղղանկեան հաւասար ըլլալն ալ կ'իմանանք կ'ըսուի : Բայց աս տեղը ըսելիքներնիս ներքին իմացման վերաբերութիւն չունի , հապա միայն մտքէն դուրս եղած առարկաներու իմացման համար է՝ ինչ որ պիտի խօսինք նէ :

Իմացումը , արտաքին առարկաներու վրայ առնելով , ամբողջին մասէն ունեցած տարբերութեանը պէս տարբերութիւն մը ունի զգայութենէն . ըսել է թէ ասոր մէջ զգայութենէ եւեւ բան կայ : Ստաի աս մտաւոր հանգամանքը կը սահմանուի պսպէս . Իմացումն է պատշաճօրէն ներգործութիւնն անմիջապէս էությունը եւ որ արտաքին ներգործութիւնն կամ հանգամանքը , պէս մէկ արտաքինն բանն է որ կը վերաբերէնք՝ պատշաճօրէն պատշաճութեամբ ըսելով :

§ 14 . Իմացմամբ նիւթական աշխարհքս կը ճանչնանք :

Պէտք է յիշել թէ Օգայութիւն ըսելով կ'իմանանք ընդ մտաւոր հանգամանք մը , առանց ան հանգամանքը զինքը ծրնանող արտաքին իրին վերաբերելու , սյոյնքն անկէ ծագած ըլլալը զգալու . եւ թէ զգայութիւնը ճշմարտապէս պարզ զգացման մը անունն է : Իսկ Իմացումը՝ ասոր հակադարձ՝ յօրուածոյ հանգամանք մըն է , որ չէ թէ միայն մտքին մէջ եղած ներքին ներգործութիւնը , այլ եւ ան ներգործութիւնը արտաքին պատճառին վերաբերել մըն ալ կը բովանդակէ : Օգայութիւնը գլխովին ներքինն է . ուրիշ խօրով՝ ներսը կ'ըլլայ , ներսը կը մնայ : Բայց իմացումը որպէս թէ մեղ մենէ դուրս կը հանէ կը տանի , ու անանկով չորս գինիս գտնուած բաներուն ծանօթ կ'ըլլանք : Սանաւորաբար աս իմացական կարողութիւնովն է որ ընութեան մէջ գտնուած նիւթական իրերը եւ անոնց տեսակ տեսակ ձեւերն ու գեղեցկութիւնները մեր ներքին տեսու-

Չգայութիւն եւ Իմացումն :

Թեան տակը կ'իյնան : Այժմէ միայն զգայութիւն ունենայինք , անատենն ալ ձեւ՝ հոտ՝ գոյն՝ ձայն , ասոնց ամէնքն ալ կ'ըլլային . բայց մեզի անանկ պիտի գար , թէ ներսիդինին կ'ըլլան , չէինք կրնար իմանալ թէ ան եղածները դուրսն են , ու մեր ներսիդինը միայն անոնց զգայութիւնն է : Ասանկով մտքերնիս ամէն բան ինք իր մէջը պիտի գտնէր . այսինքն աշխարհք եւ անոր մէջի ամէն բաները ինք զինքը ըլլալ պիտի կարծէր , եւ իրմէ ի զատ ուրիշ էակ պիտի չ'ճանչնար : Իմացման կարողութիւնը չ'թողուր բնաւ որ ասանկ սխալմունք մը ըլլայ . կը փարատէ ու կը ցրուէ ամէն բան հոգւոյն մէջ սեպող խաբէբայ ծանօթութիւնը , եւ զմեզ մենէ դուրս եղող ուրիշ եւ ութեանց կը մտնեցունէ եւ կը ծանօթացընէ մասնաւորաբար բաղմատեսակ արարածոց բովանդակութեամբը յօրինեալ բարեյարմար եւ վայելչալարդ ու կատարեալ նիւթական արարչութեան հետ :

§ 15 . 'Նիւթերու՝ Նախնական եւ Երկրորդական յատկութեանցը վրայ :

Իստաներէս կը հասկըցուի թէ աշխարհիս նիւթական էութիւնները պատճառ են զգայութեան , ու պատճառ եւ միանգամայն ենթակայ Իմացման : Գիտնալու արժան բան մըն է որ մարմնոց գոյութիւն կամ ենթակայութիւն տուող բուն իսկ եւ ութեանը վրայ գլխովին տդէտ ենք . գիտցածնիս միայն անոնց յատկութիւնները կամ հանգամանքներն են եւ ոչ ուրիշ բան : Տեղը չէ հոս որ աս յատկութիւններուն վրայ մանրամասն քըննութիւն ընենք , վասն որոյ միայն աս բանին վրայ խօսինք թէ փիլիսոփայական կարգաւորութեամբ նիւթական մարմնոց յատկութիւնները երկու կարգ կը բաժնուին , 'Նախնական եւ Արկրորդական :

'Նախնական յատկութեան' կ'ըսուին անոնք , որ էական են բոլոր մարմնոց գոյութեանը , եւ ստոնք են , տարածութիւն , ձեւ , բաժանելութիւն եւ հաստատութիւն . ոմանք շարժումն ալ ասոնց կարգը դասած են : Ասոնց նախնական կոչուելուն պատճառը , ինչպէս որ ըսինք հիմայ , աս է՝ որ բոլոր մարդոց նիւթոյ վրայ ունեցած ծանօթութեանը մէջ կան , եւ ամէն մարմնոյ վրայ հարկաւ պիտի գտնուին . մէկ հատը պակսի նէ , մարմինը մարմին չըլլար : Ամէն մարմին տարածութիւն ունի . ձեւ չունեցող մարմին չըլլար , ամէն մարմին բաժանելութիւն ունի , եւ ամէն մարմնոյ յատկութիւնն է հաստատութիւնը :

Հաստատութեան մարմնոց ըսելով՝ (ոմանք 'Նիւթական

Ձգտյուժիւն եւ խնայուիլն :

անունը կարելի է աւելի պատշաճ սեպնն՝) պէտք է իմանալ ան յատկութիւնը, որով մարմին մը երկու մարմնոց մէջ տեղը դրուի նէ, չ'թողուր որ ան երկուքը իրարու դպչին : Ըս մըտքով ջուրն ալ հաստատուն մարմին է . քանզի թէ որ ջուրը մէկ տեղ մը գոցուի նէ, այնքան ընդդիմահարութիւն կ'ունենայ, որ անհնար կ'ըլլայ իր երկու կողմի եղած մարմինները իրար բերել : Ինչպէս որ փորձն ալ եղած է անգամ մը Պիորէնցա քաղաքը . մէջը ջուր լեցուն ոսկի գնտակ մը խիստ սաստիկ ճնշմամբ ճնշելով անհնար եղեր է ձղմել, ինչուան որ մէջի ջուրը սկսեր է քրտինքի պէս դուրս ելլել մետաղին ծակտիքէն :

Երկրորդական անհատականի ճշմարտութիւն է բոլոր մարմնոց Խաժանէլն ըլլալը : Վանզի չենք կրնար անանկ ամենափոքր մասնիկ մը ըմբռնել, որ ալ անիկայ չ'բաժնուի : Եւ ան ամենափոքր մասնիկը ոչ միայն բաժանելութիւն, այլ հաստատութիւն՝ տարածութիւն եւ ձեւ ալ ունենալը տարակիցս չ'վերցընելու բան մըն է :

§ 16 . Երկրորդական Յատկութիւնք Նիւթոց :

Երկրորդական յատկութիւնները երկու տեսակ են . (ա.) Ընոնք որ խնայման եւ զգացողութեան հետ առնչութիւն ունին, (բ.) անոնք, որոնց առնչութիւնը ուրիշ մարմիններու հետ է :

Ըռաջին տեսակէն են ասոնք եւ ասոնց նմանները, ձայն, գոյն, համ, հոտ, կարծրութիւն, կակղութիւն, տաքութիւն, պաղութիւն, հարթութիւն, անհարթութիւն, եւ այլն : Արբոր մամինի մը համար ձայն ունի կ'ըսենք նէ, աս իմացունել կ'ողենք, թէ անոր վրայ անանկ որպիսութիւններ կան՝ որ մտքերնուս մէջ անանկ ներգործութիւն մը կ'ընեն . եւ ձայն բառը կը գործածենք, լեզուի կիրառութիւնովը, թէ ան արտաքին մարմնոյն որպիսութիւնները եւ թէ ան որպիսութիւններուն մեր մտքին մէջ ըրած ներգործութիւնը ցուցնելու համար : Երկրորդական եւ սա մարմինը գոյն ունի կ'ըսենք նէ, ան մարմինը դիտող մտքին մէջ ծագած ներգործութեանը նայելով կ'ըսենք : Ըս կարգէն երոզ երկրորդական յատկութեանց բուրն ալ ճիշդ ասոնց պէս են :

Երկրորդական յատկութեանց մէկալ կարգէն եզոզները, որոնց առնչութիւնը ուրիշ մարմիններու հետ է, խիստ շատ են : Ըն մարմինն որ մտաց հետ ունեցած առնչութիւնովը ձայն ու գոյն ունի, ուրիշ մարմիններու հետ ունեցած առնչութիւնովը

Զգայարանը Հոտառութեան եւ Հաշակման :

սա յսակութիւններն ալ կրնայ ունենալ, ինչպէս՝ կակղութիւն, ծաւալականութիւն, լուծականութիւն, թափանցկութիւն, եւ այլն :

## ԳԼՈՒԽ • Գ

### ԶԳԱՅԱՐԱՆՔ ՀՈՏԱՌՈՒԹԵԱՆ ԵՒ ՃԱՇԱԿՄԱՆ

§ 17 • Մարդու զգայարանքները իրրեւ աղբիւր հմտութեան՝ ինչ են եւ որքան կարեւոր :

ՓԼՓՄԻՅԱԼԻ բան է զգայարանաց մեր հմտութեանը սկզբնաւորութեանը՝ աճմանը եւ քանակութեանը հետ ճիշդ ինչ վերաբերութիւն ունենալը որոշ միտք առնել, եւ՝ եթէ հնար է նէ՝ իրենց բուն արժէքը աղէկ մը ճանչնալ : Մէկ մտքով մը կրնանք ըսել՝ թէ աս ունեցած մարմնաւոր գործարաններնիս էականապէս հարկաւոր եւ առաջուրնէ կարեւոր չեն ան հրմտութիւնը ունենալու, զոր սովորաբար զգայարանաց կու տանք : Ըստ հիմակուան անոնց օգնութեամբը ունեցած հմտութիւննիս առանց անոնց՝ կամ անմիջապէս եւ կամ ըստ ամենայնի տարբեր ճամբով մը կրնայինք ձեռք ձգել ըսենք նէ, խելքի դէմ անտեղի ենթադրութիւն մը ըրած չենք ըլլար : Մարդուս իր գիտնալու կարող եղած բաներուն մէկ մասը հարկաւ զգայարանաց միջոցաւ ձեռք ձգելու պարտական ըլլալը ուրիշ բան չէ, այլ լոկ կարգադրութիւն մը կամ սահմանադրութիւն մըն է, Ըստուծոյ կողմանէ եղած : Եւ աս ըսածիս ճշմարտութեանը անտարակոյս վկայութիւն է Բրարչին առանց նիւթական գործիքի կամ միջնորդի ամէն նիւթական բանի վրայ կատարեալ ճանաչումն ունենալը : Ըն ուրիշ կերպով կ'իմանայ, կամ ալ աղէկ կ'ըլլայ ըսել՝ ամէն գիտութիւն ընդարոյս եւ ի սկզբանէ հետէ անփոփոխապէս էական է իրեն :

Իսկ ամէն ուրիշ էակ պատճառ ունինք հաւատալու՝ թէ ասանկ չէ, մանաւանդ մարդուս ասանկ չ'ըլլալը ստոյգ գիտենք : Մարդուս գիտութեանը մէկ մեծ մասը թէպէտեւ արտաքին բաներու վերաբերեալ է, սակայն Ըմենիմաստին ձեռքը անանկ

Չգայարանք Հոտառութեան եւ Ճաշահման :

ստեղծեր է զինքը եւ իր կազմութիւնը անանկ կարգի մը դր-  
րեր է, որ առանց զգայարանաց ամէն բանէ զուրկ կը մնայ :  
Սերբցուր ականջները, եւ ահա բոլոր բնութիւնը լուսն՝ ան-  
ձայն՝ մեռածի պէս կ'ըլլայ. հանէ աշուրները, եւ իսկոյն արեւ-  
զական եւ լուսնին լոյսը կը խաւարի եւ համայն աշխարհ մու-  
թը կը պատէ. զրկէ շոշափելեաց զգայարանքէն, եւ յայնժամ  
ուրիշ բաներու հետ ունեցած հաղորդակցութենէն անանկ մը  
կը կտրուի կը զատուի, որ ամենայն արարածք ի չիք դարձած եւ  
ինք միայն մնացածի պէս կ'ըլլայ :

§ 18. Ըզեզին՝ զգայութեան եւ իմացման հետ ունեցած կապակցութիւնը :

ա. Բայց միթէ ըզեզը զգայարանքներուն կատարած աս պաշ-  
տոնին մէջ գործ չունի, եւ զգայարանաց վրայ եղած աս դի-  
տողութիւններէն ըզեզը գո՞ւրս ձգուած իմանալու ենք : Եւ  
ըզեզը (ինտոր որ առաջ ալ ակնարկեցինք,) զգայութեան եւ  
արտաքին իմացման գործողութեանց նիւթական մասը կատարող  
գործարանաց երեւելին է : Յայտնի է թէ զգայարանքները  
մտրգուս մարմնոյն ջրային կազմուածքէն չեն զատուիր : Բայց  
դիտէ, որ ջրերուն մէջ գտնուած նիւթը, մէկ դի հանելով,  
զանիկայ իր մէջը պահող կեզեւը, ըզեզին մէջ եղած ճիշդ ան  
նոյն կակուղ մանրաթելից բաղադրութիւնն է, եւ անոր շա-  
րունակութիւնը : Ըտոր համար է որ ընդհանուր փորձառու-  
թեամբ կը տեսնենք՝ որ երբ ըզեզին ինչ եւ իցէ կերպով վը-  
նաս մը հասնի նէ, ալ անկէ ետեւ որոշ զգայութիւն չ'ըլլար,  
այլ անկատար : Ընանկ ալ ջիզը մնասուի եւ կամ ըզեզին հետ  
ունեցած շարունակութիւնը ամուր կապով մը սխմելով կտրուի  
նէ, նոյն բանը կը պատահի. որ ասկէ կը հաստատուի ջրերուն  
եւ ըզեզին մի եւ նոյն գոյացութիւնը, եւ առջինը երկրորդին  
շարունակութիւնը ըլլալը :

բ. Ուստի ըզեզն ու նոյն գոյութիւնը եւ իրեն հետ շարու-  
նակութիւն ունեցող ինչ որ կայ նէ, որոնցմէ են մասնաւորապէս  
ջիզերը, կը կոչուի Վործարան Օգայութեան. որ ասիկայ ար-  
տաքին առարկաներու հետ ունեցած հաղորդակցութիւնը իր  
այլ եւ այլ մասնաւոր բաժանմունքներովը կը կատարէ, որոնք  
են ճաշակելեաց՝ հոտոտելեաց՝ տեսանելեաց՝ շոշափելեաց եւ լը-  
սելեաց ստորակարգեալ գործարանները : Ըս զգայութեան գոր-  
ծարանին վրայ տպաւորութիւն մը ըլլալու է հարկաւ, որ զգա-  
յութիւն կամ իմացումն ալ ըլլայ :

Օրր օրինակ, զգայութեան գործարանին լտողութեան ջիզ

Զգայարանը Հոտառութեան եւ Ճաշակման :

ըսուած մասին վրայ տպաւորութիւն մը կ'ըլլայ դրսէն, եւ անմիջապէս մտաւոր հանգամանք մը կը ծագի, որ կ'ըսուի զգայութիւն կամ իմացումն ձայնի՝ աս կամ այն նկատմամբ առնելով :

Սուոյ ճառագայթները աչքին ցանցակերպ ըսուած թաղանթին վրայ, որ տեսութեան ջղին տարածած ծայրն է՝ աչքին ետեւի դին, տպաւորութիւն մը կ'ընեն. ան տպաւորութենէն անմիջապէս մտքերնուս մէջ մէկ նոր փոփոխութիւն մը կ'ըլլայ, եւ անոր կ'ըսենք իմացումն տեսութեան :

Չեռքդ երեսը անհարթ մարմինի մը վրայ կը դնես. ձեռքդ դնելուդ վրայ ամենեւին ժամանակ չանցած մտաւոր հանգամանք մը ետեւէն կը ծագի. անոր ալ կ'ըսուի իմացումն կամ զգայութիւն անհարթութեան :

§ 19 • Զգայարանաց վրայ ըլլալու քննութեան կարգը :

Չգայարանաց միջնորդութեամբը ունեցած ծանօթութիւններնիս երբոր պիտի քննենք նէ, բնականապէս վայելուչ կուգայ ան զգայարանքէն սկսիլ, որուն արդիւնքները վերլուծելու ամենէն քիչ աշխատանք պէտք է, եւ հետզհետէ մեկալներն ալ քննել կարդալ՝ գերազանցութեան կողմանէ իրարմէ ունեցած տարբերութիւններնուն նայելով : Ա՛ս կարգադրութիւնը ընելու համար աս ըսած սկզբունքս կատարեալ ճշգրտութեամբ ի գործ դնելը թէպէտ շատ դիւրին բան չէ, սակայն մեր նպատակէն ետ չենք մնար՝ թէ որ սա հետեւեալ կարգը բռնելու ըլլանք, հոտոտելիք՝ ճաշակելիք՝ լսելիք՝ շօշափելիք եւ տեսանելիք :

Արդ՝ մտքերնիս աշխարհիս իրերուն հետ հաղորդակցութիւն ունի հոտոտելիքով : Ա՛մէն կենդանական եւ բուսական մարմին (հաւանական է թէ ուրիշ մարմիններ ալ, թէպէտ ընդհանրապէս քիչ) մէկ շատ նուրբ արտաշնչութիւն մը կ'ընեն անընդհատ : Ա՛ս արտաշնչեալ մասունքները արագ արագ կը ծաւալին, ու շատ տեղ կը տարածին ան զիրենք արտադրող մարմինին բոլորտիքը, որ է կենդրոն արտաշնչութեան : Աստի զգայուն էակ մը աս մշտաշարժ եւ շարունակ ցնդելու ետեւէ եղող մասունքներուն մօտը գալուն պէս, անոնցմէ ներգործութիւն մը պիտոր ընդունէ անշուշտ :



Զգայարանը Հոտառութեան եւ Ճաշակման :

§ 20 . Զգայարան եւ զգայութիւն Հոտառութեան :

ա . Հոտառութեան զգայութիւնն ու իմացումը հոտառութեան ջիւղ ըսուած գործարանին միջնորդութեամբ կ'ըլլայ, որուն գլխաւոր մասը քթին մէջն է, մէկ մասն ալ քանի մը իրարու կից խոռոչներու մէջ : Այբոր մարմնոյ մը արտաշնչած հոտաւետ մասնիկները կու գան կը ներգործեն սա գործարանին, մտաւոր հանգամանք մը կը ծագի անկից, որ կերպ կերպ կ'ըլլայ՝ ըստ բնութեան հոտաւոր մարմնոյն : Սակայն պէտք է գիտնալ՝ որ եթէ միայն հոտառութեան զգայութիւնը նկատենք նէ, արտաքին մարմիններէ ներսիդինիս ուրախութեան կամ արտմութեան շարժութիւն եղած ատենը՝ ան մարմիններուն եւ ան յառաջ եկած շարժութիւններուն մէջ որքան կապակցութիւն կը գնենք նէ, անկէ եւել կապակցութիւն չենք կրնար գնել հոտին եւ զանիկայ արտադրող մարմիններուն մէջ : Արաւ մտքերնուս մէջ եղած փոփոխութեան թելադրութեամբ կ'իմանանք որ ան փոփոխութեան պատճառ մը պիտոր ըլլայ, բայց սա թելադրութիւնը բնաւ չ'ցուցըներ թէ նիւթական պատճառ մը հարկաւ ըլլալու է :

բ . Հապա ինտո՞ր կ'ըլլայ որ հոտառութեան զգայութիւնը ինքնիրէն զատ բան մը չենք իմանար, այլ մէկէն սա զգայութիւնը արտաքին մարմնոյ մը, վարդին կամ շուշանին կը վերաբերենք : Ասոր պատասխան սա կ'ըսեմ, թէ որ ի ծնէ զուրկ ըլլայինք տեսութեան եւ շոշափման զգայարաններէն, սա վերաբերութիւնը չէինք կրնար ընել ամենեւին . բայց ամենաբարին Աստուած տուեր է մեզի զանոնք, եւ անոնց օգնականութեամբը ըրած փորձառութիւննիս է որ սա վերաբերութիւնը ընել կու տայ մեզի : Ար ատեն որ վարդ տեսանք՝ քովը գացինք՝ շոշափեցինք, հոտառութիւն ըսուած մտաւոր հանգամանքն ալ իմացանք միշտ : Վասնի հեղ որ շուշանին մօտեցանք կամ փրցուցին ձեռուրնիս տուին նէ, անուշ հոտը առինք : Ահա այսպէս փորձառութեամբ սորվելով որ հոտաւոր մարմնոյ մը մօտենանք նէ՝ հոտառութեան զգայութիւն կ'ըլլայ միշտ, սովորեցանք հոտառութեան զգայութիւնը ամեն ատեն մարմնոյ մը տալ՝ ան մարմինը անոր պատճառ գնելով :

Զգայարանը Հոտառութեան եւ Ճաշակման :

§ 21 . Իմացումն Հոտառութեան , նորին զգայութեանն որոշելով :

Ըն մտաւոր վերաբերութիւնն որ նախընթաց Հատուածին մէջ բնինք, անանկ արագութեամբ կ'ըլլայ, որ մեզի անանկ կու գայ թէ ան ալ անշուշտ նոյն իսկ զգայութեան մէջ բովանդակեալ ըլլալու է : Ընանկ շուտ կը կատարուի աւ գործողութիւնը, որ ամենեւին անհնար կ'ըլլայ անանկ՝ թէ միտքը ինտոր ներքին զգայութեանէն զանիկայ ծնանող արտաքին պատճառին իմացմանը կ'անցնի : Իայց աւ անցքը տեսնելու անկարող ըլլալնուս վրայ զարմանալու չենք, թէ որ աւ յիշելու ըլլանք՝ թէ աւ գործողութիւնը ի մանկութեանէ հետէ քանի անհամար անգամ կատարուած է մեր վրայ աւ եւ ասոր նման ուրիշ պարագաներու մէջ : Վանի հեղ որ զգայարանաց ներգործող բան մը եղաւ, աւ գործողութիւնն ալ կատարուեցաւ վրանիս : Կա աւ երկարատեւ եւ յաճախ կրկնութեանէն անանկ սքանչելի արագութիւն մը ստացաւ իմացման գործողութիւնը, որ զգայութիւն մը ըլլալուն պէս՝ կայծակի պէս դուրս կը ցատքէ մտքերնիս ան զգայութեան պատճառները քննելու եւ ճանչնալու :

Յայտնի կը տեսնուի որ աւ ըրած դիտողութիւննիս իմացման եւ զգայութեան մէջ եղած որոշման բացատրութեանը օգնութիւն մըն է : Ըն որոշման սահմանը տուած ենք արդէն . եւ քանի որ ամէն մէկ զգայարանաց վրայ զատ զատ կը խօսինք, պիտի տեսնենք որ տուած սահմաննիս ալ մէկտեղ կը հաստատուի ու կը բացատրուի : Ինչպէս աւ զգայարանքին վրայ եղած վարդապետութեանէն կ'իմանանք՝ որ երբ հոտ առինք՝ կամ որ նոյն է՝ բանի մը հոտին իմացումը ունեցանք կ'ըսենք նէ, վերը ստորագրուած արագաշարժ գործողութիւնը հասկըցընել է մտքերնիս . որուն մէջ իմացման վրայ տուած սահմաննուս իրեք կտորն ալ կայ . այսինքն՝ ( 1 . ) Հոտաւոր մարմին մը, եւ անոր յատուկ զգայարանքին վրայ ներգործութիւն մը . ( 2 . ) Յաջորդ փոփոխութիւն մը կամ զգայութիւն մը մտքերնուս մէջ . եւ ( 3 . ) Ըն զգայութիւնը արտաքին մարմնոյ մը վերաբերելու ետքինը առջինին պատճառ դնելով :

§ 22 . Զգայարան եւ զգայութիւնը Ճաշակման :

Բուն իսկ Ճաշակման էական գործարանը լեզուն է, որ ան-

Զգայարանը Հոտառութեան եւ Ճաշակման :

Համար ջղային պտկուէքով ծածկուած է, թէպէտ աս պըտկուէքէն բերնի խոռոչին ուրիշ կողմերն ալ կը գանուի: Արբոր համեղ մարմին մը աս գործարանին կը դպչի, անմիջապէս ներգործութիւն մը կամ փոփոխութիւն մը կ'ըլլայ անոր վրայ, անկէ ալ իսկոյն մասաւոր փոփոխութիւն մը կամ նոր հանգամանք մը կը ծագի: Ըս կերպով աս անուշ, լեղի, թթու, կծու, եւայլն, ըսուած զգայութիւններն ու իմացումները կ'ըլլան:

Ճաշակման զգայութիւնը ըլլալէն ետեւ, ան ներգործութիւնը մէկ արտաքին բանի մը կու տանք, անիկայ անոր պատճառ բռնելով: Սակայն միշտ՝ ալ շիտակը նայինք նէ ընդհանրապէս՝ ան պատճառ եղող որպիսութիւնները որոշ զատ չենք ցուցնիր, հապա իրենց զարթուցած զգայութիւններուն աւանուով՝ անոնց ալ անուշ՝ լեղի՝ թթու կ'ըսենք: Արբին ներգործութիւնը իր արտաքին պատճառին վերաբերելիս այնքան շուտ կը կատարուի որ մէկ ինձորին անուշ համը առնելուս պէս՝ մէկէն աս ինձորը անուշ է կ'ըսենք, մէկալն ալ բերնեւնուս թթու գայ նէ՝ իսկոյն աս ինձորը թթու է կ'ըսենք: Սակայն աս ամենեւին մտքէ հանելու չէ, թէ իրական ճշմարտութեանը նայելով՝ ան ներգործութիւնը պատճառին վերաբերելիս՝ թէ ըստ ժամանակին եւ թէ ըստ բնութեան կարգին՝ զգայութեանէն ետքը կ'ըլլայ, թէպէտ եւ խիստ մեծ արագութեամբ կատարուելով՝ որոշ չենք կրնար իմանալ աս մասաւոր գործողութեան մէկէն մէկալն ինտոր անցնիլը: Ինտոր որ հոտառութեան վրայ ըսինք, աս վերաբերութիւնը ընելիս փորձառութենէ յառաջ կու գայ: Ըս լեղի է, ան անուշ է կ'ըսենք նէ՝ ինչու է, աս է պատճառը, որ ան բաները քանի հեղ որ տեսանք համը առինք նէ, ան անուշ՝ լեղի ըսուած մասաւոր հանգամանքնիս ալ եղաւ մտքերնուս մէջ:

Աւստի երբոր զանազան մարմնոց անուշ՝ լեղի՝ թթու եւ ուրիշ ասոնց նման այլ եւ այլ համ ցուցնող անուսներ կուտանք նէ, սա հասկըցընել է մտքերնիս, թէ աս մարմինները բնական տրամադրութեամբ անանկ յարմարութիւն մը ունին որ մտքերնուս մէջ անուշութեան՝ լեղիութեան՝ թթուութեան՝ եւ այլն՝ զգայութիւններ կը պատճառեն: Այլ կամ աս կերպով ըսենք, բնութիւնը անանկ կարգադրեր է որ ասոնք ան հանգամանքներուն նախորդներն ըլլան. քանզի ասկէ եւել կապակցութիւն չենք կրնար դնել համի զգայութեանց եւ ան ըզգայութիւնները պատճառող իրերուն մէջ:

## ԳՐԱԳՐԱԿԱՆ ԿՐԹԱԳՐԱԿԱՆ

## ԶԳԱՅԱԿԱՆ ԿՐԹԱԳՐԱԿԱՆ

§ 23 • Կրթական զգայությունները :

Կրթական զգայությունները մեջ առաջարկեալ կարգը բռնելով, հիմա կու գործերն իսկ Կրթական զգայություններն ընկնելով ընկնելով պիտի : Եւ նախ աս յայտնի ճշմարտությունը յիշեմ որ եթէ կրթական համար մասնաւոր եւ պատշաճ զգայարան մը չունենայինք նէ, չէինք կրնար լսել : Օրը երբոր ուժով շարժի նէ, շօշափմամբ որոշ կ'իմանանք. բայց օգին շօշափման ըզգայարանաց վրայ ըրած ներգործությունն ձայն ըսած զգայությունն չըլլար : Ուստի Երարիչն Եստուած, ինտոր որ ամէն զգայությունն իրեն յատուկ վայելուչ եւ կատարեալ զգայարան տուեր է նէ, անանկ ալ լսելու համար յատուկ զգայարան տուեր է ականջը :

Երկանջը անանկ տեղ մը հաստատուած է, որ մթնոլորտին մէջ իր մտերը ինչ որ գառնայ նէ, շատ մեծ դիւրութեամբ կ'ազդէ հոգւոյն : Եւ գրտուանց քննելով մը աչուրնուս հանգիպածը չէ թէ միայն ասանկ ամենապատշաճ տեղ մը գրուած ըլլալն է ականջին, այլ սա ալ դիտելու արժան երեւելի մէկ նշանն է իր աս պաշտօնին ունեցած յարմարութեանն որ լայնկեկ բացուած գոգաւոր բերան մը ունի այնպէս կազմուած, որ իր մտը օգին մէջ թրթումունք մը կամ ծածանում մը եղաւծին պէս՝ մէկէն կ'ամփոփէ կը ժողվէ կը խրկէ ներս : Իսկ ներսի կազմութիւնը հոս երկարօրէն մանրամասն ստորագրել չ'ներելուն, որ յաւէտ բնաբանութեան կ'իյնայ, այսքան մը յիշելով բաւականանանք, թէ ան օգին թրթումունքը ականջին մէջէն ոլորուն ճամբաներով կ'երթայ ներս, եւ վերջապէս մէկ տեղ մը հաւքուելով կը զարնուի թոյնի ունկան ըսուած մաշկին : Եւ մաշկին ներսի երեսը՝ աչաց ետեւի դիւր տեսողական ջղին տարածուած ծայրին նման ջիղ մը կայ փակած : Եւ ծայրը տարածուած ջիղը, ձայնը ըզեղը հասնելուն թէ անհրաժեշտ հարկաւոր ըլլայ եւ թէ չէ, աս ստոյգ դիտելք որ օրը ականջի թմբուկին զարնելով ներգործություն մը ընկնուն պէս՝ զգա-

յութիւն կամ իմացումն ձայնի ըսուած մտաւոր հանգամանքը կ'ըլլայ :

§ 24 . Ձայնի զգայութեանց զանազանութեանը վրայ :

Ես կերպով Լողութեամբ ունեցած զգայութիւններնուս համարանքը՝ ամէն լեզուի մէջ գտնուած անոնց վերաբերեալ բաներուն եւ խօսքի ձեւերուն թուոյն նայելով չափելու ըլլանքնէ, շատ կը սխալինք . քանզի ան բաներուն եւ խօսքի ձեւերուն մեզի կարծել տուածէն խիստ շատ անթիւ անհամար մէկմէկէ տարբեր բուռեր կան : Եւսածիս բացատրութիւնը դիւրին կ'ըլլայ, եթէ աս բանը Տ'աշտի-Էայ վրայ քննելու ըլլանք քիչ մը : Եւսանկ մէկ ծանօթութիւն մը եղած է տեղ մը, եւ շատ հաւանական է որ ճշմարիտ ըլլայ, որ եթէ մէկ մարդ մը հինգ հարիւր տեսակ գինի խմելու ըլլայ նէ, հազիւ մէջերնուն երկուքը ճիշդ իրարու նման մէկ համ կրնայ գտնել : Տարբերութեանց վախճանին գրեթէ չենք կրնար հասնիլ, թէպէտ եւ չկայ լեզու՝ որ աս ամէն տեսակ համերուն զատ զատ անուն տայ : Ձայնի զգայութիւններն ալ ասոր պէս են : Եթէ իրարմէ տարբեր ձայնի զգայութիւններ կ'ըլլան, բայց տարբերութիւննին այնպէս բարակ ու անորոշ է՝ որ զատ զատ անուններով չենք կրնար ցուցնել :

Ես գիտողութիւններս աւելի անհակառակելի կ'ըլլան, թէ՛ որ յիշենք՝ թէ ձայնը ձայնէն չէ թէ միայն աստիճանաւ կրտարբերի, այլ զօրութեամբ ալ : Ինչ կը ծանուցանէ թէ հինգ հարիւր այլ եւ այլ աստիճան ձայն կրնանք իմանալ ականջով . այնչափ մըն ալ ձայներու զօրութեան կողմանէ տարբերութիւն կրնանք որոշել . աս երկու տեսակ հինգ հարիւրական տարբերութիւններէն իրար բազադրելով, ինտոր որ ինք ալ յայտնի բեր է, կ'ըլլայ երկու հարիւր հազարէն եւել պարզ ձայն, կամ աստիճանաւ՝ կամ զօրութեամբ մէկմէկէ տարբեր :

Ես ալ կայ, որ կատարեալ ձայն մը ըլլալու համար՝ առաջական օդուն մէջ պէտք է որ տեւողութեամբ եւ տարածութեամբ իրարու հաւասար շատ մը ձօճումներ ըլլան ու կատարեալ ճշդութեամբ մը կանոնաւոր ընթացքով մէկմէկու ետեւէ երթան ինչուան ականջը : Եւս մէկ ձօճումն ալ անհամար օգեղէն մասանց յառաջ եւ ետ խաղալով կ'ըլլայ, որոնց ամէնքն ալ մէկ պիտի ըլլան՝ թէ ուղղութեամբ՝ թէ զօրութեամբ եւ թէ ժամանակաւ : Եւս եւ որ նոյն իսկ մէկ ձայն ըսածնուս մէջ ալ մանր տարբերութիւններ կ'ըլլան՝ ձայնահասան մարմնոյն

Չգայարան Աստուծան :

գիրքէն ու զարնուելու եղանակէն, ձայնը հազորդող առաձգական մ' [Թնորորտին կազմուածքէն, եւ մտիկ ընող ականջին գիրքէն :

Աս ալ կայ, որ այլ եւ այլ նուագարաններ, ինչպէս սրինգ՝ քնար՝ եւ այլն, մի եւ նոյն ձայնը երբոր հանեն, գիւրաւ կ'որոշենք որ ձայնը որ նուագարանինը ըլլալը : Խել մը մարդիկ մէկ զօրութեամբ մէկ աստիճանի ձայն կը հանեն, ամենուն ձայնին վրայ մէյմէկ քիչ տարբերութիւն կը գտնես մէկայնեքէն : Աւ մի եւ նոյն մարդը ճիշդ նոյն ձայնը ժամանակ կ'ըլլայ որ այս կերպ՝ ժամանակ կ'ըլլայ որ այն կերպ հանէ՝ այլ եւ այլ պատճառներով, թէ հիւանդութեան պատճառաւ, թէ տարիքը առնելով, եւ թէ ուրիշ դիպուածական փոփոխութիւններ ըլլալով մարմնոյն մէջ :

§ 25 . Ձայնին ուսկից դաւը որոշին ինասոր կը սորվինք :

Անսնաւոր դիտողութեան արժան ճշմարտութիւն մըն է սս, որ եթէ առաջուց ամենեւին ձայն առնելուն փորձս ըրած չըլլայինք նէ, բնաւ գիտնալիք չունէինք լսած ձայներնու որ դիէն, աջ կողմէն՝ թէ ձախէն, մտանց՝ թէ հեռուանց գալը : Աւ ասանկ ըլլալուն շատ զարմանքնիս չ'գար, երբոր միտք բերենք թէ օդին թրթումունքը ինչ ուղղութեամբ որ ականջնու կը հասնի նէ՝ ան ուղղութեամբը ներս չ'կրնար երթալ ականջին թմբուկին զարնել, այլ հարկաւ պիտի ծռի ան ոլորուն ճամբաներէն անցած ատենը : Աս ըսածնիս հաստատող շատ փորձեր կան :

Անգամ մը Միտ, ինք կը պատմէ տեղ մը, մեծ վախով մը կ'արթննայ քունէն, մտիկ կ'ընէ որ օնեկին դուռը կը զարնեն, կ'երէ կը բանայ կը նայի մարդ չ'կայ, դուռը կը գոցէ, ետ պիտի դառնայ, նայիս կրկին կը զարնեն դուռը, նորէն անգամ կը բանայ, մարդ չ'տեսներ. ասանկ մէկ քանի անգամ երթալ գալէն ետեւ՝ հաղիւ կ'որոշէ որ սրտին բաբախելուն ձայնն է եղեր լսածը : Ճանապարհորդին մէկը կը պատմէ, թէ երբոր առաջին անգամ առիւծին մանչելը լսեր է անապատ տեղէ մը անցած ատենը, կենդանոյն ուրտեղ ըլլալը չ'տեսնելով՝ չէ կրցեր վտանգը որ կողմէն ըլլալը որոշել, քանզի ձայնը որպէս թէ գետնէն ելլելով բոլորակ մը ձեւացուցած եւ ինք ու իր ընկերները անոր կենդրոնը կեցած թուեր է իրեն :

Արդ՝ մէկ բանի մը ձայնէն անոր ուրտեղ ըլլալը եւ քիչ շատ ալ ինչ բան ըլլալը որոշելու կարողութիւնը փորձառութեամբ եւ ունակութեամբ կ'ունենանք : Ասանկով է որ մէկ

Զգայարան Զօշափման :

ձայնին քօզի սենեակէն , մէկալին վերէն , եւ միւսին ալ փողոցէն գալը կ'իմանանք : Եւ ասոր ասանկ ըլլալուն մէկ վկայութիւն մ'ալ աս կրնայ ըլլալ՝ որ օտար տեղ մ'որ կերթանք նէ , թեպետեւ առաջուց այնքան փորձառութիւն ենք ունեցեր , սակայն մենք մեզ աս կողմանէ շատ բաներու մէջ սխալած կը գտնենք :

Թէ որ ի ծնէ խուլի մը ականջը յանկարծ լսելու ըլլայ , հաւանական կ'երեւնայ որ առաջին անգամ ձայնի զգայութիւն իմանալուն նոյն իսկ իր մտքին մէջէն կ'ելլէ կոր պիտի կարծէ : Բայց փորձառութեամբ կամաց կամաց մարդս լսած ձայնը չէ թէ միայն վեր՝ վար՝ յաջ՝ յահեակ վերաբերելը կը սորվի , այլ ամէն մասնաւոր ձայն մասնաւոր արտաքին պատճառի մը , մէկը զանգակին՝ մէկալը սրինգին՝ եւ միւսը թմրուկին տալն ալ :

ԳՂՈՒԽ • Ե

ՉԳԱՅԱՐԱՆ ԶՕՇԱՓՄԱՆ

§ 36 . Զօշափեւաց զգայարանքին վրայ ընդհանրապէս եւ անոր զգայութեանը վրայ :

**Լ**ՍԵՆՏԻՐԻՆ, ետեւ քննութեան կարգը կու գայ Շօշափեւաց : Եւ զգայարանքին զլխաւոր գործարանը ձեռքն է , թեպետեւ մինակ ձեռքին յատկացեալ չէ շօշափելու գործը , քանզի բոլոր մտքմտիւնն վրայ սիռեալ է : Շօշափման զլխաւոր գործարանը ձեռքը սեպելնուս պատճառը աս է , որ շատ յօգուածներ ունենալով՝ դիւրաւ ասդին անդին կը շարժի մկանունքներով , ու ինչ ձեւ բան որ ըլլայ նէ կրնայ անոր յարմարիլ :

Ինչուան հիմայ քննած զգայարանքներնուս կատարած պաշտօնները աս շօշափեւաց զգայարանքէն անելի պարզ են եւ միօրինակ : Եկանջով՝ լսողութեան զգայութիւն ըսածնիս միայն կրնանք ունենալ . ձայնի վրայ հմտութիւն կու տայ մեզի , եւ անկէց անդին ուրիշ բան չունինք անով սորվելիք : Վիւնքով համերու ծանօթ կ'ըլլանք . հոտառութեան զգայարանքով ալ

Զգայարան Ըօշափման :

միայն մարմիններու հոտ կ'առնենք : Ըս զգայարանաց ձեռօքը ուղղակի ընդունած հմուտթիւննիս յիշեալ յատկութիւններէն անդին չանցնիր : Իսկ ասոնց հակառակ՝ շօշափման զգայարանօք չէ թէ միայն մէկ, այլ շատ ուրիշ յատկութիւններ ալ կ'իմանանք, ինչպէս՝ տաքութիւն՝ պաղութիւն, կարծրութիւն՝ կակղութիւն, հարթութիւն՝ անհարթութիւն, հաստատութիւն կամ դիմահարութիւն, տարածութիւն, ձեւ. եւ աս մասնաւոր դիտելու բանն ալ կայ ասոր վրայ, որ արտաքինութեան ծանօթութիւնը, որ վերոյիշեալ յատկութիւններէն աւելի առաջ եւ ընդհանուր ծանօթութիւն մըն է, իսկզբան մտքերնուս մէջ ծագելուն աս առիթ կ'ըլլայ :

§ 27. Դուրսի կամ արտաքինութեան ծանօթութեանը թելադրութիւնը շօշափման զգայութիւնով կ'ըլլայ :

Թէ որ մարդս միայն հոտառութեան զգայարանքով ըլլար, իր ունեցած հմուտթեան առաջին տարրները մինակ հոտոյ ըզգայութիւններն ըլլային պիտի՝ անոնց հետ մէկտեղ ուրիշ բան չ'լսառնուելով : Ըս զգայութիւններէն ի զատ՝ թող անոնց հաճոյ կամ անհաճոյ ըլլալէն հետեւած հաճութեան եւ տհաճութեան ծանօթութիւններուն ալ հմուտ ըլլար : Եւ աս հաճութեան եւ տհաճութեան փորձառութենէն՝ ըսենք թէ փափաքանաց եւ ատելութեան զգացումներն ու վերացեալ ըմբռնումներն ալ ունենար : Իայց ինչ օգուտ, ուրիշ զգայարանք չունենալուն՝ աս իմացման զբացումներուն չէ թէ լոկ ճանաչմունքը այլ ըսկզբնաւորութիւնն ալ իր ներսիդին ըլլալ պիտի կարծէր. կամ թէ ըսենք բուն իսկ իր հոգիէն կ'ելլեն կոր պիտի թուէր իրեն. եւ հետեւաբար զանոնք արտաքին պատճառներու վերաբերելու բոլորովին անկարող պիտի ըլլար : — Թէ որ մինակ լսողութեան զգայարանք ունենար ալ նէ հետեւելիքը աս էր, ինտոր որ միայն հոտառութեան զգայարանքով մնար նէ՝ իրեն անանկ պիտի գար թէ իր էութիւնը ըստ մեծի մասին հոտ է, անանկ ալ մինակ ականջով մը մնար նէ, իր գոյութեան մեծ մասը ձայն ըլլալ պիտի կարծէր : Եւ թէ որ աս երկու զգայարանքները մէկտեղ ըլլային ալ նէ, մարդ չէր կրնար միայն անոնց օգնականութեամբը արտաքինութեան գաղափարը ձեւացընել :

Շատ ալ հարկաւոր գաղափար մըն է ասիկայ. վասն զի աս է ան մեր հոգի եւ միտք ըսած ներքին գոյութենէն տարբեր՝ մէկ նոր տեսակ գոյութեան մը հետ մեղ ծանօթացընող միջ-



## Զգայարան շոշափման :

նորդ խորհուրդը • եւ աս գաղափարը նախ եւ առաջ մարդուս մտքին մէջ շոշափմամբ կը ծագի, թէպէտ ասով ըսել չենք ուզեր թէ աս բանը շոշափման զգայարանքին ուղղակի ենթակայ մըն է :

Տարակոյս չ'կայ որ մէկու զգայարանքները մինակ ինքնիրեն նուն մտաւոր գործողութեանց ընդարձակ հիմ մը կրնան ըլլալ : Անոնց օգնականութեամբը մարդուս միտքը կրնայ այնպէս բացուիլ, որ կարողանայ իմանալ, խորհիլ, բարդատել, վերացուցանել, տրամաբանել եւ կամիլ : Այլ թէպէտ շոշափման զգայարանքը մէջերնին չ'ըլլաւուն՝ ինչ որ ըլլար նէ ի ներքուստ ծագեալ պիտի գար մեզի, սակայն եւ այնպէս հաւանական է որ մտաւոր գործողութիւններնիս դիւրութեամբ՝ անշփոթ կը կատարուէին, եւ հաճութեան աղբիւր ալ կրնային ըլլալ : Իսկ աս վիճակին մէջ անգամ մը անգամներնուս մէկը՝ ըսենք թէ ձեռու ընիս ասդին կամ անդին՝ մէկ կողմ մը շարժել ուզենք, ու շարժելու ատեննիս մէկ կարծր եւ անթափանցելի մարմնոյ մը թող հանդիպի, եւ ահա իսկոյն՝ աս շոշափման գործողութիւնը եղածին պէս՝ յանկարծ խորհուրդներնուս սովորական ընթացքը կը շփոթի, ձեռու ընիս շարժելուն բաղձանքը անկատար կը մնայ եւ մեր կամեցմանը հակառակ ներգործութիւն դէմերնիս կ'ելլէ : Այլ հաւանականաբար ծիշք աս կէտն է ան միջոցը՝ որ արդարեւ ակնթարթ մը չ'աւելեր որ քիչ մը մենք մեր վրայ նայելով զարմանայինք, որ ատեն ան նոր՝ կենդանի իմացումը՝ ան նոր խորհուրդը կը ծագի մտքերնուս մէջ, որ է դուրսի կամ արտաքինութեան գաղափարը : Շոշափման զգայարանքն է որ ճամբուն վրայ եղած արգելքին կը զարնուի, որ աս գործը ուրիշ զգայարանք չ'կրնար տեսնել : Այլ աս գործողութիւնը ըստ մասին կը խանգարէ մտքերնուս մէջն առջն խորհուրդներուն կապակցութիւնն ու ընթացքը, եւ պատճառ կ'ըլլայ աս ըսած նոր գաղափարիս ծագելուն : Այլ աս գաղափարն որ աս պարագաներուն տակը մտքերնուս մէջ անգամ մը ծագեցաւ նէ, ալ անկէ ետեւ ինչ եւ իցէ նիւթի վրայ ձեւացուցած գաղափարներնուս՝ հետ կը խառնուի մէկ կ'ըլլայ : — Արժան կը համարիմ հոս ծանուցանել, որ Այլնախնի թիւարարութեան վրայ խօսած ատեննիս նորէն աս նիւթը ձեռք պիտի առնենք : Աս որոշմունքը չ'մոռնանք թէ արտաքինութիւնը՝ տարածութեան կամ կարծրութեան պէս՝ ուղղակի շոշափման զգայարանքին տակը չ'կրնար, հոպո շոշափման զգայարանքը պարզապէս աս գաղափարին ծագելուն առիթ մըն է :

§ 28 . Տարածութեան եւ ձեւոյ ծանօթութեանց սկիզբը :

ՏԵՐԵՆՈՒԹԵԱՆ գաղափարը շոշափականին միջնորդութեամբը կը ծագի : Երբոր մարմին մը կը շոշափենք եւ կ'իմանանք որ միջին մասերն ալ անոր շարունակութիւնն են , անատեն հարկաւորապէս աս գաղափարը կը ձեւանայ մաքերնուս մէջ : Իսկոյ սակէ աս կարծիքը հանելու չէ՝ թէ տարածութիւն ըսածնիս դուրսը ինչ է նէ , մաքերնուս մէջի տարածութեան գաղափարն ալ իրօք անոր նմանը կ'ըլլայ : Եսիկոյ շատ մեծ սխալմունք մըն է . քանզի ներքինը արտաքինին ոչ թէ նմանը կամ օրինակը , հապա ամէն կերպով անոր աննման՝ բոլորովին տարբեր բան մըն է : Երտաքին նիւթական տարածութեան վրայ հոս հարկաւոր չէ խօսիլ , մեր քննելիքը անոր ներքին զգացումն է : Սակայն ասոր վրայ ալ պէտք չէ սակէ անդին խօսքը երկնցունել . խօսքերը որչափ շատցնենք նէ , քննելիքնիս ալ այնքան մութը կը պատէ : Քանզի պարզ գաղափար մը ըլլալուն , ուրիշ գաղափարներու չ'բաժնուիր որ՝ աս կերպով սահմանելով մը աւելի պարզենք : Եւ ուստի աս մասին եւ ասոր նման ուրիշ նիւթերու որ դանք նէ , ըրած հաստատութիւննիս ամէն մարդու ինք իր փորձառութեանը ձգելէն ի զատ ուրիշ ծամբայ չ'կայ : Մասն զի որչափ եւ ինչ ձեւ խօսք որ ընենք նէ , աս կերպով հասկընալիքներնուն չափ բացայայտ չենք կրնար հասկըցնել :

Տարածութեան գաղափարը ձեւոց գաղափարին հետ շատ կապակցութիւն ունի , եւ մէկ կերպով մը անոր հիմը կրնանք սեպել : — Պրան տեղ մը կ'ըսէ թէ , ձեւն է մարմնոց ըստ տարածութեան իրարու հետ ունեցած առնչութիւնը : Իսկոյ քիչ մը որ մտորտանք նէ , կարծեմ թէ բան մը պիտի չ'հասկընանք աս խօսքէն : Քանզի էն առաջ տարածութիւն ըսածը՝ դրսուանց կամ նիւթականապէս ինչ որ է նէ՝ ան մէկ զի թող , մարդուս մաքին մէջ բուն ինքը պարզ գաղափար մըն է . մէյմ՝ ալ որ յիշած առնչութեան մասնաւորաբար ինչ առնչութիւն ըլլալը չէ ցուցըցած . ուրեմն աս ըրած ծանօթութիւնը լոյս մը չ'տար աս նիւթիս : Սակայն չ'կարծուիր որ ձեւոյ ինչ բան ըլլալը չ'գիտցող մարդ գտնուի . մարդ եղողը թէ որ գիտութեան ընդունակութիւն ունինէ , մէկ բան մը չ'գիտնայ ալ նէ՝ աս բանը հարկաւ գիտնալու է : Իւստի հոս մեր հաստատելիքը մինակ աս է , թէ տարածութեան գաղափարը՝ բնական կարելով՝ ձեւոյ գաղափարէն առաջ է . թէ տարածութիւն չէ-

զած ձեւ չ'կրնար ըլլալ, եւ թէ երկուքն ալ պարզ են, ու շօշափման զգայարանքով կը ծագին մարդուս մտքին մէջ :

§ 29 . Տարբութեան եւ պաղուծեան զգայութիւններուն վրայ :

Սնորժիւններնուս բարեխառնութեանը կամ ջերմութեան աստիճանին վրայ եղած փոփոխութիւններուն հետ կապակցած մտաւոր հանդամանքները շօշափման զգայարանքին ըրած ազդմանցը կարգը կը դասուին : Իրաւ՝ ոմանք մատենագիրք աս դասակարգութեանը չեն հաւնած, եւ իրենց կարծեացը համեմատ ըսած են թէ պետք չէ տարբութեան եւ պաղուծեան զգայութիւնները Շօշափման տալ . բայց Իիտ, որ շատ զգուշութեամբ եւ երկայնամտութեամբ բարակ քննութիւն ըրած է զգայութեանց վրայ, ասոնց հակառակ վճռարար կը հաստատէ թէ շօշափման զգայարանքով կ'ըլլան : Եսանկ կը խօսի տեղ մը իր գրութեանցը մէջ աս բանիս վրայ :

«Տարբութեան եւ պաղուծեան բառերը, կ'ըսէ, ( Վիստութեան մարդկային հոսս, գլ. 1, ) երկերկու նշանակութիւն ունին. երբեմն կը ցուցնեն տեսակ մը մտաւոր զգայութիւններ, որոնց պատճառ եղող իրերը մեզի չ'ներգործած առնանին՝ ան զգայութիւնները գոյութիւն չեն կրնար առնուլ, եւ մտքէ ու ըզգայուն էակէ դուրս ուրիշ տեղ չեն կրնար ըլլալ . բայց շատ հեղ ալ կը նշանակեն մարմնոց մէկ յատկութիւնը, որ բնական օրէնքներով մեր մէջը տարբութեան՝ պաղուծեան զգայութիւն կը պատճառէ, որ աս յատկութիւնը, թէպէտեւ իր պատճառած զգայութեանը հետ անանկ մտ կապակցութիւն մը ունի որ դիւրաւ չենք կրնար զատել անկէ, սակայն եւ այնպէս ամենեւին անմասն է անոր, եւ տարբութեան զգայութիւն չեղած առնեն ալ ան յարաժամ կայ :

«Տարբութեան ու պաղուծեան զգայութիւններուն ինչ ըլլալը աղէկ գիտենք, քանզի ինչ որ կ'իմանանք նէ անկէ թ զատ ուրիշ բան չեն եւ չեն կրնար ըլլալ . բայց մարմնոց վրայ եղած տարբութիւն՝ պաղուծիւն ըսած յատկութիւններնիս ասանկ չեն, անոնց ինչ բան ըլլալուն խելքերնիս չ'հասնիր : Օստոնք՝ ան նոյն անունները ունեցող զգայութեան անծանօթ պատճառները կամ առիթները կը ճանչնանք, եւ այսչափ է գիտցածնիս : Սակայն աս յատկութեանց բնութիւնը մեզի անծանօթ ալ է նէ, աս յայտնի գիտենք եւ ամէն մարդու խելք կը վկայէ որ աս յատկութիւնները կան . եւ չիմացած ատեննիս տարբութիւն՝ պաղուծիւն չ'կայ ըսուի նէ, անանկ անճոռ-

Զգայարան Շօշափման :

նի խօսք մը կ'ըլլայ որ՝ հերքման ալ տեղի չ'մնար : Վսնզի ջերմաչափը՝ քօլը մարդ չըլլայ նէ վեր չելեր վար չիջնար , կամ եթէ կուրնէա բնակիչ չըլլար նէ՝ Աոր Օձմէա կղզւոյն պէս ցուրտ կ'ըլլար ըսելէն վար չ'մնար աս խօսքն ալ անտեղութեան կողմանէ :

«Վիլիստօփայից կ'լինայ պէտք եղած փորձերը ընելով եւ մահածութիւնով մարմնոց ունեցած տաքութեան եւ պաղութեան ինչ բան ըլլալը քննել : Աւ տաքութիւնը թէ բնութեան մէջ ծաւալած ու տաքցած մարմնոյն մէջ հաւքուած տարր մըն է ըսեն , եւ թէ տաքցած մարմնոյն մասանցը մէկ տեսակ թըրթումունքն է ըսեն . թէ տաքը՝ պաղը՝ ինտոր որ յառաջ բերած զգայութիւններն իրօք իրարու հակառակ են նէ՝ անանկ ալ անոնք իրարու հակառակ յատկութիւններ սեպեն , եւ թէ մինակ տաքութիւնը յատկութիւն եւ պաղութիւնը անոր պակասութիւնը ըլլալ որոշն . ասոնք փիլիսոփայութեան վերաբերեալ խնդիրներ են : Արն ըլլայ նէ ըլլայ ճշմարիտը , հոգ չէ . քանզի մարդոց դատողութիւնը երկու կողմին ալ որոշում մը ըրած չունի :

«Վայց տաքութեան յատկութիւնը ինչ որ է նէ , աս գիտենք որ տաքութեան զգայութիւնը ամենեւին նմանութիւն չ'կրնար ունենալ : Աւ զգայութեանն ու յատկութեանը մէջ նմանութիւն գնեն ալ զլիսու ցաւը գնդի ձեւ ունի կարծելուն նման անմտութիւն մը կ'ըլլայ : Ամենէն ուսմիկ մարդն ըլլայ թող , բանականութիւն որ ունի նէ , կրակին մէջ տաքութեան զգայութիւն կամ անոր պէս բան մը կրնայ ըլլալ չերեւակայեր : Ապա պարզապէս աս կարծիքը կ'ունենայ , թէ կրակին մէջ իրեն եւ բոլոր զգայուն էակաց տաքութեան զգացում տուող բան մը կայ : Աւ սակայն , ինտոր որ տաքութիւն անունն ալ աւելի պատշաճութեամբ յաւէտ կրակին մէջի ան անծանօթ բանը կը ցուցնէ՝ քան թէ անկէ յառաջ եկած զգայութիւնը , իրաւամբ կը խնդայ կրակին մէջ տաքութիւն չ'կայ ըսող փիլիսոփային վրայ եւ ըրած հաստատութիւնը խելքի գէմ կը սեպէ » :

§ 30 . Կարծրութեան եւ կակղութեան զգայութեանց վրայ :

«Վանք հիմայ , կը շարունակէ նոյն մատենագիրը , կարծրութեան եւ կակղութեան վրայ քննութիւն ընելու . որ աս բառերով միշտ մարմիններու իրական յատկութիւններ կ'իմանանք , եւ ատ յատկութիւններուն վրայ ալ որոշ ըմբռնումն ունինք :

«Մէկ մարմինի մը մասունքները անանկ պնդութեամբ իրար փակած ըլլան՝ որ զիւրութեամբ ձեւը չ'կրնանք փոխել նէ, անոր կ'ըսենք կաթճօ . թէ որ զիւրաւ մասանց տեղերը կարենանք փոխել նէ, անոր ալ կ'ըսենք կախող : (Նոր մարդոց կարծրութեան եւ կակղութեան վրայ ունեցած գաղափարը սս է : Ասոնք ոչ զգայութիւն են, ոչ ալ որ եւ իցէ զգայութեան նմանութիւն ունին . դեռ շշափմամբ չ'հմացուած՝ իրական յատկութիւններ էին, եւ թէ որ չ'հմացուին ալ նէ՝ ինչ են նէ ան կը մնան . ո՞վ կը համարձակի ըսել թէ ազամանդ քարը ինչ ուան որ չ'շշափուեցաւ նէ կարծրութիւն չունէր :

«Աներկբայ՝ զգայութիւն մը կայ, որ անով կ'իմանանք մարմնոյ մը կարծր կամ կակուղ ըլլալը : Աս կարծրութեան զգայութիւնը զիրաւ կ'ունենաս, թէ որ ձեռքդ քարին վրայ կուտես, եւ ընդունած զգացմանդ միտք դնես՝ որչափ որ հնար է նէ մէկ զի ընելով մտքէդ քարին կամ անոր յատկութիւններուն եւ կամ ինչ եւ իցէ արտաքին բաներու խորհուրդները : (Կայ զգայութիւնը ունենալը, ու անոր միտք դնել ու զանկայ խորհրդածութեան որոշ առարկայ ընել իրարմէ շատ տարբեր բաներ են : Առջինը շատ զիրին գործ մըն է . իսկ երկրորդը՝ շատ բաներու մէջ խիստ դժուարին :

«Այսպէս սորված ենք զգայութիւնը նշանի մը տեղ դնելու ու անմիջապէս նշանակեալ կարծրութեանն անցնելու որ՝ ինչպէս որ կ'երեւնայ՝ մէկը չէ խորհեր վրան, թէ՛ ռամիկն է եղեր եւ թէ փիլիսոփան . մէկ լեզուի մը մէջ ալ անուն չունի յատուկ : Ասոր նման որոշ եւ ասոր չափ ալ յաճախ իմացուած զգայութիւն չ'կայ . եւ սակայն մէկը մտադրութիւն չընէր, եւ ուստի անոր ալ գործը մէկ ակնթարթի մէջ յանկարծ մարդու մտքէն անցնելով՝ մեր կազմութեանը մէկ օրէնքով մարմիններու մէկ յատկութիւնը մեզի թեւադրելը կ'ըլլայ միայն :

«Արդարեւ կ'ըլլան անանկ պարագաներ, որ անատներ մարմինին կարծրութեանէն յառաջ եկած զգայութեանը միտք դնելը դժուարութիւն չունենար . օրինակի աղաղաւ՝ երբոր զգայութիւնը անանկ սաստիկ ըլլայ որ, մեծ ցաւ տայ . անատներ բընութիւնը ձայն կու տայ մեզի որ միաք դնենք ներսիդինիս եղած բանին . եւ ուստի մենք ալ մտադիր ըլլալով կը նայինք որ լոկ զգայութիւն է, եւ մինակ զգայուն էակաց մէջ կրնայ ըլլալ : Վրուխը ուժով մը քարէ սիւնի մը զարնէ թող մէկը պատահմամբ, ու հարցընեմ անոր թէ զգացած ցաւը քարին կարծրութեանը կը նմանի՞ կոր, կամ թէ իր մէջը եղած բղղգայութեան պէս բան մը կրնայ ըմբռնել ան կենդանի մարմնոյն վրայ :

«Մասնկ որ ըլլայ նէ պարագան, անատենը մարդուն մտադրութիւնը բոլորովին իր իմացած ցաւին զգացմանը կը վազէ. եւ ինչպէս որ գիտէ ամէն մարդ՝ քարին մէջը բան մը չըզգար, այլ զլսուան մէջ սաստիկ ցաւ մը կ'իմանայ: Բայց թէ որ կամացուկ մը գլուխը սիւնին դնէ նէ, բոլորովին ուրիշ կերպ կ'ըլլայ բանը. անատենը զլսուան մէջը բան մը չեմ իմանար, այլ քարին վրայ կարծրութիւն կը զգամ պիտի ըսէ: Մոջինին ինտոր եղաւ նէ, աս անգամ ալ զգայութիւն չունեցաւ արդեօք — անտարակոյս ունեցաւ. բայց անանկ զգացում մը, որ բնութիւնը քարին մէջը եղած ան բանին լոկ մէկ նշանը ըլլալու համար դրեր է. եւ ուստի աս նշանը իր մտքին մէջ զգացածին պէս, ժամանակ չանցնիր, մտադրութիւնը նշանակեալին կ'երթայ. ասանկով՝ առանց մեծ դժուարութեան՝ չ'կրնար մարդ այնչափ ժիտք դնել զգայութեանը, որ համողութիւն նշանակեալ կարծրութեանէն որոշ բան մըն ալ ան է:

«Սակայն աս փախստական զգայութեան միտ դնելը, իր արագ ընթացքը կայնեցընելը եւ իրեն փախստեան տեղի բրած կարծրութեան արտաքին յատկութեանէն բաժնել զատելը որչափ դժուար ալ է նէ, ինչ օգուտ՝ որ փիլիսոփային ընելէքն ալ, շատ աշխատանքով եւ վարժութիւնով ըլլայ թող, աս բանիս հետեւիլը պիտի ըլլայ, չէ նէ անհնար է որ ուղիղ դատաստան ընէ աս նիւթոյն վրայ, եւ կամ մինչեւ անգամ հասկընայ հոս զուրցածներնիս: Վանդի ասանկ նիւթերու մէջ վերջապէս բանը ամէն մարդու ինք իր մտքին մէջ զգացածին եւ իմացածին ձգելէն ի զատ ուրիշ բան չենք կրնար ընել»:

§ 31. Երբեմն շօշափման զգայութեանց կարգը գրուած մէկ քանի անորոշ ըզգացումներ:

Շօշափման զգայութիւններուն վրայ եղած աս զիտողութիւններուն հետ մէկտեղ արժան է աս ալ ծանուցանել՝ թէ մէկ քանի զգացումներ կան աս զգայութեանց կարգը սեպուած, որոնք հաւանականաբար անանկ անորոշ բնութիւն մը ունին՝ որ հաստատաբար եւ ստուգապէս այս կամ այն կարգէն են չենք կրնար ըսել: Թէպէտ եւ ընդհանուր կարգաւորութեան որ մասէն ըլլանին յայտնի է, եւ գիտենք որ հիմակուան քըննած մտաւոր հանգամանքներնուս հետ կը դատուին. այսինքն՝ թէ յաւէտ արտաբուստ, ի նիւթեղինաց ծագեալ են, քան թէ ի ներքուստ. եւ սակայն յայտնապէս մասնաւոր զգայարանքի մը չենք կրնար յատկացընել: Հոս հիմայ յառաջ բերելու ըզ-

գայութիւններնիս (թէ որ ասոնց ալ զգայութիւն անունը կըրնանք տալ նէ) յաւէտ կ'երեւնայ որ մարդուս ամբողջ կազմուածքէն կը ծագին, այսինքն ոսկորները՝ միսը՝ մկանունքը՝ զգայարանքները՝ եւ այլն՝ մէկտեղ առնելով, քան թէ մէկ մասնաւոր տեղէն: Ասոնցմէ են անհաստութիւն՝ հոգնութիւն՝ սկարութիւն՝ հիւանդութիւն, կամ թէ անոնց հակառակը հաստութիւն՝ առողջութիւն՝ բերկրութիւն՝ առօրեութիւն՝ եւ այլն՝ բաւերով ցուցուցած զգացումներնիս:

Աս նոյն գիտողութիւնները՝ գէթ ըստ մասին՝ Անօթութեան եւ Օարտուտեան բաւերով ցուցուցած զգայութիւններնուս ալ կը պատշաճին: Ասոնք կ'երեւնայ թէ բաղադրեալ զգայութիւններ են ընութեամբ, պարզապէս միայն անհաստութեան զգացում չեն, այլ նաեւ ան վիճակէն ազատելու փափագ մըն ալ կայ իրենց հետ մէկ եղած: Աս գիտողութիւնները ըստ մասին անօթութեան եւ ծարաւութեան ալ կը պատշաճին ըսինքն նէ, խօսքերնիս մինակ անհանգստութեան զգացմանը համար առնելու է: Աս տարրական զգացումը անտարակոյս ամբողջ մարմինէն կը ծագի, եւ հետեւաբար արտաբուստ սկիզբն առած գաղափարներուն ընդհանուր կարգը կը գտտուի. սակայն եւ այնպէս դիւրին բան չէ պնդելը՝ (ինչպէս երբեմն եղած է) թէ շոշափական զգացմանց կարգը գնեւ պէտք է: Անշուշտ ամէն մարդ գիտէ թէ անօթութեան զգացումը շատ նմանութիւն չունի կարծրութեան՝ կակղութեան, հարթութեան՝ անհարթութեան, եւ կամ ուրիշ զգայութեանց, զորոնք սովորաբար շոշափման կու տանք: Անօթութեան անհանգիստ զգացումը, որ ստամոքսին ջղերուն այսինչ վիճակին մէջ մտնելէն յառաջ կու գայ, ան ջղային փոփոխութեան ինչ պատճառաւ ըլլալուն վրայ տարբեր տարբեր կարծիքներ կան, եւ կ'երեւնայ թէ ազէկ մը հասկըցուած չէ: Թէ որ աս բանը գիտնալու ըլլայինք, կարելի է այսչափ չէինք տարակուսէր աս զգացման ինչ կարգէ ըլլալուն վրայ:

§ 33. Չգայութեան եւ անով նշանակեալ արտաքին իրին մէջ եղած առնչութիւնը:

Շոս քիչ մը արդէն խօսած նիւթերնուս, ներքին զգայութեան եւ արտաքին աւարկային մէջ եղած առնչութեանը դառնալով, կրկին յիշենք՝ թէ մտաւոր հանգամանքն ու անոր վերաբերեալ արտաքին աւարկան իրարմէ բոլորով ն տարբեր բաներ են: Աս գիտողութիւնը մարմիններու նախնակա՝ յատկութիւններուն

Զբոսարան Շոշափման:

ալ կը պատշաճի, երկրորդական յատկութիւններուն ալ: Թէ տարածութեան վրայ ըլլայ խօսքը, թէ դիմահարութեան, թէ տարութեան, թէ գունոյ, թէ անհարթութեան, ասոնց ամենուն մէջ ալ միօրինակ երկու բան կայ, ներքին ներգործութիւն եւ արտաքին յատկութիւն. բայց ասոնք իրարու ամենեւին անմասն՝ զատ զատ բաներ են: Եսկ ան բանն որ իր նշանակածին ասանկ ըստ ամենայնի անմասն է նէ, ինտո՞ր կ'ըլլայ որ ան իրմէ բոլորովին տարբեր բանը մեզի կը ծանօթացընէ, ասիկայ մեկնելու աշխատինք նէ՝ ժամանակնիս պարտապը կ'երթայ: Բոլոր մեր գիացածը մինակ սյսչափ է, եւ ասկէ անդին չենք կրնար անցնիլ:

Մտիկայ Իմացական Փիլիսոփայութեան դժուարին, բայց վըճռական մէկ կտորն է, որուն վրայ ճիշդ եւ ուղիղ գաղափար ունենալը էպպէս հարկաւոր բան մըն է մեզի աս գիտութեանս մէջ: Ըս գիրքին որ կը կարդաս, իրենց ցուցուցած կերպ կերպ խորհուրդներէն եւ անոնց կապակցութիւններէն շատ տարբեր բաներ են: Հաշուարարին ան վերէն ի վար շարած թուանշանները իրենց նշանակած ոչ քանակութիւններուն, եւ ոչ ան քանակութեանց իրարու հետ ունեցած առնչութիւններուն կը նմանին: Ըս նոյն բանը իմացիր մարդուս մտքին վրայ ալ՝ իր գործողութիւնները ուրիշ բան են, ան գործողութիւններուն նշանակածները ուրիշ: Միտքը ինք իր կանոններովը կը կառավարէ բոլոր իր զգացումներն ու գործողութիւնները, եւ իր մէջը ինչ որ ըլլայ նէ՝ իր բնութեանը գոյացական տարրներովը կ'ըլլայ: Ոչ լսած կամ տեսած բաներնիս, ոչ ճաշակման կամ շոշափման եւ կամ ուրիշ զգայարանաց տակ ինկած բաները, մէկ խօսքով՝ ուրտեղ եւ ինչ ձեւով որ ըլլայ երեւակայել կրցած նիւթական բաներուդ եւ ոչ մէկը կրնայ գէթ սակաւ ինչ յայտնել անոր ներքին բնութեանը ինչ ըլլալը եւ կամ իր գործողութիւններուն ինչ կարգ կանոն ունենալը:

Ուրեմն ի՞նչ բան է ատ զգայութեան եւ արտաքին առարկային, իմացման եւ իմացուած բանին մէջ եղած առնչութիւնը: Յայտնի է թէ նշանը նշանակուած բանին հետ ինչ առնչութիւն ունի նէ՝ ան է: Եւ ինչպէս որ շատ բաներու մէջ՝ նշանը նշանակեալին ծանօթութիւնը կու տայ նէ մեզի՝ ուրիշ կերպով չէ, այլ միայն ան նշանը ան ծանօթութիւնը տալու համար սահմանուած կամ հաստատուած ըլլալովը, անանկ ալ աս բանիս մէջ: Միտքը ինք իր գործողութիւնը՝ առանց տեսանելի պատկեր կամ նմանութիւն մը բնաւ իր մէջը ընդունելու, սյլ միայն արտաքին եւ նիւթական՝ ըստ տեղոյ եւ ըստ բնութեան իրմէ որո՞՞, ոստ հրերէ իր մէջը ծագած ըլ-



## Զգայարան Տեսութեան :

զայութիւններովը՝ կարող է ան իրերուն վրայ հմուտթիւն ըստանալու, եւ անանկով բոլոր նիւթականաց ծանօթ ըլլալու :

## ԳՂՈՒԽ • Զ

## ԶԳԱՅԱՐԱՆ ՏԵՍՈՒԹԵԱՆ

§ 33. Գործարան տեսութեան եւ տեսութեան զգայարանքին օգտակար...

ԲՆՐԵՐԸՆԸՆ Ըստուծոյ մեզի շնորհած իմացման գործիքներուն մէջ տեսութեան զգայարանքը ամենէն բարձրագոյն աստիճանը դասելու ենք : Այժմէ միայն շօշափման ըրած ազգամունքներովը հմուտթիւն ստանալու հարկ ըլլար, որչափ շփութութիւններու եւ դժուարութիւններու մէջ պիտի կշնայինք, եւ ինչպէս ծանր յառաջադիմութիւն մը պիտի ընէինք : Առանց ամենեւին տեսութեան, ամենէն սրամիտ եւ աշխոյժ մարդը անգամ ինչուան որ լեռան մը կամ մինչեւ անգամ մեծկակ շէնքի մը վրայ դադափար մը ձեւացընէր նէ, տարիներ պիտի քշէր : Իսկ տեսութեան զգայարանքին օգնութեամբը չէ թէ միայն մեծ մեծ շէնքերը կը կարողանայ դիտելու զննելու, այլ մէկ նայուածքով՝ աչքը առածին չափ տեղ՝ բոլոր մէջը գրանուածներովը մէկտեղ՝ մէկ վայրկեանի մէջ կ'ըմբռնէ :

Աս զգայարանքին գործարանը աչքն է : Հարեւանցի քննութեամբ մը յայտնի կը տեսնուի որ տեսակ մը հեռագիտակ է աչքը, մէկմէկէ որոշ մասերէ կազմեալ, որոնց վրայ խիտ գերտալանց եւ ամենակատարեալ ճարտարութիւն կը տեսնուի : Աչքը կը անսնէ լուսոյ շառաւիղներուն միջնորդութեամբը, որ ամէն կողմ սփռած են, եւ յարաժամ ուղիղ գծիւ յառաջ կ'երթան, թէ որ դէմերնին արգելք մը չկը : Այլ զգայարանաց նման՝ աս ալ իր գործողութեան միջնորդը չէ թէ միայն դըրսուանց կ'ընդունէ, հապա ներս կը տանի լուսոյ շառաւիղները, եւ բնարանական սկզբունքներով բեկբեկելով՝ նորէն ուրիշ կերպ կը հիւսէ :

Բայց մեր նպատակէն դուրս կ'ելլենք, թէ որ հոս աչքին կազմութեանը վրայ մանրամասն ստորագրութիւն մը ընելու ըլլանք, որ յաւէտ բնաբանութեան կ'լինայ : Բայց աս գործարանին վրայ ասանկ ստորագրութիւն մ'որ ըլլայ նէ, անոր այլ եւ այլ մասերուն կատարած սքանչելի գործերն ալ մէկտեղ ցուցնելով, անաչառ եւ խոհական մտքի տէր եղողներուն շատ զօրաւոր ապացոյց մը կ'ըլլայ գերագոյն Արարչին գոյութեանը եւ բարութեանը : Սէկ դի թող միւսները, որչափ զարմանալի բան է լուսոյ շառաւիղներուն աչքը մտնելը : Թէ որ աս շառաւիղները ամենանուրբ գոյութիւն մը չըլլային, անանկ արագ աչքին մէջը մտնելով շատ ցաւ պիտի տային : Թէ որ ներախիղճիս գունոյ զգայութիւններ յարուցանելու կարողութիւն չունենային, ո՞ր կը մնար ան հաճութիւնն որ հիմայ չորս դիւնիս գտնուած առարկաները տեսնալէն կ'իմանանք, որ որ դի կը նայինք նէ, տեսակ տեսակ գեղեցիկ գոյներով աչքերնիս կը զուարճանայ :

§ 34 . Տեսութեան իմացումն ըլլալուն եղանակը կամ գործողութիւնը :

Տեսողական իմացումը աս գործողութեամբ կ'ըլլայ : Աչքերնուս առջին եղած մարմիններէն ցուցող լուսոյ շառաւիղները այլ եւ այլ ուղղութեամբ կու գան աչքի գնդակին նախ եւ առաջ ջինջ եւ թափանցիկ եղջերեային կը զարնեն :

Թէ որ ճիշդ աս ուղղութեամբ յառաջ երթալու ըլլային, մէկ խառն եւ անորոշ տարածուած գոյն մը պիտի ձեւացընէին աչքին մէջ : Բայց սառնակերպ հիւթէն անցնելու ատեննին կը բեկբեկին ու կը ծռին իրենց առջի ուղղութենէն, եւ յետոյ ցանցակերպին վառարանի կէտերուն վրայ կը տարածին, որ տեսութեան ջղին բացուած՝ ճերմակ՝ մանրաթիւ ծայրն է :

Արբոր տեսութեան ասպարէզին մէջ գտնուած առարկաներէն ցուցեալ շառաւիղները աչքը կը մտնեն, ու ցանցակերպին որոշեալ մասնաւոր կէտերուն վրայ տարածելով՝ հոն պատկեր մը կը ձեւացընեն, յայնժամ անմիջապէս այն տեսութիւնն ըսուած զգայութիւնը իամ իմացումը կ'ըլլայ : Այսչափ է ահա տեսողական իմացման գործողութեանը նիւթական մասին վրայ քննել կրցածնիս . ցանցակերպին վրայ պատկերը նկարուելէն ետեւ, ան մտաւոր հանգամանքը կը ծագի . բայց մեր կարողութենէն վեր է տեսութեան պատկերին եւ անկէ յառաջ եկած մտաւոր հանգամանքին մէջ մինչեւ անգամ ամենափոքր Ֆիզիզական կապակցութիւն մը դնելը : — Աս բանիս վրայ ըսելք-

## Գրայարան Տեսութեան :

նիս այսչափ է միայն՝ թէ նախորդին ու յաջորդին մէջ ինչ առնչութիւն որ կայ նէ, ասոնք ալ նոյն առնչութիւնը ունին իրարու հետ՝ մեր կազմութեանը մէկ վերջին՝ օրէնքովը, որն որ չենք կրնար քննել եւ հասկընալ :

## § 35 . Բնիկ եւ ստացական իմացմունք տեսութեան :

Տեսութեան զգայարանքէն ընդհանրապէս ծագեալ սեպուած զգայութեանց եւ իմացմանց վրայ խօսք ըրած առնենիս պէտք է որ Էոն տեսութեան զգայութիւնները ստացականներէն որոշենք : Տեսութեան զգայարանքը գունոյ զգայութիւններէն ի դատ ուրիշ զգայութիւն չունի բուն իրը : Ըս գունոյ զգայութիւնները (կամ իմացմունքը, երբոր զգայութեան հետ մէկտեղ զանկապ իր արտաքին պատճառին վերաբերել մըն ալ ըլլայ նէ) անհամար են : Եւ աս կողմանէ տեսութեան զգայարանքին ըրած աղումները հաւասար կ'ըլլան ճաշակելեաց եւ լսելեաց ըրած աղումացը, թէպէտ եւ ամենուն ալ իրարմ ունեցած տարբերութիւնները ճշգրութեամբ գտնելը խիստ դժուարին բան մը ըլլալուն համար՝ ան բազմութիւն զգայութեանց մէկ քանիներուն միայն որոշ անուն կու տանք : Բոլոր գունոյ զգայութիւնները ի բնէ տեսութեան զգայարանքին են եւ բնաւ ուրիշ մէկ զգայարանքի մը չենք կրնար տալ :

Սակայն ի բնէ տեսութեան զգայարանքէն անմիջապէս ծագեալ երեցող՝ եւ ըստ սյնմ մեր ալ ատ զգայարանքէն սեպած հմտութեան բոլորը տեսութեան զգայարանքէն չէ : Ըս զգայարանքէն են ըսուած իմացումներէն ոմանք՝ ճիշդը նայելով անանկ զգայութիւններէ յառաջ եկած են, որոնց հետ չէ թէ միայն զանոնք արտաքին պատճառներու վերաբերել մը կայ, որ ասով զգայութեանէն իմացում կ'ըլլայ, հասկա սյլ եւ սյլ դատողութեան գործողութիւններ ալ խառնուած են : Երբեմն տեսութեան զգայութեան հետ աս դատողութեան գործողութիւններ միաւորիլը ինչուան ան աստիճան կը հասնի, որ բոլորովին ուրիշ աղբիւրէ մը ընդունած գիտութիւննիս տեսութեան զգայարանքին կը փոխադրենք կերպով մը : Եւ շատ անգամ ալ մտքերնուս մէջ երկար՝ դիւրամած զուգորդութիւն մը ըլլալէն ետեւ, մեր ան զուգորդութեամբ ունեցած գիտութիւնը բուն իսկ տեսողական կարողութեանէն ծագած կը կար-

11) Իրջին օրէնքս՝ Էստոնի ան՝ որ ուրիշ օրէնքի իմ մկէան վրայ հեմալ չէ :

ծննք: Այսչափը թերեւս բաւական է ընդհանուր իրական ճշմարտութիւնը ցուցնելու: Բայց կ'արժէ որ մէկ քանի օրինակներու վրայ ալ համառօտ քննութիւն մը ընենք հոս, որ աղէկ մը հասկըցուի ստացական իմացմունք տեսութեան ըսածնուս ինչ ըլլալը:

§ 36. Տարածութեան գաղափարը ի բնէ տեսութենէ չէ:

Յայտնի է թէ ասիէ սոլորական խօսք չ'կայ որ կ'ընեն մարդիկ՝ թէ այս կամ այն բանին երկայնութիւնը եւ լայնութիւնը կը տեսնեմ. եւ ասոր նման անթիւ զըոյցք կ'ըլլայ միշտ: Աս խօսքերուն միտքը աս կ'երեւնայ ըլլալ՝ (եւ աներկբայ անանկ կը հասկըցուի՝) թէ տարածութիւնը ուղղակի առարկայ է տեսութեան: Տարակոյս չ'կայ թէ ամէն մարդու զգացողական խորհուրդն ալ աս է, թէ ան շրջագիծն ու մակերեսոյթը, որով մարմինները կ'երեւնան միշտ, տեսութեան որ գաննէ՝ իրօք կը տեսնուին: Այլ թէ որ մէկը ասիէ տարբեր կարծիք մը ընէ նէ բոլորովին անտեղի բան մը ըրած պիտի սեպուի:

Բայց՝ ինչպէս որ արդէն տեսանք՝ տարածութեան ծանօթութիւնը տիրապէս շոշափման զգայարանքէն կը ծագի: Իրաւ պարզ եւ տարրական խորհուրդ մը ըլլալուն, սահմանի չ'գար, եւ արտաքին նիւթական տարածութեան վրայ ալ ստորագրութիւն մը չենք կրնար տալ, առանց խել մը բառերով խառն ու շիտթ բան մը ընելու: Բայց տարածութիւն ըսածնիս ինչ որ է նէ, ( որ թէպէտ ինչ ըլլալը չենք կրնար ըզուով իրաւ ճեաց ենթակայ ըլլալու բան մը չէ, ) ի բնէ տեսութենէ է չենք կրնար ըսել: Տարածութեան ծանօթութիւնը արտաքինութեան ծանօթութեան հետ կից կապակցութիւն մը ունի: Անհնար բան է որ լոկ գիտակցութեամբ կամ մեր մտքին մէջ դարձածին վրայ խորհելով տարածութեան վրայ գաղափար մը ձեւացընենք: Ապա մկանսնց մէկ շարժմունքովը ընդգիմակաց մարմին մը շոշափելով՝ նախ արտաքինութեան ծանօթութիւնը կ'ունենանք, եւ ապա կամ ան նոյն շոշափմամբ եւ կամ ան շոշափումը այն մարմինին վրայ շարունակ քանի մը հեղ կրկնելով՝ տարածած կամ ծաւալած ըլլալուն ծանօթութիւնն ալ կը ծագի մտքերնուս մէջ: Մէկ մարդ մը թէ որ անշարժ կեցած ըլլայ տեղ մը, եւ հոտոտէ՝ ճաշակէ՝ լսէ՝ տեսնէ, բայց ընդգիմակաց մարմինէ մը աս շոշափական ներգործութիւնը

չընդունէնէ, չ'կրնար ոչ տարածութեան եւ ոչ դուրսի ծանօթութիւնը ունենալ : Ըստ ծանօթութիւնները յիշած կերպով նիստնախ շօշափմամբ ունենալով, ալ անկէ ետեւ կամաց կամաց կը սորվի տարածած մարմնոց (որոնք հարկաւ գունաւոր մարմիններ կ'ըլլան) մեր աչքին ինչ երեւոյթ ցուցնելը : Ս'անկութեան առջի տարիները ստուգելով որ ամէն գունաւոր մարմին տարածած կ'ըլլայ, միշտ եւ հանապաղ տարածութեան դադարաբար գունոյ երեւոյթին հետ կը միացնէ : Ըսանկով մէկ Չգոյարանքէն ունեցած գիտութիւնը մէկապէն կը փոխադրէ արդեամբ եւ գործնականապէս. եւ ժամանակէ մը ետեւ ինչուան աս կարծիքին ալ կը հասնի թէ տարածութիւնը ուղղակի առարկայ է տեսութեան, որ ճիշդը նայելով՝ ան տեսածը ոչ թէ նոյն իսկ տարածութիւնն է, այլ լոկ տարածութիւն թելադրող նշան մը : Շօշափման Չգոյարանքին ներգործութիւնն է տարածութեան բուն եւ սկզբնական պատճառը. եւ ետքէն տեսութեան գաղափար կ'ըլլայ նէ, լոկ ստացմամբ կամ փոխադրութեամբ կ'ըլլայ :

§ 37. Չեւոյ վրայ տեսութեամբ ունեցած գիտութիւննիս :

Ըստ ըրած գիտողութիւններնիս յայտնի է թէ մարմիններու ձեւերուն համար ալ պիտի հասկըցուի : Ի սկզբան շօշափմամբ հմտութիւն կ'ունենանք ձեւոյ վրայ : Բայց տարակոյս չ'կայ որ մենք շատ անգամ աս գիտութիւնը՝ ինչպէս որ շօշափման՝ անանկ վստահութեամբ տեսութեան ալ կու տանք : Թէպէտ եւ ասանկ ընելով կը սխալին մարդիկ, նակայն երբոր մեր իմացական գործողութեանց սկիզբը կ'երթանք, կը տեսնենք որ զարմանքի բան չէ ասանկ ծուռ ըմբռնում մը մտքերնուս մէջ հաստատուիլը :

Թանձր մարմիններուն աչքերնուս ցուցուցածը ուրիշ բան չէ, այլ գոյներու եւ լուսոյ տրամադրութիւն մըն է լոկ : Մենք կը կարծենք թէ աս մարմիններուն վրայ դուրս ելած ներս մտած կէտեր կը տեսնենք, որ ճշմարիտը՝ տեսածնիս անոնց ձգած ստուերը կամ լոյսն է : Եւ աս լոյսն ու ստուերը փորձով կը սորվինք թանձր ձեւերու նշաններ սեպել : Բսածիս ճըշմարտութեանը մէկ ապացոյցը աս է՝ որ պատկերհանր մարմնոյ մը վրայ տեսած լոյսն ու ստուերը Չգոյարանքին ինչ ձեւով որ կ'երեւանանէ անանկ նկարելով՝ այնպէս բնական կը ձգէ նկարը, որ չէ թէ միայն ան մարմնոյն շրջագիծը, այլ դուրս ցցուած եւ խոռոչացեալ այլ եւ այլ անկանոն տեղերն ալ

կատարելագէտ որոշ կը տեսնես վրան : Սակայն ան պատկերը որ անանկ կերպ կերպ լուսոյ եւ ստուերի տրամադրութեամբ այլ եւ այլ ձեւեր կը ցուցնէ, հարժ եւ տախարակ մակերեւոյթի մը վրայ քաշուած է :

§ 38 • Կոյրերէն բացատրութիւն սս նիւթիս վրայ :

Սննդնէօ առաջարկութիւն է ըրեր Աղքին, թէ խորանարդին ու գունդին մէջ եղած տարբերութիւնը շօշափմամբ սորված կոյրի մը աչքն որ յանկարծ բացուի նէ, կրնայ որոշել որն է գունդը ու որն է խորանարդը ան իր նոր զգայարանքովը միայն : Ըսոր պատասխան տուեր է Աղք՝ թէ չ'կրնար . որ Սննդնէօին կարծիքն ալ սս է եղեր : Կոյրը խորանարդն ու գունդը շօշափման զգայարանքին ինչ ներգործութիւն կ'ընեն նէ ան գիտէ, եւ շօշափմամբ կրնայ որոշել զանոնք մէկմէկէ, բայց տեսութեան զգայարանքին ինչ ներգործութիւն ընեն չ'գիտնալուն, չ'կրնար մինակ ասով գունդը որն է՝ խորանարդը որն է՝ զրուցել :

Բսինք թէ թանձր մարմնոց աչքերնուս ցուցուցածը ուրիշ բան չէ, այլ լոկ լուսոյ եւ գոյներու տրամադրութիւն մը : — Ըսկէ կը հետեւի որ գունդ մը տեսած ատեննիս մտքերնուս մէջ ծագած առաջին գաղափարը այլ եւ այլ աստիճան լուսով այլ եւ այլ աստիճան ստուեր առած բոլորակի մը գաղափար պիտի ըլլայ : Ըս անկատար գաղափարը սս կերպով կը շտկենք : Ըսաջուրնէ՝ շօշափման զգայարանքին թելադրութիւնները տեսութեան զգայարանքին թելադրութեանցը հետ կապակցելով՝ ու այնպէս շատ մը փորձեր ընելով՝ թանձր ու կորնթարդ մարմիններու ինչ կերպ երեւոյթք ունենալը կը սորվինք : Ըս երեւոյթքը գնդաձեւի ներկայութեան նշան մը կ'ըլլայ մեզի, ասանկով գնդաձեւ մարմիններու վրայ շուտ մը գունդի գաղափարը շտակ կը ձեւացնենք, որ ընդհակառակն՝ զանոնք տեսած ատեննիս մտքերնուս մէջ մտած առաջին գաղափարը լուսոյ եւ ստուերի կերպ կերպ տրամադրութիւն ունեցող տափակ բոլորակ ձեւոյ մը գաղափար է ճիշդը նայելով : Ըս ըրած հաստատութեանս ճշմարտութեանը վկայութիւն մըն է սս, որ նկարիչները տափարակ մակերեւոյթի վրայ կորնթարդ մարմիններ կը ցուցնեն մեծ կատարելութեամբ եւ ճշդութեամբ :

Ըրդ՝ ասոնցմէ կ'երեւնայ թէ տարածութիւնն ու ձեւը ի ըսկզբան ոչ թէ տեսութեամբ, այլ շօշափմամբ կ'իմացուին : Ընք կրնար տեսութեամբ անոնց վրայ դատողութիւն բնեք

ինչուան որ փորձով չ'սորվինք թէ այսինչ այնինչ տեսանելի երեւոյթները տարածութեան եւ ձեւոյ հետ կ'ըլլան միշտ եւ տարածութիւն ու ձեւ կընշանակեն : Աս գիտութիւնը շատ կանուխ , մեր մանկութեան առջի տարիներուն մը կը ստանանք , անանկ որ երբ սկսուիլն ու ինտոր յառաջ երթալը բարոյական մտքերնէս կ'ելլէ :

§ 39 . Աւրով մեծութիւն չափել :

Աս ըսածներէս Սեփարատական վրայ ալ քննութիւն մը ընել կու գայ բնականապէս : Աս մէկ ընդհանուր բառ մըն է որ տարածութեան համար կ'ըսուի , չէ թէ միայն ան տարածութիւնը սահմանի մը տակ ըմբռնելով , այլ նաեւ ուրիշ բաներու վերաբերելով եւ բաղդատելով մը : Սեփարատական վրայ թէպէտ եւ աչքով դատումն կ'ընենք , սակայն մտքէ հանելու չէ թէ աս բանիս գիտութիւնը իրնէ տեսութեան ազդումն չէ , հապտ նախ եւ առաջ շոշափմամբ կ'ունենանք : Այնպէս յայտնի բան է աս , որ առհասարակ մեծութիւնը երկուքի բաժնած են , Շօշափելի կամ իրական եւ տեսանելի կամ Արեւութական . որոնց առաջինը , շոշափելին , միշտ նոյնը կը մնայ . իսկ երկրորդը , տեսանելին , մարմնոյն հեռաւորութեանը հետ կը փոփոխի : Այց ոտք հասակ ունեցող մարդուն երկայնութիւնը միշտ վեց ոտք կ'ըլլայ , թէ մղոն մը հեռու է եղեր , թէ կէս մղոն , թէ քովերին . անզը փոխուելէն իրական կամ շոշափելի մեծութիւնն ալ չ'փոխուիր : Բայց աս նոյն մարդուն տեսանելի կամ երեւութական մեծութիւնը վեց ոտք ալ կրնայ ըլլալ , երկուք ալ շատ մտա քովերին որ ըլլայ նէ , մեծ կը տեսնենք , երկու մղոն հեռացածին պէս պղտիկ բան մը կ'ըլլայ . վասն զի քանի որ հեռանայ նէ , այնքան աչքերնուս փոքր կ'երեւնայ :

Ի հաստատութիւն աս մեծութեան հատուկեանը բուն իսկ տեսութեան ազդմունք չըլլալուն , այլ ի սկզբան շոշափմամբ ունենալուս վարդապետութեանը , արժան է ծանուցանել՝ թէ երբոր տեսութեամբ մեծութեան վրայ դատումն կ'ընենք , չէ թէ միայն տեսական իմացմամբ կը դատենք , հապա մեծութիւնը իրօք կամ կարծեօք գիացուած ուրիշ առարկաներու հետ ըրած բաղդատութիւննիս ալ շատ կը ներգործէ աս դատմանը : «Միտքըս կու գայ որ , կ'ըսէ Ապէրքրոմպի , ( Իմացական Արողութեանը , Սասն Բ , Տօղ . Բ , ) անգամ մը երբոր Երեւելիք ըլլուրէն կ'անցնէի , Սուրբ Պօղոսի մեծ դուռը բաց մէկ քանի հոգի մէջը կայներ էին : Հեռուանց ասոնք ինձի փոքրիկ աղաք

երեւցան. բայց երբոր քովերնին գացի, նայեցայ որ չափահաս մարդիկ են եղեր : Հոս աս մտաւոր գործողութեան մէջ դուռը իրրեւ ծանօթ չափ մը եղաւ, ու միւս առարկաները անով չափուեցան : Թէ որ սովորաբար մարդուս աչքին երեւցածէն աւելի մեծ դուռ մըն էր խորհելով նայէի նէ, ան մարդոց երեւութական չափն ալ մտքիս մէջ մեծ կ'ըլլար. եւ հակադարձը՝ ան մարդոց չափահաս ըլլալը գիտնայի նէ, անատենն ալ դուանը մեծութեանը վրայ ուրիշ դատումն կ'ընէի :

§ 40 . Մառախուղի մէջ տեսնուած առարկաներ :

Ա երոյիշեալ սկզբունքով կը պատահի որ մառախուղի մէջ տեսնուած բաները իրօք եղածէն մեծ կ'երեւնան : Ան աղօտ երեւոյթքն որ կը ցուցնեն աչքերնուս, անանկ գաղափար մը կու տայ մեզնի՝ թէ շատ հեռու են, թէպէտ եւ իրօք մօտ են : Ս'եր միտքն ալ ասկէ անմիջապէս աս հետեւութիւնը կը հանէ, (անանկ շուտ որ պարզ եւ սկզբնական իմացում մը կը թուի մեզի,) թէ անանկ հեռու մարմին մը այդչափ տեսանելի կամ երեւութական մեծութիւն որ կը ցուցնէ կոր նէ, անշուշտ նոյն կարգէն եղող իրերէն մեծ պիտի ըլլայ : Ասել է որ մշտքին՝ իր մէկ օրէնքովը կամ սովորութիւնովը բանին երեւոյթէն մեծութիւնը դատելու ատենը՝ սխալ ենթադրութենէ մը սխալ եզրակացութիւն հանելն է որ աս պարագայիս մէջ կեղծ մեծութիւն մը կու տայ տեսութեան առարկային. թէպէտ կարելի է թէ աս բանը լուսոյ շառաւիղները սովորականէն աւելի թանձր ու պնջափ ճիշդ միօրինակութիւն չունեցող միջոցէ մը անցնելով՝ տարբեր կերպով մը բեկբեկելէն ալ ըլլայ ըստ մասին :

§ 41 . Արեւին ու լուսին հորիզոնին վրայ ցուցուցած երեւոյթքք :

Աս գիտողութիւնները բնականապէս մտքերնիս կը ձգեն ան ամենուն ծանօթ ճշմարտութիւնը, որ է արեգակին ու լուսին հորիզոնին վրայ միջօրէականէն աւելի մեծ երեւնալը : Արկու պատճառ կրնանք առ աս երեւոյթին, ու թերեւս ընդհանրապէս երկուքը մէկ կ'երթան : — (ա) Հորիզոնը զէնիթէն հեռու կ'երեւնայ՝ անոր ու մեր մէջը միջանկեալ առարկաներ գտնուելուն համար : Ս'էկ բանի մը հեռաւորութիւնը մենք ըստ մասին մէջ տեղը ինկած առարկաներէն կը չափինք. եւ ինչ միջոց որ



## Զգայարան Տեսութեան :

ըլայ, միջանկեալ առարկաներ չունենայ նէ, տարածութեամբ իրօք եղածէն պզտիկ կ'երեւնայ: Արդ՝ թէ որ լուսոյ շառաւիղները աչքերնուս մէջ ճիշդ մի եւ նոյն պատկերը կը ձեւացընեն, մենք ալ ան շառաւիղները ձգող մարմինը հորիզոնին վըրայ աւելի հեռու է կը կարծենք՝ քան թէ գէնիթին վըրայ է, ասանկով հաւանական է որ հորիզոնին վըրայ գտնուած մարմինները աւելի մեծ տեսնելու սովորութիւն մը ստացած ըլլանք:—(բ) Արեգակն ու լուսինը մեծ կ'երեւնան, երբոր անանկ խոշոր բաներ կը տեսնենք ան նոյն ուղղութեանը մէջ կամ անոնց սկաւառակին վրայէն անցնող, որոնք շատ հեռու ըլլալով՝ խիստ փոքր անկիւններ կը ձեւացընեն աչքերնուս մէջ, ինչպէս հեռու ծառեր հորիզոնին վըրայ, կամ շատ բացէն դացող նաւեր ծովին երեսը: Աս խոշոր բաները թէպէտ շատ մանր կ'ըլլան աչքերնուս մէջ կամ տեսողական երեւոյթով, սակայն առաջ ուրնէ ինչ մեծ բաներ ըլլալնին գիտնալովնիս, վրանին ունեցած ըմբռնումներնուս մէջ կը մեծնան: Աւ սս ըմբռնողական աճումը՝ առաջօք երեւոյթով մը՝ իրենց շօշափած պռարկաներուն ալ կը հաղորդի:

## § 42. Տեսութեամբ հեռաւորութիւն չափել :

Գանք հիմայ տեսութեամբ հեռաւորութիւն իմանալ ու ըստուգելուն: Սէկ բանի մը հեռաւորութիւնը ըսելով, թէ որ մեզի վերաբերելով է նէ խօսքը, ան բանին ու մեր մէջ տեղը եղած միջոցը ըսել կ'ուզենք: Բսածիս դէմ սս առարկութիւնը կրնայ ըլլալ, թէ ատ մէջ տեղը ինկած միջոցը ըսածը հոմանուն է սահմանելիքի: Ինչ է նէ, չկարծուիր թէ խօսքիս միտքը չհասկըցող մարդ կրնայ ըլլալ: Արեւին անգամ հեռաւորութեան վըրայ գաղափար ունին, եւ շօշափմամբ կամ ինչուսան հեռաւոր առարկային քովը քալելով՝ հեռաւորութիւն կը չափեն:

Տեսութեամբ հեռաւորութիւն իմանալը ստացական իմացումն է, ոչ թէ բնածին. թէպէտ եւ ինչուան մօտ ատեններս առհասարակ իրական ճշմարտութիւն ետքինը կը սեպուէր:

Ըմեն բան աչքին դպած կը թուի մարդուս առջի բերանը: Սեր զգայարանքներուն ազգմանցը շատերուն փորձառութեամբ շտկուիր շատ կանուխ ըլլալուն համար, ինչուան անատենները յիշողութիւննիս չենք կրնար հասցընել որ տղայութիւնն ու մանկութիւնը սս բանիս վկայ ցուցընէինք: Բայց կոյր ծնած ու յանկարծ աչքերնին բացուածներու պատմութիւններէն շատ

Զգայարան Տեսութեան :

յայտնի կը հաստատուի ըստ՝ ճշմարիտ ըլլալը : Զիզէլային վերաբոյժը պատանի մը կը պատմէ, որուն աչքին լուսունքը կեղուելով՝ տեսնելու կարողութիւնը տեղը բերեր է : «Մընի անգամ տեսնելուն՝ հեռաւորութեան վրայ դատումն ընելը այնքան հեռու բան էր իրեն որ, կ'ըսէ, անանկ կը կարծէր թէ ամէն բան աչքին կը գպչէին, ինչպէս որ շոշափման առարկաները շոշափած ատենը իր մտքին կը գպչէին. եւ տեսած բաներուն մէջ իրեն ամենէն հաճելի եկողները հարթ եւ կանոնաւոր ձեւ ունեցողներն էին, թէպէտ եւ ոչ դատումն կրնար ընել ան ձեւերուն վրայ, եւ ոչ գէթ կարծիքով մը զրուցել թէ ինչ պիտի ըլլայ ան բանը՝ որով հաճելի կ'երեւնային իրեն անոնք» :

Այս վերաբոյժը ուրիշ խել մը մարդոց ալ աչքը բացեր է, ինչպէս որ ինք կ'ըսէ, որոնք ամենեւին տեսնալն ինչ է չեն գիտեր եղեր. եւ գիտելու արժան բանն աս է որ ամէնն ալ յիշեալ պատանոյն պատմածը կը պատմեն եղեր՝ իրենց ըսած խօսքովը ըսենք՝ ինտոր տեսնալ սորվելուն վրայ, թէպէտ եւ ոչ մանրամասն անոր չափ : Այս ամենուն վրայ ալ աս բանը ընդհանուր գտեր է, որ առաջուց աչքերնին ամենեւին խաղցուցած չըլլանուն, ինտոր ընելու էն չ'գիտնարով՝ առջի բերանը ամենեւին չեն կրցեր աչուրնին մէկ բանի մը դարձնել նախիլ. հապա ետքէն կամաց կամաց սորվեր են :

§ 43. Տեսութեամբ հեռաւորութիւն չափելու նշանները :

Աչուրնին բացուած կոյրերը առջի բերանը չեն կրնար տեսած բաներնուն իրենցմէ որչափ հեռու ըլլալը չափել. բայց շուտով կը նային որ մարմիններուն արտաքին երեւոյթին վրայ մէկ քանի փոփոխութիւններ կան որ միշտ կ'ըլլան կոր, երբոր մեկ բան մը կը հեռանայ իրենցմէ. սակէ կը սկսին տեսանելի երեւոյթով հառաւորութիւն չափել : Այս թէ որ հնար ըլլար մասնաւորաբար քննել ստուգել, անտարակոյս պիտի տեսնէինք որ ամէն մարդ տեսութեամբ հեռաւորութիւն չափելու զօրութիւնը աս ճամբով է ունեցեր : Արբոր մարմին մը շատկեկ կը հեռանայ մենէ, տեսանելի երեւոյթը կը պզտիկնայ, գոյնին կենդանութիւնը կ'երթայ ու շրջագիծը անորոշ կ'երեւնայ. սակէց ի զատ՝ կ'ըլլայ որ մեր ու ան հեռուն կեցող բանին մէջ տեղը քիչ շատ միջանկեալ առարկաներ ալ գտնուին, հեռաւորութեանը համեմատ տարածուած : Այսպէս ահա այսինչ տեսանելի երեւոյթները այնինչ մասնաւոր հեռաւորութեան նշան կ'ըլլան մեզի :

Ահորիչք գծագրութեանց մէջ շատ աղէկ կը ցուցնեն աս

բանիս ճշմարտութիւնը : Վանդի երբոր մէկ բան մը հեռու ցուցընել կ'ուզեն, գոյնը նսեմ եւ շրջագիծը անորոշ կը նկարագրեն, ու մէջ տեղն ալ ուրիշ բաներու մասնական տեսքը կը ցուցընեն, սասնկով ուղածնուն չափ հեռու կը տանին ան բանը երեւութաբար : Եւ ընդհակառակն՝ մօտ որ ցուցընել ուզեն նէ, կենդանի գոյն մը կու տան, չափը մեծ ու շրջագիծը որոշ կը նկարեն, եւ տեսնողին ու նկարուած բաներուն մէջ տեղը կամ ամենեւին միջանկեալ՝ բան մը չեն դնել, կամ՝ դնեն ալ նէ՝ շատ քիչ :

§ 44 . Առանց միջանկեալ առարկաներու օգնութեան հեռաւորութիւն չափել :

ա. Լեռաւորութեան վրայ ծանօթութիւն ունենալու համար միջանկեալ առարկաներու կարօտ ըլլալնէս կը հետեւի որ՝ աս միջանկեալները չ'ըլլան նէ, շատ անգամ տարակուսանաց մէջ պիտի իյնանք : Այս իրաւ անանկ կ'ըլլայ . քանզի շատ անգամ մարդիկ աչքի նայուածքով դատարկ գաշտերու կամ ճահիճնեքու երկայնութիւն կամ լայնութիւն չափելու որ կ'ըլլան նէ, ընդհանրապէս իրական տարածութենէն պզտիկ կ'ըլլայ ըրած կարծիքնին : Ըս նոյն պատճառով գետերու լայնքն ալ սխալ կը չափեն : Այն միտն կամ շատ շատ իրեք քառորդ միտն կայ չ'կայ ըսած գետերնուն լայնութիւնը չափես նայիս նէ, գուցէ միտն մը՝ միտն ու կէս կը գտնես : Այն բանը իմացիր ուրիշ ջրերու համար ալ, եւ ինչ բան որ հորիզոնական գիրքով կ'երեւնայ աչքերնուս՝ աս նոյն պարագաներուն մէջ :

բ. Այն կերպով աշտարակներու եւ անոր պէս ուրիշ ուղղահայեաց եւ ոչ թէ հորիզոնական գիրքով կեցած բաներու բարձրութիւնն ալ սխալ կը չափենք, թէ որ շատ բարձր ըլլան : Աշտարակներու վերի մասը շրջակայ շէնքերէն բարձր ըլլալուն, եւ անկէց ի դատ՝ բաղդատութիւն մը բնելու համար մօտը ուրիշ բաներ չ'գտնուելուն, ի հարկէ աչքով ինչ չափ որ առնենք նէ սխալ պիտի ըլլայ, եւ ընդհանրապէս իրօք եղածէն քիչ կ'ըլլայ :

գ. աստատուն աստղերը, աչքով նայինք նէ, այնպէս կ'երեւնան թէ ամէնքն ալ մի եւ նոյն անորոշ հեռաւորութիւնը ունին : Այս երկինքին երեսը ամէն տեղ ցրուած ըլլալովնին, անոր ալ ամէն կողմը իրենց նման մի եւ նոյն անորոշ հեռաւորութեամբը կ'երեւցընեն. եւ ասոր համար երկինքը գունդի մէջի դիւն պէս կ'երեւնայ աչքերնուս : Ասկէց ի դատ՝ աս ալ կայ որ հորիզոնը զէնթիթէն հեռու կը թուի մեզի . վասն զի մեր

Չգայարան Տեսութեան :

ու հորիզոնին մէջ տեղը շատ բաներ, գաշտեր՝ բլուրներ եւ ջուրեր կան, որոնք գիտենք որ շատ տեղ կը բռնեն. իսկ զէնթիմին ու մեր մէջը անանկ չափը գիտցուած մեծ մեծ բաներ չըկան: Ըստ պատճառաւ երկինքը գունդի հատուածի նման կ'երեւնայ աչքերնուս, եւ կ'իսագունդէ ալ պզտիկ, մէջ տեղը մենք կայնած: Եւ որչափ որ աչքերնիս շատ տեղ առնէ նէ, այնչափ ալ աս կ'իսագունդը կը մեծնայ ու հատուածը կը պզտիկնայ:

§ 45. Ովկիանոսին վրայ տեսութեան առարկաներուն ինչպէս երեւնալը, եւ այլն :

Օրովի աչքը չսորված մնորդ մը հեռուանց նաւ մը տեսնէ նէ, իրօք եղածէն շատ մօտ կ'երեւնայ աչքին. պատճառը բացատրած սկզբունքնիս է: Ըսաջ հեռուն բան մը տեսնելու որը ըլլար նէ, ընդհանրապէս շատ մը միջանկեալ առարկաներ ալ աչքին առջեւը կ'ըլլային՝ ան հեռաւոր առարկային ու իր մէջ տեղը ցրուած: Աւ հիմակուան խաբուելուն ու ճիշդ հեռաւորութիւնը որոշել չ'կրնալուն գլխաւոր պատճառը հաւանականաբար ան միջանկեալ բաները չ'ըլլալն է:

Ըսածներնուս վրայ արժան է աս ալ եւելցրնել, թէ օգին պարզութեանը փոփոխելէն ալ տեսութեամբ ունեցած հեռաւորութեան գաղափարներնիս կը շփոթին: Պրբքի Ապիսկոպոսը Խապիայի եւ Սիկիլիայի մէջ ճամբորդութիւն ըբած ատենը շատ հեռուն եղող քաղաքներ ու պալատներ եղած տեղերնէն մղոններով մօտ կ'երեւնան եղեր իրեն: Ըսոր պատճառը ինք աս գտեր է, որ է ճմարիտ պատճառը, թէ Խապիայի ու Սիկիլիայի օդը շատ յստակ ըլլալուն, Ընդդիայի օդին հետ բողբոստելով, հեռուն եղող բաները անանկ պայծառ եւ որոշ երեւոյթ մը կը ցուցնէին, որ այնպիսի երեւոյթ՝ իր երկրին մը նոյնորտին մէջ՝ մինակ մօտիկ քաղաքներու ու շէնքերու վրայ կը տեսնուէր: Իր հայրենի երկրին մէջ տեսած բաները ինչ երեւոյթ որ կը ցուցնէին նէ, ինք ան երեւոյթին վրայ հեռաւորութիւն չափել սորվեր էր. եւ երբոր անանկ օդը պարզ երկրներու մէջ ան նոյն հաշուով սկսեր է չափել նէ, նայեր է որ հաշիւները սխալ կ'ըլլեն: Ըս բանը ասանկ փոփոխութեանց հանդիպող շատ ուրիշ ճամբորդներ ալ կը վկայեն:

## ԳԼՈՒԽ • Է

## ՈՒՆԱԿՈՒԹԻՒՆՔ ԶԳԱՅՈՒԹ ԵԱՆ ԵՒ ԻՄԱՅՄԱՆ

§ 46 . Ընդհանուր գիտողութիւնն Ունակութեան օրէնքին եւ անոր վերաբե-  
րութիւններուն վրայ :

Մեր մտաւոր կազմութիւնը մէկ երեւելի օրէնք մը ունի , որ կը կոչուի օրէնք Ունակութեան , եւ ընդհանուր խօսքով ասանկ կը ստորագրուի . (մէկ մասին ներգործութիւնները կրնան լեւա՛ք կամ սովորութեամբ օր-րո-րութեան կը գործ-վեն կը ստանան : Աս ունակական գիւրութեան եւ զօրութեան լոկ կրկնութենէ կամ՝ հասարակօրէն գործածուած անունովը ըսենք՝ սովորութեանէ յառաջ գալը , ուրիշ մտաւոր իրողութիւններու նման , ուրիշ մարդոց վրայ ըրած գիտողութիւններնէս եւ մեր անձնական փորձառութենէն կը սորվինք : Այլ քանզի աս ունակութիւնը ստանիս ինչուան հիմայ չեղաւ որ իրմէ աւելի պարզ սկզբանց վերլուծուէր , իրաւամբ կրնանք ըսել թէ ասիկայ մեր բնութեանը մէջ վերջին էական բան մըն է :

Ունակութիւն բառը՝ լեզուի գործածութիւնով՝ կը ցուցնէ վերը ըսած կերպովիս ձեռք ձգուած գիւրութիւնն ու զօրութիւնը , եւ իր նշանակութեանը մէջ միանգամայն արգիւնքն ու կերպն ալ կը պարունակէ : Այլ քանզի ունակութեան օրէնքը մարդուս բոլոր մտացը կը վերաբերի , վասն որոյ ունակութիւն բառն ալ խիստ շատ կերպերով կը գործածուի : Ունակութիւն կ'ըսենք այլ եւ այլ ձեռագործական արհեստներու մէջ ցուցուած վարպետութեանը , համարտկալին մեծ արագութեամբ հաշիւներ ընելուն , ճակատայարդարին նայուածքով մը բանակին կենալու գիրքը՝ տեղը որոշելուն , անպատրաստ ատենաբանին աղբերահօս խօսուածքին , եւ ասոնց նման անհամար բաներու : Լոկ շարժութեան եւ բաղձանաց սովորութիւններու համար ալ կը բանեցնենք աս բառը , ինչպէս՝ ունակութիւն կ'ըսենք ազահին ընչասիրութեանը , փառասիրին պատուամոլութեանը , կասկածոտին կասկածելու արթնութեանը , եւ մարդասիրին իրեն հաստատուն բնութիւն եղած բարեսիրութեանը :

Ռնակութիւնք Չգոյութեան եւ Իմացման :

§ 47. Ռնակութեան օրէնքը ինչպէս որ մարդուս մտքին նոյնպէս եւ մարմինին ալ կը վերաբերի :

Գիտելու արժան երեւելի բան մ'ալ առ է որ ունակութեան օրէնքը չէ թէ միայն մտքին, հապա մարմինին ալ կ'իշխէ : Միեւնական արհեստներու եւ բոլոր ան գործերուն մէջ, ուրոնց՝ մտաւորէն իզատ՝ մարմնաւոր ճիգ ալ պէտք է, սովորութեան արդիւնքը չէ թէ միայն մտքին, այլ մարմինին վրայ ալ կը տեսնուի : Ըսանկ գործերու մէջ չէ թէ միայն մտքին գործողութիւնները կը կենդանանան եւ կը զօրանան, այլ ան գործերը կատարելու համար բանող մկանունք ալ աւելի ուժեղ եւ մեր կամացը աւելի հնազանդ կ'ըլլան : Եւ աս մկանունքներուն ձգանցը կամեցողութեան հնազանդելու պատրաստականութիւնը ունակութեամբ շատ անգամ ինչուան ան աստիճան կը զօրանայ, որ ալ անկարող կ'ըլլանք որոշ մտքերնիս բերելու թէ աս գործը ընենէս առաջ կամական ճիգ մը ըրինք՝ թէ չէ : Ռնակութիւնն է ան որոշիչ յատկութեանց արմատը, ուրոնցմով մէկուն ձեռագիրը մէկայինէն կը տարբերի. ունակութիւնն է նստուածքի՝ ելլուածքի՝ խօսուածքի ան մասնաւոր ձեւերուն պատճառը, որ կ'ըսուի յատուկ շարժուածք անձին, եւ այնչափ տարբերութիւն կը գնէ շատ մարդոց մէջ : Ռնակութիւնն է խօսելու գործարանաց հետ անմիջապէս կապակցած մկանանց շարժումները անանկ մէկ եղանակի մը խօթողը, որով մէկուն ձայնը մէկայինէն դէթ քիչ մը կը զանազանի : Ըհա աս ըսած բաներուս մէջ ունակութիւնը մտքի վրայ ալ է, մարմինի վրայ ալ. եւ անանկ զօրացած, որ խիստ դժուար բան է դէթ քիչ մը տեսն անոնց դէմ գործելը : Ըս Ռնակութեան օրէնքը մեր մտաւոր կազմութեան գլխաւոր բաժանմանց ամենուն վրայ ալ, Իմացականին՝ Օգոյականին ու Կամականին կ'իշխէ. եւ ուստի մասց այլ եւ այլ մտածութեան վրայ գիտողութիւնն քրտած տակննիս կրկին եւ կրկին տոչիթ պիտի ունենանց առ նիսիս վրայ խոսելու : Ըս այժմ, աս գլխաւոր մտայնութեան մէջ Օգոյութեանց եւ Իմացականց վերաբերեալ ունակութիւններու վրայ քիչ մը քննութիւն պիտի ընենք :

§ 48. Ռնակութիւնն Հաստատութեան :

Օգոյարարանաց վերաբերեալ ունակութեանց վրայ, ասակ աւ.

Ունակութիւնը Չգայութեան եւ Իմացման :

ուսմ ինչ կարգ որ բռնեցինք նե՛ նոյն կարգաւոր խօսիլ պատշաճ կու գայ, որով նախ եւ առաջ քննութիւննիս հաստատութեան վրայ կ'ըլլայ: Երգ՝ Հոտառութիւնը ենթակայ է ունակութեան: — Մէկալ զգայութիւններուն պէս աս ալ կրթութեան ընդունակութիւն ունի: Ինչպէս որ կան մարդիկ՝ որ գոյներու մէջ եղած տարբերութիւնները որոշելու կարողութիւննին տկար է, նոյնպէս եւ կ'ըլլան անանկներ՝ որ հոտերու մէկմէկէ ունեցած տարբերութիւնները որոշելու որ դաննե՛ տարակուսանաց ու երկրայութեան մէջ իյնան: Եւ ինտոր որ առջի պահութիւնը ունեցողներուն տկարութիւնը քիչ շատ կրնայ վերնալ նե, անանկ ալ ետքինը ունեցողներունը: Հոտառութիւնը ինչ աստիճան զօրութեան որ ընդունակ է նե՛ ան աստիճանը շատ անգամ չ'հասնիրը աս պատճառաւ է, որ առ հասարակ մարդիկ չափազանց կարօտութիւն մը չունին անոր, բայց երբոր միւս զգայարանքներուն մէջ պահութիւն ըլլայ ու հմտութիւն ստանալու սովորական ճամբաները դոց ըլլան նե, մարդ անատները կը ստիպուի անսովոր կերպով մը գործածել աս կարողութիւնը: Ընտան մենք ալ ունակութեան օրէնքը հոտառութեան վրայ ինչ արդիւնք յառաջ կրնայ բերել նե՛ յայտնի կը տեսնանք: Սղիւարգ՝ Յակոբոս Միչէլին վրայ ըրած պատմութիւններուն մէջ, որ աս տղան խուլ՝ կոյր եւ անբարբառ՝ աս իրեք դժբաղդութիւնը մէկէն իր վրայ ըլլալուն՝ շատ ստիպուած էր հոտառութեան զգայարանքը բոլոր զօրութիւնովը գործածելու, տեղ մը կ'ըսէ թէ՛ «( )տարական մը դալու ըլլար նե աս տղուն քովը, միշտ եւ անմիջապէս կ'իմանար հոտէն, ու որ դի կայնիլն ալ մատովը կը ցուցնէր»: Եւ շատ ուրիշ տեղեր ալ կրկին եւ կրկին ըսած է, թէ սքանչելի սուր հոտառութեան տէր եղած էր աս տղան: «Ստատներուս ան քաջասիրտ փիլիսոփային՝ Մոյսին համար կը պատմուի թէ, կ'ըսէ Եպէբբոմպի, բարեկամները քովն եկած ստեննին հագուստնին սեւ է թէ չէ՛՝ հոտէն կը ճանչնայ եղեր»: Հարգաբերտի խուլերու եւ համբերու դպրատան մէջ խուլ՝ համբ ու կոյր աղջկան մը վրայ հրատարակուած հետաքրքրական պատմութեան մը մէջ աս նիւթիս վերաբերեալ սա խօսքերը կան: «Օ գայարանքներուն մէկը պահաս մարդոց վրայ աս բանը ըստուգուած է, կ'ըսէ հրատարակիչը, որ մէկալ զգայարանքներնին եւեւը կենդանի եւ առոյգ կ'ըլլան: Աղբերը շատ անգամ շօշափման կողմանէ սքանչելի ճշդութիւն կ'ունենան, խուլ եւ համբ եղողները, որ բոլոր գիտութիւննին աչքով կը ստանան, հոգիներնուն բոլոր կարողութիւնը կարծես թէ աչքերնուն մէջն է ժողվուած: Եւ մանապէս աչք՝ ականջ եւ լեզու չունեցողներ-

Ունակութիւնք Չգայութեան եւ Իմացման :

բուն շոշափման ու հոտառութեան կարողութիւնները չափե գուրս կը զօրանան : Մանաւանդ հոտոտելիքը գրեթէ նոր զգա- յարանք մը կ'ըլլայ, եւ մինչեւ անգամ բարակին հոտառու- թեան սրութիւնը կ'անցնի" : — Ըս խօսքերէն եւ օրինակներէն յայտնի կ'երեւնայ Ունակութեան հոտոտելեաց ազգմանցը վրայ ինչ ներգործութիւն ունենալը :

§ 49 . Ունակութիւն Ճաշակման :

Ըս օրէիքը Ճաշակման վրայ ալ կ'իշխէ : Ըս զգայութիւնը յաճախ բանեցրնելէն ինչ հետեւանք յառաջ գալը տեսնելու համար՝ մինակ ինքզինքնին զինիի տուողներուն մէկ զինիին հա- մը մէկալէն ինչ տարբերութիւն ունենալը ինտոր ճշգուծեամբ եւ դիւրութեամբ որոշելնին դիտենքնէ, հերիք է : Ըս բանիս մէջ ունակութեան Ճաշակման վրայ ըրած ազգեցութիւնը ա- նանկ նշանաւոր կերպով յայտնուած է, որ մարդուն հաւա- տալիքը կու գայ ան երկու մարդոց պատմութեանը, որ Սեր- վանդէս կը պատմէ : Ըսոնց խնդիրք կ'ըլլայ որ շատ հին ու լաւ է ըսուած տակառ մը զինիի համը նային ինտոր է : Մէկը կ'տոնէ քիչ մը բերանը, շատ լաւ զինի՝ կ'ըսէ, բայց միայն մէկ թեթեւ կաշիի համ մը ունի մէջը : Մէկալն ալ բերնին մէջ աղէկ մը պարտցընելէն ու քիչ մ'ալ վրան մտածելէն ե- տեւ՝ նոյն վճիռը կու տայ, բայց՝ կ'ըսէ, մէկ երկաթի համ մը կայ մէջը, որ ինքը շատ որոշ կը զգայ եղեր : Տակառը երբոր կը պարպեն, յատակէն կաշի կապով հին բանալի մը կ'ելլէ :

Սակայն հոս Ունակութեան Ճաշակման վրայ ըրած ներգոր- ծութեան մէկ ուրիշ արգեամբք յայտնուած հանգամանքը առ- ջեւնիս կ'ելլէ : Ըս եւ ստոր նման սովորութեանց մէջ մար- դուս ունեցած զգայութիւնները կրկնուելով կրկնուելով չէ թէ միայն մեծ նրբութիւն եւ անսխալ ընտրութիւն կը ստանան, այլ նաեւ շատ կը զօրանան . (Թերեւս բոլոր ասանկ սովորու- թեանց մէջ ան ընտրութեան ճշգուծեան հիմն ալ բուն իսկ զգայութեան աստականալն է : ) Ըս ըսածիս բացատրութիւն՝ մէկ ընդարձակ եւ ցաւալի օրինակ մը ունինք : Վինի եւ ուրիշ բարկ ոգելից ըմպելիքներ խմողներուն ամէնքն ալ կը խոստո- վանին որ խմելիքէ ունեցած զգայութիւններնէն առջի բերանը քիչ հաճութիւն իմացած են, կամ ոչինչ բան մըն էր զգա- ցածնին : Քանի հեղ որ խմելիքը բերաննին կ'առնեն, իմացած զգայութիւննին աւելի հաճելի կու գայ, եւ ան հաճութիւնը կրկին վայելելու փափաքը աստիճան մըն ալ կը զօրանայ : Վա-



րելի է չեն իմանար որ մարդկային բնութեան մէկ մեծ օրէնքն է՝ որ իր ուժովը աս գործողութիւնը իրենց վրայ աստիճան աստիճան յառաջ կը տանի, բայց բրած ներգործութիւնը չեն կրնար ուրանալ : Սովորութիւններնուն մէջ շատ յառաջ չ'գացած՝ կրնայ ըլլալ որ զգան թէ մէկ շղթայ մը կը ծանրընայ կոր վրանին, որ եւ իցէ պատճառով մը՝ բայց անանկ ծաղկահիւս շղթայ մը կրելու ինչու յանձնառու չըլլան : Բաղձալի բերկրութիւն մը կը վայելեն անկէց . եւ թէ որ հարկաւորի նէ, դիւրութեամբ կրնան կոտրել նետել վրանուն, անանկ թեթեւ կապանքն ալ խզելը բան մըն է կ'ըսեն ինքնիրեննուն, ու անհոգ կ'ըլլան : Եւ ահա սխալած կէտերնին ալ աս է : Օղակ օղակի՝ շղթայ շղթայի վրայ կը հիւսուի, մէյմ'ալ ան ինքզինքնին անանկ զօրութեան տէր կարծողները կը նային որ, սարսափելի վիճակ, տկարացեր, ուժէ ինկեր, բոլորովին փոխուեր, ամենամանրագ գերութեան մը մէջ են ինկեր :

Իրեք կերպ գործողութիւն կ'ըլլայ աս բանիս մէջ : Ղաշակման զղայութիւնը չափազանց հաճոյութիւն մը կը ստանայ, չըխմելով ան հաճութիւնը չ'վայելելէն յառաջ եկած անհանգստութիւնն ալ նոյն չարիովը կը աստկանայ, եւ հետեւապէս անհանգստութեան զգացման հետ անբակտելի կապով՝ կապուած բաղձանքն ալ նոյն համեմատութեամբ տիրապետական իշխանութիւն մը կը ստանայ : Արտիքին ունեցած աս անհանգստութեան զգացումէն ու բաղձանաց տուած նեղութենէն ազատելու համար՝ ողորմելի մարդը վերստին կ'երթայ, զողորմուն ձեռքով կ'առնէ գաւաթը, ու անգամ մըն ալ կը լնցունէ փորը ան քաղցրահամ թոյնը : Եղկելի՛ թշուառութիւն, աս ընելովը քիչ մ'ալ կը ստուարացընէ վրայի շղթան : Վանի հեղ որ աս բանը կ'ընէ այնչափ իր բեռը կը ծանրընայ, ինչուան որ ան առաջին անգամ թեթեւ եկած ու զուարթութեամբ կրած ծաղկահիւս շղթան կ'ըլլայ մէկ անտանելի երկաթ շղթայ մը, եւ ալ այնուհետեւ թող հեծէ ու տանջուի անոր տակը : Իր բնութեանը մէջ եղած ան մեծ ու ահարկու օրէնքը որ օրի թշուառութեան անգունդներուն խորը կիջեցընէ զինքը : Եւ մէն անգամ իր բաղձանքը կատարելուն՝ իր կապանքներուն վրայ կապ մըն ալ կը զարնուի, որով ազատիլը աւելի անյուսալի կ'ըլլայ, եւ քայլ մըն ալ կը մտնենայ այն սոսկալի աղէտից ծովին եզերքը, որուն մէջ այնքան բազմաթիւ մարդիկ անգնդասոյղ կորսուեցան : Բսել չենք ուզեր թէ անփոփոխելի ճակատագիր մըն է աս, եւ մարդ չ'կրնար ազատիլ աս մութութենէն, կ'ազատի, բայց մինակ մէկ ճամբայ մը կայ, իր անսովորութիւնը, որ զինքը ինչուան ան աստիճանը հասցուց, յա

Ունակութիւնը Զգայութեան եւ Իմացման :

Ժամը Կանոն Դէկէն Կորեւ յգէլու է ամէն Կէրպոլ : Սակայն քիչ մարդ կայ աս բանը ընել ուղող . շատերը մէկ քանի ակամայ եւ ակար ջանքեր կ'ընեն, կը նային որ չ'ըլլար կոր նէ, թող կու ասն ինքզինքնին ան ամէն չարեաց արմատ մոլութեան ձեռքը, առանց վերջերնին ուր երթալը մտածելու :

§ 50 . Ունակութիւն լսողութեան :

Տարակոյս չ'կայ որ լսողութեան սրութեանը եւ ընտրողութեանը մէջ բնական զանազանութիւններ կ'ըլլան : Սարդ կայ որ լսողութիւնը շատ սուր կ'ըլլայ . մարդ ալ կայ որ՝ ընդհակառակն՝ ծանր կ'ըլլայ : Բայց որոնց որ ականջը աղուոր ձայներու շատ զբաղած է նէ, մանաւանդ անոնց լսողութիւնը շատ ընդունակ կ'ըլլայ կրթութեան : Ըստ սպացոյց են երաժիշտները, որոնք քանի որ արհեստնին կը բանին, անուշ ձայներու եւ ներդաշնակութեանց վրայ ունեցած զգացողութիւննին ալ մէկտեղ օրէ օր կը զօրանայ :

Լսողական իմացմանց վրայ մարդուս զգացողութեան որչափ զօրանալը անսովոր պատճառներէ աս զգացողութիւննին կրթելու ստիպուողներուն վրայ շատ յայտնի կ'երեւնայ զարմանալի կերպերով : Ուստի աս բանիս խիստ յարմար օրինակ են կոյրերը, որոնք ուրիշներէն շատ աւելի լսողութեան պէտք ունին, եւ շատ կը գործածեն աս զգայութիւնը . որով լսողական իմացումներնուն ճշգրտութիւնն ու զօրութիւնը միշտ եւեւնալու վրայ կ'ըլլայ : Բնութեան տեսանելի գեղեցկութիւնները վայելելէն զուրկ ըլլալուն՝ լսածներնէն կ'ուզեն բերկրութիւն քաղել, եւ անյագ ցանկութեամբ մտիկ կ'ընեն քաղցրանուագ երգերու : Ըսկէ է որ երաժշտութիւնը չէ թէ միայն զօսանք, այլ նաեւ ապրուստ ճարելու գործ մը եղած է իրենց : Եւ աս պատճառաւ կոյրերու դաստիարակութեան մէկ երեւելի մասն ալ աս գեղարուեստը սեպուած է :

Շատ մասնաւոր պատմութիւններ կան, վաւերականութեան կողմանէ անտարակուսելի, որ աս ընդհանուր հաստատութեանը ապացոյց են, թէ ականջնիս կրթութեամբ ունակութիւն կըրնայ ստանալ, եւ ասանկով ձայնի զգայութիւնները նոր զօրութիւնով ու նոր ճաշակով կ'իմացուին : Վաղղիս եղող Բիւսէօցի անուանի կոյրի մը համար կը պատմուի թէ մէկ ամանէն մէկալը ջուր պարպուելու ատենը՝ ձայնէն կը գիտնայ եղեր ամանին մէջ որչափ ջուր լեցուիլը : Բըշ, ինչպէս որ գրուած է Ըպէրքրովալի մատենագրին «Իմացական կարողութիւնք» ըսուած

Ունակութիւնք Չգայութեան եւ Իմացման :

գրքին մէջ, Իխլատէլֆիացի երկու եղբայր կը պատմէ՝ կոյր՝ տարօք պատանի, որոնք ճամբան գացած ատեննին՝ փողոցին մէջ տեղ տեղ տնկուած սիւնակներուն մօտենային կ'իմանան եղեր, անոնց բոլորտիքի գետնին վրայ կոխած ատեննին ելած մասնաւոր ձայնէն : Ասոնք խել մը աղաւնիներ ալ ունենալով փոքրիկ պարտէզի մը մէջ՝ իրենց զբօսանք ըրած, անոնց ամենուն անունն ալ զատ զատ կրնան տալ եղեր՝ գլխնուն վրայոք վը թռչած ատեննին թեւերնուն հանած ձայնէն : Սանտերսըն, որ աչքերը կուրցած ատենը շատ պզտիկ ըլլալով՝ չ'գիտեր եղեր աչքով բան տեսած ըլլալը, երբոր նոր տեղ մը կ'երթայ եղերնէ, թէ սենեակ ըլլայ՝ թէ կամարակապ կամ սայլսյատակ ճամբայ կամ բակ եւ կամ ուրիշ ասոնց պէս տեղեր, ոտքին ձայնէն եւ անկէ յառաջ եկած արձագանքէն ինտոր տեղ ըլլալը կ'իմանայ կը ստորագրէ եղեր, եւ ստորագրութիւնն ալ ըստ բաւականին կը մօտենայ եղեր տեղին ճիշդ ձեւին. ետքը իր կայնած տեղն ալ կ'որոշէ կը գիտնայ եղեր : Սատենագրին մէկը Մանչէսթըրի Իմաստասիրական Հիշատակարանաց առաջին հաստորին մէջ, որ աս հիմակուան պատմածնիս ալ անկէց էր, Մանչէսթըրի կուրի մը վրայ աս պատմութիւնը կ'ընէ : «Պատեհութիւն ունէի, կ'ըսէ, ստեպ տեսնելու աս մարդը, ու իր գաղափարները կարգաւորելուն ու գրսէն բան իմանալուն մասնաւոր եղանակները գիտելու : Արբոր ընկերութեան մը մէջ կը մտնէր, գիտեցի որ՝ նախ եւ առաջ քիչ մը ատեն լռիկ կը կենար ականջ կը դնէր, եւ ելած ձայներէն սենեակին մեծութեանը եւ հոն գտնուողներուն թուոյն վրայ տեղեկութիւն մը կը ստանար : Ըս բաներուս մէջ ըրած որոշմունքը անանկ ճիշդ եւ յիշողութիւնն ալ այնչափ սուր էր, որ հազիւ երբէք կ'ըլլար որ սխալէր : Աս աչքովս տեսայ որ երկու տարուան հետը տեսութիւն չըրած մէկը քովը գալուն ու առաջին սնգամ ձայնը հանելուն՝ անմիջապէս ճանչցաւ ով ըլլալը : Իրեն հետ խօսակցող մարդոց ինչ գիրքով կայնիլը կամ նստիլը ըստ բաւականին կ'որոշէր ձայներնուն ուղղութենէն : Իրենց բնութեանը եւ բարուցը վրայ ալ բաւական ուղիղ դատումն կրնար ընել խօսակցութիւններնուն եղանակէն եւ ձեւերէն» :

§ 51 . Ունակութիւն Ըօշափման :

Ըօշափման զգայութիւնն ալ մէկալներուն պէս շատ կը զօրանայ ունակութեամբ : Որչափ եւեւ որ պէտք ըլլայ մեզի աս զգայութիւնը, այնքան իրեն ազգմանցը տուած մտադրութիւն-

Անակութիւնք Ձգայութեան եւ Իժագմանո՛ւ :

Նիս ալ շատ կ'ըլլայ : Ուստի ասանկ պարագաներու մէջ յաճախ կրկնութեամբ չէ թէ միայն զգայութիւնն ինքը կը զօրանայ, այլ մանաւանդ մեր անոր վրայ ունեցած նկատումն ու յիշողութիւնն ալ մէկտեղ շատ կը սրուի : Բայց ասիկայ ալ, ինչպէս հետ զհետէ նշանակած ամէն սկզբունքնիս, աղէկ կ'ըլլայ որ իրօք եղած բաներ յառաջ բերելով եւ անոնցմէ զգուշութեամբ պէտք եղած մակաճութիւնները ընելով հաստատենք :

Մօջի հատուածին մէջ յիշուած Բիւսէօցի կոյրին համար Տիտերօ կ'ըսէ, թէ վառարանէն որչափ հեռու ըլլալը տաքութենէն կը գիտնար, եւ հաստատուն մարմնոյ մը մօտեցած ատենը, օդը ետ երթալու տեղ չունենալուն համար իր երեսին վրայ ըրած ներգործութենէն կամ բաղխումէն կ'իմանար որ դէմը բան մը ելաւ : Մ.ս նոյն բանը շատ ուրիշ աս վիճակի մէջ եղող մարդոց վրայ կը պատմուի. եւ ասիկայ շատ աղէկ հաստատուած բան մըն է որ կոյրերը որ աչքով չեն կրնար տեսնել գէմերնին ելած մեծ եւ հաստատուն մարմինները, մթնոլորտին դիմահարութեան եւեթնալէն ընդհանրապէս կ'իմանան անանկ բաներու մօտենալնին : Մ.չքը տեսնող՝ բայց արհեստական լոյսմը կամ ուրիշ առաջնորդ մը չունեցող մարդը այնչափ համարձակ չ'կրնար պտրտիլ տանը չորս դին կէս գիշերուան մութուն, որքան կոյրը՝ իր մնացուած զգայարանաց եւ մանաւանդ շոշափականին նրբութեամբը :

Նշակաւոր Սանտէրսըն, որ շատ պզտիկ կուրցաւ աչքերը եւ մինչեւ ի մահ անանկ մնաց, (թէպէտ եւ ան վիճակին մէջ Քէյմպրիճի Եւզղիացոց Համալսարանին չափաբեքութեան վարժապետ էր,) անանկ նուրբ շոշափման տէր եղաւ՝ որ աղէկ ընարութիւն ունեցող փորձ մարդոց որոշել չ'կրցած կեղծ ստակը ինք մէկ բռնելով մը կ'որոշէր<sup>1</sup> :

Յօհաննէս Սեղբաֆ անուն մէկուն վրայ, որ կոյր Յօհաննէս ալ կ'ըսուէր, զարմանալի պատմութիւն մը կայ Իմաստասիրական Յիշատակարանաց հիմակուան յիշած հատուածնուս մէջ, որուն վրայ երկար կը խօսի հեղինակը : «Պզտիկուց կուրցաւ աս մարդը, կ'ըսէ, սակայն եւ այնպէս սայլորդութեան պարապեցաւ, եւ երբեմն երբեմն ալ գիշեր ատեն խառնակ կամ հեաքը ձիւնով ծածկուած անորոշ ճամբաներու առաջնորդութիւն կ'ընէր : Ս'երջապէս ասիկայ լեռնային դժուարին տեղեր շինուելու պողոտաներու ձեւ ձգող եւ տեսուչ եղաւ, անանկ

1 Յիշատակարանք Սանչէպարի Իմաստասիրական Բնկերութեան, հատոր 1, էջ 164 :

Սենսիվութիւնը Ձգայութեան եւ Իմացման :

մէկ գործ մը, որ կուրի մը ձեռքէ ամենեւին չ'գար կը կարծէ մարդ ընտանապէս : Իայց զինքը գործի դնողներուն ուզածին պէս սկսեց գործը յառաջ տանիլ յաջողութեամբ, եւ Տէրպիշայրի Փիք ըստած քարձրակատար լեռան վրայ շատ ճամբաներ փոխփրկեց : Այր Յօհաննէսին աս պատմութիւնը ինծի ընողը կ'ըսէ՝ թէ 'շատ անգամ աս մարդը կը տեսնէի որ ձեռքը երկան գաւազանով մը ճամբաներէն կ'անցնէր, գահափէտ տեղերէ վար կ'իջնար, ձորերը կ'որոնէր եւ անոնց տարածութիւնը՝ ձեւը ու գիրքը կը քննէր, որ աղէկ մը գիտնայ ինչ ձեւ ձգելիքը' :

Սոս ատեններս աշխարհիս այլ եւ այլ կողմերը բայուած կուրերու դպրոցներու մէջ մատնելով կը կարգան աշակերտները : Փայտէ՝ մետաղէ՝ կամ ուրիշ կարծր նիւթերէ գրեր կան, որ առաջ անոնք իրարմէ որոշելը շուտ մը կը սորվին շոշափելով : Կարդալու թերթերնին ալ իրենց շատ յարմար եղանակաւ մը տպուած են : Կրերը հասարակօրէն տպագրութեան գործածուած գրերէն շատ խոշոր են, թուղթն ալ շատ հաստ՝ թաց թաց կը բերեն շարուած գրերուն վրայ կը գնեն ու կը կոխեն, կ'ելլէ թերթը դիւրաւ շոշափելի ցցուած գրերով տըպեալ : Աշակերտները գրերը մէկմէկէ որոշելը եւ քովէ քով բերելով վանկ՝ բառ շինելը սորված ըլլալով, ատեն մըն ալ աս թերթերուն վրայ վարժութիւն ընելէն ետեւ, ալ մատերնին տողերուն վրայ պտրտընելով՝ չափաւոր արագութեամբ կրնան կարգալ ու գրուածը հասկընալ :

§ 52 . Ուրիշ զարմանալի օրինակներ շոշափման ունակութեան :

Որչափ աւելի հարկ որ ըլլայ շոշափմամբ գործ տեսնել նէ, ան նոյն համեմատութեամբ շոշափականն ալ զգայուն կ'ըլլայ . եւ որչափ ստէպ որ աս զգայարանքը գործածենք նէ, ունակութիւնն ալ այնչափ կը զօրանայ : Իայց աս յաճախ գործածութեան հարկաւորութիւնը յատկապէս երկու զգայարանքէ զուրկ եղողներու վրայ խիստ մեծ կ'ըլլայ : Յակոբոս Սիչէլ, որ ասկէ առաջ յիշեցինք, իրն եղած բաները շոշափմամբ կ'որոշէր. թէպէտեւ իրն ու ուրիշներ ճիշդ մի եւ նոյն ձեւ՝ մի եւ նոյն նիւթէ շինուած ըլլար, կարծես թէ առանց ամենեւին տարակուսանաց՝ իրենը միւսինէն կը զատէր : Աս տղան, ինչպէս որ ըսած ենք արդէն, ոչ կը տեսնէր՝ ոչ կը լսէր, եւ ի հարկէ խօսիլ ալ չէր կրնար : Անոր համար պէտք էր որ զլսաւորապէս շոշափմամբ գործ տեսնէ : Աս զգայարանքն էր իր զլսա-

Ռանկութիւնը Զգայութեան եւ Իմացման :

ւոր գործիքը, որով իրեն տես եկողներուն վրայ ծանօթութիւն մը կը ստանար : Աւ զարմանալին աս է, որ պզտիկոց իրենց տանը բողբոջիքը երկու հարիւր կանգունի չափ տեղ աւանակ որոնէր, ինչ կայ չկայ տեղնիտեղօքը հասկըցէր էր որ, սովորութիւն էր ըրեր՝ առանց առաջնորդի՝ անվախ՝ համարձակ՝ որ դի որ ուղէր նէ՝ կը քայլէր :

Հարթֆրոտի խուլերու եւ համրներու դպրատան մէջ եղող խուլ եւ կոյր աղջկան մը համար կը պատմուի, թէ անհնարին բան էր որ իր պահարանին մէջ բանի մը տեղ փոխէին, ու ինք չիմանար. եւ շարժէ շարժ իր լաթերնին լուացուած կու գայ եղեր, ասիկայ իր լաթերը՝ որչափ որ մէկալնոնց մէջ ցրուած ալ ըլլան՝ առանց տարակուսելու մէկիկ մէկիկ կը ժողվէ կը ծալէ մէկ դի կը դնէ եղեր : Աս բանը՝ դէժ ըստ մեծի մասին՝ շօշափական ունակութեան տալու ենք, որով աս զգայութիւնը այսչափ նուրբ կրնայ կոր ըլլալ : — Տեսնուի աս բաներուս վրայ ըրած խորհրդածութեանցը մէջ այնչափ հեռուն գացած է որ ինչուան աս կարծիքն ալ ըրած է, թէ տեսութեանէ եւ լսողութեանէ զուրկ եղողները շօշափականին զգայութիւնը ան աստիճանի կը հասցընեն՝ որ հոգիներնուն տունը մասններնուն ծայրը կը փոխադրուի :

## § 53 · Ռանկութիւն Տեսութեան :

Տեսութեան ալ կ'իշխէ Ռանկութեան օրէնքը : Արժութեամբ աս զգայութիւնը կարծես թէ մէկ նոր՝ տարբեր զօրութիւն մը կը ստանայ : Ովիխանոսին երեսը երկար ատեն պտըտող նաւամարաց ինտոր սուր աչք ունենալը եւ որչափ հեռուն տեսնելը կրկին եւ կրկին յիշած ենք : « Իւսիսային Ամերիկայի Քննիչ<sup>1</sup> » ըստւած պարբերականին մէջ (Յուլիս, 1833) մատենագրին մէկը « Ասրդ մը կը ծանչնամ, կ'ըսէ, շայտար՝ Յունաց կղզոյն բնիկներէն, որ սովորութիւն ըրած էր ամէն օր կղզին գազաթը ելլել նաւերուն գալուստը մէյմը դիտելու՝ երեսուն տարի անընդհատ. եւ թէպէտ իրեք հարիւրէն աւելի նաւ ունէր կղզին, սակայն եւ այնպէս անվրէպ ճշդութեամբ եկող նաւին օրն ըլլալը անունովը կը զրուցէր՝ դեռ այնչափ հեռուէն՝ որ ուրիշներուն աչքին յստակ հորիզոնին վրայ շփոթ՝ ճերմակ բծի մը պէս կ'երեւնար » : Ասրդուս այլ եւ այլ կա-

1 North American Review.

Ունակութիւնք Զգայութեան եւ Իմացման :

ցութիւններէն եւ տեսութեան կարողութիւնք սակայ սակայ գործածելու հարկէն պատճառած ասանկ օրինակներուն համարանքը չ'կայ : Վաջալարժ ճակատայարդարին նայուածքով մը ինչ ընելիքը որոշելը շատ հեղ լոկ ունակութենէ է : Ճակատելու յարմար տեղերու վրայ այնչափ նայած է որ, շուտ մը կը զբուցէ թէ զօրքը ինչ դիրքով շարուելու է որ աղէկ ինք զինքը պաշտպանէ, վրայ յարձակիլ ետ քաշուիլը դիւրին ըլլայ, եւ այլն :

Եւանց շօշափման մարդ չըլլար, բայց շատ մարդ կայ խուլ ծնած, եւ ահա ստոնց վրայ մեք ալ փնտոելու ենք տեսութեան ունակութիւնները : Եւանկ վիճակներու մէջ եղողները, որչափ որ շօշափման զգայութենէն օգնութիւն ունենան ալ նէ, բնականապէս եւ հարկաւ տեսութեան զգայութիւնն ալ բանի բերել կը նային՝ իրենց պակասութիւնը լեցընելու համար : Եսկէ կը ծնանի ունակութիւն. ունակութիւն ըսածդ ալ որ բանի վրայ որ ըլլայ, անշուշտ անոր չափազանց կենդանութիւն ու զօրութիւն մը կու տայ : Խուլ եւ համր մարդոց՝ իրենց սա դժբաղդութիւններուն պատճառաւ՝ տեսողական դիտողութեանց մէջ ինչ կարողութեան հասնելին շատերուն գիտցած բանն է : Խօսքով մարդոց հետ հաղորդակցութիւն ընել չըկրնալնուն, ուրիշին միտքը՝ կամքը շարժուածքներէն եւ դէմքէն կը հասկընան : Օարմանալի յաջողակութեամբ եւ՝ ինչպէս որ կ'երեւնայ՝ առանց ամենեւին ջանք մը ընելու՝ ուրիշներուն չ'տեսած հաղարաւոր բաները իրենք կը տեսնեն : Ընտարակոյս գլխաւորապէս սակէ քաջալիրութիւն առած պիտի ըլլան մարդիկ՝ սա դժբաղդութիւններուն հանդիպած ան բաղմամբ խեղճերուն դաստիարակութեանը ձեռնամուխ ըլլալու : Ուրիշին ըսածը շրթունքներուն շարժումնքէն կը հասկընան քիչ շատ, եւ երբեմն շատ մեծ ճշդութեամբ : Ես վերջի ըսածիս ընդհանուր բան մը ըլլալը հաստատութեան կարօտ բան չէ. եւ հընարաւոր ըլլալուն շատ վաւերական եղելութիւններէ վկայութիւն ունինք : Պըրնէզ եպիսկոպոսը ասանկ աղջիկ մը կը պատմէ, Ճէնովացի, իր մէկ նամակին մէջ : «Այրիւ տարեկան էր, կ'ըսէ, իմացուեցաւ որ ականջները խցեր է. ան ժամանակէն ի վեր՝ ինչ որ խօսուէր՝ չէր իմանար, թէպէտեւ ամուր ձայն մը որ հանէին նէ՝ կը ըսէր. բայց քովիններուն շրթանցը շարժումնքը դիտելով՝ այնչափ բառ սորվեցաւ, որ անոնցմով ծածկարանութեան պէս բան մը շինեց, անով իր լեզուն խօսողներուն հետ որ կ'ըլլար որ առտուրնէ ինչուան իրիկուն կը խօսակցէր : Բայց ինչուան որ խօսողին շրթունքներուն շարժումնքը չ'տեսներ նէ, ամենեւին բան մը չէր իմանար : Եւ ա-

Ունակութիւնը Ձգայութեան եւ Իմացման :

մենէն զարմանալին աս է, որ պիտի պատմեմ : Քոյր մը ունէր ասիկայ, որ աս իր յօրինած լեզուն ամենէն շատը անոր հետ կը բանեցընէր . գիշերը ձեռքը ասոր բերնին վրայ դնելով՝ կը հասկընար ըսած խօսքերը, եւ ասանկով մութուն ալ խօսակցութիւն կ'ընէր անոր հետ :

Ըհա ասանկ դիտողութիւններ կ'եղեն գէմերնիս, երբոր Ունակութեան օրէնքին զգայութեանց վրայ յառաջ բերած արգիւնքները կը սկսինք քննել . եւ ամենայն վստահութեամբ համարձակ կրնանք ըսել որ ասոնք շատ երեւելի դիտելու արժան բաներ են : Ըստնք երկու բան մտքերնուս առջեւը կը դնեն մասնաւորաբար . մէյմը՝ մարդուս մտքին սքանչելի զօրութիւնները եւ անզսպելի ուժգին ներգործութիւնները . մէյմ'ալ՝ Ըստուծոյ անհուն բարութիւնը, որ անանկ թշուառութեան ատեններ նոր նոր մխիթարութեան աղբիւրներ կը բանայ, եւ ունեցածներնուս զօրութիւնն ու արժէքը եւելցընելով՝ չունեցածներնուս տեղը կը լեցընէ :

§ 54 . Ձգայութիւնը ոչ միայն բացարձակ, այլ վերաբերական աճումն ալ կրնան ունենալ զօրութիւնով :

Մէկ ծանօթութիւն մըն ալ կայ, որ ան ալ հարկաւոր է տալ աս հաստատած մեծ սկզբունքիս վրայ . իբրեւ անոր մէկ օգնութիւն մը . վասն զի ունակութեան խիստ զարմանալի օրինակները լոկ կրկնութեան բան չեն կրնար ըլլալ կարծողին՝ ասով դիւրին կ'ըլլայ տարակոյսը փարատել : Սարգսուս պատգամ լինանքն ու իմացումն էրը ոչ միայն ուղղակի է Ըստուծոյ, այլ նաեւ վերաբերական է արդեամբ տնուսն իսննանս պարտաւորութիւնով :

Ըս ըսածնիս մեկնենք : Ըսկէ վերջը տեղ մը մէկ երեւելի սկզբունք մը պիտի տեսնենք, որ կը սորվեցընէ թէ մէկ բանի մը որչափ քիչ մտադրութիւն որ ընենք նէ, ան բանին վրայ ունեցած յիշողութիւննիս ալ նոյն համեմատութեամբ այնչափ տկար կ'ըլլայ : Վանք որ հազարաւոր զգայութիւններ ու իմացումներ կ'ունենանք, որոնց մէկն ալ չենք յիշեր՝ մտադրութիւն չընելուս համար : Ըսել է որ աս զգայութիւններն ու իմացումները, մեր հմտութեանը եւ ունակութիւններուն վերաբերելով, ամենեւին չեղածի պէս են մեզի : Ըսայց երբոր անսովոր վիճակի մը մէջ կ'իյնանք, կամ մասնաւորապէս երբոր զգայարանաց մէկը կը պակսի, հարկին ստիպումը ան չորած մը մտադրութիւննիս ընել կու տայ մեզի : Ըսյնստամ առջի ատենները զանցառութեան ձգուած բազմութիւն ցնդական՝ աչքի չե-



Ունակութիւնը Չգայութեան եւ Իմացման :

րեցող զգումանց կը սկսինք միտ գնել, զանոնք յիշողութեան մէջ գանձել, եւ վրանին որոճալ ու մեկնութիւններ ալ ընել : Իսանկոյ ունակութեան մէջ եղած Չգայարանքը շատ մեծ վերաբերական զօրութիւն ու յարգ կը ստանայ : Եւ ունակութեան օրինակներէն ոմանց հաւանելի մեկնութիւն մը տալու համար՝ թերեւս հարկաւոր է լոկ կրկնութենէ եւ գործածութենէ յառաջ եկած ուղղակի եւ բացարձակ զօրութեան եւ կենդանութեան վրայ աս վերաբերական աճումն ալ եւելցնել :

§ 55. Իրանաւոր գործքերու եւ արհեստներու մէջ ձեւացած ունակութիւններ :

Ինչուան հիմայ գործերնիս գլխաւորապէս Չգայութեանց վերաբերեալ ունակութեանց վրայ քննութիւն ընելն եղաւ. կ'արժէ որ հոս մարդոց մասնաւոր գործքերէն եւ զըզմունքներէն պատճառած ունակութեանց վրայ ալ ընդհանուր դիտողութիւն մը ընենք : Իմացմանց վերաբերեալ ունակութիւններ շատ անգամ անանկ պարագաներու մէջ ալ կը տեսնուին, երբոր մարդուս բոլոր Չգայարանքները կատարեալ են՝ ամէն մէկը իր սովորական յաջողակութիւնովն ու զօրութիւններովը : — Իբր գործին բերմունքովը ունեցած ունակութեամբը՝ չափաւոր փորձառութեան եւ ընտրողութեան տէր եղող երկրագործ մը՝ հարեւանցի մը նայինէ հերիք է որ այնինչ տեղին ինչ որակութիւններ ունենալը եւ վար ու ցանի գալը չ'գալը զրուցէ քեզի : Ա՛րապետ տպագրիչը ինչ եւ իցէ տպագրութեան վրայ շէնքին զիէն ինչ կատարելութիւն կամ ինչ պակասութիւն որ կայնէ՝ իսկոյն կը տեսնէ : — Բոլոր գեղարուեստի տէր եղողներու վրայ ալ կը տեսնուի ունակութեան աս արդիւնքը : Փորձ պատկերհանր ձեռքն առած պատկերին գունոյ մասնաւոր յատկութիւնները, լուսոյ եւ ստուերի կապակցութիւններն ու դիմադրութիւնները, եւ ձեւոյ՝ համեմատութեան՝ ու զիւրքի կողմանէ ունեցած յատկութիւնները մէկէն կ'որոշէ, որ անոր պէս փորձ չեղողը չըկրնար տեսնել :

Ի՞նչ աղէկ կը խօսի աս բանիս վրայ : «Չէ թէ միայն մարդիկ, հապա տղաքները՝ անխելքները ու անբաններն ալ, կ'ըսէ, ի բնէ չունեցած իմացումնին կ'ունենան ունակութիւնով : Մարդոց բանած զրեթէ ամէն գործը իրեն յատուկ եղող աս տեսակ իմացումներ կու տայ գործողին : Ըովիւր իր հօտին ամէն մէկ ոչխարը կը ճանչնայ, ինչպէս որ մենք մեր ծանօթները տեսածնուս պէս կը ճանչնանք, եւ ուրիշ հօտի մը խառնուելու

Ունակութիւնը Չգայութեան եւ Իմացման :

որ ըլլան նէ, մէկիկ մէկիկ իրենները կը զատէ առանց սխալելու : Սնագործը իր ոչխարներուն ու արջառներուն վրան նա յեւրով մը՝ դեռ չ'մորթուած՝ ինչ որակութիւն եւ որչափ ծանրութիւն ունենալնին կը գիտնայ : Արկրագործը խոտի գաղիչը կամ ցորենի գէղը աչքով կը կշռէ, ու որչափ բան ըլլալը գրեթէ ճիշդ կը զրուցէ : 'Վաւաստին' նաւը դեռ իրմէ շատ հեռու ինչ տեսակ շէնք ըլլալը, մէջը ինչ բեռ եւ որչափ հեռու ըլլալը կ'որոշէ : Չեռագրի վարժ մարդը իր բարեկամը գրէն կը ճանչնայ, երեսը տեսածի պէս : Ու փորձ պատկերհանի մը ձեռքը նկար մը տաս նէ, որ երեւելի վարպետին գործն ըլլալը իսկոյն կը գիտնայ : Մէկ խօսքով՝ ամէն մարդ մէյակ ստացական իմացմունք կ'ունենայ իրեն զտողմունք ըրած գործին ու անոր առած սիրոյն ու ուշադրութեանը համեմատ : (Ըրտ, ԿՆ՝, Մարդ՝, Իմաց, գլ. 9, § 20 :

§ 56 . Ունակութիւն՝ տեսութեան առարկաներու շրջագծին ու ձեւոյն իմացմանը վրայ :

Ունակութեան օրէնքին Չգայութեանց եւ Իմացմանց վրայ յառաջ բերած արդիւնքներուն վրայ խօսքերնիս չ'լմնցուցած, մէկ բան մըն ալ կայ, անոր վրայ ալ համառօտ մէկ երկու խօսք ընենք : Ըս բնիքնիս մարմիններու շրջագիծն ու ձեւերը ինչ եղանակաւ իմացուելուն վրայ է : Սրիւարք մտադրութեան վրայ ճառած առնը ըրած գիտողութիւններուն հետ տեսութեան վերաբերեալ մէկ քանի ծանօթութիւններ կը խառնէ՝ աս բանիս վերաբերեալ : Կ'ենթադրէ, թէ աչքը անշարժ հաստատուն գիրքով մը կենայ, ու տեսանելի առարկային պատկերը ցանցատեսակին վրայ նկարուի : Ատքն ալ կը հարցնէ, թէ միտքը ան առարկային ամբողջ պատկերը՝ նկարուածին պէս՝ մէկէն ի մէկ կ'իմանայ . թէ ան իմացումը տեսնուած մարմնոյն շրջագծին այլ եւ այլ մասանցը իմացումներէն կը բաղադրուի : Ինք աս կարծիքէն է թէ մարմնոյ մը վրայ ունեցած իմացումնիս անոր շրջագծին այլ եւ այլ մասանցը վրայ ունեցած իմացումներնէս կը ծնանի, եւ ասիկայ ասանկ կ'ընդունի աս կերպ գիտողութիւններով : Ըմէն մարմնի շրջագիծը կէտերէ կամ փոքր փոքր տեսանելի մասերէ կազմուած է, աս կէտերուն երկու հասը ճիշդ մի եւ նոյն տեղը չ'կրնար ըլլալ . ուստի ամէն կէտ՝ պարագ միջոցով բոլոր միւս կէտերէն զատուածի պէս՝ ինքնին որոշ մտադրութեան առարկայ կ'ըլլայ մտքին առջեւ : Ըսկէ կ'ելլէ աս հաւաքաբանութիւնը եւ երակացութիւնը, թէ

Ունակութիւնք Զգայութեան եւ Իմացման :

ամէն մարմին մասերէ կազմուած է, եւ թէ մարմնոյ մը ամբողջ կերպարանքը իմանալն ալ անոր այլ եւ այլ մասանցը իրարու հետ ունեցած վերաբերական դիրքը գիտնալ ըսել է, ապա ուրեմն սա իմացումը խել մը մտադրութեան գործողութիւններէ բաղադրեալ է :

Իսկ թէ որ Սդիւարդին սա դիտողութիւնը ընդունելու ըլլանք նէ, հարկ կ'ըլլայ մեզի ցուցընել թէ ինչպէս կ'ըլլայ որ մեզի անանկ կու գայ թէ ամէն բան մէկէն ի մէկ կը տեսնենք : Ըս գլխուս մէջ օրինակ բերուած եղելութիւնները մէկ լուծում մըն են սա խնդիրին . եւ ասոր պատասխանը սա է, թէ իմացման գործողութիւնները անանկ շուտ կը կատարուին որ՝ մեզի՝ յանկարծ ալ ըլլային նէ՝ նոյն ազգեցութիւնը պիտի ըլլար : Ունակութիւն կայ բանին մէջ . եւ սա ունակութիւնով մտքին հայեցուածքը անհնարին արագութիւն մը կը ստանայ . ասանկով ժամանակը արդեամբք կ'ոչնչանայ . եւ մտադրութեան անցած ան մանրամասն ատենները իրար կը խառնուին յանկարծական միջոց մը կ'ըլլան մեր ընթանմանը :

§ 57 • Վերի վարդապետութեանը հաստատութիւն սուտը մէկ քանի եղելութիւններ :

Սդիւարդին մարմիններու շրջադիծը ինչ եղանակաւ իմացուելուն վրայ տուած սա մեկնութեանը հաւանական է որ տարակոյս ցուցընողներ ըլլան . բայց սա ալ պէտք է դիտել, որ շատ բաներ կան ասիկայ հաստատող : — Վոյնզգոյն փառաւոր ներկուած բանի մը վրայ նոյիսնէ, յայտնապէս կը զգաս որ առջի բերանը մէյնը միտքդ կը շփոթի իր մէջը ծագած ան կերպ կերպ իմացումներէն . որոշ՝ յստակ չես տեսներ բանը, որ եթէ իմացումդ մինակ մէկ եւ ան ալ անմիջական ըլլար նէ, ասանկ պիտի չըլլար : Մինչեւ անգամ պատկերներու վրայ ալ, եթէ փառաւոր ու վարպետի շէնք ըլլայ նէ, ունեցած առաջին իմացումդ ասանկ շփոթ կ'ըլլայ :

Իսկ մէկ ուրիշ իրական ճշմարտութիւն մըն ալ կայ, որով շատ յայտնի կը հաստատուի սա ըսածնիս : Առանկեան կամ քառակուսոյ մը վրայ առաջին անգամ նայելուս ինչ որոշ գաղափար որ կ'ունենանք նէ, հարիւր կողմունք ունեցող ձեւոյ մը վրայ ան աստիճան որոշ գաղափար չենք կրնար ունենալ : Իսկ թէ որ տեսանելի ձեւոյ մը պատկերը ցանցատեսակին վրայ նկարուելուն պէս՝ անմիջապէս անոր իմացումը կ'ունենանք, եւ ան իմացումնիս անոր շրջագծին մասնաւոր կէտերուն իմա-

Ունակութիւնք Զգայութեան եւ Իմացման :

ցումներէն չ'բաղադրուիր նէ, պէտք էր որ ան հարիւր կողմունք ունեցող ձեւոյն վրայ ալ անմիջապէս անանկ որոշ գաղափար ունենայինք : Չեւր պարզ որ ըլլայ նէ, մտքին գործողութիւնն ալ խիստ արագ ըլլալուն, յանկարծական կը թուի մեզի : Բայց երբոր շատ ըլլան կողմունքը, անատեն զատ զատ ամէն մէկ կողմին վրայ եղած մտադրութեան ներգործութեանցը անցած ժամանակը զգալի կ'ըլլայ : Անատեն մենք ալ յայտնապէս կը զգանք որ միտքը իր առջեւն եղած առարկային մէկ մասին վըրայ գործը լրմեցունելէն ետեւ մէկալին կ'անցնի կոր, եւ ասանկով ինչուան որ բանին ամբողջութիւնը ըմբռնենք նէ քիչ մը ատեն կը քշէ :

§ 58 • Սղիւարդին վարդապետութեանը վրայ մէկ երկու ուրիշ բացատրութիւններ :

Աս դիտողութիւններն ու բացատրութիւնները եւս առաւել կը հաստատուին սա մէկ քանի հետաքրքրական եւ գուցէ աւելի վճռական եղելութիւններով : 1807ին Լյվերբարտ Զօմ, որ շատ փիլիսոփայական գրութիւններ ունի հրատարակած, Արքունի Բնկերութեան առջեւը մէկ պատմութիւն մը կարդաց երկու կշր տղոց վրայ, որոնց աչքին լուսունքը ինք իր ձեռքքը կեղեւեր էր : Ասոնց մէկուն անունն էր Յօհաննէս Շալդէր : Աս տղուն վրայ շատ փորձեր եղած էր, ուրիշ մէկ քանի բաներէ ի զատ՝ աս ալ ստուգելու համար, թէ արդեօք տեսութեան զգայարանքը ի բնէ՝ մինակ ինքնիրէն մարմնոց ձեւերուն վրայ ճիշդ գաղափար կու տայ մարդուս : Աս փորձերը բրած ատեննին տեսնուած եղելութեանց մէկ քանին հիմակուան քննութիւններնուս առարկայ եղած նիւթին վրայ շատ լոյս կու տան : Աչքը բացուած օրը կրկին եւ կրկին քառակուսի եւ եռանկիւն մարմիններ տղուն առջեւն որ դրեր են նէ, առանց թող տալու որ շոշափէ, երկուքին ալ կ'որ է ըսեր : Անգամ մըն ալ երբոր քառակուսի մարմին մը կը ցուցնեն, շոշափել կ'ուզէ : «Թող որ չ'տուին նէ, կ'ըսէ Զօմ, աչքը վըրան անկած ժամանակ մը դիտելէն ետեւ՝ ելաւ անկիւն մը գըտայ ըսաւ, եւ անկէ ետեւ սկսաւ դիւրաւ մէկիկ մէկիկ մէկալ իրեք անկիւններն ալ համրել . յետոյ եռանկիւն մը ցուցուցին, անոր ալ անկիւնները նոյն կերպով համրեց : Բայց համրած ատենը աչքը առարկային եզերքէն կը պտըտցնէր, ու այնպէս քանի որ անկիւն գար նէ՝ մէկ՝ երկուք՝ իրեք՝ անունը կու տար» : Աչքին լուսունքը կեղեւուելուն վրայ տասնուիրեք օր անցաւ :

Ունակութիւնք Զդպրութեան եւ խմացման :

դեռ տեսողական կարողութիւնը այնչափ տկար էր որ քառակուսին ո՛րն է՝ բոլորակը ո՛րն է չէր կրնար նայուածքով մը որոշել, ինչուան որ առաջ քառակուսի ձեւոյն անկիւնները՝ ի սկզբան ըրածին պէս՝ ազէկ մը չ'զիտեր ու անկիւնէ անկիւն անցնելով՝ մէկ մէկ չ'համրեր նէ : Վրո՞վն եղողներուն յայտնի կ'երեւնար, ո՞ր տեսութիւնը մէկ եւ անբաժանելի շարժումով մը առջեւն եղած ճարտիւնին շրջագիծը ամփոփել չ'կրնալուն, կամաց կամաց առաջ մէկ կէտին ու անկիւնին վրայ դիտողութեան գործը կը լըմնցընէր, եւ յետոյ մէկալ կէտին եւ անկիւնին կ'անցնէր, ինչուան որ բոլոր շրջագիծը լըմնար : Սակայն որ աւուր վրայ աս գործողութիւնը արագութիւն ստացաւ, եւ վերջապէս ինչուան ան աստիճանը հասաւ, որ ան ի սկզբան յայտնապէս իրար յաջորդող եւ որոշ գործողութիւններէ բաղադրեալ իմացումը առ երեւոյթս (եւ կրնանք ըսել՝ տիրապէս առ երեւոյթս, եւ ոչ բնաւ իրօք) մէկ եւ ամփոփ գործողութիւն մը եղաւ :

Սուր պէս եղաւ նաեւ Վասպար Հողրին : Իր վարուցը պատմիչը տեղ մը ծանուցած է, թէ երբոր մէկը տես կու գար, (բանտէն ազատուելուն վրայ շատ չանցած ըլլալու է աս,<sup>1</sup>) ասիկայ կ'ելէր մարդուն այնչափ մօտը կ'երթար որ կարծես թէ քիթը պիտի մտնէ. սուր եւ անքիթի՞մ նայուածքով մը մասնաւորաբար երեսին որոշ մասերը, ինչպէս՝ ճակատը՝ աչքը՝ քիթը՝ բերանը՝ կզակը լաւ մը դիտելէն ետեւ, ան զատ զատ կտոր կտոր իմացած մասերը կ'ամփոփէր, ամբողջ դէմքը կը գտնէր : Եւ ինչուան որ աս գործողութիւնը, այսինքն զատ զատ մասերը իրար բերել յօդաւորելը չ'լըմնցընէր նէ, չէր կրնար ան մասնաւոր մասանց վրայ ունեցած հատութենէն ամբողջ դէմքին գաղափարը իմանալ :

<sup>1</sup> Ս'էլը ասոր Ժամանակներէն իրեն անցընելու համար՝ գլխաւ որ շորիկի պղայ հըն էր, Բանտը յգլել պոստա :

## ԳԼՈՒԽ • Ը

## ՎԵՐԸՄԲՈՆՈՒՄՍ

59 . Վերըմբռնման նշանակութիւնն ու հանգամանքները :

ՉԵՐԵՆԵԿ է հիմայ, քանի որ ընդհանրապէս Արարչոյս ծագած իմացական հանգամանքները քննութիւններնուս նիւթ բրած ենք, որ ուրիշ տեսութեամբ մըն ալ մտաւոր հանգամանաց հայեցողութեանը պարապինք, դարձընելով մեր զիտողութիւնը այն կարեւոր նիւթին, որ է մտքերնուս մէջ ծագած Վերըմբռնմանը : Աս բանիս վրայ ըստ ամենայնի կատարեալ սահման մը տալ չ'իտատանալով՝ այսչափ միայն կրնանք ըսել՝ ընդհանուր խօսքով, թէ վերըմբռնմանք ըսելով՝ պէտք է իմանալ մեր մտքին մէջ անգամ մը ծագելէն ետեւ կրկին մտքերնիս եկող զգայութիւններն ու հեռաւոր իմացման առարկաներու վրայ ձեւացուցած դաղափարներնիս : Արբոր վերըմբռնմանք կ'ունենանք նէ, մեր զգայութիւններն ու իմացումները վերստին մտքերնուս աչքին առջեւ կը դրուին, առանց ամենեւին մեր խորհելուն՝ թէ անոնք երբ կամ ուրտեղ իրակզբան ծագեցան : Ուրիշ խօսքով ըսենք, անցեալ ժամանակներու մէջ ունեցած զգայութիւններնիս ու իմացումներնիս կը կենդանանան կամ նորէն մտքերնիս կու գան, ուրիշ բան չէ : — Աստի վերըմբռնմանք բառով տեսակ մը մտաւոր հանգամանքներ հասկըցուիլը, եւ ան մտաւոր հանգամանաց ալ՝ բռնած ընդհանուր կարգաւորութիւններնուս նայելով՝ ինչպէս որ հիմայ ծանուցինք՝ արտաքուստ ծագեալներուն կարգէն ըլլալը նշանակելէն ետեւ, ասոնց վրայ աւելի աղէկ տեղեկութիւն մը ունենալու համար՝ աղեկ կ'ըլլայ որ մասնաւորաբար ցուցընենք հոս թէ ինչով կը տարբերին զգայութիւններէ՝ իմացումներէ՝ եւ յիշելութիւններէ, որ աս վերջի ըսածնուս հետ կարելի է ոմանք էապէս մէկ ըլլալ սեպեն :

ա. Վերըմբռնմանք զգայութիւններէ եւ իմացումներէ կը տարբերին աս բանով, որ թէ պատճառնին եւ թէ առարկանին մեկուսի կ'ըլլան : Արբոր վարդ մը՝ շուշան մը՝ կամ ինչ եւ իցէ հոտաւէտ մարմին մը ձեռուրնիս կու տան նէ, անկէց մեր մտքին մէջ յառաջ եկած ներգործութեանը զգայութիւն

Վերըմբռնումն :

կ'ըսենք : Իսկ երբոր ետքէն ան զգայութեան վրայ կը սկսինք խորհիլ, կամ երբոր մտքերնիս կը բերենք ան զգայութիւնը՝ թէ եւ շատ անկատար կերպով մը ըլլայ, առանց ի սկզբան զանկայ պատճառող առարկան ներկայ ըլլալու, անատեն կ'ըլլայ Ս Էրըմբռնումն : Լսանկ գիտցիր ո՛ր եւ իցէ իմացմանց համար ալ : Խօսակցութեան ճշգրտութիւնը պահելով՝ բան մը՝ ծառ մը՝ շէնք մը կամ թէ լեռ մը կ'իմանամ որ ըսենք նէ, ունեցած իմացումներնուս առարկան առջեւնիս է կը հասկըցուի : Իայց վերըմբռնելունը ասանկ չէ. ան իմացածներնիս՝ թէ ըստ ժամանակի եւ թէ ըստ տեղոյ որչափ հեռու որ ըլլան ալ նէ, կրնանք մտքերնուս աչքին առջեւը վերստին գոյութեան բերել՝ վերըմբռնել :

Բ. Յիշելութիւններէ կամ յիշողութեան գաղափարներէ ալ աս տարբերութիւնը ունին վերըմբռնումնք, որ իրենց պատճառ եղող առարկաներուն երբ ներկայ ըլլալուն վրայ խորհուրդ չենք ունենար, իսկ յիշողականին բոլոր ներգործութեանցը մէջ վերըմբռնման հետ անցեալի գաղափար մ'ալ միացած կ'ըլլայ միշտ : Ուստի վերըմբռնումնք ըսուած մտաւոր հանգամանքները այսչափ տարբերութիւններ որ ունին նէ աս բաներէն, ուրեմն արժան է որ զատ անունով ըսուին :

Ս Էրըմբռնմանց մտքերնիս գալն ու երթալը զուգորդութեան սկզբունքներով կ'ըլլայ, որուն վրայ ետքը պիտի խօսինք : — Երբոր ուրտեղ որ ըլլայ՝ Ս Էրըմբռնման կարողութիւն կամ զօրութիւն խօսքը գործածուի նէ, ուրիշ բան իմանալու չէ, այլ միայն մտքին ունեցած ընդունակութիւնը՝ վերոյիշեալ նշանները ունեցող տեսակ մը գաղափարներու կամ զգացումներու :

§ 60 . Ցեռութեան առարկաներու վերըմբռնումնք :

Ս Էրըմբռնելութեանց վրայ զարմանալի բան մը կայ որ մէկ քանի զգայարանաց առարկաները միւսներէն զիւրաւ կը վերըմբռնենք : Երբիպտոսի բրգունքը եւ Յունաստանի փառաւոր մեհեաններուն աւերակները, կամ բնութեան մեծամեծ գործքերը՝ ինչպէս Լլպեան բարձրաբերձ լեռները եւ Ախակարայի սահանքը անգամ մը տեսնողը ետքէն ամենեւին դժուարութիւն չ'ըսելու աս առարկաներուն վրայ կենդանի վերըմբռնում մը ունենալու : Ս'եր տեսողական իմացումները այնպէս զիւրութեամբ եւ որոշ մտքերնիս կու գան որ, իրրեւ մշտակայ պատկերք են մտքերնուս մէջ բսնեք նէ, չափազանց խօսք

Վերըմբռնումն :

մը բրած չենք ըլլար : Վարսդէն Վիպուհր, շատ մարդոց ծանօթ մէկ արեւելեան ճանապարհորդ մը, խոր ծերութեան մէջ՝ կուրնալէն ետեւ, իրեն տես եկող հիւրերը կ'առնէր կը նստէր գեղեցիկ գեղեցիկ պատմութիւններ կ'ընէր շատ տարիներ առաջ Պէրսէպոլիս տեսած բաներուն վրայ, ան պատմած արձանագրութիւնները ինչ պատերու կամ պարիսպներու վրայ ըլլալը, եւայլն, եւայլն, ան նոյն ժամը տեսածի պէս տեղնի տեղօքը այնպէս ճշգուծեամբ կը ստորագրէր, որ մտիկ ընողները ապշած կը մնային : Իր որդին, որ հօրը վարուցը պատմութիւնը գրած է, քանի մը խօսք ունի աս նիւթին վերաբերեալ : «Շատ կը զարմանայինք, կ'ըսէ, երբոր կոյր, անկողինին մէջ նստած, արեւելք տեսած բաներուս ամենքն ալ միշտ մըտքիս առջեւն է՝ կ'ըսէր, եւ երեկ տեսածի պէս անոնց վրայ կը խօսէր : Վամանապէս լուծեան ժամանակներ միտքը կու գար Մսիական բարձր եւ յստակ երկնից այն գիշերային ստտեղազարդ վսեմ երեւոյթը, կամ ցորեկուան բարձրաբերձ կապուտակ կամարները, որոնց վրայ այնչափ անգամ զմայլելով կը նայէր յառած, եւ ասիկայ իրեն մէծ զուարճութիւն մըն էր» :

Չայնի՝ շոշափման՝ ճաշակման եւ հոտառութեան վերըմբռնելու թիւնքը, եւ մանաւանդ վերջի իրեքինը, այնչափ կենդանի եւ որոշ չեն ըլլար : Ըմէն մարդ գիտէ որ առաջները ըզգացած մէկ ցաւ մը, կամ հոտ մը, կամ համ մը շատ որոշ միտքը չ'կրնար բերել : Տեսութեան իմացմանց մէկալներէն աւելի որոշ եւ դիւրաւ միտք բերուիլը ըստ մասին կրնանք մեկնել աս կերպով : Տեսութեան առարկաները, կամ մանաւանդ անոնց շրջագիծերը յօգուածոյ են, այսինքն՝ շատ մը կէտերէ կամ խիստ մանր մասերէ բաղադրեալ են : Աստի ասանկ առարկայի մը վրայ իբրեւ ամբողջ ձեւացուցած վերըմբռնումնիս ալ շատ օգնութիւն կ'ընդունի զուգորդութեան սկզբունքներէն : Ետը պատճառը յայտնի է : Արովհետեւ տեսանելի առարկաներու վրայ ունեցած իմացումներնիս բոլորն ալ բաղադրեալ են՝ շատ մը զատ զատ մասերու միացութեամբ, անոր համար ետքէն երբոր անոնց վրայ վերըմբռնումնք կը ձեւացընենքնէ, անոնք ալ նոյնպէս յօգուածոյ կ'ըլլան, առաջ մարմնոյ մը մէկ մասին վերըմբռնումը կ'ունենանք, ետքը անկէց՝ զուգորդութեան սկզբանց օգնութեամբը՝ մէկալ մասերն ալ կը վերըմբռնենք : Չզուգորդութիւնը մասը մասին կը կապէ ու իրենց բնական կարգովը մտքին առջեւը կը դնէ, եւ ասանկով կ'օգնէ անոր մէջ հաստատուն մնալուն :

Եւ նոյն օգնութիւնը չենք կրնար ունենալ զուգորդութեան օրէնքներէն միւս զգայարանաց վերաբերեալ առարկաներու վը-



## Վերամբանումն :

րայ վերամբանումն ձեւացուցած ատեննիս : Արբոր ձայնի՝ համի՝ շոշափման կամ հոտի մը վրայ կը խորհինք, մեր բմբանմանը առարկան կամ մէկ եւ զատ զգայութիւն մըն է եւ կամ կարգ մը զգայութիւններ : Արդ՝ ձայնի՝ համի՝ շոշափման եւ հոտառութեան ամէն մէկ զատ զգայութիւններուն մէջ, թէ ի սկզբան ծագեալն ըլլայ եւ թէ վերջին միտք բերուածը, ի հարկէ չ'կրնար ըլլալ ան հաստատուն եւ սերտ մասանց կապակցութիւնը, որ ամէն տեսողական իմացմանց մէջ ըլլալը կ'ընդունինք, որով եւ ետքէն տեսութեան առարկաներու վրայ եղած վերամբանմանց մէջ ալ ըլլալ հարկ կ'ըլլայ : Ասոր համար տեսանելեաց վրայ մէկալ զգայարանեաց առարկաներուն վրայ եղածէն աւելի որոշ եւ զիւրին վերամբանումն կ'ըլլայ : — Աս տեսութեան իմացումներու վերամբանման զիւրութիւնն ու յտակութիւնը աստիճան մ'ալ կ'եւեւնայ, երբոր վերամբանելու առարկանիս կարգ մը զգայութիւնք կամ իմացմունք ըլլան. քանզի անատենը զուգորդութեան սկզբանց վերամբանման ըրած օգնութիւնը ոչ միայն ըստ ժամանակի, այլ ըստ տեղոյ կ'ըլլայ. որ եթէ ուրիշ տեսակ զգայութիւն կամ իմացումն ըլլար նէ, մինակ առջի տեսակ կապակցութիւնը պիտի ըլլար :

§ 61 . Վերամբանման վրայ ունակութեան ունեցած ներգործութիւնը :

Վերամբանմանց գիտողութեան արժան մէկ հանգամանքն ալ աս է, որ վերամբանումն ձեւացնելու զօրութիւնը ըստ մասին Ռոնալդ-Էնէ կախեալ է : — Մէկ քանի օրինակ հերիք է աս բանը բացատրելու համար, որոնցմէ ակներեւ կը տեսնուի որ ունակութեան օրէնքը վերամբանման կարողութեանն ալ կ'իշխէ եղեր. ու նախ եւ առաջ բերելու օրինակներնիս ձայնի վերամբանումներն ըլլան պիտի : Չայնի վերամբանումները ընդհանրապէս շատ որոշ չեն ըլլար, ինչպէս որ առջի հատուածին մէջ ըսինք : Սակայն աս ալ իրաւ է որ մէկ մարդ մը սովորութիւնով կարող կրնայ կոր ըլլալ երաժշտական գրուած մը՝ առանց ձայն հանելու՝ լոկ կարգալով մը զուտրձանալ : Մտիկայ ինչէն է. ձայները խաղերու հետ շատ անգամ կապելով՝ վերջապէս ձայնի վերամբանումը անանկ կը զօրանայ կոր, որ մինակ խաղերուն վրայ նայելով մը մեծ հաճութիւն կրնայ կոր իմանալ : Այս նոյն պատճառաւ, այսինքն վերամբանման կրկնութեամբ կամ սովորութեամբ զօրանալէն է որ ռոտանաոր մը, առանց ամենեւին մէկ բառը արտասանելու, մտքով կարգանք նէ, չափերուն ներդաշնակութեանը համը կրնանք առնել : Աս երկու ռ

Վերբմբունման :

բինականերուն մէջ ալ լսել չ'կայ . ձայնի գործնական զգայութիւն չ'կայ, բայց եւ այնպէս արդեամբք մարդուս մտքին մէջ ձայն ալ կ'ըլլայ կոր, ներդաշնակութիւն ալ : Ըս սկզբան վրայ մեկնելու ենք աս դիպուածն ալ, որ է Ալիգոլին երաժշտին իր ամենապատուական երաժշտական գրուածոց մեկ քանին խունալէն ետեւ շինելը . ինք բան մը լսելու ամենեւին անկարող, անանկ փտիուկ՝ ընտիր՝ ներդաշնակաւոր եղանակներ կը յօրինէր, որ բանէ հակըցող ու խիստ վարժ ականջի անէր եղողը մինակ աղէկ համը կրնար առնել :

§ 62 . Տեսողական վերբմբունմանց վրայ ունակութեան ունեցած ներգործութիւնը :

Ունակութեամբ մեր վերբմբունողական կարողութեան զօրանար տեսութեան վերաբերեալ իրական ճշմարտութիւններէ ալ կ'ապացուցուի : Վճագրութեան վարժ եղող մարդը չեղողէն աւելի աղէկ կրնայ միտքը պահել շէնքի մը՝ տեղի մը կամ ուրիշ տեսանելի առարկայի մը դազափարը : Վիճակութեան եւ կամ ուրիշ աս կերպ բաներ քաշելու վարժ եղողը սեպէ թէ իր անունը գրեւէն եւել դժուարութիւն չ'քաշեր մարդու մը շրջագիծ ձեւը գծելու : — Ըս բանը ոմանց մարդոց գոյներու վրայ ունեցած վերբմբունմանցը մէջ եղած տարբերութիւններէն ալ յայտնի կ'երեւնայ : Ոմանք երկու գոյն առջեւնին եղած ատենը տարբերութիւննին աղէկ կ'որոշեն, բայց զատ զատ որ տեսնեն նէ՝ վտառչութեամբ երկուքին անունն ալ չեն կրնար տալ, եւ կ'ըլլայ ալ որ շփոթեն իրար խառնեն : Վ սկզբան ունեցած զգայութիւննին ու իմացումներնին ուրիշ մարդոց հաւասար՝ որոշ կ'ըլլայ . բայց ան գոյներուն վրայ վերբմբունմանք ձեւացընելու որ գաննէ, դժուարութիւն կ'կըլէ դէմերնին : Ըս անկատարութիւնը գէթ ըստ մասին սովորութեան պակսութենէ յառաջ կու գայ . որ բտել է ունակութիւն չընեղէն կ'ըլլայ : Ըս տկարութիւնն որ կ'ունենաննէ ոմանք, իրենց կենացը հանգամանքէն եւ բերմունքէն ուրիշ մարդոց պէս գոյներու որոշմունքներ ընելու եւ շիտակ անուններնին տալու ստիպում մը չըլլալէն է, ուրիշ պատճառ չ'կայ :

§ 63 . Վերբմբունմանց հարկաւորութիւնը նկարագրութեան մէջ :

Ստուգումն ու կենդանի նկարագրութիւն ընելու ձիրքը ան

## Վերըմբռնումն է

մարդուն վրայ աղէկ կ'երեւնայ, որուն վերըմբռնումները դիւրաւ կը թեւեղարուին եւ որոշ միտքը կու գան: Ըսանկին մինչեւ անգամ հասարակ խօսակցութիւնը տարբեր կ'ըլլայ անոնցմէ, որոնց վերըմբռնողութիւնը ծանր եւ աղօտ է: Ըս մարդը կը նայիս որ թէ խօսակցութեան մէջ եւ թէ գրաւոր բան մ'որ ստորագրելու ըլլայ նէ, կարծես թէ ան բանը եղածին պէս աչքիդ առջեւը կը բերէ. որոշ եւ կենդանի նկարագրութիւն կ'ըլլայ ըրածը: Իսկ միտք, թէպէտ եւ ըզուրի կողմանէ տկարութիւն չունենայ, վերըմբռնումները բնական տկարութենէն՝ խել մը մասնաւոր բաներու անորոշ վերըմբռնումներէն միտքը կը շփոթի, եւ հետեւապէս ըրած նկարագրութիւնովը խառն ու շփոթ գաղափար մը կարող կ'ըլլայ տալու ան մեղէ ծանօթ ընել ուզած բանին վրայ:

Ըսանկ կարծիք մը ունեցած են ոմանք, թէ մէկ մարդ մը վերըմբռնումներ աւելի գեղեցիկ նկարագիր մը կրնայ ընել շէնքի՝ տեսարանի կամ ուրիշ բանի մը վրայ, քան թէ տեսնելով: Ակարագրութեան մը կատարելութիւնը անոր պարագաները մանրամասն ստորագրելէն կախեալ չէ միշտ. ընդհանրապէս՝ նկարագրեալ մասանցը մէջ խոհեմ ընտրութիւն մ'որ ըլլայ նէ, անատեն նկարագիրն ալ շատ աղուոր կ'ըլլայ: Ըս ընտրութիւնն ալ ինտոր կ'ըլլայ. ըստ լուսագոյն կանոնի՝ մտքերնուս մէջ ամենէն խորին տպաւորութիւն ընող բաները զատելով, կամ որ նոյն է՝ ամենէն դիւրին եւ որոշ վերըմբռնեալները: — Այրբոր ստորագրելու առարկան առջեւնիս ըլլայ, խիստ գոհուար է անոր այլ եւ այլ պարագաներուն մեր մտացը ըրած ազդեցութիւնները իրարու հետ բաղդատել, տարբերութիւնները գտնելը: Իսկ երբոր ետքէն ան բանին վրայ վերըմբռնումն ընել կը սկսինք, ամենէն աւելի աչքի զարնող պարագաները առջեւնիս կու գան: Իրաւ՝ ամէն մարդ նոյն ակորժակը չունի, եւ մէկ բանի մը պարագաները մի եւ նոյն ազդեցութիւնը չեն ընել ամենուն. բայց եւ այնպէս երբոր մէկ մարդ մը՝ ուղիղ եւ փափուկ ոճով մը՝ իր ունեցած վառվռուն վերըմբռնումները իրար հիւսելով՝ բան մը նկարագրէ նէ, հազու երբէք կը պատահի որ ուզած նպատակին չ'կարենայ հասնիլ: Ըս դիտողութենէն պէտք է հասկընալ թէ բանաստեղծութեան մէկ մեծ տարրն է վառվռուն եւ կենդանի վերըմբռնումն ձեւացընելու կարողութիւնը:

§ 62 . Վայրկենական հաւատքով վերբերանմանց գոյաւորիլ :

Սարգուս վերբերանմունքը երբեմն իրականի կը դառնան հաւատքով, երբոր խիստ զօրաւոր կ'ըլլան, բնական հակամիտութիւն մը ունինք զանոնք գոյացուցանելու կամ իրաւցունէ կան հաւատալու: Ետով հաստատուել չէ մտքերնիս թէ աս հաւատքը երկար ատեն կը մնայ, հոպա աս է ցուցնելէքնիս՝ թէ խել մը եղելով թիւններէ հաստատուած է որ վայրիկ մը ասանկ հաւատք կ'ունենան մարդիկ երբեմն:

ա. Ակարիչ մը քովը չեղած մէկ բարեկամին պատկերը եւ մարմնոյն ձեւը զծագրելու ատենը անանկ զօրաւոր վերբերանում մը, անանկ կենդանի պատկեր մը մտքին առջեւ կրնայ ունենալ, որ վայրկենի մը չափ ժամանակ բարեկամը դիմայն եկեր կայներ է թուի իրեն: Աւ գրեթէ ամէն պատկերհան ասանկ ատեններ իր ունեցած խորհուրդները զգուշութեամբ միտքը բերելով՝ անոնց վրայ մտադրութեամբ մտածելէն ետեւ, այսպիսի առաջք երեւոյթներ տեսածի պէս կ'ըլլայ: «Յետո՛ւ Ուէյնալտոսին համար կը կարդանք որ, կ'ըսէ Քօնօլի, խել մը ատեն տեսարանագծութեան պարապելէն ետեւ՝ դուրս փողոց որ ելեր է նէ, կանթեղի սիւնակները ծառ՝ մարդիկ եւ կանայք ալ շարժուն թուփ երեւցեր են աչքին: Ղշմարիտ է որ աս առաջք երեւոյթները շատ կարճատեւ կ'ըլլան. քանզի ան վերբերանման բուռն սաստկութիւնը, որ անոնց պատճառն է, երկար ատեն չ'կրնար մարդուս մտքին իշխել, թէ որ խելքին բան դպած չէ: Օ՛ր աս տեսակ ուժգին վերբերանմունք բնականէն դուրս են. ու ասկէց ի գատ՝ բոլոր մեյձակայ իմացման առարկաները, որոնց վրայ մարդ երկար ատեն գլխովին անմտադիր չ'կրնար ըլլալ, կը խափանեն աս առաջք տեսիլքները կ'օճնաւորեն:

բ. Արբոր մէկուն զարնելիք կ'ընես, թէ եւ կատակ ըլլայ ըրածդ, ու ան ալ ազէկ գիտնայ որ կատակ կ'ընես, իրաւցրնէ զարնելիքէդ ինչ պիտի ըլլար նէ անոր վրայ անանկ ազդու վերբերանում մը կ'ունենայ որ, կը յաղթուի եւ վայրկեան մը հաւատալով թէ իրաւցրնէ պիտի զարնես, ետ կը քաշուի: Սանաւորաբար ձեռքդ աչքին մտ որ տանիս նէ աս բանը կ'ըլլայ. ո՛վ աչքը չ'խփելիք կրնայ ընել ասանկ ատեն: Եսանկ պարագաներու մէջ աս խաբուիլները՝ վերբերանման սաստկութենէն յաղթուելով՝ վայրկենի մը չափ ժամանակ իրաւ ան բաները պիտի ըլլան հաւատալէն յառաջ գալուն յայտնի ա-

պացոյց մըն է սս, որ քու ձեռքդ աչքիդ մօտ վեր վար սս գին անդին որչափ կ'ուզես խաղցուր, բան մըն ալ չես ըլլար, անթարթափ կը կենաս . իսկ երբոր ձեռքը ուրիշինն ըլլայ նէ, վերբմբնունք սաստկութիւնը կ'եւելնայ, անկէ ալ հարկաւ վտանգի հաւատք մը կը ծագի, դուն ալ վախէ՞ք ետ կը քաշուիս : — Վարձեալ՝ հանէ մէկը բարձր բերդի մը գագաթը, ու անկէ վար նայել տուր . միտքը կը վկայէ որ վտանգ մը չ'կայ . աղէկ գիտէ որ բան չ'կայ . սակայն եւ այնպէս առանց վախի վար չ'կրնար նայիլ : Պատճառը՝ ուրիշ բան չէ, մտքին տուած վկայութիւնները իր վերբմբնունքը սաստկութիւնէն յաղթութեամբ վայրիկ մը ինքզինքը վտանգի մէջ կարծեն է :

գ . Արբոր ոտքերնիս քարի մը կը զարնենք կը ցաւի, կամ ուրիշ անկենդան բան մը յանկարծուստ մէկ տեղերնիս կը ցուցնէ, բնական բերմամբ բարկութիւն մը կը ցուցնենք ան բանին որ վայրկեան մը չ'տեսեր կ'անցնի : Եւ թէ հաւատքնեւնուս վրայ մէկ անանկ աղգեցութիւն մը կ'ըլլայ ան միջոցին, որ ան բանը վայրկեանի մը չափ ժամանակ պատասխանատու էակաց կարգը անցնելով՝ պատժել մը կը ձեւացնենք : Եւ բանը յատկապէս տղայոց եւ վայրենի մարդոց վրայ կը տեսնուի : Եւ վառվռուն վերբմբնունք հետ այսպիսի հաւատք մը խառնելն է այն բանաստեղծական սկզբունքը, որով քերթողք շատ անգամ անձրեւը՝ հովերը՝ մորիկները՝ որոտմունքը եւ փայլակը կենդանի՝ գործուն էակներ կ'ընեն, ու զանազան գործքեր ընել կու տան, ըրածներնուն ալ կերպ կերպ նպատակներ դնելով :

գ . Ենանկ մարդիկ կան որ հասարակաց հաւատք ընծայած ուրուականներու եւ ուրիշ այլ եւ այլ գիշերային առաջօք տեսիլքներու բոլորովին սուտ՝ անհիմն բաներ ըլլալուն աղէկ խելքերնին հասած է . սակայն եւ այնպէս մինակ սենեկի մը մէջ չեն կրնար քնանալ, կամ գիշերով մինակ տեղ մը չեն կրնար երթալ : Արբոր գիշերը մինակ դուրս կ'ելլեն շարունակ չորս դիւնին է ու քերթին . գրգռեալ վերբմբնունքնին կերպ կերպ երեւոյթներ կը տեսնէ, որոնց գոյութիւնը միայն իրենց գլխուն մէջն է եւ ոչ ուրիշ տեղ . սասնկով շարունակ անհանգստութեան մէջ կ'ըլլան, եւ երբեմն ալ սաստիկ կը վախնան : «Վրժբարդութեամբ, կ'ըսէ Վրիսգլի փիլիսոփան, մանկութեան ժամանակը մութին եւ աներեւոյթ չար ոգիներու ու տեսիլքներու դաղափարները ուժով մը միացան իրարու հետ . եւ ինչուան սս օրս, թէպէտ եւ այսպիսի աներեւոյթ զորութիւններու վրայ ամենեւին հաւատք չունիմ, եւ նմանապէս խաւարին եւ կամ ուրիշ ինչ եւ իցէ բանի հետ կապակցութիւն մը ունենալուն ալ բոլորովին անհիմն բան ըլլալուն խելքս աղէկ համոզուած է ,

սակայն եւ այնպէս մութ տեղը ինչ եւ իցէ պարագայի մէջ կատարելապէս հանգիստ չեմ կրնար ըլլալ, թէպէտ կը զգամ որ օրէ օր յաղթութիւն կը ստանամ կօր աս նախապաշարմանս վերայ :

Եւսպիսի բաներու մէջ մայրերու նախապաշարմանցը տղայոց վրայ ինչ ազդեցութիւն ունենալը աղէկ կ'երեւնայ : Եսանկ նեղութիւններ ունեցող մարդիկ տղակուց սորված են ոգիներու՝ ուրուականներու եւ գեւերու վերբմբանմունք ձեւացնել, եւ ինչուան ան տարիքնին պղտիկուց ըրած ունակութիւննին վրանին մնացեր է : Իբրև՝ իրենց խելքին ու գիտութեանը հարցընեն նէ, չենք հաւատար կ'ըսեն, եւ ստոյգ է ըսածնին . բայց ինչ օգուտ որ գիտութիւններուն ընել կրցածը մինակ զսպել մըն է ան ներսիգինին սքմատացած թիւր հաւատքը . հազարէն տասնին չ'պատահիր որ բոլորովին կարող ըլլան յաղթել բնաջինջ ընել աս բանը իրենց վրայէն : Ետենը մէյմը՝ առանձին եւ մասնաւորապէս մութ տեղեր՝ հոս եմ կ'ըսէ . կը վռնտես մտքէդ, ան նորէն կու գայ : Ուստի յայտնի է որ պղտիկուց նախապաշարուելէն է աս բանը, չէ նէ ինտո՞ր պիտի մեկնենք ասանկ մարդոց գիտութեամբ ասանկ նեղութիւններ կրելը :

§ 65 . Իմացմանց հետ միացած վերբմբանումք :

Ի՞նչ վերբմբանմանց վրայ իրականի հաւատք ունենալը շատ աւելի որոշ կ'երեւնայ, երբոր անոնց հետ իմացմունք ալ միացած ըլլան : — ( ) Երինակի համար՝ մէկը մտախլապատ առտու մը դաշտի մը մէջ պտըտած ատենը բան մը կը տեսնայ, ինչ որ է նէ, մարդ կը կարծէ, կարծեացը ստուգութեանը վրայ ամենեւին աներկբայ ըլլալով : Ուրիշ խոսքով՝ ըսենք, ճշմարտապէս մէկ առարկայ մը կ'իմանայ, եւ ան իմացմանը հետ մարդու վերբմբանում մըն ալ կ'ունենայ իրականացուցեալ : Արկու իրեք քայլ առաջ կ'երթայ, մէյմ՝ ալ կ'ընայի որ ան մարդ վերբմբանածը կօճղ մըն է եղեր՝ գազաթը մէկ քանի քարով : Հիմայ աս մարդուն վայրկեան մը առաջ ունեցած իմացումն ալ կօճղի իմացումն էր, եւ յստակութեան կողմանէ ոչինչ ընդհատ ետքինէն . առաջ ալ ետքն ալ գրեթէ ճիշդ մի եւ նոյն տեսանելի ձեւը կամ չափը նկարուած էր աչքին մէջ : Բայց ան նոյն վայրկենին մարդու վերբմբանում մըն ալ ըլլալով մօքին մէջը, եւ իր տեսողական իմացմանը վրայ բռնանալով՝ խափանեց անոր յառաջ բերելու բնական արդիւնքները : Վերբմբանումը առջին եղած տեսանելի առարկային հետ միանալով, մեծ զօրութիւն ու տե-

և որով թիւն մը ունեցաւ, եւ ասանկով առանց երկբայելու ճըշմարտապէս մարդ կարծեց տեսածը: Քայց ետքն որ վերբերանումն մը ելաւ մտքէն ու ան իմացման առարկան անոր տեղն անցաւ նէ, անասներ, որ ալ անհնար էր ան նոյն երեւոյթը ձեւացընել, բանը ինչպէս որ էր նէ տեսաւ:

Վալդէր Աքոգ բնութեան ամենաճիշդ նմանութեամբ յօրինած բազմաթիւ նկարագրութիւններուն մէկուն մէջ անգամ մը մէկ առթով մը Արեւմտեան Նորկաստանու Քի անուն աւազուտ կղզիներուն մէկը իյնալը կը պատմէ, որուն անունը դիւաքնակ ելած է եղեր: Աս գիւերուն պատճառաւ ինքն ալ որչափ վախ քաշելը խոստովանելէն ետեւ, կ'ըսէ. «Յօրեկուսն պայծառ լուսոյն կամ գիշերուան կատարեալ մութուն չէի տեսնար զասոնք. բայց ստտուանց կանուխ՝ չորս դին մտախուզը պատած ասեն կամ իրիկուան դէմ, կղզին մտնելէս ինչուան մէկ շարաթ, շատ աղօտ եւ անորոշ առաջք երեւոյթներ կը տեսնէի, երբեմն սպանիացի մը, կապան վրան առած եւ հովանոցի չափ մեծ գլխարկն ալ գլուխը անցուցած. երբեմն շրանտացի նաւաստի մը կը նշմարէի, կոշտ գլխարկ մը զլուխը, ձիկառը բերանը կայնած. եւ երբեմն Նորիկ Քաղկեդա մը, փետրազարդ թագը գլուխը եւ ձեռքը երկայն եղեգնեայ նիզակ մը բռնած: Միշտ կ'ըլլէի քովերնին կ'երթայի. բայց երբոր մօտերնին կը հասնէի, ան տեսիլքներուն որը թուփ մը կ'ըլլար, որը ծովափունքը ինկած փայտի մը կտոր, որը մառախուղէ ձեւացած բոլորակ մը, որն ալ ուրիշ այսպիսի խաբէութեանց առիթ բան մը»:

Քայց աս բանը բացատրելու համար գրքերու երթալու հարկ չ'կայ. բազմաթիւ մարդիկ կան, որ բնութեամբ պատրաստակաւնութիւն մը ունին վերբերանմամբ բան ստեղծելու, որուն պատճառաւ շատ անգամ մեծ նեղութիւններու եւ շփոթութիւններու մէջ կ'ըլլան. մասնաորապէս անտո՛ր պարագաներու մէջ եղած ատեննին եւ գիշերները: Այս ամէն ասանկ բաներու մէջ աս հակամիտութիւննին շատ կը զօրանայ, երբոր անանկ բան մը ըլլայ աչքերնուն առջեւը, որուն ձեւը դիւրաւ կրնան փոխել իրենց ստեղծելու բանին նմանցընել: — Աս տեսանելի առարկաներու իմացմանց վրայ շինուած եւ անոնցմէ մնայունութիւն մը առնող առաջք երեւոյթներու վրայ ամենէն յայտնի եւ ստոյգ գիտցած բաներնիս աս է, որ ան երեւոյթները տեսնողները ան միջոցին երկբայութեան տեղ չ'ձգող զօրաւոր հաւատք մը կ'ունենան կոր: Վասն որոյ հոս յառաջ բերած օրինակներնիս տիրապէս բացատրութիւն եւ հաստատութիւն մը պէտք է սեպել անցեալ յօդուածին մէջ եղած գիտողութիւններուն:

§ 60 . Վերլուծումներ՝ կեղծ թատրոնական խաղերու վրայ :

Ըստ դիտողութիւններէն դէժ ըստ մասին մեկնութիւն մը կըրնանք հասնել թատրոնական կեղծ տրտմական հանդէսներուն մարդուս մտքին ըրած ազդեցութեանցը վրայ : ( ) րինակի ազագաւ՝ ողբերգութիւն մըն է ձեւացածընէ, առ հասարակ ամէն մարդ գիտէ որ տեսածներուն ըտրոն ալ կեղծիք են : Բայց թէպէտ եւ թատրատեսք առ հաւատքով կը մտնեն թատրոնին մէջ, ինչուան վերջը նոյն հաւատքին վրայ չեն մնար : Բանաստեղծին տեղ տեղ ըրած սրտաշարժ խօսքերուն վրայ վարպետ ձեւացընողը իր կատարելագործած ճիգերը թափած ատենը՝ կը կորսուի կ'երթայ մարդուն մտքէն անոնց կեղծիք բլլալուն գաղափարը : Զանդիսականին զգացումները թունտ կ'ելեն եւ որպէս թէ կը մղին զինքը առջին բացուած տեսարաններուն մէջը . մտքովը ան նկարագրուած անցքերուն մէջ կ'ելէ կ'երթայ . եւ յափշտակուած ու ինքզինքը կորսնցուցած, վայրկի մը իրաւ կարծելով տեսածները՝ հեղեղի պէս աչքէն արցունք կը թափէ ան ողբալի կատարածներուն վրայ : Ուստի ողբերգական արարուածներէ ներսիղինիս սրտմտութիւն՝ կարեկցութիւն՝ ատելութիւն եւ ասոնց նման շարժութիւններ ինչպէս ծագելուն առ մեկնութիւնը կրնանք տալ, թէ ողբերգութիւնը ձեւացած ժամանակը՝ պարագաներուն բերմունքէն ատեն ատեն վայրկենական հաւատք մը կ'ունենանք ան նկարագրուած անցքերուն իրացընէ ըլլալուն վրայ : Եւ այսպիսի հաւատք մը ունենալն ալ, քանի որ անցեալ հատուածներուն մէջ եղած բացատրութիւնները աչքերնուս առջին են նէ, անհնար բան է չինք կրնար ըսել : — Ողբերգութիւն եւ կամ ուրիշ բնական եւ ազդու նկարագրութիւններ առանձին կարգալէն յառաջ եկած շարժութիւններն ալ այս կերպով կը մեկնուին : Ստանազիրը իր գրութեամբը քեզ առ իրականաց աշխարհէն կը յափշտակէ, իր ուշիմութեամբը ստեղծած վերլուծումանց աշխարհք մը կը տանի . դուն ալ ան տեղ դիւթութեամբ միայն աչքիդ երեցած բաները քիչ մը ատեն իրաւ կը հաւատաս, եւ հաւատալէդ ինչ որ յառաջ պիտոք գարնէ կու գայ ան միջոցին :



## ԳԼՈՒԽ Թ

## ՊԵՐՁ ԵՒ ՅՕԿՈՒԱԾՈՅ ՄՏԱՆՈՐ ՀԱՆԳՎԱԾՆԵՐԸ

§ 67 . Պարզն ու յօդուածոյն որոշելը ո՛ւսկէց կը ծագի :

ՄՏՐԵՐՆՈՒՍ մէջ ծագած խուհուրդներն ու զգացումները, զորոնք շարունակ կը քննենք մեր ներքին գիտողութեամբը, բընականապէս կ'իմանանք որ աստիճանաւ հաւասար չեն իրարու . ամէնքն ալ նոյն արժէքը չունին : Այս մտաւոր հանգամանքը կը նայինք որ միայն մէկ բան մը կը ցուցնէ, եւ ան ցուցրցած մէկն ալ, ինչ որ է նէ, ճիշդ՝ որոշ եւ անբաժանելի մէկ է : Այն միւս մտաւոր հանգամանքը կը տեսնենք որ խել մը ուրիշ մըտաւոր հանգամանքներ կը ցուցնէ, եւ իրօք ալ հաւասար է ան ցուցուցած հանգամանացը : Ասկէց ճամբայ կը բացուի առջեւնիս՝ մեծ պատշաճութեամբ եւ մինչեւ անգամ տեսակ մը հարկաւորութեամբ ալ մեր բոլոր մտաւոր հանգամանքները երկուքի բաժնելու, մէկուն ըսելու Պարզ, եւ միւսին Յօդուածոյ : Իր նութիւնն ինքն է աս բաժանումը ընողը . եւ մտքին մեծութիւնը՝ գէթ ըստ մասին՝ աս բաժանումը ընելու զօրութենէն կախեալ է . առանց աս զօրութեանը, հոգին չէր կրնար ըլլալ այն՝ որ է . եւ առանց աս յատկութեանը աղէկ մը ծանօթ ըլլալու, շատ դժուար բան կ'ըլլայ մտաց ուրիշ այլ եւ այլ հանգամանքներուն վրայ կատարեալ եւ ուղիղ հմտութիւն ունենալ :

§ 68 . Պարզ մտաւոր հանգամանաց ընութիւնը եւ յատկութիւնները :

Կախ եւ առաջ պարզ մտաւոր հանգամանաց վրայ քանի մը ծանօթութիւններ պիտի տանք, բնութիւննին ալ՝ որչափ որ հնար է նէ՝ հասկըցընելու ջանքով . որչափ որ հնար է նէ կ'ըսեմ, զի աս ալ ան նիւթերուն կարգէն է, որոնց վրայ մէկ մարդ մը յըստակ հմտութիւն ինք իր առանձին գիտակցութենէն կրնայ ունենալ յաւէտ, քան թէ ուրիշին բացատրութիւններէն :

Աւստի առաջին դիտելու բաներնիս աս պիտոր ըլլայ, թէ պարզ գաղափարք Խոստիչն Բաժնուի : Մտաւոր հանգամանաց վրայ

Պարզ և Երզնասոյ մտաւոր հանգամանք :

եղած պարզի եւ Երզնասոյի բուն իսկ որոշմունքէն ալ կը հասկըցուի որ աս տեսակ գաղափարները մասանց բաժնուելու չեն գար : Ըստիկայ մէկ հաստատուն ճշմարտութիւն մըն է, որ բոլոր պարզ գաղափարներնիս եւ շարժութիւններնիս ու բոլոր ուրիշ պարզ մտաւոր հանգամանքներնիս, ամէնքն ալ մի եւ անբաժանելի են : Ուստի թէ որ աս հանգամանքներնէս մէկուն վրայ մէկէն աւելի տարր տեսնելու ըլլանք նէ, ալ պարզութիւնը գնաց անոր վրայէն, եւ բաղադրեալներուն կարգը անցունենք պիտի, թէ եւ առաջ մեղի ուրիշ կերպ երեւցած ըլլայ : Արջապէս անբաժանելութիւնը պարզ մտաւոր հանգամանաց էական յատկութիւնն է, եւ աս ալ ըսեմ, որ ոչ միայն ինքնին անբաժանելի են, այլ ուրիշ ինչ եւ իցէ բանի հետ ալ հաղորդութիւն չունին, ամենէն ալ զատուած են : Պարզ գաղափար մ'որ կայ նէ մտքիդ մէջ, անիկայ չես կրնար վերցընել ու նոյն բանը ցուցընող ուրիշ մը տեղը գնել : Կամ թէ որ մտքիդ մէջը չէնէ, ուրիշ գաղափար մը չես կրնար կաղմել անոր փոխանակ, որ ան նոյն բանը ցուցընէ : Ըմէն պարզ հանգամանք ինքնիրեն զատ միութիւն մըն է, զոր նոյն ինքն միտքը իր կարողութեամբ կը կաղմէ, եւ մասնաւոր ու իրական յատկութիւններ ալ ունի : սակայն եւ այնպէս մտքերնուս մէջն էնէ, կը գիտնանք, մտքերնուս մէջ որ չէնէ ամենեւին մէկ կերպով մը անոր դիտութիւնը չենք կրնար ունենալ :

§ 69 . Պարզ մտաւոր հանգամանքները սահմանի չեն գար :

Երկրորդ նկատելիքնիս ալ աս պիտի ըլլայ, թէ պարզ գաղափարք սահմանի չեն գար : — Սահման ըսելով ընդհանրապէս ինչ որ կը հասկըցուի նէ, ան մտքովը աս պարզ գաղափարները սահմանի տակ ձգելուն անհնար բան ըլլալը իրենց միութեանը եւ անբաժանելութեանը վրայ վերը զրուցածներնէս անշուշտ կը հասկըցուի : Տարակոյս չ'կայ որ բանի մը սահմանը տալու համար երբեմն կ'ըլլայ որ խել մը նոյնանշան բառեր կը շարենք ու սահմանեցինք կ'ըսենք : բայց տիրապէս սահման չըսուիք անոր : ( ) րինաւոր սահման ըսածդ սահմանուելու գաղափարը՝ որչափ որ հարկաւոր էնէ՝ մասն մասն բաժնելու է : մենք ալ ան գաղափարին ինչ բան ըլլալը հասկընալու համար՝ աս իրարմէ զատ զատ ցուցուած մասունքը քննելու ենք, եւ ոչ թէ ան մասունքներէն բաղադրուելով նոյն իսկ իսկզբան մտքերնուս մէջ ծագած գաղափարը : Ըմէն կատարեալ սահմանի մէջ հարկաւ աս գործութիւնը ըլլալու է, չէնէ սահման չըլլար : Ըս է սահմանին

Պարզ եւ յօգուածոյ մտաւոր հանգամանք :

վրայ եղած ընդհանուր եւ վաւերացեալ գաղափորը :

Վասնք որ պարզ խորհուրդներու եւ զգացմանց վրայ աս գործողութիւնը չենք կրնար ընել, վասն զի պարզ մտաւոր հանգամանաց բնութիւնն աս է որ մի եւ անբաժանելի կ'ըլլան : Իսկէ ի զատ՝ թէ որ մէկ գաղափար մը սահմանել պէտք ըլլայ նէ ուրիշ գաղափարներով, վերջապէս բանին կայսնք մը տալու համար՝ անանկ գաղափարներու հասնելու ենք որ ալ սահման չը վերցընեն : — Իսկ է որ պարզ մտաւոր հանգամանքները ինքնին սահմանի տակ չ'իյնալնէն զատ՝ աս ալ կայ, որ եթէ մարդուս մտացը մէջ աս տարրական հանգամանքները չըլլային նէ, սահման ըսած բանդ ալ չէր ըլլար. զի եթէ անգամ մ'որ մէկ բան մը սահմանել սկսէինք նէ, ալ այնուհետեւ վերլուծութիւն վերլուծութեան վրայ, սահման սահմանի վրայ տալով, անվախճան ճամբայ մը պիտի բռնէինք երթայինք. բոլոր աշխատութիւննիս անպտուղ պիտի ըլլար, եւ հուսկ յետոյ սահմանելու բաներնիս ինտոր որ ձգեցինք նէ անանկ պիտի գտնէինք :

Պարզ գաղափարներու եւ զգացմանց վրայ խօսած ատեննիս անոնց սահմանը չ'տալնուս համար՝ մէկը թէ որ ըսածնիս չ'հասկընալիք ցուցընէ նէ, անոր օգնութիւն մը ընելու համար՝ պարզ մտաւոր հանգամանաց պարագանքը կրնանք որչափ որ հնար է նէ ցուցընել իրեն : Իայց աս բացատրութիւնները ընելնէս ետեւ ալ՝ ինք առաջուան պէս պարտական է իր զգացողութեանը եւ պիտակցութեանը դարձընել իր նկատողութիւնը, որ անոնք միայն կրնան իր միտքը հանգչեցընել :

§ 70 . Պարզ մտաւոր հանգամանաց իրական բաներ ցուցընելը :

Պարզ մտաւոր հանգամանաց մէկ երրորդ նշանը կամ յատկութիւնն ալ աս է, որ իրական բաներ չ'ը ցուցընէն : Ուրիշ խօսքով՝ պարզ գաղափար մը չ'կրնար ըլլալ որ ինքնին բնութեամբ կեղծ ու պատիր ըլլայ, այլ միշտ ճիշդ իրեն նման մէկ բան մը կ'ունենայ : — Հօգուածոյ գաղափարք ասանկ չեն միշտ. անոնք երբեմն հարցածին կ'ըլլան. այսինքն՝ ան տարրները, որոնցմէ որ շինուած են, մէկ անանկ եղանակաւ մը մէկտեղ բերուած բաղադրուած կ'ըլլան, որուն մէկ իրական նմանութիւնը չ'գտնուիր բնութեան մէջ : ( ) Իրնակի աղագաւ՝ եթէ մտքիդ մէջ անանկ մարմնոյ մը գաղափար ձեւացընես, որ գեղին կամ ուրիշ գոյն մը ըլլայ, ու ծաւալական եւ խիտ, մէկ խօսքով՝ երկաթի կամ ոսկիի բոլոր յատկութիւնները ունենայ, բայց միայն աս բացառութեամբ՝ որ ջուրէն թեթեւ ըլլայ, ատիկայ հարցածին գա-

«Կարգ եւ յօդուածոյ մատուր հանդամներ :

զափար մը կ'ըլլայ . վասն զի առ տարրներուն առ բաղադրու-  
թիւնը մինակ մաքիշ մէջ գոյութիւն ունի, եւ ոչ իրօք բնու-  
թեան մէջ . արտաքին կամ ենթակայական էութիւն մը չունի ի-  
րեն նման : Չիմարդ՝ Ա իշապ եւ ասոնց նման անուններ որ իրօք  
գոյութիւն չունեցող՝ երեւակայական էակներու կը տրուին նէ,  
մտացածին յօդուածոյ գաղափարներու անուններ են : Ըստ գաղա-  
փարները իրենց նման իր մը չունին բնաւ : Բայց պարզ մտաւոր  
հանգամանքներն ասանկ չեն : Ըսանկ ըլլային նէ, որովհետեւ  
ճշմարտութիւն մը հետադաստիլու որ ըլլանք նէ՝ բնականապէս  
յօդուածոյէն սկսելով քննութիւնը վերջապէս պարզին վրայ կը  
կայացընենք եւ անանկով միտքն ունեցած հմտութիւննիս հաս-  
տատուն հիման վրայ կ'ըլլայ, անատենը հաստատուն հիմ ունե-  
ցող հմտութիւն պիտի չ'կրնայինք ունենալ : Մէկ նիւթ մը կ'առ-  
նենք առջեւնիս, կը սկսինք վերլուծութեան, եւ երբոր ճշ-  
մարտապէս պարզ գաղափարներու կը հասնինք, ալ հոն կանկ  
կ'առնենք . վասն զի ան աեղը սխալմունք՝ պատրանք չ'սղմիր :  
Բնութիւնը իր հանգամանքը հաւատարմութեամբ անփոփոխ պա-  
հելով, միշտ ճշմարտը կը զրուցէ մեզի : Բայց մարդիկ բնութեան  
իրենց առջեւը դրած տարրները իրար յօդաւորելու գործին մէջ  
ամէն ատեն սխալմունքէ ազատ չ'են ըլլար :

§ 71 . Եօդուածոյ գաղափարայ սկիզբը, եւ պարզ գաղափարաց հետ ու-  
նեցած վերաբերութիւնննն :

Ըս մեր պարզ մտաւոր հանգամանքներն որ ասանկ մեկնեցինք,  
հաւանականաբար յօդուածոյ գաղափարներէն առաջ եղած պի-  
տի ըլլան ըստ ծագման : Ըսիկայ ասանկ հաւատալնուս պատճառ-  
ները կան, թէպէտ եւ շատ անգամ դժուար կ'ըլլայ մտքին մե-  
կէն մեկալին ինտոր անցնիլը գտնելը : Ըրտաքին նիւթական ա-  
ռածութեան, կարծրութեան, գոյնի, համի եւ այլն, պարզ եւ  
իրարմէ որոշ գաղափարներէն բաղադրեալ են : Ըս որովհետեւ  
յայտնի է թէ սս տարրական իմացումները որոշ եւ զատ զատ  
զգայութիւններէ կը ծագին, ուրեմն շատ իրաւացի է կարծել՝  
թէ ասոնք առանձին իրենց պարզութիւնովը գոյացած ըլլալու  
են մտքին մէջ . դեռ մէկմէկու հետ բաղադրուելով յօդուածոյ  
գաղափարներ չ'շինուած : Ուստի իրաւամբ կրնանք հաստատել՝  
թէ պարզ գաղափարները յօդուածոններէն առաջ են՝ ըստ ժա-  
մանակի, ու նաեւ անոնց հիմունքն են :

Ըսիկէց կը տեսնենք՝ որ մեր յօդուածոյ գաղափարները պարզ

Պարզ եւ յօգուածոյ մտաւոր հանգամանք :

գաղափարներէ ելած կամ շինուած են ըսենք նէ, պիտակարար խօսք մը ըրած չենք ըլլար, այլ ըստ բաւականին ճշմարտին մօտ : Լոքին ալ կարծիքն աս է աս նիւթիս վրայ, եւ մարդուս մտքին կազմութեանը եւ գործողութեանց ընթացքին որչափ համեմատ գալը դիտենք նէ անգամ մը, ալ պատճառ չենք կրնար գտնել աս կարծիքը մերժելու : — Թէպէտ եւ բուն պարզ մտաւոր հանգամանքներնիս շատ քիչ են, սակայն անթիւ յօգուածոյ գաղափարներ կրնան շինուիլ անոնցմէ : Ս'եր մտացը աս պարզ գաղափարներով յօգուածոյ խորհուրդներ եւ զգացումներ ստեղծելու կարողութիւնը այբուբենի տառերը մէկմէկու յօդաւորելով վանկ եւ բառ շինելու կարողութիւններնուս կրնմանի :

§ 72 . Առանց նախնիթաց պարզ զգացումներու յօգուածոյ գաղափար կըրնայ կազմուիլ կարծելուն պատրանք ըլլալ :

Կարելի է ոմանք հակառակին անցեալ յօգուածին մէջ առաջարկուած վարդապետութեանը, սյսինքն՝ յօգուածոյ մտաւոր հանգամանաց՝ ժամանակի դիէն՝ պարզերէն ետքն ըլլալուն, եւ աս կարծիքին հակի մտքերնին, թէ այդ հանգամանաց գէթ մէկ մասը մէկէն ի մէկ եւ անմիջապէս կը ձեւանան, երբոր մէկ առիթ մը կ'ըլլայ, եւ էականապէս կախում մը չունին նախընթաց ըզգացումներէ : ( )րինակի համար՝ երբոր աչքդ կը դարձնես ընդարձակ եւ բազմադիմի առարկաներով ընցուն տեսարանի մը վրայ, իրենց կարծիքը, ամէնը մէկէն մէկ յօգուածոյ մտաւոր հանգամանք մը կ'ըլլան անմիջապէս, ոչ թէ մէկմէկու ետեւէ յաջորդութեամբ մը, եւ անոր համար ժամանակով չափուելու ալ չեն գար : Երբոր մէկ պատկեր մը՝ նկար մը կամ պատմական դժագրութիւն մը աչքերնուս կը հանդիպի, անատենը, իրենց կարծեօքը, ալ աւելի յայտնի կ'իմացուի՝ որ ան յօգուածոյ առարկային յօգուածոյ գաղափարը անմիջապէս, մտքերնուս մէջ անկէ առաջ գործողութիւն մը չեղած, կը ձեւանայ : Ընկերքայ աս ըսուած խօսքերը մէկ քանի պարագաներու մէջ առ երեւոյթս ճըշմարտ են, բայց աս երեւոյթը ( քանզի երեւոյթէ ի զատ ուրիշ բան է չենք կրնար ըսել ) բացայայտ եւ դիւրին կերպով մը կը մեկնուի, առանց ան հասաստուած ընդհանուր սկզբունքին դըպչելու : Ըմեն մարդ գիտէ որ մարդուս միտքը շատ անգամ անհնարին արագութեամբ իր դիտողութեանցը առարկաներուն մէկ ծայրէն մէկալը կը սահի կ'երթայ : Ըս արագութիւնը մէկ քանի բաներու մէջ այնչափ սաստիկ կ'ըլլայ որ յիշողութեան նիւթ չեմնար, եւ ասանկ պարագաներու տակ ձեւացած յօգուածոյ ըզ-

Պարզ եւ յօգուածոյ մտաւոր հանգամանք :

զացումներնիս 'ի հարկէ անանկ երեւոյթ մը կ'ունենան, որպէս թէ առանց նախընթաց պարզ զգացումներու ձեւացած ըլլային : Եւ շատ անգամ աչքերնիս այնպէս արագութեամբ կ'անցնի առջեւնիս եղած պատկերին կամ պատմական դժագրութեան եւ կամ ընդարձակ տեսարանին որոշ մասանցը վրայէն, որ բոլորովին անհնար կ'ըլլայ առաջ որ մասը, ետքը որը, անկէ ետեւ որը դիտելնիս յիշելը : Այսն որոյ բնականապէս անանկ կը թուի մեզի թէ մէկ տեսութեամբ ամէնը մէկէն իմացանք, եւ ոչ թէ մշտքերնիս մէկմէկէ որոշ եւ իրարու յաջորդող դիտողութիւններով ըլլուրէ ըլլուր, անտառէ անտառ, մէկ դաշտավայրէն մէկալը պտըտելէն ետեւ ունեցանք ան մեզի մի եւ յանկարծական երեւցած ամբողջ տեսարանին ըմբռնումը : Բայց շատ պատճառներ կան աս բանիս հաստատութիւն տուող, թէ ան ըմբռնման միութիւնը լոկ առ երեւոյթս միութիւն մըն է, իրական չէ : Տես § 57 եւ 58 :

§ 73 . Յօգուածոյ ըսելով ճիշդ է՞նչ պիտի հասկընանք :

Բայց քանի որ բացայայտ կերպով կը հաստատենք կոր մտաւոր հանգամանաց շատ անգամ յօգուածոյ կամ բաղադրեալ ըլլալը, աս ալ մասնաւորապէս մտքերնիս ըլլալու է, որ աս բաղադրութիւնը նիւթականի բաղադրութեան մտքով առնելու չենք . որ աս ետքինին մէջ բաղադրիչ մասունքները յարադրական միութենէ եւել միութիւն չեն կրնար ունենալ, թէ եւ երբեմն ուրիշ կերպ կրնայ երեւնալ . եւ հետեւաբար այն զատ զատ բաղադրութիւնները նկարագրապէս կրնանք բաժնել ունորէն իրար բերել մէկ ընել : Ասանկ բան չ'կայ մտաւոր յօգուածոյ հանգամանաց մէջ, ասանկ նկարագրական եւ նիւթական մտքով իրար բերել միացընելու, իրարմէ բաժնել զատելու, այդ կերպ գործողութիւններու չեն գար անոնք : — Բայց թէ որ մեր խորհուրդներն ու զգացումները ուրիշ խորհուրդներէ եւ զգացումներէ շինուած եւ նիւթական մտքով բաղադրեալ չեն նէ, հապախնչ բաղադրութիւն է ատ : Աս խնդիրը առիթ մըն է աս կարեւոր ծանօթութեանը, թէ մտքի վերաբերեալ յօգուածոյութիւնը նկարագրական չ'ըլլար, այլ արդիւնական : Եւ յօգուածոյ զգացում որ կ'ըսենք նէ ինքնին ճշմարտապէս պարզ է . սակայն միանգամայն խել մը ուրիշ զգացումներու հաւասար ըլլալուն համար է որ բաղադրեալ կ'ըսուի : Խորհուրդ խորհուրդի ետեւէ, շարժութիւն շարժութեան ետեւէ կ'անցնի մարդուն մտքէն : Եւ այնժամ մէկ նոր մտաւոր հանգամանք մը կը ծագի,

Պարզ եւ յօգուածոյ մտաւոր հանգամանք :

աս նախընթաց զգացումներէն յառաջ եկած, եւ աս հանգամանքը վերը բացատրած մտքովնիս յօգուածոյ մտաւոր հանգամանք մը կ'ըլլայ : Այսինքն, ինչպէս որ կը զգայ ամէն մարդ, աս վերջին մտաւոր հանգամանքը արդեամբ հաւասարութիւն մը կ'ունենայ այն իրարմէ զատ զատ մտքէն անցնող նախորդ խորհուրդներուն եւ զգացումներուն : Ս'եր պարզ զգացումները կը նմանին այլ եւ այլ լեռներէ իջնող վտակներու, որ կու գան ի վերջոյ միջանկեալ լճի մը մէջ կը թափին իրար կը խառնուին, ալ այնու հետեւ ան այլ եւ այլ ջուրերը բերող վտակները շեւ կրնար զատել իրարմէ ան լճին մէջ, ան տեղը անոնք իրար կը խառնուին աններեւոյթ կ'ըլլան : Այլ կամ կրնանք նմանցընել ( ) սմանցւոց սարկին քսան փարանոցին կամ ղուրուշին, որ երկու հարիւրը կամ հարիւրը մէկ ոսկիով մը կը տեսնես, եւ սակայն ան հարիւրնոց ոսկին երկու հարիւր կամ հարիւր կտոր չէ, մէկ է, եւ անանկ մէկ է, որ ան իր բաղադրիչ մասանցը ամէն մէկ քսաննոցին կամ ղուրուշին միութենէն ամենեւին տարբերութիւն մը չունի : Ուստի երբոր խորհրդոյ բաղադրեալ կամ յօգուածոյ ըլլալուն վրայ կը խօսինք, աս մտքի վերաբերեալ բաղադրութիւնը նկարագրական մտքով իմանալու չենք ամենեւին հապա բոլորովին փոխաբերութեամբ հասկընալու ենք : Ուրիշ բաներու պէս աս բանիս մէջ ալ հարկը կը պահանջէ կոր որ նիւթական սկզբնաւորութիւն ունեցող խօսքով մը յայտնենք մշաքերնիս, բայց ամենեւին վախ մը չըլլար սխալելու, թէ որ ըսուածներուն աղէկ ուշ գնենք, եւ աշխատինք՝ մեր ներքին փորձառութիւնը դիտելով՝ բանին ինչ ըլլալը աղէկ մը ըմբռնելու :

§ 73 . Մտաւոր վերլուծութեան վրայ բացատրութիւն :

Մնցեալ հատուածին նիւթը աւելի աղէկ կը հասկըցուի մտաւոր բաներու վերլուծութեան վրայ հիմայ ընելու քննութիւններնէս : Ինչպէս որ նկարագրապէս իրար բերել յօդել չըլլար, անանկ ալ նկարագրապէս իրարմէ բաժնել չըլլար մտաւոր բաներու մէջ : Ինչպէս որ նկարագրական բաղադրութիւն չ'կայ, անանկ ալ նկարագրական քայքայութիւն վերլուծութիւն չ'կայ : Սակայն խորհրդոց կամ զգացմանց վերլուծութիւն որ կ'ըսենք նէ, բան մը կայ մտքերնուս մէջ հասկըցընելու. մէկ բան մը ըսել կ'ուզենք աս խօսքով : Ուրեմն ի՞նչ է աս հասկըցընելեքնիս, ինչ պիտի իմանանք վերլուծութիւն ըսելով :

Աս բանը հասկընալն ալ հասկըցընելն ալ թէպէտ դիւրին բան չէ, սակայն կը վերցընէ քիչ մը բացատրութիւն : — Հիշելու ենք

Պարզ եւ յօգուածոյ մտաւոր հանգամանք :

որ վերլուծութիւն ըսածնիս նիւթական մարմիններու վրայ ալ կ'ըլլայ : Բնաւոյձը կ'առնէ կտոր մը ապակի, որ վրայէն մէկ նիւթ կ'երկնայ, ու կերպով մը մասունքները իրարմէ քայքայելով՝ կը գտնէ որ գայլախաղէ եւ ալքալիէ բաղադրեալ է. եւ կամ ուրիշ մարմիններ աս նոյն կերպով իրենց բաղադրիչ մասանցը կը բաժնէնէ, ան բրած գործողութեանը վերլուծութիւն կ'ըսուի :

Երբ՝ աս նոյն բառը մտքին վրայ ալ կը գործածուի. բայց աս բառով ցուցնելիքնիս, պսիւնքն մտքին մէջ եղած վերլուծական գործողութիւնը, ան նոյն վերլուծութիւնը չէ : Եւ յօշատի միայն կրնանք ըսել թէ մարդուս մտքինմէջ ալ անոր նման գործողութիւն մը կայ : Յօգուածոյ խորհուրդը ապակեոյ կտորի կամ ուրիշ նիւթական մարմնոյ պէս մաս մաս չ'բաժնուիր. անանկ բան չ'կրնար ընել մէնք, թէ եւ շատ աշխատինք ընելու. ամէն մտաւոր հանգամանք ըստ ինքեան ճշմարտապէս պարզ եւ անբաժանելի է. իրաւ բաղադրեալ է, սակայն արդեամբք միայն : Յօգուածոյ գաղափարք նախընթաց զգացումներէ ելած բան մըն են յաւէտ, քան թէ անոնց բաղադրութիւնը. եւ թէպէտ եւ նրկարագրական մասերէ կազմեալ չ'են, սակայն եւ այնպէս նիւթական մարմին մը իր բաղադրիչ տարերքներուն հետ ինչ առնչութիւն ունինէ, ան նոյն առնչութիւնը ունին յօգուածոյ գաղափարներն ալ իրենց նախորդ զգացումներուն հետ. եւ աս մասնաւոր մտքովը կրնանք ըսել թէ իրենց մէջը բովանդակեալ են ան նախընթաց գաղափարները : Աւստի ըսել է որ մտաւոր վերլուծութիւնը մինակ աս առնչութեան վերաբերութիւն ունի : Եւ վերլուծութիւնը անատենը բրած կ'ըլլանք, երբոր խորհրդածութեան եւ գիտակցութեան օգնականութիւնովը կարողանանք ցուցնել ան իրարմէ զատ եւ ստորակարգեալ զգացումները, որոնց արդեամբք հաւասար է՝ մեր ըմբռնմանը նայելով՝ վերլուծելու յօգուածոյ մտաւոր հանգամանքնիս :

(Ր)ինակի աղազալ՝ կառավարութիւն բառը, երբոր մեր մտքին մէջ եղած կառավարութեան իմացմանը համար կը գործածենք, յօգուածոյ մտաւոր հանգամանք մը կը ցուցնէ. աս մտաւոր հանգամանքը, որ ճշմարտապէս մէկ է՝ թէպէտ եւ արդեամբք մէկէն եւել, կ'առնենք առջեւնիս քննելու. եւ թէ որ կարող ըլլանք այն մէկմէկէ որոշ եւ աւելի տարրական գաղափարները երեւան բերել, որ եթէ անոնք առաջուց մ. քերնուս մէջ չ'ըլլային նէ՝ աս յօգուածոյ գաղափարը պիտի չ'կրնայինք կազմել, անատեն վերլուծած կ'ըլլանք կառավարութեան մտաւոր հանգամանքը : Այ թէ նկարագրապէս մասն մասն բաժնելով, հապա ուրիշ մտաւոր հանգամանքներ ցուցնելով, որոնք՝ ամէն մարդու իր խորհուրդներուն վրայ ունեցած գիտակցութիւն



Պարզ եւ յօդուածոց մտաւոր հանգամանք :

Նը կը վիայէ թէ՛ առ մտաւոր հանգամանքէն առաջ եղած պիտի ըլլան, ինչպէս՝ իշխանութեան՝ իրաւանց՝ պարտականութեան՝ հրամանի գաղափարներն ու մեծի պզտիկի առնչական գաղափարները :

§ 75. Արտաբուստ ծագած յօդուածոց գաղափարք :

Մտաւոր հանգամանաց պարզութեան եւ յօդուածոցութեան վարդապետութիւնը, մեր բնութեան երկու մասին ալ, այսինքն խմացականին ալ՝ Օգոստականին ալ կը վերաբերի. ուրիշ խօսքով՝ յօդուածոց խմացում ալ կ'ըլլայ, յօդուածոց կիրք ալ : Խակ կամականին, մտաւոր բնութիւններնուս երրորդ բաժանման ներգործութիւնները միշտ պարզ կ'ըլլան : Քանի որ սո նիւթը միայն խմացականին վրայ առնելով կը քննենք, սա ծանօթութիւնն ալ պէտք է եւելցրենք՝ որ խմացականին թէ՛ ի ներքուստ ծագած ներգործութեանցը մէջ եւ թէ արտաբուստ ծագածներուն մէջ յօդուածոցութիւն կայ. եւ կ'արժէ որ հոս մէկ երկու խօսք խօսինք մասնաւորաբար Արտաբուստ ծագած յօդուածոց գաղափարաց վրայ :

Պարզ գաղափար ըսածներնիս նիւթերու մասունքը միայն կը ցուցնեն : Պունոյ պգայութիւնները, ինչպէս՝ կարմիր՝ ճերմակ՝ դեղին, շօշափականին սկզբնական ազդմունքը, ինչպէս՝ դիմահարութիւն՝ տարածութիւն՝ պնդութիւն եւ կակղութիւն, ասոնք՝ առանձին առանձին առնելով՝ հմտութիւն մը չեն տար մեզի նիւթոց վրայ, հասպա տուած հմտութիւններն նիւթոց մասանցը՝ յատկութեանցը եւ տարերքներուն վրայ միայն կրնայ ըլլալ : Ասան որոյ արտաքին առարկաներու, աշխարհիս կերպ կերպ նիւթական բաներուն վրայ ունեցած գաղափարներնուս շատը յօդուածոց են : Տուն՝ ծառ՝ ծաղիկ՝ բոյս՝ հանք՝ կենդանի կ'ըսենք նէ, ասոնցմով արտայայտած գաղափարներնուս մէկն ալ պարզ չէ. այլ ընդհակառակն շատ մը տարերք կը բովանդակեն մէջերնին :

§ 76. Ինք իրեւ ամբողջ նկատած առարկաներուն վրայ :

Նանը եղածին պէս ըսելով, մեր նկատողութեան այլ եւ այլ արտաքին առարկաները իրեւ ամբողջ կ'երեւնան մեզի, եւ սա նկատումը (մարբերնուս մէջ ի սկզբան ինչ կերպով ծագած է նէ) շատ կանուս կը սկսինք ունենալ որ եւ իցէ հանդիպած բաներնուս վրայ : — Օրինակ առնենք Իտալիա, հասարակ սովորական

Վերացուցումն :

խորհրդով (հաւանականաբար նախընթաց եւ շատ կանուխ սկսած վարժութեան մը արդիւնքը եղած պիտի ըլլայ առ բանը) ամէն մարդ իբրեւ ամբողջ կը նկատէ ասիկայ, իր մտքին մէջ ծագած մագնիսի մտաւոր հանգամանքը այն մագնիսը իբրեւ ամբողջ մութիւն մը կը բովանդակէ : Երբ՝ առ յօգուածոյ գաղափարը, բոլոր ուրիշ յօգուածոյ գաղափարաց նման, արդեամբք հաւասար է խել մը աւելի տարրական գաղափարներու : Վասն որոյ երբոր հարկ կ'ըլլայ մագնիսին ինչ ըլլալը մէկուն ստորագրել նէ, ուրիշ բան չենք կրնար ըսել, հապա կը սկսինք անոր տարեքրը համընդ : Ծանրութիւն՝ գոյն՝ կարծրութիւն՝ երկաթ քաշելու զօրութիւն ունեցող, եւ այլն, մարմին մըն է կ'ըսենք :

Ուրիշ յօգուածոյ բառ մըն է, եւ անոր նմանը եզոզ մտաւոր հանգամանքն ալ նոյնպէս յօգուածոյ գաղափար մըն է : Բայց թէ որ առ նիւթը չ'տեսած, ինչ բան ըլլալը չ'ըսած մարդու մը օսկի կամ անոր համանշան բառ մը ըսեսնէ, ամենեւին բան մը չ'հասկընար ըսածէդ . վերլուծութեան մտնելու ես, ու դեղին՝ շատ ծանր՝ լուծանելի՝ ծաւալական՝ եւ այլն՝ մարմին մը ըլլալը հասկըցընելու ես որ խօսքէդ բան մը իմանայ : Արկիւնքը արեգակին կը նայինք, սակայն առ գունտին վրայ ինչ գաղափար կըրնայինք ունենալ, թէ որ ձեւի եւ տարածութեան, լուսաւորութեան եւ տարութեան, բոլորակութեան եւ կանոնաւոր շարժման տարրներով չ'կրնայինք նկատել նէ : Արեւն իբրեւ ամբողջ նկատած արտաքին առարկաներնուս վրայ ունեցած բոլոր գաղափարներնիս յօգուածոյ են . եւ բոլոր այսպիսի յօգուածոյ գաղափարներն ալ բաղադրեալ են պարզ գաղափարներէ :

ԳԼՈՒԽ . Ժ

ՎԵՐԱՑՈՒՑՈՒՄՆ

§ 77 . Յօգուածոյ գաղափարաց վերլուծութեանը մէջ վերացուցումն ըլլալը :

Եւրոպացի գիտուն մէջ Յօգուածոյ Իմացական հանգամանաց վերլուծութեանը եւ քննութեանը վրայ եղած ծանօթու-

Թիւնները բնականապէս մէկ ուրիշ նիւթ մը կը բանան առջեւնիս, ան նիւթին հետ մէկ քանի բաներով շատ մօտ կապակցութիւն ունեցող : Հատ անգամ կ'ըլլայ որ ժամանակ առաջ ձեւացուցած մէկ յօդուածոյ գաղափարնուս (հօգ չէ երբ կամ ինչ եղանակաւ ձեւացրնենիս, կամ ինչ տեսակ գաղափար ըլլայ) մէկ քանի մասերուն վրայ՝ այլ եւ այլ պատճառներով՝ կ'ուզենք աւելի բարակ քննութիւն մը ընել : Աս բանը շատ անգամ ալ ան գաղափարը աղէկ մը հասկընալուն բացարձակապէս հարկաւոր կ'ըլլայ : Թէպէտ եւ անտարակոյս ատենօք անոր տարրական մասերը դիտած ենք, սակայն ան ատենը շատոնց անցած գացած ատեն մըն է՝ հիմայ մեզի պէտք է նոր գիտողութիւն մը ունենալ ան գաղափարին վրայ, անոր բովանդակած պարզ գաղափարները կ'ուզենք մէկիկ մէկիկ զատ զատ քննել : Այս աս գործողութիւնը կ'ըլլայ Վերացուցում, եւ ոչ ուրիշ կերպով :

Աս գործողութեամբ մեր յօդուածոյ գաղափարները՝ որչափ բնագործակ ալ որ ըլլան՝ կրնանք, եթէ ներելի է ըսել, մաս մաս բաժնել, եւ տարրական մասերը մէկմէկէ վերացուցանել կամ զտտել. այսինքն՝ ամէն մէկ մասը սովորաբար իրեն հետ կապակցած գաղափարներէն զտտելով մէկ դիտանելով՝ առանձին քննութեան ենթակայ ընել : Աստի երբոր մտաւոր հանգամանք մը աս գործողութեան տակ կ'ընայ, ան մէկմէկէ անջատալ գաղափարները Վերացուցում գաղափարը կ'ըսուին : Ասոր վրայ ըսելիքներնիս բացայայտ ընելու համար՝ երկու կարգ բաժնենք աս գաղափարները, Մասնաւորի եւ Ներհանուրի. որ ըսել է թէ վերացուցումը երբեմն մէկ գաղափարի կամ տարրի վրայ կ'ըլլայ, երբեմն ալ մէկէն աւելի գաղափարաց կամ աւարերց վրայ :

#### § 78 . Մասնաւոր վերացեալ գաղափարներու օրինակներ :

Արդ սկսինք բացատրութեան նախ Մասնաւոր Վերացեալ գաղափարներէն : Աս կարգին օրինակ կրնանք բերել այլ եւ այլ տեսակ գոյներու գաղափարները : Օրինակի աղագաւ, վարդ մը կ'առնենք ձեռքերնիս. տարածութիւն, գոյն, ձեւ, հոտ ունի. բայց մտքերնիս այնչափ կը յստի գոյնին, որ միւս յստակութիւնները գլխովին կը մոռնանք : Ասիկայ տեսակ մը վերացուցումն է, թէպէտ եւ կարելի է անկատար եղած ըլլայ. քանզի թէ որ ենթական առջեւնիս ըլլայ նէ, մտադրութիւննիս որչափ որ մասնաւոր մէկ յատկութեանը կամ որպիսութեանը

Վերացուցում :

տանք ալ նէ, զժուար կ'ըլլայ մէկալները մտքերնուս տեսու-  
թիւնէն բոլորովին զատել հեռացընելը : (Կայ ընդհակառակն  
երբոր աչքերնուս առջին չեղած մէկ առարկայի մը իմացումը  
մտքերնիս զայ, երբոր անանկ բանի մը վրայ խորհինք կամ  
վերբմբնում մը ձեւացընելք, մեր խորհուրդները զիւրաւ ան  
ստարկաներուն գոյնին կրնան զիմել, եւ ան յատկութեանը  
վրայ կրնայ յառիլ ուշադրութիւննիս, առանց անոր միւս յատ-  
կութիւնները, ինչպէս՝ ծանրութիւնը՝ կարծրութիւնը՝ համը՝  
ձեւը՝ եւ այլն՝ մասնաւորաբար նկատելու : Ուզենք նէ կրնանք  
նաեւ մարմնոյ մը (թէ ներկայ ըլլայ՝ թէ, աւելի կատարեալը,  
բացակայ ըլլայ) սերտութիւնը տարածութենէն որոշել, եւ  
կամ մտադրութիւննիս միայն ծանրութեանը՝ կամ երկայնու-  
թեանը՝ կամ լայնութեանը՝ կամ խորութեանը տալ, եւ որ  
յատկութիւնն որ ուզենք նէ՝ անիկայ որոշ ենթակայ ընել մեր  
խորհրդոցը :

Աստի, ինչպէս որ յայտնի բան է թէ մարմնոյ մը յատկու-  
թիւնները որչափ սերտ կապակցութիւն որ ունենան ալ նէ մէկ-  
մէկու հետ ենթակային վրայ՝ մտքին տեսութեանը եւ քննու-  
թեանը մէջ կրնան բաժնուիլ իրարմէ, աս ըսած մտաւոր հան-  
գամանքներնուս վրայ աս ստորոգութիւնը կրնանք ընել : Թէ  
երբոր իրի մը մէկ յատկութիւնը, անանկ մէկ յատկութիւնը  
կամ որպիսութիւնը, որ ինք իրեն առանձին չըլլար, հապա ու-  
րիշի հետ կապակցութեամբ, կը դատենք մտքով ան յատկու-  
թիւններէն կամ որպիսութիւններէն, որոնց հետ սովորաբար  
կապակցութիւն ունի, անոր վրայ ձեւացուցած ծանօթութիւն-  
նիս մասնաւոր վերացեալ գաղափար կ'ըլլայ : — Ես կարգէն եւ  
զող վերացեալ գաղափարներուն որոշիչ նշանն աս է, որ վե-  
րացուցումը մինակ մէկ յատկութեան վրայ կ'ըլլայ : Թերեւս  
աս ալ մասնաւորաբար զրուցել պէտք է, թէ կրնայ ըլլալ որ  
մէկ բանի մը վրայ վերացուցումն կամ անջատումն ըլլայ, քա-  
նի որ ան անջատումը ենթակային վրայ չ'կրնար ըլլալ : Օրի-  
նակի աղագաւ՝ շէնքի մը չափը՝ ձեւը՝ երկայնութիւնը՝ լայնու-  
թիւնը՝ գոյնը՝ եւ այլն՝ կրնաս իրարմէ բաժնել, եւ ամէն մէ-  
կը զատ զատ մտաւոր տեսութեան առարկայ ընել, եւ սակայն  
իրօք եւ գործնականապէս ատանկ անջատութիւն չ'ըլլար նոյն  
խի շէնքին վրայ : Ի՞նչ որ ատ յատկութիւններուն մէկը վեր-  
ցունես, բոլոր միւսներն ալ անոր հետ մէկտեղ կը վերնան :

§ 79 . Մասնաւոր վերացեալ գաղափարաց վերացուցման գործողութիւնը :

Վերացեալ ծանօթութեանց վրայ ըրած խօսքերնուս ընթացքը անանկ կարծիք մը կրնայ տալ թէ վերացուցումը զատ մասաւոր կարողութիւն մը պիտի ըլլայ, մինակ աս մասնաւոր գործը կատարող : Եւ այց ուրիշ մասաւորական կարողութիւններէ որոշ եւ յատկապէս մինակ աս գործիս համար սահմանուած կարողութիւն մը կամ զօրութիւն մը ըլլալուն վարդապետութիւնը հաստատուն վկայութեամբ ապացուցուած չէ : Ճշմարիտին աւելի կը մտենանք, թէ որ վերացուցումը իրբեւ լոկ գործողութիւն մը սեպինք, եւ ոչ թէ կարողութիւն : — Հետեւեալ բացատրութենէն՝ առաջին կարգի, սյսինքն մասնաւոր վերացեալ գաղափարաց ինտոր ձեւանայը ըստ բաւականին կը հասկըցուի :

Մեր պղտիկութեան ամենէն առջի ծանօթութիւնները, թէ զգայարանքներէ ծագած ըլլան՝ թէ ի ներքուստ, պարզ են, եւ ամենքն ալ իրարմէ անկախ եւ զատ . սակայն կը տեսնենք որ շատ շուտ աս պարզ խորհուրդները իրարու հետ կը միանան, եւ անոնցմէ յօդուածոյ մտաւոր հանգամանքներ կը շինուին : Ըստ պարզ գաղափարներ աս կերպով մէկ բաղադրութիւն մը կ'ըլլան, եւ ահա աս է խնդիրնիս թէ աս բաղադրութիւնը ինչպէս լուծելու է, որ տարրական մասերը յօդուածոյութենէ ելլեն առջի վիճակնին մտնեն :

Եսոր պատասխան աս պիտի ըսենք, թէ երբոր մասնաւոր վերացեալ գաղափար մը զատելու կ'ըլլանք, ի հարկէ մէկ նախընթաց որոշում մը՝ ընտրութիւն մը՝ կամական ներգործութիւն մը պիտի ըլլայ : Ես կամական մտաւոր հանգամանքը առջին եղած յօդուածոյ մտաւոր հանգամանքին մէկ մասին աւելի հակումն ունենալու է, քան թէ միւսներուն . կամ թէ ըսենք յօդուածոյ մտաւոր հանգամանքին մէկ մասը միւսներէն աւելի ուժով քաշելու է իրեն ան կամական հանգամանքը : Եւ այդ որ չէ թէ միայն բաղձանք մը, հապա ճշմարտապէս հաստատուն գիտաւորութիւն մ'ալ ունենանք ան յօդուածոյ գաղափարին մէկ մասը մէկալններէն աւելի մասնաւոր կերպով մը գիտելու կամ քննելու : Երբոր մտքերնիս աս կերպով յօդուածոյ ծանօթութեան մը մասնաւոր մէկ մասին կը հակի, ան առենք կը տեսնենք թէ աս բանը կ'ըլլայ . սյսինքն թէ զուգործութեան սկզբունքը՝ կամ ինչ սկզբունք է նէ ատ մասնաւոր մասը մէկալններուն հետ կապող մէկ ընողը, շատ կամ քիչ՝

Վերացուցումք :

ըրած ներգործութիւնը կը դադրեցընէ, եւ միութեան կապը կը կտրի. յայնժամ միւս մասերը շուտով կը բաժնուին անյայտ կ'ըլլան, կը մնայ տեսութեան առարկայ միայն մէկ ան մասնաւոր յատկութիւնը, որուն որ յակած էր մտքերնիս : Որ ըսել է կը վերացուցուի եւ կ'ըլլայ վերացեալ գաղափար : — ()րինակի աղագաւ՝ թէ որ մէկ առարկայի մը, տան մը՝ ծառի մը՝ տունկի մը՝ ծաղիկի մը եւ կամ ասոնց նման ուրիշ բանի մը յօդուածոյ գաղափարը ըլլայ մտքերնուս մէջ, եւ մէկ բաղձանք մը ու դիտաւորութիւն մը ունենանք ան յօդուածոյ գաղափարին մասանցը մէկը՝ գոյնը, մտադրութեան մասնաւոր առարկայ ընել. ասկէց հետեւելիքը աս է, որ երբոր նկատողութիւննիս մասնաւորաբար գոյնին կը դարձընենք, միւս յատկութիւնները մտքերնուս առջեւէն աներեւոյթ կ'ըլլան, եւ անոնց վրայ ալ խորհուրդ չենք ունենար : (Թէ որ դիտաւորութիւննիս մէկ առարկայի մը ծանրութիւնը կամ տարածութիւնը դիտել ըլլայ, դարձեալ աս է ըլլալիքը. ուրիշ խօսքով՝ ան բանին տարածութիւնը՝ գոյնը՝ ծանրութիւնը՝ եւ այլն՝ մտադրութեան որոշ եւ զատ զատ առարկաներ ըլլալով, միւսներէն կ'որոշուին, վերացեալ գաղափարներ կ'ըլլան :

Վերեւնայ թէ աս է մասնաւոր վերացեալ գաղափար ձեւացընելուն մտաւոր գործողութիւնը, եւ ոչ ուրիշ բան. այսինքն է, կամական ներգործութեան մը յօդուածոյ գաղափարի մը մէկ մասնաւոր մասին շտկուիլը. եւ հետեւաբար ատ մըտաւոր ընտրութեան առարկայ եղող մասնաւոր մասին մէկ դիքաշուիլ զատուիլը. եւ աս միջոցիս միւս մասերուն բնականապէս եւ ի հարկէ աներեւութանալը :

§ 80 . Ընդհանուր վերացեալ ծանօթութիւնք ըսելով սեռ եւ տեսակ կը հասկըցուի :

Վանք երկրորդ կարգի վերացեալ գաղափարաց : — (Նշանուոր Վերացեալ գաղափարք ոչ միայն մասնաւորներէն տարբեր են՝ անոնցմէ աւելի տարերք բովանդակելովն, այլ ուրիշ յօդուածոյ ծանօթութիւններնուս մեծ մասէն ալ կ'որոշուին : — ()րինակի աղագաւ մէկ անհատի մը, (Յօհաննէսին՝ Պետրոսին՝ Թորոսին վրայ ձեւացուցած գաղափարնիս յայտնի է թէ յօդուածոյ է, եւ սակայն ընդհանուր գաղափար չենք կրնար ըսել : Վասնապէս մասնաւոր ձիւ մը, մասնաւոր ծառի մը վրայ ունեցած գաղափարնիս յօդուածոյ գաղափար է, բայց ընդհանուր չէ : (Ստակ որոշմանք մը կայ ասոնց ու ընդ-

Վերացուցումն :

Հանուր գաղափարաց մէջ , թէպէտ կրնայ ըլլալ որ առջի բն-  
քանը կատարելագէտ յայտնի չերեւնայ : Ընդհանուր վերացեալ  
գաղափարք կ'ըսենք նէ , իրերու կարգերուն կամ դասերուն վը-  
րայ , այսինքն Սեռի եւ Տեսակի վրայ ունեցած ծանօթու-  
թիւններնուս համար է : Ըս ծանօթութիւնները ընդհանուր ա-  
նուններով կ'արտայայտենք , խիստ շատ անգամ առանց սահ-  
մանի մը տակ խօթելու ըսածնիս , ինչպէս՝ երբոր կենդանի՝  
մարդ՝ ձի՝ թռչուն՝ ոչխար՝ ծառ՝ եւ այլն՝ բառերը կը գործա-  
ծենք , ոչ թէ խօսքերնիս ան այլ եւ այլ կարգերէն եղող մաս-  
նաւորի մը վերաբերելով , այլ ընդհանուր առմամբ :

§ 81 . Կարգաւորութեան գործողութեանը կամ սեռ եւ տեսակ  
յօրինելուն վրայ :

Երգ՝ թէ որ մեր ընդհանուր վերացեալ գաղափարները , ա-  
նոնք որ արտաքին առարկաներու կը վերաբերին , իրացընէ Սե-  
ռի եւ Տեսակի ծանօթութիւններ են նէ , ուրեմն անոնց ինչ  
ըլլալը աղէկ մը հասկընալնուս օգնութիւն մը կ'ըլլայ , թէ որ  
աս սեռին ու տեսակին ինչպէս յօրինուիլը համառօտաբար քըն-  
նենք : Ստոյգ գիտենք որ աս կարգաւորութիւնը ընելը գործ-  
նական դժուարութիւն մը չունի , քանզի մարդիկ անթիւ բա-  
ներու մէջ աս կարգաւորութիւնը կ'ընեն , եւ ան ալ շատ կա-  
նուխ՝ մանկութենէ սկսելով : Ընանկ կ'երեւնայ թէ աս գոր-  
ծողութիւնը որոշ եւ միօրինակ մտաւորական բերմանց կամ  
հակամտութեանց իշխողութեամբ կը կատարուի : — Ուրեմն  
ի՞նչ եղանակաւ կ'ըլլայ աս կարգաւորութիւնը , իրօք եղած-  
ներուն նայելով : Ատիս եւ առաջ աս յայտնի է՝ թէ առանց  
երկու իրեք բան մէկտեղ դիտելու՝ կարգաւորութիւն չըլլար :  
Վասն որոյ խել մը բան ըլլալու է առջեւնիս , որոնց ամէն մէ-  
կը նախ ըստ ինքեան եւ ապա միւսներուն հետ բաղդատամբ  
պիտի քննուին : Ըս որ ըլլայ նէ , անկէ ետեւ կը սկսի գործ-  
ղութիւնը , որուն ինչպէս ըլլալը ընտանի օրինակով մը բա-  
ցատրենք :

Վիցուր թէ նաւարկելի գետի մը եզերք կայներ ես , կը  
տեսնես ջուրին հոսելը , գետին վրայ կախուած սեպացեալ ժայ-  
ռերը , երկու գին շարուած ծառերը , նաւակներ եւ նաւափար-  
ներ գետին մէջ , եւ գետէն ջուր խմելու վաղող արջառներ  
եւ ոչխարներ : Ըսանկ տեսարան մը ըլլայ նէ առջեւդ , միտքդ  
չուտ մը անոնց ամէնքն ալ մէկիկ մէկիկ՝ եւ բոլորը մէկէն առ-  
նելով՝ կը զննէ , աս զննութիւնը ու հետազօտութիւնը շատ

Վերացուցումն :

չ'ըջեր, տեսակ տեսակ համաձայնութիւններու եւ տարբերութիւններու առնչութիւններ կը տեսնէ ան բաներուն մէջ : Ա'իմանայ որ այնինչ բաները էապէս նման են իրարու, ոմանք ալ էապէս աննման, ուստի անոնց ամէնքն ալ մէկ կարգ չ'դասեր, հապա մէկ որոշում մը կ'ընէ, ու այլ եւ այլ տարբեր կարգեր կը յօրինէ : Արջառները եւ ոչխարները ամէն մէկ տեսակը իր կարգը կը դասուի : Գետին եղերքի բարձր եւ տերեւալոց մարմինները, թէպէտ մէկ քանի բաներով իրարմէ տարբերութիւններ ունենան, սակայն ուրիշ այնչափ բաներու մէջ մէկ կ'երեւնան, որ անոնք ալ ուրիշ կարգ մը կ'ըլլան եւ ընդհանուր անուամբ ծառ կ'ըսուին : Չ ուրին երեսը նաւերը վարող կենդանի՝ շարժուն՝ բանական էակները ուրիշ կարգ մը կ'ըլլան, ու կ'ըսուին հարգ : — Ի՞նչ որ ուրիշ տեսած գիտած բաներնուս վրայ ալ աս նոյն գործողութիւնը ասանկ կը կատարուի, եւ աս նոյն արդիւնքը ասանկ յառաջ կու գայ :

§ 83 . Ի սկզբան ըրած կարգաւորութիւններնիս երբեմն սխալ կ'ըլլան :

Օ՞րանուցինք որ որոշ եւ միօրինակ մտաւորական բերմանց իշխողութեամբը կը յօրինեն մարդիկ աս կարգաւորութիւնը : Սակայն աս ալ գիտնալու է որ երբեմն սխալմունք կ'ըլլայ, մասնաւորապէս մարդկային ընկերութիւնը նոր աչքբնուս առջին բացուած ժամանակները, եւ որ ատեն որ աղէկ քննութիւն եւ բաղդատութիւն ընելու յարմարութիւնները պակաս ըլլան : Առջի բերանը երբոր բնութիւնը մարդուս աչքին առջեւը կը բացուի, (մարդուս տղայութիւնն ալ անանկ վիճակ մըն է որ ուր որ երթայ նէ նորեկ կը գանէ ինքզինքը,) այնչափ բաղձաթիւ տեսակ տեսակ նոր եւ հետաքրքրական բաներ կ'երևն գիմացը որ՝ ամենէն ալ փափաքը լեցընել ուղեւով՝ մի եւ նոյն ժամանակը ամենուն մէկտեղ մտադրութիւնը կ'ուղղէ, որով անոնց տեսակական տարբերութիւնները չ'տեսներ եւ քիչ շատ ամէնքն ալ իրար կը խառնէ. որ եթէ հանգարտութեամբ շիտակ քննութիւն ընելընէ, ասանկ պիտի չըլլար : Ա՛սան որոյ տղայութեան ատեն ըրած սեռի տեսակի կարգաւորութիւններնէս ոմանց վերջը սխալ ելլելը զարմանալու բան մը չէ :

Ի՞նչ ետքէն երբոր շատ կամ քիչ գիտութիւն կը գանձենք մտքերնուս մէջ, ու տրամաբանութիւննիս եւ դետողութիւննիս աւելի կատարելութեան կը հասնի, աս սխալմունքները կը տեսնենք կը շիտկենք. մէկ մասնաւոր մը տիրապէս իրը չեղող տեսակի մը տակ ենք դասեր նէ, անիկայ անկէց կը



գատենք. նոյնպէս եւ տեսակը բուն իրենը չեղող սեռէն : Ամենէն վայրենի՝ տգէտ մարդիկ անգամ ժամանակին իրենց սըլաալմունքը կը տեսնեն աս բանին մէջ ու շիտակը կը գտնեն :

§ 83 . Սկիզբները ըրած կորդաւորութիւններնու վրայ բացատրութիւն :

Խօսքերնու կարգը կը բերէ բնականապէս՝ որ մէկ երկու գիպուածներու պատմութիւն գնենք հոս, որոնք քննած նիւթերնու աս մասին բացատրութիւն մըն են : Բացատրելիքնիս աս պարզ ճշմարտութիւնն է, թէ մարդիկ դիւբաւ կ'իմանան տեսած բաներնու մէկմէկու հետ ունեցած նմանութիւնները, եւ հակամիտութիւն մը կը ցուցնեն ան բաները իրենց ան նըմանութեանցը համեմատ կարգաւորելու : Իբրեւ բացատրութիւն աս բանիս, նախ յիշենք Վասպար Հողրին պատահածը : Վասպար երբոր բանտն էր<sup>1</sup>, իրեն զխաւոր զբօսանք ըրած էր երկու պղտիկ փայտէ ձի, զորոնք՝ իր խորին տգիտութեամբը՝ կենդանի եւ զգայուն էակ կը կարծէր : Բանտէն երբոր ելաւ, իր վարուցը պատմիչս կ'ըսէ՝ թէ «ինչ կենդանի տեսէր նէ, թէ քառտանի ըլլային՝ թէ երկոտանի, թէ շուն՝ թէ կատու՝ թէ սագ եւ թէ հաւ, ամենուն ալ ձի կ'ըսէր» :

1814ին Ռիդքէյրնի բնուած կզզին, որ խաղաղական ովկիանոսին մէջ առանձին կզզի մըն է, երկու Մնգզիացի պատերազմական նաւ կը հանդիպին : Արկու երիտասարդ՝ ատ կզզիէն, որոնց ունեցած հմտութիւնը ի հարկէ խիստ սահմանաւոր եղած պիտի ըլլայ, կ'ելեն աս նաւերուն մէկը կու գան : «Մասնք, կ'ըսէ պատմութիւնը, սյնչափ նորատեսիլ բաներ, նաւին մեծութիւնը՝ հրացանները եւ ուրիշ այլ եւ այլ կարասիքները տեսնելուն՝ ապշած մնացին : Աով մը կար նաւուն մէջ, ասիկայ որ տեսան նէ, առջի բերան քիչ մը վսխցան, եւ տարակուսեցան թէ ինչ պիտի ըլլայ աս կենդանին. խոշոր այծ է արդեօք, թէ եղջերաւոր խոզ. քանզի աս երկուքէն ի զատ ուրիշ չորբոտանի տեսած չէին խեղճերը» : Մասնիկ շատ ուրիշ օրինակներ ալ կը յիշեն ճամբորդները, որոնց մէջ ալ աս նոյն կարգաւորութիւն ընելու հակամիտութիւնը կը տեսնուի. բայց մեզի սյսչափը հերիք է :

<sup>1</sup> Տէն Ժան. էրէն 63 :

§ 85 . Թէ ի՞նչ են ընդհանուր վերացեալ գաղափարք :

Ըմէն կարգաւորութեան գործողութեան մէջ ան կարգաւորութեամբը ունեցած ծանօթութիւններնիս աս նիւթիս վերաբերութիւն ունեցող գրուածքներու մէջ սովորաբար (Նդհանուր Վերացեալ գաղափարք կ'ըսուին : Այլ աս վերացեալ գաղափարները մեր բոլորտիբը ամէն տեղ գտնուած բաներուն անհամար տեսակներէն պակաս չեն թուով : Ըս կարգաւորութեամբ է որ կենդանիի եւ կենդանեաց այլ եւ այլ տեսակներուն վրայ, ծառի եւ տունկերու բազմաթիւ տեսակներուն վրայ, հողերու եւ հանքերու վրայ, եւ բոլոր ուրիշ կարգաւորութեան եկող բաներու վրայ ընդհանուր գաղափարներ կը ձեւացընենք :

Իսոյց աս ալ նկատելու է՝ թէ աս ընդհանուր գաղափարները, ինչ եւ իցէ բանի վրայ որ հաստատուած ըլլան, ան բաներուն ամէն մէկ մասնաւոր որպիսութիւնները չեն բովանդակեր : Իսումբ մը մարդոց վրայ նայինք՝նէ, կը տեսնենք որ ամէնքն ալ այսինչ այնինչ բաներով, հասակաւ՝ գոյնով՝ ձայնի եղանակաւ եւ ուրիշ մասնաւոր բաներով տարբեր են իրարմէ : Ս'եր միտքը մինակ այն երեւոյթներուն եւ յատկութիւններուն կը նայի, որոնցմով որ նմանութեան գաղափար մը կրնայ ձեւացընել . այսինքն՝ մինակ այն երեւոյթներուն եւ յատկութիւններուն կը նայի, որոնցմով որ զիտած մասնաւորները իրարու նման են կրնայ ըսուիլ տիրապէս : — Ըրդ՝ ան յօդուածոյ մտաւոր հանգամանքը, որ աս նմանութիւն հաստատող յատկութիւնները միայն կը պարունակէ, եւ ասոնցմէ ի զատ ոչ մէկ ուրիշ բան մը, (բաց ի ան յաւելուած գաղափարէն, թէ աս յատկութիւններէն ունեցող ուրիշ մարմիններ ալ կան,) ան մտաւոր հանգամանքին կ'ըսենք ընդհանուր Վերացեալ գաղափար :

Այլ Վերացեալ ըսուելին ալ բուն աս բանիս համար է : Ըս տեսակ ծանօթութեանց Վերացեալ կ'ըսենք . ինչո՞ւ . անոր համար որ մինչդեռ շատ մը մասնաւորներ կը պարունակեն՝ այսինչ այնինչ բաներով զանոնք մէկմէկու նման գտնելով, անգին խել մը ուրիշ յատկութիւններ ալ, որոնցմով ան բաները կը տարբերին մէկմէկէ, կը զատեն մէկ զի կը ձգեն : Թէ որ աս մէկ քանի մասանց խտրութիւնն ու բաժնուիլ ձգուիլը չըլար նէ, աս ծանօթութիւնները՝ իրենց ամբողջութիւնովը տանելով՝ ուրիշ կերպով չէինք կրնար նկատել, բայց եթէ

իրրեւ մասնաւոր մասնաւոր անհատներ : — Բնդհանուր գաղափարք կ'ըսուին, աս պատճառաւ, որ աս յիշեալ ընտրութիւնովն ու որոշմամբը անանկ յատկութիւններ կը պարունակեն իրենց մէջ, որոնք չէ թէ միայն մէկ՝ հասպա շատ բաներու վերայ կը գտնուին :

§ 85 . Ընդհանուր վերացուցման օգտակարութիւնը՝ թուելու կողմանէ, եւ այլն :

Բնդհանուր վերացեալ գաղափարներ ձեւացընելու կարողութիւնն որ ունի մտքերնիս, խիստ մեծ գործնական օգուտներու պատճառ է : Ըս վերացուցմամբ մարդուս մտքին ներդրածութիւններուն, մասնաւորաբար տրամաբանելու կարողութեանը ինչ աստիճան զօրանալը դիւրաւ հաշիւի գալու բան չէ : Բնդհանուր վերացեալ առաջարկութիւններով մէկ երկու իմաստի մէջ հատորներ կրնանք սղմեցընել. այսինքն՝ մէկ քանի իմաստի մէջ բովանդակեալ եւ բացայայտեալ ճշմարտութիւնները մասնաւոր առումներով հատորներ կը լեցընեն :

Ըսանց ընդհանուր գաղափար ձեւացընելու կարողութեան անհնարին կ'ըլլար Բուէլը, մինչեւ անգամ ամենափոքր թիւ մը : Իսկ մը բան մէկտեղ բերելով՝ իրրեւ բազմութիւն մը տածել եւ այնպէս համրել չ'սկսած՝ կը տեսնենք որ անոնց մէկ հասարակ անուն մը տալ հարկ է : Ըս հասարակ անունը՝ ինչուան որ ան բաները մէկ սեռի մը չ'դարձընենք նէ՝ չենք կրնար տալ. սեռ յօրինելն ալ վերացուցանել ըսել է. ուրեմն յայտնի է որ առանց վերացուցանելու կարողութեան կամ աւելի աղէկ է ըսել գործողութեան՝ թուել չէր ըլլար : — Ըս դիտողութիւններէն կը տեսնենք թէ որչափ մեծ գործնական օգտակարութիւն ունի իմացականին ընդհանուր վերացուցումն ընելու ներգործութիւնը : Ըսանց թուելու կարողութեան, երբոր անանկ հետազօտութեան մը գայինք՝ որ թուել պէտք ըլլար, ան տեղը կանկ պիտի առնէինք. առանց կարգաւորելու կարողութեան, բոլոր մեր հայեցողութիւնները մինակ մասնաւորաց վրայ պիտի ըլլար, եւ ամենեւին ընդհանուր տրամաբանութիւն պիտի չ'կրնայինք ընել :

§ 86 . Ընդհանուր վերացեալ ճշմարտութեանց կամ սկզբանց վրայ :

Բնդհանուր վերացեալ գաղափարներէ ի զատ՝ ընդհանրու-

Թիւն ունեցող վերացեալ ճշմարտութիւններ կամ սկզբունքներ ալ կան, որ ստոնց ալ քիչ մը մտադրութիւն ընել արժան է, մանաւանդ գործնականապէս առնելով : Թէպէտ եւ ինչուան հիմայ խօսածներնիս հերիք են վերացուցման օգտակարութիւնը ցուցնելու, սակայն թերեւս փափաքելի ըլլայ աւելի ընդարձակ համութիւն մը տալերնիս անոր ինչ բաներու վերարբերելուն վրայ :

Ընդհանուր վերացեալ ճշմարտութիւններ կամ սկզբունքներ ձեւացընելու ներդրածութիւնը կ'երեւնայ թէ աս կերպով կ'ըլլայ : Ասիս եւ առաջ անշուշտ պէտք է որ մասնաւորաց, անհատական իրերու եւ հանգամանաց եւ առանձին դիպումաներու վրայ քննութիւն ընենք եւ անոնց վրայ պէտք եղած հմտութիւնը ստանանք : Յետոյ աս հետազոտութեան մէջ ինչ բաներ որ ստուգեցինք նէ՛ անոնց ճշմարտութիւնը կը հաստատենք, ան նոյն բաները ուրիշ նման իրերու եւ դէպքերու մէջ ալ նկատելով : Աս բանը ընելու համար՝ մեկ անհատէն մեկալը խել մը դիտողութիւններ կ'ընենք, ինչուան որ ալ տարակոյս մը չ'մնայ հաստատելու ետեւէ եղած բաներնուս ստուգութեանը : Ասանկով երբոր մեկ ընդհանուր ճշմարտութեան մը կամ սկզբան մը կը հասնինք, ալ անկէ ետեւ ան մասնաւոր իրերուն եւ դիպումաններուն քննութիւնը, որոնց վրայ որ հիմնեցինք գտած ճշմարտութիւններնիս, մեկ դի կը ձգենք, եւ ան սկզբունքը կամ ճշմարտութիւնը միայն զատուցմամբ եւ վերացականապէս մեր մտաւոր դիտողութեանցը ենթակայ կ'ընենք : Աս գործողութիւնը կրկին եւ կրկին շատ հեղ կը կատարենք, ինչուան որ մտքերնիս բաղմաթիւ մասնաւորներով ըզբաղելուն տեղը, ընդհանուր ճշմարտութիւններով կը զարդարուի : Ատքը աս ճշմարտութիւնները մէկտեղ կը բերենք ու կը տրամաբանենք կը բաղդատենք, եւ անոնցմէ ալ ուրիշ ճշմարտութիւններ կը հասնենք աւելի ընդարձակ :

§ 87 . Փիլիսոփայից եւ ուրիշներուն հայեցողութեանցը վրայ :

Վասընթաց յօդուածին մէջ ըսածնիս կը բերէ որ աս դիտողութիւնն ալ ընենք, թէ փիլիսոփայական մտքի տէր եղողներուն եւ հասարակ մարդոց հայեցողութեանցը մէջ մեկ որոշիչ տարբերութիւն մը կայ, որուն արժան է քիչ մը մտադրութիւն ընել : Աս երկու տեսակ մարդոց մէջ եղած աս տարբերութիւնը փիլիսոփայից ուրիշներէն աւելի երկար եւ ընդարձակ տրամաբանութիւն ընելու սովորած ըլլալէն չէ այնչափ :

Հապա գլխաւորապէս աս բանէն է, որ անոնք աւելի սովորած են ընդհանուր գաղափարներ եւ ընդհանուր բառեր գործածելու, որ ասանկով ըրած տրամաբանութիւններնէն հանած եղբակացութիւններնին ալ ընդհանուր ըլլալով՝ շատ բան կը պարունակեն: Այս աս իրենց ընդհանուր տրամաբանութիւններ ընելը, թէպէտ եւ անոնցմէ հանած եղբակացութիւններնին՝ իրենց մասնաւոր առմունքներովը՝ զարմանալի հնարագիտութիւններ են, սակայն եւ այնպէս կարծուածին չափ դժուարին գործ մը չէ: Այնչափ անգամ եւ այնչափ երկար ժամանակ ընդհանուր գաղափարներու եւ ընդհանուր առաջարկութիւններու վրայ նայած են. այնչափ սովորած են իրերու ընդհանուր բնութիւնը գննելու, զատելով մէկ դի ձգելով անոնց աւելորդ եւ տեսակարար պարագաները, որ աս բանը ուսուցանելու մը եղած է իրենց, եւ առանց դժուարութեան միշտ կը կատարեն աս գործողութիւնը: Ասանկ մարդոց՝ մէկ մարդու մը իր հասարակ գործերը աղէկ կարգի մը գննելու համար որչափ միտք հոգնեցընել պէտք է նէ, անկէ եւել մտաւոր աշխատանք պահանջող գործ մը չէ աս բանը:

Աս փիլիսոփայից հայեցողութիւններէն տարբեր են մարդոց մեծ մասին հայեցողութիւնները, թէ իրենց ենթակայ ըրած բաներնին եւ թէ անոնցմէ ըրած մակածութիւններնին մասնաւոր ըլլալուն համար: Ասոնք մէկ անկարողութիւն մը կը ցուցընեն իրենց տեսութիւնը շատ անհասանելի ընդհանուր առաջարկութեանց տարածելու: Առկ ձեռնարկութիւն ընելու, մասնաւոր բաներու վերաբերեալ առաջարկութիւններ մէկմէկու հետ բաղդատելու եւ անոնցմէ եղբակացութիւններ հանելու կարողութիւններնին շատ զօրաւոր կրնայ ըլլալ. բայց երբոր ընդհանուր առաջարկութիւն մը դիտելու որ գան նէ, մտքերնին կը շփոթի, եւ անկէ ելած եղբակացութիւնը, թէ եւ ինչ տրամաբանութեամբ ըլլալը շատ բացայայտ առջեւնին դըրուի, իրենց մութ բան մը կ'երեւնայ:

## ԳԼՈՒԽ ԺԸ

## ՄՏԱԳՐՈՒԹԻՒՆ

§ 88 . Մտադրութեան ընդհանուր բնութեանը վրայ :

ՄՏԱԳՐՈՒԹՅԱՆ վրայ՝ իբրև զատ իմացական կարողութիւն մը՝ խօսիլ հարկ չ'ստեպելով, թէ եւ ոմանք հարկաւոր սեպեն, այսչափ մը բանք նէ հերիք կ'ըլլայ, թէ Մտադրութեան ըսելով մտադրուս մտքին ան հանգամանքը կ'իմանանք, երբոր մէկ զգայական կամ իմացական առարկայի մը կը յառի ժամանակ մը, առանց ուրիշ բանի մը նայելու : Այրբոր թէ արտաքին բանի մը ըլլայ՝ թէ ներքին խորհրդածութեան առարկայի մը մտադրութիւն կ'ընենք, նէ, խելքերնուս հասածին չափ որոշում ընելով՝ կը տեսնենք որ աս բանը կ'ըլլայ, այսինքն թէ մտքերնիս այսինչ չափ ժամանակ՝ ան իր մտադրութեան առարկան ինչ որ է նէ՛ անոր հետ կը զըսողի, եւ թէ ան միջոցին ուրիշ ամէն բան անտես կ'առնուի : Ուրիշ խօսքով՝ իմացական կարողութիւննիս իրեն առարկայ ըրած բանին վրայ անբաժան եւ անընդհատ շարունակութեամբ մը հայեցողութիւնը յառաջ կը տանի : — Իսկ ամէնը աս չէ. բաց ի աս որոշ ու զատեալ մտաւորական իմացումէն՝ կամական ներդործութիւն մ'ըն ալ կայ՝ ան իմացումը այս կամ այն բանին տանող, ենթակային վրայ հաստատող ու զօրացընող : Ընդհանուր ար ամէն մտադրութեան ներդործութիւն յօգուածոյ մտաւոր հանգամանք մը պիտի սեպենք, որ կը պարունակէ ոչ միայն ընդ իմացում մը կամ կարգ մը իմացմունք, այլ նաեւ կամական ներդործութիւն մըն ալ՝ բաղձանաց կամ պարտականութեան զգացման մը վրայ հիմնեալ : Ըս ընդհանրապէս բաղձանաց կամ շահախնդրութեան զգացումէ մը շարժեալ կամական ներդործութիւնն է որ միտքը մէկ դրութեան մը մէջ կամ մէկ բանի մը վրայ հաստատուն կը պահէ :

89 . Այլ եւ այլ աստիճան մտադրութեանց վրայ :

Աս նիւթիս վրայ ունեցած տեսութիւններնուս համաձայն ,

## Մտադրութիւն :

մտադրութեան ուժգինը՝ թեթեւը կամ շատը՝ քիչը կ'ըլլայ, ինչպէս որ գիտէ ամէն մարդ: Երբոր մտքին մէկ բանի մը վերայ ունեցած տեսութիւնը վայրկեանական տեսութիւն է, եւ մտադրութեան ժամանակ ընդհանրապէս մտքին տեսութեանը հետ մէկտեղ միացած շարժութեան ուժգնութիւնը կամ կամական ներդրութեան զօրութիւնն ալ Հ'կայ նէ, անատենը մըտադրութիւնը թեթեւ կ'ըլլայ: Իսկ ընդհակառակն երբոր միտքը մէկ առարկայի մը կամ խել մը առարկաներու կը ձկտի ուժգնութեամբ եւ խել մը ատեն, եւ ամենեւին ուրիշ բանի մը չ'նայելով, անատենը մտադրութիւնը ուժգին կ'ըլլայ:

Մենք ընդհանրապէս առջի բերանը մտադրութեան ինչ աստիճան ըլլալը մտքին իրեն առարկայ ըրած բանին զբաղած ժամանակին տեւողութեանէն կը դատենք: Իսկ երբոր քիչ մ'ալ յառաջ երթանք նէ, պիտի տեսնենք որ ան ժամանակի տեւողութիւնը մտադրութեան հետ միացած բաղձանաց կամ շահանգրութեան շարժութեանը զօրութենէն եւ յարակայութենէն կախեալ է: Աւտի ո՞ր եւ իցէ մասնաւոր պարագայի մէջ մտադրութեան աստիճանը չափելու համար՝ չէ թէ միայն ժամանակին տեւողութիւնը, հապա նաեւ զգացման զօրութեանըն ալ նայելու ենք. քանզի առջինը երկրորդին արդիւնքը եւ մէկ մտքով մը անոր չափն է:

Մէկ բանի մը միայն մէկ թեթեւ մտադրութիւն մը ընել կ'ըցող, միտքը մէկ առարկայի մը վրայ հանգարտ՝ հաստատուն եւ ուժգնութեամբ պահել Հ'կըցող մարդու օրինակ ամէն տեղ լեցուն է. անանկ օրինակներ ալ կան, որոնց վրայ աս ուժը ան աստիճան զօրացած է, որ յիրաւի դիտելու արժան բաներ են: Ընանկ չափաբերներ եղած են, որ կարող են եղեր ամէն խառնակութեան եւ վրդովման մէջ ամենազօռար եւ ամենախառն նախադասութիւններ հետազօտել: Զուլիոս Կեսարին համար ըսուած է թէ՛ ինք հրովարտակ գրած ատենը չորս ուրիշ հրովարտակներու խօսքերն ալ նոյն միջոցին կ'ընար ըսել ու քարտուղարները կը գրէին, եւ թէ որ իր ձեռքը գրելու բան մ'որ չըլլար նէ, եօթը տեսակ հրովարտակը մէկէն կ'ընար գրել ալ: Ըս նոյն բանը՝ Կարոլէոն Պոնաբարթիին համար ալ կը պատմուի, որ մէկ զարմանալի կարողութիւն մը ունէր մտքին բոլոր զօրութիւնը դիմացն ելած բանին ուղղելու:

§ 90. Յիշողութեան մտադրութենէ կախեալ ըլլալը :

Իմացական փիլիսոփայութեան մէջ կ'երեւնայ թէ յիշողու-

Թեան մտադրութենէ կախեալ ըլլալուն վարդապետութենէն աւելի բացայայտ հաստատուած վարդապետութիւն չ'կայ : Զիշողութիւնը մտադրութենէ կախեալ է, այսինքն՝ մտադրութիւնը որչափ քիչ ըլլայ նէ, յիշողութիւնն ալ այնչափ տկար կ'ըլլայ. մտադրութիւնը որչափ շատ ըլլայ նէ, յիշողութիւնն ալ այնչափ երկարատեւ կ'ըլլայ : — Ասոր ասանկ ըլլալը հաստատող շատ իրողութիւններ կան :

ա. Ստէպ ստէպ աչքերնին քթթելու ունակութիւն ունեցող մարդիկ մէկ օրը գուցէ հաղարաւոր անգամ աչքերնին կը գոցեն կը բանան, եւ ամէն անգամ աչքերնին գոցելուն ի հարկէ բոլորովին մութը կը մնան : Հաւանականաբար ասոնք աչքերնին գոցելին ալ մութը մնալնին ալ կ'իմանան միշտ. բայց իրենց մտադրութիւնը գլխաւորապէս ուրիշ բաներու հետ ըլլալուն համար, բոլորովին կը մոռնան եղածները, ոչ աչք գոցելին կը յիշեն, ոչ մութը մնալնին :

բ. Մէկ մարդ մը երբոր եռանդով խօսքի կ'իյնայ կամ մէկ հետաքրքրական հայեցողութեան մը ետեւէ կ'ըլլայ, եղած սենեկին ժամացոյցը կը վարնէ, ինք չիմանար : Ուրիշ ատեն ալ կանջը ինչպէս որ կը լսէր նէ, ան անգամուն ալ կը լսէ անշուշտ. բայց ան ձայնի իմացմանը մտադրութիւն չընելուն ու իր խորհուրդները ուրիշ բանի հետ ըլլալուն, անմիջապէս կ'եւլէ մտքէն :

գ. Յորեկուան բազմադիմի զբաղմունքներուն՝ հոգերուն եւ աշխատութիւններուն մէջ հաղարաւոր բաներ առանց մեր դիտելուն կ'անցնին կ'երթան. անանկ կ'երեւնայ թէ ոչ կը տեսնենք, ոչ կը լսենք, եւ ոչ ինչ եւ իցէ մէկ ներգործութիւն մը կ'ընդունինք ատ բաներէն : Բայց երբոր իրիկուն կ'ըլլայ, սրտմաշուքները՝ աշխատութիւնները կ'երթան վրաներնէս, եւ ընդհանուր հանդարտութիւնը կը տիրէ բոլոր բնութեան մէջ, անատեն մէկ նոր զգացում մը ունեցածի պէս՝ ամենէն պըղտիկ ձայնը կը քաշէ մտադրութիւննիս :

Աս նոյն սկզբան վրայ է որ ջրվէժներու մօտերը բնակողները անանկ կը ցուցնեն որ իրբեւ թէ ձայն չեն իմանար : Մինչեւ անգամ՝ Արիակարայի մեծ ջրվէժին մօտը բնակողները մէկ մեծ ազդեցութիւն մը չեն ընդունիր ջուրին ձայնէն, քանի որ բոլոր ուրիշ մարդոց ականջին անընդհատ՝ անվախճան որոտմունքի պէս կու գայ : — Ասոնց ամենուն պատճառը նոյն վերը ըսածնիս է. մտադրութիւն չեն ըներ, յիշողութիւն ալ չըլլար, եւ հետեւաբար արգեամբ իմացումն ալ չեն ունենար :

դ. Արբոր գիրք մը կը կարդանք, չէ թէ միայն բառերը իրբեւ ամբողջ կը նկատենք, հապա ան բառերը կազմող ամէն մէկ



գիրը եւ մինչեւ անգամ ան գրերուն մանր մասերը աչքէ կ'անցընենք : Իսկ լոկ հայեցուածք մըն է կ'անցնի կ'երթայ . վայրկեան մը մտադրութիւն չենք ընել ու անմիջապէս կը մոռնանք , եւ շատ դժուար կ'ըլլայ ետքէն ինքզինքնուս հաւտացընելը թէ ան գրերուն բոլորն ալ իրօք իմացանք : Ես բանիս , այսինքն սովորական ընթերցմունքի մէջ բառերուն ամէն մէկ գիրը աչքէ անցընելուս իրաւ ըլլալուն յայտնի ապացոյց մըն է աս , որ երբոր բառի մը մէկ գիրը ձգուած կամ տեղը ուրիշ գիր գրուած ըլլայնէ , դիւրաւ կը տեսնենք սխալմունք ըլլալը :

Ե . Փորձ հաշուարար մը գրեթէ մէկ նայուածքով երկար բարակ սիւն մը թուանշան կրնայ գումարել : Այրկեան մը չ'քշեր կը կատարէ գործողութիւնը , եւ սակայն անսխալ գումարը կը հանէ : Հայտնի է թէ անհնար բան է որ առանց բոլոր թուանշանները մէկիկ մէկիկ դիտելու եւ քանի միութիւն ունենալին ստուգելու՝ գումարը գտնէ . բայց այնչափ քիչ մտադրութիւն կ'ընէ աս բանիս , որ ետքէն չ'կրնար յիշիլ ամէն մէկուն զատ զատ դիտողութիւն ընելը :

Եսանկ շատ իրողութիւններէ յայտնի կը տեսնենք որ յիշողութիւնը մտադրութենէ՝ կամ աւելի աղէկ է ըսել՝ մտադրութեան շարունակութենէ կախեալ է , եւ աս շարունակութիւնը որչափ ըլլայ նէ , յիշողութեան մնայունութիւնն ալ այնչափ կ'ըլլայ :

§ 91 . Կարգալու ատեն մտադրութիւն ընել :

Թէ որ յիշողութիւնը՝ ինչպէս որ տեսանք՝ մտադրութիւնով կ'ըլլայ , ուրեմն ասկէ մեզի խիստ օգտակար եւ կարեւոր գործնական կանոն մը կրնանք հանել , որ է այս . Ընտրութեամբ լեւանհոգութեամբ Բան չ'կարգալ , կայս Լարիտար Եղածին շափ խընամով է խորհրդածութեամբ : — Եսանկ կանոն մը ըսելուս պատճառը հարցընող ըլլայնէ , հաստատուն եւ հաւանելի պատճառնիս վերը յիշուած իրական ճշմարտութիւնն է , թէ առանց մտադրութեան յիշողութիւն չըլլար . կամ թէ՛ յիշողութեան զօրութիւնը մտադրութեան աստիճանին համեմատ կ'ըլլայ : Շատ բաներու հմուտ ըլլամ ըսելով խելքերնուս բովանդակելիքէն եւել բաներու ետեւէ ըլլանք , եւ՝ ինչպէս որ ասանկ ճամբայ մը բռնելէն ի հարկէ կը հետեւի՝ ամենուն ալ թեթեւ մտադրութիւն մը ընելով անցնինք նէ , ամենուն վրայ ալ տրգէտ կը մնանք :

ա . Ես ընթացքը բաձող մարդը կարգացածը միտք բերելու

## Մտադրութիւն:

անկարող կ'ըլլայ. շատ մը կիսակազմ ծանօթութիւններ կ'ունենայ մտքին մէջը պտրտող, բայց այնպէս անձեւ՝ անկատար եւ այնչափ դուրս իր իշխողութենէն, որ ան բաներուն գլխովին անտեղեակ եղողէն լաւագոյն սեպուելու տեղ մը չունենար: Այս է ահա ըսած կերպովնիս անհոգութեամբ բան կարգաւուն կամ գիտութիւն սորվելուն մէկ չարիքը, որ աս ճամբով ձեռք ձգուած գիտութիւնը, գիտութիւն անունը թէ որ արժան է ասլ, այնպէս չ'ծամած կուլ տրուած, այնպէս հարեւանցի կերպով մը մտքի մէջ գանձուած, եւ այնչափ իշխողութենէ դուրս ըլլալուն համար, մէկ գործնական օգտակարութիւն մը չունենար:

Բ. Բայց մէկ ուրիշ եւ գուցէ աւելի ծանր չարիք մըն ալ կայ: Աս սովորութիւնը բոլոր իմացական բաներու անընդունակ կ'ընէ մարդս: Կոր նոր ծանօթութիւններ մտքերնուս մէջ գանձելը դաստիարակութեան մինակ մէկ մասն է: Կէթ ասոր չափ հարկաւոր է նաեւ բոլոր մտաւոր կարողութիւններնիս պէտք եղածին պէս կրթել, զօրաւորները վարժել, տկարները զօրացնել, եւ ամենուն մէջ մէկ իրարու յարմարութիւն մը՝ զուգակշռութիւն մը պահելը: Իսկ մէկ բանի մը վրայ մտադրութեամբ եւ կատարելապէս քննութիւն ընելը աս երկու կողմանէ ալ միտքը կրթել է: Աս կերպով մարդուն միտքը կը զարդարուի ան ամենէն պատուական եւ կարեւոր հմտութիւնովը, որ է հմտութիւն առանց սխալմանց եւ ստուրտեան խառնուրդի, եւ բոլոր իմացական կարողութիւններն ալ կը զօրանան եւ մէկմէկու հետ համաձայնութիւն կ'ունենան: Որ ասոր հակառակ՝ թէ որ միտքը երկար ատեն թող տրուի որ ուզածին պէս մէկ նիւթէն մէկայլ թափառի՝ առանց մէկ գործի մը վարելու եւ պէտք եղած կրթութեան կանոններուն հնազանդեցնելու, վերջապէս բոլորովին կը կորսնցնէ իր խորհրդոցը առարկաներուն վրայ մնալու եւ զանոնք ուշադրութեամբ քննելու կարողութիւնը: Այլ թէ որ անգամ մը մէկ մարդուն աս կարողութիւնը կորսուի նէ, ալ գրեթէ բոլորովին անյուսակ կ'ըլլայ հաստատուն բան մը սորվելը:

## § 92. Մտադրութեան վրայ չեմ կրնար իշխել:

Որոնցմէ որ՝ աս կանոնիս համաձայն՝ ձեռք զարկած բաներուն վրայ յարստեւ ուշադրութեամբ եւ կատարեալ քննութիւն ընել կը պահանջուի կորնէ, կարծեմ թէ երբեմն երբեմն պիտի գանգափն ըսելով՝ թէ ի՞նչ ընենք, մտադրութիւններ-

նուս վրայ չենք կրնար կոր իշխել. հասկընալու միտք առնելու կողմանէ դժուարութիւն մը չունինք, բայց մէկ բանի մը բոլոր մասունքը իրար կապելու եւ անոնց մէկմէկու հետ ունեցած վերաբերութիւնները՝ կապակցութիւնները ինտոր որ պէտք է նէ գտնելու ծանօթանալու շարժումանակ, այնչափ երկար առտն, մտքերնիս մէկ դրութեան մը մէջ պահելը դժուար կուգայ կոր : Աղէկ, բայց երբոր ատանկ մէկ պակասութիւն մը ըլլայ նէ մէկու մը իմացականին վրայ, ըսել է որ ան մարդը վերի տուած պատճառներնուս վրայ պատճառ մ'ալ եւել ունի անթերի քննութիւն ընելը ձեռքէ չ'ձգելու : Հաւանականաբար մէկ բանի մը վրայ զգուշութեամբ քննութիւն չ'ընելէն եւ անհոգութեամբ շուտ շուտ մէկը ձգել ու մեկալը ձեռք առնելէն պատճառաւ է նէ ատ տկարութիւնը, ասոր հակառակ ճամբայ մը բռնելով՝ կամաց կամաց յաղթելու է :

Յիշելու ենք որ հարգութիւն անատենը կ'ըլլայ, երբոր մտքերնիս ժամանակ մը՝ թէ շատ ըլլայ թէ քիչ՝ առանց շարժելու մէկ բանի մը, զգայական կամ իմացական առարկայի մը վրայ կ'ըլլայ, բոլոր ուրիշ բաները մէկ դի ձգելով : Ամէն բան ան միջոցին անտես կ'առնուին. եւ երբոր աս ամէն ուրիշ բաներու անջատուիլ հեռանալը ատեն մը քէ, ան մտադրութիւնը կ'ըլլայ ուժգին մտադրութիւն : — Արդ՝ յայտնի է որ մարդուս միտքը ասանկ ամիտի մէկ բանի մը վրայ երկար առտն չ'կրնար մնալ, առանց մէկ բաղձանաց կամ պարտականութեան զգացում մը ըլլալու : Ամենէն երեւելի մտաւոր գործերու մէջ պէտք եղածները մինակ դատելու՝ վերացուցանելու եւ տրամաբանելու կարողութիւնները չեն, հապա քիչ շատ զգացման շարժում մըն ալ ըլլալու է : Այս աս ալ գիտնալու բան մըն է, որ ուսումնական աշխատութիւններու մէջ մարդուս միտքը ասանկ զսպելու մէկ բանի մը վրայ հաստատուն պահելու տիրապէս զօրութիւն ունեցող ուրիշ մէկ զգացում մը չ'կայ՝ բաց ի ճշմարտութեան սերէն :

Արդ կը խորհէր թէ թափառական խորհուրդներու դարման մը գտնէ նէ մէկը, շատ մեծ օգուտ մը ըրած կ'ըլլայ ուսումնասէր եւ մտախոհ մարդոց : Մենք աս վերջիշխալէն ի զատ ուրիշ տիրապէս դարման չենք գիտեր, որ է Սէր Տ'Նիպոլիտիւն. ինչ եւ իցէ բանի քննութիւնը եւ անչութիւնները գիտնալու բաղձանք մը՝ լոկ հմտութիւն ստանալու համար : Տ'ըմմարիտ է որ պարտականութեան զգացումն ալ շատ բան կրնայ տեսնել. եւ գուցէ փառասիրութիւնն ու շահասնդրութիւնը անկէց առաւել, բայց երբոր մարդուս միտքը՝ առանց նոյն իսկ գիտութեան մէջ մէկ գեղեցկութիւն մը՝ մէկ սիրտ քաշող բան

Երազատեսութիւն :

մը տեսնելու, մինակ աս հայեցողութիւններով ծանր հետազոտութեանց մէջ կը մտնէ, հաւանականաբար ձանձրալի աշխատանք մը պիտի ըլլայ ատ բանը իրեն : Այսին որոյ գիտութեան պատուականութիւնը միշտ մէկ մարդ մը աչքին առջեւը ունենալու է, միայն անոր մարդուս իմացականին համար եղած բան մը եւ մտաւոր գործունէութեան տիրապէս գրգիռ եւ վարձք ըլլալը մտածելով : «Տ'Ալէմպէրդին մէկ պատանիի մը ուրախութիւնը փորը թողուլը տեսայ», կ'ըսէ մօտ ատեններուս մատենագրին մէկը, «որ մէկ առաջարկութիւն մը լուծեք բերեր էր իրեն : 'Տէր իմ', ըսաւ պատանին, աս առաջարկութիւնը լուծեցի, որ ես ալ տեղ մը ունենամ համալսարանին մէջ' : 'Ատ խելքը քանի որ կայ նէ վրադ, դուն տեղ գտնելք չունիս', ըսաւ Տ'Ալէմպէրդ, խեղճ ուսումնականին : 'Վիտութիւնը իրեն համար սիրելու է, ոչ թէ իրմէ յառաջ գալու օգուտներուն համար : Ասկէ ի զատ ուրիշ սկզբունքով մէկը կարող է ճշմարիտ յառաջադիմութիւն ընել գիտութեանց մէջ' :

## ԳՂՈՒՍ • ԺԻ

## ԵՐԱԶՈՒՍՆՈՒԹԻՒՆ

§ 93 . Երազի սահմանն ու ընդհանրութիւնը :

Ինչպէս որ Իմացական փիլիսոփայութեան բազմաթիւ մտադրութեան արժան նիւթերուն ամէն մէկը իրեն յատուկ տեղ մը ունի, անանկ ալ Լըպպարտ-Էլ-Նըպպէտք է որ իրեն յատուկ տեղ մը ունենայ. եւ ասկէ աւելի պատշաճ տեղ մը թերեւս պիտի չ'կրնանք գտնել, մասնաւորապէս աս մտածելով թէ որչափ մօտ կապակցութիւն ունի զգայութեանց եւ վերըմբռնմանց հետ : Լը ինչ է Լըպպը : — Իտերեւս ըստ բաւականին ուղիղ ընդհանուր ստորոգութիւն մը ըրած կ'ըլլանք՝ թէ որ ըսենք, Լըպպը կ'ըսուին ան մտաւոր հանդամանքներն ու գործողութիւնները, որ քնոյ մէջ կ'ըլլան : Աս ընդ-

Երազատեսութիւն :

Հանուր զրուցուածքը աս նիւթիս վրայ ունենալու մասնաւոր գիտողութիւններնէս կը պարզուի :

Եւս երազ ըսուած մտաւոր հանգամանքներն ու ներգործութիւնները ամէն ատեն շատ հետաքրքրական նիւթ մը եղած են : Եւ ներկիս աս բանիս ամէն կարգի մարդոց մտադրութիւնը այսչափ իրեն քաշելուն մէկ պատճառը իր ընդհանրութիւնն է , վասն զի անհնար ալ չէ նէ , խիստ դժուար է անանկ մէկ մարդ մը գտնել , որ քիչ շատ աս բանիս փորձը առած , երազ տեսած չըլլայ : Եւ սակայն Լոք մէկը կը յիշէ , որ ինչուան քսանուվեցերորդ տարեկան հասակը երազ չէ տեսեր , քսանուվեցերորդին ջերմ մը բռներ է զինքը , անատեն առաջին երազը տեսեր է : Պլուտարքոս ալ Վիլիսն անուն մէկը կը յիշէ , իրեն բարեկամը , որ չափաւոր տարօք ապրեր է , բոլոր կենացը մէջ մէկ անգամ մը երազ չտեսներով . եւ կը ծանուցանէ թէ աս նոյն բանը Վրասիմիդէսին համար ալ ըսած է :

Եւտարակոյս աս մարդիկը շատ քիչ երազ տեսած պիտի ըլլան , ինտոր որ գիտենք թէ ոմանք քիչ երազ կը տեսնան՝ ոմանք շատ : Բայց կրնայ ըլլալ որ ատեն ատեն երազներ տեսած ու բոլորովին մոռցած ըլլան : Եւ անկ որ ասանկ օրինակներէ ստուգութեամբ չենք կրնար հետեւցընել թէ ամենեւին երազ չտեսնող մարդ կրնայ ըլլալ :

§ 94 . Երթնութեան խորհուրդներնու հետ երազներուն ունեցած կապակցութիւնը :

Երազի վրայ բացատրութիւն ընել որ կը սկսինք , ամենէն առաջ մտադրութիւննիս աս պարագային կ'երթայ , թէ երազք սերտ կապակցութիւն մը ունին արթնութեան ատեն ունեցած խորհուրդներնու հետ : Երթնութեան խորհուրդներնու մեծ մասը զուգորդութեամբ կու գան մտքերնիս մէկմէկու ետեւէ . եւ երբոր կը քնանանք , աս նոյն բանը քիչ կամ շատ շարունակութեամբ , քիչ կամ շատ փոփոխութեամբ մտքերնու մէջ կը շարունակէ : — Վսնտորսէ ( Վաղղիացոց պատմութեանը մէջ համբաւաւոր մէկը ) մէկուն ըսեր է , թէ նուրբ եւ խորին հաշիւներու զբաղած ատենները շատ անգամ հարկ կ'ըլլայ եղեր որ չ'ընկնուցած երթայ հանգստանայ , ու քանի քանի անգամ եղեր է որ մնացածները քունին մէջը ընկնուցեր խրդիրը ամբողջ լուծեր է : — Վրանքին ալ կը ծանուցանէ տեղ մը , թէ քաղաքական անջգերու սյնպիսի ընթացքներն ու հետեւանքները , որ շատ մութ երեւնալով՝ մեծ նեղութիւն կու

Երազատեալութիւն :

տային իրեն արթնութեան տակնը, շատ հեղ բացայտյա կ'երևնային երազին մէջ : Վրէրի՞ճ կ'ըսէ, թէ անգամ մը Ղամբորդութիւն փութքասաց գրքին մէջ Վուպլա Խանին պալատին ու պարտէզին վրայ պատմութիւն մը կարդացած տակնը քունը տարեր է, եւ անանկ քնացած երկու հարիւր տողի չափ ոտանաւոր բանաստեղծութիւն մըն է շիներ Վուպլա Խանին վրայ, որուն մէկ քանի մասը ետքէն գրեր է :

Ըսոնց պէս անթիւ անհամար բաներէ, որոնց գրեթէ ամէն մարդ փորձառու եղած է, յայտնի է որ տեսած երազներնիս մեր արթնութեան տակն ունեցած խորհուրդներուն եւ զգացումներուն նիւթերէն կը շինուին. ուրիշ խօսքով՝ մեր սովորական եւ ուժգին զուգորդութիւններուն կրկնութիւններն են : Ըյնպէս լաւ հասկըցուած է աս բանիս ասանկ ըլլալը, որ Լուդուարգ Լատուածաբանը, որ Իմացական փիլիսոփայութեան կողմանէ ալ Լատուածաբանութենէն վար չէր մնար ունեցած հմտութիւնը, աղէկ սովորութիւն մը սեպած էր իրեն՝ տեսած երազներուն վրայ մասնաւոր դիտողութիւն ընել, իր ամենէն զօրաւոր յօժարութիւնները ինչ են՝ անոնցմէ ստուգելու համար :

§ 95 . Շատ անգամ զգայութենէ կը պատճառի երազը :

Բայց մինչդեռ կը զիտենք որ մեր երազներուն նիւթը ըստ մեծի մասին առջի ունեցած խորհուրդներնիս են, աս ալ նկատելու ենք, որ քունի մէջ ունեցած թեթեւ մարմնաւոր զգացութիւններնիս ալ ազդեցութիւն կ'ընեն երազներու : Ըս ըզգայութիւնները, թէպէտ եւ շատ թեթեւ կ'ըլլան, սակայն կրնան քունի մէջ զուգորդութեամբ ունեցած խորհուրդնիս փոխիրխել, այսինչ խորհուրդները խափանել, անոնց տեղը ուրիշ կարգ մը խորհուրդներ ծագեցընել : — Տուկալտ Սդիււարգ մէկ դիպուած մը կը պատմէ, որ աս բանիս վկայութիւն մը կրնայ ըլլալ : Իրեն ճանչուորներէն մէկը՝ տկարութեան մը պատճառով պէտք եղեր է որ շիջով տաք ջուր կապէ ոտքերուն, ու անանկ պառկի քնանոյ. քնացած տակնը կ'երազէ թէ Լանայ հրաբուխ լեռանը գազաթը կ'ելլէ կոր, ու գետնին տաքութեանը չ'դիմանար կոր ոտուրները : Մէկը կայ եղեր ասանօք Ընդդիացի զօրքին մէջ, քունին մէջ ձայնի զգայութեան այնչափ ընդունակ, որ ընկերները ինչ որ ուզեն կրնան եղեր անոր երազել տալ : Մասնաւորապէս մէկ անգամու մը ըրածնին շատ զուարճալի է. ձեռքը լեցուն ասրճանակ մը կը

զննն, ու ականջն ի վար փսլտալով մենամարտութիւն մը ընել կու տան, էն առջի կարգադրութիւններէն սկսելով ինչուան ատրճանակը կրակելը, որուն պարպուելու ձայնէն յանկարծ կ'արթննայ խեղճը :

Ստամոքսէ եւ աղիքներէ՝ եւ այլն՝ ունեցած այլ եւ այլ զգալութիւններնիս ալ վերը յիշածնուս նման պատճառ մըն են երազներու : Օրինակի աղագաւ՝ շատ ժամանակ անօթի մընացած, կամ հազիւ կեանքերնին պահելու շափ քիչ բան կերած մարդիկ յաւետ ինչ եւ իցէ կերպով իրենց վիճակին վերաբերեալ երազներ կը տեսնեն : Պարօն Վրէնք կը պատմէ, թէ բանտին մէջ անօթի կիսամեռ եղած ատենները ամէն գիշեր Պէրլինի զեղև սեղանները երազին մէջ աչքին առջեւը կու գան եղեր, որոնցմէ աղէկ մը փորը կշտացրնել կ'երեւակայէ եղեր : «Վիշերը գրեթէ անցաւ, կ'ըսէ Լորվինկ՝ Սէնտէզին Սպանիոյա ըրած ծովու ճամբորդութեանը վրայ, բայց անոնք՝ որոնց կարգն էր քնանալու, ծարուութիւններնէն չէին կրնար քնանալ . կամ թէ որ քնանային ալ նէ, չարաչար կը տանջուէին, պաղ ջուրերու աւազաններ ու վտակներ տեսնելով երազնուն մէջ, ու խմել ծարուութիւննին անցունել չ'կրնալու » :

Սարգուս առողջութեան հանգամանքներն ալ մեծ ներդրութիւն ունին թէ երազ յառաջ բերելու եւ թէ երազներու մասնաւոր բնութիւններ տալու : Բժիշկները ասանկ ծանօթութիւն մը ըրած են, թէ ուժգին հիւանդութիւններ, մասնաւորաբար ջերմի տեսակ հիւանդութիւններ մարդու մը վրայ դեռ չեկած, շատ անգամ կ'ըլլայ որ անախորժ եւ վրդովիչ երազներ կը տեսնէ :

§ 96 . Երազներու անպատշաճութեանը վրայ բացատրութիւն : (ա. Պատճառ .)

Սնք շատ անգամ ամենեւին անպատշաճ անտեղի՝ այլանդակ երազներ կը տեսնենք : Ստրեքնիս խիստ մեծ արագութեամբ մէկ նիւթէն մէկալին կ'անցնի . տարօրինակ՝ սքանչելի դիպուածներ կը պատահին : Բորդ՝ թէ որ մեր երազները արթնութեան ատեն ունեցած խորհուրդներնուս կրկնութիւնն են նէ, կրնայ հարցրնել մէկը, հապա ինչպէս անանկ անտեղի՝ այլանդակ բաներ կ'երազենք :

Ըս բանը բացատրելու համար երկու դիտողութիւն կայ ընելու : — Ըսանկ բաներ ըլլալուն Ըսաջին պատճառն աս է, որ մեր երազները՝ արթնութեան ատեն ունեցած խորհուրդ-

Երազատեսութիւն :

ներնուս նման՝ մեր շուրջը գտնուող առարկաներուն իշխողութեանը տակ չեն եւ անոնցմով չեն կրնար կանոնաւորիլ: Արթուն ատեննիս մեր խորհուրդները միօրինակ եւ պատշաճ ընթացքի մը մէջ կը մնան, անանկ առարկաներ մեր շուրջը գրտնուելով, որոնք միշտ աչքերնուս առջին կը պահեն ինչ վիճակի մէջ՝ ինչ հանգամանաց տէր եւ ինչ պարտքերու տակ ըլլալնիս՝ եւ ցնորքներու մէջ իյնալու հակամիտութիւն մը ունենանք նէ, կը զսպեն կ'արգիլեն: Իսկ քունի մէջ եղած ատեննիս զգայարանքներնիս գոց են. վասն որոյ մտքերնիս ալ ան միջոցին զգալեսց' նիւթականաց աշխարհէն մէկ դի քաշուածի պէս ըլլալով, զուրկ կը մնայ ան ազգիւրէն յառաջ գալու կանոնաւորիչ ներգործութենէն:

§ 97. Երազներու անպատշաճութեան Երկրորդ պատճառը:

Արկրորդ՝ քուն եղած ատեննիս ունեցած զուգորդեալ խորհուրդներնիս մեր խորհիւն իշխողութենէն դուրս կ'ըլլան: Ասով ըսել չենք ուզեր թէ ան միջոցին կամական ներգործութիւնները կը դադրին, կամեցումն չըլլար: Ասոր հակառակ՝ բաւական վկայութիւն ունինք կամական մտաւոր հանգամանաց գէթ քիչ մը շարունակելուն, վասն զի մեր սկզբնական խորհուրդներուն մէջ, որոնք որ երազատեսութեան մէջ կը կրկնուին, կամեցմունք ալ կան՝ եւ ասկէ ի զատ՝ շատ անգամ ալ կ'ըլլայ որ երազի մէջ ինչպէս որ երեւակայել՝ յիշել՝ հաւանիլ՝ տրամաբանել, ասոնց պէս ներգործութիւններ մտքերնուս մէջ ըլլալը զիտակցութեամբ կ'իմանանք նէ, ճիշդ նոյնպէս կամական ներգործութիւններ ունենալնիս ալ կ'իմանանք: ( )րինակի աղաղակ երազնուս մէջ կը տեսնենք որ թշնամին սուրը ձեռքը վրանիս կը վազէ, եւ անանկ կը պատահի որ սուր մըն ալ մենք կ'ունենանք ձեռքերնիս. ան միջոցին ան սուրը մենք զմեզ պաշտպանելու համար թշնամիներնուս դէմ բանեցընելու կամիլ կ'երազենք. եւ թէ որ քունի մէջ յիշելնիս՝ երեւակայելնիս՝ տրամաբանելնիս իրաւցընէ յիշել՝ երեւակայել՝ տրամաբանել են նէ, աս պարագային մէջ կամելնիս ալ ճշմարտապէս չափան է:

Սակայն կամական ներգործութեանց քունի մէջ շարունակելը ընդունինք ալ նէ, աս յայտնի է որ եղած կամեցմունքները իրենց սովորական ազդեցութիւնը չեն կրնար բանեցընել մեր մտաւոր գործողութիւններուն վրայ: Սովորաբար կարող ենք կամական ներգործութեանց ձեռքը մտադրութիւննիս մէկ



ընդհանուր ենթակայի մը այսինչ մասնաւոր մասին ուղղելու, կամ անկէջ մէկ ուրիշ մասին դարձընելու, եւ սասանկով բոլոր մտաւոր ներգործութիւններնուս ընթացքը կանոնաւորելու : Բայց խորունկ քուններնուս մէջ սա կամական տղզեցութիւնը կը դադրի, եւ ասկէջ, մէկտալ յիշուած պատճառն սլ մէկտեղ առնելով, կը ծագին այն անպատշաճ՝ անտեղի՝ պլանդակ երազները :

Մէկ մարդ մը՝ արթուն ատենը՝ կարող է իր խորհուրդներուն վրայ այնպէս իշխել եւ կամեցմանց ուղղակի կամ անուղղակի աղբեցութիւններով անանկ կանոնաւորել զանոնք, որ ընդհանրապէս ի վերջոյ բերէ կայսցընէ զանոնք առաջուրնէ տեսած եւ հասնիլ փափաքած մէկ վախճանին : Բայց երազատեսութեան մէջ թէ՛ ներքին եւ թէ՛ արտաքին ուղիչ եւ կանոնաւորիչ ներգործութիւնները դադրած ըլլալուն համար, մեր խորհուրդներն ու զգացումներն ալ՝ ծովուն երեսը առանց զեկի թափառող նաւու մը պէս՝ որ զի հանգիպի՝ հոն կը վազեն :

§ 98 . Երազներու երեւութեան իրականութեանը վրայ : ( ա Պատճառ : )

Երազի մէջ բան մ'որ տեսնենք նէ, անիկայ իրական կը թուի մեզի. նոյնպէս եւ անցքեր, անցքերու յաջորդութիւններ որ կ'երազենք նէ, ամէնքն ալ իրական կ'երեւնան : Իրական կենցաղոյս դժուարութիւններուն եւ զբաղմունքներուն մէջ ինչ հնարքներ կը բանեցընենք, ինչ ճամբաներ կը բռնենք նէ, ան նոյն հնարքներն ու կերպերը կը գործածենք երազական դէպքերու մէջ : Եւ երբոր մարդիկ ալ կ'ըլլան երազական ըզբաղմունքներնուս մէջ, զանոնք ճիշդ իրենց կենդանի կերպարանքովը եւ հանգամանքներովը կը տեսնենք. անոնց հետ կը խօսինք, անոնք կը խօսին մենք մտիկ կ'ընենք, շարժումներին կը տեսնենք, եւ այլն, ճիշդ իրականապէս ինտոր որ կ'ըլլայ նէ :

Եւ մեր երազական վերըմընումանց այսչափ կենդանի եւ անոնց իրական ըլլալուն վրայ ունեցած հաւատքնիս այսչափ հաստատուն ըլլալուն մէկ պատճառը սա կ'երեւնայ ըլլալ : Երազի մէջ խորհուրդներնուս ենթակայ եղած բաները սասանկն կ'ըզբաղեցընեն մեր միտքը. այսինքն՝ անոնցմէ ի զատ ուրիշ բան չ'գտնուիր մտքերնուս մէջ : Մենք աչքերնիս գոց աւելի պարզ վերըմընում մը կրնանք ձեւացընել մէկ բանի մը վրայ, քան թէ բաց, որ ասոր փորձը ամէն մարդ կրնայ ընել. եւ միւս զգայարաններնիս ալ որչափ որ անգործ կրնանք թողուլ նէ,

Երազատութիւն :

մեր վերըմբռնմանց պարզութիւնն ալ այնչափ կ'եւելայ : Երգ՝  
 խորունկ քունի մէջ չէ թէ միայն մեր տեսանելիքը, բայց միւս  
 զգայարանքներնիս ալ՝ կրնանք ըսել՝ թէ գոց են. եւ արթուն  
 ատեննիս մեր լսողութիւնն ու շոշափումը գրգռող ան բազմա-  
 թիւ առարկաները քունի մէջ մտադրութիւննիս չեն կրնար  
 մէկ բանի մը վրայէն անանկ շարունակ խախտել : — Ուստի  
 շատ բնական է աս բանէս աս կարծիքը հանել, թէ քունի  
 մէջ անշուշտ մեր վերըմբռնմունքը շատ կենդանի եւ որոշ պի-  
 տ'որ ըլլան : § 64ին մէջ մասնաւոր խօսեցանք ասանկ վառ-  
 վըռունութիւն ունեցող վերըմբռնմանց կամ բացակայ իմացման  
 առարկաներու վրայ ձեւացուցած գաղափարներնուս վրայով :  
 Իչ հոն տեսանք թէ մինչեւ անգամ արթուն ատեննիս իրա-  
 կանի փայրկենական հաւատք մը կրնայ ըլլալ որ ունենանք ա-  
 նոնց վրայ : Երգ՝ որովհետեւ քունի մէջ ունեցած վերըմբռն-  
 մունքնիս արթնութեան վերըմբռնումներէն շատ աւելի յստակ  
 եւ վառվռուն կ'ըլլան, արթնութեան ատեն անոնց ընծայած  
 փայրկենական հաւատքնիս ալ քունի մէջ կ'ըլլայ յարակայ  
 հաւատք : Եսանկով՝ երազի մէջ ինչ որ տեսնենք, իրական  
 կ'երեւնան. եւ մեր մտքին լոկ խորհուրդները մարդիկ՝ զանա-  
 զան հանգամանքներ եւ դէպքեր կը ձեւանան, որոնց վրայ  
 ճիշդ ան ամէն աւուր տեսած մարդիկներնուս՝ հանգամանքներ-  
 նուս եւ դէպքերնուս պէս կը նայինք :

§ 69. Երազներու երեւութական իրականութեանը վրայ : ( Ե Պատճառ : )

Մեր երազական վերըմբռնմանց իրականի երեւոյթք ունե-  
 նալուն երկրորդ պատճառն ալ աս է, որ լոկ կամեցման թէ  
 ուղղակի եւ թէ անուղղակի իշխողութենէն դուրս են : — Մենք  
 անանկ ստեղծուած ենք, որ գրեթէ անփոփոխապէս իրակա-  
 նութիւն մը կը կապենք ան ամէն առարկաներուն հետ, որ  
 միշտ մի եւ նոյն արդիւնքը՝ հանգամանքը կը ծագեցընեն ներ-  
 սիդիսիս : Արծր կամ կակուղ մարմինի մը, կամ մասնաւոր  
 գոյն մը կամ համ կամ հոտ մը ունեցող ինչ եւ իցէ մարմի-  
 նի մը զգայութիւնը ունենանքնէ, ան զգայութեան ետեւէն  
 մտաւոր հանգամանք մը կը ծագի՝ էականապէս անոր նման. եւ  
 մենք ատ իմացման հանգամանքները ունենալնուս պէս, ամե-  
 նահաստատ հաւատքով կը հաւատանք թէ անանկ բաներ ի-  
 բարցընէ կան : Մէկ խօսքով՝ մեր բնական կաղմութիւնը ասանկ  
 է, որ կը հաւատանք ան իմացման առարկաներուն դոյութեա-  
 նը, որոնց մտքերնուս մէջ ծագեցուցած իմացմունքը մեր կ'արեւն

Երազատեալութիւն :

կախեալ չեն, հապա մտքերնուս մէջ ծագած այսինչ ուրիշ հանգամանքներէն անհրաժեշտ՝ ուզենք չուզենք՝ կը հետեւին: — Ըրդ՝ յիշելու ենք որ երազական խորհորդներնիս ուրիշ բան չեն, այլ լոկ վերըմբռնուներ: զգայարանքներնիս ան միջոցին գոց՝ անգործ ըլլալով, եւ սրտաքին առարկաներէ մեզի աղղեցութիւն մը չըլլալով: Ըս անտարակոյս ճշմարիտ է: Ըրդ՝ թէ որ ներսիդնիս մեր կամքէն անկախ զգայութիւններ ծագելէն՝ ան զգայութիւններուն նման իրական բաներ կան կը հետեւեցնենք կորնէ բնականապէս, ուրմն միր ներսիդնիս կամքերնէս անկախ վերըմբռնուներ ալ ծագին նէ, անշուշտ բնականապէս իրականացնենք պիտի զանոնք: Ըս ալ մտաւոր հանգամանք մը, ան ալ. եւ թէ որ մեր կամքէն դուրս եղած իմացմանց իրականութեանը միշտ կը հաւատանք կորնէ, ինչ պատճառ կայ որ մտքերնուս մէջ ծագած մեր կամքէն անկախ վերըմբռնմանց իրականութեանն ալ չհաւատանք, որոնք ուրիշ բան չեն, բայց եթէ բացակայ խնայման առարկաներու վրայ ձեւացած գաղափարներ: — Գանք որ աս նոյն պարագան, աս կամական իշխողութեան անկախութիւնը էապէս կայ երազատեսութեան մէջ. այսինքն՝ կարգ մը վերըմբռնուներ է կը ծագի մտքերնուս մէջ, եւ մեր գիտակցութիւնը կը վկայէ թէ անանկ ատեններ մենք կարող եղած չենք զանոնք կանոնադրելու, կամ անոնց վրայ մէկ իշխողութիւն մը բանեցնելու: Սենք ուզենք չուզենք, անոնք կը ծագին մտքերնուս մէջ. եւ հետեւապէս մենք ալ ան բաները իրական կը սեպենք:

§ 100. Երազի մէջ ժամանակը ինչպէս կը չափուի:

Երազի մէջ արթնութեան ատենի հաշուովը չչափուիր ժամանակը: Օրերով շարաթիւերով չըմբնալու դէպքերը քանի մը վայրկեանի մէջ կ'երազենք: Ըս բազմաթիւ գործքերը ամենակարճ ժամանակի մը մէջ սղմեցնելնիս անանկ զարմանալի բան մըն է, որ երբեմն քնացած սենեակնուս դուռը բացուած ատեն ճոնչելու ձայնէն յանկարծ որ կ'արթնանք նէ, ան արթնցած վայրկեաննուս մէջ կ'ըլլայ որ երազենք՝ թէ գողերը առնը մտեր կը կողոպտեն, կամ հրդեհ կայ՝ տունը այրելու վրայ է, եւ այլն: — «Իտրեկամիս մէկը, կ'ըսէ Ըպէրբրոմպի, երազով Ըդլանդեան Ովկիանոսը անցեր Ըմերիկա գացեր երկու շաբաթի չափ կեցեր է. վերադառնալուն նաւը մտած ատեն ծովն է ինկեր, վախէն արթննալով՝ նայեր է որ քունը տանիլը դեռ տասը վայրկեան հազիւ եղեր է»: Լալա-

լէդ կոմսը, որ քանի մը տարի առաջ Վաղղիսյի մէջ մահապարտ դատուեցաւ, բանտին մէջ տեսած մէկ երազը կը պատմէ: «Մէկ գիշեր մը խորունկ հը քնանայի կոր, կըսէ, Քալէ տը Եիւստիս Պալատան ժամացոյցը զարկաւ, արթնցայ, Ստեցի որ բանտին դուռը բացուեցաւ, պահապանը փոխելու եկան, ու անմիջապէս կրկին քունս տարաւ: Արազիս մէջ տեսայ որ փողոցի մը գլուխ կայներ եմ. տխրական խաւար մը պատեց չորս դիս, լուռ, ձայն ձուն չ'կայ. բայց շուտ մը խորունկէն անորոշ ձայն մը սկսեց ականջիս գալ: Մէյմ'ալ նայիս յանկարծ փողոցին վարի ծայրէն գունդ մը հեծեալագորք տեսայ, որ դէպ ի իմ կողմն կու գային, բայց բոլոր զօրքին ու ձիերուն մորթը քերթած: Աս սոսկալի հեծեալագունդը սկսան անցնիլ առջեւէս արագութեամբ, դէմքերնին վրաս խոժոռցնելով մը: Արածեօք հինգ ժամ մը քշեց սեպեցի, ինչուան որ գունդին ծայրը եկաւ. ետեւէն սկսեց գալ չեմ գիտեր որչափ կառք, արիւնաթաթախ դիերով լեցուն, որոնց անդամները դեռ կը դողդոջային. արիւնին ան զգուելի հոտէն քիթս ինկաւ կարծեցի: Ա երջապէս բանտին երկաթ դուռը ամուր մը գոցուելով, նորէն արթնցայ: Արկնահար ժամացոյցս զարնել տուի, նայեցայ որ կէս գիշեր է. այն երկար անուրջքը ամէնը երկու իրեք վայրկեան հազիւ տեսեր է. ըսել է՝ պահապանը փոխուելու ու դուռը գոցելու չափ ժամանակ. պահապանին փոխուելն ալ, ցուրտ ըլլալուն, շուտ մը լմնցուցիր ելեր գոցեր էին»

Արազի մէջ շատ անգամ շաբաթներով՝ ամիսներով կամ տարիներով չ'լմննալու բաները, ինչպէս երկայն ճամբորդութիւններ ընել՝ շաբաթներով տեղ տեղ իջեւանելով, պատերազմներու ականատես ըլլալ, աշխարհիս չորս բոլորը նաւարկել, ու ասոնց պէս երկարատեւ եւ մեծամեծ գործքեր՝ ամէն մէկ մասնաւոր պարագաներովը՝ իրենց կատարմանը բաւական եղող շաբաթներէն՝ ամիսներէն կամ տարիներէն աւելի քիչ ժամու մէջ կը կատարենք: Արկրէ երկիր, քաղաքէ քաղաք եւ անապատ տեղեր կ'ելլենք կ'երթանք. հանգամանքներնիս կը փոփոխին, մեծ մեծ անցքեր կ'անցնին մեր գլխէն, կ'աղքատնանք՝ կը հարստանանք, կ'ուրախանանք՝ կը տրտմիք. ամիսներ քշող տեսարաններու ու գործառնութիւններու կը զբաղինք: Մէյմ'ալ քնոյ վարագոյրը կը քաշուի աչքերնէս, կը նայինք որ այն մեծ մեծ զբաղմունքները եւ երկայն դէպքերը գիշերային թռչական պահու մը գործքեր են եղեր:

§ 101 . Նախընթաց հատուածին մէջ խօսուածներուն վրայ բացատրութիւն :

Արազատեսութեան աս զարմանալի պարագան ընդհանրապէս աս ենթադրութիւնով կը մեկնեն, թէ մտքերնիս քունի մէջ արթնութենէ աւելի արագ կը խորհի : Բայց ատ արագութիւնը ամէն ատեն կայ, արթուն ատեննիս ալ մէկ քանի վայրկեանի մէջ սյնքան բազմութիւ գաղափարներ կ'անցնի մտքերնէս, որ եթէ զանոնք խօսքով ցուցնելու ըլլանք նէ, շատ երկար կը քէ, իսկ թէ որ գործքով ան բաները կատարուի նէ, յոյժ շատ աւելի երկար ժամանակ պէտք կ'ըլլայ : Ուստի աս մեկնութիւնը հաւանելի մեկնութիւն չ'կրնար ըլլալ . քանզի մեր խորհուրդները շատ անգամ արթնութեան ատեն ալ՝ քունի մէջ ինչ արագութիւն ունին նէ՝ նոյն արագութեամբ կը յաջորդեն մէկզմէկ :

Աս բանին ճշմարիտ պատճառը մեզի կ'երեւնայ թէ նախընթաց հատուածներուն մէջ փնտռելու ենք, որոնց մէջ երազներու երեւութական իրականութիւնը քննեցինք : Արազի մէջ ունեցած վերըմբռնմունքնիս իրական կը թուին մեզի . ասանկով ամէն մէկ խորհուրդ մէյմէկ գործք կ'ըլլայ . ամէն մէկ գաղափար մէյմէկ դէպք կ'ըլլայ . եւ մտքերնուս մէջ մէկմէկու ետեւէ յաջորդող հանգամանքները մէկմէկու ետեւէ յաջորդող գործքեր՝ դէպքեր կը ձեւանան : Արազի մէջ մէկ մարդ մը երկայն պատերազմի մը մասնաւոր դէպքերուն վերըմբռնմունքն որ կ'ունենայ նէ, իրեն անանկ կու գայ թէ իրօք տեսաւ անանկ պատերազմ մը ըլլալը : Ասոր համար երազի մէջ իրական կարծուած ժամանակն ալ, որ ճշմարտապէս իրական չէ, հապա ան ալ իրական կարծուած գործքերուն պէս երեւութական ժամանակ մըն է, պէտք կ'ըլլայ որ ան գործքերուն իրական կատարմանը օգտածին չափ ժամանակ ըլլայ, ոչ թէ լոկ վերըմբռնմունքները ձեւացնելու պէտք եղածին չափ : Ասանկով ինչ տեսակ բան որ երազենք նէ, անոր համեմատ ժամանակով կ'երազենք, որն որ՝ գործին համեմատ՝ երբեմն օր մը կ'ըլլայ, երբեմն շաբաթ մը, երբեմն սմիս մը եւ երբեմն ալ աւելի երկար ատեն :





ԲՆԺՄՆՍՈՒՆՔ ԸՌԸՋԻՆ

ԻՄԸՅԸԿԸՆՈՒԹԻՒՆ ԿԸՄ ՀԸՍՈԳՈՒԹԻՒՆ

ՄՏՔԻՆ ԻՄԸՅԸԿԸՆ ՀԸՆԳԸՄԸՆՔՆԵՐԸ

---

ՄԸՄՆ ԵՐԿԸՐԸԳԻ

ԻՄԸՅԸԿԸՆՈՒԹԵԸՆ Ի ՆԵՐՔՈՒՍՏ

ՆԸԳԸՆԾ ՀԸՆԳԸՄԸՆՔՆԵՐԸ

---





## ԳԼՈՒԽ • Ը

### ՆԵՐՔԻՆ ՍՎՉԻՆ ԳԻՏՈՒԹՅԱՆ

§ 102. Հոգին գիտութեան աղբիւրներ ունի իր ներսիդին :

ՄԻՐՏ Տ հաճոյական եւ հաւանելի կերպով իմացականին պատմութեանը ինչուան աս կէտը հասանք, վասն զի միայն քաջածանօթ եւ վաւերական եղելութեանց առաջնորդութեամբ յառաջ գացինք, առանց շատաբանութեամբ ուրիշները զարմացրնելու բաղձանքի, եւ միայն ճշմարտութիւնը գիտնալու փափարով : Օգուշութեամբ ջանալով՝ որ չըլլայ թէ Արարչին մեր հետազօտութեանցը դրած սահմաններէն անդին անցնինք, յստակ հայեցողութեամբ տեսանք որ մարդու միտքը այնպիսի վիճակի մէջ ստեղծուած է, որ հարկաւոր կապակցութիւն մը ունի նիւթական իրերու հետ՝ զգայարանաց միջնորդութեամբը, եւ աս կապացուցութիւնովը կենդանութիւն՝ գործունէութիւն եւ զորութիւն կը ստանայ : Անկենդան նիւթը՝ այնպէս կը թուի թէ՛ Աստուածային տեսչութեամբ՝ մտքին մանկութեան օրերը՝ անոր աղախին եւ դայեակ ըլլալու նոյաատկաւ ստեղծուելը եւ առ բանին համար սահմանուելը է. եւ աս վախճանիս համար ձեւ՝ հոտ եւ գոյն ունեցել է : Նիւթական աչք տրուել է հոգւոյն, ( ոչ թէ անոր ընտանեան մէկ մասը ըլլալով, հապա միայն իրրեւ գործիական եւ օժանդակ ներգործիչ անոր ընծայուելով, ) որ անով տեսնայ. եւ նիւթական ձեւքեր, որ անոնցմով շօշափէ. եւ ականջ, որ անով լսէ : Ասոնց եւ միւս զգայարանաց կամ զգայութեանց միջնորդութեամբը ամէն ինչ եւ իցէ տեսանելի եւ շօշափելի եղող եւ ձեւ ու շրջագիծ ունեցող բաներու վրայ հմտութիւն կ'ունենանք. սակայն իմացման ներքին կարողութիւններ ալ կան, հմտութեան ծածկեալ աղբիւրներ, որ հոգւոյն հեռուօր եւ գաղանի տեղերը կը բացուին եւ գիտութիւն կը ըրդսնն : Արիշխօսքով՝ հոգին ինք իր մէջը հմտութիւն կը գտնէ, անտակ հմտութիւն, որ ոչ տեսողութիւնը՝ ոչ շօշափումը՝ ոչ լսողութիւնը՝ եւ ոչ մէկ ուրիշ զգայութիւն մը, ու ոչ ալ ինչ եւ

իցէ արտաքին նիւթական կերպարանք ունեցող բան մը կրնայ տալ իրեն :

«Ղշմարիտ ուսման բնական ընթացքը՝ շափող զգայութեանէն իմացականին երթալն է», կ'ըսէ Էերմէսի Հեղինակը: Մենք ալ զգայարանքներէն սկսելով՝ նախ եւ առաջ անոնցմով ընգունած զգայութիւններնիս եւ գաղափարներնիս քննելնէս ետեւ, Հիմնայ բնական կարգը կը բերէ որ յաջորդ գործերնիս յատկապէս մաքին ներսիդիերը մտնելն ու հմտութեան այն արգասաւոր աղբիւրները հետազօտելը ըլլայ, որոնք որ ներքին են: Այս ասանկ ընելովնիս, հաճելի է գիտնալ, թէ բռնած ընթացքնիս էապէս նման է Ազբին, որուն ընդհանուր վարչապետութիւնը անտարակոյս աս է՝ թէ մեր գաղափարներուն մէկ մասը միայն զգայութեանց կրնանք տալ, եւ թէ միւսներուն սկիզբը բոլորովին նոյն իսկ իմացականին մէջ փնտռելու ենք:

§ 103. Լոբին հաստատութիւնը, թէ Լոպին ինք իր մէջը գիտութիւն ունի :

Օգայարանքները իրրեւ հմտութեան մեծ աղբիւր մը յիշելէն ետեւ, «միւս աղբիւրը, կ'ըսէ Ազբ, ուսկից հասողութիւնը գաղափարներ կը ստանայ, դրսէն ստացած գաղափարներնուս վրայ ներսիդիներս՝ մեր մաքին մէջ գարձած գործողութիւններուն վրայօք ունեցած իմացումնիս է. որ ան գործողութիւնները, երբօր մաքերնիս անոնց վրայ մտածէ եւ զանոնք գիտէ նէ, մէկ ուրիշ տեսակէ մը եղող ծանօթութիւններ կու տան մեր հասողութեանը, որոնք արտաքին իրերէ չենք կրնար ունենալ, ինչպէս են՝ իմացումն՝ խորհրդածութիւն՝ երկրայութիւն՝ հաւատք՝ արամաբանութիւն՝ գիտութիւն՝ կամեցումն՝ բռնած ներգործութիւնները եւ մաքերնուս բոլոր ուրիշ այլ եւ այլ գործողութիւնները, որոնց վրայ գիտակցութիւն ունենալով՝ եւ որոնք մեր մէջը տեսնելով՝ անոնցմէ մեր հասողութեանը մէջ որոշ գաղափարներ կ'ընդունինք, մեր զգայարանքներուն ներգործող մարմիններէ ընդունած որոշ գաղափարներնուս նման: Ըստ անսակ գաղափարներու այս աղբիւրը ամէն մարդու իր ներսիդին է: Այս թէպէտ զգայութիւն չէ, արտաքին առարկաներու հետ գործ չունենալուն համար, սակայն անոր շատ նըմանութիւն ունի, եւ ներքին զգայութիւն կրնանք կոչել. բայց ինչպէս որ զգայութիւնը միւսին յատուկ անունն է, ստոր ալ՝ իր որոշիչ անունովն՝ պէտք է ըսել Սիմոն-Լիւն. իր տուած գաղափարները միայն այնպիսի գաղափարներ ըլլալուն համար,

Ներքին սկզբն գիտութեան :

որոնք որ միաքը ինք իր գործողութիւններուն վրայ մտածելով կը ստանայ” :

§ 104 : Հմտութեան սկզբնաւորութիւնը զգայարաններէն է :

Ընչեւեհս ունեցած մասնաւոր նիւթերնիս աղէկ հասկընայու համար, անոր հետ կապակցութիւն ունեցող մէկ քանի ընդհանուր դիտողութիւններու վրայ գարձընենք աչքերնիս վայրկեան մը, զորոնք արդէն քիչ շատ հետազոտած ենք : Մարդու հոգին հետազոտութեան նիւթ ըրած ատեննիս՝ աս յայտնի բան է որ որոշմունք մը կամ բաժանում մը կրնանք ընել նոյն իսկ հոգւոյն՝ ինք իրմով նկատելով՝ եւ անոր ներգործութիւններուն կամ հանգամանքներուն կամ որ նոյն է՝ ունեցած գիտութեանը մէջ : Եւ հետեւաբար բնականապէս աս ինքիբը կը ծագի, թէ հմտութիւն ստանալուն սկզբնաւորութիւնը ուրտեղ կամ ինչ պարագաներու մէջ կ'ըլլայ :

Հիմայ աս ճիշդ այն ինքիբն է, որն որ արդէն քննած ենք, հարկ ալ չ'կայ որ ասոր վրայ ըրած այն առջի դիտողութիւններնիս նորէն հոս կրկնենք : Ուստի հերիք է որ հոս մարդոց ընդհանուր փորձառութեանը եւ վկայութեանը վրայ ունեցած վրստահութիւննիս միայն յառաջ բերենք, որ աս փորձառութենէն եւ վկայութենէն, ասանկ դժուար նիւթի մը վրայ որչափ որ կարող ենք ստուգել նէ, կը գտնենք թէ խորհրդոյ եւ հմտութեան սկզբնաւորութիւնները մեր ան զգայարանք ըսած մարմնեղէն գործարաններուն վրայ եղած տպաւորութիւններէն անմիջապէս ետքն են : Արի՛ խօսքով՝ զգայարանաց վրայ եղած տպաւորութիւնները չըլլային նէ, որոնք անոնցմէ դուրս եղող աւտրկաներէ կու գան, մեր մտաւոր կարողութիւնները՝ ինչ որ ըլլային նէ՝ ամենայն հաւանականութեամբ գոց պիտի մնային, եւ անպտուղ անգործութենէ երբէք պիտի չ'կրնային աղատիլ : — Ըսոր համար՝ արտաքին աւարկաներու իմացում ըսելով հասկըցուած գործողութիւնը, կամ որ նոյն է՝ Վաքին սովորաբար զգայութեան ըսածը կրնանք իրաւամբ բոլոր մեր հմտութեան տեսիլը կամ ներածական քայլը սեպել :

§ 105 : Ներքին ստացումն ալ կ'ըլլայ հմտութեան :

Սակայն ասկէ աս չ'հետեւիր, եւ ամենեւին ճշմարիտ չէ, թէ բոլոր ունեցած գիտութիւննիս իր լրութիւնովը արտաքուստ ըս-

Ներքին սկիզբն պատժեան :

կիզբն առած սեպելու ենք : Ղշմարիտ ըլլալով միայն սյուսափ կրնանք ըսել, թէ միտքը իր գաղափարներուն առաջին մասը ըզգայարանաց միջնորդութեամբը կ'ընդունէ, եւ թէ այն տարրական գաղափարները ընդունելովը իր կարողութիւնները շուտով եւ կատարելագէտ գործել կը սկսին : — Եւ ահա աս տեղ կը գտնենք Հմտութեան Լըբըրուր մեծ աղբիւրը : Սնդին զօրութիւնները այս կերպով բանիլ որ կը սկսին նէ, ալ անկէ ետեւ անոնց սյլ եւ սյլ գործողութիւնները նոր տեսակ մը գաղափարներ կու տան մեզի, որոնք՝ ուղղակի զգայարանաց միջնորդութեամբը ընդունուածներէն որոշելով՝ կրնանք Լորին ըսածին պէս մտածութեան գաղափարներ անուանել, կամ՝ ամէն պարագաները բովանդակող խօսքով մը՝ Ինտելեկտուալ Գաղափարներ ըսել :

Եւ մարդկային խորհրդոց երկու աղբիւրները, Ներքինն ու Երտաքինը, որչափ որ մատենագիրք ոմանք իրարու հետ շփոթած ալ են նէ, մէկմէկէ բոլորովին որոշ են : Լոկ նախընթաց մտաւոր գործողութիւններ ըլլալէն մտքերնուս մէջ ծագած գաղափարները այնպիսի գաղափարներ են, որ այն գործողութիւններէն անկախութեամբ դուրսը պատահած ինչ եւ իցէ բանէ չեն կրնար թելագրուիլ մեր մտքին : Ըստ արժանի է որ աս տեսակ գաղափարներէն մէկ քանի օրինակ յիշենք, անոնց բացատրութիւնն ալ մէկտեղ աալով :

§ 106 . Ներքին սկիզբն ունեցող ծանօթութեանց օրինակներ :

Սեր Հմտութեան երկրորդ մեծ աղբիւրին ընծայուելու ծանօթութեանց կարգէն են աս մէկ քանին, որոնց աս անունները կու տանք, Խորհուրդ՝ Էթիկայո-Լիան՝ հաստատու եւ սպասու-Լիան : — Ներքին դիտողութեան (այսինքն՝ դիտակցութեան կամ մտածութեան, որոնք ներքին դիտողութեան հետ համանշան են) նիւթ մըն է աս, թէ միտքը անգործ չ'կենար եւ չ'կրնար կենալ : Եւ դիտողութեան առիթով կը ծագի այն ծանօթութիւնը, որուն Խորհուրդ անունը կու տանք : Եւ ծանօթութիւնը կ'ունենայ միտքը աս պարագաներուն մէջ, եւ երբոր անունովը կը յիշուի, ինչ նշանակելը ամէն մարդ կը հասկընայ : Սակայն աս դիտելու ենք որ ասոր սկիզբը բոլորովին ներսէն է. շօշափման, ճաշակման կամ տեսութեան առարկայ չէ, մինակ նոյն իսկ մտքին ընծայելու ենք, վասն զի իր ներքին ներգործութենէն յառաջ եկած է, առանց զգայարանաց կամ անոնց վրայ ներգործող ինչ եւ իցէ բանի մը օգնութեանը :

Ներքին սկիզբն Կիմութեան :

Դարձեալ, հետազօտութեամբ նիւթի մը վրայ քննութիւն ըրած ատեննիս մէկ առաջարկութիւն մը կը տեսնենք շատ քիչ կամ ամենեւին վկայութիւն չունեցող, եւ մեր միտքը ատ առաջարկութեան վրայ մէկ մասնաւոր վիճակի մը մէջ կը մտնէ, որուն էրիւստութեան անունը կու տանք : Հիմայ խիստ դժուար մանաւանդ թէ անհնար է աս ծանօթութեան սկիզբը ուղղակի զգայարանաց տանիլը : Ուրիշ բան չենք կրնար ըսել, բայց եթէ աս ծանօթութիւնը ի ներքուստ ծագած է, եւ հարկաւորապէս ուրիշ մտաւոր հանգամանքներէ անմիջապէս հետեւած է, որոնց վրայ որ գիտակցութիւն ունինք :

Իսկ թէ որ, աս նոյն յառաջ բերած օրինակիս մէջ, այն առաջարկութեան վկայութիւնը շատ ըլլայ նէ, անոր վրայ ձեւացուցած մտաւոր համարումնիս ալ կը փոխուի, եւ մտքերնուս աս նոր հանգամանքին կ'ըսենք հաստատ կամ հաստատու : Ինչ թէ որ վկայութիւնը աւելի շատ եւ որոշ ըլլայ նէ, անատեն մէկ ուրիշ հանգամանք մը կը ծագի մտքերնուս մէջ, որն որ կը կոչենք սպասգումնութեան :

§ 107 . Ներքին սկիզբն ունեցող գաղափարներու ուրիշ օրինակներ :

Ուղիղի եւ սխալի, միութեան եւ թուոյ, ժամանակի եւ միջոցի, կարգի, համեմատութեան, նմանութեան, ճշմարտութեան, իմաստութեան, զօրութեան, պարտականութեան, յաջորդութեան, պատճառի եւ գործքի ծանօթութիւններն ու շատ ուրիշ ասոնց նման գաղափարներ ալ ի ներքուստ ծագեալ են. կամ գոնէ սոսքափ կրնանք ըսել թէ ասոնց մէկն ալ ուղղակի եւ ուրիշ բաներու հետ չ'իստանելով զգայարանաց չենք կրնար տալ : Եւ աս մէկ մարդ կ'ընդունի առանց գժկամակութեան, թէ աս բանիս վրայ ըրած աս որոշմունքներնուս մէջ կրնանք մարդոց սովորական փորձառութիւնը ձեռք առնել եւ անոր վրայ խօսքերնիս հաստատել : Բայց չէ որ ատ փորձառութիւնը մէջ բերելովնիս՝ յառաջ բերած օրինակներնուս ամենուն մէջ ալ (ստուգիւ շատին մէջ) վճռական կերպով կը հաստատուի տուած ծանօթութիւննիս :

Ուրեմն ամէն մարդու իր ներքին անաչառ քննութեանը թուողնք աս գտատատանը ընելը, թէ արգեօք իրաւամբք որոշմունք մը չ'ըլլար աս գաղափարներուն ծագմանը ու միւս զգայարանաց տուած գաղափարներնուս ծագմանը մէջ, ինչպէս են կարմիր՝ կանաչ՝ անուշ՝ հոտաւէտ՝ դառն՝ կարծր՝ հարթ՝ բարձրաձայն՝ ծաւալած՝ եւ այլն՝ անուններով ցուցուցած գաղափար-

ներնիս : Եւ խնդրոյն՝ ընդհանրապէս կը կարծուի թէ՛ մէկ պատասխան մը միայն կրնայ արուել, թէպէտ եւ ոմանք մասեմագիրք՝ պարզութեան չափազանց սէր ունենալէն՝ աս բանիս մէջ սխալեցան :

Ուստի որոշ միտք պահելու է աս բանը, թէ երկու աղբիւր կայ խորհրդոյ եւ հմտութեան : Երտաքին առարկաներէ զգայարանաց վրայ եղած փոփոխութիւնը մէկ մասին անմիջական առիթն է. մտքին կազմութիւնը ու գործողութիւններն ալ միւս մասին առիթը կամ աղբիւրն են : Են գաղափարները, որոնք ուղղակի զգայարանաց մէկուն կրնանք ընծայել, անիկայ անոնց ծագմանը չէ թի լոկ իբրեւ մէկ անուղղակի եւ ընդհանուր առիթը, հապա անոնց տեսակարար աղբիւրը սեպելով, անոնք Երտաքին գաղափարներ են. իսկ բոլոր միւսները Արքիմանրուն կարգը կը գասուին :

## ԳԼՈՒԽ Բ

## ՍԿԶԻՆԵԿԱՆ ԹԵԼԵԳՐՈՒԹԻՒՆ

§ 108 . Թելադրութեան նշանակութիւնը ու գործողութիւնը :

ՄՏԻՐ, ինք իրմէ, առանց զգայարանաց օգնութեանը, ըստացած հմտութիւններուն ու խորհուրդներուն մէկ քանին (Թելադրութեան պէտք է տալ : Եւ բառը, հոս վերաբերութիւն ունեցած նիւթին նայելով, լոկ մէկ պարզ սակայն կարեւոր ճշմարտութիւն մը կ'իմացընէ, որ է այս, թէ միտքը ինք իր գործունէութեամբը եւ զորութիւնովը այնինչ խորհուրդները կը ծագեցընէ իր մէջը : Եւանց ենթադրութիւն մը մէկտեղ խառնելու եւ կամ բանը եղանակաւորող ծանօթութիւն մը տալու՝ լոկ պարզապէս ասանկ բան մը մտքերնուս մէջ ըլլալը կը ցուցընէ : Իրտ աս անունը կու տայ մարդկային հմտութեան մէկ մասին սկիզբը եղող աս զօրութեանը : Վնութիւն մարդկային մտաց գրքին մէջ (Գլ. Բ, § Է) տեսակ մը ծանօթու-

Սկզբնական լեզուադրութիւն :

Թիւններ կը ցուցնէ, (օրինակի աղադաւ գոյութեան՝ մտքի անձին ծանօթութիւնները՝ եւայլն,) որոնց համար կ'ըսէ, թէ «ասոնք բնութեան դատումներն են, անանկ դատումներ, որ գաղափարներ մէկմէկու հետ բաղդատելով եւ համաձայնութիւններ կամ անհամաձայնութիւններ իմանալով ծագած չեն, հապա մեր բնութեանը անմիջական ազդումներն են». եւ աս խորհրդածութիւնը յառաջ տանելով, վերջապէս ան ծանօթութիւնները, որոնք ոչ ուղղակի զգայարանաց կրնանք տալ եւ ոչ արամարսնութեան կարողութեանը, ներքին կամ մտաւոր լեզուադրութեան կու տայ, ըսելով . «Երբում կը խնդրեմ լեզուադրութիւն բառը գործածելուս, վասն զի ասկէ աւելի յարմար անուն չեմ գիտեր մտքին այն կարողութիւնը ցուցնելու, որն որ կ'երեւնայ թէ փիլիսոփայից նկատողութեանը ամենեւին չէ հանդիպած, եւ որուն պարտական եմք մեր պարզ ծանօթութիւններուն շատը»:

Սկզբնական ալ իր Լմաստասիրական ճառերուն մէջ մեկ տեսակ մը մտաւոր ծանօթութիւններ կը ցուցնէ, մեր գիտակցութեան առարկաներուն հետ եղող, եւ անոնցմէ Լեւոպրէտ : Դամանակի՝ թուոյ՝ շարժման՝ յիշողութեան՝ նոյնութեան՝ անձնական նոյնութեան՝ ներկայ գոյութեան՝ եւայլն՝ ծանօթութիւնները ինքը ոչ արտաքին առարկաներու կու տայ, եւ ոչ ներքին մտաւոր գործողութիւններու, որոնց վրայ որ գիտակցութիւն կ'ունենանք. այլ միայն ներքին գործողութիւնները լոկ մէկ ասիլ մը կը սեպէ, որով միտքը այն գաղափարները կը ծագեցնէ կամ իւր Լեւոպրէտ ինք իր զօրութիւնով : ( ) օրինակի աղադաւ՝ պետողութեան ծանօթութեանը համար կ'ըսէ, թէ ոչ կը տեսնեմ, ոչ կը լսեմ, ոչ կը զգամ, եւ ոչ որ եւ իցէ զգայարանքով կ'իմանամ . ոչ ալ վրան գիտակցութիւն կ'ունենամ, ինտոր որ մարդ մը հաւատալուն՝ արամարսնելուն՝ երեւակայելուն վրայ՝ եւայլն, գիտակցութիւն կ'ունենայ, հապա միտքն ինքը իւր Լեւոպրէտ մտքին բնութեանը եւ ներգործութեանը բացարձակապէս էական եղող ազդում մըն է, եւ ոչ ուրիշ բան :

§ 109 . Գոյութեան, մտքի, անձնական գոյութեան եւ անձնական նոյնութեան ծանօթութիւնները :

Սկզբնական լեզուադրութեամբ ծագեալ մէկ բանի ծանօթութիւններ պիտի յիշենք հոս, առանց ամէնքն ալ համբիւր ձեռք շարնելու : ա . Գոյութեան : Գոյութիւնը լեզուադրութենէ ծա-

Սկզբնական թելադրութիւն :

Կա՞ծ ծանօթութեանց մէկն է : Վոյութեան ինքնին (այսինքն գոյ էակէ մը անկախութեամբ) ինչ ըլլալը քննելը անօգուտ բան է : Վոյութիւն բառը, երբոր մտքերնուս մէջ եղած գոյութեան հանդամանքը ցուցնելու համար կը գործածենք նէ, բոլորովին պարզ ծանօթութեան մը անուն է, եւ սահմանելու չ'գար : Իսկ աս ծանօթութեան ինտոր մտքերնուս մէջ ծագիլը համառօտիւ ասանկ կ'ընանք ստորագրել : Մեր բնութիւնը անանկ ստեղծուած է, որ չենք կրնար գոյ ըլլալ, առանց գոյութեան ծանօթութիւն ունենալու : Իսկ է թէ գոյութեան ծանօթութեան սկիզբը մեր իմացող եւ զգայուն բնութիւն ունենալէն անբաժանելի է չ'զատուիր : Անգգայ բան մը կրնայ գոյ ըլլալ առանց գոյութեան զաղափար ունենալու : Բայց մարդս, իմացողական կարողութիւններ ունենալուն, չ'կրնար չիմանալ թէ ինչ որ է նէ՛ է : Թէ որ կը խորհինք, ուրեմն բան մը կայ այն խորհելու կարողութեան տէրը եղող, թէ որ կը զգանք, ուրեմն չէ՛ թէ միայն զգալուն ներգործութիւնը կայ, հապա ան ներգործութիւնը ընող բան մըն ալ կայ :

բ. Միտք : Մտքի ծանօթութեան սկիզբն ալ գոյութեան նման է : Արկուքն ալ տիրապէս եւ ճշդութեամբ զգայարանաց չենք կրնար տալ : Միտք ըսած բանդ ոչ կը տեսնուի, ոչ կը շօշափուի, ոչ կը ճաշակուի, եւ ոչ սր եւ իցէ զգայարանքի տակ կ'իյնայ : Ոչ ալ յիշողութեան, կամ արամարանութեան, եւ կամ երեւակայութեան ուղղակի առարկայ է մտքի ծանօթութիւնը : Հապա բնականապէս կը ծագի, կամ պարզապէս մտքին գոյ ըլլալուն եւ կերպ կերպ զգացումներու եւ ներգործութիւններու տէր ըլլալուն իրական ճշմարտութենէն իւր Թելադրութիւնը : — Աս նոյն բանը կրնանք բսել մտքին բոլոր որոշ կարողութիւններուն համար ալ, ինչպէս են իմացման՝ յիշողութեան՝ զուգորդութեան՝ երեւակայութեան եւ կամական կարողութիւնները, չէ՛ թէ աս կարողութիւններուն ներգործութիւնները կամ Գործիչը, հապա նոյն իսկ կարողութիւնները : Այսինքն թէ, առանց վրայ՝ վերացեալ կերպով եւ իբրեւ որոշ խորհրդոյ առարկաներ հմտութիւն կ'ունենանք չէ՛ թէ ուղղապէս իմացմամբ, թէ ներքին ըլլայ թէ արտաքին, հապա ինքնաշարժութեամբ կամ թելադրութեամբ : Այն թէ ուղղապէս իմացմամբ ըսինք, վասն զի կարողութեանը եւ անոր գիտութեանը մէջ միջանկեալ բան մը կայ, այսինքն է այն կարողութեան ներգործութիւնը կամ գործողութիւնը, որն որ նոյն իսկ կարողութեանը վրայ ունենալու հմտութիւններնուս ասինքն է : Սկզբնական թելադրութիւնը աս առիթը ձեռք առնելով՝ ինչպէս որ ամբողջ մտքին վրայ, նոյնպէս եւ անոր որոշ կարողութիւններուն



Սղարմուկան Թեազարութիւն :

Քրայ ալ հմտութիւն կու տայ մեզի :

Գ. Ըս դիտողութիւնները՝ ինքնաշարժութեան կողմանէ՝ կը յարմարին նաեւ անյնտեղի գոյտ-լեւան եւ անյնտեղի նոյնտեղի ծանօթութիւններուն, ( թէ պարզ ծանօթութիւններ սեպենք, թէ յօգուածոյ : ) Ըս ծանօթութիւնները շատ կանուխ որպէս թէ կը բողբին նոյն իսկ մտքէն. ոչ երկայն եւ բազմաշխատ գործողութիւններէ ծագելով, հապա ազատաբար եւ ինքնաշարժութեամբ մտքէն թելադրուելով : Ընկալէս ճշմարիտ է աս բանը, որ մարդ կարող է աս ծանօթութիւններուն ծագելուն ճիշդ որտեղ կամ ինչ պարագաներու մէջ ըլլալը ցուցնել : Մենք չենք կրնար նայիլ՝ շօշափել շունչ առնել տալ՝ կամ շարժիլ կամ խորհիլ, աւանց աս ծանօթութիւնները ունենալու : Ըստք մեր իմացականին այնպիսի էական եւ կարեւոր արդիւնքներն են, որ անկէ չեն կրնար զատուիլ, կամ միայն առեն առեն եւ երկբայելի առիթներու մէջ պատահիլ. հապա ամէն ժամանակ եւ ամէն տեղ, եւ ամէն կերպ ներգործութեան եւ զգացման մէջ կան միշտ :

§ 110 . Միութեան ինչ ըլլալը եւ աս ծանօթութեան սկիզբը :

Ըս կարգէն եղող դիտելու արժան ծանօթութեանց մէկն ալ Միութեան ծանօթութիւնն է : Միութեան ինչ բան ըլլալը բացատրելու պիտի չաշխատինք, պարզապէս աս պատճառաւ, որ ասկէ դիւրին բան չ'կայ հասկընալու. տղայ չ'կայ, որ ճիշտ ըսել էն չ'գիտնայ : Եւ թէ որ աշխատինք ալ նէ, ինտոր կրնանք բացատրել : Երբիւրին բացատրութիւն մը կրնանք տալ՝ մասն մասն բաժնելով, նմանապէս յիտունը կամ քսանն ալ կրնանք բացատրել՝ աս ամբողջ թիւերը իրենց բազադրիչ մանր մասունքներուն բաժնելով. բայց երբոր միութեան կու գանք, հոն կանկ առնելու ենք, եւ անկէ անդին չենք կրնար անցնիլ :

Իրաւ է որ ասիկայ սահմանելու ջանքեր եղած է. բայց շատ քիչ այս տեսակ ջանքերու նման լոկ խօսք են, եւ ոչ ուրիշ բան : Միութիւնը ինչիս անբաժանելի տեղի բանի բաժանելու բան չ'ենք ըսած են : Ինչ հասկըցանք ասկէ : Մէկ բանի մը միութիւնը ան բանին անբաժանութիւնն է, կամ ուրիշ խօսքով՝ մէկ բանի մը միութիւնը իր միութիւնն է ըսելէն ինչ եւել բան կայ աս խօսքին մէջ :

Միութիւնը ինտոր որ ամենապարզ ծանօթութիւն մըն է, նրմանապէս մարդոց ամենէն կանուխ ունեցած գաղափարներուն մէկն է : Գոյութեան՝ անձնական գոյութեան եւ անձնական նոյն

նութեան ու ասոնց նման ծանօթութիւնները ինչ եղանակաւ եւ երբ կը ծագին նէ, աս ալ նոյն կերպով եւ գրեթէ ճիշդ նոյն ատենը կը ծագի : Արբոր մէկ մարդ մը ինք իր ծանօթութիւնը կ'ունենայ, յոյանի է թէ ինքզինքը երկուք՝ երեք կամ աստը մարդ չխորհիք, հասպ Ե՛կ : Ինքզինքը իրեւ ուրիշներէն որոշ մշտածելու կարող, եւ իր անձնաւորութիւնը իր բոլորտիքը եզրը ներուն հետ շփոթելու վտանգէն ազատ՝ ըլլալուն պէս, միութեան գաղափարն ալ կը ձեւացընէ : Այս իր գոյութեան գաղափարը ինչ յատակութիւն ունինէ մտքին մէջ, նոյնպէս յատակ եւ որոշ կ'ըլլայ միութեան վրայ ձեւացուցած գաղափարն ալ . եւ ասիկայ ան գաղափարէն անմիջապէս ետքը կը ծագի . վտան զի բանին բնութեանէն անհնարին է որ ինք իր վրայ իրեւ կրկին կամ բաժանեալ անձն ծանօթութիւն ձեւացընէ :

Միութիւնը ամէն կերպ համարողութեան արմատական տարրն է : Աս տարրին կրկնութեամբը կամ յաւելումովը ինչ թիւ որ ուզենք կրնանք շինել : Աս թիւերն ալ իրենց մէջը մէկմէկու հետ կրնան կապակցուիլ եւ լոկ փոփոխակի առնչութիւններ ցուցընել, կամ ուզենք նէ կրնանք ամէն ինչ եւ իցէ արտաքին առարկաներու վերաբերել, որոնց որ ընդհանուր անուն մը հընար է տալ նէ :

§ 111 . Յաջորդութեան ինչ ըլլալը եւ յաջորդութեան ծանօթութեանը սկիզբը :

Աս նիւթիս քննութեանը մէջ բնականապէս մեր դիտողութեանը առջեւը բացուող ծանօթութիւններուն մէկն ալ Համըրգոս-Լիւնն է : Աս բառը (յաջորդութեան ինքնին ինչ բան ըլլալուն վրայ երբոր խնդիր կ'ըլլայ) ընդհանուր վերաբերութիւն մը ունի, եւ կը ցուցընէ յաւետ գոյութեան եղանակ, քան թէ նոյն իսկ գոյութիւն, եւ մտքին վրայ առնելով մասնաւորաբար՝ մտքին ներգործութեանցը մէկ հանգամանքը կը ցուցընէ, եւ ոչ թէ նոյն իսկ ներգործութիւնները՝ որոնք որ ան հանգամանքովը կը կառավարուին : Արդարեւ մեկնութեան ամենեւին կարտութիւն չունեցող ամենայայտ բան մըն է աս, թէ մտքերնիս այլ եւ այլ ատեն իրարու յաջորդող այլ եւ այլ հանգամանքներու մէջ կ'ըլլայ . թէ մեր խորհուրդներն ու զգացումները, մշտակայ օրէնքի մը իշխանութեամբը, կարգով մէկմէկու ետեւէ կու գան : Աս է պարզ եղելութիւնը : Այս աս եղելութիւնը՝ երբոր կը պատահի նէ մտքերնուս մէջ՝ այն առիթը կ'ըլլայ, ուսկից որ յաջորդութեան ծանօթութիւնը իւր թելադրութիւնը մըն

քին : Պարզ մտաւոր հանդամանք մը ըլլալուն՝ սա ծանօթութիւնը՝ սահմանի չ'գար . սակայն ամէն մարդ ունի, եւ իրատուրք է կարծել՝ թէ ինչ բան ըլլալն ալ ամէն մարդ կը հասկընայ :

Բնածններնու նայելով՝ հարկ չէ որ սա ծածօթութեան ըսկիցբը արտաքին բանի մը տանք : Ըստոյդ է, թէ հոտաութեան զգայարանքը ուղղակի կերպով յաջորդութեան ծանօթութիւնը չ'կրնար տալ մեզի, եւ ոչ ալ շոշափման կամ ճաշակման զգայարանքը : Ըստ ալ աղէկ գիտենք, թէ խուլերն ու համրերն ալ ուրիշներուն չափ սա ծանօթութիւնը ունին : Այլրերն ալ, որոնք երբէք երկինքին երեսը տեսած չեն ու մեր օրերը՝ ամիսները եւ տարիները չափող արեւն ու լուսինը զիտած չունին, յաջորդութեան ծանօթութիւնը գիտեն : Ընտք ուրիշ մարդոց նման՝ քիչ թող ըլլայ՝ կը զգան, կը խորհին եւ կը տրամաբանեն, եւ հետեւաբար անհնարին բան է որ սա ծանօթութիւնն ալ չունենան : Այսն որոյ ասոր սկիզբը մեր ներսիդին է . Արեքին ներգործութեանց անհրաժեշտ հետեւութիւնն է ասոր ծագումը, թէպէտ եւ ճշմարիտ է թէ ետքէն արտաքին առարկաներու եւ դիպուածներու ալ կը վերաբերենք :

§ 112 . Տեւողութեան ծանօթութեանը սկիզբը :

Յաջորդութեան եւ տեւողութեան զաղափարներուն մէջ որոշմունք մը ըլլալ կը հասկըցուի սովորաբար, թեպէտ երկուքն ալ սահմանի չեն դար : Յաջորդութեան ծանօթութիւնը ժամանակի դիէն տեւողութենէն առաջ ըլլալ կը կարծուի . ( յաջորդութեան եւ տեւողութեան վրայ կը խօսինք կորնէ հիմայ, անոնց վրայ ունեցած ըմբռնումներնուս վերաբերելով է, եւ ոչ թէ ինքնիրեննուն մտածելով : ) Տեւողութիւնը՝ ինքն իրեն մըտածելով՝ յաջորդութենէ առաջ պիտի սեպանք բնութեան կարգին մէջ . բայց որովհետեւ յաջորդութեան ձեւով է զէպի մարդուս ունեցած վերաբերութիւնը, անոր համար բնականապէս յաջորդութիւնը սա ծանօթութեան մտքերնուս մէջ ծագելուն առիթը կ'ըլլայ : Արբոր յաջորդութեան ու նաեւ անձնական գոյութեան ծանօթութիւնները կ'ունենանք, անոնք հիմ մը կ'ըլլան մնայունութեան կամ տեւողութեան ծանօթութեանը : ուրիշ խօսքով՝ սա ծանօթութիւնը բնականապէս սա պարագաներուն մէջ կը ծագի կամ կը թելադրուի մեր մտքին :

Որովհետեւ՝ տեւողութեան ծանօթութեանը ծագմանը վրայ ունեցած սա դիտողութիւններնուս համեմատ՝ առանց յաջորդու-

Սկզբնական թեւադրութիւն :

Թեան ատ ծանօթութիւնը չենք կրնար ունենալ, այն պատճառաւ կը գտնենք որ կատարելագէտ քուն եղած ատեննիս տեւողութեան վրայ բան մը չենք իմանար, վասն զի անտենը գիտակցութիւն չենք ունենար յաջորդութեան մէջ եղող իմացական փոփոխութիւններուն վրայ: Աթէ մէկ մարդ մը կարենար բոլոր իր մտաւոր ներդործութիւնները կատարեալ կախման մէջ ըլլալով՝ հիմակունէ ինչուան յարութեան օրը քնանալ, բոլոր այն միջոցը ոչինչ պիտի թուէր իրեն: Բայցիս պարագաներու մէջ անցած բիրաւոր տարիները քանի մը օրէ կամ մինչեւ անգամ քանի մը ժամէ պակաս կ'ըլլային:

§ 113. Թացատրութիւն տեւողութեան ինչ ըլլալուն վրայ:

Յաջորդութեան ծանօթութեանը (նոյն իսկ յաջորդութիւնը չեմ ըսեր, այլ միայն անոր ծանօթութիւնը) տեւողութեան ծանօթութենէն առաջ եւ անոր էականապէս հարկաւոր ըլլալը այլ եւ այլ եղելութիւններ քիչ շատ կ'ապացուցանեն: Երտարք կարգի քնէածութեան օրինակներ կը պատմուի, թէ մարդիկ եղեր են որ շարաթներով եւ մինչեւ անգամ ամիսներով քնացեր են: Ետնց մէջ ամենէն զարմանալին Սամուէլ Չիլքոն անունով Բնգղիացի գործաւորին գիպուածն է: Ետիկայ անգամ մը, 1696ին, Եպրիլի իննէն ինչուան (Պոստոսի եօթը քնացեր է, տասնուեօթը շաբաթի չափ, կոկորդն ի վար մէյմէկ քիչ գինի լեցուելով անունգ առնելով: Ատքը արթնցեր ելքը հագուեր ու սննեակին մէջ քալեր նստեր է, ամենեւին գիտակցութիւն չունենալով թէ մէկ գիշերէն աւելի քուն քնացեր է: Ինչ որ ըսեր են չեն կրցեր հաւտացընել իրեն թէ այնչափ երկար ատեն քունի մէջ էր, մինչեւ որ արտերը ելքը ու նայեր է որ ան գարին ու վարսակը, որոնց ցանուիլը տեսած էր վերջին անգամ իր քնանալէն առաջ, հունձքի հասեր են: — Գաղղիոյ Գիտութեանց Արքունի Համալսարանին 1719ին գործքերուն մէջ, աս նիւթիս բացատրութիւն տուող բան մը կայ յիշուած, այսպէս: — Լողանի մէջ ազնուականին մէկը իր սպասաւորներէն մէկուն բան մը հրամայած ատենը յանկարծ լեզուն կը կապուի եւ բոլոր իր զգայութիւնները կը կորսնցունէ: Հատ դեղերու փորձ կ'ընեն, բայց երկար ժամանակ արդիւնք մը չ'տեսնուիր: Ետանկ վեց ամիսի չափ կորունկ քունի մէջ ինկածի պէս կը մնայ, բան մը չ'իմանալով: Սակայն վերջապէս՝ վերաբուժական մէկ քանի գործողութիւններ ըլլալով՝ յանկարծ նորէն կը բացուի լեզուն ու խելքը գլուխը կու գայ: Արտոր ինքզինքը կը գտնէ, ան սպասա-

## Սկզբնական թելադրութիւն :

ւորը, որուն որ քան մը հրամայէր էր, իր եղած սենեակը կը գտնուի, կը հարցընէ անոր՝ թէ ըսածս ըրիր, ամենեւին չ'զիտ-  
 ֆաղով որ իր հիւանդութեան ժամանակը անցած ատենը կար-  
 ծածէն խիստ շատ երկար ատեն մըն է :

§ 114 • Զամանակի եւ ժամանակի չափերուն ու յախտնականու-  
 թեան վրայ :

Երբոր տեւողութիւնը կը չափուի, 'անատենը կ'ըլլայ յամա-  
 նակ : Աս չափերը՝ ամէն մարդ գիտէ որ՝ մէկ քանի բնական եւ  
 արհեստական շարժումներով կ'ըլլան : Արեւին տարեկան շրջանը  
 ( աչքերնուս տեսածին պէս խօսելով ) տեւողութեան քաջէ ըս-  
 ուած մասը կը չափէ . լուսնին շրջանն ալ ուրիշ մասի մը չափն  
 է, որուն կ'ըսենք ամիս . արեւին օրական շրջանը մէկ օրոտն մի-  
 ջոցը կը չափէ . ժամադրոյցին երեսի լեզուակներուն շարժումներն  
 ալ ժամերու եւ վայրկեանի մանր տեւողութիւնները կը չափեն :  
 Ասոր կ'ըսենք յամանակ, որ ուրիշ բանով չ'տարբերիր տեւո-  
 ղութենէ, այլ միայն չափուելուն հանգամանքովը :

Յաւիթնախնայնութիւն ըսածնիս ուրիշ բան չէ, այլ միայն ան-  
 կատար կամ մանաւանդ անվախճան ժամանակ : Մենք մեր գո-  
 յութեանը անցեալ ամիսներուն՝ օրերուն եւ տարիներուն վրայ  
 կը նայինք, կը նայինք եւս դէպ ի յառաջ, կը տեսնենք որ դա-  
 րեր դարերու վրայ հորովելու ու ժամանակէն ժամանակ ծնանե-  
 չու վրայ է միշտ . այս կերպով մտքերնուս մէջ անկատար ժա-  
 մանակ մը, միշտ յառաջ գացող՝ բայց երբէք չ'մընցող ժամա-  
 նակ մը կ'ըմբռնենք, ու աս յօդուածոյ ծանօթութեանը Հաւի-  
 տենականութիւն անունը կուտանք :

§ 115 • Մեծցի գաղափարին ծագումը արտաքուս չէ :

Սկզբնական թելադրութեան բաժանմանը տակ քննելու բա-  
 ներնուս մէկն ալ Մեծցի գաղափարն է : — Թէ որ աս գաղա-  
 փարը արտաքուստ ծագած ըլլար, թէ որ կարենայինք տիրապէս  
 ըսել թէ զգայարանաց միջոցովը կը մտնէ մարդուս միտքը, կա-  
 րող պիտի ըլլայինք զանկալ զգայարանքի մը վերաբերել : Բայց  
 տեսնենք թէ կրնա՞նք մէկ զգայարանքի մը տալ : Հայտնի է թէ  
 միջոցի ծանօթութիւնը ճշակման՝ հոտառութեան կամ ըտզու-  
 թեան չ'տրուիր : Արեօք շջափականին կրնա՞նք տալ . զգալու  
 նբութ մըն է աս բանը : Մէկ վայրկեանի մտածութիւնը հաւանե-

Վկայական թեկադրութիւն :

Ի պատասխան մը կը թելադրէ մարդուս : Ընչուչտ ասանկ ճանչնալու է ամէն մարդ, թէ շօշափման զգայարանքով՝ ընդդիմակացութիւն ունեցող իրերէն ի զատ եւ ոչ մէկ բանի մը վրայ հմտութիւն կրնանք ունենալ . ( թերեւս բաց ի մի միայն տարութեան եւ պաղութեան զգայութիւններէն, որոնք սովորաբար աւոր կ'ընծայուին : ) Եւ ընդդիմակացութիւնը կրնայ շատ ըլլայ, կամ քիչ ըլլալ, սակայն միշտ հարկ է որ ընդդիմակացութիւն մը ըլլայ : Իսոյց ո՞վ կրնայ ըսել թէ ընդդիմակացութիւնը միջոցին ալ մէկ յատկութիւնն է, եւ կամ միջոցի վրայ ունեցած ծանօթութեանը մէջ ընդդիմակացութիւն կը մտնէ մէկ կերպով մը :

Թէ որ աս ծանօթութիւնը ուղղակի տեսութեան առարկայ սեպկէք ալ նէ, ասիկէ պակաս առարկութիւններ չելեր գէմերնիս : Տեսութեան զգայարանքը գոյնէ ի զատ ուրիշ բանի վրայ ուղղակի հմտութիւն չ'տար . բոլոր ուրիշ զգայութիւնները շօշափականէն սկիզբն առած են, եւ տեսութեանն եղած են փոխադրութիւնով : Ընչուչտ մէկը չ'կայ որ միջոցի վրայ կարմիրի ձերմակի խօսքեր ընէ, կամ ինչ եւ իցէ գոյն մը տայ աս բանին, եւ կամ գունաւոր ըմբռնէ մտքովը :

Ուրիշ մտածելու բան մ'ալ կայ միջոցի գաղափարին զգայարանաց տրուելուն գէմ, որ տեսութեան ալ շօշափման ալ հաւասարապէս կը պատշաճի : Եւ երկու զգայարանաց տակ ինչպէ՞ր ալ ամէն բան ( բաց ի արդէն յիշածներնէս ) ձեւ, սահման, չափ, տեղ, եւ այլն, կ'ունենայ : Սակայն աս քննած գաղափարնիս բոլորովին զերծ է ասանկ բաներէ . ասիկայ ամենեւին պարագրութիւն կամ ձեւ չունի : Եւ յնպէս որ եթէ ամէն պարփակեալ եւ անջատեալ առարկաներէ անդին պարագրութեան մայրերը անցնելու ըլլանք նէ, ան տեղը ինքզինքնիս միջոցի սահմանին մէջ դեռ նոր մտած պիտի գտնենք : Թէ որ մտքովնիս բոլոր մեր շուրջը անմիջապէս պատող ձեւաւոր իրերէն, նոյն իսկ աշխարհէն, եւ տիեզերաց մէջ գտնուող բոլոր աշխարհքներու գրութիւններէն անդին անցնինք երթանք, ու հասնինք ինչուան ամենէն հեռու եղող աստղին ծայրը, եւ անտեղը կայնինք ու աչքերնիս մէջմը վար ու մէջմ'ալ վեր գարձրնելու ըլլանք նէ, անատեն միջոցի գաղափարը անանկ զորութիւնով մը ու յատկութիւնով մը կ'երեւնայ մտքերնուս մէջ, որուն ամենեւին փորձառու եղած չենք առաջ : — Եւ գիտողութիւններէն բացայայտ կերպով աս եզրակացութիւնը կ'ելէ, թէ միջոցի ծանօթութիւնը չենք կրնար զգայութեան տալ, որ եւ իցէ մասի որ ըլլայ, եւ տիրապէս խօսելով արտօքուստ ծաւ գած չէ :

§ 116. Միջոցի գաղափարին սկիզբը թեւադրութենէն է :

Սրբմն ինչի՞ տանք միջոցի ծանօթութեան սկիզբը: Ըսող վրայ՝ հարկ եղած առեմը՝ միայն մէկ պատասխան մը ունինք տալու. մաքին բնական ճնունդն է աս ծանօթութիւնը. հոգիին մէկ ստեղծումն է, որ իր տարրական կազմութենէն եւ ներգործութենէն բոլորովին անբաժան է՝ չգատուիր. ներքին եւ սկզբնական զրգումէ մը յառաջ եկած ազդում մըն է: — Կը թնայ մեզի աս ալ եվելցընել որ թէպէտ աս ծանօթութիւնը ուղղակի զգայարանաց չենք կրնար տալ, հապա թեւադրութենէ ծագած պիտի սեպենք. սակայն աս ալ կայ որ ստուգութեամբ մէկ մասնաւոր առիթ մը չենք կրնար ցուցընել, որ անտանը ծագած ըլլայ: Եւ սակայն աս անտարակոյս ճշմարտ է թէ քիչ շատ հաւանականութիւն ունեցող կարծիքներ կրնանք ընել աս բանիս վրայ: Օրինակի աղագաւ՝ թէ որ ըսենք թէ աս գաղափարին ծագմանը սկզբնական առիթը շարժումը կրնայ եղած ըլլալ, բոլորովին ոչինչ կարծիք մը ըրած չենք ըլլար: Մեր մանկութեան կանուխ հասակին մէջ ըսենք թէ ձեռքերնիս կը շարժենք բան մը բռնելու, կամ լոկ խաղու համար, եւ կամ մէկ տեղէն մէկալը կը փոխադրենք մարմիննիս. ու թէ որ հաւանական ալ չէ նէ, գէթ անհնարին չէ, որ ասանկ առիթով մը միջոցի գաղափարը հոգիներնուս մէջ ծագած ըլլայ:

Սակայն մէկ ուրիշ կարծիք մը կայ՝ աւելի զիտողութեան արժան: Օգայարանաց միջոցաւ արտաքին մարմիններու հետ ծանօթանալիս կրնայ աս ծանօթութեանը ծագմանը առաջին առիթը ըլլալ, թէպէտ նոյն իսկ զգայարանքները անոր ուղղակի ազդիրը չեն: Եւ ստոյգ է, թէ չենք կրնար ի՞նչ եւ իցէ մարմին մը, խնձոր մը՝ վարդ մը՝ ծառ մը՝ կամ տուն մը մտածել, աւանց միշտ անոր հետ մէկտեղ միջոցի գաղափարը հարկաւորապէս միացած զուգընթաց գտնելու: Չենք կրնար անանկ մարմին մը բմբռնել, որ փեղ իջ չլայ: Եւնպէս որ միջոցի ծանօթութեան ծագմանը միջոցը գոնէ ինչուան առաջին անգամ ի՞նչ եւ իցէ արտաքին մարմին մը ճանչանալուս առեմը կրնանք տանիլ: Ուրիշ խօսքով՝ ասիկայ մաքին իր ամենէն առաջ ունեցած խնայողութեան հետ մէկտեղ եղած մէկ ձիրքն է:

§ 117. Զորութեան ծանօթութեանը սկիզբը

Թեոլոգիական բաժանմանը կը վերաբերի տիրապէս Օգոստինիան գաղտնիքը: Ամէն մարդ ունի աս ծանօթութիւնը. եւ ամէն մարդ կը զգայ նաեւ, թէ աս ծանօթութեան նմանը եղող իրական բան մը կայ. ուրիշ խօսքով՝ թէ զորութիւն բնութեամբ մանր չէ թէ լոկ խորհուրդ մըն է, հապա մէկ մտքով մը իրական գոյութիւն մը ունի: Աս ալ կրնանք եւելցնել, թէ ամէն մարդ գիտէ եւս՝ որ թէպէտ եւ տեղ մը մէկ մեծ սկզբնական աղբիւր մը կայ զորութեան՝ ամէն ստեղծուած էսկաներէ անկախ, սակայն ինք ալ զորութեան տարրէն մէկ մաս մը (արդարեւ քիչ, սակայն մէկ մաս մը) ունի իր մտքին եւ անձին մէջ: Հիրաւի մէկ Օգոստինիւն մը կայ, անքննելի եւ անիմանալի, որ լեռները իրենց հիմերուն վրայ հաստատեց, որ ովկիանոսի կատաղութիւնը կը բորբոքէ ու կը ցածցընէ, եւ որ արեգակը իր ընթացքին մէջ յառաջ կը մղէ. եւ սակայն աս ալ ճշմարիտ է, թէ մարդս, թէպէտ եւ խոնարհ աստիճան մը ունի բանաւոր եւ պատասխանատու էակաց գասին մէջ, Տեսութեան իրեն շնորհած սահմանին մէջ գործելու չափ զորութեան տէր է իրօք, եւ ասիկայ իր բնութեանը մէկ յատկութիւնն է: Օգոստինիւն իրական ճշմարտութեանը պարզ մէկ ցուցմունքն է ասիկայ: Օգոստինիւնը գոյութեան՝ բանաւորութեան եւ պատասխանատուութեան հետ ձեռք ձեռքի կ'երթայ: Չըլլար գոյութիւն, թէ բանաւոր ըլլայ թէ անբանաւոր, առանց զորութիւն ըլլալու՝ կամ ան գոյութեան մէջ եւ կամ անիկայ պահող ուրիշ բանի մը մէջ: Չկայ պատասխանատուութիւն, առանց աննոյն պատասխանատու էակին մէջ եւ անոր մասը եւ իր պատասխանատուութեանը հիմը եղող զորութեան:

§ 118. Զորութեան գաղափարին ծագմանը առիթները

Բայց հոս զխաւոր խնդիրը զորութեան ինքնին ինչ բան ըլլալուն կամ մարդուս իրօք զորութեան տէր ըլլալուն վրայ չէ, հապա թէ ինչ պարագաներու մէջ զորութեան ծանօթութիւնը կը ծագի մարդուս մտքին մէջ: Աս ծանօթութեան ծագմանը առիթները, որչափ որ կարող ենք դատել նէ, կ'երեւնայ թէ իրեք են: — (1.) Բնութեան մէջ պատահած բոլոր նախորդութեան եւ յաջորդութեան գիպուածները: Մենք անանկ ստեղծուած ենք, որ մեր կանուխ հասակին մէջ այսպիսի նախորդու-



Սկզբնական Թեազրութիւն :

Թեան եւ յաջորդութեան դիպումսններու վրայ աս առաջարկութիւնը կը հաստատենք եւ ասիկայ իբրեւ անուրանալի ճշմարտութիւն կ'ընդունինք, թէ առանց պատճառի՝ գոյութեան սկզբնաւորութիւն կամ փոփոխութիւն չըլլար : Եւ աս առաջարկութեանը մէջ նեզործականութեան կամ զօրութեան գաղափար կայ : — (2.) Կամքին միանանց գործողութիւններուն վրայ իշխելը : Ս'եր բնութիւնը անանկ կազմակերպած է, որ երբոր մարմիններնուս մէկ մասը շարժել կ'ուզենք, ու աս կամեցումէն ետեւ շարժումը կը հետեւինէ, զօրութեան գաղափարը կ'ունենանք : — (3.) Կամքին միւս մտաւոր կարողութիւններուն վրայ իշխելը : Եւ յսինչ սահմաններով պատճառ կայ աս կարծիքը բնելու, թէ կամքը կարող է ինչպէս որ մտքինին՝ նոյնպէս եւ մտքին զօրութիւններուն վրայ կանոնաւորիչ իշխողութիւն մը բանեցունելու : Եւ երբոր գիտակցութիւնով աս իշխողութեանը ի գործ դրուիլը կը զգանք, թէ շատ եւ թէ քիչ, ասիկայ առիթ մը կ'ըլլայ աս ծանօթութեան ծագմանը : Եւ միջոցին աս ծանօթութիւնը մտքերնուս մէջ երեւան կ'երևէ կամ կը թելադրուի : Աչ՝ Կրեթական աչքով կր անսնուի եւ ոչ շօշափման ենթակայ է : Հապա երկնից հաստատութեան խորութիւններէն երեւան ելող աստղի մը պէս՝ մտքին մէջէն ինքնիրենը վեր երեւնալով, որոշ յստակ կերպով իմացականին տեսութեանը առջեւը կը բացուի :

§ 119 . Բարիի եւ չարի գաղափարներուն վրայ :

Չարն ու Բարին ալ զուտ Հասկըցողութեան բմբունումներ են . այսինքն՝ Հասկըցողութեան ինք իր ներքին բնութեանը արդիւնքէն յառաջ եկած, եւ ոչ թէ զոչայարանաց վրայ ունեցած կախումէն : Ս'եր իմացականութիւնը անանկ ստեղծուած է, որ երբոր իրական բարիի եւ չարի առիթներ կը պատահին, երբոր բարոյական հաւանութիւն եւ անհաւանութիւն շարժող առարկաներ վեր դիտողութեանը առջեւը կը դրուին, բնականապէս եւ հարկաւորապէս Բարիի եւ Չարի գաղափարները կը ծնանին մեր մէջը : Եւ ծանօթութիւններուն սկիզբը հոս դասուելուն վրայ Վըաւորո՞ք՝ Աղիարո՞ք՝ Քուզին եւ ուրիշ ծանցուած երեւելի եւ ընտրութեան տէր մատենագիրներ միաբան կ'երեւան : Եւ առանց աս կարգաւորութիւնը կարեւոր բուն մը կը հասկցուի Բարոյականի վարդապետութեանը : Թէ որ աս գաղափարները լոկ իմացականութեանէն կը ծագին, եւ՝ ինչպէս յայտնի է՝ պարզ են, ուրեմն ասոնց իւրաքանչիւրը մէկ որոշիչ բնութիւն մը ունի :

Սկզբնական Թեաղարութիւն :

Ի բարանչիւրը ինքնին էակութիւն մը ունի . եւ անհնարին է զանոնք մէկմէկու նման կամ մէկմէկու հետ փոխադրելի ըմբռնել : Սիւնաթեան եւ Ժամանակի, կամ Քրիստոսի եւ զբրուլեան ըմբռնումներն իս ինտոր անմասն են նէ իրարու, անանկ ալ ասոնք : Այլ թէ որ չարի ու բարիի գաղափարներնս ասանկ մէկմէկէ տարբեր են նէ, ըսել է թէ նոյն իսկ չարն ու բարին ալ անանկ են : Քրիստոսքով՝ բարին երբէք չար չկրնար ըլլալ, ոչ ալ չարը բարի . յախտեան բաժնուած են մեկմէկէ, իւրաքանչիւրը իր շրջանակին մէջ մնալով . եւ ասանկով բարոյական որոշմանց անփոփոխութեանը վարդապետութեանը մէկ հաստատուն հիմ մը կ'ունենանք : — «Չարին ու բարիին որոշումնքը, կ'ըսէ Քուզին, այսինչ այնինչ բանին վրայ սխալ կերպով կրնայ ըլլալ, մասնաւոր առարկաներու վրայ կրնայ փոփոխիլ, ժամանակով աւելի յատակ եւ աւելի ուղիղ կրնայ ըլլալ, միանգամայն եւ վերջապէս բոլոր մարդոց նկատմանը մէջ նոյնը մնալով : Այսիկայ բանականութեան մէկ ընդհանուր ըմբռնումն է, եւ անոր համար ամէն լեզուի մէջ ալ կայ մարին աս արգիւնքներն ու հաստատրիմ ցուցմունքները : — Այլ չէ թէ միայն ընդհանուր է աս որոշումնքը, հապա հարկաւոր ըմբռնում մըն է : Անգամ մը աս գաղափարները ընդունելէն ետեւ՝ ալ ի զուր է բանականութեան զանոնք մերժելու . եւ կամ ճշմարիտ ըլլալուն վրայ տարակուսելու աշխատիրը : Անհնար է որ յաջողի : Չկրնար մէկ մարդ մը իր ուղելովը մի եւ նոյն գործը արգար եւ անարգար նկատել : Աս երկու գաղափարները զիրենք մէկմէկու հետ փոխանակելու բոլոր աշխատութիւնները ոչինչը կը հանեն զխոսովն : Իրենց ենթականները կրնան փոխուիլ, սակայն իրենց բնութիւնը ոչ երբէք» :

§ 120 . Բարոյական արժանաւորութեան եւ անարժանաւորութեան գաղափարներուն սկիզբը :

Բարիի ու չարի գաղափարներուն հետ սերտ կապակցութիւն ունին բարոյական Միջամասորութեան եւ Մասժամանաորութեան գաղափարները : Իննութեան կարգին մէջ ( որն որ երբեմն որբամասնամասն կարգ կ'ըսուի ) չարի ու բարիի գաղափարները առաջ են : Առանց չարի ու բարիի նախընթաց գաղափարները ունենալու՝ անհնար էր մեզի բարոյական արժանաւորութեան եւ անարժանաւորութեան գաղափարները ձեւացընել : Քանզի ինչ արժանաւորութիւն հնար է գնել անոր վրայ, որուն վրայ որ արգարութիւն չենք տեսներ, կամ ինչ անարժանաւոր

րութիւն կրնանք գնել անոր վրայ, որուն վրայ որ անարդարութիւն չ'տեսնուիր : Ըրժանաւորութիւն ըսելով անոր նախընթաց եւ հարկաւոր պայմանը եղող առաքինութիւն կիմացուի, եւ նմանապէս անարժանաւորութիւն ըսելով անտարակոյս առաքինութեան պակասութիւն կամ մոլութիւն ըլլալ կը հասկըցուի : Թէպէտ եւ արժանաւորութեան եւ անարժանաւորութեան գաղափարները պարզ ըլլայնուն համար՝ սահմանի չեն գար, սակայն իրենց հաւաստութիւնը եւ մեր մտաւոր իմացողութեանը առջևը յստակ երեւնալին երկրայութիւն չբերցընէր ամենեւին, եւ աս ալ անտարակուսելի է, թէ մարդու բարոյական բնութեանը վրայ ըրած դատողութիւններնու շատին հաստատուն եւ հաւանելի հիմն են :

§ 121. Աւրիշ հմուտեան տարրեր թելադրութենէ ծագած :

Ըս աղբիւրէն ծագած գաղափարներուն վրայ խօսած ատեն նիս աւելի աղէկ սեպեցինք անոնց սկիզբը ցուցընելու համար թելադրութիւն բառը գործածել, որն որ Բիս եւ Աղբարդ առաջարկած ու գործածած են, քան թէ Տրամաբանութիւն բառը բանեցընել, որ Քանդ առաջարկած եւ Քուզին ու մէկ քանի ուրիշ մատենագիրներ ընդունած են : Հասարակ խօսակցութեան եւ լեզուի ընդհանուր կիրառութեանը մէջ տրամաբանութիւն բառը աւելի մոքին եղբակացընող կարողութիւնը կը ցուցընէ, քան թէ թելադրող կարողութիւնը. եւ թէ որ նոր նշանակութիւն մը տալով՝ բառին բուն իսկ իր նշանակութիւնը ծնունդ կամ շփոթենքնէ, ետքէն նոր բառ մը հնարել պէտք կ'ըլլայ եղբակացութեան կամ հետեւութեան գործողութիւնը ցուցընելու համար : Բայց թէ այսպէս եւ թէ այնպէս, հաւանական կը կարծենք թէ ասանկ կարողութեան մը հաւաստութիւնը եւ անոր խիստ մեծ կարեւորութիւնը հաստատելնուս դէմ անմիաբանութիւն մը կամ ընդդիմութիւն մը չ'կայ : Մեզի ալ անտարակոյս նոյն իսկ բանը եւ անոր բնութիւնը պէտք է աւելի, քան թէ լոկ անունը :

Ըս օգտակար նիւթը հոս ձգելնէս պէտք չէ որ հասկըցուի թէ թելադրութեան տուած ծանօթութիւնները միայն գոյութեան, մոքի, անձնական նոյնութեան, միութեան, յաջորդութեան, տեւողութեան, զորութեան գաղափարներն ու միւս յիշուած ծանօթութիւններն են : Ղիւրին չէ քանի հատ ըլլալին կատարեալ ճշդութեամբ համրելը. սակայն մարդկային հմուտեանց ծննդարանութիւնը ըրած ատեննիս, կրնանք հա-

Սկզբնական թելադրութիւն :

ւանականաբար ճշմարտութեան, աղատութեան, դիտաւորութեան կամ խորհուրդի, հարկաւորութեան, յարմարութեան կամ պատկանաւորութեան, իրականութեան կամ հաւատութեան, կարգի, բազմաւորութեան, բոլորակամութեան, անսահմանութեան, հնարաւորութեան, անհունութեան, երջանկութեան, վարձքի, պատիժի գաղափարներն ու գուցէ շատ ուրիշ ծանօթութիւններ ալ աս աղբիւրին տալ :

§ 122 . Թելադրութիւնը ու միայն գաղափարներու, այլ սկզբունքներու ալ աղբիւր մըն է :

Ա՛նկ ծանօթութիւն մըն ալ կը մնայ տալու : Սկզբնական թելադրութիւնը չէ թէ միայն գաղափարներու, ( եւ մասնաւորաբար հիմնական ու անփոփոխ գաղափարներու, ) այլ նաեւ ո՛րքո՞ւնի՞նչու ալ աղբիւր մըն է : Տրամաբանական կարողութիւնը, որ բնութեամբ էականապէս բաղդատող եւ հետեցընող կամ եզրակացընող կարողութիւն մըն է, իրմէն առաջ՝ իրեն հաստատութեան հիմ ըլլալու եւ իրմէն աւելի հեղինակութիւն ունեցող բան մը կ'ուզէ, որ անկէ՝ իրրեւ շղթային առաջին օղակէն՝ հետեւութեան գործողութիւնը ըսկըտի : Այս բաղդատութեան եւ հետեւութեան գործողութեան հիմը թելադրութեան աղբիւնքն է : Աս ապրական կամ գերագոյն նախադասութիւններուն թուոյն մէջ, որոնք ընդհանրապէս եզրակացընող կարողութեան ներգործելուն առաջուրնէ կարեւոր պայմաններ կը ծանցուին, մէկ քանի հասկան մասնաւորաբար մտադրութեան արժան, ինչպէս են ասոնք . — Ասանց պատճառի գոյութեան սկզբնաւորութիւն կամ փոփոխութիւն չըլլար, — Սխառն ու նիւթը միօրինակ եւ մշտակայ օրէնքներ ունին, — Հստակութիւնը ենթակայ մը ըլլալ կը նշանակէ, որուն որ յատկութիւնն է, — Ապատակ մը յառաջ բերելու համար մէկմէկու հետ յարմարցած միջոցներու գոյութիւնը խորհող էակի գոյութիւն կը ցօյցընէ :

## ԳԼՈՒԽ Գ

## ԳԻՏԱԿԱՆՈՒԹՅԱՆ

§ 123 . Գիտակցութիւն՝ երկրորդ ազգիւր ներքին գիտութեան .  
անոր բնութիւնը :

(1) ԳԻՏԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԲՆԵՍՆԵՐԸ, եւ արտաքին իմացումներէն որոշե-  
լով՝ ներքին ըստած հմտութեան երկրորդ ազգիւրը Գիտակ-  
ցութիւնն է: Գիտակցութիւն ըսելով պիտի իմանանք մտքին ան  
կարողութիւնը, որով հմտութիւն կը ստանանք ան բաներուն  
վրայ, որոնք բուն իսկ մեր մտքին կը վերաբերին, եւ առանց  
մտքին գոյ չեն կրնար ըլլալ: Արեւակայութիւնը ու տրամաբա-  
նութիւնը խորհուրդի իրական առարկաներ ցուցնող բաներ  
են. սակայն յայտնի է թէ աս բաները գոյ չենք կրնար են-  
թադրել՝ երեւակայող եւ տրամաբանող մտքի մը գոյութենէն  
անկախութեամբ: Ըսոր համար պիտի սեպենք թէ ամէն գի-  
տակցութեան ներգործութիւն գոնէ հետեւեալ իրեք որոշ  
ծանօթութիւնները իր մէջը կը բովանդակէ. այսինքն, (1.)  
]նքնութեան կամ անձնական գոյութեան գաղափարը, որն  
որ չէ թէ ուղղակի գիտակցութիւնով, հապա թեւադրութիւ-  
նով կ'ունենանք, եւ կ'արտայայտենք ինչս՝ էս ինչս՝ եւ էս գե-  
րանուններով. (2.) Ինչ եւ իցէ մտաւոր յատկութիւն մը,  
հանգամանք մը, կամ գործողութիւն մը. եւ (3.) Ստացման  
կամ իրենը ըլլալու վերաբերական իմացում մը: Օրինակի  
ազդած՝ մէկը կ'ըսէ, թէ սիրոյ կամ Բարիութեան կամ գոյման  
Գիտակցի էմ էս. հիմայ հոս ինքնութեան կամ անձնական գո-  
յութեան գաղափարը ցուցուած է էս բառով, ուրիշ մտաւոր  
հանգամանք մըն ալ կայ իր յատուկ անունովը ըստած, որ է  
Բարիութեան կիրքը, եւայն. Գիտակցի էմ խօսքն ալ այն վերա-  
բերութեան զգացումը կը ցուցնէ, որն որ բարկութեան կիր-  
քին առաջարկութեան ենթակայինը ըլլալը անմիջապէս եւ  
հարկաւորապէս կը յայտնէ: Այլ աս բանիս մէջ, ինչպէս նա-  
եւ ամէն ինչ եւ իցէ պարագայի մէջ, ուր որ աս գիտակցու-  
թիւն բառը կը գործածուի, իր նշանակութիւնը գիտակցու-

Թեան տէրը եղող ենթակայէն կամ բուն իսկ հոգիէն գուրս գոյութիւն ունեցող բանի մը չ'տարածիր տիրապէս :

§ 124 . Աւրիչ ծանօթութիւններ բուն գիտակցութեան առարկաներուն վրայ :

Արովհետեւ բաներ կան, որ անոնց վերաբերութիւն ունի Գիտակցութիւնը, անանկ բաներ ալ կան, որոնց վերաբերութիւն չունի, վասն որոյ արժան է որ աս մասին աւելի քննութիւն ընենք աս բանիս վրայ : — (1.) Անցեալ ժամանակներու մէջ մտքերնուս մէջ ծագած խորհուրդներուն կամ ներսիդինիս եղած շարժութիւններուն վրայ ներկայ վայրկենին գիտակցութիւն ունիմ չենք կրնար ըսել, թէպէտ ներկային մէջ ան անցած բաներուն վրայ մտքերնուս մէջ ծագած ան նոր հանգամանքին վրայ գիտակցութիւն կրնանք ունենալ, որն որ ան բաներուն յիշողութիւնը կրկոչենք : — (2.) Գարձեալ Գիտակցութիւնը ուղղակի կապակցութիւն չունի ան բաներուն հետ, թէ նիւթական ըլլան թէ աննիւթ, որոնք թէպէտ ներկային մէջ գոյ են՝ սակայն մտքէն գուրս են, կամ՝ ուրիշ խօսքով՝ մտքէն անկախութեամբ գոյ են :

(Որինակի համար՝ ինչ եւ իցէ նիւթական բանի գիտակցութիւն ունինք չենք կրնար ըսել, չենք կրնար գիտակցութիւն ունենալ քալած երկիրնուս, կերած կերակուրներնուս, հագած հանգերձներնուս, կամ ուրիշ ինչ եւ իցէ բանի վրայ, որուն հետ որ հաղորդութիւն ունինք, այլ միայն անոնց ներսիդինիս յառաջ բերած ներգործութիւններուն, ճաշակման՝ տաքութեան եւ պաղութեան, կարծրութեան, դիմահարութեան եւ տարածութեան, եւ ասոնց նման բաներու զգայութիւններուն վրայ գիտակցութիւն կ'ունենանք :

(3.) Աս գիտողութիւնը աննիւթական բաներու եւ նոյն իսկ մտքին ալ կը վերաբերի : Մենք ուղղակի գիտակցութիւն չենք ունենար մինչեւ անգամ մեր մտքին գոյութեանը վրայ, հապա միայն իր յատկութիւններուն ու գործողութիւններուն, եւ իր գոյութեանը վրայ եղած ան հաստատուն հաւատքին կամ գիտութեանը վրայ գիտակցութիւն կ'ունենանք, որն որ ան գործողութիւններէն հարկաւորապէս կը ծագի :

§ 185 • Գիտակցութիւնը հաւատքի հիմն կամ օրէնք է :

Պէտք է որ ծանուցանենք հոս, թէ գիտակցութիւնը հաւատքի հիմն կամ օրէնք է, եւ ասոր ներգործութիւններուն վրայ եղած հաւատքը Ազգանական իմեղսութեան ներգործութեանցը վրայ եղած հաւատքին նման՝ բարձրագոյն աստիճանի հաստատութիւն ունեցող հաւատք մըն է: Արբոր մտքերնուս մէջ զգայութիւններ կամ խորհուրդներ կը ծագին եւ կամ մասնաւոր իմացական գործողութիւններ կը դառնան, անհնար է, մեր կարողութեանէն բոլորովին դուրս է մտքերնուս մէջ այդ բաները ըլլալուն վրայ առանց ամենեւին երկբայանաց հաստատուն հաւատք չունենալը: Ըստ հաւատքին պատճառը կրնայ հարցընել մէկը, սակայն ուրիշ պատճառ չունինք տալու, բայց միայն աս՝ թէ մեր բնութեանը մէկ վերջին եւ իշխեցող սկզբանը արգիւնքն է ասիկայ. եւ անոր համար է որ մէկ բան մըն ալ երբէք աս աղբիւրէն յառաջ եկած ճանաչմունքները չ'կրնար խափանել կամ զանոնք մեզմէ հանել:

Այլ մարդկային մտաց պատմութիւնն ալ բնաւ մէկ օրինակ մը չ'ցուցըներ, որ գոնէ երեւութաբար դէմ գայ աս դիտողութեանս, բացի մէկ քանի անտարակուսելի խելագարութեան օրինակներէ: Գիտակցութեան հաւատոյ հիմն եւ օրէնք ըլլալուն դէմ կրնայ խօսիլ մէկ մարդ մը կամ զբօսանքի եւ կամ ուրիշները տարակուսեցընելու համար. բայց երբոր դէմ կենալը ոչ միայն բանիւ, այլ իրօք եւ անկեղծութեամբ էնէ, ալ անիկայ ուրիշ տեսակ բան կ'ըլլայ, անանկը, ընդհանուրին ճանաչմանը համեմատ, իր բնութեանը իշխողութեանէն արձկուած եւ ճշմարտապէս ինքզինքը կորսնցուցած է: Ըսանկ միտք մը անհնար բան է որ մէկ հաստատուն եւ հանգիստ կենալու տեղ մը գտնէ. ամենահաստատ ճշմարտութիւններն ու ամենապլանդակ եւ տարօրինակ ծանօթութիւնները երկուքն ալ գրեթէ մի եւ նոյն դիպուածական ընդունելութեանը եւ մերժմանը ենթակայ կ'ըլլան. երեւակայութեան ցնորքներն ու իրական ճշմարտութիւնները կը շփոթին իրար կը խառնուին, եւ բոլոր միտքը անվախճան եւ անդարմանելի խառնակութեան տեսարան մը կ'ըլլայ:

§ 126 . Վիտակցութիւնով ունեցած հմտութիւններնու մէկ քանի օրինակները :

Վիտակցութեան հոս Վիտակցութեան տակը ինկող բաղմամբիւ մտաւոր հանգամանքները , գաղափարները՝ շարժութիւնները՝ բաղձանքները եւ կամեցումները համբել . եւ այժմ աչքերնուս առջին ունեցած նպատակներնուս հետ կապակցութիւն ունեցող մասնաւոր պատճառ մ'ալ չունինք ասանկ կատարեալ համարողութիւն մը ընելու : Վիտակցութիւնը փորձառութեան եւ հմտութեան ինտոր երեւելի աղբիւր մը ըլլալը ցուցնելու համար մէկ քանի օրինակ հերիք է :

ա . Այլ եւ այլ աստիճանի ամէն տեսակ հաւատքները Վիտակցութեան նիւթ են : Մենք անանկ ստեղծուած ենք , որ մտքերնիս՝ երբոր վկայութիւն կը տեսնէ՝ քիչ կամ շատ հաւանութիւն կուտայ անոր . աս հաւանութեան աստիճանները խիստ շատ են եւ ամէնքն ալ մէկմէկէ տարբեր , թէպէտ եւ ասոնց մինակ մէկ քանիին որոշ եւ յատուկ անուն տրուած է . եւ ընկերութեան նպատակներուն կամ ուրիշ նպատակի մը համար հարկաւոր ալ չերեւնար սովորաբար եղածէն եւել անուններ ունենալը : Ասոնցմէ ոմանք այս հետեւեալներն են . երկրայութիւն , հաւանութիւն , կարծիք , հաւատալ , չ'հաւատալ , հաւանականութիւն , անհաւանականութիւն , ստուգութիւն , եւ այլն :

բ . Ի՛նչոր միւս իմացական ներգործութեանց եւ գործողութեանց ( ոչ թէ իմացական կարողութիւններու , որոնք՝ նոյն ինքն մտքին պէս՝ լծելադրութիւնով կը յայտնուին մեզի , եւ ուրիշ կերպ անուններով կը ցուցնենք անոնք , այլ պարզապէս ներգործութեանց եւ գործողութեանց ) անուններովը ցուցուած բաները Վիտակցութեան աւարկաներ են : Ասոնց կարգէն են իմանալ , խորհիլ , մտադրութիւն ընել , ըմբռնել , յիշել , բաղդատել , դատել , վերացուցանել , տրամաբանել եւ երեւակայել բառերը :

գ . Վիտակցութիւնը՝ իբրեւ աղբիւր գիտութեան՝ կը պարունակէ նաեւ բոլոր մեր շարժութիւններն ու բաղձանքները . ( եւ իրօք ամէն բան որ ճշմարտապէս եւ ուղղակի մեր բնութեանը ղգացող կամ ղգայալի մասին տակը կ'իյնայ . ) ինչպէս՝ գեղեցկութեան , մեծութեան , վսեմութեան , ծաղրածութեան շարժութիւնները . եւ հեշտութեան , ցաւի , խորշման , յոյսի եւ ուրախութեան , յուսահատութեան եւ տրտմութեան զգացումները , եւ այլն :



դ. Սեր յօդուածոյ շարժութիւններն ու կիրքերն ալ աս ազգիւրէն կը ծնանին: Սէկը բարեկամութիւն մը կ'ընէ մեզի, եւ գիտակցութեամբ նոր յօդուածոյ զգացում մը կ'իմանանք ներսիդինիս, որուն կ'ըսենք Լոբկոտապետութիւն: Ուրիշ մէկէն քնաս մը կ'ընգունինք, մէկ ուրիշ ու որոշ զգացման մը գիտակից կ'ըլլանք, որ անոր ալ կ'ըսենք Լոբկոտապետութիւն: Ուրիշ խօսքով՝ կը զգանք, կը գիտնանք ասանկ զգացման մը ըլլալը, եւ մեզի վերաբերիլը. աս նոյն բանը իմացիր նաեւ նախանձի, ասելութեան, վրէժխնդրութեան, բարեկամութեան, կարեկցութեան, որդիական եւ ծնողական գորովի եւ սիրոյ վրայ, եւ այլն:

ե. Բոլոր բարոյական եւ կրօնական շարժութիւններն ու կիրքերը, իրեն ներքին գիտութեան առարկայ նկատելով, գիտակցութեան տակը կ'երթան. ինչպէս են ասոնք, հաւանութիւն, անհատականութիւն, խիղճ, խոնարհութիւն, ապաշխարութիւն կամ զղումն, կրօնական հաւատք, ներողութիւն, բարեսիրութիւն, կախման զգացումն, երկրպագութիւն: — Լոբկոտապետ կը խորհինք աս բանը, թէ մտքերնիս հանապազ գործելու վրայ է. թէ մեր ընկերներուն՝ բարեկամներուն՝ ընտանիքներուն՝ քաղաքակիցներուն եւ թշնամիներուն հետ ըրած բոլոր կենցաղավարութիւններնու մէջ նորնոր եւ իրարմէ խիստ տարբեր զգացումներ կը ծնանին ներսիդինիս. թէ բնութեան ամէն մէկ նոր տեսարանը եւ իրարու հետ նոր կապակցութիւն ու նեցող գիպուածներու ամէն պատահումնք իրենց յատուկ մէյմէկ ներգործութիւն կամ փոփոխութիւն յատուց կը բերին մեր մտքին մէջ. երբոր աս բաները կը խորհինք, ալ անատները գիտակցութեան տակը կ'ընտանանք թէ գիտակցութեան առարկաներուն վրայ եղած աս համարողութիւնը շատ եւել եւելք կրնայ ընդարձակիլ: Իսկ հոս յիշուածները բաւական են մէկ մարդու մը աս բանիս վրայ ընելու անձնաբնութեանը գլխաւոր տեղիքներէն մէկ քանին ցուցնելու:

## ԳԼՈՒԽ . Դ

## ՎԵՐԱԲԵՐԱԿԱՆ ԹԵԼԱԳՐՈՒԹԻՒՆ ԿԱՄ ԴԱՏՈՂՈՒԹԻՒՆ

§ 227 . Ասկուծիւն իմանալուն կամ զգալուն կարողութիւնը :

Երբ ՍԵՐՄԱՆԻՐՅԱՄԻՎ կիրառութեանը դէմ բան մը ըրած չենք ըլլար, թէ որ ըսենք թէ միտքը իր խորհուրդները մէկտեղ կը բերէ, քով քովի կը գնէ, եւ կը բաղդատէ զանոնք : Եւ ալ գրեթէ ճիշդ աս ձեւերը կը բանեցընէ երբոր աս նիւթին վրայ կը խօսի, ըսելով թէ միտքը երկու բան քով քովի կը բերէ կը գընէ, եւ զանոնք իրարու հետ կը բաղդատէ, եւ այլն : Եւ տեսնուած նշաններուն երեւոյթքէն անանկ կ'երեւնայ թէ աս ձեւը գործածութեան մէջ պիտի մնայ, թէպէտ եւ՝ մտադրութիւն որ չըլլայ նէ՝ սխալմունքի տանող զրոյցք մըն է : Եւս կերպ խօսքերը յայտնի է թէ նիւթական գործածութենէ առնուած են, եւ մտքին վերաբերելով գործածուած ատեննին՝ շիտակ չեն կրնար մեկնուիլ, թէ որ աս բանը չ'յիշուի : Երբոր՝ խորհուրդներն իս մէկտեղ կը բերենք, քովէ քով կը գնենք, եւ այլն, կ'ըսենք նէ, աս ըսելով հաւանականաբար ուրիշ բան չ'հասկըցուիր, բայց եթէ անոնց անմիջապէս մէկմէկու յաջորդելը : Եւ նմանապէս՝ անոնք իրարու հետ կը բաղդատենք կ'ըսենք նէ, աս ըսել է՝ թէ անոնց այսինչ այնինչ բաներու մէջ մէկմէկու հետ ունեցած առնչութիւննին կ'իմանանք կամ կը զգանք :

Ըսել է թէ միտքը մէկ սկզբնական զօրութիւն մը ունի աս գործին յարմար կամ՝ ուրիշ խօսքով՝ աս յիշեալ արդիւնքը յառաջ բերող . որն որ կոչուած է Լ'անչական կամ ՍԵՐՄԱՆԻՐՅԱՄԻՎ, եւ նոյն բանը շատ անգամ ալ ԳԻՄԱՆԻՐՅԱՄԻՎ անունով ըսուած է, թէպէտ վերջինը երբեմն ուրիշ առումներով ալ կը գործածուի :

ՍԵՐՄԱՆԻՐՅԱՄԻՎ հոս մեր մտաւոր բնութեանը մէջ վերջին իրողութեան մը կը հասնինք, ուրիշ խօսքով՝ անանկ տարրական սկզբան մը կը հասնինք, որ ալ ուրիշ սկզբանց չ'բաժանիր : Մարդուս իմացականութիւնը այնպէս ստեղծուած է, այնպէս կազմուած է, որ երբոր զանազան սուարկաներ ի միասին կ'իմանայ,

Վերաբերական Թեւոյնութիւն կամ Դատողութիւն :

կամ իմացման հեռաւոր առարկաներու վրայ անմիջապէս իրարու յաջորդող ըմբռնումներ կ'ունենայ, անշուշտ անոնց փոփոխակի մէկմէկու հետ ունեցած վերաբերութիւնները անմիջապէս կը զգայ : Կը դիտէ անոնց իրարու հաւասար կամ անհավասար, նման կամ աննման ըլլալը, տեղի եւ ժամանակի դիէն նոյն կամ մէկմէկէ տարբեր ըլլալը, մի եւ նոյն պատճառները եւ նպատակները կամ տարբեր տարբեր պատճառներ եւ նպատակներ ունենալը, եւ անոնց ուրիշ կերպ կերպ տարբերութիւնները :

§ 128 . Վերաբերութեան զգացմանց ծագելուն առիթները :

Մտնելութեան կամ վերաբերութեան զգացումներուն ծագմանը առիթները գրեթէ անհամար են . եւ արգարեւ դիւրին բան է մտնելն ալ նշանակելը : Որ եւ իցէ գաղափարներ, որ միտքը կարող է կազմելու, կրնան կամ ուղղակի կամ անուղղակի կերպով առնչութեան հիմն ըլլալ, վասն զի՝ ընդհանրապէս՝ իրարու հետ կրնան բաղդատուիլ . կամ թէ որ իրենք դիւրաւ քովէ քով չ'կրնան գրուիլ նէ, ուրիշ գաղափարներ բաղդատութեան բերելու միջոց կրնան ըլլալ : Վանք որ արտաքուստ սկիզբն առած գաղափարներնիս իրական առարկաներ եւ առարկաներու յատկութիւններ կը ցուցնեն . եւ անոր համար՝ ինտոր որ խորհուրդներու վերաբերութիւն կ'ըսենք նէ, անանկ ալ արտաքին բաներու մէջ առնչութիւն կամ վերաբերութիւն կ'իմանանք : Վե ահա աս տեսակ վերաբերութիւնով լեցուն է չորս դինիս :

Վեռան ծաղիկներուն կը նայինք, ու մէկը մէկալէն աւելի գեղեցիկ կը տեսնենք . զանազան ձայներ կը լսենք, ու մէկը միւսէն բարձր կամ ցած կու գայ ականջներնուս, երկրին պտուղները կը ճաշակենք, ու մէկուն համը մէկալինէն աւելի հաճոյական կու գայ մեր քմացը : Սակայն աս գեղեցկութեան՝ ձայնի եւ համի տարբերութիւնները ամենեւին չէինք կրնար գիտնալ, թէ որ առնչութիւններ իմանալու կարողութիւն չունենայինք : — Վարձեալ՝ մէկը կը տեսնենք, եւ երբոր խորհուրդներնիս անոր կը գարձընենք՝ առջի բերանը լոկ իբրեւ մարդ կը մտածենք զինքը . եւ սակայն անիկայ կրնայ միանգամայն հայր, եղբայր, որդի, քաղաքացի կամ օրէնսդիր ալ ըլլալ . աս բառերը առնչութեան գաղափարներու անուններ են :

Վերաբերական թելադրութիւն կամ Գառադրութիւն :

§ 129 . Վահչունակ անուններու օրտակարութեանը վրայ :

Վահչունակ անունները այնպիսի բառեր են, որոնք մասնաւոր կապակցութիւնով մը իրարու հետ անանկ առնչութիւն մը ունին, որ մէկը բուսածին պէս անշուշտ միւսն ալ կ'իմացուի : Ասոնք բաներու առնչութիւնները շատ զիւրութեամբ աչքերնուս առջին կը բերեն կամ կը թելադրեն, եւ անոնց միջոցով մտքերնիս աւելի հանդարտութեամբ եւ երկար ատեն եւ առանց գժուարութեան կրնայ հաստատուն մնալ ան իրենց ցուցուցած գաղափարներուն վրայ : Հայր՝ որդի, քոյր՝ եղբայր, էրիկ՝ կրնիկ, տէր եւ ծառայ, եւ աս կարգէն եզոզ շատ ուրիշ անուններ՝ յիշուելնուն պէս՝ իսկոյն խորհուրդներնիս այդ առնչութիւններուն ենթակայ եզոզ անձերէն անդին կ'անցընեն ու նոյն ինքն առնչութիւններուն կը տանին : Ուստի անհնչունակ անուններ ուրտեղ որ ըլլայ նէ, անոնցմով ցուցուելու առնչութիւնները շատ յստակ կը տեսնուին :

§ 130 . ա. Նոյնութեան եւ զանազանութեան վերաբերութիւններուն վրայ :

Վերաբերութեանց թիւը խիստ ընդարձակ է. այնքան որ կարգերու տակ ամփոփելը դժուարին գործ մը եղած է. եւ հաւանականաբար ինչուան հիմայ եղած կարգաւորութեանց մէկն ալ ասոնց լրութիւնը չ'ըզմանդակեր : Սակայն ասոնց շատը, որոնք որ հարկաւոր է գնել նէ, եօթը կարգ առնչութեանց կրնանք բաժանել, առնչութիւնք Վոյնութեան եւ Օանապանութեան, Մարմանի, Համեմատութեան, Տեղոյ, Ժամանակի, Սրայան եւ Պարձառի ու Գարծի :

Քննելու վերաբերութիւններնուս առաջին կարգը Վոյնութեան եւ Օանապանութեան առնչութիւններն են : — Մեր մտքը անանկ կազմուած է, որ չ'կրնար ըլլալ որ երկու էապէս իրարու անման առարկայ առջեւնիս դրուի, ու անոնց տարբերութիւնները չիմանանք. եւ կամ անոնց մէջ իրօք նմանութիւն ըլլայ, ու նոյնութիւննին չ'զգանք : Ասով բսել չենք ուզեր թէ երբէք սխալման մէջ չենք իյնար աս մասին, թէ մտքերնիս երբէք իրարմէ տարբեր եզոզ բաներ մէկմէկու հետ չ'չփոթեր, կամ նոյնը եզոզ բաներ մէկմէկէ չ'բաժներ. նպատակնիս հոս միայն ընդհանուր եղելութիւնը նշանակել է :

Իսկնք թէ երկու կտոր թուղթ առջեւնիս կը դրուի, մէկը

Վերաբերական Թեւադրութիւն կամ Գատողութիւն :

Ճերմակ ու մկալը կարմիր . ասոր վրայ՝ մենք իսկոյն , առանց ուրիշ բաներու երթալու եւ զանոնք բաղդատութեան բերելու , կ'իմանանք թէ գոյնները իրարմէ տարբեր են : Ընմիջապէս եւ հարկաւորապէս տարբերութիւն մը կ'իմանանք քառակուսիին ու բոլորակին մէջ , եռանկիւնին ու զուգահեռագծին մէջ , գետին ու անոր վրան կախուած խորտուբորտ ժայռին մէջ , ծաղիկին ու անոր բուսած մարգարտին մէջ , տունիե եւ անոր քովի բլուրին մէջ , ձիին ու հեծեալին մէջ :

Ըստ տարրական իմացումը՝ առջի բերանը ինչ երեւոյթով որ երեւնայ նէ՛ անտարակոյս խիստ մեծ գործնական կարեւորութիւն ունի : Ըմէն կերպ տրամաբանութեան մէջ հարկաւոր է , վասն զի ասով ձեռնարկութիւնը ոտք ոտք յառաջ կրնայ երթալ . եւ մասնաւորաբար Բացցուցական տրամաբանութեան մէջ՝ յայտնի է թէ՛ առանց ասոր ամենապարզ առաջարկութիւնները անգամ իրարու հետ չէինք կրնար յօդաւորել :

§ 181 . Բ . Աստիճանի առնչութիւններն ու անոնց անունները :

Վատողութեան , կամ՝ աւելի պարզ անունովը բռնք՝ Վերաբերական Թեւադրութեան տրուելու իմացմանց մէկ կարգին ալ բաւական պատշաճութեամբ՝ Աստիճանի առնչութեանց իմացմունք կրնանք բռնել : Ըստ տեսակ առնչութեանց իմացումներ բոլոր այն կերպ առարկաներուն վրայ կրնայ ըլլալ , որոնք որ մասերէ կազմեալ կամ քննչ եւ իցէ բանով մը այլ եւ այլ աստիճաններու ընդունակ կրնանք մտածել : — ( ) Բիւնակի աղագաւ՝ երկու հոգի կը տեսնենք . երկուքն ալ երկայնութիւն ունին . բայց իսկոյն կ'իմանանք եւ կը հաստատենք թէ մէկը մէկալէն աւելի երկայն է : Երկու խնձոր կը ճաշակենք . երկուքն ալ անուշ . բայց մէկուն համը մէկալէն աւելի քաղցր է կ'ըսենք : Ըսել է թէ մարդուն ու խնձորին իմացմանը հետ աս ճանաչումն ալ կ'ունենանք , թէ ան բաներուն մէջ սոյսինչ այնինչ կողմանէ առնչութիւն մը , տարբերութիւն մը կայ :

Ըմէն լեզուի մէջ աս կերպ առնչութիւններ ցուցընող բառեր կամ ձեւեր կան : Վրաբառ Հայերէնի մէջ սովորաբար աստիճանի առնչութիւնը նոյն իսկ որպիսութիւն ցուցընող բառին հետ կապակցած կը զրուցուի . ինտոր որ են բոլոր Գոյն մասնիկով եւ աճն ու գէր բառերով շինուած բաղդատական ու գերազրական աստիճանի անականները , ինչպէս՝ սպիտակագոյն՝ քաղցրագոյն՝ մեծագոյն՝ փոքրագոյն՝ ազնուագոյն՝ ամենաբարի՝ ամենասուրբ՝ ամենաչար՝ գերապատիւ , եւ այլն : Բայց երբեմն ալ որ-

Վերաբերական թելադրութիւն կամ գաղտնութիւն :

Կիսութիւն ցուցնող բառին հետ ուրիշ բառեր գործածելով  
 աս առնչութիւնը կը ցուցուի, աշխարհաբառին նման, թէպէտ  
 թէ գրաբառին եւ թէ աշխարհաբառին մէջ շատ անգամ լոկ  
 բառը ինքնին խօսքին կապակցութենէն աստիճանի առնչութիւն  
 կը ցուցնէ: Արդ՝ թէ որ վերաբերական թելադրութեան զօ-  
 րութիւնը չունենայինք նէ, ասանկ բառեր ու ձեւեր պիտի չ'բա-  
 նեցնէինք: Վնենեւին անհնար էր որ կարենայինք աս ինձորին  
 համար միւսէն անուշ է ըսել, կամ այն մարդուն համար մե-  
 կալէն բարձր է ըսել, առանց ան որպիսութիւններուն մէջ զա-  
 նոքիրարու հետ բաղդատելով՝ այն առնչութիւնները իմանա-  
 լու: Մնանկ որ՝ եթէ Մտիճանի առնչութենէն իզատ ուրիշ  
 վերաբերութիւն չ'ձանձնայինք նէ, աղէկ պիտի տեսնայինք գա-  
 տողութեան՝ իբրեւ աղբիւր բառերու եւ քերականական ձեւերու  
 ինչ մեծ օգտակարութիւն ունենալը :

§ 139 . 4 . Համեմատութեան առնչութիւններու վրայ :

Դատողութեան կամ վերաբերական թելադրութեան զօրու-  
 թիւնով տեսած առնչութիւններնուս մէկ կարգն ալ Համեմա-  
 տութեան առնչութիւններն են, որոնք աս մասնաւոր յատկու-  
 թիւնը ունին, որ ինչուան որ մտքերնուս առջին իրեք կամ աւելի  
 առարկայ չըլլայ նէ չեն երեւնար: Այ վերաբերութիւնները  
 մասնաւորաբար թիւերու բաղդատութեան մէջ կը գտնենք,  
 որն որ՝ թիւերու կապակցութեանց մէջ քիչ մը յառաջ եր-  
 թայ նէ մէկը՝ շուտով կը սորվի: Արբոր կը քննենք աս թիւ-  
 ւերը, երկու՝ իրեք՝ չորս՝ քսան՝ քսանուութը՝ երեսունուերկու՝  
 ինը՝ հինգ՝ ութը եւ տասնուվեց, տեսակ մը առնչութիւն կ'իմա-  
 նանք որ կայ մէջերնին. յայնժամ մէկ նոր կերպարանք մը մէկ  
 նոր զօրութիւն մը կը ստանան ասոնք մեր մտքին տեսութեան  
 առջեւը: Ար տեսնենք որ իրեքը իննին ինչպէս է նէ, ինն ալ  
 քսանուեօթնին անանկ է, երկուքը ութնին ինչպէս է նէ, ու-  
 թըն ալ երեսունուերկուքին անանկ է, չորսը հինգին ինչպէս  
 է նէ, տասնուվեցն ալ քսանին, եւայլն :

Այ թէ որ անգամ մը զգանք կամ իմանանք թիւի մը ուրիշ  
 թիւերու հետ ասանկ առնչութիւն մը իրօք ունենալը, ալ այ-  
 նուհետեւ անիկայ այն թուոյն անբաժանելի յատկութիւնը կը-  
 սեպենք, թէպէտ եւ ինչուան որ զանիկայ միւս թիւերուն հետ  
 բաղդատութեան չ'բերենք նէ, անձանօթ էր մեզի անանկ յատկու-  
 թիւն մը ունենալը: Այսպիսի պարագաներու մէջ մէկ նոր զօ-  
 րութիւն մը, նոր յատկութիւն մը կու տանք թիւերուն, ինտոր

Վերաբերական թեղադրութիւն կամ Գատողութիւն :

որ այս նոյն պարագաներուն մէջ մեր հմտութեան բոլոր առարկաներուն կ'ընենք: ( ) Երկնակի համար՝ արտաքին մարմիններու վրայ շատ յատկութիւններ կան, որոնք թէպէտ առաջ ծանօթ չէին մեզի, սակայն երբոր ճանչցանք զանոնք, ալ անկէ հարկաւորապէս անոնք ալ ան մարմիններուն վրայ ձեւացուցած ընդհանուր ծանօթութիւններնուս մէջ առինք. զանոնք անոնց մէկ մասը սեպելով: Եւ թիւերուն վրայ ալ աս նոյն ընթացքը շարունակելով, երբոր՝ զանոնք մէկմէկու հետ բաղդատած ատեննիս առջուց ամենեւին ծանօթութիւն չունեցած մէկ նոր առնչութիւննիս կը տեսնենք, ալ այնուհետեւ անոնց ան առնչութիւնը ունենալուն ճանաչումը ամենեւին չ'զատուիր անոնց վրայ ունեցած ծանօթութիւններէս:

§ 133 . ( Դ . ) Տեղի կամ դիրքի վերաբերութեանց վրայ :

Ուրիշ տեսակ մը առնչութեանց կամ վերաբերութեանց ըզդացմունք կամ իմացմունք ալ մարմիններուն տեղը կամ դիրքը զննելէն կը ծագի: Մեր միտքը այնպէս կազմուած է որ մեր չորս կողմը արտաքին մարմինները զննելէս հարկաւորապէս յառաջ կու գան աս իմացումները: Թեքելու հարցում՝ ըլլայ, թէ Տեղ կամ դիրք ըսելով ի՞նչ ըսել կ'ուզենք: Ըստ հարցմանը թէպէտ եւ աներկեւան պատասխան մը տալ չենք խոստանար, վաստն զի անտարակոյս դժուար է ասանկ բան մը լոկ խօսքի ձեւով մը կատարելապէս բացատրել, սակայն հաստատուն պատճառներ ունինք աս բանը վստահութեամբ ըսելու, թէ մարմին մը իրրեւ տեղ ունեցող չենք կրնար ըմբռնել, առանց զանիկայ ուրիշ մարմիններու հետ բաղդատելու: Ուստի, երբոր հաստատուն կամ իրարու հետ մի եւ նոյն վերաբերական դիրքը ունեցող երկու մարմին ըլլայ, ու երրորդ մը անոնց հետ կարենանք բաղդատել նէ, անտեսն ան երրորդ մարմինին համար աս տեղն է կամ այն դիրքն ունի կրնանք ըսել:

Ըստիկայ օրինակով մը դիւրին կը բացատրուի: Ստորինջին վրայի մարդոցը համար նոյն տեղն են կ'ըսենք, թէ եւ ստորինջին տախտակը մէկ սենեակէն միւսը տարուի: Երջն տեղն են կ'ըսենք, վասն զի մարդիկը մէկմէկու եւ տախտակին մասերուն վերաբերելով կը նկատենք, չէ թէ սենեակին ու սենեակին մասերուն վերաբերելով: — Վարձեալ նաւի մը խուճին մէջ պատկեր մը կախուած կ'ըլլայ. նաւապետը քովինն՝ աս պատկերը տեսար, կ'ըսէ, եօթը տարի է որ նոյն տեղն է: Եւ սակայն կրնայ ըլլալ որ ճշմարտիւ ան պատկերը Լարոպայէն Բիբիկէ, Բիբիկէէն Բմերիկայ, աշխարհիս չորս կողմը պտտած ըլլայ: Բայց եւ այն-

Վերաբերական թեղաբութիւն կամ դատողութիւն :

պէս ան մտղուն ըսածը սուտ չըլար. վասն զի նաւին եւ մասնաորաբար խուցին վերաբերելով (ինտոր որ մտիկ ընողն ալ անոնկ կ'ախնկալէ թէ ան մտքովը պիտի խօսի) կը խօսի պատկերին վրայ, ու չէ թէ նաւին պտըտած տեղերուն վերաբերելով : — Ըսանկ օրինակներէ կը տեսնուի որ տեղ ըսածնիս վերաբերական բան մըն է :

Ըստր համար տիեղերաց ամէն մէկ մասին տեղւոյն կամ դիրքին վրայ, զատ զատ առնելով, յստակ գաղափար կրնանք ունենալ, վասն զի զանոնք միւս մասերուն հետ կրնանք բաղդատել, սակայն տիեղերաց տեղւոյն կամ դիրքին վրայ, իբրեւ ամբողջ առնելով, գաղափար մը ձեւացընելու անկարող ենք, վասն զի անկէ իզատ ուրիշ բան չ'կայ որ անոր հետ բաղդատենք : Այժմէ հնարաւոր ըլլար մեզի բոլոր աշխարհները եւ ամէն բան մեկէն գիտնալ, տիեղերքը մէկ հայեցուածքով ըմբռնել, պիտի չ'կրնա՞ յինք՝ մեր բոլոր գիտցածովը՝ հաստատել թէ տիեղերքը հոս է, կամ հոն է, կամ անդին է, եւ կամ թէ ուր կրնայ ըլլալ :

Թէ որ տեղը վերաբերական ծանօթութիւն մըն է նէ, անկէ կը հետեւի թէ բոլոր տեղ կամ դիրք ցուցընող բառերն ալ վերաբերական բառեր են. ինչպէս որ են այս բառերը, բարձր՝ ցած, վերին՝ ստորին, մօտ՝ հեռու, վեր՝ վար, հեռագոյն՝ մօտագոյն, ասդին՝ անդին, հոս՝ հոն, ուր, յայնկոյս՝ յայտկոյս, ներս՝ դուրս, շուրջ, ներքեւ, վրայ, մէջ, եւայլն :

§ 134. (է.) Դամանակի առնութեանց վրայ :

Վերաբերական իմացմանց կամ դատողութեան մէկ ուրիշ աղբիւրն ալ Դամանակն է : Դիրքը կամ տեղը միջոցի հետ ինչ վերաբերութիւն ունի նէ, Դամանակն ալ գրեթէ նոյն վերաբերութիւնը ունի տեւողութեան հետ : Մարմինի մը տեղը կամ դիրքը կ'ըսենք նէ, ուրիշ բան ըսել չէ, բայց եթէ նշաններով ցուցուած կամ սահմանաւորեալ միջոց մը. ասոր պէս ալ ժամանակը ուրիշ բան չէ, բայց միայն որոշ պարբերութեանց բաժանեալ տեւողութիւն. եւ ինտոր որ մարմիններուն տեղին վերայ ունեցած ծանօթութիւններնիս վերաբերական են, նոյնպէս եւ ժամանակի մէջ հանդիպած նկատեալ դէպքերուն վրայ ունեցած ըմբռնումներնիս ալ վերաբերական են : Ղշմարիտ է թէ տեւողութեան ու միջոցի ծանօթութիւնները սկզբնական ու բացարձակ են ինքնին. յաւետ Սկզբնական Թեւադրութիւնով կը ծանօթանանք անոնց, քան թէ Վերաբերական Թեւադրութիւնով. սակայն երբոր ինչ եւ իցէ կերպով մը սահմանի



տակ կը մտնեն, եւ տեղոյ ու ժամանակի նոր ձեւերը առնելով՝ զիպուածներու կը վերաբերին, անատեն նոր տեսակ մը իմացումներ կը ծագին, որոնք վերաբերական են :

Բոլոր ժամանակը իբրեւ անցեալ՝ ներկայ եւ ապառնի կը նրկատուի: Կարող ենք, գլխաւորաբար երկնային մարմիններու շարժումներէն, որոշ գաղափար ձեւացընել ժամանակի մասերու, որուան՝ ամիսի՝ տարիի վրայ, եւ այլն: զիպուածները չէ թէ միայն իբրեւ ներկայ, այլ իբրեւ անցեալ եւ ապառնի կրնանք նրկատել: (Եւ այց երբոր ժամանակով զիպուածներու վրայ կը խորհինք կամ կը խօսինք, (ուրիշ խօսքով՝ երբոր գէպքերու թուականին վրայ կը խօսինք,) միշտ առնչութեան իմացման հետ բաղդատութիւն մ'ալ կ'ըլլայ:

Ուրեմն ինչ հասկըցընել կ'ուզենք աս խօսքով, երբոր կ'ըսենք թէ տպագրութեան գիւտը 1440ին գտնուեցաւ: — Ըսանկ խօսքերու ինչ նշանակելը այսպէս կը բացատրուի: Ս'ենք ներկայ տարիս, 1850ը, ժամանակի կէտ կամ սահման մը կը սեպենք, եւ անկէց ինչուան մէկը կ'երթանք, որ է Վրիստոսի ծնած ատենը. հիմայ 1440 որ կ'ըսենք նէ, աս երկու ծայրերուն, սյսինքն մէկին ու 1850ին մէջ տեղի հեռաւորութիւնը հասկըցընել է մաքերնիս, եւ ոչ ուրիշ բան: — Ղարձեալ՝ թէ Փրկիչն մեր Վրիստոնէական թուականին մէկին ծնաւ ըսենք, եւ թէ աշխարհիս արարչութեան 4004ին ծնաւ ըսենք, երկուքն ալ մէկ խօսք է, երկուքէն ալ մի եւ նոյն բանը կը հասկըցուի: Բայց ետքի խօսքին մէջ յիշուած 4004ը ուրիշ ծայրերու մէջ տեղի հեռաւորութիւնը կը ցուցընէ, այսինքն է աշխարհիս ստեղծումը եւ ներկայ տարին. իսկ առջի խօսքին մէջ նոյն ինքն անցքը ժամանակի կարգին սկիզբի սահմանը կ'ըսած է: — Ըսնպէս որ բոլոր թուականները վերաբերութեան գաղափարաց կարգը կրնանք գասել տիրապէս. ու նաեւ ինչ եւ իցէ կերպով զիպուածներու ժամանակ ցուցընող բոլոր անուններն ալ, ինչպէս՝ վայրկեան, բոպէ, ժամ, օր, շաբաթ, ամիս, տարի, դար, այսօր, վաղը, մէկալ օր, եւ այլն:

§ 135 . (շ.) Ստացման ծանօթութիւններու վրայ :

Վերաբերութեանց մէկ կարգն ալ Ստացման ծանօթութիւններն են: — Ըմէն մարդ գիտէ որ իրերու վրայ զննութիւն բրած ատենը շատ անգամ մէկ նոր զգացում մը կը ծագի ներսիդին, որ այն իրերուն վրայ ունեցած իմացումէն կամ վերաբերանումէն բողորովին որոշ եւ անկասխ բան մըն է. եւ որուն

Վերաբերական թեքաբութիւն կամ Գտտողութիւն :

որովհետեւ ուրիշ վերաբերութեան զգացումներէ կը տարբերի, ստացման վերաբերութիւն կրնանք ըսել : Ըստիկայ մարդոց ամենէն կանուխ ի գործ դրած զգացումներուն մէկն է : Երբոր փոքրիկ տղեկը կը տեսնենք որ իր խաղաղիկները կը պահպանէ, եւ ուրիշին անոնցմէ բաժին ունենալու պահանջմանը գէմ կը կենայ, հասկընալու ենք թէ ստացման քաղափարը ձեւացուցեր է : Եւ շատ կանուխ ձեւանալէն ի զատ, փորձառութիւնը կատարելապէս կը ցուցընէ նաեւ, թէ աս զգացումը ժամանակ անցնելով ոչ գործունէութիւնը եւ ոչ զօրութիւնը կը կորսընցընէ :

Մեր Գտտողութիւնը կամ իրերուն վերաբերութիւնները իմացող զօրութիւննիս աս մասին ստեպ կը գործածուի. եւ հետեւաբար աստիկայ շատ բառերու աղբիւր մըն է : Ըտոր ստացական գերանունները, որոնք ամէն ընդուի մէջ ի հարկէ պիտի ըլլան, ասկէ ծագած են. ինչպէս են իմ, քո, մեր, ձեր, իւր, նորա բառերը : Ըմէն ընդուի սեռական հոլովե ալ ստացման վերաբերութիւն կը ցուցընէ, որն որ այլ եւ այլ ընդունելու մէջ այլ եւ այլ ձեւերով կը շինուի :

Հայերէն է՛մ, Ինչդիարէն To be, Ետիներէն Esse եական բայերը ( եւ անտարակոյս ամէն ընդուի եութիւն ցուցընող բային համար կրնանք ըսել աս խօսքը ) շատ անգամ ստացման վերաբերութիւն կը ցուցընեն : Վարդը կարմիր է կամ նարինջը դեղին է ըսելը վարդը կարմրութիւն, նարինջը դեղնութիւն ունի, կամ կարմրութեան եւ դեղնութեան որպիսութիւնները վարդին եւ նարինջին կը վերաբերին ըսել է : Եւ աս աննշութեան միտքը տուողը ոչ խօսքին ենթակային անունն է, եւ ոչ անոր վրայ ըսուած յատկութեանը, հագա ենթական ու մակդիրը իրար կապող է բայն է : Ըս նոյն իմաստը տուող ուրիշ մէկ քանի բայեր ալ կան :

Ըս նոյն վերաբերական աննշութիւնը կը տեսնուի նաեւ անանկ յօդուածոյ բառերու մէջ, որոնք մտքի որոշ որպիսութիւններ կամ կիրքեր կը յայտնեն, ինչպէս՝ բարեկամ, թրշնամի, սիրող, ատեցող, երկրպագու, բարկացող : Ըս բառերը չէ թէ լոկ ան անձինքը կը ցուցընեն, որոնց վրայ որ կ'ըսուին ատ կիրքերը եւ հանգամանքները, այլ նաեւ ատ բաներուն անոնցը, անոնց որպիսութիւնները ըլլան ալ կը յայտնեն :

§ 136 . ( է . ) Պատճառի եւ գործի վերաբերութեանց վրայ :

Ըննչութեանց մէկ տեսակն ալ Պտտճոտի եւ Գտքի վերա-

Վերաբերական Թեւոզորութիւն կամ Դատողութիւն :

բերութիւններն են : Պատճառի եւ գործի առնչութեանց ծագմանը վրայ հարկ չէ որ եւել խօսք ընենք, այլ միայն այսչափ բանք, թէ պատճառի ծանօթութիւնը, երբոր նախ եւ առաջ կը ծագի մտքերնուս մէջ, ուրիշ բան չէ՝ այլ միայն անփոփոխ նախորդութեան կամ նախընթացութեան ճանաչում մը : Երբոր սա դիպուածոց կամ յաջորդաց նախորդ եղող բանը մեր կամեցումը կ'ըլլայ, (եւ հաւանականաբար ասկէ ի զատ երկու ուրիշ դիպուածներու մէջ ալ, տես § 118,) Օջորու-Լեւան նորոգ ծանօթութիւնը կը ստանանք : Եւ երբոր նախորդութեան գաղափարը, որն որ ի հարկէ յաջորդութիւն մ'ալ ըլլալ կը ցուցնէ, Օջորութեան գաղափարին հետ կը միացընենք, անասնն Պարճառի կատարեալ ծանօթութիւնը կը ձեւանայ մտքերնուս մէջ : Երբոր կը տեսնենք որ յաջորդութիւնը անփոփոխապէս կը հետեւի կոր, եւ իր երեւան ելլելը ուրիշ պատճառի չենք կըրնար տալ նէ, անոր ալ կ'ըսենք Վործք : Ըստ այսմ՝ մարդիկ ատեն ատեն իրենց դիտողութեանը հանդիպող այսինչ այնինչ բաներուն սովորաբար պիտո՞ւնք, պարտկո՞ւնք, կամ Եղելու-Լեւանունները կուտան, երբոր զանոնք ըստ ինքեան կը նկատեն : Օանոնք ուրիշ բան չեն սեպեր, բայց լոկ եղելութիւններ, սոսկ դիպուածներ : Սակայն երբոր փորձառութեամբ աւելի յառաջ երթալով կը տեսնեն որ այն դիպուածները անփոփոխ նախորդներ ունին, որ միշտ անոնցմէ առաջ կը պատահին կամ են, ալ սա անունները չեն տար անոնց, հապա իրենց նախորդներուն նայելով՝ Վործք կ'անուանեն : Եւ նմանապէս նախորդներուն ալ Պարճառ կ'ըսեն, ոչ թէ ըստ ինքեան նկատելով, հապա անփոփոխապէս անոնցմէ հետեւող դիպուածներուն նայելով :

Ուստի պատճառն ու գործը ստոյգ առնչութիւն մը ունին իրարու հետ. անտարակոյս սա առնչութիւնը ունին թէ մտքերնուս դիտողութեանը մէջ եւ թէ բաներուն բնութեանը մէջ, թէ եւ սա ալ շատ ճշմարիտ է, թէ մենք անկարող ենք ինչ եւ իցէ Ֆլեգմայն կապակցութիւն մը գնելու անոնց մէջ : Ընհար բան է որ պատճառ մը ըմբռնենք, անոր առինչունակ եղող գործքի ծանօթութիւնը մտքերնէս դուրս ընելով. եւ հակադարձը՝ չենք կրնար գործք ըսել մէկ բանի մը, առանց անիկայ նախորդի մը վերաբերելու : Ըսել է թէ սա երկու ծանօթութիւններուն մէկը ըսենք նէ, մէկալն ալ անշուշտ կ'իմացուի. այսինքն՝ թէ առինչունակ են իրարու :

§ 137 . Պատճառի եւ գործի աննշութեան պարունակող յոգուածոյ բառերու վրայ :

Պատճառի եւ գործի աննշութեան թելադրութիւնը գրեթէ անհամար սոսիթներ ունի ծագելու . եւ ամէն լեզուի մէջ խիստ շատ բառերու վրայ կը տեսնուի սա վերաբերութեան ուժը : ( )-րինակի աղագաւ՝ յոգուածոյ բաներ ցուցնող շատ անուններ կան , որ իրենց նշանակութեան մէջ կը յայտնեն սա աննշութիւնը , ինչպէս տպագրիչ , երկրագործ , քանդակագործ , գրագիր , բանաստեղծ , մեքենագործ , պատկերհան , նկարիչ :

Աս տեսակ անունները ասանկ կրնանք բացատրել : Արբոր գեղեցիկ արձանագործի մը վրայ կը նայինք , բնականապէս շինողը մտքերնիս կու գայ : Բայց երբոր մտքերնիս ասանկ արձանէն քանդակագործին կ'երթայ նէ , յայտնի է թէ հաղարաւոր որիչ մարդոց վրայ ինտոր կը խորհինք նէ , անոր վրայ ալ անանկ չենք մտածեր , հապա անհատի վերմբռնմանը հետ անոր գործածին վերաբերութիւն մըն ալ կը կապակցենք : Երկ մարդու յոգուածոյ գաղափարին հետ պատճառի ծանօթութիւն մ'ալ կը միացնենք , եւ ասանկով յայտնի է թէ ան գաղափարին բնութիւնը կը փոխուի , բացարձակութենէ կ'ելլէ , կ'ըլլայ վերաբերական : — Վմանապէս երբոր վարպետութեամբ շինուած պատկեր մը կամ պատմական նկարագրութիւն մը կը տեսնենք , բնականապէս մտքերնիս զանիկայ շինող վարպետին կ'երթայ , որուն ճարտարութիւնը կ'երեւնայ անոր համեմատութիւններուն ու գոյներուն մէջ : Բայց պատկերհան անունը , որ ան մարդուն կու տանք նէ , ոչ թէ լոկ մարդը կը նշանակէ , հապա սոջեւնիս եղած շինուածքին հետ ան մարդուն ունեցած պատճառք առնչութեան ծանօթութիւնն ալ կը յայտնէ :

§ 138 . Վերաբերական թելադրութեան տրամաբանութեան հետ ունեցած կապակցութիւնը :

Ոս վերաբերական թելադրութեան տրամաբանութեան հետ ընդհանրապէս՝ ունեցած կապակցութեանը վրայ դիտողութիւն մը ընենիս օգտակար կրնայ ըլլալ : Վերաբերական թելադրութիւնները (կամ տարրական գատողութիւնները կրնանք ըսել) երբեմն տրամաբանութեանց մէջ՝ մասերը ամբողջին ինտոր են նէ՝ ասոնք ալ անանկ են : Բայց յայտնի է թէ տրամաբանութեան

ԶՈՒԳՈՐԳՈՒԹԻՒՆ (ա.) ՆՍԻՆԱԿԱՆ ՍՕՐԷՆՔՆԵՐԸ :

մը բոլոր մասերը ասոնք չեն կրնար ըլլալ, եւ աս մասնաւոր որոշիչ յատկութիւնը ունին՝ որ իրենց պաշտօնը զխաւորաբար տրամաբանութեան ուրիշ ստորակարգեալ մասերը իրար կապակցել է: Թիւերու զուգադրութիւններուն մէջ, եւ ապացուցական տրամաբանութեան սյլ եւ սյլ ձեւերուն մէջ Համեմատութեան եւ Նշմութեան ու Օսմանութեան (կամ Համաձայնութեան եւ Ընհամաձայնութեան) առնչութիւնները շատ կը գործածուին: Բարդական տրամաբանութեան մէջ ամէն տեսակ վերաբերութիւն կայ, թէ աստիճանի, թէ ժամանակի, թէ տեղւոյ, թէ ստացման, եւ թէ պատճառի ու գործքի, ու նաեւ Համաձայնութեան եւ անհամաձայնութեան, ու Համեմատութեան: Տեսակ տեսակ առնչութեանց զգացումներ վեր կ'երեւնան շարունակ, քանի որ ձեռնարկութեան մէջ յառաջ կ'երթայ միտքը: Ընկալէս որ՝ թէպէտ եւ վերաբերութեան իմացումներէ ի զատ ուրիշ տարրներ կան տրամաբանութեան մէջ, սակայն առանց անոնց օգնութեանը տրամաբանութիւն չըլլար: Արնանք շատ ճշմարտութիւններ հաւաքել, ապացուցանելու բաներնուհետ շատ մօտ առնչութիւն ունեցող, սակայն առանց ատարնչութիւնները զգալու ու ճանչնալու չենք կրնար ան ճշմարտութիւնները անանկ կերպով մը իրարու հետ կապակցել, որ անոնցմէ վճռական հետեւութիւն մը ելլէ:

ՊԼՈՒՍ . Ե

ԶՈՒԳՈՐԳՈՒԹԻՒՆ (Ա.) ՆՍԻՆԱԿԱՆ ՍՕՐԷՆՔՆԵՐԸ

§ 139 : Աս նիւթը հոս քննելուս պատճառները :

ՊԼՈՒԹԵՐԵՆ ներքին աղբիւրներուն վրայ ըրած ստորագրութիւններնուս մէջ յուսալի է թէ Ս Երաբերական Թիւադրութեան շիտակ Տրամաբանութեան կարողութեանը անցնինք. որն որ ներքին իմացմանց խիստ արդիւնաւոր եւ երեւելի մէկաղբիւրն

է : Ըս կարողութիւնով Սկզբնական Թեւադրութեան, Վիտակցութեան եւ Վերաբերական Թեւադրութեան պատրաստած նիւթերը կրնանք իրարու կապակցել եւ բաղդատել, եւ այնպէս նոր խորհրդոյ տարրներ հանել մտքերնուս մէջ, եւ ճշմարտութեան ասպարէզին մէջի խաւար տեղերուն վրայ լոյս ձգել : Իսոյց մէկ երկու մտաւոր կարողութիւն կայ, տրամաբանութեան կարողութեանը ստորակարգեալ, եւ անոր ներգործութեանը էպէս հարկաւոր, որոնք պատշաճ է անկէ առաջ քրննել . մասնաւորաբար Չուգորդութիւնն ու Յիշողութիւնը : Արիշները կրնայ ըլլալ որ՝ մտքին այլ եւ այլ մասերուն վրայ բրած քննութիւններնուն մէջ ուրիշ տեղեր ընտրեն աս կարողութիւնները գննելու համար . բայց հոս քննուելնուն դէմ իրաւացի առարկութիւն մը չ'կայ : Ըսլ ընդհակառակն՝ առջի քննած նիւթերնուս հետ այնչափ քիչ վերաբերութիւն ունին, եւ գալիքին հետ այնչափ շատ, ու մասնաւորաբար ամէն տրամաբանական գործողութեան այնպէս էական են, որ իրենց յատուկ տեղը հոս կ'երեւնայ ըլլալ : Եւ որովհետեւ Չուգորդութիւնը՝ ինչպէս որ տրամաբանութեանն նոյնպէս եւ յիշողութեանն ալ առաջ է ու անոր մէջ մասն ունի, վասն որոյ բնական կարգով առաջ ան պիտի քննենք :

## § 140 • Չուգորդութեան նշանակութիւնը ու բացատրութիւններ :

Սեր խորհուրդներն ու զգացումները կանոնաւոր կարգով մը կը յաջորդեն իրարու : Ըս բանիս ամէն մարդու ինք իր փորձառութեանէն եւել վիպութիւն պէտք չէ : Ըմէնքս ալ գիտենք որ մտքերնիս նոր նոր հանգամանքներ կ'ունենայ, եւ աս նոր նոր հանգամանքները կը ծագին նէ, ըստ դիպաց չեն, հապա օրէնքներ ունին : Սասնորոյ կը հաստատենք թէ մեր խորհուրդներն ու զգացումները չէ թէ միայն կը յաջորդեն իրարու, հապա թէ աս նախորդութիւնն ու յաջորդութիւնը կանոնաւոր կարգով մը կ'ըլլայ : Եւ աս կանոնաւոր ու սահմանեալ կարգով մտաց հանգամանքներուն մէկգմէկ յաջորդելուն կ'ըսենք Սպասուող Չուգորդութիւն :

Ըս երեւելի սկզբունքը, որն որ ինչպէս որ մեր խորհուրդներուն՝ նոյնպէս եւ շարժութիւններնուս եւ բաղձանքներնուս վրայ ալ ներգործութիւն ունի, անթիւ օրինակներով կրնայ բացատրուիլ : Շօպս իր Վեխթան ըսուած ճառին մէջ կը պատմէ թէ անգամ մը ընկերութեան մը մէջ գտնուեր է, ուր Ընդլիոյ ազգային պատրագմին վրայ կը խօսակցին եղբք :

(ա.) Նախնական Օրենքները :

Մէջերնուն մէկը յանկարծ ելեր հարցուցեր է, թէ ինչ էր ռուսացեցի գենարին արժէքը: Խօսակցութեան ընդհանուր ընթացքէն այսքան հեռու ասանկ հարցմունք մը ընելը չէ թէ միայն յանկարծական այլ նաեւ շատ պաղ բան մըն է երեցեր նստողներուն: Ես մարդը, կ'ըսէ ռուս, քիչ մը խորհըրդածելով գտաւ ատ հարցման ինչպէս միտքը կ'ընայր: Խօսակցութեան առջի նիւթը բնականապէս Վարդու թագաւորին պատմութիւնը միտքն է ձգեր, անկէ ալ բնականաբար Վարդու իր թշնամիներուն ձեռքը մատնողներուն դաւաճանութիւնը միտքն է ինկեր, ան դաւաճանութենէն: Յուդա Խակարիովտացւոյն մատնութիւնը յիշեր է: Յուդային մատնութեանը հետ երեսուն արծաթը զուգորդեր է, եւ որովհետեւ Վրիստոսի խաչուած ատենները ռուսացեցու ռուսացեցու ձեռքն էր, երեսուն արծաթն ալ ռուսացեցու գենարը թելադրեր է:

«Վերիկայի անբնակ տեղերէն ճամբորդութիւն ըրած ատենըս, կ'ըսէ ճարտարախօս Հաթոպրիան, քիչ զարմանք չեղաւ ինձի երբոր լսեցի թէ մտերը անտառին մէջ հայրենակից մը ունիմ բնակութիւն հաստատած: Քրութացայ գացի զինքը տեսնելու, գտայ որ խրճիթին դուռը քանի մը ցից կը տնկէ կոր. դարձաւ մէյմը վրաս նայեցաւ ցուրտ նայուածքով մը, եւ իր գործը շարունակեց. բայց երբոր սկսեցի իրեն հետ խօսիլ՝ Վաղղիարէն, հայրենեաց յիշատակը արթնցուց միտքը եւ աչքերը լնցան: Ես իրեն ակնջին քաջածանօթ ձայնէն յանկարծ ձերունուցն միտքը ինկաւ բոլոր իր մանկութեան զգայութիւնները»: — Ես սպիտի օրինակներէ, որոնց ճշմարտութիւնը ամէն մարդու գիտակցութիւն կը վկայէ, զուգորդութեան ինչ ըլլալը կը տեսնուի:

§ 141. Չուգորդութեան ընդհանուր օրենքներուն վրայ:

Չուգորդութեան վրայ բոլոր գիտցածնիս աս իրական ճշմարտութիւնն է, թէ մեր խորհուրդներն ու զգացումները, այսինչ պարագաներուն մէջ, իմիասին կ'երեւնան կամ մէկ-մէկու հետ ընկերութեամբ մեր գիտողութեանը առարկայ կ'ըլլան: Չենք կրնար բացատրել թէ ատ պարագաները հանդիպած ատենը ինչպէ՞ս համար զուգորդութիւն կ'ըլլայ: Մենք միշտ կ'ըլլան գիտենք. եւ թէ որ աս բանը մեր մտաւոր կազմութեանը մէջ պարզ սկզբունք մըն է նէ, ինչպէս որ անանկ ըլլալուն վրայ տարակուսելու պատճառ մը չունինք, ասկէ ետեւ բան չենք կրնար գիտնալ:

Չուգորդութիւնը, որ այսպէս նշանակեցինք, օրէնքներ ունի: Չուգորդութեան օրէնքներ որ կ'ըսենք նէ, ուրիշ բան ըսել չենք ուզեր այլ միայն այն պարագաներուն ընդհանուր ցուցմունքը, որոնց մէջ որ մտաւոր հանգամանաց յիշեալ կանոնաւոր յաջորդութիւնը կը պատահի: Հետեւեալները աս օրէնքներուն Վարնականներուն կամ երեւելիներուն կարգը կրնանք դասել, թէպէտ եւ հարկ չէ մեզի պնդել թէ աս թուարկութիւնը կատարեալ է, եւ կամ թէ ասկէ աղէկ կարգաւորութիւն չըլլար. այս է՝ Վաննու-թիւն, Ղիմարդու-թիւն, տեղի եւ ժամանակի Սէրյուդու-թիւն, եւ Պարձու ու Ղարձ:

§ 143. Վաննութիւն՝ Չուգորդութեան առաջին ընդհանուր օրէնքը:

Վոր գաղափարներ եւ շարժութիւններ կը ծագին մտքերնու մէջ Վաննութիւնով. բայց կը ծագին որ կ'ըսենք նէ, ուրիշ բան իմանալու չենք այլ միայն այս՝ թէ նոր խորհուրդներ անմիջապէս կը յաջորդեն այն նմանութիւն կրող առարկային վրայ ունեցած իմացումներնու: Իսկ աս պարագաներուն մէջ աս նոր հանգամանաց ծագելուն պատճառին վրայ ուրիշ բացատրութիւն մը տալու անկարող ըլլալով եւ հարկաւոր ալ չ'սեպելով, այսչափ միայն կրնանք ըսել, թէ Հոգիներնու Մարտիրոս յարմար տեսեր եւ հաստատեր է աս կապակցութիւնը անոր գործողութիւններուն մէջ: Սէկ օտար երկրի մը մէջ պանդխտութիւն ընող ճամբորդ մը շատ բաներ կը տեսնէ իր առջի եղած տեղիներուն նմանութիւն ունեցող. եւ ատ նմանութիւնը նոր հանգամանքներ միտքը գալուն նախորդ պատճառը կ'ըլլայ: Արոշակի աչքին առջեւը կու գան իր եկած տեղի տեսարանները, անտառները, ջուրերը, եւ իր բռնակած տունը, եւայլն:

Ես նոյն բանը յառաջ կու գայ երբոր ներկայ փորձառութիւններնու ու անցեալ փորձառութիւններնու մէջ նմանութիւն ըլլայ: ()րինակի աղագա՝ ասենով մէկուն հետ ծանօթացած ենք, եւ որուն դէմքին վրայ մասնաւոր հանգամանք մը որոշած ենք, ճակատի բարձրութիւն ըլլայ, կամ անսովոր նայուածքի եղանակ մը, եւ կամ քննչ եւ իցէ մասնաւոր նշան մը. այսօր բոլորտիքնիս եղող բազմութեան մէջ անծանօթ մեկը կը տեսնենք՝ դէմքը ան նոյն տեսքը ունեցող, եւ նմանութիւնը իսկոյն այն առջի բարեկամներնու դէմքը մտքերնիս կը բերէ:

Ես նմանութեան վրայ հաստատուած Չուգորդութիւնը մի-



(ա.) Նախնական Օրէնքները :

այն տեսութեան առարկաներու վրայ չըլար. լսողութեան հազորդած իմացումներն ալ աս նոյն կերպով կը թելադրուին մեր մտքին :

§ 143 . Կերպործութեանց նմանութեանը վրայ :

Չէ թէ միայն իրերու վրայ եղած նմանութիւնը զուգորդութիւն յառաջ կը բերէ, այլ նաեւ անոնց մեր մտքին ըրած ներգործութիւններուն մէկմէկու հետ ունեցած նմանութիւնն ալ : — ( ) Երկնակի աղագու՝ երբոր Ալկիանոսը կը տեսնենք հովէն սաստիկ յուզեալ, եւ որպէս թէ անյապաղ մեզ պիտի կուտայ, բարկութեամբ բորբոքած վրանիս յարձակող մարդու մը երեսը տեսնելուս ներսիդինիս յառաջ եկած շարժութեան նրման շարժութիւն մը յառաջ կուգայ : Եւ աս մեր վրայ եղած ներգործութեանց նմանութիւնէն է որ երբեմն մէկէն մէկալը մտքերնիս կ'իյնայ : — Ի տան մը դարաւանդակն ի վար կախուած նսեմ անտառ մը տեսած ատեննիս մէկ ահու եւ զարմացման զգացում մը կը շարժի ներսիդինիս, նման ան ակնածութեանը որ կը զգանք տարիքը առած եւ իմաստուն ու արգար համբար ելած պատկառելի ծերունի մը քովերնիս եկած ատենը :

Եւ բնական բաներուն՝ մեր կենցաղավարութեանը մէջ մարգոցմէ ընդունած ներգործութիւններուս եւ անոնց մեր ներսիդինիս պատճառած շարժութիւններուն նման ներգործութիւններ եւ շարժութիւններ մեր վրայ յառաջ բերելէն բնութիւնը կենդանի՝ ապրող՝ ներգործող էակի կերպարանք կ'առնէ վրան : Եւ ըստ այնմ՝ մենք ալ շատ անգամ անանկի տեղ գնելով կը խօսինք անոր վրայ . ինչպէս՝ Ալկիանոսը Կարպէր է՝ կ'ըսենք, լուները կը ծածաղեն, եւ այլն . սասնկով երկիրը եւ իր բերքերը ալ մեռելութեան վիճակէ կ'ելլեն եւ էութիւն՝ հոգի ու ներգործողութիւն կը ստանան : — Ըստ ըստ մասին կը տեսնենք փոխաբերական ձեւին հիմը . եւ հոս փնտռելու ենք այդ ձեւին գործածութեանը պատշաճութիւնը եւ անպատշաճութիւնը որոշելուն սկզբունքները :

§ 144 . Գիմադրութիւն՝ երկրորդ ընդհանրական կամ նախնական օրէնք :

Գիմադրութիւնն ալ մէկ ուրիշ սկզբունք մը կամ օրէնք մըն է, որով մեր մէկմէկու ետեւէ յաջորդող մտաւոր հանգամանքները կը թելադրուին . կամ ուրիշ խօսքով՝ երբոր երկու իր՝ զիպուած, կամ հանգամանք ճիշդ իրարու հակառակ են, մէկուն

գաղափարէն կամ վերըմբռնումէն անմիջապէս միւսը կը հետեւի : Լըրրոր պալապի վրայ խօսք կ'ըլլայ, որչափ անգամ գեղջուկին իրճիլը մտքերնիս կու գայ նոյն միջոցին : Ըստը համար հարբստութիւնն ու աղքատութիւնը, ուրախութիւնն ու տրտմութիւնը, ծնունդն ու մահը շատ անգամ մէկտեղ յիշուած կը տեսնենք հրապարակական խօսուածքներու եւ գրութեանց մէջ : Լը պատճառն աս է, որ անոնք մեր խորհուրդներուն մէջ որոշ եւ ներգործող սկզբունքով մը մէկմէկու հետ կապուած են . իմիասին կ'երթան, չէ թէ իրարու նմանութիւն մը ունենալուն համար, այլ բուն իրենց մէջ եղած երեւելի հակառակութեանը համար : Կաւարը լոյսը մտքերնիս կը բերէ, ցուրտը տաքութիւնը, բարեկամութիւնը թշնամութիւնը, յաղթողին երեւոյթը յաղթուողը կը յիշեցընէ, եւ երբոր ծանր աշխատութեան բեռանց տակ ճնշուող զօրաւոր մարդիկ կը տեսնենք, փափկասուն թուլամորթ՝ անգործ անձանց կ'երթայ մտքերնիս : Ուրեմն դիմադրութիւնն ալ նմանութեան պէս զուգորդութեան մէկ օրէնքը կամ սկզբունքն է :

Ի իմէ յսդր կոմսին «Ըօգի Նորոտ» անուն աղբու պատմութիւնը աս քննած զուգորդութեան սկզբունքներնուս աղէկ բացատրութիւն մըն է : Ըս բորոտութեան ախտին տիրացող մարդը որչափ որ խղճալու բան կ'ըլլայ նէ, նոյնչափ ալ վախու առարկայ մը կ'ըլլայ, եւ քանի որ մարդկային ընկերութենէն կտրուած դուրս ձգուած առանձին վիճակի մը մէջ կը մնայ, ինքն իրեն ալ անտանելի տեսարան մը կ'ըլլայ : Բայց իր միտքը ինչ վիճակի մէջ կը մտնէ . ինչ բաներու վրայ կը պտըտին իր խորհուրդները : Իր իմացական սկզբունքները թող չեն տար իրեն որ մինակ թշուառութեանը վրայ խորհի : Ըսլ իր յետին թշուառութեանը՝ գաղափարական երջանկութեանց տեսարաններ աչքին առջեւը բերելով՝ ստտիճան մըն ալ կը սաստկանայ . միտքը բերկրութեանց զբախտներու մէջ կը թափառի, ոչ մէկ ուրիշ բանի մը համար, այլ միայն երեւակոյական երանութիւններու գիմադրութեամբ իր իրական վշտացը վրայ վիշտ մըն ալ եւելցընելու համար : «Շարունակ անկեղծ եւ առաքինի բարեկամներու ընկերութիւններ աչքիս առջին կը բերեմ, կ'ըսէ վերոյիշեալ պատմութեան Նորոտը, առողջութեամբ՝ յաջողութեամբ եւ երջանկութեամբ օրհնեալ ընտանիքներ կը մտածեմ : Ա'երեւակայեմ թէ աս իմ ցաւերս սիտփող ծաւերէն աւելի գեղեցիկ եւ կանաչ ծառատուկներու մէջ ուրախ՝ զուարթ կը շրջագային . աս իմ վրաս ծագող արեգակէն աւելի պայծառ արեգական լուսով լուսաւորուած . եւ իրենց բաղդը՝ իմ թշուառութիւնս որչափ սաստիկ է նէ, այնչափ նախանձելի կը թուի ինձի» :

(ա.) Նախնական Օրէնքները :

§ 145 Մերձաւորութիւն՝ երրորդ ընդհանուր կամ նախնական օրէնք :

Ան խորհուրդներն ու զգացումները որ ժամանակի եւ տեղոյ մտաութիւնով իրարու հետ կապուած են, դիւրութեամբ մէկ-մէկ կը թելագրեն. եւ ուստի աս երկու տեսակ մերձաւորութիւններն ալ իրաւամբք մեր մտաւոր զուգորդութեանց մէկ երրորդ նախնական օրէնքը կը սեպուին : Օրինակի համար՝ Պաղեստինու վրայ երբոր կը խորհինք, խորհուրդնիս բնականաբար Հրէից ազգին՝ նահապետներուն՝ մարգարէներուն՝ Քրիստոսի եւ առաքելոց կ'երթայ, վասն զի անիկայ անոնց բնակած, կեանքերնին անցուցած եւ իրենց գործքերը կատարած տեղն է : Հոս յայտնապէս կը տեսնուի որ եղած թելագրութիւնները գլխաւորապէս տեղոյ մերձաւորութեան օրէնքին իշխողութեամբ մէկը զմէկու կը յաջորդեն : Վարձեալ՝ թէ որ զանազան դիպուածներ գրեթէ մի եւ նոյն ժամանակը հանդիպած են, թէ՛ նոյն տեղն ըլլայ թէ՛ այլ եւ այլ տեղեր, մէկուն վրայ խորհիս նէ, մէկալն ալ սերտ կապակցութեամբ անոր հետ կը զուգորդի, որ ասիկայ ալ ժամանակի մերձաւորութենէ է : Թէ՛ որ Փրկչին մերոյ խաչելութիւնը յիշուի այն ատենները պատահած այլ եւ այլ դէպքեր մտքերնիս կու գան հարկաւորապէս, ինչպէս՝ Յուդային դաւաճանութիւնը, Պետրոսի ուրացութիւնը, Հոռոմայեցի զօրաց ըրածները, տաճարին վարագոյրին երկուք ճեղքուիլը եւ արեգական ատեն մը խաւարիլը :

Ազգիպտոսի յիշատակութիւնը մտքերնիս կը բերէ՝ Վեղոսը, բրգունքը, Թեբայիդի յիշատակարանները, Աղէոպատրային անխելութիւններն ու գլխուն եկած դժբաղդութիւնները, Լպուքիբի պատերազմը, եւ այլն : Յունաստանու յիշատակութիւնը կը թելագրէ Թերմոպիլէն, Սաղամիան, Տեմպեայ եւ Ալեքսեայ զուարճալի հովիտները, Լկադեմիայի հովանաւոր ձիթաստանը, եւ այլն : Ըստնք՝ կը տեսնուի որ՝ տեղոյ մերձաւորութեան սկզբունքով եղած զուգորդութիւններ են : Վայնպէս թէ որ երեւելի անձք մը յիշուի՝ ան նոյն ատենները պատահած մտադրութեան արժան դէպքեր եւ ան ժամանակները եկող երեւելի անձինք շուտ մը անոր հետ մէկտեղ կը զուգորդին : Բարելոնի աշտարակաշինութիւնը յիշուելուն, անմիջապէս լեզուաց խառնակիլը մտքերնիս կու գայ՝ կը յիշենք՝ Վերբովթ, մեր Հայկ նախահայրը, եւ այլն, որ աստնք չէ թէ լոկ տեղոյ մտաութեան սկզբունքով, այլ գլխաւորապէս ժամանակի մերձաւորութեամբ եղած զուգորդութիւններ են :

Ընդհանրապէս անանկ կը սեպուի, եւ առանց պատճառի կարծիք մը չէ աս, թէ մտաւոր զուգորդութեան աս երրորդ նախնական օրէնքին ազդեցութիւնը բոլոր միւսներուն ազդեցութեանէն եւել է: Ստոյգ է թէ մարդոց մեծ մասին ըրած բոլոր ժամանակագրական հաշիւները տեղւոյ եւ ժամանակի մերձաւորութեան վրայ հաստատուած են: Վարերու վրայ եղած ժամանակագրական բացարձակ հաշիւներուն մտադրութիւն չեն ըներ: այլ դիպուած դիպուածի թուական կ'ընեն, եւ այս կամ այն դարուն այսինչ այնինչ դէպքերը պատահեցան ըսելուն տեղը, ջրհեղեղին այս բանը եղաւ, այսինչ մեծ խաւարման ատենը այնինչ դէպքը պատահեցաւ, այնինչ սովին՝ պատերազմին կամ յեղափոխութեան ժամանակը այս կամ այն անցքը անցաւ կ'ըսեն:

§ 146. Պատճառ եւ գործք՝ շոքրորդ նախնական օրէնք :

Ընանկ դիպուածներ կան, որ իրարու հետ անփոփոխ նախորդութեան եւ յաջորդութեան վերաբերութիւն ունին: Ընդ դիպուածը, որուն հետ մէկ ուրիշ դիպուած մը շարունակ նախորդութեան վերաբերութիւն ունի, կը կոչուի գործք, եւ ան դիպուածը, որուն հետ որ ուրիշ մը անփոփոխ հետեւորդութեան վերաբերութիւն ունի, կ'ըսուի պատճառ: Ընդ՝ հոգ չէ որ իրարու հետ փոխադարձութեամբ աս առնչութիւնը ունեցող բաները իրարու նման եւ կամ ներհական չըլլան. ու նաեւ հարկաւոր ալ չէ որ տեղւոյ եւ ժամանակի մերձաւորութիւն կամ կապակցութիւն ունենան: Ըռանց աս պարագաներէն ամէն մէկուն կամ բոլորին՝ պատճառ եւ գործք կրնայ ըլլալ: Սակայն ասիկայ ամէն մարդու փորձառութեան ծանօթ բան մըն է, որ երբոր մասնաւոր պատճառի մը վրայ կը խորհինք, բնականապէս անոր գործքը կը յիշենք. եւ ընդհակառակն երբոր գործքին գիտութիւնը կամ յիշատակութիւնը կ'ունենանք, պատճառը մտքերնիս կու գայ: — Եւ աս ամենուն ծանօթ ընդհանուր փորձառութեան նայելով՝ բաւական պատճառ ունինք Պատճառն ու Գործքը մտաւոր զուգորդութեանց նախնական սկզբունքներուն կարգը դասելու: Ըստ սկզբունք կամ օրէնք ըսելով ինչ իմացընել կ'ուզենք նէ պէտք է յիշել, այսինքն՝ ան պարագաներուն ընդհանուր ցուցմունքը, որոնց մէջ որ մտաւոր հանգամանաց կանոնաւոր յաջորդութիւնը կը պատահի:

Պատճառի եւ գործքի սկզբունքովն է որ երբոր վերաբուժական կամ ինչ եւ իցէ տանջող գործիք մը կը տեսնենք, անոնց

(Բ.) Երկրորդական Օրէնքները :

պատճառած ցաւին վերըմբռնումը կ'ունենանք : Ընդհակառակըն վերք մը երբոր կը տեսնենք, որչափ ատեն առաջ ալ որ եղած ըլլայ, ան վերքը բացող դործիքին դաղափարը մտքերնիս կու գայ : Երբ սարսափելի եւ սաստիկ տանջանք տուող գործողութիւնով մը խելագարութենէ ընտցած մարդու մը վրայ բան մը կը պատմէ, որ հոս ըսածներնուս բացատրութիւն մըն է : «Ես մարդը, կ'ըսէ, ըւրնտնալէն ետեւ ամէն ատեն մեծ երախտագիտութեամբ կը խոստովանէր թէ ամենամեծ երախտիք մըն էր այն իրեն եղած բժշկութիւնը. բայց՝ երախտագիտութեան եւ բանականութեան ըրած բոլոր դրդմունքներուն վրայ՝ չէր կրնար վերաբոյժին քով հանդիպիլ. անոր դէմքը այն իր ձեռքէն կրած սոսկալի ցաւը միաքը կը բերէր, որն որ իրեն այնպէս զարհուրելի եւ անտանելի էր եկեր» :

## ԳԼՈՒԽ . Գ.

## ՋՈՒԳՈՐԴՈՒԹԻԻՒՆ (Բ.) ԵՐԿՐՈՂԱԿԱՆ ՕՐԷՆՔՆԵՐԸ

§ 147 . Երկրորդական օրէնքներ, եւ նախնականներուն հետ ունեցած կապակցութիւնին :

ՕՐՈՒԳՈՐԴՈՒԹԻՒՆ նիւթը ինչուան հոս մեր յիշած օրէնքներովը եւ անոնց վրայ տուած բացատրութիւններովնիս չ'մըննար : Եյն նախնական օրէնքներէն ի զատ, որոնց վրայ որ քրննութիւն ըրինք, քանի մը նշանաւոր եւ երեւելի պարագաներ կան, որոնք շատ կամ քիչ կ'եղանակաւորեն եւ կ'իշխեն ան իրենցմէ աւելի ընդհանրութիւն ունեցող սիզբունքներուն վրայ : Եւ որովհետեւ աս եղանակաւորող եւ իշխեցող ներդործութիւնը մնայուն է եւ չէ թէ դիպուածական կամ ժամանակաւոր, անոր աղբիւրները՝ միւս օրէնքներէն որոշելով՝ կ'ըսուին Երկրորդական Օրէնքներ : — Ետնք չորս հատ են, անց ժամանակի, կցորդեալ զգացմունք, կրկնութիւն կամ Ունակութիւն,

Չուգորգութիւն :

Եւ մարդուք բնութեանը մէջ եղած սկզբնական կամ տնկական Չանաղանութիւնները :

Պէտք է զիտել՝ թէ աս սկզբունքները, թէպէտ եւ ստորին են աստիճանաւ, սակայն նախնական օրէնքներուն զօրութիւնն ու աստիճանը կը բարձրացընեն : Ասոնց երկրորդական անունը տրուելէն պէտք չէ մակարերել թէ ոչինչ բաներ են, կամ այնչափ մեծ կարեւորութիւն մը չունին : Ընդհակառակն՝ թէ որ ասոնք չըլլայիննէ, մարդկային բնութիւնը այն հիմակուան ցուցուցած հաճոյական եւ գրեթէ անվախճան զանաղանութիւնները ունենալուն տեղը, մէկ հաստատուն՝ միօրինակ՝ անթեքելի կերպարանք մը պիտի առնէր : — Ախնական օրէնքները մեծ պողոտաներու կը նմանին, որոնց մէջէն միտքը յառաջ կ'ընթանայ . իսկ երկրորդական օրէնքները այն առշեղեալ ճամբաներն են, որոնք տեղ տեղ կ'ընդմիջեն պողոտաները, եւ շրջապատող գաւառները՝ գեղերը՝ քաղաքները մտնելու եւ անոնց հետ հաղորդակցութիւն ընելու միջոց կ'ըլլան . եւ սակայն ամէնքն ալ իրարու հետ կապակցած են . եւ բոլոր իրենց գարձուացքներովը եւ ընդմիջութիւններովը վերջապէս մէկ կէտի մը վրայ կու գան կը միանան :

§ 148 Ժամանակի անցման ազդեցութեանը վրայ :

Չորս երկրորդական օրինաց առաջինը, որ պիտի քննենք, Ժամանակի Ընթացքն է : Ըւելի մասնաւոր խօսքով այսպէս կրնանք նշանակել աս օրէնքը . Սեր խորհուրդներուն եւ շարժութիւններուն մէկմէկու հետ ունեցած կապակցութեան զօրութիւնը եւ մտքերնիս գալերնուն դիւրութիւնը անոնց վրայ անցած ժամանակին հեռաւորութեանը կամ մերձաւորութեանը համեմատ կ'ըլլայ :

Արեւի է թէ որ եւ իցէ ժամանակի հեռաւորութիւն, որչափ մեծ ալ որ ըլլայ, չ'կրնար բոլորովին կտրել մեր խորհուրդներուն մէջ եղած կապը, եւ մեզ անկարող ընել անցեալ փորձառութիւններնիս միտք բերելու . սակայն աս յայտնի է զիտողութեանէ, զիտողութիւնով որ եւ իցէ բան որչափ ստուգութեամբ կրնայ յայտնի ըլլալնէ գրեթէ այնչափ ստուգութեամբ, թէ ամէն վայրկեան որ կ'անցնի մեր անցեալ փորձառութիւններուն վրայ, անոնց եւ ներկային մէջ եղած կապը՝ թէ որ չ'կտրեր ալ նէ՝ կրտկարացընէ, եւ անոնց մտքերնիս գալուն հաւանականութիւնը կը նուազընէ : Այսօրուան կամ աս շաբթուան պատահած մինչեւ անգամ չնչին դիպուածներուն շատը կը յիշենք, բայց կը տեսնենք որ երեկուան կամ անցեալ շաբթուան պատահած

(բ.) Երկրորդական օրէնքները :

Հաճները մոռցեր ենք : Եւ երբոր ամիսներ ու տարիներ կ'ընդմիջեն մեր անցեալ փորձառութիւնները՝ մեր ուրախութիւնները՝ տրամութիւնները եւ տառապանքները ներկայիններէն, անատեն անոնցմէ որչափ քիչ մտքերնիս կու գայ, եւ որքան ազօտ ու ստուերական երեւոյթ մը կը ստանան : Քիչ մ'ալ եւեցուր ժամանակին հեռաւորութիւնը, եւ ահա թանձրամած ամպ մը կը ծածկէ մեր աչքէն մեր կենացը պատմութեանը ան մասը, ալ անիկայ երազի մը պէս կ'ըլլայ, որ մեր քննութեանը տակ չկենար, եւ որպէս թէ ամենեւին չեղածի պէս կը թուի մեզի :

Սակայն աս օրէնքին երեւութապէս բացառութիւն մը կայ, որ պէտք է յիշել հոս : Օրերը իրենց պատանեկութեանը եւ առողջ հասակին մէջ ունեցած զուգորդեալ զգացումներնին աւելի դիւրութեամբ միտք կրնան բերել, քան թէ աւելի մօտ ատեններու զգացումներնին : — Օրերուն վրայ եղած աս բանիս երկու ծանօթութիւն կայ տալու : Առաջինն աս է, թէ քննած օրէնքնիս ծերերուն փորձառութիւններուն վրայ ալ կատարեալապէս կ'իշխէ, թէ որ ժամանակը շատ ետ չ'տանինք : Քանի մը ժամ առաջ հանդիպած դիպուածներ կը յիշեն, եւ քանի մը շարժ իր կամ մինչեւ անգամ քանի մը օր առաջ եղածները բոլորովին կը մոռնան : Ինչուան այսչափ՝ ժամանակի հեռաւորութեան օրէնքը ուրիշներուն վրայ ինչ ներգործութիւն ունի նէ, ճիշդ նոյն ներգործութիւնը ունի ծերերուն վրայ ալ : Երկրորդ ծանօթութիւննիս ալ աս է, թէ պատանեկութեան փորձառութիւններուն վրայ աս իշխողութիւնը չ'ընելը չէ թէ աս օրէնքին ատ պարագային մէջ տկարանալէն է, հապաուրիչ երկու օրէնքներու, այսինքն զուգորդեալ գաղափարաց հետ կցորդեալ Օգացմանց եւ Ունակութեան կամ կրկնութեան միարան ազդեցութենէն է : Մեր կենացը առջի տարիները՝ ընդհանուր կերպով խօսելով՝ ամենէն ակորժելի ժամանակնիս են, եւ զանոնք ստեպ ստեպ կը յիշենք. եւ ասանկով ան տարիներուն յիշատակութիւնները այնպէս կ'ամրանան կը հաստատուին մտքերնուս մէջ, որ իբրեւ թէ մեր աւելի մօտ ատեններու փորձառութիւններէն առաջ կ'անցնին, եւ զանոնք իրենց տեղէն կը շարժեն :

§ 149 . Կրկնութեան կամ Ունակութեան երկրորդական օրէնքը :

Օգորդութեան երկրորդական օրէնքներուն մէկն ալ կրկնութիւնն է, ուրիշ խօսքով՝ զուգորդեալ խորհուրդներնիս որչափ յաճախ որ նորոգուին կրկնուին նէ, այնչափ դիւրութեամբ կը թելադրուին : Թէ որ մէկ զգացում մը անգամ մը միայն ունենանք,

դժուար կ'ըլլայ անիկայ մտքերնէս ելլալէն՝ ետեւ նորէն յիշել, սակայն անգամ մը ունեցած փորձառութիւննիս որչափ որ կրկնուի նէ, անոր մտքերնիս գալուն հաւանականութիւնն ալ այնչափ կ'եւեռնայ: Բերան սորվելու համար անող ամէն զրպարտան տղայ աս օրէնքին փորձը կ'ընէ եւ կը հաստատէ: Անգամ մը կարգալով միաք չ'պահուելու իմաստ մը խել մը անգամ կրկնելով կարող կ'ըլլայ գոց ըսելու:

Աս օրէնքին ներգործութիւնը մասնաւոր արհեստներու եւ զբաղմունքներու մէջ շարունակ կը տեսնուի: Արրոր մարդիկ մասնաւոր կերպով առուտուրի մը՝ արհեստի մը՝ կամ գիտութեան մը կը վարժուին, անոր հետամուտ կ'ըլլան, ան բանին եւ անոր հետ կապակցութիւն ունեցող ուրիշ ամէն բանի վրայ ունեցած զուգորդութիւններնին շատ շուտ ու որոշ կ'ըլլայ: Հազիւ երբեք կը պատահի որ իրենց մտքին գործել սովորած սահմանին մէջ եղող մէկ բանի մը վրայ տարակուսութիւն մը ցուցնեն կամ սխալմունք մը ընեն, վասն զի ան ամէն խորհուրդներն ու գործողութիւնները հազարաւոր անգամ կրկնելու եւ կատարելու են: Ինչ որ տեսնեն եւ ինչ ու լսեն մէկ կերպով մը անիկայ իրենց մասնաւոր զբաղմունքին հետ կը կապակցեն, իրենց սովորական խորհուրդներուն եւ գործքերուն կը տանին: Ասանկով՝ թէ որ զգուշութիւն չընեն՝ հետզհետէ կը զօրանայ իրենց վրայ այն գործողութիւնը, որն որ աստիճան աստիճան կը բաժնէ կը կարէ զիրենք մարդկութեան վերաբերեալ շատ երեւելի բարութիւններու մասնակցութենէ, եւ վերջապէս կրնայ բարոյվն գոցել զիրենք իրենց արհեստին մէջ:

§ 150 . Կցորդեալ զգացմանց երկրորդական օրէնքը:

Արկրորդական օրէնքներուն երրորդը Կցորդեալ Օգացմանն է: — Ուրիշ խօսքով պոսպէս կրնանք նշանակել. Օգուգորդութեան ընդհանուր օրէնքներուն ձեռքովը մեր մտաւոր հանգամանքներուն մտքերնուս գալուն հաւանականութիւնը ըստ մասին ան զգացման խորութենէն կախեալ է, որն որ ունեցած ենք իսկզբան ան բաներուն փորձառու եղած ատեննիս:

Ինչէն է որ պայծառ տեսք ունեցող բաները աւելի դիւրութեամբ մտքերնիս կու գան, քան թէ աղօտահայեաց եւ նրսեմ առարկաները: Պատճառը ան բաներուն վրայ աւելի յրստակ իմացումն ունենալնիս չէ միայն, հասպս՝ ան յստակ եւ որոշ իմացման բնական հետեւութեամբ՝ ան բաներուն մեր մտազբոլմիւնը եւելպ քաշելուն եւ մեզի աւելի հաճոյ երեւ-



(բ.) Երկրորդական Օրենքները :

նախնի համար է: Ինչո՞ւ համար մեր անձնական պատմութեան ան մասերը, որոնք որ մեծ տրամութիւններու կամ ուրախութիւններու առիթ եղած են, բրգան պէս ցցուած կ'երեւնան աչքերնուս, եւ անցեալ օրերնուս վրայ ունեցած յիշատակութիւններնէս ամենեւին չեն խախտիր, քանի որ ուրիշ հարաբերութիւններու հարաբերութիւններ կորսուած զացած են ու երբէք մտքերնիս չեն գար: Պատճառը միայն աս է, որ առջի դիպուածներուն մեջ ուրախութիւն կամ տրամութիւն զգացած ենք, եւ միաներուն հետ չ'կան կամ քիչ կան այնպիսի զգացումներ միացած: մեր ընտելեան զգայական մասը իմացականին հետ միացած է ան բաներուն մեջ: Արտերնիս մեր շարժողութեան ան բաներուն վրայ կատարած գործողութիւններուն ուժ: ու կենդանութիւն տուած է:

Ըստուածաշունչէն կը սորվինք որ շրջապէս իրենց գերութեան առեւը չէին կրնար մտնալ Արուսաղէմը, այն իրենց սիրելի եւ գեղեցիկ քաղաքը: Աւ սրգեօք ի՞նչ էր պատճառը: Ինչո՞ւ համար Մարտիրոսի գետափունքը կը նստէին, եւ Սիօնը մտքերնին բերելով կու լային, ու քնարներնին անոր մէջի ուսնիններն ի վար կը կախէին: Ընդ համար որ Արուսաղէմ չէ թէ լոկ խորհուրդի առաքկայ մըն էր իրենց, այլ եւ զգացման: Ընդ դոները եւ աւազանները՝ զուարճալի բնակութիւնները եւ գեղեցիկ տաճարները չէ թէ միայն ծանօթ էին իրենց, այլ սրտերնուն սիրելի էր: Սուրբ Վաղարշին յիշատակը մտքերնուն մէջ պտըտող անկենդան վերացեալ խորհուրդ մը չէր: այլ սրտերնուն վրայ քանդակեալ կենդանի՝ սուրբ՝ եւ բերկրալի պատկեր մըն էր: Աւ ասոր համար իրենց առանձնութեան եւ տխրութեան առեւները «Նշողութեան առաւօտեան աստղին» պէս յստակ աչքերնուն առջին կու գար:

§ 151. Ընդարդս տարրերութիւնը մտաւոր կազմութեան :

Օղագործութեան երկրորդական օրինաց չորրորդն ու վերջինը Ստաստի կալմաւելեան Տէր Էղած Բնածին պարբերականն է: — Պէտք է զիտել որ աս օրէնքը շատ ընդհանուր խօսքով զրուցուած է. վասն զի մարդուս ընտելեանը եւ իմացական եւ Օգայական մասին կը վերաբերի: Աստի մեք ալ ասիկայ երկու որոշ նկատմամբ պիտի հետազօտենք:

Ստաստի կազմութեան մէջ եղած ընդարդս տարրերութեանց օրէնքը կը վերաբերի նախ րուն իսկ շարժողութեան, այսինքն հոգոյն բողբատող՝ զատող եւ տրամաբանող մասին:

Զուգորդութիւն :

Մարդոց մէջ իմացականի կողմանէ ընդարդյս տարբերութիւններ ըլլալուն վրայ՝ կարծեօք՝ մէկը չ'կայ որ երկբայի, թէպէտ եւ սա տարբերութիւնները այլ եւ այլ աստիճանաւ զգալի են, եւ երբեմն ալ գրեթէ անզգայի: Ըստ բնածին կամ ընդարդյս յատկութիւնները՝ ինչպէս որ իմացականին ներգործութիւններուն կ'ազդեն նէ նոյնպէս ալ զուգորդութեան սկզբան վրայ ալ ներգործութիւն ունին: Մարդոց մեծ մասին զուգորդութիւնները (թերեւս սա բանը քանի մը պարագաներու մէջ դաստիարակութեան եւ մտաւոր կրթութեան պակասութենէն է բոլորովին) տեղւոյ եւ ժամանակի Մերձաւորութեան վրայ կ'ըլլան: Իրենց դիտողութեան առարկաները իրենց մերձաւորութիւնովը եւ հեռաւորութիւնովը՝ իրենց սովորական եւ արտաքին ցուցմունքներովը կամ երեւոյթներովը կրնկատեն, առանց խորունկ քննութիւններ ընելու անոնց մէջ եղած վերաբերութիւններուն եւ տարբերութիւններուն վրայ, կամ զանոնք պատճառի եւ գործքի աւելի կարեւոր վերաբերութիւնովը դիտելու: Սակայն քիչ չ'պատահիր որ անանկ անձինք ալ կրտեսնենք, որոնց միաքը տարբեր կերպով մը կազմուած է, որոնք աւելի բարձր աստիճանի իմացողութեան տէր են: Ըստ միւսին անգամ ասոնց մէջ ալ երեւելի տարբերութիւններ կրտեսնուի իրենց իմացական կարողութիւններուն սյս կամ այն բանին աւելի յարմարութիւն ունենալուն կողմանէ: ( ) քինակի ազագու՝ մէկը տղայութենէն մեծ յաջողակութիւն կը ցուցնէ թիւերու վերաբերութիւնները եւ կապակցութիւնները զգալու մասին, մէկալը մեքենական արհեստներու մէջ գործածուած զօրութիւններու՝ միջոցներու յարմարութիւններու վերաբերեալ բաները հասկընալու անսովոր կարողութիւն մը կ'ունենայ. ուրիշ մըն ալ սկզբունքներ ընդհանրացուցանելու կարգէ դուրս զօրութեան տէր կ'ըլլայ, եւ մասնաւոր պարագայի մը մէջ սկզբունք մը գտնելուն պէս, որն որ կըրնայ ըլլալ որ ուրիշներուն բոլորովին զատ առանձին բան մը երեւնայ, մէկէն անիկայ հարիւրաւոր հազարաւոր ուրիշ պարագաներու կը տարածէ: Ըստնց մէկուն վրայ ալ զուգորդութեան սկզբունքը ճիշդ մի եւ նոյն կերպովը չ'գործեր, այլ ամենուն վրայ ալ մէյմէկ կերպարանքով:

Ի սառններնիս հաստատելու համար թերեւս հարկաւոր է հոս մասնաւոր անձանց պատմութիւններ յառաջ բերել: Ստամբուլի անձանց պատմութեան վրայ թեթեւ հմտութիւն մը ունենայ նէ մէկը, բաւական կը տեսնէ թէ վերը ըսածնուս պէս իմացականի տարբերութիւններ, եւ ան ալ մեծ մասամբ զուգորդութեան սկզբանք հանգամանքներէն յառաջ եկած, շատ պատահած են: Քանի՞ հազարաւոր անգամ պարտիզպանք իրն-

( ր . ) Երկրորդական Օրէնքները :

ձորին ծառէն վար կ'յնալը տեսած , եւ մինչեւ անգամ Հարցուցած չին պատճառը : Եւ սակայն Վեւտոն պարտէզը նստած առնել երրոր տեսաւ խնձորին ծառէն կ'յնալը , չէ թէ միայն պատճառը փնտաեց ու գտաւ , այլ մէկէն իմացաւ որ ան նոյն պատճառը նոյն պարագային տակ եղող ամէն ուրիշ բանի , բոլոր երկրիս երեսը իջնող մարմիններուն ալ կը վերարեբի : Հոս ալ կանկ չառաւ . այլ անմիջապէս այն գտած սկզբունքին ներգործութիւնը երկրիս երեսէն ինչուան երկինք տարածելով , անոր ինչ աստիճան ընդհանրութիւն ունենալը ցուցուց , եւ Հաստատեց թէ ամենահեռաւոր մոլորակն ու օտքերնուս կոխան եղող հողին մասնիկները մի եւ նոյն մեծ օրէնքին իշխողութեամբ կը կառավարուին : — Եւս մէկ անձ մը , որ չէ թէ միայն աշխատութիւնով երեւելի էր , այլ ի բնէ բարձր եւ Հնարագէտ մտքի տէր էր , անանկ մտքի տէր , որուն գործողութիւնները չէ թէ լոկ ժամանակի եւ տեղոյ մերձադրութիւնովը կը կառավարուէին , այլ Արարանութեան եւ Պատճառի ու Վործքի փելի արդիւնաւոր զուգորդիչ սկզբունքներովը :

§ 152 . Կտիւնթաց օրէնքին վրայ՝ զգացողութեանց վերաբերելով :

Երկրորդ՝ քննած օրէնքներնիս կը վերարեբի նաեւ զգացմանց եւ կրից կամ՝ ուրիշ խօսքով՝ բնաւորութեանց ընդարոյս տարբերութիւններուն : Վիւթերնուս սա մասը դիւրին Հասկընալու համար՝ երկու կարգ մարդիկ յառաջ բերենք : Քննելու երկու տեսակ մարդերնուս առաջինը անօնք են , որոնք՝ ինչպէս որ կը գտնուին այսպիսի անձինք , տխուր եւ մելամաղձօտ բնաւորութիւն մը ունին : Եւսնք իրենց պղտիկութենէն առանձնութեան սէր մը կը ցուցընեն , կամ իրենց սրտին գաղտնիքներուն հետ աղէկ հաղորդակցութիւն ընելու համար , կամ առանց օւրիշներուն իրենց արգելք ըլլալուն՝ բնութեան գործքերուն մէջ ազդողական եւ վսեմ ինչ բան որ կայնէ՝ անօնք ազատաբար գննելու՝ դիտելու ու վրանին որոճալու համար : Միւս կարգէն եղողները բնականապէս կայտառ եւ զուարթաբարդ են բնաւորութեամբ : Եւսնք բնութեան գեղեցկութիւններովը կը զուարճանաննէ՝ առանձնութեան մէջ չէ , այլ ուրիշներու հետ ընկերութեամբ : Մէկ կողմանէ խռովեալ խորհուրդներու բաց չեն ձգեք սրտերնին , մէկ կողմանէ ալ խաղաղութեան՝ խընդութեան եւ յուսոյ քաղցր ճառագայթներուն ներս մտնելուն ամենեւին արգելք չեն դնել :

Երդ՝ սս անտարակոյս է թէ սս երկու կարգ մարդոց բնա-

## Չուգորգութիւն :

ւորական տարբերութիւնները աղբեցութիւն ունին զուգորգութեան նախնական օրէնքներուն վրայ, այսինքն թէ՛ զուարթարոյ մարդուն խորհուրդներուն կարգը տխուր եւ մեղամաղձոտ մարդուն խորհուրդներուն կարգէն շատ տարբեր կ'ըլլայ : Ըստ տարբերութիւնները երեւելի բանաստեղծներ շատ աղուոր կերպերով նկարագրած են :

Ըստնցմէ ի զատ մեր խորհուրդներուն զուգորգութեան ընթացքը այն ժամանակաւոր զգացումներովն ալ կը եղանակաւորի, որոնք որ մեր բնաւորութեանը ընդհանուր որպիսութեանը բացառութիւնք կրնանք սեպել : Չուարթարոյ մարդը միշտ զուարթ չըլլար, ոչ ալ մեղամաղձոտը ամէն ատեն նոյն ծանր եւ խոհուն կերպարանքը կ'ունենայ : Արբեմն երբեմն առողջութեան կամ հիւանդութեան պատճառով, յաջողակ կամ ձախողակ դէպքի մը պատճառով, եւ կամ դիւրին չբացատրուելու պատճառով մը մէկմէկու բնաւորութիւն կը փոխիւրանն քիչ մը ատեն : Ընկալէս որ մեր մտաւոր հանգամանքներուն մէկը ըզմէկ յաջորդելու կարգը չէ թէ միայն մեր բնաւորութեանը ընդհանուր որպիսութեանէն կը տարբերի, այլ եւ ամէն աւուր եւ ամէն պահու վաղանցիկ զգացումներէն ալ միշտ կը փոփոխի :

Ըրժան է որ զուգորգութեան բոլոր օրէնքները հոս ամիոյի դնենք, ու աս նիւթիս վրայ խօսքերնիս լմնեցունենք : 'Ի, Խալիս, Խալիս կամ ընդհանուր օրէնքներն ստոնք են, 'Ի, մանուշիկան, 'Ի, խալիս-խալիս, տեղոյ եւ ժամանակի Ալ-բիս-սուր-խալիս, եւ Ալ-բիս-սուր-ու-Ալ-բիս : Ըն պարագաները, որոնք մասնաւորաբար կը եղանակաւորեն եւ կ'իշխեն աս օրէնքներուն ներգործութեանը վրայ, կ'ըստին Ալ-բիս-սուր-խալիս օրէնք, եւ ասոնք են, Ընք ժամանակի, Արկնութիւն կամ ունակութիւն, Աջորդեալ զգացմունք, եւ բնածին Տարբերութիւնք մտաւոր կազմութեան :

## ԳՒՍԻԽ • 1:

## ՅԻՇՈՂՈՒԹԻՒՆ

§ 153 . Ծանօթութիւնք յիշողութեան ընդհանուր բնութեանը վրայ :

ԲՆԵՊԸՆ կարգը կը պահանջէ որ Օլոգորդութենէն անցնինք Յիշողութեան, վասն զի յիշողութիւն բնելով հարկաւորապէս անկէ առաջ զօլոգորդութիւն եղած ըլլալը կը հասկըցուի, եւ երկուքը իրարու հետ բնութեամբ շատ կապակցութիւն ունին : Մարդկային հմտութեանց Օագմանը մեծ խնդրոյն նայելով, Յիշողութիւնը՝ ինչպէս որ արդէն ակնարկած ենք՝ հմտութեան աղբիւր մը սեպելու է աւելի միւս մտաւոր կարողութեանց հետ մէկտեղ առնելով՝ քան թէ ըստ ինքեան : Ինտոր կրնայինք առարկաներու եւ առարկաներու կարգերուն հմտութեանը վրայ հիմնեալ ինչ եւ իցէ վերացեալ գաղափարներ կաղմել առանց յիշողականին օգնութեանը, եւ տրամաբանութեան ու երեւակայութեան կարողութիւններուն բոլոր ներգործութիւններուն մէջ ալ՝ յայտնի է թէ՛ յիշողութեան կարողութիւնը էապէս հարկաւոր է : Սակայն ասոր շըմտութեան ծագմանը հետ ունեցած կապակցութեանը վրայ խօսքերնիս չերկարելով՝ անցնինք նոյն իսկ կարողութիւնը քննելու թէ իր ընդհանուր բնութեանը եւ թէ մէկ քանի մասնաւոր հանգամանքներուն կողմանէ :

Յիշողութիւնը մտքին այն կարողութիւնն է, որով որ անցեալ ժամանակի վերաբերական դաղափարին հետ միացած վերըմբռնմունք կը ծագին մտքերնուս մէջ : Ըսել է թէ ափկայ ոչ թէ պարզ այլ բաղադրեալ իմացական ներգործութիւն մըն է, որ կը բովանդակէ, (1.) Առարկային իմացումը, եւ (2.) անոր գոյութեանը ժամանակով սուաջ ըլլալուն վերաբերական իմացումը : Այսինքն՝ աս կարողութիւնով չէ թէ միայն առարկային վերըմբռնումը կ'ունենանք, այլ այն վերըմբռնմանը հետ մէկտեղ աս ճանաչումն ալ՝ թէ ան առարկան անցած ժամանակի մը մէջ մեր զգայարանաց քննութեանը ենթակայ եղած է կամ ինչ եւ իցէ կերպով մը իմացած ենք զանիկայ :

Արդոր սենեակնուս մէջ նստած ինքզինքնիս լեռան մը գլուխ կ'երեւակայեմք, այն միջոցին մտքերնէս անցած անտառներու՝ կապուտակ երկնից եւ կանաչադեղ դաշտերու հաճոյական գաղափարները լոկ վերամբռնմունք են : Իսկ երբոր աս գաղափարներուն հետ ժամանակի ասնչութիւն ալ միանալով՝ իրրեւ մեր մանկութեան օրերու անտառները՝ լեռները եւ դաշտերը մըաքերնիս իյնալու ըլլան նէ, անտառն այն առջի պարագային մէջ լոկ վերամբռնմունք եղող մտաւոր հանգամանքները կ'ըլլան Յիշողութիւնք : Իւ մտքերնուս աս վերջին հանգամանքները ծնանող կարողութիւնը կ'ըսուի Յիշողութիւն, Յիշողական, կամ Յիշողականութիւն :

§ 154. Յիշողութեան հաւատքի հիմ մը կամ օրէնք մը ըլլալը :

Յիշողութիւնը, որ անցեալ հատուածին մէջ բացատրեցինք, հաւատքի հիմ մը կամ օրէնք մըն է : Որ բանին մէջ որ ունեցած զգայութիւններնուս ուղիղ կերպով մեր յիշողութեանը հաղորդուելուն վրայ երկբայելու մասնաւոր պատճառ մը չունինք նէ, ան բանին վրայ ունեցած յիշելութիւննիս՝ այն նախընթաց զգայութիւններուն եւ իմացումներուն պէս՝ մեր հաւատքին եւ գործքերուն վրայ կ'իշխեն : Ասանկ կազմուած է մտքերնիս : — Պէտք է զիտել, թէ հաւատքին յիշողութեանէն բնական կախումն ունենալը հաստատած ատեննիս բացայայտ սահման մըն ալ կը դնենք կոր : Անտանը միայն հաստատուն վստահութիւն կրնանք ունենալ մեր յիշելութիւններուն վրայ, երբոր այն յիշած անցեալ փորձառութիւններնուս ուղիղ կերպով մեր յիշողութեանը հաղորդուելուն վրայ երկբայելու տեղ չունինք :

Ամէն մարդ ներքին զգացումով մը կրնայ գիտնալ թէ այնինչ բանին մէջ իր յիշողութեանը վրայ երկբայելու պատճառ մը ունի՝ թէ չէ. քանզի ան նոյն գիտակցութիւնը, որ իր յիշողութեան կարողութիւն ունենալը կ'իմացընէ նէ իրեն, ան յիշողութեան ինչ աստիճան ըլլալն ալ կ'ազդէ. սոյսինքն զօրաւոր կամ տկար, յստակ կամ աղօտ ըլլալը : Այնքան անսակ ըլլայ որ իր յիշողութեանը ցուցուցած բանին վրայ կասկածելու պատճառ մը գտնէ, անտան կամ իր վստահութիւնը պիտի նուազէ իր կասկածին համեմատութեամբը, կամ՝ եթէ կըրնայ նէ՝ կասկածին պատճառները վերցընելուն հնարքը պիտի նայի :

Իսնաւոր կերպով մարդ չ'կրնար սոյսպիտի կարծիք մը ընել,

## Յիշողութիւն :

Թէ ծանուցած սահմանովէն յիշողութեան վրայ վտահանալուն վարդապետութեանը դէմ առարկութիւն կրնայ ըլլալ : Ըսանց աս վտահանութեանը մեր վիճակը լուսագոյն չէր ըլլար, քան եթէ Օգոստոսեանաց ապամանցը կամ Վկայութեան վրայ վտահանութիւն ունենալու բոլորովին անկարող ստեղծուէինք նէ, որպէս թէ գոյութիւն չունեցողի պէս կ'ըլլայինք, վասն զի աս ունեցած գոյութիւններնուս օգնութեամբը մեր անցեալ փորձառութիւններէն քան մը պիտի չ'կրնայինք քաղել :

§ 155 . Այլ եւ այլ աստիճան յիշողութեանց վրայ :

Յիշելու կարողութիւնը առհասարակ ամենուն տրուած ձիւրք մըն է, եւ՝ ընդհանրապէս խօսելով՝ գրեթէ ամենուն վրայ ալ մէկ աստիճան է : Ըմէն մարդ բաւական յաջողակութիւն ունի աս բանիս մէջ . ամենուն յիշողութիւնն ալ կենաց սովորական պիտոյքներուն կ'օգտէ : Բայց թէպէտ եւ ընդհանրապէս գրեթէ մի եւ նոյն հաւասարութեամբ ամենուն տրուած կը դտնենք աս կարողութիւնը, սակայն խիստ տկար կամ զօրաւոր յիշողութեան տէր եղողներու օրինակներ ալ կը դտնուին :

Սենքայ՝ շորգանսիոս անուն շոտմայեցի ատենաբանին համար կը պատմէ թէ օր մը ինչուան իրիկուն վաճառանոցի մը մէջ նստեր է, ու իրիկուան՝ ինչ ապրանք որ ծախուեր է՝ ինչ գնով ծախուեր է՝ եւ ինչ անուն մարդոց տրուեր է՝ ամէնքն ալ մէկիկ մէկիկ մտքէն ստորագրեր է, եւ ըրած պատմութիւնը այն բաները արձանագրող նօտարին գրածին կատարելապէս համաձայն եկեր է ամէն մասամբ :

Նետեւեալ պատմութիւնն ալ երեւելի օրինակ մըն է զօրաւոր յիշողութեան : — Ըտնով Ընդգիացւոյն մէկը Բրուսիայի թագաւոր Սեճն Փրեզերիկոսին կու գայ, միայն աս մտքով որ իր յիշողութեան զօրութիւնը անոր ցուցնէ : Փրեզերիկոս Վոլգէոը իրեն կը կանչէ եւ երկնկեկ բանաստեղծութիւն մը կարգացրնել կու տայ դիմացը, որ դեռ նոր շինած է եղեր : Արդալը լմիննալէն ետեւ, Փրեզերիկոս՝ ատ բանաստեղծութիւնը ձեր հեղինակութիւնը ըլլալու չէ՝ կ'ըսէ Վոլգէոսին, հոս մէկ օտարական մը կայ, որ ատիկայ ծայրէ ի ծայր կրնայ զրուցել : ( ) օտարականը կու գայ կը սկսի առանց փոքր ինչ տարբերութեան ոտանաւորը բառ առ բառ կարգալ . ապշած կը մնայ Վոլգէոն իր այնչափ աշխատութիւնով շինած բանաստեղծութիւնը օտարականին բերնէն լսելուն, եւ բարկանալով կը պատուտէ գրուածքը մէկ դի կը նետէ : Ատքը երբոր կը պատմեն իրեն բանին ինտոր ըլլալը, մեծ

## Յիշողութիւն :

յօթարութեամբ՝ իրրեւ ապաշխարութիւն այնպէս շուտ բարկանալուն՝ կը նստի նորէն կը գրէ բանաստեղծութիւնը օտարականին բերնէն :

Ըստ տեսակ ուրիշ օրինակներ ալ կան այլ եւ այլ անձանց վերայ գրուած պատմութեանց մէջ յիշուած, բայց ասոնք մարդկային մտաց ընդհանուր կերպարանքին բացառութիւնները սեպելու ենք, որոնց պատճառը որ եւ իցէ գիացած սկզբունքներովն իս դժուար է մեկնել : Հաւանական է որ ասոնք ընդաբոյս եւ բնածին ձիբքեր են, եւ թէ որ ասանկ է նէ բանը, լոկ պատմութեանէն աւելի բացատրութիւն չեն վերցըներ : Սակայն մէկ քանի ուրիշ զանազանութիւններ եւ մասնաւոր յատկութիւններ կան յիշողութեան, նշանաւորութեան կողմանէ թերեւս հիմակուան պատմածներնէս վար, որոնց վրայ արժան է մանրամասն գիտողութիւն ընել :

§ 156. Մտնանորայ յիշողութիւն, կամ յիշողութեան այն տեսակը, որ տեղւոյ եւ ժամանակի վերաբերութիւններուն վրայ հիմնեալ է :

Տեսակ մը յիշողութիւն կայ, որ սովորաբար ինքզինքը շատ յայտնի կերպով կը ցուցնէ, որ էականապէս տեղւոյ եւ ժամանակի մերձաւորութեան վերաբերութիւններուն վրայ հիմնեալ է : — Ըստ ձեւ կամ աստեսակ յիշողութեան վրայ բացատրութիւն ըրած ատեննիս աղէկ կ'ըլլայ որ յիշողութեան ընդհանուր բնութեանը վրայ ասկէ առաջ եղած ծանօթութիւնները մտքերնիս բերնէք քիչ մը : Պէտք չէ մոռնալ թէ յիշելութիւնք ուրիշ բան չեն, այլ միայն ժամանակի վերաբերական ծանօթութեան իմացմանը հետ միացած վերըմբռնմունք : Ուստի թէ որ անցեալ ժամանակի գաղափարները վերցընենք նէ, կը մնան մեր յիշելութեանց տարր միայն վերըմբռնմունք : Ըրդ՝ յայտնի է թէ վերըմբռնմունք լոկ կամական ճիգով մը կամ ուզելով մը յառաջ չեն գար մտքերնուս մէջ, վասն զի այնինչ վերըմբռնման մտքերնիս գալը կամիլը հարկաւորապէս արդէն այն վերըմբռնումը մտքերնուս մէջ կայ ըսել է : Ուստի վերըմբռնմունք արդէն քննած գուգուրուլէան սկզբունքներնուս մէկ քանիին աղղեցութեամբը մտքերնուս մէջ յառաջ կու գան : Հետեւաբար յիշողութիւննիս ալ՝ մեր մտքին զուգորդութիւններուն վրայ ամենէն եւել իշխող զուգորդիչ սկզբունքը որն է նէ, անոր նման մասնաւոր յատկութիւն մը կ'առնէ : Թէ որ՝ օրինակի աղազալ յիշողութիւննիս Մերձաւորութեան զուգորդիչ սկզբունքին վրայ հիմնեալ է նէ սովորաբար, անոր նիւթերը լոկ եղելու



## Յիշողութիւն :

Թիւններ կ'ըլլան եւ անոնց արտաքին դէպքերը եւ պարագաները, առանց անոնց վրայ եղած խորին ներքին քննութիւններու ծանօթութեանց, եւ առ տեսակ յիշողութիւնը չէ թէ միայն իբրեւ յայտնի տեսնուող եւ գործնական յիշողութիւն կրնանք ստորագրել, այլ յատկապէս աս անունով կրնանք ցուցնել, Մասնատրայ յիշողութիւն, այսինքն՝ մասնատրօք զբաղեալ յիշողութիւն: Իսկ թէ որ գլխաւորաբար ուրիշ զուգորդիչ սկզբանց վրայ հիմնեալ ըլլայ նէ, անատեն թէպէտ այնչափ դիւրամեք՝ դիւրաւ ամէն բանի շարժող եւ այնչափ մանրամասն բաներու նկատող յիշողութիւն չըլլար, սակայն աւելի փիլիսոփայական յատկութիւն մը կ'ունենայ:

Ան յիշողութիւնը, որ գլխաւորաբար մերձաւորութեան օրէնքին վրայ հիմնեալ է, որուն որոշիչ յատկութիւնն է մասնաւորօք լեցուած ըլլալը, կը գտնենք որ յատկապէս չ'զատարակուած մարդոց մէջ ընդհանուր է, չէ թէ միայն արհեստաւորաց եւ բանուոր մարդկանց կարգէն եղողներուն, այլ որ եւ իցէ հանգամանաց տէր եղող այն ամէն մարդոց մէջ, որոնք մասուր կրթութեան միջոցները ձեռք ձգած չեն, կամ ձեռք ձգած ալ են նէ բանեցուցած չեն: Կ'նշուշտ ամէն մարդ զանազան օրինակներ տեսած եւ գիտցած ըլլալու է այս տեսակ մարդոց ինչ մեծ դիւրութեամբ եղելութիւններ՝ տեղեր՝ ժամանակներ՝ անուններ, հազուստներու՝ շէնքերու՝ աւանդութիւններու եւ տեղական զիպուածներու մանրամասն պարագաներ միտք բերելը: ( )րինակի համար՝ իրենց գիտցած մէկ բանը պատմելու ըլլան նէ ստոնք, ընդհանրապէս պատմած դէպքերնուն ժամանակը կը յիշեն. չէ թէ անորոշ կամ մերձաւոր ժամանակ մը, այլ ճիշդ եղած՝ ամիւր՝ օրը՝ կամ ժամը: Եւ նոյնպէս անձ մը կամ տեղ մը, մէկուն հազուստը կամ զարգարանքը, տեղի մը աշխարհագրական դիրքը կամ հոն պատահած զիպուածները ստորագրելու ըլլան նէ, ան նոյն մանրամասն բաներ յիշելու յատկութիւննին յայտնապէս կը ցուցնեն:

## § 157. Մասնատրայ յիշողութեան վրայ բացատրութիւններ:

Մարդկային բնութեան երեւելի վարժապետները (որոնց մէկըն է Հէքսթիըր) տեղ տեղ յայտնած են աս կերպ յիշողութեան վրայ ունեցած տեղեկութիւններն: Հէքսթիըր իր կատակերգութիւններուն մէջ տեղ մը Գուլիքի անուն կնկան մը Գէլրտաֆ անուն մէկուն զինքը առնելու համար տուած խոստման վրէ յիշեցնելը կրնկարագրէ, ուրտեղ պատ կնկանը ան եղած

## Յիշողութիւն :

խոստմունքին մանրամասն պարագաները ինչպէս դիւրութեամբ յիշելը յայտնապէս կ'երեւնայ . որ չէ թէ առանձին եղելութիւնը ընդհանուր կերպով մը կը պատմէ, հապա դատաւորի առջև վկայութիւն տալու կեցողի պէս՝ պարագայ չ'թողուր կը յիշէ : — «Ղուն ինձի երգում բրիր, կ'ըսէ, կէս ոսկեղօժ գաւաթի մը վըրայ, Ղլիին սենեակիս մէջ նստած, բոլորակ սեղանին քովը, հանքային ածուխի կրակով մը, Հոգեգալուստին չորեքշաբթին, երբոր իշխանը գլխուդ այն սաստիկ հարուածը իջեցուց՝ զինքը Բահնուզի երգեցիկներուն նմանցընելուդ համար» : — Կուռնեւ լիոս Աբրիպլերոս գրքին մէջ յիշուած կառավարը Արջու Պարտեզ ըսուած տեղը տեսած մէկ մենամարտութիւնը կը պատմէ . «Ղրկու հոգի մթնանակի համար պատերազմեցան, կ'ըսէ, մէկը գեղեցիկ մարդ մըն էր, պաշտօնով ասպետ, միւսը սեւ մէկն էր, արհեստով մնագործ, ասպետը կարմիր բանդու հագեր էր, մնագործը կապուտ, թատրոնի մը մէջ կուռեցան, ժամը չորսին, եւ ասպետը մնագործը վերաւորեց սրունքէն» :

§ 158 . Փիլիսոփայական յիշողութեան վրայ, կամ այն տեսակ յիշողութեան վրայ, որ չէ թէ մերձաւորութեան՝ այլ ուրիշ վերաբերութեանց վրայ հիմնաւ է :

Ուրիշ կերպ յիշողութիւն մըն ալ կայ, մասնաւորաց յիշողութենէն յստակ կերպով որոշելի, որուն փիլիսոփայական յիշողութիւն կրնանք ըսել : Աս տեսակ յիշողութիւնը հաղիւ կ'ըլլայ որ Ս'երձաւորութեան վերաբերութիւնը իրեն օգնութիւն առնէ, այլ գլխաւորաբար 'Ս'մանութեան՝ Ղիմադրութեան եւ Պատճառի ու Ղործքի վերաբերութիւններուն վրայ կայացած է : Ս'ասնաւորաց յիշողութիւնը, որ գրեթէ բոլորովին մանրամասն պարագաներով կը զբաղի, եւ մասնաւորաբար զգայարանօք իմանալի բաներու հետ, ան մարդօցը ամէն պիտոյքը կը լեցընէ, որոնք որ այդ տեսակ յիշողութեան տէր են : Սակայն լոկ տեղոյ եւ ժամանակի Ս'երձաւորութիւնը, որ աստ մտքերնուն կարողութիւնները աղէկ չբացուած մարդոց յիշողութեանը մէջ եղելութիւնները եւ դէպքերը իրարու հետ կապող գրեթէ մէկհատիկ սկզբունքն է, փիլիսոփային առջեւը շատ քիչ արժէք ունի : Փիլիսոփայական մտքի տէր եղողը բաներուն բնութեանը խորունկը թափանցելը կը նայի, շատ քիչ մտադրութիւն կ'ընէ բոլորովին արտաքին եւ դիպուածական բաներու . այլ սուր աչքով բաներուն վերաբանութիւնները, դիմադրութիւնները, պատճառները եւ հետեւութիւնները կը գտնէ՝ վեր կը հանէ : Հռչակաւոր

## Յիշողութիւն :

Վաղղիացի Սննդայն թերեւս սովորականէն եւել աստիճանաւ մը զուրկ էր այն մասնաւորաց յիշողութիւն ըսածներնէս : Տեղ մը ինք իրեն համար կ'ըսէ, թէ «Ստիպուած եմ սպասաւորներս իրենց պաշտօնին կամ ծնած տեղերուն անունովը կանչելու, փասն զի չեմ կրնար կոր անուններնին միտքս պահել. եւ թէ որ շատ ապրելու ըլլամ'նէ, կարծեմ թէ իմ անունս ալ պիտի մոռնամ» : Բայց սա խօսքէն, որով անուններ եւ անջատեալ եղելութիւններ՝ մանաւանդ հասարակ կենցաղոյս վերաբերեալ բաները միտքը պահելու անկարող ըլլալը կը ցուցնէ, բոլորովին յիշողութիւն չունիմ ըսել չ'հասկցուիր : Իր գրութիւններէն կ'երեւնայ որ խորհրդածող եւ հայեցողութեան պարապող մարդ մըն էր ինք. եւ յայտնապէս կը ցուցնէ իր խօսքերովը, որ մարդկային բնութեան սկզբունքները ուսանիլը շատ աւելի հաճելի էր իրեն, քան թէ արտաքին բաներու վրայ հմտութիւն ստանալը : Որ սա ակտիւական բերմամբը իր յիշողութիւնը աւելի փիլիսոփայական էր, քան թէ մասնաւորաց, եւ ընդհանուր սկզբունքները աւելի հաստատութեամբ միտքը կը պահէր, քան թէ մասնաւոր բաները :

## § 159 . Փիլիսոփայական յիշողութեան վրայ բացատրութիւնք :

Ըն մարդիկը որոնց իմացումները փիլիսոփայական են եւ որոնց յիշելութիւններն ալ հետեւաբար նոյն բնութիւնը ստացած են, չեն կրնար ուրիշ կերպ իմացական հակամիտութեան տէր եղողներուն չափ արագ եւ երեւելի յառաջադիմութիւն ընել ամէն տեսակ գիտութեանց մէջ : Գրեթէ ամէն գիտութիւն երկու կերպարանք ունի ուսանողին աչքին առջեւը, մէկը տեսական, միւրը գործնական. մէյմը իր սկզբունքները, մէյմ'ալ իր իրողութիւններն ու գործածութեան կանոնները : Մասնաւորաց յիշողութեան տէր եղողին միտքը շուտով գործնականին կը վազէ, սորոված բանին իրական ճշմարտութիւնները անաշխատ կերպով ձեռք կը ձգէ, եւ անանկ քաջութեամբ ու դիւրութեամբ անոր կանոնները կ'արտայայտէ, որ փիլիսոփայական յիշողութիւնը իր քովը աննշան կը մնայ : Բայց երբոր գիտութեան ան մասերուն կը հասնին, որոնք որ այնչափ աչք առնելու բաներ չունին, երբոր վերաբանութեանց՝ կարգաւորութեանց եւ սկզբանց աւելի օգտակար հմտութիւններուն կու գան, անատեն կը փոխուի բանը : — Ըս բանիս պատշաճ ծանօթութիւն մը ունի Սգիւարդ : «Ուշիմութենէ զուրկ եղող մարդը (որ հոս ըսել է բնականապէս փիլիսոփայական մտքի տէր չեղողը) քիչ աշխատութիւնով կրնայ

խել մը մասնաւոր բաներ գանձել մտքին մէջ բնական գիտութեանէ կամ բնալուծութեանէ, զորոնք սկզբունքի մը չ'վերածեր, ու անոնցմէ հետեւութիւններ չ'հաներ. եւ աս ծանօթութիւնները ստանալու յաջողակութեանէն կը կարծէ թէ ան գիտութիւններուն բնական ակորժակ մը ունի: Իսկ անոնք, որոնց որ տրուած է գիտութեանց սահմանները ընդարձակել, երբոր նոր բանի մը ձեռք կը զարնեն նէ՛ շփոթութիւն մը կը զգան, յիշողութիւննին իրական ճշմարտութիւններով կը բեւեաւորի, ան ճշմարտութիւններուն մէջ մէկ վերաբերութեան կապակցութիւն մը չեն կրնար տեսնել: Սակայն ժամանակին իրենց գերազանցութիւնը երեւան կ'երևէ, որ աս գերազանցութիւնը ըստ մասին ան առջի բերան զգացած տհաճութիւններնէն կը ծագի, որն որ միշտ իրենց յուզականգրութիւնը կը գրգռէ, ինչուան որ ան երեւութաբար մէկմէկու հետ կապակցութիւն չունեցող խառնափնդոր ճշմարտութեանց բաղմութեանը մէջ այն պարզութիւնը եւ գեղեցկութիւնը տեսնեն, որ բոլոր բնութեան գործողութիւններուն հանգամանքն է՝:

§ 160 . Բազմողական յիշողութեան վրայ:

Յիշելութեան մէկ կերպը կամ կիրառութիւնը կայ, որ կ'ըսուի Իսայ յոգայան Յիշողութիւն կամ Յիշելութիւն. որ ստոր ալ բացատրութիւնը ապու համար աղէկ է որ կրկին դիտողութիւննիսքիչ մը յիշողութեան ընդհանուր բնութեանը դարձնենք: — Յիշողութեան վրայ տուած սահմաննիս աս էր, թէ անցեալ ժամանակի վերաբերական գաղափարին հետ միացած վերըմընմունք ծնանող մտաւոր կարողութիւն մըն է: Ըսկէ հարկաւորապէս կը հետեւի որ յիշողութիւնը՝ գոնէ մեծ մասով մը՝ Օղագորգութիւն է: Ըրգ՝ պէտք է յիշել թէ մեր խորհուրդներուն զուգորգութիւնը ճիշդ մտօք կամաւոր չէ. այսինքն՝ «ուղայի» կերպով կամքերնուս իշխողութեանը տակը չէ: Մեր զուգորգեալ խորհուրդները կու գան ու կ'երթան, (սկզբնաւորութիւններուն վրայ չենք խօսիր կոր,) մենք ամենեւին անկարող ըլլալով անոնց վրայ անուղայի զօրութեանէ մը ի զատ ուրիշ իշխողութիւն մը բանեցընելու: Ըս իրական ճշմարտութիւններէն կը հետեւի որ մեր յիշելութիւններն ալ, որ ըստ մասին լոկ զուգորգեալ խորհուրդներ են, ճիշդ մտքով կամաւոր չեն. ուրիշ խօսքով՝ անհնար է մեզի մէկ բան մը յիշել լոկ յիշել ուզելով: Ըսնինչ բանը յիշել ուզելը կամ կամիլը ան բանը արդէն մտքերնիս է ըսել է. ուստի լոկ ուղղակի կամեցումով մը, այնինչ բանը

## Յիշողութիւն :

միտքս բերեմ ըսելով մը մտքերնուս մէջ խորհուրդ ծագեցը-  
նելը ոչ միայն մեր մտքին կազմութեանը անհնարին բան է, այլ  
անտեղի խօսք է: Ըսոր համար կը գտնենք որ յիշողութիւն-  
նիս զօրացնելուն եւ սրելուն զօրութիւնը զուգորդութեան այլ  
եւ այլ սկզբունքները վարպետ կերպով գործածելուն եւ օր-  
նական առնելուն վրայ կը կայանայ: Եւ ահա սա ճշմարտու-  
թենէն Բաղձողական Ֆիլիսոփեան բացատրութիւնը կը հա-  
նենք:

## § 161 . Բաղձողական յիշելութեան ինչ ըլլալ :

Երբոր բաղձողական յիշելութիւն ընելու կ'ըլլանք, կամ  
մէկ պարագայ մը յիշել կ'ուզենք, յայտնի է թէ ան ընդհա-  
նուր դիպուածը, որուն մէկ մասը ըլլալ պիտի գտնենք ան  
պարագան՝ երբոր մտքերնիս գայ նէ, առաջուց մտադրութիւն-  
ներնուս առարկայ ըլլալու է: Ե, յիսինքն՝ անանկ ըլլալու է, որ  
պատմութեան երեւելի կտորները յիշենք, ու առջի բերանը  
ուզածնուս պէս պատմելու անկարող գտնենք ինքզինքնիս: Ես  
վիճակին մէջ երկու կերպ հնարք կը բանեցընենք չ'յիշած պա-  
րագաներնիս միտք բերելու: — Ե. առջինն սա է, որ այլ եւ այլ  
ենթադրութիւններ կ'ընենք ու կը նայինք թէ որը ամենէն  
յարմար կու գայ ընդհանուր իրողութեանը. անոր երեւելի մա-  
սերը բաղձանաց կամ հետաքրքրութեան զգացումով մը յա-  
րատելութեամբ աչքերնուս առջին պահելով: Ես կերպ խոր-  
հուրդներ միտք բերելը աւելի տրամաբանութեան ձեւով է,  
քան թէ զուտ յիշողական ներգործութեամբ:

Երկրորդ կերպն ալ սա է, որ արդէն յիշած խորհուրդներ-  
նուս վրայ կը մնանք, եւ զանոնք մտքերնուս մէջ կրկին եւ  
կրկին կը գարձընենք. ինչուան որ զուգորդութեան սկզբան մը  
օգնութիւնը գտնենք, եւ անով ձեռք ձգենք այն փնտուած  
մասնաւոր գաղափարներնիս: Ե, յայտնիս երբոր գոց ըրած մէկ  
բաներնիս զրուցելու կ'ըլլանք ու կը նայինք որ մէկ պարբերու-  
թիւն մը կամ խօսք մը մտքերնիս չ'գար նէ, անկէ առջի պար-  
բերութեան վերջի բառերը քանի մը անգամ կը կրկնենք, եւ  
ասանկով շատ հեղ մոռցածնիս մտքերնիս կու գայ:

## § 162 . Նախընթաց ծանօթութեանց վրայ բացատրութիւն :

\* Նախընթաց հատուածին մէջ ըրած ծանօթութիւններնիս թե-

Յիշողութիւն :

րեւս աւելի որոշ կը հասկըցուին հետեւեալ բացատրութիւնով : Պիագրի կը պատմէ թէ ինք մէկ եկեղեցական մը կը ճանչնայ եղբր, որ մէկ կաթուածի մը հանդիպելով, ան հիւանդութենէն առջի չորս տարուան բոլոր անցած գացած բաները մոռցեր է : Թէպէտ չորս տարիէն առաջ պատահածները կը յիշէ եղբր : Ըստ յիշեալ միջոցին մէջ տպուած լրագիրները, իրեն բոլորովին նոր ըլլալով, ախորժելով կը կարգայ եւ կը զուարճանայ եղբր : Բայց կամաց կամաց աս անձը ան չորս տարուան մոռցածները սկսեր է նորէն միտք բերել . եւ ատենէ մը ետեւ ուրիշ մարդոց պէս ամէն բան կը յիշէ եղբր : Հիմայ աս դիպուածիս մէջ կ'երևնայ թէ առաջ զուգորդութեան սկզբունքներուն զորութիւնը հիւանդութենէն բոլորովին տկարացեր է, առանց ուրիշ օգնութեան մը նորէն կենդանանալուն յոյս մը չ'մնալով : Ըստ օգնութիւնն ալ՝ անտարակոյս՝ խօսակցութիւնը, զգայարանաց հանդիպած այլ եւ այլ արտաքին առարկաներուն նորոգ իմացումը, եւ կարգալը եղբր է : Ընդի կարգացած հին լրագիրները կարգալով, եւ մասնաւորաբար խօսակցութիւնով ատեն ատեն այնպիսի գաղափարներու հանդիպեր է . որոնք չէ թէ միայն առանձին մտքին մէջ եղած են առաջուց, հապա ուրիշ գաղափարներու հետ ալ միացած ըլլալով՝ որոշ եւ բազմադիմի խորհուրդներու կարգեր ձեւացուցեր են : Առ ասանկով ամբողջ խորհուրդոց յառաջատուութիւններ միտքն են եկեր : Դարձեալ՝ ուրիշ կարգ կարգ խորհուրդներ յիշեր է, Բողոքական յիշելու-Բեան կերպերը բանեցընելով . այսինքն՝ ենթադրութիւններ ընելով եւ զանոնք արդէն միտքն եկած գաղափարներուն հետ բաղդատելով, կամ ան գաղափարներուն վրայ մնալով եւ զանոնք մտքին մէջ պարտցընելով, եւ ասանկով ուրիշ խորհուրդ կարգեր երեւան հանելով : Ըստ կերպով եղած սեպելու ենք՝ առանց տարակուսելու՝ աս յիշուած անձին իր կորսնցուցած հմտութիւնը նորէն միտք բերելը :

Ըստ զիտողութիւնները հիմայ յիշած օրինակէս իզատ՝ ծերոց վրայ երբեմն տեսած մէկ հանգամանքովնիս ալ կը բացատրուի : Հարցուր ծերոց իրենց պատանեկութեանը դէպքերէն, եւ երբեմն ամենեւին անկարող կ'ըլլան պատասխան մը տալու : Բայց երբոր այն օրերու մէկ երեւելի անձքը կը յիշես, կամ անանկ մէկ բարեկամին մտքերնին կը ձգես, որուն հետ որ զուգորդեալ շատ խորհուրդներ ունին, անատեն յիշողութիւննին կը կենդանանայ, եւ կը սկսին շատ պատմութիւններ ընել այն լուռ եղած բաներուն վրայ :

## § 163 . Լաւ յիշողութեան նշանները :

Յիշողականին ծառայած գլխաւոր վախճանը մեզ անցեալ փորձառութիւններնէս ընդունած հմտութիւննիս գալիքին կարեացը համար պահելու կարողացընելն է : Ուստի լաւ յիշողութեան երեւելի նշանները աս երկուքն են, գաղափարները պինդ պահել, եւ պէտք եղած ատենը զանոնք դիւրաւ յառաջ բերել :

Երկրորդ գաղափարները պահելու զօրութեան վրայ : — Ոմանց մտքին վրայ եղած տպաւորութիւնները մնայուն կ'ըլլան : Քարի վրայ եղած փորուածքներու եւ մարմարին յիշատակարաններու փորագրութիւններուն կը նմանին, որ սովորական աւերիչ պատճառներու վրայ կը խրոխտան, եւ մինչեւ անգամ ժամանակին ծախիչ ձեռքերուն ներգործութեանը կը դիմանան : Սակայն անանկ յիշողութիւններ ալ կան, որոնք թէպէտ առջի բերանը այնպէս կ'երեւնան թէ ամուր կը բռնեն, սակայն աս հաստատուն պահելու զօրութենէն զուրկ են : Երկրորդ վրայ եղած տպաւորութիւնները աւազի վրայ փորուած դրերու կը նմանին, որ հոս վը փշածին պէս կը գոցուին, կամ ձիւնի վրայ շինուած նշանագիրներու նման են, որ արեւին ճառագայթները տեսածնուն պէս կը հալին կ'անհետան թանն : Եւ տեսակ յիշողութեան առաջինէն որքան նուաաս ըլլալը յայտնի բան է. սյնպէս որ վրան խօսք եւելցընել չուզեր : Պահելու զօրութիւնը տկարացած յիշողութեան արժէքը իհարկէ շատ քիչ կ'ըլլայ :

Երկրորդ՝ յիշուած բանը արտայայտելու դիւրութեան կամ յաջողակութեան վրայ : — Ոմանք, որոնց մտքերին բան պահելու զօրութիւնը անկատար չ'սեպուիր, յիշածներնին վստահութեամբ եւ քաջութեամբ արտայայտելու մասին տկարութիւն կը ցուցընեն : Կամ հմտութիւններուն կարգաւորութեանը մէջ սխալմունք մը ըրած են. կամ մտաւոր կրթութիւններուն մէջ թերութիւն մը ունին. եւ կամ որ եւ իցէ պատճառով մը՝ շատ անգամ տարակուսութիւն կը ցուցընեն, եւ ծանր ու անտրոշ կերպով մը կը յիշեն յիշելիքներնին : Եւ սիկայ մեծ գործնական թերութիւն մըն է, որուն դէմն առնել չէ թէ միայն պէտք է, այլ շատ կարելի ալ է :

Երրորդ է որ փիլիսոփայական մտքի տէր մարդոց վրայ ուրիշներուն վրայ եղածին չափ յիշելութեան յաջողակութիւն չենք կրնար ակնկալել բանաւորապէս, այս պատճառաւ, որ մասնաւոր իրողութիւններու շատ քիչ կամ ամենեւին մտադրութիւն չեն

## Յիշողութիւն :

ընե՛ր, միայն թէ երբոր ընդհանուր սկզբունքներ հանելու համար պէտք ըլլայ նէ : Իսկ այս աս ալ ճշմարիտ է, թէ երբոր աս յաջողակութեան թերութիւնը այն աստիճան ըլլայ՝ որ շատ շփոթութիւն տայ նէ, մէկ մեծ մտաւոր պահասութիւն մը պէտք է սեպել : Իւր ասոր համար մէկ մարդու մը իր ունեցած հմտութեանը վրայ յաջողակ իշխողութիւն բանեցընելը մտաւոր գերազանցութիւն մը կը սեպուի :

## § 163 . Յիշողութիւնը կրթելու կերպեր կամ կանոններ :

Մը տեսութեամբ որ յիշողութեան վրայ նայինք նէ, խիստ մեծ օգտակարութիւն ունեցող կարողութիւն մը կը գտնենք : Ըստ գերազանց կարողութիւնը սրելու կամ սրութիւնը պահելու համար, եւ մասնաւորաբար նախընթաց հատուածին մէջ խօսուած յիշելութեան հաստատութիւնը եւ յաջողակութիւնը կրթելու կամ պահելու համար հետեւեալ կանոնները արժան են մտադրութեան :

ա. Իբրեւ մէ շարահար հարեւանցի կամ հասնական կամ կիսար հարուստիւնով : — Սարմաւոր անգործութեան որչափ հակամիտ է նէ մարդս, մտաւորին ալ անկէ պակաս չէ : Ուսանողք ուսման աշխատութիւններէն փախելու համար շատ հակամիտ են աւապարելով եւ անհոգութեամբ անցնելու սորված բաներնուն վրայէն : Ըստիկայ փնաս կու տայ յիշողութեան : Տուկալտ Սդիււարդ կ'ըսէ, «Թէ առանց խորհրդածութեան շատ եւ զանազան բաներ կարդալու ունակութեանէն աւելի փնասակար բան չ'կայ, չէ թէ միայն մտքին հնարագիտութեան զօրութիւններուն, այլ բոլոր կարողութիւններուն ընդհանրապէս» : Միշտ քեզի կանոն ըրէ սորված բանդ կատարելապէս հասկընալու : Ընոնք որ մտքերնին կը դնեն ձեռքերնին անցած բանը, ինչ որ ըլլայ նէ, ադէկ քննելու, անոր ծուծը քաղելու, շուտով ախորժակ մը կ'իմանան ճշմարտութեան, առաջուց մութ երեւցող ճշմարտութիւնները յստակ կը տեսնուին եւ ընտանի կ'ըլան իրենց : Ըստ տեսած յստակութիւննին եւ զգացած ախորժակնին աւելի կը զօրացընէ իրենց մտադրութիւնը, եւ ասոր ալ բնական հետեւութիւնն ան է որ սորված ճշմարտութիւններնին մեծ զօրութիւնով կը հաստատուի յիշողութիւններնուն մէջ :

բ. Սրտացած հարուստիւննին, որչափ որ հնարաւոր է նէ, ընդհանուր «կլէանց վերածելու» է : Ս'եր հմտութիւնը ընդհանուր ըսկըզանց վերածելով՝ կարգաւորած կ'ըլլանք. եւ թերեւս մեր ըստացած տեղեկութիւնները կարգաւորելուն ամենապար ճամբան աս



## ՅԻՆՊՈՒԹԻՆՆԵՐ

ընդհանուր սկզբանց վերածելն է: Թէ որ օրէնսդիր մը կամ վաճառական մը բոլոր իր թղթերը խառնիխուռն իրարու վրայ դիզելու ըլլայ նէ, բան մը նայիլ պէտք եղած ատենը դժուար կ'ըլլայ իրեն՝ փնտռածը գտնել: Թէ որ գրագէտ մարդ մը բոլոր հանդիպած ճշմարտութիւնները եւ գաղափարները՝ առանց կարգի՝ յիշատակարանին մէջ գրելու ըլլայ նէ, շատ դժուար կ'ըլլայ իրեն զանոնք օգտակար կերպով գործածելը: Կարգաւորութիւն չընող յիշողութիւնն ալ ասանկ է: Այլ որ մէկ ընդհանուր սկզբունք մը կը բռնէ, թէ քաղաքական ըլլայ, թէ գրական, թէ փիլիսոփայական, եւ անոր բացատրութեանը վերաբերեալ իրական ճշմարտութիւններ կը հաւաքէ, ձեռք ձգածները՝ որչափ շատ ալ ըլլան նէ՝ առանց դժուարութեան կրնայ յիշել. որ ընդհանուրական, առանց այսպիսի ընդհանուր սկզբանց, շատ ձանձրալի բան կ'ըլլար զանոնք միտք բերելը:

Գ. Սորթլըն — Բանկոյ Բնակարանի Կոմիտէ, Էս լուր այն՝ անկողնայ սորթլըն — համար յետոյ յգլել իրցած օգնութիւնները գործածէ: — Աս կանոնը մէկ երկու գիտութիւն օրինակ բերելով աղէկ կը բացատրուի: Աշխարհագրութիւն պիտի սորվի նէ մէկը, կարելի եղածին չափ պէտք է որ լաւ երկրագունտներու եւ աշխարհացոյցներու վրայ սորվի: Առկա աշխարհագրութեան երկիրներու վերաբերական տարածութիւնն ու դիրքը եւ աշխարհի հազարու մէկ ընական եւ քաղաքական բաժանմունքները սորվելու համար, խիստ սաստիկ աշխատեցնելու է մէկ մարդ մը իր յիշողութիւնը, եւ ան ալ ընդհանրապէս պարտապ տեղը: Աշխարհացոյցներով՝ երկրագունտներով՝ եւսյլն՝ աշխարհագրութիւն սորվելը կրկու օգուտ ունի: (1.) Աս կերպով երկիրներու ձեւը՝ վերաբերական դիրքը եւ տարածութիւնը գաղափար՝ կամ մասնաւանդ պլանութեան վերըմբանմունք կ'ըլլան. որ աս տեսակ վերըմբանմունք (§ 60) շատ կենդանի են, եւ միւսներէն աւելի դիւրաւ կը յիշուին:

(2.) Աս կերպով յիշողութիւննիս օգնական կ'ունենայ իրեն տեղւոյ մերձաւորութեան օրէնքը, (§ 135) որ ամենէն մեծ օգնութիւններուն մէկն է: Թէ որ անգամ մը, առջեւնիս աշխարհացոյց կամ երկրագունտ ըլլալով, կզգի մը՝ ծոցի մը՝ Ավիտանոսի մը՝ կիսագունտի մը ընդհանուր տեսանելի երեւոյթը սորվինք նէ, ալ անոնց ստորակարգեալ բաժանմունքներն ու մասերը միտք պահելը շատ կը դիւրանայ: Արդոր անգամ մը մասնաւոր երկրի մը ընդհանուր երեւոյթը կամ շրջագիծը քննելք ու մտքերնիս հաստատուի, ալ անոր քովի երկիրներուն դիրքը դիւրաւ մտքերնէս չելլեր:

Աս կանոնիս բացատրութիւն մըն ալ պատմութիւն կարգալը

կրնայ ըլլալ : Պատմական գրուածոց մէջ այնքան բազմութիւն եղելութիւններ կան, որ անոնց ամէնը միտք պահելու աշխատիլը պարսպ բան է. եւ թէ որ մէկ մարդ մը միտք պահէ ալ նէ, օգուանին շատ քիչ է : Ասոր համար՝ երկրի մը պատմութիւնը կարգալու որ ըլլաս նէ, մտադրութիւնդ հաստատէ անոր երկու իրեք ամենէն հետաքրքրական ժամանակներուն վրայ. անոնք մասնաւոր ուշադրութեան առարկայ ըրէ քեզի. աղէկ սորվէ ան դարերուն ոգին, այն ատեններու երեւելի անձանց արկածները եւ վարքը. մէկ խօսքով՝ այն ժամանակները չէ թէ միայն իրեւ տարեգիր՝ այլ իրրեւ փիլիսոփայ խնամով միտք առ եւ քեզի ընտանի ըրէ : Ասակ որ սորվիս նէ պատմութեան մը մէկ երկու երեւելի թուականը, ալ անոնք շատ դժուար կ'ըլլայ որ մտքէդ ելին. անոնք իրրեւ սահմանագրուիներ կ'ըլլան յիշողութեանդ մէջ. եւ ան երկրին պատմութեանը բոլոր միւս դէպքերը, թէ առաջ եւ թէ ետքը պատահած, անոնց նայելով կամ վերաբերելով կրկարգաւորին մտքիդ մէջ բնականապէս : Պատմութեան նշանաւոր ժամանակները հաստատուն կը մնան յիշողութեանդ մէջ, մեծ հետաքրքրութեամբ մտադրութիւն ընելուդ համար, եւ երեւելի չեղող դէպքերէն ալ հարկաւոր եղածին չափ բան կը մնայ միտքդ՝ մերձաւորութեան օրէնքով, եւ ան ալ առանց մեծ աշխատութեան : — Ասկէ ի զատ պատմական դժադրութիւնները ու ազդաբանական ցուցակներն ալ օգնութիւն մը կրնան ըլլալ, աշխարհագրութեան մէջ գործածուած աշխարհացոյցներուն եւ երկրագունաներուն նման :

Յիշողութիւնը զօրացնելու համար աս կանոնը աւելի վերացեալ գիտութեանց ալ կը պատշաճի : — «Վե՛ն գիտութեան մէջ, կ'ըսէ Սդիւարդ, (Տարերք, գլ. 7, § 3,) անոր մասերը մասնաւոր կերպով իրարու հետ միացընող գաղափարները զուգորդիչ սկզբունքով մը կապուած են իրարու հետ. օրինակի աղագաւ՝ մէկ գիտութեան մը մէջ՝ պատճառի եւ արդիւնքի վերաբերութեան վրայ հաստատուած զուգորդութիւններով, ուրիշ գիտութեան մը մէջ՝ չափաբերական ճշմարտութեանց հարկաւոր վերաբերութիւններուն վրայ հաստատուած զուգորդութիւններով » :

7. Սկստի որհասած Բաներուն Խորքը Բնութեան Խորքի ըլլալը է : — Ինտութեան մէջ ամէն բան իրեն յատուկ տեղը կա-

պակցութիւններն ու վերաբերութիւնները ունի : Մէկ բան մը չ'կայ որ ուրիշ բաներէն բոլորովին կարուած զատուածի պէս ըլլայ . այլ ինչ որ կայ եւ կ'ըլլայ նէ, բնականապէս իրեն յատուկ զիրքն ունի եւ կ'առնէ աս ընդարձակ արարչութեան եւ բազմազիմի զիպուածոց մէջ : Ըստ Համար է աս կանոնը, թէ մեր մտաւոր հմտութիւնը՝ անոր առարկայ եղող իրական բաները ինչ կարգ ունին նէ, կարելի եղածին չափ նոյն կարգը ունենալու է : Սաքին օրէնքներուն գործողութիւնները արտաքին բնութեան օրէնքներուն հետ համաձայն կ'երթան : Ըս կանոնին օգտակարութիւնը կրնայինք բացատրել զրիթէ որ եւ իցէ վարպետ շինուած բանասիրական՝ կամ պատմական՝ կամ բանաստեղծական՝ եւայլն՝ հատուածով . սակայն թերեւս աս կանոնը ամենեւին չ'նկատելով շարագրուած բանի մը օրինակ տանք նէ, աւելի աղէկ կը հասկըցուի անոր զօրութիւնը :

Մարդուն մէկը անգամ մը կը պարծեննար կ'որ Ֆուդ կ'ատակերգակին առջեւը իր բան սերտելու կարողութեանը վրայ, ու Ֆուդ ըսաւ աս յիշողութիւնը սուր մարդուն՝ թէ ես քեզի քանի մը տող բան շարագրեմ արձակ, տեսնենք կրնաս տողերուն չափ վայրկեանի մէջ միտքդ պահել : Լաճեցաւ մարդը աս առաջարկութեանը . բաստ դրին մէջերնին, ու Ֆուդ հետեւեալ խօսքը շարագրեց : «Լյսպէս կինը պարտէզը գնաց կազամբի տերեւ մը փրցընելու ու խնձորի կարկանդակ մը չի նսլու, եւ նոյն ժամուն մեծ արջ մը կուգայ փողոցն ի վեր, եւ գլուխը խանութէն ներս կը խօթէ : Ինչ, սապոն չ'կայ : Լյսպէս մարդը մեռաւ, եւ կինը մեծ անխոհմտութեամբ սփռիչը առաւ . եւ հոն ներկայ էին Պ, Սննիանոնոս, Բասսի-նիսիանոս, Սլովարամէնէս եւ մեծն Օօմլոմայիս, գլուխը պրդտիկ կլորիկ կոծակովը . ասոնց ամենը ինկան կրնաս նէ բռնէ խազալու, ինչուան որ կօշիկներնուն գարշապարէն դուրս սկսեց վառօթ վազել” : — Պատմութիւնը կ'ըսէ թէ Ֆուդ վաստակեցաւ բաստը : Եւ շատ յայտնի է որ եթէ սյսպիսի բնութեան եւ զիպուածոց կարգէն բոլորովին դուրս խօսուածք մը երկնկեկ ըլլայ նէ, մէկ մարդու մը յիշողութիւնը որչափ ալ սուր ըլլայ, չ'կրնար միտք պահել :

Ե. Յիշողութիւնը կը խախտուի իմ բանեցումելով կը զօրանայ : Մտքերնիս երբոր պարսպ ու անգործ թողունք նէ, կենդանութիւննին կը կորսնցընեն . բայց թէ որ միշտ բանեցընենք, եւ առջեւնին դրուած բանը կատարելէն ետեւ, ուրիշ նոր պահանջմունքներ ընելու ըլլանք նէ, իրենց կարողութիւններուն յառաջադիմութիւնն ալ սահման մը չունենար : Ըս բանը կ'երեւնայ թէ մեր բնութեանը մէկ ընդհանուր եւ վերջին օրէնքն

Յիշողութիւն :

է : Ըմեն սկզբնական կարողութիւններնուս եւ ամէն կապակցեալ մտաւոր ներգործութիւններնուս հաւասարապէս կ'իշխէ : Ըտոր՝ մարմինին եւ մաքին վրայ ունեցած ներգործութիւնները այլ եւ այլ տեղեր առիթ գտանք ցուցնելու : Տեսանք որ իմացման կարողութիւնը զօրութիւն եւ կենդանութիւն կը ստանայ գործածութեամբ : Ըմանապէս վերաբնուումն ու զուգորդութիւնն ալ , եւ աս նոյն մեծ սկզբունքին ներգործութիւնը նորէն անգամ պիտի տեսնենք , երբոր տրամաբանութեան՝ երեւակայութեան վրայ՝ եւ այլն՝ կը խօսինք : Ըւ որովհետեւ յիշողութեան ալ կը վերաբերի աս օրէնքը , վասն որոյ աս մասին ալ անոր օգտակար արդիւնքները կրնանք վայելել , ան արդիւնքները յառաջ բերող կրկնութիւնը կամ գործածութիւնը մեզի ունակութիւն ընելով :

§ 166 . Յիշողութեան հետ միացած նկատողութիւն ճշմարտութեան :

Յիշողութեան մէկ օգնութիւնն ալ , որն որ հազիւ երբէք՝ եւստուգիւ իր արժան եղածէն շատ քիչ դիտողութեան ենթակայ եղած է , երկիւղածութեամբ եւ ճշգրտութեամբ ճշմարտութիւնը նկատելն է . — Ըետազօտութիւնով կը գտնենք որ անոնք որ երկիւղած եւ զգոյշ են աս բանիս մեջ , ուրիշներէն աւելի համարձակութեամբ եւ ճշգրտութեամբ կը յիշեն միտք պահած բաներնին : Ըս բնաւորութեան տէր եղող մէկ մարդ մը կրնայ ըլլալ որ այնչափ շաք բան չ'կրնայ միտք պահել . վասն զի ան իր իրաւասիրութեանը արմատն եղող երկիւղածութիւնը բնական դրդմամբ կը շարժէ զինքը բոլոր անպիտան բաները դուրս ձգել յիշողութենէն : Ասկայն ան բաներն որ՝ անտարակոյս բարի պատճառներով՝ միտքը կը պահէ , անոնք ուրիշներէն շատ աւելի ճշգրտութեամբ կը յիշէ , եւ ան բաներուն մեջ իր յիշողութեանը վրայ շատ վստահ կրնանք ըլլալ , թէ որ բնական կամ ընդաբոյս հանգամանք մը չունի բանը ուրիշ կերպի փոխող : Տօնան իմաստասէրին համաբը ըստած է թէ անանկ սուր յիշողութիւն ունենալուն մէկ մեծ պատճառը ճշմարտախօսութեան վրայ ունեցած մեծ նկատողութիւնը եւ նըշանակած բաներուն ճիշդ ըլլալուն վրայ ունեցած երկիւղածութիւնն էր : Ըւ աս ծանօթութիւնը ուղիղ փիլիսոփայութեան վրայ հիմնեալ է : Այն զի թէ որ մէկ մարդ մը ճշմարտախօսութեան մեջ այնպէս զգոյշ եւ երկիւղած ըլլայ , որ՝ իր բարոյական բնութեանը պահանջմունքէն՝ չ'կարենայ աղօտ եւ անբարոյց կերպով գիտցած բանը ուրիշին պատմել կամ նշանակել

## Տեւողութիւն Յիշողութեան :

նէ, անշուշտ բնականապէս անանկ մեծ մտադրութիւն կ'ընէ իր հետազոտութեանը աւարկաներուն, որ ետքէն շատ որոշ միտքը կը մնան յարատեւութեամբ :

## ԳՂՈՒԽ . Ը

## ՏԵՒՈՂՈՒԹԻՒՆ ՅԻՇՈՂՈՒԹԵԱՆ

§ 167 . Կրօնքուած կարծուած խորհրդոց եւ զգացմանց նորէն միտք գալը :

ՅԻՇՈՂՈՒԹԵԱՆ նիւթը դեռ ձեռքէ չ'ձգած, ուրիշ տեսութեամբ մըն ալ՝ որն որ արդարեւ մտադրութեան անարժան բան չէ՝ դիտողութիւն ընենք անոր վրայ, որ է իր անցեալ փորձառութիւնները վեր բերելու զօրութեանը յարակայութեանը կամ տեւողութեանը վրայ : Կ'ըսուի թէ Պաքոն փիլիսոփան ասանկ կարծիք մը ունէր, թէ ամենեւին մէկ խորհուրդ մը չ'կորսուիր . թէ իրօք միշտ կը մնան . եւ թէ հոգին անանկ օրէնքներ ունի իր մէջը, որոնցմով՝ եթէ կատարելապէս ի գործ դրուելու ըլլան նէ՝ բոլոր իր անցեալ գոյութեանը մէջ փորձառու եղած գործքերը եւ զգացումները կարող է որոշ յիշել :

Կ'ս կարծիքը, որն որ ուրիշ երեւելի մատենագիրներ ալ ըրած են, յայտնի է թէ քննելու արժան բան մըն է, մանաւանդ գործնական արդիւնքներ եւ կարեւոր բարոյական ու կրօնական հետեւութիւններ ունենալը խորհելով : Թերեւս հարցնէ մէկը, թէ հնարաւոր բան է, իրերուն բնութիւնը կը ներէ՞ որ մեր բոլոր կենացը մէջ անցած գացած ան բիրաւոր պզտիկ գործքերն ու զգացումները կարող ըլլանք միտք բերելու : Կ'ս հարցումն ընողը թող նախ եւ առաջ աս խորհի, թէ յիշողութիւնը հաստատուն օրէնքներ ունի, որ անոնց ներգործութեամբը իր անցեալ հանգամանքները երեւան կը բերէ . եւ թէ աս օրէնքներուն մէկուն երբէք բոլորովին բնաջինջ ըլլալուն ուղղակի եւ հաւանելի վկայութիւն չ'կայ : Կ'ընդունինք թէ աս օրէնքներուն ներգործու-

ղութիւնը ժամանակ անցնելով տկարացած կ'երեւնայ, եւ իրօք կը տկարանայ ալ . սակայն իրենց ներգործութեանը յաճախութիւնը՝ կենդանութիւնը եւ զօրութիւնը որչափ որ տկարանայ ալ նէ, նոյն իսկ օրէնքները չեն կորսուիր, այլ տակաւին կը մնան : Ըյսպէս կը տեսնենք աս նիւթը առաջին դիտողութեամբ, եւ կը համարձակինք աս ալ եւելցընել, թէ աս տեսութեան ճշմարտութեանը վկայ է սովորական փորձառութիւննիս :

Ըմէն մարդ գիտէ որ երբեմն տարիներով անցած գացած մոռցուած չնչին խորհուրդներ յանկարծ մտքերնիս կու գան : ( )-րիւր, ամիսներ եւ տարիներ կ'անցնին կ'երթան, նոր տեսարաններու եւ վիճակներու մէջ կը մտնենք . եւ այն առջի օրերնուս եւ տարիներնուս մէջ բոլոր զգացած՝ տեսած եւ փորձառու եղած բաներնիս անթափանցելի խաւարով պատած կ'երեւնան աչքերնուս : Բայց յանկարծ մէկ անակնկալ դիպուած մը, ջրովէ ժի մը՝ անտառի մը՝ տան մը երեւոյթը, մասնաւոր հաճելի կամ տխուր օր մը, լոկ դէմքի փոփոխութիւն մը, խօսք մը, գրեթէ ինչ եւ իցէ բան որ կրնայ մէկ մարդ մը երեւակայել, կ'արթնցընէ հոգինիս եւ նոր կենդանի խորհուրդներ կը ծագեցընէ մտքերնուս մէջ : Ըսանկ պարագաներու մէջ կը զարմանանք թէ ինչ նոր նոր խորհուրդներ կը բացուին աչքերնուս առջին, ինչ նոր նոր բաներ մտքերնիս կու գան, ինտոր կորսուած յոյսեր եւ մոռցուած տրամութիւններ յարութիւն կ'առնեն, ինչ տեսարաններ եւ ընկերութիւններ աչքերնուս առջին կու գան, որոնք մտքերնէս ելած գացած բոլորովին մոռցուած կը թուէին մեզի :

Թերեւս աս հետազոտութիւննիս մէկ տկար օրինակ մըն է մեր անցեալ խորհուրդներուն վրայ ունենալու ան կատարեալ յիշողութիւններնուս, որն որ Պաքոն եւ ուրիշ իմաստուններ հնարաւոր սեպեր են : Բայց ըրած հաստատութիւննիս՝ թէ որ շիտակ է նէ՝ անտարակոյս Պաքոնի կարծիքը հաստատող պարագաներուն մէկն է, թէպէտ եւ այնչափ զօրաւոր չենք կրնար սեպել :

§ 168 . Քիզիգական կազմուածքնուս վրայ եղած ազդեցութիւններէ մտուոր ներգործութիւններնուս կենդանանալը :

Մտքերնուս իր անցեալ փորձառութիւնները յիշելուն կարողութիւնը մէկ մասով մը մեր Քիզիգական կազմուածքին վիճակէն կախեալ է : Ըղէկ գիտենք որ մտքին ու մարմինին մէջ կապակցութիւն մը կայ, եւ թէ միտքը մարմինին, մարմինն ալ

Տեղագրութիւն Յիշողութեան :

մտքին վրայ փոփոխակի ազդեցութիւն ունին : Ըստ ալ անտարակոյս ճշմարիտ է թէ մարմինին վրայ եղած ազդեցութեանը սաստկութեանը կամ տկարութեանը համեմատ մտքին ներգործութիւնն ալ կ'աճի կամ կը նուազի : Արեւմտեան յիշողութեան օրէնքներուն ներգործութիւնն ալ չը կրնար մտքին միւս կարողութիւններուն նման կենդանանալ արտաքին ազդեցութիւններէ : Թէ որ մարմինին վրայ ազդեցութիւն մը եղած ատենը մտքին ալ ազդեցութիւն կ'ըլլայ, ուրեմն չը կրնար ըլլալ որ ան ընդհանուր ազդեցութիւնը երբեմն մասնաւոր կերպով մարդուս յիշողութիւնը կենդանացընէ, եւ շատնցուրնէ անցած գացած խորհուրդները միտք բերել տայ :

Օճանազան իրողութիւններ կան աս խնդրոցս վերաբերութիւն ունեցող, որոնք կը ցուցընեն թէ բոլորովին անհիմն բան չէ աս կարծիքը : — ( ) րինակի աղապար՝ խեղդուելու վրայ եղող ու ազատող մարդոց պատմութիւններէն կ'իմանանք թէ այն միջոցին մտքերնուն գործողութիւնները մասնաւոր կերպով կենդանացը են : Այնքերնուն աս զարմանալի գործունէութեանը մէջ բոլոր անցուցած կեանքերնին՝ իր հազարաւոր շնչին պատահմունքներովը դրեթէ մէկ ակնթարթի մէջ աչքերնուն առջևէն անցեր է, եւ հայելիի մէջ տեսածի պէս եկեր են : Հատ ժամանակ առաջ տեսած տեսարաններնին եւ դանուած վիճակներնին, տարիներով չ'տեսած եւ գուցէ մեռած գացած ճանչուորներնին իրականի կենդանի եւ որոշ կերպարանքովը իմացական տեսութիւններնուն ասպարէզին մէջ խուռն բաղմութեամբ իրարու ետեւէ դիզուեր են :

Թէ որ այսպիսի պարագաներու մէջ եղած ընդհանուր փորձառութիւնը աս է նէ, ուրեմն ասէ խել մը կարեւոր դիտողութիւններ կը հաստատուին : Ըսով անտարակուսելի կ'ըլլայ աս ճշմարտութիւնը, թէ մտքին ու մարմինին մէջ կապակցութիւն մը կայ. թէ մտքին ու մարմինին մէջ կապակցութիւնն ընդհանուր է. եւ թէ աս կենդանանալը՝ գէթ ըստ մասին՝ մարմինին վրայ եղած ներգործութեան մը կրնանք տալ : Խեղդուելու պարագաներու մէջ իմացականին ներգործութեանցը այնպէս կենդանանալուն մերձաւոր պատճառը ( ինչպէս որ ուրիշ ասոր նման դիպուածներու մէջ ալ ասանկ կ'ըլլայ ) ըղեղին ազդեցութիւն ըլլալն է. այսինքն՝ շնչառութիւնը կախ մնալով՝ եւ հետեւաբար արիւնը թորէն համարձակ անցնիլ չ'կրնալով՝ ըղեղին մէջ ժողվուելէն է : Արեւմտայ թէ որ ատեն որ անսովոր քանակութեամբ արիւն ըղեղին մէջ ժողվուելու ըլլայ նէ, միշտ անսովոր մտաւոր փոփոխութիւններ յառաջ կու գան :

§ 169 . Մտաւոր ներգործութեանց կենդանանալուն եւ անցեալ խոր-  
հրդոց վերագանալուն վրայ ուրիշ օրինակներ :

Ստորին ներգործութիւններուն կենդանանալուն եւ բոլոր մեր անցեալ խորհուրդներուն եւ զգացումներուն նորէն մտքերնիս գալը հնարաւոր ըլլալուն վարդապետութիւնը, որ առաջարկեցինք, կամ պիտի ընդունինք՝ կամ պիտի մերժենք՝ իրական ճշմարտութեանց նայելով : Ընելու խնդիրնիս միայն աս է աս բանիս մէջ, ինտոր որ ուրիշ բաներու մէջ ալ, թէ ի՞նչ է ճշմարտը : Եւ ինչպէս պիտի որոշենք աս խնդիրը :

Թէ որ արդէն յիշած եղելութիւններնիս բաւական չեն աս բանիս վրայ գաղափար մը ձեւացընելու նէ, ուրիշ դիպումներ ալ կան աս նիւթիս վերաբերեալ, որոնք նաեւ բանը աւելի բացայայտ կերպով կը ցուցընեն : Սաստիկ հիւանդութիւններ, որ երբեմն մարգուս միտքը բոլորովին կը տկարացընեն, երբեմն չափազանց կենդանութիւն մը կու տան անոր գործողութիւններուն : Ստերս հրատարակուած գրքի մը հետեւեալ քաղուածը պատշաճ կու գայ աս տեղին . ( թէպէտ եւ ասոր մէջ յիշուած օրինակին մէջ պատահած մտաւոր զրգուցման պատճառը նշանակուած չէ : ) — « Ընցեալ զգացումներնիս, մինչեւ անգամ մեր մանկութեան ամենէն կանուխ հասակին փորձառու եղածներնիս երբէք զուգորդութեան օրինաց իշխողութենէն դուրս չեն ելլեր, եւ յարաժամ ենթակայ են նորէն յիշուելու, ինչուան կեանքերնուս վերջին տարիները, թէպէտ եւ անանկ տկար փիճակի մը մէջ կրնան մնալ մտքերնուս մէջ, որ մեր գիտակցութեանը առարկայ չըլլան :

« Արեւմտեան յայտնի է թէ մտաւոր զրգուցման պատճառով մէկ բան մը կարգ մը յետին աստիճան տկար անկերպարան զգացմանց անանկ ներգործութիւն մը կրնայ ընել, որ մտքին շատ առնէ ի վեր գիտակից չեղած գաղափարները գիտակցութեան կենդանի առարկաներ ըլլան : Ինտոր որ Վաղդիացի կնկան մը համար կը պատմուի թէ այսպիսի ազդեցութեան մը հանդիպել է նէ, Բրոնիքանց լեզուն, որ տղայութենէն հետէ մոռցած է եզեր, յանկարծ միտքն է ինկեր<sup>1</sup> :

<sup>1</sup> Hibbert's Philosophy of Apparitions. Part IV. Chap. V.



Տեղութիւն Յիշողութեան :

§ 170 . Սաստիկ Վերմին յիշողութեան վրայ ունեցած ներգործութիւնը :

Նոս Լմերիկացի Ղանապարհորդի մը պատահած անսովոր մտաւոր հանգամանքներուն պատմութիւնն ալ կրնանք եւելցընել ի հաստատութիւն քննած նիւթերնուս : Ըս անձը Խլինուա Վահանգը կը ճանապարհորդէ կոր եզեր, եւ՝ ինչպէս որ ուրիշ կլիմաներէ հոն դացող օտարականներուն ընդհանրապէս կ'ըլլայ՝ մողձային ջերմով հիւանդացեր է : «Որովհետեւ քիչերը կ'ապրին, կ'ըսէ, աս հիւանդութեան մէջ իրենց պատահածները պատմելու համար, եւ որովհետեւ ինզիրք ըրեր էիք ինձի, ու ես ալ մանրամասն պատմել խոտացեր էի, աս հիւանդութեան մէկ քանի պարագաները պիտի ստորագրեմ :

«Մտկէ առաջ ջերմ մը եկեր էր վրաս, սակայն անատենը ամէն օր կ'ելլէի կը հագուէի կը նստէի : Բայց աս հիւանդութիւնը երբոր վրաս եկանէ, առաջին օրը զիս գետինը զարկաւ, ու բոլորովին տկարացայ ինկայ . առաջին յարձակմանը հասկըցայ որ իմ փորձառու եղած ջերմերուս չ'նմանիր կոր ասիկայ : Արրորդ օրը սկսեց խելագարութիւն գալ վրաս, եւ ասիկայ նոց մտքի վիճակ մըն էր ինձի : Ըսանկ ընդհանրապէս ասողը գիտակցութեան եւ կարգէ դուրս գրգռեալ զգայունութեան հետ միացած մանկական խելագարութիւնէ աւելի տագնապ տուող մտաւոր տկարութիւն չ'կրնար ըլլալ կը թուի ինձի : Ըն ատեններն որ բարեկամներս չէի ճանչնար, ետքէն իմացայ որ՝ յիշողութիւնս սովորականէն աւելի սուր է՝ ճիշտ է եղեր, եւ գիտցած այլ է՝ այլ լեզուներէս ոմբող հարստներէ հարարեալ ճշտութեամբ կը գրոցեմ եղեր : Ըսանց Բատ մը իրընդունելու կամ սխալ գիշտութեամբ կոր մը Բանաստեղծութիւնն ու թերան լսելը է՝ որն որ ըստնորոշեալ երէտ չ'ըրցայ անանկ գրոցել նորէն՝, 1 եւ այլն :

§ 171 . Քօշերիճէն հաստատութիւն եւ բացատրութիւն աս գիտողութիւններուս :

Յիշողութեան տեղութեանը կամ մտնջնաւորութեանը եւ մեր բոլոր խորհուրդներուն եւ զգացումներուն վերջապէս :

Flint's Recollections of the Vally of Mississippi. Ictier XIV.

## Տիւղուծիւն Յիշգուծեան

մտքերնիս գալուն վարդապետութեանը կողմէն կարծիք մը ունի Քօլէրիճ իմաստասէրը իր Biographia Literaria անուն գրքին մէջ, Օւոգորուծեան օրէնքներուն վրայ խօսած է՝ Յօդուածին մէջ: Ըստ կարծիքը հաստատելու համար, յիշեալ մատենագիրը եղելութիւն մը կը պատմէ, որ Վերմանիա աշտարակի մը մէջ իմացեր է 1798ին, որ է այս:

Վերմանիայ կաթուղիկէ գիւղաքաղաքի մը մէջ քսանուչորս քսանուհինգ տարեկան կին մը, որ կարգաւ գրել ամենեւին չ'գիտեր եղեր, ջղային ջերմէ հիւանդ պառկեր է, եւ աս արկարուծեանը ատենը շարունակ էջունարէն՝ Լատիներէն եւ Լըրայեցերէն կը խօսի եղեր շատ համարձակ եւ յստակ ասացուածքով: Ըմէն մարդ զարմացեր է աս եղած բանին վրայ, եւ հոն գտնուող մէկ քանի ուսումնական անձինք ասոր ըզած խօսքերէն շատ բաներ զգեր նայեր են որ հասկընալի՝ բանաւոր խօսքեր են, միայն թէ մէկմէկու հետ շատ քիչ կամ ամենեւին կապակցութիւն չունին: Լըրայեցերէնէն միայն մէկ կտոր մը բան որոշեր են որ Վստուածաշունչէն է, եւ մնացածները Ուարբիական ըսուած Լըրայեցերէն են: Ըստ կնկանը տղէտ՝ պարզամիտ եւ աննկնդ մէկը ըլլալը ամենուն յայտնի ըլլալով, մէկը չէ կրցեր կասկածիլ՝ թէ խաբուծիւն է ըրածը. եւ երկար ատեն չեն կրցեր ալ բանը մէկ կերպով մը մեկնել, թէպէտ եւ բացատրութիւն մը տալու համար իրեն սպասաւորութիւն ըրած այլ եւ այլ ընտանիքներէն շատ հարցափորձներ ըրեր են:

Սակայն պատանի բժիշկի մը եռանդն ու փիլիսոփայական ոգին վերջապէս բոլոր պէտք եղած ծանօթութիւնը գտեր է: Ըստ կնիւր աղքատ տունէ մըն է եղեր, եւ պղտիկօց՝ ինը տարեկան հասակին՝ Բրօթէտզանդ երէց մը քովն է տներ ասիկայ իբրեւ հօգեզուակ: Ըստ մարդը շատ գիտնական մէկն է եղեր. եւ չէ թէ միայն քաջ Լըրայայգէտ, այլ նաեւ Ուարբիական գրուածքներու՝ էջունարէնի եւ Լատին շարապետաց գործերուն՝ եւ այլն՝ հմուտ է եղեր: Կնկանը իր հիւանդութեանը ցնորքներուն մէջ ըսած ան խօսքերը, որոնք որ գրեր են նէ, յիշեալ բժիշկը քննութեամբ գտեր է որ առաջուց աս երէցին քովն եղող մէկ քանի նոյն լեզուէ գրոց մէջ գտնուած խօսքերուն նման են ճիշդ: Բայց այսչափով կատարելապէս չէր մեկնուեր բանը: Աւստի աւելի յուզանդիբ ըլլալով՝ գրուներ է որ աս նահապետական Բրօթէտզանդը շատ սարիներ սովորութիւն ունի եղեր տանը մէկ երկայն ճամբուն մէջ, ուր որ կը բացուի եղեր խոհանոցին դուռը, վեր վար պտրտելու բարձր ձայնով իր սիրական զրքերը կարգաւով: Ըստ բանը խեղճ

ազէտ աղջկանք, որ քովն էր առեր, մտադրութիւնը կը քաշէ, օւ ապշած մտիկ կ'ընէ կարգացած խօսքերուն. ասանկով շատ խօսքեր միտքը կը մնան. եւ թէպէտ եւ իր առողջութեանը ժամանակը հաւանականաբար շատ ատենէ ի վեր է եղեր որ ամենեւին մէկ բան մը չ'կրնար յիշել եղեր ան կարգացում խօսքերէն, սակայն վերջապէս վերոյիշեալ պարագային մէջ՝ երբոր ֆիզիգական կազմուածքը եւ մանաւանդ ըղեղը անանկ աղջեցութիւն ընդունել է ջերմէն նէ, անատեն որոշ միտքն են ինկեր:

Աս օրինակէն, որուն նման ուրիշներ ալ կան կ'ըսէ Քօլէրիճ, ինքը հետեւեալ առաջարկութիւնները կամ մականութիւնները կը հանէ: — (1.) Ս'եր խորհուրդները՝ ի սկզբան ինչ կարգով որ գոյացան մտքերնուս մէջ նէ՝ նոյն կարգով անորոշ ժամանակ մը կրնան մնալ, եւ ծածկուած կամ անզգալի վիճակի մէջ: (2.) Արովհետեւ ըղեղին ջերմաստութիւնը (եւ ի հարկէ մարմինին վրայ եղած ուրիշ ինչ եւ իցէ մասնաւոր աղջեցութիւն) չ'կրնար ինքնիրեն խորհուրդ ստեղծել, ոչ ալ խորհուրդի վրայ բան եւեցընել, այլ միայն գրգռութիւն կամ կենդանութիւն մը կրնայ տալ իմացող սկզբանը, զւստի հաւանական է թէ բոլոր խորհուրդներնիս ինքնին անկորուստ են: — (3.) Իմացականին զօրութիւնը խիստ սպառկացընելու համար, ինքը կը կարծէ թէ, միայն անոր պահարանը եղող մարմինին տրամադրութիւնը ուրիշ կերպի մը փոխուելու է: — (4.) Ըստնցմէ կը հետեւցընէ՝ թէ ան վերջին դատաստանին գիրքը, որն որ Սուրբ Գիրքը մեզի կը սորվեցընէ թէ ամէն մարդու առջեւ պիտի բացուի, ուրիշ բան չէ, այլ միայն հոգւոյն երկրաւոր մարմինին տեղը երկնաւոր մարմին հագնիլն է. եւ թէ աս փոփոխութիւնը միայն բաւական կրնայ ըլլալ որ բոլոր իր անցեալ փորձառութիւնները միտքը բերէ: Ինքը կը սեպէ թէ կենդանի հոգիի բնութեանը շատ պատշաճ կու գայ աս ճշմարտութիւնը, թէ աւելի գիւրին է երկինքին ու երկրին անցնիլը, քան թէ մէկ գործքի մը կամ խորհուրդի մը մտքին գործողութիւններուն մեծ եւ երկայն շղթայէն փրկելու գուրս իյնալը: — Աս եղբակացութիւններն որ հոս գրիւքնէ, թէպէտ եւ բուն հեղինակին լեզուովը չ'են, սակայն ճիշդ իր խօսքերէն հասկըցուած առաջարկութիւններն են:

§ 172 . Աս գլխուն սկզբունքներուն վերաբերութիւնը դաստիարակութեան հետ :

Յառաջ բերած գիտողութիւններնէս Յիշողութեան մշտնջենաւորութիւնը եւ բոլոր մտաւոր հանգամանքներնուս նորէն մտքերնիս գալուն հնարաւորութիւնը հաւանելի կերպով կը հետեւի թէ չէ, ասիկայ ի հարկէ ամէն մարդու առանձին դասմանը որոշելու բանն է : Սակայն թէ որ կնթաղրենք թէ կը հետեւի, անատեն ամէն մարդու միտք կու գայ թէ սյսինչ այնինչ գործնական վերաբերութիւնները ունի ապ նիւթը : — Աս հետազոտած սկզբունքնիս, ուրիշ բաներէ ի զատ, վերաբերութիւն ունի նաեւ տղայոց դաստիարակութեանը, եւ մէկ նոր պատճառ մը կը դնէ առջեւնիս այտ դաստիարակութեան գործադրութեանը մէջ յետին ստաիճան արժուէն ըլլալու : Գաւառիարակութեան բաւը, մարդուս մտքին վերաբերելով, շատ ընդարձակ նշանակութիւն ունի, եւ չէ թէ միայն ուղղակի եւ արտաքին կանտնաւոր կըթուծիւնները, այլ ծնողաց տուած օրինակն ու խրատը եւ ընկերներու աղոթեցութիւնն ալ իր մէջը կը բովանդակէ : Արդ՝ թէ որ քննած վարդապետութիւննիս շտակ էնէ, կը հետեւի թէ ծնողք մը կամ ուրիշ անձ մը տրղու մը առջեւը մէկ չար կամ վնասակար խօսք մը ընէ նէ, ան մէկ խօսքը, թէպէտ եւ նոյն միջոցին մոռցուի կամ առանց նրկատողութեան անցնի, սակայն կրնայ ըլլալ որ քսան՝ երեսուն՝ կամ քառասուն տարի ետքը յանկարծ պայծառ միտքը գայ : Մագմութիւ սուսջուց չտեսնուած պարագաներ եւ մինչեւ անգամ ամենաոչինչ դիպուածներ կրնայ ըլլալ որ միտքը ձգեն զանիկայ, եւ շատ ժամանակ անցնելէն, հողը ան խօսքը զրուցող բերանը ծածկելէն ետեւ ալ խիստ վնասակար ներգործութիւն մը ընէ անիկայ իրեն : Արլլայ որ անզգամութեան շարժէ զինքը, կ'ըլլայ որ ինքը անիկայ իրեն մէկ ծայր մը բռնէ ընելու մէկ բարոյական կամ կրօնական շարագործութիւնը արգարացընելու, կ'ըլլայ որ անով հասարակութեան մէկ օրէնքը կ'որոշելու գրգռուի, եւ հազարաւոր կերպերով մեղաց՝ անզգամութեան՝ եւ թշուառութեան առաջնորդուի : Աւստի շատ մեծ հոգ տանելու է տղոց առջեւը անզգոյշ՝ սուտ կամ չար բաներ չխօսելու, աս պարագայ անկկալութիւնով՝ թէ զըրցուելնին ու կորսուելնին մէկ կ'ըլլայ, ու մէյմ'ալ անոնց միտքը չ'գար :

Աս նոյն պատճառով մեծ հոգ տանելու եւ շատ աշխատելու

## Տեւոյնութիւն Յիշողութեան :

է մտքերնուն մէջ ճշմարտութիւն խօթելու, եւ ուղիղ բարոյական ու կրօնական սկզբունքներ սրտերնուն մէջ տնկելու: Յարմար կերպով տպաւորէ տղուն մտքին վրայ Աստուծոյ գոյութիւնը եւ իր հայրական իշխանութիւնը: սորվեցուր անոր փրկչին մաքուր եւ բարեսէր բարուցը նշանաւոր մասերը, եւ Աւետարանին երեւելի ճշմարտութիւններն ու յոյսերը. եւ աստուած կրթութիւններդ իր յիշելութեանցը մեծ շղթային էական օղակները կ'ըլլան, որոնք ոչ պարագաներու փոփոխութիւն՝ ոչ ժամանակի անցք՝ եւ ոչ ուրիշ զօրութիւն մը կարող է բոլորովին մտքերնէն ջնջել: Անոնք իրենց յատուկ տեղը կը մնան. եւ թէպէտ եւ կրնայ ըլլալ որ անտես ըլլան, սակայն անհնար է որ անգոյ ըլլան: Արեւի է թէ իրենց յատուկ ազդեցութիւնը ընելէն դադրին, եւ տարիներով չ'յիշուին. զբաղմունքի եւ կենաց հոգերուն ծանրութիւնը զանոնք իրենց տեսանելի գիրքէն վար առնէ, եւ ժամանակ մը աչքի չ'երեւնան: Սակայն անոնց վերականգնելու ժամանակը յարաժամ մօտ է, թէպէտ եւ մարդը իր սահմանաւոր հմտութիւնովը կարող չէ անոնց վերագանջուան նշանները գուշակել: Ա'ըլլայ որ մեղք գործելու փորձութեան ժամուն՝ մեռելներէ ելած ձայներու եւ կերպարանքներու պէս միտքը գան, եւ իրենց սկզբնական կենդանութենէն եւ զօրութենէն աւելի կենդանութեամբ եւ զօրութեամբ. կ'ըլլայ որ դժբաղդութեան ատեն, բանտի մէջ եւ աքտորի մէջ ան իր մտքին վրայ եղած վաղեմի տպաւորութիւնները տես գան իրեն, եւ այնպիսի մտիթարութիւններով սփոփեցընեն իր հոգին, որոնց նմանը ուրիշ ինչ եւ իցէ բանէ չէր կրնար քաղել. անոնք ծնողական յանդիմանութեան եւ սիրոյ հրեշտակային ձայնովը կու գան իրեն, եւ իր սրտին մաքրութիւնը կը պահպանեն, եւ զինքը սրտաբեկութենէ կը պահեն:

§ 173. Ըս վարդապետութեան վերջին դատաստանին եւ գալու կեանքին հետ ունեցած կապակցութիւնը:

Մէկ գործնական ծանօթութիւն մըն ալ կը մնայ մեզի տալու աս նիւթիս վրայ: — Բոլոր մեր անցեալ փորձառութիւններուն վերջապէս մտքերնիս գալուն վարդապետութեանը վրայ ըրած դիտողութիւններնիս Սուրբ գրոց համաձայն կու գայ: Անկասկած ապահովութեամբ կրնանք հաստատել թէ Սրբազան մատեաններուն մէջ՝ ուղիղ մեկնութեամբ՝ հաստատուած մէկ մտաւոր սկզբունք մը չ'կայ որ մարդուս փորձառութեանը հակառակ գայ: Վալու դատաստանին վարդապետութիւնն որ կը

Հաստատէ Սուրբ Գիրքը, մարդու իմացականին եւ բարոյականին վերաբերեալ դիտողութիւններ կը բովանդակէ իր մէջը : Եւ յլ տեղեր աս վարդապետութիւնը կը սորվեցընէ թէ Վրիստոս վերջին օրը պիտի գատէ աշխարհս, եւ թէ ամէն մէկը իր մարմնովը ըրած գործքերուն համեմատ պիտի դատուի, թէ բարի ըլլան եւ թէ չար : Բայց ասոր դէմ երբեմն ստանկ առարկութիւն մը եղած է, թէ ատ դատաստանին վաճառոյն արդարութիւնը ամենեւին չենք կրնար զգալ՝ առանց մեր բոլոր գործքերուն վրայ հմտութիւն ունենալու, որոնց համեմատ որ պիտի դատուինք, եւ ատ հմտութիւնը ունենալն ալ անհնարին է : Լաւանական է թէ աս առաջարկութիւնը աչքին առջեւը ունենալով զրուցած է Վօլէրիճ աս կարծիքը, թէ հոգւոյն երկրաւոր մարմնին տեղը երկնաւոր մարմն հագնելը հերիք է՝ որ կարող ըլլայ բոլոր իր անցեալ փորձառութիւնները միտք բերելու :

Սուրբ Գրոց վերջին դատաստանի վարդապետութեանը դէմ եղած առարկութեան վրայ բնականապէս աս ծանօթութիւնը յառաջ կու գայ . թէ ասոր առարկութեան կերպարանք առնելը դիտաւորապէս մարդու մտքին կազմութեանը վրայ անկատար տեսութիւն ունենալէն է : Եւ անկ սեպելէն է, թէ մեր անցեալ կենացը վրայ գիտակցութիւն չենք կրնար ունենալ . վասն զի բոլորովին մեր մտքէն կ'ելլէ . եւ անդառնալի կերպով կը մոռնանք : Սակայն ճշմարիտն աս կ'երեւնայ ըլլալ, թէ անպատճառէ կերպով բան մոռնալ չըլլար . մեր անցեալ խորհուրդներուն նորէն մըտքերնիս դալուն հաւանականութիւնը կրնայ շատ նուաղիլ, բայց բոլորովին չսպառիր : Գիշելութեան զօրութիւնը կը թմրի, սակայն չ'մեռնիր : Մարդու մտքին վրայ ունեցած հմտութիւնովնիս բոլորովին ազատ ենք աս ենթագրութիւնը ընելու, թէ մտքերնիս դատաստանին օրը տարբեր արթնութիւն մը պիտի ունենայ, եւ բոլոր խորհուրդներնիս ու զգացումներնիս իրենց պահուած խորշերէն դուրս պիտի հանէ, եւ մեր ամբողջ կենացը կատարեալ պատկերը աչքերնուս առջին յստակ պիտի ներկայացընէ :

ՎՂՈՒԽ Թ

ՏՐԱՄԱՐԱՆՈՒԹՅԱՆ

§ 174 . Տրամարանութիւնը գաղափարներու եւ հմտութեան աղբիւր է :

ՅԻՇՈՂՈՒԹՅԱՆ վրայ պէտք եղածին չափ քննութիւն ը-  
րինք, եւ հիմայ Տրամարանութիւնը պէտք է որ ձեռք առ-  
նենք, որ շատ հեռաքրքրական եւ երեւելի նիւթ մըն է հե-  
տազատութեան՝ թէ ինքնին, եւ թէ ներքին հմտութեան գըլ-  
խաւոր եւ արգասաւոր մէկ աղբիւրը ըլլալուն համար : Ըս կարո-  
ղութեան ներգործութիւններուն վրայ ունեցած գիտութիւններ-  
նուս համար, ինչպէս որ նախընթաց գլուխներնուս մէկուն մէջ  
տեսնէք, գիտակցութեան պարտաւոր ենք, որ անով բոլոր մեր  
մտաւոր գործողութիւններուն վրայ ուղղակի հմտութիւն կ'ըս-  
տանանք : Բայց պէտք է գիտնալ թէ տրամարանութիւնը ոչ  
գիտակցութիւն է, ոչ ալ գիտակցութեան մէջ բովանդակեալ :  
Գիտակցութիւնը միայն տրամարանութեան ներգործութիւն-  
ներուն հմուտ կ'ընէ մեզ, տրամարանութիւնն ալ իր սահմա-  
նին մէջ եւ իր օրէնքներովը գործելով՝ ուրիշ բաներու հըմ-  
տութիւնը կու տայ մեզի : Ընչպիսի իմացմանց եւ հմտութեան  
աղբիւր մըն է աս, որոնք հաւանականաբար անհնարին է որ  
ուրիշ կերպով մը ձեռք ձգենք :

Ըսանց Սկզբնական թիւադրութեան չենք գիտեր ինչպէս  
հմտութիւն կրնայինք ունենալ մեր գոյութեանը վրայ. առանց  
Գիտակցութեան մեր մտքին գործողութիւններուն վրայ հըմ-  
տութիւն չէինք կրնար ունենալ, առանց Սերաբերական թիւ-  
լագրութեան, որ ան ալ որոշ աղբիւր մըն է հմտութեան,  
Տրամարանութիւն չէր ըլլար. եւ առանց Տրամարանութեան  
օգնութեանը ան բաներուն մէկմէկու հետ ունեցած վերաբե-  
րութիւններուն վրայ հմտութիւն չէինք կրնար ունենալ, որոնք  
առանց միջանկեալ առաջարկութեանց չենք կրնար իրարու հետ  
բաղդատութեան բերել : Ուստի տրամարանութիւնը նոր եւ  
որոշ խորհրդոց աղբիւր մը սեպելու ենք, որն որ՝ հոս հի-  
մայ յիշուած հմտութեան աղբիւրներուն հետ բաղդատելով՝

Կերբին իմացականութեան աւելի հեռաւոր կողմերը կ'իյնայ. եւ միւսներուն հետ համեմատութեամբ որչափ ուշ որ իր ներգործութիւնները երեւան կ'ելեն նէ, նոյն համեմատութեամբ իր արդիւնքներն ալ աւելի են: Ինչպէս որ Տիճէրանտո իր մէկ գործին մէջ գատողութեան կամ Սերաբերական թեւադրութեան վրայ իբրեւ որոշ հմտութեան աղբիւր խօսելէն ետեւ՝ կ'ըսէ, թէ «Տրամաբանութեան կարողութիւնն ալ գաղափարներով կը զարդարէ մեզ, վասն զի շատ անանկ յօգաւորեալ եւ հեռաւոր վերաբերութիւններ կան, որ մէկ գատողութեան գործողութիւնով չենք կրնար գտնել, եւ ուստի կարգ մը գատողութիւններ կամ տրամաբանութեան գործողութիւն հարկաւոր է զանոնք երեւան բերելու համար»: — Սակայն ասկէ պէտք է հասկընալ, թէ տրամաբանութեան գործը, իբրեւ որոշ աղբիւր հմտութեան, միայն քանի մը պարզ ըմբռնումներ յառաջ բերել է, ինչպէս՝ առաջարկուած պարագայի մը մէջ եղած լոկ համաձայնութեան կամ անհամաձայնութեան վերաբերութիւնը գտնել. ասկէ շատ բարձր է անոր պաշտօնը. անիկայ ի լոյս կը բերէ բնութեան երեւելի սկզբունքները եւ ծածկուած ճշմարտութիւնները. անով յուզանդիր միտքը բաղմամբիւ արգասաւոր եւ ընդարձակ տեսութիւններ կը ստանայ, անանկ տեսութիւններ, որոնք ուրիշ կերպով չէր կրնար ձեռք ձգել, եւ բոլոր մարդիկ՝ բնութիւնը եւ դիպուածները անով նոր կերպարանք մը կ'առնեն վրանին:

§ 175. Տրամաբանութեան եւ առաջարկութեան սահմանը:

Տրամաբանութիւնը ասանկ կը սահմանուի. Ստաւոր գործողութիւն մը, որով երկու կամ աւելի նախընթաց առաջարկութիւններէ հետեւութիւն կը հանենք: — Ուստի ամէն տրամաբանութեան գործողութիւն մէկ ամբողջ մը կը սեպուի. եւ իբրեւ ամբողջ՝ զատ զատ եւ ստորակարգեալ մասերէ բաղկացած է: Ըստ արրական մասերը սովորաբար կը կոչուին Եռաբարկութիւններ. եւ տրամաբանութեան վրայ ընելու բնութիւնիս հասկըցուելու համար հարկաւոր է որ առաջ ասոնք համառօտիւ բացատրենք:

Եռաբարկութիւնը այսպէս սահմանուած է. Ստորեւնուս մէկ իմացմանը կամ ներգործութեանը կամ կիրքին բանաւոր ցուցմունքը: — Ըստ այսմ՝ առաջարկութիւն որ կ'ըսենք նէ, սովորաբար կը հասկընանք մտաւոր իմացում մը կամ իմացմանց բաղադրութիւն մը բանիւ արտօյայտեալ կամ առաջի եղեալ՝ առաջարկեալ: Իսկ թէպէտեւ բառին սովորական նշանակու-



## Տրամաբանութիւն :

Թիւեր աւել, սակայն առանց խօսքով արտայայտելու՝ բոլորովին մտքորոշուած մէջ ալ առաջարկութիւն կրնայ ըլլալ : Ի՞նչ մտաւոր առաջարկութիւնք կ'անուանէ մտքին սին հանգամանքները, ուր որ երկու կամ աւելի գաղափարներ առաջարկութեան ձեւով կապուած են իրարու հետ եւ դեռ բանիւ արտայայտեալ չեն :

Քաջարկութեան մը մասունքը ասոնք են . (1.) Լինխոյ, որուն վրայ բան մը կը հաստատուի՝ կ'ուրացուի՝ կը հրամայուի՝ կամ կը պահանջուի : (2.) Ստիպել կամ Ստիպուիլ, որ է ենթակային վրայ հաստատուած՝ ուրացուած՝ հրամայուած՝ կամ պահանջուած բանք : (3.) Շարժում, որով միւս մասերը իրարու հետ կը կապուին : — Ես երկու առաջարկութեանց մէջ

Սամիսն զօրաւոր էր .

Սարգս սխալական է .

Ստիպել եւ Ստիպուիլ բառերը առաջարկութեան ենթականներն են . զօրաւոր եւ սխալական մակդիրներն են . էր եւ է շարժականքը : Եւ առաջարկութիւնք իրեքի կը բաժնուին . (1.) Պարզ, որոնց ենթական ու մակդիրը մէկ մէկ բառ կ'ըլլան, ինչպէս աւ .

Խարեհրութիւնը գովելի է :

(2.) Բարդութեւ, որոնց ենթական ու մակդիրը խել մը բառերէ կազմուած կ'ըլլան, ինչպէս աւ .

Կրօնքի մէջ հաւատարիմ՝ եղողը մտքի խաղաղութիւն կրկայելէ :

(3.) Լրջանխոսոր, որոնց շարժական մէկ կամ աւելի բառերով եղանակաւորեալ է, ու ենթակային եւ մակդիրին մէջ եղած համաձայնութեան կամ անհամաձայնութեան կերպը կամ հասարակութիւնը կը ցուցնէ, ինչպէս .

Ուսումնական անձինք իրան օգտակար ըլլալ .

Պատերազմը էրբէն արդար իրան ըլլալ :

Ընկէն տրամաբանութեան գործողութեան մէջ առաջարկութիւնք հարկաւոր են : Արձանին իրարմէ անջատ եւ մէկմէկու հետ անյօդաւոր քարերու, որոնք իրարու հետ յօդելով շէնք կը շինուի . կատարեալ ըմբացած տրամաբանութեան գործողութիւնը շէնքն է, իսկ առաջարկութիւնները շէնքին նիւթերն են :

§ 176 : Ընկէն տրամաբանութեան մէջ մտքին կադարած գործողութիւնը :

Տրամաբանութեան ստորակարգեալ մասերը կամ տարերքը Թողունք, ու գանք անոր ընդհանուր բնութիւնը քննելու . կամ տրամաբանել բառով իմացուած յօդուածոյ մտաւոր հանգամանքին ինչ բան ըլլալը դիտելու : Պէտք է յիշել որ տրամաբան

Ցրամբանութիւն :

նութեան վրայ տուած սահմաննիս աս էր, թէ մտաւոր գործողութիւն մըն է, որով երկու կամ աւելի նախընթաց առաջարկութիւններէ հետեւութիւն կը հանենք: Ասան որոյ ամէն արբամբանական գործողութեան մէջ առաջարկութիւններ գրանուելու է, եւ աս առաջարկութիւնները երբէք երկուքէն պակաս չեն կրնար ըլլալ, եւ շատ անգամ երկուքէն շատ աւելի կ'ըլլան: Եւ առաջարկութիւնները շատ անգամ շատ կանոնաւոր կերպով իրարու ետեւէ կու գան. ասոր համար մենք ալ շատ հեղ անոնց աս կանոնաւոր կարգով մէկմէկու յաջորդելը բոլորովին մեր կամքովը եղած կը սեպենք: Սակայն սխալ կարծիք է սոյս: Իշու է որ երբոր խել մը գաղափարներ կամ առաջարկութիւններ աչքերնուս առջին ըլլաննէ, մտքերնիս կամական ներգործութեամբ մէկ առաջարկութիւնը կամ գաղափարը միւսէն աւելի կ'ընտրէ, անիկայ աւելի յարմար դատելով: Սակայն ան ընտրութիւն եղած գաղափարները կամ առաջարկութիւնները, որաւանց անոնց աչքերնուս առջին ըլլալուն՝ ընտրութիւն չէինք կրնար ընել, ուղղակի կամեցուժով յառաջ չեն գտր, եւ ուստի բացարձակ կամեցողութեամբ ծագած չեն. հապա զուգորդութեան օրէնքներովը եղած թելադրութիւններ են:

§ 177. Նախընթաց հատուածին վրայ բացատրութիւն:

Իբրեւ բացատրութիւն նախընթաց հատուածին մէջ ըսածնուս՝ ձեռնարկութիւն մը ենթադրենք՝ սովորական յանցանքները մահուամբ պատուհասելուն օրինաւորութեանը եւ վայելութեանը վրայ: Ա իծաբանողը նախ եւ առաջ ընդհանուր խօսքով կը թխտէ ընկերական միաբանութեանց թիթեւ յանցանքները մահուամբ պատժելուն իրաւունք ունենալը: Իսոյց դեռ իր մտքը դրած մասնաւոր յանցանքները քննութեան չ'ըրբած՝ մարդասպանութեան յանցանք գործողը մահապարտելուն իրաւունք ըլլալը յառաջ կը բերէ, կ'ընդունի թէ անձնական պաշտպանութեան սկզբունքը իրաւունք կու տայ ան բանին: Հետոյ գողութեան յանցանքը ձեռք կ'առնէ, եւ կը վիճի թէ իրաւունք չունին գողը ի մահ դատապարտելու, վասն զի բնութիւնը այսպիսի իրաւունք մը չ'տար մեզի, ինչու որ դեռ քաղաքական միաբանութիւն չ'կազմուած՝ ստացուածքի իրաւունքը քաղաքական եւ դատաստանական բան մը չէր ձանցցուեր: Ինկէ ետեւ քաղաքական ընկերութեան ինչ բան ըլլալը քննութեան տակ կը ձգէ, եւ կը վիճի թէ քաղաքական միաբանութիւն կազմուած ատենը մէկը չէր հասկընար թէ ան միաբանութիւնը գողը եւ նոյն աստիճան յանցաւորները ի մահ դատապարտելու պէս տարօրինակ զօրու-

Թեան մը տէր է, վասն զի ան միաբանութիւնը կազմող անդամները այնպիսի գորութիւն չունէին երբէք, եւ այն :

Ահա ասիկայ խել մը առաջարկութիւններէ շինուած ձեռնարկութիւն մըն է, որ դեռ շատ յագաջ կրնայ երթալ : Այլ աս ձեռնարկութեան մէջ, բոլոր ուրիշ ձեռնարկութեանց նման, ամէն առաջարկութիւն նախ եւ առաջ զուգորդութեան օրէնքներով թելադրուած է. ամենեւին բացարձակ կամեցողութիւնով յագաջ եկած չէ եւ չ'կրնար գալ : Աս վիճարանողը նախ խընդիրը ընդհանուր խօսքով կը նշանակէ, յետոյ մարդասպանութեան մասնաւոր յանցանքը քննութեան կը բերէ, անկէ ետեւ գողութիւնը մէջ կը բերէ, գողութեան յանցանքն ալ նախ բընական օրինաց վերաբերելով կը քննէ, եւ ետքը քաղաքական օրինաց վերաբերելով : — Ամայ աս առաջարկութեանց աս յաջորդութիւնը է ապէս ճիշդ ան նոյն կերպովը կ'ըլլայ, ինչպէս որ ամբօխի մը մէջ աչքիդ երեւցած օտարականի մը գէմքէն հին մէկ բարեկամիդ գէմքը միտքդ կու գայ, անկէ ալ իր բնական գեղը միտքդ կ'իյնայ, գեղն ալ մօտը գտնուած հին աւերակ մը կը յիշեցնէ, աւերակն ալ պատերազմողներ եւ օւրիշ առններ եղած պատերազմներ կը թելադրէ : — Իբրաւ է թէ նոյն ժամանակը ուրիշ առաջարկութիւններ կրնային գալ վիճարանողին միտքը եւ ինքը անոնց որը յարմարագոյնն է նէ կրնար ընտրութեամբ զատել, բայց այսչափ է աս բանիս մէջ ուղղակի կերպով բանեցընելու կամական զօրութիւնը, այսինքն թելադրեալ առաջարկութեանց վրայ ընտրութիւն ընել :

§ 178 . Առաջարկութեանց վրայ եղած ընտրութեան հիմնական պատճառները :

Խել մը առաջարկութիւններ կը դիզուին տրամաբանութիւն ընողին աչքին առջեւը զուգորդութեան սկզբունքով . եւ ինքը անոնցմէ ուզածը կ'ընտրէ : Արդ՝ բանաւոր հարցմունք մըն է աս, թէ ինչէն է որ առաջարկութեանց մէջ անանկ յարմարութիւն մը կամ համաձայնութիւն մը կ'ըլլայ, որ յաջորդաբար տրամաբանութեան գործողութեանը մէջ կը մտնեն, ու տրամաբանութիւն մը կը կազմեն : Այլ աս հարցմունքը աս կը նշանակէ տիրապէս, թէ ինչ պարագաներու մէջ կ'ըլլայ աս ընտրութիւնը, կամ թէ ինչ են աս ընտրութեան հիմնական սկզբունքները :

Աս հարցմանը պատասխան կը ծանուցանենք թէ ամէն ձեռնարկութեան մէջ մէկ ընդհանուր նիւթ մը, մէկ որոշ կէտ մը

Տրամաբանութիւն :

կայ ապացուցանելու կամ քննութեան ենթակայ եղած : Աս ընդհանուր նիւթին վրայ, որ պիտի ապացուցուի, մէկ եւեջք եւ յարատեւ բաղձանք մը կ'ունենանք : Աս բաղձանքը չէ թէ միայն մեծ օգնութիւն մը կ'ըլլայ զուգորդութեան օրէնքներուն կենդանանալուն եւ զօրանալուն, այլ նաեւ խիստ մեծ անուղղակի ազդեցութեամբ մը յատուկ բնութիւն մը կու տայ ան օրէնքներով թելագործելու խորհուրդներուն : Ասոր համար սասանկ պարագաներու մէջ մտքերնիս եկած առաջարկութեանց մեծ մասը քիչ կամ շատ վերաբերութիւն կ'ունենայ ընդհանուր նիւթին հետ : Աս առաջարկութիւնները շուտով կը բաղդատենք մտքովիս, այն սովորաբար ապացուցութիւն չէր ըսուած ընդհանուր նիւթին հետ, որուն վրայ որ հաստատուած են մեք բաղձողական զգացումները : Անքերնիս աս բաղդատութեան մէջ իր վերաբերութիւն զգալու կարողութիւնովը, որն որ արդէն տեսանք թէ ունի, կ'որոշէ իր առջեւը եկող առաջարկութեանց ընդհանուր նիւթին հետ ունեցած յարմարութիւնը կամ անյարմարութիւնը, համաձայնութիւնը կամ անհամաձայնութիւնը : Աս համաձայնութեան կամ անհամաձայնութեան իմացումը, որն որ մտքին իր բնութենէն ունեցած վերաբերական զգացումներուն մէկն է, մէկ վերջին իրողութիւն մըն է մեր իմացական կազմուածքին մէջ : Աս բանիս վրայ օգտակար կերպով ըսելիքնիս միայն եղած բանը եւ անոր պատահած պարագաները նշանակել է : — Ան առաջարկութիւնները, որոնք որ մտքերնիս՝ Վարդէն ընդունած աս կարողութիւնովը՝ կ'որոշէ թէ միաբան կամ յարմար են ապացուցանելու կէտին, կը թողու նաեւ որ իբրեւ առաջարկութեան մասունքը տրամաբանութեան մէջ մտնեն : Այս աս կերպով կարգ մը առաջարկութիւններ կը ծագին, ամէնքն ալ մէկ վերջին նրպատակի մը նայող, կանոնաւոր եւ պատշաճ, որոնք ձեռնարկութեան աստիճանին այլ եւ այլ ոտքերը կ'ըլլան : — Աս բացատրութիւնը չէ թէ միայն նախընթաց հատուածին մէջ ենթագրուած ձեռնարկութեանը կը վերաբերի, որ բարոյական տրամաբանութեան օրինակ մըն է, այլ ամէն ինչ եւ իցէ կեքպ օրինակներու համար ալ կրնանք առնել : Այլ եւ այլ տեսակ տրամաբանութեանց մէկմէկու ունեցած տարբերութիւնները մտքին տրամաբանական գործողութենէն չէ այնչափ, որչափ որ իրարու հետ բաղդատուած նիւթերուն բնութենէն եւ հանգամանքներէն է :

§ 179 . Տրամաբանութիւն ընկելով կ'իմացուի թէ Հարկաւ նախընթաց կամ ենթադրեալ առաջարկութիւններ կան :

Տրամաբանութեան կարողութեանը վրայ ըրած բացատրութիւններն ու մէջ աւ ալ պէտք է որ ծանուցանենք, թէ տրամաբանութիւնը թէ սկզբնաւորութեանը եւ թէ շարունակութեանը մէջ՝ առ յատկութիւնը ունի որ Հարկաւորապէս ըստ մեծի մասին ենթադրութեան վրայ յառաջ կ'երթայ : Արովհետեւ ամէն հետեւութիւն հանելու գործողութեան մէջ առաջարկութեանց բարդատութիւն մը ըլլալ կը հասկցուի, վասն որոյ ի հարկէ մէկ քանի ենթադրեալ առաջարկութիւններ ըլլալուն, որ անոնցմով առ բարդատութիւնը յառաջ երթայ : Իբրեւ ծանօթ ենթադրուած բան մը ըլլալու է, որ անով անծանօթը երեւան բերուի : Ասոր համար ամէն տրամաբանութեան գործողութեան սկիզբը ենթադրեալ առաջարկութիւններ կը գանուի միշտ. (թէ ճշմարիտ ըլլան, թէ ձեռնարկութեան համար ճշմարիտ սեպուած ըլլան.) տրամաբանութեան շարունակութեանը մէջ ալ շատ անգամ տեղ տեղ ուրիշ առաջարկութիւններ կը մտնեն, մասնաւորաբար բարոյական տրամաբանութեան մէջ : Այց առ առաջարկութեանց բոլորն ալ միշտ յայտնի չեն ցուցուիր, այլ գորութեամբ կ'իմացուին : մասնաւորաբար ան առաջարկութիւնները, որոնք իմացականին տարրական ճանաչմունքները ցուցնելուն համար՝ 'Լոխնակն Ղշմարտութիւնը ըսուած են :

Ամէն տրամաբանական գործողութեան մէջ մէկ քայլը միւս նախընթաց քայլին վրայ հաստատելով յառաջ կ'երթանք. եւ երբոր այսպիսի գործողութեան մը ծայրէն սկսենք ետ դառնանք, վերջապէս անանկ ճշմարտութեանց կը հասնինք, որոնք ոչ կարօտութիւն եւ ոչ ընդունակութիւն ունին ապացուցութեան :

§ 180 . Նոյն նիւթին վրայ ուրիշ զետեղութիւններ :

Սակայն տրամաբանութիւնը ենթադրութիւններու վրայ յառաջ կ'երթայ որ կ'ըսենք նէ, ասկէ հարկաւորապէս չ'հետեւիր թէ անծանօթ կամ երկբայելի առաջարկութիւններով կ'ըլլայ : Ասած առաջարկութիւններէիս տրամաբանութեան կարողութեանը վերաբերելով ենթադրեալ են, եւ ոչ թէ իմացականին ու-

նեցած միւս հմտութեան աղբիւրներուն վերաբերելով : Այլըն-  
 նական լծակազրուութիւնով՝ Վիտապիցութիւնով՝ Օգայարանաց  
 ուղղակի աղբանկարով՝ կամ աներկբայելի Տիշելութեամբ եւ  
 կամ վկայութիւնով ինչ բաներ որ ծանօթ են նէ մեզի, որով-  
 հետեւ տրամաբանութեամբ եղածէն աւելի յստակ շն կրնար  
 ըլլալ եւ կը ստիպեն մեզ որ իրենց հաւատանք, ան բաները իս-  
 կոյն տրամաբանութեան գործողութիւններուն մէջ կը մտնեն,  
 եւ փնտուած հեռաւոր եւ անծանօթ ճշմարտութիւնները երեւ-  
 շան բերելու իրրեւ օգնութիւն կը գործածուին : Եւ այս ինչպէս  
 որ վերը ծանուցինք, այսպիսի առաջարկութեանց տրամաբանա-  
 կան գործողութեան մէջ գործածուիլը միշտ երեւութաբար եւ  
 յայտնապէս չըլլար, այլ ծածկաբար եւ զօրութեամբ : Արձն  
 մտքէն կ'անցնի յայտնի կերպով յիշել՝ ձեռնարկութիւն մը ը-  
 րած ատենը՝ իր գոյութեանը կամ անձնական նոյնութեանը ճշ-  
 մարտութիւնը, նմանապէս այս ճշմարտութիւնները, թէ ամէն  
 գործ մէկ պատճառ մը կ'ունենայ, կամ թէ բնութեան գործո-  
 ղութիւնները միօրինակ կ'ըլլան, եւ կամ թէ մասնաւոր նպատակ  
 մը յառաջ բերելու համար մէկ քանի միջոցներու մէկմէկու հետ  
 միանալը բանաւորութիւն կը ցուցնէ. որոնք մարդուս իմացա-  
 կանութեանը անանկ էական եւ ընտանի ճշմարտութիւններ են,  
 որ անոնց վրայ կը հաստատենք ամէն օր հանած հետեւու-  
 թիւններուն պիտո երեւելիները, եւ սակայն առանց խորհելու  
 թէ մեր դիտողութեանը մէջ այնպիսի ճշմարտութիւններ կան :

§ 181 . Տրամաբանութեան կարողութեանը կողմանէ զանազանութիւններ :

Տրամաբանութեան կարողութեանը կողմանէ շատ զանազա-  
 նութիւններ կան մարդոց մէջ . ինչպէս որ աս զանազանութիւնը  
 մտքին բոլոր միւս կարողութիւններուն եւ գործողութիւններուն  
 վրայ ալ կ'երեւնայ : Ոմանց տրամաբանութիւնը մինչեւ անգամ  
 կենցաղոյս սովորական հարկաւորութիւններուն պէտք եղածին  
 չափ զօրութիւն չունի, եւ ասանկները հազիւ կ'որոշուին խելա-  
 դարութեան սահմանէն. ընդհակառակն ոմանց տրամաբանու-  
 թիւնն ալ այնպէս զօրաւոր է, որ մարդկային բնութեան մէջ  
 շատ բարձր աստիճանի մը հասած են, եւ տարօրինակ ըմբռման եւ  
 նրբամտութեան տէր եղած են : Եւ երկու ծայրերուն, տարօրի-  
 նակ ընդարձակութեան եւ նշանաւոր տկարութեան մէջ տեղը  
 բազմաթիւ որոշ աստիճաններ կան, անանկ որ գրեթէ ամէն հը-  
 նարաւոր եղած զանազանութիւնը կը գտնուի :

Եւ տարբերութիւնները այլ եւ այլ պատճառներէ են : —

Տրամաբանութիւն :

(1.) Եթա եւ առաջ աս զանազանութիւնը տրամաբանողին ունեցած հմտութեան աստիճանէն կախեալ է: Մէկը չկրնար յարատեւութեամբ ձեռնարկութեան մէջ մեծ կարողութեան տէր սեպուիլ, առանց առաջուրնէ շատ հմտութիւն դանձած ըլլալու: Եւ աս ալ կրնանք եւելցնել թէ մէկը չկրնար ինչ եւ իցէ առաջօրկեալ նիւթի մը վրայ քաջ տրամաբանութիւն ընել, առանց մասնաւորաբար ան նիւթին վրայով պատրաստութիւն տեսնելու: Ըմէն տրամաբանութիւն գաղափարներու բազումութիւն կը պարունակէ, կամ՝ աւելի ազէկ է բսել՝ առաջարկութիւններու կամ՝ առաջարկութիւններով նշանակեալ իրական ճշմարտութիւններու բազումութիւն ունի իր մէջը: Ուստի թէ որ մէկ մարդ մը առաջարկեալ բանի մը վրայ հմտութիւն չունենայ նէ, թէ որ մտքին մէջ իրական ճշմարտութիւններ հաւաքած չըլլայ նէ՝ ան բանին վերաբերեալ, ի հարկէ անհնարին է որ կարող ըլլայ տրամաբանել. եւ թէ որ ունեցած հմտութիւնը նուազ ըլլայ նէ, բրած ձեռնարկութեանը հաւանելիութիւնը եւ զօրութիւնն ալ համեմատաբար քիչ կ'ըլլայ:

Իրաւ է որ շատ մարդիկ իրենց առաջարկուած նիւթերուն վրայ առանց ամենեւին պատրաստութիւն մը տեսնելու կը խօսին: Սակայն հանուելու հետեւութեան ուղղակի եւ հաւանելի վերաբերութիւն ունենալով իրարու ետեւէ կարգով յաջորդող պատշաճ առաջարկութիւններով չինուած բարեյարմար ձեռնարկութիւն մը յառաջ բերելուն եւ խել մը մէկմէկու անյարմար խօսքեր դուրս թափելուն մէջ շատ մեծ տարբերութիւն կայ: Ըմէն տրամաբանութեան մէջ մեր միտքը ձեռնարկութեան այլ եւ այլ որոշ մասերը իրարու ետեւէ կարգաւ յառաջ կը բերէ. եւ ասիկայ կ'ըլլայ զուգորդութեան օրէնքներով, ինչպէս որ արդէն առիթ ունեցանք զիտելու: Սակայն զուգորդութեան սկզբունքները ինչպէս գործեն, երբոր միտքը իր առջեւը բան մը կ'առնէ որոշմունք ընելու, առանց ուղղակի ան բանին հետ եղող պարագաներուն՝ կամ անոր ունեցած վերաբերութիւններուն եւ արդիւնքներուն վրայ հմտութիւն ունենալու:

(2.) Տրամաբանութեան զօրութիւնը՝ երկրորդապէս՝ կախում ունի մտադրութեան եւ յիշողութեան զօրութենէն: Ընանկ մարդիկ կան որ կ'երեւնայ թէ մտադրութիւններուն վրայ ամենեւին իշխողութիւն չունին: Ըմէն բան հարեւանցի կերպով մըտադրութիւնին կը քաշէ, ու մէկ բանի մը սաստիկ մտադրութիւն չեն ընելու: Չկայ ներսիգնին մէկ զօրաւոր զգացում մը զերենք կենդանացնող. եւ պէտք եղածին չափ եռանդոտ բաղձանքով մէկ բանի մը ձեռնամուխ չեն ըլլար, որն որ երկար եւ վերացեալ հետադատութիւն կը պահանջէ: Լեռուարար սասնկ-

ները մէկ կիսկատար յիշելութիւն մը կ'ունենան իրենց դիտողութեանը ենթակայ եղած հազարաւոր եղելութիւններուն եւ առաջարկութիւններուն վրայ : Այսպիսի յիշողութեան տէր եղողին բազմաութեան զօրութիւնն ալ ի հարկէ չիոթ եւ սկար կ'ըլլայ :

(3.) Տրամաբանութեան զօրութեանը զանազանութիւններուն երրորդ պատճառն ալ վերաբերութիւն զգալու կարողութեան տարբերութիւններն է : Արդէն ծանուցած ենք, (§ 128,) թէ ապացուցանելի բանի մը մօտ եւ որոշ վերաբերութիւն ունեցող շատ իրական ճշմարտութիւններ կրնանք հաւաքել, բայց ինչուան որ անոնց ունեցած վերաբերութիւնները չ'զգանք կամ չիմանանք նէ, շնք կրնար անանկ կերպով մը զանոնք իրարու հետ կապել, որ մէկ հետեւութիւն մը ելլէ : Կանք որ աս քաջածանօթ ճշմարտութիւն մըն է, թէպէտ ինչէն ըլլալը չ'զիտանք, թէ ոմանք ուրիշներէն աւելի դիւրութեամբ եւ յստակութեամբ կ'իմանան իրերու վերաբերութիւնները : Աստի՛ որովհետեւ ամէն տրամաբանութեան գործողութիւն վերաբերական իմացումներու յաջորդութիւն մըն է, վասն որոյ թէ որ վերաբերական թնլաղութեան զօրութիւնը տկար ըլլայ նէ, հարկաւորապէս տրամաբանութեան կարողութիւնն ալ անզօր կ'ըլլայ : Աւ հակադարձը՝ թէ որ մէկ մարդու մը վերաբերութեանց զգացողութիւնը շատ կենդանի եւ յստակ ըլլայ նէ, հարկաւորապէս տրամաբանութիւնն ալ շատ սուր կ'ըլլայ :

§ 187 . Տրամաբանութեան ունակութեանը վրայ :

Սակայն մէկ մարդու մը մտաւոր ձիրքերն ինչ որ ըլլան նէ տրամաբանութեան մասին, իր ատ կարողութեան զօրութիւնը շատ կախումն ունի Ունակութենէ : — Տաճախ գործածութեան կամ ունակութեան արդիւնքը շատ անգամ կր տեսնենք մեքենական արհեստներու հետեւող մարդոց վրայ, որոնք ժամանակաւ շատ դժուար եկած բաները մեծ դիւրութեամբ եւ ծարպիկութիւնով կր կատարեն. ջղերնին կարծես թէ տեսակ մը բնական աջողակութիւնով եւ ճշգումիւնով կը շարժին այն իրենց երկար ատեն անձնանուէր եղած գործերուն մէջ :

Վասնապէս մտաւոր գործողութիւններնիս ալ աջողակութիւն եւ կենդանութիւն կը ստանան յաճախ գործածութեամբ. եւ ասիկայ ինչպէս որ ո՞ր եւ իցէ մտաւոր գործողութեան վըրայ ճշմարիտ է նէ, նոյնպէս ալ տրամաբանութեան մէջ բո-



Տրամաբանութիւն :

վանդակեալ գործողութեանց համար ալ ստոյգ է : ( ) րինակի համար՝ թէ որ մէկ մարդ մը երբէք երկրաշտփական ապացուցութեանց պարապած չէ նէ, շատ ծանր եւ դժուարաւ կրնայ քայլէ ի քայլ յառաջ երթալ առ տեսակ տրամաբանութեանց մէջ . որ ընդհակառակն՝ ունակութիւն պատնջու չափ աս տեսակ ապացուցութեանց վարժուողը շատ արագութեամբ տրամաբանութեան մէկ մասէն միւսը կ'անցնի յառաջ կ'երթայ : Ասիկայ այսպէս է նաեւ բարոյական տրամաբանութեան մէջ ալ : ( ) արոյական ձեռնարկութիւն մը ըրած արտեննիս ի հարկէ պէտք է որ անոր այլ եւ այլ մասերուն իրենցմէ յառաջ գացող առաջարկութիւններուն հետ ունեցած համեմատութիւնը կամ համաձայնութիւնը իմանանք . աս զգացման եւ առաջարկութիւններ մէկտեղ բերելուն պտղակութիւնն ալ շատ կատու ունի ունակութեան պատիճանէն :

§ 183 • Խօսելով կամ արտայայտելով եղած տրամաբանութեան վրայ :

Եղուն տրամաբանութեան մեծ գործիքն է : Իրաւ է որ բոլորովին մտաւոր տրամաբանութիւն ալ կրնայ ըլլալ . բայց իրական ճշմարտութեան նայելով , հազիւ երբէք կրպատահի ասիկայ : Գիտելու արժան բան մըն է աս , որ շատ անգամ լոկ մշտաւոր տրամաբանական գործողութեան եւ անոր բանիւ արտայայտութեանը մէջ աննմանութիւն մը կը տեսնուի : Արբոր յանկարծ եւ հրապարակական վիճաբանութեան մէջ ձեռնարկութիւն յառաջ բերել հարկ կ'ըլլայ , մարդիկ շատ անգամ անանկ սթալամունքներ կը գործեն , որ իրենց մտքին մէջ եղած խորհուրդին գէմ է : Աս բանը մասնաւորաբար ան մարդոցը վրայ կը տեսնուի , որոնք կենաց հասարակ գործերուն զբաղած են զըլխաւորապէս , կամ ինչ եւ իցէ կերպով շարունակ գործելու վիճակի մէջ են : Ասոնց հանած հետեւութիւնները կրնանք բաւ թէ ընդհանրապէս շեղակ են . սակայն շատ անգամ անկարող կը զըտնեն ինքզինքին այն տրամաբանական գործողութիւնները յստակ եւ ուղիղ կերպով ուրիշներուն յայտնելու , որոնցմով որ ան հետեւութիւններուն հասած են : — ( ) Ի վերջ Վրոյմիլէ Լ'նգղիացիին համար կը պատմուի թէ անանկ անձն մը էր , որուն շատ յարմար կու գայ ըսածնիս : Իր կենացը բազմակնճիւն զիպուածներէն , իր կացութեանը շփոթութիւններէն , եւ իր դրտած մեծ յաջողութեանէն ըստ բաւականին կը տեսնուի որ բաներուն խորունկը թափանցող յստակ ու սուր տեսութեան տէր մէկն էր ասիկայ , եւ հասկըցողութեան զիէն ալ մէկ բա-

Տրամարանութիւն :

նով մը պակաս չէր, սակայն երբոր իր կարծիքը ուրիշներուն առջեւը բանալու եւ քաղաքական խնդիրներու վրայ իր խորհուրդները բացատրելու որ կ'ըլլար նէ, խառնափնթոր եւ մութ կերպով մը կը խօսէր: Միտքը շատ սուր դիտողութեամբ եւ աջողակութիւնով կրնար քննել մէկ բան մը. եւ թէպէտ եւ ուղիղ եւ հաւանելի հետեւութեան մը հասնիլը վստահութեամբ կրնար հաստատել, սակայն ինչ ճամբով հասնիլը կամ ճամբուն վրայ ինչ բաներու հանդիպիլը չէր կրնար այնչափ դիտութեամբ ստորագրել: — «Վոչոր պատմութիւնները, կ'ըսէ իւր միտքը ծածկել չուզած ատենը. եւ սակայն մէկը եղած չէ այնչափ բազմադիմի դժուարին դէպքերու մէջ իրեն շափ ճշգրտութեամբ եւ խոհական ընտրողութեամբ գործ տեսնող»:

§ 184 : Նախընթաց հատուածին վրայ բացատրութիւն :

Այսպիսի օրինակներ քիչ չ'կան: Ազիւարդ տեղ մը Մեղգիացիի մը վրայ պատմութիւն մը կ'ընէ, որ Վոչոր Մանսֆիլտին մէկ բարեկամն է եղեր: Ըսող երբոր առաջարկութիւն է եղեր որ Նամէլքայ կառավար երթայ նէ, քիչ մը տարակուսութիւն ցուցուցեր է ատենի մէջ նախագահութեան պաշտօն վարելու բաւականութեանը վրայ: Մանսֆիլտ քաջալերեր է զինքը թէ կարծածին չափ դժուարութիւն չ'պիտի գտնէ: «Ստահ եղիր, ըսեր է, ցուցուցած կարծիքներուդ մէջ ըրած ընտրողութեանդ, սակայն դատողութիւններուդ պատճառները նշանակելէն զգոյշ կեցիր. ըրած դատողութիւններդ հաւանական է թէ շիտակ պիտի ըլլան, բայց ձեռնարկութիւններդ անվրէպ սխալ պիտի ըլլան»:

Աննաց գործառնութիւններուն զբազան մարդոց իրենց ներքին խորհուրդները համարձակութեամբ եւ ճշգրտութեամբ բանի արփայտել չ'կրնալը եւ շիտակութիւն ցուցունելը հաւանականաբար ըստ մասին առ բանը ընելու սովորած չըլլալէն եւ ըստ մասին իրենց վիճակին բերմունքէն ձեւացուցած եւ զորացուցած մէկ մասուր ունակութիւններն է, որն որ այսպէս կրնանք բացատրել: Աղարաւար անանկ պոխպոջական հարկեր կը պատահա տեսակ մարդոց, որոնց մէջ կը ստիպուին արագութեամբ խորհելու ու գործ տեսնալու, եւ միանգամայն վնասէ կամ ձախողութենէ ալ մեծ զգուշութիւն ընելով, ուրիշ խօսքով՝ մէկ բանի

## Ազգացուցական Տրամաբանութիւն :

մը վրայ զգուշաւոր եւ արագ քննութիւն ընելու կը ստիպուին շատ անգամ : Ըս կերպով մտքովն շատ արագութեամբ գործելու կը վարժուին : Ըսոր ալ հետեւութիւնը աս կ'ըլլայ որ ան իրենց քննութեան նիւթ ըրած դժուարին խնդիրներուն մէջ քիչ կամ շատ գտնուած մանրամասն պարագաներուն վրայէն անանկ արագութեամբ եւ շատ քիչ մտադրութիւն ընելով կ'անցնին, որ անոնք շուտով կ'ելին իրենց մտքէն ու անյայտ կ'ըլլան : Ըսոր համար ասանկ մարդիկ, թէպէտ եւ ուղիղ ըլլայ հանած հետեւութիւններնին, չեն կրնար իրենց ըրած ձեռնարկութեանը բոլոր ստորակարգեալ մասերը բացապիւլ ուրիշներուն : Սէկ բանի մը վրայ քննութիւն ըրած ատեննին որոշ եւ յստակ կերպով անիկայ մէկէն աչքերնուն առջին կը բացուի, թէպէտ եւ ուսուցիչն ստացած ըլլալնուն համար՝ շատ արագութեամբ կ'ըլլայ ասիկայ . բայց ըրած ձեռնարկութիւններնին՝ երբոր խօսքով կը յայտնեն նէ, իրենց մտքին մէջ դարձած մանրը խորհրդոյ գործողութիւնները միայն բերելու եւ արտայայտելու անկարող ըլլալնուն համար, օրիշներուն անկատար եւ խառնակ կ'երեւնայ :

## ՄԵՍԻՍ • Ծ

## ԱՊԵՏՈՒՅԱԿԱՆ ՏՐԱՄԱԲԱՆՈՒԹԻՒՆ

§ 185 • Ազգացուցական տրամաբանութեան կենթակաները :

ՏՐԱՄԱԲԱՆՈՒԹԻՒՆՆ Վրայ ինչուան հիմայ ըրած ծանօթութիւններնիս շատ ընդհանուր առմամբ էին : Աղած ծանօթութիւնները ըստ մեծի մասին ամէն կերպ տրամաբանութեան կը վերաբերին : Սակայն առ նիւթիս վրայ աւելի ընդարձակ եւ յագեցուցիչ տեղեկութիւն ստանալու համար՝ պէտք է որ իր երկու երեւելի բաժանմունքներովը քննենք զանիկայ, որոնք են Բարոյական տրամաբանութիւն եւ Ազգացուցական տրամաբանութիւն :

Ապացուցական Տրամաբանութիւն :

Այլ եւ այլ մասնաւոր պարագաներ կան, որոնցմով ապացուցական տրամաբանութիւնը բարոյականէն կը տարբերի, որոնց վրայ թէ որ քննութիւն ընենք նէ, երկուքին ալ յատուկ բնութիւնը աղէկ կը հասկընանք : Ապացուցական տրամաբանութիւնը՝ ուրիշ բաներէ ի զատ՝ իր ենթականերովն ալ կը տարբերի ուրիշ որ կը իցէ կերպ տրամաբանութեանէ : Աս տեսակ տրամաբանութեան ենթակաները վերացեալ գաղափարներ եւ անոնց մէջ եղած հարկաւոր առնչութիւններն են : Ա երացեալ կ'ըսուին ան գաղափարները եւ խորհուրդները, որոնք իրերու պնդիսի յատկութիւնները ու որպիսութիւնները կը ցուցնեն, որ սովորաբար իրենց հետ միացած ուրիշ յատկութիւններէ եւ որպիսութիւններէ զատուելով՝ որոշ առարկայ կրնայ ըլլալ մեր մտաւոր հայեցողութեանը : Աս կարգէն եղող տրամաբանութեան ենթականերուն հետ կը դասուին նաեւ թիւերու եւ երկրաչափական ձևերու յատկութիւնները : ու նաեւ տարածութիւնը՝ տեւողութիւնը՝ ծանրութիւնը՝ արագութիւնը՝ զօրութիւնները՝ եւ այլն, որչափ որ կրնան թիւերով եւ ուրիշ չափաբերական նշաններով ճշդութեամբ ցուցուիլ նէ : Իսկ բարոյական տրամաբանութեան ենթակաները իրական ճշմարտութիւններ են, ու նաեւ իրենց ուրիշ իրական ճշմարտութեանց հետ ունեցած կապակցութիւնները, եւ բոլոր իրենց հետ եղող պարագաները : — Առանկեան արտաքին անկիւնը եւ ներքինին եւ հակադիր անկեան հաւասար է, — ասիկայ ապացուցական տրամաբանութեան տակ ինկող ճշմարտութիւն մըն է : Կրթիտ Կորուսեալին հեղինակը Միլտոմն է, Քսերքսէս յաղթեց Հունաց, եւ այլն, ասոնք ալ բարոյական տրամաբանութեան վերաբերեալ խընդիրներ են :

§ 186 . Ապացուցական տրամաբանութեան մէջ գործածուած սահմաններուն եւ ստաններուն օգուտը :

Վմէն տրամաբանական գործողութեան մէջ նախ եւ տղաջ մէկ քան մը պիտի ըլլայ ապացուցանելու : ասկէ ի զատ պիտի գտնուին նաեւ մէկ քանի անանկ բաներ ալ, թէ ծանօթ ըլլան թէ իբրեւ ծանօթ սեպուած ըլլան, որոնցմէ առաջարկութեանց բարդատուութիւնը կը սկսի : Ապացուցական տրամաբանութեան նախընթաց կամ նախաշարիչ ճշմարտութիւնները ան սահմաններն են, որոնք ամէն չափաբերական գրուածքներու մէջ կը գտնենք : Առանց աս սահմաններուն ապացուցական տրամաբան-

## Ապացուցական Տրամաբանութիւն :

նութիւն չըլլար: Անհնար է բոլորակի մը՝ զուգահեռագծի մը՝ եռանկեան մը վրայ ապացուցութիւններ ընել, առանց նախ եւ առաջ անոնց սահմանները տալու: Ուստի ապացուցական տրամաբանութեան մէջ սահմանները ընդունուած իրական ճշմարտութիւններ կամ առաջին սկզբունքներ են, որոնցմէ՝ տրամաբանական գործողութեամբ՝ հետեւութիւններ կ'ելլեն: — Ղիշդ ասոր նման բան մը կը տեսնենք այնպիսի նիւթերու վրայ ալ, որոնք ուրիշ կերպ տրամաբանութեան տակ կ'իյնան: Ինչպէս՝ բնական փիլիսոփայութեան մէջ օգին ծանրութեանը եւ առանձգականութեանը վերաբերեալ ընդհանուր իրական ճշմարտութիւնները առաջին սկզբունք կրնանք սեպել. որոնցմէ՝ իբրեւ հետեւութիւն՝ սնդիկին ծանրաչափին մէջ կանգնիլը եւ ծանրաչափը բարձր տեղեր ելած ատենը սնդիկին վար իջնալը յառաջ կ'ուգայ:

Հոս արժան է յիշել նաեւ առածներու չափաբերական ապացուցութեանց մէջ ունեցած օգուտը: Առած կ'ըսուին ան առաջարկութիւնները, որոնք ինքնայայտ են, կամ որոնց ճշմարտութիւնը ակներեւ կը տեսնուի, ինչպէս ասոնք. «Մի եւ նոյն բանին հաւասար եղողները իրարու ալ հաւասար կ'ըլլան». «Իրարու հաւասար բաներէ հաւասար չափով բան վերցընես նէ, մնացորդները իրարու հաւասան կ'ըլլան»: Ինդհանրապէս խել մը ասանկ առաջարկութիւններ դրուած կը գտնենք երկրաչափութիւններու եւ չափաբերական սկզբունքներ պարունակող ուրիշ գործերու սկիզբը. եւ աս սխալ կարծիքը եղաւ, որն որ երկար ժամանակ ընդհանրութիւն գտաւ, թէ աս առածները երկրաչափական եւ ուրիշ ամէն կերպ տրամաբանութեան հիմունքն են: Առածներէ, մինակ ինքնիրեննուն առնելով, հետեւութիւն մը չելլեր: Թէ որ միայն անոնց օգնութիւնովը մնալու ըլլայինք նէ, ապացուցութեանց ընդունակ եղող առաջարկութեանց մէջ բովանդակեալ ճշմարտութիւններուն երբէք չէինք կրնար հասնիլ:

Սակայն առածներն ալ իրենց յատուկ օգտակարութիւնն ունին, թէպէտ եւ իրենց բնութիւնը սխալ հասկըցուած ըլլայ: Անոնք տիրապէս եւ իրենէ ճշմարտութեան ակներեւ իմացումներն են. եւ թէ բանիւ ցուցուած ըլլան, ինչպէս որ կ'ընեն ընդհանրապէս, թէ զօրութեամբ իմացուին՝ բան մը չէ, միայն թէ նոր ըսկըսողներու համար եւ ուսման մէջ յարմարութիւն մը կրնայ ըլլալ յայտնապէս նշանակուելին: Սակայն ասոնց նշանակած ակներեւ իմացումները տրամաբանութեան էապէս հարկաւոր օգնականներն են. եւ ինտոր որ միայն իրենց օգնութեամբը մնալով ապացուցութիւն մը չէինք կրնար ընել նէ, անանկ ալ առանց իրենց

Ապացուցական Տրամաբանութիւն :

օգնութեանը անկարող ենք տրամաբանութիւն մը բնելու : Տրամաբանութիւնը կը սկսինք առածներէ . եւ յառաջ կ'երթանք խել մը առաջարկութիւններ իրարու հետ բաղդատելով . եւ առ առաջարկութեանց մէկմէկու հետ համաձայն գալուն կամ չգալուն ակներեւ իմացումները, որոնց՝ թէ որ խօսքով նշանակուելու ըլլան նէ՝ առաջք կ'ըսենք, ամէն քայլափոխի դործողութեան մէջ կը մտնեն :

§ 187 . Ապացուցական տրամաբանութեանց հակառակը անտեղի կ'ըլլայ :

Ապացուցութեանց մէջ խնդրոյն միայն մէկ կողմը կը քննուի, եւ սակէ աւելի բան ընել պէտք չէ : Տրամաբանութեան առաջին սկզբունքները կը տրուին . ասոնք չէ թէ միայն իբրեւ ստոյգ ենթադրեալ կ'ըլլան, այլ իբրեւ ընդունուած . ասոնցմէ ետեւ կու գան խել մը առաջարկութիւններ յաջորդաբար, եւ ամէնքն ալ իրարու հետ կը բաղդատուին, թէ որ ելած հետեւութիւնը ապացուցական հետեւութիւն է նէ, ըսել է թէ դործողութեան ամէն քայլափոխին բանին ստուգութիւնը յստակ երեւցած է : Ասանկ յառաջ գացած ու ըրմեցած ձեռնարկութեան մը դէմ ալ ինչ որ յառաջ բերուի նէ պարագայ բան է, անոր դէմ բռնուածներուն բոլորին մէջ ալ մէկ ստուգութիւն մը կը գտնուի : Ինչպէս՝ աս առաջարկութիւնը թէ եռանկեան երեք անկիւնները երկու ուղղանկեանց հաւասար չն, եւ ասոր նման ուրիշ առաջարկութիւններ, որ ուղիղ ապացուցեալին հակառակ են, ամէնն ալ սուտ են, ու նաեւ անտեղի, այսինքն՝ իրենք իրենց հակառակ ու հակասական :

Սակայն Բարոյական Տրամաբանութիւնը ասանկ չէ : Այլ ուստի հոս մէկ երեւելի որոշմունք մը կը գտնենք աս երկու տեսակ տրամաբանութեանց : Բարոյական տրամաբանութեան նիւթի մը վրայ շատ ստոյգ հետեւութիւն կրնանք հասնել . անանկ ստոյգ, որ մարդուս մտքին մէջ ամենեւին տարակոյս չ'ձգեր . եւ սակայն այն հանած հետեւութիւններնուս հակառակն ալ կրնայ բոլորովին հնարաւորութեան սահմանին մէջ ըլլալ : (Օրինակի աղագաւ՝ ամենահաւանելի վկայութիւն ունինք թէ արեգակը այսօր ծագեցաւ . սակայն ասոր հակառակն ալ հնարաւոր էր որ ձմարիտ ըլլար, առանց ներհակութեան կամ հակասութեան, այսինքն՝ թէ արեգակը ծագած չըլլար : Արձեալ՝ անտարակոյս ենք աս ֆիզիզական մեծ օրէնքին վրայ, թէ երկրիս երեսը ինկող ծանր մարմինները գէպ ի անոր կենդրոնը շեղեալ գծով մը կ'ընան : Սակայն առանց ներհակութեան կամ անտե-

զուժեան հակառակն ալ կրնանք մտքով ըմբռնել : Ուրիշ խօսքով՝ կրնանք ըսել թէ Մտուած ուզէր նէ այնպիսի օրէնքի մը իշխողութեանը տակ կը գնէր մարմնոց վար իյնալը, որ զանոնք ուրիշ ուղղութեամբ մը երկրիս երեսը իջեցընէր : Բայց երբոր ապացուցական գործողութիւն մը աղէկ մը կը քննենք եւ հետեւութիւնը կը տեսնենք նէ, ալ անկարող կը գտնենք ինքզինքնիս անոր ներհականին մինչեւ անգամ հնարաւորութիւնը ընդունելու :

§ 188 . Ապացուցութիւնք այլ եւ այլ աստիճան հաւատքի ընդունակ չեն :

Արբոր բարոյական տրամաբանութեան ենթակայ եղող նիւթերու վրայ կը խորհինք, ելած հետեւութիւններուն այլ եւ այլ աստիճան հաւանութիւն կու տանք . հաւանականութեան կողմանէ աստիճանաւ իրարմէ տարբեր կարծիքներ կ'ընենք : Արբեմն ընծայած հաւատքնիս շատ տկար կ'ըլլայ . լոկ կարծիք կ'ըլլայ բրածնիս : Մտ տկար հաւատքը նոր վկայութիւնով մը աւելի զօրութիւն կը ստանայ, եւ այսպէս վկայութիւնները քանի եւելնան նէ, մեր հաւատքն ալ զօրութիւնով կրնայ եւելնալ, ինչուան որ ամէն տարակոյս փարատի եւ սխալման հնարաւորութիւնը ամէն կողմանէ վերնայ : — Սակայն ապացուցութեանց մէջ ասանկ չէ . աս տեսակ տրամաբանութեանց մէջ ընծայած հաւատքնիս միշտ ամենաբարձր աստիճանի կ'ըլլայ, եւ երբէք շատ կամ քիչ չենք կրնար սեպել : Մտիկայ, ինչպէս որ թեթեւ քննութիւնով մը կը տեսնուի, ապացուցական տրամաբանութեան բնութենէն յառաջ կու գայ :

Ապացուցութեանց մէջ միշտ մէկ քանի առաջին սկզբունքներէ կամ ճշմարտութիւններէ կը սկսինք տրամաբանութիւնը, որոնք կամ ծանօթ կ'ըլլան, կամ իբրեւ ծանօթ ընդունուած . եւ աս ճշմարտութիւնները գործողութեան գուռը կամ այն առաջարկութեանց կարգին հիմն են, որոնք յաջորդաբար մեր մօքին հայեցողութենէն պիտի անցնին, ինչուան որ ելլելու հետեւութեանը հասնինք : Չափաբերութեանց մէջ աս ըսած առաջին սկզբունքներնիս սահմաններն են :

Ըսել է թէ ապացուցական տրամաբանութիւններու մէջ գործողութիւնը անանկ բաներէ կը սկսինք, զորոնք ամէնք ճշմարիտ կամ ստոյգ կը ճանչնան : Վանք որ գործողութեան մէջ ամէն քայլ որ կ'առնենք նէ, մէկմէկու հետ բաղդատուած առաջարկութիւններուն իրարու համաձայն գալը չ'գալը ակնբերեւ տեսութեամբ կ'իմացուի : Էտեւաբար՝ առաջարկութեանց բաղդատ-

ները շատ անգամ համառօտ խօսքով կ'ըսուին իբրևան բանէր, եւ աս սահմանը, որչափ որ համառօտ ալ է նէ, սխալ գաղափար տուող խօսք մը չէ :

Կենաց պարտականութիւններուն եւ ընդհանուր գործքերուն վերաբերեալ կարծիքներ ձեւացուցած ասաննիս աս տեսակ տրամաբանութեան մէջ շատ ճարտարութիւն պէտք է : Հաւանական է որ ոմանք խորհին թէ ապացուցական տրամաբանութեանց վարժուած անձինք դիրբաւ այն իրենց մտաւոր ունակութիւնը լոկ հաւանականութեան սահմանին տակ ինկող բաներու վրայ ալ կրնան գործածել : Աս կարծիքը բոլորովին հաստատուն բան չէ : Թէպէտ եւ ատ տեսակ տրամաբանութիւնը մտադրութիւնը հաստատուն պահելու մտին եւ ուրիշ մէկ քանի բաներու մէջ շատ օգնութիւն կ'ընծայէ, սակայն միայն ատոր գործածութիւնը քիչ մը անյարմարութիւն կու տայ մարդուս մտքին՝ ան բազմանտեսակ նիւթերուն վրայ ուղիղ դատողութիւն ընելու, որոնք տիրտպէս բարոյական տրամաբանութեան տակ կ'իյնան : — Ուստի աս երկրորդ տեսակ տրամաբանութիւնն ալ, որ Վատիներէն mores բառին նախնական նշանակութիւնէն (որ բնէ է բարք, սովորութիւնք, եւայլն) իր յատուկ անունն առած է, մասնաւոր հետազօտութեան արժան է :

§ 191 . Ի՞նչ բան է բարոյական ստուգութիւնը :

Բարոյական տրամաբանութիւնը այլ եւ այլ աստիճան հաւանութեան ընդունակ է, եւ աս կողմանէ կը տարբերի ապացուցականէն : Ապացուցութեանց մէջ իրարու հետ բաղադատուած առաջարկութիւններուն մէկմէկու հետ ունեցած վերաբերութիւնները չէ թէ միայն անմիջապէս կ'իմացուին, այլ առաջարկութիւններուն մէջ եղած համաձայնութիւններուն վրայ ճշմարիտ գիտութիւն կամ բացարձակ ստուգութիւն կ'ունենանք : Բարոյական տրամաբանութիւնը ասանկ չէ : — Արկուտեսակ տրամաբանութիւնն ալ ի սկզբան այնպիսի առաջարկութիւններէ կը սկսի, որոնք կամ գիացուած՝ ծանօթ կ'ըլլան, կամ իբրեւ ծանօթ ընդունուած : Արկուքին մէջ ալ կարող մը առաջարկութիւններ կ'ըլլան իրարու հետ յաջորդաբար բաղադատուած : Բայց բարոյական տրամաբանութեան մէջ եղած առաջարկութիւնները վերացեալ եւ որոշ ու հաստատուն բաներ չըլլալուն, եւ ուստի շատ անգամ անստոյգ ըլլալուն համար՝ անոնց մէջ եղած համաձայնութիւնը կամ անհամաձայնութիւնն



Բարոյական Տրամաբանութիւն :

ալ գիտցուած կամ ծանօթ չըսուիր, հապա կարծեցեալ, եւ աս կարծեաց հաւանականութեան եւելլ պակասը, բազմաթիւ զանազան աստիճանները կան : Բայց է թէ առաջին կերպ արամաբանութիւնը ճշմարիտ հմտութիւն կու տայ մեզի քննած բաներնու վրայ, իսկ միւս կերպին համար տիրապէս աս կըրնանք ըսել՝ թէ շատ բաներու մէջ լոկ կարծիք կամ դատողութիւն է : — Սակայն այսպիսի կարծեաց կամ դատողութեանց հաւանականութիւնը երբեմն այն աստիճան մեծ կ'ըլլայ որ բնու բանաւոր տարակոյս մը չ'իտղուր : Ընատեն անանկ նիւթերու վրայ, որոնք միայն բարոյական տրամաբանութեան ենթակայ են, ստուգութիւն ունեցածի պէս կը խօսինք : Այլ թէպէտ եւ կարելի է թէ ապացուցութեանց վրայ ունեցած հաւատքներնու ու բարձրագոյն աստիճանի հաւանականութեան ընծայած հաւատքներնու մէջ տարբերութիւն ըլլայ, սակայն երկուքին ալ մեր զգացումներուն ըրած ներգործութիւնը էպպէս մէկ է : Թէ որ մէկ մարդ մը Լոնտոն ու Փեքին քաղաքներ ըլլալուն վրայ երկբայութիւն ցուցնէ, որ վըկայութենէ իզատ ուրիշ ապացոյց չունի, ըրած անօրինակ եւ անպատշաճ անխելքութեանը կողմանէ Ալեկզիդեսայ նախադասութիւններուն վրայ մտքէն երկբայութիւն անցընողէն հազու վար կը սեպուի : — Ըս բարձրաստիճան հաւանականութեանը կ'ըսենք Բարոյական ստուգութիւն :

§ 192 . Ա երաբանական տրամաբանութիւն :

Բարոյական տրամաբանութիւնը մէկ երկու մանր բաժանմունք ունի, որոնց առաջինը՝ որ պիտի յիշենք, Ա երաբանական Տրամաբանութիւնն է : — Ա երաբանութիւն ըսելով պիտի խմանանք քիչ կամ շատ նմանութիւն մը կամ համեմատութիւն մը : — Ար տեսնենք թէ բնութեան գործողութիւններուն մէջ մէկ միաբանութիւն մը եւ միօրինակութիւն մը կայ, ասկէ բնականապէս աս կարծիքը կը հանենք, թէ մի եւ նոյն բնութիւնը ունեցող բաները մի եւ նոյն կերպով ներգործութիւն կ'ընդունին, եւ մի եւ նոյն ներգործութիւնները կ'արտադրեն, եւ թէ նոյն եւ նման գործքերը նոյն եւ նման պատճառներու պէտք է որ տրուին : Ուստի Ա երաբանական տրամաբանութիւնը այն մտաւոր գործողութիւնն է, որով բաներուն նմանութիւնէն անծանօթ ճշմարտութիւններ կամ հետեւութիւններ կը հանենք :

<sup>1</sup> Այնտոնի ան տրամաբանութիւնը, որով ընդհանուր ձգողու-

Թեան օրէնքը կը հաստատէ, աս տեսակէն է : Ասի կը հաստատէ թէ մոլորակները դէպ ի արեգական շեղեալ են ճիշդ ինչ կերպով որ երկիրս նոյն լուսատու մարմնոյն շեղեալ է . եւ թէ մի եւ նոյն շեղութիւնը լուսնին վրայ ալ կայ, ինչպէս նաեւ երկիրս երեսը կոր գծով նետուած մարմիններուն վրայ կը տեսնենք աս բանը, որ դէպ ի անոր կենդրոնը կը շեղին : Ասկէ ալ կը հետեւցնէ թէ ուրեմն բոլոր աս շեղութիւնները մի եւ նոյն պատճառէն յառաջ կու գան կամ մի եւ նոյն օրէնքին իշխողութիւնովը կ'ըլլան, որ է յգուրու-թեան գոյրու-թեանը : Հաս բաներ կան, թէ տեսական եւ թէ գործնական, որոնց վրայ աս կերպով կրնանք տրամաբանել, եւ երբեմն շատ հաւանականութիւնով : Թէպէտ ճշմարիտ է թէ շատ զգուշութիւն պէտք է ընել աս ազբիւրէն հանուած ձեռնարկութեանց, մասնաւորաբար ուսումնական հետազոտութեանց մէջ : Ախտնական խնդիրներու մէջ վերաբանական տրամաբանութեան յատուկ պաշտօնը կ'իրեւնայ թէ աս է, այսինքն՝ կամ ուղղակի լոյս մը ձգելով եւ կամ առարկութեանց պատասխանելով լոկ բացայայտել կամ հաստատութիւն տալ այնպիսի ճշմարտութեանց, որոնք ուրիշ ապացուցի ազբիւրներէ կրնան հաստատուիլ :

§ 193 . Մակարերական տրամաբանութիւն :

Ուրիշ կերպ բարոյական տրամաբանութիւն մ'ալ կայ, որ Մակարերութեանով կամ Գալուստութեանով կ'ըլլայ : Մակարերական Տրամաբանութեան կ'ըսուի մեր գիտողութեանը տակ ինկած մասնաւոր իրական ճշմարտութիւններէն ընդհանուր ճշմարտութիւններ հանելուն : Մեր փորձառութիւններէն կը սորվինք՝ թէ բնութիւնը միօրինակ օրէնքներով կը կառավարուի . աս ակնկալութիւնն ալ ունինք՝ (թէ մեր կազմութեանը մէկ ընդաբոյս օրէնքն ըլլայ ասիկայ, թէ ուրիշ ինչ եւ իցէ կերպով որ ծագած ըլլայ) թէ զիպուածները՝ ինչպէս որ տեսանք թէ անցեալին մէջ պատահեցան նէ, ապառնիին մէջ ալ նոյնպէս պիտի պատահին : Մտքերնիս աս վիճակին մէջ ըլլալովը՝ կը պատրաստուինք մակածութիւնով հետեւութիւններ հանելու :

Արբոր խել մը մի եւ նոյն տեսակէն եղող իրարու վրայ մէկ յատկութիւն մը կը գտնենք, եւ ան յատկութեան հակառակ բան մը չենք տեսներ, անպտեն ամենազօրաւոր ակնկալութիւն մը կ'ունենանք՝ թէ ան տեսակէն եղող բոլոր մասնաւորները ան յատկութիւնը ունին, ուրիշ խօսքով՝ կը հետեւցընենք թէ ասիկայ ընդհանուր յատկութիւն մըն է : (Նոյն այսմ՝ մագնիս մը

խել մը երկաթի կտորներու կը դպցունենք . կը նայինք որ ամէն անգամուն մէկ զորաւոր քարշողութիւն մը կ'ըլլայ կոր . ասկէ կը հետեւցընենք , թէպէտ եւ փորձը աշխարհիս մէջ գանուած երկաթի կտորներուն մէկ շատ փոքր մասին վրայ եղած է , թէ երկաթին մէկ յատկութիւնն է մագնիսէն ասանկ ներգործութիւն մը ընդունիլը , կամ թէ ամէն երկաթ մագնիսական ճըգողութեան ընդունակ է : Ասիկայ մակածութիւնով ելած հետեւութիւն մըն է :

Ճշգրտութեամբ յօրինուած մակաբերական տրամաբանութեան գործողութեան մը վրայ ունեցած հաւաքընիս շատ հաստատութիւն ունի . բարձրաստիճան հաւանականութիւն՝ կամ որ նոյն է բարոյական ստուգութիւն է . եւ գէթ բոլոր գործնական նպատակներու կ'օգտէ : Ասով կը գաննէք նիւթական իրերու յատկութիւններուն եւ օրէնքներուն վերաբերեալ բոլոր ընդհանուր ճշմարտութիւնները :

Աւել թէ միայն նիւթական բաներու վրայ հմտութիւն կ'ունենանք , հապա աս նոյն մակաբերական գործողութիւնը մտքին գործողութիւններուն վրայ իշխող օրէնքներուն վրայ ըլլած հետազօտութիւններնուս մէջ ալ կը գործածենք : Փորձառութիւնով կամ խել մը անհատներու վրայ ինչպէս ըլլալը դիտելով է որ կը մակաբերենք թէ զուգորդութիւն անունով ընդհանուր օրէնք մը կայ , այսինքն թէ երբոր երկու կամ աւելի գաղափարներ անմիջապէս յաջորդութեամբ մարդուս մըտքին մէջ կը պատահին նէ , ետքէն ան գաղափարները մէկըզմէկ կը թելադրեն ընկանապէս : Աս այսպէս է մտքին բոլոր միւս ընդհանուր օրէնքները ստուգելու մասին ալ :

§ 194 . Միւտորեալ կամ հաւաքեալ ձեռնարկութիւնք :

Արբոր երկրաչափական խնդիր մը կ'առաջարկուի ապացուցուելու , երբեմն այնպէս կը պատահի որ այն առաջարկութեան վրայ երկու կամ աւելի լուծմունքներ կը տրուին : Ամէն լուծմունքին մէջ ապացուցուելու առաջարկութիւնը կամ նախագասութիւնը նոյն ու հետեւութիւնն ալ մի եւ նոյն բանն է . բայց քննուած առաջարկութիւնը ելած հետեւութեան հետ կապող միջանկեալ առաջարկութիւնները կամ տրամաբանական գործողութիւնները մէկմէկէ տարբեր կ'ըլլան : Սակայն ամէն գործողութիւնով ելած հետեւութիւնը ստոյգ ըլլալուն , մի եւ նոյն բանը քանի մը կերպով ապացուցանելով բանին ստուգութիւնը չ'եւելնար . միայն թէ հետաքրքրութեան նիւթ մը

կրնայ ըլլալ ապացուցուած բանը ուրիշ զանազան կերպերով ալ ապացուցանելը :

Բարոյական տրամաբանութեան մէջ ասանկ չէ: Աս երկու տեսակ տրամաբանութեանց մեծ տարբերութիւնը, ինչպէս որ առաջ ալ ըսինք, մտաւոր տրամաբանական գործողութեանը մէջ չէ այնչափ, որչափ որ իրենց ենթականերուն մէջ է: Արդ՝ որովհետեւ բարոյական տրամաբանութեան նիւթերը յստակ եւ որոշ վերացեալ բաներ չեն, եւ ուստի շատ անգամ անստուգութեան սահմանի մէջ են, վասն որոյ անոնց վրայ ելած հետեւութիւններուն ընծայած հաւատքնիս ալ միշտ բարձրագոյն աստիճանի հաստատութիւն չունենար: Շատ անգամ ստորին աստիճանի հաւանականութիւն մը կ'ըլլայ: Այս պատճառաւ՝ որ եւ իցէ բարոյական խնդիրի մէջ՝ ելելու մասնաւոր հետեւութիւնը հաստատող ձեռնարկութեանց թիւը որչափ եւել որ ըլլայ նէ, հետեւութեան ճշմարտութեանը վրայ ունեցած հաւատքնիս ալ այնչափ հաստատուն կ'ըլլայ:

Ինչպէս՝ դիցուք թէ խնդիր եղաւ, թէ արդեօք Սաքսոնացւոց յաղթութենէն առաջ ատեն եղած է որ չռովմայեցիք Մեծն Բրիտանիա կղզին բնակած են: Աս խնդրոյն վրայ խել մը իրարմէ անկախ ապացոյցներ յառաջ կը բերուի: (1.) Չռովմայեցի պատմիչներու վկայութիւնը: (2.) Ընտանի շէնքերու ճամբաներու եւ բնակեցողներու մնացորդները, որոնք չռովմայեցւոց շէնքեր կ'երեւնան: (3.) Գտնուած դրամները, թակոյկները, եւայլն: Աս ապացոյցները թէպէտ եւ իրարմէ անկախ են, սակայն ամէնքն ալ մի եւ նոյն հետեւութիւնը կը հաստատեն. եւ մէկ տեղ միաւորութեամբ էապէս կ'եւելցընեն ան բանին ընծայած հաւատքնիս:

## ԳԼՈՒԽ ԺԻ

## ՅՐԱՄԱՐԱՆՈՒԹԵԱՆ ԿԱՆՈՆՔ ՏՐԱՄԱՐԱՆՈՒԹԵԱՆ

§ 195 . Տրամարանութեան վերաբերեալ գործնական կանոններու վրայ :

ՏՐԱՄԱՐԱՆՈՒԹԵԱՆ վրայ գրող մատենագիրք շատ կանոններ առած են, որոնց վախճանը տրամարանութեան ներգործութիւնը յաջողակ՝ ճիշդ եւ զորաւոր ընել է : Ի հարկէ սա կանոններէն ոմանց արժէքը շատ կ'ըլլայ, եւ ոմանց արժէքը քիչ : Ընդնք որ ամենէն կարեւորներն են, որոնց օգտակարութիւնը աներկբայ է, սա զլիուս մէջ հաւաքած ու բացատրած ենք, եւ զայն ըրածնիս անդէպ բան մը պիտի չ'ըլլուի, թէ որ յիշուի թէ բոլոր սա գործիս վախճանը չէ թէ միայն մըտաւոր գործողութեանց ինչ ըլլալը ստուգել է, այլ ատեն ատեն ալ այն գործողութեանց մէջ բարի հետեւանք ունեցող բաները նշանակել եւ վնասակար արդիւնքներ յառաջ բերող բաներու դէմ զգուշութիւն տալ է :

Ի սած կանոններնիս ի հարկէ աւելի մօտ կապակցութիւն ունին Ռարոյական տրամարանութեան հետ, քան թէ Մպացուցականին, սակայն սա պարագան իրենց արժէքը կ'եւելցնէ յաւէտ, քան թէ կը պակսեցնէ : Վանզի բարոյական տրամարանութիւն ընդունող եւ պահանջող առիթները՝ կենաց ամենահասարակ եւ սովորական դիպումներէն եւ գործառնութիւններէն անբաժան ըլլալուն համար՝ ապացուցական տրամարանութեան առիթներէն շատ եւել են թուով :

§ 196 . Պէտք է ճշմարտութեան սիրով շարժուիլ տրամարանութեան մէջ :

ա . Տրամարանութեան վերաբերեալ առաջին կանոնն որ պիտի տանք, ինչ զգացմամբ շարժուիլ արժան ըլլալուն վրայ է, եւ է այս . Ըմէն հետազօտութիւն վերցնող խնդիրի մէջ, որոնց նկատմամբ որ մենք մեզի ուրիշներուն կարծիքին հակառակ կը գտնենք, պէտք է որ ճշմարտութիւնը մեր նպատակն ընենք :

Գործնական կանոնք տրամաբանութեան:

— Ճշմարտութեան բաղձանաց հակառակը՝ վիճարանութեան նիւթը աւելի մէկ կողմին որոշել ուզելն է, քան թէ միւս կողմին, առանց ապացոյցներուն արժէքը արդարութեամբ կըշնելու: Եւ աս մէկ հետեւութեան ելլելը միւսէն աւելի ընարելուն հիմունքը՝ պատճառները շահախնդրութեան եւ կրից նախապաշարմունքներն են. որ ասոնք ճշմարտութեան մեծ թշնամիներն են: Երբոր բանի մը վրայ քննութիւն ըրած աս եննիս աս նախապաշարմունքներուն ազդեցութեանը տակ կ'ըլլանք, անատն թէ վկայութեանց վրայ եւ թէ ուրիշ ազդիւրներ: Եղող փաստերու վրայ անանկ դատումներ կ'ընենք, որ եթէ ան զգացումները վրանիս չ'տիրէին նէ այնպէս պիտի չըգատէինք զանոնք. եւ այսպիսի պարագաներու մէջ գրեթէ միշտ սխալ հետեւութիւններու կը հասնինք: — Եւ կանոնը ամէն ատեն եղած վիճարանութեանց մէջ շատ հարկաւոր է, բայց մանաւանդ հրապարակական կամ հանդիսական վիճարանութեանց մէջ, վասն զի անանկ ատեններ այլոց ներկայութիւնը եւ յաղթութեան սէրը կը հրապուրեն մարդս ճշմարտութեան պահանջմունքները մոռնալու կամ անտես անելու:

§ 197. Հետազոտութեան նիւթը շիտակ նշանակելու համար տարուելու հոգը:

բ. Չեռնարկութիւն մը եղած ատեն նկատուելու կանոններուն մէկն ալ վիճարանութեան խնդիրը որոշ եւ ուղիղ նշանակելու հոգ տանիլն է: Ա՛ էճ եղած նիւթը անանկ կերպով մը կրնայ յառաջ բերուիլ, որ բուն իսկ արտայայտութեան ատենը անանկ մէկ ճշմարիտ ենթադրուած բան մը գտնուի մէջը, որմէն հարկաւ հակաձառողներուն մէկուն կողմէն հետեւութիւն մը ելլէ: Ասիկայ կրկնումն սկզբան ընել է, որ է տեսակ մը խաբէութիւն կամ իմաստակութիւն, որուն վրայ նորէն առիթ պիտի ունենանք խօսելու: — Երբեմն քննելու նիւթը անանկ անհոգութեամբ կընշանակուի, որ բուն իսկ վիճելու կէտը բոլորովին դուրս կը ձգուի: Ա՛ սան որոյ շատ անգամ աղէկ կ'ըլլայ որ կողմնական փաստաբաններու ոճը բռնուի, եւ նախ որ բաներու մէջ հակաձառողները միաբան են եւ որ բաներու մէջ մէկմէկ տարբեր են՝ անոնք որոշուի: Ե՛նատն շատ գժուար կ'ըլլայ յառաջ բերելու փաստերնին տիրապէս վիճարանութեան նիւթը եղող բանին չօղզելը:

Եւ բանիս մէջ սխալմունք չընելու համար՝ միշտ տրամախօս-

Գործնական կանոնք արամարանութեան :

Ներուն միտքն ըլլալու է խնդրոյն մէջ նշանակուած ան ամէն բաներուն վրայ յստակ դադափար ունենալ, որոնք ելլելու հետեւութեանը հետ մօտ կապակցութիւն ունին : Խնդրոյն բարորակոյն մասերը եւ մինչեւ անգամ մասնաւոր բառեր քննելու են : ( ) Բինակի ազգաւ՝ թէ որ խնդիրը նիւթական մարմինի մը որպիսութիւններուն կամ յատկութիւններուն վերաբերեալ բան մը կը ստորասէ կամ կը բացասէ կոր նէ, հարկ է որ ան նիւթին վրայ ընդհանրապէս եւ անոր որպիսութիւններուն կամ յատկութիւններուն վրայ մասնաւորապէս կարելի եղածին չափ յստակ դադափար ունենանք : Ըստ բաները ուրիշ ամէն տեսակ խնդիրներու համար ալ առնելու է :

§ 198 . Գիտէ թէ ինչ տեսակ ապացոյց տալ պէտք է խնդրոյն :

դ . Ի՞նչ կայ որ յստակ կ'երեւնայ թէ այս տեսակ ապացոյց կ'ուզէ, բան ալ կայ որ նոյնչափ յայտնի կերպով կ'երեւնայ թէ ուրիշ տեսակ ապացոյցի կարօտ է . ասոր համար աս կանոնը կը գնենք, թէ պէտք է նկատել թէ ինչ տեսակ ապացոյց յարմար կու գայ քննուած խնդրոյն :

Թէ որ խնդիրը վերացեալ է բոլորովին, եւ նմանապէս անոր վրայ եղած արամարանութեան մէջ բովանդակեալ առաջարկութիւններուն բոլորն ալ վերացեալ են, անտեսե՛ ունեցած փաստերնիս Մէկերեւ իմացման փաստ կ'ըլլայ : — Նիւթական մարմիններու յատկութիւնները քննած ատեննիս հարկ է որ ի սկզբնէն Օգայարանաց վկայութեանը նայինք . որուն մեր մէջ պատճառած հաւատքին զօրութիւնն ու բնութիւնը ան քննուած առարկաներուն ինչ պարագաներով զգայարանաց գննութեանը տակ իյնալուն համեմատ կ'ըլլայ : — Մեր դիտողութեանը տակ շինկած իրողութիւններու եւ դիպումներու վրայ զատաստան ըրած ատեննիս ուրիշներուն տուած Վ կայութեանը կը վստահինք : Ըստ աղբիւրէն ունեցած հաւատքնիս շատ ալ կ'ըլլայ՝ քիչ ալ, վկայողներուն թուոյն նայելով, վկայողին իր վկայած բանը ազէկ հասկընալուն չ'հասկընալուն նայելով, եւ այլն : — Վարձեալ՝ կան անանկ բաներ, որոնք Սնկարբութեան փաստի ընդունակ են, եւ անանկ բաներ ալ, որոնց հաւատք ընծայելու համար Վ երաբանութեան արամարանութիւններէն ի զատ ուրիշ պատճառ չունինք : Երբեմն ալ բոլոր ունեցած փաստերնիս սյլ եւ այլ դիպումական պարագաներէ կաղմուած կ'ըլլան, որոնք մշակել կերպով վերաբերութիւն մը կ'ունենան քննուած նիւթին, ու այլ եւ այլ աստիճանի հաւանականութիւն կու տան :

Գործնական կանոնք տրամաբանութեան:

Ուստի՝ որովհետեւ հաւատոյ ազդիւրները կամ պատճառները ինչպէս նաեւ նոյն իսկ հաւատքն ալ՝ մտա կապակցութիւն ունին մեր քննութեան նիւթերուն հետ, հարկ է որ անոնց վրայ աղէկ գիտողութիւն ընենք: Յառաջ բերուած փաստը կամ պատճառը խնդիրին պատշաճ գալու է: Բայց թէ որ խնդիրը քանի մը տեսակ ապացոյցի ընդունակ է նէ, անատեն ամէնն ալ ըստ արժանոյն մէջ կրնայ բերուիլ:

§ 199. Սուտ ձեռնարկութիւններու կամ իմաստակութիւններու սպնութեան մի դիմեր:

7. Տեսակ մը սուտ տրամաբանութիւն կայ, որուն կ'ըսենք Լուսարարութիւն: Իմաստակութիւնը ուղղութեան ընդհանուր կերպարանքին տակ ծածկուած խաբէութիւն մը պարունակող ձեռնարկութիւն մըն է: Ըստպիսի ձեռնարկութիւններ, որոնց նպատակը մարդ խաբել է, եւ ընդհանրապէս ճշմարտասիրութեան ներհակ են, ամենեւին անարժան է գործածելը:

1. Իմաստակութեան այլ եւ այլ տեսակներուն առաջինն է Լուսարարութիւն խնդրոյ ըսուածը: Ըստիկայ անատեն կ'ըլլայ, երբ որ խնդիրին մէջ գործածուած բառերը կամ խօսքերը սխալ մտքով մը կ'առնուին, եւ հետեւաբար յառաջ բերուած ձեռնարկութիւնները ճշմարտապէս վիճարանութեան կէտին չեն վերաբերիր: Օրինակի աղաչաւ՝ Յունաստանի հին իմաստասէրներուն մէկ վարդապետութիւնն էր աս թէ իրերս մայն մէկ լուսարարութիւն էր իսկ: Ըրիստոսէլ սկիզբ բառէն մեր տարր բառով սովորաբար նշանակած բայնը իմանալով, աշխատեցաւ հակառակը հաստատելու, այսինքն՝ թէ տարերքները մէկ չեն, հապա շատ են. եւ ասանկով խնդրոյ անգիտութեան յանցաւոր եղաւ. վասն զի այն իր պատարակած վարդապետութիւնը հաստատողներուն խօսքը իրերու կերպարանքներուն չէր վերաբերիր, այլ իրերու պատճառին. բրած վարդապետութիւննին ոչ թէ նիւթոյ տպրական մասնիկներու վրայ էր, հապա բանաւոր սկզբան՝ արարչագործ մտքին՝ Վերագոյն Լսակին վրայ էր, որն որ իբրեւ Սկիզբ (այսինքն իբրեւ ամէն բանի սկզբնաւորութեանը եւ տեւողութեանը պատճառ) մէկ կ'ընդունէին:

2. Կրիստոսն Սկիզբն: Ըստ իմաստակութիւնը ան է որ հակաձառողը առաջարկութեան մը փաստ նոյն իսկ առաջարկութիւնը յառաջ կը բերէ ուրիշ ձեւի խօսած: Էտեւեալ խօսքը աս սուտ տրամաբանութեան մէկ զրինակն է. «Ըստուած յաւիտենական է, վասնզի իր գոյութիւնը սկիզբ եւ վախճան չունի»: Ըստ խօսքին մէջ առաջարկութիւնն ու զանիկայ հաստատելու համար բերուած



Գործնական կանոնք տրամաբանութեան :

փաստը էապէս մի եւ նոյն բանն են : — Երբոր արիտնը քուն կը բերէ, վասն զի թմրեցուցիչ յատկութիւն ունի, կամ խտր կա՞ծի իր բուսական զօրութիւնովը կ'ըսենք նէ, մի եւ նոյն բանը տարբեր ձեւով կրկնել է : — Աս խաբէական ձեւը շատ կը գործածուի, եւ թէ որ քիչ մը հոգ տարուի նէ զանհկայ յայտնելու, շատ գեղեցիկ խօսքեր կ'ոչնչանան, ու շատ ալ ճարտարահիւս ձեռնարկութիւններ կ'արուին : Յոսի Երջան տրամաբանութիւն ըսուածն ալ վերինին շատ մօտ իմաստակութիւն մըն է : Ասիկայ անատենը կ'ըլլայ, երբոր երկու առաջարկութիւն փոփոխակի մէկմէկու փաստ կը բերուի :

3. Ոչ պատճառ իբր պատճառ, կամ պատճառ չեղող բանը իբրեւ պատճառ յառաջ բերել : — Սորդիկ տգէտ սեպուիլ չեն ուզեր, եւ աս համարման գէմ ունեցած ատելութիւններն են՝ դիւրահաւան ընկերներն են եւ երբեմն ալ իրենք զիրենք շատ բաներու մէջ կը խաբեն՝ դիպուածներու սուտ պատճառներ տալով : Շատ ընդհանուր բան մըն է աս իմաստակութիւնը քամիկ ժողովրդոց մէջ . հմտութիւններնուն պակասութեանը հետ հպարտութիւննին ալ պակաս չէ, եւ ուստի աս կիրքերնին լեցնելու համար չ'գիտցած բաներնուն պատճառ որ տալու կ'ըլլան նէ, ամենէն մօտ ինչ որ գտնեն նէ ան պատճառ կը բերեն : Ասինք թէ գիտաւոր աստղ մը կ'երեւնայ, ու ետեւէն սով մը կամ պատերազմ մը կը պատահի նէ, ան արդէտներուն պատճառը գիտաւորը կը սեպեն : Թէ որ մէկը երեւելի չարագործութիւն մը ընէ, ու վրան շատ ատեն չանցած ծանր փորձութեան մը հանդիպելու որ ըլլայ նէ, ըրած եղեւնագործութիւնը գլխուն եկած ձախորդութեան մի միայն եւ ուղղակի պատճառ սեպողներ քիչ չեն գտնուիր : Աս տեսակէն է ան պատիւ վարկումն որ պատմաբանք կը պատմեն Վարակուսյի Լնդիկներուն վրայ, որոնք մկրտութեան արարողութիւնը մահ կը պատճառէ կարծեր են, վասն զի Յիսուսեան քարոզիչք պատեհութիւն գտած ատեննին մեռնելու վրայ եղող մանկանց եւ ընտանալու յոյս չ'ցուցնող չափահասներու վրայ աս արարողութիւնը կը կատարեն եղեր :

4. Իմաստակութեան մէկ տեսակն ալ Խաբէո-լիւն Պատուհան ըսուածն է : — Աս խաբէական տրամաբանութիւնը անատենը ըրած կ'ըլլանք, երբոր դիպուածական պարագայէ մը մէկ բանի մը ընդհանուր բնութեանը վրայ կարծիք մը կը ձեւացնենք : Ինչպէս Քրիստոսնէութիւնը հալածումներու պատճառանք մը եղած է, եւ ասանկով շատ չարչարանք եւ գժբաղգութիւն բերած է շատերուն գլխուն, սակայն աս կրօնքին գէմ եղած աս անիրաւ վարմունքէն քրիստոսնէութիւնը մարդկային ընկերութեան օրհնութիւն մը չէ հետեւցնելը իմաստակութիւն է : Արարածալ թէ

Գործնական կանոնք տրամարանութեան :

որ դեղ մը մասնաւոր պարագայի մը մէջ վնաս գործէ, կամ թէ ուրիշ մասնաւոր պարագայի մը մէջ շատ օգուտ ընէ նէ, ան մէկ մասնաւոր պարագային մէջ ունեցած վնասակարութենէն կամ օգտակարութենէն անոր ընդհանուր բնութիւնը որոշելը շատ շուտ եղած եւ սուտ մակարեւութիւն մը կ'ըլլայ, եւ էապէս վերջոյնեալ իմաստակութիւնը : Այսինքն մէկ բանի մը ընդհանուր բնութիւնը անանկ պարագայէ մը որոշել կ'ըլլայ, որն որ կրնայ բոլորովին դիպուածական բան մը ըլլալ :

200 . Երկդիմի կամ հոմանուն բառեր եւ իմաստներ գործածելուն իմաստակութիւնը :

5. Իմաստակութեան դէմ պահուելու կարեւոր կանոններուն մէկն ալ աս է, որ տրամաբանողը զգուշութիւն ընելու է իր խօսքերուն մէջ ամէն բան պարզ ու որոշ ցուցնելու, եւ մասնաւորաբար երբէք պէտք չէ որ երկդիմի խօսքերու օգնութեամբ ճշմարտութիւնը ծռել ու գաղտագողի յաղթութիւն ստանայ փնարուէ : Չըկայ ուտեալ եւ կրթեալ մտքի տէր մարդ մը որ չ'զիտնայ թէ ամէն լեզուի մէջ բազմաթիւ բառեր կան, որ կերպ կերպ նշանակութիւններ ունին, ու նաեւ թէ շատ բառեր ալ կան, որ երբեմն մի եւ նոյն նշանակութիւնը կուտան, երբեմն ալ մէկմէկէ տարբեր նշանակութիւններ կ'ունենան՝ իմաստին հետ ունեցած կապացութիւններուն եւ իրենց գործածութեանը մասնաւոր պարագային նայելով : Ուստի թէ որ մէկը ուզէ նէ, աներկբայ պատահութիւն ունի հոմանուն բառեր՝ երկդիմի իմաստներ եւ շեփոթ ու մութ խօսքերու ձևեր բանեցընելու, եւ ասանկով իր խաբէութիւններովը պատճառած մառախուղովը ինքզինքը ճշմարտութեան լուսոյն թափանցող ճառագայթներէն պահպանելու :

Ճշմարտութիւնն ու արդարութիւնը իրեն մի միայն նըպատակ ընող մարդը այսպիսի վատահամբաւ ապաստարաններու չ'գիմեր : Թէ որ տրամաբանութիւն ըրած ատենը տեսնէ որ անզգուշութեամբ հոմանուն բառ մը կը գործածէ, առաջին գործը անկէ ծագելու ծուռ ըմբռնումներուն դէմն առնելը կ'ընէ : Ըն երկբայելի բառը ինչ մտքով գործածելը անանկ ճշտութեամբ կը բացատրէ, որ իմաստակութեան կամ սխալմութի տեղ մը չ'ծրգեր :

§ 201. Լոկ յաջողութեան պարագայէն գործքերու եւ անձանց վրայ գատաստան ընելուն իմաստակութիւնը :

6. Ինչուան հոս համրած իմաստակութիւններն իս տրամաբանութիւններու մէջ դրուածներէն մէկ քանին էին : Ըստնց վրայ սո իմաստակութիւնը կամ խորէութիւնն ալ կրնանք եւելցնել, որուն որ մարդիկ շատ հակամիտ են, այն է՝ լոկ յաջողութեան պարագայէն ուրիշներուն գործքերուն եւ ընութեանը վրայ աղէկ կամ գէշ գատումներ ընել : Հաջող ելք ունեցող գործքերը գրեթէ միշտ գովասանութեան նիւթ կ'ըլլան, եւ իբրեւ քաջ խորհող մտքէ յառաջ եկած բաներ կը համարին . իսկ ընդհակառակն անյաջող վախճանի հասնող գործքերն ալ չէ թէ միայն ինքնին վատ կը դատուին, այլ զանոնք խորհողներուն միտքն ալ անոնց հետ մէկտեղ կը պատարակուի : — Սակայն սո բանիս մէջ եղած իմաստակութիւնը գործքերուն ելքը ընութեան տակ ձգելուն վրայ չէ, վասն զի մարդոց գործքերուն եւ ընութիւններուն վրայ որոշմունք ըրած ատենն իս անոնք ալ իրենց արժանեղած տեղն ունենալու են . հապա մեր դիտողութիւնը շատ սահմանաւորելուն եւ լոկ յաջողութեան կամ անյաջողութեան պարագայէն աղէկ կամ գէշ գատաստան կտրելուն վրայ է :

Թէպէտ եւ մարդուս խորհուրդները ասկէ աւելի ծուղ ու շրջութիւն իմաստակութիւն չ'կայ, սակայն ասկէ աւելի ընդհանուրն ալ չ'կայ . սյնպէս որ գրեթէ առակ եղած է, թէ գիւցազն մը ոչ միայն քաջ այլ եւ քաղցրոր ըլլալու է : Ըստ համար է որ Էղեքսանդր Մեծն մականուամբ կը յիշուի, վասն զի շատ յողթութիւններ ըրած ու թագաւորութիւններ կործանած է . եւ Շուեաի թագաւոր Արտուս ԺԲ, որն որ թէպէտ եւ քաջութեան հաստատութեան եւ փառասիրութեան կողմանէ խիստ մօտ նմանութիւն ունէր Էղեքսանդրին, սակայն Փուլգովայի մահաբեր պատերազմին մէջ միտքը դրածները անկատար մնալուն՝ մոլեգնեալ կը կոչուի :

«Իրաւունքով գատաստան ըրած է, կ'ըսէ Նոնսըն Մաղիավէլին համար, Ատախլինային ու Աեսարին վրայով բոլոր յաջորդ դարերուն մէջ մարդոց ունեցած երկու տարբեր համարումներուն վրայ : Ըստնց երկուքն ալ նոյն խորհուրդը ունէին, եւ մտքերնին ան էր որ ուրիշ տէրութիւնները կործանելով իրենց իշխանութիւնը բարձրացնեն : Ըս իրենց նպատակը կատարելու համար երկուքն ալ գրեթէ մի եւ նոյն աստիճան կարողութեամբ եւ մի եւ նոյն աստիճան առաքինութեամբ ճամբայ ելան . սակայն Ատախլինայ պատերազմի դաշտին մէջ ինկաւ, իսկ Աեսար վար-

Գործնական կանոնք տրամաբանութեան :

սաղիսյէն անսահման իշխանութեամբ ետ դարձաւ . եւ ան ստե-  
նէն ինչուան հիմայ աշխարհես ամէն ինքնակալը պատիւ մը սե-  
պած է իրեն կիսարին հետ բաղդատուիլը : Իսկ կատիլինայի ա-  
նունը երբէք յիշուած չէ, եւ մատնիչներու ու խռովարարնե-  
րու պատշաճ անուն մը սեպուած է :

§ 202 . Մեր կարծիքներուն վրայ հաստատուն մնալուն վրայով :

Երբոր աս տրուած կանոններուն հետեւելով եւ առջննիս  
բերուած փաստերը զգուշութեամբ եւ անաչառութեամբ քննե-  
լով հետեւութիւններ կը հանենք, ալ ան կարծիքները պէտք  
եղածին չափ վստահութեամբ ընդունելու եւ հաստատելու ենք :  
Տկարամտութիւն է հակառակորդի մը ժպհրութիւնովը կամ  
արդար եւ սակայն մոլոր նախանձովը մեր իրաւացի կերպով հա-  
ւատացածներէն խոտորիլը եւ զանոնք մէկ կողմ ձգելը : Եսել  
չէ թէ մէկ մարդ մը ինքզինքը անսխալ համարելու է, կամ թէ  
անանկ սեպելու է թէ անհնարին է որ հաւատացած բանին վրայ  
նոր փաստ մ'ալ եւելնայ կամ արդէն քննած փաստերուն վրայ  
նոր տեսութիւն մը ունենայ : Ապա թէ իր ընդունած կարծիք-  
ներուն վրայ յարմար չափով հաստատութիւն ունենալու է որ  
կարենայ իր պատիւը պահել եւ օգտակար ըլլալ . եւ վերը են-  
թագրեալ պարագաներուն մէջ ասանկ հաստատութիւն մը ցու-  
ցընելը բոլորովին անմեղադրելի է :

Ես ալ պէտք է նկատել, թէ վերը նշանակուած կերպերով  
ունեցած դատողութիւններնիս միշտ ձգելու չենք, երբոր ետքէն  
անանկ առարկութիւններ ելլեն դէմերնիս, որոնց անմիջապէս չենք  
կրնար պատասխանել : Եսանկ դիպուածի մը հանդիպող անձը  
բանաւոր պատճառով այս խորհրդածութիւնը կրնայ ընել . Ես  
աս բանը անգամ մը զգուշութեամբ եւ անաչառութեամբ քննե-  
նցի . անոր հաստատութեան ապացոյցը թէ իր մասնաւոր առ-  
մունքներովը եւ թէ իր բազմաթիւ վերաբերութիւններովը զօրա-  
ւոր ապացոյց մըն էր : շատ մանրամասն պարագաներ հայեցողու-  
թեան առարկայ ըրի, որոնք հիմայ մտքէս ելած են . փասն որոյ  
ազատ չեմ հիմայ իմ կարծիքս փոխելու՝ աս նոր առարկութեան  
համար ինչուան որ բոլորնիւթը, աս առարկութիւնն ալ մէկտեղ  
նորէն չ'քննեմ : — Ես տրամաբանութիւնը խիստ շատ բանե-  
րու մէջ շիտակ կ'ելլէ, եւ ամենեւին ներհակութիւն մը չու-  
նի ճշմարտասիրութեան կամ հաւանելու պատրաստականու-  
թեան դէմ, որն որ միշտ ունենալու ենք :

§ 203 . Փոխանակ ճշմարտութեան՝ լոկ յաղթութեան համար վիճարանութիւն ընելը ինչ ներգործութիւն ունի մարդու մարին :

Հոս լոկ յաղթութեան համար վիճարանելուն վրայ քանի մը ծանօթութիւն ասանք՝ իբրեւ հաստատութիւն տրամաբանութեան վրայ տուած առաջին կանոննուս : Ըս նպատակով վիճարանութիւն ընող մարդը միշտ կը նայի որ գիմացիներ կերպով մը ձրգէ : () Ըրինակի աղագաւ՝ կ'ելէ այն կերպ եւ այն աստիճան հաւանականութիւն ունեցող փաստեր կը պահանջէ, որոնց անընդունակ է վիճարանութիւնը. ձեռքէն գայ նէ, դէմ խօսողին զրուցած բառերուն ու խօսքերուն ծուռ մտքեր կու տայ, անանկ իրական ճշմարտութիւններու վրայ տարակուսութիւն կը ցուցնէ, որոնց ինք ալ ամէն մարդ ալ կատարելապէս կը հաւատայ, աս ակնկալելով՝ թէ կարելի է գիմացիներ պատրաստ ուղղակի եւ հաստատուն փաստ չունենայ ան բաներուն : Մէկ խօսքով՝ իր հակառակորդը պզտիկ ձգելու համար ամէն գտած պատեհութենէն օգուտ մը հանելու կ'աշխատի, թէ եւ ըրածները արդարութեան եւ իրաւունքի վրայ ունեցած ներքին ըզգացումներուն շատ ալ դէմ գան :

Ըս ընթացքը, մէկ գի թողունք իր բարոյական յոռութիւնը, իրապէս կը խանգարէ մտքերնուս հաւատքի հիմնական պատճառներուն եւ օրէնքներուն կողմանէ ունեցած տրամադրութիւնը : Ճշմարիտ ըլլալին գիտցուած ձեռնարկութիւններու դէմ խաբէական առարկութիւններ հանելու ունակութիւնը հարկաւորապէս կը տկարացնէ այն կերպ ձեռնարկութիւններու մեր մտքին վրայ ունենալու ներգործութիւնը : Սան որոյ իրաւամբք եղած է աս ծանօթութիւնը թէ աս ունակութեան ինքզինքնին շատ տուողները վերջապէս սկեպտիկեան կ'ըլան : Ըյնչափ կը տարակուսին եւ ճշմարիտ ճանցած բաներնին երկբայելի կը ցուցնեն, որ վերջապէս մարդուս մտաւոր կազմութեան մէջ հաւատքի հաստատուն հիմունք ըլլալուն վրայ ալ կը տարակուսին, եւ ամէն բանի վրայ կ'երկբային :

Մինչեւ անգամ ճշմարտութիւնը գտնելու անկեղծ գատումն եղած ատենն ալ ստատիկ վիճարանութիւն ընելու ունակութենէն աս չար արգիւնքը յառաջ կրնայ գալ, թէ որ ստեպ ստեպ չ'իշուին մտքին հաւատքի բնութեանը եւ օրէնքներուն վրայ ունեցած տնկական սկզբունքները : Չիլինկուորդ անուն Ընգրիացի ուսումնականը աս բանիս մէկ օրինակն է : Ըս անձին իր ընգարձակ մտաւոր կարողութիւնները մի միայն վիճարանութեան

Երեւակայութիւն :

արհեստին կրթելէն վերջապէս ինչ հետեւութիւններ յառաջ գալը Վլարէնտըն կը զըուցէ : — «Չիլինկուորդ բոլոր իր պատանեկութեան ժամանակները վիճարանութիւնով անցուց, եւ այնչափ յառաջադէմ եղաւ աս բանիս մէջ, որ մէկէն վար չէր մնար վարպետութեան կողմանէ : Բայց աս կրթութեան մէջ ունեցած նշանաւոր կատարելութիւնովը մէկ անանկ տարակուսելու բնութիւն մը՝ երկմտելու ունակութիւն մը ստացաւ, որ կամաց կամաց մէկ բանի մը վրայ վստահութիւն չ'ունեցաւ : Իրեն ճանչցած ամենալաւ հակառակորդները անձամբ եւ իրենց ամենէն ընտիր գրքերը երբէք երեւելի ազդեցութիւն մը չէին կրնար ընել իր մաքին : Բոլոր իր տարակոյտները ինք իրմէն կ'ըլլէր, եւ իր տրամաբանութեան բոլոր զօրութիւնովը այնչափ կ'աշխատէր անոնց իրօք երկրայելի ըլլալը ցուցընելու, մինչեւ որ ինքն ալ առանց տարակոյտի չէր կրնար տեսնել զանոնք» :

## ԳՒՈՒԽ • ԺԳ

## ԵՐԵՒԱԿԱՅՈՒԹԻՒՆ

§ 204 • Երեւակայութիւնը իմացական գործողութիւն մըն է յաւէտ, քան թէ զգայական :

ՏՐԵՄԵՐՆՈՒԹԵԼՆ վրայ խօսքերնիս վերջացրենէնքս ետեւ քննութեան կարգը կու գայ Երեւակայութիւն, որն որ՝ տրամաբանական կարողութեան նման՝ յայտնապէս աւելի իմացականին բաժանմանը տակ կ'իյնայ, քան թէ Օգայականին : Ղշմարիտ է թէ մենք հակամիտութիւն մը ունինք սրտերնուս ներգործութիւնները երեւակայութեան ներգործութիւններուն հետ զուգորդելու, եւ անտարակոյտ պատճառ մը կայ ասանկ ընելնուս, սակայն աս բանը ըրած ատեննիս՝ չէ թէ միայն կը զուգորդենք մէկմէկու հետ սրտին ու երեւակայութեան ներգործութիւնները, այլ զանոնք իրարու հետ մէկ կ'ընենք ու կը

## Երեւակայութիւն :

շփոթենք : Սակայն իրօք էապէս տարբեր են մէկմէկէ : Արեւակայութեան գործողութիւնը, ըստ ինչեան նկատելով, զուտ իմացական գործողութիւն մըն է : Արգարեւ աս գործողութիւնը զգացողութեանց գրգռմամբ կը կենդանանայ եւ կ'արագանայ, այլ եւ այլ արտաքին ազդեցութիւններէ իր ուժգնութիւնը կ'եւելնայ կը պակսի. սակայն գործողութիւնն ինքը, ներընդունական պարագաներէ զատուած նկատելով, բոլորովին իմացական է : Այնպէս որ լաւ եւ բեղմնաւոր երեւակայութիւն ունեցողին համար իրաւամբ կրնանք ըսել թէ զօրաւոր իմացականութեան տէր է, թէ եւ կրից կողմանէ շատ անբարգայութիւն ունենայ :

§ 205 . Երեւակայութիւնը շատ մերձաւորութիւն ունի տրամաբանութեան կարողութեանը :

Արեւակայութիւնը չէ թէ միայն իմացականութեան ընդհանուր բաժանմանը տակ դասելու է, զգացողութիւններէն որոշելով. այլ պէտք է նաեւ աս ալ դիտել, որն որ կարելի է ոմանց տեսութեանը չէ հանդիպած, թէ շատ մերձաւորութիւն ունի տրամաբանութեան, մասնաւորաբար իր գործողութեան եղանակովը կամ ընթացքովը : ՏՄԼեմպերդ ասանկ ծանօթութիւն մը տուած է, որուն չափաբերութեան մէջ ունեցած մեծ հմտութիւնը կը ներէր իրեն որ ասանկ նիւթի մը վրայ դատողութիւն ընէ, թէ երկրաչափական գործողութեանց մէջ երեւակայութիւնը ի գործ կը դրուի, որն որ հաւանականաբար ճշմարիտ է երեւակայութեան մէջ բովանդակեալ մտաւոր գործողութեանց միայն մէկ երկուքին համար, ինչպէս զուգորդութեան եւ վերաբերութիւններու իմացման ներգործութիւնները : Այլ իր դիտողութիւններուն վրայ ըրած բացատրութիւններուն մէջ կ'ըսէ թէ ինչ երեւելի իմաստասէրներէն օմբրոսին քովը դրուելու ամենէն աւելի արժանաւորը Արքիմիդէս երկրաչափն է : Ճշմարիտ է թէ քանի մը երեւելի մասերու մէջ շատ մերձաւորութիւն ունին աս երկու կարողութիւնները իրարու հետ, տրամաբանութիւնն ու երեւակայութիւնը : Արկուքն ալ իրենցմէ առաջ վերացուցման զօրութեան կիրառութիւնը կը պահանջեն. երկուքին ալ գործը արդէն մտքերնուս մէջ եղած տարբերներէն նոր ձեւերով խորհուրդներու բաղադրութիւններ շինել է. երկուքն ալ ճիշդ մի եւ նոյն կերպով ի գործ կը դնեն զուգորդութեան եւ վերաբերական թելադրութեան կարողութիւնները : Իսկ սակայն երկու բանով զատ ու որոշ են իրարմէ. մէյմը որ իրենց վախճանները

տարբեր են, մէյմ'ալ որ ըստ մասին մէկմէկէ տարբեր նիւթերու վրայ կը գործեն : Տրամաբանութեան վախճանը ճշմարտութեան վրայ հմտութիւն տալն ըլլալուն համար, իր գործը քիչ կամ շատ հաւանականութիւն ունեցող իրական ճշմարտութիւններու հետ է բոլորովին : Իսկ երեւակայութեան վախճանը գլխաւորապէս հաճութիւն տալն ըլլալուն համար, ազատութիւն ունի իրական բաներու սահմանէն անդին անցնելու, եւ հետեւաբար շատ անգամ լոկ մտքի վերբմբռնումներու հետ է գործը՝ թէ իրական բանի նմանութիւն ունենան թէ չէ : Ա՛ստ այսմ մէկը ճշմարիտ եղած բաները կը ստուգէ, միւսը հնարաւոր եղածները, տրամաբանութիւնը գիտցուած եւ իրական բաներու սահմանին մէջ կը գործէ, իսկ երեւակայութեան ներգործութեանցը յատուկ տեղը կարծելի եւ ըմբռնելի բաներու սահմաններն են :

§ 206 . Երեւակայութեան կարողութեան սահմանը :

Մտաւոր կարողութեանց փիլիսոփայական կարգաւորութեանը մէջ երեւակայութեան ուրտեղ դասուելուն վրայ խօսքերնիս չերկարելով, գանք մասնաւոր կերպով երեւակայութեան ինչ ըլլալը եւ ինչ կերպով գործելը քննելու : — Արեւակայութիւնը յօդուածոյ մտաւոր գործողութիւն մըն է, որով մտքին այլ եւ այլ վերբմբռնումները իմիասին կը հիւսուին ու նոր նոր բաներ կը կազմուին : Ա՛րբմբռնումնք՝ ըստ բաւականին օրհրապէս խօսելով աւ նոր ստեղծումներուն նիւթերն են . սակայն ինչուան որ ան մտաւոր ներգործութիւնները, որոնք որ ամէն երեւակայութեան գործողութեան մէջ բովանդակեալ են, ի գործ չ'գրբուին նէ, միտքը չ'կրնար աւ վերբմբռնումներուն վրայ ընտրութիւն ընել, ընտրածները հաստատ բռնել, եւ զանոնք իրենց առանձնութեան վիճակէն հանելով ու վայելուչ կերպով իրարու հետ հիւսելով՝ գեղեցիկ շինուածներ յօրինել :

Մեր վերբմբռնումնքը կը նմանին քարահատաց անձեւ քարերուն, որոնք լոկ մէքենական աշխատութենէ քիչ մը աւելի ջանքով հասարակ շէնքերու կը փոխուին, եւ ճարտարագետութեան հանձարոյն ճիգերովը պարասներ եւ տաճարներ կը կառուցանեն : Քարահատաց անձեւ քարերը հասարակ շէնքերու փոխող անսկար զօրութիւնը, փոխաբերական կերպարանքը վրայէն վերցընենք նէ, իրաւամբ ուղիղ նմանութիւն մը կրնանք սեպել մարգոց մեծ մասին ունեցած երեւակայութեան զօրութեանը . իսկ տաճարներ եւ պարասներ կանգնեցընող ճարտարագետական հանձարը կը նմանի բանաստեղծներու՝ նկարիչներու եւ առեւտար-



## Երեւակայութիւն :

բաններու գեղեցիկ եւ վսեմ՝ երեւակայութեանը :

Արեւակայութիւնը յօդուածոյ մտաւոր գործողութիւն մըն է ըսինք, վասն զի մասնաւորաբար կը բովանդակէ իր մէջը զուգորդութեան զօրութեանը ներգործութիւնները, որոնցմով իրարու հետ կապակցելու վերըմբռնմունքը կը պատրաստէ, ու նաեւ վերարեւական թելադրութեան ներգործութիւնները, որոնցմով այն վերըմբռնմանց կապակցութիւնը կը յօրինէ :

§ 207. Երեւակայութեան ծնունդներն ստեղծած ատենը մտքին կատարած գործողութիւնը :

Արեւակայութեան ինչ բան ըլլալը աղէկ հասկընալնուս օգնութիւն մը կ'ըլլայ, թէ որ ինչ եւ իցէ տեսակ գրութիւն մը ընելու նստող մէկու մը մտքին մէջ դարձած գործողութիւնները կըրցածնուս չափ քննենք : — Սովորաբար երբոր մէկ մարդ մը բան մը գրելու ձեռք որ կը զարնէ նէ, ինչ եւ իցէ առիթով որ ըլլայ, գործը թէ շատ երեւակայութեան աշխատութիւն պահանջէ թէ քիչ, արդէն մտքին մէջ ան գրելու նիւթին վրայ ընդհանուր գաղափար մը կ'ունենայ : Ա՛ս ընդհանուր գաղափարը արդէն կայ սեպելու ենք իր մտքին մէջ : Ա՛յսպէս կը սկսի գործի յուսալով եւ բաղձալով որ առջին եղած նիւթը քիչ կամ շատ ընդարձակէ բանայ, սերտ միաւորութեամբ եւ աղէկ կարգադրութեամբ զանիկայ հիւսէ, եւ ամէն կերպով հաւանելի բան մը ընէ : Գրել ուզած նիւթը իր մտադրութիւնը քաշելուն համար ի հարկէ կրնայ զանիկայ լոկ կամեցողութիւնով ժամանակ մը աչքին առջեւը պահել, թէ եւ լոկ կամեցողութիւնով չէր կրնար զանիկայ ի սկզբան միտքը բերել :

Ա՛ս միջոցիս այլ եւ այլ վերըմբռնմունք կը ծնանին՝ մտքին մէջ զուգորդութեան հասարակ սկզբունքներովը, բայց նիւթին ընդհանուր շրջագիծը միշտ առջեւն ըլլալուն համար, բոլորն ալ քիչ կամ շատ վերարեւակութիւն կ'ունենան անոր : Այլ իրենց վերարեւակութիւն ունեցած նիւթին ընդհանուր գաղափարին մնայունութեանը ըստ մասին իրենք ալ մասնակից ըլլալով, մատենագիրը պատահութիւն կ'ունենայ անոնց մէկ քանին ընտրելու ու մէկ քանին մերժելու՝ գրելու նիւթին բնութեանը ունեցած յարմարութիւններնուս կամ անյարմարութիւններնուս համեմատ : Ան վերըմբռնումներն որ հաճելի կը թուին իրեն՝ անոնց վրայ տեսած յարմարութեանը պատճառով, անոնք միտքը կը պահէ եւ գրի կ'անցընէ, իսկ անոնք որ այսպիսի հաւանութիւն մը չեն շարժեր իր ներսիզին նէ, շուտով բոլորովին կ'անցնին կ'երթան մտքէն :

— Ով որ շարագրութիւն մը ըրած ատենը մտքին մէջ գործած գործողութիւնները խնամով կը դիտէ, հաւանականաբար աղէկ պիտի համոզուի թէ այն միջոցին եղած մտաւոր գործողութեան վրայ ըրած աս նկարագրութիւններնիս ճշմարիտին շատ մօտ է :

§ 208 . Նոյն նիւթին վրայ ուրիշ ծանօթութիւններ :

Արդ՝ երեւակայութեան գործողութիւնը, ամենապարզ եւ համառօտ խօսքով նշանակելով, աս է : Ասիս եւ առաջ մէկ նիւթի մը վրայ խորհուրդ մը կ'ունենանք : Աիւթին վրայ ունեցած սկզբնական խորհուրդներնուս կամ նպատակներնուս հետ կը-ցորդեալ բաղձանք մըն ալ կ'ըլլայ զանիկայ հետազօտելու, զարգարելու եւ ուրիշներուն քննութեանը պատրաստելու : Աս բաղձանքէն՝ ինչպէս որ ասանկ ատեններ ընդհանրապէս կ'ըլլայ՝ կամեցողութեան ներգործութիւն մը յառաջ գալով, անիկայ ընդհանուր նիւթը աչքերնուս առջին կը պահէ. եւ յայնժամ զուգորդութեան ներգործութեանցը բնական հետեւութեամբը զանազան վերրմբռնումներ կը ծագին մտքերնուս մէջ, ինչ եւ ի-ցէ կերպով ընդհանուր նիւթին հետ վերաբերութիւն ունեցող : Աս վերրմբռնումներէն մէկ քանին կ'ընտրենք՝ աչքերնուս առջին եղող նպատակին հետ ունեցած յարմարութիւններնուն համար, մէկ քանին ալ կը մերժենք՝ աս հարկաւոր պատշաճութիւնը վրանին չ'տեսնելնուս պատճառով :

Վիւրութեան եւ համառօտութեան համար՝ մօքին աս յօդուածոյ հանգամանքին կամ հանգամանքներուն կ'ըսենք Արեւ-տայանութիւն : Հարկաւոր է մէկ բառ մը ունենալ աս յօդուածոյ իմացական գործողութիւնը ցուցընելու համար. չէ նէ հասարակ խօսակցութեան մէջ աս բանը յիշել պէտք եղած ատենը, ինչպէս որ շատ անգամ առիթ կ'ունենանք յիշելու, հարկադրէինք պիտի շրջաբանութիւնով ալ չէ նէ՝ գոնէ խել մը աւելորդ բառերով մտքերնիս հասկըցընել : Սակայն քանի որ աս բառը գօրծածելը մեղի դիւրին գտեր ենք նէ, պէտք է որ ասոր ալ զգուշութիւն ընենք եւ ինքզինքնիս չ'խաբենք ու միշտ յիշենք՝ թէ աս անունը վերը ըսած բոլոր գործողութիւններնիս ինքնիրենը կատարող մէկ անկախ եւ սկզբնական կարողութիւն մը չ'ցուցընէր, այլ խել մը մտաւոր կարողութեանց յօդուածոյ եւ միացեալ գործողութիւնը կը նշանակէ :

## § 209 • Բիտին գրութիւններէն բայտարութիւն :

Բիտ (Ճառ գ, գԼ, գ) մատենագրի մը շարունակ իր մտքէն անցնող վերըմբռնումներուն վրայ հետեւեալ նկարագրութիւնը կ'ընէ : — Երեւակայութիւն ընելու ատեննիս խուռն բազմութեամբ մտքերնուս մէջ ծագող խորհուրդներուն վրայ բրած ընտրութիւննիս իշխանազունի մը իրեն առաւօտեան այցելուները բարեւելուն կը նմանի : Ամեն ալ իր մտադրութեանը արժանի ըլլալ կը բաղձան : Իշխանազունը կ'անցնի մէջերնուն, մէկուն խոնարհութեան նշան մը ցուցնելով, միւսին շնորհական ժպիտ մը, ուրիշի մըն ալ կարճ բան մը հարցնելով, եւ չորրորդի մը հետ ալ մասնաւոր խօսակցութիւն մը ընելով. սակայն եկողներուն մեծագոյն մասը մասնաւոր մտադրութեան նշան մը չեն ընդունիր, այլ ինտոր որ եկան նէ անանկ կ'երթան : Երաւ է որ հոն նէրկայ չէրդնէրուն մտադրութեան նշան մը չ'կրնար ցուցնել. բայց առջեւը բաւական անձինք կ'ունենայ ընտրութիւն եւ որոշմունք ընելու :

## § 210 • Ի՞նչ վերըմբռնումը միւսէն աւելի ընտրելուն հիմնական պատճառները :

Ի վերջոյ աս խնդիրը կը ծագի, թէ Ի՞նչ սկզբունքով մարդուս միտքը կը կարողանայ որոշել ան համաձայնութիւնը եւ անհամաձայնութիւնը, ան յարմարութիւնը եւ անյարմարութիւնը, որուն համեմատ որ ընտրութիւն կ'ընէ առջեւն եղած այլ եւ այլ վերըմբռնումներուն վրայ : Ղշմարիտ է թէ այլ եւ այլ հանգամանքներ երեւակայութեան ժամանակը կ'անցնին մտքէն, կամ ուրիշ խօսքով՝ զանազան վերըմբռնումներ եւ գաղափարներ յաջորդաբար մտքին տեսութեանը առջեւը կու գան. սակայն կը մնայ աս խնդիրը, թէ ինչո՞ւ համար ան վերըմբռնմանց բազմութեանը մէջ մէկ հատը միւսէն աւելի ընտրութեան արժանաւոր կը սեպուի կամ կը ճանչցուի, կամ ինչ պատճառաւ այսինչ երկու գաղափարները այնինչ երկու գաղափարներէն աւելի յարմար կը սեպուին մէկմէկու հետ յօդաւորուելու :

Ասոր պատասխանն աս է, թէ աս բանը երկրորդական օրէնքէ մը չէ, այլ յարմարութեան կամ անյարմարութեան անմիջական եւ սկզբնական թելադրութիւնովը կ'ըլլայ : Ան վերըմբռնումները, որոնք որ այս իրերու առնչութիւնները զգա-

Երեւակայութիւն :

ցող սկզբնական կարողութիւնովն յարմար կը գտնենք երեւակայութեան նիւթերնուս ընդհանուր ըմբռնմանը, անոնք մտքերնուս մէջ կը պահենք : Ըն գաղափարներն ալ, որոնք որ աս նոյն կարողութիւնովը կը զգանք թէ իրարու հետ մասնաւոր յարմարութիւն մը ունին, անոնք ալ մէկմէկու հետ կը յօգաւորենք, եւ նոր ու աւելի գեղեցիկ բաղադրութիւններ կը շինենք : Իսկ ան վերըմբռնումները որոնց վրայ որ այսպիսի յարմարութիւններ կամ անհամաձայնութիւններ չենք տեսնուի, անտես կ'առնենք, եւ շուտով մտքերնէս կ'ելլեն անյայտ կ'ըլլան : Թէպէտ եւ կ'երեւնայ թէ աս գաղափարներուն մտքերնիս մնալն ալ մտքերնէս ելլել անյայտ ըլլալն ալ ուղղակի կամեցողութեան կիրառութիւնովը չըլլար : Ի այց աս հաւանութեան եւ անհաւանութեան կենդանի զգացողութեանը վրայ, աս խիստ արագ իմացմանը վրայ, որով որ մտքերնուս մէջ ծագող գաղափարներուն մէկմէկու հետ եւ երեւակայութեան առարկային ընդհանուր վերըմբռնմանը հետ ունեցած յարմարութիւններնիս կամ անյարմարութիւններնիս կ'որոշենք, ուրիշ բան չենք կրնար ըսել, բայց միայն աս թէ մեր իմացական կարողութիւններուն Մըրարիչը հաճեր է մեզ աս կարողութիւնովը ստեղծելու : Մեր բնութիւնը ասանկ կազմուած է. ասիկայ մեր իմացականին ներդործութեանցը մէկ տարրն է. առանց ասոր ալ բնական էակ կրնայինք ըլլալ, սակայն թէ արամաբանական կարողութենէ եւ թէ երեւակայութենէ զուրկ մնալով :

§ 211 . Նոյն նիւթին վրայ բացատրութիւն Միլտովնէն

Ի սաճներնիս թերեւս աւելի կրնանք պարզել Միլտովնի Ազեմայ Ղարախտին գեղեցիկ ստորագրութիւնը ըրած ատենը ինչ կերպով յառաջ երթալուն վրայ քիչ մը խորհելով : Կախ եւ առաջ երեւակայած նիւթին վրայ ընդհանուր ըմբռնում մը ունեցած է. եւ որովհետեւ նիւթը իր զգացումներուն շատ հաճելի եկած է, վասն որոյ ատ հաճութեան զգացումը նիւթին ընդհանուր ըմբռնումը աչքին առջեւը հաստատուն պահած է : Թէ որ ունեցած հաճութեան զգացումը հերիք չէր եղած ընդհանուր նիւթը մտքին տեսութեանը առջեւը յարաժամ ներկայ պահելու նէ, ուղղակի եւ որոշ կամեցողութեան ներդործութիւն մըն ալ վրան եւեկընելով կարող էր աս բանը կատարել : Հայնժամ զուգորդութեան սկզբունքները, որոնք միշտ գործելու վրայ են, աչքին առջեւը եղող ընդհա-

## Երեւակայութիւն :

նոր ըմբռնմանը ինչ եւ իցէ կերպով վերաբերութիւն մը ունեցող տեսակ տեսակ վերըմբռնումներ բերած են միտքը . ինչպէս՝ Ժայռերու, անտառներու, գետերու, կանաչ տերեւներու, ոսկեգոյն պտուղներու վերըմբռնումներ, եւ այլն :

Ըսկէ ետեւ վերաբերութիւններ զգացող ան կարողութիւնը ի գործ դրած է, որուն կ'ըսենք Վաստողութիւն, եւ աւելի տիրապէս՝ Վերաբերական լծելագրութիւն : Ըս կարողութիւնով իսկոյն որոշած է, թէ արդեօք միտքն եկող վերըմբռնումները յօրինելու նկարագրութեանը ընդհանուր վախճանին եւ իրարու հետ յարմարութիւն՝ պատշաճութիւն ունին, եւ թէ երբոր մէկ տեղ բերուին մէկ պատկեր մը շինուին նէ՝ հաճելի երեւոյթ մը պիտի ունենան : Ըն գաղափարներն որ ամենպատշաճ դատած է նէ, մէկմէկու հետ հիւսած, եւ իբրեւ ստեղծելու բանին մասունքը՝ զանոնք հաստատ միտքը պահած է ան նոյն հաճութեան զգացմանը եւ կամական ներգործութեանցը ձեռքովը, որոնք որ ի սկզբան նիւթին ընդհանուր ըմբռնմանը վրայ ի գործ դրած է : Իսկ անոնք, որոնց վրայ որ աս պատշաճութիւնը տեսած չէ նէ, անմիջապէս աներեւոյթ եղած են մտքէն : Ըս կերպով երեւակայական դրախտ մը ծագած է մտքին մէջ, այնչափ բազմադիմի եւ չքնաղ գեղեցկութիւններով զարդարուած, եւ ամէն կերպով այնպէս հաճելի եւ կատարեալ, որուն իրականը բնութեան մէջ բնաւ չ'կրնար ըլլալ :

§ 213 . Երեւակայութեան ծնունդները բոլորովին կամուր չեն :

Երեւակայութեան վրայ ըրած բացատրութիւններնէս պէտք է հասկընալ, թէ աս կարողութեան ներգործութիւնը սահմանի եւ չափի տակ է : Ըն կարծիքը, մինչեւ անգամ ամենապատրաստական եւ բեղմնաւոր երեւակայութեան տէր եղող մարդոց համար թող ըլլայ, թէ ուղած ատեննին՝ լոկ կամեցողութիւնով՝ նոր նոր երեւակայութեան ծնունդներ կրնան ստեղծել, որչափ ընդարձակ տարածուած է ալ նէ, անհիմն կ'երեւնայ : Մտքերնիս բացատրելու համար՝ աս ընդհանուր կարծիքին համեմատ ենթադրենք թէ մէկը կ'ուզէ հալած պըղինձէ ծով մը երեւակայել : Ըսիկայ՝ կրնայ տեսնել մէկ մարդ մը որ՝ ծաղրական եւ անիմաստ խօսք մըն է . վասն զի երեւակայել ուզած բանը, նոյն իսկ առաջարկութենէն յայտնի է թէ՛ արդէն մտքին մէջն է : Ինչ բան որ մէկ մարդ մը կ'ուզէ երեւակայել կամ ինչ բան որ երեւակայել կ'ուզեմ՝ կ'ըսէ նէ մէկը, ան բանը արդէն երեւակայած է . եւ ասկէ կը հետեւի՝ թէ բու-

Երեւակայութիւն :

լորովին կամեցողութենէ յառաջ եկած երեւակայութիւն չըլլար : Այնպէս որ մաքին ճարտարութեան զօրութիւններուն գործքերը՝ ինչուան խիստ բարձրագոյնները՝ պէտք է որ ուրիշ կերպով մը յառաջ եկած ըլլան, թէպէտ եւ կամքին անուղղակի եւ ստորակարգեալ ներգործութիւններուն ըրած ազդեցութիւնն ալ շատ մեծ կրնայ ըլլալ :

Աս բանիս վրայ բանի մը գործնական դիտողութիւններ ալ կրնանք ընել : Ամենէն երեւելի մաքի տէր (գրագիտութեամբ երեւելի մաքի տէր) մարդոց մտաւոր ճարտարութիւնները երեւակայութեան ներգործութիւններուն մէջ եղած սկզբունքներու վր սահմանաւորուած են : ճարտարամտութիւնը՝ որչափ մեծ զօրութեան տէր որ ըլլայ ալ նէ՝ օրէնքներ ունի : Այս երեւակայութիւնով յառաջ եկած ամէն երեւելի գործքի համար ճշմարիտ է ասիկայ, թէ այդ կարողութեան մէկ ինքնակամ եւ անմեկնելի կիրառութիւնովը յառաջ եկած չէ, այլ անոր ներգործութիւնները շարժող եւ կանոնաւորող բազմութիւ պարագաներէ. ինչպէս՝ կենաց հանգամանքներ, մանկական դաստիարակութիւն, ընտանեկան ունակութիւններ, ընկերներ, ընթերցմունք, տեսարան, կրօնք եւ տեղական աւելորդապաշտութեանց եւ աւանդական դիպուածներու ազդեցութիւն : Ասոնք երկրիս երեսը ինչող անձրեւին եւ արեւին նման են, որ առանց անոնց երկիրը իր սկզբնական անբերութեան վիճակին մէջ կը մնայ, ամենեւին կենդանութեան եւ գեղեցկութեան նշան մը չ'ցուցնելով : Ստեղծանելու զօրութեան կողմանէ Յօհաննէս Պրնիան անտարակոյս Սալգէր Սքողին հաւասար կու գայ : Սակայն ոչ Սքող իր կենացը ան հանգամանքներուն մէջ, եւ ան իր ստացած խորհրդոյ եւ զգացման ունակութիւնովը կարող էր ճամբորդութիւնը շինել, եւ ոչ Պրնիան կարող էր Սիտ Լութիանու Սիրտ ըսուած գործը յօրինել. ոչ թէ Սքոթի կամ Պրնիանի երեւակայութիւնը պէտք եղած զօրութենէն զուրկ ըլլալուն համար, այլ միայն աս պատճառաւ, որ երեւակայութեան ծնունդները միշտ պարագաներու կը նային, եւ լոկ ուզելով մը յառաջ չեն գար :

§ 213 . Նախընթաց հատուածին վրայ բացատրութիւն :

Դիւրին եւ հետաքրքրական բան մը կ'ըլլար մաքին գործողութիւններուն վրայ եղած աս ճշմարտութիւնը բացատրել այնպիսի մարդոց անձնական պատմութիւնները յառաջ բերելով, որոնք որ երեւելի գրագիտական գործքերու հեղինակներ եղած են : Իսկ ասիկայ մեր նպատակին անյարմար գալուն համար,

Երեւակայութիւն :

միայն մէկ օրինակ մը պիտի յիշենք : — Սուր իր Լորտ Պայրընի Սարուցը մէջ կը պատմէ թէ օր մը զինքը տեսեր է որ Լեւակայութեան պատմութիւնը կը կարգայ, որ Սիլանտին մէկ առասպելաբանութիւնն է : Լուսին միջոցին անոր ըրած մէկ քանի խօսքերէն ինք աս կարծիքը կ'ընէ, թէ Պայրըն իր երեւակայութեան զօրութիւնները գրգռելու եւ անոնց թելադրութիւններ տալու համար ան գործը կը կարգար : Յետոյ աս ալ վրայ կ'ելեւելընէ . « Կանծի ասանկ կ'երեւնայ որ ինքը (Պայրըն) սովորութիւն ունէր՝ բան մը շարադրած ատենը իր ոգին գրգռելու համար՝ ծոյն նիւթին վրայ կամ նոյն գաղափարովը շինուած ուրիշ գործքեր կարգալ, որոնցմէ՝ այն ընթերցման ժամանակը իր երեւակայութեան ընդունած մէկ ամենափոքր՝ հարեւանցի ակնարկութիւնը բաւական կ'ըլլար իր մտքին մէջ այնպիսի խորհուրդներ ծագեցընելու, որոնք՝ եթէ մէկ այն փոքրիկ կայծը չըլլար նէ՝ բնաւ արթննալու չէին » :

Ըս բանը երեւելի բանաստեղծի մը համար ըսուած է : « Լրակարչութիւնն ալ բանաստեղծութեան նման արհեստ մըն է . երկուքն ալ երեւակայութիւնով կ'ըլլան : Էտեւաբար՝ ըրած ծանօթութիւններնիս նկարչութեան ալ կը վերաբերին, եւ ստուգիւ ան ամէն արհեստներուն, որոնք էապէս կախում ունին երեւակայութեան կարողութենէն : « Նարագիտութիւնը, կ'ըսէ Յետու Ուէյնալտոս, ուշիմութեան մէկ մեծ նշանն է . սակայն թէ որ փորձառութեան նայելու ըլլանք նէ, կը տեսնենք որ ուրիշներուն հնարքներուն հմուտ ըլլալով է որ հնարել կը սորվինք, ինչպէս որ ուրիշներուն խորհուրդները կարգալով խորհիլ կը սորվինք : Պարսպ տեղը կ'աշխատին բանաստեղծք եւ նկարիչք բան հնարելու, առանց այնպիսի նիւթերու, որոնց վրայ միտքը գործելով միայն բան կրնայ ծնանիլ : Ուշիմէն բան յառաջ չ'գար : Ըստ ըստ կը կարծուի թէ իր ատենի բոլոր ուսմունքներուն հմուտ էր . եւ Սիլայէլ Լեւակայութիւնն ու Սաֆայէլին համար ստոյգ գիտենք որ իրենց նախորդներուն գործքերուն մէջ տեսնուած բոլոր արհեստի վարպետութիւնները դիտած սորված էին » :

§ 214 . Երեւակայութեան կարողութեանը օգտակարութեանը վրայ :

Ինչուան հոս երեւակայութեան ինչ բան ըլլալը բացատրելու աշխատեցանք . եւ հիմայ աս ընդհանուր գիտողութիւնը ձգելով՝ քանի մը ծանօթութիւն ալ անոր օգտակարութեանը վրայ տանք : Ըս բանը հարկաւոր կ'երեւնայ, վասն զի ոմանք կան որ աս կարողութեան օգտակարութիւնը փուճը հանելու յօժարութիւն մը

կը ցուցնեն : Ըստնք յիշողութեան՝ դատողութեան եւ տրամաբանութեան կրթութեանը վրայ մեծ եռանդով գովասանութիւններ կ'ընեն, իսկ երեւակայութեան վրայ անանկ ցուրտ ու կասկածոտ աչքով մը կը նային որ կարծես թէ աս կարողութեան կրթութիւնը յաւէտ զանց առնելու յորդորանք տալ կ'ուզեն : Սակայն հիմնական պատճառներ ունինք աս բանը գիտնալու, թէ կատարեալ մտաւօր կրթութեան եւ հասունութեան տենչ ունեցող մէկու մը աս կարողութեան կրթութիւնը զանց ընելը թէ նոյն իսկ մաքին բնութենէն ելած զիտողութիւններով եւ թէ աս ընթացքը բռնելէն յառաջ եկած գործնական արդիւնքներով պահարակելի է :

Երեւակայութեան օգտակարութեանը վրայ խօսած ատեննիս՝ շատ բնական մտածութիւն մըն է աս, թէ Ըստուած որ աս կարողութիւնը մարդուս տուեր է նէ, անշուշտ նպատակ մը ունեցած ըլլալու է, վասն զի առ հասարակ կը գտնենք որ պարապ տեղը բան մը ըրած չունի : Իսկ թէ որ ասոր ի գործ դրուիլ՝ գործունեայ կարողութիւն մը ըլլալ՝ եւ յարմար աստիճանաւ կրթուիլ պէտք ըլլալը Երարչին զիտաւորութեանը մէջ չըլլար նէ, ինչ նպատակ հնար էր որ ունենար : Երգ՝ եթէ այնչափ ստիպուած ենք աս հետեւութիւնը ընդունելու, թէ աս կարողութիւնը մեր մէջը գործունեայ զօրութիւն մը ըլլալու համար տրուած է, ուրեմն պէտք է որ աս կարծիքն ալ ընդունենք, թէ անօր կիրառութիւնը օգտակար նպատակ մը յառաջ բերելու համար եղած ըլլալու է անշուշտ : Եւ յիրաւի միշտ օգտակար արդիւնքներ յառաջ եկած են ասկէ, թէպէտ երբեմն ալ չարաչար գործածուած է :

Երեւակայութեան կարողութեանը օգտակարութիւնը տեղ մը չկայ որ այնչափ ազէկ տեսնուի, ինչպէս Հին Ատակարանի Մարգարէներուն վրայ : Ըս մեծարու մատենագիրները ներշնչեալ էին որ ըսուի նէ, տակաւին աս ճշմարիտ կը մնայ՝ թէ ներշնչելութեան ալ մասնաւօր կերպով պատիւ ըրած իմացական կարողութիւնն աս էր, որն որ այնչափ գործածեց : Եւ ամեն քաղաքավարեալ ազգաց պարծանքն եղած որչափ յիշատակարաններ կան նկարչութեան՝ ճարտարապետութեան՝ քանդակագործութեան եւ բանաստեղծութեան, որոնցմով երեւակայութիւնը չէ թէ միայն զանոնք ունեցող ազգերուն փառքն եւելցուցած է, այլ միանգամայն երջանկութիւնն ալ : Եսիկայ մեր ժամերը զուարթութեամբ անցընել կու տայ մեզի, աչքերնուս առջիւր նկարած նոր նոր կենաց հանգամանքներովը, եւ մարդուս բնութեանը վրայ մեզի ցուցուցած նոր նոր տեսութիւններովը, ստիկայ սրտերնուս շատ սխրութիւնները եւ տառա,



## Երեւակայութիւն :

պանքները կը փարատէ, կամ ուրիշներուն կրած աւելի մեծ թշուառութեանց տեսարանները աչքերնուս առջին բերելով, եւ կամ յիշողութիւննիս իր դիւթական հեշտութիւններովը գինովցընելով, եւ այսպէս ինքզինքնիս մոռցընել տալով. շատ բարի առաջադրութիւններնուս քաջալերութիւն տառդն աս է, եւ ասիկայ իբր թէ մէկ նոր եւ ընդարձակագոյն հորիզոն մը ձգելով մեր մտքին շուրջը, հոգինիս բարձրագոյն ըմբռնումներով եւ բարձրագոյն յոյսերով կը լեցնէ: Հոգին ինք իր անմահական վիճակը զգալով՝ ան զինքը փակող կապանքները խզել անդին անցնելու աշխատած ատենը, երեւակայութեան ստեղծած նոր եւ բարձր արարչութիւններն են որ անոնց մէջ պտտտելով կը բերկրի եւ կը ցնծայ՝ զանոնք տիրապէս իրեն յարմար բնակութիւններ գտնելով: Ահա խիստ հարեւանցի քննութեամբ մը այսպիսի դիտողութիւններ յստակ կերպով կը բացուին աչքերնուս առջին աս նիւթիս վրայ. եւ ուստի օտար բան մը չէ Ատտիզընի պէս երեւելի հեղինակի մը գրութիւններուն մէջ ասանկ խօսք մը գտնուիլը. «Արթեալ երեւակայութեան տէր եղող մարդը տեսակ մը որպիսութիւն կ'ունենայ իր ամէն տեսած բաներուն մէջ, եւ բընութեան ամենակոշտ ու անմշակ վայրերէն կը կարողանայ երջանկութիւն քաղելու. անանկ որ աշխարհիս վրայ որպէս թէ ուրիշ աչքով մը կը նայի, եւ այնպիսի զմայլելի տեսարաններ կը գտնէ անոր մէջ, որոնք ընդհանուրին աչքէն ծածկուած են բոլորովին»:

§ 215. Երեւակայութեան օգտակարութիւնը՝ տրամաբանութեան մէջ :

Արեւակայութեան օգտակարութեանը վրայ խօսած ատեն նիս մէկ հարկաւոր դիտողութեան կէտ մը կայ զանց չըլուելու. այսինքն է երեւակայութեան ուրիշ իմացական կարողութեանց հետ ունեցած վերաբերութիւնը: Այս միւս վերաբերութիւնները մէկ դի թողելով՝ աս ծանօթութիւնը ընելու յայտնապէս հիմնական պատճառ ունինք, թէ աշխոյժ եւ բարեկիրթ երեւակայութիւնը մեծ օգնութիւն կ'ընէ տրամաբանութեան պատրաստականութեանը՝ յստակութեանը եւ յաջողակութեանը: Պէտք է դիտել թէ ըրած ծանօթութիւննիս երեւակայութիւնը աղէկ կրթուած ենթադրելով է, որ ըսել է թէ պէտք եղած իշխանութեան տակ ենթադրուած է. վասնզի զի ասանկ որ չըլլայ նէ, օգնութիւն ընելու տեղը՝ յաւէտ շփոթութիւն եւ դժուարութիւն կը պատճառէ:

Երեւակայութիւն :

(Օրինակ առնենք երկու հոգի, որոնց մէկը իր տրամաբանութեան կարողութիւնը երեւակայութենէն զատելով կրթած ըլլայ, այսինքն առանց երեւակայութեան կարողութիւնն ալ անոր հետ մէկ տեղ կրթելու: Եթէ թաղրենք թէ կարող եւ բարձր տրամաբանողի անուն ստացած ըլլայ կատարեալ արժանաւորութեամբ, եւ սակայն շատ հարեւանցի դիտողութեամբ մը կը յայտնուի որ մէկ թերութիւն մը՝ մէկ կողմանէ տկարութիւն մը կայ վրան, թէ իր ձեռնարկութեան շարադրութեանը մէջ յայտնի պակասութիւն կայ ընտրողութեան եւ կենդանութեան: Չկրնար դիւրութեամբ որոշել թէ իր ունկընդիւրներուն մտքին վիճակը ինչ համեմատութիւն ունի ցուցընելու ճշմարտութիւններուն հետ, եւ ուստի զանոնք շատ համբերութիւն ընելու հարկադրելով, ինք ալ մեծ աշխատութեամբ եւ ճշնութեամբ ինչ բան որ հանդիպի քննութեան առարկայ կ'ընէ, եւ ամէն բանի գրեթէ մի եւ նոյն հաւասար չափով մտադրութիւնը կ'ուղղէ: Եւսոր համար է որ գիտնական՝ ժըրաջան եւ մինչեւ անգամ ձեռնարկութեան մէջ յաջողած ծանցուած շատ մարդիկ աս անունն ալ կ'ունենան, որ ամենեւին նախանձելի անուն չէ, թէ խօսքերնին ծանրատաղտուկ ձանձրալի եւ անխորժ է:

Կարձընենք աչքերնիս քիչ մ'ալ անանկ մէկու մը, որ չէ թէ միայն դատողութեան մէջ մեծ կարողութեան տէր ըլլայ, այլ իր երեւակայութիւնն ալ կրթած, եւ զանիկայ պէտք եղածին պէս իշխողութեան տակ առած: Եսանկը արագութեամբ աչքը կրնայ պտտցընել ձեռնարկութեան մէկ ծայրէն մէկալ ծայրը, թէ եւ շատ ընդարձակ ըլլայ, եւ անմիջապէս կ'իմանայ թէ որ ճշմարտութիւնները հարկաւոր է ցուցընել, եւ որոնք լուրջ, որոնք երեւելի են, եւ որոնք ստորին, որոնք դիւրին պիտի հասկըցուին եւ ախորժելի պիտի ըլլան, եւ որոնք դժուարաւ պիտի հասկըցուին, եւ հետաքրքրական չըլլալովն իրենց արժէքը պիտի կորսնցընեն: Եւ աս բանիս մէջ ունեցած աս յաջողութիւնը ան նոյն սկզբունքներովը եւ ան նոյն մտաւոր կրթութեան արդիւնքովն է, որով որ նկարիչը՝ ճարտարագետը՝ քանդակագործը եւ բանաստեղծը շքեղ եւ գեղեցիկ արարուածներ կրնե՞րկայացընեն մարդոց առջեւը, ամէն մէկը իր արհեստին մէջ: Երած տրամաբանութեան բոլոր մասերը իրարու հետ անուշ կապակցութիւն մը կ'ունենան, մէկ մասը միւսը որպէս թէ գրկած կ'երեւնայ, եւ անկէ կը հանէ մէկ զօրաւոր եւ ազդու հետեւութիւն մը, ամէն վայելուչ զարդերով իր ուժը եւեցած, եւ ոչ մէկ անդէպ աւելորդ մասամբ մը տկարացած, որն որ անտարակոյս Խօսքունի պատկերը նը-

Անկարգ ներգործութիւնք իմացականութեան :

կարող, Յունաստանու բլուրները արձաններով եւ տաճարներով պսակող, եւ հռչակաւոր բանաստեղծներու գործքերուն մէջ կենդանի փայլող երեւակայութեան ըստ մասին նման կատարեալ երեւակայութենէ մը յառաջ եկած կրնայ ըլլալ : Տրամաբանութեան բարձր արդիւնքները երեւակայութեան բարձր արդիւնքներուն հետ կապակցող վիճաբանը ինք իր փառաւոր վերըմբանմանց լոյսը ճշմարտութեան ճառագայթներուն վրայ կը ցոլացընէ, այնպէս որ լոյս լոյսի վրայ եւեցած՝ կրկին զօրաւոր լոյս մը կը շողայ, եւ յառաջ բերած գործը Տայտնութեան ըսած արեւին մէջ կեցող լուսաւոր հրեշտակը կը դառնայ :



ԳԼՈՒԽ . ԺԳ

ԱՆԿԱՐԳ ՆԵՐԳՈՐԾՈՒԹԻՒՆՔ ԻՄԱՑԱԿԱՆՈՒԹԵԱՆ

(Ա.) ԳՐԳԹԵԱԼ ՎԵՐԸՄԲՈՒՄՈՒՆՔ ԿԱՄ ԱՌ ԱՉՕՔ ՏԵՍԻԼՔ

§ 216 . Անկարգ իմացական ներգործութեանց մարմինին հետ կապակցութիւն ունենալուն վրայ :

ՀԱՍ Իմացականութեան վրայ՝ իր ներգործութիւնները իրենց սովորական եւ կանոնաւոր ընթացքովը նկատելով՝ ընելութենութիւններնուս վախճանին հասանք . եւ հիմայ անոր սովորական սկզբունքներուն աւրուելովը պատահած իմացական հանգամանքներէն ալ մէկ քանի օրինակ տալով՝ մտքին սաբաժանմունքին վրայ խօսքերնիս վերջացընենք : Մտքին ներգործութեանը վրայ առաջուրնէ ինչ կարծիք որ ձեւացընելու հակամիտած ըլլանք, ասիկայ ցաւալի փորձառութեամբ եւ դիտողութիւնով եւեւ եւելք հաստատուած ճշմարտութիւն մըն

Անկարգ ներգործութիւնք իմացականութեան :

է, թէ անոր գործողութիւնները միշտ միօրինակ չեն ըլլար. եւ թէ երբեմն, ինչպէս որ առիթ պիտի ունենանք տեսնելու, աղէ-ոսրի կերպով բոլորովին կը խտտորին զիրենք սովորաբար կանոնաւորող օրէնքներէն: Ըստ արտուղութիւններուն պատճառները միշտ եւ ամէն պարագայի մէջ զիւրին չէ մեկնել. սակայն աս աղէկ հասկըցուած է որ շատ անգամ մարմինի խնդարումներու եւ արտաժէտութիւններու հետ կապակցած կ'ըլլան:

Սարգուս միտքը՝ պէտք է յիշել որ՝ իրեք բնութիւն կամ բաժանմունք ունի, Իմացականութիւն, Օգացողութիւնք, եւ Կամք: Կամքին ներգործութիւնը Օգացողութեանց նախընթաց ներգործութենէն կախեալ է. եւ զգացողութեանց ներգործութիւնն ալ Իմացականին նախընթաց ներգործութեանը վերայ հիմնեալ է: Իմացողութեան կամ Հասողութեան ներգործութիւնը երկու կերպ է, Արտաքին եւ՝ Կերքին: Արտաքին առաջները տեղ մը աշխատեցանք ցուցնելու, թէ արտաքին իմացականութեան բացուիլը՝ ինչպէս որ յայտնապէս բնական կարգով առաջ է նէ ներքինէն՝ նոյնպէս ժամանակով ալ առաջ է: Հոս տեղէն կը սկսի մտքին ներգործութեան ըսկիզբը. գանք որ աս ալ աղէկ հասկըցուած է, եւ բոլորովին անուրանալի կ'երեւայ, թէ ինչ ներգործութիւն որ կ'ըլլայ նէ հոս, մարմինին ներգործութեանը հետ մէկտեղ կ'ըլլայ: Արտաքին իմացականութիւնը՝ առանց մարմինին զգայարանքներուն վրայ նախընթաց փոփոխութիւններ ըլլալու՝ ներգործութիւն չունենար, եւ չ'կրնար ալ ունենալ, թէպէտ եւ միտքը այնպէս կազմուած է, որ իր բոլոր միւս մասերուն շարժումը աս մասին շարժումէն կախում ունի: Ըստ համար Իմացականութեան մէջ ընդհանրապէս, եւ մասնաւորաբար արտաքին իմացականութեան մէջ անկարգ ներգործութիւններ կը պատահին նէ, ընդհանուր բան մըն է աս որ՝ մարմինին արամագրութեանը մէջ եղած մէկ անկարգութեան մը հետ կապակցած կ'ըլլան:

§ 217. Գրգռեալ վերաբնմանց կամ առաջը տեսիլներու վրայ ընդհանրապէս:

Անկարգ իմացական ներգործութեանց մարմինի անկարգութիւններու հետ մօտ կապակցութիւն ունենալուն իրական ճշմարտութիւնը օգնութիւն պիտի ըլլայ մեզի Գրգռեալ Սկզբնական Բնութեանց կամ Առաջ Տեսիլներու հետաքրքրական նիւթին վրայ ընելու բացատրութիւններնուս մէջ: Այլ երբմունքներ,

Գրգռեալ վերըմբռնումը կամ Ա. աջօք Տեսիլք :

որոնց վրայ աս գլխուս մէջ ալ քննութիւն պիտի ընենք, բազակայ իմացման առարկաներու վրայ ունեցած գաղափարներնիս են: Աս գաղափարները իրենց սովորական ձեւովը ինչ վիճակի մէջ կ'ըլլան նէ, անիկայ աս գործիս նախընթաց գլուխներուն մէկուն մէջ քննեցինք: (Տես գլուխ Բ, մասն Ը:) Սակայն ասոնք զօրութիւնով այլ եւ այլ աստիճան կ'ըլլան, եւ ասոր համար իրենց ընդունակ եղած վերջին աստիճան սաստկութեանը հասածները կ'ըսուին կենդանացեալ կամ Վարդուեալ վերըմբռնումը: Աս աջօք Տեսիլք կամ Արեւմուտք ալ կը կոչուին, մասնաւորաբար երբոր տեսութեան զգայարանքէն ծագած ըլլան նէ:

Սատի առ աջօք տեսիլքները այնպիսի երեւմունքներ են, որոնք արտաքին եւ իրական բաներու պէս կը տեսնուին, եւ սակայն իրօք ներքին եւ մտաւոր հանքամանքներ են. լոկ կենդանի կամ սաստիկ վերըմբռնումներ են: Աստ այսմ՝ չէ թէ միայն հրեշտակներու եւ հրաժարեալ հոգիներու առ աջօք տեսիլքներ կ'ըլլան, որ ասոնք աչքի երեւոյթներու պատմութեան մէջ բոլոր ուրիշ տեսութեան առարկաներէ աւելի երեւելիներն են. այլ նաեւ գաշտավայրներու, լեռներու, գետերու գահալէժներու, խնձոյքներու, զօրքերու, թաղման հանդէսներու, տաճարներու, մէկ խօսքով՝ ամէն կերպ տեսողական իմացումներու, որոնք որ կրնանք միտք բերել նէ: — Թէպէտ եւ լսողութեան եւ շօշափման եւ քիչ անգամ ուրիշ զգայարանքներու ալ գրգռեալ վերըմբռնումներ կ'ըլլան, սակայն տեսութեան երեւմունքները՝ աս զգայարանքին մեծ կարեւորութեանը եւ անոր հետ կապակցած խաբէութեանց յաճախութեանը համար՝ մասնաւոր մտադրութեան արժան են:

§ 218 . Տեսութեան քիչ տեսողութիւն ունեցող գրգռեալ վերըմբռնումնորը վրայ :

Այն գրգռեալ վերըմբռնումները, որոնք տեսողական չեն՝ այլ վայրկենական, թէպէտ եւ այնպէս իրական գոյութիւն ունեցող բաներու որոշ երեւոյթ կ'ունենան, քիչ չեն պատահիր: Ասոնք բացատրելու համար երկու բան կայ նկատելու: — (ա.) Աս տեսակ գրգռեալ վերըմբռնումնք երբեմն վերըմբռնումն ձեւացընելու զօրութեան բնական եւ սովորական կիրառութենէն յառաջ կու գան, որ աս զօրութիւնը ամէն մարդ քիչ շատ ունի: Աս բանը մասնաւորաբար աղոյ վրայ կը տեսնենք, որոնց վերըմբռնող կամ երեւակայող զօրութիւնը շրջագիծ եւ ձեւ ունեցող

Անկարգ Երկրորդու թիւեր Իմացականութեան :

բաներ ստեղծելու մասին՝ մեծ երէն աւելի ժիր է : Աղէկ գիտնէք որ տղայք գրեթէ շարունակ իրենց ներքին վերամբռնումները արտաքին միջոցի մէջ կը նկարեն, եւ նիւթոյ կերպ կերպ իրական երեւոյթներուն մէջ իրենց մտացածին ցնորքները կը ձեւացընեն, փոփոխող ամպերուն՝ նստած եւ հովին հետ եկող ձիւնին՝ սառնամանեաց՝ այլ եւ այլ ձեւերուն եւ վերականգնելու գաղաղին ու սառ առնող բոցերուն մէջ տուններ՝ մարդիկ՝ աշտարակներ՝ ոչխարի հօտեր՝ ծառեր եւ ուրիշ կերպ կերպ առարկաներ տեսնելով :

(բ.) Տեւոթու թիւն չունեցող գրգռեալ վերամբռնումներ շատ անգամ կը պատահին մտքին մէկ տաքնապ մը կամ վիշտ մը եւ կամ ուրիշ կերպ գրգռում մը ունեցած ատենը : ( ) րինակի աղագաւ՝ ծովեզերքը կայնող անձկութեամբ իր նաւին գալուն ըստ պատող մարդը երբեք անոր երեւոյթը կը տեսնէ, եւ բոպէի մը չափ ժամանակ կը հաւատայ թէ ստուգիւ կը տեսնէ կոր նաւը, քանի որ իրօք անանկ բան չկայ ամենեւին աչքին առջեւը : Այսինքն՝ նաւին վերամբռնումը՝ գաղափարը կամ պատկերը, որն որ առաջուրնէ նաւ տեսնող ամէն մարդ կարող է ձեւացընել, այնպէս սաստիկ կը ձեւանայ, որ արդեամբք՝ հաւատար կ'ըլլայ իրական նաւին աչքին ցանցատեսակին՝ վրայ նկարած պատկերէն մտքին ըլլալու ազդմանը : — Այս դիտողութիւնով հաւանականաբար կրնանք մեկնել շատ Անգղիացի տիկինին պատմութեանը հետեւեալ ծանօթութիւնը, որն որ 1775ին Սուրբ Ֆրանքուայի շրջափակները իր եօթը զաւակովը գերի բռնեցին : Իր գերութեան ժամանակը որ մը շնորհները՝ կ'իմացընեն իրեն թէ երկու զաւակները մեռան, մէկը բնական մահուամբ եւ միւսը զլուսուն հարուածի մը ուտելով : “Շատ խօսք չարի, կ'ըսէ մայրը, սակայն սիրտըս կարեւոր խոցուեցաւ, եւ միտս ստարկի ին պահանջէր այլանոցով եւ ոչ ոքիս գողտտարնելով : (վերամբռնումներով կամ պատկերներով բսել կ'ուզէ : ) ( ) րինակի աղագաւ՝ շատ անգամ կ'երեւակայէի թէ զաւակներուս մերկ գիտերը աչքիս առջեւ յարուէն ին պահանջէր ծառերուն ձիւղերէն վար կախուած, ինտոր որ շրջափակները սովորութիւն ունին որսով բռնած կենդանիներնուն մորթիները՝ դեռ չ'արգարած՝ ծառերն ի վար կախելու” :

§ 219 • Չայնի բիշ յարատեւութիւն ունեցող գրգռեալ վերամբռնումները վրայ :

Չայնի գրգռեալ վերամբռնումները, (հարեւանցի ծանօթութիւն մը կու տանք ասոր վրայ, վասն զի գիտաւորութիւններս գրել-

Գրգռեալ վերըմբռնումը կամ Առ աշօք Տեսիւք :

խաւորաբար տեսութեան գրգռեալ վերըմբռնումները քննել է,) ինչպէս որ տեսա՛ք Պարբիս առաջին մասին մէջ մէկ տեղ մը, (§ 60,) այնչափ դիրութիւնով յառաջ չեն դար, եւ այնչափ կենդանի չեն ըլլար՝ ինչպէս տեսողական վերըմբռնումները: Լեւտեալաբար հիմնական պատճառ ունինք ասոնց մէջ որոշում մը ընելու, եւ ըսելու թէ տեսութեան տեսողութիւն չունեցող գրգռեալ վերըմբռնումներուն վրայ ըրած ծանօթութիւններնուս միայն մէկ հատը լսողութեան համար կրնանք առնել: Այսինքն՝ թէ ձայնի գրչութեալ վերըմբռնումները (անոնք որ երեւնալին ու անյայտ ըլլալին մէկ կ'ըլլայ, առանց իրենց ենթակայ եղողին երկարատեւ նեղութիւն մը տալու) քիչ կամ շատ մաքի գրգռումէ կը ծագին: — ()ըինակի աղագաւ՝ երբեմն մինակ սենեակի մէջ նստող մարդոց անանկ կու գայ թէ մէկը զիրենք կը կանչէ կոր, որ իրօք ուրիշ բան չէ, այլ միայն ան մասնաւոր ձայնին վրայ ունեցած ներքին վերըմբռնումնին, որն որ իրենց մաքին մէկ մասնաւոր հանգամանքի մը մէջ ըլլալով՝ այնպէս որոշ կ'ըլլայ ան բոպէին, որ կը ստիպուին իբրեւ իրական հաւատալու: Լաւանակահարաբ ասիկայ է ան պատմութեան բոլոր գաղանիքը, որն որ Պօսվէլ, Շօնսընի վարուցը իբրեւ մէկ նշանաւոր դիպումածը կը պատմէ, թէ ()քսֆրատի մէջ մօրը ձայնը որոշ կը լսէ եղեր որ զինքը իր անունովը կը կանչէ, թէպէտ ճիշդ ան նոյն միջոցին Վիֆիլտի մէջ է եղեր մայրը: — Աս նոյն ըսկրգրուներով կը բացատրուի նաեւ Վափուլօնին վրայ պատմուած աս բանը: Որոշաստանու վրայ ըրած յարձակումէն առաջ, շատ անգամ նստարանի մը վրայ ընկողմեալ կը տեսնեն եղեր զինքը, խորունկ մտածութեանց մէջ ընկզմած, եւ աս միջոցներուն, որ ժամերով պոսպէս կը մնայ եղեր, երբեմն յանկարծ տեղէն կը ցատքէ կ'ելլէ եղեր, երեւակայելով թէ զինքը կը կանչեն, եւ Ո՞վ է ան՝ կը պօռայ եղեր: Աս պարապ օղին մէջէն լսուած ձայները երբեմն Ուօպէնսոնն ալ քունէն յանկարծ կ'արթնցընէին, որ իրմէ ի զատ ուրիշ մարդ չ'կար իր առանձին կրղզին վրայ:

§ 220. Առաջին պատճառ տեսողական վերըմբռնմանց կամ առ աշօք երեւոյթներու: Աչքին ցանցակերպին արտաւոր զգացումութիւնը:

Վախընթաց գլուխներէն մէկուն մէջ մասնաւոր կերպով ( § 64) եւ աս գլխուն սկիզբն ալ ստիթ ունեցանք տեսնելու, թէ մեր վերըմբռնումները կամ նորոգուած գաղափարներն ալ այնպէս

կենդանի կրնան ըլլալ, որ քիչ մը ատեն գրեթէ ճիշդ մեր ըսկըզնեակա՛ն իմացումներուն չափ զօրութեամբ իշխեն հաւատքներուս վրայ: Բայց որովհետեւ յիշած պարագաներնուս մէջ մարմինն վիճակը վատառողջ կամ անկարգ են թարրուած չէր, վասն որոյ ան վերըմբռնմանց կենդանութիւնը կամ իրական երեւալն ալ խիստ վաղանցիկ էր: Սակայն սա տեսակ վերըմբռնումներու աւելի տեսողականները կ'ըլլան, որոնք մասնաւոր դիտողութեան արժան են մեր իմացականին պատմութեանը մէջ: Ասեաքի ըսածներնիս միշտ մարմնաւոր անկարգութեան հետ կապակցած կ'ըլլան, որն որ սա զիտուս մէջ տեսանք որ շատ երեւելի ներգործութիւններ կրնայ ընել մտքին:

Տեսողական կենդանի վերըմբռնմանց ծագմանը վրայ ընելու բացատրութիւններնուս մէջ, ասոնց առաջին պատճառ՝ պիտի յիշենք աչքին ցանցակերպին՝ թէ բոլոր ցանցակերպին թէ միայն մէկ մասին՝ ընականէ դուրս եւ ախտաւոր զգայունութիւնը: Ղշմարիտ է թէ սա պատճառը աստիճանաւ մը կարծիքական է, աչքին ցանցակերպը անանկ տեղ մը ըլլալուն համար՝ որ գծուար է զանիկայ դիտողութեան եւ փորձի առարկայ ընելը: Բայց որովհետեւ գիտենք որ մարդուս ջղային կազմուածքը ընդհանրապէս ախտաւորելու ենթակայ է, եւ թէ մասնաւոր մասի մը ախտաւորութիւնը սովորաբար ան մասին վախճանին կամ յառաջ բերած արդիւնքներուն վերաբերեալ փաստներ կը պատճառէ, անոր համար՝ եւ տեսութեան ջղին ատեն ատեն ցուցուցած անկարգ ներգործութիւններուն վրայ ուղղակի եւ հաստատուն կերպով հմտութիւն ունենալնուս համար՝ սա բանիս բացատրութեանը մէջ սա պատճառը յառաջ բերինք: Աւելին վերըմբռնումներու կամ առ աչօք տեսիլքներու մէջ ասոր իրաւցընէ մէկ պատճառ մը ըլլալը հասկընալու համար՝ հարկաւոր է որ մտքերնիս ըլլայ, թէ տեսութեան առարկաներու վերըմբռնմանը ձեւացուցած ատեննիս աչքերնուս ցանցակերպին վրայ հաւանականաբար ճշա՛ մէկ թեթեւ փոփոխութիւն մը կ'ըլլայ, նման ան փոփոխութեանը՝ որ տեսանելի առարկային ներկայութեանէն կը պատճառի: Մարմիններնիս կատարեալ ստողջ որ ըլլայ նէ, տեսութեան զգայարանքն ալ իմիտին, անատեն ցանցակերպին վրայ եղած սա փոփոխութիւնը ի հարկէ շատ թեթեւ կ'ըլլայ: Բայց երբոր ախտաւոր զգայունութիւն մը ըլլայ նէ աչքին մէջ, անատեն մտքին յոկ վերըմբռնումները երբեմն երբեմն անանկ աստիճ աշխուժութիւն մը կու տան բոլոր ցանցակերպին կամ մէկ մասին, որ առ աչօք տեսիլքներ կամ երեւմունքներ կը պատճառի:

Իտալերէն բժշկական օրագրի մը մէջ կնկան մը վրայով



Գրգռեալ վերըմուռնուէք կամ Առ աչօք Տեսիւք :

պատմութիւն մը կայ, որն որ առաջին անգամ երաժիշտներու ժողովի մը հանդիսական գտնուելով՝ մեծ հաճութեամբ մտիկ է ըրեր ըրած երաժշտութիւննին: Ասկայն գժբաղդարար այն օրուէնէ ետեւ ան ձայները որոշ եւ իրենց կարգովը միշտ ականջին մէջն են մնացեր, եւ ասիկայ շաբաթներ եւ ամիսներ քշեր է, ինչուան որ բոլոր կազմուածքը խանգարելով մեներ է: Հիմայ աս պարագայիս մէջ աս կարծիքը կ'ընենք՝ թէ ականջին թմբուկին ջիղը, որն որ թէ բնական գիտողութեամբ եւ թէ մտքին հետ ունեցած վերաբերութիւնովը աչքին ցանցակերպին կը նմանի, իրօք կը թութառ ձայներէն, թէպէտ եւ իրօք ձայն չէր լսեր: Լոսինքն՝ հիւանդացած էր, ախտաւորեալ զգայունութիւն մը ստացած էր, եւ աս վիճակիս մէջ ինքիւրեն ներգործութեան աղբիւր մը եղած էր, արտաքին պատճառներէ անկախութեամբ: Այլ որովհետեւ լսողութեան մտաւոր հանգամանքը կամ զգայութիւնը միայն լսողութեան ջղին ձայն պատճառող իրական վիճակէն կախում ունի, եւ չէ թէ ան վիճակը յառաջ բերելու միջոց եղող արտաքին պատճառներէ, վաստն որոյ կը տեսնենք թէ աս կերպով ան քանի մը ժամ լսած ձայները քանի մը ամիս ականջին մէջ շարունակ կրկնուեր են: — Լոսանկ իմացիր տեսութեան ջղին համար ալ: Լոսիկայ ալ՝ լսողութեան ջղին նման՝ անանկ ախտաւորեալ զգայունութիւն մը կրնայ ունենալ, որ մարդու մը կամ ուրիշ տեսանելի առարկայի մը լոկ վերըմուռնուէն ան առարկային իրական ներկայութեանը ընելու ազդեցութեանը չափ ազդեցութիւն ընդունէ: Թէ որ սասնկ է նէ, ուրեմն աս ախտաւորեալ զգայունութիւնը ունեցող մարդը ինք իր զօրութիւնովը կը ստեղծէ ան առարկաներու պատկերները կամ կերպարանքները, որոնք որ այնպիսի առարկաներ աչքին առջեւը չեղած տանը իրեն իրականի պէս կ'երեւնան: Ուրիշ խօսքով, որովհետեւ աս երեւմունքներ տեսները Ֆիզիզական կազմուածքին վիճակէն կախեալ են, եւ չէ թէ կամեցողութեանէն, վասն որոյ ան մարդուն համար տիրապէս կրնանք ըսել թէ Լոս աչօք երեւոյթներու ենթակայ եղած է: — Լոսածներնուս վրայ հաստատութեան ձեւով՝ մէկ աս ալ եւելցընենք, թէ տեսողական ցնորքներու կամ աչքի երեւմունքներու խիստ հետաքրքրական պատմութեան մը մէջ բուն ինքը ենթակայ եղող անձը բացայայտ կերպով կ'ըսէ, թէ երեւմունքները պատահեանքն քանի մը ժամ առաջ աչքեբուն մէջ մասնաւոր զգացում մը կ'ունենայ եղեր, որն որ աչքին բան երեւնալը անցնելուն հետ մէկ տեղ անմիջապէս կ'անցնի եղեր<sup>1</sup>:

<sup>1</sup> Brewster's Natural Magic, letter III.

Անկորդ ներդրումները իմացականութեան :

§ 221 . Տեւոզական գրդեալ վերամբնութեան կամ առաջը երեւոյթ-  
ներու երկորդ պատճառ . Ատեն ատեն արիւն առնելուն զանցառութիւնը :

Սակայն քննած մտաւոր հանգամանքներնիս ուրիշ այնպիսի  
պատճառներէ ալ յառաջ կու գան , որոնք՝ գէթ մէկ քանի բանե-  
րու մէջ՝ այնչափ մտ կարգակցութիւն չունին աչքին հետ : Ա-  
տոնց մէկը ժամանակ ժամանակ արիւն առնելը զանց ընելն է :  
Այս զանցառութենէն յառաջ եկած արեան յորդութենէն առ ա-  
ջօք երեւոյթներ պատճառելուն վարդապետութիւնը շատերուն  
իրենց վրայ կամ ուրիշներուն վրայ ունեցած փորձառութեանցը  
պատմութենէն կ'երեւնայ թէ կը բացատրուի եւ կը հաստատուի,  
ինչպէս հետեւեալ ստորագրութենէն ալ :

Նիկողայոս , վարը պատմուած գէպերուն ենթակայ եղող  
անձը , որ կը բնակէր Պերլին քաղաքը , հռչակաւոր գրավաճառ  
մըն էր , եւ բնականապէս շատ կենդանի երեւակայութեան տէր  
մէկը : Այնկայ տգէտ կամ նախապաշարեալ մարդ մը չէր , որ  
աս բանը անտարակոյս ոմանք հարկաւոր պիտի սեպեն զիտնալ :  
Հետեւեալ առ աջօք տեսիլքներու պատմութիւնը , որոնք որ ի-  
րեն պատահեր են , բուն իր բերնէն է : — «Այնս եւ ուրիշ մէկը  
առաւօտուն եղած սենեակս եկան՝ որ զիս մխիթարեն . բայց ես  
քանի մը գիպուածներէ , որոնք շատ սաստիկ ներգործեր էին իմ  
բարոյական զգացումներուս , այնպէս խռոված էի , որ չկրցայ  
անոնց մտիկ ընել : Մէյժ՝ ալ նայիս յանկարծ աչքիս մեռած  
մարդու կերպարանք բան մը երեւցաւ , նստած տեղէս տասը  
ոտքի չափ հեռու : Սա մեռած մարդը կը տեսնես կոր , ըսի կը-  
նոջս , մատովս ցուցնելով : Ի հարկէ բնականապէս բան չէր  
կրնար տեսնել , վասն որոյ ըրած հարցումէս շատ խռովեցաւ  
ու շուտով բժիշկի մարդ խրկեց : Աթը վայրկեանի չափ մնաց  
ցնորքը աչքիս առջեւը , վերջապէս՝ շատ լքեալ ըլլալով՝ ան-  
հանգիստ քուն մը եկաւ վրաս , որ կէս ժամի չափ տեւեց :  
Բժիշկը աս երեւմունքը բուռն մտաւոր շարժութեան մը տուաւ ,  
եւ յոյս ցուցուց թէ մէյժ՝ ալ չըլար , սակայն մտքիս ան սաս-  
տիկ խռովութիւնը անկարգութիւն մը պատճառեց ջղերուս մէջ  
մէկ կերպով մը , եւ ասկէ այնպիսի հետեւութիւններ ծագե-  
ցան , որոնք արժան է որ մանրամասնաբար պատմեմ :

«Այն օրը չորս ժամ անցած՝ ան առաւօտուն տեսած մար-  
դըս կրկին աչքիս առջեւը տնկուեցաւ . աս միջոցին մինակ էի ,  
ու սրտիս նեղութիւն գալով աս երեւմունքին վրայ , ելայ կը-  
նոջս սենեակը գացի , բայց հոն ալ ետեւէս եկաւ նոյն ցնորա-

Գրգռեալ վերմբումունք կամ Առ աչօք՝ Տեսիւք :

կան տեսիլքը՝ մեռելի նման, թէպէտ ատեն ատեն կ'աներեւու թանար, եւ միշտ կանգնած դիրքով կրկին կ'երեւնար: Եւ մը վեցին սկսեցին ուրիշ շրջագայող կերպարանքներ ալ երեւնալ, որոնք առաջինին հետ ամենեւին կապակցութիւն չունէին: Առաջին օրէն անդին՝ մեռած մարդուն կերպարանքը մէյմ' ալ չ'տեսայ, սակայն անոր տեղը շատ ուրիշ կերպարանքներ յաջորդեցին, որոնց ոմանք ճանչուորներ էին, բայց շատը օտարահան մարդիկ: Ղանջցածներուս մէջ ողջ ալ կար մեռած ալ, սակայն մեռածներուն թիւը՝ ողջերուն հետ համեմատելով՝ շատ քիչ էր: Ախտեցի որ տեսած ցնորքներուս մէջ հետեւինն ամէն օր կենցաղաւարութիւն ըրած մարդիկս չ'կային, այլ զլիսաւորաբար աչքիս երեւցածները քիչ մը հեռու տեղեր բնակող մարդիկ էին:

«Աս ցնորքները ամէն ատեն եւ ամէն պարագայի մէջ մի եւ նոյն յատակ եւ որոշ կերպարանքովը կ'երեւնային, առանձնութեան մէջ ալ՝ ընկերութեան մէջ ալ, թէ ցորեկ ատեն՝ եւ թէ գիշերը, թէ տանը մէջ եւ թէ դուրսը. սակայն բարեկամի մը տունն եղած ատենս այնչափ յաճախ չէին պատահեր, եւ փողոցի մէջ շատ քիչ կը տեսնէի: Արբոր աչքերս կը գոցէի, աս երեւմունքները երբեմն բոլորովին անյայտ կ'ըլլային, թէպէտ եւ եղաւ անանկ ատեններ ալ որ աչքս գոց ալ կը տեսնէի, սակայն աներեւութացած ժամանակներն ընդհանրապէս աչքս բացածիս պէս նորէն դիմացս կու գային: Արբեմն բժիշկիս եւ կնոջս հետ կը խօսակցէի նոյն վայրկեանին բոլորտիքս պատող կերպարանքներուն վրայ, եւ ելի շրջագայելու վրայ կ'երեւնային քան թէ հանդարտ կազնած, սակայն շարունակ չէին մնար աչքիս առջեւը: Եւ ատ անգամ ատեն մը կը պակսէին դիմացէս, սակայն միշտ կրկին կու գային, քիչ կամ շատ ատեն կը կենային շարունակ, թէ առանձին՝ թէ ընկերութեամբ, բայց սովորաբար ետքի պարագայով: Անդհանրապէս երկու սեռէ ալ մարդու կերպարանք կը տեսնէի, սակայն սովորաբար անանկ կ'երեւնային թէ իրարու վրայ ամենեւին նկատողութիւն մը չունին, եւ շուկան ամբօխը ձեղքել անցնելու ճիգով ան աս չ'նկատելով անցնող գացողներու նման ասոնք ալ կ'երթային ու կու գային. բայց երբեմն ալ այնպէս կը թուէին թէ իրարու հետ գործ կը տեսնեն: Արբեմն նաեւ ձի հեծած մարդիկ, շուներ ու թռչուններ ալ կը տեսնէի: Բոլոր աս ցնորքները իրենց բնական չափովը կ'երեւնային աչքիս, եւ անանկ որոշ եւ յատակ՝ որպէս թէ կենդանի են, բաց տեղերուն վրայ մարմինի գոյնի այլ եւ այլ ստուերներ եւ հագուստներուն վրայ այլ եւ այլ գոյներ եւ ձևեր ցուցնելով, թէպէտ եւ գոյները միշտ կենդանութիւններն քիչ մը

Ընկարգ Ներգործութիւնք Իմացականութեան ,

Թափածի պէս ք'երեւնային : Տեսնուած կերպարանքներուն մէկը մասնաւոր կերպով ահարկու՝ կամ ծաղրաշարժ եւ կամ զրզուելի երեւոյթ մը չունէր, շատը անտարբեր երեւոյթքով էին, ոմանք ալ հաճոյական : Արչտօփ որ երկարեցաւ աս առ առք տեսիլքներ աչքիս երեւնալընէ, այնչտօփ յաճախ սկսեց պատահիլ, եւ աս ցնորքներուն սկզբնաւորութենէն չորս շաբաթի չափ ետքը թիւերնին ալ շատցաւ : Ասեւ սկսեցի ձայն ալ առնել ասոնցմէ. երբեմն իրարու հետ կը խօսակցէին, բայց շատ անգամ խօսքերնին ինծի էր, ըրած խօսակցութիւննին կարճ կարճ բաներ էին, եւ երբէք անհաճոյ խօսք ժը չէին խօսեր : Արբեմն երբեմն սիրելի եւ կառնկից բարեկամներ կը տեսնէի, թէ արու եւ թէ էգ, որոնք ունեցած նեղութիւնս թեթեւցընելու խօսքեր կ'ընէին, որն որ դեռ բոլորովին գացած չէր վրայէս. ան իրենց միութարական խօսքերը ընդհանրապէս առանձնութեան ատենս կը լսէի : Սակայն աս միութարիչ բարեկամները երբեմն ընկերութեան մէջ եղած ատենս ալ քովս կու գային խօսելու, եւ եղանանակ ատեններ ալ որ իրական մարդիկ հետս խօսած ատեննին ասոնք ալ զիս խօսքի բռնել կ'ուզէին : Իրենց ըրած միութարական խօսուածքները երբեմն իրարու հետ կապակցութիւն չունեցող խօսքեր էին, եւ երբեմն կանոնաւոր զրուցուածքներ :

§ 222 . Աերդիւնառ դեպուածին մէջ գործածուած դարմանք :

Աս դեպուածիս երեւելի պատահմունքները ասոնք են, առ առք երեւոյթներ երեւնալու մասին միայն : Այլ սակայն Արիկողայոս քիչ ստացական հմտութիւն չունենալէն ի զատ՝ բնականաբար փիլիսոփայական մտքի տէր մէկն ըլլալուն համար, կարողացեր է իր մտաւոր հիւանդութեան ճշմարիտ պատճառը գտնելու եւ երեւան հանելու : — Պէտք է յիշել նախ եւ առաջ՝ թէ ինքը շատ վաւճառն երեւակայութեան տէր մէկն էր, եւ ասոր համար իր միտքը աւելի ընդունակ էր մարմնաւոր անկարգութիւններէ ներգործութիւն կրելու : Ա՛րբը պատմուած պատահմունքներէն խել մը տարի առաջ աս անձը սաստիկ դիւտու պտոյտքի մը հանդիպեր է, ու տղուկ փակցընելով ըզընտցեր է. սովորութիւն ունի եղբր տարին երկու անգամ արիւն առնելու, սակայն աս անգամու հիւանդութենէն առաջ չէ աւեր : Աստի կարծելով թէ արեան յորդութենէ եւ արեան շրջանին մէկ անկարգութենէն պատահած ըլլայ ան մտաւոր ախտը, կրկին տղուկ փակցընելու որոշեր է : Տրուակները գրած ատենը վերաբոյժէն ի զատ ուրիշ մարդ չ'կայ եղբր քովը, բայց գործողութեան ժամանակը

Գրգռեալ վերըմբռնուած կամ Առ աչք Տեսիւք :

սենեակը ամէն կերպ մարդու երեւմունքներով լեցուեր է : Սակայն քանի մը ժամէն սկսեր են կամաց շարժիլ սենեակին չորս կողմը, գոյներնին սկսեր է աղօտանալ, մինչեւ որ աստիճան աստիճան նսեմանալով՝ վերջապէս օդին մէջ ցնդեր բոլորովին անյայտ են եղեր, եւ ալ մէյմըն ալ աչքին չեն երեցեր<sup>1</sup> :

§ 223. Երրորդ պատճառ գրգռեալ վերըմբռնուած . Տեսդ :

Սաստիկ ջերմով հիւանդացած մարդիկ երբեմն գրգռեալ վերըմբռնուածներ կ'ունենան, մասնաւորաբար տեսութեան զրայաբանքէն ծագած իմացումներէն, որոնց առ աչք տեսիլք կամ երեւմունք կ'ըսենք : Ըս պարագային մէջ եղող հիւանդին վերըմբռնուածները այնպէս սաստիկ կ'ըլլան, որ իր միաբը՝ զանոնք իբրեւ թէ արտոնքին միջոցին մէջ նկատելով՝ սենեակը կենդանի եւ շարժուն ցնորքներով կը լեցնէ : Ախբօլընի Վիլիսոփայական ( ) քաղեր ըսուած գործին տասնեւհինգերորդ հատորին մէջ աս դիտողութիւնը բացատրող պատմութիւն մը կայ, որուն մէկ մասը հաս կը դնենք : Ըս դիպուածիս մէջ պատահած ջերմը շատ սաստիկ տեսակէն է եղեր, որն որ նոյն իսկ հիւանդը կը նկարագրէ, ներքին մեծ բորբոքումէ մը յառաջ եկած, ու նախ եւ առաջ յիշողութեանը ազդեր է, թէպէտ եւ շատ չէ տեսեր :

«Քանի որ կատարեալ արժնութեան մէջ էի, կ'ըսէ աս անձը, եւ յիշողութիւնս տրամաբանութեան կարողութիւնս եւ հանդարտութիւնս տեղն էր, բոլորտիքս եզոյններուն հետ կը խօսակցէի, եւ ամէն բան առանց արգելքի կամ դժուարութեան կրնայի տեսնել, աչքիս առջեւ իր-բու հտուէ բերկրաւոր դէմքեր կու գային, որոնց վրայ ամենեւին իշխողութիւն չունէի, ոչ երեւնալնուն՝ ոչ մնալնուն՝ եւ ոչ երթալնուն կողմանէ :

«Շիտակ իմ առջեւս կու գային, մէկիկ մէկիկ, եւ շատ յանկարծուտ, միայն մանրերկրորդի մը չափ կը տեսէր ամէն մէկուն՝ իբրեւ ամպի մը կամ մառախուղի մը մէջէ ծագելով՝ ինչուան իրեն կատարեալ յատկութիւնը դտնելը : Ըս որոշ կերպարանքով ամէն դէմք հինգ վեց մանրերկրորդի չափ կը մնար, ու աներեւոյթ կ'ըլլար, երկու մանրերկրորդի չափ միջոցի մէջ կամաց կամաց աղօտանալով, ինչուան ուրիշ բան չէր մնար, բայց միայն

1 Հիշատակարան Կիտարո-Լիւննէրէ պատմութեան առ աչք տեսիլքի Կիտարո-Լիւննէրէ վրայ, որ լիւթիցեալ է 'Նիկոլայոս : Պիլլընի Լ'ըրտանի Լիւթի-Լիւննէրէ առ ջեւը, 28 Փետրուարի, 1799,

Անկարգ Ներգործութիւնք Իմացականութեան :

անթափանցիկ մառախուղ մը, որուն մէջէն գրեթէ անմիջապէս ուրիշ դէմք մը կը ծագէր : Ա՞յս դէմքերուն բոլորն ալ ինծի մեծ բերկրութիւն կու տային, թէ իրենց գեղեցկութիւնովը եւ թէ մարդու հոգւոյն ամէն կերպ բարձր եւ ազնիւ կրից շաժմունքները իրենց վրայ ցուցնելովն : Ա՞սոնց ամենուն մտադրութիւնը միշտ ինծի էր, եւ թէպէտ եւ բան մը չէին խօսէր իրենք, սակայն ես անոնց հոգւոյն մէջ եղածը դէմքերնուն վրայ կը կարգայի, որոնք ամէն ատեն սիրելի կենդանութիւն մը կը ցուցնէին : Ա՞յս դէմքերուն երեւնալուն վրայ ունեցած զարմանքէս՝ խնդութենէս եւ սէրէս, եւ աներեւութանալնուն վրայ զգացած արտմութենէս միտքս միշտ իր առջեւը տեսած երեւմունքներուն վրայ յառած կը մնար, եւ աս շարունական սաստիկ մտադրութիւնը միայն ան ատենները կ'ընդմիջէր, երբոր սենեակին մէջ գտնուող մէկը հետս հաղորդակցութիւն մը ընել կ'ուզէր կամ հարկ կ'ըլլար ընել : Եւ այլն : — Ա՞յս տեսած ցնորքները մինակ մարդու կերպարանքներ չեն եղեր, այլ նաեւ գրքեր՝ մագաղաթներ եւ ուրիշ տպեալ թուղթեր ալ կը տեսնէ եղեր : Այլ բոլոր ունեցած վերմբնումները տեսութեան զգայարանքէն ծագած գաղափարներու վրայ չեն եղեր միայն : անգամ մը իրեն անանկ եկեր է թէ երաժշտութեան ձայներ կը լսէ : Այսինքն իր ձայնի վերմբնումները այնքան սաստիկ կենդանութիւն մըն են ունեցեր, որ իրօք ներգաշնակաւոր ձայներ լսածի պէս է եղեր :

§ 224 . Չորրորդ պատճառ առ աչօք երեւոյթներու եւ ուրիշ գրգռեալ վերմբնումներու : Աւղեղն բորբոքումն :

Ա՞յս աչօք երեւոյթներ կամ ընդհանրապէս գրգռեալ վերմբնումներ յառաջ կու գան նաեւ ուղեղի բորբոքումէ եւ ուրիշ հիւանդութիւններէ : — Աւղեղն թէ հոգւոյն օթարանը կամ յատուկ եւ մասնաւոր տեղը ըլլայ՝ թէ չըլլայ, աս ստոյգ կ'երեւնայ՝ թէ մարմիններնուս կազմութեան աս մասը մտքին ներգործութիւններուն, եւ մանաւանդ իմացողութեան եւ կամեցողութեան հետ շատ մեծ եւ մօտ կապակցութիւն ունի : Աստի երբոր ուղեղին մէջ խանգարում մը ըլլայ նէ, թէ մէկ մասը ջախջախելով կամ սպառելով, թէ բորբոքումով, եւ թէ ուրիշ կերպով մը, միտքն ալ ընդհանրապէս քիչ կամ շատ ներգործութիւն կ'ընդունի : — Արդարեւ կրնայ ըսուիլ՝ թէ հոս հիմայ յիշած պարագաներնուս մէջ մտքին հետ անմիջապէս կապակցութիւն ունեցողը ուղեղին նիւթը չէ, այլ ուղեղին մէջ եղող արիւնն է : Անարակոյս աս կարծիքին հաս-

Գրգռեալ Աերբրունմանք կամ Առ աչք Տեփէք :

տատութիւն տուող բան մըն է այնչափ շատ արիւնային հեղուկ ուղեղին մէջ շրջան ընելը . վասն զի անգամազննիններու մէջ ընդհանուր կարծիք մըն է սա՝ թէ մարմիններնուս բոլանդակած արեան մէկ տասներորդը անմիջապէս սրահն ուղեղը կ'երթայ, թէպէտ եւ ուղեղին ծանրութիւնը մարմինին մէկ քառասներորդին չափ է : Աս ալ դիտելու է որ բորակային թթուութեամբ<sup>1</sup> եւ ջերմային միազմայ<sup>2</sup> կազերուն մարդուս մարին ըրած ազդեցութիւնը արիւնին վրայ ըրած անմիջական ներգործութիւններնէն կը պատճառի : Ասկայն միւս կողմանէ սա ալ ճշմարիտ է՝ թէ արեան շարժմանը մէջ արագութեան մը կամ քանակութեանը մէջ աճում մը չ'կրնար պատահիլ առանց ուղեղին զգալի ներգործութիւն մը ըլլալու : Այս ուստի թէպէտ եւ արեան շարժմանը կամ քանակութեանը մէջ եղած փոփոխութիւններուն շատ բան կրնանք ընծայել իրաւամբք, սակայն եւ այնպէս տակաւին ուղեղը կրնայ ըլլալ մարին համագամանքներուն մէջ եղած փոփոխութեանը անմիջական պատճառը :

§ 225 . Գրգռեալ վերբրունմանց չորրորդ պատճառին վերաբերեալ գիպումներ :

Ասկայն սա հետազոտութիւններնուս ամէն մասերուն նման՝ հոս ալ իրական ճշմարտութիւններու կարօտ ենք : Էտեւեալ պատմութիւնը, որն որ անկէ պակաս վաւերականութիւն չունեցող խել մը ուրիշ պատմութիւններէ ընտրած ենք, արժանահաւատ նկարագրութիւն մըն է<sup>3</sup> : Քինկսթըն—օն—Նըլ քաղաքը մարդուն մէկը զինուորի մը հետ կախ մը կ'ընէ, որ անպատեհ ժամու մը մէջ կ'ուզէ եղեր բռնի տունէն ներս մտնել : Ասիւն մէջ զինուորը կը քաշէ սուրը կը զարնէ մարդուն քունքին, ու քնքաց շնչերակը կը կտրէ : Ասիկայ, դեռ նոր ըսրնտցեր է սա միջոցիս այնչափ արիւն կորսնցընելէն յառաջ եկած հիւանդութիւնէն, կ'ելլէ բարեկամի մը հետ կ'ընկերանայ սահմանեալ աստի մը մէջ այնինչ տեղը երթալու, եւ ինը ժամու մէջ քառասունուերկու մղոն ճամբոյ կ'անէ : Ասոր վերայ հպարտական ուրախութիւն մը վրան գալով, հետեւեալ որն ալ ինչուան իրիկուն խմելքով կ'անցընէ :

<sup>1</sup> Nitrous oxide. <sup>2</sup> Febril miasma. Surgical Journal. Vol. VI p. 228.

<sup>3</sup> Տես Edinburgh Medical and

Ընկարգ ներգործութիւնը խնայ կանութեան,

Աս բաներէս ասոր ուղեղին մէջ բորբոք մը յառաջ կու գայ, եւ ան բորբոքումէն ալ առ աչօք տեսիլքներ: Այսպէս աս մեր խանութպանը (խանութպանութիւն է եղեր գործը) կը սկսի գետինը տեսակ տեսակ ապրանքներ սփռած տեսնել, այնպէս կ'երեւնայ աչքին որ զրահաւորեալ զինուոր մը խանութէն ներս կը մտնէ, եւ այլն, քանի որ ուրիշ մարդիկ ամենեւին անանկ բաներ չեն տեսներ: Սէկ խօսքով՝ ժամանակ մը շարունակ կերպ կերպ ցնորքներ կամ երեւմունքներ աչքին կը տեսնուին. ինչուան որ ալ դժուարաւ կարող կ'ըլլայ որոշել իրական յաճախորդը ցնորական յաճախորդէն: Աս հիւանդութենէն կ'ազատի վերջապէս արիւն աւնեւելով եւ ուրիշ մէկ քանի դարմաններով, որոնք որ սուրբաբար կը գործածեն ուղեղի բորբոքումներու: Սաքին գրգռմանը սաստիկութեանը կամ ներգործութեան անկարգութեանը տկարանալը անմիջապէս Ֆիզիկական հիւանդութեանը տկարանալուն հետ մէկտեղ կ'ըլլայ:

§ 226 . Հինգերորդ պատճառ առ աչօք տեսիլքներու . Արգանդի ակտեր:

Աս ալ դիտելու արժան բան մըն է, որ կանայք արգանդի հիւանդութիւններու բորբոքման ատեն երբեմն աչքի երեւմունքներ կը տեսնեն: Աս Աւրօպական լեզուով *Leucorrhoea* կամ *Leucorrhoea* ըսուած կանայցի հիւանդութեան բնութիւնը հասկընալու համար, որուն վրայ՝ կերպ կերպ ըլլալովը եւ շատ մէկ մասնաւոր բնութիւն մը ունենալովը՝ Վարքիս համառօտութեանը համեմատ ստորապրութիւն մը տայը անօգուտ բան կ'ըլլայ, ընթերցողը բժշկական գրքերէ թող տեղեկութիւն առնէ: Աս ակտը սաստիկ կը գրգռէ միտքը եւ շատ տեսակ ու զարմանալի արդիւնքներ յառաջ կը բերէ: Արբոր ցնցողական ակտը դունա կ'ելլէ, ցաւագարը կը նայիս որ մէյմը կը խնդայ մէյմը կու լայ, առանց ամենեւին բանաւոր կամ բարոյական պատճառի մը. անանկ որ գրեթէ խնդի կամ խելագարի կերպարանք կ'ունենայ: Իսկ առ աչօք երեւոյթները կամ սաստիկ կենդանի վերըմընումները աս հիւանդութեան ամենէն զարմանալի արդիւնքներէն են: Աս ցաւը ունեցողը ամէն կերպ բան որոշ կը տեսնէ, ծառեր, տուներ, մարդիկ, կանայք, շուն, կատու, եւ ուրիշ կենդանիներ, հրեղէն գունդեր, երկնային էակներ, եւ այլն: Ի հաստատութիւն աս բանիս անկասկած ազահօլովութեամբ վկայութեան կրնանք կանչել անոնք





Անկարգ Ներգործութիւնք Իմացականութեան :

Որովհետեւ մտքին կազմութիւնը յոդաւորեալ է, եւ իրր թէ այլ եւ այլ բաժանմունքներ եւ մանր բաժանմունքներ ունի, ուստի քննելու անկարգ իմացական ներգործութիւնն իս ալ կրնայ ըլլալ որ բոլոր մտքին վրայ ըլլայ, կրնայ ըլլալ որ անոր միայն մէկ մասին վրայ ըլլայ : Ասոր համեմատ՝ Խելագարութիւնը կամ բորբական կ'ըլլայ, եւ կամ մասնական. մէկը բոլոր միաքր բովանդակած, մէկալը միայն մէկ մասը : Աս նիւթիս հետազոտութեանը մէջ բռնելու ընթացքն իս աս պիտի ըլլայ, որ մտքին կարողութիւններուն վրայ՝ զատ զատ առնելով՝ աս բանը քննենք, որ ասանկով ամենէն հաւանելի տեսութիւնը կրնանք ունենալ անոր վրայ : Սակայն, աս ալ ծանուցանենք, որ առ այժմ միայն իմացականին վերաբերեալ խելագարական մտաւոր հանգամանքները աչքէ պիտի անցընենք, Օգոստականին վերաբերեալներուն քննութիւնը աւելի պատշաճ տեղի մը ձգելով :

§ 228 . Անկարգ կամ խանգարեալ զգայութեանց վրայ :

Արտաքին Իմացողութենէն սկսելով՝ դիտաւորութիւններն ու հանդիպած առաջին զօրութիւնը Օգոստյութիւնն է : Վիտենք որ մարդու արտաքին զգայարանքները խանգարման ենթակայ են, եւ որովհետեւ ներքին զգայութիւնները արտաքին կամ մարմնեղէն գործարանին վիճակին նման կ'ըլլան, վասն որոյ ըզգայութեան գործարանին վրայ անկարգ կամ անկանոն փոփոխութիւն մը ըլլայ նէ, մտքին մէջ ալ հարկաւորապէս անկարգ զգայութիւն մը կը պատահի : Անոնաւոր եւ առողջ զգայութիւնը միշտ արտաքին (արտաքին ըսելով՝ մինչեւ անգամ զգայութեան գործարանէն ալ դուրս ըսել կ'ուզենք) պատճառի մը վերաբերութիւն կ'ունենայ. իսկ երբոր մարմնաւոր գործարանին մէջ հիւանդութիւն մը ըլլայ, անատեն աս վերաբերութիւնն ալ կը խանգարի, եւ հարկաւորապէս անկէ յառաջ եկած ներքին մտաւոր հանգամանքն ալ՝ միւս զգայութիւններուն հետ բաղդատելով՝ անհաւաստի՝ առաջօք՝ եւ խաբէական բան մը կ'ըլլայ : Չէ թէ ինքնին խաբէական եւ անհաւաստի, վասն զի ինքնիրէն նկատելով զգայութիւն մըն է՝ մտքին մէջ ծագած, այլ դէպ ի արտաքին բաներու խանգարեալ վերաբերութիւն մը ցուցընելուն՝ եւ իրականութիւն չունեցող արտաքին պատճառներ մտքին առջեւ բերելուն համար :

Ախտացեալ կամ խանգարած տեսողական զգայութիւններ կ'ըլլան երբեմն, տեսութեան գործարանին մէջ պատահած մէկ

Ինկարդարութիւն :

Հիւանդութենէ մը յառաջ եկած և սակայն որովհետեւ նիւթերնուս աս մասը հարկաւորապէս բովանդակեալ էր առ աչք երեւոյթներու վրայ արդէն խօսածներնուս մէջ, վասն որոյ ալ հոս պէտք չէ արոր վրայ երկարել : Շօտիման զգայութիւններուն ալ ակտաւորածները կամ խանգարածները կ'ըլլան : Աս բանիս բազմութիւ օրինակներէն մէկ հատ մը միայն յառաջ բերենք նէ, ըսածնիս եւ կը բացատրուի՝ եւ կը հաստատուի : Պրիզըրի Ռընական Սոքալանութիւն ըսուած գործին մէջ աչքի երեւմունքներ տեսնելու հիւանդութեան պատահած կնկան մը վրայ (որն որ արդէն յիշած ենք տեղ մը) պատմութիւն մը կայ, որուն վրայ որոշակի ըսուած է, թէ «բնականապէս ակտաւորեալ երեւակայութիւն մը ունենալով՝ իր մարմնաւոր տպաւորութիւնները անկէ անանկ սաստիկ ազդեցութիւն մը կ'ընդունին, որ մէկ մարդու մը գիպուածով կամ ուրիշ կերպով մը իր մարմնոյն սյնինչ կողմը սաստիկ ցաւ մը կրելը պատճենէ, անոր ալ նոյն կողմը ատեն ատեն սաստիկ կը կսկըծայ : ( ) րինակի համար՝ թեւ հատանելու պատմութիւն մը ընելու ըլլաս նէ, մէկ յանկարծական սաստիկ ցաւ մը կ'իմանայ թեւին մէջ» : Ասեւ լսելութեան ալ (եւ առանց բացառութեան բոլոր զգայարանաց համար ալ կըրնանք աս բանը հաստատել) ակտաւորած կամ խանգարած ըզգայութիւնները կ'ըլլան : Համբաւաւոր Մէնտէլըն ստեպ ստեպ տեսակ մը սաստիկ անզգայութեան<sup>1</sup> կը բնուէր, եւ թէ որ շատ ատեն շանցած զօրաւոր խօսակցութիւն մը լսած ըլլոր նէ, ակտը վրան եկած ատենը ան խօսակցութեան մէջ մէկ աւելի հաստատութեամբ մը եւ ուժով զրուցուած կտորները բարձր ձայնով նորէն ականջին կու գար, «սյնպէս որ ականջը նորէն կը հնչէր ան ձայներով» :

§ 220 . Ընկարդ կամ խանգարած արտաքին իմացութիւն :

Չգայութենէն բնականապէս անոր հետ շատ մատ կապակցութիւն ունեցող զօրութեան մը, արտաքին իմացման կ'անցնինք : Ըրդարեւ զգայութեան վրայ ինչ որ ըսինք նէ՝ ըստ մեծի մասին աս կարողութեան ալ կը վերաբերի, վասն զի զգայութիւնը իմացումէն նախընթաց է եւ միշտ անոր մէջ բովանդակեալ : Սակայն իմացումը միայն զգայութիւն չէ, անկէ իզատ ուրիշ բան

<sup>1</sup> Catalepsis.

Անկարգ Ներգործութիւնք Իմացականութեան :

ալ կը բովանդակէ, այսինքն է ներքին մտաւոր հանգամանքը զանիկայ պատճառող արտաքին առարկային վերաբերելը, ու երբեմն ալ բաղդատութեան ներգործութիւններ, որոնցմով մէկ պատճառը միւսէն կը զանազանէ : Ըստ բաղդատութեան ներգործութիւնները մասնաւորաբար ան իմացումներուն մէջ կ'ըլլան, որոնք Ստացական կ'ըսուին՝ Բնածիններէն որոշելու համար : Ըյնպէս որ, հոս ըսածնեմնուս նկատմամբ, նախ եւ առաջ աս ճշմարտութիւնը կը ստուգենք՝ թէ զգայութիւնը խանգարի նէ, իմացումն ալ միատեղ կ'արուի : Սակայն այսչափով չ'ըմբնար : Հապա երբեմն ալ, քանի որ զգայութեան մէջ ամենեւին անկարգութիւն մը կ'իկայ, մէկ ներքին պատճառէ մը խանգարած կեղծ իմացումներ յառաջ կու գան, ինչպէս՝ մէկ բանի մը վրայ առեն մը մտադրութիւն ընելու անկարգութենէ, կամ բաղդատութիւն ընելու տկարութենէ :

Ըստ դիտողութիւններնուս համեմատ՝ կը տեսնենք որ աս հիմայ յիշած երկու պատճառներնուս առաջինէն իրենց արտաքին իմացման կարողութիւնը խանգարած մարդոցմէ ոմանք երբեմն մարդոց ընդհանրութեանը ունեցածէն բոլորովին տարբեր գոյնի իմացումներ կ'ունենան. որինակի ազագաւ՝ կապուտը կանաչէն չեն կրնար որոշել : Իարձեալ՝ ոմանք ալ ձայնի մանր զանազանութիւններու վրայ որոշ իմացումն չեն ունենար, այնպէս որ իրենց համար՝ շատ վարպէտ կերպով եղած երաժիշտական ներգաշնակաւոր երգերն ու աններդաշնակ կանչուրատութենքն մի եւ նոյն բան են : Իսկ երբոր իմացման անկարգ ներգործութիւնը երկրորդ պատճառէն յառաջ եկած ըլլայ նէ, անոր ենթակայ եզոզները ժամանակներ՝ տեղեր եւ անձինք իրարու հետ կը շփոթեն : Ինչպէս՝ բարեկամներնին՝ ուրիշ մարդիկ կարծելով՝ չեն ճանչնար, եղած տեղերնին չեն գիտնար, թէ եւ հարիւր անգամ ան տեղը գացած ըլլան : Ըստ իմացման խանգարումը՝ գիրք մը կարգալու որ ըլլան նէ՝ ան առենը մասնաւոր կերպով կը յայտնեն : Ընտարակոյս ամէն մարդու պէս գրերը որոշ կը տեսնեն. սակայն ուրիշ մասերու մէջ մոլորանուն ներգործութիւնը պէտք եղած վիճակին մէջ չըլլալով, չեն կրնար անոնց վրայ քիչ մը առեն մտադրութեամբ մնալ եւ զանոնք մէկմէկու հետ բաղդատել ու իրարու հետ կապակցելով բառ շինել, եւ հետեւաբար կարող չեն ըլլար կարգալու, կամ գոնէ խիստ գժուար գործ մը կ'ըլլայ ան իրենց :

§ 230 . Խանգարուն կամ խեղագրութիւն սկզբնական թեղագրութեան :

Երբոր Լրտաքին Հասոցութենէն կ'անցնինք Ներքինին, զգայութեանց եւ իմանցմանց սահմանէն Սկզբնական Թեղագրութեան, Վիտակցութեան բովանդակած իմացումներուն, Սերաբերական Թեղագրութեան՝ Յիշողութեան եւ Տրամաբանութեան կարեւոր զօրութիւններուն, սրգարեւ մտաւոր ներգործութեանց մէկ աւելի բարձրագոյն կարգը կը մտնենք, սակայն ասոնք ալ մարդուս մտքին՝ բոլոր իր մասերովը՝ ենթակայ եղած անկարգութիւններէն ազատ չենք գտնուիլ : — Սկզբնական Թեղագրութիւնը, որ կարգաւ ամենէն սուաջ է, եւ որուն գործը ընդ գաղափարներու եւ սկզբունքներու վրայ է եւ անոնց մէջ եղած առնչութիւններուն հետ գործ մը չունի բնաւ, պէտք է ընդունիլ որ մտքին միւս կարողութիւններուն շարքի յաճախ եւ երեւելի անկարգութեանց ենթակայ չէ : Իայց սակայն աս ալ երբեմն կ'ըլլայ որ խանգարի : Օրինակի ազգաւ աս ճանաչումը, թէ անցած տարիներու մէջ ինչ որ էինք նե՛ք բոլոր ան բաներուն մէջ՝ որոնցմով որ բանաւոր եւ պատասխանատու էակ կը սեպուինք, հիմայ ալ նոյն ենք, աս ճանաչումը յայտնի է թէ առողջ մտքի մը էական բան մը է : Սակայն աս տարրական եւ կարեւոր իմացումը, որն որ ոչ դատողութեան վրայ եւ ոչ տրամաբանական հետեւութեան վրայ կայացած է, այլ սկզբնական թեղագրութեան բարձրագոյն հիմանը վրայ, երբեմն կ'եղծանի, կամ բոլորովին՝ կամ ըստ մասին : Ըս բանիս վրայ, միայն մտքին նոյնութեանը նուկատմամբ, Պատ. Սիմոն Պրաւն Ընդդիացի Եկեղացականին հետաքրքրական օրինակը հոս յառաջ կրնանք բերել, որ աս անձը մեռնելէն առաջ շատ տարիներ կատարելապէս կը հաւատար, թէ իր հոգւոյն բանաւոր մասը բոլորովին կորսնցուցած է, եւ միայն մարմնաւոր կամ անասնական կեանք ունի՝ անբանից նման : Ինքը թէ խօսակցութեան եւ թէ գրութեան կողմանէ երեւելի ձիւրքերու տէր մէկն էր, եւ աս իր մասնական մտաւոր խանգարումէն ետեւ ալ իր ակտիւն հետ կապակցութիւն չունեցող որ եւ իցէ բանի վրայ աղէկ կրնար խօսիլ եւ գրել : Սակայն իր հոգւոյն իրմէն հեռանալուն եւ հաւանակաւ նաբար բոլորովին վերնալուն վրայ ունեցած հաւատքը այնքան հաստատուն էր, որ Ընդդիոյ Թագուհոյն նուէր ըրած մէկ երեւելի գործին նուիրաբանութեանը մէջ ասիկայ մէկու մը

Անկարգ Ներգործութիւնք Իմացականութեան :

գործ է, կ'ըսէ, «որն որ ատենօք մարդ մըն էր. պզտիկ անուն մը կրող. եւ որ այժմ՝ բոլորովին ոչինչ մէկն է, ինչպէս որ յայտնապէս կ'երեւնայ իր գլխուն եկած անզուգական դժբաղդութենէն. վասն զի վրէժխնդիր Մատուծոյ մը անմիջական ձեռքովը տասնութ թը տարի է որ իր մէջ եղող խոհուն ըսկըզուկքը կը հատնի, եւ հիմայ բոլորովին կորսուած է իրմէն, թէ որ իսպառ ոչնչացած չէ»<sup>1</sup> :

§ 231. Խանգարումն կամ խելագարութիւն գիտակցութեան :

Վիտակցութեան այլ եւ այլ ճանաչումներուն կամ դատողութիւններուն հիմը անձնական նոյնութեան նախընթաց գաղտնաբը կամ հաւասքն է : Ուստի թէ որ աս ճանաչումը կորսուելու ըլլայ նէ, անցեալ հատուածին մէջ բերած օրինակնուս պէս, գիտակցութեան մէջ բովանդակեալ ամէն բան ալ անոր հետ մէկտեղ կ'ոչնչանայ : Վիտակցութեան գործն է մտքին ներգործութիւնները նոյն իսկ մտքին հետ կապակցել. զանոնք մէկմէկու հետ իբրեւ թէ միացնել : Սակայն թէ որ կատարելապէս անանկ հաւատանք թէ միտք չունինք. թէ որ ինքնութիւննիս կամ անձնաւորութիւննիս եղծանի, անատեն ալ գիտակցութեան կարողութենէն դուրս կ'ըլլայ մեր իմացման կերպ կերպ ներգործութիւնները իբրեւ տեղական կայանք մը ունեցող եւ մեր ներսիդին կատարուող ներգործութիւններ ճանչնալը : Ինքնութիւննիս կը կորսուի. եւ ինքզինքնինուս յատկացեալ մտաւոր ներգործութիւններն ալ իբր թէ պարապ միջոցի մէջ պարտող լոկ էութիւններ կ'ըլլան, անհնարին ըլլալով զանոնք տեղի մը յատկացնելը կամ պատճառի մը ընծայելը : Ուստի նախընթաց հատուածին մէջ յիշած օրինակնիս, որն որ խառն (այսինքն թէ Սկզբնական Թելադրութեան եւ թէ Վիտակցութեան անկարգ ներգործութիւն բովանդակող) օրինակ մը կրնանք սեպել, հոս ըսածնուս բացատրութիւն մըն է : — Մէկ ուրիշ օրինակ մըն ալ, որ ասկէ պակաս զարմանալի չէ, Փարիզցի հռչակաւոր ժամագործի մը դիպուածն է, որն որ Վաղդիոյ յեղափոխութեան ժամանակը խելագարեցաւ : Մտկայ այնպէս կը հաւատար թէ զինքը ու մէկ քանի ուրիշ անձինք գլխատեր, ու վերջը նորէն հրաման ըրեր են որ ամենուն գլուխը իր տէրոջը վրայ դրուի. սակայն դժբաղդաբար աս գործողութեան մէջ սխալմունք մը ըլլալով, մէկ ուրիշին

<sup>1</sup> Conolly's Indications of Insanity, Ch. X.

գլուխը իր վրայ դրեր են : Ըս մարդը Պիսեդոն ըսուած հիւանդանոցը տարին, ուր շարունակ կը գանգատէր իր թշուառութեանը վրայ, եւ կ'ողորար այն իր մարգարտաշար ակօսաներով եւ մարուր շունչով գլխուն այնպիսի գեշ գլխու հետ փոխուելուն վրայ :

Հաւանականաբար ատեն ատեն այնպիսի խեղադարներ ալ եղած են, որոնք թէպէտ անձնաւորութեան եւ անձնակալան նոյնութեան ճանաչումները կորսնցուցած չեն, սակայն հաստատ կերպով հաւատացած են թէ մտքերնին ու մտքի կարողութիւններնին մէկմէկու հետ կապակցող կապը ոչնչացած է, եւ գուցէ յիշողութիւննին կամ արամաբանութիւննին եւ կամ երեւակալութիւննին անխմանալի կերպով մշ իրենցմէ աւելի բաղչաւօր մտքի մը փոխադրուած է :

§ 232 • Խեղագրութիւն դատողութեան կամ վերաբերական թեւադրութեան :

Ըս բաժանման Լըրկորդ Մասին մէջ Աերքին Իմացականութեան կարողութիւնները ինչ կարգով որ քննեցինք նէ ան նոյն կարգովը յառաջիկայ նիւթերնուս հետադասութիւնը շարունակելով՝ այժմ աս հատուածիս մէջ քննելիքնիս պիտի ըլլայ Աերաբերական թեւադրութիւնը : Աերաբերական թեւադրութեան կարողութիւնը՝ Ակզնական թեւադրութեան նման՝ խիստ պարզ է ներգործութեամբ, փասն զի իր գործը լոկ առնչութիւններ իմանալ է, սակայն աս կողմանէ կը տարբերի, որ ինչ կերպ անկարգութիւն որ պատահի նէ մտքին մէջ, գրեթէ ամենէն ալ քիչ կամ շատ ներգործութիւն մը կ'ընդունի վերաբերական թեւադրութիւնը. (այսինքն՝ դատողութիւնը՝ իր ամենապարզ ձեւովը) ուր ընդհակառակն սկզբնական թեւադրութիւնը հազիւ երբէք խանգարման կը պատահի : Լս ասիկայ անշուշտ ասանկ պիտի ըլլայ : Ա ան զի վերաբերութիւն ըսելով կ'իմացուի թէ ուրիշ առարկաներու վրայ երեւցած վերաբերութեան նիւթ մը կայ, որուն հետ որ մէկ ուրիշ բան մը առնչութիւն ունի : Լս թէ որ մտքին ուրիշ ներգործութիւններուն մէջ անկարգութիւն ըլլալով՝ ան ուրիշ բաներու վրայ երեւցած վերաբերութեան նիւթերուն վրայ սխալմունքներ պատահին նէ, ի հարկէ ստ սխալմունքները ան վերաբերութիւնները զգացող կարողութեան ներգործութիւնը կամ բոլորովին կ'եղծանեն, կամ շատ կը խանգարեն : — Ըսկէց ի զատ՝ աս կարողութիւնը ինքնիրեն ալ, առանց ուրիշ տեղերէ ներգործութիւն ընդունելու

Անկարգ ներդործութիւնք խնայականութեան :

լու, երբեմն կը խանգարի: Բայց որովհետեւ աս նիւթը շատ սերտ կապակցութիւն ունի տրամաբանութեան հետ, եւ երկուքն ալ փոփոխակի լըյս կը ձգեն իրարու վրայ, վասն որոյ հոս խօսքերնիս կը կտրենք:

§ 233. Անկարգ կամ խանգարած զուգորդութիւն: Թեթեւամտութիւն:

Սորին օրէնքները, իր ներդործութիւնները կառավարող մեծ սկզբութիւնն ալ, իր լոկ իմացումներուն կամ հանգամանքներուն նման, խանգարելու ենթակայ են, ինչպէս՝ զուգորդութեան օրէնքը: Սեր իմացական ընտելեան աս երեւելի սկզբունքին անկանոն եւ անկարգ ներդործութիւնը երբեմն շատ կ'ըլլայ՝ երբեմն քիչ: Աս պատճառէն յառաջ եկած մտաւոր պակասաւորութեան մէկ թեթեւ տեսակը կայ, որուն թեթեւամտութիւն կրնանք ըսել, որ աս տեսակ տկարամտութեան տէր եղողին երբեմն «փախուկ» կ'ըսեն, կամ «բաժնակը նօսը», եւայլն: — Ասոնց մտաւոր պակասութիւնը կ'երեւնայ թէ զուգորդեալ գաղափարաց վրայ ի գործ դրուելու սովորական զօրութեան թերութիւնն է գլխաւորապէս: Իրենց խորհուրդները մէկ առարկայէն մէկալը մեծ արագութեամբ կը սահին կ'երթան, եւ՝ հետեւարար՝ աս տեսակ միտք ունեցողներուն մէկ երեւելի նշանն աս է որ խօսակցութիւննին շատ փոփոխական եւ մարմիննին գրեթէ յարաժամ շարժման մէջ կ'ըլլայ: Աս գաղափարներու արագ յաջորդութենէն եւ անոր հետ մէկտեղ եղած խօսակցութեան փոփոխականութենէն ընդհանրապէս քիչ շատ մոռացկոտութիւն մըն ալ յառաջ կու գայ: Աւ որովհետեւ աս մտաւոր հիւանդութեան ենթակայ եղողը նաեւ անկարող կ'ըլլայ իր ներկայ գաղափարները հասաատուն բռնելու մըտքին մէջ կ'անոնց վրայ խորհրդածելու, ու անցեալ գաղափարները միտքը բերելու, վասն որոյ միշտ ծուռ դատողութիւններ կ'ընէ հանդիպած բաներուն վրայ: Աս մտաւոր խանգարման մէկ նշանն ալ արտաքին տպաւորութիւններու զգայութեան նուազումն է:

§ 234. Արդիւնեալ մտաւոր անկարգութեան վրայ բացատրութիւն:

Ըրջ Ստաւոր շխանդութիւններու վրայ շինած երեւելի գործին մէջ Անդրիասի եկեղեցականի մը իրեն ըրած մէկ պատ-



Խելագարութիւն :

մութիւնը կը դնէ, որն որ Վափէզը խտրադիմային տեսութեան գացեր է, ու անոր ինչ սքանչելի անձն ըլլալը եկեր իրեն նրկարագրեր է: Աս պատմութիւնը շատ աղէկ կը բացատրէ վերը ըսած մտաւոր անկարգութիւննիս: «Այն բոլոր առաւօտը, կ'ըսէ, տարօրինակ՝ այլանդակ եւ արտակենդրոն Վափէզը քեթէս բռնեց խօսակցութեան: Անգամ մը որ խօսքի սկսելու ըլլայ նէ, ալ կայնիլ ըսած բանդ չ'գիտեր, ինչուան որ շունչը հասնի նէ կը խօսի անընդհատ: Արօսակցութեան մէջ տարօրինակ կերպով մը մէկ նիւթէն մէկալը կը ցատքէ. մէկ գիւրքը կը նետէ, մէկալը կ'առնէ ձեռքը. պատկեր մը կը բերէ, դեռ անոր վրայ բոպէ մը չ'նայած, ան կը գոցէ ուրիշ մը կը բանայ, մէյմ'ալ յանկարծ կարկինը առածին պէս՝ կու դայ վրագ, կը չափէ քիթդ՝ բերանդ՝ ճակատդ՝ եւայն. ետեւէն խտրադիմայութեան հեղեղ մըն է գըլուխդ ի վար կ'իջեցընէ. անկէ ետեւ՝ ի հաստատութիւն իւր վարդապետութեանցը՝ կը քաշէ քեզ կը տանի խել մը սննեակներ, ու հազարներով գծագրութիւններ ու պատկերներ առջեւդ կը թափէ. բայց կարող ես նէ բերանդ բաց ու գժուարութիւն մը առաջարկէ. ընելու առաջարկութեանդ կէս վանկը դեռ բերնէդ չ'հանած՝ գլխէդ ի վար լուծմունք մը կը հագցընէ որ ինչ ըլլալդ չես գիտնար:

«Իւմբը այնքան նիհար է որ սովի պատկեր կը նմանի. քիթն ու կզակը քիչ մըն է մնացեր մէկմէկու դպչելու. Աս ալ իրեն խտրադիմայ ըլլալով՝ քննեցի տեսայ որ իր մեծ սրամտութեանը, անյողդողդ աստուածաշտութեանը, մեծ բարեսիրութեանը եւ չափաւոր գիտութեանը հետ մէկտեղ մէկ տարօրինակ յեղամշտութիւն մը ու փոփոխականութիւն մը ունի. բնութեան գաղտնիքներուն ետեւէն հառաչող եւ միանգամայն հարկաւորութեան տակ տանջուող անձն մըն է, բանը գործը միշտ հայեցողութեան եւ գծագրութեան պարապիլն ըրած. մէկ խօսքով՝ բարի, թեթեւամիտ, քաղցրաբարոյ եւ հարկաւորութեան տակ մնացած մարդ մը գտայ»:

§ 235 . Մասնական խելագարութիւն կամ խանգարում յիշողութեան:

Մասնական խելագարութեան տեսակներուն կարգը կընանք դնել նաեւ տկարացած կամ խանգարած յիշողութեան եւելքը զարմանալի օրինակներէն մէկ քանին: Արնայ ըլլալ որ իմացականին բոլոր միւս զօրութիւններուն, (վասն զի պէտք է յիշել որ հոս ըրած քննութիւններնիս միայն իմացականին անկարգու-

Անկարգ Ներգործութիւնք Իմացականութեան :

Թիւններուն վրայ է, եւ չէ թէ Օգացողութեանց եւ Կառքին անկարգ գործութիւններուն վրայ) իմացման կարողութիւններուն՝ զուգորդութեան՝ տրամաբանութեան ներգործութիւնները, գէթ յիշողութենէն անկախութեամբ որչափ որ կրնան ներգործել նէ, առողջ եւ կանոնաւոր ըլլան, ու աս յիշողութեան կարողութեան ներգործութիւնը կամ էապէս աւրուած եւ կամ տարօրինակ ու անմեկնելի անկարգութիւններու ենթակայ եղած ըլլայ: Վործիս Համառօտութենէն՝ աս նիւթիս վրայ Հնարաւոր եղածին չափ կարճ զիտողութիւն մը ընելով անցնելու ստիպեալ ենք. եւ ուստի ըսածնիս բացատրելու համար միայն մէկ երկու օրինակ պիտի կրնանք յառաջ բերել: Տկարացած կամ խանգարած յիշողութեան օրինակները իրեք կերպ են. (1.) Տիշողութիւնը ընդհանուր կերպով մը տկարացած կ'ըլլայ, տրամութենէ՝ ծերութենէ եւ ուրիշ այլ եւ այլ պատճառներէ. (2.) յանկարծ եւ բոլորովին տկարացած կամ կորսուած կ'ըլլայ, մասնաւոր բաներու նկատմամբ, եւ մասնաւոր ժամանակ մը, որ ասիկայ ընդհանրապէս յանկարծական եւ սաստիկ մարմնաւոր ցաւերէ կը պատճառի. եւ (3.) յիշողութեան նոյն իսկ կարողութիւնը այնչափ տկարացած կամ խանգարած չըլլար, եւ սակայն տարօրինակ անկարգ եւ անկանոն ներգործութիւններ կ'ունենայ: — Առջի տեսակին վրայ հաւանականաբար հարկաւոր չէ խօսք ընել: Երկրորդ տեսակին օրինակ մըն է Պիագդիին պատմած մարդը, որն որ գլխուն սաստիկ հարուած մը ընդունելով՝ Յունարէն լեզուն մտքէն ելեր է, բայց ուրիշ բան չէ մոռցեր՝ երեւցածին նոյնով: Ասոր մէկ ուրիշ օրինակըն ալ Ապերքրոմպիին յիշած կիսն է, որն որ երկարատեւ հիւանդութեան մը պատճառաւ տասը կամ տասներկու տարուան չափ ժամանակի յիշելութիւնը կորսնցուցեր է, սակայն ան ատենէն առջի պատահած բաներուն վրայ եղածներուն պէս կը խօսի եղեր: Երրորդ կերպին օրինակ են աս հետեւեալները. մէկը ծըխախտ բառը միտքը չ'կրնար պահել եղեր, ու միշտ ծխախտոյն տակառ կ'ըսէ եղեր. մէկն ալ անուխ ուղած ատենը թուղթ կը խնդրէ եղեր, թուղթ ուղած ատենը անուխ, մարդուն մէկն ալ մէկ բանի մը անունը խօսքով չ'կրնար հասկընալ եղեր, հապա գրով կատարելապէս միտք կ'առնէ եղեր: Աս իրեք կերպ յիշողական խանգարումները մանրամասն նկարագրուած են Ապերքրոմպի իմաստասիրին Քննութիւնք Իմացական Կարողութեանց ըսուած գործին մէջ: Քծնօլի մատենագրին Յոյցք Խելազարութեան ըսուած գրքին մէջ հետեւեալ պատմութիւնը կայ, որն որ ան բանիս պատշաճ օրինակ մը կրնայ ըլլալ, ու թեպէտ յիշուածներուն ամենէն աւելի հետաքրքրականն է:

Խելագարութիւն :

“Շատ ստացուածքի տէր մարդուն մէկը երկար ժամանակ այլ եւ այլ նեւթերու հետ մտադրութեամբ զբաղելէն ետեւ, նստեր է բան մը գրելու, նայեր է որ գրելու բանը չ'կրնար կոր տարբերել, ուզեր է տոմսակ մը գրել, անոր ալ երկու բառէն անդին չէ կրցեր անցնիլ. նայեր է որ չուզած բանը կը գրէ թուղթին վրայ, ու որչափ որ կ'աշխատի՝ ուզածը չ'կրնար կոր գրել : Ըստ շփոթութիւնը կէս ժամի չափ տեւեր է, եւ ան միջոցին իր զգայարանքներուն մէջ անկարգութիւն մը չէ պատահեր, միայն թէ ան ատեն ունեցած գաղափարները լոկ երեւակայութեան բերմունքովը միտքն եկած բաներ են եղեր, առանց կարգի եւ նպատակի : Ըստ ալ զգացեր է որ ան միջոցին խօսած ատենը բերնէն ելած բառերն ալ խօսիլ ուզած բառերը չեն : Արդոր խելքը վրան եկեր է, նայեր է որ տոմսակը գրելու աշխատած ատենը՝ տարի ու կիսուան շահը յիսուն թալէն՝ գրելու տեղը՝ Պրսային փրկութիւնովը յիսուն թալէն՝ է գրեր” :

§ 236 : Մասնական խելագարութիւն տրամաբանութեան :

Որչափ որ քննութիւն ըրինք խելագարութեան նիւթին վրայ նէ, մաքին առանձին առանձին կարողութիւններուն վերաբերելով եղաւ հետազոտութիւննիս : Հաւանականաբար մաքին ամէն կարողութիւնն ալ, եւ մանաւանդ իմացականութեան զօրութիւնները խանգարելու են թակայ են : Ինչուան հոս՝ ասնիւթիս նկատմամբ քննեցինք զգայութեան՝ իմացման՝ սկզբնական թելագարութեան՝ գիտակցութեան՝ դատողութեան՝ զուգորդութեան եւ յիշողութեան զօրութիւնները. եւ հիմայ տրամաբանութեան կարողութեանը վերաբերելով շարունակենք հետազոտութիւննիս : — Կ'ըլլան անսնկ խելագարներ, որոնց վրայ տրամաբանելու կարողութիւն ամենեւին չ'տեսնուիր : Մտադրութիւն եւ բաղդատութիւն ընելու կարողութիւն չեն ունենար, եւ հետեւապէս անկարելի կ'ըլլայ իրենց ձեռնարկութեան մը նախընթաց առաջարկութիւններէն անոր եզրակացութեանը անցնիլը : Երգէն առիթ ունեցանք վերաբերական թելագրութեան վրայ՝ ասնիւթիս նկատմամբ՝ խօսելու, որ աս կարողութիւնով իրերը մէկմէկու հետ կը բաղդատենք : Ըսիկայ երբոր խանգարած ըլլայ եւ իր պաշտօնը չ'կրնայ կատարել նէ, ասոր ու տրամաբանութեան մէջ անսնկ մօտ կապակցութիւն մը կայ որ ետքինն ալ հարկաւ պիտի խանգարի : Այսպիսի պարագաներու մէջ տրամաբանելու անկարողութիւնը բոլորական կ'ըլլայ, այսինքն՝ ամէն բանի կը տարածի : Մակայն շատ անգամ այսչափ արուած չըլլար տրամաբանութիւնը, այլ

Անկարգ Ներգործութիւնք Իմացականութեան :

միայն այսինչ բաներուն նկատմամբ խանգարած կ'ըլլայ, անոնց վրայով խելագարին հաւատքին ազդեցութիւն մը եղած ըլլալով : Լըբոր աս վիճակին մէջ եղող մարդ մը անանկ տրամաբանութիւն մը բնէ որ ան մասնաւոր բաներուն սահմանը մանէ, անասեն յայտնի կ'ըլլայ որ միտքը խանգարած է : Եւ աս դիտողութենէն ծագած է այն ընդհանուր ծանօթութիւնը, որն որ հաստատ հիմն ունեցող ծանօթութիւն մըն է, թէ տրամաբանութեան խելագարութիւնը կամ խանգարումը սովորաբար առաջարկութիւնները իրարու հետ կապակցելուն եւ անոնցմէ ելած հետեւութիւններուն վրայ չըլլար այնչափ, որչափ նախընթաց առաջարկութիւններուն վրայ : ( ) րհնակի աղագալ՝ խելագարը կը հաւատայ թէ թագաւոր է. ըստ այսմ՝ ուղիղ տրամաբանութեամբ՝ թագաւորի վայել պատիւ կը պահանջէ ուրիշներէն, եւ թէ որչափ նէ կը բարկանայ. բայց մէկ նիւթական սխալմունք մը ունի նախընթաց առաջարկութիւններուն մէջ, որոնցմով կը կարծէ թէ իրօք թագաւորի աստիճան ունի :

§ 237 . Վերդիշեալ ծանօթութեան համեմատ խանգարած տրամաբանութեան օրինակ :

Տօն Վիզօ ասպետին պատմութիւնը վերը յիշուած տեսակէն եղող խելագարութեան շատ յարմար օրինակ մըն է : Ինչպէս որ Սերվանդէս կը պատմէ, աս անձը աղէկ հասողութեան տէր մէկն է եղեր, սակայն միտքը խանգարեր է շատ մը խենդութեամբ առասպել պատմութիւններ կարգալով, որոնք աս սուտ անունը ունին եղեր թէ ասպետներու եւ ասպետական գործքերու եւ քաջութիւններու ճշմարիտ պատմութիւններ են : Եւ գրքերը, որոնք գաճաճներու՝ հսկաներու՝ մեռալահմաններու՝ եւ ուրիշ բնութենէ եւ կարգէ դուրս պատահմունքներու պատմութիւններով լեցուն են եղեր, այնչափ եռանդով կարդացեր է Տօն Վիզօ, որ վերջապէս խելքին բան է եկեր : Իսկ թէպէտ եւ իրօք միտքը խանգարեր է աս կերպով, սակայն խելագարութիւնը միայն աս յիշուած բաներուն հետ վերաբերութիւն ունեցող իրերու վրայ է եղեր : Իացայայտ կերպով ծանուցուած է թէ բոլոր ըրած խօսակցութիւններովը եւ տուած պատասխաններովը յայտնապէս կը ցուցնէր թէ շատ աղէկ հասողութեան տէր մէկն է, եւ ասպետութեան նիւթէն ի զատ ուրիշ բաներու վրայ չէր փախցնէր : Ասպետութեան վերաբերեալ խօսք մը եղածին պէս՝ կը խելագարէր : — Իստ այսմ՝ որ մը ստիքիչն ու ժողովրդապետար իրեն տեսութեան որ եկեր են նէ, խօսակցութիւնը տէրու-

Թեան քաղաքական կարգաւորութիւններուն վրայ պատահեր է . եւ Տօն Քիզօ ամէն նիւթի վրայ անանկ աղուոր խօսեր է , որ երկուքն ալ Հաւատացեր են թէ խեղագրութիւնը գացեր է վրայէն եւ ուղիղ դատողութիւն ընելու կարողութիւնը նորէն ձեռք ձգեր է : Բայց երբոր անզգուշութեամբ Տաճկաց պատերազմին վրայ խօսք մը եղեր էնէ , ասպետը իսկոյն մեծ վստահութեամբ եւ ծանրութիւնով մը ըսեր է , թէ իւր վեհապառութիւնը ուրիշ բան պիտի չընէ , այլ մէկ հրովարտակ մը պիտի հանէ՝ որ Սպանիայի բոլոր ասպետները այնինչ օրը իր պալատը գան . « Բէ Է-Էնիգ վէյ Կոբիէն աւել խորք չ'գան ալնէ , անոնց մեջ անանկ մէկ պէտք գոյնի , որ ան միայն Կէրիս պիտի ըլլայ Տաճկաց Բուրս գործարանէն » :

Երբոր Տաճկաց պատերազմին վրայ խօսք բացուեր էնէ , աս խօսակցութիւնը վահաններու՝ սուրերու՝ նիզակներու եւ բոլոր ասպետութեան զուգորդութիւններու հետ շատ մօտ կապակցութիւն ունենալուն , իր մտաւոր տկարութեան սահմաններուն հասեր է . եւ հետեւաբար ան այլանդակ խօսքը սկսեր է խօսիլ , որկէ շուտով հասկըցեր են որ դեռ խելքին պակասութիւնը վրան է , թէպէտ եւ քիչ մը առաջ այնչափ նիւթերու վրայ ուղիղ դատողութեամբ խօսեր էր :

§ 238 . Երեւակայութիւնով եղած մասնական մտաւոր խանգարումն :

Մտաւոր զգացողութեան տէր հանճարեղ մարդիկ երբեմն մեղամաղձոտ երեւակայութեան մը թեղագրութիւններուն տեղի տալով՝ մտքերնին կը խանգարեն : Ըսել չենք ուղեր թէ աս կերպ խանգարումներն ալ խեղագրութեան որոշ օրինակներուն կարգը դասելու իրաւունք ունինք . վասն զի ասոնք այնչափ մտադրութեան զարնող բաներ չեն , թէպէտ եւ շատ նեղութիւն կուտան ենթակայ եղողին : Սակայն աս մտաւոր անկարգութեան հանդիպողները այնպիսի այլանդակ երացներ կ'երգեն , իրենց գործունեայ եւ մեղամաղձոտ երեւակայութիւնով վր անանկ ծուռ տեսութիւններ կ'ունենան մարդոց բարուցը եւ գործքերուն վրայ , որ զանոնք ճշմարտապէս առողջ մտքի տէր մարդիկ չենք կրնար սեպել : Ըս անկարգութեան օրինակները , որ քիչ չեն պատահիր , դժուար է նկարագրելը , սակայն ասոր ենթակայ եղողներուն ունեցած երեւելի յատկութիւնները Ստամբուլ տը Ը զաէլին « Խորհրդածութիւնք Ռուսօի Բարուցը եւ Գրութիւններուն վրայ » բնուած գործին հետեւեալ նկարագրութեանը մէջ ըստ բառականին կը տեսնուի :

Անկարգ Ներգործութիւնք Իմացականութեան :

Աս ծանօթութիւնը տալէն ետեւ, թէ ինքը յանկարծական կիրքեր չէր ունենար, այլ իր զգացումները խորհրդածութիւնով կը սաստկանային, եւ ինք իր մտածութիւններէն կիրքի կ'ելէր, աս խօսքը կ'ելեցընէ : — «Արբեմն մէկ բարեկամէն առաջուան պէս սիրով կը բաժնուէր, բայց թէ որ անոր բերնէն կտակածելի երեւոյթ ունեցող մէկ խօսք մը փախած էր նէ, այնչափը ձեռք կուտար իրեն. անիկայ ետքէն կը յիշէր, կը սկսէր բարակ քննութիւն ընել անոր վրայ, բանը կը մեծցընէր, ու թերեւս ամիս մը անիկայ կ'առնէր կ'անցնէր, ինչուան որ վերջապէս ան մարդէն իր սէրը բոլորովին կտրելով բանին կայսր կուտար : Ասոր համար շատ դժուար բան էր իրեն խառնած ըլլալուն զինքը համոզելը. վասն զի իր մտքին մէջ եղած սխալ տպաւորութիւնները այնչափ երկար ատենուան խորհրդածութիւնով հաստատուած ըլլալուն, մէկէն ի մէկ ընդունած լոյսը չէր կրնար զանոնք ջնջել : Խիստ դժուար էր նաեւ երկար ատեն մտերմաբար իրեն հետ կենակցութիւն ընելը : Մէկ խօսքդ՝ մէկ շարժումըք բաւական նիւթ կ'ըլլար իրեն խորին մտածութեան. ամենաչնչին պարագաները չափաբերական առաջարկութիւններու պէս իրարու հետ կը կապակցէր, եւ հաւնած հետեւութիւնները՝ իրեն անանկ կը թուէր թէ՛ ազգացուցական վկայութիւնով հաստատուած ճշմարտութիւններ են :

«Այս կը հաւատամ որ, կ'ըսէ եւս, երեւակայութիւնը իր կարողութիւններուն ամենէն զօրաւորն էր, եւ բոլոր միտքները գրեթէ կուլ տուած էր : Իր գոյութիւնը յաւէտ երազ մըն էր. եւ իր կեանքին դէպքերը աւելի պատշաճ է ըսել թէ իր մտքին մէջ կը պատահէին քան թէ իրմէ դուրս. անանկ մէկ գոյութեան եղանակ մը, որ մարդ կը խորհի թէ անանկով ուրիշներուն վերայ գիտողութիւն ընելէն արդիւրեւելով՝ ուրիշներուն վրայ կասկածելէն ալ ազատ կը մնայ. սակայն ճշմարիտն աս էր որ իր աս վիճակը իրեն գիտողութիւն ընելու ջանքերուն արդեւք չէր ըլլար, այլ միայն ըրած գիտողութիւնները ծոելու կը ծառայէր : Աս անձին գիւրազգաց ոգի մը ունենալուն վրայ՝ իր գործքերը կարգալէն ետեւ մէկ մարդ մը չ'կրնար տարակուսիլ. բայց երբեմն երեւակայութիւնը իր արամաբանութեանը եւ կրիցը մէջ կը մտնէր, եւ անոնց ազդեցութիւնը կը կորսնցընէր. երբեմն զգայութեանէ բոլորովին զուրկ կ'երեւնար. սակայն ասիկայ միտակ աս պատճառաւ էր, որ բաները եղածնուն պէս չէր տեսներ : Թէ որ մեր աչքովը զանոնք տեսնելու ըլլար նէ, անշուշտ իր սիրտը մեզմէ աւելի ներգործութիւն կ'ընդունէր» :

§ 230 . Խելագարութիւն կամ խանգարումն հաւատքի զօրութեան :

Ըստ գլխուն մէջ գիտողութեան բերուած այլ եւ այլ կարողութիւններուն ներգործութիւնը կը վերջանայ շաւառք պատճառելով կամ յառաջ բերելով : Իմացականութեան աս հաւատք ըսուած հանգամանքը՝ յայտնի է թէ՛՝ ամէն առողջ մտքի մէջ՝ բնական եւ որոշ վերաբերութիւն մը ունի իմացականին բոլոր կարողութիւններուն, թէ՛ Մտաբխններուն եւ թէ՛ Վերբններուն : Սակայն աս վերաբերութիւնը երբեմն կը խանգարի, եւ անատեն հաւատքի զօրութիւնը անանկ վիճակի մը մէջ կ'ըլլայ որ առջեւը բերուած վկայութիւններէն՝ առողջ վիճակին մէջ ընդունելու ներգործութիւնը չընդունիր : Իրեք կարգ մարդիկ կան, որոնց վրայ աս մտաւոր հանգամանքը, կամ հաւատքի կարողութիւնը՝ թէ՛ որ աս անունը կրնանք տալ նէ, խանգարած կ'երեւնայ : — (1.) Ընդհին կարգիները անոնք են, որոնք ուրիշին վկայութեամբը բանի մը հաւատալու անկարողութիւն մը կը ցուցնեն : Իրենք իրենց աչքովը տեսնելու են բանը, ականջովնին լսելու են, կամ ձեռքովն շոշափելու են, ուղղանկիւնով կանոնով եւ կարկինով քննութիւն ընելու են որ հաւատան : Ըստնք այն վայրենին մտքերնիս կը ձգեն, որն որ՝ հաւատալու բան մը իրեն առաջարկուած ատենը՝ գանգտելով մը կ'ըսէ եղեր թէ՛ «ի՞նչ ընէ, ան բանը ինքզինքը իրեն չ'հաւատացնէր կոր» : Ըստ զարմանալի անկարողութեան պատճառները աւելի հետազոտութեան արժան են, քան որչափ ինչուան հիմնը եղած է : Ըստ բանը երբոր շատ ստատիկ ըլլայնէ մէկ մարդու մը վրայ, խելքը թոցընելը մօտ ըլլալուն կամ իրօք թուուցած ըլլալուն նշան մըն է : — (2.) Ուրիշ կարգ մը մարդիկ ալ կան, որոնց հաւատքի կարողութիւնը սա կերպով խանգարած է, որ ամէն բանի հաւատալու դիւրապատրաստ կ'ըլլան : Որչափ անհետեւեթ եւ անհաւանական բաներ ալ որ պատմես, խելոյն կը հաւատան : Պատմութեան թուականներուն՝ անձինքներուն եւ պարագաներուն ամենեւին նկատողութիւն ընել ըսած բանդ չունին, եւ ինչպէս որ իրենց համար չափէն աւելի անհաւանական բան մը չեն գտներ չընդունելու, նմանապէս, չափէն աւելի տարօրինակ՝ զարմանալի՝ կամ յիմարական բան մը չեն տեսներ որ ուրիշին պատմեն զարմանքով : Ըստ մտաւոր վիճակը շատ անգամ թեթեւամտութեան հետ միացած կ'ըլլայ : — (3.) Ոմանց վրայ ալ հաւատքի խանգարումը ընդհանուր չըլլար, այլ մասնաւոր : Շաւառքներուն քովորական ներգործութիւններուն վրայ անկարգութիւն մը չէ :

Անկարգ Ներգործութիւնք Իմացականութեան :

րեւնար, այլ միայն մէկ քանի մասնաւոր բաներու մէջ: Այսին-  
քըն՝ այսինչ այնինչ ծուռ ու անտեղի առաջարկութիւնները ա-  
սոնք իբրեւ ստոյգ կ'ընդունին. եւ անհնար է զանոնք հակառակ  
կողմին համոզելը: Ա՛հ կը կը հաւատայ թէ թագաւոր է. մէկալը  
ինքզինքը Ա՛հ հէմմէտ մարգարէն կը սեպէ. եւ ասանկ շատ ու-  
րիշ անտեղի բաներ իբրեւ անտարակուսելի ճշմարտութիւնք  
կ'ընդունին: Ա՛մէն ուրիշ բաներու վրայ ուղիղ բանականութեան  
տէր կ'երեւնան. բայց իրենց սխալման մասնաւոր առարկաները  
յիշուելուն պէս, կը տեսնուի որ հաւատքի խելագարութիւնն կայ  
վրանին :





ԲԱԺԱՆՄՈՒՆԻՔ ԵՐԿՐՈՐԳ

Ջ.ԳԱՅՈՂՈՒԹԻՒՆԻՔ

ՄՏԻՆ ԶԳԱՅԱԿԱՆ ԿԱՄ ԶԳԱՅՈՂԱԿԱՆ ՀԱՆԳԱՄԱՆՔՆԵՐԸ





## ՆԵՐՆՆՈՒԹԻՒՆ

### ԿԱՐԳԱՒՈՐՈՒԹԻՒՆ ԶԳԱՑՈՂՈՒԹԵԱՆՑ

§ 240 . Ակնարկութիւն ամբողջ մտքին ընդհանուր բաժանմունքներուն :

ՊԼՏՐ է յիշել որ աս գործիս մէջ ընելու հետազոտութիւններնու հիմն գրինք մտքին աս երեք ընդհանուր բաժանմունքը, այն է՝ Իմացականութիւն, Օգացողութիւնք եւ Կամք: Սեր մտաւոր բնութեանը աս երեւելի մասերը չէ թէ միայն սեռօրէն որոշ են մէկմէկէ, այլ իրարմէ ունեցած տարբերութիւննին այնքան յստակ եւ նշանաւոր է որ արգարեւ զարմանալու բան է այնչափ իրար խառնուելնին: Ըստնց երեքն ալ կը տարբերին մէկմէկէ՝ չէ թէ միայն բնութեամբ, որ աս ճշմարտութիւնը գիտակցութիւննիս որոշակի կը ստուգէ՝ անոնց ամէն մէկուն ներգործութիւններուն վրայ ունեցած ճանաչմունքովը, այլ նաեւ իրենց ունեցած վերաբերութիւններովը կը զանազանին իրարմէ, ինչպէս որ բոլոր եղած գիտողութիւններէն կը տեսնուի: Իմացականութիւնը կամ Հասողութիւնը մտքին միւս մեծ բաժանմունքներէն առաջ է կարգով, եւ անոնց ներգործութիւններուն հիմն է: Ինչպէս որ մենք ալ գրքիս առաջին բաժանմանը մէջ մտքին աս մասին հետազոտութեանը պարապեցանք, որն որ կը թողունք հիմայ, եւ ձեռք կը զարնենք մեր մտաւոր կազմուածքին այն մասերուն քննութեանը, որոնք՝ Իմացականութեան նայելով՝ աւելի ներքին եւ հեռաւոր կ'երեւնան իրենց վերաբերական գիրքովը:

§ 241 . Չգացողութեանց ներգործութիւնը իմացականութեան ներգործութեանէն կախեալ է :

Չգացողութեանց ներգործութիւնը ժամանակով ետք է իմացականին ներգործութեանէն : Ընդհանրապէս խօսելով՝ առօրեայ նախընթաց իմացական ներգործութեան զգայական ներգործութիւնք ամենեւին չեն շարժիր եւ չեն կրնար ալ շարժիլ իմացական ներգործութիւն մը չեղած անհնար է որ շարժութիւն՝ բաղձանք կամ բարոյական պարտականութեան զգացում յառաջ գայ : Թե որ ներսիդինիս հաճութեան կամ տրհաճութեան զգացում մը ունենանք, հարկաւորապէս մտքերն ուս առջեւը դուռած հաճութեան կամ տհաճութեան առարկայ մը ըլլալու է . թէ որ բաղձողական զգացում մը ծագի ներսիդինիս, հարկաւ բաղձալի առարկայ մը ըլլալու է առջեւնիս՝ իմացականին ներգործութեամբը մեզի յայտնի եղած : Ընդհանրապէս որ եթէ իմացականութիւն չըլլար, կամ թէ իմացականութեան կարողութիւնները թմրէին ու անգործ ըլլային նէ, ներքին շարժութեանց եւ բաղձանաց ներգործութիւն ալ չէր ըլլար :

Եւ չէ թէ միայն՝ ընդհանուր խօսքով՝ կրնանք ըսել թէ զգացողութեանց ներգործութիւնը իմացականին նախընթաց ներգործութեանէն կախեալ է հարկաւորապէս, այլ մինչեւ անգամ՝ մասնաւորիւ՝ կրնանք հաստատել նաեւ, (դուրս ձգելով ան ընդարդս տարբերութիւնները, որոնք մտքին ամէն կողմը կրնան մտնել,) թէ զգացողութեանց ներգործութեանը աստիճանը իմացականին ներգործութեանը աստիճանին կամ սաստկութեանը համեմատ կ'ըլլայ : Ուրիշ խօսքով՝ բոլոր հաճութիւն գրգռող առարկաներու վրայ, անոնք որ ուրիշներէն աւելի ընդարձակ եւ լաւ տեսութիւն կ'ունենան նէ, ուրիշներէն աւելի հաճութեան զգացում կրնան վայելել, ունեցած զգացողութիւններն ընդարձակութիւնը եւ աշխուժութիւնը իրենց իմացող կամ ճանաչող կարողութիւններուն ներգործութեանը մեղարձակութեանը եւ աշխուժութեանը համեմատ ըլլալով :

§ 343 . Չգացողութեանց բնականի եւ բարոյականի բաժանումը :

Մեր բնութեանը իմացող եւ ճանաչող մասէն շարժութեանց եւ կրից որոշ եւ աւելի հեռաւոր սահմաններն որ կ'անցնինք կոր նէ, աղէկ է որ մէկ մը հարցընենք՝ թէ արդեօք նոյն խակ

## Կարգաւորութիւն Չգացողութեանց :

Օգացողութեանց մասը մէկ երկրորդական եւ ստորակարգեալ բաժանման մը տակ չըկրնար իյնալ : Ըս հարցմանը պատասխան՝ կը ծանուցանենք թէ Օգացողութիւնք, զգուշութեամբ քննութիւն ըլլայ նէ՝ յստակ կը տեսնուի որ, երկու մեծ բաժանմանց կը ճեղին, Բնական եւ Բարոյական : Ըս երկու գըլխաւոր ճիւղերը զատ զատ ճամբաներով յառաջ կ'երթան, եթէ ներքին է ասանկ ըսել, որոնք թէպէտ եւ ըստ մեծի մասին զուգահեռական են իրարու, սակայն էտպէս եւ ըստ բաւականին կը տարբերին մէկմէկէ. երկուքն ալ իրենց յատուկ համագամանքները եւ արդիւնքները ունենալով : Ուստի Օգացողութեանց վրայ մեր ընելու հետազոտութիւններն ալ աս բաժանման վրայ պիտի յառաջ տանինք :

§ 283 . Բնական եւ բարոյական զգացողութիւնք մէկմէկէ տարբեր առարկաներ ունին :

Բնական եւ բարոյական Օգացողութիւնք իրարմէ հիմնովին տարբեր գիտողութեամբ կը նկատեն իրենց ներգործութեանը ենթակայ եղած առարկաները : Բնականը իրերը մեր անձին վերաբերելով կը դիտէ . բարոյականը բոլոր հնարաւոր եղող գոյութեանց վերաբերելով : Ըն իրերուն բաղձալի ըլլալուն կամ չըլլալուն կը նայի . իսկ աս անոնց արդարութեան գերազանց յատկութիւնը ունենալը կամ չունենալը կը նկատէ : Սէկը աս կը հարցընէ՝ թէ որն է աղէկը, միւսը՝ թէ որն է բարին :

Ս երցուր մտրդուս կազմուածքէն իր Խղձմասնքը, իր բարոյական բնութիւնը, եւ իսկոյն անոր մոքին ներգործութեան շարժառիթներուն կէս մասը բնաջինջ կ'ըլլայ . վասն զի ամէն բանի վրայ, որուն որ կատարուիլը բաղձալի կը թուի մեզի. միշտ աս հարցումն ալ կ'ըլլայ՝ թէ արդեօք բարի է ան բանին ըլլալը : Ըս վիճակին մէջ, բարոյական զգացողութեանէ բոլորովին զուրկ ըլլալուն ենթադրութեամբ, երբեմն բոլոր իր շարժումները իր ախորժակներուն թելադրութիւններէն եւ պահանջմանքներէն կը դրդուին : Արբեմն ալ գիտութեան կը ցանկայ, կամ ընկերութիւն կը փնտրուէ, եւ կամ արհեստից ճարտարութիւններովը կը զբաղի . բայց բոլոր աս բաներուն մէջ, ինչպէս նաեւ իր ախորժակներուն դրդմանցը իշխողութեանը տակն եղած ատենն ալ, պիտի գաննենք որ իր նպատակը մինակ հեշտութիւն է, որն որ չ'կրնայ ձեռք բերել նէ, ինքզինքը չ'յաջողած կը սեպէ : Աւ մինչեւ անգամ իր ստորին հակամիտութեանց իշխողութեանէն աստիճան մը վեր ելելով՝ իր աւելի

## Ներածութիւն :

բարձրագոյն տեսակէ եղող ներգործութիւններուն մէջ մտնէ ալ նէ, հոն ալ իր բոլոր շարժումները շահախնդրութեան նկատմամբ վրայ կայացած կ'ըլլան. եւ թէպէտ եւ իր վարուցը կամ գործքերուն վրայ իշխող թելադրութիւնները խիստ ընդարձակ տարածութիւն ունենան, սակայն եւ այնպէս բոլորըն ալ մէկ շրջանի մը մէջ կը պտըտին, որուն կենդրոնը Քննէ : Այլ ահա զինքը աս շրջանէն դուրս հանողը մի միայն իր բարոյական բնութիւնն է, որ անով կը կարողանայ՝ յարմար առիթներով՝ առ Աստուած՝ առ մարդիկ՝ եւ առ տիեզերս վերաբերութեամբ գործ գործելու :

§ 214 . Բարոյական զգացողութիւնք բնական զգացողութիւննէ-  
րէն բարձր են աստիճանաւ :

Մեր բնութեանը աս երկու մեծ բաժանումներուն առարկաներուն տարբերութիւնը այսպէս տեսնելն էս ետեւ, ալ դիւրին է հասկընալ՝ թէ ինչու համար ասոնց երկուքն ալ մի եւ նոյն աստիճան յարգ չունին մեր առջեւը : Յայտնապէս կ'իմանանք թէ մտքին այլ եւ այլ մասերուն վրայ ունեցած պատուոյ եւ համարման զգացումներնուս մէջ աստիճանի տարբերութիւններ կան : Մենք իսկոյն՝ իբրեւ թէ բնական ազգեցութեամբ մը՝ մէկ քանին բարձր կը սեպենք աստիճանաւ, եւ մէկ քանին ստորին : Այլ թէպէտ եւ միշտ չենք կրնար ինչու համար անանկ համարումներ ունենալնիս զուցեւ, սակայն գիտնք որ բանը այսպէս է : Օրինակի աղագաւ՝ առանց ամենեւին տարակուսելու մեր բնական ազգումները ախորժակներէն վար կը դասենք. ախորժակներնիս ալ՝ մեր համարմանը նայելով՝ կ'իրքերէն ըստօրնագոյն են աստիճանաւ : Այլ դարձեալ՝ աս նոյն ընդհանուր իրական ճշմարտութեան համեմատ՝ մեր բարոյական զգացողութիւնները աւելի մեծ համարման խորհուրդներ կը շարժեն ներսիդինիս. այսինքն մեր տուած յարգութեանը մէջ աստիճանաւ բարձրագոյն են ախորժակներէն՝ հակամիտութիւններէն եւ կ'իրքերէն, որոնք մեր բնական զգացողութեանց գլխաւոր բաժանումներն են :

Բարոյական զգացողութիւնը, զգացողութեանց միւս մեծ բաժանումին՝ բնականին նայելով, ատենական եւ դատաւորական իշխանութեան մը պէս է. չէ թէ միայն յարգութեան կողմանէ անկէ վեր է աստիճանաւ, այլ իշխանական զօրութիւնով մըն ալ իրապէս բարձր է անկէ : Ասիկայ սուր աչքով կը քննէ մեր գործքերուն շարժառիթները, շարժութիւն շարժութեան հետ եւ

## Կարդաւորութիւն Չգացողութեանց :

բաղձանք բաղձանքի հետ կը բաղդատէ, տեսակ մը դատաւութիւն է, որ արդարութեան կշիռը ձեռքը բռնած՝ կրից ուղիղ կանոնաւորութեանը պէտք եղած բոլոր վճիռները եւ որոշումները կը սահմանէ :

## § 245 . Անասունները բարոյական զգացողութիւն չունին :

Չգացողութեանց վրայ վերը ըրած որոշումներնուս թերեւս աւելի բացատրութիւն մը կ'ըլլայ, թէ որ հոս յիշենք՝ թէ բնական զգացողութիւնք անբան կենդանեաց վրայ ալ կան, ճիշդ է ապէս մարդոց նման : Անասուններն ալ կերպ կերպ շարժութեանց ընդունակ են : Բնական ազդումներ՝ ակորժակներ՝ հակամիտութիւններ եւ կիրքեր ունին, ճիշդ մարդոց նման, եւ գուցէ անոնցմէ ալ բարձրագոյն աստիճանաւ : Անոնք եռանդով հետամուտ կ'ըլլան բոլոր իրենց ակորժակացը հաճութիւն տուող բաներուն, եւ իրենց բնական կիրքերուն առարկայ եղող ամէն բանէ մեծ զուարճութիւն կը քաղեն : Արհաւիր, կը բարկանան, կ'ընդունին, կը մերժեն, կը սիրեն եւ կ'ատեն՝ գէթ մարդուս կրիցը վրայ սովորաբար գտնուած ուժգնութեան չափովը :

Ասկայն երբոր ասոնց վրայ զգացողութեանց միւս եւ աւելի բարձրագոյն մասը փնտրուենք նէ, չենք գտներ : Այս ահա հոս կը տեսնենք մարդոց եւ անասնոց մէջ եղած որոշման մեծ հիմար : Անասունները մարդոց նման ազէկն ու գէշը կը հասկընան, բանը լոկ բնական կրից վերաբերելով . սակայն մարդիկ բնական բարիին գիտութեանէն ի զատ բարոյական բարւոյն գերազանց գիտութեանն ալ տէր են : Անբան կենդանին մարդու պէս՝ բնական ակորժակաց եւ կրից նկատմամբ որն է բաղձալին գիտէ . սակայն մարդս՝ ասկէ ի զատ՝ բարոյական լուսով բաները քննելով՝ որը հետամտութեան արժանի ըլլալը որոշելու անհունապէս բարձր կարողութիւնն ալ ունի :

## § 246 . Կարդաւորութիւն բնական զգացողութեանց :

Առջեւնիս եղած աս օգտակար նիւթին քննութիւնը պիտի սկսինք Բնական զգացողութիւններէն, որոնք՝ կը գտնենք որ երկրորդական բաժանում մը ունին, այն է Շարժութիւնք եւ Բաղձանք : Աս երկու տեսակ մտաւոր հանգամանքները ան նոյն կարգովը իրարու ետեւէ կու գան, որով որ հիմայ յիշեցինք ա-

Վերածութիւն :

նունին, նախ Շարժութիւնք, որոնք խիստ բազմութիւ եւ զանազան են. եւ յետոյ Ռաղձանք, որն որ կը բովանդակէ ասիրեք բաները, Եւսոբակք՝ Հակամիտութիւնք եւ Կիրք: Եւսիկայ չէ թէ միայն ժամանակի յաջորդութեան կարգն է, այլ նաեւ բնութեան:

Ուրիշ կերպով եւ աւելի մասնաւորաբար խօսելով, մարդու միտքը այնպէս կազմուած է, որ երբոր իմացականութեան սահմաններէն Օգացողութեանց սահմանները կը մտնենք նէ, նախ եւ առաջ Շարժութիւնք զէմբրնիս կ'ելլեն, առջի բերանը ուրիշ բան մը տեսնելու անհնարին ըլլալով: Սենք նախ հաճութեան կամ ահաճութեան եւ կամ մէկ ուրիշ ինչ եւ իցէ կերպ շարժութիւն մը կ'ունենանք ներսիդինիս մեր իմացականութեան ճանաչողութեանը հանդիպած առարկայի մը վրայ: Եւ շարժութիւնը մեր մէջը ծագելէն ետեւ, սովորական մտաւոր ներգործութիւնները կատարուելով՝ Ռաղձանք յառաջ կու գայ: Ինտոր որ առանց նախ եւ առաջ մէկ բանի մը վրայ իմացումն կամ գիտութիւն ունենալու, ան բանէն մեր մէջը հաճութեան կամ տրհաճութեան շարժութիւն չ'ծագիր նէ, անանկ ալ չենք կրնար բաղձալ մէկ բան մը ստանալու կամ մերժելու, առանց ան բաղձանքին հիմը եղող շարժութիւն մը առաջուրնէ ունենալու: Եւ ասիկայ չէ թէ միայն իրական ճշմարտութիւն մըն է, որն որ՝ մըտքին ճշմարիտ կազմութեանը համեմատ՝ մեր գիտողութեան սուղեւը կը բացուի, այլ նաեւ աս ալ կայ որ չենք կրնար ըմբռնել թէ ուրիշ կերպ հնարաւոր էր որ ըլլար: Վերսիդինիս ամենեւին հաճութիւն չ'շարժող մէկ բանի մը բաղձալը բնութեան մէջ անտեղութիւն մը կ'երեւնայ ըլլալ. ուրիշ խօսքով՝ ասանկ մէկ բան մը իրերուն բնութենէն անհնարին կ'երեւնայ, որ եւ իցէ պարագաներու մէջ՝ որ կարող ենք ըմբռնել: Սակայն աս ինտոր որ ըլլայ նէ, մտքին հիմակուան իրական կազմութեանը նայելով աս բանս անհնարին է, թող ըլլայ որ հնարաւոր ըլլար՝ թէ որ միտքը ուրիշ կազմուածքով ստեղծուէր:

§ 247. Կարգաւորութիւն բարոյական զգացողութեանց:

Երբոր աւքերնիս բարոյական զգացողութեանց վրայ կը դարձնենք, կը տեսնենք որ անոնք ալ ճիշդ բնականին նման բաժանման մը տակ կ'երթան: Եւս ընդհանուր ճիւղին վրայ մեր գիտողութեանը հանդիպող առաջին կարգի մտաւոր հանդամանքները բարոյական Շարժութիւններն են. որոնք իմացականութեան նկատմամբ ունեցած աեղբրնուն կողմանէ, եւ ուրիշ մէկ քանի



Կարգաւորութիւն Ձգացողութեանց :

բաներով նման են բնական շարժութեանց : Քարոյական շարժութեանց ետեւէն կու գան ուրիշ զգացմունք, որոնք կրնանք անուանել Պարտաւորիչ զգացողութիւնք կամ զգացողութիւնք բարոյական պարտաւորութեան, որ ասոնք ալ՝ Քաղձանքը բնական շարժութեանց հետ ինչ վերաբերութիւն ունինէ, նոյն վերաբերութիւնը ունին բարոյական շարժութեանց հետ : (Ի՞նչ որ բարոյական շարժութիւն չունենայինք, (այսինքն՝ բարոյական հաւանութեան եւ անհաւանութեան զգացողութիւն չըլլար նէ մեր մէջը, ) անհնարին էր որ ինքզինքնիս՝ ինչ եւ իցէ պարագայի մէջ՝ բարոյական պարտաւորութեան տակ ձանձնայինք, որ յայտնապէս ըսել է թէ ետքի մտաւոր հանգամանքը առջինէն կախում ունի : — Պէտք է նկատել որ աս տեղ աս երկրորդական բաժանման իրական ճշմարտութիւնը գրեթէ լոկ նշանակելով մը կ'անցնինք կոր, առանց մանր բացատրութիւններու մտնելու : Ս'եր բարոյական բնութեան աս երկու մասանց իրարու հետ ճիշդ ինչ վերաբերութիւն ունենալը աւելի ընդարձակօրէն պիտի ցուցնենք եւ որոշ պիտի հասկըցընենք, երբոր իրենց յատուկ տեղը մասնաւորաբար քննութեան առարկայ ընենք զանոնք :





ԶԳԵՑՈՂՈՒԹԻՒՆՔ

---

ՄԵՍՆ ԵՌԵՂԻՆ

ԻՆԵԿԸՆ ԶԳԵՑՈՂՈՒԹԻՒՆՔ

---

ԿԵՐԳ ԵՌԵՂԻՆ

ՇԼԵԴՈՒԹԻՒՆՔ

---



## Գ Լ ՈՒ Խ Ե

### ՇԱՐԺՈՒԹԵԱՆՑ ԲՆՈՒԹԻՒՆԸ

§ 218 . Շարժութեանց վրայ հմտութիւն կ'ունենանք գիտակցութեամբ :

ԳԼՈՒԽԵՆ մէջ նշանակած կարգաւորութիւններնուս համեմատ, Օգացողութեանց վրայ ընելու քննութիւններնիս կը սկսինք Շարժութիւններէն : Ի հարկէ ան ըրած կարգաւորութիւններնէս, որով որ աս կարգէն եղող զգայութիւնները զատ մաս մը սեպեցինք, յայտնապէս կը հասկըցուէր թէ ասոնք իրենց յատուկ բնութիւն մը եւ իրենց սեպհական հանգամանքներ ունին, որ անոնցմով բոլոր միւս զգացողութիւններէն կ'որոշուին : Եւ սակայն միանգամայն աս ալ չուրացուիր որ խիստ դժուար բան է աս զգացողութեանց ճիշդ ինչ բան ըլլալը լոկխօսքով բացատրելը : Յիրաւի չենք կարծեր որ շարժութեանց ինչ բան ըլլալը հասկընալու դժուարութիւն տեսնէ մէկը, երբոր անոնց վրայ կը խօսինք, թէ տրամութեան շարժութիւն ըլլայ՝ թէ գուարթութեան՝ թէ դարմացման եւ թէ ինչ եւ իցէ կերպ որ ըլլայ : Սակայն թէ դժուար ըլլայ հասկընալը՝ թէ դիւրին, աս գիտենք առանց տարակոյսի թէ անհնար բան է մեզի անոնց վրայ բանաւոր բացատրութիւն մը ընելը, իրենք իրենց նկատելով :

Ըս կողմանէ ասոնք ալ բոլոր միւս ճշմարտապէս պարզ եղող մտաւոր հանգամանաց նման են : Իրենց պարզ ըլլալուն պատճառովը հարկաւորապէս սահմանի տակ չեն իյնար. վասն զի սահման ըսելով սահմանեալ իրին իմաստնս բաժանիլը կը հասկըցուի : Ըսյապէս որ շարժութեանց ներքին եւ էական բնութեանը վրայ հմտութիւն ստանալու համար բանաւոր բացատրութիւններու եւ սահմաններու նայելու չենք, որոնք անբաւական են այսպիսի հմտութիւն մը ապալու, այլ Գիտակցութեան : Ըս մէկ անանկ հմտութիւն մըն է, որն որ հոգին ինք իր գոյութեամբը ինք-

Հարժուժեանց բնութիւնը :

զինքին կը յայտնէ, ուղղակի կերպով եւ անմիջապէս: Սուտի թէպէտ եւ սահման ըսուած բանին իսկական եւ օրինաւոր մտքովը շարժուժեանց ինչ բան ըլլալը չենք կրնար սահմանել, սակայն առանց ամենեւին անպատշաճութեան՝ աս բանը ամէն մարդու ինք իր ներքին քննութեանը կրնանք յանձնել: Այլ թէ որ ըստ արժանոյն հարցուի նէ Գիտակցութեան, անիկայ՝ անյուսալի բան է որ՝ ուրիշ պարագայի պէս աս պարագայիս մէջ ալ հարկաւոր եղած հմտութիւնը չ'տայ, եւ անոր տուած գիտութեանը մեծ վստահութիւն կրնանք ունենալ:

§ 249 . Հարժուժեանց տեղոյն վրայ, ուրիշ մտաւոր ներդործութեանց վերաբերելով :

Թէպէտ եւ Հարժուժեանց վրայ գաղափար մը տալու աշխատած ատեննիս պարտաւորած ենք անոնց վրայ՝ ինքնիրեննունն նկատելով՝ հմտութիւն մը ստանալու համար ամէն մէկը իր գիտակցութեանը խաւրելու, սակայն եւ այնպէս կրնանք քանի մը անանկ պարագաներ յիշել, որոնք անուղղակի լոյս մը կը ձգեն անոնց վրայ. եւ ինչ եւ իցէ կերպով որ է նէ աւելի յստակ աչքերնուս առջեւը կը բերեն անոնց եւ ուրիշ մտաւոր հանգամանաց մէջ եղած վերաբերութիւնը: Արդ՝ ծանուցանելու առաջին պարագանիս շարժուժեանց տեղոյն կամ գիրքին կը վերաբերի. (գիրք որ կ'ըսենք նէ իհարկէ նիւթական մտքով իմացուելու չէ, այլ ժամանակի կամ յաջորդութեան կողմանէ ունեցած գիրքերնին հասկընալու է: ) Այ բանիս վրայ երբոր քննութիւն կ'ընենք, աս իրական ճշմարտութիւնը կը գտնենք, ինչպէս որ արդէն առիթ ունեցանք ծանուցանելու, թէ Հարժուժիւնք միշտ իմացողութեանց կամ իմացական հանգամանաց եւ բաղձանաց մէջտեղը կ'ըլլան, թէ որ բնական շարժութիւններ են նէ. եւ իմացողութեանց ու բարոյական պարտաւորութեան զգացմանց մէջտեղը, թէ որ բարոյական շարժութիւններ են: Իմացողութիւններէ յետագայ ըլլալին խիստ որոշ կը տեսնուի անշուշտ: Այսին զի որ եւ իցէ երկրաչափական առածի չափ յայտնի բան է աս, որ մէկ իրի մը վրայ՝ ինչ որ ըլլայ նէ՝ որ եւ իցէ կերպ զգացում կամ շարժութիւն չենք կրնար ունենալ, առանց անոր վրայ հմտութիւն ունենալու կամ անիկայ գիտնալու:

Բաղձանքն ալ՝ ճշմարիտ է թէ՛ շարժութեանց նման ետք է իմացող եւ ճանաչող ներգործութիւններնէս. սակայն աս ալ աղէկ հասկըցուած է որ անմիջապէս չ'յաջորդեր անոնց:

Շարժութեանց բնութիւնք :

Կատարելապէս յայտնի է թէ իմացական եւ կամ ճանաչողական ինչ եւ իցէ կերպ ներգործութիւն մը չ'կրնար բաղձանաց պատճառ ըլլալ, ինչուան որ իմացուած առարկան մեզի հաճելի չըգայ. կամ՝ ուրիշ խօսքով՝ ինչուան որ ներսիդիինս հաճութեան շարժութիւն չ'գրգռէ: Այսինքն զի մէկ բանի մը համար երբոր հաճելի է մեզի կ'ըսենք նէ, ստուգիւ աւ ըսել կ'ուզենք թէ անոր վրայով ներսիդիինս հաճութեան շարժութիւն ունինք: — Եւ ոչ ալ Պարտաւորիչ զգացմանց (այսինքն բարոյական պարտաւորութեան զգացմանց) պատճառ կրնայ ըլլալ ինչ եւ իցէ իմացողական կամ իմացման ներգործութիւն մը, առանց բարոյական շարժութեանց միջնորդութեան: Ինքնայայտ ճշմարտութեան պէս բան մըն է աւ որ երբէք մենք զմեզ բարոյական պարտաւորութեան տակ չենք կրնար ճանչնալ մէկ բան մը ընելու կամ չընելու, ինչուան որ ան ըլլալու կամ չըլլալու բանը նախ մեր ներսիդիին հաւանութեան կամ անհաւանութեան շարժութեան չ'գրգռէ: Բսել է թէ բաղձանքնեքը եւ անոնց հետ վերաբանութիւն ունեցող բարոյական զգացողութիւնները այնչափ անհրաժեշտ կախում ունին շարժութիւններէ, որչափ որ շարժութիւնք կախում ունին իմացողութիւններէ: Ուստի շարժութեանց բուն խի տեղը հօս ցուցուցածնիս է, եւ ուրիշ տեղ չենք կրնար շարժել զանոնք, այսինքն թէ միշտ եւ հարկաւորապէս հետեւորդ են այն բաներուն հմտութեանը, որոնց որ կը վերաբերին. եւ նոյնչափ բնական հարկաւորութիւնով նախորդ են այն միւս մտաւոր հանգամանքներուն, որոնք որ յիշեցինք:

§ 250. Շարժութեանց որպիսութիւնը իմացմանց որպիսութեանը հետ մէկտեղ կը փոփոխի:

Պէտք է որ աղէկ տպաւորուի յիշողութիւններնուս մէջ թէ աս իրէք բաներուն յաջորդութեան կարգը, թէ իրօք եղածին եւ թէ բնութեան կարգին նայելով, ճիշդ նշանակածնուս պէս է, այսինքն՝ նախ իմացողութիւնք, երկրորդ շարժութիւնք, եւ երրորդ բաղձանք՝ թէ որ բնական զգացողութիւններ են նէ, եւ պարտաւորութեան զգացմունք՝ թէ որ բարոյական զգացողութիւններ են: Որ ասոնց երկու վերջինները անմիջապէս առջիններուն կը հետեւին կամական ներգործութեանց զօրութիւնովը, որոնք որ բոլոր մտաւոր ներգործութեան կարգը կը լրմնցընեն ու կը վերջացընեն: Բայց որովհետեւ մենք ասոնք իրենց կարգովը պիտի հետապօտենք, անոր համար Շարժութեանց վրայ՝ որ հի-

## Հարժուութեանց բնութիւնը :

մակուան քննութիւններնու նիւթն է՝ աս ծանօթութիւնն ալ կ'եւելցընենք, թէ իրենց իմացողութիւններէ ետեւ եւ անոնցմէ կախեալ ըլլալուն ճշմարտութիւնը սա պարզ պարագայէն ալ կը հաստատուի, որ միշտ իմացական ներգործութեանց հանգամանքներուն փոփոխելուն հետ մէկտեղ ասոնք ալ՝ ճիշդ նոյն կերպով՝ կը փոփոխին : (Թէ որ անանկ չըլլար, (այսինքն թէ որ շարժութիւնք միայն իմացական ներգործութեանց վրայ հիմնեալ չըլլային նէ,) ինչպէս կ'ըլլար որ աս փոփոխութիւնները ասանկ միօրինակ պատահէին :

(Օրինակի համար՝ ըսենք թէ մէկ ընդարձակ գետնի մը վրայ կը նայինք կոր, սակայն անանկ տեղ մըն ենք կեցեր որ այսինչ այնինչ առարկաները աչքերնէս ծածկուեր են, եւ հետեւաբար հոն գտնուած բաներուն ամբողջութեանը իրարու հետ ունեցած կապակցութիւնները՝ առնչութիւնները մեր տեսութեանը խանգարած կ'երեւնան : Ասանկ պարագայի մը մէջ ներսիդինիս իմացած շարժութիւններնիս հաճութեան շարժութիւններ չեն ըլլար . ու թերեւս տհաճութեան շարժութիւնն ալ կը զգանք : Սակայն երբոր ան անկատար իմացումներնիս կը շտկուի, երբոր անանկ տեղ մը կը կայնինք, ուսկից որ կրնանք այն առջի մեր տեսութիւնէն ծածկուած մասերն ալ միատեղ դիտել, եւ ասանկով բոլոր տեսարանին համեմատութիւնները եւ ներդաշնակաւորութիւնը աչքերնուս առջին կը բացուի, անատեն իսկոյն մեր շարժութիւններն ալ կը փոխուին, ու մեծ հաճութիւն կ'իմանանք : — Արարձեալ՝ թէ որ իր արհեստին վարժապետը եղող մէկու մը ձեռքէն ելած մէկ նկարը տեսնենք, առաջին անգամ վրան նայելնուս մէկ հաճութեան զգացում մը կ'ունենանք, երբոր քիչ մը կը քննենք պատկերը, ու միւսներուն չափ աչքի չերեւցող եւ սակայն աւելի որոշ կերպով նկարիչին վարպետութիւնը յայտնող խել մը մանր մունր բաներ կը տեսնենք, անատեն կ'իմանանք որ ունեցած շարժութիւններնուս մէջ ալ մեծ փոփոխութիւն մը կ'ըլլայ, Այս որչափ որ եւելնայ պատկերին շէնքին ճարտարութեանը վրայ ունեցած հմտութիւննիս, նոյն համեմատութեանք հաճութեան շարժութիւննիս ալ այնչափ կ'եւելնայ : Ամէն բանի մէջ աս ասանկ է, թէ որ անսովոր խանգարիչ ազդեցութիւն մը մէջ չ'մտնէ . որկէ յայտնապէս կը տեսնուի թէ շարժութիւնք խիստ մերձաւոր կապակցութիւն ունին իմացողական ներգործութեանց հետ, եւ անոնցմէ կախեալ են :



§ 251 . Հարժուութեանց արտգութեան եւ զանազանութեան յատկութիւններուն վրայ :

Հարժուութեանց վերաբերական դիրքը մէկ կողմէն իմացողութեանց եւ միւս կողմէն բաղձանաց եւ պարտաւորութեանց մէջ տեղն ըլլալը հաստատելնէս ի հարկէ կը հասկըցուի թէ անոնց եւ այն միւս մտաւոր հանգամանաց մէջ իրական եւ նշանաւոր որոշմունք մը ըլլալու է : Այլ աս որոշմունքը ստուգիւ կայ : Թե որ գիտակցութիւնը շարժութեանց վրայ գիտութիւն կու տայ նէ մեզի, ան նոյն գիտակցութիւնը անոնցմէ ետեւ եկող մտաւոր հանգամանքներուն վրայ ալ գիտութիւն կրնայ տալ, եւ գիտակցութեան աս երկու ներգործութիւններովը ունեցած գիտութիւններնուս տարբերութիւնը հարկաւորապէս աս կ'իմացնէ՝ թէ ան գիտցուած բաներն ալ իրօք մէկմէկէ տարբեր են :

ա . Աս խնդիր եղած մտաւոր հանգամանքներուն ուրիշ մասերու մէջ մէկմէկէ ունեցած տարբերութիւններնէն ի դատ, երբոր գիտակցութիւնով անոնց բաղդատօրէն ինչ հանգամանքներ ունենալին ստուգելու որ կ'ելլենք նէ, աս տարբերութիւնն ալ կը գտնենք, որ շարժութիւնք՝ բաղձանաց եւ պարտաւորութեան զգացմանց հետ բաղդատելով՝ եւելօք շուտ եւ արագ կը ծագին, եւ նոյնպէս շատ շուտով կ'անցնին կ'երթան : Մտքին մակերեւոյթին վրայ կը տեսնուին, ու գրեթէ ժամանակ չանցած անտես կ'ըլլան երեւնալին ու աներեւութանալին մէկ կ'ըլլայ . նման ամառուան եղանակին հանդարտ լճի մը մէջ տեսնուած մանր ալիքներուն եւ ծածանմունքներուն, որոնք ջուրին երեսը կ'ուռին ու կը բարձրանան, եւ դեռ գիտողին աչքը վրանին չ'հաստատուած կ'ընկղմին ու աներեւոյթ կ'ըլլան : Սակայն բաղձանք եւ պարտաւորութեան զգացմունք չէ թէ միայն ետքէն եւ ծանր կը ծագին, այլ յայտնապէս աւելի հաստատուն եւ անթեքելի բնութիւն մը ունին : Արբոր զօրաւոր բաղձանք մը կամ պարտաւորութեան զգացում մը հոգւոյն մէջ կը հաստատուի, աղէկ գիտենք որ ալ անիկայ զրժուար է անկէ հանել կամ արտաքսելը :

բ . Աս երկու կարգ մտաւոր հանգամանաց մէջ եղած որոշմունքը ուրիշ պարագայով մըն ալ կը տեսնուի : Հարժութեանց թիւը, ըստ տեսակի, բաղձանաց եւ պարտաւորութեանց համեմատ չէ : Բաղձանք եւ պարտաւորութիւնք, թէպէտ եւ ուրիշ մտաւոր հանգամանաց նման մասնաւոր պարագաներով եղանակաւորուելու ենթակայ են, սակայն՝ ինքնիրեննուն նկատելով՝ միշտ մի եւ նոյն բանն են : Եսկ շարժութեանց այլ եւ այլ տե-

Հարժութիւնք Գեղեցկութեան :

սակները կ'ըլլան, ինչպէս՝ շարժութիւնք զուարթութեան եւ ցրն-  
 ծութեան, տխրութեան եւ տրտմութեան, ամօթոյ, զարմացման,  
 հիացման եւ ապշութեան: Ունինք նաեւ սա կերպ շարժու-  
 թիւններ ալ, որոնք բոլոր միւսներէն կը տարբերին, ինչպէս՝  
 շարժութիւնք ծաղու, շարժութիւնք գեղեցկութեան եւ վսեմու-  
 թեան, նաեւ բարոյական շարժութիւնք հաւանութեան եւ անհա-  
 ւանութեան, եւ մէկ քանի ուրիշներ: — Թէ որ ընթերցողը ա-  
 ղէկ միտք դնէ կարգաւորութեան վրայով վերը նշանակած բա-  
 ներնուս, անոնց հետ մէկտեղ առնելով ասկէ ետեւ ըլլուելու մէկ  
 քանի ծանօթութիւններ ալ, անատեն՝ թէ որ ըրած ընդհա-  
 նուր եւ ստորակարգեալ բաժանմունքներնուս դէմ հակառակե-  
 լու հակամիտութիւն մը ունէր նէ, ան հակամիտութիւնը շատ կը  
 տկարանայ: Ս'ենք աս բաժանումները հիմնական բաներ կը սե-  
 պենք: Ընանկ կ'իմանանք, թէ մտաց վրայ պէտք եղածին պէս  
 կարգաւորեալ հմտութիւն մը ունենալու համար անհրաժեշտ  
 պէտք են ասոնք: Հատ կարելոր բաներ, օրինակի աղագա-  
 կամքին վարդապետութիւններէն շատ երեւելի կտորներ պիտի  
 գտնենք որ զգացողութեանց վրայով աս հաստատած որոշմունք-  
 ներնէս կախեալ են: Վասն որոյ կը փափաքինք որ մեր ըրած  
 որոշմունքներուն հիմնական պատճառները աղէկ հասկըցուն,  
 այնպէս որ չէ թէ միայն առարկութեան՝ այլ երկբայութեան ալ  
 տեղ չ'մնայ ընթերցողին մտքին մէջ:

## Գ Լ Ո Ւ Թ

### ՀԱՐԺՈՒԹԻՒՆՔ ԳԵՂԵՑԿՈՒԹԵԱՆ

§ 252 . Գեղեցկութեան շարժութիւններուն հանգամանքները :

ՈՐՉՄՓ որ շարժութիւն կայ նէ անոնց ամէնն ալ քննու-  
 թենէ անցընելու միտք չունինք հոս: Ըյնչափ զանազան են տեւ-  
 ստիւս, եւ այնչափ շատուր են թուով, որ դժուար կ'ըլլայ ա-

## Հարժուժիւնք Գեղեցկութեան :

սանկ մէկ բան մը ընելը, եւ թէ որ ընենք ալ նէ, երեւելի օգուտ մը չ'կայ յառաջ գալու : Ուստի կամ ինքնին եւ կամ արհեստներու եւ մարդկային գործքերու հետ ունեցած վերաբերութիւններուն պատճառաւ որոնք որ ամենէն օգտակարն ու երեւելիներն են նէ անոնք ընտրելով, սխիւք նախ Գեղեցկութեան շարժութիւններէն : — Երգէն առիթ ունեցանք ծանուցանելու, թէ ամէն շարժութիւն անսահմանելի է : Եւ բանը ինչպէս որ բոլոր միւս շարժութեանց համար ճշմարիտ է նէ, անանկ ալ աս հիմակուան քննելու ձեռք զարկածներնուս համար ստոյգ է օ Գոյնի՛ ձայնի՛ կամ ճաշակման պարզ զգայութիւնները սահմանելու մասին որչափ դժուարութիւն կայ նէ, նոյն դժուարութիւնը կայ շարժութեանց վրայ այնպիսի սահման մը տալու մասին ալ որ անով ատ մտաւոր հանգամանքները արդէն եղածներէն աւելի դիւրին եւ յստակ իմանալի ըլլան : Սակայն ասոնք երկունշաններ կամ հանգամանքներ ունին որոնք որ հոս կրնանք նըշանակել :

ա. Կախ եւ առաջ գեղեցկութեան շարժութիւնները միշտ հաճոյական կ'ըլլան : Մենք երբէք ցաւ եւ զգուանք տուող բանի մը գեղեցիկ չենք ըսեր : Ուստի երբոր գեղեցկութեան խօսք կ'ընենք նէ, բաժնեւնէս կ'իմացուի թէ ունեցած զգացումներն իս հաճութիւն կամ հաւանութիւն է : Եւ մէն մարդ, ուսեայն ալ՝ անուսն ալ աս մտքով կը գործածեն եւ կը հասկընան գեղեցկութեան շարժութեան խօսքերը : — բ. Կնաւ գեղեցկութեան շարժութեանց խօսք չենք ընել, ունեցած ներքին հաճութեան զգացումնիս որքան սաստիկ որ ըլլայ ալ նէ, առանց ան շարժութիւնները արտաքին բանի մը վերաբերելու : Եւ նոյն շարժութիւնը, որն որ՝ բոլորովին ներքին եւ անջատեալ ըմբռնելով՝ մտքի հաւանութիւն կամ բերկրութիւն կ'ըսուի նէ, անիկայ գեղեցկութեան շարժութիւն կ'անուանենք, երբոր կարող կ'ըլլանք արտաքին բանի մը վերաբերելու, եւ իր տուած հեշտութիւնը անոր վրայ կայացընելու :

## § 353. Գեղեցիկ բան ըսելով ի՞նչ ըսել կ'ուզենք :

Շ ատ առարկաներ կան, որոնք գեղեցկութեան շարժութիւն կը պատճառեն. այսինքն՝ երբոր ան բաները աչքերնուս առջին ըլլան նէ, աս շարժութիւնը՝ քիչ կամ շատ՝ անմիջապէս կը ծագի ներսիդինիս : Եւ տեսակ իրերուն գեղեցիկ կ'ըսենք : Եւ անկ առարկաներ ալ կան, որոնք ներսիդինիս հաճութիւն չեն շարժեր, այլ անտարբեր բաներ են, եւ կամ հաճութեան հակա-

Շարժութիւնք Գեղեցկութեան :

դարձ զգացմունք կը պատճառեն, որ անոնց ալ կ'ըսենք տգեղ կամ զգուելի: Թէ որ հաճելի եւ անհաճոյ շարժութիւններ չըլլային աս երկու կարգ առարկաներուն մէկէն կամ միւսէն պատճառեալ, կամ թէ որ երկուքին ալ պատճառած զգացումները մի եւ նոյն տեսակն ըլլայիննէ, մենք ալ առ հասարակ ամենուն ալ մէկ անուն մը կու տայինք: Բսել է թէ աս երկու կարգ առարկաներուն վրայ խօսած ատեննիս միշտ մէկ որոշմունք մը որ կ'ընենք կոր նէ, աս որոշման հիմնական պատճառը մեր զգացումներն են: Ուրիշ խօսքով՝ մէկ բանի մը Գեղեցիկ որ կ'ըսենք նէ, անոր համար է՝ որ մեր մէջը հաճութեան զգացում մը կը շարժէ, որ ան շարժութիւնը՝ պատահած ժամանակը՝ ուրիշ բանի չենք կըրնար տալ, այլ միայն ան առարկային: Եւ երբոր՝ խօսքը փոխելով՝ աս առարկան գեղեցկութիւն ունի որ կ'ըսենք նէ, անատենըն ալ յայտնագէտ նոյն բանը ըսել կ'ուզենք. այսինքն թէ ան բանը անանկ յատկութիւն մը կամ որպիսութիւն մը ունի, (որուն որ ճիշդ ինչ բան ըլլալը բացատրելը թերեւս դժուար գայ մեզի,) որ հաճութիւն կը շարժէ ներսիդինիս:

§ 254. Գեղեցիկ առարկաները ուրիշ առարկաներէ ինչով կ'որոշուին:

Ս երբ ըսուածներուն նայելով աս երկու բաները հոս կրնանք հաստատել: — (ա.) Ըմէն գեղեցիկ առարկայ ինք իր մէջը մէկ անանկ բան մը ունի, որ անով ճշմարտագէտ կ'որոշուի բոլոր ուրիշ առարկաներէն: Ըս բանը, աս մասնաւոր յատկութիւնը, ինչ որ է նէ, մեր մտքին մէջ յառաջ եկած ան ներգործութիւններուն պատճառ կ'ըլլայ, որոնք որ ներսիդինիս իմանալովին՝ ան առարկային գեղեցիկ է կ'ըսենք: Ըսոր ասանկ ըլլալը բացայայտ կը տեսնուի չէ թէ միայն ան բաներէն որոնք որ նոյն իսկ առարկաներուն վրայ շատ անգամ կը գտնենք՝ երբոր զգուշութեամբ քննութիւն կ'ընենք, այլ նաեւ աս իրական ճշմարտութենէն՝ թէ մտքին մէջ յառաջ եկած ներգործութիւնները միշտ իրենց յատուկ պատճառներ կ'ունենան: Թէ որ միտքը այսինչ առարկան տեսած ատենը հաճութեան շարժութիւն մը իմանայ, ատիկայ աս պատճառաւ է որ այն մասնաւոր մտաւոր հանգամանքին հետ հաստատուն եւ անփոփոխ աննշութիւն ունեցող բան մը կայ ան առարկային վրայ, որ անով բոլոր ուրիշ առարկաներէն կ'որոշուի: Թէ որ ան որոշիչ որպիսութիւնը չըլլար նէ ան բանին վրայ, մարդուս միտքը անանկ կազմուած է որ, չէր կրնար անկէ յառաջ եկող շարժութիւնը իմանալ:

(բ.) Գեղեցիկ առարկաները բոլոր ուրիշ առարկաներէն կ'ու-

Հարժութիւնք Գեղեցկութեան :

բողուն չէ թէ միայն բուն իրենց մէջ եղած մէկ որպիսութիւնով մը կամ հանգամանքով մը, այլ նաեւ յաւելեալ որպիսութիւնով մըն ալ, տեսակ մը փոխադրեալ լուսափայլութիւնով, որն որ նոյն իսկ մտքէն կ'անդրադառնայ անոնց վրայ : Արդոր գեղեցիկ բանի մը վրայ կը նայինք, հաճութիւն մը կը զգանք, քիչ կամ շատ երջանկութիւն կ'իմանանք : Աս հաճութեան շարժութիւնը մենք բնականապէս զանիկայ պատճառող առարկային հետ կը կապակցենք, եւ անտարակոյտ սս բանը իմանկութենէ հետէ խիստ շատ անգամ անգիտութեամբ ըրած ենք սովորութեամբ : Ասոր հետեւութիւնն ալ աս կ'ըլլայ որ մեր ներքին բերկրութեան եւ աւնոր արտաքին պատճառին մէջ տեղի զուգորդութիւնը այնպէս կը զօրանայ, որ ալ անկարող կ'ըլլանք զանոնք մէկմէկէ զատելու, եւ պատճառ եղող առարկաներն ալ յատուկ իրենցը եղող որպիսութենէն ի վատ, մէկ լուսափայլ ճաճանչով մը պատած կ'երենան, որն որ մտքէն յառաջ կու գայ :

§ 255 . Գեղեցկութեան շարժութեան պատճառներուն կամ առիթներուն զանազանութիւնը :

Գեղեցկութեան նիւթին վրայ տալու ծանօթութիւններնուս մէկն ալ աս է, թէ անոր առիթ եղող առարկաները միշտ մի եւ նոյն տեսակ բանը չեն, այլ խիստ բազմադիմի են . որոնք չէ թէ միայն իրենց ընդհանուր բնութեամբը, այլ իրենց ստորակարգեալ մանր պատահմունքներովն ալ կը տարբերին մէկմէկէ : (Ըստ այսմ՝ Գեղեցկութիւն բառը վայելչապէս կրնանք աւելի ընդհանուր եւ հասարակ ըստ մը սեպել քան թէ մասնաւոր, բազմաթիւ շարժութիւններ ցուցնող, որոնք որ միշտ հաճոյականութեան հանգամանքը կը կրեն վրանին, եւ ամէնքն ալ բնութեամբ ըստ ամենայնի մի եւ նոյն բանն են, եւ սակայն թէ իրենց ծագման առիթներուն կ'ողմանէ եւ թէ իրենց սաստկութեան աստիճանովը կը տարբերին իրարմէ :

ա . Իրենց ծագմանը առիթ եղող բաներուն վրայ՝ աւելի մասնաւոր կերպով խօսելով՝ աս ծանօթութիւնները կրնանք տալ, թէ գեղեցկութեան շարժութիւն կ'իմանանք ներսիդինիս, մէյմը՝ մեր տեսութեան զգայարանքին հանդիպող նիւթական բաները զննած ատեննիս . ինչպէս՝ անտառներ՝ ջուրեր՝ մշակուած արանք եւ տեսանելի հաստատութիւնը : Աչքերնիս կը պտրտցընենք անթիւ անհամար տեսակ գործքերով լեցուած ընդարձակ բնութեան վրայ, եւ կը տեսնենք իր սքանչելիքները վարը իր խորութիւններուն մէջ ու վերը իր բարձրութիւններուն մէջ, իր խն-

## Հարժուժիւնք Գեղեցկութեան :

ցինքրուն ու ժժմունքներուն եւ հանքերուն վրայ, իր տունկերուն՝ ծառերուն եւ ծաղիկներուն վրայ, իր ջուրերուն եւ իր աստղերուն եւ արեգակներուն վրայ. եւ մեր միտքը աս իր զննութեանը ատենը կը շարժի ու թունդ կ'ելլէ. հաճութեան աղբիւրներ յանկարծ կը բացուին իր մէջը. այնպէս որ հարըստահարութիւն ըրած կ'ըլլանք մեր մտաւոր կազմութեանը, թէ որ գեղեցիկ անունը չ'տանք անոնց :

բ. 'Կարձեալ՝ իմացական եւ բարոյական առարկաներու վըրայ զննութիւն ընելէն ալ գեղեցկութեան շարժութիւն կ'ըլլգանք: Ուրիշ խօսքով՝ միտքն ալ նիւթոյ նման այս շարժութեանց առիթներ ունի: Արբոր կը տեսնենք հանճար՝ իմաստութիւն՝ ճշմարտութիւն՝ յարգութիւն՝ վեհանձնութիւն՝ բարեսիրութիւն՝ արդարութիւն եւ մտքին ուրիշ ասոնց նման որպիսութիւնները՝ որ ինչպէս եւ ինչ նպատակաւ ստեղծուած են նէ՛ անանկ կը գործեն, անատեն առջեւնիս գեղեցկութեան շարժութիւններու առիթներ կ'ունենանք: Մարդուս դէմքը՝ իշխել լոկ շրջագիծ նկատելով՝ անտարակոյս գիղեցիկ է. բայց երբոր անոր վրայ որոշ կերպով հասկցողութիւն եւ սիրելութիւն կը տեսնենք, եւս առաւել կը գեղեցկանայ:

գ. 'Եւ այց գեղեցկութեան շարժութիւնները միայն աս առիթնեոուն կապուած չեն: Կան շատ ուրիշ բաներ ալ, որոնցմէ այն վիսի զգացումներ կը պատճառին, որոնք չէ թէ միայն գեղեցկութիւն անունը կը կրեն, այլ եւ ճշմարտապէս նման են գեղեցկութեան շարժութեանց: ( ) ընտելի աղագաւ՝ երբոր աղէկ յորինուած ընտիր տրամաբանութեան գործողութիւն մը կը զննենք, գեղեցկութեան զգացում կ'իմանանք ներսի դիմիս. եւ ասոր համար է որ չափաբերք, որոնք ստուգիւ մենք ինչպէս որ բնութեան գործքերը զննած ատեննիս բերկրութիւն կ'իմանանք նէ ճիշդ անոնց նման բերկրալիր զգացումներ կ'ունենան, գեղեցիկ նախադասութեանց խօսք կ'ընեն: — Արաժիշտը քաղցր նուագներու գեղեցիկ կ'ըսէ. բանաստեղծութեան հարեալ անձը ընտիր երգերու աս անունը կու տայ. նրամանապէս նկարիչն ալ իր նկարներուն գոյնին եւ նպատակներուն մէջ անանկ բաներ կը գտնէ, որոնց աս անունը կը պատշաճի: Կա եւ բնաբանական գիտութեանց այլ եւ այլ ճիւղերուն մէջ եղած փորձերուն ալ կը գործածենք աս բառը. մասնաւորաբար թէ որ անանկ փորձ մը ըլլայ, որ տարակուսութեան եւ վեճաբանութեան նիւթ եղող բան մը որոշէ նէ, անատեն՝ առանց անպատշաճութեան՝ ասիկայ գեղեցիկ փորձ եղաւ կ'ըսենք:

Եւ այնպէս որ բոյոր բնութիւնը, գեղեցիկ բառը ընդարձակ

## Հարժուժիւնք գեղեցկութեան :

մտքով մը առնելով , գեղեցկութեան շարժառիթներ կը բովանդակէ , իմացականութիւնն ալ , զգացողութիւնն ալ , աշխարհիս նիւթեղէն բաներն ալ : Սակայն ասով հաստատած ճշմարտութիւննիս բոլոր մասնաւորաց վրայ ալ առնել չենք ուզեր , ըսել չենք ուզեր թէ աս գլխաւոր կարգերուն մէջ բովանդակեալ ամէն բան գեղեցիկ է . հապա միայն աս է ըսածնիս թէ բնութեան գլխաւոր բաժանմունքներէն մէկն ալ զուրկ չէ գեղեցկութեան տարրերէն :

§ 256 . Ըմէն բան հարկաւորապէս յարմարութիւն չունի գեղեցկութեան շարժութիւն պատճառելու :

Ըսուածներէն յայտնի կ'երեւնայ թէ մտքին ու անոր առջեւը ներկայացող արտաքին առարկաներուն մէջ մէկ յարմարութիւն մը կամ կապակցութիւն մը պիտի ըլլայ անշուշտ : — Ըս բանը արդէն օրոշ կերպով տեսանք զգայութեանց եւ արտաքին իմացմանց վրայ խօսած ատեննիս . նոյնը նոյնչափ յայտնի կը տեսնենք նաեւ մեր բնութեան աս հիմնական քրննած մասերնուս վրայ : Միտքն ու արտաքին նիւթեղէնք եւ մեր կացութեան արտաքին պարագաները իրարու հետ փոփոխակի յարմարութիւն մը ունին : Ըսոր համար՝ երբոր գեղեցկութեանն օրպիտութիւնը մէկ բանի մը կու տանք նէ , աս փոփոխակի համեմատութիւնն է ցուցնել ուզածնիս , փասն գիմենք ան բանին գեղեցիկ կ'ըսենք , որն որ հաճոյական օրպիտութիւններ ունի . ուրիշ խօսքով՝ որն որ գեղեցկութեան շարժութեան պատճառ կամ նախորդ է : Թէ որ աս յարմարութիւնը կամ կապակցութիւնը չըլլար նէ մեր մտաւոր կազմութեան եւ աս տեսակ արտաքին առարկայի մը մէջ , անիկայ մեզի գեղեցկութեան հանգամանքով չէր երեւնար , թէ եւ ուրիշ էակներ զանիկայ ուրիշ կերպ տեսնէին :

Սակայն ասոր վրայ մէկը չ'կրնար սոգէտ ըլլալ՝ թէ ամէն բան աս շարժութիւնը չ'կրնար պատճառել . եւ աս պատճառելութեան զօրութիւնը ունեցողներուն մէջէն ալ ոմանք շատ ունին , ոմանք քիչ : Ըսիկայ մեզ մէկ շատ կարեւոր խնդիրի մը կը բերէ : Ընպատշաճ հետաքննութիւն մը չէ աս բանս գիտնալ ուզելը , թէ ինչո՞ւ համար գեղեցկութեան ներգործութիւնը սյսպէս սահմանաւորեալ է , եւ ինչո՞ւ ամէն բան աս հագամանքը ունեցողներուն կարգին տակ բովանդակեալ չէ : Ինչո՞ւ համար այլ եւ այլ առարկաներ մի եւ նոյն շարժութիւնը այլ եւ այլ պատիճանաւ կը պատճառեն : Ըս ինչո՞ւ համար մի եւ նոյն ա-

## Հարժուժիւնք Գեղեցկութեան :

աարկաները այլ եւ այլ անձանց վրայ մեկմէկէ տարրեր շարժու-  
թիւններ յառաջ կը բերեն, եւ մինչեւ անգամ մի եւ նոյն ան-  
ձին վրայ երբեմն մէկ կերպ եւ երբեմն ալ ուրիշ կերպ շարժու-  
թիւն կը պատճառեն :

§ 257 . Գեղեցկութեան շարժութեանց ընդունակութիւնը մեր  
մտաւոր կազմութեան մէկ վերջին սկզբունքն է :

Աս խնդիրներուն պատասխանելու համար՝ մէկ ճշմարտութիւն  
մը ընդունուած սեպուելու է . ճամբայ ելլելու կէտ մը ըլլալու է,  
որ անկէ սկսինք բացատրութեան . չէ նէ բոլոր ըսածներնիս ան-  
լուծանելի շփոթութիւնով պատած կ'երևնայ : Այսինքն՝ պէտք  
է որ ասիկայ ընդունուած սեպենք, թէ միտքը բնածին ընդունա-  
կութիւն մը ունի այսպիսի շարժութեանց : Այլ չենք կրնար կար-  
ծել թէ խիստ ընդհանուր փորձառութիւնով հաստատուած այս-  
պիսի ընդունելութեան մը դէմ առարկութիւն մը ըլլայ : Ամէնքս  
ալ գիտենք որ աս զօրութիւնով ստեղծուած ենք, վասն զի  
բոլորնիս ալ գիտակցութիւնով իմացած ենք ան շարժութիւննե-  
րը ունենալնիս, որոնք որ անոր կը տրուին : Այլ թէ որ հարցուի  
թէ ինչպէս կամ ինչո՞ւ աս զգացումները ունենալու աս զօրու-  
թիւնը եղեր է մեր մէջը, աս միայն կրնանք ըսել, թէ մտքին  
Արարիչը ասանկ հաճեր է զանիկայ ստեղծելու, եւ թէ ասիկայ  
մեր բնութեանը մէկ ընդարդս եւ վերջին տարրն է :

Աստի թէպէտ եւ միտքը ի բնէ ընդունակութիւն ունի գե-  
ղեցկութեան շարժութիւններու, ինչպէս որ ամէն մարդ գիտէ,  
սակայն աս ալ գրեթէ նոյնչափ յայտնի է բնութեան թէ Փիղի-  
գական եւ թէ իմացական մասին մէջ տեսած կարգադրութիւն-  
ներնէս, թէ աս շարժութիւնները իրենց հաստատուն՝ որոշ պատ-  
ճառներ կամ նախորդներ ունին : Տեսանք որ աս պատճառնե-  
րը կարգ մը կամ տեսակ մը բաներու սահմանուած չեն, այլ  
բազմադիմի պարագաներու մէջ կը գտնուին, տրամաբանութեան  
գործողութիւններուն մէջ, բանաստեղծութեան երեւակայական  
ստեղծումներուն մէջ, երաժշտական եղանակներու մէջ, բնա-  
բանական փորձերու մէջ, նիւթական գոյութեանց ձեւերուն ու  
կերպարանքներուն մէջ, եւ այլն : Թներեւս իրբեւ ընդհանուր  
խօսք մը (այսինքն եղած գէպերուն շատը կամ մեծ մասը մէջ  
առնելով) կրնանք հաստատել թէ՛ աս առիթ եզոզ առարկանե-  
րը՝ չ'կրնար ըլլալ որ՝ մտքին ներկայութեանը գան, ու միտքը  
անշարժ մնայ, մենք զանոնք կը զննենք, եւ հարկաւորապէս քիչ  
կամ շատ բերկրութեան զգացում մը կ'ունենանք, որ անով կը



Հարժուածիւնք Գեղեցկութեան :

կարողանանք գեղեցկութեան հանգամանքը ան առարկաներուն տալ :

Աս բանը իբրեւ ուղիղ ընդհանուր հաստատութիւն մը ցուցընելէս կը հասկըցուի որ կան այնպիսի առարկաներ ալ, որոնք իբնէ գեղեցկութեան շարժութիւն չեն պատճառեր: Այս ասկէ ճամբայ կը բացուի առջեւնիս գեղեցկութեան շարժութիւն պատճառելու զօրութեան կողմանէ իրերուն մէջ եղած աս տարբերութեանը վրայ աւելի մասնաւոր քննութեանց մտնելու: Աստ այսմ՝ մեր ընելու յառաջիկայ ծանօթութիւններովը նպատակնիս աս առարկաներէն եւ առարկաներու ձեւերէն եւ որպիսութիւններէն մէկ քանին ցուցընել է, որոնք որ կ'երեւնայ թէ ի բնէ՛ եւ ատ զօրութիւնը չունեցող ուրիշ առարկաները որոշուած ըլլալով՝ յարմարութիւն ունին յիշեալ զգացումները ներսիդինիս շարժելու:

§ 258 . Ծանօթութիւնք ձեւերու գեղեցկութեան վրայ: — Բոլորակ :

Ան առարկաներուն եւ առարկաներու որպիսութիւններուն վերայ ընտրութիւն ըրած ատեննիս, որոնք որ կը կարծենք թէ իրերուն սկզբնական կազմութենէն յարմարութիւն ունին ներսիդինիս հաճութեան շարժութիւններ ծագեցընելու՝ իրենք իրենցմէ՛ առանց մէկ արտաքին օգնութեան մը, չենք խոստանար ստուգութեամբ խօսելու: Ասելիքներնուս ճշմարտութեանը վկայութիւնը մարդոց ընդհանուր փորձառութիւնը պիտի ըլլայ, եւ բոլոր ընել կըրցածնիս՝ ատ փորձառութեան արդիւնքը յառաջ բերել է՛ որչափ բան որ ստուգուած է նէ: Աւտի սկզբնաւորութիւնը նիւթական բաներէն ընելով, ընդհանուր փորձառութեան վկայութեամբը կը համարձակինք հաստատել՝ թէ նիւթոյ այնպիսի տրամագրութիւնները կամ ձեւերը կան որ գեղեցիկ են, ինչպէս՝

Բոլորակը:

Շաղկ երբէք կը պատահի որ ոլորուն կամ օճապտոյտ ձեւի մը վրայ նայինք, ու հաճութիւն մը չիմանանք, եւ երբոր բոլորակ ըլլայ տեսածնիս նէ, հաճութեան զգացումնիս ալ սաստկագոյն կ'ըլլայ: Ասոր համար շօկարգ, որ թէ իր մտաւոր կարողութիւններովը եւ թէ իր կենաց սովորութիւններովը արժանաւոր է ասանկ բանի մը մէջ դատաւոր սեպուելու, իր Ա՛ երլուծութիւն Գեղեցկութեան ըսուած գրքին մէջ բացայայտ կերպով կ'ըսէ՛ թէ ան գծերը, որոնց վրայ ամենէն շատ փոփոխութիւն կամ զանազանութիւն կայ, ամենէն եւել գեղեցկութեան պատճառ կ'ըլլան, եւ թէ մակերեւոյթ մը պատելու ամենէն գե-

ղեցիկ գիծը ոլորունը կամ օձաձեւն է, կամ ան՝ որն որ շարունակ բայց անիմանալի կերպով մը կը խոտորի ուղիղ գծէն: Այս գիծը, որն որ յաճախ կը տեսնենք խեցիկներու՝ ծաղիկներու եւ բնութեան ուրիշ հաճոյական երեւոյթք ունեցող բերքերուն վրայ, ինք գեղեցկութեան գիծ կ'անուանէ:

§ 259 . Բնածին կամ ներքին գեղեցկութեան վրայ: — Բարակ:

Գեղեցկութեան նիւթը հետազօտած ատեննիս հարկ է որ երկու նկատմամբ դիտողութիւն ընենք անոր վրայ. այսինքն է՝ իբրեւ Վերքին եւ իբրեւ Օուգորգեալ: Այս գլխուն մէջ տալու ծանօթութիւններնիս միայն Բնածին կամ Վերքին ըսուած գեղեցկութեան վրայ պիտի ըլլայ: որ աս անունով իմացընել կ'ուղենք ան գեղեցկութիւնը, որ իրերուն բնութեանը մէջ կայ, դիպուածական կամ լոկ յաւելուած եղող պարագաներէ անկախութեամբ: — Բայտ այսմ՝ Բարակին արուած գեղեցկութիւննիս աս տեսակէն է: Ան առարկաները, որոնք որ բոլորակաձեւ են, կամ ան ձեւին մօտ են, որ աչքերնուս շարունակ դարձող շրջագիծ մը կ'երեւցընեն, անոնք իրենց մէջ, եւ բուն ատ ձեւակերպութեան պատճառաւ, քիչ կամ շատ՝ եւ յաճախակի բարձրաստիճան գեղեցկութիւն մը ունին: Կակաչին ծոած ցողունը, սաղարթակաթ ուռնիկին կոր ճիւղերը, բաղեղան ոլորտ պտոյտքը, կնձնիին բոլորտիքը փաթթուող որթը, օձապտոյտ գետը շատ հաճելի կ'երեւնան մարդուս աչքին: Արկնից բնդարձակ բոլորակաձեւ տարածութիւնը, երբոր պարզ գիշերները կը զընենք, գեղեցիկ առարկայ մըն է տեսութեան, իր վրայ սփռած լուսափայլ աստեղաց պարբրուն շքեղութենէն անկախութեամբ մտածելով: Իր ահագին աղեղնածեւ կամարը երկնից երեսը պարզող ծիածանը անշուշտ շատ գեղեցիկ առարկայ մը պիտի սեպուէր մինչեւ անգամ թէ որ լոկ շրջագիծ ձեւ մը երեւնար, առանց այն աննախանձորդ փառաւոր գոյները վրան տեսնուելու: Այսպէս են բազմաթիւ ուրիշ օրինակներ ալ, առատութեամբ բնութեան գործքերուն մէջ ցրուած, որոնց թուոյն շատութիւնը չ'ներբեր որ հոս մէկիկ մէկիկ յիշենք:

§ 260 . Ուղիղ եւ անկիւնաւոր ձեւերու գեղեցկութեան վրայ:

Թէպէտ եւ բոլորակաձեւ կամ շարունակ փոփոխող շրջագիծը բոլոր ուրիշ շրջագիծներէ աւելի բերկրութեան շարժութեանց

Շարժութիւնը Գեղեցկութեան :

պատճառ կը սեպուի, սակայն կարծելու չենք թէ ուրիշ ձեւեր զուրկ են աս գեղեցկութեան զօրութենէն: Հարկաւոր չէ ըսել, թէ բնութեան գործքերը քննած ատեննիս՝ օձաձեւ եւ ոլորուն ձեւերէ ի զատ բազմաթիւ ուրիշ օրինակներ ալ կը գտնենք ուղիղ եւ անկիւնաւոր ձեւերու, թէպէտ եւ թերեւս ետքինները առջիններէն քիչ են: Աս ձեւերուն, ինչպէս որ բնութեան ձեւքէն ելած են նէ անանկ, քիչ կամ շատ գեղեցկութիւն ունենալուն վրայ մէկ մարդ մը չ'կրնար տարակուսիլ: Վրեթէ աւելորդ բան մըն է ասիկայ բացատրելու արշաստիլը անոնց, որոնք որ բնութեան բազմաթիւ կերպ կերպ գործքերը՝ որ ամէն կողմ տարածուած են՝ տեսնելու եւ գիտելու սիրտ եւ աչք ունին: Անոր ձեւերը, թէ սկզբնականները եւ թէ բաղադրեալները, անհամար են. եւ թէ որ ատնց ամենուն վրայ ալ գեղեցկութիւն չ'գտնուիլը ճշմարիտ է նէ, աս ալ նոյնչափ ճշմարիտ է, թէ գեղեցկութիւնը միայն մէկ հատին կամ մինչեւ անգամ մէկ փոքր մասին սահմանուած չէ: Ան մեր քալած գետնին երեսը սիւսած ծիւղերնին իրարու հետ հիւսուած թուփերը, եթէ ներելի է ըսել, գեղեցկութեան կայծերը եւ ճաճանչները կը հեղուն դափրնուս բուրրափքը: Անձնին ալ, որ ընդարձակ սաղարթալից կանանչ կամարը վրանիս տարածած դէպ ի երկինք կը բարձրանայ, գեղեցկութիւնով կը փայլի, թէպէտ եւ խիստ բազմօրինակ կերպարանք մը ունի: Մտադրութեամբ կ'ընդունինք, վասն զի դէմ որ կենանք նէ՝ մեր բնութեանը թելադրութիւններուն վրայ բունացած կ'ըլլանք, թէ սաղարթակախ ուռննիին կոր ծիւղերուն վրայ գեղեցկութիւն մը կայ: Աս սակայն՝ նոյն ատենը՝ ներսիդինիս հակամիտութիւն մը չենք զգար հաստատելու՝ թէ անապատին մէջ ցցուած առանձին միայնակ արմուենին, որ միայն երկայն բարակ ուղիղ առանց ծիւղի բուն մը ունի, Վորնթացոց սիւներուն նման գլուխը փունչ մը անբեւով, գեղեցկութենէ զուրկ է բոլորովին:

«Կազմաթիւ ստորին կարգէ բուսեղէններ կան, կ'ըսէ Ալեգրն եւ շատ հասարակ խոտեղէններ, որոնք բոլորովին անկիւն ու ուղիղ գիծ են, եւ բոլոր կազմուածքներուն վրայ ամենեւին մէկ կօրութիւն մը չերեւնար. եւ սակայն ամէնն ալ գեղեցիկ են»: Աւրիշ տեղ մը եւելք գեղեցկութիւն կուտայ բախասանի անկիւնաւոր ցողունին: Աս մրտենիին համար կ'ըսէ, թէ «ընդհանրապէս գեղեցիկ ձեւ մը կը սեպուի, սակայն ցողունը ուղղահայեաց շտկութեամբ կը բուսնի, եւ ծիւղերուն յօդուածներն ալ նմանապէս կանոնաւոր ուղղանկիւն կը ձեւանան, ու ծիւղերը կամ ուղիղ եւ կամ անկիւնաւոր գծով կ'երկնան»:

§ 261 . Քառակուսի, բրգաձեւ եւ եռանկիւն ձեւերու վրայ :

Գեղեցկութիւնը միայն բոլորակի տեսակ ձեւերու սահմանուած չըլլալը ցուցնելու համար անցեալ հատուածին մէջ ըրած ծանօթութիւններնիս բնական դիտողութիւններէ իզատ արհեստական գործքերու վրայ տեսածներնէս ալ կը հաստատուի : Օրինակի աղագաւ քառակուսին, թէպէտ եւ գեղեցկութեան կողմանէ նշանաւոր ձեւ մը չենք սեպեր, սակայն փոքր իշատէ նկատողութեան արժան է : Իր գործնական յարմարութեանը համար, ու նաեւ ուրիշ մէկ քանի ձեւերէ աւելի մարդու ձեռքին վարպետութեանը տակն իյնալուն համար՝ ճարտարապետութեան մէջ շատ կը գործածուի ասիկայ, եւ ընդհանրապէս հաճոյական եւ երբեմն ալ շատ գեղեցիկ կերպարանքով մը կ'երեւնայ :

Բրգաձեւը, որ բոլորակին հետ եւս առաւել մերձաւորութիւն չունեցող ձեւ մըն է, Գոթական ճարտարապետութեան մէջ նշանաւոր մաս մը կը սեպուի, եւ երբոր պէտք եղածին պէս բաղդատուի ուրիշ ձեւերու հետ նէ, որոշ հաճութեան զգացում մը կու տայ մարդուս : Զոկարդ այն իր ծանօթութիւնը բացատրած ատենը, թէ զանազանութիւնը մեծ ներգործութիւն ունի գեղեցկութիւն յառաջ բերելու մասին՝ բացայայտ խօսքով կ'ըսէ, թէ բրգաձեւը, որ յատակէն ինչուան գլուխը կամաց կամաց կը նուազի, գեղեցիկ ձեւ մըն է : Եւ ասանկ սեպուելուն համար է որ այնչափ շատ գործածուած կը գտնենք՝ չէ թէ միայն յիշեալ ճարտարապետութեան մէջ՝ իբրեւ անոր մէկ յատուկ մասը, սյլ նաեւ աշտարակներու՝ դամբանական յիշատակարաններու եւ ուրիշ արհեստական գործքերու մէջ :

Եռանկիւն ձեւերն ալ գեղեցկութենէ զուրկ չեն : Ելիզըն կ'ըսէ, թէ Հունաց եւ Հռոմայեցւոց իրենց կիրթ ախորժակ ունեցած ատենները գործածած կարասիքներուն ձեւերը գրեթէ առ հասարակ ուղիղ եւ անկիւնաւոր գծերով լեցուն էին : Ինչ ասորոնեան եռոտանիէն գեղեցիկ ինչ կայ, կը հարցունէ : «Ոտքերը կամաց կամաց բարակցած ինչուան վերջը եւ իրենց վերջաւորութեանը մօտէն իրարու հետ միանալ սկսած, սեղանին տախտակը՝ սակաւ ինչ զարդարանքով՝ գրեթէ ուղիղ անանկեամբ ոտքերուն վրայ զետեղած, եւ ամէնը մէկէն մէկ անկատար եռանկիւն մը եղած, պատուանդանը վեր : Եսկէ աւելն անկիւնաւոր ձեւ մը գրեթէ անհնար է սղմեցնել ասանկ շէնքի մը մէջ, եւ սակայն ասկէ ալ գեղեցիկը չ'կրնար ըլլալ» :

## Հարժութիւնք Գեղեցկութեան :

Բուռածներուն վրայ արժան է սա մէկ բացատրական ծածոթութիւնն ալ եւելցընել : Շատ պատճառ կայ հաւատարութե մէկ առարկայի մը պատկերը որչափ որոշակի եւ անմիջապէս ըմբունենք նէ մտքով, անոր մեր մէջը պատճառած գեղեցկութեան շարժութիւնն ալ այնքան սաստիկ կ'ըլլայ ամէն ատեն : Ընտարակուսելի պատշաճութեամբ եւ խելքի հարցընելով կրնայ մէկը հաստատել թէ քառակուսի ձեւն ալ բոլորակի չափ գեղեցկութիւն ունի, թէպէտ եւ ընդհանրապէս կ'ընդունուի թէ առջինին գեղեցկութիւնը ետքինէն քիչ է : Սակայն աս մէկ խնդրոյ նիւթ մըն է, թէ արդեօք աս տարբերութիւնը ըստ մեծի մասին նոյն իսկ ձեւերուն սկզբնական զօրութիւններէն է, չէ նէ հոս հիմայ յիշուած պարագայէն : Արիշ խօսքով՝ արդեօք աս իրական ճշմարտութենէն չէ, որ բոլորակը՝ աւելի պարզ ձեւ մը ըլլալով՝ առաւել ուղղակի որոշ եւ բոլորական տպաւորութիւն մը կ'ընէ. ընդհակառակն՝ քառակուսի եւ անոր նման ձեւերու մէջ մարդուս մտադրութիւնը նկատուելու կողմերուն եւ անկիւններուն կը բաժանի :

§ 262 . Գոյնի բնածին կամ ներքին գեղեցկութեան վրայ :

Հետազօտած հետաքրքրական նիւթերնուս քննութիւնը յառաջ տանինք, ծանուցանելով՝ թէ ինչպէս որ մարմիններու շրջագիծը եւ ձեւը զննելէն, նոյնպէս եւ գոյներու վրայ նայելէն գեղեցկութեան շարժութիւն կ'ունենանք : Ըս բանիս վերայ մեր ընդունած վարդապետութիւնը աս է, թէ գոյներէն ոմանք, ետքէն զուգորդութեանց միջոցաւ իրենց վրայ յաւելեալ որպիսութիւններէ անկախութեամբ, յարմարութիւն մը ունին ներսիդինիս ան հաճութեան զգացումները գրգռելու, որոնցմէ մենք ալ հեղինակութիւն կ'առնենք ան զգացումներուն պատճառները գեղեցիկ անուանելու : Արիշ խօսքով՝ անանկ գոյներ կան, որոնք սկզբնական կամ ներքին գեղեցկութիւն մը ունին : — Ըս կարծիքը հաստատելու համար՝ բնականապէս աչքերնուս հանդիպող զանազան դիտողութիւններէն մէկ քանին միայն պիտի կարողանանք հոս ակնարկելու, առանց անոնց վրայով մանրամասն քննութեանց պարապելու, որ ասիկայ բոլորովին յառաջիկայ նիւթիս վրայ խօսող գործի մը ներել է ընել :

ա . Ե ոկ գոյներու վրայ նայելէն հաճութիւն յառաջ գալը մանկութեան հասակին մէջ կը տեսնուի : Ըս հաճութեան շարժութիւնը զգալէն է որ մանկունք այնչափ կանուխ կը սկը-

Հարժուածիւնք Գեղեցիութեան :

սին պատուհանէն ներս ծագող եւ կամ ուրիշ աղբիւրէ մը իրենց տեսութեան զգայարանքին հասնող լուսոյն վրայ աչքերնին անկել նայելու : Օլուարձալի բան մըն է տեսնել թէ փոքր աղպք ինչպէս յափշտակուած ծաղիկէ ծաղիկ կը վազեն եւ անոնց գոյներուն պայծառութիւնը իրարու հետ կը բաղդատեն : Լէքերնին միշտ փառաւոր կերպով գոյնզգոյն ներկուած բաներու ետեւէ ըլլալով, երբոր առատ ծաղիկներով հագուած կամ խորուն կարմիր ու դեղին պտուղներով բնանաւորուած ծառ մը կը տեսնեն, կը կայնին ու ապշած անոր վրայ կը նային : Թիթեռնիկին թռչելուն պայծառ գոյներուն զարնուելնէն է որ այնչափ անձանձորյթ աշխատանօք ետեւէն կ'իյնան բռնելու, եւ երբեմն իրենց սիրելի խաղը վայրիկ մի կախ կը թողուն փայլուն գունաւոր թռչունի մը երանգը տեսնելու :

բ. Ըստ նոյն արդիւնքները շատ ազէկ կը տեսնուին աւել վայրենի աղբաց մէջ : Ընտառարնակ ժողովուրդք այնչափ անկիրթ եւ բնական զգացողութիւններէ այնքան զուրկ չեն, որ երբեմն իրենց որսորդութեան ետանդը չ'մոռնան՝ ճամբաներնուն մօտ բացուած ծաղիկները զննելու : Գիտելով թէ իրենց լիճերուն ու գետերուն ձուկերը՝ իրենց անտառներուն թռչունները եւ նոյն իսկ ծառերը ինտոր գեղեցիկ կ'երեւնան գոյներով, իրենք ալ կ'աշխատին մարմնին արհեստական գոյներով եւս առուել գեղեցկացնելու : Ինչ հանդերձ որ տեսնեն, գոյներուն փառաւորութեանը համեմատ գին կու տան. մազերնուն հետ փայլուն ու գոյնզգոյն փետուրներ կը հիւսեն. եւ ինչպէս որ Քորուսիգոսին Վպանիացիներուն նաւապետը ըլլալը իր ծիրանի հագնելէն կարծեօք գտեր են, անանկ ալ սովորութիւն ունին իրենց մէջ պատուոյ եւ մեծութեան աստիճաննին հագած հագուստներնուն շքեղութիւնովը ցուցնելու :

գ. Ըստ նոյն բանը, որ այնչափ յաճախ տեսնուած է Վայրենիներու մէջ, քաղաքաւարեալ ընկերութիւններու ռամկաց կարգին մէջ ալ կը գտնուի, թէպէտ եւ բաղդատմամբ քիչ : Արթեալ անձանց վրայ՝ գոյներու զննութենէն հաճութիւն ըզգալու բնաւորութիւնը աստիճանաւ մը տկարացած կ'երեւայ, ուրիշ աղբիւրներէ հաճութեան շարժութիւններ ընդունելու բնաւորութիւն ստանալով : Իսկ ընդհակառակն անոնք որ շատ քիչ մտաւոր կը թութեան տէր եղած են, եւ հետեւաբար հաճութեան աղբիւրներնին մաքերնուն մակերեւոյթին տելի մօտ զետեղուած կրնան սեպուիլ նէ, աս բնաւորութիւնը անկորուստ պահած են : Գունաւոր առարկաները ընդհանրապէս շատ հաճութիւն կու տան իրենց. այնպէս որ՝ իրենց աչք

Հարժուժիւնք Գեղեցկութեան :

քին առջևը՝ որ եւ իցէ ուրիշ որպիսութիւն մը գոյնի պակասութեան աեղը գիւրութեամբ չ'կրնար լեցընել : Անք կրնար պատշաճ կերպով ասանկ կարծիք մը ընել, թէ գեղեցիկ առարկային ու մտքին մէջ աեղը միջանկեալ անանկ բան մը ըլլայ, որ անկէ յառաջ գոյ աս հաճութիւնը . այլ մանաւանդ պարտաւորած ենք ամէն պարագայի մէջ աս հետեւութեան վրայ մնալու, թէ առարկային ներկայութիւնն է հաճութեան շարժութեանը մի միայն հիմնական պատճառը :

§ 263 . Գոյներու ընդարդոյ գեղեցկութեանը վրայ ուրիշ բացատրութիւններ :

Գոյներուն իրենք իրենցմէ գեղեցկութեան շարժութիւն պատճառելու յարմարութիւն ունենալուն մէկ ուրիշ ապացոյց մըն ալ կրնանք բերել ի ծնէ կոյր եւ ետքէն աչքերնուն լուսունքը կեղեւուելով կամ ուրիշ կերպով տեսութեան զգայարանքին բացուածներու վրայ եղած գիտողութիւններէն : — Իւարտրոսի Հակոբոս Միքէլին վրայ կը խօսի ու կ'ըսէ . «Սէկ աչքը յաջգութեամբ բժշկեցի, եւ հիմայ շատ կը զուարճանայ տեսանելի բաներով, թէպէտ եւ ատ անցքէն ընդունած ծանօթութիւններուն վրայ շատ փտահալութիւն չունի : ()ր մը փառաւոր գոյներով նոր հանդերձներ տարի իրեն, եւ անձառելի կերպով բերկրեցաւ : Տեսողական հաճութեան այսպիսի հետաքրքրական տեսարան երբէք տեսած չունէի» :

Սակայն աս կոյր անձը կ'երեւնայ թէ իր տեսութեան կարողութիւնները աղէկ մը բացուելու գործողութիւնները չեղած ալ լուսոյ եւ գոյնի վրայ քանի մը աղօտ գողափարներ ունի եղեր : Եւ աս իր անկատար տեսութեան կիրառութեանը հետ կցուած եղելութիւններն ալ վճարար մեր աս հաստատած փորդագետութեան կողէն են : Ըս բանիս վրայով պատմուածներէն հոս յիշելիքնիս հետեւեալներն են : «Վրախիութեանը ատենը երբոր աս տղան սոք ելաւ, անանկ կը ցուցընէր թէ փայլուն ու աչք անող բաները մնացրութիւնը կը քաշէին, եւ թէպէտ եւ իր պատմութեանը ամէն մասէն կը հաստատուի իր ատ զգայարանքներէն շատ քիչ ծանօթութիւն ընդունիլը, եւ սակայն այնչափով ալ շատ տեսողական հաճութիւն կը վայելէր : Սովորութիւն ունէր իր աչքին ու լուսատու առարկաներու մէջտեղը անանկ բաներ ըննելու, որոնք որ գտեր էր որ մէջ մանելովն լուսոյ քանակութիւնը կ'եւելցընեն, եւ իր գլխաւոր զբօսանքներէն մէկն ըլլած էր ա-

պակիի կտորներով կամ թափանցիկ քարերով եւ կամ ասոնց նման ուրիշ բաներով արեւին ճառագայթները կենդրոնացընելը, աս նիւթերը աչքին ու լուսոյն մեջտեղը բռնելով, ու այլ եւ այլ կողմերը դարձընելով զննելով : Հաս անգամ ալ սա նիւթերը ակռաներովը կտորտելով կը շտկուտէր ու ան ձեւը կուտար անոնց, որով որ եւելօք հաճութիւն կրնային տալ իրեն : Ուրիշ կերպեր ալ ունէր, որոնցմով որ՝ սովորած էր՝ աս իր լուսոյ բաղձանքը լեցընելու : Կ'ելէր սենեակ մը կամ տանը դրսիդին առանձին շինուածքի մը մէջ կ'երթար, դռները ու պատուհանները կը գոցէր, ու հոն արեգական շառուիղները ներս մտնելու ծակի մը կամ բացուածքի մը վրայ աչքը դրած՝ մեծ եռանդով խել մը ատեն կը կենար լուսը դիտելու : Կաեւ ձմեռ գիշերները շատ անգամ սենեակին մէկ մութ անկիւնը կ'առանձնանար, ու հոն իր զուարճութեանը համար լոյս մը կը վառէր : Աս բաները ըրած ատենը, ինչպէս նաեւ միւս զգայարանքներովը հաճութիւն զգացած ատեններն ալ, իր դէմքին ու բոլոր շարժուածքներուն վրայ սաստիկ իղձ մը եւ հետաքրքրութիւն մը կը տեսնուէր :

Աս այլ եւ այլ տեսակ ապացոյցներէն սա հետեւութիւնը կը հանենք, թէ գոյնք՝ բուն իսկ մեր կազմուածքէն՝ յարմարութիւն ունին ներսիդինիս գեղեցկութեան շարժութիւններ պատճառելու :

#### § 264 . Ձայներուն գեղեցկութեան աղբիւր ըլլալուն վրայ :

Գանք հիմայ աս խնդիրը քննելու թէ արդեօք գեղեցկութեան շարժութիւն պատճառելու զօրութիւնը ձայներու վրայ ալ կը գտնուի : Եւ հոս ալ բաւական պատճառ կը գտնենք հաւատալու՝ թէ ասոնց վրայ ալ աս բանը ճշմարիտ է՝ մէկ սահմանով մը . այսինքն թէ այսինչ այնինչ ձայները իրենք իրենցմէ հաճելի են, եւ անոր համար, արդէն ցուցուած դիտողութեանց համաձայն, գեղեցիկ կ'ըսուին : — Սակայն ձայներու գեղեցկութեան վրայ քննութիւններնիս յառաջ տարած ատեննիս աղէկ է որ անգամ մը դառնանք աս գլխուն սկզբնաւորութեան մօտերը եղած ան ծանօթութեանը, թէ գեղեցկութեան աղբիւրները կամ պատճառները տեսակ տեսակ են, թէպէտ եւ ներսիդինիս յարուցած շարժութիւններնիս բոլորը էապէս մէկ են : Հոն ըսուածներուն նայելով՝ մենք ինքզինքնիս ազատ չենք զգար, ինչպէս որ ոմանք կարելի է հակամիտին, ձայներու մէջ գեղեցկութիւն ըլլալուն վրայ երկբայելու, լոկ սա բանիս համար՝ որ ձայ-



ները ուրիշ գեղեցկութեան աղբւր եղող բաներէ՛ ինչպէս գոյներէ եւ ձեւերէ յայտնապէս զլստովին տարբեր բաներ են : Բնութեան մէջ այնպիսի դիտաւորութիւն մը չ'տեսնուիր որ գեղեցկութիւնը այս կերպով ասանկ սահմանի մը տակ առնուի : Բնդհակառակն թէ որ կան անանկ ձայներ, որոնք իրենց մէջ անանկ բան մը ունին, որն որ բուն իր բնութեամբը ներսիդինիս հաճելի շարժութիւններ կը գրգռէ նէ, ըսել է թէ անոնք ուրիշ ձայներէ որոշուած են աս պարագայով, եւ մեզի բաւական պատճառ տուած են զանոնք գեղեցիկ սեպելու եւ գեղեցիկ անունով յորջորջելու :

ա • Սակայն ձայներու մէջ բնածին գեղեցկութիւն մը կայ ըսելով՝ չենք ուզեր որ հասկըցուի թէ բոլոր ձայները՝ ինչ տեսակ որ ըլլան՝ աս որպիսութիւնը ունին ըսել կ'ուզենք : Սան անանկ ձայներ, որոնք՝ ինքնիրեննուն նկատելով՝ իրաւամբ անտարբեր կը սեպուին • կան անանկներ ալ որ ճշմարտապէս անախորժ են : Գլխայ մէկը որ տարակուսի անախորժ անուանելու անիւի մը խառնաձայն ճոնչիւնը, սղոցին խարտելը, իշուն զուլը, սիրամարգին ճճելը կամ օձին սուլելը : Ուրիշ ձայներ ալ կան, ինչպէս՝ գառին մայելը՝ կովուն բառաչելը՝ այծին կանչուրուտուքը եւ կենդանեաց ուրիշ կերպ ձայները ու աղաղակները, որոնք ինքնիրեննուն բոլորովին անտարբեր կ'երեւնան : Պիտեմք որ աս ձայները երբեմն գեղեցիկ կ'ըսուին • եւ պէտք չէ ուրանալ աս ալ որ երբեմն մինչեւ անգամ՝ բարձրաստիճան հաճութեամբ մտիկ կ'ըլլուին : Սակայն ան պարագաներուն մէջ ունեցած գեղեցկութիւննին մենք յաւետ զուգորդեալ գեղեցկութիւն կը ճանչնանք, քան թէ ներքին • յաւելուած պարագաներէ յառաջ եկած կը սեպենք աւելի, քան թէ նոյն իսկ ձայներէն : Բնանկ ատեններ զգացուած գեղեցկութեան ինչ տեսակ բան ըլլալուն վրայ Լչիզընին ըրած հետեւեալ ընտիր բացատրութիւնը կարգալու արժան բան մըն է :

«Պատին մայելը գարնան մէկ զուարճալի օրը գեղեցիկ բան է • սակայն ձմեռուան մէջտեղը բոլորովին զուրկ է ան գեղեցկութենէն : Բնառը հովուական դաշտի մը մէջ հեռուանց կովին բառաչելը լսելը շատ անուշ կու գոյ • իսկ խաչանց բակի մը մէջ մտիկ ընեսնէ, բոլորովին անախորժ է : Բզեզին ամառուան յրտակ իրինկունները բզզալը գեղեցիկ է, կարծես թէ ան զուարճալի պահուն խաղալ եւ հանգարտիկ լուծեան յարմարութիւն մը ունի • կէս օրուան ժամանակ կատարելապէս անտարբեր ձայն մըն է : Օլիճեռնիկին ճուռղիլը առտուանց գեղեցիկ է, մեզի անանկ կը թուի թէ առաւօտեան զուարճութիւնը կը յայտնէ • ուրիշ ատեններ բոլորովին աննշանակ՝ մտադրութիւն չ'բաշտող

բան մըն է : Մինչեւ անգամ սոխ սկին քաղցրամուրաց երգը , որ արշալուսին եւ իրիկունները ու գիշերը այնպէս զմայլելի կու գայ , ջորեկը բոլորովին անտես կ'առնուի . այնքան որ ասկէ աս ընդհանուր սխալմունքը ելեր է՝ թէ սոխակը մինակ գիշերները կ'երգէ :

§ 265 . Բացատրութիւնք ձայներու բնածին գեղեցիկութեանը վրայ :

Բ . Ուրիշ ձայներ ալ , անոնք որ տիրապէս երաժշտական ձայնք կ'ըսուին , չէ թէ լոկ յաւելուած՝ այլ բնածին կամ ներքին գեղեցիկութիւն մը ունին : Նշմարիտ է թէ այլ եւ այլ ազգեր այլ եւ այլ ոճ կամ ախորժակ ունին երաժշտութեան , ժողովրդոց վիճակէն եւ սովորութիւններէն եղանակաւ որուած . սակայն ան բանն որ տիրապէս երաժշտութիւն կրնայ ըսուիլ նէ , պատահական կամ դիպուածական պարագաներէ ինչ եղանակաւ որութիւն առած որ ըլլայ նէ ըլլայ , բնութեամբ շատ կամ քիչ գեղեցիկութիւն ունի : Արաժշտական ձայնք , իրենց կապակցութիւններէն եւ խօսքերէ անկախութեամբ , անանկ մէկ հանգամանք մը ունին վրանին , որով բոլոր ուրիշ ձայներէ կը տարբերին . այն է՝ իրենց թոթոման ատենին մէջ մէկ չափարարական համեմատութիւն մը ունենան ին : Այսպիսի ձայները բնութեամբ մեղի հաճելի կու գան : Ուրիշ խօսքով՝ ամէն ինչ եւ իցէ սովորական պարագայի մէջ երբոր ականջնիս կը հասնին նէ , բնականապէս եւ հարկաւորապէս հաճութիւն կու տան : — Վրտենք որ երաժշտական եւ ուրիշ կերպ ձայներէ հաճութիւն յառաջ գալը զուգորդութեան վարդապետութիւնով մեկնելու աշխատած են ոմանք , սակայն աս մեկնութեան մէջ խել մը դժուարութիւններ կան , որոնցմէ ոմանք աղէկ է որ հոս յիշենք :

1 . Այս եւ առաջ՝ ուրիշ պարագաներու մէջ տեսած բաներու նուս վերաբանութենէն կ'ակնկալենք թէ մարդու սրտին մէջ ալ մէկ բնածին զգայունութիւն մը պիտի ըլլայ ձայներու գեղեցիկութեան : Ուրիշ պարագաներու մէջ տեսածներնիս որ կ'ըսենք նէ ստորին կարգի կենդանեաց վրայ երեւցածներն են . եւ թէպէտ չենք պահանջեր որ յառաջիկայ նիւթերնուս աս գիտողութիւնը շատ երեւելի նիւթաւոր բան մը սեպուի , սակայն ստուգիւ մտածելու բան կայ մէջը : Ինչո՞ւ համար անքան անասունները ի բնէ հաճութիւն պիտի զգան ձայներէ , ու մարդս , որուն համար կրնանք ըսել թէ գէթ անոնց չափ կարծաւորութիւն ունի աս հաճութեանը , զուրկ պիտի ըլլայ անոր ընդունակութենէն : Անքան անասնոց ( ամէնը չենք ըսեր , այլ շատերնին ) աս հաճութեան

ընդունակութիւնը ունենալը ամենեւին երկրայութիւն չ'վերցընելու ճշմարտութիւն մըն է : Իրենց անհամար տեսակներովը, Վիւնէասին ճշգրտութեամբ «Լքած շտուածիւնով կը բերկրի» ըսած մուկէն առնելով ինչուան Նիկէրի եզերքը գտնուող անհրահանգ Միքիկեցւոյն կոշտ գործիքին ձայնին հետ մէկտեղ ծանր շարժուածքով խաղացող փիղը քաղցր ձայներու իրենց վրայ ըրած ազդեցութիւնը որոշակի կը յայտնեն : Ըս ընդունած հաճութիւննին զուգորդութեան սկզբունքներով մեկնելու աշխատիլը խիստ դժուարին ու թերեւս ծաղրալի գործ մը կ'ըլլայ : Լքած իրական ճշմարտութիւնը պարզագէտ սա է՝ որ մտիկ կ'ընեն ու կը զուարճանան : Ս'ինակ ձայնն է, ու չէ թէ մէկ ուրիշ բան մը, որ ան արտաբուստ ցուցուցած ցնծութիւննին ներսօղիւնին կը գրգռի : Ըստ կենդանիներ այնքան մեծ ներգործութիւն կ'ընդունին երաժշտութենէ, որ նախնի բանաստեղծներու եւ երաժիշտներու մեծամեծ գործքերուն վրայ խօսող հին մատենագրաց աւանդութիւնները հազիւ ճշմարտութեան սահմաններէն անդին կ'անցնին :

2. Տղայք՝ իրենց կանուխ հասակին՝ դեռ ձայներու հետ շատ զուգորդութիւններ ընելու պատահութիւն չունեցած, շատ կ'ախորժին երաժշտական ձայներէ : Ըս անանկ բան մըն է որ չէնք կարծեր թէ մէկուն դիտողութենէն ծածկուած ըլլայ : Թող մէկ թափառական երաժիշտ մը սրինգը կամ տիկը բերանը (որ ասոնք բարձրաստիճան երաժշտական զօրութիւն ունեցող գործիքներ չեն սեպուիր) գեղ մը մանէ, եւ ահա կը տեսնես որ տղոց մանկական սիրտը յանկարծական ցնծութիւնով մը կը բարեւէ անոր ձայնին գալուստը : Օլուարթ դէմքերով պատուհանները կը լնան, եւ բերկրալից տղոց խումբեր, որ քիչ մը առաջ փողոցները ձայնովնին կը հնչեցընէին, նոր ու հաճոյական դրդմամբ մը կը ձգեն խաղերնին ու կը վազեն կու գան դատարկաշրջիկ նուագերգուին դիմացը կը շարուին : Ըս հասարակ աս ասանկ է. եւ երբոր աս բանիս օրչափ կանուխ հասակի մէջ սկսիլը կը մտածենք, ուրիշ դիտողութիւնով անմեկնելի կը թուի մեզի, բաց ի սակէ՝ թէ ձայներէն ոմանք բնածին կամ ներքին քարշողութիւն մը ունին :

3. Ըս նոյն բանը վայրենի ժողովուրդներ ալ իրենց վրայ կը ցուցընեն, երբոր առջի բերանը Լքրոպական չէնք երաժշտական գործիք մը կը տեսնեն, թէ եւ շատ պարզ ու անկատար բան ըլլայ : Ըմբրիկոյի բնիկներուն համար կը պատմուի թէ Սպանիացիք նոր հոն գացած ատեննին ասոնք կու գան շատ մանր զանգակներ ծախու կ'առնեն եղեր. եւ զանոնք վրանին կ'ախած խաղացած ատեննին իրենց շարժմունքներուն հետ մէկտեղ եր-

Շարժութիւնը Գեղեցկութեան :

բոր անոնց յստակ երաժշտական ձայները կը լսեն եղեր նէ, ալ խիստ մեծ բերկրութիւն իմանալով կ'ուրախանան եղեր: Ամերիկայի աւելի մօտ ատեններու պատմութիւններուն մէջ Յիսուսեան քարոզիչ մը կը պատմէ թէ անգամ մը որ մէկ տգէտ ու կատարի շնորհաց ընկերութեան մը գացեր է նէ, խորթաբարոյ եւ օպառնական ընդունելութիւն մը ցուցուցեր են իրեն, որկէ հասկըցեր է որ հոն երթալը շատ բարի վախճան մը պիտի չունենայ: Սակայն հետեւին վէճի մօտնելու միտք չունենալով, այլ խաղաղութեամբ բանը վերջացընել ուզելով՝ հաներ է աղէյարմար գործիք մը, սկսեր է չալել. շնորհները երաժշտութեան ձայնը առածնուն պէս շուտ մը կակուղցեր են. եւ քովերնին եկած ատենը ցուցուցած ան նախանձութեան եւ բարկութեան շար ոգին դէմքերնուն վրայէն հալածական եղեր է իսկոյն: — Շարկ չենք սեպեր աս նոյն բանը հաստատող ուրիշ ասոնց նրման օրինակներ ալ եւելցընել:

§ 266. Ձայներու բնածին գեղեցկութեան ուրիշ օրինակներ:

4. 'Չորրորդ' ետքէն լսողութիւննին բացուած խուլ մարդիկ, ու նաեւ՝ իրենց մասնաւոր վիճակին պատճառովը ինչուան այնինչ տարիքնին ամենեւին երաժշտական ձայն չ'լսած անձինք, որ ասոնց երկուքն ալ ի հարկէ անկարող եղած կ'ըլլան՝ ատ կերպ ձայներու հետ թէ խորթելի եւ թէ անախորժ զուգորդութիւններ կապակցելու, առաջին անգամ ձայն լսելուն՝ փորձուած է որ՝ շատ հաճութիւն կը զգան: — Որչափ որ լսած ենք նէ, աս բանը սոսանկ գտած ենք: Այս սակայն՝ որովհետեւ այսպիսի բաներ քիչ կը պատահին, եւ ան քիչ պարագաներուն ալ ամէնը չ'պատմուիր, վասն որոյ մենք ալ աս բանը իբրեւ ընդհանուր իրական ճշմարտութիւն մը անկասկած վստահութեամբ ընդունելու ենք չենք կրնար ըսել: Վասպար շօղին առաջին անգամ երաժշտութեան ձայն լսելուն վրայով եղած պատմութիւնը աս սակաւաթիւ օրինակներուն մէկն է: Այսպէս ստորագրուած է աս եղելութիւնը: — «Շէ թէ միայն իր միտքը, այլ իր զգայարանքներուն շատն ալ՝ երեւցածին նայելով՝ առջի բերանը թմրած վիճակի մը մէջ էին, ու կամաց կամաց արտաքին առարկաներու իմացման ընդունակութիւննին կը բացուէր: ( )րեր անցաւ, ու հապա թէ սկսեց աշտարակին ժամացոյցին զարնելուն ու զանգակներուն ձայնին նկատողութիւն ընել: Աս ձայները զինքը մեծ զարմանքի մէջ ձգեցին, որն որ առջի բերանը իր ունկնդիր նայուածքներովը եւ դէմքին

Շարժութիւնը գեղեցկութեան :

Վրայ ցուցուցած այլակերպ շարժմունքներովը յայտնեց, բայց ասոր վրայ շատ չանցած շուտով ապշած մտածութեան մը մէջ ինկաւ : Վանի մը շարժեալ ետքը գիւղականի մը հարսանեաց թափօրը բերդին քովէն անցաւ, ճիշդ իր եղած տեղին պատահանին առջեւէն, խել մը երաժիշտներով : Ասիկայ ձայնը առածին պէս յանկարծ ելաւ ոտքի վրայ, սկսեց մտիկ ընել, արձանի պէս անշարժ կանգնած : Դէմքը սլալակերպեցաւ, եւ աչքերը կարծես թէ իր յափշտակուած ըլլալը դուրս կը ցալթեցընէին. սկանջներն ու աչքերը այնպէս կը թուէր թէ ձայններուն ետեւէն կը շարժէին, քանի որ անոնք կամաց կամաց կը հեռանային, եւ ալ չ'ըսուելու չափ հեռանալէն շատ ետքը ինք տակաւին անանկ անշարժ կեցաւ, մտիկ ընելու դիւբով, որպէս թէ չ'ուզելով այն իրեն երկնային փողերու պէս եկող ձայններուն վերջին թրթումունքը կորսնցընել, կամ իբր թէ կարծելով որ հոգին ան ձայններուն ետեւէն գնաց, ու զինքը թմրեալ անզգայութեան մը մէջ ետեւը թողուց :

§ 267. Երաժշտութեան ազդեցութեան յարատեւութիւնը անոր բնածին բան մը ըլլալէն կախեալ է :

Չայնորէն ոմանց բնածին կամ ներքին գեղեցկութիւն ունենալուն վրայ մէկ ծանօթութիւն մըն ալ կը մնայ տալու : — Պէտք է յիշել որ մեր դէմ կեցած վարդապետութիւնը աս է, թէ երաժշտական ձայններու իբրեւ աղբիւր գեղեցկութեան ունեցած բոլոր զորութիւննին գլխովին զուգորդութենէ է : Թէ որ աս ճշմարիտ ըլլայ նէ, անատեն երաժշտական եղանակներ շարադրողներուն յատուկ գործը զուգորդութեանց բնութիւնը եւ բերնունքները քննելը կ'ըլլայ աւելի, քան թէ ձայններունը : Սակայն աս բանիս մէջ ընդհանուրին կարծիքը անտարակոյս աս է, թէ երաժշտութիւն շարադրողը, ընելու գործին մէկ ընդհանուր ըմբռնումը կամ շրջագիծը առջեւը ունենալէն ի զատ, իր ճարտարութիւնը ու արտօնակը գործ կ'ածէ կատարեալ յօդաւորութիւններ<sup>1</sup> չինելու՝ պէս պէս եղանակաւորութիւններ<sup>2</sup> խօթելու եւ ճիշդ տեւորութիւն<sup>3</sup> պահելու : Ասիկայ իր աշխատութիւններուն, չինք ըսեր թէ բոլոր, այլ գլխաւոր մէկ մասն է. իր հանձարին մասնաւոր կերպով գործելու տեղն է. եւ առանց աս

<sup>1</sup> Գոտայար Հօլդէն լարքը, Գլ. Գ. :

<sup>1</sup>Chord. <sup>2</sup>Modulation. <sup>3</sup>Bythm.

Շարժութիւնք գեղեցկութեան:

յօդաւորութիւնները՝ եղանակաւորութիւնները եւ տեւողութիւնը պէտք եղածին պէս նկատելու, ճշմարիտ է թէ իր աշխատութիւնները փուճը կ'ելլեն, շինած բանը հաճելի չըլլար: Սակայն թէ որ առարկած վարդապետութիւննիս իրաւ է նէ, պէտք չէր որ երաժշտութեան վարժապետը կարող ըլլար ամենամանախորժ ձայները մէկտեղ բերելու եւ անոնցմով իր արհեստին մեծամեծ գործքերը յօրինելու, միայն թէ աշխատէր անոնց տգեղութիւնը՝ զուգորդութեան գիւթական հանգերձ մը վրանին հագցընելով՝ ծածկելու: Բայց կարծեմ թէ ասանկ բան մը ըսող պիտի չըլլայ, թէ զուգորդութիւնը սյսպիսի զօրութիւն մը ունի՝ ընդհանրապէս, մինչեւ անգամ ճարտարութեան ձեռքը անցած ատենը: — Ըսկէ ի զատ՝ առանց ամենեւին տարակուսելու աս ալ կ'ըսենք՝ թէ բանին բնութիւնը անանկ կը պահանջէ որ երաժշտական ճարտարութեան գործը, որ իր յօրինած բաները անմահութեան համար կը յօրինէ, գլխաւորապէս իրերու տարերքներուն եւ գոյացողական բաներուն հետ ըլլայ, ու չէ թէ գիպուածական եւ յաւելուած եղող բաներու հետ: Ըրուեստի մը գործքերը մշտնջենաւոր ըլլալու համար՝ ի հարկէ ան գործքերուն հիմունքը մնայուն բաներ ըլլալու են: Սակայն աս ուղիղ հասկըցուած բան մըն է որ զուգորդութիւնք բուն իսկ իրենց բնութենէն անստոյգ եւ փոփոխական են, քանի որ երաժշտութեան նուագներէն ոմանց գեղեցկութիւնը (լոկ մարդուս զգացողական խորհուրդը խօսելով) անկորուստ է. որ աս իրական ճշմարտութիւնը անոնց անհաստատ եւ վաղանցիկ հիմանց վրայ շինուած ըլլալուն հակառակ կու գայ:

§ 268. Շարժման գեղեցկութեան մէկ տարրը ըլլալուն վրայ:

Շարժումն ալ, որ մէկ նոր եւ որոշ առարկայ մըն է հայեցողութեան, սովորաբար՝ եւ արդար իրաւամբք՝ գեղեցկութեան աղբիւրներուն կարգը դասուած է: Արբոր մէկ անտառ մը կամ ցորենի արտ մը կը տեսնենք որ հովէն կը տատանի, հաճութիւն կը զգանք: Ուրբուն գետի մը շարժումը ակործելի կը թուի մեզի, ակործելի կը թուի, չէ թէ միայն գետին օձապտոյտ ըլլալուն համար, այլ ամենեւին հանդարտ չ'կանգնելուն համար: Ար զուարճանանք երբոր նաւու մը շարժումը կը տեսնենք, քանի որ հողմովեց առագաստներով ծովը կը պատուէ ու կ'երթայ: Ս ընդ կը նայինք՝ երբոր կենաք ունեցող բանի մը պէս կը շարժի ու յառաջ կ'երթայ, ու ներսիզինիս հաճութիւն կը զգանք, անկարող ըլլալով ան զգացումնիս զսպելու կամ ինչու համար ծագելը գիտնալու: Աւ անոր բոլորտիքը եղող ալիքներն ալ, որ

շարունակ կու գան ու կը զարնուին չորս կողմին, ու շեղջ շեղջ կողերն ի վեր կ'երկննան ու զանազան ձեւերով պայծելով ետ կը դառնան նէ, շատ աւելի գեղեցիկ երեւոյթ մը կը ցուցնեն, քան եթէ բոլորովին հանդարտ ու անշարժ մնալու ըլլային :

Ի՞նչ անուշ հիացմամբ կը նայինք փրփրալից կարկաչահոսանքներու վրայ, որոնք լեբանց գլուխն ի վար կը փրթին, ու գոռալով իրենց խորսխին վրայ կ'իջնան խորտակելով : Ի՞նչ ախորժելի հաճութեամբ յառած կը նայինք անտառի մէջ շինուած խրճիթի մը ծխնելոյղէն ելլող մուխի սիւնակին վրայ, որ աս բանը տեսարանագիծք, որոնք ստուգապէս բնութեան արտաքին երեւոյթներուն մէջ ինչ բաներու գեղեցիկ ըլլալուն վրայ դատողութիւն ընելուն կողմանէ ընտրութեան տէր սեպուելու են, շատ կը գործածեն գծագրութեանց մէջ : Եւ մասին՝ գիտենք որ մէկը կրնայ ըսել թէ՛ ան խրճիթէն ելած ծուխէն յառաջ եկած հաճութիւնը անոր հետ մէկտեղ կապակցուած սիրալիք թելադրութիւններէ, գեղջական կենաց առանձնութեան՝ անգործութեան եւ առատութեան զուգորդութիւններէն կը պատճառի : Սակայն շատ պատճառ ունինք հաւատարմութե՛ եթէ վայրենիի մը անմխիթար տաղաւարէն, կամ դիպուածական հրդեհէ մը, եւ կամ Կնչուաներու թափառական խումբի մը վառած կրակներէն ելած ալ տեսնելու ըլլանք նէ, անտեսնն ալ ըստ մասին նոյն զգացումը պիտի ունենանք : — Եւ թէ որ աս սահմանաւոր վայրերուն մէջ մեր սովորաբար տեսած այսպիսի շարժումները գեղեցիկ են նէ, քիչ յափշտակուած զգացումներով ապշած պիտի մնայինք, թէ որ հնար ըլլար որ տիեզերաց մէկ ծայրը դրուէինք ու անկէ մէկ նայուածքով կարող ըլլայինք անհուն միջոցի մէջ պտըտող աշխարհքներու եւ դրութիւններու կանոնաւոր ու անխափան շարժումները տեսնել :

§ 269 . Շարժման գեղեցկութեան վրայ բացատրութիւն քէմէսէն :

Վէմէս հեղինակը, որ մեր շարժութիւններուն վրայ շատ բարակ բնութիւններ ըրած է, հետեւեալ բացատրութիւնները կ'ընէ աս նիւթիս վրայ : — «Շարժման զանազան ձեւերուն ամէնն ալ, թէ արագ ըլլան՝ թէ ծանր, հաճելի են : Սակայն երկարատեւ շարժմանց համար քանի մը բացառութիւններ կան : Շարունական շարժմանց ան աստիճանը, որ մեր իմացմանց բնական ընթացքին կը համեմատի նէ, անիկայ ամենէն հաճելի է : Եւ մնաստա՞ք շարժումը քիչ մը ատեն զուարճալի կը թուի. բայց շուտով չափէն եւելի արագ կը սկսի

Շա. Ժուլի նը Գեղեցկութեան:

երեւնալ . ձանձրալի կու գայ , ստիպմամբ մեր իմացողութեանց ընթացքը արագացընելուն համար : Ծանր շարունական շարժումն ալ նմանապէս անոր հակադարձ պատճառով անխորժ կ'ըլլայ , այսինքն մեր իմացմանց բնական ընթացքը դանդաղեցընելուն համար :

«Արագութենէ եւ ծանրութենէ ի զատ ուրիշ զանազանութիւններ ալ կան շարժման մէջ , որոնք որ հաճոյականութեան կողմանէ տարրերութիւններ կ'ընեն , կանոնաւոր շարժումը անկանոնէն նախապատիւ է . նկատէ մտքովդ գրեթէ բոլորակաձև պարունակներու մէջ շրջող մոլորակներուն շարժումը , ու նաեւ անոնցմէ քիչ կանոնաւորութիւն ունեցող պարունակի մէջ պտտորող գիսաւորներուն շարժումը , ու վերջինը առջինին չափ հաճելի չես տեսներ :

«Միօրինակ երագացող շարժումը , թիւերու բարձրացող յառաջատուութեան նման , աւելի ակորժելի է , քան թէ միօրինակ ծանրացողը , դէպ ի վեր շարժումը հաճելի կ'երեւնայ շարժող մարմնոյն բարձրանալէն : Իսկ ծանրութեան զօրութիւնով կանոնաւորապէս երագացող դէպ ի վեր շարժումին ինչ ըսենք , նոյն զօրութիւնով կանոնաւորապէս ծանրացող դէպ ի վեր շարժման հետ բաղդատելով . ասոնց ո՞րը աւելի հաճելի է : Աս ինզիբը դիւբաւ չ'ուծուելու բան մըն է :

«Ազիզ գծով եղող շարժումը աներկրայ հաճելի է , բայց աւելի կ'ախորժենք ծածանող շարժումները , ինչպէս՝ ջուրի ալիքներունը , կրակի բոցինը , եւ գալող նաւունը , այս տեսակ շարժումները աւելի աղատ եւ աւելի բնական են : Ասկէ է որ «ձապտոյտ գետն ու վաակը գեղեցիկ կ'երեւան» :



Գ Լ Ո Ւ Խ • Գ

Զ Ո Ւ Գ Ո Ր Գ Ե Ա Լ Գ Ե Դ Ե Ց Կ Ո Ւ Թ Ի Կ Ե Ր

§ 270 • Զուգորդեալ գեղեցկութիւն բսեւէն կը հասկըցուի թէ ։ նախընթաց կամ ներքին գեղեցկութիւն ալ կայ

ՊԵՂԵՑԿՈՒԹԵԱՆ նիւթին վրայ բացատրելու կարեւոր սեպած դիտողութիւններնիս երկու խնդիր կը պարունակեն . մէյմը աս՝ թէ բնածին կամ սկզբնական գեղեցկութիւն կայ . մէյմ՝ ալ աս թէ զուգորդութենէ կախեալ գեղեցկութիւն մըն ալ կայ : — Ինք իրմէ գեղեցիկ բան չ'կայ , հասպա ամէն բանի բոլոր գեղեցկութիւնը զուգորդութենէ կախեալ է ըսողներուն դէմ՝ հոս կ'ուզենք Սղիւարդին մէկ ընտիր ծանօթութիւնը յառաջ բերել : «Վեղեցիկ առարկաներու քող ազդեցութիւնը զուգորդութեան տուողներուն փարդապետութեանը մէջ հարկաւորապէս ան տեսակ սուտ ձեռնարկութիւնը կամ իմաստակութիւնը գտնուելու է , որուն արամբանք յոսի շքան արբանձուքով ըսեր են : Այսան զի զուգորդութիւնը կընայ միայն ուրիշ բանի մը հաճոյական կամ անհաճոյ ազդեցութիւնը մէկ բանի մը հաղորդել . եւ ամենեւին չենք կրնար պարզապէս բռնել զանիկայ բոլոր գիտցածներնէս տեսակաւ տարբեր նոր կերպ հաճութեանց : Թէ որ իբնէ հաճիլի կամ գեղեցիկ բան մը բնաւ չ'գտնուէր նէ , զուգորդութեան սկզբունքը նիւթ չէր կրնար գտնել որ անով գործէ աս մասին» :

Աս ծանօթութիւնը՝ թէ որ ճշմարիտ է նէ՝ վճռական բան մը կ'երեւնայ յառաջիկայ նիւթիս վրայ : Աւ ճշմարիտ ըլլալն ալ կարծեմ թէ նոյն իսկ զուգորդութեան բնութենէն յայտնի է : Չուգորդութիւն ըսածնիս՝ պէտք է յիշել որ՝ մէկ մըտաւոր հանգամանք մը , խորհուրդ մը , զգացում մը , կամ կիրք մը չէ այնչափ , այլ յաւէտ մտքին մէկ սկզբունքը կամ օրէնքն է . ուրիշ խօսքով՝ նոր մտաւոր հանգամանք մը ծագելուն պարագան է միայն : Ուստի զուգորդութիւնը , ինչպէս որ Սղիւարդ կ'ակնարկէ , ինքնիրեն բան մը չ'կրնար պատճառել կամ ստեղծել , հասպա արդէն ստեղծուած կամ պատճառեալ

բաներով կը գործէ : Բան մը ըլլալու է, որ անով գործ մը տեսնէ : Թէ որ մէկ բանի մը գեղեցկութիւն տայ նէ, ուրիշ տեղէ մը գտած ըլլալու է . եւ թէ որ ան ուրիշ բանին գեղեցկութիւնն ալ զուգորդութենէ է նէ, մէկ աւելի հեռաւոր աղբիւրէ մը յառաջ եկած ըլլալու է : Ուստի թէ որ զուգորդութիւնը լոկ գեղեցկութիւնը թեւեբուն վրայ կ'առնէ, եւ թէ ներելի է ըսել, ու տեղէ տեղ կը տանի նէ, հարկաւորապէս մէկ տեղ մը սկզբնական կամ ներքին գեղեցկութիւն ըլլալու է, որ ստ տեղափոխութեանը նիւթ ըլլայ :

§ 271 . Լոկ զուգորդութիւնով մէկ բան մը գեղեցիկ կրնայ ըլլալ :

Բոլոր աս նիւթիս վրայ ինչուան հիմայ ըսուածներուն համեմատ՝ պէտք է միտք պահել՝ թէ նիւթոյ ընդունակ եղած ձեւերէն ոմանք իրենք իրենցմէ եւ ի բնէ հաճելի են . ու նաեւ թէ չենք կրնար այնինչ գոյներուն վրայ նայիլ, այնինչ ձայները մտիկ ընել, մարդոց դէմքին վրայ այսինչ շարժմունքները տեսնել, բարձր իմացական եւ բարոյական կատարելութիւններ գիտել, առանց քիչ կամ շատ բերկրալիւր շարժութիւններ իմանալու : Միանգամայն աս ալ պէտք է ընդունինք՝ թէ մեր փորձառութեանցը մէջ տեսակ մը բաներ ալ կը գտնենք, որոնք իմացած ատեննիս չենք զգար թէ ներսիզինիս ինչ եւ իցէ կերպ շարժութիւն մը կը պատճառեն . անանկ բաներ որ կատարելապէս անտարբեր են : Լը սակայն աս անտարբեր առարկաները, մարդոց մեծ մասին որչափ գեղեցկութենէ զուրկ ալ որ կ'երեւնան նէ, կը տեսնենք որ ոմանց մտքին մէջ մէկ աղուզութիւն մը ունին, որն որ իրենցը չէ կ'ընդունինք : Ըս բաները, որ առաջ ամենեւին գեղեցկութեան զգացում չէին շարժեր, մեզի գեղեցիկ կրնան ըլլալ՝ մեր անոնց հետ կապակցած զուգորդութիւններուն պատճառով . ըսել կ'ուզենք թէ ան առարկաները տեսած ատեննիս, մեզի յատուկ եղող մասնաւոր հաճութեան զգացումներ, որ առաջ ունեցեր ենք, անոնք մտքերնիս գալով :

Գարնան առաւօտեան լուսափայլութիւնը, ամառնային երեկոյեան նշուլագեղ պայծառութիւնը իրենք իրենցմէ յաւորժանաց շարժութիւններ կրնան ծագեցընել սրտերնուս մէջ . բայց մեր ժիր երեւակայութիւնը՝ աչքերնուս առջին եղած բերկրութեան պատկերները առիթ առնելով՝ միշտ գործելու վրայ ըլլալուն ու շարունակ նոր նոր պատկերներ շինելուն, ան բնածին սկզբնական գեղեցկութեան վրայ յաւելուած բերկրութիւն մըն ալ կը բարդուի : Լը թէ որ աս օրինակներուն մէջի գեղեցկու-

Չուգորդեալ Գեղեցկութիւն :

Թեան մէկ մասը միայն զուգորդութեան տրուելու է նէ, անանկ օրինակներ ալ կան, որոնց մէջ եղած բոլոր գեղեցկութիւնը աս աղբիւրէն յառաջ եկած է :

Չուգորդութեան չէ թէ միայն իրօք գեղեցիկ բաներու գեղեցկութիւնը եւեցընելուն, այլ առաջուրնէ բոլորովին անտարբեր եղող առարկաներու բոլորտիքը վրագիր գեղեցկութեան լոյսով մը պատելու զօրութիւն ունենալուն վրայով անթիւ օրինակներ կրնանք յառաջ բերել : Ինչէ՞ն է որ աս հետուն կեցող փլած փլիկած տունը ինծի աղուոր կ'երեւնայ, ու ուրիշներուն անտարբեր է : Ինչո՞ւ համար անոր շուրջի ամայի դաշտերը գեղեցկութիւն հագուած են, քանի որ ուրիշները հաճելի երեւցող բան մը չեն տեսներ անոնց մէջ : Ընոր համար որ ատենով ան տանը մէջ բնակեր ու անոր զուարթ կրակարանին գէմը զուարճացեր եմ, եւ ան դաշտերուն մէջ տղայութեան օրերս շատ զբօսանք բերեր եմ : Երբոր այնչափ ժամանակ անցնելէն ետեւ անոնց վրայ կը նայիմ, իմ առջի օրերուս յիշելութիւններէն ներսիդիս ծագող բերկրալիւր շարժութիւնները զուգորդութեան զօրութիւնով ան յիշելութիւններուն պատճառ եղող առարկաներուն վրայ կը գրուին եւ որպէս թէ զանոնք գեղեցկութեան լոյսով մը կը պատեն :

§ 273 . Չուգորդեալ զգացմանց վրայ ուրիշ բացատրութիւններ :

Մէկ մշակուած գիւղաքաղաքէ մը անցնող ճամբորդը չ'կրնար հաճութիւն չ'զգալ իր տեսած այլ եւ այլ բաներէն. մաքուր ու մխիթարական տուններ, արջառներու եւ խաչանց հօտերով լեցուն արօտներ, ցորենի արտեր, մէջտեղերնին երբեմն երբեմն խիտ ու նսեմ անտառներով : Բոլոր աս տեսարանը գեղեցիկ է. անոր պատճառած շարժութիւնները ըստ մասին բնածին ըլլալ կը կարծենք. աչքին լուսուէքը կեղեւուելով տեսութիւնը բացուած մէկ մարդ մը, որ դեռ պատեհութիւն չէ ունեցեր աս ըզգայարանքով զուգորդութիւն ձեւացընելու, ան ալ առաջին անգամ տեսնելուն հաճութիւն պիտի զգայ ասկէ : Սակայն իմացուած բերկրութեան մէկ մեծ մասը ասանկ տեսարանի մը վրայ նայելէն ծագած զուգորդեալ զգացումներէն է. աս շէնքերը մարդոց բնակարաններ են. աս դաշտերը անոր աշխատութեանցը վայրերն են, եւ իր վաստակոցը փոխարէն առատօրէն կը վարձատրեն զինքը. հոս հաճութիւն, սրտաուռ ցնծութեան փոխանակութիւններ, եւ հինաւորց ճշմարտութիւն կայ. եւ այլն :

Յիշատակելի երեւելի անցքերով նշանաւոր եղող տեղերէ

Զուգորդեալ Գեղեցկութիւն :

Ճամբորդողները կարծենք թէ պիտի չհակամարտին կասկածելով թէ մեր շարժութեանց չափէն աւելի մեծ մասը զուգորդութեան կու տանք կոր : Աս բանիս՝ Հայաստանու եւ Փոքր Ասիայի շափ կատարեալ օրինակ եղող քիչ կը գտնուի, չըսենք թէ ամենեւին չ'գտնուիր : Թողունք հազարումեկ ուրիշները, եւ մեզի աւելի մերձաւորութիւն ունեցողներէն մեկ օրինակ մը յիշենք : Թող Հայրենակից Ճամբորդ մը, ինչ շարժութիւն որ ունենայ ներսիդին կամ որչափ ալ որ թափուր ըլլայ շարժութենէ, անցնի Տղմուտ գետին ափունքէն, Արդանանց գիւցաղնական քաջութեանց եւ նահատակութեանց վայրերէն, եւ մեծ բռնաբարութիւն կ'ընէ իր հոգեոյն ամենասրտառուչ ազգմունքներուն, թէ որ մէյմը կանկ չառնէ հոն : Այն թէ ան տեղի տեսարանին եւ գետին ուրիշ տեղերէ աւելի գեղեցիկ տեսք ունենալուն համար, վասն զի անանկ եւ անկէ շատ աղուոր ուրիշ բաղմամբիւ տեղեր կան . հապա ուրիշ եւ աւելի ազգոգական պատճառէ մը : Ան մեկ բարոյական զօրութիւն մը կայ, մեկ գիւցաղնական արիւթութեան ոգի մը կայ ան տեղերը սաւառնող, (որ մի միայն զուգորդութեան սկզբունքներովը կը մեկնուի,) որն որ սիրալիր կերպարանքով մը հագուեցուցած է բոլոր այն տեսարանը . հոն հայրենասէր ուղեւորը կը կանգնի, ու անբեկելի մտադրութեամբ մտիկ կ'ընէ բոլորաբի դաշտերուն՝ բլուրներուն ու մարգագետիններուն հիանալի պատմութիւններուն . հեզիկ հողմը ականջն ի վր երբեմն Արդանայ խրախոյսները եւ երբեմն գիւցաղուն մարտիրոսաց վերջին յորդորակները կը մըմնջէ . եւ ան խաղաղ կան լուծեան մէջ գետին կարկաչն ալ՝ բոլորովին պլակերպած՝ սրտին զգացումներովը պրկեալ քնարին ձայնին իր եղանակը կը յարմարցընէ, լուսասփիւռ կերպարանք մը ցուցընելով դիտողին աչքին, իբր թէ դեռ նոր գացած ըլլար վրայէն այն քսամնելի կարմրութիւնը : Այսպէս ատեն մը աննկարագրելի զգացմամբ չորսդին աչքը պարտցընելէն ու հոգին իր մէջը սրնմուելէն ետեւ, բանասէր տեսարանադէտը սրտին խորութենէն երկար հառաչանք մը հանելով՝ դէպի վեր կը վերցընէ աչքերը, ան անձայն վիպասանից պատմութեան ընթացքը շարունակելով, եւ հոն իրերուն վախճանը տեսնելէն ետեւ՝ ցնծալից արտասուօք կ'անցնի կերթայ ճամբան, Տղմուտի գետափունքը իբրեւ սրբազան յիշատակարան մտքին մէջ անմոռաց մնալով :

Ասանկ տեղ մը տեսնելէն մարդուս ներսիդին ծագած աս ըզգացումը, թէ գեղեցկութեան շարժութիւն անուանենք, թէ վսեմութեան, եւ կամ թէ երկուքին մէջանող ցուցընող անուն մը տանք . էապէս նոյն եւ նման է Հոգեմա քաղաքին բլուրներուն վրայ առաջին անգամ նայող Ճամբորդի մը ունեցած զգաց-

Չուգորդեալ Գեղեցկութիւն :

մանը : Ընկէ աւելի մեծ եւ անկէ աւելի փառաւոր գետերով ուռոգեալ քաղաքներ կան • սակայն մէկուն վրայ անանկ յափշտակուած զգացումներով չէ նայած : Արնայի ու կը տեսնէ ան քաղաքը, որ աստեօք աշխարհիս թագուհին էր • ան քաղաքը, որն որ Պրոբոսի՝ Աիկերոնի եւ Աեսարաց բնակութեան տեղին եղած է : Յիշողութիւնը իսկոյն կը լեցուի ան տարօրինակ ազգին բարբին մէջ եղած ազնուութիւններովը եւ նշանաւոր դիւցազնութիւններովը, եւ այսպէս անանկ զօրաւոր ու սաստիկ շարժութիւն մը կ'իմանայ ներսիցին, որ առանց աս երեւելի եւ զարթուցիչ յիշելութիւններուն ամենեւին պիտի չ'կրնար զգալ :

§ 273 • Ազգային զուգորդութեանց օրինակներ :

Չուգորդութեանց շարժութիւններ ծագեցընելու եւ մասնաւոր տեսակ շարժութեանց ուժգնութիւն տալու մասին ունեցած զօրութիւնը աղէկ կը տեսնուի մէկ քանի ազգային օրինակներու վրայ : — Ընկէ երկիր իրեն սիրելի երգերն ունի : Ըս երգերը ան երկրին բնակիչներուն սրտին աւելի կ'ազդեն, քան թէ օտարին : ( ) Կար աշխարհ գացող պանդուխտ մը թերեւս ան գացած երկրին մէջ շատ անուշ երգեր կը լսէ, ու հաճելի կու գան անոնք իրեն • բայց թող մէկ հայրենի երգի մը ձայնը ականջն հասնի եւ որպիսի ակորժանօք սիրահարեալ ականջով մտիկ կ'ընէ, ու սրտին մէջ կը զմայլի, չէ թէ ան երգին միւսներէն վարպետ շարադրութիւն ունենալուն համար, վասն զի կրնայ ըլլալ որ անոնցմէ վար բան ըլլայ • այլ անոր հետ մէկտեղ խել մը սիրալիր բաներու յիշողութիւններ կապակցած ըլլալուն պատճառաւ, որոնք ձայնին հետ իմիասին կարծես թէ մտաւոր տեսութեան առջեւը կու գան կը շարուին :

Ընդգրկեցիք Պէլայլ Մարչ անունով երգ մը ունին : Ըսոր ընդհանուր ազգային երգ մը ըլլալը կ'ըսուի թէ Ընդգրկեցի զօրքին դէպի Պէլայլ խաղացած ատենը երգուելուն եւ անոր հետ մէկ տեղ ան պատերազմին մէջ եղած յաղթութեան զուգորդութիւնը կապակցած ըլլալուն պատճառաւն է : Աւ բոլոր ազգային երգերու համար ճշմարիտ կը գտնենք աս, որ այնպէս զմայլելի կը թուին այն երկրին բնիկներուն՝ իրենց հետ մէկ տեղ կցուած զուգորդութիւններովը, որ ուրիշ երկրացի մարդիկ ան գեղեցկութիւնը ամենեւին չեն զգար :

Ըս նոյն իրական ճշմարտութեանը շատ բացատրութիւններ ունինք նաեւ գոյներու վերաբերեալ : ( ) Իրանին մէկ շքեղութեան կերպարանք մը ստացած է, թագաւորներու զգեստներուն

## Զուգորդեալ գեղեցկութիւն :

մէջ սովորական գոյն մը ըլլալուն համար, Չինացւոց մէջ ալ դեղինը ամենէն փառաւոր գոյնն է, յայտնապէս ոչ ուրիշ պատճառաւ, բայց եթէ արքունի տան յատկացեալ գոյնը ան ըլլալուն համար: Եւստ երկիրներու մէջ սեւը ծանրութեան կերպարանք մը ունի, եւ մասնաւորաբար տրամութեան եւ սուգի ատեն կը գործածուի, եւ ճերմակը զուարթ գոյն մըն է: Իսկ Չինացւոց մէջ ճերմակը տխրութիւն կը ցուցնէ, վասն զի սգաւորի հագուստ է, եւ Սպանիացւոց ու Վենեսիկցւոց մէջ սեւը զուարթութեան երեւոյթ ունի, վասն զի մեծերուն սովորական հանդերձը ան է:

Ըս նոյն բանին վրայ պէտք ըլլար նէ շատ ուրիշ բացատրութիւններ ալ կրնայինք յառաջ բերել: Վիչ չպատահիր որ զուգորդութեան ներգործութիւնը այնչափ սաստիկ ըլլայ, որ մէկ բանի մը սկզբնական բնութիւնը բոլորովին այլայլէ եւ վոյպէն սկըծէ, եւ անոր տեղը ուրիշ կերպարանք մը կամ բնութիւն մը տայ անոր: Ո՞վ երբէք զգացած չէ, թէ էրիկմարդու վրայ թէ կնիկ մարդու վրայ, որ մէկ չարագործութիւն մը կամ մինչեւ անգամ նուաստութեան կամ անպատուութեան մէկ գէշ գործք մը կրնայ անոնց վրայ արհամարհելի խաւարին սոռուեր մը ձգել, եւ անոնց երեւոյթին բոլոր ազնուութիւնը մարել: Ընտան շքեղութիւննին վրաներէն հեռացած գացած կ'երեւնայ, եւ տրամաբանութեան ու երեւակայութեան բոլոր ճիգերը չեն կրնար նորէն կատարելապէս տեղը բերել զանիկայ:

§ 274. Զուգորդեալ գեղեցկութեան աղբիւրները մարդուս երջանկութեան աղբիւրներուն համեմատ են:

Նաճիլի աշխատութիւն մը կ'ըլլար մեզի զուգորդեալ գեղեցկութեան աղբիւրներէն մէկ քանին մասնաւորաբար ցուցնել, թէ որ գործքերնուս նպատակը ներէր: Սակայն բոլոր աս գրքիս նպատակը յաւէտ դրութեան մը պատկերը կամ շրջագիծը ներկայացնել է, քան թէ մասնաւորիւ անոր քննութեան առարկաները տեսակաւորել: Եւ աս ակնարկած նիւթերնուս համար, չենք կրնար ընդարձակ բացատրութիւն մը ընելու խոստանալ, ուր կը մնայ բոլոր մասնաւոր մասերը քննութեան առարկայ ընելը, վասն զի զուգորդեալ գեղեցկութեան աղբիւրները մարդկային երջանկութեան աղբիւրներուն չափ ընդարձակ եւ բազմաթիւ են:

Մարդուս երջանկութեան աղբիւրները, անոնք որ զգայտրանաց հետ կապակցութիւն ունին, եւ անոնք որ իմացականութեան

## Զուգորդեալ գեղեցկութիւն :

Հետ, անոնք որ բարոյականին հետ եւ անոնք որ ընկերական եւ կրօնական վերաբերութեանց հետ, խիստ շատ են թուով : Աւերբոր ներսիդինիս իմացած երջանկութիւննիս, ինչ աղբիւրէ որ կ'ըլլայ նէ ըլլայ, գեղեցիկ առարկայի մը հետ կը կապակցի նէ, ընդհանրապէս կը գտնենք որ աս պարագայով ան առարկային գեղեցկութիւնը կ'եւեռնայ : Ուրիշ խօսքով՝ զգացած հաճութիւններնուս ու ան առարկային մէջտեղը եղած զուգորդութիւնը այնպէս սաստիկ կ'ըլլայ, որ մէկ ստացական գեղեցկութիւն մը կը հագնի ան բանը, որ ինքնիրենը զուրկ էր անկէ : Ուստի հերիք է միայն այսչափ ըսել, թէ զուգորդեալ գեղեցկութեան աղբիւրները հարկաւորապէս մարդկային երջանկութեան անհետազօտ աղբիւրներուն չափ ընդարձակ են :

## § 275 . Գեղեցկութեան վրայ ըրած դիտողութիւններնուս բովանդակութիւն :

Գեղեցկութեան շարժութեանց նիւթը քիչ դժուարութիւն չունեցող նիւթ մը ըլլալուն համար, հոս անոր վրայով եղած գլխաւոր դիտողութեանց մէկ համառօտ բովանդակութիւնը դնելնիս օգտակար կրնայ ըլլալ :

ա. Գեղեցկութեան շարժութեանց վրայ դժուար է սահման մը տալը, սակայն աս երկու նշանները կամ հանգամանքները կը գտնենք վրանին : — 'Ախ' աստիճանաւ մը հաճելի են, եւ երկրորդ՝ զանոնք միշտ արտաքին առարկաներու կը վերաբերենք՝ իբրեւ անոնցմէ պատճառեալ :

բ. Ըմեն գեղեցիկ առարկայ ինքիք մէջ բան մը ունի, որով որ ուրիշ գեղեցկութիւն չունեցող առարկաներէ կ'որոշուի : Ըստը համար վայելչապէս կրնանք ըսել թէ աս կամ այն բանին վրայ գեղեցկութիւն կայ : Սակայն՝ միանգամայն մէկ լուսաօրութիւն մ'ալ կ'անդրադարձէ մտքէն ան առարկաներուն վրայ, եւ ասիկայ կ'ըլլայ՝ թէ գեղեցկութիւնը բնածին է եղեր թէ զուգորդեալ :

գ. Գեղեցկութեան շարժութիւն ըսած զգացումնիս մինակ բնական բաներու սահմանեալ չէ, հապա արհեստի գործքերէ, երեւակայութեան ստեղծումներէն եւ տեսակ տեսակ իմացական եւ բարոյական բնութիւններէ ալ կը պատճառի, որչափ որ աս բաները մտքին առջեւ տեսութեան առարկայ կրնան ըլլալ նէ : Երբ որ աս կերպ կերպ առարկաները եւ ուրիշներ ալ ներսիդինիս հաճութեան զգացումներ կրնան յարուցանել, եւ մտքերնիս ալ իր իմացած շարժութեանց լուսափայլութիւնը անոնց վրայ անդրադարձելով՝ անոնց գեղեցկութիւնը կրնայ եւելցընել :

գ. Սարգուս մտքին մէջ բնածին ընդունակութիւն մը կայ շարժութեանց ընդհանրապէս, եւ գեղեցկութեան շարժութեանց մասնաւորապէս, եւ աս ալ կայ՝ որ առարկաներէն օմանք իրերուն բնութենէն այնպիսի վիճակի մը մէջ են, որ անոնց իմացումէն աս գեղեցկութեան շարժումները կը հետեւին, եւ օմանք ալ աս հանգամանքէն զուրկ են, եւ աս հանգամանքը օւնեցողներուն համար կ'ըսենք թէ իրնէ գեղեցիկ են: Այսինքն թէ երբոր մարդուս մտացը առջեւը դրուին նէ, անոնց իմացումէն գեղեցկութեան շարժութիւն կը հետեւի, առանց անոնց հետ մէկտեղ յաւելեալ կամ մերձաւոր պարագաներու ազդեցութեան օգնութիւն ըլլալու:

ե. Ան առարկաները որոշելու մասին, որոնց որ բնածին կամ ներքին գեղեցկութիւն կրնայ ընծայուիլ, ստոյգ ընտրութիւն ընել չ'կեղծելով, քիչ պատճառ չ'կայ հաւատալով՝ թէ աս գեղեցկութիւնը այսինչ ձևերուն, մասնաւոր հանգամանք մը ունեցող այնինչ ձայներուն, պայծառ գոյներու, քանի մը կերպ շարժմանց, եւ՝ կրնանք եւելցընել՝ իմացական եւ բարոյական գերազանցութեանց՝ երբոր որոշ իմացողութեան առարկայ կ'ըլլան նէ, կրնայ ընծայուիլ:

զ. Շատ իրեր, որոնք ինքնիրեննուն մտածելով գեղեցիկ չենք կրնար սեպել, կերպ կերպ բաներու քաղցր եւ զարթուցիչ յիշելութիւններուն հետ զուգորդուելով կը գեղեցկանան, եւ անոնք ալ որ ինքնին գեղեցկութիւն ունին, աս նոյն պատճառով աւելի հաճոյական շարժութիւններ յառաջ կը բերեն: Ասեւ որ բաները գեղեցիկ ըլլալուն ու որ բաները գեղեցիկ չըլլալուն վրայ եղած կարծեաց տարբերութիւններուն մեծ մասը զուգորդութեանց տարբերութիւններէ է: — Ասոնք են աս նիւթիս հետազօտութիւններովը երեւցած երեւելի դիտողութեանց մէկ քանին:



Գ Վ ՈՒ Խ Ե Գ

Շ Ա Ր Ժ Ո Ւ Թ Ի Ի Ն Ե Բ Վ Ս Ե Մ Ո Ւ Թ Ե Ա Ն Ե

§ 276 . Գեղեցկութեան ու վսեմութեան մէջ եղած կապակցութիւնը :

Ան շարժութիւնները, որոնք գեղեցկութեան շարժութիւններէն որոշմամբ Ս Կէմպան կը յորջորջին, կարգ մը զգացումներ են, որոնք գեղեցկութեան շարժութեանց հետ մէկտեղ շատ բան ունին հասարակի. բնութեամբ կամ տեսակաւ իրարմէ այնչափ տարբեր չեն երեւնար, որչափ աստիճանաւ : Արորոք աս երկու անունով ցուցուած զգացումները կը քննենք, գիւրաւ կը տեսնենք որ երկուքին մէջ յառաջատուութիւն մը կայ . երկուքն ալ սաստկութեան կողմանէ անհամար աստիճաններ ունին . սակայն մէկուն բովանդակած շարժութիւնը թէպէտ եւ միւսինէն աւելի վառվառն եւ մէկ քանի օտար տարբերներու հետ խառնուած է, ըստ մեծի մասին էապէս նման է անոր : Այնպէս որ շատ պարագաներու մէջ անհնարին բան չէ ամենեւին՝ մինչեւ անգամ ստորնագոյն գեղեցկութեան ըզգացման ու ամենարարձք վսեմութեան շարժութեանց մէջ կապակցութիւն մը գտնել յառաջատուութեամբ :

Աս մեր զգացմանց յառաջատուութիւնը, հեղաճամբոյր ու հաճոյական շարժութենէն դէպ ի գօրաւորին՝ եւ մինչեւ անգամ ցաւաւիին, այնպիսի մէկու մը օրինակին նման կու գայ, որն որ գետի մը առաջին ելքը կը տեսնէ լեռներուն մէջէն, ու անոր ետեւէն կը սկսի երթալ քանի որ գետը պտոյտ պտոյտ կը պտրտի ու աստիճան աստիճան կը մեծնայ դաշտէ գաշտ եւ ձորէ ձոր անցնելով, եւ վերջապէս անոր կորսուիլը կը տեսնէ լայնածաւալ Ովկիանոսին մէջ : Ատեն մը՝ աս ենթադրեալ մարդուն իր ներսիդին իմացած զգացումները, առջին եղած տեսարանէն պատճառեալ, գեղեցկութեան շարժութիւնք ըսուածները կ'ըլլան : Վրանի որ այն փոքրիկ առուակը, որ ինչուան հոս բարձրաւանդակներու վրայէն եւ տերեւներու մէջէն գրեթէ ինքզինքը բոլորովին ծածկելով կը խաղար կ'երթար, կը սկսի իր ջուրերը շատցնել, եզերքները ընդարձա-

## Շարժութիւնք Վսեմութեան :

կել, եւ շքեղ գետի մը կը փոխուի, անատեն անոր զգացումներն ալ աւելի զօրաւոր տեսակէ մը կ'ըլլան: Ս'ենք այսպիսի պարագաներու տակ իմացուած զգացումներուն՝ ուրիշներէ որոշելու կերպով՝ կ'ըսենք շքեղութեան շարժութիւնք: Վերջապէս ան գետը, որուն ընթացքին կը հետեւէր կոր, ինքզինքը կը բանայ ու կ'աներեւուածանայ Սվկիանոսին անհունութեանը մէջ. եւ ահա անհասնում ջուրերու ընդարձակ եւ անասման նելի անդունդներ աչքին առջեւը կը բացօին: Յայնժամ անոր իմացած շարժութիւնն ալ իր տեսութեան առարկաներուն մեծութեանը եւ ազդուութեանը հետ մէկտեղ լայնելով ու սաստկանալով, կ'ըլլայ վսեմական: — Ուստի վսեմութեան շարժութիւնք գեղեցկութեան շարժութիւններէն զլիսաւորապէս աս բանով կը տարբերին, գոնէ խիստ շատ պարագաներու մէջ, որ անոնցմէ ուժգին են:

§ 877. Վսեմական շարժութեանց առիթները կերպ կերպ են:

Վսեմական շարժութիւնք պարզ են. հետեւապէս անասման նելի են: Բայց սակայն գիտակցութիւններնուս ուղղակի առարկայ ըլլալուն համար՝ չենք կրնար ինքզինքնիս անոնց ինչքան ըլլալուն վրայ տգէտ սեպել: Սակայն անոնց վրայ ունեցած բմբռնումներնիս քանի մը բաներու մէջ աւելի յստակ եւ որոշ կրնայ ըլլալ կը կարծենք, թէ որ անոնց ծագմանը մէկ քանի առիթները յիշենք: Սակայն դեռ աս բանը ընել չըսկրսած, աղէկ է որ գեղեցկութեան վրայ խօսած ատեննիս աւելի ընդարձակօրէն ցուցուած նիւթի մը դարձընենք դիտողութիւննիս քիչ մը, որ անիկայ հոս ալ տիրապէս արժան է դրուիլ: Յիշելիքնիս աս անտարակուսելի ճշմարտութիւնն է, թէ վսեմութեան շարժութեանց առիթները միայն մէկ չեն, ուրիշ խօսքով՝ միայն մէկ տարերքի մը վրայ կայացած չեն, ինչպէս որ ոմանք կարելի է հակամիտին խորհելու, հապա գեղեցկութեան շարժութեանց առիթներուն նման շատուոր եւ տեսակ տեսակ են: Սէկ բանի մը վսեմութիւն ունենալը անոր զարթուցած շարժութեան որպիսութենէն՝ աստիճանէն կ'որշօւի. եւ թէ որ վսեմութեան շարժութիւն բուսած բանը կայ նէ, ինչպէս որ աներկբայելի է ըլլալը, յիշած ծանօթութիւններնիս ինքնին յայտնի է թէ սողոգ է: Բստ սլսմ վստյելուչ կ'երեւնայ մեզի որ նախ եւ առաջ գործերնիս աս առիթներուն մէկ քանին ցուցնեն ընենք:

## Հարժուութիւնք վսեմութեան :

§ 278 . Մեծ արածութիւն կամ ընդարձակութիւն առիթ վսեմութեան :

Վ սեմութեան առիթներուն մէկ քանին ցուցնելու աշխատութիւններնուս մէջ ընելու առաջին ծանօթութիւննիս աս է, թէ վսեմական շարժութիւնք կը պատճառին ան առարկաներուն տեսութենէն, որոնք մեծ տարածութիւն կամ ընդարձակութիւն ունին, ուրիշ խօսքով՝ որոնք որ լոկ հորիզոնական լայնութիւն ունին: Ըստ այսմ՝ ճիշդ ծանօթութիւն մըն է ան որ կ'ընէ Սղիւարդ, թէ Սկովտիացի մը առաջին անգամ Մընզընոյ Սէլիգլարբի եւ Լորքշայրի ընդարձակ դաշտերը տեսնելուն՝ վրսեմութեան մօտ շարժութիւն մը պիտի իմանայ, անանկ բան առաջուց ամենեւին տեսած չըլլալուն համար: Ուղիներէն Լրվինկ ալ աս նոյն բանին նայող ծանօթութիւն մը ունի: «Սպանիական խոժոռատեսիլ պարզ դաշտավայրներուն մէջ մարդուս հոգւոյն վսեմութեան զգացում ազդող բան մը կայ, կ'ըսէ: Քասէլը՝ Լամանքայի ամբառ դաշտերը, որ աչքդ առածին չափ կը տարածին բուն իսկ իրենց մերկութեան եւ լայնածաւալ ընդարձակութեանը պատճառաւ մարդուն մտադրութիւնը կը քաշեն, եւ Ովկիանոսի ահեղ շքեղութեանը նման բան մը ունին վրանին»:

Ովկիանոսը, որ զննութեան ենթակայ եղող ամենէն վսեմ առարկաներուն մէկն է, իր վսեմութեանը մէկ տարրն ալ անտարակոյս այն իր ցուցուցած անսահման արածութիւնն է:

§ 279 . Մեծ բարձրութիւն արար կամ առիթ վսեմութեան :

Ի ոկ բարձրութիւնն ալ, ընդարձակութեան կամ տարածութեան դիտողութիւններէ անկախութեամբ, վսեմական զգացմանց մէկ առիթ մը կ'երեւնայ: Ով որ շատ զառ ի վեր ու բարձր ժայռի մը՝ բլուրի մը՝ կամ լեռան մը ստորոտը կանգնած վեր նայած է նէ, ասոր փորձը առած է: Լքբոր դիշերուան լուութեան մէջ յստակ եւ պարզ երկնից կամարին տակը կանգնած աչքերնիս դէպ ի վեր կը վերցընենք, դժուարաւ կը պատահի որ վսեմութեան շարժութիւն մը չիմանանք, ըստ մասին ան տեսածնուս անսահման ընդարձակութենէն պատճառեալ, սակայն մասամբ մըն ալ ահագին բարձրութենէն: Ըստ ճանապարհորդք խօսած են ան վսեմ շարժութեանը վրայ, որն

---

 Շարժութիւնք վսեմութեան:
 

---

որ Վ իրգինիայի հռչակաւոր խնական կամուրջը անոր տակի անգնդախոր խոռոչէն վեր նայելով զիտողը կ'ունենայ: Ըսկամուրջը միահատոր թանձր ժայռ մըն է, վաթսուն ոտքի չափ լայնքով. իննսուն ոտք երկայնութեամբ, եւ քառասուն ոտք խորութեամբ, բլուրին գաղաթը կեցած, որուն մէջէն վերէն ի վար նեղ ձորի պէս խոռոչ մը բացուած է, ու խոռոչին յատակէն ինչուան գագաթը երկու հարիւր երեսուն ոտք բարձրութիւն է, որ ասանկ անհետեւ ի կամուրջի մը համար շատ բան է: Վ արէն վէր նայողին ան ահագին քարաժայռը զըլխուն վրայ կախուած կ'երեւնայ, եւ մարդկային բնութենէն դուրս բան է առանց ուժգին զբացման մը այնպիսի մեծահատոր թանձր մարմարիոն մը տեսնելը, կապուտակ օդին մէջ վերամբարձած, ու հոն անանկ դուրս ցցուած կեցած, իրրեւինքն Վ մենակարողին լուս' անփոփոխ եւ յաւիտենական բազուկը:

## § 280 . Խորութեան վրայ իրրեւ առիթ վսեմութեան:

Վ վսեմութեան հիմնական պատճառներուն միայն մէկ առիթի մը կամ տարրի մը ամփոփուելուն անհնարին ըլլալուն հաստատութիւն տուող պարագայ մըն ալ աս է, որ խորութիւնն ալ բարձրութեան նման՝ կը գտնենք որ աս շարժութեան պատճառ կամ առիթ է: Սակայն ասոր վրայ մենք երկբայութեան մէջ ենք, թէ խորութիւնը, որ բարձրութեան չափ յաճախ պատճառ մը չէ վսեմութեան շարժութեանց, արդեօք անոր չափ զօրաւոր առիթ մըն է՞. որ ան՝ այսինքն բարձրութիւնը, աս տեսակ շարժութեանց հետ շատ կապակցութիւն ունենալուն համար, վսեմ կամ բարձր անունը տրուեր է աս զգացումներուն: Սակայն ուրիշներն ալ կրնան ուրիշ կերպ խորհիլ: Պըրք հետեւեալ պարբերութիւնը ունի աս բանիս վրայ: — «Ինծի անանկ կու գայ թէ բարձրութեան վսեմութիւնը խորութեան չափ չէ. եւ թէ գահապէտէ մը վար նայած ատեննիս աւելի մեծ ազդեցութիւն կը կրենք, քան թէ վարէն վեր նոյնքան բարձրութիւն ունեցող բանի մը նայելէս. սակայն կարծիքիս վրայ շատ հաստատուած չեմ»:

Սակայն աս ինտոր որ է նէ, ասոր վրայ տարակոյտ չ'կայ թէ խորութիւնը վսեմ շարժութեանց պատճառ է: Արբոր բարձր բանի մը գագաթը կը կենանք ու դէպ ի վար կը նայինք առջեւնիս բացուած ընդարձակ տեսարանին վրայ, անհնարին է որ ազդու ներգործութիւն մը չընդունինք: Լայնատարած Սվլիանոսին եւ

## Շարժութիւնք Վսեմութեան :

ընտր եղող նաւազը երբոր գիշերուան առանձին պահանոր-  
գութեանը մէջ աչքը դէպ ի վեր կը վերցընէ բարձրաբերձ եւ  
լուսաւորեալ երկինքը գիտելու, վսեմ շարժութիւն մը կը զգայ.  
ան նոյն զորաւոր զգացումը ներսիդին գրգռուած կ'իմանայ,  
երբոր վայրկեան մը ետքը աչքը կը դարձնէ վար, ու տակը ե-  
ղող անյատակ անդունդին վրայ կը մտմտայ, որուն վրայ կախ-  
ուած կեցած է նաւուն զիւրաբեկ տախտակին զորութիւնովը :

## § 281 • Գոյներու վսեմութեան առիթ ըստուին վրայ :

Գոյներն ալ մարմնոց ձեւերուն նման կրնան՝ սահմանաւո-  
րեալ չափով մը՝ վսեմ շարժութիւններ պատճառել: Փայլակը,  
երբոր հեռուանց մէկ շարունական լուսեղէն շաւիղով մը գե-  
տինը անցնիլը կը տեսնուի • կարմրագոյն ասուպը, որ խաղաղ ու  
մթին եթերին մէջ արագութեամբ կը սլանայ, ան վարդագոյն  
լուսափայլութիւնը, որ գիշերային խաւար երկնից կիսագունար  
արեւին ելքէն առաջ կը շառագունէ, վսեմ առարկաներ են  
տեսութեան • եւ թէպէտ եւ ասոնց պատճառած վսեմ շարժու-  
թեանց հետ ուրիշ տարերք ալ կան խառնուած, սակայն մէկ  
մասն ալ հաւանականաբար պէտք է գոյներուն փառաւորու-  
թեանը եւ կենդանութեանը ընծայել: Ի՞նչ բան կայ բորբոքած  
հրաբուզի մը բերնի սաստիկ կարմիր բոցերուն ու թանձր խա-  
ւար մուխին իրար խառնուած գիմարեալ երեւոյթին չափ վը-  
սեմական ազդեցութիւն ընող: Կաւարը՝ մասնաւորաբար՝ վսե-  
մութեան տարր մըն է: Երբոր երկինքին մէկ որոշեալ եւ հե-  
ռաւոր մասը թուխ ամպեր կը հաւաքուին, ինտոր մտադրու-  
թեամբ մարդու աչքը կը հաստատուի անոնց վրայ, որ մէկ  
ամենախոր տխրութեան կերպարանք մը կը ցուցնեն: Ընտաւ-  
ներ եւ խոժոռահայեաց գահաւանդակներ, լեռներ եւ ընդար-  
ձակ ովկիանոսը, եւ ինչ բաներ որ վսեմութեան ընդունակ են,  
եւս առաւել կը վսեմանան երբեմն վրանին եկած ստուերովը  
ու մթութիւնովը: Ըմէն երկրի բանաստեղծք Ըստուածութիւ-  
նը, գերագոյն վսեմ զննութեան առարկան, իբրեւ խաւարին  
մէջ աթոռացեալ նկարագրած են: — «Եւ անիկայ երկինքը ցած-  
ցուց ու իջաւ. եւ անոր որբերուն արտիւն մաստիսող խաւ:  
Ու խա-  
ւարը, ու խաւիք ջուրերը, ու երկինքին ամպերը իր բոլորտիքը  
վարագոյր քաշեց»:

§ 282. Չայներու վսեմական շարժութեանց աւելի ըլլալուն վրայ:

Վսեմութեան տարր մըն ալ տեսակ մը ձայներու վրայ կը գտնենք. կենդանեաց քանի մը աղաղակները եւ ձայները կան, որ սովորաբար վսեմ կը սեպուին: Մտիւծին մունչիւնը, չէ թէ միայն իր բնիկ անտառին առանձնութեանը մէջ, այլ ամէն ատեն վսեմութիւն մը ունի: Սնորհուս ձայնն ալ, խել մը ուրիշ ձայներու հետ միացած, կարող է վսեմութիւն շարժել. եւ իրացունէ վսեմութիւն կը շարժէ երաժշտութեան վարժապետներու եւ շարագրողներու շատ գործքերը կատարած ատենը: Արգիւնին ցած ու խորին մրմունջը քիչ վսեմութիւն չունի, անոր հետ մէկտեղ կապակցած կրօնական եւ բարոյական զուգորդութիւններէն անկախութեամբ մտածելով: Կարծեօք կրնանք ըսել թէ մէկը չկայ որ երկբայի փողին վարպետ փողահարի մը ձեռք վսեմ ձայներ հանելու զօրութիւն ունենալուն վրայ: Վրեթէ ամէն մարդ դիտած ըլլալու է թէ մայր ծառերու ընդարձակ ու խիտ անտառէ մը ինչ մէկ մասնաւոր կերպով աղղու ձայն մը կ'ելլէ, սաստիկ հողմէ մը շարժած ատենը, որ ան ալ յայտնապէս նոյն վսեմ բնութիւնը ունի: Ովկիանոսին ահագին եւ շարունական ձայնը՝ երբոր ծովեզերքը կը ծեծէ, վսեմ է. եւ անկէ հազիւ վար կը մնայ մեծ սահանքի մը հաւաքեալ ջուրերուն անընդհատ սաստիկաձայն խոսողքը: Մս օրինակներուն վրայ կրնանք եւելցնել թնդանօթին ձայնն ալ, ոչ միայն պատերազմի դաշտէ եկած ատենը, այլ ամէն ժամանակ, եւ եւս առաւել՝ որոտման ահեղ ձայնը: Մս ետքինը շատ տեղ յիշուած է Սուրբ Գրոց մէջ, Մտուծոյ ստորոգելիքներուն հետ մէկտեղ, եւ՝ երեւցածին նայելով՝ անոր վսեմութեան գաղափարը սաստկացնելու նպատակաւ: «Տէրը երկինքին մէջ որոտաց, ու բարձրեալը իր ձայնը տուաւ»: «Տէրոջը ձայնը ջուրերուն վրայ է, փառաց Մստուածը կ'որոտայ»:

Վիւթերնուս աս մասը կը թողունք Վոլքերիձէն ծանօթութիւն մը յառաջ բերելով, որն որ ձայներու վսեմութեան ընդհանուր վարդապետութեանը հաստատութիւն կուտայ: Ուաղպրիկ լճին անտարանին վրայով բան մը պատմելէն ետեւ, կ'ըսէ. «Միսի մը չափ առաջ, գեւ սառերը հալիլ չ'սկսած, մըրրերիկ մը պատահեցաւ. բոլոր գիշերը այնպիսի որոտումներ եւ ձայնումներ ու շառաչումներ լուսեցան բեկբեկող սառոյցքէն որ՝ անանկ տպաւորութիւն մը եղաւ մտքիս թէ այնպիսի

Հարժուութիւնք վսեմութեան :

ասէր ձայներ կան՝ որոնց չափ վսեմութիւն որ եւ իցէ տե-  
սութեան առարկայ չ'կրնար ունենալ, եւ թէ ասոնք աւելի  
ուժգնութեամբ կախ կը թողուն մարդուն բարդատող զօրու-  
թիւնը, եւ կը ծծեն մտքին գիտակցութիւնը, անոր ներգործած  
ատեննին բոլոր մտադրութիւնը իրենց քաշելովնն” :

§ 283 . Հարժումն առիթ վսեմութեան :

Ինչուան հոս մեր շարունակած խորհրդոյ ընթացքէն կը տես-  
նուի որ գեղեցկութեան ու վսեմութեան մէջ մօտ վերաբա-  
նութիւն մը կայ, չէ թէ միայն ներսիդիսիս ծագով զգացում-  
ներուն կողմանէ, այլ նաեւ անոնց առիթներուն կողմանէ ալ :  
Ինչպէս որ գտանք թէ չէ թէ միայն առարկաներու ձեւերէն,  
այլ գոյներէ եւ ձայներէ ալ գեղեցկութեան զգացումներ կը  
պատճառին, անանկ ալ վսեմական զգացմանց համար նոյնը կը  
գտնենք : Եւ նոյնպէս՝ ինտոր որ քանի մը կերպ շարժմանց  
հետ գեղեցկութիւն կապակցած գտանք, նմանապէս կը տես-  
նենք որ շարժումը իր մէկ քանի եղանակաւորութիւններովը  
վսեմութեան ալ պատճառ է :

( ) րինակի ազագաւ՝ երրոր սաստիկ արագութիւնով շարժող  
բաներ տեսնելու ըլանք նէ վսեմութեան շարժութիւն կ'իմա-  
նանք ներսիդիսիս : Տրվեժներէ վար ուժգնութեամբ հոտող  
ջուրերու վրայ նայած ատեննիս ունեցած զգացումներնուս մէկ  
աղբիւրը աս է : Եւ նոյն պատճառաւ, թէպէտ եւ զգացած  
շարժութիւններնուս մէջ անտարակոյս ուրիշ տարրներ ալ կան,  
սաստիկ փոթորիկն ալ, որ անհնարին արագութեամբ՝ գիմացը  
ելածը տապալելով՝ կը հոսէ ու կ'երթայ, վսեմութիւն ունի :  
Եւ ան վսեմական շարժութեան մէկ մասին պատճառն ալ, որն  
որ մարդիկ շատ անգամ ունեցած են փսյակին յանկարծ եր-  
կինքէն գետինը անցնիլը եւ ասուպին արագութեամբ թռչիլը դե-  
տած ատեննին, նոյն աս շարժումն է :

§ 284 . Զօրութեան ցուցմունքներէ պատճառեալ վսեմական զգացմունք :

Մտաւոր բաներու զննութենէն ալ, նիւթականաց նման, աս-  
կերպ շարժութիւնք յառաջ կրնան գալ : ( ) րինակի ազագաւ՝  
զօրութիւնը մտքին մէկ յատկութիւնն է, եւ չէ թէ նիւթա-  
կան բաներու, եւ անոր երեւոյթը շատ անգամ վսեմ է : Շատ  
հարկաւոր չէր ըսել աս ծածօթութիւններնուս վրայով, թէ

Հարժուժիւնք վսեմութեան :

զօրութիւնը ուղղակի արտաքին զգայարանաց հաղորդուող բան մը չէ : այլ մանաւանդ մտքին տեսութեանը բերուած ներքին թեւագրութեան առարկայ մըն է : Բայց սակայն աս թեւագրութեան պատճառները արտաքին առարկաներու վրայ կրնան ըլլալ : Աւ երբոր այս այսպէս ըլլայնէ, ան առարկաները զըննելնէս յառաջ եկած զգացումներն ալ ընդհանրապէս կը զօրանան : Ուրիշ խօսքով՝ մէկ բան մը, ինչ վսեմութիւն որ ունենայ նէ ունենայ, թէ որ իր ուրիշ վսեմութեան հանգամանքներէն իզատ՝ զօրութեան գաղափարն ալ զօրաւոր կերպով կրնայ թեւադրել մտքերնուսնէ, անոր յառաջ բերած վսեմ՝ շարժութիւնն ալ ան թեւադրութիւնով շատ կամ քիչ կը սաստկանայ :

Չկայ մէկ բան մը այնքան վսեմ, ինչպէս վառող հրաբուղե մը, որ բերնէն կրակ՝ ամպեր՝ հրալստ քարեր եւ ամբաւ լայն զեանք կը պոռթկայ . եւ անտարակուսելի է թէ այս վսեմութեան շարժութեան մէկ մասը ան բաներուն մարդուս մտքին թեւադրած զօրութեան գաղափարէն է : Այրկրաշարժը վսեմ բան է . չէ թէ միայն իր կործանելու սաստկագոյն ներգործութիւններովը, այլ նաեւ թեթեւ կերպով մը գետինը ցնցելովը եւ սարսելովն ալ, որոնք զօրութեան մտեցած ըլլալը կը ցուցնեն աւելի քան թէ կործանման : Այլիսնոսը երբոր սաստիկ փոթորիկէ մը կ'աղմըկի, եւ մեծամեծ նաւերը վրան խաղալիքի պէս կը տատանին, մէկ աւելի վսեմ երեւոյթ մը կ'առնէ վրան . ու պատճառը սասնկ պարագաներու մէջ զօրութեան ազդու ցուցմունքները վրան տեսնուիլն է : Մեծ զօրաց գունդերու իրենց հրազենքը կրակելն ալ, որ մարդկային ներգործողութեան մէկ ահեղ պատկերը կը ներկայացընէ, եւսելօք վսեմ կ'երեւնայ աս նոյն պատճառաւ : Սակայն բոլոր սսոնց եւ ուրիշ խիստ շատ օրինակներու մէջ յառաջ եկած վսեմութեան շարժութիւնը միայն մէկ պատճառի մը չենք կրընար առաւ . մէկ մաս մը՝ կարելի է թէ՛ պէտք է ընդարձակ տարածութեան տալ . մէկ մաս մը՝ գոյներու պայծառութեան կամ մթութեան բնածին ազդեցութիւններուն . մաս մըն ալ երկիւղի եւ վտանգի զգացումներուն :

§ 285 . Իրերու սկզբնական կամ բնածին վսեմութեանը վրայ :

Թէ որ գեղեցկութեան եւ վսեմութեան մէջ կապակցութիւն մը կայ, թէ որ գեղեցկութիւնը՝ շքեղութիւնը՝ եւ վսեմութիւնը, աւելի սաստիճանաւ քան թէ տեսական իրարմէ տարբերող



## Շարժութիւնը վսեմութեան :

այլ եւ այլ շարժութեանց անուններ կննէ, ուրեմն էապէս ճիշդ ան նոյն դիտողութիւնները որ գեղեցկութեան վրայ ըրինք, վսեմութեան ալ տիրապէս կը յարմարին: Ի՞նչ որ կան անանկ բաներ, որոնց զննութենէն գեղեցկութեան շարժութիւն յառաջ կու գայ, զուգորդեալ զգացումներէ անկախութեամբ, ըսել է թէ անանկ առարկաներ ալ կան, որ ի բնէ վսեմ են: Աւստի կը հետեւցընենք թէ ամէն ինչ եւ իցէ բան, որ մեծ բարձրութիւն՝ կամ մեծ խորութիւն՝ կամ լայնածաւալ ընդարձակութիւն՝ եւ կամ ուրիշ վսեմութեան յատկութիւններ ունի նէ, ան բանը ինքնին կրնայ մեր մէջը վսեմ շարժութիւններ պատճառել, առանց ինչ եւ իցէ զուգորդեալ զգացմանց ստորակարգեալ կամ երկրորդական օդնութեանը:

§ 286 . Ի հաստատութիւն իրերու ընածին վսեմութեանը դիտողութիւնք :

Առարկաներէն ոմանց մէջ այսպիսի նախնական կամ ընդարդս վսեմութիւն մը ըլլալը չէ թէ միայն գեղեցկութեան եւ վսեմութեան մէջ եղած կապակցութենէն կրնանք հետեւցընել, այլ նաեւ մարդու սովորական փորձառութեանը աներկբայ համաձայն գալէն: Սակայն խնդիրը փորձառութեան վրայ կայացուցած ատեննիս, ( որ ասոր վրայ անտարակոյս պէտք է կայացընել, ) հարկ է որ բանին ինտոր ըլլալը՝ նախընթաց գլուխներու մէջ ըրածնուս համեմատ՝ տղոց վրայ փնտրուենք: Այլ աս՝ սա յայտնի պատճառով, որ երբոր մարդիկ քիչ մը տարիքնին կ'առնեն նէ, ալ անատենը դժուար կ'ըլլայ նախնական վսեմութիւնը երկրորդականէն կամ զուգորդեալէն զատելը. անբակելի կերպով իրարու հետ կը խառնուին մէկ կ'ըլլան: — Աւստի տղայ մը առ ու զանիկայ յանկարծ Ավիլիանոսին եզերքը կայնեցուր, կամ ստուերամած անտառախիտ բարձրագագաթն լեռներ աղէկ մը տեսնուող տեղ մը տար, եւ կամ հրաբուլդի մը որոտմունքներուն՝ ամպերուն ու հուրերուն դէմը հանէ. եւ կը տեսնես որ շատ պարագաներու մէջ վսեմ շարժութիւններով կը լեցուի. միտքը ան բաներուն իմացումէն կը բքանայ, եւ մըրըրկայոյզ ծովու նման՝ ուռած կը տատանի: Աչքերը՝ դէմքը՝ շարժուածքը՝ ներքին զգացման զօրութիւն մը կը ցուցընեն, որն որ իր սահմանադրեալ լեզուովը չ'կրնար արտայայտել: Ասիկայ իբրեւ իրական ճշմարտութիւն մը կրնանք հաստատել, վասն զի գիտելու կարողութիւն ունեցող մարդիկ շատ անգամ տեսած են:

Այժմէ մէկը կարենայ խօսքով տղու մը վսեմ գաղափար մը

## Հարժուժիւնք Վսեմութեան:

տալ, ինչ եւ իցէ տեսակ որ ըլլայ, դարձեալ աս նոյն շարժու-  
թիւնները կ'երեւնան վրան, թէպէտ եւ աստիճանաւ ուղղակի  
զգայարանքներովն իմանալնէն ծագած զգացմանց չափ զօրա-  
ւոր չեն ըլլար:


Վ իլլիամ Ղօնս անուն մեկուն վարուցը մէջ դիպուած մը  
կայ պատմուած, որ աս բանիս բացատրութիւն մըն է: — «Իր  
Տինգ տարեկան հասակին, առտու մը երբոր մօրը սենեակը  
Մտուածաշունչ մը կը թղթատէ եղեր, Տայտնութեան տասն-  
երորդ գլխուն հրեշտակին վեմ նկարագրութիւնը աչքին հան-  
դիպեր է, եւ շատ աղղու է եկեր իրեն. այնպէս որ ան մի-  
ջոցին իր երեւակայութեան ընդունած տպաւորութիւնը բնաւ  
մտքէն չէ ելեր: Չափահաս ատենը անանկ կը սեպէր թէ բո-  
լոր սրբազան մատենադրաց խօսքերուն մէջ վսեմութեան կող-  
մանէ անկէ զօրաւորը չկայ, եւ լոկ մարդկային շարագրութիւ-  
նով եղածներուն ամենէն զերազանցը անկէ շատ վար կը մնայ.  
ու շատ կը սիրէր ան առաջին անգամ կարգացած ատենը ու-  
նեցած խորին զգացումը յիշելը ու անոր վրայ խոկալը»: Մ.  
յիշուած տունը հետեւեալն է. «Եւ տեսայ ուրիշ հզօր հրեշ-  
տակ մը, որ երկինքէն կ'իջնար, վրան ամպ մը հագած, ու  
գլուխը ծիրանի դօտի մը, ու իր երեսը արեւի պէս, ու ոտ-  
քերը կրակի սիւնի նման»:

§ 287. Վսեմական շարժութեանց վրայ զուգորդութեան ունեցած  
ազդեցութիւնը:

Թէպէտ եւ՝ ըրած դիտողութիւններնու համեմատ՝ վսեմու-  
թեան շարժութեանց ըստ մասին բնածին ըլլալը ընդունելու  
ենք, սակայն աս ալ անտարակոյս ճշմարիտ է՝ թէ անոնց մէկ  
մեծ մասը զուգորդութեան պէտք է տալ: Մտիկայ բացատրե-  
լու համար՝ ձայներու ազդեցութիւնը օրինակ բերենք: Երբոր  
մէկ ձայն մը վտանգի գաղափարներ կը բերէ մարդու միտքը,  
ինչպէս՝ հրազինաց բոմբիւնը եւ փոթորիկի հնչեւեր. կամ եր-  
բոր ահագին զօրութիւններու յիշելութիւններ կը ձգէ մտքեր-  
նիս, ինչպէս՝ ջրվէժի մը հոսումը եւ գեանաշարժին գրողիւնը,  
զգացած վսեմութեան շարժութիւննիս մեծապէս կը սաստկանայ  
ասանկ թեւադրութիւններով: Թնդանօթին ձայնէն աւելի վը-  
սեմութիւն ունեցող քիչ ձայն կայ. սակայն ուրիշ ատեններէ  
որչափ տարբեր եւ որչափ աւելի զօրաւոր կ'ըլլայ անոր վսե-  
մութեանը վրայ ունեցած զգացումնիս, երբոր իրական պատե-  
րազմի դաշտէ մը կու գայ ձայնը ականջուս: Հատ ձայներ.

Հարժուութիւնք Ծաղու :

որ ինքնիրեննուն քրեւելի մը չեն, եւ շատ ուրիշ ձայներէ՝ ուրոնց որ վսեմութեան հանդամանքը չենք տար՝ շատ տարբերութիւն մը չունին, զուգորդութիւնով մեծ վսեմութիւն կ'առնեն: Փոթորիկ մը դեռ չելած՝ շատ անգամ մէկ ցած ու տրկար ձայն մը կը շշնջէ, որն որ սա կերպով վսեմութիւն մը առած է: Հատ անգամ կը պատահի որ որոտմունքի կենդանի զգայունութիւն ունեցող անձինք՝ սխալմամբ՝ մէկ հասարակ ձայն մը, ինչպէս կառքի մը կամ սայլի մը գրողիւնը լսած ատեննին կը կարծեն թէ ամպ կը գոռայ կոր: Աս սխալմունքին վրայ եղած միջոցներնուն ան ձայնը իրրեւ վսեմ կը զգան. վասն զի որոտմունքի սովորաբար զուգորդած վտանգի եւ հզօր զօրութեան գաղափարները անոր հետ կը կապակցեն: Այս գիշերուն կանչող բուն ձայնը որ վսեմ կու գայնէ, գլխաւորապէս զուգորդութենէ է. նմանապէս ժայռերու եւ անտառներու մէջ լսուած արծիւին ճիւղ: Ատքինը մասնաւորապէս մէկ կատաղի միայնակ անկախութիւն մը կը ցուցնէ, եւ երկուքին վրայ ալ շատերը մէյմէկ գեղեցիկ բանաստեղծական խօսքերու յիշատակութիւն կամ ազդու երեւակայութիւն մը ունին:



Գ Լ Ո Ւ Խ • Ե

Հ Ա Ր Ժ Ո Ւ Թ Ի Ի Ն Ե Ր Ծ Ա Ղ Ո Ւ

§ 288 . Ծաղուական շարժութեանց ընդհանուր բնութեանը վրայ :

Շ Ա Ր Ժ Ո Ւ Թ Ի Ի Ն Ե Ր ընդհանուր նիւթին վրայ ըրած հետազօտութիւններնուս ընթացքին մէջ քննուելու ուրիշ մէկ քաջածանօթ կարգ մը շարժութիւններ ալ կան, մէկ մասնաւոր բնութիւն մը ունեցող, որոնք են Ծաղու Շարժութիւնները: Գժուար է սա զգացմանց վրայ մէկ ճիշդ սահման մը տալ, թէպէտ եւ գեղեցիկութեան շարժութեանց վրայ ինչ որ ըսինքնէ, նոյնը ասոնց համար ալ կրնանք հաստատել, թէ հա-

## Հարժուժիւնք Ծաղու :

Ճոյակոն եւ բերկրութիւն տուող զգացումներ են : Սակայն աս շարժութիւններէն ընդունած հաճութիւննիս մէկ մասնաւոր եւ զանակաւորութիւն մը ունին, անանկ եզանակաւորութիւն մը որ խօսքով կատարելապէս չ'բացատրուիր, որն որ յառաջ կու գայ ան շարժութեանց պատճառ եղող անձին կամ բանին վրայ մէկ անպատշաճութիւն մը կամ անհամեմատութիւն մը իմանալն էս : — Հոս ալ՝ իմացական փիլիսոփայութեան շատ ուրիշ խնդիրներուն նման՝ ստիպուած ենք գլխաւորապէս մեր գիտակցութեանը եւ ներսիդիւնիս եղած դարձուածքներուն վրայ բանը կայացընելու :

§ 289 . Ծաղրական շարժութեանց առիթներուն վրայ :

Սակայն ասոնց ինչ բան ըլլալը լաւ եւս հասկընալնու օգնութիւն մը կ'ըլլայ, թէ որ ծաղրական շարժութեանց ընդհանրապէս առիթ եղող բաներուն վրայ քիչ մը ծանօթութիւն տանք : Եւ՝ ուրիշ բաներէ ի զատ՝ սա խիստ բացայայտ է, թէ աս զգացումը չենք կրնար երբէք ունենալ՝ ինչուան որ, թէ խորհուրդներու վրայ է եղեր՝ թէ արտաքին առարկաներու եւ թէ գործքերու վրայ, մէկ անակնկալ եւ անսովոր բան մը չը տեսնենք : Եւսինքն թէ՛ աս շարժութիւնը զգացած ատեննիս միշտ մէկ անակնկալ եւ նորաձեւ առնչութիւն մը իմացած կ'ըլլանք մէկ բանի մը վրայ : — Սակայն աս ալ պէտք է դիտել՝ թէ աս ըսած զգացումնիս լոկ այսպիսի նոր եւ անակնկալ առնչութիւններ գտնելէն հարկաւորապէս յառաջ չ'գար : Ուրիշ բան մըն ալ պէտք է, ինչպէս որ գիւրութեամբ պիտի տեսնենք :

Իսաճնուս պէս՝ երբեմն բնաբանական գիտութեանց մէջ մարմիններու յատկութեանց եւ որպիսութեանց նոր եւ անակնկալ կապակցութիւններ կը տեսնենք : Իայց երբոր սյսպիսի գիտութեանց մէջ ասանկ ոչ միայն անձանօթ՝ այլ եւ անակնկալ առնչութիւններ՝ կապակցութիւններ կը գտնենք մէկ բանի մը վրայ նէ, ամենեւին ծաղրական շարժութիւն չ'ծագիր ներսիդիւնիս, թէպէտ եւ մէկ հաճոյական զարմանք մը կ'ունենանք : Դարձեալ՝ նմանութիւնք՝ փոխաբերութիւնք եւ ուրիշ ասոնց նման խօսքի ձեւեր ընդհանրապէս նոր եւ անակնկալ կապակցութիւն մը կը ցուցընեն գաղափարներու . եւ իրենց զօրութեան ու ազդեցութեան մեծ մասը անկէց է . սակայն երբոր ծանր ու լուրջ խօսուածքներու մէջ կը գործածուին, ծաղրաշարժութեան կերպարանք ամենեւին չ'երեւնար վրանին :

## Հարժուժիւնք Ծաղու :

Աւստի կը հետեցընենք թէ նոր եւ անակնկալ կապակցութիւններ կամ վերաբերութիւններ տեսնելէն ծաղրական շարժութիւն յառաջ չ'գար, ինչուան որ նոյն ժամանակը մէկ անհամեմատութեան կամ անպատշաճութեան իմացում մը կամ կարծեցեալ իմացում մըն ալ չըլլայնէ մէկտեղ: Այսպիսի անյարմարութեան զգացում մ'որ ըլլայնէ, անիկայ բոլոր շարժութեանը մէկ նոր հանգամանք մը կու տայ, որուն ամէն մարդ ինք իր փորձառութիւնովը ծանօթ է, եւ սակայն՝ ինչպէս որ առաջ ակնարկեցինք՝ խօսքով ցուցընելը դժուար է:

## § 290 . Ինչ ըտէլ է Հանճարաբանութիւն :

Ծաղու շարժութեանց նիւթը շատ մտ կապակցութիւն ունի Հանճարաբանութեան հետ: Այսն որոյ աս ետքինը, որուն ինչ բան ըլլալը հասկընալը կարեւոր է, հոս բնականանապէս աչքերնուս առջեւը կը բացուի: Հանճարաբանութեան վրայով ընդհանուր խօսքով կրնանք հաստատել՝ թէ անոր ամէն օրինակներուն մէջ միշտ քիչ կամ շատ ծաղրական շարժութիւն կը գտնուի:

Աս ասանկ ըլլալով՝ պէտք է որ մենք ալ աս սահմանը տանք. Հանճարաբանութիւնը յանկարծ մտդուս մտքին առջեւը իրարու հետ անանկ մէկ կապակցութիւն մը ունեցող գաղափարներու հաւաքում մը ներկայացընել է, որ ծաղրական զգացումներ կը պատճառէ: Այսիկայ զանազան կերպերով կ'ըլլայ, որոնց երկուքը աս հետեւեալներն են:

## § 291 . Կատակարանութիւնով եղած Հանճարաբանութիւն :

Ծաղը շարժելու համար Հանճարաբանութեան բանեցուցած առաջին կերպը ծանր եւ երեւելի եղող բաները եւ մանաւանդ իրենց արժան եղածէն աւելի շքեղութեան՝ մեծութեան եւ վեհութեան երեւոյթ ունեցողները ցածցընելն է: Աս կերպ նկարագրութեանց կատակաբանութիւն ըսենքնէ, վայելուչ անուն մը կ'ըլլայ:

Իրօք եւ ճշմարտապէս ծանր ու երեւելի բաները պզտիկ երեցընելու աշխատիլը արդարեւ ընդհանրապէս բուն իսկ հանճարաբանութեան յառաջ բերելիքէն շատ տարբեր՝ անախորժ աղղեցութիւն մը կ'ընէ, եւ սակայն կ'ըլլայ որ երբեմն իրաւընէ մեծ ու վսեմ ճանչցուած առարկաներ եւ գործքեր ուրիշ

## Հարժուժիւնք Ծագու ։

բաներու հետ անանկ ձեռով մը կը կապակցուին, կամ անանկ նոր պարագայով մը աչքի առջեւ կը բերուին, որ առանց ան բաներուն յառաջ բերելիքներնէն շատ տարրեր զգացումներ կը պատճառեն ։

Կատակարանութեան մէջ, ինչպէս նաեւ ամէն կերպ հանձարաբանութեանց մէջ, իրարու հետ կապակցած գաղափարներու մէկ յանկարծական եւ անսովոր հաւարում մը կայ ։ Աս հաւարումը երբեմն բաղդատութիւնով մը կամ նմանցրնելով մը կ'ըլլայ, սակայն անանկ բաղդատութիւնով մը, որ իր անպատշաճութիւնովը (Թէպէտ եւ մէկ նմանութիւն մը կամ վերաբանութիւն մը հարկ է որ ըլլայ բանին մէջ) անակնկալ եւ յանկարծական բան մը երեւնայ ։ Այրբեմն ալ իրօք մեծ ու երեւելի բաներու հետ ցած ու անարգ բաներ բերել կապակցելով, Թէպէտ եւ ուղղակի եւ երեւութական բաղդատութիւն մը չըլլայ անոնց մէջ ։

## § 292 . Ծաղրաբանութիւնով եղած Հանձարաբանութիւն ։

Հանձարաբանութեան ծաղր շարժելու համար բանեցուցած երկրորդ կերպը ինքնին չնչին եւ նուաստ եզոզ բաները մեծցրնելով է ։ Աս տեսակ հանձարաբանութեան ալ ծաղրաբանութիւն ըսել յարմար կու գայ ։ Առջի տեսակն որ նուաստ ցուցմունքներով կը ջանայ ծաղր շարժելու, ասիկայ՝ անոր հակադարձ՝ պզտիկ բաներու վրայ մեծ ցուցմունքներ ընելով նոյն արդիւնքը յառաջ կը բերէ . վասնորոյ աս կերպ Հանձարաբանութեան ուսումնական բարձր խօսքեր եւ փառաւոր իմաստներ բանեցընել պէտք է ։

Հանձարաբանութեան աս բաժանման տակ դասելու է ան օրինակներն ալ, որոնք չնչին բաներու վրայ եղած ծանր եւ լուրջ խորհրդածութիւններ են ։ Ասոնց մէջ ալ՝ միւսներուն նըման՝ մէկմէկու հետ վերաբերութիւն ունեցող գաղափարներ կ'ըլլան . սակայն ան գաղափարներուն ամբողջ հաւարումը անանկ անսովոր՝ տարօրինակ կերպով մ'եղած կ'ըլլայ, որ մարդ չ'կրնար առանց ծաղրը շարժելու անոնց վրայ նայիլ ։

Ասիկայն պէտք չէ կարծել Թէ հանձարաբանութիւնը աս ըսած կերպերովս իրարու հետ անպատշաճ գաղափարաց կապակցութիւններ մէկտեղ բերելով միայն կ'ըլլայ ։ Օրօրաւոր հանձար ունեցող մարդը հաղարաւոր կերպերով ծաղր շարժելու բաներ կրնայ յառաջ բերել, եւ մէկմէկէ այնչափ տարրեր, որ դժուար է զանոնք ամէնը կանոններու տակ ամփոփել ։

§ 293 . Ծաղրական նկարագիրք եւ անոնց առիթները :

Ծաղու շարժութեանց ընդհանուր նիւթին եւ հանձարարանութեան հետ մտ կապակցութիւն ունին տեսակ մը նկարագրութիւններ ալ, թէ գրաւոր եւ թէ բանաւոր, որոնք մարդու բարուցը եւ բնաւորութիւններուն ու վարուցը մէջ եղած մասնաւոր պակասութիւնները ծաղը շարժելու կերպարանքով մը մարդուս առջեւ կը բերեն, եւ վասն որոյ վայելուչ է որ Ծաղրական Նկարագիրք անուանին: Այս կերպ նկարագրութեանց ինչէն առիթ առնելը եւ ինչու ծաղը շարժելը հետեւեալ դիտողութիւնով կ'իմացուի:

Հատ անգամ կ'ըլլայ որ մարդոց վրայ անանկ բաներ կը տեսնենք, որ իրենց կրիցը մէջ անոնք մէկ անպատշաճութիւն մը կամ անհամեմատութիւն մը կ'երեւնան. օրինակի համար կը տեսնենք ոմանք որ բազմաազաղակ եւ դիւրարորորք մարդիկ են, եւ սակայն կիրքերին տեւողութիւն չունի: Ղարձեալ գործքերնուն մէջ ալ անդէպ՝ անպատշաճ՝ իրարու հակառակ եւ անհամեմատ շատ բաներ կը գտնենք: Մարդիկ կերպ կերպ թերութիւններ կ'ունենան, (գժուար է մէկը գտնել որ անոնցմէ բոլորովին ազատ ըլլայ, ) ինչպէս՝ ինքնահաւանութիւն, յեղամտութիւն, յիմարական կողմնականութիւններ եւ նախանձաւորութիւններ, որկրամոլութիւն, ցուցամոլութիւն, իմաստակութիւն, բարկասրտութիւն, եւ այլն: — Օգագմանց եւ գործոց մէջ եղած ասանկ անպատշաճութիւնները՝ հանձարարանութեան գաղափարաց անակնկալ կապակցութիւններուն նըման՝ զարմանքի շարժութիւն մը կը պատճառեն: Այս ինչպէս որ մաքուր հագուած աստիճանաւոր մարդու մը առջեւ չնայելով գլտորիլ ջուրի մը մէջ իյնալ խիտմ' ըլլալը տեսած ատեննիս ներսիդիսիս թունդ ելած ծաղու շարժութիւնը գժուար է բռնել նէ, անանկ ալ ասանկ անկատարութիւններու վրայ զանոնք մարդկային կատարելութեանց եւ բարձր պատասխանատուութեանց հետ կապակցելով նայած ատեննիս գժուար է ներսիդիսիս ծաղը շարժելը արգիլելը: Այս կերպ նկարագրաց գեղեցիկ օրենակները կը գտնես թէոփրաստոսի եւ Ըաղմովէպներուն մէջ:

§ 294 . Ծաղու զգացմանց գործնական օգտակարութեանը վերայ :

Անհար բան է որ աս զլիւուն մէջ քննած զգացումներնիս ոմանց գործնականապէս անօգուտ բան մը չերեւնայ : Թէ որ Իրացրնէ աս բանը անօգուտ ըլլար նէ, ուրիշ բաներու կողմանէ մտքին վրայ եղած անօրինութեան դէմ կու գար . վասն զի ատ անօրինութեան ամէն մէկ մասը կը ցուցընէ յայտնապէս՝ թէ մտքին մէջ տնկուած ամէն ընդաբոյս հակամիտութիւն կամ բերմունք մէկ գործնական վախճան մը ունի : Սակայն ասանկ չէ : Ծաղու զգացմունք անանկ հետեւութիւններ ունին, որոնք՝ թէպէտ եւ առջի բերանը կատարելապէս յայտնի չըլլան, սակայն սակաւ ինչ քննութեամբ կը տեսնուի որ պզտիկ բաներ չեն : Հայտնի է թէ մարդու վարմունքին առաջնորդ եւ օգնութիւն ըլլալու համար բնութեան սահմանած երեւելի բաներուն մէկն է ասիկայ : Ամէն մարդ կը վախնայ ծաղու առարկայ ըլլալէն, մինչեւ անգամ թեթեւագոյն եւ քիչ մը ընդունելի տեսակն ալ ըլլայ . եւ սաստիկ կը զգուշանայ որ աշխարհիս ծաղը ու ծանակ չըլլայ : Այլ թէ որ աս փոխարինութեան վախը չըլլայնէ, շատերը հիմակուրնէ շատ քիչ նրկատողութիւն կ'ընէին անձնական վարմունքի եւ կենցաղավարութեան ազնուութիւններուն ու վայելչութիւններուն : Այնպէս թիտ է թէ ասիկայ պնշափ զօրաւոր կամ պնշափ յարմար գործիք մը չէ որ կարենայ մեր մէջ անկական եղած աւելի մեծ անկարգութիւնները յաղթել, մեղքին զօրաւոր արմատները խլիլ, սակայն աս անտարակուսելի է՝ որ շատ ազգու եւ օգտակար ներգործութիւն մը ունի ամէն կերպ անարգական անպատշաճ եւ անվայել բաներու վրայ է :

<sup>3</sup> Աս նիւթիս վրայ տես Campbell's Philosophy of Rhetoric, Bk. I, Ch. III.  
<sup>4</sup> Reattie on Laughter and Ludicrous Compositions.



ԳՒ ՈՒՒՐ • Զ

ՈՒՐԻՇ, ՊԱՐԶ, ՀԱՐԺՈՒԹՒԵԱՆՅ ՕՐԻՆԱԿՆԵՐ

§ 295 . Հարժութիւնք զուարթութեան ուրախութեան եւ բերկրութեան :

Հ ԱՐԺՈՒԹՒԵԱՆՅ ընդհանուր բաժանմունքին մէջ շատ ուրիշ պարզ զգացումներ ալ կան, որոնք արժան են քիչ մը մը տարբութեան : Թեպէտ եւ կարելի է ասոնք մեր բնութեանը էական ըլլալուն կողմանէ արդէն քննածներնէս վար չմնան եւ անոնցմէ պզտի բաներ չըլլան, սակայն վրանին ըրած քրննութիւններնուս մէջ այնչափ շատ դժուար բաներ չեն ելլեր դէմերնիս, եւ միայն մէկ քանի ծանօթութիւն հերիք է զասոնք ըստ բաւականին բացատրելու համար :

Ախրիք հետազոտութեան Օրարկուլէն շարժութենէն : Ես զգացման ինչ բան ըլլալուն վրայ՝ չենք կրնար կարծիք ընել՝ թէ մէկը տոգէտ ըլլայ : Եսիկայ բոլոր կեանքերնուս մէջ վրանիս կ'ըլլայ շատ կամ քիչ . քաղցր նայուածքներու վրայ յարժամ կը տեսնուի . ծերերուն շատախօսութեանցը մէջ կը լսուի . տառապանաց եւ աշխատութեանց մէջ մարդոց սփոխանքն է . եւ տղայոց ու պատանեաց վրայ՝ իբրեւ մշտնջենաւոր գարուն կը թագաւորէ :

Ուրարկուլէն ու Բեբլիուլէն բառերը զուարթութեան բարձր աստիճանը կը ցուցնեն . զգացումները մի եւ նոյն են . տարբերութիւննին միայն սաստկութեան աստիճաննուն կողմանէ է : Յնժութիւն բառն ալ գրեթէ համանշան է աս ետքիննիրուն հետ, սակայն կ'երեւնայ թէ մասնաւորաբար յանկարծական եւ աւելի քիչ տեւողութիւն ունեցող ուրախութեանց համար կ'ըսուի :

§ 296 . Հարժութիւնք տխրութեան, տրամութեան եւ վշտի :

Թեպէտ եւ կեանքիս մէջ շատ բաներ կան մեզ զուարթացընելու եւ երջանկացընելու յարմարութիւն ունեցող, սակայն աս

Ուրիշ պարզ շարժութեանց օրինակներ :

ալ ամէն մարդ հասկըցած ըլլալու է՝ որ մեր երջանկութեան գաւաթին մէջ լեղի ալ կայ խառնուած, եւ թէ ատեն ատեն ասոնց հակառակ ազդեցութիւն ընող պարագաներ ալ կը պատահին: Եւ ահա աս պարագաները մեզի պիտոյն լինին առիթներ կ'ըլլան, որ աս ալ ուրիշ մէկ պարզ շարժութեան մը անուն է:

Օւռարթութեան նման տխրութեան ալ այլ եւ այլ աստիճանները կան: Ետ թեթեւ աստիճանը սրտնեղութիւն բառով կը հասկըցընենք սովորաբար: Արբոր տխրութիւնը սաստկագոյն պատճառէ մը յառաջ եկած ըլլայնէ, անատեն Տրտնութիւն անունը կ'ուտանք. այնպէս որ ուրախութիւնը զուարթութեան հետ ինչ վերաբերութիւն ունինէ, տրտմութիւնն ալ տխրութեան հետ կ'երեւնայ թէ նոյնը ունի:

Սիւս եւ Լուսնութիւն բառերն ալ գրեթէ ճիշդ բերկրութեան եւ ուրախութեան մէկմէկու հետ ունեցած առնչութիւնը ունին տրտմութեան հետ: Արկ իրենց ցուցուցած զգացումներուն նայելով՝ տրտմութիւն եւ վիշտ՝ երկուքն ալ կրնանք համարել թէ նոյն նշանակութիւնը ունին. միայն թէ աս բացառութիւնը կայ՝ որ վիշտ անունը սովորաբար յանկարծական եւ աւելի ուժգին տրտմութեանց կը տրուի: Ասոր համար վիշտը երբեմն արտաքին ձեւերով եւ նշաններով ինքզինքը կը յայտնէ, եւ մինչեւ անգամ սաստիկ բորբոքած կերպարանքով մը ինքզինքը զուրս կը թափէ եւ ուրիշներուն կը հաղորդէ. իսկ տրտմութիւնը, մինչեւ անգամ խորին սգոյ աստիճանը, եւելօք լուռ՝ աեւողական եւ անհաղորդելի կ'ըլլայ:

§ 297 • Շարժութիւնք զարմացման, հիացման եւ սքանչացման :

Արբոր մէկ նորաձեւ եւ անակնկալ բան մը կը տեսնենք, թէ բնութեան մէջ ըլլայ՝ եւ թէ հասարակ դէպքերու մէջ, մէկ նոր կերպ պարզ շարժութիւն մը կ'իմանանք, ինչուան հոս յիշուածներէն որոշ, որուն կ'ըսենք զգացումն Օւրմացման: — Լուսնութիւն կամ ապշուածութիւն անունները ասկէ տարբեր շարժութիւն մը չեն ցուցըներ, այլ նոյն շարժութիւնը՝ տարբեր աստիճանաւ: Արբոր զարմացման աստիճանը խիստ սաստիկ կ'ըլլայ, այնպէս կ'երեւնայ թէ քիչ մը ատեն մարդուս բոլոր մտաւոր ներգործութիւնները կախ կը թողու. եւ ասանկ վիճակի մը մէջ եղող մէկու մը համար լոկ զարմացած է չենք ըսեր, այլ հիացած կամ ապշած է, այսինքն ապ-ուշ եղած:

Արբոր զարմանքի առիթ եղող եղելութիւնները կամ դէպքերը անանկ եղական եւ մանուածոյ որպիսութիւն մը ունենան:

Ուրիշ պարզ շարժութեանց օրինակներ :

որ ստիպուինք երկար ժամանակ անոնց վրայ յառած մնալու նէ, անատենի ունեցած զգացումնիս պիտի կոչենք Սթանդարտն : Սակայն աս ալ զարմանք բսած սովորական զգացումներնէս տարբեր բան մը չէ, այլ նոյն շարժութիւնն է՝ եղանակաւորած կամ ուրիշ պարագայի տակ մտած :

Աս ծանօթութիւնն ալ կրնանք եւելցնել հոս, թէ աս շարժութիւնը մեր պահպանութեանը եւ յառաջադիմութեանը շատ հարկաւոր բան մըն է : Այս պարագաներու եւ անփորձութեան անծանօթ վիճակներու մեջ մտած ատեննիս մասնաւորաբար հարկ է մեզի ինքզինքնուս զգուշութիւն ընել, վասն զի չենք գիտեր թէ ինչ արդիւնքներ յառաջ կրնան գալ անոնցմէ, կամ յառաջ եկած արդիւնքները մեզի աղէկ պիտի ըլլան՝ թէ գէշ : Բարեբաղդութեամբ ասանկ ատեններ իմացած զարմանքի կամ հիացման շարժութիւննիս շատ կենդանի կ'ըլլայ. այնչափ որ քիչ մը ատեն բոլոր մեր իմացողութիւնները եւ ներգործութիւնները կը խափանէ, եւ կը ստիպէ մեզ կանկ առնելու եւ մտածելու թէ ուր ենք եւ ինչ պիտ'որ ընենք :

§ 298 . Շարժութիւնը դժկամակութեան, տհաճութեան եւ զգուհանց :

Ուրիշ մէկ շարժութիւն մըն ալ կայ, որ տխրութեան ըզգացմանը շատ մօտ է, եւ սակայն թեթեւ կերպով մը կը տարբերի անկէ, որն որ կ'արտայայտենք Վիճակաւորութեան անունով : Ասիկայ ցաւալի զգացում մըն է, թէպէտ եւ շատ քիչ. սակայն իր բնութիւնը, որ եւ իցէ պարզ շարժութեան նման, ուրիշ կերպով աղէկ չ'հասկըցուիր, բայց միայն բուն իսկ մեր ներքին փորձառութեանը վկայութեանը հարցնելով :

Արբոր ինչ եւ իցէ պարագայէ մը դժկամակութեան շարժութիւննիս սաստկագոյն ըլլայ նէ, տարբերութիւնը ուրիշ բառով մը կը յայտնենք, թէպէտ եւ զգացման բնութիւնը նոյնը կը մնայ, այսինքն է՝ Տհաճութեան :

Պարզ դժկամակութեան զգացման ուրիշ ձեւերն ալ կ'երեւնայ թէ կան : Օգուհանց զգացումը դժկամակութեան շարժութիւն է եւս առաւել բարձր աստիճանի ելած, սակայն նաեւ այնպիսի պարագաներու տակ մտած, որ անոնցմով ալ՝ մեր գիտակցութեան տեսութեանը համեմատ՝ կը տարբերի տհաճութեան զգացումէն : Օգուհանքը աւելի մօտութիւն ունի թշնամական շարժութեան իրեն պատճառ եղող բանին, քան թէ տհաճութիւնը : Բսել է թէ աս երկու բառին տուած իմաստներուն մեջ անանկ տարբերութիւն մը կայ, որ նոյնանշան չենք կրնար սեպել եւ այնպէս գործածել :

Ուրիշ պարզ շարժութեանց օրինակներ :

§ 299 • Շարժութիւնք պատկառանաց, համեստութեան եւ ամօթոյ :

Մէկ շարժութիւն մը կայ, որ շատ անգամ դրսուանց փախչող նայուածքներով՝ խրտչելու ձեւերով եւ շարժումքի վեհերատութիւնով մը կը յայտնուի, Պապիտանի անունով ցուցուած, որ է գովելի ամօթ մը, որ նաեւ այսպիսի անուններով կը զբոսի, պատկառոտութիւն՝ ամօթխածութիւն՝ ամէկուտութիւն: Ըս զգացման մէկ գեղեցիկ եղանակաւ որութիւնն է՝ ինչպէս որ կը կարծենք՝ շառնապոլիս կամ Պարիշապոլիս, որն որ թերեւս սակաւ ինչ տարբերութիւն ունենայ պատկառոտութենէ բնութեան կողմանէ, սակայն հաւանականաբար բոլոր տարբերութիւնը աստիճանի կողմանէ է: Թէպէտ եւ աս զգացումը քիչ նկատողութեան առարկայ եղած է մեր մտաւոր գործողութիւններուն ազգաբանութեանը մէջ, եւ իր վրայով եղած ստորագրութիւնները շատ քիչ տեղ բռնած են, սակայն՝ իր արդիւնքներուն նայելով՝ պզտիկ բան չէ: Ըսիկայ իր ազդեցութիւնները պատուոյ կամ յարգութեան բնական բաղձանքին հետ կապակցելով՝ ամէն մարդ իրեն արժան եղած տեղը կը պահէ, որկէ յառաջ կու գան այն վարմունքի եւ կենցաղավարութեան վայելչութիւնները, եւ պատուոյ ու պարտականութեան աստիճանաց որոշումները, որոնք էպէս հարկաւոր են ընկերութեան հաստատութեանը եւ երջանկութեանը:

Ըս մտաւոր հանգամանքին աւելի բարձրագոյն աստիճանը Ընօն է: Երբոր մենք զմեզ մէկ անվայել բան մը բրած կը գրտնենք, անատեն աս զգացումը կ'ունենանք. որուն դրսուանց երեցող հանգամանքներն են ակնկորութիւնն ու դէմքի շոռագնութիւնը: Սակայն յանձանքի ատեն մինակ ամօթոյ զգացումը չ'շարժիր մարդուս ներսիդին՝ իրրեւ ինքնին բաւական պատիժ մը, թէպէտ եւ ամէն յանձանք՝ իրմէ յառաջ եկած ուրիշ հետեւութիւններէ իզատ՝ աս կերպով ալ կը պատժուի: շապա ասիկայ յաւէտ կ'երեւնայ թէ պարկեշտութեան եւ բարեկարգութեան դէմ եղած այնպիսի մանր պակասութիւններու վայելուչ եւ յարմար պատիժն է, որոնք որ առանց բարոյական օրինազանցութեան կրնան հանդիպիլ:

§ 300 • Շարժութիւնք պատուոյ, մեծարանաց եւ պաշտաման:

Սկըր յիշած բոլոր զգացումներնէս տարբեր է պատուոյ

Ուրիշ պարզ շարժութեանց օրինակներ :

կամ յարգութեան շարժութիւնը, որն որ՝ գէթ իր ամենապարզ ձեւով՝ մարդոց մեծ մասին վրայ կ'ունենանք, անոնց Մատուցոյ արարածները ըլլալուն եւ մեզի նման իմացական եւ բարոյական կարողութիւններ ունենալուն իրական ճշմարտութիւնը միայն բաւական պատճառ սեպելով անոնց վրայ ներօրգինիս աս զգացումը ունենալուս :

Երբոր մէկու մը վրայ գերազանց մտաւոր ձիւքեր կը տեսնենք, ինչպէս իմաստութիւն՝ ճշմարտութիւն՝ ու արդարութիւն՝ եւայլն, եւ մանաւանդ երբոր աս ազնիւ ձիւքերը ձեռութիւնով եւս առաւել ծանրացած ու վսեմացած ըլլան, աւստին սովորական պարագաներու մէջ ունեցած յարգութեան զգացումնիս Ս'եծարանաց կը փոխուի : Եւ մէն երկիր ունի ասանկ մէկ քանի անձինք, մեծ պատուոյ եւ ակնածութեան արդարապէս արժանիք, որոնցմով կրնայ պարծիլ, եւ ազգ ազգի վրայ որ յաջորդաբար կու գան, նոյն խորին մեծարանաց զգացումներով կը կարծւենն աչքերնին ու կը նային անոնց վրայ, որոնք պատմութեան երկայնաձիք շաւիղին վրայ հոն ու հոս ցրուած կը տեսնուին :

Երբոր մեծարանաց շարժութիւնը ամէն ստորին խորհուրդներէ ազատ ըլլայ, ուրիշ խօսքով՝ երբոր մեծարանաց ենթակայ եղողը իրրեւ ամէն անկատարութենէ զերծ եւ ամէն հնարաւոր եղող կատարելութեանց տէր նկատուի նէ, յայնժամ անիկայ կ'ըլլայ Պաշտօն, որ ասիկայ մարդուս հոգւոյն մատուցած այնպիսի մարուր ու վսեմ՝ մեծարանքն է, որ տիրապէս միայն Մատուցոյ է արժանաւայել : Եւ մէնէն իմաստուն մարդոց իմաստութիւնը սխալմունքներով կը շփոթի. ամենաբարի մարդոց բարութիւնը շատ անկատարութիւն ունի իրեն հետ խառնուած. իսկ արդ՝ թէ որ մենք ասոնց մեծ յարգութիւն կու տանք նէ, ուրեմն որչափ եւս առաւել մարուր՝ խորին ու վսեմ ըլլալուն Մտոր վրայ ունեցած մեծարանաց զգացումներնիս, որուն իմաստութիւնը երբէք չ'սկարանար, եւ որ ինքն իսկ բարութեան եւ արդարութեան սկզբնական եւ անսպառ աղբիւրն է :

Ուս Շարժութեանց հետաշատութիւնը կը վերջացընենք : Չենք կարծեր թէ յառաջ բերած դիտողութիւններովնիս անթանկի քննութիւն մը ըրինք մեր զգայական բնութեան աս մասին վրայ. սակայն կը յուսանք թէ ըստ բաւականին լոյս մը տալու չափ բան խօսեցանք, եւ թէ հիմայ ազատ ենք աս կարգը թողելու եւ ուրիշ կարգ մը զգացմանց քննութեանը պարապելու :

Handwritten text line, likely a date or a specific reference.

Main body of handwritten text, consisting of several paragraphs of cursive script. The text is dense and fills most of the page.

Ջ. Գ. Ե. Յ. Ո. Գ. Ո. Ի. Թ. Ի. Ի. Ն. Ք.

---

ՄԵՍՆ ԸՌԸ.Ջ.ԻՆ

ԲՆԵԿԸՆ Ջ.Գ.Ե.Յ.Ո.Գ.Ո.Ի.Թ.Ի.Ի.Ն.Ք.

---

ԿԵՐԳ ԵՐԿԵՐՈՐԴ

ԲԵՂՁԸՆՔ

---





## ԲԱՂՉԱՆԱՑ ԲԵՈՒԹԻՒՆԸ

§ 301 . Բաղձանքին՝ մտքին աս բաժանման երեւելի եւ ընդհանուր մասը ըլլալը :

ՍԿՍԻՆԻՔ այժմ Բնական Օգտագորութեանց մէկ ուրիշ մասը քննելու, որն որ ինչուան հոս հետազոտածնէս կը տարբերի իրեն յատուկ բնութիւն մը եւ իրեն սեպհական՝ որոշ վերաբերութիւններ ունենալովը : Բնական զգացողութեանց աս բաժանմունքին յատկական տարրը, իր էութեանը իրօք հիմն եղող բանը այն մտաւոր հանգամանքն է, որ կ'ըսուի Բաղձանք, որ բոլոր ուրիշ մտաւոր հանգամանքներէ կը տարբերի : Ստորին աս հանգամանքը քննութիւններնուս նիւթ ըլլալու յառաջիկայ բաժանման չէ թէ միայն դրանը շէմին վրայ կը կենայ, այլ եւ անորամէն ստորակարգեալ բաժանմանը մէջ կը տարածի եւ ամենուն յատուկ բնութիւն մը կու տայ առ հասարակ : Չ'կայ մէկ ակորճակ մը՝ հակամիտութիւն մը՝ կամ կիբք մը իրօք, եւ ոչ ալ կրնանք ենթադրել թէ հնարաւոր է որ ըլլայ, առանց անոր հետ մէկտեղ Բաղձանքի տարրը խառնուած ըլլալու : — Երբ պատճառաւ է որ զգայական բնութիւններնուս աս մասը Բաղձանք կը կոչենք, ինչպէս որ միւս մասը Շարժութիւնք անուանեցինք, եւ ինտոր որ Շարժութեանց տակն եղող մասնաւոր զգացումներուն վայելչապէս կրնայինք Շարժական զգացողութիւնք ըսել, նոյպէս եւ Բաղձանաց տակն ինկող մասնաւոր զգացումներուն Բաղձանական զգացողութիւնք անունը կրնանք տալ :

§ 302 . Բաղձանաց ինչ բան ըլլալուն կամ բնութեանը վրայ գիտակցութիւնով հմտութիւն կ'ունենանք :

Համառօտապէս նշանակելու յառաջիկայ մտաւոր սկզբունքներնուս մէջ բաղձանքը ասանկ նշանաւոր բան մը ըլլալուն հա-

Բաղձանաց բնութիւնը :

մար՝ արժան է որ քիչ մը կանկ առնենք՝ անոր բնութեանը վերայ կարճապէս բացատրութիւն մը տալու համար: Այլ ասիկայ ընելու աշխատած ատեննիս, նախ եւ առաջ աս պէտք է որ ծանուցանենք թէ պարտաւոր ենք հոս ալ արդէն ան շատ անգամ ըրած ծանօթութիւններնիս նորէն կրկնել, թէ աս բանիս մէջ մտքին ներգործութիւնները ինք իր վրայ դարձնելու ենք, եւ բանին ինչ ըլլալը մեր գիտակցութեան ցուցմունքներէն փնտռելու ենք: Բաղձանքը յայտնապէս պարզ մտաւոր հանգամանք մը ըլլալուն համար, չենք կարծեր թէ որ եւ իցէ սահման մը տալով հնար ըլլայ անոր վրայ այնպիսի լոյս մը ձգել, որ ալ ներքին հարցաբնութեան կարօտութիւն չ'մնայ: Չ'կայ ուրիշ բան մը բաց ինոյն իսկ մտքին տուած լոյսէն, եթէ միայն աչքերնիս դարձնենք ան լոյսը տեսնելու, որ կարենայ ճշմարտապէս ցուցնել անոր էական կամ գոյացական բնութիւնը: — Թէպէտ եւ յայտնի է թէ բաղձանաց յատուկ բնութեանը վրայ հմտութիւն ստանալու համար գիտակցութիւնը ձեռք առնելու ենք, սակայն միանգամայն հաւանականաբար անոր վրայով ունեցած ըմբռնումներնիս աւելի որոշ եւ կատարեալ վիճակի մը կրնանք հասցնել՝ անոր ծագմանը մէկ բանի վերաբերութիւնները գիտելով:

§ 303 . Բաղձանաց տեղւոյն վրայ՝ ուրիշ մտաւոր հանգամանքնուրու հետ վերաբերելով:

Հարկաւոր բան է հաստատուն եւ որոշ գաղափար ունենալ Բաղձանաց տեղւոյն վրայով՝ ուրիշ մտաւոր հանգամանաց հետ ունեցած վերաբերութեանը կողմանէ. մանաւանդ որ աս կէտիս աղէկ հասկըցուիլը օգնութիւն մըն է Ալամքին փիլիսոփայութեանը կարեւոր նիւթին բացատրութիւններուն: — աս. Այլ աս տեղ ընելու առաջին ծանօթութիւննիս աս է, թէ բաղձանք երբէք ուղղակի եւ անմիջական յաջորդութիւնով չեն հետեւիր իմացողութեանց կամ մտքին ճանաչողական ներգործութիւններուն: Իմացականութեան եւ աս քննութիւններնուս նիւթ եղող մտաւոր հանգամանքներուն մէջտեղը՝ եթէ ներքի է ըսել՝ զետեղեալ ուրիշ մէկ բաժանում՝ մը կամ մասն մը կայ մտաց: Այլ ասոր ասանկ ըլլալուն ուրիշ ապացոյց չուզեր բացի աս պարզ ճշմարտութենէն, թէ մենք երբէք մէկ բանի մը չենք բաղձար, լոկ ան բանը իմանալնուս կամ անոր վրայ հմտութիւն ունենալնուս համար: Մէկ իրի մը իմացումը միայն ինքնին բաւական պաշտօն չէ ասիկայ հմտութեան առարկայ ընելու: Հայտնա-

Բաղձանաց բնութիւնը :

պէս պէտք է մէկ միջանկեալ՝ մտաւոր հանգամանք մը բաղձանաց մերձաւոր կամ պատճառական առիթը եղող, այն է՝ շարժոթիւն մը : Ըստ այսմ՝ բաղձանաց հարկաւոր պայմանը մէկ նախընթաց զգացում մըն է, սովորաբար հաճոյական բնութիւն մը ունեցող, որն որ բաղձանքին եւ բաղձացեալ բանին իմացմանը կամ ծանօթութեանը մէջտեղը կը մտնէ :

բ. Ի բացատրութիւն վերը ըսածնուս՝ սա իրական ճշմարտութիւնը կը գտնենք, թէ երբոր մէկ բանի մը ներկայութեանը կամ ձեռքերնիս անցնելուն կը բաղձանք նէ, ան բանը մեզի կերպով մը հաճելի գալուն համար է : Այլ հակադարձը երբոր անոր աչքերնուս առջեւէն հեռանալը կը բաղձանք նէ, անկէ կերպով մը ահաճութիւն իմանալնէս է : Այլ սա հաճելի կամ անհաճոյ գալ խօսքերը յայտնապէս ան որոշ մտաւոր հանգամանքին յառաջ գալը կը ցուցնեն, որուն կ'ըսենք Շարժոթիւն . մէկ զգացում մը, որ բոլորովին տարբեր է թէ առարկային իմացումէն՝ որ իրմէն առաջ կ'ըլլայ, եւ թէ առարկային վրայ եղած բաղձանքէն՝ որ իրմէն ետքը կու գայ : Ըստ այսմ՝ կը համարձակինք հաստատել ընդհանուր խօսքով՝ թէ մէկը երբէք բաղձացած չէ եւ անհնարին է որ բաղձայ մէկ բանի մը, որուն վրայ որ շարժութիւն մը չէ ունեցած, այլ միշտ անտարբեր վիճակի մը մէջ եղած է ան բանին նկատմամբ : Այս է ահա յայտնապէս մտքին անխախտելի օրէնքը սա բանիս մէջ :

§ 304 . Բաղձանք եւ երբ հաստատութեան եւ մնայունութեան հանգամանք մը ունին :

Բաղձանք զիտողութեան արժան նշան մը կամ հանգամանք մը ունին, որ է սա իրական ճշմարտութիւնը՝ թե սա զգացումները՝ շարժութեանց հետ բաղդատելով՝ աւելի հաստատուն եւ մնայուն են : Բաղձանօթ բան մըն է սա որ շարժութեան զգացումներնիս արագութեամբ կու գան ու կ'երթան . մտքին երեսը կ'ըլլեն ու կ'իջնան յուզեալ ծովու մը անհաստատ ալիքներուն նման : Սակայն բաղձանք, որոնք իրենց ծագման ժամանակովը ետք են, եւ անոնց յուզեալ ալիքներուն մէջէն ելած կամ անոնցմէ ծագած կրնան սեպուիլ, այնչափ զիւրաշարժ եւ վաղանցիկ չեն : Անգամ մը որ իրենց յատկացեալ տեղը գտնեն նէ, թէպէտ եւ ալ անկէ ետեւ բոլորովին անշարժ չեն ըլլար, սակայն այնչափ հաստատութեամբ հոն կը մնան, որ իրաւամբ մենք ալ կրնանք սա բանը անոնց մէկ հանգամանքը համարել :

Ստուգիւ սա հաստատած ծանօթութիւննիս հակընալու

Բաղձանաց բնութիւնը :

Համար մէկ մեծ աշխատութիւն մը պէտք չէ, եւ անոր ճշմարիտ ըլլալը ճանչնալն ու ստուգելն ալ գժուար բան մը չէ : ( ) րինակ առ օտար երկիր ագտորուած մարդ մը, կամ անիրաւ տեղը բանտարգելութեան դատապարտուած դժբաղդ մէկը, եւ անոնք հաստատութեամբ պիտի ըսեն քեզի որ անգամ մըն ալ երկինքին ըյսը՝ իրենց բնիկ երկիրը եւ բարեկամներնուն երեսը տեսնելու փափաքը այնչափ ամուր հաստատուած է սրտերնուն մէջ որ՝ ինչ որ ըլլայ նէ ելելիք չունի, եւ թէ նոյն իսկ սրտերնին բրզկտելը որչափ դժուար բան է նէ իրենց, անանկ խորին արմատացած զգացում մը անկէ հանելն ալ այնպէս է : — Եսիկայ իբրեւ բացատրութիւն կը ցուցնենք, սակայն ամէն պարագայի մէջ որ մարդուս բաղձանքը որոշակի մէկ շահաւոր բանի վրայ կը հաստատուի նէ, աս ասանկ է շատ կամ քիչ :

§ 305 . Բաղձանք միշտ բաղձացեալ առարկայ մը կ'ունենան :

Բաղձանաց մէկ որոշիչ հանգամանքն ալ աս է, որ միշտ առարկայ մը կ'ունենան, ընդհանրապէս մէկ որոշ բան մը, եւ առանց ասոր անհնարին է որ բաղձանք ըլլայ : Խօսակցութեան զարտուղութիւն մը կ'ըլլայ թէ որ ըսենք բաղձանք՝ առանց բաղձացեալ առարկայի մը գաղափար իմացընելու : Ես կողմանէ աս զգացումները կը տարբերին շարժութիւններէն, որոնք՝ թէպէտ եւ իրենց նախընթաց պատճառներ կամ առիթներ կ'ունենան, սակայն իրենց բնութեանը մէջ նախահայեաց՝ դէպի առաջ նայելու հանգամանք մը չունին, հապա իրենք իրենց մէջը կը վերջանան : Իսկ բաղձանք՝ ընդհակառակն՝ դէպի առաջ բան մը կը ցուցնեն, ետքէն ըլլալու : Եւ հաւանականաբար աս է իրենց այն մեծ հաստատութեանը եւ տեւողութեանը մէկ պատճառը : Բաղձանք իրենց դիտողութեանը առջեւ ունեցած բաներնուն վրայ՝ իբրեւ մէկ կերպ սիւն մը՝ կը յենուն, եւ ճշմարտութեամբ կրնանք ըսել՝ թէ անոնց բոլորտիքը կը փաթթուին, ինչպէս որ որթը կնձնիին շուրջը կը պատէ ու անոր վրայ կախուած կը մնայ, եւ ի հարկէ ամէն փռոզ հովերէ չեն քակուիր ու տատանիր, իրենց անմիջական նախորդն եղող մտաւոր հանգամանքներուն նման, որ էական յատկութիւնը ան է :

Բաղձանաց բնութիւնը :

§ 300 . Բաղձանաց կատարումն վայելման հաճութիւնը յառաջ կու գայ :

Իջրեւ մէկ ընդհանուր հաստատութիւն մը՝ շարժութեանց համար կրնանք ըսել թէ կամ հաճելի կ'ըլլան կամ ցաւալի, թէպէտ եւ մէկ քանի պարագաներու մէջ մինչեւ անգամ աս զգացումներուն վրայով դժուար կ'ըլլայ որոշակի եւ վստահութեամբ հաստատել թէ որ տեսակէն են : Աս ետքի ըսածնիս մասնաւորաբար բաղձանաց վրայ կը գտնենք, որոնք՝ թէպէտ եւ մաքերնուս գիտակցութեանը առջեւ որոշ են եւ աղէկ սահմանուած, սակայն չենք կրնար ըսել թէ ծագած կամ եղած ժամանակնին իրենց բնութեանը մէջ կամ հաճութիւն եւ կամ տհաճութիւն կը բովանդակեն : Աս ինչպէս որ է նէ, սովորական հասարակ պարագաներու մէջ ճշմարտապէս դժուար կը գտնենք աս երկու տեսակներուն որը պարունակելնին որոշելը :

Սակայն աս ինտոր որ ըլլայ նէ, դեռ մէկ ուրիշ հանգամանք մը կը մնայ, որով որ աս զգացումները ուրիշ մտաւոր հանգամանքներէ կ'որոշուին : Այս է այս : Ամէն բաղձանքէ, երբոր անոր առարկայ եղող բանը ձեռք ձգուի նէ, հաճութիւն մը յառաջ կու գայ : Բաղձանաց բնութենէն ամենեւին անբաժանելի է աս բանը՝ որ իրենց հետամտութեան առարկայ եղող բանին ձեռք ձգուելէն, ան բանը թէ բարի ըլլայ թէ չար, անշուշտ վայելման երջանկութիւնը պիտի հետեւի : Աս վայելումը երբեմն սաստիկ կամ մեծ կ'ըլլայ, երբեմն տրկար, ընդհանրապէս բաղձանքին սաստկութեանը հետ փոփոխելով :

§ 307 . Բաղձանաց զօրութեան կամ սաստկութեան զանազանութիւնները կամ աստիճանները :

Բաղձանաց վրայ աս ծանօթութիւնն ալ կայ ըլլալու, որն որ թէպէտ եւ շատ ուրիշ մտաւոր հանգամանաց կը վեր սրբերի, թէ այլ է այլ աստիճաննէր ունին : Ինդհանուր մէկ բան մը կը գտնենք աս՝ որ բաղձանաց զօրութեան աստիճանը իրենց նախընթաց շարժութիւններուն կենդանութեանը եւ զօրութեանը սաստկութեանը կամ տկարութեանը՝ համեմատ կ'ըլլայ : Սակայն ասոնց զանազանութիւններուն սկզբնական պատճառը, երբեմն

երբեմն պատահող կազմուածքի տարբերութիւնները մէկդի հանելով, իմացականութեան հասողութեանը մէջ փնտրուելու ենք : Այն բան մը որչափ որոշ որ իմանանք կամ հասկընանք նէ, անկէ ներսիդինիս պատճառելու շարժութիւնն ալ իրաւամբ կրնանք ակնկալել թէ՛ այնչափ որոշ ու կենդանի պիտի ըլլայ : Այս որովհետեւ բաղձանք շարժութեանց վրայ հիմնեալ են, ասոնք անոնց առիթը կամ հիմնական պատճառը ըլլալով, վասն որոյ անոնց համար ալ նմանապէս կրնանք ակնկալել թէ՛ ինչպէս որ հիմնայ ծանուցինք՝ մեծ մասամբ իրենց նախորդ զգացումներուն համեմատ զօրութիւն ու կենդանութիւն ունենան : — Պէտք է դիտել որ հոս բաղձանաց անւողականութեանը վրայ չենք խօսիր որ շատ տարբեր բան մըն է, այլ պարզապէս անոնց ծագած աստիճանը ունեցած սաստկութիւններնուն կամ զօրութիւններնուն վրայ :

§ 308 . Շարժումն զրգուելու ձգումը բաղձանաց մէկ հանգամանքն է :

Բաղձանաց բնութեանը վրայ ըրած աս դիտողութիւննիս վերջացրենք անոնց մէկ որոշիչ յատկութիւնն ալ ծանուցանելով, որով ուրիշ մտաւոր հանգամանքներէ մասնաւորաբար կը տարբերին, եւ որն որ անշուշտ անոնց վրայով եղած ամէն կատարեալ նկարագրութեան մէջ իբրեւ հարկաւոր տարր մը գտնուելու է : Բաղձանք ըսածնիս անանկ բնութիւն մը ունի, որ ինքնին՝ բուն իր էութենէն՝ մշտնապէս զրգուող՝ կամ աղէկ է ըսել շարժող մտաւոր հանգամանք մըն է : Արիշ խօսքով՝ բուն իսկ իր գոյութենէն կամ գոյ ըլլալէն կը հասկըցուի թէ հաւանակաւ նաբար ներգործութիւն մ'ալ պիտի յառաջ գայ, անիկայ միտքը կ'արթնցընէ, անոր կարողութիւնները թէ մարմնաւորները եւ թէ մտաւորները, թունդ կը հանէ, եւ զանոնք շարժման վիճակի մէջ կը դնէ : Այնպիսի է թէ՛ իրօք եղածին նայելով՝ բաղձանքէն միշտ ներգործութիւն չ'հետեւիր : Անգործութիւն մը դեռ չեղած, մտքին ներքին կազմուածքին մէջ աւելի հեռաւոր մէկ ուրիշ կարողութեան մը հարկ է որ խորհուրդ հարցուի, այսինքն կամքին : Այն որ կամքը վճարար դէմ կենայ բաղձանքին նէ, անոր ձգումը ի հարկէ անարդիւնք կ'ըլլայ, սակայն ձգումն ինքը, իր վախճանին չ'հասնի ալ նէ, անկորուստ կը մնայ : Այնիկայ մարդուն սրտին մէջ հաստատ կը մնայ, եւ քանի որ բաղձանքը կայ նէ, ինք ալ տեղ մը չ'շարժիր բնաւ :

Աս երեւելի ձգումը ընդհանուր բան մը չէ, եւ մտքին ուրիշ բաժանմունքներուն մէջ չ'կայ : Օրինակի աղագաւ՝ մտքին ծանաչող կամ իմացող մասին մէջ չ'կայ, ինքնին մտածելով : Այն որ

Բաղձանաց բնութիւնը :

Իմացականութիւնը իրեն ետեւի դին եղող բնութենէն բաժնուած ըլլար նէ, մտրգս լոկ հայեցող էակ մը կ'ըլլար, եւ ոչ ներգործուն : Հարժութեանց մէջ չ'կայ աս բանը : Բէ որ մտրգս միայն շարժութեան զգացումներով ստեղծուած ըլլար, առանց անոնց հետ մէկտեղ ան յետագաս զգացողութիւններն ալ ունենալու՝ որոնք որ անոնց վրայ կը շինուին, այնպէս անշարժ եւ անգործ էակ մը կ'ըլլար, ինչպէս թէ որ լոկ իմացողութեան ստորագելիքովը կազմուած ըլլար : Ավիխանոսին մեջտեղը խորիսխի վրայ կեցած նաու մը նման կ'ըլլար, որ ելող իջող կոհակներուն վրայ կը տատանի ու վեր ու վայր կ'ելլէ կ'իջնայ, բայց չ'կրնար շարժիլ ոչ լայնքին եւ ոչ երկայնքին : Հարժումն գրգռելու ձգուամը՝ իրբեւ ընդաբոյս եւ էական յատկութիւն միայն բաղձանաց մէջ կայ, եւ ոչ ուրիշ տեղ, բացի բարոյական զգացողութեանց անոնց հետ համեմատ եկող մասէն, այսինքն՝ բարոյական պարտաւորութեան զգացումներէն : Մս երկու մտաւոր հանգամանքներն ալ հաւասարապէս ունին աս ձգուամը իրենց մէջ : — Այսինքն պաշտօնն է՝ իբր մեր բնութեանը մէկ զատ եւ վերաբերութեամբ աւելի բարձրագոյն մասը՝ գործել աս ձգմանց վրայ, զանոնք կամ սանձահարելով եւ կամ յառաջ մղելով, կամ խափանելով եւ կամ կատարելով :

§ 309 . Զրացողութեանց աս մասին կարգաւորութիւնը :

Թէ որ բաղձանաց վրայ իրենց ամենապարզ ձեւովը միայն բնութիւն ընել ըլլար նէ պարտերնիս, թերեւս կրնայինք հոս խօսքերնիս վերջացնել, արդէն ըսուածները հերիք սեպելով : Սակայն անոնց ան պարագան՝ թէ այլ եւ այլ եղանակաւորութիւններու եւ կապակցութիւններու ենթակայ են, մէկ նոր ասպարէզ մը կը բանայ առջեւնիս հետազօտութեան, ընդարձակ եւ շահաւոր : Բաղձանք երբեմն կ'երանակաւորին այսինչ այնինչ մասնաւոր նպատակներուն ուղղուելովն : Ուրիշ խօսքով՝ բաղձանաց ոմանք այսինչ եւ ոմանք այնինչ տեսակական ձգումներով կազմուած են, որ ան ձգումներէն հազիւ կը խոտորին : Մասնիկ են Բնական ազգումները, անոնք որ տիրապէս բնական ազգումն կրնան ըսուիլ նէ, եւ հաւանական նաբար գրեթէ նոյնպէս են Վարժակներն ալ, իրենց սկզբնական եւ անխոտոր ներգործութիւններովը : Իսկ Արից նկատմամբ, որ աս ընդհանուր բաժանման տակն ինկող ներգործուն կամ զգացող սկզբունքներուն մէկ որոշ կարգն են, որչափ որ կարող ենք դատել նէ՝ աս կ'երեւնայ ըլլալ բանը, որ բաղ-

Բաղձանաց բնութիւնը :

ձանք այսինչ այնինչ շարժութիւններուն հետ սերտ եւ անբաժանելի կերպով մը կը միանան կոր, եւ այսպէս անանկ կերպարանք մը կ'առնեն կոր, որ առանց աս միութեան պիտի չկրնային ունենալ : Բայց այսմ՝ կը տեսնենք որ աս ընդհանուր բաժանման մէջ երկրորդական կարգաւորութիւն մ'ալ ընելու բաւական եւ որոշ տեսնուող հիմն ունինք : Այս հիմնայ որ կրկին բաղձանաց վրայ քննութեան պիտի պարապինք նէ, աս կարգաւորութեան ընթացքով պիտի յառաջ երթանք. սկսելով նախ անոնցմէ, որոնք որ մեր բնականապէս աս զգացումներուն վրայ ունեցած համարմանը մէջ ընդհանրապէս ամենէն ստորին կը սեպուին աստիճանաւ, եւ հետզհետեւ դէպի վեր ելլելով՝ ինչուան ամենէն բարձրագոյնը : Աս ընթացքիս համեմատ՝ ասոնք գիտողութեան տակ պիտի ձգենք եւ զստ զատ քննութեան առարկայ ընենք աս կարգով, Բնական Ազգամունք, Ախորժակք, Հակամիտութիւնք եւ Արիք :

§ 310 . Բաղձանաց վրայ հիմնեալ սկզբունքները երկու կերպ ներգործութեան ընդունակ են :

Մէկ երեւելի ծանօթութիւն մը կայ, որ յառաջիկայ քննութիւններնուս նիւթ ըլլալու բոլոր սկզբունքներուն կը վերաբերի, բացի բնական ազգումներէն : Այս է այս, որ՝ մէկ աս յիշած մասերնիս բացառելով՝ բոլոր միւսները երկու կերպ ներգործութիւն ունին, մէյժմ ազգումով, մէյժմ՝ ալ նախապայման : Աս բանը ի հարկէ տիրապէս բնական ազգումներուն չվերաբերիր, փասն զի բառին յատուկ մտքովը ասոնց բուն իսկ ազգումն ըստելէն կը հասկըցուի թէ կամաւոր ներգործութեան ընդունակութենէ զուրկ են : Սակայն երբոր Բնական ազգումներէն կ'անցնինք Ախորժակաց, եւ ալ աւելի վեր՝ Հակամիտութեանց եւ Արիք, աս սկզբունքներուն բոլորն ալ կը դասենք որ աս երկու կերպարանքով զննուելու ընդունակ են : Ամէն մէկը, այնպիսի պարագաներու մէջ՝ որ ատեն քննութիւն՝ խորհրդածութիւն ըսած բանդ ամենեւին չկրնար ըլլալ, ազգամամբ եղած ներգործութեան մը ընդունակ է, եւ դարձեալ՝ ամէնքն ալ, այնպիսի պարագաներու մէջ՝ որ տրամաբանութեան կիրառութեանը պատահութիւն կ'ըլլայ, ազատ եւ կամաւոր ներգործութեամբ մը կրնան ներգործել : — Աս սկզբունքներուն ամէն մէկուն վրայ բարոյական գիտողութեամբ արժան եղած դատումները ձեւացընելու համար աս գիտելիքը մեզի կարեւոր բան մըն է :



## ԳԼՈՒԽ • Բ

## ԲՆԱԿԱՆ ԱԶԴՄՈՒՆԻՔ

§ 311 . Մարդուս ունեցած ազգումներուն վրայ՝ ստորին կարգի կենդանեաց ունեցածներուն հետ բաղդատելով :

Մեր զգայական մասին բաղձանաց ընդհանուր անուամբը յիշուած բաժանման վրայ ընելու զիտողութիւններնիս ընականապէս կը սկսինք Բնական Ազգումներէն կամ Ազգայնականներէն, որոնք ուրիշ բան չեն, բայց եթէ բաղձանք՝ մասնաւոր եւ որոշ եղանակաւորութեան մը տակ մտած : — Առ հասարակ ընդունուած բան մըն է աս՝ թէ մեր բնութեանը մէջ մէկ քանի զօրաւոր եւ անփոփոխ բերմունքներ կան այնինչ բաները ընելու, առանց առաջուրնէ խորհելու կամ ան բաներուն վրայ մտածելու : Մարդուս գործքերը միշտ տրամաբանութեան վրայ հիմնեալ զգացումներով չեն կառավարուիր, այլ երբեմն արագաշարժ եւ վճռական զրուումներէ կ'իշխուին, որոնք որ տրամաբանութեան ներգործելու ատեն չ'թողուցած իրենք իրենց զօրութիւնը ի գործ կը զննեն : Աս պարագայէս է որ աս մտաւոր բերմունքները կամ բաղձանքները ազդողական կ'ըսուին, որով կ'ը հասկըցուի Շարժումն կամ Աերգործութիւն, թէ մարմնաւոր եւ թէ մտաւոր, առանց մտածութեան եւ նախատեսութեան :

Թեպէտ եւ այսպիսի ազդական բերմունքներ անտարակուսելի է որ կան մարդուս վրայ, սակայն պէտք է ընդունիլ որ ստորին կարգի կենդանեաց ունեցածին չափ շատ եւ անոնց պէս ներգործուն չեն : Աւ յիրաւի ուրիշ կերպ ըլլալը մեզի անակնկալելի կը թուի, երբ կը խորհինք անասնոց կարգին վերացոյցման եւ տրամաբանութեան կարողութիւններէն բոլորովին զուրկ ըլլալը, կամ շատ սակաւ ինչ աստիճանաւ ունենալը : Աստուծոյ նախախնամական տեսչութիւնը, որ առանց անոր զիտողութեանը ճնճղուկ մը գետինը չ'իյնար, անոնց աս պակասութիւնը լեցընելու համար՝ տեսակաւ բաղձագիմի եւ իրենց վիճակին կարօտութիւններուն զարմանալի կերպով յարմարցած բնական ազդումներով զանոնք զարգարեր է : Աս բանիս ապացոյցը թռչնոց բոյնին, շերամին խողա-

կին, բէշկ մշկոյին տանը, թուչնոց իրենց սահմանեալ ժամանակին տեղէ տեղ չուելուն եւ ուրիշ բազմաթիւ օրինակներու վրայ կը տեսնենք :

§ 312 . Անբան կենդանեաց բնական ազդումներուն վրայ բացատրութիւնք :

Պիւրին է այլ եւ այլ հետաքրքրական եղելութիւններով բացատրել ազդեցութեան սկզբունքին ինչ բան ըլլալը : — Կալէն փիլիսոփան անգամ մը ուլ մը առաւ իր սատկած մօրմէն յօշատութիւնով, ու դեռ բերանը բան չգրած՝ տարաւ սենեակի մը մէջ դրաւ, ուր տեղ շատ մը ամաններ շարեր էր, որը դինի լեցուն՝ որը իւղ՝ որը մեղր՝ որը կաթ՝ որն ալ ուրիշ հեղանիութ մը, եւ խել մըն ալ ուրիշ ամաններ տեսակ տեսակ հետեղէններով եւ պողեղէններով լեցուցած : Քիչ մը ատեն անցնելէն ետեւ, սաղմը բաւական զօրութիւն ստացաւ ոտքի վրայ ելլելու . եւ զարմանքով ապշած մնացին բոլոր դիտողները երբոր տեսան որ կենդանին սենեակին մէջ դրուած բոլոր հեղուկներուն եւ պտուղներուն ու հունտերուն մէկիկ մէկիկ մօտենալէն ու հատտելէն ետեւ, վերջապէս կաթէն սկսեց խմել : Արկու ամիսի մը չափ անցնելէն ետեւ, զանազան տունկերու եւ թուփերու ընծիւղներ բերին ասոր քովը դրին, եւ անոնց ամէնը հօտտելէն ու մէյմէկ քիչ ճաշակը նայելէն ետեւ, սկսեց այծերու սովորական կերակուրներն եղող տեսակներէն ուտել :

Մեղուններուն միացեալ աշխատութեամբ շինած բժիճները շատ անգամ օրինակ բերուած են ազդմանց բնութիւնը բացատրելու համար : — «Վորը չափաբերական առաջարկութիւն մըն է աս, կ'ըսէ Րիտ, թէ մեղրի բժիճներուն տակը գոցող իրեք մակարդակները ճիշդ ինչ անկիւնով մէկմէկու գալու են, որ վերջին աստիճան խնայութեամբ կամ հնարաւոր եղածին չափ քիչ նիւթ եւ աշխատանք ծախելով ըլլայ : Ասիկայ չափաբերութեանց բարձրագոյն կարգերուն վերաբերեալ դժուարալուծելի խնդիրներէն է . որուն լուծմունքը տուած են քանի մը չափաբերք, եւ մասնաւորաբար Մաքլորին անուն հանձարեղ չափաբերք, որուն ըրած վերլուծական հաշիւը պահուած է Լոնտոնի Լըքունի Բնկերութեան Վործոցը մէջ : Ինքը ճշգրտութեամբ դատաւ առաջարկեալ անկիւնը, ու գտնելէն ետեւ՝ հնարաւոր եղածին չափ ուղիղ չափմամբ տեսաւ որ ճիշդ ան նոյն անկիւնն է, որով որ փեթակի բժիճներուն տակի երեք մակարդակները իրօք իրարու կու գան :

“Երբ՝ ո՞վ սորվեցուց մեղուաց հաստատուն մարմնոց յատկութիւնները, եւ այսպիսի բարձր խնդիրներ լուծելը : Հարկ չէ ըսել թէ մեզուք ասանկ բաներ չեն գիտեր : Ընտք երկրաչափական հմտութիւն չունին, սակայն ամենահմուտ երկրաչափի պէս գործ կը գործեն. ըստ իմիք նման տղու մը, որ նուաբարանի մը կօթը դարձընելով գեղեկիկ երաժշտութիւն կ'ընէ, առանց երաժշտութեան վրայ գիտութիւն մը ունենալու : Ըրհետաին ճարտարութիւնը տղուն վրայ չէ, այլ նուագարանը շինողին վրայ : Ամանապէս մեղուններն որ անանկ վարպետ երկրաչափութեամբ իրենց փութակը կը շինեն նէ, ըրած երկրաչափութիւննին իրենցը չէ, այլ այն մեծ Արկրաչափին, որ սակզծեց մեղուն, եւ ամէն բան թուով՝ կշիռով ու չափով ըրաւ” :

§ 313 . Կարդկային մտաց մէջ եղած բնական ազգմանց օրինակներ :

Եայց մեր միտքը աս տեղ կենդանեաց բնական ազգեցութիւններուն վրայ մանաւոր հետազօտութիւն ընել չէ, թէպէտ եւ աս նիւթը եւ փիլիսոփային եւ քրիստոնէին խիստ շահաւոր բան մըն է : Եյս տեսակ յուզանդութիւնները մեր իսկական նպատակէն շատ հեռու կ'ընան, որ՝ եթէ բոլորովին չէ նէ՝ մասնաւորաբար մարդկային բնութեան վերաբերեալ քննութիւններ ընել է : Սորդուս վրայ ալ՝ ստորին կարգի կենդանեաց նման՝ կան քանի մը ազգական բերմունքներ, սակայն թուով քիչ են, եւ՝ իր բնութեան միւս մասերուն հետ բաղդատելով՝ ստորին են աստիճանաւ : Ըտնց մէկքանին հոս հիմայ պիտի ցուցնենք :

ա . Ընչառութեան գործողութիւնը ոմանք մատենագիրք կը սեպեն թէ բնական ազգումով կ'ըլլայ : Ընք կրնար ըսել թէ մանուկը ծնած ատենը աս գործողութեան կարեւորութիւնը սորված կրնայ ըլլալ՝ անոր վրայ տրամաբանելով . եւ անոր կիրառութեանը հարկաւորութեանը վրայ ինչ տգիտութեամբ կը ծնի նէ, անիկայ կատարելու համար շարժուելու ներքին գործարաններուն վրայ ալ նշոյնպէս : Այս սակայն աշխարհք եկած վայրկեանէն անմիջապէս բոլոր այն գործարանները կը սկըսի բանեցընել, եւ անանկ կանոնաւորութիւնով ու կարգաւոր յաջորդութիւնով, որ ուրիշ կերպով չենք կրնար մեկնել, բայց միայն ազգական գրգման սկզբունքով :

բ . “Ըս նշոյն սկզբունքով, կ'ըսէ Բիտ, նորածին տղան՝ երբոր ստամոքսը կը դատարկանայ եւ բնութիւնը մօրը ծիծը կաթ կը

Բնական Ազգամուշք :

բերէ՛ կը ծծէ ու կուլ կու տայ իր կերակուրը անանկ կատարելութեամբ, որպէս թէ այդ գործողութեան սկզբունքները սորված եւ անոնց համեմատ գործելու ունակութիւնը ստացած ըլլար :

«Օձեկն ու կուլ տալը շատ յօգուածոյ գործողութիւններ են : Անդամադնինք երեսուն զոյգի չափ մկանունք կը համրեն, ուրոնց բոլորը պէտք է որ բանին ամէն ումիզ ներս առնուած տանը : Աս մկանանց ամէն մէկը իրեն յատուկ ջիզն ունի, որ առանց անկէ ներգործութիւն մը ընդունելու չ'կրնար գործել : Ասիկէ ի զատ բոլոր աս մկանունքներուն ու ջիզերուն բանելը յանկարծական չէ : Մէկ կարգ մը կայ, որ անով յաջորդաբար գործելու են. եւ գործելնին որչափ էապէս հարկաւոր է նէ, աս կարգը պահելնին ալ նոյնպէս : — Այ կանոնաւոր եւ մանուածոյ գործողութիւնը՝ արհեստի ամենանորը կանոններուն համեմատ՝ յառաջ կը տանի մանուկը, որ ոչ արհեստ ունի, ոչ գիտութիւն, ոչ փորձառութիւն եւ ոչ ունակութիւն :

«Սննկան անօթութեան անհանգիստ զգացումը իմանալը կ'ընդունիր՝. եւ աս ալ՝ թէ մինչեւ որ ան անհանգիստ զգացումը անցնի նէ կը ծծէ, ու անկէ ետեւ չ'ծծեր : Բայց ո՞վ սորվեցուցած է իրեն թէ ան անհանգիստ զգացման վերնալուն հնարը եւ միջոցը կայ : Ասոր վրայ գիտութիւն չունենալը ասիկէ յայտնի է որ՝ ինչպէս որ պտկունքը կը ծծէ նէ, մատդ կամ փայտի մը կտոր ալ բերանը դնես նէ՝ ան ալ նոյնքան պատրաստականութիւնով կը ծծէ» :

գ. Մարդոց՝ անձնական պաշտպանութեան համար ըրած ճիշդերը ըստ մասին բնական ազգամայր կ'երեւնայ թէ կ'ըլլան : Այն թէ մէկ մարդ մը անակնկալ կերպով իր հաւասարակշռութիւնը կորսնցընելով իյնալու վրայ ըլլայ նէ, իր դիւքը գտնելու համար ըրած անմիջական ջանքը՝ շատ պատշաճութեամբ կ'ըսենք թէ՛ բնական ազգումէ է : Այն թէ մէկը յանկարծ գետի մը մէջ իյնայ, իր ապահովութեանը համար ըրած առաջին ցնցողական ճիգը աս նոյն տեսակէն կ'երեւնայ թէ է : Իր տրամաբանութեան զօրութիւնները կրնան շուտով օդնութեան հասնիլ եւ ցուցընել իրեն թէ ուրիշ ինչ բաներ ընելու է որ ազատի. սակայն իր առաջին ճիշդերը յայտնապէս ուրիշ սկզբունքով են : Երբոր մէկուն սաստիկ հարուած մը տալու փորձ կը փորձես, յանկարծ ետ կը քաշուի, թէպէտ եւ գիտէր որ խաղ է ըրածդ եւ տրամաբանութիւնը կ'իմացընէր իրեն թէ վախու բան չ'կայ :

§ 314 . Մարդու բնական ազգուններուն վրայ ուրիշ օրինակներ :

դ . Տեսակ մը ցատու մն կայ , որ տիրապէս ազգական է կըրնանք ըսել : Խորհրդով եղած սրտմտութիւնը տրամաբանութեան կիրառութիւն ունի մէջը , եւ միայն դիտմամբ մնաս տալու բաղձանք եղած ատենը կը գրդուի : Իսկ ազգամայր եղած ցատու մը մնասին դիտմամբ ըլլալուն չըլլալուն չ'նայելով կը շարժի , ճիշդ ստորին կարգի կենդանեաց վրայ եղածին նման :

Երբոր արտաքին աւարկայէ մը պատճառեալ ցաւ մը կ'իմանանք , աս ազգամայր եղած ցատման զգացումը մտքերնուս մէջ կը շարժի շատ կամ քիչ ուժգնութեամբ , եւ կը դրդէ մեզ անոր պատճառ եղող բանին վրէժխնդրութիւն ընելու : Տղայ մը՝ օրինակի աղադաւ՝ ոտքը քարի մը կամ փայտի մը կը զարնէ կ'իյնայ նէ , կ'ելլէ այս ազգական ցատման դրդամարը ուժով մը կը ծեծէ սյն իր ցաւուն պատճառ եղող անզգայ բանը : Այրենիներ՝ տեսնուած է որ՝ պատերազմի մէջ նետը իրենց եկած զարկած ատենը բռնած վէրքերնուն մէջէն հանած՝ կտոր կտոր ըրած՝ ակուններովն խածկուած ու անիծելով գետինը զարկած են , որպէս թէ մնասուն սկզբնական դիտաւորութիւնը եւ յարձակումը նոյն իսկ նետէն եղած ըլլար : — Կան անանկ պարագաներ , որ անոնց մէջ իզորձ դրուած մարդկային բնութեան ուրիշ ներգործուն սկզբունքներուն ալ կը պատշաճին աս նոյն դիտողութիւնները :

ե . Ընտարակոյս մարդկային մտաց ազգական բերմունքներուն վարդապետութիւնը շատ հեռուն տանելու վտանգ կայ տղենիս . սակայն ապահովութեամբ կրնանք արդէն յիշուածներուն վրայ աս մէկն ալ եւելցնել , որ է բնական նշանները մեկնելու զօրութիւնը : Երբոր զայրացման՝ գթութեան՝ տառապանաց՝ ցնծութեան՝ կամ ատելութեան արտաքին նշաններ կը տեսնենք , անմիջապէս կրնանք զանոնք մեկնել մտքերնուս մէջ : Շատ յայտնի բան է որ տղաք շատ կանուխ հասակնուն մէջ իրենց ծնողացը նայուածքներուն ու շարժումներնուն վրայ անոնց նիրսիղին շարժած թէ բարի թէ չար տեսակէ եղող շարժութիւնները եւ կիրքերը կը կարգան ու կ'իմանան :

§ 315 . Բնական ազգմանց վերջին նպատակն կամ օգտակարութեանը վրայ :

Թէպէտ եւ աշղկցութիւնք՝ ընդհանուր կերպով խօսելով

Բնական Ազգամուտք :

մեր պատուոյ Համարմանը մէջ վար են մտքին ուրիշ մէկ քանի մասերէն, բայց սակայն անոնք ալ կարեւոր օգուտներու կը ծառայեն : Մասնաւորաբար մեր բնութեանը աս ազգական մասին վախճանը աս կ'երեւնայ, որ մեզի օգնութիւն եւ պաշտպանութիւն ըլլայ սյնպիսի պարագաներու մէջ, որոնց մէջ որ տրամաբանութիւնը ժամանակին օգնութեան չ'իրնար Հասնիլ : Իստ այսմ՝ քանի որ մարդուս տրամաբանական կարողութիւնը զօրութիւն կը ստանայ եւ կենաց կարիքներուն օր աւուր վըրայ աւելի կը պատրաստուի նէ, ազդեցութեանց օգտին հարկաւորութիւնն ալ նոյն համեմատութեամբ կը նուազի : Սակայն անանկ բաներ կան, որոնց տրամաբանութեան կարողութիւնը երբէք կարող չէ հասնելու. եւ հետեւաբար այն բաներուն մէջ մեր բոլոր պաշտպանութիւնը բնական ազդումներէն կախեալ է :

Աւտի յայտնի է՝ թէ ասոնք մեր բնութեանը մէկ հարկաւոր մասն են. թէ մեր մտաւոր կազմուածքին լրութեանը օգնութիւն մըն են. եւ թէ՛ թէպէտեւ ստորին կարգի կենդանեաց հետ բաղդատելով՝ մարդուս վրայ վար են զօրութեամբ եւ յարգութեամբ, բայց սակայն իրենց արժէքն ունին : Ինտոր որ մարդուս մէջ տրամաբանութիւնը բարձր զօրութիւն ունինէ, անանկ ալ ստորին կենդանեաց վրայ ազդեցութիւնք. եւ ինչպէս որ անբանից վրայ տրամաբանութեան փառաւորութիւնը գտնել չենք ակնկալեր նէ, նոյպէս եւ մարդոց վրայ ազգական զօրութեանց կատարեալ պատուականութիւնը տեսնելու ակընկալելու չենք. այլ ատ բանը առաւել միջատին ու որդին վրայ, անտառի գազաններուն ու ծովու ձուկերուն եւ օդի թռչուններուն վրայ փնտռելու ենք, որ անոնց մէջ իրեւ իրենց բնութեանը մէկ մասը կը բնակի, եւ իր իշխողութեամբը եւ առաջնորդութեամբը իրջանկութեան կը հասցընէ զանոնք :

## ԳԼՈՒԽ • Գ

## ԱԽՈՐԺԱԿՔ

§ 316 • Ախորժակաց բնութեանը եւ հանգամանադը վրայ :

ԲՆԴՁՆԵՑ ընդհանուր բաժանմանը տակ Բնական Ազգումը ներէն ետեւ քննելիքնիս Ախորժակաց դասը կը թուի ըլլալ : Սակայն ասիկայ մէկ ընդարձակ նիւթ մը չըլլալուն, եւ հոգեբանական տեսութեամբ երեւելի աստիճան մը չունենալուն, միայն քանի մը ծանօթութիւն տալ հարկ պիտի ըլլայ : Այն կարգաւորութեան իրաւացի ըլլալը, որով որ աս նիւթը Բաղձանաց բաժանմանը տակ հետադատել արժան դասեցինք, շատ քիչ գիտողութեամբ կը տեսնուի : Մարդուս երեւելի ախորժակները Անօրն-Լէան եւ Չարաու-Լէան ախորժակներն են. իսկ անօթութեան ախորժակը ուրիշ բան չէ, բայց թէ ուտելու բաղձանք. եւ ծարաւութեան ախորժակն ալ՝ խմելու բաղձանք :

Բայց սակայն, որչափ որ լոկ բաղձանք ալ եննէ, ուրիշ բաղձանքներէ ըստ բաւականին որոշ կ'երեւնան : Ազգեցութեանց նման միշտ մէկ հաստատուն եւ որոշ կերպով մը չեն յագեւար. եւ ոչ ալ անոնց պէս բոլորովին անկախ են տրամաբանութեան կարողութենէն : Այլ ընդհակառակն աստիճանաւ մը զոպման եւ կանոնաւորութեան տակ կրնան առնուիլ. եւ թէ չ'զսպուին ալ նէ, այլ եւ այլ կերպերով կրնան յագեւար :

Բայց աս կերպ գիտողութեանց վրայ երկաց խօսք չընելով, աս հաստատութիւնը եղած է՝ հաւանականաբար շատ աղէկ տրամաբանութիւնով, թէ ասոնք աս երէք որոշիչ հանգամանքներն ունին : — (1.) Իրենց ծագումը մարմինէն է, եւ մարդոց ու անասնոց հասարակ են : — (2.) Իրենց գործողութիւնը շարունական չէ, այլ էրբեմնական : — (3.) Իրենց հետ անհանգիստ զգացում մը միացած ունին :

Արժան է որ ծանուցանենք հոս, թէ աս ըսած անհանգրտութեան զգացումնիս միշտ բաղձանքէն կամ ախորժակէն առաջ կ'երթայ կամ անոր կը յառաջէ, եւ անոր էական է :

§ 317. Ախորժակը կենսական պահպանութեան հարկաւոր են, եւ ի սկզբանէ հեշտասիրութեան համար եղած չեն :

(Ի) Էպէս ախորժակներն իս' իրրեւ մեր մտաւոր տնտեսութեան մասունքը նկատելով՝ այնչափ մեծ բաներ չեն երեւնար աչքերնուս, սակայն անոնք ալ իրենց կարեւոր օգուտներն ունին՝ մեր ֆիզիզական ընութեան օրէնքներուն եւ պահանջմունքներուն հետ ունեցած վերաբերութիւնովն ին : — «Մտածութեան եւ ծարաւութեան ախորժակները, կ'ըսէ Աղիւարդ, կենաց պահպանութեան համար եղած են. եւ առանց անոնց բանականութիւնն ինքնիրենը անբաւական կ'ըլլար սա պաշտօնը կատարելու : Վիցուք թէ՛ օրինակի համար՝ անօթութեան ախորժակը մեր կազմութեանը մէկ մասը եղած չըլլար, բանականութիւնն ու փորձառութիւնը կրնային հասկըցընել մեզի որ կեանքերնուս պահպանութեանը համար կերակուր պէտք է. սակայն ինտո՞ր պիտի կարենայինք՝ առանց ներսիզինիս տնկուած սկըզբունքի մը՝ ստուգել մեր կենդանական տնտեսութեան փոփոխող վիճակին համեմատ կերակուր ուտելու յարմար ժամանակները, կամ՝ մարմիննուս օգտակար եղող ուտելիքին քանակութիւնը : Ատորին կարգի կենդանիք ոչ միայն սա ծանօթութիւնը կ'ընդունին ընութենէն, այլ նաեւ իրենց թէ՛ առողջութեան եւ թէ՛ հիւանդութեան ժամանակը կարիքնին լեցընելու համար ինչ բաներ ուտելու են նէ, անոնք ալ ազդեամբ կը գտնեն : Ղաշակման եւ հոտառութեան զգայարանքները, մեր սեռին վայրենութեան վիճակին մէջ ալ՝ զէթ սակաւ ինչ աստիճանաւ՝ սա նպատակին կը ծառայեն :

«Վ՝ մենեւին պատշաճութիւն չ'կայ ըսելու թէ մեր ախորժակները հեշտասիրական են. վասն զի իրենց նպատակները ինչ են նէ՛ ան բաներուն իրրեւ իրենց վերջին վախճանը ուղղեալ են. եւ ի հարկէ ասօք թե՛րանք իրենց յազենալէն ծագած հեշտութեանը փորձառու չըլլալով ի գործ պիտի դրուին : Աս փորձառութիւնը ունենալէն ետեւ, արգարեւ վայելելու բաղձանքը կու գայ կը միանայ ախորժակին հետ. եւ երբեմն կրնայ մեզի մեր ախորժակը գրգռել կամ շարժել տալ, անկէ յառաջ գալու հեշտութիւնը առջեւնիս դնելով : Արեւակայութիւնն ալ, ու նաեւ զաղափարաց զուգորդութիւնը, ընկերական կրից եւ երբեմն ալ բարոյական կարողութեան հետ մէկտեղ, օգնութիւն կ'ընեն, եւ ամէնը մէկէն մէկ յօգուածոյ կ'ըրթ մը կը կազմեն, որուն մէջ կենդանական ախորժակը միայն մէկ տարր մը կ'ըլլայ :



Աս կիրքը որչափ որ լեցունէ նէ մէկ մարդ մը, անոր իր վրայ ունեցած իշխողութիւնն ալ այն համեմատութեամբ կը սաստկանայ, ( վասն զի մեր բնութեանը բոլոր ներգործումն առաջադրութիւնները ունակութիւնով կը զորանան, ) ինչուան որ վերջապէս ալ պարապ կ'ըլլայ անոր բռնական զօրութեանը դէմ դնելու աշխատութիւնները: Իր կենդանական ակորժակացը ասանկ գերի եղած մէկը մարդկութեան մէկ ամենաաղետալի եւ ամենաարհամարհելի կերպարանքը կը ցուցնէ իր վրայ:

§ 318. Արեցուցիչ դեղորէից ակորժակներուն ճարակելուն ու ծագմանը վրայ:

Չէ թէ միայն բնական, այլ նաեւ արհեստական կամ ըստացական ակորժակներ ալ կան: Քիչ չեն գտնուիր անանկ մարդիկ, որ բարկ ոգիներու՝ ծխախոտի՝ ամփոնի եւ ուրիշ այլ եւ այլ տեսակ արեցուցիչ դեղորէից ակորժակներ ստացած ըլլան: Ընդհանուր գիտցուած բան մըն է աս՝ որ մասնաւորաբար արեցուցիչ ըմպելիքներու ակորժակը շատ ճարակած է, յատկապէս վայրենեաց մէջ: — Այլ արժան է հոս որ համառօտիւ բացատրենք աս կերպ ակորժակաց ծագումը:

Այսպիսի դեղորայք եւ ըմպելիք մարդուս ջղային կազմուածքը գրգռելու զօրութիւն մը ունին, եւ աս գրգռութեան միջոցով հեշտութիւն մը կը պատճառեն: Աս հաճոյական գրգռութենէն ետեւ շուտով նոյն չափովը մէկ թուլութիւն մը եւ կտորածութիւն մը կը յաջորդէ, որկէ որ ազատելու համար ենթակայ եղողը կրկին արեցուցիչ ըմպելիքին կամ դեղին կը դիմէ: Ասով չէ թէ միայն իր դժնէութիւնը կ'անցնի, այլ նորէն իր ոգիքը կը գրգռուին եւ կը զուարթանան, որուն ետեւէն կրկին լքումն եւ դժնէութիւն կու գայ: Ասանկով կըրկին եւ կրկին կը գործածէ ոգելից ըմպելիքը՝ ծխախոտը՝ ամփոնը՝ կամ ինչ արեցուցիչ բան որ է նէ, մինչեւ որ ակորժակը այնչափ կը զորանայ, որ ալ բոլորովին կը յաղթէ իրեն, գերի կ'ընէ զինքը եւ մարդկութենէ կը հանէ անասունի կարգ կը խօթէ: Այնպէս որ՝ առաջին սխալական քայլը առնելէն ետեւ՝ այսպիսի ունակութենէ մը զերծ մնալուն մէկ հատիկ ճամբան՝ արեցուցութեան հաճոյական գրգռութենէն ետեւ եկող ապերջանկութիւնը հանդարտութեամբ տանին է, մինչեւ որ բոլոր մարմինին գրութիւնը ինք իր վիճակը գտնէ, եւ իր աղէտքը իր ճգամը վրայէն հեռացնէ:

§ 319 . Ախորժակաց երկակի գործողութեանը եւ բարոյականին վրայ :

Բարձանաց Բնութեանը վրայ խօսուած գլխուն վերջին հատուածին մէջ եղած ծանօթութեանց համեմատ՝ հոս աս ընդհանուր հաստատութիւնն ալ կրնանք եւելցընել, թէ բոլոր ախորժակաց գործողութիւնը երկակի է, Բարձանն եւ Կամաորականն : Թէ որ իրեւ իրենց վերջին նպատակը իրենց վաստաններուն հասնելու համար ի գործ դրուելու ըլլան նէ, առանց ուրիշ բանի նկատողութեան մը, անատեն իրենց գործողութիւնը յայտնապէս զուտ ազդեցութեանց գործողութեանը նման կ'ըլլայ : Սակայն առաջին անգամ յագեցնելէն ետեւ, կրնան կրկին ներգործութեան շարժուիլ՝ ոչ այնչափ իրենց վերջին վաստանը դիտելով, այլ մանաւանդ գիրենք յագեցընելէն յառաջ գալու երջանկութիւնը մտածելով : Եւ ասանկով երբեմն կը պատահի որ իրենց ներգործութիւնը, առջեւնին եղած վայելման նկատմամբ, խռովեալ եւ բռնական կ'ըլլայ : Բայց սակայն աս տեղ մտքերնուս ուրիշ սկզբունքները կրնանք օգնութիւն առնել մեզի զանոնք մասնաւոր աստիճանաւ մը սանձահարալու՝ կանոնաւորելու, եւ՝ մէկ մտքով մը՝ կրթելու համար : Եւ որչափ որ աս բանը կրնանք ընել նէ, յայտնի է թէ անոնք ալ այնչափ կամաորական ներգործութեան մը ընդունակ եղած կ'ըլլան :

Եւ ասա ախորժակաց բարոյականին հիմը հոս է : Որչափ որ ախորժակք լոկ ազդական ներգործութեամբ կը գործեն նէ, չենք կրնար ըսել թէ բարոյական որպիսութիւն ունին, թէ բարի թէ չար : Իրենց սեպհական տեղը՝ շատ օգտակար են . սակայն՝ բարոյական դիտողութեամբ՝ պարզապէս իրեւ անմեղ նկատուելու են : Սիայն կամաւորական ներգործութեամբ գործած ատեննին, կամքին հասողութեանը եւ իշխողութեանը տակ ինկած ատեննին է որ հնարաւոր կ'ըլլայ իրենց բարոյապէս կամ բարի կամ չար, կամ առաքինական եւ կամ մոլեկան ըլլալ : Եւ այնպէս որ ախորժակաց վրայ եղած առաքինութիւնն ու մոլութիւնը չէ թէ նոյն իսկ ախորժակներուն իրենց ներքին բնութեանը մէջ է, այլ իրենց կիրառութեանը վրայ կը կայանայ . եւ միայն ան կիրառութիւններուն վրայ, որոնք կամքին իշխողութեանը տակ կ'իյնան :

## ԳԼՈՒԽ • Գ

## ՀԱԿԼԱՄԻՏՈՒԹԻՒՆԵՐ

§ 320 • Ընդհանուր ծանօթութիւնը հակամիտութեանց բնութեանը վրայ :

ԲՆԵԿԿԵՆ զգացողութեանց աս մասին վրայ քննութիւններն իս ալ եւս յառաջ որ կը տանինք նէ, մէկ ուրիշ տեսակ մը խաղձանք աչքերնուս կը հանդիպին, որոնք ինչուան հոս քրննածներնէս կը տարբերին, եւ հետեւաբար որոշակի հայեցողութեան նիւթ բլլալու են: Ստուգիւ աս դասէն եզոզ բաղձանաց Վզգմանց հետ խառնուելուն վախ չ'կայ, վասն զի ասոնք չունին ան հաստատուն եւ անթեքելի ներգործութեան կերպը որն որ սովորաբար ատ մտաւոր հանգամանաց որոշիչ հանգամանքն է: Վտորժակներէն ալ տարբեր են, նախ աս կողմանէ՝ որ թէ իրենց գոյութեանը եւ թէ կիրառութեանը դիէն անոնցմէ շատ քիչ կախում ունին մարմինին վիճակէն. եւ երկրորդ աս կողմանէ՝ որ մեր բնութեանը այլ եւ այլ սկզբբունքներուն վրայ բնականապէս եւ բաղդատորէն ունեցած համարումներնուս մէջ ասոնք բարձրագոյն են աստիճանաւ: Սիանգամայն՝ աս նոյն պատուոյ աստիճանին մէջ՝ Կիրքերէն ըստորնագոյն են, որոնցմէ՝ ուրիշ մէկ քանի բաներով ալ տարբերելնէն ի զատ: Ուստի չէ թէ միայն կրնանք կատարեալ պատշաճութեամբ զատ ու որոշ դիրք մը տալ աս զգացումներուն, այլ յարմարութիւն կը գտնենք զանոնք որոշ անունով մ'ալ յորջորջելու: — *Հակամիտութիւնք* (վասն զի աս է տալու անուննիս) աս հետեւեալ մասնաւոր բաները կը բովանդակեն. *Միձնապահութեան սկզբունք կամ ապրելու բաղձանք*. *Նետաբրբրութիւն*, կամ բաղձանք գիտութեան. *Մնկերականութիւն կամ բաղձանք ընկերութեան*. *Մնքնասիրութիւն*, կամ բաղձանք երջանկութեան. *բաղձանք պատուոյ*, *հակամիտութիւն նմանելոյ*, եւ մէկ քանի ուրիշներ:

Թէպէտ եւ համառօտաբար ցուցուցինք *Հակամիտութիւնները* աս ընդհանուր բաժանման տակ գացող զլսաւոր սկզբունքներէն որոշող պարագաներուն մէկ քանին, սակայն՝ ինչպէս որ կը տես-

## Հակամտութիւնք:

նուի՝ Հակամտութեանց ինքնիրեննուն ինչ բան ըլլալուն վրայ խօսք մը չըրինք: Իրաւ է թէ բոլորն ալ բաղձանաց վրայ հիմնեալ բաներ են, եւ ամէնն ալ իրենց յատուկ նպատակներն ունին: Սակայն իրենց բնութեանը մէջ տնկական կամ սեպհական հանգամանքներ եղող բաները աւելի աղէկ կը սորվուի ան դիտողութիւններէն, որ ի հարկէ պիտի ծագին՝ զանոնք յաջորդաբար հետազօտած ատեննիս:

§ 321. Սկզբունք անձնապահութեան, կամ ապրելու բաղձանք:

Վնենելու սկզբնական բաղձանքներնուս առաջինը կրնանք անուանել սկզբունք Այնսպահու-լէ-ան, կամ ապրելու բաղձանք: — Այսպիսի բաղձանք մը իրօք ըլլալը չէ թէ միայն չորս դիմիս տեսածներնէս հաստատաբար կ'ապացուցուի, այլ բուն իսկ մեր գիտակցութեանը այնքան ծանօթ է, որ հարկ չկայ երկար խօսք ընելու աս բանիս վրայ: «Սարգս իր բոլոր ստացուածքը իր կեանքին տեղը կու տայ», ասիկայ բարոյական առածի պէս բան մըն էր հին ատենները, եւ ինչպէս որ անատենը, հիմայ ալ ապացուցիւ հաստատութեան կարօտութիւն չունի: Շշմարիտ է թէ կրնայ ըլլալ որ աս սկզբունքը յաղթուի ուրիշ սկզբանց տիրապետող իշխողութենէն, լոկ պատուոյ բաղձանքէն, հայրենասիրութենէ, կամ պարտականութեան զգացումներէ. սակայն թէ եւ իր հետեւութեամբը սպառի ալ նէ, չենք կրնար ըսել թէ բընութեամբ ալ կ'ոչնչանայ: Ինչ որ ըլլայ ան տակաւին կը մնայ մտքին հիմանցը եւ խորութեանցը մէջ անսպառ եւ անսպառելի: Մնչեւ անգամ անձնասպանութեան պարագային մէջ, կեանքը սպառելու բաղձանքն որ կայ կը սեպուի անձնասպանին վրայ, բացարձակ չէ, այլ վերաբերական, անձնասպանը չուզեր կեանքէն անցնիլ, եթէ հնար ըլլայ անոր հետ մէկ տեղ կապակցած չարիքը զատել անկէ. կեանքը չէ՝ ինքնին մտածելով՝ անոր ատածը, այլ անոր հետ կապակցած կամ իրական եւ կամ երեւակայական տառապեցուցիչ պարագաներն են:

§ 322. Անձնասպանութեան սկզբունքին երկակի ներգործութեանը վրայ:

Անձնապահութեան սկզբունքը կամ ապրելու բաղձանքը՝ ախորժակաց նման՝ երկակի ներգործութիւն ունի, այն է՝ ապահան եւ կանառ-որական: Իր ներգործութեան աս երկու կերպարանքները կամ տեսակները պէտք է որ զգուշութեամբ իրարմէ որոշուին:

Հակամիտութիւնք:

Ընձնապահութեան ազգական ներգործութիւնը անատեն կ'ըլլայ, երբոր մարդու կեանքը վտանգելու յանկարծական ու անակնկալ դէպք մը կը պատահի: Արբոր մէկ մարդ մը կնխալու վտանգի մէջ կ'ըլլայ, բնական ազգեցութեամբ ձեռքը կ'երկնցընէ ինքզինքը բռնելու համար. երբոր հարուած մը իջնցընելու փորձ կը փորձուի իր վրայ, ազգամամ ճիգ մը կ'ընէ անկէ ինքզինքը ապահովելու համար. եւ աս բաղձանքին սյսօրինակ ազգական գործողութիւնը ոչ միայն շատ գործունեայ, այլ եւ կարի արագաշարժ է: Խիստ օգտակար է աս ազգական ներգործութիւնը բոլոր այն պարագաներուն մէջ, ուր որ հետապտուութեան եւ տրամաբանութեան վրայ հիմնեալ անձնապահութեան ճիգերը ատենին չեն կրնար հասնիլ: — Արբոր յիշեալ բաղձանքին կիրառութիւնը հետազօտութեան եւ տրամաբանութեան հետ կը միանայ, եւ ի հարկէ հուսկ յետոյ կամքին որոշումներուն վրայ կը հիմնուի, անատեն կ'ըլլայ Խոնարհութիւն: Յիշեալ սկզբունքին աս ձեւով եղած թելադրութիւններովն է որ բոլոր այն նախահայեաց հաշիւները եւ ջանքերը կ'ընենք, որոնք որ մասնաւոր վերաբերութիւն ունին կեանքերնուս շարունակութեանը եւ պաշտպանութեանը: Արկու դիտաւորութեամբ ալ թէ ազգական եւ թէ կամայական կիրառութեանը նայելով, աս սկզբունքը յայտնապէս մեծ իմաստութեամբ մարդուս վիճակին եւ կարեացը յարմարցած բան մըն է: Գործնականապէս զօրաւոր գրգիռ է գործունէութեան. եւ իր կամայական կիրառութիւնը, որչափ որ չ'ծուած խղճի մը պահանջմունքներուն համաձայն կրնայ մնալ նէ, միշտ բարոյապէս բարի է:

§ 323. Հետաքրքրութեան վրայ, կամ բաղձանք գիտութեան:

Հակամիտութեանց մէկ գլխաւոր սկզբունքն ալ Հեղափոխութիւնը կամ գիտութեան բաղձանքն է. որն որ իբրեւ մեր մտաւոր կազմութեանը անկական եւ ընդարոյս հանգամանքներէն մէկը սեպուիլ հարկ ըլլալը անտարակուսելի բան մըն է կրնանք ըսել: Թէպէտ եւ ընդունելու ենք թէ աս սկզբունքը շատ այլ եւ այլ աստիճաններով կը տեսնուի, կենաց եւ գործունէութեան ամենէն տկար ու յետին վիճակէն ինչուան գրեթէ անզսպելի զօրութիւն ստացած վիճակը, սակայն բոլորովին հետաքրքրութենէ զուրկ մէկը զգայութիւն չունեցող մէկու մը չափ արտաքոյ կարգի տարօրինակ բանմը կը սեպուի: Թէ որ հետաքրքրութիւնը մարդուս բնական չէ նէ, անկէ կը հետեւի թէ ուրեմն մարդուս միտքը անտարբեր է իր առջեւը ներկայացած բաներուն, եւ թէ հմտութեան մէջ յա-

Հակամիտութիւնք :

ուարդիմութիւն ընելէն հաճութիւն մը չ'քաղեր. որ ասոնց ասանկ ըլլալը ակնկալելու բան չէ, եւ իրական ճշմարտութիւններէ ալ վաւերութիւն չունի: Բնդհակառակն աս սկզբան գործողութիւնը ամենուն վրայ կը տեսնենք: Երբոր մէկ անակնկալ եւ տարօրինակ դէպք մը կը պատահի, ամէն մարդու մտադրութիւն անմիջապէս անոր կ'երթայ. անիկայ իրենց անտարբեր բան չըլլար, հապա բոլորն ալ ինչէն ըլլալը կ'ուզեն իմանալ:

Դոնէ կարգ մը մատենագիրք կան, որոնց կարգացուելուն ակնկալութիւնը մեծ չափով աս սկզբան արդիւնքներէն կախեալ է. ըսած մատենագիրներնիս նորաձեւութիւններ եւ առասպելաբանութիւններ շինողներն են: Ետնց ըմբռնումները եւ երեւակայութիւնները որչափ որ ընդհանուր բաներ ալ որ ըլլան, եւ որչափ որ լաւ ոճ ալ չունենան, եթէ միայն կարենան իրենց նորաձեւութեան կամ առասպելաբանութեան հիմը անանկ վարպետութեամբ մը ձգել՝ որ ուրիշներուն հետաքրքրութիւնը սաստիկ գրգռուի, կրնան ընթերցողներուն մըտադրութիւնը իրենց ձգել: Եւ անտարակոյս շատերուն գտած յաջողութեան բոլոր գաղտնիքը աս է:

§ 324. Հետաքրքրութեան սկզբունքին վրայ ուրիշ բացատրութիւններ :

Ես հակամիտութեան մարդուս ներսիդին տնկական բան մը ըլլալը ուրիշ դիտողութիւնով մըն ալ հաստատելու համար՝ աղէկ կ'ըլլայ որ հոս բոլոր խուլերուն ու մունձերուն դասը մէջ բերենք, ու նաեւ այն դժբաղդ անձինքն ալ, որոնք խուլ ու մունձ ու միանգամայն կոյր ալ են: Ետնց ամէնն ալ սորվելու բաղձանքին երեւելի նշանները միօրինակ վրանին կը ցուցնեն. աս բաղձանքը կ'արծես թէ երեսնուն վրայ կը փայլի, շարժուածքներնուն ոգի կուտայ, եւ տեսակ մը բռնական իշխողութեամբ յառաջ կը մղէ զիրենք հետաքննութեան մէջ: Ստուգիւ՛ թէ որ հետաքրքրութիւնը տնկական եւ շատ զօրաւոր բան մը չըլլար նէ, բոլորովին կը յաղթուէին ասոնք այն զիրենք պաշարող բազմութիւն վհատութեան պատճառներէն:

( ) րինակ սուննք՝ բացատրութեան համար՝ Յակոբոս Ս'իքլը: Ես աղան, որչափ որ եռապատիկ դժբաղդութեան տակ, խուլ՝ անտես եւ անբարբառ ալ էր նէ, շատ մտքի աշխուժութիւն կը ցուցնէր: Հետաքրքրութեան սկզբունքը՝ մասնաւորաբար՝ շատ զօրաւոր էր իր վրայ: Երբոր իր հանդիպած բաներուն վրայ հմտութիւն ստանալու մեծ բաղձանք կը յայտնէր: Արտեսնէին զինքը որ գետինը մատնաշափ առ մատնաշափ կը

Հակամիտութիւնք :

քննէր . ձեռքերուն ու ծունկերուն վրայ կամուրջներու եւ տանիքներու վրայ կը սողար . ոչ միայն մարդիկ , այլ եւ ձիեր՝ շներ կառքեր՝ կահ կարասիք եւ երաժշտական գործիքներ ձեռքովը կը գննէր . կոշկակարներու՝ գերձակներու եւ աղիւսագործներու քով կը կայնէր , եւ մտադիր հետաքրքրութեամբ կ'ուզէր գիտնալ թէ արդեօք ինտո՞ր կ'աշխատին ու ի՞նչ արդիւնք յառաջ կը բերեն :

Իսոյց հարկաւորութիւն չ'կայ աս ընդհանուր դիտողութիւններուն վրայ մնալու , կամ արտաքոյ կարգի օրինակներ յառաջ բերելու , քանի որ հետաքրքրութեան սկզբունքին մարդուս մտացը մէջ խորին տնկուած ըլլալուն ապացոյցները եւեւ եւելօք կը տեսնենք շարունակ բոլոր մանկանց եւ տղայոց վրայ : Եւ ըսկըզբունքը իրենց կեանքը կը թուի ըլլալ . անիկայ զիրենք յարաժամ շարժման մէջ կը պահէ . առտուրնէ ինչուան զիշեր նոր նոր գործունէութեան գրգիռներ կուտայ իրենց , ու նոր նոր զուարճութեան աղբիւրներ կը բանայ առջեւին : Ս'անկանց եւ տղայոց աս հանգամանքը շատ գեղեցիկ շինուածքներու հիմն ըրած են բանաստեղծք , որոնց շատը արդարեւ արժանի են մարդկային բնութեան վրայ ճիշդ դիտողութիւն ունեցողներու համբաւոյն :

§ 325 . Հետաքրքրութեան սկզբունքին երկակի գործողութեանը եւ բարոյականին վրայ :

Հետաքրքրութեան հակամիտութեան սկզբունքը անձնապահութեան սկզբանը նման երկակի ներգործութիւն ունի , ապառիտն եւ կամաւորախան : — Չուտ ազգական ներգործութիւնը սաճնիս միշտ իր նպատակին իբրեւ իր վէրջին վախճանը ուղղեալ կ'ըլլայ , անոր վնտռած բանը մի միայն նոյն իսկ առարկան կ'ըլլայ , առանց նկատելու թէ անկէ չ'որ յառաջ պիտի գայ՝ թէ բարի . անիկայ իր առարկային հետամուտ կ'ըլլայ՝ մի միայն նոյն իսկ առարկային համար , եւ ոչ ուրիշ նպատակով մը : Հետաքրքրութեան սկզբունքն ալ նախ եւ առաջ աս կերպով կը գործէ : Ե'սիկայ իր ազգամայր եղած ներգործութիւնն է : Եւ ինչուան որ աս եղանակաւ գործէ նէ , ոչ անձնասիրական կրնայ ըլլալ , եւ ոչ բարեսիրական . բարոյապէս ոչ բարի կրնայ ըլլալ , եւ ոչ չար . այլ պարզապէս անմեղ է եւ օգտակար :

Ս'աեւ կամաւորախան ներգործութիւն մ'ալ ունի , որն որ հետեւութիւններու նախահայեաց տեսութեանը վրայ հիմնեալ է , եւ մտածութեան կիրառութիւնը կը բովանդակէ մէջը : Հետաքրքրութեան կիրառութիւնը կրնանք մենք արժանաւոր սուար-

կաներու ուղղել . կրնանք անոր ներգործութիւնը գրդռել շահուեալ պարտականութեան գիտումներով . կրնանք զսպել սանձի տակ առնել զանիկայ, երբոր կարգէ կանոնէ դուրս կ'ելլէ : Աւ որչափ որ այսպիսի հանգամանաց տակ ըլլան նէ իր ներգործութիւնները, զանոնք տիրապէս կամաւորական կրնանք անուանել : Աւ երբոր աս կամաւորութեան հանգամանքը վրանին կ'առնեն նէ, անատեն բարոյականութիւն ալ կրնանք տալ անոնց . անատեն առաքինական կամ մոլեկան կրնան ըլլալ : Արբոր գիտութեան բաղձանքը չար նպատակ ունենայ, եւ կամ այնպիսի սաստկութեամբ մը ի գործ դրուի՝ որ ուրիշ բարոյական պարտաւորութիւններ խափանին, իր կիրառութիւնը կ'ըլլայ մոլեկան : Աս գիտողութեանց նայելով է որ Սղիւարդ մէկ հին աստեղաբաշխ մը կը յիշէ, ու անոր ըրածը կ'արհամարհէ : Աս աստեղաբաշխին վրայ կ'երեւնայ թէ ամբաստանութիւն եղեր է՝ թէ հասարակաց գործառնութիւններուն չ'խառնուիր, անտարբեր է : Ինք ալ աս ամբաստանութեան պատասխան աս խօսքն է ըսեր, թէ իմ քաղաքս աստեղազարդ երկնից մէջ է . ասով յայտնապէս աս ըսել ուղեւով, թէ իր քաղաքացւոյ պարտքերը կամովին իր աստեղաբաշխութեան գործերուն մէջ ընկղմեցուցած է, եւ թէ հայրենասիրութիւնը այն իր ընտրած գիտութեան վրայ ունեցած սաստկագոյն սիրովը սրտէն էապէս ընաջինջ եղած է : Ահա ասիկայ յիշեալ սկզբունքին անսովոր կիրառութեանը մէկ որոշ օրինակն է : Աս անձը պէտք եղածին պէս իր աս հակամիտութիւնը սանձի տակ չէր առած . եւ ուստի այնքան սաստկացեր էր, որ իր ուրիշ զգացումներուն կիրառութիւնը եւ ուրիշ պարտքերուն արժան եղած գործադրութիւնը խափաներ էր :

§ 326 . 'Ամանողութիւն, կամ' հակամիտութիւն նմանելոյ :

Սարգուս մտքին մէկ ուրիշ ընդաբոյս հակամիտութիւնն ալ 'Մանողութիւն' սկզբունքն է, կամ ուրիշներուն ըրածին պէս ընելու բաղձանքը : Այսպիսի սկզբունք մը ըլլալուն վկայութիւնները լեցուն է չորս դիմիս : — Թէ որ աս հակամիտութիւնը բունական չէ նէ, խիստ դժուար կ'ըլլայ մեկնել մանկանց եւ տղայոց վրայ դիտած բաներնիս : Աւ աս խօսքը առիթ առնելով հոս կը ծանուցանենք՝ թէ բոլոր աս նիւթիս վրայ մասնաւորաբար մարդու կանուխ հասակը յառաջ պիտի բերենք ըսածներնիս հաստատելու եւ բացատրելու համար : Ս ան զի ատիկայ անանկ ատեն մըն է որ մարդկային բնութիւնը իր ճշմարիտ կերպարանքներովը կրնայ երեւնալ աչքերնուս : Աւ աս հի-



մակուան առջեւնիս եղող սկզբունքին նկատմամբ, ստոյգ է թէ տղայք իրենց կանուխ հասակէն կը սկսին զգուշութեամբ ուրիշներուն ըրածը դիտել, եւ նոյնը ընելու աշխատիլ : Ըստ օղնութիւն կ'ընդունին աս հակամիտութենէն յօդաւոր ձայներ արտաբերել սորվելու մասին : Եւ շատ երկարատեւ աշխատութիւնով է, որն որ յայտնապէս լոկ նմանողութեան հաճութիւնովը կը շարունակեն, որ կը կարողանան ձայնաւոր լեզուի վարժութիւնը ձեռք ձգել :

Քանի մը տարեկան որ կ'ըլլան նէ, խօսիլ սորվելէն եւ մանկական խաղերու մասնակից ըլլալու չափ մեծնայնէն ետեւ, դարձեալ նոյն հակամիտութիւնը իրենց մէջը գործելու վրայ կը տեսնենք : Չիաւարաց աշխուժութիւնովը եւ քաջութեան երեւոյթներովը ձի հեծնալ ձեւացընելու համար՝ փայտ մը կ'առնեն տակերնին, ու ձիաւորի փորձեր կը փորձեն, իրենց փոքրիկ ու շնչին կառքերը բակերու ու փողոցներու մէջ կը պտըտցընեն, ու անարուեստ սայլերովին մէկ բլուրին գագաթէն միւսը կը ճամբորդեն : Միշտ աշխուժութեամբ բան մը ընելու ետեւէ ըլլալով՝ տուներ կը կառուցանեն, պատնէշներ կը կանգնեցընեն, ջուրերու վերաբերեալ գործեր կ'ընեն, գեղեցիկ պարտէզներ կը զարդարեն : Փայտ մը կ'առնեն ուսերնին ու հրացան կ'ընեն. չափով քայլ առնելու եւ խոժոռ նայուածքներ ցուցընելու ինքզինքնին կը վարժեն. եւ դեռ մարդ չեղած, զինուոր՝ հեծեալ՝ ճարտարապետ եւ պարտիզպան կ'ըլլան : — Սակայն աս հակամիտութեան գործողութիւնը միայն տղայոց սահմանուած չէ. փարդիկ ալ իրենցմէ առաջ հայրերնին ինչ որ ըրեր են նէ, ան կ'ընեն. շատ անգամ քիչ բարոյական քաջութիւն պէտք չըլլար նախորդներու հետքէն շեղելու համար : Թէ չար ըլլայ՝ թէ բարի, ուրիշներուն շաւղին մէջ քալած ատեննիս ինքզինքնիս մէկ ապահովութեան մը մէջ կ'իմանանք, որ եթէ ուրիշները մեզի օրինակ չունենայինք նէ, ան ապահովութիւնն ալ չ'պիտի զգայինք :

§ 327 . Նմանողութեան սկզբունքին գործնական արդիւնքները :

Թերեւս ոմանք խորհին՝ թէ աս սկզբունքը, անոր բնածին բան մը ըլլալուն հաստատութիւն տուող որչափ վիպայութիւն որ կայ ալ նէ, մարդոց յառաջագիմութեանը եւ երջանկութեանը փոքրը ինչ նպաստաւոր ըլլայ : Սակայն գիտնալու է որ մտաւոր սկզբանց նկատմամբ քիչ անգամ չ'պատահիր որ հարկ կ'ըլլայ մեզի աս ծանօթութիւնը ընել, թէ մարդկային բնութեան ինք-

## Հակամիտութիւնք :

նին խիստ աննշան երեւցող տարրները շատ անգամ կը գտնենք որ շատ մեծ արդեանց աղբիւր են : Ըստ սկզբունքն ալ հնարաւոր է թէ սասանկ ըլլայ : Ըստ անգամ կ'ըսենք նմանողութեան համար՝ թէ տղայոց վրայ իշխող սկզբունք մըն է . սակայն այնքան յօժարութիւն չ'ունինք ճանչնալու , որ աս ալ առջինէն վար մնացող իրական ճշմարտութիւն մը չէ , թէ մարդոց վրայ ալ իշխող սկզբունք մըն է : Ըրդէն ըրած խորհրդածութիւններնէս՝ չենք կրնար տարակուսիլ թէ աս քննած սկզբունքնիս , առջի բերանը ինչ կերպարանքով որ աչքերնուս երեւնայ ալ նէ , ընկերութեան մէկ երեւելի ամբուլութիւնը , գիտութեան երջանկութեան եւ զօրութեան աղբիւր մը ըլլալու համար եղած է , եւ իրօք ալ է : Թիէ որ աս սկզբունքը ջնջուելու ըլլար նէ , այն կապն որ հիմայ ընկերութեան ան երկու մեծ բաժանումները՝ ծերն ու պատանին՝ իրարու հետ սասանկ միութեամբ կապած է , շատ կը տկարանար , որ ասիկայ ամէն կողմանէ նկատելով , շատ աղէտալի բան մըն է : Մենք ոչ միայն տղայութեան , այլ չափահասութեան ատեննիս ալ , ինչպէս որ արդէն առիթ ունեցանք ակնարկելու , մեր հարանց քայլերուն կը հետեւինք , արհեստից՝ արտաքին բարուց եւ սովորութեանց եւ սահմանադրութեանց մէջ անոնց նմանող ըլլալով . եւ՝ ընդհանուր առմամբ՝ աղէկ է որ սասանկ ըլլայ : Եւ ասիկայ սասանկ որ կ'ընենք նէ , չէ թէ միայն լոկ զանոնք մեզմէ աւելի իմաստուն սեպեւնուս համար է , այլ նաեւ՝ շատ անգամ անզգալապէս՝ աս զօրաւոր սկզբան ազդեցութեամբը դրդուելնէս : Եւ գէթ ըստ մասին աս կերպով է որ ազգ ազգի հետ , նախորդ ցեղը յաջորդին հետ կը կապուի . որ նախորն թաց դարուն մէջ վառուած փորձառութեան ջահը յետագային վրայ իր ճառագայթները կ'արձակէ . եւ որ ընկերութիւնը ոտնկոխ եղած շաւիղին մօտէն քայլելով՝ յեղակարծ եւ աղէտալի սասանութեանց չ'հանդիպիր :

Մէկ աս ալ եւելցընենք թէ՛ եթէ աս սկզբունքը այսքան ընդարձակ ազդեցութիւն ունի , ինչպէս որ անտարակոյս ենք ունենալուն վրայ , ուրեմն հարկ է ամէն մէկուն ինձմով եւ զգուշութեամբ նկատել իր տուած օրինակին ինչ յատկութիւն եւ ինչ բերմունք ունենալը : Են որ չար օրինակ մը կու տայ , թէ առանին եւ թէ հրապարակական կենցաղն մէջ , այն իր օրինակը ոչ միայն ինք իր մէջը կը թողուի ու կը չորնայ , այլ՝ գրեթէ հարկաւորապէս շատ ուրիշներ ալ ան նոյն վատութեան եւ թշուառութեան շաւիղին մէջ իր ետեւէն կը քաշէ կը տանի : Եւ ընդհակառակն՝ ան որ իր կենացը եւ ցեղին մէջ բարիք գործելու կ'աշխատի , իր բարի օրինակին լուսափայլութիւնը , ինք դիտաւորութիւն ունենայ՝ թէ չունենայ , բնութեան անոր ընդունելութեա-

նը համար բացած բաղձաթիւ սրտերուն կը տարածի . եւ այսպէս՝ եւս առաւել եւ բարձրագոյն օգտակարութեան առիթ ըլլալով՝ կը վառէ զանոնք յերջանկութիւն եւ ի փառս :

§ 323 . Պատուոյ բնական բաղձանքին վրայ :

Սէկ ուրիշ երեւելի հակամիտութիւն մըն ալ, որ ուրիշ բանի չ'վերածիր, այլ սկզբնական է, եւ ինք իր հիմանը վրայ կայացած, Պարսոսոյ Բալլանիսն է : — ա. Մս սկզբան մարդուս մտքին մէջ սկզբնական եւ բնական բան մը ըլլալը հաստատութեան համար՝ բոլոր ուրիշ հակամիտութեանց նման աս հակամիտութեան նկատմամբ ալ աղասութիւն ունինք կենաց սկիզբները եւ մտքին կարողութիւններուն բացուած ատենները տեսած եւ դիտած բաներնիս մէջ բերելու : Տղայք ուրիշներուն բարի համարումէն յառաջ եկած հետեւութիւնները գիտնալու դեռ չ'կարողացած, յայտնապէս կը վիրաւորուին երբոր անարգանաց եւ արհամարհանաց արտայայտութիւնները կը տեսնեն . եւ նոյնպէս որոշ տեսնուելու կերպով հաճութիւն կը զգան երբոր յարգութեան եւ հաւանութեան արտայայտութիւններ կը տեսնեն : Այլ որովհետեւ աս եղած բանին վրայ՝ զանիկայ տրամաբանութեան՝ փորձառութեան՝ կամ շահախնդրութեան արդիւնք սեպելով՝ մեկնութիւն մը չենք կրնար տալ, անդին կը մնայ միայն աս մեկնութիւնը՝ թէ աս բաղձանքը մարդուս մշտքին բնական եւ էական կազմուածքին մէկ մասն է :

բ. Մս ծանօթութիւնն ալ կրնանք ընել՝ թէ պատուոյ բաղձանքը կենաց աւելի յառաջացեալ տարիքներուն մէջ ալ կը տեսնենք՝ շատ ընդարձակ եւ զօրաւոր : Այրբոր ազգաց եւ անհատից պատմութիւններուն վրայ աւքերնիս կը դարձնենք, որչափ մարդիկ կը տեսնենք որ աւելի ուզեր են կեանքերնին զոհել, քան թէ ուրիշներուն բարի վարկումը կորսնցընել : Ար տեսնենք որ բոլոր ուրիշ բաներնին, հարստութիւննին՝ բաղձերնին եւ բարեկամներնին կորսնցուցեր են, ու սիրով իրենց բարի անուանը կը փարին . ցնծութիւնով իրենց ամբիժ համբարը կը ցուցընեն՝ իրբւե մխիթարութիւն իրենց ներկայ դժբաղձութիւններուն մէջ, եւ առհաւատչեայ լաւագոյն բաներու գալիքին մէջ : Մս բանը մասնաւորաբար ճշմարիտ կը գտնենք պատմութեանց այն ժամանակներուն համար, երբ ժողովրդոց սկզբնական զգացողութիւնները եւ հանգամանքները հեշտութեանց եւ բարեձեւութեանց հնարքներովը խանգարած չէին :

գ. Սէկ զիտողութիւն մըն ալ կայ, որ աս բանիս վերաբե-

բութիւն մը ունի : — Մենք երբեմն այնպիսի կացութեանց մէջ կ'ըլլանք, որ ոմանց աղէկ կամ գէշ համարումէն՝ որչափ որ կըրնանք դատել նէ՛ կը տեսնենք որ մեր անձնական շահուն օգուտ մը կամ փնաս մը անհնար է որ յառաջ գայ : Եւ ասկէ ալ աւելին, ան վատ համարումն որ կայ կը կարծենք մեր վրայ, զանիկայ ունեցողներէն մէկը կարող չ'կրնար ըլլալ վաւերացընելու : Միայն իրենց մէջը կը մնայ այն գէշ վարկածը, եւ իրենցմէ դուրս չ'տարածիր, անհնար ըլլալով անկէ թէ մեր ստացուածքին եւ թէ ընդհանուր համբաւոյն փնաս մը հասնիլը : Եւ սակայն անկարելի է որ ատ բանէն անհաճոյ զգացում մը չընդունինք . այդպիսի պարագայի մը մէջ մեզի անանկ կը թուի՝ թէ բնութեան դիտմունքներուն դէմ կը գործուի կոր . թէ մէկ իրական գէշութիւն մը կ'ըլլայ կոր մեզի . թէ յայտնապէս մեր իրաւունքը եղող բանէ մը կը զրկուինք կոր : — Թէ որ աս դիտողութիւնը շիտակ է նէ, ինչպէս որ պատճառ ունինք շիտակ սեպելու, զորաւոր առարկութիւն մըն է այն վարդապետութեան դէմ՝ թէ պատուոյ բաղձանքը անձնական եւ շահախնդիր նկատողութեանց վրայ հիմնեալ է, եւ ոչ թէ մտքին ներքին բնութեանը վրայ :

Գ. Եւ հակամիտութեան բնածին ըլլալուն հաստատութիւն տուող մէկ ուրիշ ապացոյց մըն ալ աս է, որ անիկայ շատ զօրաւոր կերպով ապառնիին նկատմամբ ալ կը գործէ ներսիդինիս : Մենք ուրիշներուն բարի համարումը վայելել կ'ուզենք ոչ միայն ներկայ ատենուան եւ ներկայ բաներու համար, այլ նաեւ կը փափաքինք որ մնայուն ըլլայ ան, առանց խորհելու թէ արդեօք անկէ ուղղակի կերպով օգուտ մը ընդունելու վեճակի մէջ պիտի ըլլանք թէ չէ : Մինչեւ անգամ մեռնելէս ետեւ ալ, որ ալ յաւիտեան պիտի բաժնուինք մարդոց թէ գովութիւններէն եւ թէ անարգութիւններէն, կ'ուզենք որ անուննիս պատուով եւ յարգութեամբ յիշուի : Թէպէտ եւ կատարելապէս հաւատացած ենք թէ երբեք մարդու ձայն չ'պիտի թափանցէ եւ վրդովէ մեր գերեզմաններուն լուսթիւնը, եւ սակայն կարի տառապեցուցիչ խորհուրդ մը կ'ըլլայ մեզի, եթէ նախատեսութեամբ իմանանք որ յիշատակութիւննիս անարգանաց ենթակայ պիտի ըլլայ : Արնանք արամարանութիւնով ինքզինքնուս անանկ հաւատացընելու աշխատիլ՝ թէ այնպիսի զգացմունք յիմարական բաներ են . սակայն անհնար կը գտնենք ներսիդինիս անկուած սկզբունքները ծննդել, եւ հողինքնուս մէջ բնութեան բարբառող ձայնը մարել :

§ 329 . Պատուոյ բաղձանքին վարուց կանոն ըլլալուն վրայ :

Ըս սկզբունքը, թէ որ իր արժանաւոր եւ վայելուչ սահմաններուն մէջ պահուելու ըլլայ նէ, իր գործողութեամբը մարդուս երջանկութեանը նպաստաւոր է : Ըսիկայ կենաց շատ կանուխ հասակին կը սկսի գործել, բարոյական կարողութեանց բացուէն եւ հաստատուելէն շատ առաջ . եւ էպպէս բարուց ազնուութիւն եւ վայելութիւն յառաջ կը բերէ, եւ գործունէութեան գրգիռ կ'ըլլայ : Արոր մէկ պատանի մը կը տեսնես որ ուրիշներուն յարգութեանը եւ հաւանութեանը վրայ ամենեւին նկատողութիւն չունի, ուզածիդ չափ գէշ գուշակութիւններ կրնաս ընել անոր վրայ . անանկը բարերար Տեսչութեան մը շար ընթացից սանձահարութիւն ըլլալու համար ներսիդինիս տնկած մէկ երեւելի սկզբունքը կորսնցուցած է իրմէն, եւ աննկարագրելի մոլութեան եւ թշուառութեան արկածներու ինքզինքը պատրաստած է : Սիլա Հոովմայեցի հիւպատոսին համար կը պատմուի թէ անգամ մը Տուլիոս Կեսարին փողոցի մէջ անկարգ եւ անպարկեշտ կերպով քալելը տեսնալով, գարծեր քովիններուն ըսեր է թէ ատ պատանոյն վրայ շատ Սնարիոսներ կը նախատեսեմ, աս խօսքով յայտնապէս աս ըսել ուզելով, թէ ասանկ ուրիշներուն զգացմանցը եւ վարկումներուն վրայ փոյթ չունեցող անձը հաւանականաբար հեշտասիրութեան ու փառամոլութեան առաջնորդուած ընթացքը պիտի բռնէ, խղճին յորդորակներուն եւ հասարակաց բարւոյն վրայ շատ քիչ նկատողութիւն ունենալով : Անկ գուշակութիւն մը, որ մարդկային բընութեան սկզբունքներուն հմտութեանը վրայ հիմնեալ էր, եւ որ ետքէն յառաջ եկած հետեւութիւններէն եւել եւելօք վաւերացաւ :

Սակայն քանի որ որոշակի կը ճանչնանք պատուոյ բաղձանքին անմեղ եւ շատ օգտակար բան մը ըլլալը, ասոր գէժ ալ շատ զգուշութիւն ընելու ենք՝ որ ուրիշներուն վարկումը մեր գործքերուն միմիայն եւ վերջին կանոնը չընենք : Քամանակաւոր ազդեցութիւններ եւ տեղական պարագաներ հասարակութեան միտքը այնպիսի խորհուրդներու տէր կրնան ընել, որոնց բարի մարդ մը արդարութեամբ չ'կրնար միաբանիլ : Ըմէն պարագայի մէջ, ուր որ բարոյական սկզբունք բովանդակեալ է, մեր բնութեան մէկ ուրիշ մասը կայ որ անոր պէտք է խորհուրդ հարցընել : Առաւոր խղճի մը ազդումները մէկ կանոնագիրք մըն են, որուն ոչ միայն մեր արտաքին գործքերը, այլ նաեւ մեր ախորժակները՝ հակամտութիւնները եւ կիրքերն ալ պատասխանա-

## Հակամիտութիւնք :

տու են, եւ որն որ անսխալապէս կը ցուցնէ անոնց կիրառութեան սահմանները : Խղճին պահանջմունքներուն դէմ գործելով պատուոյ բաղձանքին թելադրութիւններուն հնազանդիլ մտաւոր կազմութիւններնուս կարգը տակն ի վրայ ընել, եւ բարձրագոյն հրամանի պատասխանատուութիւնը լոկ արտաքոյ բանակի պահանջող զօրքի մը փոխել կ'ըլլայ :

## § 330 . Ստացման բաղձանքին վրայ :

Ենպէս ստեղծուած ենք՝ որ բնականապէս եւ հարկաւորապէս ոչ միայն իրերու վրայ հմտութիւն կ'ունենանք, այլ նաեւ անոնց ունեցած շատ վերաբերութիւններուն վրայ : Այլ ուրիշ վերաբերական կամ առնչական ծանօթութեանց նման՝ Ստացման ծանօթութիւնն ալ շատ կանուխ կը ձեւացընենք : Շատ քիչ իմացականութեան թելադրութիւններ կան, որոնց մարդուս միտքը ասոր չափ կանուխ ծանօթանայ : Արբոր կը տեսնենք տղաք՝ որ, ինչպէս որ կ'ընեն շատ անգամ, իրարու հետ կը վիճեն անտու մը նստելու կամ բոժոժի մը տէրն ըլլալու համար, վստահ կըրնանք ըլլալ թէ ստացման գաղափարները որոշ ձեւացուցեր են : Ենոնք կատարելապէս գիտեն անոր ինչ ըլլալը, թէպէտ եւ չ'կրնան սահման մը տալ, եւ կարելի է թէ անունն ալ կարող չըլլան ըսելու : Թէպէտ եւ իրօք ստացումն ըսած բաներնիս չըլլար՝ առանց գործնականապէս ատ նոյն վերաբերութիւնը պահելու, վասն զի իրական կամ իսկական ստացումն ըսելէն աս կը հասկըցուի թէ ստացուած բան մը ու ստացող մէկը կայ. բայց սակայն՝ որովհետեւ ստացման գաղափարը կամ ծանօթութիւնը թելադրութեամբ եւ վերացականապէս կ'ըլլայ մտքին մէջ, վասն որոյ մէկ առանձին եւ որոշ առարկայ մը սեպուելու է, մտքերնուս տեսութեանը յստակ իմանալի, եւ զգացողութեանց հետ նոյն վերաբերութիւնը ունեցող՝ ինչ վերաբերութիւն որ ուրիշ ինչ եւ իցէ առարկայ կամ առնչութիւն՝ թէ նիւթաւոր եւ թէ մտաւոր՝ ունի, որն որ ընդունակ է իմացականապէս ցուցուելու : Աս ստացման, ինչպէս որ բացատրեցինք ու ցուցուցինք թէ մշտքերնուս տեսութեան լուսոյն մէջ՝ իբր թէ դուրս ցցուած՝ կ'երևնայ, մէկ բնական եւ տնկական բաղձանքը ամէն մարդու վերայ կը տեսնուի : Ենոր գոյութեան ճշմարտութիւնը, թէ իրական ճշմարտութիւնը՝ եւ թէ հնարաւոր ըլլալուն ճշմարտութիւնը, իմացականութեան մէջ երեւան կ'երևէ. եւ սիրտը՝ ազդական դրդմամբ մը՝ կը համաձայնի մտքին աս իմացմանը, իր հաճութիւնը եւ սէրը անոր վրայ ցուցնելով :

§ 331 . Ստացման բաղձանքին բարոյական բնութեանը վրայ :

Թեպէտ եւ ստացման բաղձանքը աներկբայ՝ բոլոր ուրիշ հակամիտութեանց նման՝ ազգական ներգործութիւն ունի, սակայն իր բարոյականութիւնը՝ այսինքն բարոյական բնութիւնը՝ բոլորովին իր կամաւորական ներգործութեանցը վրայ կայացած է : Մենք աս ստացման սկզբունքին համար չենք կրնար ըսել, ինչպէս որ ոմանք կարելի է հակին ըսելու, թէ բարոյական մտքը զուտ չար բան մըն է : Ինչուան որչափ որ իր ներգործութիւնը՝ թէ զսպուելու եւ թէ գրգռուելու կերպով՝ կրնայ կառավարուիլ տրամաբանութիւնով՝ մտածութիւնով եւ կամքին ուղղակի կամ անուղղակի իշխանութիւնովը նէ, (որ ասոնց ամէնը կը հասկըցուի ստացման կամաւորական ներգործութիւնը ըսելով,) ինչուան այնչափ ընդունակ է կամ բարի՝ կամ չար, արժանաւոր՝ կամ անարժանաւոր ըլլալու : Արբոր բաղձատուութենէ եւ մտածութենէ անկախութեամբ կը գործէ, բնական ազգման պէս է անատեն, եւ ատ ձեւովը շատ անգամ օգտակար է եւ միշտ անմեղ . երբոր ուրիշ եւ աւելի բարձրագոյն սկզբանց իշխանութիւնը կը խանգարէ, եւ կը դրդէ մեզ չար աչքով ուրիշին արգար ստացուածքին վրայ նայելու, եւ նախանձոտ ու մեղանշական յափշտակութեամբ մերը չեղած բանը մեղի սեպհականելու, անատեն կ'ըլլայ մոլեկան, իսկ երբոր իր ներգործութիւնները բոլոր ասոնց հակառակ ընթացքով ի գործ կը դրուի, բարի շարժառիթներէ շարժեալ, եւ արգարութեան շաւիղէն դուրս չելլելով, անատեն կ'ըլլայ առաքինական :

Իսկ քերինս կը հասնի որ մինչեւ անգամ մտքով չենք կրնար ըմբռնել իմացման եւ զգացողութեան մէջ այնպիսի բարձր էակ մը, որ պատասխանատուութիւն ունենայ, եւ այդ իր պատասխանատուութիւնը ստացման բաղձանքէն բոլորովին զուրկ ըլլալու սկզբունքին վրայ կազմուած ըլլայ : Թե որ ատ էակը ինք իր գոյութեանը եւ երջանկութեանը կը բաղձայ նէ, որ ասիկայ՝ այնպէս կը սեպենք թէ՛ ամէն բանաւոր եւ պատասխանատու էակի գոյացական մէկ հանգամանքն է, ուրեմն հարկաւորապէս կը հետեւի՝ թէ պիտի բաղձայ նաեւ ան ստորոգելիքները եւ ձիրքերը ունենալը, որոնք որ այն իր կենացը եւ երջանկութեանը պահպանութեանը եւ կատարելութեանը նպատաւոր են : Ի՞նչ մեղք կրնայ ըլլալ ան գոյութեանը սահմանները, որն որ ինքնին անգին բան մըն է, ընդարձակելու բաղձանքին մէջ, եթէ միայն ատ բաղձանքը բոլոր ուրիշ էակներու առնչութիւնները եւ ի-

բաւունքները արժանաւորապէս նկատելով կատարուի : Մեզք չէ ամենեւին, եւ մեզք չըլլալէն զատ, պարտականութիւն ալ է, եւ պէտք է որ անանկ ըլլայ : Թէ որ ասանկ չէ նէ, Բնչ պիտի բսնը հապա Պօղոս առաքելոյն ըսած ան խօսքերուն, Սուրբ Վրոց նոյն իմաստը ունեցող ուրիշ մասերը մէկ դի թողելով, որ կը յորդորէ կորնթացիները ոչ միայն «մարգարէութեան նախանձիլ», այլ նաեւ ընդհանուր խօսքով՝ «նախանձաւոր ըլլալ ան շնորհքներուն, որ լաւ են». ա կորնթ. Ժդ. 39 : Ժբ. 31 :

§ 332 . Ստացման բաղձանքին դիւրութիւնները :

Թէպէտ եւ աս խնդիր եղած Հակամիտութիւնը՝ դէթ հնարաւորութեամբ՝ ընդունակ է առաքինական կիրառութեան, սակայն շատ պատճառ ունինք հաւատալու թէ իր սովորական ներգործութիւնը թիւրեալ եւ մոլի է :

Մարդուս մտքին մէկ մեծ օրէնքն է աս՝ որ իր ներգործուն սկզբանց կիրառութեանը կրկնութիւնը անոնց զօրութիւնը կ'եւելցընէ. եւ որովհետեւ ստացման կիրառութեանը առիթները խիստ բաղձաթիւ են, աս գրեթէ անխուսափելի հետեւութիւնը յառաջ կու գայ որ չափէ դուրս կը զօրանայ : Արբոր աս ասանկ կ'ըլլայ, աս տեսակին հակադարձը եղող ստացման անմեղ բաղձանքը Եղահութեան մեղանշական ձեւոյն կը փոխուի, որ աս անունով ընդհանրապէս կը հասկըցուի ուրիշ մէկ քանի ներգործուն սկզբանց իշխողութիւնը յաղթող եւ պարտականութեան մէկ քանի պահանջմունքներուն հակառակող նախանձաւորութիւն եւ եռանդն ստացման : Ըսիկայ անտարակոյս ան մեծ մեղքերուն մէկն է, որոնք մարդկային բնութիւնը արտաւորած են, եւ որն որ՝ պատճառ ունինք վախնալու թէ՛ ամենուն սրտին մէջ չափէն աւելի զօրացած է. եւ որ Սուրբ Վրոց ամէն կողմը որոշակի եւ ահեղ կերպով դատապարտած է :

Արբոր ստանալու բաղձանքը եւս առաւել կրկնութեամբ աւելի յառաջ կ'երթայ ու ժգնութեան կողմանէ, կարի առաւել ծանրը եւ մեղանշական ձեւի մը կը մտնէ, որուն կ'ըսենք Երծաթսիրութիւն կամ Բնչասիրութիւն : Ըս ձեւն առած ատենը ոչ միայն այն իր առջի ունեցած անմեղութեան հանգամանքը կը կորսնցընէ, այլ եւ շատ ատելի եւ զգուելի կ'ըլլայ բարոյական մարբութեան ուղղատես աչքին առջեւը :



§ 833 . Չորութեան բաղձանքին վրայ :

Միզընական Հակամիտութեանց մէկ ուրիշն ալ Օգոստոսեան բաղձանքն է : — Օգոստոսեան Համար՝ պէտք է յիշել որ՝ ըսած ենք թէ զգայարանաց ուղղակի կերպով Հազորդուող կամ զգայարանաց ճանչցուելու բան մը չէ . հապա մտքերնուս մէկ ստորոգելիքն է, որուն վրայ հմտութիւն կ'ունենանք 'Աերքին իմացականութեան՝ այսինքն զգայարանաց հետ ուղղակի կապակցութենէ անկախութեամբ գործող իմացականութեան մէկ ներգործութիւնովք : Օգոստոսեան ըսածնիս, ոչ կը տեսնուի՝ տարածութիւն ունեցող բանի մը պէս, ոչ կը շօշափուի, եւ ոչ ճաշակման կամ հոտառութեան առարկայ կ'ըլլայ . այլ մտքին կը յայտնուի Վիզընական թանջարութեան ներգործութեամբը, երբոր ատ ներգործութեան յարմար առիթները կը պատահին : Բայց թէպէտ եւ զգայարանաց տակ չիյնար, սակայն զգայարանաց ճանչցուող գոյութեան մը պէս իրական եւ շարժութեան ու բաղձանաց առարկայ եղող բան մըն է : Մտքին տեսութեան առջեւ որոշ իմանալի երեւոյթով կը տեսնուի, ինտոր որ տարածութիւն եւ գոյն ունեցող մարմին մը մարմինին աչքին կ'իմացուի : Եւ ասանկ ըլլալով, մենք ալ կատարեալ վայելչութեամբ՝ զորութեան բաղձանքի խօսք կրնանք ընել . վասն զի ուր տեղ որ բան մը կայ նէ, ան բանը՝ գէթ հնարաւորութեամբ՝ բաղձալի կրնայ ըլլալ . սակայն մտքին առջեւ բան չեղած ատենը ի հարկէ բաղձանք ալ չ'կրնար ըլլալ :

Եւ ծանօթութիւնները պատրաստութիւն մըն են հիմնայ ըսելիքնուս, որ է այս՝ թէ զորութեան բաղձանքը բնական է մարդուս մտքին . ուրիշ խօսքով՝ թէ զորութեան բաղձանքը մտքին մէկ բնածին սկզբունքն է : — Եւսիկայ հաստատելու համար, որն որ առաջին նայուածքով թերեւս չ'կարենայ յօժարամտութեամբ ընդունիլ ընթերցողը, նախ աս ծանօթութիւնը ունինք ընելու՝ թէ զորութիւնը ինք իր բնութեամբը բաղձալի բան է : Եւ մէկ աներկբայ ճշմարտութիւն մըն է՝ թէ զորութիւնը իրօք ամենայն մասուր էակաց մէկ գոյացական ստորոգելիքն է, եւ անանկ պէտք է որ ճանչցուի : Եւստ այսմ՝ թէ որ իմացական եւ զգայական գոյութիւնը բաղձալի բան է նէ, ուրեմն զորութիւնն ալ, որ այդ կերպ գոյութեանց մէջ հարկաւորապէս բովանդակեալ է, բաղձալի է : Գոյութեան բաղձանքը, ընդհանուր ճանաչմամբ, բնական է մարդուս, երջանկութեան բաղձանք ալ նմանապէս բնական է . եւ որովհետեւ

## Հակամտութիւնք :

ոչ գոյութիւն կրնայ ըլլալ եւ ոչ երջանկութիւն առանց զօրութեան, վասն որոյ իրաւունք ունինք խորհելու՝ թէ զօրութեան բաղձանքը մարդուս բնութեանը մէջ էական եւ տնկական բան մըն է :

Ըստ նիւթիս վրայ ըրած աս գիտողութիւններնուս հաստատութիւն տուող այլ եւ այլ պարագաներ կան, որոնք ամենուն յայտնի բաներ են : «Մանուկը, կ'ըսէ Ազիւարդ, դեռ մօրը ծիծը եղած ատենը կը բերկրի իր պզտիկ զօրութիւնը ամէն հանդիպած բաներուն վրայ ի գործ գնելով . եւ երբոր իր անզօրութիւնը իրեն հասկըցրնող բան մը պատահելու ըլլայնէ, սիրտը կը նեղանայ : Տղու մը ըրած զբօսանքները՝ գրեթէ առանց բացառութեան՝ այնպիսի բաներ են, որ պօրո-լէ-ան գաղափարը իրեն կը թեւադրեն : Արբոր քար մը կամ նետ մը կը նետէ, իրմէն հեռու տեղ մը ներգործութիւն մը յառաջ բերելու կարող ըլլալուն վրայ հաճութիւն մը կ'իմանայ . եւ երբոր աչքովը այն նետած բանին որչափ տեղ երթալը կը չափէ, իր զօրութեան հասնիլ կրցած տարածութիւնը տեսնալով կը զուարճանայ : Ըն նոյն սկզբան բերմունքէն է որ կը սիրէ իր ուժը ընկերներուն ուժին հետ բաղդատութեան բերելն ու իրենին գերագոյն ըլլալուն գիտակցութիւնովը ուրախանալ» :

## § 334 . Զօրութեան բաղձանքին բարոյական բնութեանը վրայ :

Թէ որ զօրութեան բաղձանքը մարդուս մտքին համարուն է նէ, հաւանականաբար աս ալ՝ ուրիշ իրեն հետ վերաբանութիւն ունեցող սկզբանց նման՝ պիտի գտնենք որ երկու կերպ ներգործութիւն ունի, մէյմը արդարաւոր, մէյմ՝ ալ կամաւորաւորաւոր : Ինչուան որչափ որ իր ներգործութիւնը ազդական ըլլայ նէ, այնչափը կրնանք սեպել թէ գէթ անմեղ է, եւ հաւանականաբար նաեւ օգտակար : Ինչուան որչափ որ կամաւորական է, այնչափին հետ կապակցած առաքինութիւնը կամ մոլութիւնն ալ իր ներգործութեանը կանոնաւորութենէն կախեալ է : Թէ որ լուսաւորեալ խղճի մտաց իշխողութեանը եւ առ Ըստուած ունեցած պարտքերնուս եւ զգացումներնուս հնազանդ պահուելու ըլլայ նէ, իր ներգործութիւնը առաքինական կ'ըլլայ, իսկ ընդհակառակն՝ թէ որ չափէ դուրս սաստկանայ, որ անանկ ըլլալը շատ հաւանական է, եւ իր ներգործութիւնը կարի ուժգնութիւն ստանայ, այնպէս որ մեղ դըրգէ սրդիլեալ բաներու ետեւէ կ'յնալու եւ ուրիշն իրաւունքը յափշտակելու, անատեն կ'ըլլայ մոլեկան :

Հակամտութիւնք :

Արբոր զօրութեան բաղձանքը կը չափազանցէ, եւ իշխեցողութեան տիրապետող սկզբունքի մը պէս կը գործէ, անիկայ սովորաբար կ'անուանենք Աշխատասիրութիւն: Ան մարդն որ Աշխատասիրութեան ազդեցութեանը տակն է, զօրութեան կը բաղձայ, ոչ թէ անիկայ զինքը իր Արարչին նմանցընելուն համար, եւ ոչ ուրիշ որ եւ իցէ այնպիսի պատճառի մը համար, որն որ ուղիղ առարինասէր մտաց առջեւ հաւանութիւն կրնայ գրտնել. այլ մի միայն իրեն անզուսպ եւ անյադ անձնասիրութիւնը լեցընելու բան մը ըլլալուն պատճառաւ:

§ 335 . Հակամտութիւն ինքնասիրութեան, կամ բաղձանք երջանկութեան:

Մարդու զգայական բնութեան աս մասին հետազոտութիւնը յառաջ տանինք՝ աս ծանօթութիւնն ալ եւելցընելով, թէ վայելման կամ երջանկութեան բաղձանքը մարդու մտաւոր կազմուածքին մէկ սկզբնական կամ համարուն տարրը ըլլալ կ'երեւնայ: Մէկը չկայ որ համարձակի հաստատել թէ վըշտակութեան բաղձանքը բնական է. թէ սովորաբար կը խընդանք թշուառութեանց գալուստը տեսած առեմնիս, եւ զանոնք սրտի ուրախութիւնով կը կրենք: Աս կարծիքիս ալ հաւանելի պատճառ չկայ, թէ վայելումն ու վշտակութիւնը անտարբեր բաներ են մարդու մտքին մէջ, եւ թէ մէջերնին ըլլալու բնտրութիւն չկայ: Ասիկայ ընդհանուր փորձառութեան եւ ամենայայտ իրական ճշմարտութեանց հակառակող կարծիք մըն է: Անգհակառակն՝ մեր գիտակցութենէն եւ ուրիշներուն վրայ տեսածներնէս կատարելապէս կը սորվինք, թէ երջանկութեան բաղձանքը գիտութեան կամ պատուոյ բաղձանքին չափ բնական է մարդու, եւ թէ աս կողմանէ գրեթէ կը հաւատարի անօթութեան եւ ծարաւութեան անհանգիստ զգացումները ունեցած առեմնիս ուտելիքի եւ խմելիքի բաղձալնուս:

Աս զօրաւոր հակամտութեան դրդամբը եւ առաջնորդութեամբը՝ մարդիկ ոչ միայն ներկայ շարիքէն կը փախչին եւ ներկայ բարիքին կը դիմեն, այլ եւ ապագային գէպքերուն ալ նախատես ըլլալով՝ հանդերձ եւ բնակարան կը պատրաստեն, շտեմարաննին կը լեցընեն գալու կարօտութեան օրերու համար եւ շատ ուրիշ միջոցներ կը բանեցընեն կենաց երկարութեան՝ առողջութեան եւ հանգստութեան համար: Բարերար նախախնամութիւնով եղած բան մըն է աս, որ իրենց կենացը պաշտպանութեանը եւ բարեկեցութեանը հարկաւոր եղած նախաը-

Հակամիտութիւնք :

գուշութիւնները ընելու մասին միայն տրամաբանութեան օրէնքին թելադրութիւններուն կապուած չեն, այլ աս հաստատուն եւ յարակայ սկզբունքին իշխողութեամբը միշտ գործելու կը դրդուին եւ կ'առաջնորդուին: Այլ արժան է աս խօսքն ալ եւելցընել, թէ աս բաղձանքը ոչ միայն արտաքին եւ մարմնաւոր ափոփանաց նայելով կը գործէ, այլ նաեւ ներքին մտիթարութեանց նկատմամբ, ինչպէս են աս կեանքիս մէջ կրօնքին տուած ազդումները եւ մտիթարութիւնները եւ կրօնական հաւատքով գալու կեանքին հետ կապակցած այն փառաւորագոյն երանութեան նախատեսութիւնը:

Սակայն ասիկայ երբէք մտքերնէս հանելու չենք, թէ մեր երջանկութեան բաղձանքը՝ ուրիշ յիշած բաղձանքներնուս նման՝ պէտք եղած կանոնաւորութեան տակ առնուելու է: Մէկ մարդու մը խիղճը՝ թէ որ լուսաւորուած է նէ՛ կը ցուցնէ իրեն թէ ինչ պարագաներու մէջ արտօնութիւն ունի իր անձնական բարեկեցութիւնը փնտռելու, եւ ինչ պարագաներու մէջ իր երջանկութեան բաղձանքը հնազանդեցընելու է հասարակաց բարւոյն եւ ընդհանուր բարեսիրութեան նկատողութիւններու:

### § 336 . Անձնասիրութիւն որոշեալ ինքնասիրութենէ:

Այլ երբ յիշուած պատճառներէն ուրիշ կարծիք չենք կրնար ընել՝ բայց եթէ աս, թէ երջանկութեան բաղձանքը կամ անձնական բարութեան հակամիտութիւնը մարդկային բնութեան մէկ ստորոգելիքն է: Ըստ կարծիքը ոչ միայն բնութեան լուսոյն ըրած թելադրութիւններուն համաձայն կու գայ, այլ մէկ ուրիշ եւ բարձրագոյն հեղինակութենէ մըն ալ հաստատութիւն ունի: Սուրբ Վիլբրը անձնական երջանկութիւնը չէ թէ միայն իրբեւ բարի բան մը կը ձանձնայ, հապա նաեւ անոր հետամուտ ըլլալը պարտք կը դնէ մեր վրայ: Իրաւ կը պահանջէ որ մեր ընկերը սիրենք, սակայն մէկ տեղ մը չ'կայ անանկ պատուէր մը՝ որ մեր անձնական բնութեանը արժան եղած նկատողութիւնը զանց առնելով կատարենք աս պատուէրը: — Ըսանկ մեր կազմութեանը մէջ տնկական եղող աս երջանկութեան բաղձանքը՝ աս պարզ եւ նշանական անունով յարմար կը դատենք կոչել *ինքնասիրութիւն*: Սակայն չենք ուրանար որ աս բառին նշանակութիւնը շատ անգամ սխալ կը հասկըցուի, եւ թէ նոյն իսկ բառը սրխալ գործածութեան ենթակայ է:

Ըսոր ասանկ ըլլալուն պատճառը աս իրական ճշմարտութիւնըն է, թէ յիշեալ սկզբունքը միշտ, եւ թերեւս պէտք է ըսել

ընդհանրապէս, արժան եղած կանոնաւորութեան եւ սանձահարութեան տակ չ'պահուիր, այլ յաճախակի մէկ թիւր ձեւի մը կը մանէ, որն որ զգուշութեամբ պէտք է որոշել անոր անմեղ կիրառութենէն: Տիրապէս Անձնասիրութիւնը ինքնասիրութիւնը չէ, այլ ինքնասիրութեան խանգարածը: Ինքնասիրութիւնը միշտ անմեղ է, եւ՝ պէտք եղած կանոնաւորութեանց տակը՝ բարոյապէս գովելի է՝ իբրեւ բանաւոր բնութեան մէկ ստորոգելիքը, եւ իբրեւ նոյն ինքն Աստուծմէ հաւանութիւն գտնող բան մը: սակայն անյնասիրութիւնը՝ ասոր հակառակ՝ միշտ մեղանշտկան է, վասն զի ուրիշ կերպով չըլլար՝ բայց եթէ առ այլս ունեցած պարտքերնիս զանց առնելով եւ Աստուծոյ կամքին գէմ գործելով: Ինչպէս որ ուղիղ փիլիսոփայութեան, նոյնպէս եւ բարոյականի եւ կրօնքի փաստին հարկաւոր է աս երեւելի որոշմունքը ընել: Ինքնասիրութիւնը սուրբ Աստուծոյ մը զբաժնակցունքն է: Իսկ անձնասիրութիւնը մարդուս իր ապստամբութեանը եւ մեղանշելու վայրկեաններուն անոր վրայ կանգնեցուցած նողակալի յաւելուած շէնքն է:

§ 337. Քննչեւոյսական մատենագրաց կարծիքներէն օրինակներ:

Վիւրին էր մեզի, եթէ հարկաւոր համարուէր, աս դիտուս մէջ եղած դիտողութեան մեծ մասին հաստատութիւն տուող հատուածներ մէջ բերել այնպիսի մատենագիրներէ, որոնց կարծիքը տարբերութեամբ ընդունելի են, եւ իրաւամբ արժան են այդպիսի ընդունելութեան մը: Քալմէր հեղինակին Մարդուս Ֆարոյական եւ Իմացական կազմուածքին վրայ մօտերս շինած գործէն այնպէս կ'երենայ՝ որ ինքը ստացման բաղձանքը մարդուս համարուն կը համարի: Սիւարդ ալ նոյն դիտողութիւնը կ'ընէ ինքնասիրութեան սկզբունքին կամ երջանկութեան բաղձանքին վրայ: Աս երեւելի նիւթին վրայ, որն որ մէկ քանի մասամբ շատ մօտ կապակցութիւն ունի յայտնեալ կրօնքին պահանջմունքներուն եւ պատուէրներուն հետ, հետեւեալ բացայայտ տեղեկութիւնը կը գտնենք Ուարտը հեղինակին մօտերս հրատարակած Վրիստոնէական Ֆարոյական ըսուած Վրքին մէջ:

«Ինչնասիրութիւնը ամէն բանաւոր արարածի բնութեանը մէկ էական սկզբունքն է: Ինքնասիրութիւնով անձնական պահանջութեան եւ բարեկեցութեան բաղձանք իմանալով: Որչափ որ աշխատի նէ մէկ մարդ մը չ'կրնար այնպիսի արարած մը երեւակայել, որուն կազմութիւնը առանց ասոր ըլլայ: Ամէն զգայական գոյութեան բնութեանը մէջ մէկ սկզբնական օրէնք մըն է

աս : Ղշմարիտ է թէ մարդուս վրայ ասիկայ , յատկապէս իր յագնալու աղբիւրն երուննկատմամբ , անանկ սկզբունք մըն է , որ անոր անկմանէն հէտէ թշուառաբար շատ խանգարած եւ նուաստացած է , հազարաւոր պարագաներու մէջ յետին աստիճանի անձնասիրութեան փոխուելով , եւ ամէն ատեն աս անարժան բաղձանքէն մաս մը իր մէջը ունենալով : Բայց սակայն անձնասիրութեան եւ օրինաւոր ինքնասիրութեան մէջ բացորոշ եւ մեծ տարբերութիւն մը կայ : Ինքնասիրութիւնը չորոշուի մեր բնութենէն իրրեւ անհարազատ եւ այլափոխեալ բան մը , այլ անոր բուն իսկ էութեանը մէջ տնկուած է՝ Երարչին ձեռքէն ելած ատենը : Իսկ անձնասիրութիւնը առջինին ապականեալը կամ խանգարածն է տիրապէս : Եսիկայ իր իշխեցող ազգեցութեանը տակն եղող արարածը կը շարժէ ինքզինքը իր ընկերէն եւ Ետուծմէ նախապատիւ դասելու , եւ այնպէս աս երկուքին ալ շահուն եւ պատուոյն չ'նայելով՝ ինք իր իրական կամ կարծեցեալ օգուտը փնտռելու : Ինդհակառակն ինքնասիրութիւնը այնքան արգարացի է , որ մեր առ ընկերս ունենալու ըզգացումներնիս եւ վարմունքնիս սահմանող աստուածային պատուիրանքին մէջ անիկայ իրրեւ կանոն մը սեպուած է՝ անով այն մեր վրայ դուրած պարտականութեան կատարումը չափելու . « Բու ընկերդ չուսնի՛ս պէս սիրես » : Ա երջուր ինքնասիրութիւնը , եւ ահա իսկոյն աստուածադիր օրէնքը բնաջինջ կ'ընես , զանիկայ անհասկընալի խօսքի մը փոխելով :

« Ստուգիւ աստուածային բանին եւ ոչ մէկ տեղը կը դանուի այնպիսի պատուէր մը , որ մեզմէ պահանջէ՝ ինչ եւ իցէ պարագայի մէջ՝ ինքզինքնիս մեր մէջը տնկական եղող այս սկզբունքէն մերկացընելու : Ե՛յլ ընդհակառակն լեցուն է զանիկայ ջատագովող զանազան տեսակ եւ կերպ կերպ բազմաթիւ խօսուածքներով . որոնցմէ են բոլոր անոր մէջ եղած սպառնալիքները , բոլոր խոստմունքները եւ բոլոր հրաւերները » :

§ 338 . Ընկերականութեան սկզբունքը մարդուս մտքին մէկ սկզբնական աստիճանն է :

Մարդուս ներսիղին տնկական եղող հակամիտութեանց մէկ ուրիշն ալ ընկերականութիւնն է : Մարդիկ բնականապէս ( ոչ թէ նախնապէս դաստիարակութեան ազգեցութիւններովը կամ շահու նկատողութիւնով , այլ ինքնիրեննուն եւ Բնականապէս ) իրենց նմաններուն ընկերութեանը բաղձանք մը ունին . ասիկայ իրենց մտքին մէկ ձգումն է , որն որ մէկ Ինքնասիրութեան բա-

ուով կ'իմացուի : — Վիտենք որ ընկերութեան բաղձանքը, ինչպէս նաեւ ուրիշ մէկ քանի բնածին հակամտութիւններ ալ, իբր լոկ ինքնասիրութեան եղանակաւորութիւնը կամ եղանակաւորեալը սեպած են ոմանք : Այս սակայն՝ իրական ճշմարտութեան որ կու գանք նէ, կը գտնենք որ ընկերութեան բաղձանքը նախ եւ առաջ ազգամամը կը գործէ, իբրեւ իր վերջին վախճանը իրնը պատակին ուղղուելով, իրեն գործողութենէն հետեւելիք հաճութեանը վրայ առանց ամենեւին նկատողութիւն մը ըլլալու : Բաղձանքին մէկ հանգամանքն է աս, ինչպէս որ տեսած ենք արդէն, որ իրեն առարկայ եղող բանին ձեռք ձգուելէն շատ կամ քիչ հաճութիւն յառաջ կու գայ : Այս ասիկայ՝ ինչպէս որ եւ իցէ սկզբան, նոյնպէս եւ ՚Նկերականութեան սկզբունքին յաջող կիրառութեանը համար ճշմարիտ է, վասն զի ասոր ալ բընութեանը մէկ մասը բաղձանքին տարրն է : Բայտ այսմ՝ իր յաջող կիրառութենէն ինչ հաճութիւն յառաջ գալը՝ մինչեւ անգամ մէկ դիպուածի մը մէջ՝ տեսնուելէն ետեւ, ալ կարելի է թէ կրկին անգամ ներդրութեան շարժուիլը՝ իրեն հետ մէկ տեղ գացող վայելչութեան նկատողութենէն ըլլայ աւելի, քան թէ իր կիրառութեանը սկզբնական պատճառ եղող բանէն : Ասանկ որ ըլլայ նէ յիշեալ սկզբունքին կիրառութիւնը, անատեն գէթ մէկ երեւութական պատշաճութեամբ մը անշնորհական կըրնայ ըսուիլ, սակայն ասիկայ յաւետ երկրորդական կիրառութիւն է, քան թէ նախնական. եւ սկզբունքին բնութեամբ ինչ բան ըլլալը չ'սյայտներ այնչափ, այլ մանաւանդ աս կը ցուցնէ՝ թէ երկրորդական կամ խանգարիչ ազդեցութիւններով ինչ վիճակի մէջ կրնայ մտնել : Ինքնին մտածելով՝ ընկերականութեան բաղձանքը անմեղ է եւ շատ օգտակար, առաջին կիրառութենէն ետեւ, արգարեւ կընայ ըլլալ որ անձնական շահու նկատողութիւններով ի գործ դրուի, այսինքն մեր երջանկութիւնը կամ հաճութիւնը փնտռելով. սակայն մինչեւ անգամ աս կերպ կիրառութիւնն ալ՝ ոմանց կարծածին պէս՝ պէտք չէ որ բարոյապէս չար համարուի, եթէ միայն այնպիսի կանոնաւորութեան մը տակ ըլլայ, որ ուրիշ սկզբանց արժանաւոր կիրառութեանը եւ պարտականութեան պահանջմունքներուն դէմ չ'գայ :

§ 339 . Ապացոյցք Ընկերականութեան սկզբունքին գոյութեանը :

ա. Հիշեալ Հակամտութեան գոյութիւնը նախ եւ առաջ կենաց կանոնի հասակներուն մէջ դիտածներնէս կը ցուցուի : Ս'էլը չ'կայ չ'գիտցող որ մանկունք եւ շատ փոքր տղաք սաս-

## Հակամատութիւնք:

տիկ յարիչ մը ունին իրենց ծնողացք եւ քովերնին եղող ուրիշ ներուճ, եւ մէկ բաղձանք մը կը ցուցընեն անոնց ընկերութեանը, եւ թէ որ քովերնէն երթան նէ՛ կը ներանան: Արբոր մինակ կը մնան, մինչեւ անգամ քիչ մը ատեն ըլլայ, մեծ ապերջանկութիւն կը զգան, որն որ երբեմն վախու կրնանք տալ, բայց շատ անգամ լոկ առանձնութիւններնուն իմացողութեանը եւ ընկերութեան բաղձանքնուն:

Արբոր ուրիշ մանկունք եւ տղաք, որոնց երեսը առաջուց չեն տեսած, քովերնին ընկեր կը բերուի, մէկէն աս հակամատութիւնը խնդումներնուն վրայ՝ որի առած շարժումներնուն եւ փալփուճ աչքերնուն վրայ կը տեսնուի: Աւ երբոր ըստ բաւականին կը մեծնան, դարձեալ կը տեսնենք որ միշտ ընկերութիւն կը փնտռեն. իրենց խողերը, պարտէզներու մէջ եւ անդին ասդին պտրտելին, ձկնորսութեան եւ ուրիշ որսորդութեանց երթալին, ամէնը ընկերութեամբ կ'ըլլայ. եւ թէ որ ուրիշներուն ընկերութենէն զիրենք զրկելով թող տաս որ աս զբօսանքները վայելեն նէ, ըրածդ իրենց աչքին առջեւը պատիժէ մը վար բան չըլլար:

Բ. Աս հակամատութիւնը, որ այսչափ ուժգնութեամբ տղոց վրայ կը տեսնուի, կը շարունակէ մնալ եւ իր գոյութեանը որոշ ապացոյցները կը ցուցընէ չափահասներուն եւ ծերերուն վրայ ալ: Իրաւ է որ անոնք որ տարօք յառաջացած են, իրենք իրենց մէջ զբաղանաց նիւթ եղող բաներ աւելի գտնելուն համար, կրնան տղոցմէ առաւել միայնակ առանձնութեան հանդուրժել ընդհանրապէս: Պակայն թէ չափահասութեան եւ թէ կենաց որ եւ իցէ հասակներուն մէջ աս շատ յայտնի բան է որ մարդկութեան յատուկ տարրը (որ անով միայն մեր կարողութիւնները կրնան բացուիլ եւ մենք երջանիկ կրնանք ըլլալ) ընկերութիւնն է՝ ինչ եւ իցէ ձեւով մը եւ աստիճանաւ մը: Ասոր համար են այն ընտանեկան եւ խնձոյից եւ խրախուժեանց ժողովները, այն յիշատակութեան հանդէսները եւ տօնախմբութիւնները, այն կրօնական՝ գրադիտական եւ քաղաքական ժողովները, որոնք աշխարհիս ամէն կողմը շարունակ կ'ըլլան ամէն ժողովուրդի մէջ, եւ որն որ գրեթէ իրենց շնչած օդին կամ հանապազօրեայ կերակուրներնուն չափ հարկաւոր ըլլալ կը թուի:

§ 340. Աս սկզբունքին գոյութեանը վրայ ուրիշ բացատրութիւններ:

Ե. Նշափ զօրաւոր է աս սկզբունքը՝ որ եթէ մարդիկ իրենց ներմաններուն ընկերութենէն զրկուելու ըլլան նէ, ստորին կարգի



կենդանեաց հետ ընկերութիւն մը ծագեցընելով կ'աշխատին իւրենց բնութեան պահանջմունքը լեցընել . որ ասիկայ ընկերութեան բաղձանքին մարդուս ներսիդին ոչ միայն բնածին բան մը ըլլալը, այլ շատ մեծ զօրութիւն ունենալն ալ մշտաբար կը հաստատէ : ( ) րինակի աղագաւ՝ Պարոն Դրէնք իր երկարատեւ եւ աղէտալի բանտարգելութեանը մէջ թշուառութիւնը քիչ մը դիւրացընելու համար աշխատեց է մուկ մը ընտանեցընելու, եւ ընտանեցուցեր է ալ : Մուկը, իր պատմութեանը նայելով, չէ թէ միայն կու գայ չորս դին կը խաղայ ու ձեռքէն բան կ'ուտէ եղեր, այլ տարօրինակ նշաններ ալ կը ցուցընէ եղեր խորագիտութեան եւ սիրոյ :

Սղիւարդ ճիշդ աս նոյն նիւթին վրայ ըրած բացատրութիւններուն մէջ հետեւեալ պատմութիւնը կը գնէ : « Լուի Ժ՛Վ՛ Լօզէն կոմսը բանտը կը գնէ ինը տարուան համար Փիկնեքօրի բերդը փոքր սենեակի մը մէջ, ուր ամենեւին լոյս չ'մտներ եղեր՝ բաց ի տանիսէն մէկ նեղ բացուածքէ մը : Ըս իր առանձնութեանը մէջ կոմսը մամուկ մը կը գտնէ իրեն ընկեր, ատեն մը անոր հետ խաղալով կը մխիթարուի՝ զանիկայ ընտանեցընելու աշխատելով, ճանձով կերակրելով եւ ոստայնին ապահովութեանը հոգ տանելով : Բանտապետը կ'իմանայ մամուկին հետ զօսուելը, կը սատկեցընէ կենդանին . կոմսը ետքէն կ'ըսէ եղեր որ ան միջոցին մայր մը զուակ մը կորսնցուցած ատենը ինչ սրբտի ցաւ կ'իմանայ, անանկ սաստիկ կսկծեց սիրտս կենդանւոյն սպաննուելուն վրայ » :

Ըս նոյն բանը բացատրող ասոնց նման ուրիշ աւելի մօտ ատեններու պատմութիւններ կան Սիլվիօ Բէլլքօ անուն մատենագրի մը հրատարակած հետաքրքրական գրքոյկին մէջ, որն որ իր Տասը Տարուան Բանտարգելութեան պատմութիւնն է : « Մարդկային ընկերակցութենէ գրեթէ բոլորովին զրկուած ըլլալուս համար, կ'ըսէ տեղ մը, օր մը պատուհանիս մէջ պտտող քանի մը մրջիւններու հետ բարեկամացայ, զանոնք կերակրեցի . ելան գացին, ու շատ չանցած խուռն բազմութիւն մը եւ կան առջեւս նոյն տեղը լեցուեցան, իբր թէ զիրենք հրաւիրող մը ըլլար : Մամուկ մըն ալ կար, շքեղ ոստայն մը փռած քովս պատին վրայ, որուն շատ անգամ մէկերներու եւ ճանձերու խնձոյք կ'ընէի, որոնք ինծի շատ նեղութիւն կու տային, եւ զորոնք անիկայ ինծմէ շատ աւելի կը սիրէր : Ըս կենդանին սյնալի սովորեցաւ ինծի, որ զիս տեսած ատենը ամենեւին չէր փախչէր . կը վազէր կու գար անկողինիս վրայ ու ձեռքէս այն իրեն գերազանց ուտելիքները կ'առնէր կը տանէր » :

Ընդամ մը՝ սովորականէն աւելի կարեկցութիւն ցուցընող բա-

Հակամիտութիւնք :

րեկամ մը իրեն պցելութիւն ընելէն ետեւ՝ կ'աղաղակէ, «Կնտոր զարմանալի, ինտոր անդիմադրելի բաղձանք է միայնակ բանտարգեալին իր տեսակէն մէկուն երեսը տեսնելու բաղձանքը: Ընկիւյ բնական ապշան մը կը փոխուի, իբր թէ խելագարութեան եւ անոր սովորական արդիւնքը եղող անձնակործան ըլլալու հակամիտութեան առջեւը առնելու համար: Վրիստոնէական կրօնքը, որ մարդկայնութեան վրայ եղած դիտողութիւններով պնչափ լեցուն է, մոռցած չէ բանտարգեալին տես երթալը իր համրած գթութեան գործքերուն կարգը դասելու: Սէկ մարդու մը լոկ տեսքը, իր կարեկից նայուածքը, իր իբր թէ քեզի հետ բաժանորդ ըլլալու եւ քու ծանր բեռանդ մէկ մասն ալ ինք վերցընելու յօժարութիւնը, մինչեւ անգամ եթէ գիտնաս ալ որ քեզի մէկ օգուտ մը ընել ձեռքէն չ'գար նէ, քու գառնութեան գաւաթիդ անուշութիւն մը կը խառնէ»:

§ 341 . Ընկերականութեան սկզբունքին քաղաքական ընկերութեան հետ ունեցած վերաբերութիւնը:

Եսսպիսի դիտողութիւններով՝ է որ աս մեր հիմակուան քրննութիւններնուս նիւթ եղող սկզբունքը մարդուս մտքին համարուն կը ծանչնանք: Եթէ շատ անգամ կը տեսնենք որ մարդիկ մէկմէկու դէմ կ'ելեն, իրարու յաջողութեան կը նախանձին, եւ մէկը մէկալին վնասը կը փնտռէ, ասիկայ իրենց բնական բերմունքը պէտք չէ սեպել, այլ մանաւանդ գէթ շատ բաներու մէջ սըխալ ըմբռնումներու արդիւնք: Ինչ որ ամէն դէպքի մէջ իրենց վէճ կամ հակառակութիւն ըրած մարդոց վերաբերական վիճակը հասկընալու ըլլային, եւ մասնաւորաբար թէ որ իշխանութեան վրայ դրուած մարդոց բոլոր գէշ ազգեցութիւններէն ազատ մնալին, մարդոց մեծ մասը պիտի տեսնէին որ ընկերականութեան սկզբունքը յաջողութեամբ իր գործը յառաջ կը տանի կոր իրենց մէջ՝ այն գրգռութեան եւ վիճմունքի պատճառներուն դէմ, որոնք այլ եւ այլ բաներէ շատ անգամ կը ծագին:

Ես նիւթիս վերջաբանութեանը մէջ արժան է որ մէկ երկու խօսք խօսինք նաեւ շօպս հեղինակին եւ անոր համախոհներուն այն արտաւոց կարծիքին վրայ, թէ մարդս ընկերութեան վիճակի մէջ որ կը մնայ նէ՝ միայն Վաղաքական Ընկերութեան վախէն է, որ բռնական կերպով իշխանութիւն կը բանեցընէ: Եսս մատենագիրները մեզի աս կ'ուզեն հասկըցընել, թէ ընկերական վիճակը միօրինակ պահողը բանտը՝ սուրբ եւ կախաղանն է: Երկրպայութիւն չունինք որ Վաղաքական Առաջաբարութիւնը՝ ար-

Բարեստեաց կերք :

Քան եղած տնօրինութեամբը՝ աղէկ ազդեցութիւն ունի, մինչեւ անգամ իշխանութիւն բանեցընելովը : Աւ սակայն միանգամայն աս ալ իրական ճշմարտութիւն մըն է, թէ Վաղարշական Մեծերութիւնը ասկէ տարբեր եւ ամէն կողմանէ լաւագոյն հիմ մը ունի հաստատութեան : Մեծերութիւնը իսկ մտքին կազմութեանը վրայ հիմնեալ է, ընկերականութեան սկզբունքին անջնջելի ներգործութիւններուն վրայ : Այսօր է թէ աս սկզբան բերմունքները երբեմն ընդգիմակալ եւ ներհական ազդեցութիւններէ ժամանակ մը կը խափանին. բայց սկզբունքն ինքը ոչ երբէք՝ առողջ մտքերու մէջ՝ բնաջինջ կրնայ ըլլալ : Այսին զի ասիկայ է մարդկութեան այն մի միայն տարրը, որով որ մեր կարողութիւնները կը բացուին, եւ ինչ բանի համար որ հաստատուեր են նէ՝ այն վախճաններուն հասնելու համար կը գործեն :

## ԳՂՈՒԽ • Ե

## ԲԱՐԵՍՏԵԱՅ ԿԻՐՔ

§ 343 . Կրից բաղաատրէն ունեցած աստիճանին վրայ :

ՊԵՏՐ Է յիշել թէ բաղձանաց բնութեանը վրայ մեկ քանի ընդհանուր ծանօթութիւն ընելնէս ետեւ, առաջարկեցինք որ բնական զգացողութեանց Բարեստեաց մասը՝ շարժութեանց մասէն որոշելով՝ աս երկրորդական բաժանումներովը հետադատենք, այն է՝ Բնական Մեծերութիւնը, Երկրորդականը, Հակամիտութիւնը եւ Կրիք : Երկրորդականը մեր նպատակին հարկաւոր սեպածնուս չափ բնեցինք. հիմայ կը մնայ մեզի վերջինին վրայ պէտք եղած զիտուութիւնները ընել :

Կրիքերը ուրիշ կերպ բաղձողական զգացողութիւններէ կ'որոշուին նախ աս հանգամանքով՝ որ անոնցմէ աւելի յօգուածոյ են, եւ երկրորդ աս պարագայով՝ որ մեր անոնց վրայ ունեցած պատուոյ համարումներնուս մէջ միւսներէն բարձր են

Բարեատեաց կիրք :

աստիճանաւ . բացի ուրիշ երկրորդական կամ ստորակարգեալ որոշիչ նշաններէ կամ հանգամանքներէ , զորոնք պիտի տեսնանք զանոնք զատ զատ քննութեան առարկայ ըրած ատեննիս : — Ինտոր ըլլալը բացատրելը դժուար է , բայց անանկ ըլլալը անտարակուսելի իրողութիւն մըն է , որ մեր քննութեանը այլ եւ այլ մասերուն վրայ մտաւոր տեսութեամբ նայած ատեննիս , անոնց վրայ տարբեր տարբեր աստիճանաւ պատուոյ զգացում կ'ունենանք . որը շատ պատուով կը նկատենք , եւ որը քիչ : Ըստ պատուոյ աստիճանաւոր առաւելութեանը կողմանէ աս իրական ճշմարտութիւնը կը գտնենք՝ որ ընդհանրապէս ախորժակները աստիճանաւ մը բարձր կը սեպուին բնական ազգումներէն , եւ հակամիտութիւնները երկուքէն ալ վեր կը դասուին : Իսկ Կիրքերը , մասնաւորաբար Բարեսէր կիրքերը , որոնք աւելի բարձր աստիճան ունին , եւելօք մեծ պատուով կը նկատենք : Ըստնք յայտնապէս ցանկին գլուխն են . եւ երբոր ասոնց ալ քննութիւնը լինցունենք , ալ ուրիշ բսելքնիս չ'մնար Բնական Օգացողութեանց կանոնաւոր եւ սովորական ներգործութիւններուն վրայ : — Ընատենը ալ ազատութիւն կ'ունենանք ուրիշ եւ աւելի նշանաւոր կարգէ մը եղող նիւթերու հետազոտութեանը պարապելու :

§ 313 . Կրից յօդուածոյ բնութեանը վրայ :

Կիրքերը , Լսորժակաց եւ Հակամիտութեանց աննման՝ զանոնք իրենց նախնական կամ սկզբնական կիրառութեանց վիճակին մէջ նկատելով , պարզ մտաւոր հանգամանքներ չեն , այլ յօդուածոյ : Ըստ այսմ՝ Կրք անունը մտաւոր հանգամանք մը կը ցուցնէ , որուն մէկ մասը ճշմարիտ է թէ՛ միշտ մէկ պարզ շարժութիւն մըն է . սակայն միանգամայն որ եւ իցէ լոկ պարզ շարժութենէ կը տարբերի՝ մաս մըն ալ Բողոքոս ըսուած մտաւոր հանգամանքէն իր մէջն ունենալով : « Ի՞նչն կիրքի բաղադրութեանը մէջ , կ'ըսէ Քէյմս , ուրիշ բան չ'գտնուիր , բայց եթէ միայն շարժութիւն մը՝ հաճելի կամ անհաճոյ , եւ անոր հետ մէկտեղ կցուած բաղձանք մը » :

Կիրքերը երկու կարգ կը բաժնուին , Բարեսէր եւ Բարեատեաց կիրք . թէպէտ եւ աս կարգաւորութիւնը բոլոր իր մասնաւոր նկարագրութիւններուն մէջ գլուխ տանիլը ամեն կողմանէ դիւրին բան չէ : Բարեատեաց կիրքերը՝ իբրեւ ընդհանուր բան մը՝ անհաճոյ շարժութիւն մը կը բովանդակեն , անոր հետ մէկտեղ շարեաց քաղձանք մը միացած՝ անհաճոյ շարժութեան

Բարեսիրական կիրք :

պատճառ եղող առարկային դէմ : Բարեսիրական կիրքերը՝ ա-  
սոր հակառակ՝ ըստ մեծի մասին հաճոյական շարժութիւն մը  
կը բովանդակեն, անոր հետ մեկտեղ բարութեան բաղձանք մը  
կցուած՝ հաճութեան պատճառ եղող բանին վրայ : Բայց սա-  
կայն աս երկու կարգերը իրարմէ որոշող զատող բանը իրենց  
բովանդակած շարժութեանց տեսակը չէ այնչափ, այլ մանա-  
ւանդ անոնց հետ մնացած բարիքի կամ չարիքի բաղձանքն է :  
— Ըս բաժանումը մեզի հիմն ընելով յառաջ պիտի երթանք  
աս նիւթիս քննութեանը մէջ :

§ 84 . Յասման կամ բարութեան վրայ :

Բարեսիրական կիրք առաջինն որ դիտողութեան պիտի բե-  
րենք, (որն որ բոլոր միւս բարեստեաց կիրք հիմը կամ ար-  
մատը կրնանք անուանել,) Յասումն կամ Բարութիւնն է :  
Ըս կիրքը բոլոր ուրիշ կիրք նման յոգուածոյ է բնութեամբ,  
եւ իր մէջը կը բովանդակէ անհաճոյ կամ ցաւալի շարժութիւն  
մը, եւ անոր հետ մեկտեղ բաղձանք մը տհաճութիւն կամ  
ցաւ տալու ան բանին՝ որուն վրայ որ շարժուած է : Ըսոր մէջ  
եղած բաղձանքը կ'երեւնայ թէ չափով մը շարժութեան հա-  
կառակամասն է. այսինքն երբոր ուրիշներուն իրական կամ  
կարծեցեալ ապօրինաւոր մէկ դործին պատճառաւ անհաճոյ  
կամ ցաւալի շարժութիւն մը կ'ունենանք, մենք ալ բնականա-  
պէս կը բաղձանք՝ այսպիսի պարագաներու տակ ծագող սրտ-  
մտութեան կիրառութիւնովը անոր նման ցաւալի զգացման հա-  
տուցում մը ընել պատճառ եղող անձին կամ ներգործողին :  
Բայց աս երկուքը փոփոխակի իրարու հակառակամասն են ը-  
սելով ճաստատել չենք ուզեր, թէպէտ եւ այնպէս երեւնայ  
թէ այսպիսի ճաստատութեան մը պատճառներ կան, թէ մէկ  
մէկու ճիշդ եւ կոպտաբար համեմատական նմանութիւն մը ու-  
նին :

Յասման այլ եւ այլ եղանակաւորութիւնները կան, որոնք  
մէկմէկէ այնքան որոշ են՝ որ դիւրաւ զատ զատ դիտողութեան  
առարկայ կրնան ըլլալ, եւ իրարմէ որոշ անուններով ըսուե-  
լու արժան են, ինչպէս Յասմնատութիւն կամ Բարկացոտու-  
թիւն՝ Խէթ կամ Խիթումն եւ Սրէթանդրութիւն : Ըսոր  
իրենց յատուկ տեղը, թէպէտ կարելի եղածին չափ համառօտ  
կերպով, պիտի քննենք : Ըիմայ պէտք է մեզի աս առջեւնիս  
եղող կիրքին վրայ քիչ մը աւելի երկարօրէն ծանօթութիւն  
տալ, որն որ բոլոր միւսներուն հիմը եւ ծագման աղբիւրը  
կրնանք սեպել մէկ նիւթաւոր մտքով մը :

§ 345 . Բացատրութիւնք ազգական ցասման վրայ :

Կիրքերը՝ աս կողմանէ Մտորժակաց եւ Հակամտութեանց նման ըլլալով՝ երկու կերպ ներգործութիւն ունին, ազգական եւ կամաւորական . մէյմը յանկարծ եւ առանց խորհուրդի կը գործեն, մէյմ՝ ալ մտածութեամբ եւ մտքին խոհական զիտաւորութիւններովը : — Ըստ այսմ՝ մեր ալ տալու տեղեկութիւնները նախ եւ առաջ ազգական ձեւով եղող ցասման վրայ պիտի ըլլայ : Ըս կերպ ցասման առիթները բոլոր այն բաներն են, որոնք մնաս մը կամ նեղութիւն մը կու տան մեզի, արուած մնասը կամ նեղութիւնը թէ դիտմամբ ըլլայ՝ թէ առանց դիտման : Ա՛նասի մը փորձառու եղածնուս պէս իսկոյն ցասումնիս կը շարժի . աս փոխարինական շարժման արագութիւնը կը նմանի փայլակին յանկարծական լուսաւորութեանը . մարդուս խորհուրդը որչափ արագութեան որ ընդունակ է նէ՛ այնպէս սաստիկ արագութեամբ անանկ շուտ կը զրգրուուի, որ զգացուած մնասին ու անկէ հետեւած ցասման մէջ տեղը ամենեւին բան մը մտնելու ժամանակ չ՛մնար : Ըսանկ պարագաներու մէջ ի հարկէ անհնարին է որ ցասումնիս կանոնաւորենք աս մտածելով՝ թէ արդեօք զգացած կամ իմացած մնասնիս դետմամբ էր թէ չէ : Ըս ցասումը գրգռողը մի միայն մնասն է՝ ինքնին խորհելով, առանց անոր հետ եղող պարագաները մտածելու :

Ըս ըսածնուս համեմատ ազգական ցասման օրինակներ քիչ չեն պատահիր : Ըս տեսակ ցասման ազդեցութիւնովն է որ դիպուածով քարէ մը կամ փայտի կոճղէ մը մնաս մը կըրող տըղեկը վայրկենական բարկութիւն մը կը հեղու այն անկենդան բանին վրայ . որ վայրենին զինքը վերաւորող նետը կը կոտորտէ, ու ոտքին տակը կ՛առնէ կատաղութեամբ վրան կը կոխկուտէ . եւ որ մարդիկ կրած որ եւ իցէ նեղութիւններնուն մէջ՝ դրեթէ ընդհանրապէս յանկարծական եւ որոշ տհաճութիւն մը կը գտնեն ներսիդինին շարժած ան նեղացուցիչ բանին վրայ :

§ 346 . Ազգական ցասման օգուաներուն եւ բարոյական որպիսութեանը վրայ :

Ազգական ցասման սկզբունքին մարդուս ներսիդին զրուելուն նպատակը կամ վէճքն պարճաւոր աս կ՛երեւնայ՝ որ անիկայ մէկ պաշտպանութիւն մը ըլլայ իրեն, յանկարծական եւ անակնկալ

արկածներու մէջ : Տրամաբանութեան կարողութիւնը բաղդատորէն շատ ծանր կը գործէ . եւ թէ որ մեր բնութիւնը այնպէս կազմուած ըլլար որ հարկ ըլլար մեզի ամէն ատեն անոր ներգործութիւններովը ըլլալու ուրոշումներուն սպասել ու հապա գործել , քանի քանի դիպուածներու մէջ ազգական ճգանց ձեռքը ունենալու պաշտպանութիւններնէս զուրկ կը մնայինք : Ըսկէ յառաջ կու գայ յիշեալ սկզբունքին աս ձեւոյն գործնական կարեւորութիւնը :

Ըս տեղեկութիւնն ալ կը յաւելունք , թէ ազգական ցասումը բարոյական որպիսութիւն չունի : Բարոյական բնութեան փառքն է աս , որ՝ եթէ ներելի է ըսել՝ իմացական բնութենէն անդին է տեղը . եւ թէ՛ առանց նախ եւ առաջ շատ կամ քիչ իմացական ներգործութիւն ըլլալու՝ ինք չ'գործեր եւ չ'կրնար ալ գործել : Ուրիշ խօսքով՝ խղճին բնութիւնը այնպէս կազմուած է՝ որ իրեւ իրեն ներգործութեան հիմն այն բանին եւ անոր վերաբերութիւններուն հմտութիւնը կը պահանջէ , որուն վրայ իր վճիռը պիտի տայ . որ աս հմտութիւնը միայն իմացականութեան իմացող եւ բաղդատող ներգործութիւններովը ձեռք կը ձգուի : Բայց սակայն ազգական ներգործութեան արագութիւնը այնքան սաստիկ է , որ ամենեւին ատեն չ'թողուր իրեն գրգռմանը պատճառ եղող բանին վրայ պէտք եղած հմտութիւնը ստանալու . եւ որովհետեւ աս կերպով խղճմանքին ալ ճանաչող եւ որոշող ներգործութեանը պատեհութիւն չ'մնար , վասն որոյ չենք կրնար ըսել թէ ազգական ցասումը բարոյապէս չար կամ բարի է :

§ 347 . Կամաւորական ցասման վրայ , ազգականէն որոշելով :

Ըս կիրքին երկրորդ՝ եւ՝ գործնական եւ բարոյական նկատմամբ՝ աւելի նիւթաւոր ձեւը Կամաւորական Յասունն է : Երբոր ազգական ցասում ունեցած ատեննիս անոր պատճառը կը փնտռենք . եւ անոր եւելնալուն կամ պակսելուն փաստեր երեւան կը հանենք , անատեն կը կարողանանք անոր ներգործութիւնը եղանակաւորելու , եւ անոր կամաւորութեան կամ պատասխանատուութեան որպիսութիւն տալու :

Ազգականէն տարբերող խոհական կամ կամաւորական ցասման տիրապէս առիթը անկրտստ-էլեւնն է , որ ստիկայ լոկ փնտէ կամ նեղութենէ կը զանազանի : Ըսյինքն՝ Կամաւորական ցասումը , երբոր բնութեան դիտումներուն համեմատ ի գործ կը դրուի նէ , չէ թէ միայն յառաջ եկած փնտար կամ նեղութիւնը կը նկատէ , այլ նաեւ զանիկայ գործողին շարժառիթը կամ դիտա-

Բարեատեաց կերք :

ւորութիւնը : Բզդական ցասման վերջին պատճառը կամ նպատակը անմիջական պաշտպանութիւն է, եւ ասկէ իզատ ուրիշ բան մը չերեւնար թէ կայ իր դիտմանը մէջ : Իսկ կամաւորական ցասման վերջին պատճառը ոչ միայն պաշտպանութիւն, այլ արդարութիւն ալ է : Ուրիշ խօսքով՝ դիտաւորութիւնը պաշտպանութիւն ընել որ է նէ, ատ բանը ձեռք բերել կ'ուզէ ոչ մէկ ուրիշ կերպով մը՝ բայց միայն կատարեալ վայելչութեան եւ արդարութեան համեմատ : Ուստի աս տեսակ ցասումը, ըստ արժանոյն եւ օրինաւոր կերպով գործած ատենը, իր ընելու հատուցումը կը տնօրինէ՝ չէ թէ միայն կրուած վնասը՝ կորուստը կամ նեղութիւնը նկատելով, այլ զլսաւորապէս վնասին կամ նեղութեան պատճառ եղողին ան բանը ըրած ատենը ունեցած զգացումներուն նայելով :

Իստ այսմ՝ բարոյական որպիսութիւն միայն կամաւոր ցասման վրայ կայ : Թէ որ գրգռուած ցասման եւ անոր պատճառին մէջ կատարեալ համեմատութիւն ըլլայ նէ, ուրիշ խօսքով՝ թէ որ ցասումը արդարութեան պահանջածին ճիշդ համեմատ գալու որ ըլլայ նէ, իրաւացի է : Բայց թէ որ աս ճիշդ համեմատութենէն քիչ մը անդին անցնելու ըլլայ նէ, անիրաւ կ'ըլլայ : Բ. սիկայ պսպէս կը հաստատենք աս ենթադրութեամբ՝ որ բանը լոկ բնութեան լուսոյն օգնութիւնովը կը քննենք կոր, առանց Սուրբ Գրոց : Թէ որ Քրիստոնէական տնտեսութեան մէջ ատ տնտեսութեան յատուկ եղող բարձր եւ սուրբ պատճառներով կը պահանջուի մեզմէ որ այնպիսի ցասմանական զգացումներ ալ նուաճենք, որոնք առանց ատ պահանջմունքներուն իրաւամբք կրնային ի կիր առնուլ, ատ պարագայով բանը յայտնապէս ուրիշ կերպարանքի կը մտնէ :

§ 348 • Բարիութեան չափազանցելու ձգումը, եւ անոր բնական ասնձահարութիւնները :

Քիչ սկզբունք կայ մարդուս բնութեանը մէջ՝ որ, իրօք եղածին նայելով, ցասման կիրռէն աւելի ներգործուն ըլլայ : Եւ թէպէտեւ, լոկ բնութեան սկզբունքներուն վրայ խորհելով՝ առանց Սուրբ Գրոց զրած ներողութեան պատուէրը նրկատելու, շատ բաներու մէջ կրնանք արդարացընել իր խոհական եւ կամաւորական կիրառութիւնը, սակայն՝ ամէնը մէկէն նկատելով՝ պէտք է ընդունիլ որ ասիկայ մասնաւոր կերպով կարգէ դուրս ելլալու եւ չափազանց սաստկանալու ենթակայ



կիրք մըն է : Ըստ անգամ կը պատահի որ մարդիկ անանկներու վրայ բարկութեամբ կը բորբոքին, որոնք՝ եթէ պատահած բանին բոլոր պարագաները աղէկ եւ անաչառապէս քննուելու ըլլար նէ՝ պիտի տեսնուէր որ ամենեւին անպարտ են այնպիսի վարմունք մը ընդունելու :

Չափազանց եւ անիրաւ ցասման յաճախութեանը մէկ պատճառը աս իրական ճշմարտութիւնը կը գտնենք, որ կրած նեղութիւններնուս կամ կորուստներնուս պատճառովը՝ բոլոր խորհուրդներնիս մեր մտած վիճակովը կ'առնուին կամ անոր կը դառնան, եւ շատ դժուար կը գտնենք մեր կարծեցեալ հակառակորդին ըրած բանին բոլոր պարագաները եւ շարժառիթները պէտք եղածին պէս կ'առաջատելու : Եթէ կարող ըլլայինք խորհուրդներնիս մեզմէ դարձընել, այնպէս որ աղէկ մը քննելու պատեհութիւն ունենայինք ան մեզի եղած բանին բոլոր պարագաները, որն որ՝ ինքնին նկատելով՝ մեզի այնպէս վնասակար ենք գտեր, շատ անգամ մեր բարկութեան սաստիկութիւնը շատ կրնայինք իջեցընել յօժար կամօք, եթէ բոլորովին չ'ապիսանէինք ալ նէ :

Սակայն բնութիւնն ինքը աս կիրքին անարժան կիրառութեանը դէմ քանի մը սանձեր դրած է : — Ասի, աս կիրքին կիրառութիւնը բուն իսկ իր բնութեամբը ցաւալի է : Աս կողմանէ շատ կը տարբերի բարեսէր կրից կիրառութենէն, որն որ հաճութիւն կուտայ ենթակայ եղողին : Այնչափ մեծ է խորհրդածեալ եւ յերկարեալ բարկութեան հետ մէկտեղ եղած ցաւը, որ քիչ անգամ չ'պատահիր որ կիրքերնին ելած մարդիկ կ'ըսեն թէ բարկանալովնին հակառակորդներուն ներսիդին պատճառած ցաւերնէն աւելի իրենք իրենց մտքին մէջ նեղութիւն կրած են : Ինտութիւնը կ'երեւնայ թէ աս պատիժը այս կիրքին կիրառութեանը հետ կապեր է. որպէս զի ամենայարմար ատենին յիշեցընէ մարդոց՝ իրենց կիրքը սանձահարելու հարկաւորութիւնը :

Երբ որ ցասումնիս պէտք եղած չափը կ'անցնի, անատեն հասարակութեան զգացումները, որ առաջ մեր վրայ աղէկ էին նէ, մեզի դէմ կը շարժին : Իսկ մենք այնպէս ստեղծուած ենք որ բնականապէս ուրիշներուն բարի համարմանը կը բաղձանք. եւ հետեւաբար այդ բարի վարկման կորուստը մեզի իբրեւ պատիժ մը կու գայ, եւ շատ անգամ իբրեւ սաստիկ պատիժ : Աս պատահական փոխարինութեան փորձառութեանը կամ նախատեսութեանը ազդեցութենէն քիչ անգամ չ'պատահիր որ մարդիկ բարկութիւննին արժանավայել սահմաններէն անդին չ'են անցըներ, որ եթէ ուրիշ պարագաներու մէջ որ եղած ըլլային նէ հաւանականաբար պիտի չափազանցէին :

Երբ որ բարկութեան կիրքին տեղի տալը ինքզինքնիս մեր

Բարեաստեաց կիրք :

աչքին առջեւը նուաստացընել է, եւ եւս առաւել ուրիշներուն առջեւը, որոնք այնչտի մտադիւրութեամբ չեն ընդունիր այն մեղմացուցիչ պարագաները, որոնցմով մենք մեզի մեր այն զգացումները ըստ մասին կը ջատագովենք: Բարկութեան լոկ արտաքին նշանները քստմենքի կու գան մեր զգացումներուն, եւ ատելի են մեզի. ուր ընդհակառակն անոր ներհակը եղող կրից արտաքին ցուցմունքները մարդուս հոգւոյն վրայ խաղաղական առաւօտեան բերկրալիր լուսոյն պէս կը ծագեն: Բարեսիրութեան ժպիտը սրտերնուս կիրքերուն վրայ կը տիրէ՝ զանոնք որսալով. իսկ բարկութեան խոժոռ հայեցուածքը, թէ մեր վրայ ըլլայ՝ թէ ուրիշներուն ցաւ եւ սոսկումն կու տայ մեզի: Եւ ասկէ իզատ՝ քանի որ բարկութեան տեղի տալը իրբեւ ընդհանուր բան մը՝ անոր ենթակայ եղողը կը նուաստացընէ մեր աչքին առջին, միանգամայն աս ալ կայ՝ որ անոր մօտենալուն յաջողութեամբ՝ դէմ դնողներուն եւ խաղաղ ու անխռով սրտով վնասներու եւ անիրաւութեանց մէջ երկայնամիտ եղողներուն վրայ մեծ պատուով եւ յարգանք կը նայինք:

§ 349 . Բարկութեան կիրքը սանձահարելու եւ նուաճելու ուրիշ պատճառներ :

Ընդթեան ինք իր կողմանէ բարկութեան կիրքին՝ վրայ դրած սանձերուն վրայ արժան է հոս մէկ երկու ուրիշ դիտողութիւններ ալ եւելցընել, բանականութենէ եւ Սուրբ Կորնէնելյաձ, որ անոնք ալ՝ եթէ իրենց արժանաւոր եղած աղբեցութիւնը ունենաննէ՝ նոյն բարի վախճանին կը ծառայեն: — Եւ Կախ եւ առաջ պէտք է որ աս միշտ յիշողութիւններնուս մէջ ըլլայ, թէ մարդուս միտքը՝ երբոր կիրքով կը յուզի՝ ատ պատճառաւ մեծ չափով կը կորսնցունէ իրմէն ուղիղ գատաստան ընելու կարողութիւնը: Եւ յիշ ժամանակը իրբեւ զգացմանց եւ բնաւորութեանց յայտնութիւնք նկատուած գործքերը բուն իսկ իրենց լուսովը չեն երեւնար աչքերնուս: Իրբեւ թէ գէշ միջոցի մը մէջէ տեսնուածի պէս կ'ըլլան, եւ բնական կերպարանքներնէն այլակերպած՝ ծուռումուռ եւ այլաբունեալ երեւոյթներով առջեւնիս կը ներկայանան: Կ'ըսուի թէ Սոկրատէս անգամ մը մէկ առիթով մը իր սպասաւորին այսպիսի խօսք մը ըսած ըլլայ, թէ եթէ բարկացած չըլլայինէ պիտի ծեծէի քեզ. որ աս տեղեկութենէն աս կը հասկըցուի՝ թէ Սոկրատէս կարծիքն այն է եղեր որ բարկութիւնով տաքցած գլուխը բարկութեան առարկայ եղողին արժանաւորութեանը կամ անար-

ժանաւորութեանը վրայ ուղիղ դատաստան ընելու անյարմար վիճակի մը մէջ մտած կ'ըլլայ :

բ. Երկրորդ՝ մինչեւ անգամ թէ որ մեր դատելու կարողութիւններուն վրայ չվստահանալու մասնաւոր պատճառ մը չբացատրենք ալ նէ, աս պէտք է որ մտածենք՝ թէ կարելի է որ, դէթ հնարաւորութեամբ, սխալ շարժառիթներ տուած ըլլանք ան անձին, որն որ մեզի վնաս ըրած կը սեպենք : Կրնայ ըլլալ որ անոր վրայ հաստատած յանցանքնիս կամ մեղքերնիս առջոց խորհելով եւ դիտմամբ եղած ըլլայ, այլ լոկ անզգուշութեամբ եւ անխոհեմութեամբ : Սինչեւ անգամ հնարաւոր է որ անոր դիտումները մեր աղէկութեանը համար եղած ըլլան, փոխանակ՝ մեր կարծածին պէս՝ մեր գէշութեանը համար ըլլալու : Եւ թէ որ անանկ ըլլայ ալ նէ, թէ որ եղած վնասը դիտմամբ է ալ նէ, աս ալ հնարաւոր է, որ անոր այն վնասակար դիտաւորութիւնները մեր բարուցը եւ ըրածներուն վրայ լրջութեամբ եւ ծանրութեամբ ծուռ ըմբռնումներ ունենալէն ծագած ըլլան, որ աս բանիս մէջ ամենազիւրիս եւ ամենալաւ ճամբան այն սխալ ըմբռնումները շիտկելն է, որ ասանկով կրնանք գալիքին համար ապահով ըլլալ, եւ՝ շատ հաւանականաբար՝ անցեալին ալ փոխարէնը ընել :

գ. Աւրիշ գիտողութիւն մըն ալ կայ, որ ան ալ հարկադրելու է մեզ աս կիրքին տեղի չտալու, եւ անոր ներգործութիւնը բարեխառնելու : Եւ է այս, որ բոլոր մարդիկ Մտուածոյ առջեւը յանցաւոր եւ Մտոր ներողութեանը կարօտ են : Թէ որ մենք կարող ըլլայինք կատարեալ վարուց ամբժուութիւն ունեցողի պէս պարծիլ, անատեն ուրիշներէն իրենց ունեցած պարտքերուն կատարեալ գործադրութիւնը եւ անյողգողք արդարութիւն պահանջելնիս քիչ մը պատշաճութիւն կ'ունենար : Սակայն բանը ասկէ շատ տարբեր է : Ըմէն իր սիրտը ճանչցող մարդ տեսնելու եւ զգալու է որ ինք մէկ օրինազանց մըն է Մտուածոյ առջեւը : Աստի ինք իր վիճակին պարագաներուն որքան անպատշաճ բան է ան մարդուն ըրածը, որ ցասմամբ փոխարինութիւն եւ վրէժխնդրութիւն ընելու իրաւանցը վրայ կը կայնի մեծ մեծ կը խօսի, ու ինքն իսկ ամէն ատեն այն մեծ Եւակին երկայնմտութեանը եւ ներողութեանը կարօտութիւն ունի, որուն դէմ այնքան բազմաթիւ անգամ յանցաւոր զըտնուած է :

դ. Սուրբ Վրոց մէջ շատ խօսքեր կան, որ կը պահանջեն մեզմէ բարեստեաց կամ շարակամ կիրքերնիս նուաճել, եւ անոնց յուզմանը պատճառ եղող անիրաւութեանց ներել : Եւ ասիկայ, աս տեղը առիթ մը կը սեպենք մեզի ծանուցանելու :

Բարեասեաց կիրք :

Թէ, Աւետարանին յայտնութեանը մէկ մեծ եւ նշանաւոր առանձնական հանգամանքն է : Թշնամին սիրելու եւ անոր բարիքն ընելու վարդապետութիւնը յայտնապէս Վրիստոնէական օրէնսդրութիւնը բոլոր ուրիշ օրէնսդրութիւններէ կ'որոշէ, եւ լոկ մարդկային դրութիւններու հետ բաղդատմամբ՝ զանիկայ անբացատրելի բարձր աստիճանի մը կը հասնէ : Անոր պատուէրն աս է . « Եւսր էք որ ըսուեցաւ , քու ընկերդ սիրես ու թըշնամիդ ատես : Բայց ես ձեզի կ'ըսեմ , սիրեցէք ձեր թշնամիները . օրհնեցէք ձեզ անիծողները . բարիք ըրէք անոնց որ ձեզ կ'ատեն , եւ աղօթք ըրէք անոնց համար , որ ձեզ կը չարչոյկեն ու կը հալածեն » :

§ 350 . Եղանակաւորութիւնք ցասման : Բարկացոտութիւն :

Այբոր՝ բոլոր սովորական դէպքերու մէջ՝ ցասման զգացումը ինքզինքը կը յայտնէ , սա այլ եւ այլ անուններով կը յորջորջնք ցատումն , բարկութիւն , զայրացումն , սրտմտութիւն , ատելութիւն եւ այլն : Սակայն աս զգացման մէկ քանի եղանակաւորութիւնները կան , որոնք կամ ուժգնութեամբ եւ կամ նուազութեամբ եւ կամ ուրիշ կերպով մը կը տարբերին , եւ ամէն մէկը զատ եւ որոշ որպիսութիւն մը ունին : Ասոնց մէկն է Հասմնոտութիւնը կամ Բարկացոտութիւնը . չարակամ կրից աննկ մէկ տեսակն որ հաւանականաբար սաստկագոյն եւ որոշ ցասմանէ աւելի յաճախ մարդուս խաղաղութիւնն ու երջանկութիւնը կը վտարէ :

Հասմնոտութիւնը սովորական բարկութենէ կը տարբերի ամենայն ոչինչ պարագաներէ շարժուելովը եւ ամէն իր դէմն ելած մարդուն կամ բանին վրայ իր ներգործութիւնները թափելու տարօրինակ զիրապատրաստութիւն մը ունենալովը : Հասմնոտ մարդը ըսենք թէ մէկ ոչինչ ձախորդութեան մը հանդիպեցաւ , ( որչափ փոքր բան ըլլայ նէ հոգ չէ , ) օրերով խաղաղութիւնը կը վրդովի . երեսը ամենեւին չ'ինդար . ամէն բան , կենդանի՝ անկենդան , բանաւոր՝ անբան , կարգէ կանոնէ դուրս ելած կը թուին իրեն եւ իր խէթոտ զգացումներուն արհամարհանացը ենթակայ կ'ըլլան : — Բարկութիւնը՝ ըստ սաստկագոյն եւ որոշ ձեւոյն՝ որոտմունքով եկած կարճատեւ անձրեւի կը նմանի , որ մութը չորս դին պատելով եւ ահարկու կերպով մը կու գայ , ու կ'անցնի կ'երթայ ետեւէն պսոթառ ու յստակ օդ մը յաջորդելով : Իսկ ցասմնոտութիւնը երկինքէն ցողող նսեմ եւ աղօտ մառախուղի նման է , որ քիչ

աստիճաններն ունի, բայց շատ երկարատեւ է: Ինչհամար պէտք է աս կերպ ցատումը սաստիկ բարկութենէն աւելի անպատշաճ եւ անիրաւ է, եւ ստուգիւ անկէ աւելի անհաճոյ պիտի գար տեսնողին, թէ որ շատ անգամ՝ իրեն պատճառ եղող բանին հետ ունեցած անհամեմատութենէն՝ կարի ծաղրալի չերեւնարնէ:

§ 351 . Եղանակաւորութիւնը ցասման : Ախտանձ :

Ցասման յոյժ ստէպ տեսնուած ձեւերուն մէկն ալ՝ Ախտանձն է: Աս բառով սովորաբար կ'ուզենք իմացընել (երկրորդ նշանակութենէն որոշելով՝ որ է նախանձաւորութիւն բարի) ան չարակամութիւնը կամ ատելութիւնը, որ կը ծագի ուրիշին գերագունութիւնը տեսնելէն: Ախտանձը՝ լոկ իբրեւ մտաւոր հանգամանք մը մտածելով՝ ցասման մէկ թիւրութիւնը սեպելու ենք. սակայն՝ իր ծագման առիթներուն նկատմամբ՝ աս ալ պէտք է եւեցընենք թէ ամենաանարգ եւ արհամարհելի մէկ թիւրութիւնն է: Չկայ մէկ կիրք մը որ ասոր չափ հաշեցընէ եւ մաշեցընէ իրեն ենթակայ եղողը, ինչպէս որ ասանկ ըլլալը իր ատելութենէն ալ կրնանք գուշակել. եւ չկայ անանկ կիրք մը, որ ասոր չափ դատապարտուած ըլլայ արգարութեան վաճիռներովը:

Եթէ հարցուելու ըլլայ՝ թէ ինչէն է որ լոկ ուրիշին աւելի բազրաւոր վիճակի մէջ ըլլալը կամ եւելօք յառաջագիմութիւն ընելը տեսնելէն ըստ ինքեան բարի երեւցող կիրքին ասանկ մէկ զգուելի թիւրութիւնը կը պատճառի կոր ներսիդինիս, աս կ'ըսենք՝ թէ հաւանականաբար ասոր մեկ պատճառը Ինքնասիրութեան սկզբունքին անկանոն եւ անկարգ ներգործութիւնը պիտի ըլլայ. Սարգիկ յաճախակի այնքան սաստիկ անձնասէր կ'ըլլան, որ ուրիշներուն իրենց վայելածին հաւասարապէս մասնակից ըլլալը չեն քաշեր, ուր կը մնայ որ երբոր անոնց իրենցմէ աւելի լաւագոյն բազրի վիճակիլը տեսնեն նէ՝ չգփուարին ու չչարանան: Այլ ճիշդ աս մտաւոր հանգամանքն է ան՝ որ վախելապէս կ'ըսուի՝ Ախտանձ կամ Ախտանձաբեկութիւն:

§ 352 . Եղանակաւորութիւնը ցասման : Խիթուսն :

Ցասման կիրքին այլ եւս ուրիշ եղանակաւորութիւնները կան, որն որ՝ նիւթաւոր մտքով մը՝ չարակամ կրից ամէն տեսակին արմատը կրնայ սեպուիլ: Ասոնց կարգէն է Խիթուսն

Բարեատեաց կիրք :

կամ Խէլ ըսուածք, որն որ կը բովանդակէ իր մէջը սկսող առարկայ եղող մէկէ մը պատճառեալ ցաւալի շարժութիւն մը, անոր հետ մէկտեղ բաղձանք մըն ալ կապակցած՝ ան պատճառ եղող առարկային շարիք հատուցանելու : — Աս կիրքին առանձնական հանգամանքն եղող պարագան աս է, որ իր բոլոր դառնութիւնն ու ատելութիւնը անանկ մէկու մը վրայ կը հեղու, որ խէթոտ անձին սիրածն է : Ան կասկածոտ նախանձորդութիւնն որ շատ անգամ համբաւոյ եւ իշխանութեան հետամուտ եղողներու մէջ կ'ըլլայ, երբեմն խիթումն կ'ըսուի, աս կիրքին հետ ունեցած վերաբանութեանը պատճառաւ : — Խէթոտութեան այլ եւ այլ աստիճանները կ'ըլլան, լոկ անվտանգութենէ եւ արթուն կասկածոտութենէ առնելով ինչուան իր բարձրագոյն աստիճանի ուժգին գրգռումները : Ինչհամարպէս աս կիրքին ուժգնութիւնը անոր առարկայ եղող անձին վրայ եղած վարկման աստիճանին համեմատ կ'ըլլայ . եւ թերեւս աւելի յաճախ անոնց ներսիդին կը շարժի, որոնց հպարտութիւնը շատկեկ է ուրիշներէն : Այսպիսի մարդիկ՝ ունակաբար իրենք զիրենք ուրիշներէն բարձր դասելուն պատճառաւ, շատ չնչին զանցառութիւններու վրայ եւելոք նկատողութիւն կ'ունենան, եւ զանոնք իրենց մէյմէկ ապացոյց կ'ընեն դիտմամբ եղած արհամարհութեան եւ զանցառութեան . որ եթէ ուրիշները ըլլային նէ, ան բաները ամենեւին չ'պիտի դիտէին, եւ իրենց գէշ նշաններ պիտի չ'բեւային անոնք :

Աս կիրքին ազդեցութեանը տակն եղողը անոր առարկայ եղողին բրածներուն վրայ ուղիղ դատաստան չ'կրնար կտրել մտքին մէջ . ամէն բանի դիտողութիւն կ'ընէ, եւ ամէնն ալ ծուռ կողմին կը մեկնէ . եւ այնպիսի պարագաներ, որ ուրիշին աչքին անմեղութեան նշաններ են, ինք անոնք յանցանքի ապացոյցներու պէս կ'առնէ : Անոր համար իրաւամբ ըսուած է աս խօսքը, թէ խէթոտ մարդը այն հրէշն է՝ «որ իր կերած միսն ինք կը ստեղծէ». վասն զի ամենաչնչին բաները իրեն ծանր մտածութեան նիւթ կ'ընէ, մինչեւ անգամ թէ որ խիստ անկեղծ սերէ շարժուած բաներ ալ ըլլան, ու անոնցմէ կը հանէ մէկ անհեթեթ սարսափելի յորինուած մը, որ ան ալ յաջորդաբար իր այն շարաշուք կիրքին ճարակ մը կ'ըլլայ, որիկց որ առեր էր իր գոյութիւնը :

Աս տեղեկութիւնն ալ տանք յիշեալ կիրքին վրայ, որ ատեն ատեն յոյժ կը սաստկանայ : Անոր ենթակայ եղողին սիրտը աս վայրկեանին ամենայն սիրոյ եւ քաղցրութեան զգացմամբ կը վառի . հետեւեալ վայրկեանին անոր փոխանակ ատելութեան յուզմունքներով կը լեցուի . մէյմ'ալ յանկարծ զըղ-

մամբ սիրտը կը կոտորի : Շարունակ սիրոյ եւ ատելութեան ծայրերուն մէջ կ'երթայ ու կ'ու գայ, եւ հանգիստ չ'գիտեր . իր կիրքին առարկայ եղողին կորուստը կ'ուզէ, որն որ միանգամայն ամենէն եւել ինք կը վախնայ որ չ'կորսնցունէ, եւ որն որ ատեն ատեն ամենէն եւել ինք կը սիրէ :

§ 353 . Եղանակաւորութիւնք ցասման : Վրէժխնդրութիւն :

Յասման մէկ ուրիշ երեւելի եղանակաւորութիւնն ալ Վրէժխնդրութիւնն է : Վրէժխնդրութեան ոգի ըսելով ընդհանրապէս կը հասկընանք մէկ բաղձանք մը ոչ միայն վշտակրութեան փոխարէն վշտակրութիւն հատուցանելու, այլ եւ արդարութեան ճիշդ պահանջմունքէն անդին անցնելով՝ մէկ յաւելեալ ցաւ մը տալու ան անձին, որ մեզի վնաս հասուցած կը սեպենք : Ենպէս որ վրէժխնդրութիւնը կ'երեւնայ թէ յաւետ աստիճանաւ կը տարբերի ցասմանէ, քան թէ տեսակաւ : Այս սակայն իրաւ է թէ ընդհանրապէս լոկ ցասումէն ի զատ ուրիշ բան մ'ալ ունի մէջը : Վրէժխնդրութիւնը ընդհանրապէս մէկ ցուրտ կերպարանքով մը եւ խորհրդածութեամբ իր դիտաւորութիւնները կը կազմէ . եւ իր թշնամական դիտումները գործքով կատարելուն կողմանէ այնքան յարատեւութիւն ունի, որքան որ զանոնք ձեւացուցած ատենը ծանր յառաջ գացած է նէ : (Ինչ որ ցասումը ըստ արժանոյն կանոնաւորեալ ըլլալու պայմանաւ՝ բնութեան ըսկըզունքներովը բարոյապէս բարի կրնանք սեպել նէ, վրէժխնդրութիւնը՝ որ ցասման անզուսպ կամ անկարգ ձեւն է՝ միշտ բարոյապէս չար է : Ենանկ կիրք մըն է աս, որ ոչ միայն մարդու մտքին ուրիշ կարողութիւններուն արժանաւոր կիրառութեանը շատ դէմ կու գայ, այլ եւ լուսաւորեալ խղճէ եւ Սուրբ Վրքէն ալ հաւասարապէս դատապարտեալ է :

§ 354 . Երկիւղէ կիրքին բնութիւնը :

Կրից աս մասին վրայ քննութիւններնիս վերջացրենք աս մէկ նիւթին վրայ ալ համառօտ դիտողութիւն մը ընելով : Երկիւղը բոլոր միւս քննած կիրքերնու նման կը բովանդակէ պարզ ցաւու շարժութիւն մը, անանկ առարկայէ մը պատճառեալ, որն որ մեզի վնաս մը պիտի տայ կ'ակնկալենք, եւ ատ ցաւալի շարժութեան հետ մէկտեղ՝ ան առարկայէն կամ անոր վնասակար ներգործութիւններէն փախչելու բաղձանք մը : — Ըստ աս խնդիրը

կրնայ ծագիլ, եւ անպատշաճութեան երեւոյթ մը չունի, թէ արդեօք Արկիւղը՝ աս տուած սահմաննուս նայելով՝ Բարեատեաց կրից ընդհանուր բաժանման տակ դատուելու է: Աւմենք ալ մարդկային կիրքերը բարեսէր եւ բարեատեաց անուններով երկակի բաժանու մով մը բաժնած ատեննիս՝ աս կարգաւորութիւնը բոլոր իր մասնաւոր նկարագրութիւններուն մէջ ամէն մասամբ գլուխ տանիլը դիւրին բան չէ որ ըսինք նէ, գիտումներնուս մէջ ունեցած պարագաներնուս մէկն ալ աս էր: Ավերայ այսր ամենայնի՝ երկիւղի պատճառ եղող բանին տեսութենէն ցաւ զգալնիս, եւ՝ անոր հետ մէկ տեղ ան բանէն փախչելու բաղձանք ունենալնիս, որ ասիկայ իրական ճշմարտութիւն մըն է, շատ յստակ կերպով աս դաղափարը կու տայ՝ թէ ան բանը քիչ կամ շատ ատելութեան առարկայ կ'ըլլայ մեզի. ուրիշ խօսքով՝ թէ շատ կամ քիչ չարակամութիւն կ'ունենանք ան բանին վրայ: (Թէ որ մէկ իր մը անանկ բնութիւն մը ունենայ) որ ներկայութենէն ներսիդինիս ցաւ պատճառելու ըլլայ նէ, աս ստոյգ է որ ան բանը կը սիրենք չենք կրնար ըսել: Այնպէս որ գէթ այսչափը բնդունելու ենք, թէ աս երկիւղի կիրքը բնականապէս բարեատեաց կրից բաժանմանը տակ կ'երթայ աւելի, քան թէ միւս գասին:

Սակայն մենք նոյն իսկ նիւթին բնութեամբ ինչ բան ըլլալուն քննութեանը գանք: Արկիւղին զօրութիւնը կամ սաստիկութիւնը ըմբռնեալ չարիքին համեմատ կ'ըլլայ: Ամէն մարդու վրայ մէկ չէ աս կիրքին բնածին ընդունակութիւնը, եւ հետեւաբար այդ ընդունակութեան ուժգնութիւնը մէկ մարդու մը վրայ ինչ աստիճան ըլլայ նէ, վախու մէջ անոր ունեցած չարիքի ըմբռնումըն ալ այն աստիճան կ'ըլլայ, որ ըսել է թէ անոր զգացած վախըն ալ անոր համեմատ կ'ըլլայ: Սակայն մեր վրայ պիտի գայ կարծած չարիքներնուս աստիճանին վրայ ունեցած դաղափարներնիս մեծցնող կամ պզտիկցնող պատճառները ինչ որ ըլլան նէ, այն մեր ձեւացուցած դաղափարն ու ներսիդինիս ծագած վախու կիրքը իրենց համեմատութիւնը միշտ կը պահեն:

Երբոր աս կիրքը յոյժ սաստիկ կ'ըլլայ, խղճին ներգործութեանցը կիրառութիւնը կախ կը թողու, եւ ինչ եւ իցէ կերպ ուղիղ դատումն ընելը կ'արգիլէ: Շատ մեծ զօրութիւն ունեցող կիրք մըն է, եւ արդարեւ հետը խաղալու բան չէ: ( ) Գտակար տեղեկութիւն մը կրնայ ըլլալ ասիկայ ծանուցանելնիս, թէ մարդիկ եղած են որ մէկ յանկարծ վախնալով մը, եւ ան ալ թերեւս խաղու պատճառաւ, խիստ տառապեցուցիչ եւ մնայուն մտաւոր խանգարման հանդիպած են: — Այն դէպքերուն մէջ ուր որ նախատեսեալ չարիքը շատ մեծ կ'երեւնայ, ու անկէ



Բարեսէր կիրք :

ինչ եւ իցէ կերպով մը փախչելու յոյս մըն ալ չըլար նէ, ա-  
նատեն միտքը սյն վիճակին մէջ կը մտնէ, որ կը կոչուի Յոսո-  
կարոս-Բիւն : Սակայն սա ցաւազին մտաւոր հանգամանքին վրայ  
աւելի պատշաճ կ'ըլլայ որ Անկարգ կամ խանգարեալ Օգտցո-  
ղութեանց բաժանմանը տակ դիտողութիւն ընենք, մեր նպատա-  
կին հարկաւոր եղած ծանօթութիւնները հոն տալով :

ԳԼՈՒԽ • Թ.

ԲԱՐԵՍԷՐ ԿԻՐԵ

§ 355 • Սիրոյ կամ Բարեսիրութեան բնութեանը վրայ ընդհան-  
րապէս :

ԳԼԲԶՐՆԵՆՔԻ դիտողութիւննիս այժմ կրից միւս մեծ բա-  
ժանմանը : Ինչպէս որ Յասման սկզբնական տարրը Բարեա-  
տեաց կրից հիմն է, նմանապէս Սէրն ալ՝ իր եւելօք ընդհանուր  
ձեւով՝ ան կիրքերուն հիմը կ'երենայ՝ գէթ իբրեւ անոնց ամե-  
նուն ընդհանուր բան մը ըլլալով, որոնք որ միւսներէն որոշ-  
մամբ Բարեսէր կ'ըսուին : Սիրոյ կիրքը՝ բոլոր ուրիշ կրից նման՝  
յօդուածոյ է բնութեամբ, իր մէջը բովանդակելով նախ՝ հաճոյական  
չարժութիւն մը մէկ բանէ մը պատճառեալ . եւ Երկրորդ՝ բարու-  
թեան բաղձանք մը ան բանին վրայ : — Ընոր համար սիրոյ ա-  
ռարկայ եղող բանը, ինչ որ է նէ, Հաճութեան շարժութիւն  
գրգռելու կարող եղող որպիսութիւն մը ունենալու է, թէ ձե-  
ւոյ գեղեցկութիւն ըլլայ, թէ վերաբերութեանց ընտրութիւն,  
թէ իմացական կարողութեանց գերազանցութիւն, թէ բարոյա-  
կան հանգամանաց պատուականութիւն, եւ կամ թէ ասոնց ա-  
մէնը մէկտեղ : Ըս շարժութիւնը իրեն ետեւէն եկող բաղձան-  
քին հիմն է, սակայն տիրապէս կիրք ըսածնիս կաղմոզը շարժու-  
թեան եւ անոր յաջորդ բաղձանքին կատարեալ եւ անլուծանելի  
կապակցութիւնն է :

Բարեպետ կիրք :

Արժան է հոս ծանուցանել՝ թէ աս կիրքին շատ զանազան եղանակաւորութիւնները կան . ինչպէս է լոկ բարեկամական նկատողութեան եւ յարգութեան անբարբոք զգացումը , բարեկամութեան (բառը իր աւելի սովորաբար ընդունուած նշանակութեամբը առնելով) բորբոքեալ եռանդը , եւ անձնանուէր յարմար աւելի սաստկագոյն զգացումը : Միայն աստիճանի տարբերութիւնները չեն , այլ նաեւ բոյն իսկ կիրքը՝ լոկ իր բնութեանը նկատմամբ մտածելով՝ իր ներգործութեան այլ եւ այլ պարագաներուն համեմատ եղանակաւորուած ու այլ եւ այլ կերպարանքներ առած կերբեւնայ : Տղայոց իրենց ծնողացը վրայ ունեցած սէրը մէկ քանի մասամբ տարբեր է քոյրերնուն եւ եղբայրներնուն վրայ ունեցած սէրերնէն : Ղանողաց իրենց որդւոցը ցուցուցած սէրը այնպիսի նուրբ որպիսութիւն մը ունի , լեզուով բացատրելու դժուար , այլ Գիտակցութեամբ իմանալի , որով որ շատ կը տարբերի առ հասարակ մարդոց վրայ՝ կամ հայրենակիցներնուն վրայ եւ կամ բարեկամներնուն վրայ ունեցած սէրերնէն : Անոր համար մենք ալ արտօնութիւն ունինք՝ իրօք եղած զանազանութիւններուն համեմատ՝ բարեսէր կիրքերը աս հետեւեալ մասնաւոր բաժանումներովը հետազօտելու , այն է՝ Ղանողական սէր , Որդիական սէր , Եղբայրական սէր , Սարդասիրութիւն , Հայրենասիրութիւն , Բարեկամութիւն , Երաստագիտութիւն , եւ Կարեկցութիւն կամ Գուրթ :

§ 356 . Սէրը եւ իր այլ եւ այլ ձեւերը երկակի ներգործութիւն ունին :

Սէրը , ոչ միայն իր ընդհանուր ձեւովը , այլ նաեւ բոլոր այն կիրառութիւններովը հանդերձ , որոնք որ մեր եղած վիճակին եւ ունեցած առնչութիւններուն բերմունքէն կ'առնու , իրեն հակառակն եղող ցասման սկզբունքին նման երկու կերպ ներգործութիւն ունի : Երբեմն , մասնաւորաբար ծնողաց եւ տղայոց վրայ , կը տեսնենք որ Երկամբ կը գործէ . այսինքին առանց խորհուրդի կամ մտածութեան : Ուրիշ տեսններ շատ կամ քիչ կանոնաւորութեան ենթակայ կ'ըլլայ , տրամաբանութեան մտքերնու տեսութեանը բերած իրական ճշմարտութիւններովը եւ խորհրդածութիւններովը կամ գրգռուելով եւ կամ ճնշուելով . եւ ատ կիրառութեանը կ'ըսենք խորհրդածեալ կամ կամաւորական : Աս որպիսութիւնը կամ հանգամանքը , որ բնական զգացողութեանց ամենուն վրայ ալ կայ , այնչափ յիշեցինք՝ որ ալ հոս հարկ չ'մնար եւել խօսք ընելու :

§ 857 . Ծնողական սիրոյ կամ որդեսիրութեան վրայ :

Քարեսիրութեան եւ սիրոյ սկզբունքը , որուն վրայ՝ իր ընդհանուր ձեւովը առնելով՝ այսպէս համառօտ դիտողութիւն մը բրինք , Հասման բարեատեաց կիրքին նման այլ եւ այլ եղանակաւորութիւններ ունի , ինչպէս որ վերը ըսինք : Աս կերպաւորութեանց ամենէն երեւելիներէն մէկը Նոողական Սէրը կամ Որդեսիրութեանն է : Քարեսիրութեան կամ սիրոյ աս եղանակաւորութեանը վրայ մեր տեսութիւնն աս է , թէ անիկայ մարդուս մէջը բնածին կամ տնկական բան մըն է : Ի պաշտպանութիւն այս հետազօտութեանս քանի մը բան կրնանք ըսել :

ա . Ասիկայ կը հաստատուի նախ աս խորհրդածութիւնով , որ ծնողքին ու որդւոյն մէջ եղած առնչութիւնը ուրիշ որ եւ իցէ առնչութենէ աւելի մօտաւոր եւ անքակտելի է : Որդին իր ծնողքին աչքին առջեւը իբրեւ որոշ եւ անկախ էակ մը չէ այնչափ , այլ յաւէտ իբրեւ նոյն իսկ ինք իր գոյութեանը վերածնունդը կամ շարունակութիւնը կը թուի իրեն : Չէ թէ միայն իր անձին եւ բնաւորութիւններուն պատկերը կը տեսնէ իր սերունդին վրայ , այլ նաեւ իր ունեցած յոյսերուն՝ ուրախութիւններուն եւ հայեցումներուն անդրադարձութիւնն ալ . մէկ խօսքով՝ բոլոր իր գոյութեանը նմանութիւնը : Այսպիսի պարագաներու տակ գրեթէ անհնարին բան է որ Որդեսիրութիւնը ուրիշ որ եւ իցէ տեսակ սիրոյ չափ մարդուս ներսիդին հաստատուն արմատացած կամ անոր հոգւոյն բունին մօտը զետեղուած չըլլայ :

բ . Այսպիսի կիրք մը անհրաժեշտ հարկաւոր կ'երեւնայ , որպէս զի անով ծնողք կարողանան իրենց վրայ հարկադրեալ պարտքերը ըստ արժանոյն կատարելու : Նոողական առնչութեան հետ հարկաւորապէս կապակցած հոգերն ու սրտմաշուքները , անոնց կրած հանապազօրեայ անձկութիւնները , արթուն եւ բազմաշխատ խնամատարութեամբ անցուցած գիշերներնին , քաշած անթիւ վախերնին եւ արտմութիւններնին անհնար էր մարդկային բնութեան տանիլ՝ առանց մէկ տնկական սկզբան մը օգնականութեանը : — Ասոր համար է որ՝ բնութեան կարգադրութեամբը եւ կազմութեամբը՝ աս սկզբունքը անանկ անբացատրելի գեղեցկութեամբ կը ծագէ ծնողական սրտին վրայ : Անիկայ մրրկայոյզ ովկիանոսին վրայ ցաթած աստղի մը նման իր լոյսը կը հեղու անոր վրայ , եւ իր առաջնորդութեամբը համեմատաբար ապահովութեամբ յառաջ կը տանի զանիկայ :

Բարեսէր կիրք :

գ. Ըս կիրքին կամաւորականէն ի զատ աղբական ներգործութիւն ունենալուն իրական ճշմարտութիւնը՝ որ ամէն մարդ կ'ընդունի, անոր բնածին բան մը ըլլալուն հաստատութիւն տուող զօրաւոր պարագայ մըն է: Օչուտ կամական եղող կիրքը չ'կրնար՝ բանին բնութենէն՝ ընդաբոյս ըլլալ, վասն զի կամքին ներգործութենէն կախեալ է, եւ կամքին որոշումները ինչ որ ըլլան նէ՝ անոր համեմատ՝ կամ պիտի ըլլայ կամ պիտի չըլլայ: Իսկ աղբական կիրքը ուրիշ կերպ չ'կրնար ըլլալ, այլ հարկաւ ընդաբոյս ըլլալու է. վասն զի կամքէն անկախ ըլլալուն՝ զանիկայ հաստատութեան մէջ բռնելու համար բնութենէն ի զատ ուրիշ բան չ'մնար: Ըրդ՝ թէպէտ եւ աս կիրքը կամաւորական ներգործութիւն ունի, հետաքննութեան եւ տրամաբանութեան վերայ հիմնեալ, սակայն ունի եւս՝ իբրեւ իրեն հիմն՝ աղբական ներգործութիւն մըն ալ, որն որնոյն իսկ միտքը կազմակերպողին անոր մէջ դրած բանը սեպելու ենք: Ընսպէս որ թէպէտ եւ արժան է ըրած հաստատութիւններնուս հետ աս տեղեկութիւնն ալ կցել՝ թէ որդեսիրութեան կիրքը երկակի ներգործութիւն ունի, սակայն՝ զանիկայ իբրեւ ամբողջ նկատելով՝ իրաւամբք իբրեւ բնածին եւ ընդաբոյս բան մը կրնանք սեպել:

գ. Ըս կիրքին ընդհանրութիւնը անոր վրայ ըրած դիտողութիւններնուս հաստատութիւն տուող պարագայ մըն է: Ընդաբոյս չեղող եւ բացարձակապէս տրամաբանութեան եւ կամքին որոշումներէն կախեալ կիրքի մը համար բնականապէս պիտի ալկընկալենք թէ անոր կիրառութիւնը շատ անգամ խափանի պիտի: Եւ ասոր ասանկ ըլլալուն վրայ մինչեւ անգամ ստոյգ հաստատութիւն կրնանք ունենալ: Սակայն ծնողական սէրը իրօք չ'խանգարած եւ ոչ մէկ մտքի մը մէջէն երբէք կը վերնայ: Ըմէն կլիմայի եւ երկրի մէջ, ամէն կարգ մարդոց մէջ՝ որչափ ալ որ ցած վիճակի հասած ըլլան տգիտութեամբ կամ ապականած ըլլան մոլութեամբ, աս ազնիւ կիրքին նշանները՝ եւ՝ գրեթէ առանց բացառութեան՝ երեւելի եւ որոշ նշանները կը տեսնենք: Չ'կայ բոլոր մարդկային ազգին մէջ այն սատիճան վատթարութեան հասած մաս մը, որ իր սերունդին վրայ սէր չ'ցուցնողներէն զլուեղով երես չ'գարձընէ:

§ 358. Որդեսիրութեան կիրքին զօրութեանը վրայ բացատրութիւնք:

ե. Ըս սկզբունքին բնածին բան մը ըլլալուն հաստատութիւն տուող մէկ ուրիշ պարագայ մըն ալ անոր մեծ զօրութիւնն է: Երկրորդական ձիրքերը, կամ՝ անոնք՝ որ զուգորդութեամբ սկըզբ-

նականներուն վրայ կը շինուին, իրաւ է որ երբեմն սաստիկ զօրաւոր կ'ըլլան. սակայն ասիկայ միայն մասնաւոր անձանց վրայ կը տեսնուի, եւ ընդհանուր բան մը չէ: Իսկ աս մեր քննած կիրքը մէկուն վրայ զօրաւոր՝ միւսին վրայ տկար չենք գտներ, այլ՝ ընդհանուր խօսելով՝ միօրինակ ամէն մտքի մէջ զօրաւոր կը տեսնենք, եւ կարի զօրաւոր: Աս բանիս վրայ քիչ մը բացատրութիւն ընելնիս շահաւոր կրնայ ըլլալ, ինչպէս որ մտքին այլ եւ այլ մասերուն ներգործութիւնները բացատրող որ եւ իցէ իրական բանի համար աս ճշմարիտ է թէ բոլորովին մտադրութեան անարժան չըլլար: Սակայն աս կիրքը անանկ ընդհանուր ուժղունութիւն մը ունի, որ աս բանը բացատրելու օրինակ ամէն դիւցուն է: Ան որ ասոր վրայ գիտողութիւն ըրած չէ նէ, մարդկային բնութեան խիստ հետաքրքրական ցուցմունքներուն մէկուն վրայ կամու աչքերը դոցած ըլլալու է: Այնպէս որ մինակ մէկ օրինակ մը յիշելնիս, որուն ամէն մօր սիրտ հաստատութեան վկայութիւն կու տայ անշուշտ, մեր նպատակին հերիք կ'ըլլայ:

Վժայռս պատերազմական նաւը երբոր Առփօրոսի նեղուցը 1807ին բռնկեցաւ, աղէտալի տեսարան մը եղաւ խիստ սարսափելի: Ասուր մեծ էր, ու մէջը լեցուն մարդ, եւ այն միջոցին թշնամի մըն ալ վրան յարձակած. կործանումը կարծես թէ ահաբեկ կերպով բերանը բացած ամէնը մէկէն կուլ տալու վրայ էր: Ասուուն մէջ եղողներուն շատը յուսահատաւ էին աղատութենէ. մէկ տարրին ծախիչ ներգործութենէն կը փախչէին, միւսին ձեռքը զոհ կ'իյնային: Քանի որ հրկիւղութիւնը կատաղարար նաւուն չորս դին կը քալէր, եւ ահու ու դողու ճիշերով օդը կը թնդար, մէկ ողորմելի մայր մը, ինքզինքին վրայ աննկատ, անդին ասդին կը նայէր անձկանօք միայն իր մանկանը աղատութեանը ճար մը գտնելու: Ինք ամենեւին չէր աշխատեր փախչելու. այլ գրկի որդին պաշտօնատարի մը յանձնելով, որն որ անոր թախծագին աղէտանացը չ'գիմանալով՝ վերարկուին տակն առաւ: զանիկայ պաշտպանելու, եւ աչքը իր տուած սիրասուն աւանդին ետեւէն միշտ պտըտցընելով, հանգարտութեամբ կը սպասէր ան աղէտալի կատարածին, որուն որ պիտի հանդիպէին մնացածներն ալ իրեն հետ: Պաշտօնատարին այսպիսի արկածի մը ատեն ըրած ճիգերուն մէջ մասնակը սահեցաւ թեւին տակէն ինկաւ ծովը. դժբաղդ մայրը ասիկայ տեսնելուն պէս, որպիսի շուտորմն, ինք ալ ետեւէն նաւուն կողմ ի վար նետեց ինքզինքը ծովը, իրր թէ որդին աղատելու համար. խղճուեցաւ ու անյայտ եղաւ:

§ 359 . Որդիական սիրոյ կամ Ծնողասիրութեան վրայ :

Մեր աս համառօտիւ քննած հետաքրքրական եւ կարեւոր կիրքին իրրեւ հակառակամար բնութիւնը հաստատեր է Որդիական սէրը կամ Ծնողասիրութիւնը : Ծնողասիրութիւնը թէպէտ եւ մարդուս ներսիդին անկական եւ համարուն ըլլալուն կողմանէ համաձայն է Որդեսիրութեան հետ, սակայն քանի մը որպիսութեամբ անկէ կը տարբերի : — Ուրիշ տարբերութիւններէ ի զատ, այնպէս հասկըցուած է՝ թէ ասիկայ միւսէն վար է զօրութեան կողմանէ : Կը անտարակոյս իրական ճշմարտութիւնն ալ աս է, թէ ասիկայ՝ ընդհանուր առմամբ՝ անոր չափ բորբոքմամբ եւ անմեղկելի ուժգնութեամբ չ'վառիր իրեն առարկային վրայ : Մեր ալ՝ մարդկային միտքը ամէն իմաստութեան տէր Կակի մը արարչութիւնը սեպելով՝ աս բանիս մէջ ունենալու ակնկալութիւնը աս կրնար ըլլալ : Որդեսիրութեան կիրքին ծնողաց ներսիդին հաստատուելուն մեծ գործնական նպատակն աս է, որ անով անոնք կարողանան ան ծանր հոգն ու խնամքը իրենց սերունդին վրայ տանելու, որն որ անհրաժեշտ հարկաւոր է կենաց սկզբնաւորութեան ատենները : Ծնողաց առ որդիս ունեցած պարտքերնուն պատասխանատուութիւնը իր վերաբերութեանց զանաղանութիւնովը եւ ունեցած ծանրութիւնովը յայտնապէս աւելի մեծ է որդւոց առ ծնողս ունեցած պարտքերնուն պատասխանատուութենէն : Իրենց որդւոցը տրկարութեանը՝ նեղութեանը եւ կարօտութեանը հասնելու եւ զանոնք թէ մարմնաւոր եւ թէ մտաւոր չարիքներէ զերծ պահելու համար պէտք եղած շարունական խնամակալութեանը եւ բազմաշխատ հոգատարութեանը՝ որչափ որ կարող ենք դատել նե՛՛ ծնողք ուրիշ բանով չեն կրնար դիմանալ, բայց եթէ մինչեւ անգամ կենաց սէրէն աւելի զօրաւոր սկզբան մը յարաժամ արթուն ներգործողութեամբ : Սակայն տղոց նոյեւելով տարբեր է բանը : Իբրեւ ընդհանուր բան մը կրնանք ըսել, թէ ասանկ շարունական սրտմաշտոքի ու պահպանողութեան հարկադրութիւն չ'կայ ամենեւին իրենց վրայ՝ ուրիշ մէկէ մը եղած, գէթ իրենց կենացը կանխադոյն մասին մէջ : Ընոր համար իրենց առ ծնողս ունեցած սէրը, թէպէտ եւ բնութեան գիտմունքներուն բաւական եղածին չափ զօրութիւն ունենալը անտարակուսելի է, աւելի մեզմ' լոյսով մը կը փայլի :

§ 360 . Որդիական սիրոյն բնածին եւ ընդարդս ըլլալուն վրայ :

Նախընթաց հատուածին մէջ առիթ ունեցանք հարեւանցի կերպով մը ծանուցանելու թէ Օնոզասիրութիւնը Որդեսիրութեան նման սկզբնական եւ բնածին սկզբունք մըն է, եւ չէ թէ զուգորդեալ կամ երկրորդական կերպաւորութիւն մը: Մայց հոս ասոր վրայ մանրամասն քննութիւն ընելու միտք չունինք, եւ սակայն մէկ քանի խորհրդածութիւններ կան աս բանիս վերաբերութիւն ունեցող, զորոնք բոլորովին զանց ընել չենք ուզեր: — Տալու ծանօթութիւններնուս առաջինն աս է որ՝ եթէ ծնողասիրութեան կիրքը բոլորովին կամաւոր ըլլար, եւ չէ թէ ընդարդս, ուրիշ խօսքով՝ թէ որ բոլորովին տրամաբանութեան եւ խորհրդածութեան վրայ հիմնեալ ըլլարնէ, ասոր տարակոյս չ'կայ որ՝ հիմայ իրօք եղածէն շատ աւելի յաճախ պիտի մարէր որդւոց սրտին մէջ: Սակայն լոկ տրամաբանութեան եւ մտածութեան վրայ հիմնեալ չըլլալը յայտնի կ'երեւնայ սա իրական ճշմարտութենէն, որ մեք մեր ծնողացը վրայ ունեցած սէրերնիս կը շարունակենք այնպիսի պարագաներու մէջ, ուր որ եթէ միայն տրամաբանութեան խորհուրդ հարցնելու ըլլանք նէ, հաւանականաբար չ'պիտի թողու մեզ անոնց սէր ընծայելու: Ս'եր ծնողքները երբեմն կ'ըլլայ որ հետերնիս ծանր եւ բոլորովին անարժան արհամարհանօք վարուին, կ'ըլլայ որ մեծ մեղքերու ինքզինքնին տան, հասարակութեան աչքին առջեւ անարգ եւ վատահամբաւ ըլլան, եւ սակայն բնութեան պատրաստած մէկ տեղը կայ որ հոն, այսինքն իրենց որդւոցը սրտին մէջ միշտ անապական եւ բարձր յիշատակ մը կ'ունենան: — Ըս դիտողութիւնը (որն որ՝ արժան է ծանուցանել թէ՛ Որդեսիրութեան ալ հաւասարապէս կը յարմարի, եւ անոր վրայ խօսած հատուածնուս մէջ եղած դիտողութիւններուն ամբողջութիւն մըն է) քիչ մը քիչ հաստատութեամբ չ'ցուցնենք յիշեալ կիրքին ներքին եւ բնական սկիզբ եւ հիմն ունենալը:

Երկրորդ ծանօթութիւննիս որ պիտի տանք, աս է՝ թէ մարդիկ, կրնանք ըսել առանց բացառութեան, աս կիրքիս նուկատմամբ իրենց ըրած դատողութիւններովը եւ ունեցած վարմունքովը այնպէս կը ցուցնեն, թէ իրենք զանիկայ մէկ ընդարդս եւ բնածին բան մը կը համարեն: Տայտնի է թէ առ մէն մարդու ակնկալութիւնն աս է՝ թէ ծնողքներնուս հետ միշտ սիրով եւ համբերութեամբ պիտի վարուինք ամէն պարագայի մէջ: Թէ որ ուրիշ օտար մէկը մեզի վնաս մը կամ չարիք

մը հասցընելու ըլլայ, հասարակաց զգացողական խորհուրդը հաւանականաբար պիտի արգարացընէ մեզ, թէ որ ան անձին վըրայ պատիժ մը բերելու ըլլանք: Բայց թէ որ՝ ճիշդ եւ նոյն ցատու մն գրգռող պարագաներուն տակը՝ ան փոխարինական պատիժը ծնողքներնուս վըրայ բերելու ըլլանք, եւ կամ թէ աս պատճառաւ անոնց մէկ երեւելի անպատուութիւն մը ցուցընելու ըլլանքնէ, անատեն հասարակութեան կարծիքը փոխանակ մեզ պաշտպանելու՝ պիտի մեղադրէ՝ ըրածնիս բնութեան դէմ ըլլալուն համար: Օնողասիրութեան դէմ մեղանչողին համար, մինչեւ անգամ ծնողին ըրածը ստգտանելի գործ ըլլայ ալ նէ, բնութիւնը աս ահարկու պատուհասը սահմաններ է, որ բոլոր մարդիկ ոչ միայն անհաւանութիւն՝ այլ եւ արհամարհանք եւ զղուանք կը ցուցընեն անանկին վըրայ: — Եւ սիկայ յայտնի է թէ բնութեան գործն է: Իսկ բնութիւնը գիտենք որ երբէք ինքնիրեն չ'հակառակիր: Եւ թէ ինքը այս կերպով որոշ կ'իմացընէ մեզի թէ մենէ կը պահանջէ որ ծնողքնիս սիրենք, ձախորդութեան մէջ ալ՝ յաջողութեան մէջ ալ, պատուոյ մէջ եղած ատեննին ալ՝ անարգութեան մէջ եղած ատեննին ալ, բարի համբաւ ունեցած ժամանակնին ալ՝ վատ համբաւ ունեցած ատեննին ալ, ուրեմն յայտնի է թէ լոկ տրամաբանութեան եւ մտածութեան ձեռքը թողուցած չէ աս կիրքը, վասն զի անհնար է որ այսպիսի անփոփոխ սէր մը այդ եղանակաւ հաստատուն մնայ, այլ զանիկայ ազդական կամ բնածին հիման մը վըրայ կանգնեցուցած է:

§ 361 • Արդիական սիրոյ վոյ բացատրութիւնք:

Աւր տեղ որ մարդ կայ նէ, հոն որդիական սիրոյ գեղեցիկ եւ հետաքրքրական օրինակներն ալ կը գտնուին: Եւ թէ որ կ'ընդունինք թէ մարդկային բնութեան մէջ քանի մը տեսակ ձախողակ բաներ կան, աղէկ է որ անոր այսպիսի կողմերն ալ դարձընենք, եւ իրեն ասանկ մէկ ազնիւ եւ քաղցր կերպանքն ալ դիտենք: Երգարեւ կը տեսնենք որ՝ ընդհանրապէս՝ տղայք ոյնչափ յօժարակամ չեն երեւնար իրենց ծնողացը համար աշխատելու եւ նեղուելու, ինչպէս անոնք իրենց համար: Արդիական սիրոյ պակասութիւնները աւելի յաճախ կը պատահին, քան թէ ծնողականին: Բայց սակայն աշխարհիս բոլոր դարերուն մէջ ծնողասիրութիւնը անանկ կերպերով ցուցուցած է ինքզինքը, որ զանիկայ մարդուս ներսիդին անկող Երարչին փառք բերած է:



Բարեսէր կիրք :

Ոչուսատանու նախորդ Աղեքսանդր կայսրին թագադրութեան օրը շատ բանտարդեալներ արձակուեր են, քաղաքական յանցանքներով եւ կամ ուրիշ պատճառներով նախորդ թագաւորութեան օրովը բռնուած : Աս միջոցին Վոզէպ անուն մէկ մը հոն գտնուելով՝ հետաքրքրական բան մըն է իմացեր, որ այսպէս կը պատմէ : «Օտերունի Խաղաս հաղարապետ մը ու իր որդին տեսայ, կ'ըսէ, որ բերդէն Ֆալէն կոմսին դատիկոնը բերին : Աս ազնուական պատանեոյն պատմութիւնը խիստ հետաքրքրական բան մըն է : Ասոր հայրը չեմ գիտեր ինչ յանցանքով շերքեզէն բռններ փեղրսպուրկ բերեր բերդին մէջ ամուր բանա մըն են դրեր : Շատ ժամանակ չանցած իր որդին ելեր տեսեւն է եկեր, մէկ գեղեցիկ կտրիճ երիտասարդ մը, որ կատարինէ Բին օրովը Սուրբ Գեւորդայ եւ Ս ղլտիմերայ խաչը ընդուներ է : Ասիկայ շատ ժամանակ պաղատանքներով աղերսագիրներով աշխատեր է որ շօրը ազատութիւնը ձեռք բերէ, բայց չէ կըրցեր, վերջապէս նայեր է որ յաջողելուն յոյս չ'կայ նէ, խնդրեր է որ իրեւ շնորհք զինքն ալ նոյն բանտարգելութեանը եւ թշուառութեանը մասնակից ընեն : Աս շնորհքը ըստ մասին ըրեր են իրեն. առեր տարեր բերդին մէջ բանան են դրեր. բայց հօրը երեսը տեսնալու թոյլտուութիւն չեն ըրեր, եւ ոչ ալ ողորմելի շօրը իմացուցեր են իր որդոյն այնչափ իրեն մտ գալը : ( )ը մըն ալ յանկարծ բանտերնուն նիգերը արձկուեր, ու գուռները բացուեր է. հայր ու որդի վազեր իրարու գրկախառններ են. դժբաղդ մարդը ոչ միայն իր ազատութիւնը իմացեր է, այլ նաեւ որդիական կարեկցութեան ըրած այն ազնիւ զօհն ալ : Այլ աս երկու ցնձութեանց որը սրտին աւելի ազգեր է, միայն ինք կարող է որոշել » :

Ղճմարիտ է թէ անանկ ծնողքներու օրինակներ կան, որ ասկէ մեծ բաներ ըրած են. որ ոչ միայն բանտի եւ քրտորի յանձնառու եղած են, այլ կամաւ եւ ուրախութեամբ կեանքերնին զօհած են զաւերներնուն բարեկեցութեանը համար : Վաղղիայի յեղափոխութեան տեսնը Ղուիզէրօլէս զօրապետը իր որդին ազատելու համար՝ դիտմամբ զինուորական դաւաճանութիւն մը ընելով՝ անոր տեղը ինք կախողանի վրայ մեռաւ : Օնողքներնուն տեղը մեռնող որդւոց օրինակ բերելը դիւրին բան չէ, թէպէտ եւ հաւանականաբար ասանկներ ալ եղած են : Սակայն պատմութիւնը մէկ քանի անանկ սրտաշարժ դէպքեր կը յիշատակէ, որ զաւակը իր ծնողքէն ընդունած կենդանութեան սնունդը դարձեալ իր ծնողքին պարգևեր է որդիական գորովով : — «Լնկան մը մայրը», կ'ըսէ մասնագրին մէկը, «աղբատիկ վիճակի տէր, շուովմայու մէջ ի

Բարեսէր կիրք :

մահ դատապարտուելով , բանտապետը՝ իր գութէն շարժուած՝ աւելի ուզեր է որ թող այդ զինքը որ սովամահ մեռնի , քան թէ սուրով սպաննէ : Ըստ միջոցիս իր աղջկնէն ի զատ մէկ ուրիշը չեն թողոր եղեր որ քովը երթայ , ան ալ շատ զգուշութեամբ որոններէն ետեւ : Սակայն բանտապետը՝ կնկանը երկար ատեն դիմանալէն հետաքրքրութիւնը շարժելով՝ տեսութիւն ըրած ատեննին գաղտուկ լրտեսեր է , ու տեսեր է որ աղջկը գորովագութ կարեկցութեամբ կը դիեցունէ զան՝ որմէն որ իր կնկանու թիւնը առած էր : Ընտեղացիք աս առաքինական գործէն սրտերնին շարժելով՝ նոյն տեղը տաճար մըն են կառուցեր Բարեսպաշտութեան նուիրեալ : Ըսանկ՝ ծերունի հայր մըն ալ , աս նոյն պարագաներուն մէջ , աս նոյն կերպովը ապրեր է , իր աղջկանը կաթը ուտելով :

§ 362 . Եղբայրական սիրոյ բնութեանը վրայ :

Գերդաստանի կամ ընտանեկան կապակցութեան մէջ ուրիշ կերպ կիրք մըն ալ կայ , որ ան ալ մարդուս ներսիդին բնական եւ տնկական բան մը ըլլալուն նշանները ունի վրան , թէպէտ եւ կարելի է թէ արդէն յիշած կիրքերնուս վրայ տեսածնուս չափ որոշ չըլլայ : Ըստ ըսածնիս , դիւրին է իմանալ որ , եղբայրներու եւ քոյրերու փոխադարձ սէրն է , որ երկուքին մէկտեղ կ'ըսուի Լոգէայրական Սէր : Սեր եղբայրներուն եւ քոյրերուն մատուցած սէրերնիս , թէպէտ եւ իր հիմանը եւ բնութեանը գոյացական մասին նայելով նոյն է ուրիշ սէրերու հետ , սակայն ունի մէկ մասնաւոր բան մը՝ անանկ մէկ մասնաւոր որպիսութիւն մը , խօսքով բացատրելու դժուար , որով որ՝ ինչպէս որ մեր ներքին փորձառութեամբը եւ զիտակցութիւնովը կ'իմանանք՝ բոլոր ուրիշ տեսակ սէրերէ կ'որոշուի :

Գիտենք որ ոմանք պիտի աշխատին աս սիրոյն ծագմանը ուրիշ կերպ բացատրութիւն մը տալու , ըսելով թէ եղբայրներու եւ քոյրերու մի եւ նոյն յարկին տակը բնականնէն եւ այսպէս ի մանկութենէ սկսելով մէկմէկու հետ երկարատեւ ընկերութիւն մը ունենալնէն է որ աս սէրը յառաջ կու գայ : Սննք ալ չենք ուրանար որ աս պարագան եղբայրական սիրոյ օւժգնութեան աստիճանը եւելցնելու ազդեցութիւն մը ունենալու է հարկաւ : Սակայն մէկ իրական ճշմարտութիւն մը կայ , որն որ բաւական պատասխան է աս վարդապետութեանը , որ կը հաստատէ թէ Լոգէայրական սէրը որոշ բնութիւն մը չունի , այլ լոկ ընդհանրական սիրոյ մէկ եղանակաւորութիւնն է , կանուխ եւ երկարա-

Բարեւեր կիրք :

տեւ կենակցութեան պարագայէն պատճառեալ : Այլ է այս . երբոր մի եւ նոյն ընտանիքին անդամներէն չեղող ուրիշ անձինք մի եւ նոյն յարկին տակը կը մեծնան մեկտեղ , թէպէտ եւ մեծ սիրով կը սիրենք զանոնք , սակայն եղբօր մը կամ քրոջ մը վրայ ունեցած այն ֆանտազիա (որ ամէն ուրիշ զգացումներէ որոշ է , եւ միայն փորձառութեամբ կ'իմացուի) ամենեւին չենք ունենար անոնց վրայ : Սէկ ուրիշ բան մը կայ մի եւ նոյն հայրն ու մայրը ունենալուն մէջ , մեր գոյութեանը սկզբնապատճառը մի եւ նոյն ըլլալուն մէջ , մանկութեան ատեն մի եւ նոյն աղբիւրէն սնունդ առնելուն մէջ , եւ մի եւ նոյն կենսական արեան ընթացքը երակներնուս մէջ զգալուն մէջ , որ ասոնք՝ բնութեան արարչական ձեռքին զօրութիւնովը՝ սուրբ կապ մը կը կազմեն , ամէն ուրիշ կապերու անմասն :

Աս նիւթիս վրայ՝ աս հիմակուան յառաջ բերածնէս ի զատ ուրիշ դիտողութիւններ ալ կան , որ աս սիրոյն համարուն ըլլալը եւ մնայունութիւնը կը հաստատեն : Արդեւսիրութեան եւ ծնողասիրութեան վրայ ըրած ծանօթութիւններնուս մէջ մեծ մասը ասոր ալ կը յարմարի : Այց մենք կը կարծենք հոս խօսքերնիս , մնացած որոշումները այնպիսի խորհրդածութեանց թողելով , զորոնք ընթերցողն ինք ալ կրնայ ունենալ :

§ 363 . Ընտանեկան կրեց օգտակարութեանը վրայ :

Աս կիրքերուն սահմանադրութեանը վրայ , որոնք ասանկ համառօտ եւ անկատար դիտողութեամբ մը անցանք , եւ զորոնք՝ ընդհանուր անունով մը՝ կրնանք անուանել Ընտանեկան կիրք , բարեսիրութեան եւ իմաստութեան ապացոյցները կը տեսնենք , որոնք մեր մտաւոր բնութեանը կարգադրութիւններուն մէջ այնքան յաճախ կ'երեւնան : Աս կիրքերը չէ թէ միայն անհատից եւ ընտանեաց երջանկութեան աղբիւրներ են , կենակցութեան մէջ անսահմանելի եւ սակայն զօրաւոր քաղցրութիւն մը եւ հաճոյականութիւն մը դնելովն . այլ նաեւ անուղղակի կերպով մը շատ ազդեցութիւն ունին ընդհանուր ընկերութեան հաստատութեանը եւ պահպանութեանը վրայ :

Արդարեւ տարօրինակ կարծիք մըն էր ան՝ որ հիւներէն ու մանք ունէին , եւ մասնաւորաբար Պղատոն , թէ ընտանեկան կիրքերը հայրենասիրութեան դէմ կու գան , եւ թէ ատ կիրքերը մարելու համար պէտք է որ տղայք ծնած աստիճանին ծնողքներնուն ձեռքէն առնուին , եւ կառավարութեան պաշտպանութեանը յանձնուին՝ որ հասարակութեան ծախիւքը զա-

Բարեսէր կիրք :

նոնք մեծցրնէ եւ դաստիարակէ : Սակայն ընտանեկան կիրքերը մասնաւորաբար ծնողական սէրը՝ այնքան խորին արմատացած են մարդու ներսիդին, որ անհնար է զանոնք այսպիսի ընթացքով մը եղծանելը . եւ թէ որ հնար ըլլար ալ նէ, յառաջ գալիք հետեւութիւնը ոչ միայն անհատից երջանկութիւնը կը խանգարէր, այլ եւ հասարակութեան ալ մեծ վնաս կը հասցընէր : Ընտարակուսելի բան մըն է աս, որ ընտանեկան առընչութիւնը ընկերութեան երեւելի ամբութիւններուն մէկն է : Որ մարդն է ան, որ ամենէն եւեւ հոգածութեամբ եւ ժրջան աշխատութեամբ իր բանին գործին ետեւէն կ'ըլլայ : Ո՞վ է հասարակաց բարեկարգութիւններուն ամենէն յարատեւ բարեկամը, եւ օրինաց կանոնադրութիւններուն վրայ ամենէն աւելի յօժարակամ հաւանութիւն ունեցողը : Ո՞վ է, ընդհանրապէս խօսելով, ամենալաւ բարեկամը, ամենալաւ զբացին եւ ամենալաւ քաղաքացին : Ընտանեկան առնչութիւններէ արձակ՝ անգերդաստան թափառականը . — ոչ բնաւ . այլ ան, որ՝ թէ եւ շատ աղքատ եւ աննշան ըլլայ՝ հայր մը եւ մայր մը, կին եւ որդիք, եղբայրներ եւ քոյրեր ունի, որ իր բոլորտիքը եղողներուն արտութիւններովը եւ ուրախութիւններովը իր աբրամութիւններն ու ուրախութիւնները բազմապատկած կը տեսնէ, եւ որ զօրաւոր պաշտպան մըն է հասարակաց բարւոյն, ոչ միայն իր անձին շահը անոր մէջ բովանդակեալ ըլլալուն համար, այլ նաեւ բոլոր անոնց շահն ու երջանկութիւնը, որոնք որ թեւ թեւի կապուած են իրեն հետ ընտանեկան սուրբ եւ գեղեցիկ կապերովը :

§ 364 . Ընկերական կրից եւ՝ ընդհանրապէս՝ բարեսէր կրից բարոյական սրբիսութեանը վրայ :

Ընտանեկան կրից եւ ընդհանրապէս բոլոր բարեսէր կիրքերուն վրայ եղած շահաւոր խնդիրներուն մէկն ալ, որուն վրայ նաեւ շատ զանազան կարծիքներ եղած է, աս է՝ թէ արդեօք աս կիրքերը բարոյական որպիսութիւն ունին, եւ ինչ է աս որպիսութիւնը : Ասոր վրայ եղած կարծիքներուն եւեւրք ընդհանուրը աս եղած կ'երեւնայ՝ թէ բոլոր ան կիրքերը որ ճշմարտապէս բարեսիրական են նէ, հարկաւորապէս եւ լոկ իրենց բարեսէր ըլլալուն համար՝ բարոյապէս բարի են կամ առաքինական : Աւ աս կարծիքին այսչափ յաճախ ընդունուիլն ալ թերեւս զարմանալի բան մը չըլլայ : Սաղոգ է որ աս կիրքերը բնական զգացողութեանց ընդհանուր բաժանմանը տակ գացող ուրիշ ներգործուն

Բարեսէր կիրք :

սկզբանց հետ բաղդատելով ամենէն բարձր աստիճանը կը դասուին, եւ մենք շատ անգամ անանկ տիտղոսներով կը յիշենք զանոնք, որոնք մեր անոնց գերապատուութեանը վրայ ունեցած հաւատքը կը յայտնեն : Անոնց համար չէ թէ միայն անմեղ եւ օգտակար են կ'ըսենք, այլ նաեւ քաղցր՝ զուարճալի եւ սիրելի. եւ երբեմն երբեմն ուրիշ անանկ անուաններ ալ կու տանք, որ անոնք ալ հաւասարապէս կը ցուցնեն անոնց մեր համարմանը մէջ մեծ պատիւ ունենալը : Ասոնց ամէնը կ'ընդունինք մենք. սակայն եւ այնպէս՝ հարկաւորապէս եւ իրենց բնութեանը համար բարոյապէս բարի են չենք կրնար ըսել :

Աս խնդրոյն ուղիղ տեսութիւնը մենք ստիկայ կը սեպենք, (ան որ ասոնց հետ բնութեամբ եւ գործողութեամբ վերաբանութիւն ունեցող ուրիշ սկզբանց վրայ ըսինք.) ինչուան որչափ որ բարեսիրական կիրքերը բնական եւ իրենց ներգործութեամբը ազդական են նէ, բարոյական որպիսութեան կողմանէ անտարբեր են, ոչ բարի կրնանք սեպել եւ ոչ չար : Իսկ ինչուան որչափ որ ներգործութիւննին կամաւորական է նէ, կամ բարի են կամ չար, բանին պարագային նայելով : (Րինակի աղագաւ՝ երբոր մայր մը իր զաւկին յանկարծական եւ անակընկալ ճիշտ կը լսէ ուրիշ սենեակէ մը եւ շտապաւ կը վազէ օգնութեան նէ, կ'ընդունինք որ ատ գործը Բնականապէս աղէկ է, եւ կարի օգտակար եւ սիրելի. սակայն չենք կրնար առաքինութիւն դնել վրան եւ զանիկայ Բարոյապէս բարի անուանել, վասն զի յայտնի է թէ բնական եւ ազդական բան մըն է : Թիչ որ այսպիսի պարագաներու տակ եղած ասանկ մէկ գործ մը հարկաւորապէս առաքինական սեպուելու է նէ, առկէ աս հետեւութիւնը կ'ըլլէ յայտնապէս, թէ ուրեմն ոչխարներուն՝ կովերուն եւ ուրիշ անբան անասնոց ալ առաքինութիւն կրնանք տալ, վասն զի անոնք ան նոյն պարագաներուն մէջ նոյն ազդական սերը կը ցուցնեն իրենց սերունդին : Աւտի ինչուան ուր որ բարեսէր կիրքերը ազդամբ գործեն նէ, որչափ ալ որ հաճոյական եւ քաղցր երեւնան, բարոյապէս ոչ բարի սեպուելու են եւ ոչ չար :

§ 365 • Բարեսէր կիրք կամաւորական կիրառութեանը բարոյական որպիսութեանը վրայ :

Ինչուան ուրտեղ որ բարեսէր կիրքերը կամաւորական ըլլան նէ, ուրիշ խօսքով՝ ինչուան ուրտեղ որ կամաւորապէս եւ խորհրդածութեամբ մտքին առջեւը բերուած շարժառիթներով գործեն նէ, ինչուան հոն առաքինական կամ մոլեկան կրնան սեպ-

ուիլ՝ իրենց աս կիրառութեանը բնութեանը համեմատ : Բացատրութեան համար օրինակ աս մայրական սիրոյն գործողութեանցը մէկ ուրիշ կերպը : Այս կիրքին հիմը անտարակոյս զուտ բնական աղբուրմն է : Ասկայն ասոր վրայ եւեթցած կամաւորական գործողութիւն մ'ալ ունի . եւ աս յաւելեալ գործողութիւնը սեպելու ենք որ ըստ մեծի մասին՝ շատ օրինակներու վրայ՝ առաքինական է : Բայց սակայն երբոր աս սիրալիր եւ ազնիւ սէրը չափէ դուրս կը զօրանայ , երբոր անոր ազգեցութեանը տակը մայրը՝ պարտականութեան զգացմանը յորդորակներուն դէմ՝ կը թողու իր որդին որ չար ընթացքներով յառաջ երթայ ուզածին պէս՝ անատեն անոր կիրառութիւնը յայտնի է թէ մոլեկան կ'ըլլայ : — Այլս կողմանէ՝ երբոր մայրը թերեւս զաւկին անպատշաճ վարմունքին պատճառաւ , կամ անոր բազմաթիւ կարօտութիւններուն հասնելու շփոթեցուցիչ անկարողութիւն մը զգալով եւ կամ ուրիշ պատճառաւ մը իր սէրը բնութեան դիտմունքները լեցունելու համար կարեւոր եղածէն վար կը զրտնէ , ու աս վիճակին մէջ անոր ներգործութիւնը իր ներսիդին կը նորոգէ եւ կը կենդանացընէ նէ , մայրական առնչութեան մէջ եղող բոլոր պատասխանատուութիւններուն վրայ ծանր եւ զուշաւոր դիտողութիւն ընելով , անատենն ալ՝ նոյնպէս յայտնի է որ՝ անոր կիրառութիւնը ուրիշ որպիսութիւն մը կ'առնէ վրան . չէ թէ միայն հաճոյականութիւն կ'ունենայ , այլ եւ առաքինի կը համարուի :

§ 360 . Բարեսիրութեան արդարութեան հետ ունեցած կապակցութիւնը :

Հիմայ տուած տեղեկութիւններնուս վրայ աս ալ կը յաւելունք , թէ ամենաբարձր աստիճան եւ ամենաազնիւ բարեսիրութիւնը անխոտոր արդարութեան հետ կապակցած է : Աստարեալ արդարութիւնը , իրերուն բնութենէն , անքակտելի կերպով կապուած է ընդհանուր եւ բարձրագոյն բարեաց հետ : Ասան որոյ ամէն ինչ եւ իցէ կերպ եւ ինչ եւ իցէ աստիճան բարեսիրութիւն որ շատ կամ քիչ հակառակ կու գայ արդարութեան , թեպէտ եւ բարութիւն եւ երջանկութիւն յառաջ բերել ըլլայ իր նպատակը , սակայն իր փնտռածը ըստ կարիամենէն գերազանցը եղող բարիքէն ստորին բան մը եղած կ'ըլլայ : Աստի բարեսիրութիւնն ալ մէկ կանոնաւորող զօրութեան մը ենթակայ է , եւ պէտք է որ ըլլայ : Արբոր մէկ դէպքի մը մէջ որոշ կ'իմանանք որ անոր ներկայ կիրառութիւնը , անմիջական հետեւութիւնը ինչ որ ըլլայ նէ , վերջապէս ապերջանկութեան եւ

Բարեսէր կիրք :

չարեաց պատճառ պիտի ըլլայնէ, մեր վրայ Հարկադրեալ պարտականութեանց աւելի գերազանց գիտողութիւններովը պէտք է որ ճնշենք զանկիայ : Եւ ուրիշ ատեններ զանկիայ գրգռելը որչափ առաքինութիւն է նէ, ասանկ պարագաներու մէջ անոր կիրառութիւնը ճնշելն ալ նոյնպէս առաքինական գործ մըն է :

Բարթուղիմէոս Լ ա Քաղա, Քիափայի եպիսկոպոսը, պատմութեան յիշած երեւելի բարեսէր անձանց մէկն է : Ըստիկայ 1502ին ( ) վանտօին հետ ընկերութեամբ Սպանիոյա գնաց, որն որ իբրեւ Վերմանական կառավար տէրութենէն հօն երթալու որոշուած էր : Զոն՝ բնականապէս բարեսէր սրտի մը զգալու ամենայն ցաւակցութեամբը՝ աչքովը տեսաւ ան տեղացի բնիկներուն կրած անգութ վարմունքը, անոնց անձնական իրաւունքներուն եղծանիլը, կալուածքներնուն յափշտակուիլը, դառն աշխատութիւններնին եւ կրած անագորոյն պատիժներնին : Հատ ազգեց սրտին անոնց վիճակը. եւ այն ժամանակէն սկսելով բոլոր իր ապագայ կեանքը, վաժսունէն աւելի տարուան չափ ժամանակ, անոնց օգնութիւն հասցընելու աշխատութեանց տուաւ : Ըմենելին աներկբայելի բարեսիրութենէ շարժուած, աս անձը կարգինալ Քսիմենէսը հաճեցուց, որ ան ատենները Սպանիոյ գործերուն զլուխ դրուած էր, Երեւտեան Զնդիկ կղզիները Վփրիկէի գերիներ մտցընելու, ասիկայ բնիկներուն ազատութեանը ամենալաւ միջոց մը սեպելով :

Ըս պատմութիւնը մեր հետազօտութեան նիւթը բացատրելու համար հոս յառաջ բերինք. Լ ա Քաղաին Սպանիական կղզիները գերի առնուած Վփրիկեցիներ մտցընելու համար ըրած ջանքերը՝ տարակոյս չկայ որ՝ սուրբ եւ վեհանձն բարեսիրութենէ մը յառաջ եկած աշխատութիւններ էին : Սակայն թէ որ կարենար նախատես ըլլալ հօն եկող Սեւերուն կրելու վարմունքին, որ բնիկներուն քաշածէն դառնագոյն պիտի ըլլար. եթէ կարող ըլլար նախահայեաց տեսութեամբ իմանալ Վերիի Ըռուտուրէն Վփրիկէի մէջ պատճառելու աղէտները, իր պարտքը աս պիտի ըլլար որ, որչափ ալ որ անմիջական աղէկութիւն ըլլար Զնդիկներուն, որոնց բարեկեցութեանը այնքան մեծ եռանդ ունէր, իր պարտքը աս պիտի ըլլար որ իր բարեսէր զգացմունքը ճնշէր եւ զսպեր, եւ աւելի ընտրէր ներկայ չարեաց տանիլը, քան թէ գալու աղետից ձեռնաու ըլլալը : Ըսպպիսի պարագաներու մէջ եւ աս եղանակաւ ան տեղացի բնիկներուն բարեսիրութիւն ընելը (բարեսիրութիւնը՝ ամէն ինչ եւ իցէ պարագայի մէջ՝ Ինքնին ճառածելով՝ որչափ որ քաղցր եւ հաճելի ալ է նէ) պարտականութեան դէմ գործել, եւ հետեւա-

Բարեւեր կիրք :

պէս մեղանչել կ'ըլար : — Ըսանկ սուտ եւ փնասակար է այն զըրուծիւնը որ բարեսիրութեան լոկ անոր բնութեանը նայելով եւ արդարութեան օրէնքին հետ ունեցած վերաբերութիւններէն անկասութեամբ՝ առաքինութեան օրպիտութիւնը կ'ընծայէ :

## § 367 . Մարդասիրութեան վրայ :

Մարդուս ներսիդին տնկական եղող կիրքերուն մէկն ալ Մարդասիրութիւնն է : — Ըս նիւթիս վրայ միայն երեք ենթադրութիւն կայ ըլլալու , այն է՝ թէ մարդս բնականապէս անտարբեր է իր ընկերին բարեկեցութեանը . կամ բնականապէս ատելութեան զգացումներով կը նայի անոր վրայ . եւ կամ անոր բարեխառութեանը վրայ հաճութիւն ունի եւ զանիկայ կը սիրէ : Թէ մարդս բնութեամբ բոլորովին անտարբեր է իր ընկերին բարեխառութեանը , անանկ առաջարկութիւն մըն է , որ չ'կարծուիր թէ շատ պաշտպաններ կրնայ ունենալ . եւս առաւել քիչ՝ աս առաջարկութիւնը , թէպէտ եւ մէկ քանի ջատագոյնող գտնուած է , թէ բնութեամբ եւ աղքատմբ մարդը մարդուն թշնամին է : Սակայն երրորդ առաջարկութիւնը հաստատելու աշխատած ատեննիս՝ թէ մարդս բնականապէս բոլոր մարդկային սեռին բարեխառութեանը վրայ հաճութիւն եւ բաղձանք ունի , որ ատ բաղձանքին կ'ըսուի կոր Մարդասիրութիւն , ասանկ կ'ուզենք որ հասկըցուի մեր միտքը՝ թէ աս կիրքին կիրառութեանը՝ իբրեւ ընդհանուր բան մը՝ մէկ երեւելի ուժգնութիւն մը չենք ընծայեր : Եւս յայտնի բան է թէ անիկայ շատ աւելի քիչ զօրութիւն ունի , քան որ պէտք էր ունենալ . եւ թէ Սուրբ Իրոց ըրած պահանջմունքէն շատ յետնեալ մնացած է , որ կը պատուիրէ մեզի մեր ընկերին վրայ նոյն սէրը ունենալ , որ ունինք մեր վրայ : Իրական ճշմարտութիւնը աներկբայ աս է , որ աս սկզբունքին ներգործութիւնը խափանած եւ իր արդիւնքները նուազած են ինքնասիրութեան սկզբունքին անկարգ կիրառութիւնովը : Սակայն Մարդասիրութեան կիրքը , թէպէտ եւ իր ներգործութիւնը այսպէս ճնշեալ է , եւ իր մեծ օգնականին իրաւամբք պահանջած աստիճանէն շատ վար մնացած , սակայն մարդուս ներսիդին կայ իսկապէս :

Ըսիկայ կը ցուցուի նախ աս իրական ճշմարտութենէն , որ ամէն կարգի մարդիկ միշտ հաճութիւն մը կ'իմանան որ եւ իցէ բանէ՝ որ վերաբերութիւն ունի մարդկային բնութեան հետ , մարդուս հետ՝ զանիկայ լոկ իբր մարդկային էակ նկատելով , առանց երեւելի նկատողութիւն մը ունենալու անոր եղած երկ-



Բարեսէր կերբ :

րին կամ ժամանակին վրայ : Արիշ բազմաթիւ առարկաներ կան հետաքննութեան , եւ անտարակոյս է որ շատ հաճութիւն կ'իմանանք որ եւ իցէ բանէ որ աշխարհիս չորս կողմերէն ա- կանջնիս կը հասնի , անոնց կազմութեանը՝ կ'իմացին եւ հարու- տութիւններուն վրայ : Սակայն գլխաւորապէս մարդուն անունը յիշուած ատենն է որ սրտերնուս մէջ մէկ ջերմ հաճութիւն մը կ'իմանանք : Մարդուն յիշատակը ականջնիս հասած ատենը անոր վիճակին եւ հանդիպած դէպքերուն վիպասանութեանը մտիկ կ'ընենք՝ մինչեւ անգամ առջի բերանը՝ իրրեւ այնպիսի մէկու մը պատմութեանը , որուն մէջ ան նոյն մեր ունեցած կենաց աղբիւրը կը բնակի : Եւ լարը երբոր կը թրթռացընենք , անոր ճօճումը ամէն մարդու սրտի մէջ կ'իմանանք : Մարդուն լոկ կերպարանքը , լոկ բերնէն ելած բանաւոր ձայնը , բազմա- թիւ զուգորդութիւններէ անկախութեամբ՝ որոնք շատ անգամ կը խանգարեն անոր ազդեցութիւնները , պատուոյ եւ հաճու- թեան շարժութիւններ կը յարուցանէ ներսիդինիս : Եւ զժուար բան է անձնասիրութեանը մէջ այնքան խորը իջած մէկը գտնելը , որ յայտնի համարձակ խոստովանի՝ թէ իր անձնական շահուն հետամտութիւնը , զանիկայ արդարացի սեպելու համար ինչ բարի պատճառներ որ ըլլան ալ նէ , վաւեր եւ պատուաւոր պատճառանք մըն է մարդասիրութեան պահանջմունքները ջնջ- ջելու , իւ ընդհանրական եղբայրութեան կապը խզելու :

§ 368 . Արիշ սպաղոյցներ ի հաստատութիւն մարդասիրութեան բնածին ըլլալուն վարդապետութեանը :

Արկորդ՝ այնպիսի անձանց վկայութիւնները , որոնք անանկ վիճակներու մէջ մտեր են՝ որ աս կողմանէ մարդուս ունեցած բնական զգացողութիւններուն վրայ աղէկ փորձ մը ընելու ա- ութ ռունեցեր են , հաստատութիւն կու տան մարդասիրական զգացմանց մարդուս ներսիդին բնական կամ անկական ըլլալուն : Եւ ըսածնիս այն ճանապարհորդաց պատմածներն են , որոնք կամ դիտմամբ եւ կամ դիպուածով երկար ատեն վայրենի ժո- ղովորոց մէջ կեցեր են . թէպէտ ասով դուրս ձգել չենք ու- զեր ան բանասէր անձինքն ալ , որոնք քաղաքավարեալ երկիր- ներու մէջ աղէկ պատեհութիւններ ունեցած են մարդուս սըր- տին բերմունքները ստուգելու : Օրինակի աղագաւ՝ Քօզէպ , որ յանկարծ Միպերիա սքսորուեցաւ , ու հոն ատեն մը մնաց , այն- պիսի պարագաներու մէջ եղող զանազան կարգ մարդկանց հետ ինկաւ ելաւ , որ զժուար էր իրեն ասնիւթիս վրայ ուղիղ դա-

Բարեսեր կերպ:

տու մե ընելու մասին վրիպելը: Իր սքսորին հետաքրքրական պատմութիւնը որոշ կերպով կը ցուցնէ որ մարդուս մտքը՝ ուրիշին կրած թշուառութեանը նկատմամբ՝ բարի հանգամանքի մը տէր է: Իր փորձառու եղած բարիքն ու չարիքը մտքը բերելով, եւ իր գրքին մէջ պատմուած բազմաթիւ դէպքերուն վերայ աչքը պտըտցընելով՝ կը գոչէ տեղ մը, «Մըշափ սակաւ կարծրասիրտ եւ անզգայ մարդիկ կան իմ պատմութեանս մէջ յիշուած: Վըլուս եկած դժբաղդութիւնները հաստատեցին զիս սա կարծիքին վրայ, թէ մարդ իր ընկերին վրայ վստահութիւն կրնայ ունենալ»:

Ըփրիկէի ներսերը շրջող գրեթէ բոլոր ճանապարհորդները, Սէլլանդ՝ Փարք՝ Սփարմէն՝ Վըլափերգոն՝ Տէնհամ եւ այլք, թէպէտ եւ յետին աստիճան տղէտ եւ վատթար ժողովրդոց մէջ մտած ելած են, սակայն միշտ տեսած մարդասիրութիւններուն վրայ կը խօսին: Ընգամ մը Փարք՝ իր եղած տեղին մարդոցը իր բոլորովին օտարական երեւնալուն պարագային վերաբերեալ պատճառներով՝ պարտաւորեր է օր մը ինչուան իրիկուն անօթի մնալու: Ըրեւը մարը մտնելու ատենները երբ իր ձին կ'արձրկէ եղեր ճարակելու, եւ մտքովը կը խօքհի եղեր թէ բոլոր գիշերը միայնակ ու անօթի պիտի անցընէ, կին մը իր արտի գործերէն դառնալու ատենը պատահմամբ մօտէն կ'անցնի: Ըսիկայ զինքը տեսածին պէս, ճերմակ մարդը իրեն տարօրինակ բան մը ըլլալուն, մօտը կու գայ ու կը կայի շաղկ մը զինքը դիտելու: Կը նայի որ երեսը ու նայուածքները տըրտում տխուր կ'երեւաննէ, կը հարցընէ ինչ է պատճառը: Երբոր Փարք կը հասկըցընէ իրեն իր անխնամ եւ անպատասպար վիճակը, կինը անմիջապէս կ'առնէ գետնէն ձիուն համէսն ու սանձը, եւ զինքը իր տունը կը հրամցընէ: Ա'երեն կ'երթան տուն: Հոն ճրագ մը բերելէն ետեւ, կասկարայի վրայ խորված ձուկ կը գնէ առջին, ու տակը փսիաթ կը փռէ որ վրան պառկի, եւ թոյլ կու տայ իրեն որ գիշերը հոն իր խոնարհ անակին մէջ անցընէ: Փարք կը ծանուցանէ թէ գիշերուան մեծ մասը մանած յօրինելով անցուցեր են ան կինն ու իրեն էգ ընկերները, եւ գործած ատեննին՝ աշխատութիւններնին թեթեւցընելու համար՝ երգ ալ կ'երգեն եղեր, որոնց մէկն ալ իր վրայ են յօրիներ: «Ըս երգին եղանակը քաղցր եւ տխրական էր, կ'ըսէ Փարք, եւ ճիշդ իմաստը այսպէս կը թարգմանուի:

«Նովերը փչեցին, արձրեւներն իջան,

Խեղճ՝ ճերմակ մարդը՝ հոգնած եւ լքեալ,

Ս'եր ծառին տակը՝ եկաւ հանգչեցաւ,

Ըն մայր չունի որ՝ իրեն կաթ բերէ,

Բարեսէր կիրք :

Եւ ոչ կին ունի՝ որ ցորեն աղայ,  
 Խղճանք ճերմակը,  
 Զի մայր չունի որ՝ իրեն կաթ բերէ,  
 Եւ ոչ կին ունի՝ որ ցորեն աղայ” :

§ 369 . Մարդտիրական սկզբունքին գոյութեանը ապացոյցք բարեսիրական սահմանադրութիւններէ :

Կը տեսնուի որ մենք չենք հաստատել թէ ուրիշները սիրելուն սկզբունքը՝ զանոնք լոկ մարդկային ցեղին անդամները նկատելով, պէտք եղածին պէս զօրաւոր է մարդու սրտին մէջ : Եւ բոլոր հաստատածնիս եւ ընդունածնիս սյուշափ է, թէ առ սկզբունքը իրօք ունի մարդս աստիճանաւ մը : Եւ ի հաստատութիւն աս ճըշմարտութեանը՝ ուրիշ ապացոյցներէ ի զատ՝ վայելչապէս կրնանք մէջ բերել նաեւ ան բազմաթիւ բարեսիրական սահմանադրութիւնները, ինչպէս են հիւանդանոցները՝ աղքատանոցները՝ կուրանոցները՝ բարերարական գպրոցները եւ ամէն կերպ բարեսիրական սահմանադրութիւններն որ աշխարհիս ամէն կողմը կան : Ղշմարիտ է թէ աս տեսակ սահմանադրութիւններ Վրիստոնեսայ երկիրներու մէջ շատ կ'ըլլան, որ ասիկայ քրիստոնէական կրօնին ունեցած բերմունքին կարի մեծ պատիւ մըն է . սակայն աս ալ ստոյգ կը գտնենք որ բարեսիրական ջանացողութիւններ, տկար թող ըլլայ, եւ վերը յիշածներնուս նման սահմանադրութեանց նշոյլներ քրիստոնէական կրօնքէն զուրկ երկիրներու մէջ ալ կ'ըլլան : Սուրբ անուն Վարդգիշին մօտերս հրատարակուած վարուցը մէջ պատահական տեղեկութիւն մը կայ, որն որ նշկատանու մէջ իրերուն ինչ վիճակի մէջ ըլլալուն վերայ ծանօթութիւն մըն է : Մատենագիրը Վանձոր գաւառին վրայ խօսած ատենը կ'ըսէ . «Մտիկայ շատ հարուստ եւ փառաւոր մայրաքաղաք մը ունի, մէջը երեւելի մեհեանով մը, որ շքեղութեան կողմանէ բոլոր նարաւային նշկատանու շէնքերը կը գերազանցէ, ու նաեւ սրբազան շինուածոց եւ քաղաքական սահմանադրութեանց կողմանէ բոլոր քովի գաւառներէն յառաջընթաց է” :

Եւ հիմակուան յիշածնուս մերձաւորութիւն ունեցող ուրիշ իրողութեանց հետ աս ալ քաջածանօթ բան մըն է, որ երբոր մարդկային ազգին մէկ մասը հրգեհէ՛ պատերազմէ՛ սովէ՛ սրածութենէ՛ եւ կամ բնութեան ուրիշ աւերիչ շարժմունքներէն մեծ տառապանաց եւ նեղութեան մէջ կ'ըլլան, ուրիշ երկիրներու մարդիկ ցաւակից կ'ըլլան անոնց եւ օգնութիւն հասցընելու

Բարեսէր կերք :

ջանքեր կ'ընեն : Աս բանիս շատ օրինակները կան իրօք կատարուած, ինչպէս որ քանի մը տարի առաջ Հունաց ազգը, եւ աւելի մօտ ատեններս՝ Վլախ Վէրտ կղզեաց բառած տեղւոյն բընակիչները երբոր խիստ մեծ կարօտութեան մէջ էին, Մերիկացուոցմէ՝ որոնցմէ շատ հեռաւոր եւ հետեւին շատ քիչ ծանօթութիւն ունեցող ժողովուրդներ էին ասոնք, խել մը նաւ լեցուն պաշար խրկուեցաւ, առանձնական անհատից ծախսքը : Ասանկ շատ ուրիշ եղելութիւններ կրնայ յիշուիլ, որոնք յայտնապէս դէմ կու գան ան կարծիքին՝ թէ մարդս իր ընկերին բարեւաւութեանը անտարբեր է, եւ առաւել եւս աս կարծիքին թէ մարդիկ բնութեամբ թշնամի են իրարու :

§ 370 . Ի հաստատութիւն նոյն վարդապետութեանը ուրիշ ծանօթութիւններ :

Չորրորդ՝ մարգասիրութեան սկզբունքը հարկաւոր է, մարդկային բնութիւնը ինք իրեն ներհակ չըլլալու համար : — () րինակի աղագաւ՝ ներսիդինիս Պատուոյ բնածին բաղձանքը ունինք, սակայն ինչո՞ւ համար այնպէս կազմուած պիտի ըլլանք, որ բընականապէս անոնց պատուոյն բաղձանք ունենանք, զորոնք նոյն ատենը բնութեամբ կ'ատենք, կամ որոնց վրայ բնութեամբ անտարբեր ենք : Վարձեալ՝ անտարակոյս է որ Բնկերութիւնը կամ ընկերութեան սէրը համարուն է մարդուս մտքին, բայց աս կարելի՞ բան է որ մարդիկ այնպէս ստեղծուին որ ուրիշներուն ընկերութեանը եռանդուն բաղձանք ունենան, եւ միանգամայն այն ուրիշները՝ բնութեան կազմակերպութիւնովը՝ կատարեալ անտարբերութեան կամ հաստատուն ատելութեան առարկայ ըլլան իրենց : Վարձեալ՝ մեր ներսիդին կայ, ինչպէս որ ետքէն տեսնելու առիթ պիտի ունենանք, Վթութեան կամ կարեկցութեան որոշ սկզբունքը, որն որ կը դրդէ մեզ վշտաց գէմն առնելու եւ եղած վիշտերը վերցընելու կամ խափանելու, մէկ սկզբունք մը, որուն համար մէկը չ'կրնար սյսպիսի կարծիք մը ընել, թէ բնութիւնը զանիկայ սահմանած ըլլայ միայն մեր աղգականներուն եւ բարեկամներուն անմիջական շրջանին մէջ գործելու, այլ որ իրեն առարկայ ունի մարդիկ՝ լոկ մարդ ըլլալնուն համար, եւ իրեն կիրառութեան ասպարէզը լայնատարած աշխարհքն է : Այս սակայն ինչ իմաստութեամբ կամ պատշաճութեամբ հնարաւոր է որ բնութիւնը դրդէ մեզ ուրիշները վշտակրութենէ ազատելու, որոնց վրայ՝ հրամանաբար կը պահանջէ մեզմէ որ՝ ատելութեան զգացմունքով նայինք, կամ գոնէ անզգայ

ցրտութեամբ : Ը՞տոնցմէ ի զատ՝ մեր խղճմտանքը կը պահանջէ մեզմէ որ սիրով վարվինք մեր ընկերին հետ ամէն սովորական հասարակ պարագայի մէջ , եւ երբոր իր պահանջմանը չենք հնազանդիր նէ , ներքին դատապարտութիւն մը կը զգանք : որ գոնէ ասանկ պիտի չըլլար , թէ որ բնական ատելութիւն ունենայինք առ մարդիկ : — Ըստպիտի պատճառներով է որ կը հաստատենք թէ մարդս՝ բնութեամբ ինք իրեն ներհակ չըլլալու համար՝ առ մարդիկ բարի-կամեցողութեան եւ սիրոյ սկզբունք մը հարկ է որ ունենայ , անոնց իրեն նման սկիզբն եւ բնութիւն ունեցող էակներ ըլլալնուն համար միայն :

§ 371 . Հայրենասիրութեան կամ Ազգասիրութեան վրայ :

Ըստ հասարակ բոլոր մարդկային ազգին տարածող բարեսիրութեան եւեւօք ընդհանուր եւ ընդարձակ ձեւոյն մէկ երեւելի եւ զանակաւորութիւնն ալ Հայրենասիրութեան կամ Ազգասիրութեան է : Արբոր աշխարհիս մէջ եղած սովորութեանց եւ լեզուաց զանազանութիւնները եւ շատ տեղեր երկիրներու իրարմէ գետերով՝ լիճերով՝ ծոցերով՝ լեռներով եւ ծովերով զատուած որոշուած ըլլալը կը նկատենք , անա՛կ կը թուի մեզի թէ բնութեան գիտմունքը աս եղած ըլլալու է որ , մարդկային ազգը՝ փոխանակ մէկ կառավարութեան տակ ըլլալու՝ զատ զատ եւ որոշ ժողովուրդներ կամ ազգեր ձեւանայ , եւ ամէն մէկը իր սահմանադրութիւններն ու քաղաքականութիւնը ունենայ : Ինչպէս որ է նէ՛ իրօք եղածն աս է հիմայ : Ս՛ենք չէ թէ միայն մարդկային սեռին անգամներ եւ աշխարհի քաղաքացիներ ենք , (որ աս առնչութիւնը ինչուան հիմայ եղածէն աւելի որոշ եւ կատարեալ կերպով պէտք է որ ձանչցուի ,) այլ եւ բուն իսկ մեր ժողովուրդին կամ ազգին անգամները ենք , եւ իբրեւ ատ կապակցութեան տէրը յատուկ պարտքեր ունինք կատարելու : Աւահա ասիկայ հիմն է այն մասնաւոր մտաւոր հանգամանքին , որուն կ'ըսենք Հայրենասիրութիւն կամ Ազգասիրութիւն :

Ըստ կիրքը կամ սէրը մենք երկրորդական բան մը կը սեպենք աւելի , քան թէ նախնական կամ սկզբնական : Ըստիկայ ան սէրն է , որ կը ցուցնենք , եւ պէտք է որ ցուցնենք , բոլոր մեր սեռէն եզոյններուն վրայ՝ լոկ մեր սեռէն ըլլալնուն համար . միայն թէ աստիճանաւ բարձրացած է անկէ՛ պայպիսի նկատողութիւններով , թէ՛ անոնք որ աս սիրոյն առարկայ են՝ միեւնոյն տոհմէն սերեալ են , մի եւ նոյն երկիրը կը բնակին , մի եւ նոյն կառավարութեան սահմանադրութիւններու տակ են , մէկ լեզու

կը խօսին, եւ նոյն շահասինդրութիւններն ունին : Ըյնպէս որ ընդհանուր մարդկային ցեղին վրայ ունեցած սէրերնիս՝ երբոր կ'եղանակաւորի եւ ազգասիրութեան ձեւոյն կը մտնէ, ընդարձակութիւնը կ'ամփոփի, եւ նոյն համեմատութեամբ զօրութիւնով կը սաստկանայ : Կը՝ իրական ճշմարտութեան նայելով՝ անտարակոյս ասիկայ մարդուս վարուցը կանոնաւորութեանը վրայ իշխող եւ տիրապետող սկզբունքներուն մէկն է :

Բայց սակայն պէտք է որ կարծենք թէ աս երկու սկզբանց մէջտեղը հարկաւորապէս ընդդիմակալութիւն մը կ'ոյ : Այն զի հայրենիքի օգուտ ընելը, մարդկային սեռին օգուտ ընել է. եւ մարդկային սեռին ան մասնաւոր բաժինին, որն որ Վասխինամութիւնը անմիջապէս մեր դիտողութեանը եւ ջանիցը սահմանին մէջ է դրեր, եւ իբր թէ անիկայ մեր բարեսիրութեանը մասնաւոր ասպարէզը ըլլալու որոշեր է : Սակայն միանգամայն ա՛ա ալ չենք կրնար ուրանալ՝ որ Հայրենասիրութիւնը՝ անկանոն եւ անզուսպ կիրառութեամբ՝ երբեմն, եւ կրնանք ըսել շատ անգամ, կը խափանէ Մարդասիրութիւնը : Ըզգասիրութիւնը, ընդհանրապէս խօսելով, անհամեմատ եղած է աստիճանաւ՝ մարդկային սիրոյն հետ բաղդատելով : Մեր խորհուրդները միշտ մեր հայրենիքին օգուտներուն վրայ դառնալով, անոնք մեր աչքին մեծ բաներ կ'երեւնան. քանի որ ընդհանուր մարդկային ազգին օգուտները խիստ շատ անտես կ'ըլլան աչքերնուս : Ուղիղ կիրառութիւն ունեցող Հայրենասիրութիւնը ան է որ Մարդասիրութեան չ'զպչի :

§ 372 . Բարեկամութեան սիրոյն վրայ :

Բնականապէս առ ընկերս ցուցուցած բարի-կամեցողութեան եւ սիրոյ զգացումներնուս մէկ նշանաւոր եղանակաւորութիւնն ալ Բարեկամութիւնն է : Ըսիկայ անանկ որոշ կիրք մըն է, որ արդարեւ արժանի է զատ դիտողութեան, թէպէտ եւ՝ իբրեւ որոշ կիրք մը՝ զանիկայ մարդուս համարուն սեպելու հիմնական պատճառ չունինք : Մեր ցեղին վրայ ունեցած սէրերնիս այնքան տարածուած է որ՝ ընդհանրապէս խօսելով՝ չենք կրնար ըսել թէ մէկ բարձրաստիճան զօրութիւն մը ունի : Կրբոր մարդկային ազգին ընդարձակածաւալ շրջանէն կը քաշուի, եւ հայրենեաց փոքր շրջանակին մէջ կ'ամփոփի, անատեն աւելի սաստկութիւն մը կը ստանայ : Իսկ իրբոր աւելի սեղմելով՝ շատ առաւել փոքրագոյն սահմանի մը մէջ կ'ամփոփի, որուն մէջ միայն անոնք բովանդակեալ են՝ որոնց հետ որ շատ կենսակցութիւնը

նեղու սովորած ենք, անատեն նոր ձեւի մը կը մտնէ, ոչ միայն մեծ զօրութիւն ունենալով՝ այլ եւ մեծ հաճութեան աղբիւր մը ըլլալով: Աւ աս եղանակաւորութեանը՝ Սարգասիրութենէ որոշելով՝ որ անիկայ բոլոր մարդոց կը տարածի, ու նաեւ Հայրենասիրութենէ ալ՝ որ ան ալ միայն մեր երկրին սահմաններուն չափ կ'ընդարձակի, զատ անունով կ'ըսենք Բարեկամութիւն:

Աս կիրքը՝ բոլոր յիշած բարեսէր կիրքերնու նման՝ իր մէջ կը բովանդակէ հաճութեան շարժութիւն մը, եւ անոր հետ մէկտեղ կապակցած բարի բաղձանք մը՝ իրեն առարկային վրայ: Աս սէրը չէ թէ միայն այնպիսի անձանց վրայ կ'ըլլայ կամ կրնայ ըլլալ, որոնք մեզի հետ ընտանութիւն ընելու յարմարութիւն ունին, այլ նաեւ անոնց վրայ ալ, որ պատուոյ արժան հանգամանքներու տէր են: Թերեւս աս նիւթին աս մասին վերաբերեալ սովորական ծանօթութիւն մըն է աս, թէ հանգամանաց նմանութիւն պէտք է՝ իբրեւ հիմն աս սիրոյն: Աս բանը չափով մը ճշմարիտ է. սակայն առանց սահման դընելու ընդունուելու տեղեկութիւն չէ: Ասան զի աս ստոյգ է որ իմացական զանազանութիւններու մէջ բարեկամութիւն կըրնայ ըլլալ: Անանկ մարդիկ՝ որ մտաւոր ներգործութեան աշխուժութիւնով եւ զօրութիւնով իրարմէ շատ կը տարբերին, կրնան՝ այն աննմանութիւնովն իրարու հետ անկեղծ բարեկամութիւն ընել: Սակայն աս ընդունելու ենք որ մէկմէկէ էապէս տարբեր բարոյական հանգամանաց տէր եղողներու մէջ, զժուար բան է տեսնելը, թէ ինտոր այսպիսի բարեկամութիւն կրնայ ըլլալ: Սէկ կողմին առաքինի ըլլալը, եւ միւսին մոլի ըլլալը, մէկուն խիստ մեծ յարգանքք եւ պատուով նկատած արդարութիւնը միւսին ոչինչ բանի մը տեղ զնեւը անանկ մեծ խտրութիւն մըն է որ՝ զժուար է որ ասիկայ անոնց մէջը՝ բարեկամութեան մասին՝ անյաղթելի պատանէշ մը չ'կանգնեցընէ:

### § 373 . Գթութեան կամ կարեկցութեան կիրքին վրայ:

Շատ անգամ մեր բոլորտիքը նեղութեան մէջ ինկածներ կը տեսնենք, անանկներ՝ որ կամ չքաւորութենէ, կամ հիւանդութենէ եւ կամ ուրիշ պատճառաւ մը իրաւամբ մեր օգնութեանը կը նային: Իրերուն աս վիճակին պահանջմունքը ընդունելու համար՝ Աստուածային Տեսչութիւնը ներսիդինիս Վիճակ-Քէտն ըսկըզունքը հաստատեր է, որ աղղական եւ զօրաւոր դրամամբ մը կը շարժէ մեզ այն շատ անգամ պէտք եղած օգնութիւնները ընելու: Աս բարեսէր կիրքը միւսներէն կը տարբերի՝ ցա-

Բարեւեր Կերբ :

ւալի շարժութեան մը վրայ հիմնեալ ըլլալով, փոխանակ հաճոյական շարժութեան: Վթութեան կամ Կարեկցութեան կիրքին կիրառութեանը առիթը ինչ եւ իցէ կերպ վշտակրութիւն մըն է: Երբոր աս վշտակրութեանը կը ծանօթանանք, աս հետեւութիւնը յառաջ կու գայ՝ բոլոր սովորական պարագաներու մէջ՝ որ ցաւալի շարժութիւն մը կը ծագի ներսիդինիս, եւ անկէ կը հետեւի բաղձանք մը վշտակրութեան ենթակայ եզոզը ազատելու:

Ըս սկզբունքը գործնականապէս շատ երեւելի եւ կարեւոր բան մըն է: Պիշօք Պըզըր աս նոյն նիւթին վրայ խօսած աւտենը տեղ մը աս կարծիքը յառաջ կը բերէ, թէ մարդոց թըշուառութիւնը շատ աւելի ուղղակի կերպով եւ կարի առաւել մեծ չափով ուրիշներուն ձեռքն է, քան թէ անոնց երջանկութիւնը: Երջանկութեան աղբիւրները, թէ մտաւոր եւ թէ մարմնաւոր, ըստ մեծի մասին մարդուս ինք իր մէջն են. եւ թէ կէտ եւ կրնան ուրիշներուն նպաստաւորութիւնովը առաւելու, սակայն սովորաբար մէկ մեծ աստիճանաւ մը չէ: Բայց մէկ անհատ մարդ մը կարող է, թէ որ այդպիսի չարակամութիւն մը ունի՝նէ, ուրիշները թշուառութեան մէջ ձգել, ոչ միայն մէկ երկու հոգի, այլ ամբողջ տուներ: Վթութեան ըսկըզբունքը, որ ոչ միայն իրօք պատահած այլ նաեւ նախատեսեալ վշտակրութեանց վրայ ալ կը շարժի, ուրիշ մէկ քանի պատճառներու հետ իմիասին՝ մարդոց աս ուրիշները երջանկացրնելու եւ թշուառացրնելու զօրութիւնը արժանաւոր կերպով ի գործ դրուելուն շատ օգնութիւն կ'ընէ: Ասիկայ չէ թէ միայն վշտակրութեանց խախտնարար ըլլալու պաշտօնով ի գործ կը գրուի, իբր թէ նախատեսութեամբ մը գործելով, այլ իրօք պատահածներուն ալ կը հասնի՝ այցելութեամբ՝ հսկողութեամբ եւ ազատութեամբ: Եւ աս եւտքի գիտողութեամբը, ինչպէս որ անջինովն ալ, աղէկ կը տեսնենք թէ մարդուս վիճակին եւ կարօտութիւններուն ինտոր գեղեցիկ կերպով եւ քաջ յարմարացած կարեւոր գործնական սկզբունք մըն է ասիկայ:

§ 374. Վթութեան բարոյական որպիսութեանը վրայ :

Երբեմն յառաջ բերուած կարծիք մըն է աս, թէ Վթութեան պէս քաղցր՝ հաճելի եւ ընդհանրապէս այնչափ օգտակար կիրք մը ուրիշ կերպ բան չ'կրնար ըլլալ, բայց եթէ առաքինական: Եւ արդարեւ զարմանալի բան չ'թուիր ասանկ կարծիք մը յառաջ բերուիլը, երբոր անոր որչափ հաճոյական



Բարեսէր զիրք :

նութիւն ունենալը կը խորհինք . սակայն կատարելապէս շխտակ կարծիք է չենք կրնար ըսել ասոր : Տարակոյս չ'վերցընող բան մը սեպուելու չափ աղէկ հասկըցուած իրական ճշմարտութիւն մըն է աս՝ թէ աս կիրքը ի սկզբան ազգամամբ կը գործէ : Եւ ընութեան ասոր աս կերպ ներգործութիւն մը տալուն դիտում մը դիւրին է տեսնելը : Բազմաթիւ դէպքերու մէջ որ կրնանք մեր ընկերը վշտակութենէ ազատել , մեր ընելու օգնութիւնը ատենին չէր կրնար հասնիլ , թէ որ տրամաբանութեան ծանր եւ զգուշաւոր թեւադրութիւններովը գործելու ըլլայինք : Աստորոյ ազգական ներգործութիւն ալ հարկաւոր է , եւ ատ հարկաւորութիւնը բնութիւնը լեցուցեր է : Աւստի ինչուան որչափ որ աս սկզբունքին կիրառութիւնը աս տեսակէն է նէ , յայտնի է թէ ոչ առաքինական կրնայ ըլլալ եւ ոչ մոլեկան :

Ասակայն ուրիշ դիտողութիւն մըն ալ կայ աս բանիս վրայ ըլլալու : Կարեկցութեան սկզբունքին կիրառութիւնը կրնանք ճնշել՝ երբոր եւելօք սաստիկ ըլլայ , կամ սաստկացընել՝ երբոր պէտք եղածէն պակաս ըլլայ՝ խորհրդածեալ եւ կամաւորական ճգանց ազդեցութեամբը : Եւ աս պարագաներուն տակը անոր ներգործութիւնը կամաւորականութեան որպիսութիւնը կ'առնէ , եւ իր կիրառութեանը պարագաներուն համեմատ չար կամ բարի կ'ըլլայ : Բարի կ'ըլլայ , երբոր լուսաւոր խղճի մտաց պահանջմունքներուն իշխողութեանը տակը կը մնայ : Բայց երբոր ատ իշխողութենէն դուրս կ'ըլլէ , ան ատեն կ'ըլլայ մոլեկան : Եւ ինչպէս որ պակասութիւնով , նոյնպէս եւ առաւելութեամբ ալ չար կրնայ ըլլալ : Թէ որ՝ օրինակի աղագաւ՝ մէկը տեսնենք որ սաստիկ՝ սակայն արդարութեամբ կը պատժուի օրինաց հեղինակութիւնովը , կրնանք խղճալ անոր վրայ . բայց թէ որ լոկ գթութեան զրգմունքովը ան անձը ազատելու աշխատինք՝ ընկերութեան իրաւունքներուն եւ օգտին դէմ , անոր ատ կիրառութիւնը անիրաւ՝ չար կ'ըլլայ : Կարծեալ՝ դժուար է որ չ'խղճանք մեզմէ օգնութիւն խնդրող մուրացկանին թշուառութեանը վրայ . սակայն թէ որ աղէկ համոզուած ենք որ անանկին ողորմութիւն տալերնուս բերմունքը ուրիշ բան պիտի չըլլայ բայց եթէ խրախոյս տալ ան մոլութիւններուն , որոնք որ այդ կերպ թշուառութեանց պատճառ կ'ըլլան , անատեն պարտք մը կրնայ ըլլալ մեզի եւ մեր կարեկցութիւնը ճնշելը եւ ողորմութիւն չ'տալը :

Ասակայն միանգամայն աս ալ չենք ուրանար՝ թէ որուն վրայ որ աս ազնիւ կիրքը իշխեցող սկզբունք մը եղած է նէ , անոր բարուցը առաքինութեանը վրայ կրնանք իրաւամբ աղէկ մակաբերութիւններ ընել : Եւ ասիկայ կ'ըսենք՝ ասոր համար որ ,

Բարեսէր ԿՅՐԷ :

Թէպէտ եւ կարեկցութիւնը հարկաւորապէս առաքինութիւն չըցուցընէր, սակայն՝ իրական ճշմարտութեան նայելով՝ հապիկը լայ որ մէկմէկու դէմ գան : Ընոնք ընդհանրապէս երկուքը մէկ շաւիղէ կը քալեն, ներդաշնակութեամբ իմիասին գործելով :

§ 375 • Երախտագիտութեան կիրքին վրայ :

Ո՛ր ըսուած ընդհանուր մտաւոր հանգամանքին մէկ ուրիշ որոշ եղանակաւորութիւնն ալ Երախտագիտութեանն է : Ըսիկայ թէպէտ եւ միւս բարեսէր կիրքերուն նման կը պարունակէ հաճութեան շարժութիւն մը ու անոր հետ կապակցած բարի բաղձանք մը կամ բարեսէր զգացում մը իր առարկային վրայ, սակայն այնպիսի հանգամանքներ ալ ունի, որ անոնցմով յստակ կ'որոշուի միւսներէն : ( ) րինակի աղագաւ՝ աս հաճոյական եւ բարեսիրական զգացմանց միաւորութեանը երբէք երախտագիտութիւն չենք ըսեր, թէ որ մէկ ընկալեալ երախտիքի մը վերայ չըլլայ : Ըսկէք ի զատ՝ Երախտագիտութիւնը իրեն ծագմանը հիմն կամ առիթ ունի չէ թէ միայն լոկ բարիք պարգեւատրուելը, այլ Խորհրդով կամ Գլխով երախտիք մը ըլլալը : Ունի որ ընկալած երախտիքնիս մէկ առանձնական կամ անձնասիրական շարժառիթի մը կրնանք տալ նէ, երախտագործին կողմէն եղած, կրնայ ըլլալ որ ձեռու ընիս անցած բարիքին վերայ հաճութիւն զգանք, սակայն՝ անիկայ պարգեւողին ինչ շարժառիթ ունենալը իմանալնու պէս, ալ ան վայրկեանէն անդին՝ չենք կրնար դէպ ի անոր երախտագիտութեան զգացում մը ունենալ : Ուստի երախտագիտութեան զգացումը ամենեւին չ'կրնար շարժիլ ներսի դինիս, թէ որ՝ իրօք կամ կարծեօք՝ ճշմարիտ եւ անխառն բարեսիրութիւնով եղած գործ մը չըլլայ աչքերնուս առջին :

Երախտագիտութեան շարժութեան կիրաւորութեանը կողմանէ շատ զանազանութիւններ կը տեսնենք այլ եւ այլ անձանց վրայ : Ոմանք կան որ ուրիշներէն շնորհք մը ընդունած ատեննին քիչ տեսանելի նշաններ կը ցուցընեն երախտագիտութեան . ոմանք ալ չեն կրնար երախտիք մը ընդունիլ ուրիշէն, առանց մեծ աղբեցութիւն կրելու այն շնորհատրութենէն : Ըստ տարբերութիւնները հաւանականաբար ըստ մասին կաղմուածքի բնածին կամ սկզբնական զանազանութիւններէ է, եւ ըստ մասին մարդոց որպիսութիւններուն եւ պարտքերուն վրայ այլ եւ այլ տնտեսութիւններ ունենալէն, կամ ուրիշ պատահական պատճառներէ :

## ԳՂՈՒԽ • Է

## ԲԱՐԵՍԷՐ ԿԻՐՔ

## ԸՍՅՈՒԱԾՍԻՐՈՒԹԻՒՆ

§ 376 . Մարդս ի սկզբան Աստուածսիրութեան սկզբունքով ստեղծուած է :

ՄԵՐԴՎԵՅԻՆ բնութեան միւս սկզբունքները իրենց Արարչին սահմանած զիրքովը մնալու համար, եւ անոնց ներդրութիւնը ինքնին արդար եւ իր վերաբերութիւններովը ներդաշնակաւոր ըլլալու համար՝ պատճառ ունինք հաւատալու թէ՛ մարդուս բնութեանը մէջ աստուածսիրութեան սկզբունք մը կար ի ըսկըզբան : Աս կիրքը՝ արտօնութիւն ունինք կարծելու թէ՛ բոլորովին նման էր միւս Բարեսէր Աիրբերուն թէ՛ բնութեամբ եւ թէ՛ գործողութեամբ, անոնց պէս երկակի ներդրութիւն ունենալով՝ ապրական եւ կամպարական : Այս սակայն մեծապէս կը տարբերէր անոնցմէ ներդրութեան աստիճանին եւ ուժգնութեանը կողմանէ, վասն որոյ մտքին ընդունակ եղած բոլոր զօրութիւնովը կը մատուցուէր ան սէրը իրեն արագպէս առարկայ եղող էակին, որուն անիմանալի բարձր եւ սուրբ բնութենէն ալ կ'ակնկալուի թէ՛ ասանկ արժան էր ըլլալ : Աս բանը՝ թէ մարդս բոլոր իր ստորակարգեալ սկզբունքներուն վրայ իշխող եւ զանոնք կանոնաւորող սիրոյ սկզբունքով մը ստեղծուած ըլլալու է ի սկզբան, կարծենք թէ յայտնի է, 'Ախ' Ա՛ երաբանութենէ ելած զիտողութիւններով :

Մտքին բոլոր բաժանումներուն մէջ, ինչուան հոս որչափ որ քննեցինք նէ, ճարտարութեան եւ իմաստութեան ապացոյցներ տեսանք. տեսանք որ ամէն բան իրեն յատուկ տեղը՝ յարմարութիւնները եւ օգուտներն ունի. եւ մէկ բան մը չ'կայ, որչափ որ դատողութիւննիս կը հասնի նէ, որ անկատար կերպով եղած ըլլայ : Թէ՛ որ պէտք ըլլայ՝ աս խնդրոյս նկատմամբ՝ Իմացականութիւնը զիտողութենէ դուրս ձգել նէ, Օգացողութեանց որոշ բաժանմանը մէջ առատ բացատրութիւններ ու

Բարեւեր ՚՚իրք :

վկայութիւններ կրնանք գտնել աս բանիս : Ինական Մղղումները, որ բնականապէս անոնք ամենէն առաջ մեր դիտողութեանը կը ներկայանան, յայտնապէս իրենց յատուկ տեղն ու օգուանները ունին . եւ թէպէտ եւ մեր ներգործուն սկզբանց կարգին մէջ ամենէն վար կը դասուին, սակայն մարդուս բընութեանը անհրաժեշտ հարկաւոր են : Թէ որ մարդս Ֆիզիգապէս հիմայ ինտոր է նէ անանկ ստեղծուած ըլլար, եւ սակայն Մտորժակներէ՝ բաղձանք բովանդակող երկրորդ բարձրագոյն կարգի սկզբունքներէն՝ զուրկ ըլլար նէ, յայտնի է թէ իր մտաւոր եւ Ֆիզիգական կարգադրութիւններուն մէջ յարմարութեան թերութիւն մը կ'ըլլար : Ակամփտութիւններն ալ՝ երբոր աստիճան մ'ալ վեր կ'ելենք՝ կը գտնենք որ ամենքն ալ իրենց տրուած ներգործութիւնները, իրենց տեսակարար բնութիւնն ու օգուանները ունին . եւ սքանչելի կերպով յարմարած են մարդուս պիտոյքներուն եւ ունեցած առնչութիւններուն : Մս նոյն բանը, եւ թերեւս եւս առաւել բարձր մտքով մը, կրից համար ալ կրնանք ըսել : — Իբրեւ հայր՝ մարդս բնական սէր մը ունի իր մէջը իր որդեցը վրայ, որ անով կարենայ գիւրութեամբ կատարել ան ծանր եւ դժուարին պարագերն որ ունի անոնց . իբրեւ որդի՝ բնական սէր մը ունի իր ծնողացը վրայ . եւ պարզապէս իբրեւ մարդ աստիճանաւ մը ներսիդին տնկական եղող սէր մը ունի իր ընկերին վրայ :

Թէ որ մարդս աս առնչութիւնները ունենալուն համար՝ աս յիշեալ սկզբունքները իր մէջը հաստատուեր է, ուրեմն իրաւունքով չէ Վ երարանութեան համեմատ աս ըրած հաստատութիւննիս՝ թէ ի սկզբան մարդուս բնութեանը մէջ աստուածսիրութեան սկզբունքը հաստատուած ըլլալու է, Մտուծոյ հետ ունեցած այն ամենաբարձր առնչութեանը համար : Թէ որ ի ըսկըբանէ իր մտաւոր կազմուածքին մէջ ասանկ մէկ սկզբունք մը չըլլար նէ, մտքին աս բանիս մէջ ունեցած կազմութիւնը յայտնապէս հակառակ է՝ որ ցար անոր բնութեանը ուրիշ մասերու մէջ ունեցած Վ երարանութեան պահանջածին : Թէ որ մեր վիճակին ըստիպողական հարկաւորութիւններուն համար՝ պէտք է որ զօրաւոր սիրոյ կապեր ըլլայ ծնողքը զաւկին հետ եւ զաւակը ծնողքին հետ, եղբայրը քրոջ եւ քոյրը եղբոր հետ կապող . եթէ հարկ է որ աս սիրոյ կապերը այնինչ չափ հաստատութեամբ բոլոր մարդկային ընտանիքին անգամները իրարու կապեն, ինչ սկզբունքի վրայ այսպիսի վարդապետութիւն մը հնար է որ հաստատուի՝ թէ մարդս ի սկզբանէ ստեղծուած է առանց իր ներսիդին ընդաբըյս սէր մը տնկուելու ան Մակին վրայ, որ երկրաւոր հօրմէ կամ եղբօրմէ անհունապէս եւելի եւ լաւագոյն է իրեն :

§ 377 . Մարդուս ի սկզբան Աստուածսիրութեան սկզբունքով ըստեղծուած ըլլալը ցուցուած Սուրբ Գրքէն :

Երկրորդ, Սուրբ Գրոց տուած վկայութենէն շատ պատճառ ունինք հաւատալով՝ թէ մարդս նախ եւ առջ ստտուածսիրութեան որոշ եւ ներգործուն սկզբունքովը ստեղծուած է : Սըտադրութեան արժան բան մըն է աս՝ որ արարչագործութեան ատեն ամէն բան որ այն Ս'եծ Ղ'արտարապետին ձեռքէն ելաւ, Բարէ է ըսուեցաւ : Ի այց թէ որ մարդս, որ յունչէ գոյութեան եկաւ, որ խորհրդոյ եւ ներգործութեան այնպիսի բարձր կարողութիւններով զարդարուեցաւ, եւ ամէն օր Աստուծոյ առատ պարգեւներովը կը լեցուէր, առանց ստտուածսիրութեան սկզբունքի (իր միւս բնածին կիրքերուն նման սիրոյ կիրքի մը, միայն թէ աստիճանաւ անոնցմէ կարի առաւել սաստիկ ըլլալով, իր առարկային մեծութեանը համեմատ, ) ստեղծուեցաւ նէ, ամենեւին չենք հասկընար եւ չ'հասկընալնիս ալ չենք կրնար ուրանալ՝ թէ այնպիսի արարչութեան մը վրայ, մարդը միայն մէջ առնելով, ինչ պատճառ կար անանկ մէկ գովասանութիւն մը ընելու : Ինչհակառակն մեզի անանկ կը թուի՝ թէ այսպիսի գործ մը, ամենածանր առնչութիւններու վրայ նկատողութենէ զուրկ ըստեղծուած, բարի չ'կրնար ըսուիլ՝ մինչեւ անգամ մարդոց համարմանը նայելով, ուր կը մնայ որ անհունապէս աւելի ընդարձակ եւ աստուածային դատողութիւնը բարի անուանէ այնպիսի գործը :

Սակայն՝ ասկէց ի զատ՝ մարդուս համար բացայայտ խօսքով ըսուած է թէ իր Արարչին պատկերին պէս ստեղծուեցաւ : Ասինքն՝ թէ մարդս ի սկզբան իր մտաւոր կազմութեանը զլիաւոր մասերովը Աստուծոյ մտքին մէկ օրինակն էր, թէպէտ ճշմարիտ է որ շատ սահմանադրեալ աստիճանով մը : Վանք որ աս պէտք է ընդունինք՝ թէ Աստուած եւ իր արդարութեանը եւ բարեսիրութեանը կիրառութիւններուն մէջ իրերուն առնչութիւններուն կամ վերաբերութիւններուն վրայ ունեցած իմաստուն եւ կատարեալ նկատողութիւններովը կը գործէ : Ինքը՝ բուն իսկ իր բնութեանը կատարելութենէն՝ ան բանն որ սիրելու արժան է նէ կը սիրէ. — ուստի թէ որ մարդս ալ իր պատկերին պէս ստեղծեր է նէ, ( այսինքն՝ իրերուն ունեցած վերաբերութիւններուն նման կամ համեմատ կիրքերով եւ բարոյական զգացողութիւններով, ) անշուշտ զինքը սիրելու բնաւորութիւնով ստեղծած ըլլալու է զանիկայ : Ազատութիւն չու-

Բարեսէր կերբ :

նինք ասանկ մէկ կարծիք մը ընելու թէ հնարաւոր էր որ Մտուած անանկ էակ մը ստեղծէր, որ բնութեամբ կամ ատէր եւ կամ անտարբեր ըլլար անանկ էակի մը վրայ, որն որ չէ թէ միայն անհունապէս իմաստուն եւ բարի ճանչնար, այլ եւ գիտնար որ իրեն հետ Մարիչի՝ պահպանողի եւ բարերարողի առնչութիւն ունի: Մ.ս կազմուածքով ստեղծուած էակի մը համար, զուրկ իրերուն վերաբերութիւններուն պահանջած կիրքերէն, Մտուածոյ պատկերին պէս ստեղծուած չէր կրնար ըսուիլ ճշմարտապէս: Ուստի մարդուն Մտուածոյ պատկերին պէս ստեղծուելուն հաստատութենէն կը հետեւցընենք՝ թէ Մտուած սիրութեան սկզբունքով ստեղծուած ըլլալու է: Եւ աս նոյն տրամաբանութիւնը աս բանիս ալ հաւատալու կը համոզէ մտքերնիս՝ թէ աս սկզբունքը բոլոր միւս կիրքերէն դէր ի վեր էր. իրեն առարկային անհուն բարձր բնութեանը համեմատ ըլլալով, որչափ որ մարդկային սահմանաւոր կարողութիւնները կը ներէրնէ: Եւ ասոնց վրայ՝ միւս բնածին սկզբանց վերաբանութիւնը աս հետեւութիւնն ալ առջննիս կը բերէ, թէ աս կ'ըբն ալ անոնց նման երկակի ներգործութիւն ունի. մէյմը սղշական՝ մէյմ՝ալ կամաւորական:

§ 378 . Մարդու ասանկ ստեղծուած ըլլալուն ուրիշ ապացոյց :

Պարծեալ՝ Սուրբ Վրոց շատ խօսքեր կան մարդու ըսուած՝ իր անկեալ վիճակին մէջ, որոնք անանկ կ'երևնայ թէ աս երեւելի սկզբունքին նորոգութեանը կը նային: Ենթամը վերկիչն մեր Վրիստոս, երբոր հարցուեցաւ իրեն թէ ո՞ր պատուիրանն է ամենէն առաջինը կամ գլխաւորը, աս պատասխանը տուաւ. «Բու Տէր Մտուածդ պիտի սիրես քու բոլոր սրտովդ, եւ քու բոլոր անձովդ, եւ քու բոլոր մտքովդ. աս է մեծ ու առաջին պատուիրանքը»: Եւ զրուցուածքը, ամենէն քիչը ըսենք, գէթ աս սկզբունքին մարդու ներսիդին ըլլալուն հնարաւորութիւնը կը ցուցնէ. եւ մասնաւորաբար աս կը հաստատէ՝ թէ մարդու անմեղութեան կամ կատարելութեան վիճակին մէջ ասիկայ անհրաժեշտ կար: — Ի վերջոյ՝ մեր բնութեան այն նորոգումը, որն որ այնչափ յաճախ յիշուած է՝ Նոր կըտակարանին մէջ Սերաստեղծումն կամ Սերստին Նոնոգ անունով, եւ անանկ ցուցուած է թէ Մտուածոյ օգնականութեամբը կ'ըլլայ, անտարակոյս՝ Սուրբ Վրոց մատենագիրներուն իմաստովը՝ ըսել է մարդու մտաւոր կազմուածքին աս էական տարրին նորոգութիւնը: Ս'ան զի մարդս Մտուածոյ պահանջ-

մանը պէս ըլլալու համար՝ Մնկումէն առաջ ինչ որ էր նէ ան պէտք է որ ըլլայ, եւ առ վիճակին մէջ մտնելու համար ամենէն մեծ կարեւոր բանը վերը յիշուածն է, այսինքն սիրել զՄատուած ի բոլոր սրտէ : — Աստի համարձակութեամբ կը հաստատենք՝ թէ ի սկզբան առ Մատուած եղող գերագոյն սէրը եսկան տարր մըն էր մարդկային բնութեան մէջ, եւ թէ հիմայ ալ անիկայ մարդու ներսիդին որոշ եւ ներգործուն սկզբունք մըն է, կամ պէտք է ըլլալ : Մնոր ներկայութեամբը մարդս ինչ որ պիտի ըլլար նէ ան կ'ըլլայ, իսկ անոր բացակայութիւնը գիւրին եւ փիլիսոփայական կերպով մը կը մեկնէ միշի իրերուն հիմակու վիճակին մէջ աչքերնուս հանդիպած բազմաթիւ չարիքներու ինչու համար ըլլալը :

§ 379. Աստուածսիրութեան գերագոյն սկզբունքին բնական զդացողութեան միւս սկզբունքներուն հետ ունեցած վերաբերութիւնը :

Ինական զգացողութեանց բաժանումը կազմող ներգործութեան սկզբունքներուն վրայ իրենց կարգովը եւ արժանաւոր տեղերովը խօսած ատեննիս, կը համարձակինք՝ ծանուցած տեղեկութիւններնէս՝ առ Մատուած գերագոյն սիրոյ սկզբունքը անոնց ամենուն գլուխը դասելու, զանիկայ թէ իր արդիւնքներովը ամենէն երեւելի՝ եւ թէ աստիճանաւ ամենէն բարձր ճանչնալով : Այժմէ ըսուի, որ անտարակոյս շատ իրաւունքով կրնայ ըսուիլ, թէ մարդկային ներգործութեան աս սկզբունքը իբրեւ որոշ եւ մնայուն սկզբունք նկատելով՝ եղծեալ է, ի վերայ այսր ամենայնի աս ալ ճշմարիտ է՝ թէ Մատուածային օգնականութեամբ տեղը կրնայ գալ նորէն : Այժմէ հաստատուի թէ մարդս բնականապէս անոր իշխողութեանը տակ չէ, դեռ աս ստոյգ կը մնայ, թէ որ Աուրբ Վրոց խօսքերը իրենց յայտնի իմաստովը պիտի հասկընանք նէ, թէ պէտք է որ անոր իշխողութիւնովը կառավարուի :

Իմացական փիլիսոփայութիւնը, ինչպէս որ աստուածային յայտնութիւնն ալ, բացայայտ կը ցուցնեն՝ թէ ատենու մէկ մեծ մտաւոր խառնակութիւն մը եղած է, թէ մարդկային մըտաց փառքը շատ նսեմացած է, թէպէտ չէ թէ բոլորովին կորստուած, եւ թէ մարդս, իր իմացական եւ բարոյական վիճակին նայելով, ճշմարտապէս եւ վայելապէս իբրեւ անկեալ կը ստորագրուի : Այլ իր այս բարոյական թիւրութեան եւ անկման ողբալի վիճակին մէջ պիտի մնայ շարունակ, թէ որ յառաջ բերած դիտողութիւններնիս շիտակ են նէ, ինչուան որ առ

Բարեւեր Վերք :

Աստուած եղող գերագոյն սիրոյ սկզբունքը տեղը չ'գայ : Սարգկային բնութեան կազմուածքին վրայ կայ ըսած իմաստութիւնն իս չենք կրնար վստահութեամբ հաստատել , ինչուան որ աս ենթագրութիւնը չ'ընենք՝ թէ իր հաստատութեանը աս հիմը կար իր մէջը ի սկզբան , եւ հիմայ ալ՝ հնարաւորութեամբ՝ կըրնայ ունենայ :

Արդ՝ ենթագրելով թէ աս սկզբունքը կայ մարդուս մտքին մէջ , կամ Ագամայ ներսիդին տնկուելով՝ եւ կամ Վերստին Օննդեան կամ Վերաստեղծութեան անունով նորոգուելով , բնականապէս աս խնդիրը յառաջ կը բերենք՝ թէ ի՞նչ վերաբերութիւն ունի ասիկայ մտքին աս բաժանմանը տակը գացող միւս սկզբունքներուն հետ , եւ ի՞նչ արդիւնքներ հաւանականաբար յառաջ կու գան անկէ : Վոկ աստիճանի նայելով , ( այսինքն՝ մեր պատուոյ համարմանը մէջ ունեցած տեղոյն նայելով , ) չենք կրնար տարակուսիլ ըսելու թէ ամէնէն առաջ է . չէ թէ միայն Ախորժակներէն եւ Հակամիտութիւններէն առաջ , այլ բոլոր միւս կիրքերէն ալ՝ ան կարգին մէջն եղողներէն ալ՝ որոնց հետ որ տիրապէս կը դասուի . չէ թէ միայն հայրենասիրութենէ եւ բարեկամներու սէրէ անհամեմատ հեռաւորութեամբ յառաջ անցնելով , այլ եւ Օնողասիրութենէ եւ Սրգեսիրութենէ ալ գերազանցելով : «Վն որ հայրը ու մայրը ինձմէ եւել կը սիրէ , ինձի արժանի չէ . եւ ան որ տղան կամ աղջիկը ինձմէ եւել կը սիրէ , ինձի արժանի չէ» : Ստ. Ժ . 38 : Աս սկզբան կիրառութենէն յառաջ գալու արդիւնքները իր ունեցած գերագոյն աստիճանէն կրնայ հասկըցուիլ : Արբոր կատարելապէս ի գործ կը դրուի , այսինքն՝ Սուրբ Վրոց ըսածին պէս՝ բոլորով սրտիւ՝ մտք եւ հոգւով իրեն յատուկ առարկային կ'ուղղուի , ի հարկէ բան մը կրնանք սեպել՝ թէ բոլոր միւս ստորակարգեալ սկզբունքները իրենց սահմանին մէջ կը պահուին : Անատենն ալ մարդս ախորժակներ՝ հակամիտութիւններ եւ ընտանեկան կիրքեր կ'ունենայ . եւ սակայն աստուածսիրութեան սկզբունքին ուժգնութիւնը այնքան առաւել կ'ըլլայ , որ անոնց ամէն անկարգ յօժարութիւնները կը սանձահարուին , եւ բոլորն ալ այն շրջանին մէջ կը դառնան եւ անկէ զուրս չեն ելլեր , ուր որ Աստուած ի սկզբան զրեր էր զանոնք :

§ 380 . Աս սկզբան բացակայութենէն ուրիշ սկզբանց չափազանց եւ մեղանշական ներգործութիւնները կը ծագին :

Հիմայ քիչ մ'ալ ասոր հակադարձ կողմը մտածենք , եւ



տեսնենք թէ արդեօք չենք կրնար մարդկային բնութեան ներկայ վատթարութեան ինչէն ըլլալը մեկնել, առանց այնպիսի ենթադրութիւններ ընելու՝ թէ մարդուս ներսիդին անանկ ըսկըբունքներ կան հաստատուած՝ տնկական եղող, որոնք ինքնին՝ հարկաւորապէս եւ ամէն պարագայի տակ չար են : Թէ որ աստուածսիրութեան գերագոյն սկզբունքը վերցուի այն տեղէն, ուր որ Սուրբ Գիրքն ու բանականութիւնը միաբան կը գնեն զանիկայ մարդկային մտաց սկզբնական կազմութեանը մէջ, անատեն ի հարկէ երկրորդական սկզբանց վըսյ եղող խիստ մեծ մէկ սանձահարութիւնը կը վերնայ : Աստուծոյ ամէն բարեաց աղբիւրէն յառաջ գալու սէրը բնականապէս մեր մէջը կը կենդանանայ, եւ մեր ներկայ երջանկութեանը եւ օգտին հետ վերարբերութիւն ունեցող սկզբունքները կ'ըլլան իշխող : Ասկէ՛ կը տեսնենք որ՝ յառաջ կու գան ան անկարգութիւնները, որոնց համար բոլոր անաչառ խուզախնդիրք՝ մինչեւ անգամ հետեանոս փիլիսոփայք՝ կը վկայեն թէ կայ մարդկային ազգին մէջ. եւ որն որ վերակերպելու կը ճգնի լուսաւորեալ բանականութիւնը եւ փիլիսոփայութիւնը եւ մասնաւորաբար կրօնքը՝ իր տուած կրթութիւններովը եւ մասնաւոր ազգեցութիւններովը : Ախորժակները, որ առաջ իրենց յատուկ տեղն ու պաշտօնները ունէին, հիմայ իրենց համար դրուած սահմաններէն դուրս ելած են, եւ չափազանցութեան ու անժուժկալութեան զանազան ձեւերովը ամէն երկիր հազարաւորները իրենց գերի ըրած են : Ակամատութիւնները, որոնց շատը սերտիւ կը կապակցեն մեզ մեր նմաններուն հետ, եւ իրենց արժանաւոր կիրառութեամբը քիչ զօրութիւն եւ երջանկութիւն չեն տար մարդկային բնութեան, անկարգութիւնով չափէ դուրս սաստկացած են ներգործութեամբ : Խղճմտանքը՝ իրաւ է որ՝ միշտ իր յորգորակները կը շարունակէ. եւ կամքն ալ՝ Խղճմտանքին թելադրութիւններէն՝ քիչ շատ ընդգիմակալութիւն կ'ընէ. բայց ինչ օգուտ, ասոնք աստուածսիրութեան սկզբունքէն զօրութիւն չընդունելովնին, որն որ՝ եթէ ըլլայնէ՛ անշուշտ մեծ օգնութիւն է իրենց, դիմամարտութիւնը անհաւասար կու գայ, եւ իրենց ըրած ջանքերը անզօր կ'ելլեն : Իրերուն աս վիճակին մէջ մարդիկ, որոնք ուրիշ պարագաներու տակ եղած ըլլայիննէ՛՝ Ամենակարողին բազուկին պաշտպանութեանը պիտի յանձնէին ինքզինքնին եւ պիտի սիրէին յանձնուիլը, հիմայ իրենց գլխաւոր երջանկութիւնը հարստութեան եւ իշխանութեան հետամտութեանը՝ աշխարհիս անչափաւոր կենցաղւոյն եւ անստոյգ վայելչութիւններուն մէջ կը գտնեն : — Ահա իրերուն աս վիճակէն կը գտնենք որ կը ծագի այն յիմարութիւններուն եւ մեղքերուն ճշմարիտ աղբիւրը, որոնք

Բարեսէր կիրք :

որ կը աստուայեցընեն մարդկային ազգը : Աստուած մարդուս սրտին մէջն որ աթուռացեալ չըլլայնէ, անոր տեղը անանկ սկըզբունքներ իշխեցող կ'ըլլան, որոնք՝ իրենց արդար կիրառութեամբը որքան անմեղ եւ օգտակար էին ալ նէ, չափազանցելովն կ'ըլլան չար, եւ «յարաժամ միայն չար» :

§ 331 . Աս սկզբունքին չ'դրութ ենէն յառաջ եկած հետեւութիւններուն վրայ ուրիշ բացատրութիւններ :

Անցեալ հատուածին նիւթը պզտիկ բան մը չէ . բոլոր հատուածին մէջ՝ կը տեսնուի որ՝ գլխաւորապէս իրական ճշմարտութիւններ յառաջ բերուած են, առանց վրանին բացատրութիւններ ըլլալու : Ասկայն որովհետեւ կրնայ ըլլալ որ ոմանք առջի բերանը դիւրաւ չ'կարենան հասկընալ՝ թէ ինտոր կ'ըլլայ որ աստուածսիրութեան սկզբունքին կախ մնալէն կամ եղծումէն անոր ընծայուած : այն չարիքները բնականապէս կամ հարկաւորապէս յառաջ կու գան, անոր համար քիչ մ'ալ աւելի պիտի որոճանք նոյն նիւթին վրայ : Արբեմն կ'ըլլայ որ լոկ մէկ յաւելեալ բացատրութիւն մը՝ հետազօտութեան նիւթին վրայ նոր լոյս մը ձգելով՝ անանկ ազդեցութիւն մը կ'ընէ խուզանքիւր եւ գողին մտքին՝ որպէս թէ մէկ ուրիշ ձեռնարկութիւն մը կամ ապացոյց մ'ալ եւելցած ըլլար : Թէ որ ուրիշ մէկ սկզբան մը կախեալ մնալէն կամ եղծանելէն աստուածսիրութեան սկզբունքին բացակայութեանը վրայ ստորասածներնուս նման հետեւութիւններ յառաջ կու գան նէ, առ բանը մեզի յայտնի վկայութիւն մը կ'ըլլայ ետքի յիշուած սկզբունքին եղծմանը վրայ ըրած հաստատութիւններնուս շտակ ըլլալուն : Այս հակադարձը՝ թէ որ ստորակարգեալ սկզբանց ջնջուելէն կամ բոլորովին անգործ ըլլալէն մտքին ուրիշ մասերուն մէջ անկանոնութիւն եւ թիւրութիւն չ'պատճառիրնէ, առ ալ զօրաւոր հաւանականութիւն մը կու տայ մեզի՝ թէ բարձրագոյն սկզբանց ջնջուելը կամ բոլորովին անգործ ըլլալն ալ անվնաս բան է : Աս երկու դիտողութեամբ դիւրաբանը՝ մեծ մասամբ՝ հասարակութեան փորձին տակը կրնանք ձգտել : Այս ո՞րն է արդեօք իրականապէս ճշմարիտը :

Այնթաղրինք մէկ մարդ մը, որմէն մէկ պատճառով մը տեւողականապէս ջնջուած ըլլան իր ընտանեկան կիրքերը, կամ ըստ բնութեան՝ եւ կամ ըստ ներգործութեան : Այսպիսի օրինակներ՝ թէպէտ բնաւ յաճախ չեն պատահիր, սակայն երբեմն կը գտնուի : Աս ընտանեկան կրից խանդարումը կամ բոլորական անգործութիւնը իր վրայ պատահած անձը իր որդւոցը կամ իր ընտանիքէն եղող օր եւ իցէ մէկուն վրայ առաջուան պէս սէր չու

Սէր առ Աստուած :

նենար: Իսկ ասիկայ ընդհանրապէս դիտուած եւ շատ անգամ ծանուցուած է որ ասանկ վիճակի մը մէջ եղող մարդը՝ ուրիշներուն հետ բաղդատմամբ՝ շատ աւելի հաւանական է որ ստորին ախորժակաց իշխողութեանը տակն իյնայ, ինքզինքը՝ ըսնէք թէ՛ աւառակ սովորութեանց տայ կամ գինեմոլութեան զարնէ: Վանի որ ընտանեկան կիրքերը կային ներսիդին, քանի որ խորազաց նկատողութեամբ կը նայէր իր ծնողացը՝ իր զաւկըներուն եւ իր կնոջը վրայ, զօրաւոր օգնական շարժառիթներ ունէր իրեն՝ իր ախորժակները սանձահարելու: Արոշ կը տեսնէր որ եթէ ինքզինքը անոնց տայնէ, ոչ միայն իր ընտանեացը ունեցած պարտքերը պիտի չ'կրնայ ըստ արժանւոյն կատարել, այլ զանոնք մեծ անարգութեան եւ թշուառութեան մէջ պիտի ձգէ: Իր վիճակին աս տեսութիւնը անանկ մեծ ազդեցութիւն ունէր իր մտացը վերայ որ անով կը կարողանար մոլեկան ունակութեանց հրապուրուած ատենը անոնց դէմ դնելու եւ զանոնք իրմէ հեռու պահելու: Իսկ երբոր ընտանեկան կիրքերը վերցան ներսիդին, երբոր մերձաւորաց սէրը մարեցաւ սրտին մէջը, անատեն անոնց իշխողութեանը գերի ինկաւ:

Վարձեալ՝ թէ որ ընտանեկան կրից հետ մէկտեղ հայրենասիրութիւնն ու մարդասիրութիւնն ալ ջնջուած են թաղրենք, (եւ ալ աւելին՝ թէ որ գթութեան եւ երաստագիտութեան սկզբունքներն ալ եղծուած համարենք,) ան ատեն անոր իր ախորժակացը տիրապետող իշխողութեանը տակն իյնալուն հաւանականութիւնը յստեանապէս կ'առաւելու աս պարագաներով: Մարդկային ներգործութեան աս զխաւոր սկզբունքներուն հետ շատ զանազան տեսակ երեւելի շարժառիթներ մէկտեղ կը ջնջուին, որոնք որ շատ աղէկ ազդեցութիւն մը ունէին իր վրայ: Այլ թէ որ առաջ հնարաւոր էր իրեն ախորժակաց հրապուրանացը դէմ դնելունէ, հիմայ հաւանական է որ անոնցմէ յաղթուի: Ամբը, որուն պաշտօնն է խղճմտանքին առաջնորդութեամբը կանոնաւորել եւ սանձել ախորժակները. աս յիշուած աղբիւրներէն մեծ օգնութիւն կ'ընգունէր. եւ երբոր աս օգնութիւնը վերնայնէ, անատեն անոր զօրութիւնն ալ նոյն համեմատութեամբ կը պակսի, եւ ալ յոյս դնելու տեղ մը չ'մնար: Ինութեան կարիքները որ եւ է տեսակ կերակուր մը կ'ուզեն սնանելու համար. եւ թէ որ ընտանեաց սէրէն՝ հայրենասիրութենէ եւ մարդկային ազդին սէրէն ծագած աղնիւ սնունդները չ'գտնուին, անշուշտ զգոյսականութեան արհամարհելի աղտեղութիւններովը պիտի յագենան: Աս է աս դիտողութիւններուն վրայ մարդու մտքին ըրած դատումը. որն որ հաւանականաբար ամէն լրջութեամբ խորհող պիտի ընդունի:

Ունակութիւնք Չգացողութեանց :

Բացորոշ կը տեսնուի որ աս բացատրութիւնները՝ բոլոր իրենց զորութիւնովը աստուածսիրութեան սկզբունքին ալ կը յարմարին : Որչափ առնն որ աս սկզբունքը տիրապետող ըլլայ ներսիդինիս, անհնար է՝ ինչպէս որ ըսինք՝ որ ստորին կիրքերնիս չափազանցնն, եւ անոնց ներգործութիւնը մոլեկան ըլլայ : Աս բարձր սիրոյն ազդեցութեանը տակն եղած ատեննիս կը զգանք որ չենք կրնար այնպէս անարգել մեր Արարիչը. չենք կրնար այնչափ ու չինչ համարել անոր մեղմէ փնտռած երախտագիտութեան պահանջմունքները. չենք կրնար այնպէս անարգաբար արհամարհել անոր իմաստութեանը եւ բարեսիրութեանը ունեցած անհուն պարտքերնիս, որ վայրկեան մը մեր կիրքերը անոր արգիլած կերպովը յագեցընենք : Անոնց ամէնը յանդիմանուած ու յաղթուած կը մնան սրտերնուս մէջ տիրապետող առարկային դիմացը : Բայց վերցուր աստուածսիրութեան սկզբունքը, եւ ահա իսկոյն հազարաւոր շարժառիձներ, որոնցմով կը կարողանայինք զանոնք իրենց սահմանեալ տեղը պահելու, կը կորսուին ան մեծ սկզբունքին հետ մէկտեղ, որուն վրայ որ հաստատուած էին. եւ անոր տեղը անկէ անհունապէս ստորին եղող ուրիշ սկզբունքներ իշխանութեան կը բարձրանան :

## ԳՂՈՒԽ • Ը

### ՈՒՆԱԿՈՒԹԻՒՆՔ ՉԳԱՅՈՂՈՒԹԵԱՆՑ

§ 382 . Ունակութիւն բառին նշանակութիւնը :

Ա՛ռաջարկենք Բնական Չգացողութեանց աս կարգին վրայ մեր հետազոտութիւնը վերջացընել թեթեւ ինչ դիտողութիւն մ՛ալ Ունակութեան օրէնքին արդիւնքներուն վրայ ընելով՝ անոր մեր բնութեան աս մասին հետ ունեցած կապակցութեանը նկատմամբ : Որովհետեւ արդէն առիթ ունեցած ենք Ունակութեան ընդհանուր բնութեանը վրայ քանի մը տեղեկութիւն

Ունակութիւնք Ձգացողութեանց :

տալու, եւ շատ հեղ տեսած ենք մտաւոր ներգործութեանց վարայ անոր ինչ ազդեցութիւն ունենալը, վասն որոյ հարկ չէ որ հոս նոյն բանին վրայ երկար ժամանակ ծախենք: Ունակութիւն բառը, մտքին զանազան կարողութիւններուն վրայ որ կը գործածուինէ, աս պարզ իրողութիւնը կը ցուցնէ, թէ հարկ չի ներգործուիլնը կրկնուիլնով իմ անողորմութեամբ որչորմութեամբ որչորմութեամբ կը սորոշուի:

§ 383 . Ունակութիւնք Ախորժակաց :

Ռնական զգացողութեանց Ֆաղձանաց մասին, այսինքն Ռնական Մղղումներուն ախորժակներուն՝ Հակամիտութիւններուն եւ կրից վրայ Ունակութեան յառաջ բերած արգիւնքները դիտած ատեննիս, ինչուան հոս ինչ կարգով եկանք նէ՝ նոյն կարգը պիտի բռնենք, բացառելով բնական ազդումները, որոնց հետ ունակութեան օրէնքը բան չունի: — Ուստի սկսինք մեր դիտողութիւններուն՝ ծանուցանելով, թէ ախորժակի ունակութիւններ կ'ըլլան. ուրիշ խօսքով՝ թէ Մխորժակները, զգայական սկզբանց Ռնական Մղղումներէն ետեւ եկող գասը, կրկին եւ կրկին իրենց հաճոյքը կատարուելով՝ կը զօրանան: Մխորժակաց սկզբնական ներգործութիւնը ազդամա՞ր է. սակայն իրենց բնութեանը, ինչպէս եւ բաղձանաց բոլոր եղանակաւորութիւններուն ալ, մէկ պատահական յատկութիւնն է աս՝ որ զիրենք յագեցունելէն շատ կամ քիչ հաճութիւն յառաջ կու գայ: Եւ հաճութեան փորձառութենէն շատ անգամ զանոնք կրկին գործողութեան կը շարժենք անանկ պարագաներու մէջ, որ ատեն զուտ ազդական կիրառութեան ամենեւին առիթ չ'կայ, կամ կայ ալ նէ շատ քիչ: Եւ յպէս երբոր բաղձանքը կամաւորական ջանքով մը՝ կամ գէթ կամաւոր թոյլտուութեամբ մը կըրկին եւ կրկին կը կատարուի, շուտով օր աւուր վրայ կը սաստկանայ, մինչեւ որ վերջապէս տիրապետող իշխողութիւն մը կը ստանայ: Եւ գործողութեան ասանկ ըլլալը արեւցուցիչ ըմպելիքներու սովորած մարդոց վրայ գժբաղգաբար այնչափ յաճախ դիտածներովնիս կը հաստատուի: Եւ յպիսի մարդիկ թէ որ իրենց ախորժակը քանի մը հեղ միայն յագեցուցած ըլլային, անտարակոյս իշխողութիւնը ձեռուրնին կ'ըլլար. սակայն ատ հաճութիւնը երկար ատեն շարունակ այնչափ անգամ կատարած ըլլալովնին, եւ ամէն մէկ կրկնութեամբ ախորժակնին աւելի եւս զօրացած ըլլալով, կամաց կամաց իշխողութիւնը իրենց ձեռքէն դացած եւ ախորժակնին բռնացած է, մինչեւ որ վերջապէս բուրբ իրենց անձը անոր իբր թէ գերի եղած է: — (Տես § 49:)

§ 384 . Ունակութիւնք Հակամատութեանց :

Հակամատութիւններն ալ՝ Ըստրժակաց նման՝ աս օրէնքին իշխողութեանը ենթակայ են : Ուրիշ [սօսքով՝ Հակամատութեան ունակութիւններ ալ կ'ըլլան, ինչպէս որ ախորժակի : Օրինակի աղագաւ՝ Ընկերականութեան սկզբունքը ազգական ներգործութիւն ունի. սակայն աս անտարակուսելի է որ մենք զօրութիւն ունինք, ինչպէս եւ աներկբայ մեր պարտքն ալ է, զանիկայ պէտք եղած կանոնաւորութեան տակն առնել : Սակայն առանկ ընենուս տեղը՝ թէ որ աս բաղձանքը շարունակ կատարելու ըլլանք, լոկ անկէ զգացած հաճութիւններնուս համար, առանց մեր վրայ ունեցած ուրիշ պարտքերնիս նկատելու, պիտի տեսնենք որ արագութեամբ կը զօրանայ, եւ որ աւուր վրայ աւելի զժուար կ'ըլլայ մեզի զանիկայ ըստ արժանոյն կանոնաւորելը : Այլ իրական ճշմարտութեան նայելով՝ կան առանկ մարդիկ, որոնք աս բարի սկզբունքին անզուսպ կիրառութիւնովը ինքզինքնին վերջապէս ան վիճակին հասուցած են, որ առանձնութիւնը՝ որն որ ամէն բանաւոր մարդ ուզելու է երբեմն, իրենց միշտ խիստ անտանելի կու գայ :

Թերեւս չ'կայ հակամտութիւն մը, որ աս կերպով մեծապէս չ'զօրանայ : Քաջածանօթ բան մըն է աս՝ որ անհամար անձանց վրայ Ստացման բաղձանքը՝ շարունակ կրկնութեամբ աստիճան աստիճան զօրանալով՝ իշխող եւ տիրապետող սկզբունք մը եղած է : Պէտք չէ որ կարծենք թէ ազահ մարդուն իր ստացուածոցը վրայ ունեցած սաստիկ սէրը ի բնէ կամ ի ըսկըզբանէ կար իր ներսիդին : Կ'ընդունինք արդարեւ որ անոր սերմը կամ տարրը բնականապէս կար իր մէջը, ինչպէս որ ամէն մարդու վրայ ալ կայ : Սակայն ինտո՞ր կ'ըլլայ որ ան չափազանցեալ եւ ուժգին աստիճանին կը հասնի : Ըտիկայ կծծի մարդուն ինք իր ձեռքովը ըրած գործն է, որուն պատասխանատուն ինք է առաւել, քան թէ իր բնութեան մէջ եղած յօժարութիւնները : Ինք առտուրնէ ինչուան գիշեր՝ օրէ օր եւ տարուէ տարի Ստացման սկզբունքը սաստիկ կիրառութեան մէջ կը պահէ կամաւորապէս. որ ասոր բնական եւ հարկաւոր հետեւութիւնն ալ աս կ'ըլլայ՝ որ անիկայ իբրեւ իշխող զգացում մը կը տիրապետէ իր սրտին մէջ :

Ըսանկ ալ Իշխանութեան Բաղձանքը : Իշխանութիւնը, ինքնին նկատելով, բնական բարեաց այլ եւ այլ ձեւերուն մէկը կրնանք սեպել տիրապէս : Այլ ըստ այսմ՝ համարձակութիւն ու

## Ունակութիւնք Ջրացողութեանց :

նինք աս հաստատութիւնը ընելու, ինչպէս աս նիւթին վրայ յատկապէս տուած տեղեկութիւններնուս մէջ ծանուցինք, թէ իշխանութեան բաղձանքը՝ ըստ արժանոյն կանոնաւորուելու ըլլայնէ՛ պարտաւելի բան չէ: Սակայն բազմութիւ օրինակներ կը տեսնենք, որոնց վրայ աս բաղձանքը ամենեւին ստորակարգեալ սկզբան կերպարանք չունի: Այլ պատճառն աս է որ կրկնութեամբ չափազանց զօրութիւն ստացած է. մտաւոր ունակութիւն մը ձեւացած, եւ հետեւապէս ասիկայ իշխող սկզբունք մը եղած է: Աս սաստիկ իշխանասիրութեան ոգին իր մէջը ունեցողը կ'ուզէ որ ամէն մարդ ոտքը իյնայ գեանատարած երկրպագութիւն ընէ իրեն: Վրեթէ չափազանց խօսք մը ըրած չենք ըլլար՝ թէ որ ըսենք, թէ Տիեզերաց արարչին վրայ ալ անոր մեծութիւնը եւ բարձրութիւնը խորհած ատենը՝ իբրեւ իրեն թշնամիի եւ նախանձորդի աչքով կը նայի:

## § 385 . Ունակութիւնք կրից :

Ստորին կարգի ներդործուն սկզբանց վրայ եղած աս նոյն ծանօթութիւնները կրից բարձրագոյն կարգին ալ նմանապէս կը վերաբերին: Օրինակի աղագաւ՝ երբեմն Բարեատեաց կրից վրայ Ունակութեան որոշ արդիւնքները կը տեսնենք: Մէկը իր գրացիին վրայ քիչ մը խորշումն կ'ունենայ սրտին մէջը, ասիկայ նախ եւ առաջ թերեւս լոկ անհաճոյ կասկածի մը կերպարանք կ'ունենայ, աս կասկածները եւ անհաճոյ զգացումները յաճախ կը կրկնուին. նայիս որ կամաց կամաց աւելի կը հաստատուին եւ կ'արմատանան իր ներսիդին, եւ օբաւուր վրայ ունակութեան արդեցութիւնովը աւելի որոշ եւ պինդ ըլլնութիւն մը կը ստանան. եւ վերջապէս կը փոխուին չարակամ եւ տեւողական ատելութեան:

Այն կերպով Բարեսէր կրից վրայ ալ կ'իշխէ Ունակութեան օրէնքը: Օճողական սէրը առաջին սկզբնաւորութեանը ատենը զօրաւոր է եւ որոշ կը տեսնուի: Սակայն իրեն սիրալիր առարկային կարօտ վիճակը զանիկայ գրեթէ շարունակ կիրառութեան մէջ կը պահէ. եւ ասանկով, թէ որ զուակը անպատշաճ բաներ չընէ նէ՛ որոնք այսպիսի պտրադաններու տակ բնականապէս յառաջ գալու արդիւնքները կը ճնշեն եւ կը նուազցընեն, որդեհիրութիւնը արագութեամբ անսահման զօրութիւն կը ստանայ: Այլ ասով ըստ մասին կը մեկնուի աս բանը՝ որ երբոր պատանեկութեան լրացեալ հասակին ուստր մը կամ դուստր մը կը մեռնին նէ, ծնողացը ունեցած վիշտը, թէպէտ ա-

Ունակութիւնը Զգացողութեանց :

մէն աս կերպ պարագայի մէջ ծանր է, մանկութեան ատեն պատահած մահուանէ աւելի սաստիկ եւ չափազանց կ'ըլլայ : Տարօք յառաջացած զաւակ մը երբոր մահը կը տանինէ, ոչ միայն շատ յոյսեր անյուսութեան կը փոխուին, այլ երկար ժամանակեայ շարունական կրկնութեամբ սէր սիրոյ վրայ բարգուած եւ գումարած ըլլալով, ծնողական սրտին՝ եթէ ներելի է ըսել՝ աւելի մէկ մեծ մասը իր հետը կ'առնէ կը տանի :

Անտարակոյս աս գիտողութիւնները բոլոր Ֆարեսիբականաց կարգը տիրապէս դասուած կրից համար ալ կրնանք առնել, Ֆարեկամութեան՝ Հայրենասիրութեան՝ Արատագիտութեան եւ Կարեկցութեան : Ան մարդն որ անանկ վիճակի մը տէր է որ հարկ է իրեն շատ խորհիլ իր հայրենիքին օգտին եւ ազգկութեանը համար, եւ հայրենասիրութիւնը աս կերպով շարունակ կիրառութեան մէջ կ'ըլլայ, փորձութեան օրը՝ ամէն ուրիշ պարագաները նոյնը ըլլալով՝ ինք ուրիշներէն աւելի սաստիկ եռանդ կը ցուցնէ հայրենասիրութեան : Ան անձն որ կարտելոց՝ հիւանդաց եւ քանտարգելոց վրայ ունեցած անխնայ հոգածութիւնովը իր կարեկցութեան կիրքը կիրառութեան մէջ պահած է շատ տարիներ, կը գտնէ որ համակրութեան սկզբունքը աւելի կատարեալ կերպով համարուն եղած իր մէջը եւ աւելի ուժգնութեամբ կը գործէ, քան եթէ այնպէս ի գործ դրած չըլլար զանիկայ : Աւ աս ալ կրնանք յաւելուլ՝ թէ աս վարդապետութիւնը՝ բոլոր ընդարձակութեամբը՝ բարեսէր կրից ամենէն բարձագունին՝ Աստուածսիրութեան ալ կը վերաբերի : Աս ազնիւ սկզբունքը, աս գերագոյն հանգամանքն ալ, որ չէ թէ միայն սրբացած բարի մարդոց՝ այլ եւ հրեշտակաց կը մտնեցնէ մեզ, յառաջադիմութեան ընդունակ է : Ունակութեան ազգեցութիւնովը՝ կը գտնենք որ՝ մինչեւ անգամ ներկայ կեանքիս մէջ պայծառութիւնով եւ զօրութիւնով օր աւուր վրայ կ'աճի կը զօրանայ : Որչափ որ Աստուծոյ վրայ կը մտածենք, որչափ որ մեր բոլոր հասարակ գործաւնութիւնները իրեն հետ կը կապակցենք, այնչափ աւելի լըյսով իր փառքը մտաւոր տեսութիւններնուս առջին կը պարզուի, եւ մեր սրտին պաշտօնն ու սէրը կը շարժէ :

§ 386 . Երկրորդական ներգործուն սկզբանց ծագմանը վրայ :

Հոս՝ աս գլխուս մէջ ունեցած գիտողութիւններնուս հետ մեկտեղ՝ կրնանք ան մտաւոր հանգամանքներուն ծագմանը բացատրութիւնը տալ, որոնք կ'ըսուին Արիւրդաւան սկզբունք ներ-



գործութեան : Ոմանք՝ օրինակի համար՝ կը տեսնենք որ երեւելի բաղձանք մը կ'ունենան հագուստի կապուստի՝ կահ կարասիքի եւ զարդերու : Եւ կիրքը՝ պէտք չէ որ կարծենք թէ՛ մարդու ներսիգին ի բնէ անկական բան մըն է, թէպէտ եւ այնպէս տեւողական եւ երեւելի կրնայ ըլլալ ներգործութեամբ, որ անկական սկզբան կերպարանքով երեւնայ : Զաւանականն աս է որ, մէկրի հանելով ան բաղձացեալ առարկաներուն իրօք ցանկալի եւ գեղեցիկ մասերը, մարդիկ զանոնք զլեւառ-բապէս կը փնտտեն՝ ոչ այնչափ անոնց բոտ ինքեան ինչ բան ըլլալը նկատելով, այլ մանաւանդ մէկ օգտակար վախճանի մը համար, մանաւորաբար պատուոյ եւ յարգութեան համար, որ ատոնց ներածիչ եւ նպաստաւոր կը համարեն ան բաները : Սակայն ի սկզբան կարծեցեալ շահաւոր վախճանի մը համար ներսիգինիս ծագող բաղձանքը երկար ժամանակ ի գործ դրուելով, վերջապէս՝ Ռեակուլթեան օրէնքին արգելամբը՝ միջոցն ու վախճանը այնպէս սերտ կապակցութեամբ իրարու հետ կը զուգորդենք, որ խիստ դժուար կ'ըլլայ մեզի զանոնք իրարմէ զատելը : Եյնպէս որ ատենէ մը ետեւ երեւութաբար իրական սէր մը կամ կիրք մը կ'ունենանք նոյն իսկ միջոցներուն վրայ, ( հանգերձին՝ կարասիքին՝ զարդին վրայ, եւ ուրիշ ինչ որ ըլլայնէ, ) ատանց վերջին վախճանին վրայ շատ խորհելու, որ անոր նախելով նախ եւ առաջ բաղձանք մը շարժած էր ներսիգինիս անոնց վրայ :


Ոմանք կան որ, բանը աւելի եւս բացատրենք, սաստիկ սէր մը կը ցուցնեն ստրկի վրայ. ինչք ըսել չենք ուզեր, բառը իր ընդարձակ իմաստովը առնելով, այլ Սփակ, լոկ արծաթ ու ոսկի դրամ՝ փողերանոցէն ելած : Եսիկայ Երծաթսիրութեան շատ ընդհանուր մոլութեանը այլ եւ այլ կերպարանքներուն մէկն է, որով որ երբեմն կ'երեւնայ : Սակայն չենք կրնար կարծել թէ ստրկի սէրը, բառերուն աս մտքովը, մարդուս մտացը համարուն կիրք մըն է, եւ թէ մարդս անով ծնած է : Եսիկայ կը սիրուի՝ նախ՝ պարզապէս իբրեւ միջոց, մէկ կարծեցեալ շահաւոր վախճանի մը հասնելու նպաստաւոր : Իսկ ստրկի տենչ ունեցող մարդը տարիներով նայած է անոր վրայ՝ իբրեւ միջոց վայելման՝ ազդեցութեան եւ պատուոյ, աս կերպով միջոցն ու վախճանը մէկմէկու հետ զուգորդելու ունակութիւն մը ձեւացուցած է. եւ վերջապէս ատ երկու բաները այնքան սերտ միաւորութեամբ կապուած են իրարու հետ իր խորհրդոցը մէջ, որ սովորական պարագաներու մէջ անկարող կը գտնէ ինքզինքը զանոնք իրարմէ բաժնելու :

Իարձեալ՝ չենք կրնար կարծել որ մարդս մկներու եւ մա-

մեզ կներու հետ ընկերութիւն ընելու բնական բաղձանքով մը ստեղծուած ըլլայ, անանկ՝ ինչպէս որ իր նմանին ընկերութեանը բնականապէս կը բաղձայ: Սակայն երբոր մէկը մարդկային ընկերութեանէ բոլորովին կը զրկուի, կը գտնենք որ ընկերակա՞նութեան սկզբունքը՝ իրեն յագենալու օրինաւոր եւ սովորական աղբիւրներէն զրկուած ըլլալով՝ իր կարիքը աս ստորին կարգի անասնոց ընկերութեամբը լեցընելու ետեւէ կ'ըլլայ: Եւսպիսի պարագայի մը մէջ կրնայ մէկ մարդ մը՝ Պարոն Ղարէնքին եւ Ղուզէն կոմսին պէս՝ ընտանութիւն մը ծագեցընել այսպիսի կենդանեաց հետ, որն որ՝ Ունակութեան սկզբունքին օգնականութիւնովը՝ ատենէ մը ետեւ անանկ որոշ բնութիւն մը կ'ունենայ եւ այն աստիճան սաստկութիւն կը ստանայ, որ ատ որպիսութիւնները միայն սկզբնական կրից վրայ կը տեսնուին սովորաբար: — Ես կերպով անտարակոյս կերպ կերպ Երկրորդական ախորժակներ՝ հակամիտութիւններ եւ կիրքեր կրնայ ձեւանալ, գրեթէ առանց համբանքի շատ: Եւ հոս առջեւնիս մէկ նոր եւ շահաւոր տեսութիւն մը ունինք բացուած՝ մարդկային բնութեան վրայ, անանկ տեսութիւն մը, որ անով մարդոց պատմութեան եւ գործքերուն մէջ դիտած շատ բաներնիս կրնանք մեկնել. եւ սակայն ասոր վրայ ալ աւելի մասնաւորիւ քննութիւն ընելու արտօնութիւն չունենալնուս, կը պարտաւորինք, այսչափով խօսքերնիս կարճել հոս:



ՉԳԼՆՅՈՂ ՈՒԹԻՒՆԵՐ



ՄԵՍՆ ԵՐԿՐՈՐԴ

ԲԱՐՈՅԵԿՆԵ ՉԳԼՅՈՂ ՈՒԹԻՒՆԵՐ

ԿԱՄ

ԽՂՃՄՏՆԵՐ

ՄՏԻՆ ԲԱՐՈՅԵԿԱՆ ՀԱՆԳԱՄԱՆՔՆԵՐԸ





ՇԱՐԺՈՒԹԻՒՆՔ ԲԱՐՈՅԱԿԱՆ ՀԱՒԱՆՈՒԹԵԱՆ  
ԵՒ ԱՆՀԱՒԱՆՈՒԹԵԱՆ

§ 337 • Ահարկութիւն ամբողջ մտքին ընդհանուր բաժանումներուն :

ՀԻՄՆՅ որ մարդուս մտաւոր բնութեանը յառաջիկայ հետաքրքրութեան արժան եւ մեծակշիռ մասին քննութեանը պիտի պարապինք, արժան է որ վայրիկ մի աչքերնիս դարձնենք մտքին ան ընդհանուր բաժանմանը վրայ, որն որ ինչուան հոս ջանացինք իրբեւ հիմն ունենալ բոլոր մեր հետազոտութեանցը: Ըս ընդհանուր կարգաւորութիւնը՝ զիւրին է յիշել որ՝ աս էր, Իմացականութիւն, Օգացողութիւնք եւ Կամք: Օրտա Իմացականութեան սահմաններէն Օգացողութեանց սահմանները մտած առննիս նախ եւ առաջ Շարժութեանց երկրորդ գական բաժանմանը մէջ կը գտնենք ինքզինքնիս: Եւ շարժութեանց սահմաններէն կ'ելլենք ու յառաջ որ կ'երթանքնէ, կու գանք կը հասնինք Կամքին աւելի ներքին եւ հեռաւոր բաժանմանը, կամ՝ մէկ կողմանէ՝ Բաղձանաց սահմաններէն անցնելով, եւ կամ՝ միւս կողմանէ՝ Բարոյական Պարտականութեան զգացմանց սահմաններէն, որ ասոնց երկուքն ալ՝ եթէ ներելի է ըսել՝ Շարժութիւններէն Կամքին երթալու ճամբուն վրայ են կամ այն միջոցը կը բովանդակեն: Ըս կարգաւորութեան համեմատ՝ մեր առաջին նպատակը Բնական Օգացողութեանց բաժանմանը տակ գացող զլսաւոր շարժութեանց մէկ քանին քննելն ըրինք: Եւ յետոյ Բաղձանաց մասը ձեռք առնելով, ջանացինք՝ Բնական Մղմանց, Մտորժակաց, Հակամիտութեանց եւ Արից վրայ տուած այլ եւ այլ ծանօթութիւններովնիս՝ կարգաւ բացատրել ինչ որ աստ բաժանման տակ տիրապէս կը բովանդակուէր նէ:

Ինչ կերպով որ կրնայինք նէ ան ընթացքովը նիւթերնուս աս մասը լմընցուցած ըլլալով, հիմայ կ'առաջարկենք կրկին Շարժութեանց բաժանմանը դառնալ՝ որուն մէկ մասը Բարոյական Օգացողութեանց ընդհանուր բաժանմունքին տակը

Հարժուժիւնք բարոյական հաւանութեան եւ անհաւանութեան :

կ'երթայ, եւ վերոյիշեալ երկու ճամբաներուն միւսովն ալ կամբին մերձանալ: Ըս կարգաւորութեան համեմատ Ռարոյական Օգացողութեանց վրայ՝ Բնականէն որոշելով՝ փիլիսոփայական նկարագրութիւն մը ըրած ատեննիս չպիտի կանք աննեք աս ընդհանուր խնդիրը քննութեան բերելու համար, թէ արդեօք մարդս բարոյական բնութիւն ունի՞ թէ չէ: Սարգոս բարոյական բնութիւն ունենալը ընդունուած կը սեպենք: Ըռաքիւղյն այն քաջածանօթ խօսքը, ուրիշ դիտողութիւնները մէկ դի ձգելով, աս խնդիրը կը վճռէ որոշակի: «Աստի՛ շէլտանուշէրը որ օրէնք չստի՛ն՝ էրբոր բնախանութար օրէնքին գործէրը ին գործէն, անտէք որ օրէնք չստի՛ն՝ իրենց անշէրտան օրէնքը բուն իրէնք էն. որ ին ցո-ցընէն օրէնքին գործէրը իրենց սրբին մըջ գրաստած, իրենց խղճարտէրին վայո-լեւտէրը, է- իրենց հարին դաստի՛բը իրար յանդիմանելով իսկ լէ իրաստանք արալով»:

§ 388 . Կարգաւորութիւն բարոյական զգացողութեանց :

Ս'եր բարոյական բնութիւնը Բնականին չափ յօդաւորութիւն չունի, թէպէտ եւ Բարոյական Օգացողութեանց ընդհանուր բաժանումը ճիշդ Բնական Օգացողութեանց ընդհանուր բաժանմանը համեմատ է: Ինչպէս որ Բնական Օգացողութիւնները նախ եւ առաջ գտանք որ Հարժուժեանց եւ Ռաղձանաց երկրորդական կարգաւորութեանը կը բաժնուին, անանկ ալ Բարոյական Օգացողութիւնները՝ ճիշդ նոյն կերպով՝ Բարոյական Հարժուժեանց եւ Բարոյական Պարտականութեան զգացմանց երկրորդական բաժանմանը կը ձեղին: Սակայն՝ դիւրին է յիշել որ՝ Բնական Օգացողութեանց երկու բաժանումն ալ, Հարժականն ու Ռաղձողականը, երկուքն ալ՝ տեսանք որ՝ բաղմամբիւ մանր բաժանումներ ունին: Իսկ բարոյականին ճիւղը ասանկ չէ: Ըս գլխաւոր բաժանման մէջ ամէն ամէնը գտնուածը միայն բարոյական շարժութիւններն ու պարտաւորիչ զգացողութիւնները կամ բարոյական պարտաւորութեան զգացումներն են, որոնք առջիններուն վրայ հիմնեալ են, եւ ասոնք մէկ երկրորդական բաժանում մը չունին բնաւ:

Աւստի կրնայ ըլլալ որ կարծուի թէ մէկ երկու խօսքով պիտի լմննայ աս նիւթիս նկարագրութիւնը: Եւ յիրաւի ասանկ պիտի ըլլար, եթէ պատշաճութեամբ կարենայինք հետազօտութիւննիս միայն աս երկու կարգ զգացումներուն վրայ ընել, եւ անոնցմէ անդին չանցնիլ: Եւ սակայն բարոյական զգացումները, թէ շարժականներն են եղեր եւ թէ բաղձողականները, անանկ

Հարժուժիւնք բարոյական հաւանութեան եւ անհաւանութեան :

մեծակշիռ վերաբերութիւններ ունին, եւ այնչափ ծանրակշիռ հետեւութիւններ, որ վայելուչ կ'երբեւայ զանոնք ոչ միայն իրենց բնութիւնովը քննելու, այլ ունեցած բաղմնապատիկ կապակցութիւնովն ալ՝ ըստ չափու՝ հետազոտելու :

§. 386. Հաւանութեան եւ անհաւանութեան բարոյական զգացումներուն բնութեանը վրայ :

Նախընթաց հատուածին մէջ ըսածնաւ համեմատ նորէն կը կրկնենք հոս՝ թէ միայն երկու կարգ մտաւոր հանգամանք կայ, որ՝ ճշմարտութեամբ խօսելով՝ բարոյական զգացողութեանց բաժանմանը տակ կ'երթան, որոնք բնութեամբ մարդուս մտքին էական մէկ մասը կը սեպուին. թէպէտ եւ աս ալ շատ ճշմարտ է՝ որ խել մը ուրիշ բաներ ալ կան մարդուս մտքին մէջ, ինչպէս բարիին եւ չարին վերացեալ ըմբռնումները, խիղճ՝ այսինքն խղճմտանքին յանդիմանութիւնը, որոնք շատ կապակցութիւն ունին բարոյականի հետ : Ս'եր Բարոյական բնութիւնը, ան որ տիրապէս բարոյական բնութիւն կրնայ ըսուիլ նէ, իրեն ունեցած պատահական վերաբերութիւնները մէկդի հանելով, աս երկու մասերէն բաղկացեալ է, նախ՝ Բարոյական Հարժուժիւնք, այսինքն հաւանութեան եւ անհաւանութեան, եւ եւրոպէր՝ Բարոյական Պարտականութեան զգացմունք :

Անական Հարժութեանց շատ զանազան տեսակները կան, ինչպէս՝ շարժութիւնք գեղեցկութեան, վսեմութեան, ծաղու, զարմացման, յարգութեան, ամօթոյ եւ ասոնց նմանները. սակայն բարոյական շարժութիւնները ամէնը մէկ տեսակ կամ կարգ են : Աւ ասոնք, որոշ մտաւոր հանգամանքներ սեպուելով, վերոյեղեալ անուններովը կը յիշուին, այն է՝ զգացմունք Հաստնութեան եւ Անհաստնութեան : Աս մտաւոր հանգամանքներուն վրայ պիտի ըլլայ յառաջիկայ խօսքերնիս : — Այս առաջին տեղեկութիւնն որ պիտի տանք աս է, թէ ասոնք բնածին կամ սկզբնական զգացումներ են. որ ըսել է թէ իրենց երեւան ելլալուն կամ գոյութեան գալուն պատկանաւոր պարագաներուն մէջ ասոնք մտքին սկզբնական կամ գոյացական բերմունքներէն կը ծագին, եւ թէ նաեւ տարրական կամ պարզ են բնութեամբ : Աս ասանկ ըլլալով՝ ի հարկէ աս զգացումները սահմանի չեն գար. վասն զի սահման ըսածնիս, բաց ի ան կերպ սահմաններէն՝ որ ուրիշ բան չէ բոյց. եթէ խել մը նոյնանշան բառեր գործածել, միայն յօգուածոյ բաներու վրայ կ'ըլլայ : Անոր համար՝ ասոնց որոշ կամ յատուկ բնութիւնը, ան բանը՝

Հարժուժիւնք բարոյական հաւանութեան եւ անհաւանութեան:

որով որ են ինչ որ եննէ, որն որ ամէն որ եւ իցէ ուրիշ բանէ զատ առանձին ինչութիւն մըն է, ստորագրութիւնով ծանօթութեան չ'ըբրուիր, այլ միայն գիտակցութեամբ կ'իմացուի: Իայց սակայն ազատութիւն չունինք տյսպիսի կարծիք մը ընելու, թէ աս զգացումներուն բնութիւնը կամ բոլորովին անծանօթ ըլլայ, կամ՝ իբրեւ ընդհանուր բան մը՝ սխալ ըմբռնուած ըլլայ. քանզի աս կերպ զգացմանց գիտակցութիւնը առ հասարակ ամենուն ներսիզին կ'ոյ, եւ աս ալ ընդհանրապէս ընդունուած բան մըն է՝ որ չ'կայ մէկ տեսակ մը հմտութիւն որ գիտակցութիւնով եղած հմտութեան չափ դիւրամբունելի ըլլայ մեղի: Ուստի ով որ իր առջեւը բարուոյ եւ չարի եղելութիւն մը տեսած է, այն կերպ եղելութիւն մը որ բանին վրայ յըստակ ըմբռնուամբ ունենալու կարող եղած եւ իրօք ունեցած է, կը կարծենք թէ ան մարդը անշուշտ հաւանութեան եւ անհաւանութեան շարժութիւնները ունեցած է:

§ 390. Հաւանութեան կամ անհաւանութեան շարժութիւններուն տեղոյն կամ դիրքին վրայ, մտաւոր նկատմամբ:

Բարոյական շարժութեանց կամ բարոյական հաւանութեան եւ անհաւանութեան շարժութիւններուն տեղը, միւս մտաւոր բաժանմանց հետ մէկտեղ նկատելով, իմացողութիւններէն կամ իմացականին ներգործութիւններէն անմիջապէս ետքն է: — Աս կողմանէ բնական շարժութեան հետ մէկ են, որ անոնք ալ նոյն դիրքը ունին: Անհարին է որ՝ օրինակի աղաքաւ՝ մէկ բանի մը գեղեցկութիւնը զգանք, որ ասիկայ բնական զգացողութեան ներգործութիւն է, առանց նախ եւ առաջ նոյն իսկ բանին վրայ իմացումն կամ հմտութիւն ունենալու: Ասոր պէս ալ անհարին է մէկ բանի մը վրայ հաւանութիւն կամ անհաւանութիւն ունենալ, բառերուն բարոյական մտօքը, առանց նախ ան հաւնուած կամ չ'հաւնուած բանին վրայ մէկ իմացում մը կամ մէկ հմտութիւն մը ունենալու:

Աւ ինչպէս որ Բնական շարժութիւններէն ետեւ Բաղձողական զգացումները կու գան անմիջապէս, անանկ ալ բարոյական շարժութիւններէն ետեւ, որոնք են հաւանութեան եւ անհաւանութեան զգացումները, (վասն զի աս կարգէն եղող շարժութեանց տակը բովանդակեալ մտաւոր հանգամանքները ասոնք են միայն,) անմիջապէս Պարտաւորիչ զգացումները կամ բարոյական պարտաւորութեան զգացումները կը յաջրորդեն: Ուստի բարոյական շարժութեանց տեղը՝ մէկ կողմը իմացողութիւնները



Հարժուժիւնք բարոյական հաւանութեան եւ անհաւանութեան :

Կամ իմացական հանգամանքները եւ մէկ կողմն ալ Պարտաւորիչ զգացումները ունենալով՝ անոնց երկուքին միջին վայրն է, եւ ոչ ուրիշ տեղ : Կը ինտոր որ բարոյական շարժութիւն չըլլար առանց նախընթաց իմացողութեանց, նմանապէս բարոյական պարտաւորութեան զգացում չըլլար առանց հաւանութեան կամ անհաւանութեան նախընթաց շարժութիւններու : Ըստ այսմ՝ երբոր մէկ եղելութեան մը մէջ պարտաւորութեան տակ ենք՝ կ'ըսենք՝ այսինչ բանը ընելու կամ անկէ հրաժարելու, այդպիսի պարտաւորութեան մը տակ ըլլալնուս պատճառը ամէն ատեն կրնանք գտնել մտքերնուս մէջ պատահած նախորդ ներգործութեանը վրայ, այսինքն մեր ունեցած հաւանութեանը կամ անհաւանութեանը վրայ՝ մեր ներսիդին պարտականութեան զգացում պատճառող բանին բնութիւնը ինտոր որ կը բերէ նէ :

§ 391 . Բարոյական շարժութեանց մէջ փոփոխութիւններ կ'ըլլան՝ իրենց նախորդ իմացումներուն մէջ եղած փոփոխութեանց համեմատ :

Թէ որ հաւանութեան եւ անհաւանութեան շարժութիւնները, որ յետագայ պարտաւորիչ զգացմանց խարխիսն են, նախընթաց իմացողութեանց վրայ հիմնեալ են նէ, կրնանք ահրնկալել, եւ իրօք եղածն ալ ան է, որ իրենց որպիսութիւնը՝ այն նախորդ իմացողութեանց մէջ եղած փոփոխութիւններուն համեմատ պիտի փոփոխի : Թէ որ՝ օրինակի համար՝ անանկ բան մը պատմուի մեզի, որ աչքերնուս առջեւը յստակ երեւնայ որ մեծ յանցանք է նէ, մեր ան բանին վրայ ունեցած անհաւանութեան շարժութիւնը համարձակ եւ որոշ կ'ըլլայ : Բայց ըսենք թէ անանկ պատահելու ըլլայ որ ետքէն մէկ քանի ուրիշ իրողութիւններ ալ մէջ բերուի, ու անոնցմով՝ ան պատմուած բանը որ իբրեւ եղած հաւատացեր էինք՝ մէկ երկբայութեան ու շփոթութեան մը մէջ ինչալու ըլլայ նէ, անատեն մեր անհաւանութեան զգացումներն ալ իսկոյն անոր հետ մէկտեղ կը շփոթին եւ կ'անորոշանան, աստիճանաւ մը ճիշդ ան անորոշութեան եւ շփոթութեան համեմատ, որն որ՝ ան նոր պարագաներուն երեւան ելլելովը՝ մեր ունեցած նախորդ իմացողութեան վրայ եկաւ : Թէ որ ալ ետքէն ուրիշ նոր պարագաներ մէջ մտնելով տեսնենք որ այն իբրեւ յանձանք կարծած բաներնիս հակադարձն է եղեր նէ, մեր բարոյական շարժութիւնները մէկ նոր փոփոխութեան մըն ալ ենթակայ կ'ըլլան,

Հարժուժիւնք բարոյական հաւանութեան եւ անհաւանութեան :

Եւ ան պատահած դէպքը փոխանակ դատապարտելու՝ իբրեւ հաւանութեան արժանաւոր կը նկատենք :

Եւ աս փոփոխականութիւնն որ բարոյական շարժութեանց որպիսութեանը եւ աստիճանին վրայ կայ նէ, մեր բարոյական բնութեանը մէջ թերութիւն մը չէ : Ընդհակառակն՝ անոր ունեցած մեծ արժէքին մէկ ամենավճռական ցոյցքն է : Թէ որ մարդուս բարոյական բնութիւնը անանկ կազմուած ըլլար, որ այսինչ այնինչ պարագաներուն մէջ մէկ բան մը չէ թէ միայն չար կամ բարի դատէր, այլ ան պարագաներուն մէջ էական փոփոխութիւններ ըլլալէն ետեւ ալ տակաւին ան նոյն առջի վճռոյն վրայ հարկաւորապէս անխախտ մնալու ըլլար նէ, ստուգիւ չէինք կրնար զանիկայ մարդուս առաջնորդ ըլլալու ապահով կանոն մը սեպել : Մէկը մարդ մը կը սպաննէ, եւ՝ ըստ մեր կարծեացը՝ չար դիտաւորութիւնով կամ անզգամական խորհրդով, եւ մեր խղճմտանքը անհաւանութիւն ցուցնելով իսկոյն կը դատապարտէ ատ գործը : Սակայն ետքէն կ'իմացուի որ ան նախ եւ առաջ դիտմամբ կարծուած հարուածը բոլորովին դիպուածական բան մըն է եղեր, խղճմտանքնիս կամ բարոյական բնութիւննիս ալ անմիջապէս իր վճիռը ան եղելութեան նոր կերպարանքին հետ կը համաձայնեցընէ, ու ան առջի անհաւանութեան եւ դատապարտութեան վճիռը ետ կ'առնէ : Թէ որ ասանկ չըլլար, թէ որ մարդուս բարոյական բնութիւնը իր ներգործութեանցը մէջ փոփոխութիւններ ընելով իրեն նախորդ իմացողական կամ ճակատողական ներգործութեանց մէջ եղած փոփոխութիւններուն չ'համաձայնէր նէ, հարկաւ մոլութիւնը առաքինութեան հետ եւ յանցանքը անմեղութեան հետ կը շփոթէր, եւ՝ իբրեւ բարոյական վարմունքի կանոն՝ ոչ միայն բոլորովին անարժէք կ'ըլլար, այլ բացարձակապէս եւ յետին աստիճան մնասակար :

§ 892 . Բարոյական հաւանութեան եւ անհաւանութեան առարկաներու վրայ :

Պէտք չէ որ կարծենք թէ բարոյական հաւանութիւնով եւ անհաւանութիւնով եղած բարոյական վճռադատութեան սահմանները անխախտ ամէն բանի կը տարածին : Ուստի վայելուչ եւ մէկ քանի բաներու կողմանէ ծանրակշիռ խնդիր մըն է աս, թէ որոնք են հաւանութեան եւ անհաւանութեան շարժութիւններուն յատուկ առարկաները : — Ըստ ինդոյն պատասխան ա. կը ծանուցանենք թէ այդ առարկաները կամաւոր ներգործող

Հարժուժիւնք բարոյական հաւանութեան եւ անհաւանութեան :

էակներ են : Յիշեալ զգացումները առջեւնին եկող իրողութեան մը վրայ բարւոյ եւ չարի վճիռները կարելու գործերնուն մէջ անկենդան իրերու հետ բան չունին : Այլ սակեց ի զատ՝ իրենց կիրառութեանը առարկայ ըլլալու համար միայն լոկ բուսական եւ անասնական կեանքը հերիք չէ, այլ պէտք է որ իմացական՝ զգայական եւ կամական կեանք ըլլայ : Ուրիշ խօսքով՝ իրենց վճռադատութեանը յատուկ առարկայ եղող բաներուն վրայ հարկ է որ ան իմացողութեան՝ զգացողութեան եւ կամեցողութեան ստորոգելիքները գտնուի, որոնք կամաւոր ներգործողութեան մէջ հարկաւորապէս բովանդակեալ են :

բ. Հաւանութեան եւ անհաւանութեան օրինաւոր առարկաները չէ թէ միայն կամաւոր ներգործող, այլ Բարոյական ներգործող էակներ են : Չ'կայ մէկ էակ մը բարոյական շարժութեանց առարկայ եղող, (այսինքն անհասարիս է որ մէկ էակ մը բարոյական մտքը հաւանութեան կամ անհաւանութեան առարկայ ըլլայ,) բացի անոնցմէ, որոնք խղճմտանք կամ բարոյական բնութիւն ունին : Անհնար է որ ասոնցմէ դուրս ուրիշ էակ բարւոյ եւ չարի գիտութիւն ունենայ. եւ ի հարկէ անհնարին է նաեւ՝ որ բարիին կանոններուն ինքզինքը համաձայնեցընէ : Այսն սյնորիկ անբան անասունները բնաւ աս շարժութիւններուն յատուկ առարկայ չեն սեպուիր :

գ. Բարոյական ներգործողութիւն ունեցող էակները (աս խօսքէն ի հարկէ կամաւոր ներգործողութիւնն ալ մէկտեղ կը հասկըցուի) բարոյապէս պատասխանատու են : Ուրիշ խօսքով միայն ան բաներուն մէջ բարոյական հաւանութեան եւ անհաւանութեան տիրապէս առարկայ են, որոնք որ իրենց կարողութեանը տակ կ'իյնան ճշմարտապէս : Այս ծանօթութիւնը, որով կը ցուցուի որ բարոյական հաւանութեան եւ անհաւանութեան իշխողութիւնը չէ թէ միայն բարոյական ներգործութեան տէր եղող էակներու վրայ, այլ անոնց ալ մինակ իրօք կարողութիւններուն տակն ինկած բաներուն վրայ է, ու անկէ անդին չանցնիր, գործնականապէս մեծակշիռ տեղեկութիւն մըն է : Ինչուան ուր որ կրնանք մեր արտաքին գործքերը կառավարել նէ, մինչեւ հոն պատասխանատու ենք. այսինքն մինչեւ ան կէտը բարոյական հաւանութեան եւ անհաւանութեան տիրապէս առարկայ ենք : Ինչուան ուր տեղ որ մեր իմացողութեան եւ զգացողութիւններուն եւ կամքին ներգործութիւնները կարող ենք կարավարել նէ, մինչեւ հոն ալ պատասխանատու ենք : Իսկ ինչուան որչափ որ մեր ըրած ներգործութիւնները, թէ ֆիզիզական ըլլան թէ մտաւոր, կամ անկամաւոր եւ կամ ազդական են նէ, սյնչափը խղճմտանքին նկատողութեանը եւ վճռադա-

տուձեանը յատուկ առարկան չէ. վասն զի բոլոր աս կերպ գործքերը, թէպէտ եւ ընողինն են եւ անկէ չեն զատուիր, բայց սակայն անոր իշխողութենէն գուրս են: — Ըստ այսմ՝ բարոյական ներգործողութեան տէր եղող մը՝ բոլոր իր այլ եւ այլ կարողութիւններուն կիրառութեամբը՝ ինչ որ պարտական է ընելու նէ ան բաները երբոր կ'ընէ, հաւանութեան առարկայ է: Իսկ երբոր ան նոյն կարողութիւններուն կիրառութեանը մէջ՝ ինչ որ պարտական է ընելու նէ անիկայ ընելէն կը պակսի, գատապարտելի է: Իր պարտաւորութեան հիմը իր ունեցած կարողութեանը տարածութիւնն է. եւ զանիկայ կատարելուն չափը իր խղճմտանքին կանոնն է: Եւ աս պարզ տեսութենէն սա երկու բաները ակնարկութեամբ կ'իմացուին, այսինքն մէյմը իրեն գատուելու կանոնը, ու մէյմ՝ ալ իր պատասխանատուութեան կարի ընդարձակութիւնը:

ԳԼՈՒԽ Բ

ՏՐԱՄԱԲԱՆՈՒԹԵԱՆ ՈՒՆԵՑԱԾ ՎԵՐԱԲԵՐՈՒԹԻՒՆԸ  
ՄԱՐԴՈՒՍ ԲԱՐՈՅԱԿԱՆ ԲՆՈՒԹԵԱՆԸ ՀԵՏ

§ 393 . Ան վարդապետութեանը վրայ, որ տրամաբանութիւնն աւ խղճմտանքը իրարու հետ կը շփոթէ:

ԸնՅԵԱՂ գլխուն մէջ խօսուածները եւ մասնաւորաբար բարոյական շարժութեանց մէջ եղած փոփոխութիւններուն սկզբունքներուն կամ հիմնական պատճառներուն վրայ զրուցուածները պատրաստութիւն մըն են մեզի հիմսյ ուրիշ մէկ նիւթ մը ձեռք առնելու, որն որ որչափ որ հետաքրքրական է նէ՝ նոյնչափ ալ մեծակշիռ է գործնականապէս: — Երբեմն ասանկ մէկ կարծիք մը եղած է՝ թէ ան բարոյական վճիռները կամ դատումները, որ իբրեւ բարոյական էակ կարող ենք ձեւացընել նէ, ուղղակի արտաբանութեան արդիւնքներն են: Ըս վարդա-

մարդուս բարոյական բնութեանը հետ :

պետութեան փաստաբանները, մարդուս ներսիդին մէկ որոշ սկզբունք մը կամ խղճմտանք ըլլալը մերթելով, կ'երեւնայ որ լոկ տրամաբանութեան կարողութիւնը ըստ ամենայնի բաւական կը համարին մտքերնուս մէջ բոլոր այն արդիւնքները յառաջ բերելու, որոնք բարոյականի կերպարանքն ունին : Մէկ խօսքով՝ կրնանք սեպել թէ կամ մարդուս խղճմտանք ունենալը բոլորովին կ'ուրանան, եւ կամ որ նոյն է փիլիսոփայապէս՝ եթէ գործնականապէս չէ նէ, խղճմտանքն ու գատողութիւնը կը նոյնացընեն :

Սակայն՝ բռնին ամէն կողմը մտածելով՝ ասանկ մէկ սխալմունք մը գործուիլը, որ ստուգիւ ծանր եւ նախապաշարեալ սխալմունք մըն է, շատ զարմանալի չ'թուիր, երբոր կը խորհինք թէ որչափ մօտ վերաբերութիւն ունի տրամաբանութիւնը խղճմտանքին հետ : Արտեսնուի՝ որ մենք առանց տարակոյսի աս վարդապետութեանս սխալմունք է կ'ըսենք կոր : շարկ չենք սեպեր մեզի՝ արդէն այնչափ խօսք ըլլալէն ետեւ՝ հոս կրկին աշխատիլ հաստատելու, թէ տրամաբանութիւնն ու խղճմտանքը նոյն բանը չեն, եւ թէ մարդուս բարոյական բնութիւնը որոշ եւ ենթակայական գոյութիւն մը ունի : Կայց սակայն մտադիրութեամբ կ'ընդունինք որ խղճմտանքն ու տրամաբանութիւնը իրարու հետ շատ մօտ եւ ծանրակշիռ վերաբերութիւն մը ունին : Անանկ մեծակշիռ վերաբերութիւն մը, թէ գործնականապէս նկատելով եւ թէ փիլիսոփայապէս, որ հոս պիտի մնանք քիչ մը անոր վրայ քանի մը բացատրութիւն ընելու :

§ 393 : խղճմտանքին ու տրամաբանութեան մէջ եղած սերտ կապակցութեանը վրայ :

Տրամաբանութիւնը՝ դիւրին է յիշել որ՝ զուտ իմացական գործողութիւն մըն է. որ կը կազմուի կարգով մը իրարու յաջորդող առաջարկութիւններէ, եւ նոյնպէս մէկմէկու ետեւէ յաջորդող վերաբերական թելադրութիւններէ կամ վերաբերութեան իմացումներէ, եւ սակայն՝ ինքնին նկատելով՝ տիրապէս շարժութիւն կամ բաղձանք ըսուած բան ամենեւին չ'պարունակեր իր մէջը : Մէկ աս պարագան բոլորովին կը զատէ տրամաբանութեան կարողութիւնը մարդուս բարոյական բնութեանէն. որն որ՝ իր ներգործութեամբը՝ տրամաբանութեան կարողութեան պէս իմացումներ կամ նոր իմացական տեսութիւններ չ'ծագեցընեն ամենեւին, այլ իրեն ծագեցուցածը միայն բարոյական շարժութիւններ եւ բարոյական պարտաւորութեան

ղգացումներ է: Հաւանականաբար ամէն մարդ կրնայ ըսել վըստատաճութեամբ՝ թէ իր գիտակցութեամբը մէկ տարբերութիւն մը կ'իմանայ հաւանութեան եւ անհաւանութեան բարոյական շարժութիւններուն ու լոկ համեմատութեան եւ անհամեմատութեան իմացական իմացողութիւններուն մէջտեղը, որ աս իմացողական ճանաչումները տրամաբանութեան յատուկ է: Ախտակցութեան աչքին առջեւը՝ աս անտարակոյս է որ՝ աս երկու բաները բոլորովին տարբեր են մէկմէկէ բնութեամբ. եւ անհնարին կը սեպուին իրարու տեղ առնուելու եւ կամ երկուքը նոյն բան համարուելու: Բարոյական զգացումը ուրիշ բան է. եւ իմացական ճանաչումը կամ թելադրութիւնը, որ թէ տրամաբանութեան ընթացքին մէջ եւ թէ ելած հետեւութեանը մէջ կայ, ուրիշ բան:

Թէպէտ եւ տրամաբանութեան կարողութիւնն ու խղճմտանքը ասանկ իրարմէ որոշ են բնութեամբ, սակայն վերաբերութեամբ խիստ մօտ կապակցութիւն ունին մէկմէկու հետ, ինչպէս որ վերը ակնարկեցինք. աս պատճառաւ՝ որ իմացականութիւնը, եւ մասնաւորաբար տրամաբանող կամ հետեւութիւն հանող մասը, բարոյականին ներգործութեանցը հիմը կամ խարխիսն է: Պէտք է որ մէկ բան մը գիտնանք առաջ, անոր վրայ իմացումն եւ հմտութիւն ունենանք, որ հասկա թէ կարող ըլլանք ան բանին վրայ բարոյական ճանաչումն ալ ունենալու: Բարոյական ճանաչողութիւննիս, ինչպէս որ արդէն առիթ ունեցած ենք բացատրելու, մեծ ճշդութեամբ մեր իմացական ճանաչողութեանը կը համեմատի: Ար ըսել է թէ իր ըրած որոշումներուն հիմերը կը փոփոխին, իմացականին ներկայացուցած նոր հմտութիւններովը: Հետեւաբար չենք կրնար կատարեալ վըստատաճութիւն ունենալ անանկ բարոյական որոշման մը վրայ, որ տհաս կամ անկատար հմտութեան վրայ հիմնեալ է: Արչափ որ զգուշութեամբ եւ խոհականութեամբ տրամաբանենք մէկ բանի մը վրայնէ, այնքան կատարեալ կերպով կը հասկընանք ան բանը թէ՛ ինքնին եւ թէ՛ իր ունեցած վերաբերութիւններովը, եւ այնչափ վստաճութեամբ կրնանք ընդունիլ մեր խղճմտանքին ձայնին անոր բարոյական որպիսութեանը վրայ ազգած վճիռը:

§ 393. Նախընթաց հատուածին վրայ բացատրութիւն:

Նախընթաց հատուածին մէջ ըրած գիտողութիւններնիս դիւրութեամբ կը բացատրուի: Երբոր՝ օրինակի աղագաւ՝ մէկու մը համար միւսի մը ստացուածքը գողցեր է կ'ըսուի, կը գտնենք որ

մարդու բարոյական բնութեանը հետ :

Խղճմտանքնիս՝ ընդհանրապէս խօսելով՝ պատրաստ է մեր բընութեանը Վարչին իրեն սահմանած պարտքը կատարելու, սակայն երբեմն կ'ըլլայ որ իր տալու վճիռները կը յապաղին եւ կ'արգիլուին՝ արամարանութեան կարողութեանը ընելու հետաքրնութիւններուն եւ հանելու հետեւութեանը ժամանակ տալու համար : Տրամաբանութիւննիս իր հետազօտութիւնները կ'ընէ, եւ թերեւս կը գտնենք որ ան ըսուած գողութիւնը երկար ժամանակեայ խորհուած բան մըն է եղեր, եւ ոչ միայն մասնաւոր փորձութիւն մը չըլլալով, այլ եւ մեծ մեղք ըլլալը աղէկ գիտնալով գործուեր է : Վս պարագաները նկատելով խղճմտանքն ալ անմիջապէս իր ընելու վճիռը կու տայ : Սակայն կարելի է ըրած հետաքրնութիւններնէս կ'իմանանք որ գողութիւնը յետին կարօտութեան եւ հետեւաբար մեծ փորձութեան մեջ գործուեր է, եւ անկէջ զատ՝ անանկ ստացուածք մը գողցուեր է, որուն վրայ եղած անձնական ստացման իրաւունքը՝ հասարակաց հաւանութիւնովը՝ այնքան ճիշդ եւ բացարձակ չ'սեպուիր, ինչպէս ուրիշ ստացուածքներու վրայ : Վս պարագաներուն մեջ դարձեալ խղճմտանքնիս՝ առջինին պէս՝ կը գատապարտէ յանցաւորը, սակայն հաւանականաբար մեղմ վճռով մը : Իճանին ինտոր ըլլալը աւելի եւս փնտռակելով՝ կը տեղականանք որ՝ թէպէտ եւ ստացուածք մը կայ առնուած, եւ ան ալ տերօջը մեծ կորուստ ըլլալով, սակայն սխալմամբ առնուեր է, բոլորովին գիպուածական բան մըն է եղեր : Վս տեղ խղճմտանքնիս՝ աս նոր երեւան ելած պարագային յարմարելով՝ այն կարծեցեալ գողութիւնը բոլորովին անմեղ կը վճռէ :

Ուստի խղճմտանքը, արամարանութենէն որչափ որ որոշ էնէ, իմացման եւ բաղդատութեան այլ եւ այլ կարողութիւններէն, մասնաւորաբար արամարանութենէն օգնութիւն եւ հաստատութիւն կ'ընդունի : Տրամաբանութեան կարողութիւնը, անոր իրաւամբ ընծայած աստիճաննիս որչափ բարձր ալ որ ըլլայ նէ, գէթ աս բանիս մեջ ստորին ճանչնալու ենք, եւ բարոյական կարողութեան իբրեւ սպասահարկուն եւ աղախինը պէտք է որ սեպենք : Աւ ասկէ ի զատ՝ բարոյականը, թէ որ կողմնական խանգարիչ ազդեցութիւններ չըլլան նէ, արամարանութեան ատեն ատեն ներկայացուցած նոր նոր ճշմարտութիւններուն եւ վերաբերութիւններուն կատարելապէս համաձայնելով՝ կը փոփոխի : — Վս սերտ կապակցութեան եւ խղճմտանքին արամարանութենէն ընդունած աս մեծ օգնութեան համար է որ երբեմն աս երկուքը իրարու հետ շփոթած են : Սակայն ուղիղ մտաւոր տեսութիւններ ունենալու համար էապէս հարկաւոր բան մըն է՝ որ աս ծուռ գաղափարը շիտկուի, եւ որ մեր մտաւոր բնու-

Տրամաբանութեան ունեցած վերաբերութիւնը

Թեան աս երկու մասերուն մէջ եղած ճիշդ վերաբերութիւնը աղէկ հասկըցուի :

§ 396 • Խղճմտանքին կրթութեանը կամ դատարարականութեանը վրայ :

Ըստ գլխուն մէջ ըսուածներէն կը հետեւեցնենք թէ՛ փիլիսոփայապէս նկատելով՝ խղճմտանքի կրթութեան կամ դատարարականութեան պէս բան մը ըլլալու է : Ընաչարկութիւն ունինք բարոյական դատարարականութեան վրայ ուրիշ տեղ մը աւելի վնասին խօսելու, սակայն արժան է որ հոս մէկ երկու խօսք խօսինք աս հիմնական ըրած գիտողութիւններնուս հետ մէկտեղ : Ինչ եւ իցէ բանի համար որ ըլլայ՝ մէկը չ'կրնար ըսել թէ ես աս բանը խղճմտանքիս դատողութեանը կը յանձնեմ, եւ անոր ըրած որոշումը կը բռնեմ, առանց աշխատելու բանին ինչ ըլլալը պէտք եղած տեղեկութիւններովը եւ ըստ արժանոյն ան կարողութեան առջեւը ներկայացընելու, որ դատաստանի պաշտօնը ի գործ պիտի դնէ անոր վրայ : Թէ որ քաղաքական արդարութեան ատեննի մէջ նստած դատաւոր մը՝ առանց մէկ բանի մը պարագաները իմանալու, առանց ան բանին վրայ վրկայութիւններ ընդունելու, եւ առանց օրէնքի՝ արդար վճիռներ կրնայ տալ նէ, Օգացողութեանց մէջ դատաստանական անթողի վրայ նստած իշխանութիւն բանեցընող հոգեղէն դատաւորն ալ՝ առանց Իմացականութենէն մէկ բանի մը վրայ պէտք եղած հմտութիւնները ընդունելու՝ ուղիղ դատաստան կրնայ ընել : Եւ երբոր մէկ բանի մը պարագաները հարկաւոր է որ աղէկ հասկըցուի կ'ըսենք նէ, աս ալ կրնանք յաւելուլ՝ թէ ոչ միայն ինքնին առանձնակի հասկըցուելու են, այլ նաեւ իրենց մէկմէկու հետ ունեցած վերաբերութիւններովը եւ կապակցութիւններովը : — Ըսիկայ բարոյական կրթութեան կամ բարոյական վճռադատութեան յատուկ առարկաներն եղող իրերու վրայ՝ որ խիստ բազմաթիւ են՝ ուղիղ խղճմտանք ունենալու համար, հարկաւոր է մեր հմտութեան ասպարէզը ընդարձակել. պէտք է շատ գիտնալ, շատ խորհիլ, եւ շատ բաղդատել :

§ 397 • Խղճմտանքով գործուած յանցանաց վրայ :

Երբեմն ասանկ խնդիր մը ծագած է, թէ Ըրդեօք յանցաւոր եւ պատժապարտ սեպելու՝ է մէկ մարդ մը Խղճմտանքով ըրած որ եւ իցէ մէկ գործքին համար, օրինակի համար՝ ինչպէս



մարդուս բարոյական բնութեանը հետ :

որ այնինչ տեղի վայրենիները կը սեպուի թէ խղճմտանքով կը գործեն, երբոր իրենց ծերացած ու տկարացած ծնողքները կը թողուն երեսի վրայ որ կորսուին: Ըստ զխուռն մէջ եղած դիտողութիւններուն նայելով՝ պատրաստ ենք աս խնդրոյն ստորասութեամբ պատասխանելու :

Տեսանք որ մեր բարոյական բնութիւնը՝ իմացման եւ տրամաբանութեան կարողութիւններուն հետ ունեցած սերտ կապակցութենէն՝ ըստ չափու մեր իշխողութեանը տակն է: Կըրնանք զանիկայ լուսաւորել եւ ուղիղ ճամբու մէջ առաջնորդել. կըրնանք նաեւ խաւարեցընել եւ ուղիղ ճամբէն խոտորեցընել, եւ երբեմն ամենաանարժան եւ մեղանչական գործքերու հաւանութիւն ցուցընել տալ: Ուստի մարդիկ ուղիղ խղճմտանք ունենալու են. ամէն բանէն առաջ տս մեծ եւ բարձր սկզբունքին իրենց մտադրութիւնը տալու են եւ պարտական են տալ. եւ թէ որ զանցաւութեան թողուննէ, իրենք պատասխանատու են: Ըսանկ որ չըլլայ նէ, շատ դիւրին եւ յարմար ճամբայ մը պատրաստած կ'ըլլանք Սրբաբնութեան Ժողովոյն ըրած բոլոր անգթութիւնները եւ Պապականաց Տրոթէսթանդներուն դէմ ըրած հալածանքները եւ սկիզբէն հետէ թէ անհաստից եւ թէ ժողովրդոց վրայ եղած անզգամ եւ բռնաւորական գործքերը արդարացընելու:

Եւ աս դրութիւնը, թէ մարդիկ ծուռ խղճմտանք ունենալուն համար պատասխանատու են եւ յանցաւոր՝ ձեռուրնին եղած հմտութեան միջոցներնուն եւ խղճմտանքնին շիտկելու կարողութիւններնուն համեմատ, քաղաքավարեալ ազգերու ալ կը պատշաճի, յետին տգէտ եւ վատթար վայրենեաց ալ: Իրաւէ թէ մէկը պէտք չէ որ յանձն առնէ ամէն պարագաներու մէջ ատ յանցանքին ինչ աստիճան ըլլալը դատելու. վասն զի մէկը չ'կայ որ ասոր բաւական ըլլայ: Ս'եր ըսել ուզածը աս է միայն, թէ երբոր մարդիկ չարութիւն գործած ատեննին (այսինքն՝ մարդոց ընդհանուր բարոյական զգացողութիւններովը եւ Ըստուծոյ օրէնքովն ու կամքովն դատապարտուած բան մը ըրած ատեննին) հաւանութեան շարժութիւն կ'իմանան ներսիդինին, ու միանգամայն իրենց հասողութեանը տակն ինկող հմտութեան աղբիւրներ ունին զանց ըրած, որոնք եթէ իրենց մտքին առջեւը դրուելու ըլլային նէ՝ անանկ բարոյական զգացում պիտի չունենային ըրած գործքերնուն վրայ, յանցաւոր են իրենց ձեռքն եղած դիտութեան աղբիւրները այդպէս զանց առնելուն համար, եւ հետեւաբար՝ այդպիսի պարագաներու մէջ՝ ներքին հաւանութեան շարժութիւն ունենալովն յանցաւորութենէ չեն ազատիր:

## ԳԼՈՒԽ Գ.

## ՉԳԱՅՈՒՆԷ ԲԱՐՈՅԱԿԱՆ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹԵԱՆԷ

§ 898 . Բարոյական պարտականութեան զգացումները որոշ են բարոյական հաւանութեան եւ անհաւանութեան զգացումներէն :

Եւրոպացի Վլիսուն մէջ ծանուցինք որ Բարոյական Օգացողութիւնները կամ Կողմնաւորները երբոր իր բաղադրիչ տարրները կը քննենք նէ՛ կը գտնենք որ երկու կարգ զգացմանց կը վերածի, այն է՛ Բարոյական Շարժութիւնք եւ Պարտաւորիչ զգացմունք կամ զգացողութիւնք Բարոյական Պարտականութեան: Բարոյական Շարժութեանց վրայ, այսինքն բարոյական հաւանութեան եւ անհաւանութեան զգացումներուն վրայ, որ միայն ատոնք են ատ բաժանման տակ բովանդակեալ մտաւոր հանգամանքները, ըստ կարի խօսած ըլլալով, հիմայ յառաջ երթանք միւս կարգը հետազօտելու, այն է Բարոյական Պարտականութեան զգացումները:

Երժան է հոս ծանուցանել՝ թէ փիլիսոփայական դրութիւններու մէջ շատ քիչ խօսք եղած է մտաւոր հանգամանաց աս կարգին վրայ՝ զանիկայ զատ ու որոշ մասն մը սեպելով, այլ ընդհանրապէս խղճմտանքի ընտանի անունովը մեր արդէն քրննած բարոյական շարժութեանց հետ շփոթած է: Աւստի աս պատճառաւ, ու նաեւ աս զգացմանց՝ Կամքին գործնական ներգործութեանցը եւ վարդապետութեանը հետ մեծակշիռ կապակցութիւն մը ունենալնուն համար, հարկաւոր է որ զանոնք քիչ մը աւելի զգուշութեամբ քննենք:

§ 899 . Պարտաւորիչ զգացմանց դրութեանը ապացոյց դիտակցութեանէն :

Ես նիւթիս վրայ մեր ընելու առաջին խնդիրն աս պիտի ըլլայ, թէ արդեօք այս յիշեալ մտաւոր հանգամանքները իրօք եւ որոշ կերպով կան մարդուս ներսիդին: Մարդկային բնութեան մէջ իրօք աս կերպ զգացմունք ըլլալը կը հաստատուի՞

Չգացմունք բարոյական պարտականութեան :

նախ՝ մեր գիտակցութենէն : Մենք ապահովութեամբ կրնանք որ եւ իցէ մարդու ներքին ճանաչմանը եւ յիշելութեանցը ձեռքէլ բանը, եւ հարցընել՝ թէ արդեօք իր կենացը ընթացքին մէջ եղած չէ՞ անանկ ատեններ, որ մէկ նոր եւ իշխանական մտաւոր հանգամանք մը իմացած է ներսիդին. մէկ մասնաւոր սակայն անսահմանելի մտաւոր ստիպում մը, որ պահանջած է իրմէն այսինչ մասնաւոր գործը ընել կամ այնինչ բանը ընելէն հրաժարիլ, մինչեւ անգամ այդ պահանջումը իր շահուն եւ բաղձանացը դէմ գալով : Այլ թէ որ փորձառու եղած է աս կերպ մտաւոր հանգամանքի մը նէ, ահա անիկայ մէկ օրինակ մըն է բարոյական պարտականութեան. պարտքի զգացում մըն է. ճիշդ ան նոյն բանն է՝ որ երբոր պարտական էմ ընել կամ չընել կ'ըսենք նէ՝ կ'իմացուի :

Բացատրութեան համար սա սուփորական եւ պարզ օրինակը առնենք : Մարդուն մէկը փողոցէն անցած ատենը ճամբուն վերայ ծերունի մէկը կը տեսնէ նստած, որուն վրայ կարօտութեան՝ թշուառութեան եւ արժանաւորութեամբ օգնութիւն խնդրելուն ամէն համոզիչ նշանները կ'երեւնայ. ատ մարդը ատ խեղճին հաց՝ հանդերձ եւ ստակ կու տայ, գիտակցութեամբը զգալով՝ որ ատ բանը ոչ թէ անձնական շահու կամ վայելման մը գիտումով կամ ինչ եւ իցէ անձնասիրական շարժառիթով կ'ընէ կոր, այլ ներքին մասնաւոր ստիպման մը դրդումովը եւ առաջնորդութիւնովը, որն որ սուփորաբար կ'ունենանք ներսիդինիս երբոր աս կամ ան բանը ընելու պարտական եմ կ'ըսենք. եւ երբոր աս բանը կ'ըլլայ, ահա անատենը եւ ան տեղը որոշ հմտութիւն կ'ունենայ ան բարոյական զգացման վրայ որ մեր խօսքին նիւթն ենք ըրած : Այլ ատ հմտութիւնը իրեն տուողը գիտակցութիւնն է :

§ 400 . Նոյն նիւթին վրայ ուրիշ ապացոյց մ'ալ մարդոց վարմունքէն :

Մեր բնութեանը մէջ պարտականութեան զգացմունք ըլլալը կը ցուցուի նաեւ մարդոց ընդհանուր վարմունքէն : — Ա՛յ ճշմարիտ է եւ չենք կրնար ուրանալ թէ պարտուց ճանաչումներէն դուրս ու զատ ուրիշ շարժառիթներ շատ անգամ կը ներգործեն մարդոց վրայ : Իրենց ունեցած բաղձանքը, երկիւղները, յոյսերը, համակրութիւնները, իրենց ներկայ եւ ապագայ շահերը, ամէնն ալ ազդեցութիւն ունին վրանին : Սակայն վատ եւ ամենեւին հաստատութեան վկայութիւն չունեցող վարկում մը ձեւացուցած կ'ըլլանք մարդկային բնութեան վրայ, եթէ ը-

Ձգացմունք բարոյական պարտականութեան :

սենք թէ երբէք բարձրագոյն կարգի շարժառիթներով չեն գործեր: Բազմաթիւ գէպքերու մէջ կը գտնենք որ ինչ որ իրենց պարտքն է նէ ան կ'ընեն, ընդդէմ իրենց ունեցած վաստերուն եւ համակրութիւններուն եւ իրենց աչքին առջեւն եղած շահուն: Եւլ եւ այլ մարդիկ անտարակոյս այլ եւ այլ գաղափարներ պիտի ունենան շահու եւ անձնասիրութեան շարժառիթներու շատութեանը կամ քիչութեանը վրայ, մարդկային բնութեան աղէկութիւններուն կամ գէշութիւններուն վրայ ունեցած հմտութիւններնուն համեմատ. սակայն մարդոց գործոցը սկզբունքներուն վրայ զգուշութեամբ եւ անաչառութեամբ գիտողութիւն մը ընելէն ետեւ՝ անհնար է արդարութեան եւ պատուոյ տարերքը բոլորովին արտաքսելը: Թէ որ պատմութիւն ըսուած բանին մէջ ճշմարտութիւն կայ նէ, միշտ եւ մինչեւ անգամ ընկերութեան խիստ ապականեալ ստեմները արդար եւ պատուաւոր մարդիկ գտնուած են: Եւ թէ որ մարդոց գործքերէն իրենց բարքը հետեւցընելու արտօնութիւն ունինք նէ, որ ստուգիւ ունինք այդ ազատութիւնը, վստահութեամբ կրնանք հաստատել թէ հիմայ մեր օրն ալ կան այսպիսի անձինք: Իսկ ճշմարտապէս սրդարութիւն եւ պատիւ պահող մարդ ըսելով ալ կը հասկընանք ան մարդը, որ պարտուց զգացողութենէ՝ բարոյական պարտականութեան զգացումներէ շարժուելով կը գործէ, եւ ոչ թէ ստորին կարգի շարժառիթներով:

§ 401 . Ուրիշ ապացոյց մըն ալ լեզուէ եւ գրականութենէ :

Մարդուս բնութեանը մէջ պարտաւորիչ զգացումներ ըլլալը չէ թէ միայն ամէն մարդու ինք իր գիտակցութենէն եւ ընդհանրապէս մարդոց վարմունքէն, այլ լեզուէ եւ գրականութենէ ալ կը հաստատուի: Բազմաթիւ լեզուներու մէջ, եւ հաւանականաբար ամէն լեզուի մէջ, պարտականութեան զգացողութիւն կամ պարտուց զգացմունք ցուցնող բառեր կան: Մէկը չ'կրնար ընկերութեան յառաջադիմութեանը եւ անհատ անձանց վիճակին եւ բարքին վրայ պատմութիւն մը ընել առանց աս կերպ բառեր գործածելու: Թէ որ իրաւունք, յանցանք, արդարութիւն, առաքինութիւն, արժանաւորութիւն, մոլութիւն, անարժանաւորութիւն, բարի, չար, պարտ է, պարտ, պարտականութիւն եւ ուրիշ ասանկ միտքեր տուող բառերը չ'այերէն լեզուէն կտրելու դուրս ձգելու ըլլայինք նէ, (աս նոյն բանը ուրիշ լեզուներու համար ալ կրնանք ըսել,) իսկոյն անբաւական կ'ըլլար մարդոց գործքերուն մէջ սյն յարաժամ

Չգացմունք բարոյական պարտականութեան :

պատահող երեւոյթները ցուցնելու : Ըրդ՝ աս բառերն որ կը տեսնենք կոր նէ՛ բանաւոր եւ պատշաճ է կարծել՝ թէ ասոնք մէկ բան մը կ'ակնարկեն տնչուշտ, մէկ իմաստ մը ունին, մէկ հաստատութիւն մը կը ցուցնեն : Բայց ինտոր կրնանք աս խօսքը ըսել ասոնց համար, ինչուան որ իրօք պարտականութեան զգացմունք ըլլալը չընդունենք :

Չատ զատ բառերը ու խօսքերը թողունք եւ լեզուաց գրագիտութեան քննութեանը անցնինք նէ, զարձեալ աս նոյն վախճանին կը հասնինք : — Ըմէն ազգի գրականութեան մէկ մեծ մասը բարոյական սկզբանց եւ զգացմանց ցուցմունք եւ հաստատութիւն է : Ըս բաները՝ չէ թէ միայն բարոյախօսներու այլ եւ պատմիչներու՝ բանաստեղծներու՝ ատենարաններու եւ օրէնսդիրներու բազմաթէք գործքերուն մէջ բարձր աստիճանով մը կ'երեւնան : Բայց թէ որ առաքինութեան եւ մոլութեան՝ պարտականութեան սուրբ հարկադրութիւններուն եւ լիկ անձնական շահու պահանջմունքներուն մէջտեղը իսկական եւ մշտնջենաւոր որոշումն չըլլար նէ, ասոնց այնչափ գործքերու մէջ յառաջ բերուիլը բոլորովին անպատշաճ եւ անիմաստ սխալմունք մը պիտի երեւնար անշուշտ :

§ 402 . Ուրիշ ապացոյց մըն ալ աս զգացմանց հարկաւորութենէն :

Յառաջ բերած դիտողութիւններնուս հետ մէկտեղ աս հարցումն ալ կրնանք յաւելուլ : Ինչ կ'ըլլար մարդոց վիճակը կամ ինչ կ'ըլլար ընկերութիւնը՝ առանց բարոյական պարտականութեան հիմանը : Ընչուշտ պարտականութեան հիմ մը ըլլալու է մէկ տեղ մը : Չենք կրնար տեսնել թէ ինտոր կրնար դրացի դրացիի հետ եւ գաւառ գաւառի հետ միացընող կապը պէտք եղածին չափ հաստատութիւնով եւ յարատեւ ամբուութիւնով մնալ առանց այսպիսի հիման մը : Թե որ մեր կազմութեանը աս մասը ջնջուէր, յայնժամ իսկոյն քաղաքական ընկերութիւնը չէր քակուէր : Ընտարարութիւնը՝ անզգամութիւնը եւ յետին խառնակութիւնը չէր ըլլար անոր անմիջական հետեւութիւնը : Ընկերութեան բնական բաղձանքը, մարդուս ունեցած համակրութիւնները, մեր բնութեան անձնասիրական շահախնդրութիւնները թերեւս քիչ մը օգնութիւն կարենային ընել աս չար հետեւանքները նուազընելու, բայց չէին կրնար բոլորովին խափանել : Բարոյական աշխարհին գործքերը կանոնաւորող այն երեւելի իշխող սկզբանց խախտուելուն հետ մէկտեղ շուտով ընկերութեան շարժումներննն որ ալ տակն ու վրայ կ'ըլլային, եւ անկէ ալ ամէն կերպ անպատմելի շարիք յառաջ կու գար :

« Զգացմունք բարոյական պարտականութեան »

§ 403 . Պարտականութեան զգացմունք պարզ են եւ սահմանի ընդունակութիւն չունին :

Վախորթաց հատուածին մէջ ըստածներուն նայելով՝ վրատահութեամբ կը հաստատենք թէ բարոյական պարտաւորութեան զգացումները կամ պարտաւորիչ զգացումները, իրենց նախորդ բարոյական զգացողութիւններէն որոշելով՝ որոնք լոկ հաւանութեան եւ անհաւանութեան շարժութիւններ են, իրօք կան մարդուս բնութեանը մէջ : Ըստնց բնութիւնը դիտած ատեննիս, թէպէտ մենք զմեզ կարող չենք սկսել բանաւոր իմաստով մը անոնց ինչ բան ըլլալը յանկուցիչ կերպով բացատրելու, սակայն մէկ քանի յատկական նշաններ կամ հանգամանքներ ունին, որ անոնք կ'ուզենք յառաջ բերել : Եւ տալու առաջին տեղեկութիւննիս աս է, թէ աս մտաւոր հանգամանքները պարզ են : Չենք կրնար զանոնք իմասունս բաժանել, ինչպէս թէ որ յօդուածոյ մտաւոր հանգամանք ըլլայնէ կրնանք ընել : Եւ՝ իբրեւ ասոր հարկաւոր հետեւութիւնը՝ սահմանի ալ չեն գար : Եւ սակայն չենք կրնար ընդունիլ որ աս իրենց պարզութիւնը եւ անկէ հետեւած սահմանի անընդունակութիւննին պատճառ մըն է որ մարդիկ անոնց ինչ բան ըլլալուն վրայ տգէտ ըլլան : Իրաւ է թէ ան մարդն որ երբէք պարտականութեան զգացումը իր ներսիդին ունեցած չէ նէ, ուրիշներուն ըրած նկարագրութիւններէն անոր բնութեանը վրայ այնչափ բան միայն կրնայ իմանալ, որչափ որ կոյրը ծիածանին գոյներուն ինչ բան ըլլալուն վրայ ուրիշին ըսածներէն հմտութիւն կրնայ ունենալ նէ : Սակայն ասանկ մարդ կրնայ ըլլալ կարծեմ ալ քիչ մը դժուար բան է, ամէն կերպ մարդոց մէջ եւ մարդկային վատթարութեան ամէն աստիճանին մէջ հաւանականաբար չ'գտնուիր ասանկ մէկը, եւ ուստի վրատահութեամբ կրնանք ըսել՝ թէ ամէն մարդ, ուրախութեան՝ տրտմութեան եւ հաւանութեան զգացումներուն ինչ բան ըլլալը որչափ որ գիտէ նէ, պարտականութեան զգացման վրայ ալ նոյնչափ հրմտութիւն ունի : Ուրիշ խօսքով՝ մարդիկ որ եւ իցէ ուրիշ պարզ ծանօթութեան կամ զգացման վրայ ինչ աստիճան որոշ գաղափար ունիննէ, նոյնը աս զգացման վրայ ալ ունին :

Չգացմունք բարոյական պարտականութեան :

§ 404 . Պարտականութեան զգացմունք այլ եւ այլ աստիճաններ ունին :

Սակայն աս հմտութիւնը ունենալու համար, որն որ յայտնի է թէ լոկ սահմանով մը ձեռք ձգելու բան չէ, մեր գիտակցութեանը դիմելու ենք: Հարկ է մեզ մտքերնուս գիտողութիւնը ինք իրեն վրայ դարձնել, եւ ներսիդինիս դարձած գործողութեանց ընթացքը հետաքննել՝ համբերութեան՝ փորձութեան եւ գործելու այլ եւ այլ առիթներուն մէջ, որոնք այնքան յաճախ կ'ընդմիջեն կենաց շաւիղները: Ան նոյն գիտակցութիւնն որ աս զգացման գոյութեանը եւ անոր ընդհանուր բնութեանը վրայ հմտութիւն կու տայ մեզի, աս տեղեկութիւնն ալ կը հաղորդէ՝ թէ անոր այլ եւ այլ աստիճանները կան: Աս բանը առաջները ուրիշ մտաւոր հանգամանքի մը վերայ ըրած ծափութիւններովնիս կը բացատրուի: Հաւատք բառը պարզ մտաւոր հանգամանքի մը անուն է, սակայն մէկը չըտարակուսիր որ հաւատքին այլ եւ այլ աստիճանները կ'ըլլան, որոնք դանազան բաւերով կը ցուցնենք, ինչպէս կարծիք՝ հաւանականութիւն՝ բարձրաստիճան հաւանականութիւն եւ ստուգութիւն: Ասանկ ալ պարտականութեան զգացումը յայտնապէս կ'իմանանք որ այլ եւ այլ աստիճաններ ունի, եւ շատ անգամ աս աստիճանի զանազանութիւնները կերպ կերպ բաւերով եւ խօսքերով կ'արտայայտենք, ինչպէս բարոյական յորդոր՝ թեթեւ կամ զորաւոր յորդոր, անկատար կամ թեթեւ պարտականութիւն, կատարեալ իամ անհրաժեշտ պարտականութիւն եւ այլն:

§ 405 . Պարտաւորիչ զգացմանց իշխանական եւ ստիպողական բնութիւնը :

Պարտաւորութեան զգացմանց վրայ աս տեղեկութիւնն ալ կրնանք յաւելուլ՝ թէ միշտ իրենց մէջը մէկ ներգործութիւն մը, մէկ ըլլալու բան մը կը պարունակեն: Այս դարձեալ երբէք աս զգացումները չեն ծագիր ներսիդինիս առանց մէկ ներգործութիւն մը եւ իրական ներգործութիւն մը հնարաւոր ըլլալու կամ հնարաւոր սեպուելու: Անք երբէք բարոյական պարտքի տակ չենք ճանչնար ինքզինքնիս մէկ բան մը բնելու, որն որ՝ միանգամայն համոզուած ենք թէ՛ մեր կարողութենէն դուրս է կատարելը: Աս պարագաներուն տակ է որ աս զգացումը կը

Զգացմունք բարոյական պարտականութեան :

ծագի. եւ թէպէտեւ չենք կրնար սահմանել ինչ բան ըլլալը, սակայն մէկ ուրիշ հանգամանքն ալ՝ թէպէտ քիչ մը անկատար կերպով՝ կրնանք ակնարկութեամբ ծանուցանել: Ըսելիքնիս կը հասկըցուի սա բառերով. ստիպումն՝ դրդումն՝ կամ մըղումն: Ըմէն մարդ գիտակցութեամբը կը գոյայ որ բարոյական պարտաւորութեան զգացմանց բնութեանը մէջ ստիպման կամ դրդման պէս բան մը կայ. սակայն այդ բառերուն նիւթական մտքովը չէ ամենեւին: Մարմինի վրայ ի գործ դրուած մղման կամ ստիպման պէս բան չ'կայ բնաւ, որն որ անդիմադրելի ալ կրնայ ըլլալ:

Պօղոս Ըռաքեալը կ'ըսէ, Վրիստոսի սէրը մեզ կը սփռէ: Ի՞նչ է աս խօսքին միտքը: Ըս է միայն՝ թէ Վրիստոսի մեղաւորաց փրկութիւնովը ցուցուցած ողորմութիւնը անանկ պարտականութեան զգացում մը շարժած է ներսիդինին, որ իրենք իրենց մէջ դժկամակութիւն մը կը գտնեն անոր թելադրութիւններուն դէմ դնելու. եւ միտքերնին դրած են ամէն կողմ քարոզելու այն ողորմութիւնը եւ բոլոր մարդիկ յորդորելու որ զանիկայ ընդունեն: Կը աս բաները ասանկ ըլլալուն համար է որ այնքան յաճախ կ'ըսենք հարկ է՝ պարտական ենք՝ կամ մինչեւ անգամ ստիպուած ենք այսինչ բանը ընելու եւ այսինչ բանը չ'ընելու. որ այսպիսի խօսքերը՝ իրենց սկզբնական իմաստովը՝ ներսիդինիս անանկ զգացում մը ըլլալը կը ցուցնեն, որն որ մեծ իշխողութիւն մը ունի կամքերնուս վրայ: Ըայց՝ թէպէտեւ յիշեալ զրուցուածքները աս զգացման աս հանգամանքը կը ցուցնեն, սակայն շատ անկատար եւ անորոշ կերպով, եւ միայն գիտակցութիւննիս կրնայ կատարելապէս հասկըցնել անոր ինչ բան ըլլալը:

§ 406 Պարտականութեան զգացումները ընկ հաւանութեան  
եւ անհաւանութեան զգացումներէն կը  
տարբերին:

Կարելի է թէ ասանկ մէկ խնդիր մը ծագի թէ ինչո՞ւ համար աս զգացումները Շարժութեանց հետ չենք դասեր, մասնաւորաբար բարոյական շարժութեանց հետ: Յայտնապէս հարկ չեղած տեղը աւելի բաժանումներ եւ կարգեր ու դասեր եւելցընելուն անպատշաճութիւնը ճանչնալով, արդէն ըսուածներուն վրայ մէկ երկու խօսք ալ յաւելունք՝ աս խնդրոյն պատասխան: — Ենչեալ մտաւոր հանգամանքները շարժութեանց հետ չ'դասեցինք՝ նախ աս պատճառաւ, որ ասոնք չ'տեսնուիր



Զգացմունք բարոյական պարտականութեան :

Թէ ան վաղանցիկ բնութիւնը ունին, որն որ բոլոր շարժութեանց յատկական որպիսութիւնը ըլլալ կ'երեւնայ: Անոնք սովորաբար անոնց պէս արագութեամբ մարդու հոգւոյն մէջ չեն ծագիր ու անյայտ ըլլար, ամպերուն մէջէն անցնող փայլակին նման յանկարծ շողողալով ու իսկոյն աներեւութանալով. սյլ կամաց կամաց ու աստիճան աստիճան հաստատութիւն առնելով՝ արեգական նման պայծառ եւ յարատեւ կը մնան: Մէկ մարդ մը մէկ ժամու միջոցին հարիւրաւոր եւ մինչեւ անգամ հազարաւոր շարժութիւններ կրնայ ունենալ ուրախութեան՝ տրտմութեան՝ գեղեցկութեան՝ վսեմութեան եւ ուրիշ կերպ կերպ շարժութիւններ: Անոնք կու գան ու կ'երթան, կրկին կը դառնան ու նորէն կ'անցնին կ'երթան շարունական յաջորդութեամբ. սակայն հաւանականաբար մէկը չ'կայ որ կ'եղծէ՝ թէ պարտականութեան զգացումները, որ մարդու վարմունքը կառավարելու համար դրուած են եւ իր գործելու ամենէն մեծակշիռ սկզբունքներն են, այսպիսի արագ՝ փոփոխական եւ վաղանցիկ բնութիւն մը ունենան: Մէկ մարդ մը հիմայ պարտականութեան զգացում մը կ'ունենայ, եւ իրաւացի է նախատեսելով՝ թէ ինչուան որ մտքին առջեւը ներկայացող իրական ճշմարտութիւնները էապէս չ'փոխուիննէ, ան նոյն զգացումը պիտի ունենայ վաղն ալ՝ գալ շաբթու ալ՝ եկող ամիս ալ՝ գալ տարի ալ: Արչափ որ դժուար է իրեն նոյն իսկ իր հոգւոյն բնութիւնը փոխել ու իրմէ օտարացընելնէ, նոյնքան դժուար է անգամ մը ներսիդին արմատացած պարտականութեան զգացումը ջնջելը, քանի որ ան առարկաները՝ որոնց որ ատ զգացումը վերաբերութիւն ունի՝ նոյնը կը մնան մտքին տեսութեանը առջեւը:

§ 407. Պարտականութեան զգացումները մասնաւոր վերաբերութիւն ունին ապառնիին :

Պարտականութեան զգացումները շարժութեանց հետ, մասնաւորաբար բարոյական շարժութեանց հետ չ'դասելնուս մէկ Արկրորդ պատճառն ալ աս իրական ճշմարտութիւնն է, որ պարտաւորիչ զգացումները մասնաւոր վերաբերութիւն ունին ապառնիին: Բարոյական շարժութիւնները մասնաւոր տեսակ մը զգացողութիւններ են. անոնք իրենց յատուկ որպիսութիւնն ունին, որուն ինչ բան ըլլալը գիտակցութենէն կ'իմացուի. սակայն անոնց պաշտօնը թէ անցեալ եւ թէ ներկայ իրերու եւ գործքերու որպիսութիւնը դատել է միայն. անոնք թէ անցեալ

Զգացմունք բարոյական պարտականութեան :

ատենները եւ թէ ներկայ վայրկենին իրօք եղած բաներուն բարի կամ չար ըլլալուն վրայ դատողութիւն կ'ընեն. միայն ամէկ բացառութեամբ՝ որ երբեմն ենթադրական բաներ ալ կը բերուի մտքին առջեւ որ անոնց վրայ բարոյական որոշում մը ընէ : Սակայն մինչեւ անգամ աս կերպ բաներու մէջ ալ, միայն բարոյական դատման ներգործութիւնը նկատելով, հետաքրննութեան առարկաները արդեամբք ներկայ են : Խղճմտանքը ան առարկաներուն վրայ իր ընելու գատաստանը կ'ընէ, զանոնք ինքնին նկատելով եւ ամէնը այնչափ է : Ընկէ անդին ուրիշ բան չունի ընելիք :

Սակայն յայտնի կ'երեւնայ որ պարտականութեան զգացումը ներք ասանկ չեն : Պարտականութիւն եւ պարտք բովանդակող մտաւոր հանգամանքները ապառնիին վերաբերութիւն ունին. անանկ բանի մը կը ընային՝ որ կամ պիտի կատարուի, եւ կամ կատարումէն պիտի հրաժարուի : Ընոնք մեշ գալիքին հետ կը կապեն : Պարտականութեան զգացումը ըսուած բանը չ'կրնաք ըլլալ, առանց ըլլուելիք բանի մը՝ թէ ներքին՝ զգացմամբ, եւ թէ արտաքին՝ գործքով : Ընցեալը յաւիտենականութեան մէջ կը սուզի, եւ ալ ներգործութեան տեղիք չընծայիր : Պարտքն աւ պարտաւորութիւնը անոր սահմանները չեն կրնար հասնիլ, եւ ժամանակին ան մասը ալ փոխարինութեան կ'անցնի :

§ 408 . Պարտականութեան զգացումները ժամանակով ետք են :

հաւանութեան եւ անհաւանութեան բարոյական շարժութիւններէն :

Ըս մեր քննած որոշումը ընելու համար դիտուելու մեծաւ կշիռ պարագաներուն մէկ Լըրրորդն ալ աս է, որ պարտականութեան զգացումները միշտ ժամանակով ետք են հաւանութեան եւ անհաւանութեան բարոյական շարժութիւններէն : Ըս ըսածնիս աս կերպով կրնանք բացատրել : Ընելք թէ բարոյական նկատողութեան նիւթեր պարունակող խնդիր մը կու գայ առջեւնիս. մենք ատ խնդիրը կ'առնենք կը քննենք կը գատենք. յայնժամ ըրած դիտողութիւններնուս համեմատ հաւանութեան կամ անհաւանութեան շարժութիւններ կը ծագին ներսիդինիս : Լս մեր ներսիդին ըլլալիքը ամէնը այսչափ է, թէ որ ինչ եւ իցէ կերպով մը մէկ որոշ եւ ներգործական յարաբերութիւն մը չունենանք ներկային կամ ապառնիին հետ : Իսկ թէ որ ունինքնէ, այն մեր ներսիդին ծագող բարոյական շարժութիւններէն ետեւ անմիջապէս կը յաջորդէ մէկ որոշ եւ հրամայական

Չգացմունք բարոյական պարտականութեան :

զգացում մը . պարտականութեան զգացողութիւնը , որ կը հարկադրէ մեզ գործելու կամ չ'գործելու , ընելու կամ չ'ընելու , զիջանելու կամ ընդդիմանալու , այնպէս՝ իբր թէ նոյն իսկ Աստուծոյ ձայնը ըլլար մեր հոգւոյն մէջ բարբառող :

Որչափ սովորական բան մըն է մէկ մարդու մը ըսել թէ ինքզինքը բարոյական պարտքի տակ չ'ճանչնար այսինչ բանը ընելու , ան բանին վրայ ներսիդին հաւանութիւն չ'զգալուն համար կամ զանիկայ ընելը իրեն բարի չ'թուելուն համար . եւ կամ ընդհակառակն՝ այսինչ գործին վրայ հաւանութիւն զգալով կամ զանիկայ կատարելը բարի ճանչնալով՝ ինքզինքը պարտական կը ճանչնայ ան բանը ընելու : Որ աս խօսքը անշուշտ մէկ միտք մը ունի , եւ մէկ որոշում մը կ'իմացընէ լոկ բարոյական շարժութեան եւ պարտականութեան զգացման մէջտեղը . եւ ապացոյց է ան սովորական հաւատքին ընդհանուր հաստատութեանը , թէ պարտականութիւնը բարոյական հաւանութենէ կամ անհաւանութենէ ետք է ստեղծով՝ եւ անկէ կախեալ : — Աս զիտողութիւններով բանին վրայ նայելով , չենք կրնար պարտականութեան զգացումները բարոյական շարժութեանց կամ որ եւ իցէ կերպ շարժութեանց հետ գասել , այլ համոզուած ենք անոնց զատ ու որոշ տեղ մը ընծայելու : Սակայն՝ ըստ ամենայնի նկատելով բանը՝ ղարմանք չէ բարոյական շարժութեանց պարտականութեան զգացմանց հետ շատ անգամ շփոթելը , երբոր կը մտածենք վերոյիշեալ այն անփոփոխ կապակցութիւնն որ կայ երկուքին մէջ , եւ երբոր կը խորհինք նաեւ լեզուի անկատարութիւնը , որն որ շատ անգամ երկու կարգ մը տաւոր հանգամանաց ալ նոյն անունները կու տայ :

§ 409 . Պարտականութեան զգացմունք տարբեր են բաղձանքներէն :

Այս բացատրած պատճառներնուս համար պարտականութեան զգացողութիւնը շարժութեանց հետ չեն գասուիր : Արկին անգամ թերեւս հարցուի , թէ ինչո՞ւ համար Ատճանաց ընդհանուր բաժանմանը տակ չեն գասուիր : Աս խնդրոյն պատասխան՝ Ախ աս կ'ըսենք , թէ մարդուս գիտակցութիւնը յստակ որոշում մը կ'իմացընէ աս երկուքին մէջ : Ասանկ կ'ընդունուի որ՝ գիտակցութեան հաստողութեանը եւ ճանաչմանը տակն ինչո՞ղ առարկաներուն մէջ քիչ կը գտնուի անանկ նիւթեր , որ բաղձանաց եւ պարտականութեան զգացման մէջ եղած տարբերութեանը չափ յստակ որոշելի ըլլայ : Կ'ընդունինք որ պարտականութեան զգացումները՝ իրենց հաստատութիւնովը եւ մը-

Չգացմունք բարոյական պարտականութեան :

նայունութիւնովը բաղձանաց բնութեանը շատ կը մօտենան . սակայն սակաւ ինչ ներքին դիտողութիւն որ ըլլայ նէ, մէկ անանկ որոշում մը կ'իմացուի երկուքին մէջտեղը, որ յիրաւի նշանաւոր եւ յարատեւ տարբերութիւն մըն է :

Բ. Ըստ բանիս մէջ չէ թէ միայն մեր գիտակցութենէն տեղեկութիւն կրնանք ընդունիլ, այլ նաեւ մարդոց արտաքին գործքերէն ալ ծանօթութիւն մը կրնանք ստանալ : Սարգոց գործքերուն վրայ խօսած ատեննիս մէկ որոշում մը կ'ընենք . եւ անոնց ըրածները երբեմն իրենց բաղձանքներուն եւ ցանկութիւններուն աղդեցութեանը կու տանք, եւ երբեմն պարտականութեան զգացման իշխողութեանը, որ ատ ալ ուրիշ ներքին զգացողութեան մը կամ զրգման մը անուն է, որ բարոյապէս պարտաւորիչ է : Սակայն աս որոշումը ընելուն մէջ ամենեւին պտտաձուլութիւն մը պիտի չըլլար, թէ որ բաղձանքն ու պարտականութեան զգացմունքները մի եւ նոյն բանն ըլլալին . եւ ստուգիւ անդէպ եւ անիրաւ ամբաստանութիւն մը պիտի ընէինք, թէ որ մարդոց վրայ ասանկ բան մը հաստատէինք՝ թէ առ հասարակ ամէնն ալ այնպիսի մէկ որոշում մը կ'ընեն, որուն որ հիմն չունին բնաւ :

§ 410 . Նոյն նիւթին վրայ ուրիշ դիտողութիւններ :

Թէ որ բաղձանաց եւ պարտականութեան զգացմանց մէջ հաստատուն՝ մնայուն եւ արմատական որոշում մը չ'կայ նէ, ուրեմն՝ թէ իրօք եւ թէ հայեցողութեամբ՝ ամենեւին հիմ մը չ'կայ բարոյականութեան : Ըսիկայ ամէն մարդ մտադիւրութեամբ կ'ընդունի՝ թէ բարոյականութիւն ըսուած բանը իր մէջը կը բովանդակէ կամք, ընտրութիւն եւ առաջադրութիւն ընելու զօրութիւն մը : Վանք որ լոկ բարոյական շարժութիւնները, այն է հաւանութեան եւ անհաւանութեան զգացումները, ինքնիրեննուն կամքին չեն մերձենար : Ընդդէմ պարտականութեան ըզգացումներուն միջոցաւ կը ներգործեն կամքին վրայ . այսինքն՝ մարդս դեռ գործելու չ'մղուած պարտականութեան զգացումները կը յաջորդեն բարոյական շարժութեանց, ու հապա թէ կը գործէ : Բոլոր միւս մնացած շարժութիւններն ալ Բաղձանաց միջոցաւ կը գործեն : Ըսնպէս որ կամքը՝ իր առաջադրութիւնները ըրած ատենը՝ միայն երկու կարգ մտաւոր հանգամանաց վրայ անմիջական ճանաչում կ'ունենայ, այն է՝ Բաղձանք եւ Օգացմունք Պարտականութեան : Բայց անբան անասուններն ալ՝ ընդհանրապէս խօսելով՝ մարդոց ունեցած բոլոր

Բարոյական զգացողութեանց ներգործութեան միօրինակութիւնը :

բաղձանքները ունին . ըսել կ'ուզենք բոլոր այն զգացմանց կերպաւորութիւնները, որոնք ատ ընդհանուր բաժանման տակ դասեցինք, այն է՝ բնական աղբմունք, ակործակք, հակամիտութիւնք, այլ եւ այլ կերպ կերպ կիրքեր, ինչպէս՝ ցասումն, սէր, որդեսիրութիւն եւ այլն : Եւ սակայն՝ աս վիճակովն ալ տակաւին պարտականութեան բոլոր զգացումներէն զուրկ ըլլալնուն՝ անոնց համար ամենեւին բարոյական բնութիւն ունին չենք ըսեր : Օ՛նոնք երբէք չենք գովեր իրենց պարտքը կատարելնուն համար, կամ երբէք չենք պարսաւեր եւ պատժեր պարտաւորութիւննին չընեղնուն համար : Մեր անոնց հետ ունեցած վարմունքը բոլորովին տարբեր սկզբանց վրայ է : Եւ մարդիկ ալ ճիշդ ասանկ պիտի ըլլային, թէ որ բարոյական պարտականութեան զգացումներէն բոլորովին զուրկ ըլլային, եւ բաղձանաց այլ եւ այլ կերպերէն ի զատ ուրիշ շարժառիթ չունենային ներգործութեան : Ընտանը անոնք ալ երբէք բարոյապէս պատասխանատու չէին սեպուեր . երբոր բարի գործէին, վարձքի արժանի չէին ըլլար, եւ երբոր չարագործութիւն ընէին, ձեղադրանաց եւ պատժոյ արժան չէին դատուեր :

ԳՂՈՒԽ • Դ

ԲԱՐՈՅԱԿԱՆ ԶԳԱՑՈՂՈՒԹԵԱՆՑ ՆԵՐԳՈՐԾՈՒԹԵԱՆ ՄԻՕՐԻՆԱԿՈՒԹԻՒՆԸ

§ 411 . Մարդուս բարոյական բնութեանը որոշումներուն միօրինակութեանը եւ անոր ինչ սկզբունքով կանոնաւորուելուն վրայ :

ԲԱՐՈՅԱԿԱՆ Օգացողութեանց ընդհանուր բաժանմանը տակ տիրապէս եւ ճշգրտութեամբ դասեալ մտաւոր հանգամանաց ամէնը այն երկու կարգ զգացումներն են որ նախընթաց գլուխներուն մէջ քննեցինք, այն է՝ բարոյական շարժութիւնները,

Բարոյական զգացողութեանց ներգործութեան միօրինակութիւնը :

որոնցմով մէկ գործի մը վրայ հաւանութիւն եւ անհաւանութիւն կ'ունենանք, եւ անոնցմէ ետեւ եկող բարոյական պարտականութեան զգացումները. թէպէտ եւ ասոնց հետ մէկտեղ խել մը ուրիշ զուգընթաց եւ պատահական խնդիրներ ալ կան, որոնց մէկ քանին մտադրութեան արժան բաներ են: Աս խընդիրներուն ամենէն հետաքրքրականներէն մէկը բարոյական որոշմանց Միօրինակութեանը վրայ է: — Բարոյական բնութեան կամ իղձմտանքին որոշումներուն Միօրինակութեանը վրայ խօսքի մտած առնենիս նախ եւ առաջ աս տեղեկութիւնը արժան կը համարինք տալ՝ թէ երկու անսակ միօրինակութիւն կայ, մէյմը միօրինակութիւն իսկական կամ միօրինակութիւն սկզբբան, մէյմ'ալ միօրինակութիւն արտայայտութեան կամ երեւուութի: Վկզբան միօրինակութենէն, որ աս նիւթին ամենէն մեծակշիռ կողմն է, հարկաւորապէս կը հասկըցուի թէ մէկ կանոն մը կամ օրէնք մը պիտի ըլլայ, որով ան միօրինակութիւնը՝ որ կայ կ'ըսուի կոր՝ կը չափուի եւ գիտցուի: Այլ ան կանոնը կամ օրէնքը, որուն վրայ որ մարդուս բարոյական բնութեանը միօրինակութիւնը կայացած է, աս է՝ որ անոր որոշումները՝ (բացի այն խիստ թիւրեալ ներգործութիւններէն, որոնք բարոյական խանգարումէ կամ խելագարութենէ յառաջ եկած կրնան սեպուիլ իրաւամբ, եւ որոնք հոս աս մեր գիտողութեան մէջ չենք կրնար առնել)՝ ամէն բանի մը՝ իմացութեան իրողութիւնն է. ուրիշ խօսքով՝ իրողութիւնները եւ անոնց վերաբերութիւնները մտքին տեսութեանը առջեւը ճիշդ ինչպէս որ են նէ, անոնք ալ անոնց ճիշդ համաձայն կ'ըլլան:

Աս օրէնքով չափելով, դժուար է մեզի տարակոյս մը ունենալ աս բանիս վրայ, թէ իրաւամբ կրնանք սեպել որ իրողմըտանքին որոշումները նոյն են բոլոր աշխարհիս մէջ: ՇՆմարիտ չէ ասիկայ, ինչպէս որ ոմանք կ'երեւնայ թէ կը կարծեն. թէ բնութիւնը մէկ բարոյական օրէնք մը քաղաքականացեալ ազգաց, բարոյական օրէնք մըն ալ վայրենեաց համար հաստատած է. արդարութեան օրէնք մը Անգղիայի մէջ, արդարութեան եւ իրաւանց օրէնք մըն ալ Նիդհաստանի մէջ դրած է. այլ աշխարհիս ամէն կողմը, ամէն ազգի մէջ եւ ամէն կըլիմայի տակ, ամէն զետի եզերք եւ ամէն լեռան էջքի վրայ մի եւ նոյն ձայնով կը բարբառի, մի եւ նոյն վճիռները կու տայ, եւ մի եւ նոյն կերպով անփոփոխ կը ցուցնէ իր պահանջմունքները:

Բարոյական զգացողութեանց ներգործութեան միօրինակութիւնը :

§ 412 . Խղճմտանքին ընուծիւնը՝ իբրեւ միօրինակ սկզբունք ներգործութեան, կը պահանջէ որ իր որոշումները պարագաներու հետ մէկտեղ փոփոխին :

Քաջայայտ բան մըն է որ Բարոյական Օգացողութեան կամ խղճմտանքին մարդուս համարուն ըլլալուն վարդապետութեանը դէմ բերուած ամենէն մեծ առարկութիւններէն մէկը եւ մէկ հատիկ զօրեղ առարկութիւնը աս է, թէ անոր որոշումները միօրինակ չեն. ուրիշ խօսքով՝ թէ մէկ տեղ մը եւ անգամ մը դատապարտած բանին ուրիշ տեղ մը եւ ուրիշ ատեն հաւանութիւն կու տայ: Վախընթաց հատուածին մէջ ըրած ծանօթութիւններնուս օգնութեամբը կրնանք ըստ օրինի եւ յանկուցիչ կերպով պատասխանել աս առարկութեանը: Ա՛րնգունինք որ ան միօրինակութիւնը չ՛կայ խղճմտանքին վրայ, որն որ՝ որոշաբար՝ անուանեցինք միօրինակութիւն արտայայտութեան կամ երեւման. սակայն աս ճշմարիտ չէ՝ (բացառելով այն յետին թիւրեակ ներգործութիւնները, որոնք բարոյական խանգարման կամ խելագարութեան տակ կ'երթան)՝ թէ իսկական կամ սկզբան միօրինակութիւն չունի: Մ'ենք միայն աս ետքի տեսակէն եղող միօրինակութեան՝ խղճմտանքին մէկ ստորագծէքը ըլլալը եւ անանկ հաստատուիլը կ'ուզենք: Թէ որ իր ըրած որոշումները միշտ միօրինակ ըլլային եւ բաներուն վրայ մտքին ունեցած տեսութեանը չ՛համեմատէիննէ, ատ բանով անոր իշխանութիւնը կը ոչնչանար: Աւստի յիշեալ առարկութեանը պատասխանած ատեննիս բոլոր ընելիքնիս աս ցուցնել է միայն, թէ բարոյական դատումը կամ խղճմտանքը միշտ իր օրէնքին համաձայն կ'երթայ. ուրիշ խօսքով՝ միօրինակ է իր ներգործութիւնը՝ իր առջեւը դրուած իրողութեանց նոյնելով:

Եւ հոս տալու առաջին տեղեկութիւննիս աս է, թէ նոյն իսկ խղճմտանքին ընուծիւնը կը ցուցնէ որ պարագայից փոփոխութեան հետ մէկտեղ իր որոշումներն ալ փոփոխելու են: Եւ իր միօրինակութեանը մեծակշիռ օրէնքը ոչ միայն կը ներէ աս բանիս, այլ եւ կը պահանջէ ալ: Ա՛սան զի՝ որովհետեւ իր ունեցած միօրինակութիւնը մտքին իմացած իրողութիւններուն կամ իրական ճշմարտութիւններուն վերաբերութեամբ է, եւ իր որոշումները միօրինակ ըլլալու համար հարկ է որ անոնք ալ նոյնը մնան կամ միօրինակ ըլլան, ուստի կը հետեւի որ՝ իրողութիւններուն եւ անոնց վերաբերութիւններուն մէջ փոփոխութիւն մը որ ըլլայ նէ, բարոյական ճանաչողութեան մէջ ալ

Բարոյական զգացողութեանց ներգործութեան միօրինակութիւնը :

փոփոխութիւն մը պիտի ըլլայ : Ըսոր համար խղճմտանքին որոշումները, թէպէտ եւ միօրինակութեան հիման մը վրայ կը շինուին, եւ թէպէտ եւ իսկապէս միօրինակ են վերը ցուցուած սկզբունքին նայելով, բայց սակայն իրենց արտայայտութիւններովը կամ յառաջ բերուած՝ ցուցուած ատեննին երբեմն շատ կը զանազանին մէկմէկէ : — Ուստի աս ենթադրութեամբ յառաջ երթալով՝ թէ խղճմտանքին որոշումներուն ընդհանուր միօրինակութիւնը հասկըցուած եւ ճանչցուած է, հիմայ քանի՛ մը բան ալ անոնց փոփոխմունքներուն վրայ խօսինք : Կը ասիկայ ըրած ատեննիս պիտի ջանանք աս ցուցնելու, թէ ան փոփոխութիւններուն բոլորն ալ խղճմտանքին մշտակայ սկզբունքներուն կատարեալ համաձայն կերպով կ'ըլլան. ուրիշ խօսքով՝ թէ անոր միօրինակութիւնը իրական, եւ զարտուղութիւնները երեւութական են :

§ 413 . Բարոյական որոշմանց զանազանութիւնները հմտութեան չափու տարբերութիւններէն կախում ունին :

Խղճմտանքին որոշումներուն մէջ եղած զանազանութիւնները՝ նախ՝ յառաջ կու գան մարդոց ունեցած հմտութեան քանակութեանը տարբերութիւններէն, ատ գիտութեան տարբերութիւնները թէ իմացական կարողութեանց տարբերութիւններէ պատճառած ըլլայ եւ թէ ուրիշ բանէ մը : Ուրիշ խօսքով՝ մարդու խղճմտանքը կը զարտուղի, այնքան որ առանց խոտորելու տալու վճիռին հակառակ վճիռ անգամ կու տայ, կամ իրողութեանց վրայ թերի հմտութիւն ունենալով, եւ կամ անոնց վրայ սխալ բմբունումն եւ համարումն ունենալով : Ըս պարզ հաստատութիւնով, եթէ զանիկայ ըստ օրինի բանեցընելու բլանքնէ, խղճմտանքին վարդապետութեանը դէմ առարկութիւն բերուած բաղմամբ սխալ բարոյական դատողութիւններուն ինտոր ըլլալը կը բացատրուի :

Կիւթերնուս վրայ յառաջ բերած աս տեսութիւննիս աս կերպ օրինակով մը կրնանք բացատրել : Կրկու հոգիէ կը խնդրուի որ բարոյական պարտք բովանդակող խնդիրի մը վրայ իրենց կարծիքը զրուցեն : Կնդիրն ալ ըսնք թէ աս ըլլայ, արդեօք իրաւացի է՝ այնինչ ենթադրեալ պարագային տակը՝ քաղաքական կառավարութեան մէջ յեղափոխութիւն յարուցանելու աշխատիլը : Ըս երկու անձանց մէկը արդարացի է կ'ըսէ, մէկալն ալ՝ թէ անիրաւ է : — Ըհ ասիկայ արտայայտեալ կամ երեւութական զարտուղութիւն մըն է բարոյական ներ-



Բարոյական զբաղողութեանց ներգործութեան միօրինակութիւնը :

գործութեան: Սակայն միանգամայն աս անտարակոյս ճշմարիտ է որ զանազանութիւնը իրենց բարոյական բնութեանը կազմուածքին տարբերութենէն չէ, այլ մանաւանդ իրենց ճանաչող եւ բաղդատող կարողութիւններուն մէջ եղած տարբերութենէ մը:

Մտաբանի ջանք մը ընելը իրաւացի է ըսողը՝ աւելի զօրեղ նախահայեաց խորհուրդի տէր ըլլալուն, կը կարողանայ նախատեսել՝ որ նախ եւ առաջ աղմկայոյղ ճիգեր ըլլալէն ետեւ՝ սրտմտեալ սրտերը եւ բորբոքած կիրքերը մշտնջենաւոր անգործութեան պիտի փոխուին, եւ ան տակն ու վրայ եղած ընկերութիւնը շատ աւելի զօրութիւնով եւ գեղեցիկութիւնով նորէն պիտի կ'ազմուի: Աս տեսութիւններով արդարացի կը սեպէ երկրին կառավարութեանը մէջ փոփոխութիւն մտցունելու ջանացողութիւնը: Իսկ միւսը՝ իր իմացականութեան տեսութիւնը քիչ մը կարճ ըլլալով, եւ իր իմացողութեան աչքը գալիքին վրայ ձգելու եւ շատ հեռուն դիտելու կարողութիւն չունենալուն, միայն ներկայ վայրկենին չարիքները կը տեսնէ, յառաջ գալու աղմուկն ու խռովութիւնը, հին սովորութեանց եւ ընկերակցութեանց եղծանիլը եւ թափուելու արիւնք իր միտքը կու գայ: Այսպիսի դիտողութիւններով կը խորհի որ այն առաջարկեալ փոփոխութիւնը յառաջ բերելու աշխատիլը չարութիւն մըն է: Արկուքին վրայ ալ բարոյական բնութիւնը կամ խղճմտանքը՝ բանը իր առջեւը ինչ լըյտով որ դրուինէ՝ անանկ որոշում կ'ընէ. եւ երկու պարագային մէջ ալ բնականաբար ակնկալուելիքին պէս է ըրածը:

Աս բանիս մէջ միօրինակութիւն չ'տեսնուելը փոխանակ՝ ոմանց կարծածին պէս՝ բարոյական դատողութեան վարդապետութեանը հաստատուն պտտճառներ չ'գանուելուն վկայութիւն ըլլալու, հակառակ կողմին ապացոյց է: (Թէպէտ արտաքին կամ երեւութական միօրինակութիւն չ'կայ բանին մէջ, սակայն սկզբան միօրինակութիւն կայ. սոյնինքն խղճմտանքը երկու պարագային մէջ ալ իր առջեւը դրուած իրողութեանց համեմատ վճիռ կու տայ, որ ասիկայ է իր որոշումն ընելուն մի միայն յատուկ հիմը:

§ 414. Բարոյական դատողութեան զանազանութիւններու վրայ՝ քաղաքական սահմանադրութիւններէ պատճառեալ:

Արկրորդ՝ պատշաճութեամբ կրնանք ակնկալել որ բարոյական դատողութեան մէջ քաղաքական սահմանադրութիւններու տարբերութիւններէ ալ յառաջ եկած զանազանութիւններ եւ

Բարդական զգացողութեանց ներգործութեան միօրինակութիւնը :

Երբեմնական ներհակութիւններ պիտի ըլլան : — Ըս բանը բացատրելու բազմաթիւ օրինակներ կը գտնուի պատմութեան մէջ : Բարդական բնութեան իրօք ըլլալուն դէմ առարկողները կ'ըսեն՝ թէ գողութիւնը կամ ուրիշին ստացուածքը ապօրինաւոր կերպով առնելը յանցանք է . եւ թէ խղճմտանքը, թէ որ մարդու մտաւոր կազմուածքին մէկ մասն է նէ, առ բանը դատապարտելէն չ'պիտի վրիպի ամէն առնն : Ըսոր ետեւէն ալ աս իրական ճշմարտութիւնը յառաջ կը բերեն, թէ անանկ երկիրներ կան որ գողութիւնը՝ փոխանակ պէտք եղածին պէս դատապարտուելու, շատ տարածուած է, եւ գրեթէ յանցանք չըսեպուիր :

Ըս տեղ արժան է մասնաւորաբար աչքէ անցնել ճանապարհորդաց ըրած ան հաստատութիւնը, թէ վայրենի ցեղերու մէկ քանին ինքզինքնին շատ տուած են գողութեան : Բուք նաւապետը կը ծանուցանէ՝ թէ 1778ին Սանտուիչեան կղզիներն որ գացեր է նէ, տեսեր է որ բնակիչները շատ սովորած են գողութեան, եւ ձեռուրնին ինչ որ հանդիպի կ'առնեն : Ըս հաստատութիւնը բացատրելու համար՝ նախ՝ աս պէտք է որ ըսենք, թէ գողութեան գաղափարին մէջ ստացուածքի գաղափար կայ . իսկ ստացուածքի իրաւունքն ալ այլ եւ այլ երկիրներու մէջ եւ այլ եւ այլ քաղաքական գրութիւններու տակ զանազան աստիճան ճշդութիւն եւ բացարձակութիւն ունի : Սանտուիչեան կղզեցիները՝ իրենց երկրին հողը շատ բեղմնաւոր եւ կիմաններնուն բնութիւնը շատ բարեբեր ըլլալուն, անտարակոյս է որ ստացուածքի իրաւունքն ալ ուրիշ այնքան արգասաւորութիւն չունեցող երկիրներու չափ ճշդութեամբ բռնուած չէր իրենց մէջ : Լմինս՝ քուկինդ՝ մերինը՝ ձերինըին որոշումը այնքան յստակ ճանչցուած եւ այնքան հաստատաբար ընդունուած չէր մէջերնին՝ ինչպէս քաղաքականացեալ երկիրներու մէջ ընդհանրապէս . եւ հաւանականն աս է՝ որ գրեթէ ամէն կերպ ստացուածք հասարակի ունէին : Ըրգ՝ որովհետեւ ստացուածքի իրաւունքը այնչափ ճշդութիւն չունէր իրենց աչքին առջեւ, վասն որոյ անոր դէմ եղած եղծումն ալ այնչափ մեծ յանցանք մը չէր համարուէր . եւ անոնք սյդպիսի յանցանք մը գործողին վրայ ան նոյն որոշ տհաճութիւնովը չէին նայէր, որուն որ անշուշտ ենթակայ կ'ըլլար գործող անձը, թէ որ ուրիշ տեղ մը նոյն բանը ընէր : Ըսպիսի մէկու մը վրայ հաւանականաբար, մենք մեր ծառատունկէն անցած ատենը մէկ քանի խնձոր փրցընող կամ մեր հորէն երբեմն եկող ջուր քաշող մէկուն վրայ ինտոր կը նայինք նէ, անոնք ալ ան նոյն ըզգացմունքովը կը նայէին . որ աս յիշեալ պարագաներուն մէջ

Քարոյական զգացողութեանց ներգործութեան միօրինակութիւնը :

Թէպէտ իրաւ է որ մեր ստացուածքը եղող բանը ուրիշը կ'առնէ, սակայն այդպիսի բաներու մէջ ստացուածքի իրաւունքը հասարակաց հաւանութիւնովը թոյլ եւ չափաւոր ըլլալուն, մենք ալ անոր գողութիւն չենք ըսեր եւ ընողն ալ յանցանքի տէր չենք սեպեր :

Ասակէ ի զատ՝ Վուք նաւապետին պատմածը քիչ մ'ալ աւելի մանրամասնաբար քննելու ըլլանք նէ, նոյն իսկ պատմութեանը մէջ սս ըրած դիտողութիւններնուս ճշմարտութեանը վկայութիւնը կը տեսնենք : «Ղուջի բերանը նաւն որ մտան նէ՝ կ'ըսէ, ձեռքերնուն ինչ որ հանդիպեցաւ նէ գողնալ աշխատեցան, կամ մտնուանդ յայտնապէս ասուել ասնիւլ իբր լեհ մեհ ոչ յայն պիտի հանենք եւ ոչ պիտի արգելուանք» : Ուրիշ տեղ մըն ալ վարքերնուն վրայ բացատրութիւն ըրած ատենը՝ կ'ըսէ. «Կը կարծէին որ ամէն հանդիպած բաներնին առնելու իրաւունք ունին» : Աս ալ կ'իմանանք որ՝ ստացուածքի իրաւանց վրայ Ղուգղիացւոց ինչ գաղափարներ ունենալը եւ անոր եղծմանը դէմ ինչ պատիժներ հաստատած ըլլալնին հասկընալնէն ետեւ՝ շուտով այն կերպ բաներ ընելը ձգեր են : — Տայտնի է թէ մենք գողութեան վրայ ինչ գաղափար ունինք նէ՝ անոնք ալ ուրիշն ստացուածքը առնելուն վրայ նոյն գաղափարը ունենալու ըլլալին նէ, յայտնապէս բան չէին առներ, անանկ՝ իբր թէ կը խորհին որ իրաւունք ունին առնելու, եւ կամ թէ տէրերը բան պիտի չըսեն եւ պիտի չարգիլեն :

§ 415 • Քարոյական գատողութեան զանազանութիւններու եւ գարտուղութիւններու վրայ՝ հայեցողական կարծիքներէ պատճառեալ :

Արրորդ՝ պատշաճութեամբ կրնանք ակնկալել որ՝ գրեթէ ամէն ո՞ր եւ իցէ նիւթի վրայ բարոյական գատողութեան զանազանութիւններ պիտի ըլլան՝ բարոյականի, կրօնքի, քաղաքակաւնութեան եւ ճշմարտութեան վրայ մարդոց ունեցած երեւելի՝ նիւթաւոր հայեցողական կարծիքներուն տարբերութիւններէն պատճառեալ : — Ասակէ քանի մը տարի առաջ սս հայեցողական գաղափարը կ'երեւնայ որ բոլոր քաղաքաւար երկիրներու մէջ տարածուած էր թէ Սեւերը ստորին սեւ մըն են. աստիճանի կողմանէ անբան անասնոց եւ մարդկանց մէջտեղուանքը դասեալ : Աս մէկ հայեցողական հաւատք մըն էր. եւ արդեօք ինչ եղաւ հետեւութիւնը. — Ափրիկէի եղբրքները շատ տեղեր ծախիչ հրով մոխիւր եղան. գիւղեր ու գիւղաքաղաքներ կործա-

Բարոյական զգացողութեանց ներգործութեան միօրինակութիւնը :

Նեցան աւերակ դարձան, յարատեւ պատերազմ մը շարունակուեցաւ բնիկ ցեղերուն մէջ, եւ հաւանականորաւ քառասուն միլիօնի չափ մարդիկ իրենց հայրենիքէն յափշտակուած՝ մըշտընջենաւոր գերութեան տարուեցան :

Քանի որ աս ծուռ հայեցողական կարծիքը հաստատութեամբ մը մարդոց միտքը պաշարած էր, խղճմտանքին իշխանութիւնն ալ անգործ մնացած էր : Իր ձայնը կամ ամենեւին չէր լսուէր, կամ լսուէր ալ նէ՛ շատ տկար, անանկ որ հազիւ կրնար մարդուն մտադրութիւնը իրեն քաշել : Եւ ինչո՞ւ համար ասանկ պիտի չըլլար : Ի՞նչ որ Սեւերը իրացունէ ստորին են ձերմակներէն ցեղով, իմացականութիւննին մթնցած եւ կիրքերնին անասնացած, ինքզինքնուն հոգ տանելու անկարող, եւ՛ եւս առուել՝ իմացական եւ բարոյական յառաջադիմութեան մը նըպատաւոր ըլլալու անընդունակ, ինչ մնաս կ'ելլէ զանոնք գերութեան բերելէն, եւ ձերմակներուն՝ մարդկութեան ազնիւ շնորհքը ունեցողներուն տուները բանտարդելով անասնոց պէս ցորեն ազալ տալէն, որոնց այնքան մերձաւորութիւն ունին բընութեամբ : Գժուարութիւնը խղճմտանքին վրայ չէ այնչափ, այլ առաւել այս ծուռ հայեցողական կարծիքին վրայ կայացած է :

Ընդդէմ Յօհաննէս Աւետոն իմաստասէրին Յիշատակարաններուն մէջ մէկ շատ ուշիմ՝ ճարտասան եւ շատ ալ աստուածափախ մարդ մը կայ յիշուած, որ ասիկայ քանի մը տարի անձամբ գիրի առեւտուրի է զբաղեր, եւ ան ալ՝ ըստ ամենայն երեւմանց անկեղծաբար խոստովանելով՝ որ քրիստոնէական կրթոնին սկզբունքներովը կը գործէ : Սեւերուն վրայ մտքերնուն մէջ անանկ գաղափարներ հաստատուած էին, որ ատ առուտուրը բարոյապէս չար չէ եկեր իրեն : Ինքը բացայայտ կ'ըսէ, թէ «Սեւերի առուտուրի զբաղած ատեններս երբէք անոր օրինաւորութեանը վրայ խիղճ մը չէի ունենար» : Ինքը աս վաճառականութիւնը շարունակեր է, առանց ներսիդին խիթում մը զգալու, որն որ անշուշտ պիտի տանջէր զինքը, թէ որ անոնց վրայ աս գաղափարը ունենար, թէ անոնք ալ մի եւ նոյն հասարակաց ծնողքէն սերեալ՝ իրենց պէս մարդկային սեռին անգամներն են, եւ՛ ոչ նախապաշարեալ արդարութեան առջեւ՝ հաւասարապէս ժառանգորդ են բնութեան առ հասարակ ամենուն պարգեւած իրաւունքներուն :

Բարոյական դպացոյութեանց ներգործութեան միօրինակութիւնը :

§ 416 . Ծուռ հայեցողական կարծեաց աղջեցութեանը վրայ՝ այլ եւս բացատրութիւնք :

Աս հայեցողական կարծիքը շատ տարածուած եւ հաստատուած էր առաջները, եւ հիմայ ալ չափով մը կայ, <sup>56</sup> թէ քաղաքական իշխանութիւնը իրաւունք ունի իր հպատակներուն վրայ զանոնք կրօնական բաներու մէջ հնազանդութեան բերելու : Աւ սա կարծիքին հետեւութիւնը սա եղաւ որ զանազան ատեններ եւ այլ եւ այլ տեղեր հազարաւոր եւ բիւրաւոր մարդիկ բանտարգելութեան՝ տանջանաց՝ աքսորի եւ մահուան ենթակայ եղան : Աւ անոնք որ սա սարսափելի գործերուն մէջ առաջնորդ գործադիրներ էին, նախնի եկեղեցին հալածողներէն ինչուան սա օրուան հալածիչները, առ բաները կ'ընէին՝ իրենց աչքին առջեւը՝ մարտը ձեռքերով եւ սուրբ սրտով : Ըրօթատունէն կ'ելէին Սրբաքննութեան զնգանը կ'իջնային . անտարակուսելի անկեղծութեամբ աչուրնին երկինք կը վերցընէին օդնութիւն խնդրելու, երբ իրենց բեկբեկեալ բանտարգեալներուն կը մերձեցուցանէին տանջանաց մամուլն ու անիւր . ծնկան վրայ եկած աղօթք կը մատուցանէին ու կ'ելէին աստուածավախ ըշտապով մը կը վազէին կ'երթային Սիմֆիլտի մարդազօհերը ընելու, եւ Սրբոյն Բարթուղիմէոսի սոսկալի սպառիչ սուրը շարժելով՝ մեկ գիշերուան մէջ բիւրաւորները գետին փռելու : Ըսոնց ամէնը կ'ընէին, միայն խղճաբանօք ծուռ հայեցողական կարծիք մը ունենալուն համար :

§ 417 . Բարոյական դատողութեանց վրայ նախնի զուգորդութեանց ունեցած աղջեցութիւնը :

Չորրորդ՝ մեր բարոյական դատողութիւնները երբեմն կը շեփօթին եւ երթալու ուղիղ ճամբաներնէն կը խտտորին նախնի զուգորդութեանց միջոցովը : — Օւզգորդութեան սկզբունքը մարդուս բարոյական կարողութեանը վրայ ուղղակի չ'ներգործեր, այլ անուղղակի կերպով կ'ըներգործէ՝ մեծ ազդեցութեամբ : Արբոր մասնաւոր գործ մը կ'ելայ դատուելու, անիկայ այլ եւ այլ անձանց մտքին մէջ տարբեր տարբեր եւ մեկմէկէ որոշ մերձակայ պարագաներ կը բերէ : Ըսանկով քննուելու բանը կ'ընայ՝ իմացականին տեսութեանը առջեւը՝ այլ եւ այլ դիրքով երեւցընել : Ուստի սա զուգորդութեան սկզբանց բերմունքնե-

րուն մէջ եղած զանազանութիւնը մեծ ազդեցութիւն ունի մէկ մասնաւոր գործի մը վրայ եղած դիտողութենէն յառաջ գալու հաւանութեան կամ անհաւանութեան զգացումները եղանակաւորելու մասին :

Ըստ այսմ՝ երբոր մօտ բարեկամներնիս՝ եղբայրնիս՝ կամ ծընողքնիս միտքութիւն մը կը գործեն, թէպէտ եւ առ բանը մեզի մեծ վիշտ կ'ըլլայ, (ու թերեւս աւելի մեծ վիշտ կու տայ, քան եթէ նոյն բանը մեզի հետ այնչափ մօտ անհուութիւն չունեցող մարդիկ գործելու ըլլային,) սակայն շատ անգամ այնքան զղուանք չ'յարուցանեն ներսիդինիս՝ եղած յանցանքին վրայ, ինչպէս որ հաւանականաբար պիտի զգայինք, եթէ նոյն գործը որիչները ընելու ըլլային: Ընդ մտքութիւնը գործող անձանց կողմէն ունեցած պաշարումներնիս մեր միտքը հազարաւոր անանկ պարագաներ կը բերեն, որոնք յանցանքը մեզի եղածէն թեթեւ կ'երեւցնեն: Բազմաթիւ հաւանական ջատագովութիւններ յառաջ կը բերենք, որ առանկ բան ընել մտքերնէս պիտի չանցնէր, եթէ մեր առջի կապակցութիւններէն պատճառեալ սիրալիր կենակցութիւնները չըլլային:


Այրենեաց կենցաղն ալ բացատրութիւն մըն է աս հիմակուան ցուցուցած դիտողութիւններնու: Ըտ վիճակին մէջ եղողներուն մասնաւոր կացութենէն, եւ անկէ հետեւած նախնի զուգորդութիւններէն, լոկ քաջութիւնը իրենց աչքին առջեւը մէկ արհեստական եւ խիստ բարձր համարում մը ստացած է, եւ նոյն համեմատութեամբ հեղութիւնը՝ անդորրամտութիւնը եւ բարեսիրութիւնը ու քաղցրութիւնը ցածրացած են: Ըս կերպով իրենց բարոյական դատողութիւնները շատ անգամ ծուռ կ'ըլլան:

§ 418 . Չանազանութիւնը բարոյական դատողութեան՝ Գրից յուզմանքներէ պատճառեալ:

Ըստնմէ ի զատ՝ բարոյական դատողութեան զանազանութիւններ կրնայ ըլլալ, ուրիշ խօսքով՝ մարդու բարոյական բնութիւնը երբեմն երբեմն կը շփոթի եւ ներգործութեամբ կը խտորի յուզեալ կրից ազդեցութիւններէ: — Անքին բոլոր մասանցը ներգործութիւնը պայմանաւոր է, այսինքն միայն այս կամ այն սահմանեալ պարագաներուն տակը կ'ըլլայ կամ կը պատահի: ()րինակի համար՝ բարոյական ներգործութեան մէկ պոյմանն է աս, ինչպէս որ կրկին եւ կրկին առիթ ունեցանք զիտելու, որ մէկ բանի մը՝ ինչ որ է նէ՝ նախընթաց իմացումը

ըլլալու է, որ անոր վրայ բարոյական դատողութիւնը ի գործ դրուի: Բարոյական ներգործութեան աս պայմանը կը խանգարի վերը յիշած պարագաներնու մէջ, ինչպէս եւ ուրիշ պարագաներու մէջ ալ: Արքի սաստիկ յուզման ատեն անդորրութեան ժամանակ մարդուս ներսիդին ծագելու բարոյական շարժութիւնը յառաջ չ'գար, վասն զի հոգին սաստկապէս եւ բոլորովին ուրիշ տեսակ զգացմամբ մը կ'առնուի: Այդին իմացող եւ բազմատող մասը բանին վրայ՝ ինչ որ է նէ՛ ուղիղ տեսութիւն ունենալու վիճակէն կ'ելլէ: Բայց երբոր մարդուն կիրքը կ'իջնայ, եւ պատեհութիւն կու տայ իրեն հետաքննութիւնը նեղու եւ մտածելու, բարոյական դատմանը զօրութիւնը նորէն վրան կու գայ. եւ այնպիսի բուն զգացման ենթակայ եղող անձը իսկոյն սոսկումով կը տեսնայ որ ինչեր է բեր սյն միջոցին:

Ըստր եւ բոլոր միւս յիշուած պարագաներուն մէջ խրղճմըտանքը հաւանակաբար պիտի գտնենք որ ինքնիրեն համաձայնութեամբ կը գործէ միշտ: Իր բրած պակաս դատողութիւնները իր բնութեանը պակասաւորութենէն չեն. այլ աս պարագայէն՝ որ տգիտութենէ, նախնի կրթութենէ, նախապաշարումէ, ծուռ զուգորդութիւններէ եւ անկարգ կիրքերէ, ու թերեւս ուրիշ մէկ քանի ասոնց նման արդիւնք ունեցող պատճառներէ՝ իրողութեանց վրայ մէկ անկատար եւ ծուռ տեսութիւն մը իր առջեւը կը գրուի:



## ԳՂՈՒԽ • Ե

## ԲԱՐՈՅԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹԻՒՆ

§ 419 . Դաստիարակութեան կարեւորութեանը վրայ թելադրութիւնք

ԸՐԺՎԵՆ չենք սեպեր որ Բարոյական Օգացողութեանց նիւթը թողունք առանց մէկ քանի ծանօթութիւններ տալու՝ գրէ

Բարոյական դաստիարակութիւն:

խաւորապէս գործնական տեսակէ՝ բարոյական դաստիարակութեան վրայ ընդհանրապէս: Թերեւս աւելորդ բան է ժամանակաւ վաճառ ըլլալը՝ այս կերպ կրթութեան մը կարեւորութիւնը ցուցնելու համար, վասն զի աս բանը բոլորովին զանց ընելէն հետեւած աղէտալի շարիքներուն վրայ մէկը չ'զայ որ տգէտ ըլլայ: Սակայն՝ ասոր կարեւորութիւնը որչափ որ առ հասարակ ընդունուած ալ է նէ, միշտ ստորին աստիճանով բռնուած է՝ ան զուտ իմացական դաստիարակութեան հետ բաղդատելով, որուն գործը միայն հմտութիւն տալ է:

Թեպէտ եւ մէկը չ'կայ որ համարձակի հաստատել թէ բարոյական դաստիարակութիւնը ոչինչ բան է, սակայն պէտք է խոստովանիլ որ յոյժ շատ զանց անուած է՝ այն մտաւոր կրթութեանը ընդհանրապէս աւելի նախապատիւ սեպուելուն համար, որն որ լոկ իմացականութեան վրայ կը դառնայ: Տղոց եւ պատանեաց՝ զլսու վերաբերեալ ամէն բանը մեծ եռանդով կը սորվեցնեն. քերականութիւն, աշխարհագրութիւն, թուաբանութիւն, երկրաչափութիւն, աստեղաբաշխութիւն եւ ասոնց նմանները. սակայն սրտի վերաբերեալ գրեթէ բան մը սորվեցնելու չեն աշխատիր: Իմացականութիւնը կրթելու համար ամենեւին աշխատութիւն չեն խնայեր, իսկ մարդկային բնութեան զգայական մասը, բարոյական շարժութիւնները, բաղձանաց ըստորին եզանակաւորութիւնները եւ կիրքերը կը թողուն որ իրենց հոգը իրենք տանին:

Իրերուն ճշմարիտ վիճակը աս է ենթադրելով, ամէն խորհրդածող միտք անշուշտ սրտի ցաւով պիտի նայի աս բանիս վրայ, եւ մեծ անձկանօք յառաջ պիտի տնկէ իր աչքը այն ժամանակին, երբ բարոյական դաստիարակութիւնը գեթ հաւասար պիտի դասի իմացականին հետ, եթէ անկէ առաջ չանցնի ալ նէ: Ստոյգ է որ՝ հաստատուն եւ ճոխ հիմն ունինք մտաւոր կրթութեան աս մասին, եթէ աս Գործիս մէջ յառաջ բերուած վարդապետութիւնները ճշմարիտ են նէ. նախ՝ թէ չարին ու բարին՝ արժանաւորութեան եւ անարժանաւորութեան վերացեալ գաղափարները ձեւացնելու իմացական զօրութիւնը ունինք, որկէ հարկաւորապէս կը հասկըցուի թէ մէկ անփոփոխ կանոն մը ըլլալու է արդարութեան, եւ Երկրորդ՝ թէ Օգացողութեանց մասին մէջ՝ այսպիսի անփոփոխ կանոն մը ըլլալուն ճշմարտութեանը համեմատ՝ Բարոյական Օգացողութեան կամ Խղճմտանքի անկական սկզբունքը ունինք, որն որ՝ իր Շարժութեանց կարգէն եղող ներգործութիւններովը արդարութեան կանոնին համաձայնելնիս կամ անկէ խոտորելնիս կը ցուցնէ, եւ իր Պարտաւորիչ ներգործութիւններովը՝ համա-



Բարոյական դաստիարակութիւն:

ձայն գալել կը պահանջէ մեղմէ իշխանաբար: Ըստնք՝ կը հաստատենք թէ՛ բաւական հիմն են կարգաւորեալ եւ տեւողական բարոյական դաստիարակութեան, մանաւանդ երբոր կը նկատենք նաեւ ան սերտ կապակցութիւնն որ խղճմտանքին եւ իմացականին մէջտեղը, եւ մասնաւորաբար խղճմտանքին ու տրամաբանութեան մէջտեղը կայ:

§ 420. Մարդու միտքը կանուխ կը սկսի լեցուիլ կամ բարի կամ չար սկզբունքներով:

Թերեւս հոս առաջարկուի, բարոյական դաստիարակութեան մեծ կարեւորութեանը ընդհանուր ճշմարտութիւնը ընդունելով, թէ աւելի աղէկ կ'ըլլայ բարոյականին մասը թողուլ, ինչուան որ մարդիկ բաւական մեծնան, եւ բոլոր այդ կերպ նիւթերու վրայ ինքնիրեննուն որոշում՝ ընեն: Ըստ առաջարկութիւնը քիչ մը ծանրութիւն կ'ունենար, եթէ հնարաւոր ըլլար որ մարդու միտքը ինչուան այդ ատենը բարոյապէս դատարկ մնար: Սակայն բանը այսպէս չէ: Միտքը շարունակ գործելու վրայ ըլլալուն, գրեթէ իհարկէ բան մըն է որ բարի կամ չար բարոյական սկզբունքներ կ'ընդունի, եւ զանոնք իբր թէ կը տարբացընէ իր բնութեանը մէջ: Ըստ չափ ներգործուն ազդեցութիւններ կան չորսգիծիս որ՝ ան որ բարիով զգածեալ չէ նէ, չ'կրնար իրաւացի կերպով ակնկալել թէ չարէն անապական պիտի մնայ: Ուստի մոլութեան տեղի չ'տալու ու ներս մտնելը արգիլելու համար՝ պէտք է առաջունէ միտքը բարիով լեցընել, բազմահոգութեամբ եւ հաւատարիմ կրթութեամբ առաքինութեան սկզբունքները աստիճան աստիճան հոն խօթելով: Ուստի տղոց եւ պատանեաց միտքը հարկ է որ անդու բարոյական կրթութեան ենթակայ ըլլայ:

§ 421. Թէ ե՞րբ սկսելու է բարոյական դաստիարակութեան:

Ուստի չենք կրնար աս հետեւութիւնը չ'հետեցընել, թէ ուրեմն պէտք է բարոյական կրթութեան ընթացքը կանուխ սկսիլ: Ըստիկայ ըստ բաւականին հաստատութիւն ունեցող ճշմարտութիւն մըն է, թէ գոյութեան սկսածնուս պէս սորվելու ալ կը սկսինք: Մանուկը աշխարհք գալուն պէս՝ իր միտքը բնականաբար կը բանայ ինքզինքը գիտութեան ընդունելութեանը, ինչպէս որ ծաղիկը ուրախութեամբ տերեւները առաւօ

Բարոյական Դաստիարակութիւն :

տեան ծագող արեւին կը բանայ : Ըն եռանդոտ մտադրութիւնը որ կը յայտնէ իր վրայ աչքը գէպի լուսին եւ կամ ինչ եւ իցէ փայլուն բանի մը դարձուցած ատենը , ան զարմացման նշանները որ կը ցուցնէ երբոր յանկարծական եւ բարձր ձայն մը կը լսէ , ան իր զօրաւոր հակամիտութիւնը՝ բոլորափրք եղողներուն գործքերուն եւ խօսածներուն նմանը ընելու , ասոնք ամէնք քաջայայտ կը ցուցնեն՝ թէ իմացականութիւնը բացուելուն գործը արդէն սկսած է ներսիդին :

Իմացականին ասանկ կանուխ բացուելուն վրայ թէպէտ մէկը չ'կայ տարակուսող , եւ սակայն աս նոյն բանին բնական եւ բարոյական զգացողութեանց համար ալ ճշմարիտ ըլլալը այնչափ ընդունուած չէ . սակայն , ինչպէս որ առիթ ունեցած ենք ակնարկելու , բաւական պատճառ չունինք մեր բնութեանը աս երկու մասերուն մէջ այսպիսի որոշում մը ընելու . գլխուն ու սրբտին գործելը , իմացականին եւ զգայականին բացուիլը էսպէս մի եւ նոյն ատենը կը սկսի : Իրաւ է որ իմացողութիւնը կամ իմացականին ներգործութիւնը առաջ է բնութեան կարգին մէջ , սակայն զգայականին ներգործութիւնն ալ , թէ բնականը եւ թէ բարոյականը , սերտ մերձաւորութեամբ եւ յարատեւութեամբ անոր ետեւէն կու գայ : Եւ աս ալ յաւելունք , թէ մարդու բարոյական բնութեանը գլխաւոր մասանցը բացուելուն գործողութիւնը կ'երկնայ որ իմացականէն շուտով կը լիննայ : Իրական ճշմարտութիւնները եւ անոնց ունեցած վերաբերութիւնները , որ իմացականութեան ներգործողութեանը ենթականերն են , անթիւ են եւ անհամար : Սակայն բարոյականին գլխաւոր մեծ սկզբունքները սակաւ են եւ պարզ : Արչափ քիչերը կը գտնուին տասնուչորս եւ տասնուվեց տարեկան հասակին հմտութիւն ստանալու գործը լինցուցած , եւ իրենց բոլոր իմացական կարողութիւնները կատարելապէս բացուած եւ զօրացած : Եւ սակայն քանի քանի անձինք ան նոյն հասակին մէջ անանկ որոշ ու հաստատուն բարոյական որպիսութիւն մը ստացած են , թէ աղէկին կողմը եւ թէ գէշին , որ՝ եթէ գէշ է նէ՝ աղէկի դաւնալուն յոյս մը ընելու գրեթէ ամենեւին ատեղի ձգած չեն , եւ՝ եթէ աղէկ է նէ՝ անոր ազնուութիւնը կորսուելուն վրայ կասկածելու պատճառ թողուցած չեն :

§ 422 . Բարոյական կրթութեան գործադրութեանը մէջ եղող վճատեցուցիչ պարագաներու վրայ :

Եւ հոս մէկ վճատութիւն բերող պարագայի մը վրայ պիտի խօսինք , որն որ շատ անգամ կը պատահի անոնց աշխատու-

թեանցը մէջ, որոնք յատկապէս տղոց եւ պատանեաց կրթութիւն տալու վիճակի մէջ մտած են : Տիրիչու բաներնիս աս է, որ երբեմն՝ եւ թերեւս կրնանք ըսել շատ անգամ՝ կը տեսնեն որ իրենց աշխատութիւններէն շատ քիչ անմիջական բարիք յառաջ կու գայ : Իմացականի վերաբերեալ հմտութեանց մէջ իրենց աշակերտներուն ինչ յառաջադիմութիւն ընելը որոշ կը տեսնեն . սակայն այնչափ կարողութիւն չունին բարոյականին յատուկ եղող կրթութեանց մէջ անոնց որչափ յառաջ երթալը չափելու : Կը արգարիւ շատ անգամ անանկ կը հաւատան՝ թէ իրենց տուած կրթութիւնը ապառաժուտ գետնի վրայ ցանուած սերմի պէս է, որ չէ թէ միայն ներկային մէջ անպտուղ է, այլ յաւիտեանս յաւիտենից պտուղ տալիք չունի :

Եւ մէկ մեծ սխալմունք մըն է : Նշմարտն աս է որ կորսուած բան չկայ : Տղոց յիշողութեանը հաղորդուած բարոյական եւ կրօնական հրահանգը իրենց ներսիդին հաստատուած անանկ զօրութիւն մը կ'ըլլայ, որն որ կրնայ երբեմն թմրիլ, սակայն ոչ երբէք կը մեռնի ու կ'ոչնչանայ : Կրնայ ըլլալ որ երկար ատեն անպտուղ մնայ . շատ տարիներ նշան մը չ'ցուցնէ կենդանութեան եւ ներգործական ազդեցութեան . եւ սակայն ատ վիճակին մէջ կարելի է որ միայն մէկ բարեպատեհ եւ կարեւոր ժամու մը կը սպասէ, որ անատենը յանկարծ եւ նշանաւոր կերպով երեւան ելլէ : Ուստի մէկը պէտք չէ որ վհատի այսպիսի դաստիարակութեան գործերու մէջ : Հաւանականաբար չ'կայ մէկ բան մը որուն մէջ Սուրբ Գրոց ան խօսքը այնչափ ճոխ մաքով կատարուի, ինչպէս աս բանին մէջ . «Վու հացդ ջուրերուն երեսին վրայ ձգէ, վասն զի շատ օրերէն ետքը զանիկայ կը գտնաս» :

Ինչպիսիք բացատրութիւններ կրնայինք մէջ բերել աս հատուածիս գիտողութիւնները հաստատող : Որչափ բնական է հետեւեալ գրիպուածը . եւ՝ հետեւաբար՝ որչափ ալ համաձայն կու գայ ուղիղ փիլիսոփայութեան : — «Երբոր տղայ էի», կ'ըսէ քրիստոնեայ մարդուն մէկը, «մայրս սովորութիւն ունէր աղօթք ըրած ատենը զիս իր քովը ծնկան վրայ բերել տալու ու ձեռքը զլիսուս վրայ դնելու : Դեռ իրեն արժէքը ճանչնալու չափ հասակս չառած՝ մեռաւ, ու ես մնացի ինք իր առաջնորդութեանս : Ուրիշներուն նման չար կիբքերու հակեցայ . բայց շատ անգամ՝ կը զսպուէի, եւ այն մեղմ՝ ձեռքը՝ զլիսուս վրայ դրուած՝ կարծես թէ զիս ետ կը բռնէր : Պատանեկութեան ատենս օտար երկիրներ ճամբորդութիւն ըրի, եւ շատ փորձութիւններու ենթակայ եղայ . սակայն երբ յաղթուելու կ'ըլլալս՝ ան նոյն վտանգը չ'ուզեայիք, ու զիս իւրիւրէր : Ինծի այն

պէս կը թուէր թէ մանկութեան երջանիկ օրերուս պէս անոր ճնշումը կը զգայի, եւ անոր հետ մէկտեղ ներսիդիէս մէկ ձայն մը կու գար, մէկ ձայն մը՝ որուն պիտ'որ հնազանդէի. Ս'ըներ աս չարութիւնը որդեակ, եւ մի մեղանշեր Մստուծոյ դէմ":

§ 423. Ուղիղ հայեցողական կարծիքներու կարեւորութեանը վրայ՝ բարոյական նկատմամբ:

Լայց քանի որ կը հաստատենք՝ թէ մարդուս մտաւոր կազմութեանը մէջ բաւական հիմն կայ բարոյական գաստիարակութեան մը, թէ աս գաստիարակութիւնը պէտք է կանուխ սկսիլ, եւ թէ այսպիսի կրթութեան ընթացքի մը մէջ պէտք եղած քաջալերութիւնները կան, միանգամայն աս ալ կը խոստովանինք որ դիւրին բան չէ քանի մը խօսքով նշանակել բարոյական կրթութեան գրութեան մը ունենալու որպիսութիւնները եւ գլխաւոր մասերը: Ըստ այսմ՝ մենք ալ այլ եւս պիտի չերկարենք մեր խօսքը աս նիւթիս վրայ, այլ մէկ քանի ընդհանուր տեղեկութիւններ տալով պիտի վերջացնենք քննութիւննիս: Ուստի՝ զիտողութիւննիս յառաջ տանելով՝ կը ծանուցանենք, թէ պէտք եղած աշխատութիւններն ընելու է՝ որպէս զի տղոց եւ պատանեաց մտացը մէջ ուղիղ հայեցողական կարծիքներ հաստատուի:

Կարենթաց գլուխներէն մէկուն մէջ տեսանք որ մարդուս խղճմտանքը իր առջեւը դրուած իրողութիւններուն նայելով կը գործէ: Ուստի անկէ աս կը հետեւի որ՝ եթէ ծուռ կարծիքներ ընդունած ըլլալու ըլլանք նէ, ինչ կերպ կարծիք որ ըլլայ, անոնք մեր խղճմտանքին վրայ անշուշտ մէկ ներգործութիւն մը կ'ունենան: Թէ որ ատ կարծիքները միծաղիւ եւ հիմնական բաներ ըլլան նէ, հաւանականաբար մեզ անանկ մէկ ճամբու մը մէջ յառաջ պիտի վարեն, որ եթէ անանկ գաղափարներէ ազատ ըլլայինք նէ՝ յետին աստիճան չար ճամբայ պիտի համարէինք: Ըս հաւատքը՝ թէ մարդիկ բնականապէս հաւասար իրաւանց տէր են, բան մը չէ, բայց եթէ հայեցողական կարծիք մը. մէկ կարծիք մըն է, եւ ինքնին վրան նայիս նէ պարզ ու անմեղ բան մը կ'երեւնայ. սակայն ասորուս օրս աւթոռներ ու պետութիւններ կը կործանէ կոր, միլիօնաւորները իրենց շղթաներէն կ'արձակէ կոր, եւ ընկերութեան լայնածաւալ կազմութիւնը կը վերակերպէ կոր: Ըս կարծիքը՝ թէ խրղճմտանքին իրաւունքները անփոխադրելի են, եւ թէ մէկը չերկրնար բռնաբարական միջոցներով ուրիշին կրօնքին՝ հաւատքին

վրայ իշխել, տանջանաց գործիքները բնաշինջ կ'ընէ կոր, հալածման հօւրը կը շիջուցանէ կոր, եւ աշխարհիս հեղձուցեալ պաշտամանը կենդանութիւն կուտայ կոր: Այս հայեցողական կարծիքը՝ թէ Հիսուս Վրիսաոս, Որդին Աստուծոյ աշխարհք եկաւ, մարդ եղաւ, եւ իր մահուամբ մեղաց քառութիւն ըրաւ, պարզ եւ՝ առջի բերանը երեւցածին պէս՝ ներգործութիւն չունեցող Ճշմարտութիւն մըն է, եւ սակայն արդէն ընտանեկան եւ քաղաքական ընկերութեան կերպորանքը շատ փոխած է, եւ՝ բոլոր զանգուածը շարուող քիչ մը լամբին նման՝ մարդկային ազգը առ հասարակ կը նորոգէ կոր:

Աստի ասկէ կը հետեւցընենք՝ թէ շատ կարեւոր եւ մեծ բան է աս նկատողութիւնը ունենալը, թէ ինչ կերպ ճշմարտութիւններ են ընդունածնիս: Այն վարդապետութիւնը՝ թէ մէկ մարդու մը ինչ բանի հաւատալը հոգ չէ, միայն թէ պէտք է անկեղծ ըլլալ հաւատացածին մէջ, մարդկային բանականութեան իրաւունքները կը խափանէ եւ ոչինչ կը հանէ, եւ բոլորովին վտանգաւոր է: Ո՞ր հալածիչը, ո՞ր բռնաւորը, ո՞ր աւազակը, ո՞ր մարդասպանը չ'կրնար ինչ եւ իցէ տեսակ մը անկեղծութիւն յառաջ բերել իր ըրածին մէջ, եւ շատ պարագաներու մէջ ալ իրաւամբ: Այլ սակայն չ'կայ մէկ անկեղծութիւն մը որ մարդկային դատման եւ արդար Աստուածութեան առջեւը հաւանութիւն գտնէ, բայց միայն ան՝ որ մարդկային հանձարին իր ամենալաւ ջանքերովը գտնելու կարող եղածին շափ իմաստութեան եւ գիտութեան վրայ հիմնեալ է:

§ 424. Աստուծոյ գիտութեանը վրայ, եւ կրօնական ճշմարտութեանց ուսմանը վրայ ընդհանրապէս:

Այլ նախընթաց հատուածին մէջ ըսուածներուն վրայ աս ծանօթութիւնն ալ կրնանք եւեցընել, թէ ամէն կերպ բարոյական, որ կրօնքը դուրս ձգելուն սկզբանը վրայ շինուած է, հարկաւորապէս շատ կամ քիչ թերի է: Ղշմարիտ է որ կրօնասէր չեզոք մէկ մարդ մը (ուրիշ խօսքով՝ անանկ մէկը որ անկեղծ վարկուժ մը չունի Աստուծոյ բնութեանը եւ անոր սահմանադրութիւններուն վրայ) կրնայ մէկ քանի անանկ բաներ ընել, որ՝ ինքնիրեննուն նկատելով՝ ուզիղ են եւ բարոյապէս գովիլի. սակայն անոր ըրածը Բոլոր արդարութիւնը չէ. ամենէն էական մասին մէջ պակաս է: Այլ աս պակասութեանը պատճառաւ դժուար՝ եւ թերեւս կրնանք ըսել՝ անհնար կ'ըլլայ մեզի որ անանկ մէկու մը շիտակ մարդ, այսինքն

Բարոյական Դաստիարակութիւն:

արդար ու սուրբ մարդ է ըսենք մէկ պատշաճութեամբ մը եւ խօսքերնուս մէջ ճշմարտութիւն մը ըլլալով:

Ուստի կը հաստատենք՝ թէ բարոյական դաստիարակութիւն ըսածնիս իրրեւ իրեն մէկ գլխաւոր տարրը՝ իր մէջը բովանդակելու է մէկ կրթութիւն մը Լստուծոյ գոյութեանը եւ բնութեանը վրայ, եւ առ ճշմարտութիւններուն մէջ պարունակուած պարտուց վրայ: Մեր խղճմտանքը, որուն յատուկ պաշտօնն է մեր ունեցած կարողութեանը եւ աննշուածութիւններուն նայելով մեր պարտքերը կարգի դնել, տիրաբար կը պահանջէ մեզմէ առ բանը: Դուսաւոր իմացականութեան մը աչքին առջեւը Լստուած ամէն բանէ որոշ եւ ամէն բանէ գերազանց կը տեսնուի, իրրեւ անհունապէս գերապանծ առարկայ մը, եւ անոր բնութեանը սէր ու օրէնքներուն հնազանդութիւն չցուցնելը այնպիսի սաստիկ ծանր մեղք մըն է խղճմտանքին առջեւը, որուն տեղը ուրիշ սր եւ իցէ առաքինութիւն չ'կրնար լեցնել: Եւ ոչ այսչափ միայն, Լստուծոյ վրայ եղած արժանաւոր նկատողութիւնը՝ անոր ներկայութեանը ամէն տեղ տարածելուն եւ անոր գործքերուն ու պահանջմունքներուն շատութեանը պատճառաւ՝ այնքան բազմաթիւ վերաբերութիւններ ու յարաբերութիւններ ունի, որ իբր թէ անթիւ անհամար գործառնութիւններու վրայ կը տարածի, որոնք որ մարդուս կեանքը կը կազմեն: Եւ այնչափ որ Լստուծոյ գոյութեանը վարդապետութիւնը, մտքով ընդունելով եւ՝ հետեւաբար՝ ինչպէս որ պէտք է՝ ի սրտէ կատարեալ սէր մատուցանելով իրեն, առանց ամենեւին տարակուսի՝ ճշմարտապէս կատարեալ բարոյական կենաց ամենամեծ հիմն ու պահպանութիւնն է:

# ԶԳԵՅՈՂ, ՈՒԹՒՒՆՔ

ՄՏՔԻՆ ԶԳԱՅԱԿՆ ՀԱՆԳԱՄԱՆՔՆԵՐԸ



## Մ Ե Ա Ն Ե Ր Ը Ո Ր Գ

ԸՆԿԵՏԵՐ ԿԵՐ ԽԵՆԳԵՐԵԱԼ, ՆԵՐԳՈՐԾՈՒՑ

ԹՒՒՆՔ ԶԳԵՅՈՂ ՈՒԹՆԸՆՅ







## Գ Լ ՈՒ Խ • Ը

### ԵՆԿԱՏԵՐ ԿԸՄ ԽԱՆԳԱՐԵԱԼ ՆԵՐԳՈՐԾՈՒԹԻՒՆՔ ԱՆՈՐԺԱԿԱՑ ԵՒ ՀԱԿԱՄԻՏՈՒԹԵԱՆՑ

§ 425. Ներածական ծանօթութիւնք անկարգ զգայական ներգործութեանց վրայ :

Մեր բարոյական բնութեանը նիւթոյն վրայ այս ըսածնե-  
րովնիս Օգացողութեանց հետաքրքրական եւ մեծակշիռ բա-  
ժանմանը վրայ խօսքերնիս կը վերջացընենք, որն որ իր երկու  
գլխաւոր մասերովը՝ որոնք էին Ռնական Օգացողութիւնները  
եւ Ռարոյական Օգացողութիւնները՝ ինչուան հոս քննելու եւ  
տեւէ եղանք : Մակայն աս ըսածնիս անոր սովորական եւ կա-  
նոնաւոր ներգործութեանցը համար է, կամ այն ներգործու-  
թիւններուն համար՝ որոնք մեր Օգայական բնութեանը սովո-  
րական եւ տեւողական կամ մնայուն սկզբունքներուն համեմատ  
կ'ըլլան : Բայց կը մնայ մեզի յաւելուլ եւս, թէ հոս ալ՝ Իմա-  
ցականութեան նման՝ նշանաւոր եւ վշտագին զարտուղութիւն-  
ներ կան աս սկզբունքներուն ի գործ դրած բարեյարմար սան-  
ձահարութիւններէն : Ուրիշ խօսքով՝ քիչ չ'պատահիր որ Օ-  
գացողութեանց մէջ այնպիսի ներգործութիւններ կ'ըլլան, ո-  
րոնք մարդու սրտին եւ բարոյականին նախընթաց օրինակնե-  
րուն սովորական կամ բնական ընթացքէն այնքան հեռի են,  
որ զանոնք տիրապէս կրնանք երբեմն անկատար կամ անկարգ  
եւ երբեմն խանգարեալ ներգործութիւնք անուանել : — Հառա-  
ջիկայ գլուխներուն մէջ քննելու առաջարկութիւն ունեցած  
նիւթերնիս ալ աս բանն է, որուն վրայ տեղեկութիւն ստա-  
նալը յայտնապէս հարկաւոր է Օգացողութեանց վրայ ընդար-  
ձակ եւ անթերի հմտութիւն ունենալու համար :

§ 426. Ի՞նչ ըսել է անկարգ կամ խանգարեալ զգացողութիւնք :

Երժան է ծանուցանել հոս՝ թէ անկատար կամ անկարգ  
ներգործութիւն զգացողութեանց ըսելով պիտի իմանանք միայն

Անկատար կամ Խանգարեալ ներգործութիւնք

մէկ ներգործութեան անկանոնութիւն մը, ներգործութեան հասարակ եւ սովորական ընթացքէն դուրս բան մը. կամ՝ ինչպէս որ գործածած բառերնիս յայտնապէս գրեթէ մէկ ընդհանուր եւ անորոշ միտք մը ունի, ասկէ ալ քիչ մը աւելի զօրաւոր անկատարութիւն մը կրնանք իմանալ. ինչպէս, երբոր աս անկանոն եւ անկարգ ներգործութեան վիճակը այնինչ չափը կանցնի, այնինչ սահմանէն անդին կը յառաջանայ, որն որ աւելի գիւրին է ըմբռնելը քան թէ բացատրելը, եւ անատենը կ'ըլլայ խելագարութիւն կամ Խանգարումն մտաց: Որ ըսել է թէ՛ լոկ անկանոն ներգործութիւնը կ'ըլլայ խելագարութիւն կամ խանգարեալ ներգործութիւն, երբոր այնքան կը մեծնայ՝ կը զօրանայ եւ մարդուն մտքին մէջ այնչափ խորին կ'արմատանայ, որ ենթակայ եղողին ձեռքը չըլլար ինքզինքը անկէ պրծելը: Եյնպէս որ աս ըրած դիտողութիւններնէս կը հասկըցուի թէ անկարգ մտաւոր հանգամանք կայ որ խելագարութիւն կ'ըսուի. եւ դարձեալ՝ ուրիշ կերպ անկարգ մտաւոր հանգամանք ալ կայ որ խելագարութիւն չէ, կամ մանաւանդ թեթեւ խելագարութիւն է, եւ կամ թէ խելագարութեան աստիճանէն վար է: Սակայն որն ըլլայ նէ ըլլայ, աս կերպ մտաւոր հանգամանքները առողջ մտքի վիճակ չենք կրնար սեպել, եւ իրօք ալ անանկ չեն: Թէպէտ եւ մէկ առաջարկեալ պարագայի մը մէջ չ'կարենանք եղած մտաւոր անկարգութեան ինչուան խելագարութեան աստիճանը հասած ըլլալը չըլլալը մասնաւորիւ ցուցընել, սակայն աս ստոյգ է որ մարդկային միտքը՝ աս անկարգ վիճակին մէջ, անկարգութիւնը թէ շատ ըլլայ թէ քիչ, մէկնոր եւ մեծակշիռ կերպարանքով մը կը ներկայանայ աչքերնուս առջին:

Մտարակոյս հոս մէկ ընդարձակ եւ հետաքրքրական ասպարեզ մը կը բացուի առջեւնիս տեղեկութեան: Մայց սակայն մեր ըսելիքը հարկաւորապէս կարճաձօտ պիտի ըլլայ, բնականապէս առջեւնիս եկող խորհուրդներուն ընդհանուր կարգերը ցուցընելով աւելի, քան թէ անոնց վրայ մասնաւոր մասնաւոր ստորագրութիւններ ընելով: Այլ աս ոճը գրուի տարած ատեննիս, որն որ դժուար է որ կատարեալ բան մը ըլլայ, որչափ որ արժան է նէ մեր Օգայական բնութեանը ան կարգաւորութեանը համեմատ յառաջ պիտի երթանք, զոր ինչուան հիմայ մեր ըրած հետազոտութիւններուն հիմն գրինք:

§ 427 . Ախորժակաց անկարգ եւ խանգարեալ ներգործութիւն ներուն վրայ :

Ըստ այսմ՝ կը ծանուցանենք նախ եւ առաջ , թէ Ախորժակ-  
ներու անկարգ եւ խանգարած ներգործութիւն կ'ըլլայ : — Քա-  
ջածանօթ բան մըն է աս , որ մարդուս ախորժակները՝ կրկին  
եւ կրկին իրենց հաճոյքը կատարուելով՝ հետզհետէ կը զորանան :

Քանի որ առաւելեալ ախորժակի յօժարութեան գործողու-  
թիւնը յառաջ երթալու վրայ էնէ , շատերուն վրայ զեռ բաւա-  
կան խղճմտանքի յանդիմանութիւն , Կաւքի զսպողական եւ իշ-  
խանական ներգործութիւն կը մնայ , որ զերինք իրենց վրայ հաս-  
նելու մտալուտ գերութեան վիճակէն ազատ պահէ : Սակայն  
ոմանց ողորմելի անձանց ասանկ չ'պատահիր . անոնք ետ գառ-  
նալուն ու նորէն օղատութիւն գտնելուն հնարաւորութիւնն ու  
անհնարութիւնը զատող սահմանագիծէն անդին անցած կ'ըլլան .  
եւ ալ անկէ ետեւ իրենց ուրիշ բան չ'մտար , այլ օր աւուր  
վրայ աւելի խորը իջնալ իրենց տակը բացուած անյատակ ան-  
գունդին մէջ : Այս կերպ օրինակները անտարակոյս կրնանք սե-  
պել թէ մտքի խանգարման բաղմապատիկ ձեւերուն ոմանց տա-  
կը կ'իյնան :

Ախորժակաց անկարգ կամ չափազանց ուժգնութենէն ծա-  
գած մտքի խանգարումներուն թիստ շատը այն բաղմամբիւ կար-  
գի մարդկանց վրայ կը գտնուի , որոնք արբեցուցիչ զեղեր՝ մաս-  
նաւորապէս բարկ ոգիներ գործածելու սովորութիւն ունին :  
Երբոր արբեցուցիչ ըմպելիք գործածող անձը իր այդ վտան-  
գաւոր ախորժակին ուժգնութիւնը այն աստիճան կը սաստկա-  
ցընէ , որ իրօք ինքզինքը մտաւոր խանգարման սահմանը կը  
հասցընէ , ալ այնուհետեւ ինք իր ընելու կարող եղած ջան-  
քերովը ազատելուն յոյս չըլլար : Կրնայ ըլլալ որ յատկ իմա-  
ցումն ունենայ իր վիճակին թշուառութեանը վրայ . պատուոյ  
բաղձանքը զեռ վողովէ զինքը՝ միտքը բերելով թէ ինչ էր  
անգամ մը եւ թէ տակաւին ինչ պէտք է որ ըլլայ . խղճմտան-  
քը զեռ իր յորդորանքները խօսի , թէպէտ եւ հաւանականա-  
բար տկարացած ձայնով . կամքը շարունակէ սակաւ ինչ անգործ  
ճիգեր ընել . սակայն ամենց ամէնը պարապ է : Թէ որ ինքն-  
իրեն թողուի , ու ներգործական խելագարութիւն ունեցողներու  
յատուկ եղող սանձահարութեանց օակ չ'առնուի՞նէ , բարոյապէս  
ստոյգ կրնանք համարել որ անանկ մէկը օրէ օր աւելի խորուն-  
կը պիտի իջնայ իրեն ննթակայ եղած մոլութեանը մէջ , քանի

---

 Անկատար կամ խանդարեալ ներգործութիւնը
 

---

որ իր վրայ մնացած կենսական կարողութիւններովը կրնայ շարունակել իր սովորութիւնը:

Աս վիճակին մէջ եղող անձինք իրենք ալ կ'երեւնայ որ աս բանը կը զգան: Հետակ կը տեսնեն որ փուճ է իրենց զօրութեանը վրայ յոյս գնելը: Վանի քանի հեղ պատահած է որ այսպիսի մարդիկ ապաշխարաններ եւ ուրիշ բանտեր գացած ու թախանձած են ընդունելութիւն գտնելու, աս խորհելով՝ որ ուրիշ բան չ'կրնար ազատել զիրենք այն իրենց չարաշուք ախորժակին հաճոյքը լիցընելէն, բայց միայն ան արգելանոցներուն ստուար պարիսպներուն մէջ խիստ բանտարգելութիւնը: — «Օրաւոր ըմպելիքներ գործածելը նախ եւ առաջ ազատ կամքով կ'ըլլայ, կ'ըսէ Րըշ, սակայն ունակութեամբ հարկաւորութեան կը փոխուի: Ասոր ասանկ ըլլալը կը մակարեբեմ ան մարդոցմէն, որոնք բարկ ոգիներու գործածութեան տուած են ինքզինքնին չափազանցօրէն, եւ անկարող են՝ ընտանեկան պարտուց, բարեկամութեան, պատուոյ, ստացուածքի եւ երբեմն մինչեւ անգամ կրօնքի եւ կենաց իրենց առջեւը զրած բոլոր բողոքներովն՝ ինքզինքնին անկէ ազատելու: Վանի մը տարի առաջ Յիլատէլֆիայի մէջ մէկ ունակաբար գինեմոլ մը պատահեցաւ, որ կենաց սիրոյն անզգայ եղած էր իր մոլութեանը պատճառաւ: Արբ իր բարեկամին մէկը սաստիկ կը ստիպէր զինքը որ խմելէն ետ քաշուի, «բարեկամ՝ ըսաւ, եթէ սենեակի մը մէկ դին աման մը ռոմ ըլլայ, ու ես ալ մէկալ դին կեցած, եւ թնդանօթ մ'ալ շարունակ գունդ արձակէ իմ ունոր մէջտեղէն, չեմ կրնար ինքզինքս բռնել, թնդանօթին առջեւէն անցնելու ռոմին քովը երթալու եմ»:

§ 428 . Անձնապահութեան սկզբունքին խանդարեալ ներգործութիւնը:

Արբոր Ախորժակներէն Հակամիտութեանց կ'անցնինք, ինչպէս են անձնապահութեան սկզբունքը՝ գիտութեան բաղձանքը՝ ընկերութեան բաղձանքը՝ եւ ասոնց նմանները, կը գտնենք որ ասոնք ալ միւսներուն պէս, հաւանականաբար առանց բացառութեան, ախտացեալ կամ անկարգ ներգործութեան ենթակայ են: Այսինքն Անձնապահութեան սկզբունքէն, կամ որն որ կրնանք՝ ուրիշ խօսքով՝ կոչել կենաց շարունակութեան բաղձանք: Աս սկզբունքը՝ նոյն կարգէն եղող ուրիշ սկզբանց նման, թէպէտ եւ ընդհանրապէս չէ թէ այնչափ նշանաւոր աստիճանաւ մը, երբեմն այնպիսի պարագաներու տակ եւ անանկ կերպով մը ինքզինքը կ'երեւցընէ, որ յայտնապէս կը տեսնուի որ

իր ներգործութիւնը բնական՝ կանոնաւոր եւ առողջ ներգործութեան ընթացքէն զուրս ելած է : Կենաց պահպանութեանը համար եղող աս սկզբունքին անկարգ ներգործութեանը ազդեցութեանը տակն եղող անձինք շատ այնպիսի վտանգի եւ երկիւղի երեւակայութիւններ կը ձեւացընեն, ինչպէս որ մարդ բնականապէս կ'ահնկալէ որ անանկ պիտի ընեն, որոնք գոյութիւն չունին բնաւ, եւ ամենեւին մէկ տեղ մը չեն գտնուիր, բայց միայն իրենց մտացը մէջ : Ըստնք ոչ միայն ուրիշներուն անբերելի վտանգներ կը տեսնեն, այլ եւ շատ անանկ նախազգուշութիւններ ալ կ'ընեն, որոնք քովերինն եղողներուն առջեւը ամենեւին անհարկ եւ մինչեւ անգամ ծաղրալի բաներ են :

Քիսնէլ Ս`ելամաղձոտութեան վրայ խօսած տտեւը մէկ օրինակ մը կը յիշէ, որ աս բանիս իրբեւ բացատրութիւն կրնանք առնել : « Երբեւեի զօրական պաշտօնատարին մէկը, կ'ըսէ, յիսուն տարուան չափ ժամանակ ղինուորական գործքերու մէջ ժրութեամբ վատտակելէն ետեւ, ախտի մը հանդիպեցաւ : Ըստ ախտը սկսեց իր վրայ՝ թեթեւ պատճառներէ ուժգին շարժութիւններ ունենալովը, օրինակի աղագաւ՝ թէ որ մէկ հիւանդութեան մը վրայ խօսք ըլլար, իսկոյն կը հաւատար որ իր վըրայ կայ նոյն հիւանդութիւնը, եթէ մէկուն վրայ խօսուէր թէ խելքը կորսնցուցեր է, անմիջապէս իրեն անանկ կը թուէր թէ ինք ալ խելագարած է, եւ կը քաշուէր կ'առանձնանար իր սենեակը տիրական խորհուրդներով գլուխը լեցուած եւ բոլորովին անհանգարտութեան մէջ ինկած : Ըմեն բան իրեն համար ահա եւ գողու աւարկայ կ'ըլլար : Երբոր մէկ տուն մը մտնէր, կը վախնար որ գետնի տախտակամածը վար իջնայ ու ինք ալ անոր աւերակներուն մէջ գահավէժ ըլլայ : Չէր կրնար կամուրջէ մը անցնիլ առանց սոսկալու՝ որ չըլլայ թէ գէմը կրուող ելլէ, եւ իւր պատիւը նկատելով ստիպուի պատերազմ ընելու » :

§ 429 . Ստացման սկզբունքին անկարգ եւ խանգարեալ ներգործութիւնը :

Ստացման սկզբունքին կամ բաղձանքին ալ անկարգ կամ խանգարեալ ներգործութիւնները կ'ըլլան, եւ ան ալ չէ թէ քիչ անգամ : Ըստ անկարգութիւններէն կան որ կամուսոր են, որ ըսել է՝ այնինչ ընթացքով գործելով ելած, որուն պատասխանատուութիւնը եթակայ եղողին վրայ է : Կան նաեւ որ ընդարթայ կամ բնական են : — Հաստատուն ազահներուն մէջ

Անկատար կամ խանդարեալ ներգործութիւնք

ատեն ատեն հաւանականաբար կրնանք գտնել առաջին դասին օրինակները: Ընանկ անձինք կան աս կարգէն եղող մարդկանց մէջ, որոնք երկար ժամանակեայ կամաւոր կրկնութեան գործողութիւնով մը այնքան սաստկացուցած են Ստացման սկզբունքին ուժգնութիւնը, որ անոր ներգործութիւնը ալ իրենց կամքին իշխողութենէն դուրս ելած եւ յայտնապէս մտաւոր խանգարման սահմանները մտած է: Հաւանականաբար ասանկ եղած ըլլալու է ան մարդը, որ Սաքսիմիանոս կը յիշէ, որ սովի մը ատեն ուտելու մտիկ մը ունենալով, անիկայ բռներ երկու հարիւր բեննիի վաճառեր ու ինք ստակը ծոցը սովամահ մեռեր է: — Բայց թէպէտ եւ աս անտարակոյս է որ մէկ մարդ մը ագահութեամբ կրնայ խելագարիլ, սակայն այնինչ առաջարկեալ ագահը արդեօք մտաւոր անկարգութեան սահմանը հասած է՝ թէ անկէ վար է, ասիկայ դժուար է որոշելը:

§ 430. Ստացման սկզբունքին անկարգ ներգործութեանը երկրորդ անսակին օրինակներ:

Ստացման բաղձանքին անկարգ ներգործութեանը ուրիշ օրինակները կան, որոնք ընդարոյս կամ համարուն ըլլալ կ'երեւնան: Ըս մտաւոր խանգարման ենթակայ եղողներուն վրայ՝ որ եւ իցէ ստացուածք ըլլալու բան՝ թէ շատ արժէք ունենայ թէ քիչ՝ ստանալու յօժարութիւնը ոչ միայն մեծ գորութիւնով, այլ եւ շատ կանուխ հասակնուն մէջ կը սկսի երեւնալ: Կոլ եւ Սփըրդէմ անուն մատենագիրներուն գրութիւններուն մէջ ասոր խել մը օրինակները կան նկարագրուած. մէկ քանի հատ ալ ուրիշ մատենագրութիւններու մէջ կայ: Բըշ՝ օրինակի համար՝ իր Բժշկական Հետազոտութեանցը մէջ կին մը կը յիշէ, որ ամէն կողմանէ բարի օրինակ էր վարուց, բացի մէկ մասնաւոր բանէ մը: Գողոմբիւն ընելը չէր կրնար ձգել: Ըս իր ունեցած մոլութիւնը առաւել զարմանալի ընող բանն աս էր որ հանգիստ վիճակի մը տէր էր, եւ մէկ շուայութիւն մը չէր ըներ: Իւ սակայն անանկ սաստիկ յօժարութիւն մը ունէր աս միլութեանը, որ եթէ աւելի մեծարժէք բան մը ձեռք ձգելու կարող չըլլարնէ, շատ անգամ՝ բարեկամի մը սեղանը նստած ատենը ծածկարար գրպանը հացով կը լեցընէր: Ըս իր յանցանքը եւ կը խոստովանէր եւ կ'ողբար:

Կոլին պատմած օրինակներուն մէկ քանին ասոնք են: — «Սիկտոր Ըմադէոս Ը՝ Սարտէնիայի թագաւորը ունակութիւն ունէր միշտ շնչին բաներ գողնալու: Շէնէվա քաղաքը Սուրէն

անուն եկեղեցականին մէկը, թէպէտ եւ բանականութեան եւ կրօնքի դիէն ամենազօրաւոր սկզբանց տէր անձ մըն էր, շատ անգամ գողութիւն ընելու յօժարութենէն կը յաղթուէր: Ուրիշ մէկը ի մանկութենէ գերի եղած էր աս յօժարութեանը: Ասիկայ զինուորական պաշտօնի մէջ մտաւ, որպէս զի անոր մէջ եղած պատժոյ սաստկութիւնովը իր մոլութենէն սանձահարուստ սակայն առջի սովորութիւնը գարծեալ շարունակելով՝ մազ մընաց կախուելու պիտի գատապարտուէր: Սիշտ իր աս փրակ պետող կիրքը յաղթելու աշխատելուն, աստուածաբանութիւն սորվեցաւ ու Քափուչին կրօնաւորաց կարգը վրան առաւ: Սակայն իր չար սովորութիւնը վանքն ալ զնաց ետեւէն: Իսկ հոն զինքը փորձելու համար գանուածները միայն չնչին բաներ ըլլալուն, երբոր իր սյլանդակ յօժարութիւնը կը կատարէր նէ այնչափ խիղճ չէր ըներ: Սկրատներ, աշանակներ, բազմակալներ, գաւաթներ, բաժակներ, եւ ուրիշ ասոնց պէս բաներ կը գողնար կ'առնէր կը տանէր խուցը կը պահէր: Վիէննայի կառավարութեան մէկ գործակալը զարմանալի մոլութիւն մը ունէր, որ ուրիշ բան չէր գողնար բայց միայն խոհանոցի կարասիք: Արկու սենեակ բռնած էր գողունիքը պահելու, գողցածները ոչ կը վաճառէր եւ ոչ կը գործածէր: Արպիոս անուն համբաւաւոր բժիշկին կինը անանկ հակամիտութիւն մը ունէր փոքրիկ գողութիւններ ընելու, որ երբոր վաճառք մը գնելու ըլլար միշտ կը նայէր որ կտոր մը բան գողնայ”:

§ 431. Նմանողութեան սկզբունքին անկարգ ներգործութիւնը :

Թէ մարդուս ներսիդին Նմանողութեան սկզբունք մը կայ, որ կը ստիպէ զինքը ուրիշին ըրածին պէս ընելու, աս ճշմարտութիւնը այնքան հարուստ է ապացոյցի կողմանէ, որ անոր հուսատուութեանը վրայ հաւանակամարար ամենեւին տարակոյտ մը չ'մնար անաչառ խուզախնդիր եղողին մտացը մէջ: Աս ըսկզբունքը, իր սովորական գործողութեանը եւ որպիսութեանը նայելով, ոմանց վրայ կը տեսնենք որ անկանոն կամ արատաւորեալ ընթացքով մը կը գործէ: Փիլիէլ խելացնոր կնկան մը վրայ կը խօսի տեղ մը, որ ատ անձը անբխարբէլ հակամիտութիւն մը ունի եղեր առջեւը ինչ որ ըլլայ նէ անոր նմանութիւնը ընելու: Ինչ որ լսէ բերնովը, անիկայ կը կրկնէ եղեր, եւ ինչ շարժուածք կամ գործք որ տեսնէ, անոր նմանը ամենայն հաւատարմութեամբ կ'ընէ եղեր ապագայ, եւ առանց ամենեւին պատշաճութեան կամ վայելելութեան նկատողութիւն

Անկատար կամ խանդարեալ ներգործութիւնք

ընելու : — Ըստ սկզբան անկարգ ներգործութիւնը՝ Համակրական Վամանորդութեան ձեւն որ առած ըլլայ նէ, շատ մեծակշիռ նիւթ մըն է դիտողութեան, այնքան որ հոս հիմնայ պիտի ձգենք աս նիւթը, որ զատ գլխու մը մէջ երկարօրէն հետազօտենք առանձնակի :

§ 432 . Ընկերականութեան սկզբունքին անկարգ ներգործութիւնք :

Ընկերականութեան սկզբունքը, որ յայնանպէս մտադուս բընութեանը մէջ անկական կողմ հակամտութիւն մըն է, այն աստիճան ուժգնութեան կրնայ հասնիլ, որ իրաւամբ իր ներգործութիւնը անկարգ եւ երբեմն ալ խելագարեալ կամ խանդարեալ ներգործութիւն կրնանք անուանել : Ըստ տեղեկութեան վրայ, արժան է հոս վայրիկ մի խորհրդածութիւններնիս դարձնել աս բանիս, թէ արդեօք ճիշդ ինչ մտքով կ'իմանանք խելագարութիւն կամ մտաւոր խանգարումն բառերը, երբոր մտքի այնինչ վիճակներուն համար կը գործածենք : Ընկատար մտաւոր ներգործութիւն կ'ըլլայ, անկարգ մտաւոր ներգործութիւն ալ կ'ըլլայ, որ ասօնք խելագարեալ մտաւոր ներգործութիւն չեն : Խելագարութիւն բառով մտքին ներգործութեանը այն կերպերը կ'իմանանք, որոնք այնքան կարգէ դուրս ելած են, որ Աստիճան անոնց վրայ իշխելու համար ըրած ջանքերը պարսպը կ'ելեն, մէկ խօսքով՝ որ ակամայ անկարգութիւններ են : Ըստնպէս որ, աս ըսածնուս համեմատ, Ընկերականութեան սկզբունքին այնպիսի ներգործութիւնները կ'ըլլան, որ անկարգութեան վիճակի մէջ են. (այսինքն անկանոն վիճակի մէջ, եւ սակայն կամքին ճիգերովը հնար է որ շիտկուին.) անանկ ներգործութիւններն ալ կ'ըլլան, որ՝ այնինչ սահմաններէն անդին անցնելով՝ խանգարման կամ խելագարութեան վիճակին մէջ մտած են. բայց՝ թէպէտ եւ աս որոշումը պէտք է աղէկ հասկընալ, սակայն այն ծանօթութիւններուն համար որոնք՝ ըստ մեծի մասին՝ ընելու սովիթ ունինք նէ, անոնց համար հարկ չէ որ միշտ ստիկայ որոշ աչքերնուս առջին ունենանք :

Կառնանք մեր նիւթին : Ընկերասիրութեան սկզբունքին անկանոն ներգործութիւնը, թէ ճշմարտապէս խելագարութիւն ըլլայ՝ եւ թէ թիւթեալոյն տեսակէն լոկ մտաւոր անկարգութիւն ըլլայ, երկու կերպարանքով կը տեսնուի, որոնք մէկմէկէ բոլորովին տարբեր են, մէյմը անտաւոր ատելութեամբ մը ընկերութենէ խորշելով, մէյմ՝ ալ չափէ դուրս սաստիկ փափաքանօք ընկերութեան բազձալով : — Ընտնք որ առաջին տեսա-



կին ենթակայ են, ընդհանրապէս՝ եւ ըստ մեծի մասին իրաւամբ՝ Սարգատեաց կ'անուանին: Մէկ յանկարծական մտաւոր յուզմունքէ մը, մէկ մեծ ու ծանր դժբաղդութենէ մը, մօտ ազգականներու եւ կարծեցեալ բարեկամներու կողմէն եղած դառն վարմունքէ մը, եւ ուրիշ ասոնց նման զօրաւոր պատճառի մը ազդեցութենէն՝ այն եղբայրութեան բնական կապն որ մարդս իր ընկերին հետ կը կապէ՝ կը խզի կը ոչնչանայ, եւ ստ պատահարին հանդիպող խղճալի անձը կ'առնէ գլուխը կը փակչի կ'երթայ առանձին ժայռերու՝ ձերպերու եւ անապատներու մէջ, ալ մէյժըն ալ մարդու ընկերութեան չ'խառնուելու դիտաւորութեամբ :

§ 433 . Ընկերասիրութեան սկզբունքին անկարգ ներդործութեանը վրայ ուրիշ ծանօթութիւններ :

Ուրիշ կարգ մը օրինակներ ալ կան, որոնց որպիսութիւնը աս հիմնական յիշածնուս ուղղակի հակադարձը կ'երեւնայ : Ընհատ անձինք երբեմն, երբոր ընկերութենէ՝ մասնաւորաբար իրենց բարեկամներուն ընկերութենէն՝ կը կտրուին, աննկարագրելի սաստիկ թշուառութեան մէջ կ'իյնան : Ընմեղ եւ սակայն դժբաղդ Քոստարէն, որ 1450ին արտորուեցաւ Սինեօփէն, տեսնուածին նայելով՝ լոկ աս մտաւոր վիշտին սաստկութենէն մեռած կը պատմուի : Ըռանձին բանտարգելութենէն ալ մարդիկ մեռած կը յիշուին : Յոյժ ցաւազին ախտ մը կայ՝ մեծ չափով ընկերասիրութեան սկզբունքին անկարգ ներդործութեանը վրայ հիմնեալ, որն որ հայրենիքէ հեռացած մարդոց վրայ կը ըլլայ, հայրենեաց կարօտութենէն յառաջ եկած : Ըս ախտը, որ երբեմն մահ կը պատճառէ, կ'ըսուի թէ ստէպ կը պատահէր Օւիցերացւոց մէջ, երբոր իրենց հայրենիքէն կը մեկնէին : Գացած օտար աշխարհքնուն մէջ վրանին փայլող կապուտակ յատակ երկինքը, արհեստի դորձքերը, բարձրաստիճան քաղաքականութեան հրապոյրները չէին կրնար սրտերնուն մէջէն ջնջել իրենց երկրին առապար լեռներուն ու մրկալից երկինքին քաղցր պատկերը : Իրաւ որ բոլորտիքնին ընկերութիւն ունէին բաւական, սակայն ան ընկերութիւնը չէր, որուն իրենց սիրտը կը տենջար, կամ որուն որ չէին կրնար հասնիլ ներկայ վիճակնուն մէջ : Վլուխնին ծուռ ու երեսնին կախ կը պտրտէին ծածկեալ եւ անզսպելի տրտմութեան մը ազդեցութենէն. եւ շատ անգամ՝ ոչ միայն տրտմութիւնով կը մաշէին, այլ իրենց զատուելուն խորին վշտակրութենէն կը մեռնէին :

Անկատար կամ Խանդարեալ ներգործութիւնք

1733ին Ռուսի զօրք մը, Փրակզիմ զօրապետին հրամանատարութեանը յանձնեալ, Վաղզիս Ռոն գետին ափունքը խաղաց: Ան իրենց հայրենիքէն զատուած ան հեռու երկրին մէջ Ռուսիացիք աւ մտաւոր ատիին հանդիպեցան, եւ ատար սկըսեց ճարակել մէջերնին, այնքան որ օրը հինգ վեց հոգի կը հիւանդանային ու գործի չէին գար. անանկ գէպք մը, որկէ կը վախցուէր որ բոլոր զօրքը պիտի կոտորի: Աս հայրենիքի հիւանդութեան առջեւն առնուեցաւ զօրապետին ասանկ մէկ հրաման մը տալովը, ( հաւանականաբար զօրաւոր հակառակամարտըն ներգործութիւն մը մտքերնուն մէջ յարուցանելու գիտմամբ, ինչպէս եւ արգեամբք ալ անանկ եղաւ, ) թէ ով ոք ողնոյն հիւանդութիւնովը բռնուելու ըլլայնէ ողջ ողջ պիտի թաղուի:

§ 434. Պատուոյ բաղձանքին անկարգ ներգործութեանը վրայ :

Պատուոյ խաղձանքին ալ անկարգ ներգործութիւնը կ'ըլլայ: Աս սկզբունքը ոչ միայն բնածին է, այլ ընդհանրապէս՝ ուրիշ մէկ քանի աւակամիտութեանց հետ բաղդատելով՝ աւելի զօրութիւն ունի եւ առաւել օգտակար վախճաններու կը ծառայէ: Աս բաղձանքը ուրիշներուն բարի վարկումը փնտոել մըն է, որ ասիկայ՝ բարձրագոյն սկզբանց իշխողութիւնը չեղած եւ կամ խիստ տկար եղած ատենը՝ շատերուն վարմունքը վայելչութեան եւ բարեկարգութեան սահմաններուն մէջ կը պահէ: Բարի եւ կարեւոր սկզբունք մըն է աս՝ իր տեղը եւ պէտք եղած կանոնաւորութեանց տակն եղած ատենը. սակայն կարի դիրապատրաստ է անկանոն՝ անզուսպ եւ անկարգ ըլլալու ներգործութեամբ: Աս դիտողութիւնով շատ մարդոց բարքը կը բացատրուի: Հաւանականաբար Ալսիպիոսէսի բարուցը գլխաւոր պակսութիւնն ալ հոս էր, որ ասիկայ հռչակաւոր անձ մըն է Աթէնքի պատմութեանը մէջ: Ասոր տիրապետող կիրքը կ'երեւնայ որ իշխանասիրութիւնը չէր անչափ, այլ յաւեա Գովասանո-Նէ-տան տենչը: Ուրիշ խօսքով՝ իր մեծ բաղձանքը, ինչպէս որ ազէկ ըսուած է իրեն համար, « ձայն մը հանել եւ Աթենացւոց խօսակցութեան նիւթ պատրաստել էր »:

Աս հակամիտութեան անկարգ կիրառութեան բերմունքը մարդու միտքը խանգարել է, ինչպէս որ ուղիղ ըսած է Սիլաւարգ: Ան մարդն որ սոխարհիս հաւանութիւնը եւ շողքօրդութիւնները վայելելու պսպիսի չափազանց տենչի մը ներգործութեան տակն է, չունի հաստատուն կանոն մը իր ընե-

Ախորժակաց եւ Հակամիտութեանց :

լիքներուն, այլ իր մտքին ներգործութիւնը, իր կարծիքները, բաղձանքները, յոյսերը եւ արտաքին վարմունքը յարածամ հասարակութեան փոփոխական կարծիքներուն հետ մեկտեղ կը փոփոխի: Գրեթէ անհնարին բան է որ, մէկ մարդ մը այսպիսի անստուգութեան եւ փոփոխութեան դրութեան մը տակն ըլլալէն ետեւ, ալ իր մտացը հիմունքը հաստատուն մնան: — Եւ ոչ այսչափ միայն: Արբոր աս չափազանց բաղձանքին ազդեցութեանը տակն եղող անձինք չեն յաջողիր այն հաւանութիւնը եւ գովաբանութիւնը ձեռք ձգելու, որն որ իրենց կիրքին բնական սնունդն է, յայնժամ յոյժ ախոր, մարդատեսաց եւ ապերջանիկ կ'ըլլան: Իրական ճշմարտութեան նայելով՝ խելքերնին կորսնցուցած բազմաթիւ մարդոց խելազարութեան պատճառը, եթէ զգուշութեամբ դիտելու ըլլանք Ստաւոր Խանգարման վրայ գրող մատենագրաց ըսածները, հաւանականաբար աս անկարգ բաղձանքը պիտի գտնենք:

§ 435 . Իշխանասիրութեան անկարգ ներգործութիւնը :

Սնորդիկ մտքի խանգարման կը հանդիպին, եւ երբեմն իրապէս կը խնդնան, չէ թէ միայն պատուոյ բաղձանքին եւ ըստացման բաղձանքին անկարգ ներգործութենէն, այլ նաեւ, թերեւս առջիններուն չափ յաճախութեամբ, չափազանցեալ եւ սաստկացեալ Իշխանասիրութեան ազդեցութենէն ալ: Ըսանկները զրգռեալ սրտով եւ հաստատուն աչքով չորսդինին կը նային միշտ մէկ կերպ իշխանութիւն մը՝ պատիւ մը եւ տիրողութիւն մը ձեռք ձգելու, ինչուան որ աս իրենց բաղձանքը՝ այնպիսի շարունական կրկնութեամբ զօրացած՝ տիրապետող զգացում մը կ'ըլլայ սրտերնուն մէջ: Ըսոր անթիւ օրինակները կան, որոնց վրայ աս կերպով աս մտաւոր անկարգութիւնը ծագած եւ աս ստիծանին հասած է: Սակայն միշտ բանը հոս չ'մտար: Թէ որ աս չափազանցեալ կիրքին տէրը եղողներուն բաղձանքը յանկարծ մեծ գժբազդութեան մը հանդիպելու որ ըլլայնէ, անոր իրենց բոլոր մտացը վրայ ունեցած ազդեցութիւնը՝ ինչպէս որ հաւանական է անանկ ըլլալը՝ այնպէս ուժգին կրնայ ըլլալ, որ անոր բոլոր կարողութիւնները խանգարի, եւ միտքը աւերակաց շեղակոյտ մը դառնայ:

Յիմարանոցներու մէջ փակեալներու պատմութիւններէն շատ հաւանական կ'երեւնայ որ այս տեսակ գէպքեր քիչ չեն պատահիր: Ըս կերպով խելքերնին կորսնցուցածներուն միտքը թէպէտ խանգարած կ'ըլլայ, սակայն իրենց այդ խանգարմանը

Համակրական Նմանողութիւն:

պատճառ տիրապետող կիրքը կ'երեւնայ որ կը մնայ ներսիդէնին: Մէկը փոխարքայի պատիւ կը պահանջէ, մէկաւր թագաւորական. մէկը ինքզինքը ծերակուտի անգամ կ'ընէ, միւսը գահերէց. մէկը՝ Սէլլինկոյնի դուքսին կամ Պոնարարթէին անուամբ ահագին զօրաց հրամանատար կ'անուանէ ինքզինքը. միւս մը Բարձրելոյն մարգարէն կ'ըլլայ եւ վսեմական շարժմունքով ու ծանր ձայնով պատգամ կու տայ: Փինէլ կը ծանուցանէ թէ անգամ մը Վարրիզու յիմարանոցներուն մէկուն մէջ իրեք խելագար մարդիկ կան եղեր, որոնց ամէնն ալ Ղուի ԺՂը ինքզինքնին կը սեպեն եղեր: Ըսոնց իրեքը մէկտեղ որ մը ինչպէս կ'ըլլայ կը սկսին սաստիկ տաքութիւնով վիճաբանութիւն ընել ամէն մէկը թագաւորական իրաւունքը իրեն սեպհականելով. Սերատեսուչը ասոնց վէճն որ կը լսէնէ, կռիւնին վերջացընելու համար խելացի հնարք մը կը բանեցընէ. խելագարներուն մէկուն քովը կ'երթայ ու ծանր նայուածքով մը անսնկ կը հասկըցընէ՝ թէ զիմացիները յայտնի է որ խենդ են, Բնչ կը վիճի անոնց հետ. «աս քաջածանօթ բան է որ՝ կ'ըսէ վերատեսուչը, Ղուի ԺՂ դուն միայն ճանչցուելու ես»: Ըս յարգական զրուցուածքէն խենդին սիրօր յանգչելով՝ ամենակծու արհամարհանաց նայուածք մը կ'ընէ ընկերներուն, ու անմիջապէս կը քաշուի տեղը կ'երթայ:



## ԳԼՈՒԽ • Բ

## ՀԱՄԱԿՐԱԿԱՆ ՆՄԱՆՈՂՈՒԹԻՒՆ

§ 436 . Համակրական նմանողութեան վրայ :

ՆՄԱՆՈՂՈՒԹԻՒՆԸ, սկզբունքին բնածին հակամիտութիւն մը ըլլալուն եւ զօրութեանը վրայ ըստ կարի խօսեցանք իր տեղը: Ըսանկ մէկ հակամիտութիւն մը ըլլալուն ընդհանուր ճշմարտութեանը հետ մէկտեղ՝ արժան է հոս աս զիտողութիւնը ը-

## Համակրական Վճանորութիւն :

նել, թէ նմանողութեան մէկ ստորակարգեալ եւ մասնաւոր կերպի ալ կայ, որուն վրայ պէտք է առանձինն քննութիւն ընել՝ մասնաւորապէս իր գործնական արդիւնքներուն պատճառաւ : Ասրսածնիս ան հակամիտութիւնն է, զոր վայելչապէս կրնանք անուանել Համակրական Վճանորութիւն :

Ամէն կերպ համակրական նմանողութեան դէպքի մէջ հարկաւ մէկէն աւելի անձինք գտնուելու են . եւ ընդհանրապէս՝ երբ որ անձանց թիւը շատ ըլլայ նէ, նմանողութեան ուժգնութիւնն ալ սաստիկ կ'ըլլայ : Աս անձինքներէն մէկը կամ մէկ քանին մէկ ներքին շարժութիւնով մը՝ բաղձանքով մը՝ կամ կիրքով մը սաստիկ կը գրգռուին . եւ աս ներքին յուզմունքներն դէմքովնին՝ շարժուածքովնին եւ ուրիշ արտաքին նշաններով կ'արտայայտեն : Ար նայիս որ ան նոյն մտաւոր գրգռումը ուրիշներուն ալ կը հաղորդի . անոնք ալ նոյն կերպ շարժութիւններ՝ բաղձանքներ ու կիրքեր կ'ունենան : Աւ աս նոր զգացած շարժմունքներն համակրական անձերն ալ մի եւ նոյն արտաքին նշաններով կը յայտնեն : Սէկ խօսքով՝ աս կերպ նմանողութեան ազդեցութեանը տակն եղած ատեննիս՝ ուրիշներուն նման եւ կը զգանք եւ կը գործենք : Աւ աս բանն որ կը պատահի նէ, ոչ թէ մի նակ դիմացիննուս վրայ տեսածներնէս է եւ ուրիշ պատճառէ մը չէ՝ երեւցածին նայելով, այլ Բնական բերմունքով է՝ որ անանկ կ'ըլլայ . ըսել կ'ուզենք թէ տնկական եւ բնական սկզբունքի մը զօրութիւնովն է : Աս սկզբունքին վրայ մեր ունեցած տեսութիւնն աս է՝ որ, թէպէտեւ Վճանորութեան ընդհանուր ձեւոյն մէկ եղանակաւորութիւնն է կրնանք ըսել՝ անոր շատ նման ըլլալուն պատճառաւ, սակայն՝ աս ամենուն վրայ՝ այնքան որոշ եւ տեսակական որպիսութիւն մը ունի որ՝ կրնանք իրաւամբ մեր զգայական բնութեանը իրրեւ մէկ զատ մասը սեպել : Ասանկ սեպելով կրնայինք աս նիւթիս վրայ ասկէ առաջ ուրիշ տեղ մը խօսիլ . սակայն ասոր սովորական ներգործութիւնը ընդհանրապէս դիւրին հասկըցուելու բան մըն է, անոր համար ինչուան հոս ուշացուցինք, որպէս զի՝ մեր գլխաւոր նպատակին համեմատ՝ անոր անկարգ կամ խանգարեալ ներգործութեանը վրայ քիչ մը տեղեկութիւն տանք :

§ 437 . Ընտանի օրինակներ համակրական նմանողութեան :

Շատ կերպ կերպ օրինակներ կան, (որոնց շատը յաճախ կը պատահին եւ ամենուն ծանօթ են, ) որոնք կը ցուցնեն թէ

## Համակրական Նմանողութիւն :

Համակրական Նմանողութիւն կայ . ուրիշ խօսքով՝ թէ մարդուս զգացումներուն եւ անոնց արտաքին նշաններուն մէջ անանկ մէկ փոխադրական հաղորդութեան զօրութիւն մը կայ , որ անով ատոնք շատ անգամ մէկէն մէկալին արագութեամբ կը տարածին :

Ընդհանրապէս խօսելով կրնանք ըսել թէ՛ երբոր մէկ ուրիշի մը դէմքին վրայ մէկ յանկարծական փոփոխութիւն մը կը տեսնենք , յատկապէս անանկ փոփոխութիւն մը որ մէկ մասնաւոր կիրք մը կամ շարժութիւն մը արտայայտէ , մեր դէմքն ալ բնական հակում մը կ'ունենայ անոր նմանելու : Ամէն մարդ կը զգայ աս բանը , երբոր մէկու մը կը նայի որ կը խնդայ կամ խորին տխրութեամբ երեսը կախած է : Ասոր պէս բան մըն ալ այն ծնօտի մկանանց շարժմանը ատենը կը պատահի , որուն յօրանջել կ'ըսենք . որ աս գործողութիւնը , ամենուն գիտցած բանն է որ՝ շատ անգամ լոկ օրինակի փոխադրական զօրութենէն կ'ըլլայ :

Ի բացատրութիւն համակրական նմանողութեան աս ըսուած պատահածներուն վրայ սա ալ կը յաւելունք , որ երբոր խել մը տղաք մէկտեղ եկած կ'ըլլան , ու մէջերնուն մէկը յանկարծ լաց մը կը փոցունէ ու կը սկսի հեկեկալ նէ , բոլոր միւսներն ալ քիչ կամ շատ նոյն լալու վիճակին մէջ կը մտնեն : Աս նոյն բնական սկզբունքը բացատրող իրողութեանց մէկն ալ՝ թոյլ չուանի վրայ պտրտող լարախաղացի մը տեսարանին կեցած բազմութեան մը մէջ աղէկ կը տեսնուի : Տեսարանադէտները չէ թէ միայն այն անձկութիւնովը լեցուած կ'երեւան , որն որ կրնանք ենթադրել թէ լարախաղացը կ'ունենայ , այլ նաեւ կեցած տեղերին բնականապէս ինքզինքնին կը ճնշեն , եւ կը ծամածռին , ու մարմիննին կը հաւասարակչուն , ինտոր որ կը տեսնեն թէ լարախաղացը կ'ընէ չուանին վրայ : Աս ալ քաջածանօթ բան մըն է , որ երբոր կը տեսնենք որ մէկ հարուած մը իջնալու վրայ է մէկուն սրունքին կամ թեւին , բնականապէս կը խրտչենք , եւ թեթեւ կերպով մը մեր սրունքը կամ թեւը ետ կը քաշենք , մէկ կերպ մարգարէական կամ նախահայեաց նմանողութիւնով մը ան անձին ընելիքին , որուն վրայ որ կը տեսնենք որ հարուածը պիտի իջնայ :

§ 438 . Հատրէմի որբանոցին մէջ պատահած համակրական նմանողութեան օրինակ մը :

Ի սաղմաթիւ ճշգրիտ պատմուած դէպքեր կան որ մէկ մտքին միւսին հետ ունեցած համակրական կապակցութիւնը եւ մտքին ու

## Համակրական Նմանողութիւն :

զըլային կամ մկանական կազմուածքին մէջ տեղը եղած Համակրութիւնը կը ցուցնեն : Հաէրլէմ քաղաքին որբանոցին մէջ անգամ մը բան մը պատահեր է , որ ասոր շատ աղէկ բացատրութիւն մըն է . ասոր պէս Հետաքրքրական եւ որոշ օրինակ քիչ կը գտնուի աս բանիս վրայ : “Հաէրլէմի որբանոցին մէջ” , կ'ըսէ պատմութիւնը , “աղջկան մէկը յանկարծական վախնալէ մը ցնցողական ախտի մը Հանդիպեցաւ , որ կանոնաւոր ատենով կու գար վրան : Վրով կայնողներուն մէկը իրեն օգնելու աշխատելու որ եղաւ նէ , ինք ալ նոյն ախտովը բռնուեցաւ , որ աս ալ միւսինին պէս ատեն ատեն նոյն ցնցողութիւնով կը բռնուէր . Հետեւեալ օրը ուրիշ մէկն ալ նոյն Հիւանդութեան Հանդիպեցաւ , ետեւէն մէկ մըն ալ Պանոր ետեւէն չորրորդ մըն ալ . Համառօտիւ առհասարակ գրեթէ բոլոր տղաքը , մանչ աղջիկ , աս ցնցողական ախտը վաստրկեցան : Գնցողութիւնը մէկուն վրայ գալուն պէս , միւսները անիկայ տեսնելով՝ գրեթէ բոլորը մէկէն կը սկսէին նոյն նեղութիւնովը տառապիլ : Բոնց աս ցաւալի վիճակին մէջ բժիշկները լուսնոտութեան դէմ եղող դեղերէն դեղ չմտց որ չընեն , ամէնն ալ անօգուտ եղան : Յետոյ գացին Պօէրհէյվ բժիշկին , որ խղճալով ողորմելի տղոցը վիճակին ելաւ եկաւ Հաէրլէմ . եւ բանին ինչ ըլլալը հարցաւորած ընելու ատենը մէկը բռնուեցաւ ցնցողութիւնով , եւ անմիջապէս խել մը ուրիշներ ալ սկսան անոր Հետ միասին վերնոտութեան ցնցողական Հիւանդութեանը պէս չարչորկուելու վիճակի մը մէջ մտնել : Բո միջոցին շուտով աս բանը ինկաւ Հնարագէտ բժիշկին միտքը , որ՝ որովհետեւ ամենալաւ դեղերը իմաստութեամբ մատակարարեր են բժիշկները , ու ախտին մէկէն միւսին անցնիլն ալ երեւակայութենէ ( երեւակայութեան Համակրութենէն ) կախեալ կերեւնայ կոր . ուստի թէ որ մտքերնուն վրայ եղած աս տգաւորութիւնը արգիլելու ըլլամ նէ , հաւանական է որ Հիւանդութիւնին բժշկուի . եւ աս խորհուրդը յաջողութեամբ ՚ի գործ դրուեցաւ : Իրեն ընելըը ՚ի գործ դնելու մարդոցը առաջուրնէ իմացուցած ըլլալով , բոլոր տղայոց առջեւը հրաման ըրած որ խել մը վառարաններ դրուի սենեակին այլ եւ այլ կողմերը , մէջը լեցուն վառած ածուխ . եւ այնինչ ձեւով ծուած երկաթներ ըլլայ անոնց մէջ . յետոյ անսովոր վստմութեամբ մը եւ ծանրութիւնով ասանկ ըսաւ . բոլոր դեղերը գլխովին անօգուտ են ձեզի , եւ իմ գիտցած մէջ հատիկ դեղս աս է , որ մէջերնուդ ով որ նախ եւ առաջ աս ցնցողութիւնով բռնուելու ըլլայ նէ , անոր թեւը ինչուան ոսկորը պիտ'որ պրի հրաշէկ երկաթով : Տղաքը աս սարսափելի հրամանն որ ընեցին նէ , ալ սկսան նոյն ցնցողութեան վերադառնալը ի-

## Համակրական նմանողութիւն :

մացած ատեննին՝ բոլոր զօրութիւնովն ինքզինքնին բռնել , այրելուն սոսկալի գաղափարը մտքերնին բերելով . եւ այսպէս աւելի ուժգին մտաւոր տպաւորութեան մը ազդեցութիւնովը կարողացան այս ախտաժէտ հակամիտութեան դէմ դնելու :

## § 439 . Կոյն տեսակ նմանողութեան վրայ ուրիշ օրինակներ :

Վժուար բան չէ յիշեալ օրինակներուն նման ուրիշ օրինակներ ալ յառաջ բերելը : Վանի մը տարի յառաջ Լմերիկոյ Մասաչուսէդս Կահանգը Վէլմֆրտի մէջ մարդ մը կար՝ վեց զաւակով ընտանիքի մը տէր : Ըսոր զաւկրներուն մէկը Կաբաւ Սրբոյն Վիտոսի \* ըսուած ախտին հանդիպեցաւ : Միւսներն ալ , տղոց բնական եղող անխորհուրդ կայտառութիւնովը սկսան անոր անսովոր շարժմունքներուն նմանութիւնը ընելով զքօնուլ , մինչեւ որ ատենէ մը ետեւ իրենք ալ անդիմադրելի կերպով նոյն ախտին ենթակայ եղան : Իրերուն աս վիճակին մէջ , որն որ համակրական նմանողութեան սկզբունքներէն ՚ի զատ՝ ուրիշ կերպով մը մեկնել հնար չերեւնար , բոլոր տունը՝ ինտոր որ բնականապէս կը հասկըցուի , մեծ տագնապի մէջ ինկաւ : Հայրերնին , խելացի եւ ուշիմ՝ մարդ մը , օր մը կոճղ մը ու կացին մը առաւ տուն բերաւ , եւ ահեղ սպառնալիք ըրաւ որ ՚ի սկզբան այն ախտին հանդիպող տղէն ՚ի զատ՝ ո՛վ որ նախ եւ առաջ անկամաւոր մարմնաւոր շարժմունք մը ընելու ըլլայ նէ , անոր գլուխը պիտի փրցունէ : Ըս ճամբով , որ ասիկայ ալ վերը Պօէրհէյվին վրայ պատմած փորձերնուս նման դիտողութիւններով եղած բան մըն է , նոր կերպ զգացումներ տղոցը ներսիդին ծագեցաւ , եւ այն այլանդակ ախտէն ազատեցան :

Կը յաւելունք եւս՝ թէ աս ախտը ոչ միայն նոյն ընտանիքին եւ նոյն տանը մէջ եղողներու վրայ , այլ եւ երբեմն ամբողջ գիւղաքաղաքներու եւ ընդարձակ երկիրներու մէջ տարածուած է , մէկէն մէկալին փոխադրելով ( լոկ համակրութեան նմանողութիւնով ըստ մեր կարծեաց ) : Ըսանկ եղաւ Ենկլէսի կղզւոյն մէկ մասին մէջ , 1796ին . եւ աւելի մօտ ատեններս Լմերիկայ Վէնէսի մէկ քանի կողմերը ,

\* Ըսիկայ ճշային ցնցողական ախտ մըն է , որ Լմերիկայի մէջ կ'ըլլայ երբեմն տղոց , որ անով բռնուողը խաղալու պէս շարժմունքներ կ'ընէ :



ԵՆԿԵՐԳ ՆԵՐԳՈՐԾՈՒԹՅԱՆ ԿՐԻՑ

§ 440 • Նախազգացողութիւնը ըստած ժողովուրդի հանգամանաց վրայ :

Քրիստոնեացիները կարգը կը բերէ որ հիմայ աս ծանօթութիւնը ընելու ձեռք զարնենք, թէ կրից մէջ ալ անկարգ ներգործութիւններ կ'ըլլան, ինչպէս որ ստորին կարգի զգացողութեանց վրայ տեսանք. եւ ասիկայ երկու կարգէն եղող կրից համար ալ ճշմարիտ է, թէ բարեսիրաց եւ թէ անոր հակադարձը եղողներուն : Սակայն դիտաւորութիւննիս շատ ճշտութեամբ աս գլխուն մէջ կրից վրայ կապուիլ մնալ չէ, անոնք որ տիրապէս կիրք կ'ըսուին նէ. այլ կ'ուզենք քանի մը անանկ պատահական կամ ասոնց հետ կապակցութիւն ունեցող նիւթեր ալ մէջ խօթել, որոնք ոչ զանց ըլլուելու բաներ համարուելու են, եւ ոչ ալ միանգամայն զատ տեղ մը դրուելու չափ մեծակշիռ : Ըսկէ ի զատ կրնանք նաեւ ակնկալել, թէ ասոնք անուղղակի լոյս մը կրնան ձգել աս գլխուն գլխաւոր նիւթին վրայ : Այսինքն Նախազգացողութեանց նիւթէն :

Ըտեն ատեն շատ անանկ անձինք եղեր են, որ զալու բանի մը վրայ շատ զորաւոր եւ յստակ ազդեցութիւն ունեցեր են ներսիզինին. այնքան որ՝ ամենեւին տարակոյս մը չէ մնացեր մտքերնուն մէջ ան պատահելիքին բնութեան սովորական կարգէն դուրս հաւաստի բան մը ըլլալուն վրայ : Օրինակի համար՝ Իսահակ Լամբրոս անուն Լնգղիացի մատենագրին համար կը պատմուի՝ թէ զարմանալի ներքին տպաւորութիւն մը ունեցեր է իր մտքին մէջ թէ մեռնիլը շատ մօտ է եւ այնինչ օրը պիտի պատահի : Ուստի գացեր բոլոր բարեկամներուն մնաք բարով է ըսեր, եւ իր նախազգացողութեանը ցուցուցած օրն որ եկեր է նէ, գացեր իր սենեակը մտեր մեռեր է : Սողարդ Գերմանացին՝ որ երեւելի հեղինակ էր երաժշտութեան, զորաւոր նախազգացողութիւն մը ունեցեր է՝ թէ իր շարադրելու ան անգստեան եզանակը, որ իր անունովը կ'ըսուի Սողարդ, իր վերջին գործը պիտի ըլլայ : Ընհնարին եղեր է աս տպաւորութիւնը իր մտքէն հանելը : Ինք քացայայտ խօսքով ըսեր է թէ, «Սողդ է որ աս հանգստեան

Ընկարգ ներգործութիւն կրից :

Երգը ինձի համար կը գրեմ կոր . անիկայ իմ թաղման հանդէսիս պիտի կարգացուի” : Մասձին պէս ալ եղեր է ետքը : Ֆէնտրը կրասք անուն մէկու մը համար, որ Մարտիոսի դուքսին զօրացը մէջ պաշտօնատար մըն էր : Կը պատմուի թէ զօրաւոր նախազգացողութիւն մը ունեցեր է որ այնինչ օրը պիտի սպաննուի : Ես իր զգացողութիւնը ուրիշներուն ալ իմացուցեր , ու գրաւոր յիշատակարան մ’ալ շիներ է նոյն բանին վրայ : Եւ յիրաւի , նախազուշակածին պէս եղեր է ետքէն : Հենրիկոս Վ Վաղղիոյ թագաւորը՝ Ռամայլաք զինքը սպաննելէն քանի մը շաբաթ առաջ՝ զօրաւոր նախազգացողութիւն մը ունեցեր է , եւ ասիկայ Սուլթին ու իր ատենի մարդոցմէ ուրիշ մէկ քանիին ալ իմացուցեր է , թէ շատ չանցած՝ մէկ մեծ աղէտ մը պիտի գայ զԵսուն :

Վախազգացողութեանց ոմանք անտարակոյս բնական սկզբունքներով կը մեկնուին : Արբեմն ալ մէկ պատահական պարագայ մը , լոկ մէկ խօսք մը , երազական այլանդակ խորհուրդ մը , մէկ շնչին դէպք մը՝ որ ան օրուան եւ ան տեղի հասարակութեանը մէջ պատահամբ չարագուշակ նշան մը սեպուած է , հերիք կ’ըլլայ այսպիսի զգացողութիւններ պատճառելու , որոնք թէ որ ետքէն իրաւունէ պատահելու ըլլան նէ , բոլորովին դիպուած է : Եւ որչափ որ մենք կարող ենք տեսնել նէ , հարկ մը չկայ ասանկ մէկ կարծիք մը ընելու՝ թէ աս կերպ դէպքերու մէջ մէկ հրաշալի կամ գերբնական բան մը ըլլալու է : Եւ թէ որ ասանկ ենթադրութիւն մը պիտ’որ չ’ընենք նէ , դժուար կ’ըլլայ ուրիշ կերպով մը մեկնել այն երբեմն երբեմն տեսնուած ամենահաստատ մտաւոր ճանաչմունքը՝ որն որ ջնջելու համար ո՛չ ապացոյց խեր կ’ընէ եւ ո՛չ համոզանք , բայց եթէ աս սկզբան վրայ թէ զգացողութեանց ներգործութեանը մէջ մէկ անկարգութիւն մը պատահած ըլլալու է : Իսկ աս անկարգութեան տեսակարար բնութեանը , զանիկայ ուրիշ անկարգ մտաւոր ներգործութիւններէ որոշող հանգամանքին կամ պարագային վրայ դժուար է խօսիլ :

§ 441 . Յանկարծական եւ ուժղին մտաւոր գրգմունքներու վրայ :

Մէկ ուրիշ կերպ մտքի անկարգ վիճակ մը կայ , որ տարբեր է աս հիմակուան խօսածնէս , թէպէտ քանի մը մասամբ շատ մերձաւորութիւն ունի անոր : Ոմանք՝ որոնց ամէն սովորական բանի մէջ աւտոջ մտքի տէր ըլլալը ամենեւին անտարակուսելի է , ատեն ատեն մէկ զօրաւոր հակամիտութիւն մը կը զգան ներսիդինին

Մեկարդ ներգործութիւն կրեց :

անանկ բաներ ընելու , որոնք եթէ ընելու ըլլան նէ գէթ ըստ չափու խելագար պիտի սեպուին ուրիշներուն առջեւ : Մացատուութեան համար՝ կատարելապէս առողջ մտքի տէր մարդուն մէկը , խելագարութեան վրայ սովորաբար ունեցած համարումներնուս համեմատ խօսելով , անգամ մը սասնկ բան մը կ'իմանար ներսիդին՝ թէ այնինչ մասնաւոր՝ կամուրջէն անցած ատենը մէկ թեթեւ յօժարութիւն մը կը զգայ ինքզինքը կամուրջն 'ի վար ջուրը նետելու , նոյն ատենը քիչ մըն ալ աս վախը ունենալով՝ որ չ'ըլլայ թէ այն իր յօժարութենէն շտապով մը ատ բանը ընէ : Մասնկ խանգարեալ մտաւոր գրգմուռներ հաւանակաբար սովորաբար կարծուածէն աւելի յաճախ կը պատահին , եւ մէկ մէկէ շատ զանազան աստիճան ուժգնութեամբ . երբեմն այնքան թեթեւ ըլլալով որ հազիւ հազ մարդուն մտադրութիւնը կը շարժեն , եւ երբեմն ալ վտանգաւոր խելագարութեան երեւելի եւ սոսկալի կնիքը վրանին կրելով :

Գերմանացի կնիկանը մէկը անգամ մը մէկ շէնք մը տեսեր է բռնկած , ու անկէ ետեւ ատեն ատեն մէկ զօրաւոր դրդում մը կ'իմանայ եղեր ներսիդին շէնք բռնկցընելու : Մս ներքին դրգմանց ազդեցութիւնովը տասներկու անգամ կրակ ձգեր է իր բնակած տեղին մօտերը : Տասնեւիրեքերորդին բռնուեր՝ դատի տարուեր՝ դատապարտուեր ու սպաննուեր է : Այլորմէն կինը աս իր քրածին ամենեւին պատճառ մը չէ կրցեր տալ , եւ ուրիշ շարժառիթ մը չէ կրցեր ցուցընել այնչափ տուն բռնկցընելուն , բայց միայն աս իր ներքին դրգմուռքը , որոնցմով կը ստիպուի եղեր ան բանը ընելու : Արչափ որ մեծ վախ ու դող կը կրէ եղեր , եւ ամէն անգամ՝ աս յանցանքը գործելէն ետեւ դառն կը զղջայ եղեր ալ նէ , կրկին կ'երթայ առջի քրածը կ'ընէ եղեր : Ի՞նչ որ աս բանը ուղիղ փիլիսոփայութեան ձեռքն ըլլար նէ , ան խեղճ կինը յաւէտ յիմարանոցը կապուելու արժան չէր դատուեր , քան թէ դահիճին սուրին զո՛՛՛՛ ըլլալու :

Մս պատմութիւնը կող մատենագրէն է , որ ասոնց պէս բազմաթիւ մեծարժէք իրողութեանց պատմութիւններ հաւաքած է մարդուս մտաւոր գործողութիւններուն վրայ , որուն յիշատակածներէն է աս հետեւեալն ալ , Գերմանացի զինուորի մը վրայով , որ ցնցողական ախտ մը ունի եղեր , որ ամէն ամիս սաստիկ կը բռնէ եղեր : «Մտիկայ կը զգար , կ'ըսէ մատենագիրը , ախտին մօտենալը . եւ որովհետեւ քանի որ ցնցողութիւնը աստիճան աստիճան մօտենար նէ , ինք ալ ներսիդին մէկ ուժգին հակամիտութիւն մը կ'իմանար մարդ սպաննելու , անոր համար թանխանձանօք կը պաղատէր որ զինքը շղթայով կապեն : Վրանի մը որ անանկ

## Մեկարդ ներգործութիւն կրից :

մնալէն ետեւ՝ ցնցողութիւնը եւ ան մահացու հակամիտութիւնը կը նուազէր , եւ իր առանց վտանգի արձրկուելուն ժամանակը ինք որոշելով , ազատ թող կը տրուէր : Էյնայի մէջ մէկը տեսանք , որ ատեն ատեն անդիմադրելի հակամիտութիւն մը կը զգար ուրիշներուն փնաս տալու : Ինք գիտէր աս իր եղկելի հակամիտութիւնը , եւ ուստի շղթայակապ կը մնար ինչուան որ իմանար որ ալ վախ չ'կայ եթէ զինքը արձակեն նէ : Սելամադնոտ խառնուածքի տէր մարդուն մէկը յանցաւորի մը գլխատուիլը տեսեր է : Ըստ տեսարանէն անանկ սաստիկ շարժութիւն մըն է պատճառեր իր ներսիդին , որ իսկոյն անդիմադրելի բաղձանք մըն է եկեր վրան մարդ սպաննելու , միանգամայն նոյն ատենը յետին աստիճան սոսկում մըն ալ զգալով ան մեղքը գործելուն վրայ : Ըստ իր ողբայի վիճակը նկարագրեր է իր բարեկամներուն , դառնարցունք լալով , եւ վերջին աստիճան տարակուսանաց մէջ ինկած : Իր գլուխը կը ծեծէ , ձեռունները կը ճմլէ , ինքզինքը կը նախատէ եւ իր բարեկամներուն կ'աղաչէ եղեր որ ինքզինքնին ազատեն , եւ շնորհակալ կ'ըլլայ եղեր անոնց՝ իրեն դիմադրութիւն ընելուն համար :

## § 442 • Խանգարմունք կրից :

Տրուած օրինակներէն կը տեսնուի որ մարդոց ոմանց ներսիդին պատահող յանկարծական եւ ուժգին զրդմունքը , որ անկարգ մտաւոր հանգամանքներ են , շատ մէկմէկէ տարբեր այլ եւ այլ բաներու վրայ եւ շատ զանազան աստիճաններով կ'ըլլան : Անբըն յիշուած օրինակները այնքան ծանր տեսակէն էին , որ անոնք (եւ թերեւ անոնց չափ սաստիկ չեղող ուրիշ մէկ քանի օրինակներ ալ ) տիրապէս կրնանք իսկական խելագարութեան օրինակներ սեպել : Եւ իբրեւ խելագարութեան օրինակսեպուելով՝ ուղղութեամբ կրնանք ըսել՝ թէ կրից խելագարութեան օրինակներ են ասոնք :

Արից խելագարութիւնը մէկ մասնաւոր մտաւոր հանգամանք մըն է , մինչեւ անգամ ուրիշ կերպ խելագարութեանց հետ բաղդատմամբ նկատելով : Ըստ կերպ խելագարութեանց մէջ մարդուն իմացողութեան կարողութիւնները կատարեալ եւ ճիշդ ներգործողութեան մէջ կ'ըլլան շատ անգամ : Միայն շատ մեծ չափով իր սովորական կարողութիւնը կրնայ ունենալ՝ գաղափարներ իրարու հետ բաղդատելու եւ հետեւութիւններ հանելու գործողութեանց մէջ : Խելագարութեան կայանը չէ թէ մեր

Ենկարգ ներգործութիւն կրից :

ընութեանը՝ զգայութիւններէն որոշելով՝ սովորաբար իմացական կարողութիւնք ըսուած մասին մէջ փնտոնելու ենք, այլ միայն կրից մէջ : Եւ մտաւոր ախտին տիրացողը չ'կանգնիր տրամաբանութիւն ընելու՝ մտածելու եւ բաղդատելու . այլ մէկ կոյր եւ շատ անգամ անդիմադրելի գրգմամբ մը յառաջ կը մղուի իր դիտաւորութիւնները կատարելու :

Փինէլ՝ արհեստաւոր մը կը յիշէ , Պիսէզոսի յիմարանոցին մէջ , սա ախտին տիրացած : Խելագարութիւնը , ինչպէս որ շատ անգամ անանկ կ'ըլլայ , ընդհատ է եղեր , առեւը հեզ մը կու գայ եղեր վրան : Ինք առաջուրնէ կ'իմանայ եղեր այն կրից յուզմունքին մօտենալը , եւ մինչեւ անգամ կը խրատէ եղեր մօտը եղողները որ քովէն փախան : Սակայն շիտակ դատում ընելու կարողութիւնները անվողով են եղեր իր վրայ , չէ թէ միայն ուրիշ առեւներ , այլ մինչեւ անգամ ամենակատաղի եւ այլանդակ գործքեր ըրած ժամանակն ալ : Ինքը յստակ կը տեսնէ եղեր ան ըրածներուն անպատշաճութիւնը , սակայն չ'կրնար եղեր ինքզինքը զսպել . եւ կրից բուն կատաղութիւնը գաղթելէն ետեւ՝ շատ անգամ դառն վիշտով կը լինայ եղեր սիրտը :

§ 443 . Սեւամաղձութիւն ըսուած մտաւոր ախտին վրայ :

Սեւամաղձութիւն ըսուած քաջածանօթ ախտին կայանը պէտք է զգացողութեանց անկարգ ներգործութեանը մէջ փնտոնել : Եւ ախտը՝ իրականին նայելով՝ ուրիշ բան չէ , բայց միայն խորին ճնշումն սրտի՝ տխրութիւն կամ թախծութիւն : Երական ճըմարտութիւնը սա է . եւ մենք երբէք սեւամաղձութիւն անունը անանկ մտքի վիճակի մը չենք տար , որուն մէջ սա տխրութիւնը կամ թախծութիւնը չ'կայ . բայց սակայն սա ալ ճշմարիտ է որ երբեմն սա ախտին առիթը կամ հիմնական պատճառը մտքին մէկ ուրիշ մասին անկարգութիւնը կ'ըլլայ : Սէկ երկու համառօտ բացատրութիւնով կրնանք մտքերնիս հասկըցնել :

Սեւամաղձութեան թեթեւագոյն տեսակներուն մէկը կրնանք բնէ թէ թերեւս Երեւակայութեան անկարգ ներգործութիւնէն կը պատճառի : Տառապելոյն միտքը մէկ անհաճոյ եւ տխրական բանի մը վրայ կը հաստատուի . հաւանականաբար անանկ բանի մը վրայ , որ մէկ մասնաւոր վերաբերութիւն մը ունի իր ներկայ կամ ապագայ գիտումներուն : Եւ բանը կ'առնէ ու կ'անցնի շարունակ իր խորհրդոցը մէջ պտըտցընելով , իր երեւակայութիւնը կը սաւառնի անոր վրայ , եւ աւելի խորունկ ստուեր մը

Ընկարգ ներգործութիւն կրեց :

ձգելով՝ այն արդէն խաւար երեւցած բանը եւս առաւել կը մթնցընէ : Ըսանկով մտքին մէջ անկարգութիւն մը կը պատճառուի . անիկայ իր սովորական եւ օրինաւոր ներգործութեան եղանակէն կը խոտորի . եւ կ'երևէ ան վիճակէն , որուն մէջ որ առաջ էր , եւ որուն մէջ որ ըլլալու սահմանած էր բնութիւնը :

Մէկ ուրիշ կերպ եւ աւելի նշանաւոր սեւամաղձութիւն մը կայ , որուն ծագումը հաւատքի կարողութեան խանգարմանը հետ կապակցութիւն ունի : Ըմէն կերպ սեւամաղձութեան պէս՝ ասոր ալ ենթակայ եղողը շատ մտաւոր տառապանք կը կրէ : Խիստ թախծազին եւ տառապեցուցիչ ըմբռնումներ կը ծագին մտքին մէջ . չէ թէ ընդհանրապէս չափազանցեալ եւ թիւր գաղափարներէ պատճառելով , այլ հաստատուն եւ անխորշելի կեղծ հաւատքէ մը :— Մէկը կ'երեւակայէ թէ՛ հոգի չունի , մէկ ուրիշը թէ՛ աստիճան աստիճան , սակայն արագութեամբ կը հասնի կոր . միւս մը թէ՛ կենդանիի մը փոխուեր է , կամ բոյսի մը դարձեր է : Մօրէփա Կոմսը իր Յիշատակարաններուն մէջ կը ծանուցանէ , թէ աս ետքի ըսած գաղափարնիս Պուրպոնեան իշխաններուն մէկուն մտքին մէջ մտեր է ատենօք : Ըստիւրեան խորունկ տպաւորեր է աս ծանօթութիւնը իր ներսիդին , որ շատ անգամ պարտեզը կ'երթայ կը կենայ եղեր որ տունկերուն հետ մէկտեղ ջրուի , ինքզինքը բոյսի կարգ դնելով : Ոմանք ինքզինքնին ապակիի դարձած երեւակայած են . ոմանք ալ եւս առաւել այլանդակ հաւատքով մը ինքզինքնին մեռած կարծած են :— Ըս ըսածներնիս՝ հատուածիս սկիզբը յիշուած տեղեկութեանը հաստատութիւն են , թէ՛ թէպէտեւ սեւամաղձութիւնը՝ ինքնին նկատելով՝ իր կայանը զգացողութեանց մէջ է , սակայն ծագումը երբեմն մտքին մէկ ուրիշ մասին անկարգ ներգործութենէն կըրնայ ըլլալ :

Երբեմն ալ կը պատահի որ աս ախտը որ եւ իցէ զգայական ներգործութեան մը խանգարումէն պատճառուի : Սեւամաղձութիւնը չէ թէ միայն՝ իրրեւ իր յատուկ կայանը՝ զգացողութեանց մէջ զետեղեալ է , այլ երբեմն ծագումն ալ անկէ կ'ըլլայ : Ընդդիացիի մը համար , որ հեղահամբոյր եւ աղնուաբարոյ մարդ մըն է եղեր , կը պատմուի թէ անգամ մը իր եղբայրը ատրճանակով զինքը սպաննելու է եղեր . եւ սակայն անիկայ ճարպիկութիւնով կրցեր է ատրճանակը եղբօրը ձեռքէն խլել , ու քններ տեսեր է որ կրկին գնտակով լեցուած է : Ըս եղելութենէն անանկ սոսկում մըն է եկեր վրան . եւ անանկ զգուանքով լեցուեր է մարդոց բնաւորութեանը վրայ , որ միայնակ տեղ մը քաշուեր առանցնացեր է՝ ալ այնուհետեւ ամենեւին ընկերութեան երես

Մեկարդ ներգործութիւն կրկն :

չտեսնելով : Սինչև անգամ իր զաւակները զինքը գալ տեսնելու չ'ընդունար եղեր երբէք : Ստուգիւ գիւրին է տեսնել որ այսպիսի պարագաներու մէջ՝ մէկ մարդու մը զգացողութիւնները կրնան այնպիսի ուժգնութեամբ մը սարսիլ , որ մշտնջենաւոր տոգոհութեան եւ թախծութեան մէջ իյնայ : Ուրիշ խօսքով՝ մէկ մարդ մը այս եղանակաւ եւ աս կերպ պատճառներով հաստատուն սեւամահձոտ մը կամ ախոնդանոտ մը կրնայ ըլլալ :

§ 444 . Սեւամահձութեան ընդհատութիւններուն եւ դարմաններուն վրայ :

Սեւամահձութեան մտաւոր ախտին մէջ միշտ թախծութեան եւ տխրութեան զգացում մը ըլլալ կը հասկըցուի . սակայն աս սիրտը լքանելուն զգացումը ամէն ախոնդանոտի վրայ մէկ աստիճան չէ : Ըմէն սեւամահձութեան մէջ աս տխրութիւնը՝ աս սրտի ճմլիլը քիչ թշուառութիւն չ'պատճառեր . սակայն ոմանց վրայ խիստ սաստիկ կ'ըլլայ . անանկ որ ամենազառն մարմնաւոր ցաւերը անոր քովը ոչինչ կը համարուին : Եւ սակայն արժան է աս ալ ծանուցանել որ՝ ոմանց վրայ աս ախտը երբեմնական ընդհատութիւններ կ'ունենայ : Գիպուածական մէկ խօսք մը կը խօսուի , մէկ յանկարծական գաղափարներու կապակցութիւն մը կը պատահի , մէկ աղուոր օրմը կ'ըլլայ , եւ կամ այլ եւ այլ ուրիշ պատճառներ կը հանդիպին , ու ատոնցմով ախոնդանոտին մտքէն տխրութիւնը կը փարատի : Ըսանկ ատեններ քիչ անգամ չպատահիր՝ որ ախտաւորին սիրտը խիստ շատ կը բացուի ու կայտառութիւնով չափազանց շատ բաներ կ'ընէ , ան իր ունեցած առջի տխրութեանը աստիճանին համեմատ : Արովհետեւ աս ախտը՝ մինչեւ անգամ՝ երբեմնական ընդհատութիւններով չափաւորեալ եղած ատենն ալ՝ շատ չար արդիւնքներ ունի , վասն որոյ արժան է հոս մէկ քանի դարմաններու վրայ ակնարկութեամբ մը ծանօթութիւն տալ , որոնք երբեմն գործածուած են բժշկութեան համար :  
 ա . Ըս ախտին դարման ընելու առաջին քայլը՝ մարմինին գործողութիւններուն՝ մասնաւորաբար զկերուն ներգործութեանը առողջութիւն ու կենդանութիւն տալն է : Մարդուս զկերուն է յիշել որ՝ զգայութեանց մեծ միջոցն են , որովհետեւ առնք են՝ այլ եւ այլ ձեւերով՝ մարդուս զգայարանքները կազմողը : Գանք որ զգայարանքներն ալ հաւատքի եւ հմտութեան երեւելի աղբիւրներ են : Հետեւաբար՝ երբօր զլային կազմութիւնը (զգայարանքները՝ ի հարկէ մէջ առնելով ,) անկարգ վիճակի մէջ որ ըլլայ նէ , զարմանալի բան չէ անատենը մէկ մարդու մը ծուռ

Մեկարգ ներգործութիւն կրից՝

զգայութիւններ եւ կեղծ արտաքին խնացումներ ունենալը, եւ անանկով թիւր հաւատքի տէր ըլլալը: Արբոր մէկ մարդու մը ջիղերը անանկ վիճակի մը մէջ կ'ըլլան որ ճիշդ անանկ զգացում կ'ունենայ՝ ինչպէս որ կը կարծէ թէ ապակիէ շինուած մարդ մը պիտի ունենայ, մեծ զարմանք մը չէ՝ մարդուս մտքին կազմութիւնը նկատելով՝ ան անձին ինքզինքը իրաւցունէ ապակիէ բաղադրեալ կարծելը: Այս սոսկ հետաջտած ախտերնուս մէկ կերպը այսպիսի թիւր եւ սակայն հաստատուն հաւատքներու վրայ հիմնեալ է էապէս: Ասոր համար ախտնդանոտին մարմնաւոր կազմութեանը ուղիղ ներգործելու յատկութիւնը տեղը բերուելու որ ըլլայ նէ, անոր ունեցած թիւր հաւատքն ալ եթէ զգայարանաց վրայ հիմնեալ է նէ՝ կը վերնայ մտքէն. եւ ատիկայ վերնայով՝ ան իր ներսիդին տիրապետող խորին թախծութիւնն ալ կը փարատի կ'երթայ վրայէն: — (բ.) Արովհետեւ ախտնդանոտին բոլոր վաղեմի գուգորդութիւնները իր միտքը եկած են քիչ կամ շատ, եւ իր ունեցած ախտն գէշ կերպարանք մը առած են. վասն որոյ ջանք ընելու է զանոնք մտքէն արտաքսել ու հեռացընելու՝ իր մօտը եղող առարկաներուն մէջ փոփոխութիւններ մտցունելով, զինքը նոր նոր ընկերութեանց մէջ խօթելով, կամ ճանապարհորդութիւնով: Այսպիսի միջոցներով հաւանական է որ իր խորհուրդները շեղին՝ ոչ միայն ան մասնաւոր բանէն՝ որուն որ խելքը միտքը տուած է միշտ, այլ մէկ նոր շարժում մը հաղորդուի մտքին, որ ատ շարժման բերմունքը այն չարագուշակ հաստատուն անշարժութիւնը եւ անգործութիւնը միջահատել եւ մտքէն գուրս ընել է, որն որ առաջուրնէ զանկայ պաշարած ու կործանած ձգած է: — (գ.) Արբոր սեւամաղձութիւնը բարոյականի վերաբերեալ նկատողութեան վրայ հիմնեալ կ'երեւնայ, անատենը ախտը երբեմն կը բժշկուի կամ գոնէ կը թեթեանայ՝ անոնց հակառակ ներգործութիւն ընող բարոյական շարժառիթներ առջևը գնելով: (Դ) Ինչպիսի համար՝ թէ որ մտքին տիրութիւնը մէկ կարծեցեալ վնասէ մը ծագած է նէ, աղէկ կ'ըլլայ որ բոլոր այնպիսի հաստատուն պատճառի վրայ հիմնեալ դիտողութիւնները առջևը դրուի, որոնցմով հնար է որ ցաւագարին իրեն եղած վնասին վրայ ունեցած համարումը նուազի: Իմէ որ եղած վնասը շատ մեծ ու աչքի երեւցող բան է նէ, ներողամտութեան բնութեանը եւ պարտականութեանը վրայ դիտողութիւններ հաղորդելը անօգուտ չըլլար: — (Ե) Երբ բժշկութեան համար ինչ ընթացք որ բռնուելու ըլլայ նէ, աղէկ կ'ըլլայ որ ցաւագարին մտադրութիւնը կարելի եղածին չափ քիչ շարժուի իր ունեցած ախտին՝ անոր վրայով ուղղակի խօսք մը ընե-



## Անկարգ ներգործութիւն կրեց :

լով : Տրդր Ղօնսըն , որ իր ցաւային փորձառութիւնովը կարող էր ուղիղ դատում ընելու աս բանիս վրայ , կ'ըսէր թէ՛ սեւամաղձոտութեան վրայ խօսիլը ակտիւն ճարակ տալ է : Աստայսմ՝ Պօսուէլին , որ անալ իրեն պէս մտքի սեւամաղձոտութիւն ունէր , խրատ կու տար որ բնաւ անոր վրայով խօսք մը չընէ իր բարեկամներուն կամ ընկերութեան մէջ :

## § 445 • Երկիւղի կիրքին անկարգ ներգործութիւնը :

Երկիւղի կիրքը , քանի որ չորսդիւնիս այլ եւ այլ անանկ բաներ կան որ վտանգաւոր են կամ կրնան ըլլալ նէ , յայտնի է թէ իմաստուն դիտումներով ներսիդիւնիս անկուած կիրք մըն է : Սակայն քիչ չ'պատահիր որ անկանոն կերպով կամ անկարգութեամբ կը ներգործէ : Ան անկարգ ներգործութիւնը կը յայտնուի մէյմը ան առիթներէն , որոնք պատճառ կ'ըլլան երկիւղը շարժելու , մէյմըն ալ շարժած երկիւղին սաստկութեան աստիճանէն : Օրինակի աղագաւ՝ ոմանց ունեցած աս անկանոն երկիւղը անանկ առարկաներէ կը պատճառի , որոնք՝ մարդուս խելքը կը վկայէ որ՝ վախ շարժելու բաներ չեն : Մարդ կայ որ՝ օրինակի համար՝ մութ տեղը կենայու կը վախնայ , խաւարը իրեն մեծ տառապանք տուող բան մըն է : Անանկ մարդիկ ալ կան որ մուկէն՝ և կամ ուրիշ ասոնց պէս բաներէ վախ կը կրեն , և թերեւս այնքան սաստիկ՝ որ ատոնց հանդիպած ատեննին՝ ինչ ընելիքնին չ'գիտնալով մեծ տաղնապի մէջ կիյնան :

Ղարձնալ վախին ուժգնութիւնը այնքան սաստիկ կրնայ ըլլալ , որ էապէս փասս հասցընէ մարդուն մտքին , եւ մինչեւ անգամ խելագարութիւն պատճառէ : Առանհանաբար աղէկ հասկցուած չէ աս կիրքին ինչ զօրութիւն ունենալը : Ստոյգ բան է որ անխոհեմ մարդոց եւ մասնաւորաբար տղոց ուրիշները վախցընելու համար , մինչեւ անգամ խաղ թող ըլլայ , ըրած քանքերէն շատ սարսափելի հետեւութիւններ յառաջ եկած է : Շատ անանկ անձինք կը պատմուին , որոնք մէկ յանկարծական վախնալէ մը կամ մտքով՝ կամ մարմինով եւ կամ երկուքով մէկէն մշտնջենաւորապէս եւ ծանր կերպով փնասուեր են :

Երբեմն , մասնաւորաբար մնայուն պատճառներէ յառաջ եկած ատենը , երկիւղը աստիճան աստիճան կ'ուռի եւ կը զօրանայ , մինչեւ որ Յոստհապոս-Էեան կը փոխուի : Յուսահատութեան որոշիչ հանքամանքը , որով որ երկիւղի բոլոր ուրիշ եղանակաւորութիւններէն կորոշուի , աս է՝ (ինչպէս որ անունին ստու-

Ընկարգ ներգործութիւն կրից :

գաբանութենէն ալ կը հասկցուի՝) որ յուսոյ զգացումէն բոլորովին թափուր կ'ըլլայ, որն որ ուրիշ պարագաներու մէջ երկիւղին հետ միացած կը գտնուի՝ չափով մը : Ուստի յուսահատութիւնը կրնայ ըլլալ շատ կամ քիչ, եւ յուսահատեալին մտքին տուած տառապանքին նայելով՝ ծանր կամ թեթեւ, իրեն առիթ եղող բանին բնութեանը համեմատ : Այբոր ներկային կամ ապագային վերաբերեալ մեծ կորուստ մը կամ վնաս մը պատահի, մէկումը միտքը ան բանին վրայով յուսահատութեան վիճակի մէջ ըլլայ նէ, անոր կրած թշուառութիւնը 'ի հարկէ յետին աստիճան սաստիկ կ'ըլլայ :

§ 446. Բարեսէր կրից թիւրութիւնները :

Բարեսէր կրից մէկ քանի նշանաւոր թիւրութիւնները կան, որոնց վրայ արժան է հոս քիչ մը դիտողութիւն ընել : (ա.) Վիչ չ'պատահիր որ խելագարած անձինք բոլորովին անտարբերութիւնով կը նկատեն եւ մինչեւ անգամ կ'ատեն զանոնք՝ որ առաջ խիստ անկեղծ եւ եռանդուն սիրով կը սիրէին : Աս բանին վրայ թերեւս դժուար է մեկնութիւն ընելը, թէպէտ ասանկ բան մը կ'ըլլան գիտնալը գործնականապէս կարեւոր բան մըն է : — (Ըջ մէկ նշանաւոր անզգայութեան մը կամ կրից թմբութեան մը վրայ կը խօսի, ու կ'ըսէ. « Անգամ մը Ալիլատէլֆիացի մարդու մը հետ կը խօսէի, որ իր միտքը առողջ վիճակի մէջ եղած ատենը՝ իր կնոջը եւ որդւոցը վրայ ունեցած սիրոյն կողմանէ նշանաւոր մէկն էր, որ ատեն ատեն աս կրից թմբութեան ախտովը կը տառապէր, եւ ախտը զինքը բռնած ատենները անոնց ամենուն վրայ ունեցած սէրը այնքան գլխովին կը կորսնցունէր, որ ըսաւ ինծի թէ՝ « թէ որ զանոնք առջևս բերեն գլխատեն, կընամ առանց ամենեւին վշտակութիւն մը զգալու կամ զանոնք պաշտպանելու համար մինչեւ անգամ տեղէս շարժելու հակամիտութիւն մը ունենալու՝ վրանին նայիլ » : — (բ.) Արբեմն անանկներ ալ կը պատահին, որոնց վրայ բարեսէր կիրքը ոչ միայն շիջած կ'երեւնայ, այլ ատելութեան փոխուած : Տիշեալ փիլիսոփայ բժիշկը մէկ դեռահասակ կին մը կը յիշէ, որ իբրեւ լուսնոտ Բենսիլվանիայի հիւանդանոցն է դրուեր : Ասոր խելագարութեան մէկ հանգամանքն աս է եղեր որ իր հայրը կ'ատէ եղեր : Ասիկայ կամաց կամաց ընտոցեր է, եւ հիւանդանոցէն ելելէն շաբաթներ առաջ առողջ մտքի տէր ըլլալուն բոլոր նշանները կը տեսնուի եղեր վրան, միայն թէ աս բնութենէ դուրս ատելու

Մեկարգ ներգործութիւն կրից :

Թեան կիրքը գեռ վրան մնացեր է ատեն մը : Օր մըն ալ ուրախութեամբ սրտի զգացեր է՝ որ որդիական սէրը կրկին եկեր է վրան , եւ յետոյ շուտով արձակուեր է իրեւ առողջացած :— ( Գ . ) Ուրիշ օրինակներ ալ կան , որոնց խելագարութիւնը լոկ բարեսիրական կիրքին սաստկութենէն յառաջ եկած է աննուզակի կերպով : Ըստ սակ ցաւագարներուն սէրը այնքան զօրաւոր՝ այնքան ուժգին կ'ըլլայ՝ որ չեն կրնար յանկարծական եւ մեծ ընդդիմութեան եւ ձախողութեանց դիմանալ :— «Վեղջուկ կնկանը մէկը , կ'ըսէ ՎՊԼ , իրեք անգամ խելքը թռուց , նախ եղբօրը մեռնելուն վրայ , երկրորդ հօրը մեռնելուն վրայ , եւ երրորդ մօրը մահուանը վրայ : Երրորդ անգամ խելքը գլուխը գալէն ետեւ՝ եկաւ ինծի խորհուրդ հարցնելու . ինք մէկ շատ կրօնասէր կին մըն էր , վասն որոյ կը գանգատէր իր այս դժբաղդ բնաւորութենէն , որ իրեն սիրելի եղող անձանց մահուանը վրայ կրօնքին ներածէն աւելի վիշտ կը կրէ . որ ասկէ յայտնապէս կ'երեւնայ որ՝ որչափ իր ձեռնհաս եղած շարժառիթներովը կ'աշխատէր դէմ դնելու ալ նէ , նորէն կը յաղթուէր եւ տեղի կուտար չափազանց վշտակրութեան » : Վիւնէլ ալ մէկ պատանի մը կը յիշէ , որ հայրն ու մայրը մեռնելուն վրայ շատ չանցած , զորոնք շատ գորովալից սիրով կը սիրէ եղբր , սաստիկ խելագարեր է : Իրաւ է որ աս կերպ դէպքերու մէջ պատահած խելագարութեան մերձաւոր պատճառը տրտմութիւնը կամ կսկիծն է . սակայն հեռաւոր պատճառը , ան պատճառը՝ որ առանց անոր ան ցաւալի արդիւնքները յառաջ պիտի չգային , բարեսէր կրից չափազանց եւ անզուսպ ուժգնութիւնն է :— Երժան է աս տեղեկութիւնն ալ տալ հոս՝ որ քանի՛ քանի անգամ յանկարծական եւ ուժգին՝ ուրախութեանց զգացումներէ՝ մշտնջենաւոր մտքի խանգարումն եւ մինչեւ անգամ մահ պատճառած է : Ամբաւաւոր Վէպնիցին որդին աս պատճառաւ մեռաւ , երբոր մէկ հին սնտուկ մը բանալուն անակնկալ մեծ գուժար մը ոսկի գտաւ մէջը : Վաղաքական խորհուրդներու եւ փափաքներու յաջող ելք ունենալներէն ալ այիպիսի հետեւութիւններ յառաջ եկած է : Սեռն ԵՊապը ուրախութենէն մեռաւ , երբոր լսեց որ Վաղղիացւոց ազգը մէկ մեծ դժբաղդութեան մը հանդիպեր է : Աւիւմ կ'ըսէ թէ , Վարողոս Բ ին կրկին Ընդդիոյ գահը նստելու ատենը՝ խել մը մարդիկ ուրախութիւններնէն մեռան . Ըմբրիկայի մէջ ալ յեղափոխութեան ժամանակը դրոնապանին մէկը Ղորտ Վրոմուէլիս՝ Ընդդիացի զօրապետին Ըմբրիկացւոց ձեռքը գերի իյնալը լսելուն ուրախութենէն մեռեր է՝ վրան կաթուած իջնալով :

## Գ Լ ՈՒ Խ Գ

ԵՆԿԵՐԿ ԿԵՐԳՈՐՕՈՒԹԻՒՆ ԲԵՐՈՅԵԿԵՆ ՕԳԵՑՈՂՈՒԹԻՒՆՑ

§ 447 . Կամաւոր բարոյական խանգարման վրայ :

ՄԵՐԿՈՒՍ Բարոյական Օգացողութիւններն ալ Բնական Օգացողութեանց նման , խղճմտանքն ալ սրտին նման անկարգութեան եւ խանգարման ենթակայ կրնայ ըլլալ շատ կամ քիչ : Հաւանականաբար գէթ երկու կերպ բարոյական խանգարումն կայ , այն է՝ կշմատութիւն , եւ Բնական կամ Համբժումն : — Կամաւորական բարոյական խանգարման վրայ՝ իբրեւ մտադրութեան արժան եւ կարեւոր տեղեկութիւն մը՝ կը ծանուցանենք թէ մարդ արդեամբ կրնայ եղձանել իր խղճմտանքը : Ուղիղ փիլիսոփայութեամբ ըսուած խօսք մըն է աս , թէ “Ոչ որ յանկարծ եղեռնագործ եղած է” : Ըս խօսքին բովանդակած ճշմարտութիւնը անտարակոյս բոլոր խղճմտանքնին խանգարած մարդոց կը վերաբերի , բաց ՚ի անոնցմէ , որոնց խանգարումը բնական կամ Համարուն է : Մէկ մարդ մը նախ եւ առաջ եղեռնագործ կամ վայրագ մէկը չըլլար , վասն զի խղճմտանքը դէմ կը դնէ եւ չ'թողուր որ անանկ ըլլայ : Սակայն թէ որ խղճմտանքին դէմ կամքին ներգործութիւնները յառաջ տարուի , թէ որ կարգաւորեալ ընթացքով եւ յարատեւ կրկնութեամբ խղճմտանքին յորդորակներուն մօտիկ չըլլուի եւ անոր ներգործութիւնը ճնշուի , անոր ձայնին ազդուութիւնը կամաց կամաց կը նուազի , եւ բուն իսկ խղճմտանքը կորսուելու բնաջինջ ըլլալու վտանգի մէջ կ'ըլլայ : Տարակոյս չ'կայ որ աս կերպով խղճմտանքը այն աստիճան կրնայ խանձիլ որ արդեամբք ոչնչանայ : Ըսանկ' բաղմամբի մարդիկ մեծեղեռն անզգամութեանց պատրաստած են ինքզինքնին , եւ իրօք բարոյապէս խելագարած են զիրենք՝ իրենց ձեռքը : Ըսանկններուն համար կ'ըսենք թէ խղճմտանքնին արդեամբ բնաջինջ եղած է . եւ աս խօսքով ըսել կ'ուզենք թէ խղճմտանքնին անգործ , ազդուութիւնը կորսընցուցած , թմբրած , չորցած է : Մեռած է ըսել չենք ուզեր . վասն զի խղճմտանքը երբէք չ'մեռանիլ : Ընդ երեւութական մահը հաւաստի եւ հանգ յարութեան մը տարիները կը յղանայ : Ընիկայ իր անգործութեան եւ մեռելութեան

Մեկրդ ներգործութիւն բարոյական զգացողութեանց :

ատենները կարծես թէ զորութիւն եւ կենդանութիւն կը հաւաքէ . եւ երբոր իր յառնելու սահմաննալ ժամը կու գայ կը հասնի , ահագնահայեաց եւ դժոխքմբեր հատուցում մը կը սկսի ընել , չէ թէ միայն ուրիշներուն դէմ գործուած յանցանաց համար , այլ իրեն դէմ եղած անօրէնութեանը համար ալ :

[§ 448 .] Աս կերպ խանգարեալ խղճի մտացտեր եղողն պատասխանատուութեանը վրայ :

Երբոր մէկ մարդու մը խղճմտանքը՝ աս յիշած կարգաւորեալ ճնշման գործողութիւննովն զաղարի գործելէն , սա խնդիրը կը ծագի , թէ արդեօք անատենը անիկայ բարոյապէս պատասխանատու կ'ըլլայ իր ըրածներուն համար : Իր խղճմտանքը չ'դատապարտեր զինքը չար գործած ատենը . ուրեմն ան իր ըրածը , ինչ որ ըլլայ նէ , յանցանքի կարգ անցնելու է : Աս խնդիրն մէկ պատասխան մը կայ միայն : Թէ որ ան մարդը իր խղճմտանքէն դատապարտութիւն չընդունիր նէ , ատիկայ բուն իսկ իր չար ճամբուն հետեւութիւնն է : Ասիկայ սա օրինակով կրնանք բացատրել , որ դժբաղդարար յաճախ կը պատահի : Վիսովութեան մէջ յանցանք մը գործող մէկը կրնայ ըսել թէ՛ ան վիճակին մէջ գործած գործիս ինտոր յանցանք ըլլալը չ'գիտցայ . եւ աս ըսածն ալ ճշմարիտ կրնայ ըլլալ : Սակայն ինք յանցաւոր է ինքզինքը անանկ վիճակի մը մէջ ձգելուն համար , որով՝ գիտէր առաջուց թէ՛ կրնայ ըլլալ որ ուրիշն փասս մը հասցընէ , կամ մէկ ուրիշ ապօրինաւոր գործ մը ընէ : Ասով իր յանցանքը նուազելուն տեղը , իրօք կ'եւելնայ , կը կրկնապատկի : Այլ գինեմոլութիւնով յանցաւոր կ'ըլլայ , եւ ան ամէն չարիքներովը , որոնք որ՝ գիտէր կամ կրնար գիտնալ թէ՛ յառաջ կու գան գինեմոլութեանն է :

Ասոր պէս ալ թէ որ մէկ մարդ մը նախընթաց գործողութեամբ մը ինք իր ձեռօքը կամաւ խանգարած եւ խտտացուցած է իր բարոյական զգացողութիւնները , չ'կրնար բողբքել աս բանովն՝ թէ ըրած չարութիւնները գործելու ատենը խղճմտանքը զինքը չէր դատապարտեր : Այլ ընդհակառակն ալ եւս աղէկ կ'ըլլայ ասոր համար ալ ըսել , գինեմոլին օրինակին պէս , թէ անանկը իր յանցանացը վրայ աւելի յանցանք գումարած է . վասն զի ըրած չարութիւններէն 'ի վաս՝ նախընթաց եւ աւելի ծանր յանցանք մը գործեր է , որ իր մտքին անողորմ հարուած

Ընկարգ ներգործութիւն բարոյական զգացողութեանց :

մը տալով՝ նոյն խոկ իւր հոգւոյն կեանքը շիջուցեր է : Ինք իր աչքին առջևը գործնականապէս պարտաւոր չերեւնար , լոկ աս պատճառաւ որ թմբրեցուցած է այն սկզբունքը , որ իր դատակնիքը պիտի տար իր ըրածներուն վրայ : Սակայն անփոփոխ արդարութեան առջևը ամենեւին չ'նուազեր իր յանցանքը , սլ անբացատրելի կ'առաւելու՝ ան իր ըրածներուն համար , որով աշխատեցաւ՝ եթէ ներելի է ըսել՝ սպառնալ ան սկզբունքը , որն որ՝ ամէն բանէ աւելի՝ մարդկային բնութեան շքեղութիւնն ու փառքն է : (Տես § 402 :)

§ 449 . Ինչպիսի կամ համարուն բարոյական խանգարման վրայ :

Ի բարոյական խանգարման միւս կերպը (Նոտիան կամ Համբուռն է : Չենք գիտեր որ արտօնութիւն ունինք ըսելու՝ թէ մարդ կրնայ ըլլալ որ բնութեամբ բացարձակապէս զուրկ ըլլայ խղճմտանքէ , ասոր հակադարձ՝ աս ալ ըսելու հաստատուն պատճառ չունինք՝ թէ չ'կրնար ըլլալ ասանկ բան : Մէկ մարդու մը խղճմտանքէ զուրկ աշխարհ գալուն մէջ մէկ աւելի մեծ անպատշաճութիւն մը կամ անհնարութիւն մը չ'կայ , քան որչափ որ կայ առանց յիշելու՝ բաղդատելու եւ տրամաբանելու կարողութիւններուն ծնանելուն մէջ , որ ասիկայ յիմար մարդոցմէ ոմանց վրայ կը տեսնենք : Սակայն աս ստոյգ է որ կան անանկ մարդիկ , որոնց խղճմտանքը կ'երեւնայ որ բնականապէս խիստ տկար է . անանկ խղճմտանքի մը տէր են , որ շատ անկատար կերպով կը կատարէ իր պաշտօնը . եւ գէթ աս կողմանէ շատ տարբեր կազմուած կ'երեւնան իրենց նմաններուն ընդհանրութենէն : Արանին մէկ խղճմտանքի անզօրութիւն մը , կամ՝ եթէ ներելի է ըսել՝ խղճի մտաց յեմպլո-լիւն կը տեսնուի , որ ասիկայ անտարակոյս մեծ չափով կ'ընուազցընէ իրենց բարոյական պատասխանատուութիւնը : Խելագարութեան վրայ զննութիւններ ընող մատենագիրներէն խել մը անձինք ունեցած են աս տեսութիւնը , եւ ասիկայ հաստատելու համար օրինակներ ալ բերած են :

«Վենացս ընթացքին մէջ , կ'ըսէ Վըշ , իրեք հոգիի կանչուեցայ , որոնց բարոյական կարողութիւնները բոլորովին խանգարած էր : Ըստնց մէկը պատանեակ մըն էր , երկրորդը գեռահաս կին մը , երկուքն ալ Ա իրձիսիա նահանգէն , եւ երրորդը Ֆիլաուէլ-Ֆիլացի մէկու մը գուստրը : Ա երջի յիշածս ամէն կերպ անզգամութիւնը ընող մէկն էր : Իր չարագործութիւնները դադարում

Ընկարգ ներգործութիւն բարոյական զգացողութեանց :

չունէին արթուն եղած ատենը , բայց 'ի ան ատեններէն , երբ ծանր ու դժուարին գործի մը զբաղած կ'ըլլար" : Աս մատենագիրը ուրիշ մատենագրութիւններէ ալ օրինակներ կը յիշատակէ : Զասէմ" իր "Վիտողութիւնք Հիմարութեան վրայ" ըստած գրքին մէջ երկու որոշ օրինակ տուած է բարոյականի խելագարութեան : Ասոնցմէ մէկը տասը տարեկան տղայ մըն է , որուն ունեցած մէկ քանի հանգամանքները ասոնք են եղեր : Ասիկայ իր կանուխ հասակին մէջ մէկ անհամբերութիւն մը ու զիրազրգուութիւն մը սկսեր է ցուցունել , եւ կամաց կամաց այն աստիճան անզգամ ու անզուսպ տղայ մըն է եղեր , որ հարկ է եղեր մէկը դնել վրան զինքը հսկելու : Արբոր իրեն բան մը կը հարցընեն եղեր , իրեն հաճոյ եկածին կը պատասխանէ եղեր , անհաճոյ եկածին կը լռէ եղեր" եւ ինչ որ հրամայեն , հակառակը կը գործէ եղեր : "Առաջին անգամ իրեն այցելութեան երթալուս , կ'ըսէ Զասէմ" , երկու իրեք վայրկեան կենալէն ետեւ աշխատեցաւ պատուհան մը կոտրելու ու շապիկիս կուրծքը պատուելու : Անմեղկելի թշնամի էր բոլոր ջինիէ՝ ապակիէ և յախճապակիէ շինուած բաներու . երբոր ձեռքն անցնէր աս նիւթ երէն մէկ կահ մը բան մը , նոյնժամայն կտոր կտոր կ'ընէր : Փողոցը քալած ատենը՝ պահպանը ստիպուած էր պատին կողմէն երթալու , որովհետեւ ձեռքին մօտ պատուհան մը եկածին պէս կը զարնէր կը կոտրտէր . եւ անանկ վարպետութեամբ մը ու ինքզինքը չ'մնասելով , որ երբէք մատները չէր արուներ : Անանցի զարգարանաց վերաբերեալ ազնիւ հիւսուածները եւ բարակ կերպանները բզբտելը կ'երեւնար որ խիստ մեծ հաճութիւն կու տար իրեն . եւ հազիւ երբէք կը պատահէր որ դուրս ելէր՝ առանց աս իր յօժարութիւնը կատարելու առիթ մը գտնելու : Բնաւ երբէք մէկ ստորին կենդանիի մը սէր չ'տուաւ , որ ստիկայ այնչափ սովորական բան մըն է տղոց ընդհանրութեանը մէջ : Անբան անասունի պէս կը վարուէր բոլոր կենդանեաց հետ . ակար եղողները կը բռնաբարէր , եւ իրմէ զօրաւոր եղողներուն քովը չէր մօտենար : Արկար ժամանակեայ սովորութեամբ սորվեցաւ որ տանը մէջն եղող կատուին տէրն է ինք . եւ երբոր ատ դժբաղդ կենդանին քովը կու գար , կը բռնէր խեղճին գլուխէն , ու անհնարին արագութեամբ ընչացքը կը փետէր , "Պէտքերը փրցունեմ" ըսելով : Աս գործողութենէն ետեւ , կը բռնէր կենդանին սովորաբար կրակին մէջ կամ պատուհանէն դուրս կը նետէր : Պզտիկ շնիկ մը որ քովը գար նէ , կը զարնէր ոտքը մէկդի կ'ընէր . մեծ որ ըլլար նէ , վրան չէր նայեր : Արբոր հետը խօսք

Ընկարգ ներգործութիւն բարոյական զգացողութեանց :

մը ընէին , սովորաբար կ'ըսէր , “Սիրտս պատասխանել չուզեր կոր” : Լքբոր կը տեսներ որ մէկը մտադրութեամբ կը գիտէ զինքը , միշտ կ'ըսէր , “Հիմայ պիտի փոխեմ կերպարանքս” : Տղոց սովորական խաղերէն ինք բան չէր հասկընար . երբոր մանր տղաք կը խաղային՝ ինք բնաւ հետերնին չէր միաւորեր . իր հանգամանացը ամենէն նշանաւոր մասն աս էր՝ որ անկարող կ'երեւնար մէկու մը հետ բարեկամանալու . սեռի նկատողութիւն չէր գիտեր , եւ աղջիկ տղաքն ալ մանչ տղոց պէս անտարբերութեամբ կը ծեծէր կամ կը խածնէր : Բարերարութիւն մը կամ մարդասիրութիւն մը ընէին ալ նէ , անոր ալ անզգայ էր . նարինջը կ'առնէր մէկուն ձեռքէն իբրեւ ընծայ , ու ետքէն պարգեւատուին քթին բերնին կը նետէր” :

Ըստ ողորմելի տղան կ'երեւնայ որ երբեմն իր ցաւալի վիճակը կը զգայ եղեր : Ընգամ մը մէկ առթով մը երբոր յիմարանոցի մը մէջէն անցուցեր են զինքը , ու մէկ անզգամ խննդ մը ցուցուցեր են իրեն , որ միւսներէն աւելի ամուր փակեալ է եղեր , բովիններուն ըսեր է , “Ըս է ահա ինծի յարմար տեղը” : Ըստ անգամ մեռնելու փափաք կը ցուցընէ եղեր , եւ պատճառ ալ կուտայ եղեր , թէ Ըստուած զինքը ուրիշ տղոց պէս չէ ստեղծած” :

§ 450 . Ընական կամ համարուն բարոյական խանգարման տէր եղողները բարոյական պատասխանատուութիւն ունին թէ չէ :

Նոս ալ դարձեալ աս խնդիրը յառաջ կու գայ , թէ արդեօք բնական կամ համարուն բարոյական խանգարման ենթակայ եղող անձինք բարոյական պատասխանատուութիւն ունին , եւ ի՞նչ չափով : Մէկ մարդ մը թէ որ բարոյական զգացողութենէ բնականապէս զուրկ է բոլորովին , ինչպէս որ կան անանկ յիմարներ՝ որոնց վրայ տրամաբանութեան կարողութիւն չ'կայ ամենեւին , որ թէպէտ եւ քիչ կ'ըլլայ ասանկ , սակայն գէթ ենթադրելի բան է , ան մարդը բարոյական պատասխանատուութենէ ալ ազատ է : Ըստ վիճակին մէջ եղողը չարն ու բարին ի՞նչ բան ըլլալուն վրայ գաղափար մը չ'կրնար ունենալ . ըստ այնմ՝ ըրած գործը չար է թէ բարի , ան ալ չ'իմանար . եւ ասանկով բարոյական մտօք արժանաւորութիւն մը կամ անարժանաւորութիւն մը չ'ունենալով , վարձուց կամ պատժոյ ալ ենթակայ չ'կրնար ըլլալ : Ըստանկներուն հետ ան նոյն սկզբունքներովը վարուելու է , որոնք որ կը պատշաճին յիմար եւ խելագար մարդոց ընդհանրապէս :




---

Ընկարդ ներգործութիւն բարոյական զգացողութեանց :

---

Իսկ թէ որ աս մտաւոր խանգարմունքը այնքան սաստիկ չէ, այլ բարոյական լուսոյ քանի մը ճառագայթներ կան ենթակայ եղողին վրայ, ունի մէկ տկար կարողութիւն մը բարոյական տեսութեան, անիկայ իրեն տրուածին համեմատ, թէ որ աս տրուած կարողութեան չափը հնար է որոշել նէ, իրեն տրուածին համեմատ դատուելու է : Թէ որ միայն մէկ բարոյական տաղանդի տէր է, կարծելու չենք թէ տասը տաղանդի տէր եղողին չափ պատասխանատուութեան ենթակայ է : Այ միայն չարն ու բարին իրարու հետ շփոթող, այլ եւ բարեսիրութեան պահանջմունքներուն ալ բողբոջին խորշելի վարդապետութիւն մըն է ան, որ կը հաստատէ՝ թէ վարձուց եւ պատժոյ ենթակայ ըլլալու կողմանէ բոլոր մարդիկ միակերպ դատուելու են, առանց նկատելու կազմուածքի այն բնածին զանազանութիւնները, որ մարդուս մտքին բոլոր մասերուն մէջ կրնայ ըլլալ : Շատ անանկ մարդիկ՝ աս մեծակշիռ նիւթը սխալ հասկըցուելէն՝ դահիճներուն ձեռքը մատնուած զոհ եղած են, որոնք՝ եթէ կրօնքի եւ ճշգրիտ արդարութեան սկզբունքներովը դատուելու ըլլային նէ, կարեկցութեան՝ երկայնմտութեան եւ մարդասիրութեան բազուկներովը պիտի գրկուէին :





## ՀԱՐՑԱՌԻՆԻՔ

Այսպիսի գրքի մը դասատուութիւնը՝ ուսանողաց կարելի եղածին շափ օգտակար ընելու եւ անոր մէջ բովանդակուած գիտելիքները մտքերնուն վրայ քաջ տպաւորելու համար՝ շատ հարկաւոր է որ ուսուցիչը ամէն մէկ դասի վրայ մանրամասն հարցմունք ընէ դասառուներուն՝ կարգաւորեալ ոճով մը . վասն որոյ հոս ամբողջ գլխու մը վրայ ըլլալու հարցմունքները կարգով կը դնենք , որպէս զի գիւրին ըլլայ ուսուցչին ըմբռնել թէ ինչ ոճով պէտք է ՚ի գործ դնել աս շահաւէտ կրթութիւնը :

### ԳԼՈՒԽ • Ը

§ 1 . Սի եւ անբաժանելի է՞ մարդուս միտքը :

Այ սակայն քանի՞ նկատմամբ հետազօտելի է :

Ի՞նչ են մտքին երեք գլխաւոր բաժանմանց անունները :

Աս երեք բաժանմանց ո՞րը որը աս համառօտութեանս վախճանն է քննել :

§ 2 . Աս երկու բաժանմանց որմէ՞ն կը սկսինք :

Ի՞նչ է իմացականին կամ հասողութեան գործը :

Մտքին իմացական հանգամանքները երկու նկատմամբ մարթ է քննել . եւ ըստ այսմ բաժանման ի՞նչ անուն կու տանք անոնց :

Արտաբուստ ծագող իմացական հանգամանքներուն գոյութիւնը ուսկից կախեալ է :

Անանկ է նէ թէ որ մարդուս միտքը արտաքին եւ նիւթական առարկաներէ հատեալ ըլլար , անկէ ի՞նչ կը հետեւէր :

Սա բառերով բացատրուած մտաւոր հանգամանքները , ինչպէս ճշմարտութիւն՝ ստութիւն՝ զօրութիւն՝ բանաւորութիւն՝ արժանաւորութիւն՝ անարժանաւորութիւն՝ Թ՛ , ուղղակի արտաքին առարկաներէ՞ կախում ունին :

Այ ի՞նչ անունով կ'ըսուին՝ ուրիշ մտաւոր հանգամանքներէ որոշմամբ :

§ 3 . Իմացականին ստացած ո՞ր հմտութիւնը առաջ է , արտաքինը թէ ներքինը :

Մարդուս միտքն որ առջի բերանը հմտութենէ բորբորվին զուրկ կը տեսնուի , նախ եւ առաջ ի՞նչ կերպով ներգործութեան կը շարժի :

Մտքին ու աշխարհիս նիւթեղէններուն մէջտեղը մէկ փոփոխակի համեմատութիւն մը եւ յարմարութիւն մը կայ :

§ 4. Ըս ըսուածներուն համեմատ ի՞նչ երկու ընդհանուր սկզբունք կը հաստատուի :

Ըս սկզբունքները կամ առաջարկութիւնները այլ եւ այլ ապացոյցներով կը հաստատուի , եւ նախ առաջին՝ թէ որ մեր մանկութեան օրերը դիտողութեան տակ ձգենք , ի՞նչ կը գտնենք :

Ըսոնք մեր տեսածներէն կամ ըսածներէն եւ կամ շօշափածներէն ծագած գաղափարներ են :

Իսկ երբոր տարօք կը մեծնանք նէ , ի՞նչ կերպի կը փոխուի մաքին գործողութիւնները :

§ 5. Արկրորդ ի՞նչով կը հաստատուին աս դիտողութիւնները :

Ի՞նչ զրուցուած է ընդհանուր խօսքով մանկան եւ փոքրիկ տղեկին առաջին գաղափարներուն վրայ :

Տղաք ընդհանրապէս ի՞նչ ընթացքով կը վարժուին :

Եւ ի՞նչ պատճառներով :

§ 6. Եւ երրորդ ինչով կը հաստատուի աս վարդապետութիւնը թէ միտքը նախ եւ առաջ ներգործութեան կը շարժի՝ զանիկայ արտաքին աշխարհիս հետ կապակցող զգայարանաց միջոցաւ :

Ի՞նչ զրուցուած է բառերուն նախնական գործածութեանը վրայ :

Լեզուի զարգացումը ի՞նչ բանի կը համեմատի :

Բառերը նախ եւ առաջ ի՞նչ բացատրելու գործածուած են :

Եւ ետքէն ի՞նչ տեսակ խորհուրդներ բացատրելու ՚ի կիր արկեալ են :

Ի՞նչ բառեր յիշուած են աս հատուածիս մէջ նախ եւ առաջ նիւթական բաներ ցուցունող եւ յետոյ մտաւորի վրայ գործածող :

Ըս կերպ իրական ճշմարտութիւններէ ի՞նչ մակածութիւններ կ'ելլէ :

§ 7. Ի՞նչ խօսուած է որ եւ է զգայարանքէ զուրկ մարդոց վրայ :

Ի՞նչ խօսք կայ խուլ ու ետքէն յանկարծ լսողութիւննին բացուածներու վրայ :

Կոյր եւ ետքէն տեսութիւննին տեղն եկողներու վրայ ի՞նչ զրուցուած է :

Շարդրէս քաղաքին խուլ եւ համր պատանւոյն վրայ ի՞նչ պատմուած է . կրկնէ :

§ 8. Յակօբոս Արքեւին վրայ ի՞նչ դէպք կը պատմուի :

Ինչո՞ւ համար այսպիսի օրինակներ շատ հարկաւոր են մեզի :

Ի՞նչ կերպով աս գիտութեան յառաջադիմութիւնը ստոյգ եւ աներկեւան ու երազ կրնայ ընթացիկ ըլլալ :



## ՅԵՒՆԼՈՒԾՈ

Մղէկ սեպեցիւք աս թարգմանութեան մէջ գործածուած ուսումնական բառերուն գլխաւորներուն մէկ քանին հոս շարել , Ընգղիերէնները առջևնին դնելով , և մեկնել հարկ եղածներուն վրայ ալ կարծառօտ սահմաններ տալով , որպէս զի ուսանողաց աւելի զիւրութիւն մը ըլլայ կարգացածնուն ճիշդ իմաստը ամէն տեղ հասկընալու .

Լիւրժանիք . Appetites.

Լիւրժանաւորութիւն . Demerit . Սարձուց անարժանաւորութիւն :

Լիւրժանիան նոյնութիւն . Personal identity.

Լիւրժանաւորութիւն արտաբանութիւն . Demonstrative reasoning.

Լիւրժանութիւն . Proposition.

Լիւրժան . Object.

Լիւրժանիան . Virtual . Ըրգեամբ եղած , ս'է թէ իրօք :

Լիւրժանաւորութիւն . Merit . Սարձուց արժանաւորութիւն :

Լիւրժանիան նիշտութիւն . Intentional memory . Ուզելով բան մը միտք բերել : (Տե՛ս § 161 :)

Լիւրժանիք . Desires.

Լիւրժանիան արգելաւորութիւն . Instincts . (Տե՛ս § 311 :)

Լիւրժանաւորութիւն Կրք . Malevolent affections.

Լիւրժանաւորութիւն Կրք . Benevolent affections.

Լիւրժանիան հաստատութիւն . Moral approval.

Լիւրժանիան անհաստատութիւն . Moral disapproval.

Լիւրժանիան արտաբանութիւն . Moral reasoning.

Լիւրժան . Absent . Ատրկայ չեղող , տարակայ :

Լիւրժանութիւն . Absence . Ատրկայ չգտնուելուն հանգամանքը :

Լիւրժանիան . (Լիւրժան ծանօթութեան տեղ ալ գործածեցիւք :)

Լիւրժանիան . Consciousness . Մտքերնու մէջ եղած գործողութիւններուն վրայ ունեցած գիտութիւննիս : (Լիւրժանիան խղճման քի նշանակու թիւնով երբէք գործածած չենք :)

Լիւրժանիան զգայութիւն . Sensorial organ . (Տե՛ս § 18 :)

Լիւրժանիան . Judgement . Մտքին ան զօրութիւնը , որով մարդ կրնայ գաղափար գաղափարի հետ բաղդատել և անոնց մէջ եղած վերաբերութիւնը կամ անհշտութիւնը զգալ :

Լիւրժանիան . Contrast . Հակադրութիւն : Լիւրժանիան զէմ դնել

երկու կամ աւելի բաներ, մէջերնին եղած աարբերութիւնը կամ աննմանութիւնը ցուցնելու համար :

Ղեկնուածութիւն . View.

Ենթակայ . Subject.

Ենթակայական . Subjective. Լական, իսկական, իրական :

Երևանկայութիւն . Imagination. ( ՏԵՄ § 206 : )

Օգտայութիւն . Sensation. ( ՏԵՄ § 9 : )

Օգտայական . Sensitive կամ Sentient.

Օգտայողութիւն . Sensibilities. Ստրին զգացող մասը :

Օգտորդութիւն . Association. ( ՏԵՄ § 140 : )

Թելուորութիւն . Suggestion. Սէկ գաղափարի մը կամ ծանօթութեան մը մտքին առջև բերուիլ :

Ինտայական . Intellectual.

Ինտայականութիւն կամ հասողութիւն . Intellect or understanding.

Ստրին իմացող մասը :

Ինտայում . Perception. ( ՏԵՄ § 13 : )

Իրական ճշմարտութիւն կամ իրողութիւն . Fact.

Եղիւն . Jealousy.

Իսթիոնոմ . Physiognomist. Սէկ մարդու մը դէմքէն անոր ներքին յատկութիւնները որոշելուն արհեստը գիտցող :

Օտարական նիստաբար . Humour.

Օտնօշնութիւն . Notion.

Կարայականութիւն . Burlesque.

Կայանիքութիւն . Propensities. Ստրին հակումը, բնական կամ ստացական :

Կայանակիւն . Counterpart.

Կայանակիւն նմանողութիւն . Sympathic imitation.

Կայեղողութիւն . Speculation.

Կայեղման մտայ կամ մտայ հանգամանք . States of mind or mental states. ( Լս կերպ գործածութեանց մէջ ամէն տեղ աս բառը ձեռնով մտքով բանեցուցած ենք : )

Կայեղմանութիւն . Wits.

Կայութիւն . Knowledge.

Ստիլակտիկական պրոմիսիւն . Deductive reasoning. ( ՏԵՄ § 193 : )

Ստիլակտ . Predicate. ( ՏԵՄ § 175 : )

Ստիլակտայական շրջաօրէն . Circumstantial memory.

Ստիլակտ . Reflection.

Յարմարութիւն . Juxtaposition.

Յիշողութիւն . Memory.

Յիշեղութիւն . Remembrance.

Յարմար . Complex. ( ՏԵՄ § 67 : )

Կայեղման պատկեր . Presentiments.

Կայեղման . Action.

Կայութիւն . Copula. ( ՏԵՄ § 175 : )

Կայութիւն . Emotions. Ստրին մէկ ներքին շարժումը կամ գրգռումը, որ կ'ըլլայ առանց բաղձանքի :

Ը ըլտգիծ . Outline.

Ը օշմիլելի մեծութիւն եւ փխտանելի կամ երեւո-լնային մեծութիւն .  
Tangible magnitude & visible or apparent magnitude.

Պարզ . Simple.

Պարստու եւ Պարծ . Cause & Effect.

Սեռ և փխտակ . Genera & species.

Սեռամտոյ յո-լնիւն . Hypochondriasis.

Սիլէրոնս անյնտպահո-լնեան . Principle of self-preservation.

Սիլէնտիան լելադրո-լնիւն . Original suggestion.

Ս լերութանային արամբանո-լնիւն . Analogical reasoning. (Տե՛ս § 192 :)

Ս լերլելութան լելադրո-լնիւն . Relative suggestion.

Ս լերայեալ . Abstract.

Ս լերացոցանել . To abstract.

Ս լերացոցոմն . Abstraction.

Ս լերլո-լնիւն . Analysis.

Ս լերլլեանոմն . Conception. Ստքերնուս մէջ տպաւորուած գաղափարներու՝ առանց ան տպաւորութիւններու պատճառները ներկայ գտնուելու՝ վերստին մտքերնուս մէջ ծագիլը : (Տե՛ս § 59 :)

Ս լերլնի օրէն . Ultimate law.

Տեո-լնիւն . Theory, View, Sight.

Տրամբանո-լնիւն . Reasoning.

Տրամբանել . To reason.

Յամնտո-լնիւն . Peevishness. Վլերադրգուութիւն :

Ըս թարգմանութեան մէջ՝ բաց ՚ի մէկ երկու նոր բառերէ , քանի մը տեղ ալ անսովոր ածանցութիւններ գործածած ենք՝ բացատրելու բաներնուս միտքը աւելի յստակ իմացընելու համար յաւէտ , քան թէ նոր ձև մը հնարելու . ինչպէս՝ արտաշինո-լնեան գաղափար , որուն Ընգղիերէնն է idea of externality , և մէկ երկու ուրիշ ալ : Իսուերու ընտրութեան և ուղիղ գործածութեան կողմանէ թերևս աւելի ճշդութիւն կրնար ըլլալ , սակայն դժբաղդաբար գիրքը մէկ գիէն թարգմանուիլ ու մէկ գիէն տպարան երթալ հարկ ըլլալուն , ուղած զգուշութիւննիս չկրցանք ընել :

*Մարտի 9 ալ Վարձիքս է  
այս Պրէլ :*

## ՎՐԻՊԵԿՆԵՐՈՒ ՅԸՆԿ

ԵՐԵՍ	ՏՈՂ	ՍԻ ԱԼ	ՈՒՂԻՂ
120	11	ԹԻ	ԹԵ
145	35	խուձ	խուց
160	17	դարձուացք	դարձուածք
172	12	մըձանակ	մրցանակ
186	15	պատշաճ	պատշաճ
255	8	մորականութիւն	մորականութիւն
336	25	յանձանք	յանցանք
337	17	երկայնաձիք	երկայնաձիգ
344	3	ազսորուած	աքսորուած
398	7	բոյն իսկ	բուն իսկ
405	13	Վեորդ	Վեորդ
410	1	կիրառութիւն	կիրառութիւն
442	4	կանք առնել	կանկ առնել





THE UNIVERSITY OF CHICAGO

Year	Month	Day	Event	Location
1890	Jan	1	...	...
1890	Jan	2	...	...
1890	Jan	3	...	...
1890	Jan	4	...	...
1890	Jan	5	...	...
1890	Jan	6	...	...
1890	Jan	7	...	...
1890	Jan	8	...	...
1890	Jan	9	...	...
1890	Jan	10	...	...
1890	Jan	11	...	...
1890	Jan	12	...	...
1890	Jan	13	...	...
1890	Jan	14	...	...
1890	Jan	15	...	...
1890	Jan	16	...	...
1890	Jan	17	...	...
1890	Jan	18	...	...
1890	Jan	19	...	...
1890	Jan	20	...	...
1890	Jan	21	...	...
1890	Jan	22	...	...
1890	Jan	23	...	...
1890	Jan	24	...	...
1890	Jan	25	...	...
1890	Jan	26	...	...
1890	Jan	27	...	...
1890	Jan	28	...	...
1890	Jan	29	...	...
1890	Jan	30	...	...
1890	Jan	31	...	...

2013

